4

ՀԱՅԱՍՏԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԼԵՈ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԱՍԸ ՀԱՏՈՐՈՎ

„Հայաստան"
Հրատարակչություն
Երևան 1984

9(47.925)
Լ-38
Խ2
1674

ԼԵՈ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՐ

„Հայաստան"
Հրատարակչություն
Երևան 1984

ԳՄԴ 63.3(2Հ)1
Հ 38

Խմբագրական կոլեգիա՝

ՆԵՐՍԻՍՅԱՆ Մ., ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Ջ., ԱՆԱՆԻԿՅԱՆ Բ., ԹԱՄՐԱԶՅԱՆ Հ., ՉԵԼԵՔՅԱՆ Հ., ՂԱԶԱՐՅԱՆ Հ., ՍԱՄՎԵԼՅԱՆ Խ., ՕՀԱՆՅԱՆ Ա.

Խմբագիր՝ Ջ. Ս. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Տեքստը պատրաստեցին՝

ԳՐԻԳՈՐՅԱՆ Վ., ԹՈՓՉՅԱՆ Ս., ՍԱՄՎԵԼՅԱՆ Խ., ՕՀԱՆՅԱՆ Ա.

Լեո
38 Երկերի ժողովածու: 10 հատորով.— Եր.: Հայաստան, 1984, հ. 4, ժամանակակից պատմ. (XIX դ. առաջին կես): Տեքստը պատրաստեցին Վ. Գրիգորյանը և ուրիշներ, խմբ.՝ Ջ. Ս. Կիրակոսյան.— 592 էջ:

Հատորը ներառում է XIX դարի առաջին կեսի հայ ժողովրդի պատմությունը, երբ ռուս ժողովրդի օգնությամբ Անդրկովկասն ազատագրվեց պարսկա-թուրքական լծից:

Հրատարակվում է առաջին անգամ:

Նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

ԳՄԴ 63.3 (2Հ) 1

Լ $\frac{0505040000}{701(01)84}$ 76—84 9 (43) 1

© «Հայաստան» հրատարակչություն, կազմելու, խմբագրության համար, 1984

Հայոց պատմություն

չորրորդ հատոր

Ժամանակակից պատմություն (XIX դարի առաջին կես)

գիրք առաջին

ՀԵՂԻՆԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Անհրաժեշտ եմ համարում այս հատորի սկզբում մի քանի անձնական բացատրություններով հասկացողություն կազմել տալ այն հանգամանքների մասին, որոնք տիրապետող են եղել այս ամբողջ ձեռնարկության վրա նրա սկզբնավորման առաջին իսկ օրից։ Յուրաքանչյուր մարդկային գործ իր միջավայրը կազմող հանգամանքների արդյունքն է։ Ծանոթանալով իմ այս գործի տիրական հանգամանքներին, ընթերցողը կիմանա նրա ամբողջ կյանքը, կիմանա պարզ կերպով, թե իմ այս աշխատանքի ընթացքում ինչ էի կարող անել և ինչ եմ կարողացել անել, ասել է թե նրա համար այլևս գաղտնիք չի լինի, թե ինչ հնարավորություններ եմ ես ունեցել իմ այս խոշոր ձեռնարկությունը կարելի եղածին չափ ազատ պահել խոշոր սխալանքներից։ Ընթերցողի այս գիտակցությունը չափազանց կարևոր է ինձ, հեղինակիս համար։

Երեսուն տարուց ավելի է, ինչ իմ մեջ ծնվեց մի ընդարձակածավալ, իր նախընթացը չունեցող հայոց պատմություն գրելու միտքը։ Առաջին հատորը, որ տպագրությամբ լույս տեսավ Թիֆլիսում 1917 թվականին, իմ պատկերացրած ծրագրի առաջին նմուշը կարող է համարվել։ Նույն այդ ծավալով հաջողությամբ ես գրած ունեմ նաև երեք հատոր, որոնց մեջ պատկերված են Միջին դարերի ամբողջ առաջին կեսը (V դարից մինչև IX դար) և Նոր ժամանակի ամբողջությունը (XVI դարից մինչև XIX դար)։ Ներկա տողերը ես գրել եմ 1927 թվականի ամառը, և այժմ իմ գործը ներկայացնում է մի այսպիսի պատկեր։ Բացի հիշած երեք հատորներից, ես գրած ունեմ և երկու կիսատ հատոր, որոնցից մեկի մեջ Միջին դարերի երկրորդ կեսի մի խոշոր հատվածն է, Գավառական թագավորությունների շրջանը, մինչև միջինասիական առաջին (սելջուկյան) արշավանքները։ Այս հատորը ես պիտի շարունակեի մինչև XVI դար և այսպիսով ամբողջացնեի իմ «Հայոց պատմությունը» մինչև XIX դար։ Բայց եթե չեմ կարողացել վերջացնել այդ դարերը, պատճառն այն է, որ իմ առջև կանգնած էին XIX—XX դարերն իրենց անհուն մեծ նշանակությամբ և մանավանդ անհուն բովանդակությամբ, որ պահանջում էր անհամեմատ ավելի մեծ աշխատանք, ծավալով և տարածությամբ, քան հայոց ամբողջ պատմությունը սկզբից մինչև XIX դար։

Իմ չափազանց փխրուն առողջությունը վերջին քսան տարիներում պահել է ինձ այն ճնշող տրամադրության մեջ, որ իմ կյանքը շատ կարճ է և շատ քիչ հնարավորություն պիտի տա ինձ ոգևորող այս մեծ գործի գոնե մի մասը լրիվ կատարելու համար։ Այս ծանր տրամադրությունն էր, որ այսօր էլ բռնացած է ինձ վրա, պատճառ էր դառնում, որ ինձ համար շատ կարևոր հարց դառնա այն, թե ո՞րն անել՝ շարունակել արդյոք Միջին դարերը, թե ձեռք առնել XX դարի պատմությունը։ Ինձ ավելի անհրաժեշտ էր թվում երկ-

բոլորը։ Ես կարծում էի, որ եթե չկարողանամ գրել սելջուկյան, մոնղոլական, կիլիկյան դարերը, դրանով մի մեծ բաց չէի թողնի իմ գործի մեջ, քանի որ մի ուրիշն էլ կարող էր կատարել այդ գործը շնորհիվ այն հանգամանքի, որ աղբյուրներն եթե ոչ ամբողջովին, գոնե մեծագույն մասամբ տպագրված են և հայտնի են ամենքին։ Մինչդեռ XIX—XX դարերի պատմությունը բոլորովին այլ պահանջներ ունի։ Այստեղ պատմաբանը գործ պիտի ունենա գլխավորապես դեռ անհայտ արխիվային նյութերի, նմանապես և այն տեսակ աղբյուրների հետ, որոնք թեև տպված են, բայց ցրված են զանազան հազվագյուտ հրատարակությունների մեջ և ենթակա են, գրչագիրների նման, կորստի և անհայտացման։ Ես քանի տարիներից ի վեր հավաքել էի այդպիսի նյութերի մի անհուն հարստություն, որ ինձ իրավունք էր տալիս կարծելու, թե կարող կլինեի ավելի լավապես, քան ուրիշ շատերը, գրել XIX—XX դարերի պատմությունը, իբրև մեծ և բազմակողմանի մանրամասնություններով ուսումնասիրած մի առարկա։

Եվ ես թողեցի իմ կիսատ մնացած հատորը և սկսեցի գրել հիշած երկու դարերի պատմությունը, որին, հետևելով ֆրանսիական պատմագրության մեջ ընդունված անվանման, տվի Ժամանակակից պատմություն հորջորջումը։

Խոստովանում եմ, որ բացի իմ նկարագրած հոգեբանական պատճառի՝ իմ այս տեսակ վճռի վրա ուժեղ ազդեցություն ունեցավ և ժամանակի ընդհանուր տրամադրությունը։ 1917, 1918, 1919 և 1920 թվականներն էին, հայությունը լողում էր իր արյան մեջ, ահռելիորեն առատ սարսափներից կքված ու խոշտանգված, փրկության նշույլներ չէին երևում, մարդիկ արդեն հաշտվում էին վատագույն ելքի անխուսափելիության հետ և մխիթարվում էին գեթ նրանով, որ իրենց ցավերը պատմության նյութ կդառնան և ապագա ժամանակներին կավանդվեն։ Այս տրամադրությունը շատերին ստիպում էր տեսնել ինձ և խորհուրդ տալ, որ թողնեմ հին ժամանակների պատմությունը և գրեմ օրվա եղելությունները, քանի որ նրանք թարմ են և հրամայողական, հիշողությունից չեն ջնջվել, իրենց առօրյա վավերաթղթերը չեն կորցրել։ Այս տեսակ հորդորներ ես լսում էի գրքի ու գրչի մարդկանցից։ Հասարակ ժողովուրդն էլ նույնպես էր մտածում, և ես հիշողությանս մեջ պահել եմ այդ բանը հաստատող մի քանի սրտառուչ ցույցեր։ Այսպես, 1919-ի ձմեռը, երբ բծավոր տիֆը կոտորում էր աջուձախ, Թիֆլիսի փողոցներից մեկում ինձ մոտենում է մի բոլորովին անծանոթ հայ մարդ, հարց ու փորձ անում իմ առողջության մասին և վերջիվերջո հայտնում, որ իր աղաչանքն այն է, որ ինձ լավ պահեմ, չհիվանդանամ, որպեսզի գրեմ այս սարսափելի օրերի պատմությունը։

Ես, ուրեմն, ձեռնարկեցի ներկա հատորի գրության, սկսելով այն 1921 թ. մայիսին։ Անընդհատ աշխատելով, գրեցի Ներածությունը և ռուս-պարսկական առաջին պատերազմն ամբողջովին։ Բայց շարունակել չկարողացա, որովհետև նորից և նորից ստիպված եղա, ինչպես և անցյալներում շարունակ, մի կողմ թողնել այս գործը և ընտանիքիս համար մի կտոր <հաց> աշխատել կողմնակի գրական զբաղմունքներով՝ թարգմանություններ անելով, առօրյա հրապարակախոսության մեջ մտնելով և զանազան, իմ այս աշխատության հետ ոչինչ առնչություն չունեցող պատվերներ կատարելով։

Այսպես ահա գոյացավ ներկա կիսատ հատորն իմ գործի մեջ։ Ես ծրագրել էի մի ամբողջական և համաչափ մեծ կառուցվածք, բայց նրա մեջ ահա մնացին երկու պատռվածք, որոնք ինձ անչափ ցավ ու կսկիծ են պատճառում։ Կկամենայի, սակայն, որ իմ ընթերցողն իմանար, թե ես լավ պատրաստված եմ այսպիսի մի հսկայական գործ հաջողությամբ գլուխ

բերելու համար։ Նյութերի մի ահագին առատություն կա ձեռքիս տակ, հավաքված տասնյակ տարիների իմ անխոնջ ու անդադրում որոնումներով, իսկ մեջս էլ կա աշխատելու անշեջ ունակություն։ Եվ եթե մեկը եղել է, որ ինձ հաղթահարել ու բանադատել է այս բանի մեջ, այդ իմ հին անողոք ու անպարտելի թշնամին է՝ իմ անապահովությունը։ Նա շարունակաբար արգելողի ու փշրողի դեր էր կատարում իմ ամբողջ գրական գործունեության ընթացքում, թեև ես նրա դեմ հանում էի մաքառման այն բոլոր միջոցները, որոնք կարող են մատչելի լինել իմ դրության մեջ գտնվող անհատին— զոհողություն, զրկանքներ, սակավապետություն, որոնք հարվածել են ոչ միայն ինձ անձնապես, այլև իմ հարազատներին ու սիրելիներին։ Տարաբախտաբար մաքառման այս եղանակը շատ քիչ արդյունքներ տվեց «Հայոց պատմության» գործի մեջ։

Արդեն սկսելով այսպիսի մի աննախընթաց, դժվար և պատասխանատու աշխատություն, ես կարող էի հույս դնել միայն իմ անհատական ուժերի վրա։ Ամեն պատրաստություն ես ինքս պիտի տեսնեի՝ նյութեր որոնել, գրել, արտագրել։ Երեսուն տարի անց եմ կացրել այս աշխատանքի մեջ, որ այսօր էլ դեռ ընդհատված չէ։ Օգնություն և քաջալերական վերաբերմունք շատ քչերից եմ տեսել, իսկ չարակամություն, անտարբերություն, նույնիսկ և թշնամանք՝ որքան կամենաք։ Օգնողներ եղել են մասամբ երեք վանական միաբանություններ՝ Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանները, Էջմիածինը։ Առաջին երկուսը արտագրել են ինձ համար շատ կարևոր ձեռագիր նյութեր՝ առանց որևէ ծախս պատճառելու ինձ։ Իսկ Էջմիածինը բաց է արել իմ առջև իր կաթողիկոսական դիվանի արխիվը (բայց ոչ ճեմարանինը, որից օգտվելը ինձ բացեիբաց մերժեց այն ժամանակվա քարտուղար բանաստեղծ Հովհաննիսյանը, ասելով, թե այդ մերժումն իր կատարյալ իրավունքն է)։ Ես շատ մեծ նյութ հանեցի կաթողիկոսական դիվանից, բայց այս բոլորն իմ անձնական աշխատանքով և դրամական զոհողություններով։ 1906—1907 ուս. տարում ես ուսուցիչ էի Էջմիածնի ճեմարանում և ութ ամիս օր ու գիշեր աշխատելով, արտագրեցի մոտ 3000 երես նյութ, բայց և վերջնականապես փչացրի իմ առանց այն էլ տկար աչքերը, իսկ իմ ստացած ռոճիկի մեծագույն մասը ծախսեցի՝ հազարավոր երեսներ արտագրել տալու համար թուրքահայ թերթերից, գլխավորապես «Մասիսից»։ Այս արտագրություններն են, որ այսօր XIX դարի պատմության իմ տնային արխիվի մեծագույն գանձերն են կազմում։

Հիշատակելով ինձ օգնություն հասցրածներին, չեմ կարող մոռացության տալ Կ. Պոլսի պատրիարք Օրմանյանին, որ իմ խնդրանքով ուղարկեց ինձ Ազգային ժողովի բոլոր ատենագրությունները, հայթայթելով ինձ այդպիսով մի շատ թանկագին և հազվագյուտ պատմական աղբյուր։ Բայց այս լուսավոր վերաբերմունքի կողքին առջևս ծառանում է նրա աշակերտ Զավեն պատրիարքի կոպիտ, ասիական վարմունքը։ 1921 թվին, երբ Կ. Պոլիսը գտնվում էր իմպերիալիստների ձեռքին, և Զավեն պատրիարքն իրեն համարում էր դաշնակցող կողմ և եվրոպական դիպլոմատիայի վերնահարկերը թևակոխելու պատրանքով էր հղփացած, ես դիմեցի նրան խոնարհ խնդիրքով, որ իմ պատմության համար նյութեր ուղարկե պատրիարքական արխիվից։ Բայց նա ոչ միայն չկատարեց այս խնդիրքը, այլև արժան չհամարեց պատասխանել նամակիս։ Նորին ամենապատիվ ամբարտավանությունը այժմ դահավիժված է, և ես չգիտեմ՝ երբևից կհասնե նրան իմ այս ձայնը՝ հայ արյունաշաղախ պատմագրության ամբողջ արհամարհանքը նրան արտահայտելու համար։

Ընդհանրապես այսպես էր, սակավ բացառություններով, այն կուլտուրական միջավայրը, որի մեջ ես երեսուն տարի աշխատել էի՝ գլուխ բերելու մի այնպիսի վիթխարի աշխատություն, որ ուրիշ ազգերի մեջ կատարվում է հավաքական գործակցությամբ։ Հայ իրականության մեջ չկա այսպիսի եղանակով մի ամբողջություն արդյունավորելու որևէ հնարավորություն։ Բավական չէ այս, չկա նաև պատմության պես համայնական մի գործի լուսավոր գիտակցություն։ Եվ բավական է, որ այսպիսի մի միջավայրում, անհատ մի գործիչ, որքան և չարքաշ, անշահասեր, լոկ գիտության սիրով վառված, չկարողանա հեշտությամբ ձեռք բերել բոլոր անհրաժեշտ նյութերը, և նրա գործի մեջ այսպիսով մնան շատ բացեր։ Ես հաճությամբ ընդունում եմ այս հանգամանքն իմ այս գործի վերաբերմամբ և խոստովանում եմ, որ արել եմ այն, ինչ կարողացել եմ։ Հուսով եմ, որ ապագա անաչառ քննադատությունը, եթե, իհարկե, իմ այս բազմամյա դժվար աշխատությունն արժանի կլինի երբևիցե նրա առաջ հանդես գալու, այնքան արդարադատ կլինի, որ կընդունի, թե իմ արածն էլ շատ մեծ բան է, գրեթե գերազանցում է մի անհատի ուժերը։ Դառն է եղել միշտ, և այսօր էլ մանավանդ, անտանելի դառն է ինձ համար պատմաբանի ճակատագիրը։ Այսօր էլ, թեև արդեն գրեթե կուրություն եմ հասել, ես եմ միայն, որ նորանոր նյութեր եմ որոնում, արտագրում հարյուրավոր երեսներով, մի դաժանագույն աշխատանք, որ ինձ ծանր ֆիզիկական տանջանքներ է պատճառում։ Այնքան անագորույն հալածիչ է իմ հին թշնամին՝ իմ անապահովությունը, նույնիսկ իմ գրական գործունեության հիսնամյակին, որ լրացավ հենց այժմ, երբ գրում եմ այս տողերը, առանց, սակայն, կարենալու թեթևացնել իմ դժնդակ հիվանդ կացությունը։

Սակայն, ճշմարտությունը ամբողջացրած լինելու համար, պետք է ասեմ, որ իմ այս գործը միանգամայն զուրկ չէ մնացել և գրամական աջակցությունից։ Իմ բարեկամ Գասպար Տեր-Մարգարյանը, միակ մարդը, որից ես իմ ամբողջ գրական գործունեության շրջանում վայելել եմ եղբայրական անկեղծ սիրո և համակրանքի բազմաթիվ ապացույցներ, որոնք արտահայտվում էին նաև առատ նյութական օգնության ձևով, 1916 թվականին դրեց իմ տրամադրության տակ 7000 ռուբլի՝ այս «Պատմության» առաջին հատորը հրատարակելու համար, պայման դնելով, որ այդ գումարը ֆոնդ կազմե և հետևյալ հատորների տպագրության համար։ Այս ամենալավ միջոցն էր մի այսպիսի բազմածախս հրատարակություն ապահովելու համար։ Առաջին հատորը լույս տեսավ 1917-ի ամառը։ Մինչդեռ գրականության տիրացած հայ դպիրներն ու փարիսեցիները միանգամայն լռության մատնեցին իմ այդ խոշոր հատորը, հայ ընթերցող հասարակությունը ցույց տվեց դեպի նրան մի բոլորովին արտակարգ, աննախընթաց վերաբերմունք։ Գիրքն սկսեց սպառվել չտեսնված արագությամբ՝ չորս ամսվա ընթացքում վաճառվեց 2000 օրինակ, և ես արդեն պատրաստություններ էի տեսնում երկրորդ հատորը տպագրության հանձնելու։ Բայց վրա հասան 1917-ի վերջին ամիսների հեղափոխական հուժկու տակնուվրայությունները, այնուհետև նաև թուրքական արշավանքները, հայ ժողովրդի օրհասական տագնապը և համաճարակների, կոտորածների ու կատարյալ տնտեսական փլուզումների ճանկերում մոռացվեց ամեն ինչ, նրա հետ և իմ «Հայոց պատմությունը»։ Հրատարակիչը կարգադրեց, որ վաճառքից գոյացած գումարը ես գործածեմ իմ և ընտանիքիս ապրուստի համար։

Ահա թե ինչու ձեռագիր մնացին մյուս հատորները։

Ներկայումս հանգամանքները թույլ չեն տալիս նույնիսկ մտքով անցկացնել, թե երեսուն տարիների իմ հարատև և մաշեցնող տքնությունների արդյունք այս գործը կարժանանա երբևիցե տպագրության։ Ապագան այս կողմից մռայլ հուսահատությամբ է նայում ինձ։ Ի՞նչ կլինի։ Գերեզմանն արագ մոտենում է ինձ, և նրա գործը կատարված լինելուց հետո արդյոք երկա՞ր տեղ կունենա իմ այս գործը աշխարհի վրա։ Ինձ համար այս մի անթափանցելի, սոսկումներով լի գաղտնիք է, որ, սակայն, չէ կարող այն աստիճան հուսահատեցնել ինձ, որ լքեմ տասնյակ տարիներով իմ փայփայած, իմ խանդավառ ոգևորության աղբյուրը կազմած գաղափարը։ «Հայոց պատմությունը» ես չեմ կարող կիսատ և անկատար թողնել, ինչ էլ որ պատահի։ Եթե ինձ վիճակված է, որ լոկ ինքս ինձ համար գրեմ, այս էլ բավական է, որ ես նախկին ջերմեռանդությամբ, սրբազան ակնածությամբ տանեմ գործս այսուհետև էլ, քանի շունչս բերանումս է, քանի պատմական ճշմարտությունը կարող է սրտիս մեջ վառ պահել նրան խղճի մտոք, անաչառ ու անկաշառ ծառայելու պաշտամունքը։

Վեց տարվա ընդհատումից հետո վերսկսում եմ Հայ ազգի Ժամանակակից Պատմությունը, որ պարունակում է իր մեջ մոտ 130 տարվա տարածություն։

Առաջիկա աշխատանքը, կարող եմ ասել, անհունորեն մեծ է։ Նա կբաղկանա 4—6 գրքերից, յուրաքանչյուրը մոտ 1000-ական տպագրական էջերից։ Հույս չունեմ ամենևին, թե իմ սպառված ուժերիս մնացորդները կարող են գլուխ բերել այդ գրքերը։ Գիտեմ միայն, որ ինձ երբեք չի պակսի նյութ՝ այդքան գրքեր լցնելու համար։ Ես պիտի գրեմ ամենամանրամասն պատմություն, որ կխոսե վավերագրերի լեզվով։ Ամենևին ինձ չպիտի շփոթեցնի այն հանգամանքը, որ նյութի չափազանց մանրամասնացումը կարող է ոմանց կողմից համարվել հակագիտական մեթոդ։ Ես ունեմ իմ սեփական ըմբռնողությունը, գիտեմ, որ հայոց պատմությունը մի ուրույն աշխարհ է և նրան պատկերացնելու համար բոլորովին հարկավոր չէ սեղմվել ընթացիկ մեթոդական շրջանակների մեջ։

Իր մի շատ խոշոր գծով հայոց պատմությունը խիստ տարբերվում է ուրիշ ազգերի պատմությունից, դառնում է համարյա միանգամայն ինքնագլուխ, կղզիացած երևույթ համամարդկային պատմության հանդիսարանում։ Հայոց պատմությունը VI—VII դարերից դառնում է պատմություն մի ժողովրդի, որին վիճակվում էր աստիճանաբար դարերի ընթացքում, բայց անշեղ, ենթարկվել նվազման, սպառման՝ ֆիզիկական ոչնչացման։ Այս սոսկալի պատմական պրոցեսը այն առանցքն է, որի շուրջը պտտվում է ամբողջ հայ ժողովրդի կյանքն իր պատմական հայրենիքում և կատարվում է երկու ճանապարհներով՝ կոտորածներով և արտագաղթերով։ Թե մեկը և թե մյուսը ոչնչացող մարդկային մեծ զանգվածների տանջանքների, տառապանքների ճանապարհներն են։ Հայոց պատմության այս շրջանն իսկապես կյանքի հանդիսարան չէ, այլ մահվան՝ դանդաղ ու տանջալից, աղետալի, բանի մահացման արյունոտ տեսարանը։ Հայ ժողովուրդն իր այս պատմության մեջ ծովացրել է այն բոլոր դժբախտությունները, որոնք կարող են վիճակվել մարդ ասած արարածին։ Չկա մի այլ տեղ, ուր բյուրավոր և միլիոնավոր մարդկանց խողխողումն այնքան ահռելիորեն խտացած ու լեռնացած լիներ, ինչպես հայոց պատմության մեջ։

Եվ եթե այդ անհետացող ժողովուրդը լիներ լոկ մի անասնական հոտ, եթե նա միանգամայն նման լիներ ամերիկական այն վայրենի ցեղերին,

որոնք ոչնչացան եվրոպացիների հարվածների տակ՝ առանց հետքեր թողնելու իրենց գոյության մասին, այն ժամանակ նրա պատմությունը պիտի լիներ լոկ մի սպանդանոցի օրագրություն, որի մեջ արձանագրվում են, թե քանի-քանի գլուխներ են կտրվել։ Բայց հայ ժողովրդի սպանդանոցն էլ իր առանձնահատկությունն ունի։ Այդ սպանդանոցի մեջ դարերի ընթացքում սոսկ համատարած մահվան ցրտությունը չէր բունացած։ Այդ մորթվող ժողովուրդը մի անասնական դիակ չէր։ Նրան չէին զլացված ստեղծագործական առաքինությունները։ Նա մորթվում էր շարունակ, բայց և մրցում էր, ստեղծագործում էր, արժեքներ էր մեծացնում։ Նա դժբախտ դատապարտված էր, բայց և մեծ ուխտավոր։ Այս է ահա, որ առանձին հմայք է հաղորդում նրա պատմությանը, դարձնելով նրան ամենահուզիչներից մեկը մարդկային տրագեդիաների մեջ։

Այս հանգամանքը հայոց պատմությունը մեծ թափով ցուցադրում է մանավանդ այն 130 տարիների ընթացքում, որոնց բովանդակությունը պիտի արձանագրվի իմ գործի այս հատորի մեջ։ XIX—XX դարերը հայ պատմական սպանդանոցի ամենաահռելի հանգրվաններն են կազմում։ Տասնյակ, հարյուր հազար, մինչև իսկ միլիոն անհատներ են ջարդվում, հայության մի խոշոր մասն անհայտանում է, և նրա պատմական հայրենիքն իսպառ դատարկվում։ Իմ առջև վավերաթղթերի ահագին կույտեր են դիզված այդ հրեշային սպանությունները պատկերացնող, մանրամասնող և բացատրող։ Կյանքի ահռելի փաստերի ամբողջ լեռներ, և ո՞ւր պիտի նրանք ամփոփվեն և պահպանվեն, եթե ոչ այդ իսկ ազգի սեփական պատմության էջերում։ Ես նրանց կուսումնասիրեմ ամենայն ուշադրությամբ և կտեղավորեմ իրենց պատշաճավոր, իրենց իրավունք դարձրած անկյուններում, ուր նրանք պիտի ապրեն, ինչի համար ապրում է և պիտի ապրե առհասարակ մարդկային պատմությունը, այն է՝ ճշմարտություն ներկայացնելու համար մի ամբողջ մորթված ժողովրդի նկատմամբ, հրապարակի վրա դնելու ոճիրների անհուն շարքերը, նրանց կատարողներին, կատարել տվողներին ու հովանավորողներին։

Պատմության դատաստան։ Եթե աշխարհի մեջ ցնորք չէ այն սրբազան հասկացողությունը, նա պիտի, ուրեմն, դառնա միլիոնավոր անմեղ մարդկանց, կանանց և երեխաների թափված արյան հատուցումը։ Ոչինչ չստացան այդ անթիվ ու անհամար նահատակներն այս աշխարհից, մեր ժամանակի գազանային, բայց չափազանց փառաբանված քաղաքակրթությունից։ Մնում է, որ հայոց պատմությունը սիրով և խանդաղատանքով հավաքե, իր ծոցի մեջ ծրարե նրանց գերմարդկային տանջանքներն իբրև նվիրական նշխարներ, հետո արդարության և մարդկայնության ատյանների առջև դատի հանե նրանց դահիճներին, մեծ ոճրագործներին, մարդասպաններին, լինին դրանք մի կայսր թե սուլթան, մի մինիստր թե մի հասարակ քուրդ ավազակապետ։ Փոքր ոճիրները մեծերի, ահռելիների հետ հավասար իրավունք ունեն հրապարակային ուշադրության ներկայանալու կողմից։

Այսպես է իմ, հայ պատմագրողի հասկացողությունը, և ես չեմ կարծում, թե կարելի կլինի մի այլ հասկացողություն դնել այս ծավալով և ծրագրով տարվող մի գործի մեջ։ Ինձ կարող են առարկել, թե ձանձրալի և տաղտկալի են գազանությունների, մարդկային հալածանքների մանրամասն նկարագրությունները։

Այո՛, այո՛, թող այդպես լինի։ Մեր ամբողջ կյանքն է, դարերից ի վեր, այդպիսի հատկություններով ծանրաբեռնված, խեղդիչ։ «Ինձ երեկը կրկնվում է միշտ այսօր»,— ասում է հայ բանաստեղծը։ Այս հայոց պատմու-

թյան ամենաբարձր աղաղակն էլ է, մի պատմության, որ շարունակ կրկնվում էր, բերում միշտ միևնույնը։ Ձանձրալի և տաղտկալի դառնալն ինձ ամենևին չէ զբաղեցնում։ Ես ֆելիետոն կամ երգիծաբանություն չեմ գրում, որպեսզի հաճելի և ընդունելի դառնալու մասին մտածեմ։ Ես պատմություն եմ գրում, այն էլ մեր ժողովրդի պատմությունը, ամբողջովին, ծայրից ծայր դժբախտություն։ Մի՛ մոռանաք, մեր պատմությունը ամենից առաջ և ամենից շատ մի հսկայական մարտիրոսագրություն է...

Մաղթում եմ ինձ համար մի կամ երկու տարվա կյանք, որպեսզի կարողանամ վերջացնել իմ հարազատ ժողովրդի մարտիրոսագրության վշտահար մատյանը։ Նրա մեջ միայն մահ ու հալածանք չէ։ Նրա մեջ հալածանքներից հալածանք, կոտորածներից՝ կոտորած կենսաբուխ և կենսունակ ժպիտներ էլ են թրթռում՝ մեր գրականությունը, մեր հանրային շարժումները, մեր ոգորումները...

ԼԵՈ

1927, օգոստոսի 3

Թիֆլիս

1

ՌՈՒՍԱԿԱՆ ՄՈՒՏՔՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ

1. Վրացական դեպքերը: *Տասնութերորդ դարը վերջանում էր Վրաստանում չափազանց տագնապալից պայմանների մեջ։ Ռուսական հովանավորությունն էլ, որ խոստացված էր Վրաստանին Գեորգիևսկի դաշնագրով 1783 թվին, չկարողացավ, ինչպես տեսանք իր տեղը[1], փրկել այդ երկիրն այն մահացու վտանգից, որ սպառնում էր իսլամական աշխարհը չորս կողմից. արևմուտքից՝ Թուրքիան, հարավից և արևելքից՝ Իրանը և հյուսիսից՝ Կովկասյան հզոր լեռնաշղթան իր բազմաթիվ ռազմիկ և գիշատիչ ցեղերով։ Մենք տեսանք նաև, որ Ռուսաստանի հովանավորությունն, ընդհակառակն, շնորհիվ Եկատերինայի խարդախ և խաբեբա քաղաքականության, ավելի ևս փութացրեց Վրաստանի քաղաքական օրհասը, զրկելով նրան և այն կիսանկախությունից, որ նա ամեն տեսակ, նույնիսկ դաժան և ամարդի զոհողություններով պահպանել էր դարերից ի վեր։ Աղա Մահմադ խանի արշավանքն ու Թիֆլիսի ավերումն այնպիսի հարվածներ էին, որոնցից այլևս չկարողացավ ուշքի գալ վրաց պետականությունը։ Արտաքին հանգամանքներն էին, որ ավելի զարգացրին և սպառնալից դարձրին ներքին կազմալուծումը, բարոյական քայքայումը։ Այս երևույթն այնպիսի կերպարանք ստացավ, որ ուշադիր դիտողը չէր կարող այն անսխալ եզրակացության չգալ, որ երկիրը պիտի կործանվի իր ներքին ընտանի անկարգություններից։ Մի ավատական երկրի ամբողջ ցրվածությունն ու հակամարտ բազմագլխությունն էր պատկերանում վրաց պետությունն իր այդ հոգեվարքի օրերին։ Մենք արդեն բավականաչափ ընդարձակորեն բնորոշել ենք[2] Հերակլ Բ թագավորին իբրև մի վեհապետի, որ քաջ էր պատերազմի մեջ, բայց միանգամայն անհաջողակ՝ վարչական և մանավանդ քաղաքական գործերի մեջ։*

Աղա Մահմադ խանի ավերիչ արշավանքը զրկեց նրան ծերության հասակում նաև հերոսի համբավից։ Թույլ ու անպաշտպան, գլուխը կորցրած՝ նա չէր կարողանում նույնիսկ իր սեփական ընտանիքի մեջ հաստատել կարգ ու հաշտություն։ Հենց այստեղ էլ, նրա բազմաթիվ որդիների ու թոռների մեջ ծնվեց ու մեծացավ այն անհաշտ երկպառակությունը, որ փոթորկեց երկիրը, և այս փոթորիկն էլ վերջ ի վերջո ժայռերին զարկեց վրացական վատուժ և փխրուն պետականությունը և փշուր-փշուր արավ նրան։

Հերակլն ամուսնացել էր երկու անգամ. առաջին ամուսնուց նա ուներ մի որդի՝ Գեորգին, որ և թագաժառանգ էր, իսկ երկրորդ կնոջից, որի անունն էր Դարեջան, ուներ վեց որդի, որոնք, ընդունված կարգով, պիտի մնային լուկ

¹ և ² Տե՛ս այս գործի III հատորը, գիրք երկրորդ։

արքայորդի։ Այս բանի հետ էր, որ չէր կարողանում հաշտվել Դարեջանը, մի շատ փառասեր և խանդոտ կին, որ ամեն կերպ աշխատում էր խլել թագաժառանգության իրավունքն իր խորթ որդու ձեռքից, օգտվելով, մանավանդ, այն հանգամանքից, որ ուներ բազմաթիվ ազգականներ, որոնցից կարելի էր կազմել մի ուժեղ կուսակցություն։ Բնականաբար, երկու կուսակցություն էր ծագում միևնույն ընտանեկան օջախից՝ իրար դեմ նույն օջախի շուրջը կռվելու համար։ Դարեջան թագուհին, վերջին տարիները, օգտվելով Հերակլի ծերությունից ու հիվանդությունից, իր ձեռքն էր առել թագավորությունը և հարկադրեց իր ամուսնուն ստորագրել մի թուղթ, որով հայտարարվում էր, թե թագավորի մեռնելուց հետո թագն անցնում է Գեորգիին, բայց այն պայմանով, որ սրա մահից հետո թագն անցնե արդեն ոչ թե սրա ավագ որդի Դավթին, ինչպես պիտի լիներ օրենքով, այլ Գեորգիի եղբայր Հուլոնին, ուրիշ խոսքով՝ Դարեջան թագուհու որդուն։ Թե ինչքան մեծ նշանակություն ուներ այս անօրեն գործը հենց իր, զառամյալ թագավորի համար, երևում է այն հանգամանքից, որ նա նամակ գրեց Գեորգիին, զղջաց իր արածի վրա և հավատացնելով, թե իրեն ստիպել են ստորագրել մի այդպիսի թուղթ, խոստանում էր ջնջել հին ժառանգական իրավունքի դեմ մեղանչող այդ անարդարությունը[1]։ Սակայն Թիֆլիսի ավերումը, ժողովրդի տառապանքները, մասնավորապես, իհարկե նաև Դարեջան թագուհու դիմադրությունն արգելեցին նրան այդ խոստումը կատարել մինչև 1798 թվի հունվարի 11-ը, երբ նա մեռավ Թելավ քաղաքի իր ապարանքում։ Մինչև վերջին րոպեն դժբախտ թագավորը տեսնում էր իր մահվան անկողինը թշնամիներով շրջապատված՝ թշնամական վեճերով գահին տիրանալու համար։ Իսկ երբ նա արձակեց վերջին շունչը, Դարեջանն իսկույն գործի կպավ, որպեսզի հարկադրե Գեորգիին թագը տալ Հուլոնին կամ հենց իրեն, որ Վրաստանի թագուհին էր։ Սակայն այս խաղը չհաջողվեց, և Գեորգին հաջորդեց իր հորը, հենվելով գլխավորապես թուրք և հայ ազնվականության վրա, մասամբ նաև վրաց ազնվականության մի քանի շրջանների վրա։

Բայց եթե Վրաստանի պետականությունն իր վերջնական քայքայման համար սպասում էր դեռ էլի մի դժբախտության, այդ դժբախտությունը դարձավ հենց ինքը՝ Գեորգի թագավորը, որին տված էր երեք տարուց մի քանի օր պակաս ժամանակ նստելու Վրաստանի արքայական գահի վրա, վրաց թագավորների ցանկն ընդմիշտ անփառունակ կերպով փակելու համար։ Դա մի խեղճ և անկարող թագավոր էր, երիտասարդության հասակում ոչ անհաջող զինվորական քաջարիության, իսկ այժմ՝ ավելի մի վանական, քան երկրի կառավարիչ, աստվածավախ և կրոնամոլ, հոգևորականներին սիրելի, հիվանդոտ, արտակարգ շատակերությունից տառապող։ Սկզբից ևեթ նա շատ իրավացիորեն համոզմունք կազմեց, որ իր բանը չէ ինտրիգներով, կուսակցական անհաշտությամբ տոգորված մի միջավայրում հաջողեցնել հզոր հարևանների հարվածների տակ դրված մի երկրի պաշտպանությունն առանց մի ուժեղ խնամակալի հովանավորության, ուստի իր հորից ավելի մեծ հաճությամբ և զիջողականությամբ էր որոնում Ռուսաստանի թևարկությունը։ Եվ ցարերի պետությունը ցույց էր տալիս իրեն հոժարությամբ ունկնդրող Կովկասի հարավային ստորոտներից եկող այն թախանձանքներին, որոնցով օգնություն և պաշտպանություն էին աղերսում հանուն քրիստոնեության, հանուն դավանակցության։ Այս մի հին հառաչանք էր, որ սովոր էին ար-

¹ Дубровин, Георгий XII последний царь Грузии и присоединение ее к России, Спб, 1867, с. 51.

ձակել Ասիայի երկաթե շղթաների մեջ մաշվող փոքր ու թույլ ազգությունները, և Վրաստանն էլ շատ վաղուց էր սովոր, ինչպես տեսանք մեր այս գործի նախընթաց հատորում, այս հառաչանքը բավական հաճախ հնչեցնել իր նման օրթոդոքս Մոսկվայի և Պետերբուրգի մեջ։ Բայց մենք գիտենք և այն, որ Պավել կայսրն իր մայր Եկատերինայից ժառանգել էր Արևելքում և Հարավում ծավալվելու ձգտումն, առանց սակայն նրա խաղերը խաղալու՝ մանր և սորուն ազգերի անկախության, նոր քրիստոնեական-ազգային թագավորությունները ստեղծելու թատերական ներկայացումների մեջ։ Վրաստանի աղաչական ձայնը Ռուսաց արքունիքին շատ հաճելի էր և շատ ընդունելի, որովհետև Ռուսաստանին հարկավոր էր Կովկասն իբրև մի հսկայական միջնաբերդ, որից կարելի էր նվաճող ձեռքեր տարածել դեպի Միջերկրական ծովը և Հնդկական օվկիանոսը։ Վրաստանն այդ մեծ միջնաբերդի առաջավոր պահակն էր կազմում, ճակատը դարձրած դեպի ճոխ և ջերմ արևով արդասավորվող Հարավը։

Բայց տիրանալ Կովկասի միջնաբերդին հեշտ չէր։ Դարերի սկզբից լեռնաշղթայի մութ բավիղներում վխտում էին անթիվ ցեղեր, հռչակված իբրև անպարտելի պատերազմողներ և գիշատիչներ։ Դրանց ոտնատակ տրորելով պիտի անցներ ռուսական նվաճողականությունը դեպի իր տենչացած Հարավը։ Հաշիվը պարզ էր և աղաղակող։ Ռուսական առաջխաղացության գիծը որքան մոտենում էր գլխավոր լեռնաշղթային, այնքան ռազմիկ տրամադրության ավյուն էին գտնում լեռնական ցեղերը, հարդարելով Հյուսիսի դեմ մի դաժան և անմեռ պատերազմական դաշտ, որ շատ պարզ էր ներկայանում Ռուսաստանին իր հեռանկարներով։ Հաստատվելով Վրաստանում, Ռուսաստանը հեշտությամբ կարող էր բռնել ազատասեր լեռնցիների թիկունքը, դնել նրանց երկու կրակի մեջ, ամեն ժամանակ մատնել սովի, քանի որ նրանք, կտրված լինելով ռուսական Հյուսիսային Կովկասից, պարեն ստանում էին Հարավային Կովկասից։ Այս լեռնային պատերազմի մեջ չափազանց կարևոր էր մանավանդ այն, որ ունենալով իր ձեռքում Վրաստանը, ռուսական արշավանքը կարող էր անջատել լեռնցիներին Թուրքիայից և անհնարին դարձնել այս վերջինի կողմից որևէ օգնություն իր հավատակից լեռնցիներին։

Այսպես էին ռազմագիտական առաքելությունները։ Պակաս չէին կարևոր և այն տնտեսական առավելությունները, որ կբերեր Ռուսաստանին Վրաստանը, կանգնեցնելով նրան Փոքր Ասիայի և Իրանի լեռնադաշտերով ոլորվող համաշխարհային առևտրական ճանապարհների վրա։ Այս բոլոր նկատառումներով էլ Ռուսաց արքունիքն շտապեց արձագանք տալ Գեորգի ԺԲ-ի խնդրանքներին։ Պետք էր պարզապես Վրաստանը դարձնել մի ռուսական նահանգ։ Այս արդեն վճռված բան էր։ Բայց ի՞նչ անել Գեորգի թագավորին։ Վճռվեց կցումը դարձնել խաղաղ ու հոժարակամ, առանց բռնության գործադրելու։ Եվ այս պատճառով թույլատրվեց, որ գործն առժամանակ, մինչև Գեորգիի մահը, կրե եկատերինյան խաղի կերպարանք։ Ինչպես նշեցինք, Թիֆլիս ուղարկվեց ռուսական մի զորագունդ՝ գեներալ-մայոր Լազարևի հրամանատարությամբ և նրա հետ մի քաղաքացիական պաշտոնյա՝ Կովալենսկի, որ Ռուսաստանի ներկայացուցիչը պիտի լիներ Վրաց արքունիքում։ Այս երկուսն էլ փաստորեն իրենց ձեռքն առան Վրաստանի ամբողջ կառավարությունը, իսկ թագավորը դարձավ նրանց կարգադրությունների և ցուցմունքների հլու, կամազուրկ կատարողը։ Եվ Գեորգին դժգոհ չէր իր այս վիճակից։ Մահմեդական աշխարհը նորից հուզմունքով էր նկատում, որ վրացիները բերին ռուսներին, և նորից շարժումներ սկսվեցին՝ Վրաստանը պատժելու համար։ Հարձակումները հաճախացան, մանավանդ եռանդով գործել սկսեց Վրաստանի

պատուհասը կազմող Օմար խանը, որ Դաղստանից ավերիչ արշավանքներ էր տարածում մինչև Թիֆլիս։ Այս կատաղի բախումները ետ էին մղվում ռուսական սվիններով, այնպես որ Գեորգին իր իշխանությունը չէր տեսնում վտանգված դրության մեջ։ Նույն սվինները հովանավորում էին նրան և թագաժառանգական վեճերի մեջ, որոնք գնալով ավելի ու ավելի սաստկանում էին։ Իր խորթ մոր և եղբայրների դեմ Գեորգին ուներ մի այնպիսի ուժ, որպիսին էր գեներալ Լազարևը, որ հենվելով իր զորաբաժնի վրա, դարձել էր Վրաստանի իրական տերն ու տնօրենը ու, կատարելով Պետերբուրգի հրահանգները, որոնք հասնում էին նրան Հյուսիսային Կովկասի ռուսական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Կնորինգի միջոցով, պարտավորություն ուներ վերաբերվելու Դարեջան թագուհու կուսակցության, իբրև Ռուսաստանի շահերին հակառակվող մի հոսանքի։

Ռուսներին Անդրկովկաս բերելը Իրանում էլ մեծ դժգոհություն էր հարուցել վրացիների դեմ։ Աղա Մահմադ խանին հաջորդած Բաբախանը, որ ստացավ Ֆաթալի շահ անունը, ազդարարություններ արավ Գեորգիին, հին սեփականատիրոջ պահանջներ ներկայացրեց, կապելով դրանց զորական շարժումների հետ։ Այս հանգամանքն ստիպեց ռուսներին մի երկրորդ գունդ էլ ուղարկել Թիֆլիս՝ գեներալ Գուլյակովի հրամանատարությամբ։ Այսպիսով մեծանում էր Թիֆլիսի մեջ մի զինական ուժ, որ բավական հեղինակավոր էր Վրաստանի սահմանները պաշտպանելու համար, բայց որ միևնույն ժամանակ կատարյալ էր դարձնում Վրաստանի իբրև խաղաղ կերպով նվաճված մի երկրի պատկերը։ Չունենալով իր սեփական ազգային փոքր ի շատե աչքի ընկնող զինական ուժը, Վրաստանը չուներ իրապես և քաղաքական ինքնուրույնություն։ Բայց Գեորգին սրանից ավելի լավ մի վիճակ չէր էլ ենթադրում։ Պետությունը նրա ըմբռնողության մեջ եկել հանգել էր այնպիսի մի դժբախտ մոլորության, թե բավական է և այն, որ ինքը ինչպես և լինի, թագ պահե իր գլխին և գերեզման գնալիս հանձնե այդ թագն իր որդուն միայն։ Եթե ռուսաց կառավարությունն ապահովեր այսպիսի մի դրություն, այն ժամանակ Գեորգին պատրաստ էր ընդունել ռուսական հպատակություն, միացնելով ընդմիշտ Վրաստանը Ռուսաստանին։ Իսկ երկրի դրությունը շարունակ մտրակում էր խղճուկ թագակրին այդ ուղղությամբ գնալու։ Նրա եղբայրների թշնամությունը հարաճուն էր։ Ոչ մի հաշտություն, հայտարարում էին նրանք, չպիտի լինի, մինչև որ թագն իրենց չանցնի։ Երկրի մեջ ծայր էր տալիս անիշխանությունը, ավազակությունները ու կողոպուտները բազմանում էին։ Թագաժառանգություն պահանջող եղբայրներից մեկը, Ալեքսանդրը, մի շատ եռանդոտ, քաջ և գործունյա երիտասարդ, ծածուկ հեռացավ Պարսկաստան և այնուհետև մինչև իր մահը հանդիսացավ Ռուսաստանի կատաղի թշնամին, ուխտած լինելով պարսիկների օգնությամբ ետ խլել իր հայրական հափշտակված ժառանգությունը, Վրաստանի անկախությունը։ Այսպիսով, վրաց կործանվող գահի շուրջը մարտնչող հոսանքներից մեկը զուտ ազգային կերպարանք էր ընդունում, քանի որ չէր ուզում, որ Վրաստանը զրկվի իր դարավոր անկախությունից։ Այս՝ Դարեջան թագուհու կուսակցությունն էր։ Մյուսը, Գեորգի թագավորի կուսակցությունը, ռուսասեր հոսանքն էր։

Օրեցօր ուժեղացող պայքարի դիմաց՝ թույլ և հիվանդոտ թագավորը միայն մի բան գիտեր՝ խնդրել Լազարևին, որ նա կարգ ու խաղաղություն հաստատե, պաշտպանե իրեն ու իր ընտանիքը։ Գնալով նրա առողջական դրությունը վատանում էր։ 1800 թվականի աշնանը նրա հիվանդությունն այնքան առաջ էր գնացել, որ առողջանալու հույս այլևս չէր մնում։ Այդ ժամանակ նա նորից մի դեսպանություն ուղարկեց Պետերբուրգ՝ Վրաստանի հարցը վերջնականա-

ղիս լուծելու համար։ Դեսպանները Գեորգիի կողմից առաջարկում էին Պավել կայսրին այսպիսի պայմաններ. Վրաստանը դառնում է Ռուսաստանի հպատակը. վրաց ամբողջ ժողովուրդը պարտավորվում է սրբությամբ կատարել այն ամենը, ինչ կատարում են բոլոր ռուսահպատակները, չհրաժարվելով ոչ մի օրենքից և հրամանից, ճանաչելով ռուսական կայսրին իր բնական թագավոր և ինքնակալ։ Մնալով իր գահի վրա, Գեորգին հանձն էր առնում կառավարել երկիրն այն օրենքներով, որ կտա ռուսաց կայսրը և պարտավորվում էր իր կողմից օրենքներ չհրատարակել Վրաստանում։ Վրաց թագավորության դրությունը լավագույն կերպով բնորոշում էր այն հանգամանքը, որ Գեորգին խնդրում էր իրեն ռոճիկ նշանակել ռուսական գանձարանից (տարեկան 200 հազար ռուբլի, հատկացնելով նրան նաև ռուս ճորտեր 30 հազար հոգի), Չէր մոռանում և իր եղբայրներին, խնդրում էր տալ նրանց կենսաթոշակ կամ պահելով նրանց Վրաստանում, կամ տանելով Ռուսաստան։ Այս բոլորի դիմաց թագավորը կայսրին էր թողնում Վրաստանի եկամուտները, իրավունք տալով նրան ծախսել այդ եկամուտները, ինչպես ինքն է ցանկանում[1]։

Ռուսական կառավարությունն, իհարկե, չէր կարող այսպիսի մի ձեռնարկության ապահովել, այսինքն՝ իր զորքով և իր դրամով Գեորգիի և նրա ժառանգների համար թագավորական գահ պահպանել։ Ստանալով իր գործակալներից հստատ տեղեկություններ, թե Վրաստանի դրությունը ճգնաժամային է, թե այդ երկիրը չպիտի մնա թագավորող տան ձեռքին, այլ, եթե Ռուսաստանը կողմնակի հանդիսատես մնա, պիտի ընկնի պարսիկների կամ թուրքերի և կամ, վերջապես, Կովկասի լեռնցիների ձեռքը, Պավել կայսրը վճռում է, առանց պայմանների և տատանումների, միացնել Վրաստանը Ռուսաստանին, դարձնել այն մի պարզ ռուսական նահանգ, թույլ տալով, որ Գեորգին իր կյանքը վերջացնի իր գահի վրա։ Միակ զիջումը, այն էլ կիսատ-պռատ, որ արվում էր դանդաղ մեռնող թագավորին, այն էր, որ թագաժառանգ Դավիթը, իբրև ռուսական զորքի մեջ ծառայող և գեներալի աստիճան ստացած, ժամանակավորապես նշանակվում էր նոր միացված երկրի ընդհանուր նահանգապետ։ Այս նկատառումներով էր, որ կայսրը նոյեմբեր ամսին կարգադրեց, որ եթե Գեորգին վախճանվի, թույլ չտրվի, որ մի ուրիշը նրա տեղ թագավորի, մինչև որ ինքը կարգադրություն կանի, թե ինչպես պետք է վարվել։ Վրացական դեսպանությունը հետ ուղարկվեց Թիֆլիս՝ Գեորգիից նոր թղթեր տանելու պատրվակով։ Բայց մինչև որ այդ դեսպանությունը դեռ ճանապարհին էր և Թիֆլիս չէր հասել, Պետական խորհուրդը, որի քննությանն էր Պավելը ենթարկել վրացական հարցը, <որոշեց, որ> միայն նոր քաղաքական, ռազմագիտական և տնտեսական տեսակետներից հարկավոր է և օգտավետ Վրաստանն անվերապահորեն Ռուսաստանին կցել։ Այս վճռի հետևանքով էլ Պետերբուրգում դեկտեմբերի 22-ին հայտարարվեց կայսերական հրովարտակ, որով Վրաստանն ընդմիշտ Ռուսաստանի մի անբաժան մասն էր դառնում։

Վեց օր այդ բացարձակ ցարական բռնությունից անցած, դեկտեմբերի 28-ին, Թիֆլիսում տեղի է ունենում մի այլ դեպք։ Վրաց դեսպանները դեռ տեղ չէին հասել և ոչ ոք տեղեկություն չուներ կցման հրովարտակի մասին և ահա գիշերվա ժամը 11-ին վախճանվում է Գեորգին։ Հաղորդելով այս մասին իր իշխանությանը, գեներալ Լազարևը, որ շարունակ գտնվում էր մեռնողի մոտ, ավելացնում է. «Ես իսկույն հավաքեցի այստեղի իշխաններին և ազնվականներին, հայտնեցի նրանց բարձրագույն կամքը (այսինքն, որ նոր թագավոր չնշանակվի), և ամենքն ընդունեցին այդ հայտարարությունը, իսկ ժո-

¹ Дубровин, Георгий XII..., с. 155.

ղովրդին նույն բարձրագույն կարգադրությունը հայտարարվեց Մելիքի իշխան Դորչիի (Բեհբության) միջոցով, և ընդունված է մեծ շնորհակալությամբ»[1]։

Բայց այնքան էլ հեշտ չէր մի ամբողջ երկրի հափշտակելը մի թղթի կտորով։ Այդ բանի գործողությունը դեռ պետք էր որոշ խաբեբայական արարմունքով ոսկեզօծել, դարձնել մի երկնային ողորմություն, որ գալիս էր երջանկության գագաթնակետը հանելու վրացիներին։ Դեկտեմբերի 22-ի հրովարտակը գլխավոր հրամանատար Կնորինգը հարկավոր չհամարեց իսկույն հրապարակել Թիֆլիսում։ Սպասողական դիրք էր ընդունվում. թագավորի դիակը դրվեց Սիոնի մայր եկեղեցում և մնաց անթաղ մինչև փետրվարի 20-ը։ Դավիթ արքայորդին, որ նույնպես մի անկարող մարդ էր, նշանակվեց Վրաստանի կառավարիչ։ Այս հանգամանքը Դավթի եղբայրներն սկսեցին բացատրել ժողովրդին այն մտքով, թե Դավիթն արդեն թագավորել է, և շուտով ամենքը պիտի հավատարիմ հպատակության երդում տան նրան։ Հակառակ կուսակցությունը, որ իբրև ազգային՝ թե ավելի բազմամարդ էր և թե դիմադրական մեծ ուժ ուներ, կրկնապատկեց իր եռանդը, և երկրի մեջ տիրող անիշխանությունը ավելի ևս սաստկացավ։ Ազգամիջյան անողորմ կռիվը պատրաստ էր պայթել ամեն բոպե։ Ռուսական հրամանատարությունը ստիպված էր խիստ միջոցներ ձեռք առնել Թիֆլիսում։ Վրացիներին արգելված էր հավաքվել փողոցներում, սուտ լուրեր տարածողները և առհասարակ ժողովուրդը հուզողները կալանավորվում էին։ Գեներալ Կնորինգը Լազարևին իրավունք էր տվել ձերբակալել մինչև իսկ Դարեջան թագուհու որդիներից Վախթանգ արքայորդուն, որ իր եղբայրներից ավելի մեծ եռանդով էր խառնակում ժողովուրդը։ Բայց Թիֆլիսից դուրս ռուս իշխանավորները գրեթե միանգամայն անզոր էին։ Դարեջան թագուհու կողմն անցավ և Իմերեթի Սողոմոն թագավորը։ Ազգայնականները պատրաստվում էին հարձակում գործել Գորի քաղաքի վրա։ Վախ կար, որ եթե ներքին խռովությունները դադար չառնեն, երկիրը կարող է հարևան պետությունների հարձակմանը ենթարկվել։ Երկյուղ ազդում էր, մանավանդ, Դաղստանի Օմար խանը։ Եվ դեռ գլխավոր դժվարությունն առջևումն էր՝ պետք էր հրապարակել Թիֆլիսում Պավել կայսրի հրովարտակը։ Այս բանից կարող էին ծագել խոշոր անկարգություններ, որոնց զսպելը առանց արյունահեղությունների չէր գլուխ գա։

Դժվարությունից ելք գտնելու համար Պետերբուրգի կառավարությունը իր համար մի հաջող ուղի է ընտրում. իմանալով, թե Թիֆլիսի հայ գաղութը որքան ուժեղ է հանդիսացել վրացական իշխանության տակ և որքան վճռական է եղել նրա դերը մայրաքաղաքի ներքին գործերի մեջ, վճռեց ուժեղացնել ռուսասիրական կուսակցությունը հայ գաղութի աջակցությամբ։ Հարկավոր էր մի ազդեցիկ և հեղինակավոր մարդ, որ միավորող հող հանդիսանար խառնակությունների մեջ ծփող տարրերը և տաներ նրանց դեպի ռուսական անուրը՝ ոսկեզօծված գեղեցիկ խոսքերով և տոնական հայտարարություններով։ Հարկավոր էր, մի խոսքով, ճարպիկ և եռանդուն մի ռուսական գործակալ։

1. Հովսեփ Արղությանը Թիֆլիսում։ Այսպիսի մի մարդ պատրաստ կար Ռուսաց կառավարության սպասին՝ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը, որ այդ ժամանակ ապրում էր Աստրախանում։ Նա միացնում էր իր անձի մեջ մի շարք հատկություններ, որոնք շատ արժեքավոր էին հենց այդպիսի մի քաղաքական առաքելության տեսակետից։ Առաջինն ու արքունական չափով ամենաթանկագինն էր այդ մարդու անսահման ռուսամոլությունը և մոլեգնոտ ցարապաշտությունը։ Այնուհետև, նա Վրաստանի ազնվականներից մեկն էր,

¹ «Акты Кавказской Археографической Комиссии». Т. 1., Тиф., 1866, № 137.

իշխան, վրաց արքունիքում ինչպես իրենց մարդ ընդունված։ Հերակլ և Գեոր-
գի թագավորների մահից, նրանց ներկայացուցիչը, խորհրդատու և բարե-
խոսը ռուսաց արքունիքում։ Բնությունը տվել էր նրան մի եռուն, գործունյա
բնավորություն, անհուն փառասիրություն, իշխելու տենչ, շողոքորթվելու
անհագություն, շողոքորթելու, քաղցրացնելու, գրավելու մեծ կարողությամբ
օժտված ճարտասան լեզու։ Գրեթե քառորդ դար եղել էր Ռուսաստանի հայոց
առաջնորդ, այդ պաշտոնով բարձր տեղ էր գրավել Եկատերինայի և Պավելի
արքունիքում, աշխատել էր անկախ Հայաստան ստեղծել Անդրկովկասում,
ռուսական քաղաքականության կույր գործիք էր եղել, խաբվել էր իբրև այդ-
պիսին, մոլորեցրել ու խաբել էր Ղարաբաղի մելիքներին և նրանց ոչնչաց-
ման ու նրանց երկրի կործանման պատճառ էր դարձել, բայց անձնապես
մեծ շահեր էր ստացել (իշխանական տիտղոս, նշաններ, երկու գյուղ Ռուսաս-
տանում և այլն)։ Եվ վերջացրել էր իր բազմավաստակ գործունեությունը,
հասնելով իր փառատենչության վերջին հնարավոր ծայրին, այն է՝ ամենայն
հայոց կաթողիկոս նշանակվելով լոկ ռուսաց կառավարության ջանքերով։

Աստրախանում նա սպասում էր 1801 թվականի գարնան, որպեսզի գա
Էջմիածին և նստե կաթողիկոսական գահի վրա։ Բայց Վրաստանի դեպքերը
այնպես էին, որ ռուսաց կառավարությունը չկարողացավ թույլ տալ նրան
այդքան երկար ժամանակ մնալ Աստրախանում։ Նա պիտի շտապեր Թիֆլիս
և իր ձեռքով հրապարակեր Վրաստանի անկախության վերջին մնացորդները
ջնջող կայսերական հրովարտակը։ Նրա կապերը վրաց արքունիքի և ազնվա-
կանության հետ պետք է օգտագործվեին մեծ հաջողությամբ, իսկ այն հան-
գամանքը, որ նա հայոց կաթողիկոս է, պիտի ռուսականության կողմը քաշեր
Թիֆլիսի հայ ազնվականությանը և տնտեսական խոշոր ուժի և ազդեցության
տեր հայ բուրժուազիան (մոքալաքությունը)։ Այս պատճառով էր, որ նա ճա-
նապարհվում էր Աստրախանից ցուրտ ձմեռվա միջին, չվախենալով նույնիսկ
Կովկասյան լեռների բքից և սառնամանիքներից։ Այսքան դաժան ստիպո-
ղական ճանապարհորդությունն իր ընտրյալի առջև թեթևացնելու համար
ռուսաց կառավարությունը ձեռք էր առել ընդարձակ միջոցներ։ Այսպես, կայս-
րի հրամանով Կնորինգը տվեց նրան մի ամբողջ թիկնապահ զորաբաժին,
բաղկացած 100 կազակներից՝ մի սպայի հրամանատարությամբ։ Մի ամսից
ավելի տեղից տեղ անցնելով, նա փետրվարի 6-ին հասավ Դուշեթ, իսկ 10-ին
արդեն Կուկիա գյուղումն էր, Թիֆլիսի տակ, ուր նրան դիմավորեցին ար-
քայորդի Դավիթը, շրջապատված վրաց ազնվականներով, Լազարև և Գուլ-
յակով գեներալները ռուսական սպաների հետ, հայոց զգեստավորված հոգե-
վորականությունը և ժողովրդի ահագին բազմություն։ Մեծահանդես թափոր
կազմվեց, որ անցավ Ծուղուրեթ գյուղով, իսկ երբ մոտեցավ քաղաքի դռներին,
բերդից սկսվեց ողջույնի թնդանոթաձգություն։

Այսպիսի արքայական պատիվներով կաթողիկոսը գնաց վանքի եկեղե-
ցին, մի րոպե անգամ չմոռանալով իր ստրկական պաշտոնը. թափորի մեջ,
նրա առջևից, գնում էր մի վարդապետ՝ գլխին դրած Պավելի հրովարտակը։
Եկեղեցում առաջ ու առաջ մաղթանք կատարեց կայսրի համար, ապա ատե-
նաբանություն արավ։ Հայոց եկեղեցուց նա գնաց Սիոնի մայր եկեղեցին, ուր
դրված էր, ինչպես ասացինք, Գեորգի թագավորի դագաղը։ Վրաց վերջին թա-
գավորի հետ նրան կապում էր սերտ մտերմությունը, և նա իր նամակներից
մեկի մեջ գրում էր, թե Գեորգին իր ձեռքերի վրա է մեծացել։ Ուստի ծունկ
չոքելով իր մտերմի անշունչ դիակի առջև, նա հեկեկալով փաթաթվեց դագա-
ղին, ապա հոգեհանգիստ կատարեց, դիմեց եկեղեցին լցված ժողովրդին մի
սրտառուչ խոսքով, որ արտասանեց վրացերեն լեզվով, ողբալով նրա մեջ

Վրաստանին և մասնավորապես Թիֆլիսին հասած դժբախտությունները։ Վեր-
ջում նա մխիթարեց ժողովրդին, ասելով, թե Ռուսաց մեծ կայսրն իր ողորմա-
ծությամբ պիտի ամենքին բարիքներ բերե[1]։ Գործի մի խոշոր մասն արված
էր։ Սիոնից նա գնաց իր եղբորորդի Սողոմոնի տունը, ուր պիտի մնար մինչև
Էջմիածին ուղևորվելը։ Արդեն չորս եպիսկոպոս եկել էին Էջմիածնից նրան
տանելու համար։

Ստեղծված շփոթ ու վտանգավոր դրությունն սկսեց արագ փոխվել։ Ար-
ղությանը գործում էր իրեն հատուկ եռանդով և մի քանի օրվա ընթացքում
հարթեց ճանապարհ ռուսական գործի համար։ Նա կազմակերպչական աշ-
խույժ տվեց Դավիթ արքայորդու կուսակցությանը, որը և մեծ ջանքեր գոր-
ծադրեց պետական հեղաշրջումը խաղաղ կերպով վերջացնելու համար։ Ինքն
Արղությանը գրում էր գեներալ Կնորինգին. «Պայծառափայլ արքայորդիների
մեջ եղած կռիվները, խռովությունները, զորաժողովները քանդվեցին իմ խոր-
հուրդներով. այժմ նրանց մեջ հաշտություն է. մի քանի իշխաններ, իմ նա-
մակից հորդորվելով, եկան, մի քանիսները մտադիր են գալ»[2]։ Դավթի հետ
միասին գործող վրացի ազնվականների մեջ կային և մի երեք հայ ազնվա-
կաններ, որոնք ռուսական տիրապետության կողմնակիցներ էին և աչքի ընկ-
նող դեր կատարեցին Արղությանի սկսած պատրաստությունների մեջ։ Այդ-
պիսիներից մեկն էր հենց նրա եղբորորդի իշխան Սողոմոն Արղությանը։ Բայց
խոշոր դերը վերապահված էր իշխան Դարչի Բեհբությանին։ Նա Թիֆլիսի մա-
մասախլիսը կամ մելիքն էր, այսինքն՝ քաղաքապետը, որ ուներ իր տրամա-
դրության տակ և զինված ուժ և բազմաթիվ կողմնակիցներ և դեռ Գեորգի
կենդանության ժամանակ գործադրում էր բոլոր ջանքերը, որ ռուսասիրա-
կան հոսանքը գերակշիռ հանդիսանա վրաց արքունիքում։ Մելիքի շատ կարևոր
պաշտոնը, որ ժառանգական էր Բեհբությանների տոհմի մեջ, նրան տալիս
էր հզոր միջոց պահելու մայրաքաղաքի ազգաբնակչությունը հնազանդության
մեջ։ Ռուսասիրական կուսակցության աչքի ընկնող անդամները պարգևներ
ստացան ռուսաց կառավարությունից իրենց անձնվեր ծառայությունների
համար[3]։

Այսպիսով ամեն ինչ այնքան բարեհաջող կերպով պատրաստվեց և կարգի
բերվեց, որ Արղությանի ժամանելուց ընդամենը մի հինգ օր անցած, կարելի
եղավ հրապարակել Պավել կայսրի հրովարտակը։ Փետրվարի 16-ին, շաբաթ
օր, գեներալ Լազարևի հրավերով Թիֆլիսի բնակիչները պատարագի գնացին
Սիոնի մայր եկեղեցին։ Պատարագից հետո գեներալը հայտարարեց ժողո-
վրդին, թե ինչ բանի համար է նա հավաքել եկեղեցու մեջ։ Իսկույն կար-
դացվեց, ռուսերեն և վրացերեն լեզուներով, դեկտեմբերի 22-ի հրովարտա-
կը, որով Վրաստանը հայտարարվում էր հավիտենապես միացված Ռուսաս-
տանին։ Վրաց կաթողիկոս Անտոնիոսը, որ Դարեջան թագուհու որդին էր,
ծնկաչոք գոհացողական մաղթանք կատարեց։ Այնուհետև ամբողջ օրը զան-
գահարություն էր բոլոր եկեղեցիներից, փողոցներում հավաքված էին մար-
դիկ, որոնք, ինչպես գրում էր Կնորինգը, ուրախանում էին, որ իրենց ցան-
կությունները հասել են վաղուց փափագած վախճանին[4]։

Բայց փետրվարի 16-ը միայն նախօրյակ էր։ Գլխավոր հանդեսի կատա-
րումը վերապահված էր հետևյալ օրը, հայոց կաթողիկոսին։ Մեզ հասել է

[1] Տե՛ս Ա. Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, հ. Ա., Թիֆլիս, 1894, էր. 13։
[2] «Акты...», т. 1, № 530.
[3] Ibid., № 531.
[4] Дубровин, с. 191.

այդ հանդեսի մանրամասն արարողակարգը (ցերեմոնիալ) ռուսերեն լեզվով, որ գրել է Արղությանին ուղեկցող և նրա ձեռնասուն և սիրելի աշակերտը, նույնպես, իհարկե, ռուսամոլությամբ անչափորեն լցված, Աղքիրմանցի Գրիգոր վարդապետը[1]։ Այս պաշտոնական նկարագրությունը մեզ ցույց է տալիս, որ Հովսեփ Արղությանը, հավատարիմ մնալով ինքն իրեն, իսկապես ոչինչ առրկական արվեստ չէր խնայել Վրաստանի քաղաքական մահվան օրը ռուսական ցարիզմի փառաբանության և աստվածացման օր դարձնելու համար։ Որպեսզի պարզ լինեն մեր եզրակացությունները, մենք պիտի աչքից չգցենք այդ տոնակատարության բնորոշ մանրամասնությունները։

Կիրակի օր, փետրվարի 17-ին, առավոտյան ժամերգությունից հետո, բերդի Հայոց եկեղեցում դրված էին Պավել կայսրի պատկերը և հրովարտակը։ Ժողովուրդը խուռն բազմությամբ դիմեց այնտեղ, ուր հավաքված գտավ քաղաքի ամբողջ հայ հոգևորականությունը։ Հայ իշխաններից Դարչի Բեհբությանը և Սողոմոն Արղությանը հսկում էին կարգապահության վրա։ Սկսվեց մի բազմամարդ և երկարաձիգ թափոր, որ ուղևորվեց բերդից դուրս, դեպի վանքի մայր եկեղեցին։ Շարք-շարք իրար ետևից գնում էին զգեստավորված դպիրներ, սարկավագներ, քահանաներ, վարդապետներ, կրելով իրենց ձեռքերին մեծ ու փոքր խաչեր, պատկերներ, վառած մոմեր, բուրվառներ։ 13-րդ տեղն այդ երթի մեջ պատկանում էր երգեցիկ խմբին, որ շարականներ էր երգում։ Նրան հետևում էին 74 քահանաներ, որոնք գնում էին իրար ետևից, կազմելով երկու շարք։ 17-րդ տեղում ընթանում էին երկու պատվավոր քաղաքացիներ, որոնք տանում էին Պավելի պատկերը, իսկ սրանց ետևից Գրիգոր վարդապետ Աղքիրմանցին, առանց վեղարի և թագի, գլխի վրա բռնած կայսերական հրովարտակը։ Երկու վարդապետներ նրա ետևից տանում էին նրա թագն ու գավազանը։ Երթի շարքերը փակում էր Թիֆլիսի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսը։

Բերդի դռների մոտ թափորը դիմավորեցին արքայորդի Դավիթն իր Հովհան և Բագրատ եղբայրներով, Լազարև և Գուլյակով գեներալները՝ շրջապատված ռուսական ավագ և կրտսեր սպաներով, վրացի իշխաններն ու ազնվականները։ Այս ամբողջ խումբը, որ հագած էր տոնական զգեստներ, մոտեցավ հրովարտակակիր Գրիգոր վարդապետին և պատկառանքով ու դանդաղորեն գնում էր նրա հետևից։ Հովսեփ կաթողիկոսն զգեստավորված դուրս եկավ վանքի եկեղեցուց՝ հանդեսը դիմավորելու համար։ Նրան շրջապատում էին Էջմիածնի չորս եպիսկոպոսները և մի քանի վարդապետներ։ Մոտենալով Պավելի պատկերին, նա իր գավազանն ու խաչը տվեց եպիսկոպոսներից մեկին, վերցրեց բուրվառը, խնկարկեց պատկերին, խոնարհ երկրպագեց նրան, ապա համբուրեց և, իր ձեռքերի մեջ բարձրացնելով ի ցույց ժողովրդի, բացականչեց. «Կեցցե՛ մեծ և ամենաօգոստոսափառ միապետն իր ամբողջ բարձրագույն տոհմով»։ Ժողովուրդը միաբերան պատասխանեց. «Եղիցի՛, ամե՛ն, ամե՛ն»։ Տալով պատկերը նրան տանողներին, Հովսեփը մոտեցավ Գրիգոր վարդապետին և վերցնելով նրանից կայսերական հրովարտակը, բարձրացրեց այն իր գլխի վրա և նորից ձայն արձակեց. «Ամենաերկնավոր արարիչը թող բարձրացնե և ամրացնե մեծ Պավելի թագավորությունն, ինչպես արեգակ և լուսին, հավիտյանս հավիտենից»։

— Ամե՛ն, ամե՛ն,— նորից պատասխանեց ժողովուրդը։

Թափորը նույն կարգով մտավ եկեղեցի, ուր կայսերական պատկերն ու հրովարտակը դրվեցին սեղանի առջև, առանձին պատրաստված ու դիպակ-

[1] «Кавказский вестник», журн., Тифл., 1901, № 10, прилож., с. 80—84.

ներով զարդարված տեղերում։ Պատարագիչն էր ինքը կաթողիկոսը։ Եկեղեցում ներկա էին, բացի վերևում հիշված պաշտոնյաներից, նաև Դարեջան թագուհին, իր աղջկա և հարսի հետ, շրջապատված իր շքախմբով, նրա որդի Անտոնիոս կաթողիկոսը, իր հետ ունենալով վրաց բարձր հոգևորականությունը։ Պատարագից հետո արարողության մնացած մասը հանվեց եկեղեցու բակը, որպեսզի այնտեղ կուտակված մեծ բազմությունը, որ հնարավորություն չուներ ծայրեծայր լցված եկեղեցին մտնելու, զրկված չմնար բուն հանդեսից։ Հովսեփը դիմեց ժողովրդին մի նոր ատենաբանությամբ, որի մասին պաշտոնական արարողակարգը վկայում է, թե «այնքան ուժեղ էր և խորաթափանց, որ ամեն մեկն զգում էր իր սրտի մեջ կատարյալ և անհուն ուրախություն»։ Ապա ասում է, թե Հովսեփը «...հուսադրեց և խրախուսեց ժողովուրդը և ամենից շատ վրաց արքայորդուն, կաթողիկոսին և ամբողջ հոգևորականությանը և, իր կոչման պարտականությունը կատարելով, խրատում էր անխախտ հավատարմություն պահպանել դեպի ռուսական ամենաօգոստոսափառ գահը, որի հպատակն են դառնում նրանք այժմ ամենաբարձրյալ արարչի նախախնամությամբ. շնորհակալություն հայտնեց այնտեղ ապրող ամբողջ հայ ժողովրդի անունից նորին պայծառափայլություն արքայորդի և ժառանգ Դավիթ Գեորգիևիչին և նորին գերազանցություններ՝ զորքերի հրամանատար սպ. գեներալներ Լազարևին և Գուլյակովին, նրանց բարի և հեզ կառավարության համար։ Եվ ապա նորից դիմելով ժողովրդին, բացականչեց. «Ուրախության ի՞նչ նշաններ են պայծառապես դրոշմված ձեր դեմքերին, բարեպաշտ քրիստոնյա ժողովուրդ. ես տեսնելով նրանց, հարկադրում եմ այսօր, ձեր փրկության օրը, ձեր բարօրության օրը, օր, որ տանում է ձեզ դեպի իսկական բերկրանք և հանգստություն, մեր բարոյական վիճակի ամրապնդման օրը, մի օր, որին չարժանացան մեր նախորդները, ակնածությամբ լի սրտով հարցնում եմ ձեզ՝ ի՞նչ պիտի բերենք մենք ամենաբարձրյալ արարչին. արդյոք շնորհակալությո՞ւն, արդյոք աղո՞թք, արդյոք մեր հոգու խոնարհ գոհությո՞ւնը՝ նրանից առաջացող ամեն մի բանի համար, ինչպես նրանից ստեղծվածի համար։ Բայց չդադարենք արտասուքներ թափելուց, չդադարենք նրա ամենավեհ անունը փառաբանելուց և զարմանանք մեծ կայսր Պավելի գթասրտության և մարդասիրության վրա, որ իր ու սուրբ գահի բարձրությունից զիջելով մեր խոնարհ աղերսանքին իր հավատարիմ հպատակության մեջ մեզ ընդունելու մասին, ոչ միայն չի մերժում մեզ, այլև առատաձեռն հոր նման որդեգրում է մեզ, խոստանում է լիակատար բարօրություն և հանգստություն, ուրիշ մի բանի չսպասելով մեզանից, բացի միայն հավատարմությունից և որդիությունից դեպի իր աստվածապահ գահը։ Ես, ձեր խոնարհագույն հովիվս, անդադար աղաչում եմ ամենաբարեբար աստծուց, որ երկարացնե մեր ամենաօգոստոսափառ միապետի կյանքն իր ամբողջ ծիրանակիր տոհմով»։ Ժողովուրդը, շարունակում է մեր աղբյուրը, կաթողիկոսի ատենաբանությունից հետո կանչում էր. «Թող աստված ամրապնդե մեր թագավորի, մեծ Պավելի, համայն Ռուսաստանի կայսրի օրերը»։

Այնուհետև սկսվեց հրովարտակի ընթերցումը ռուսերեն, հայերեն և վրացերեն լեզուներով, որին հետևեց ծնկաչոք գոհացողական մաղթանքը։ Եկեղեցական հանդեսը վերջացավ։ Նույն վանքի բակում վրան էր շինված, որի մեջ կաթողիկոսի կողմից ճաշ տրվեց բոլոր բարձրաստիճան հյուրերին, ընդամենը մոտ երկու հարյուր հոգու։ Մինչև երեկո զանգահարություն էր լսվում բոլոր եկեղեցիներից, իսկ երեկոյան քաղաքը լուսավորված էր։ Խանութներն, առևտրական սովորությամբ, զարդարված էին թանկագին, ոսկեթել կերպասներով։

Ամեն ինչ վերջացած էր։ Երեք օր անցած կատարվում էր մշտապես ան-

հեռացող թագավորության վերջին գերեզմանական արարողությունը։ Սիոնի եկեղեցուց խղճուկ Գեորգի ԺԲ-ի դիակը ուղարկվում է Մցխեթ՝ արքայական շուքով հողին հանձնելու համար։ Արղությանն այլևս անելիք չուներ Թիֆլիսում և նա սկսեց պատրաստություններ տեսնել մի քանի շաբաթից հետո Էջմիածին ուղևորվելու համար։

3. Փետրվարյան օրերի նշանակությունը: Կովկասյան մեծ լեռնաշղթան միապաղաղ անմատչելի մի պատվար էր Եվրոպայի և Ասիայի հողերի մեջ, գրեթե իր կենտրոնական մասում մի անձուկ ու կիսալույս օձապտույտ ճեղքված է կրում մինչև իր ստորոտները՝ Թերեք գետի ջրերին ընթացք տալու համար դեպի Հյուսիս։ Դարերի անհուն մթությունից տեղի ուներ այդ մութ ու չափազանց նեղլիկ ճեղքում մի հավիտենական շարժում։ Այդ ամենակարճ, թեև դժվարակախ մի ճանապարհ էր հյուսիսից դեպի Արագվայի և Քուռի ավազանները, դեպի Վրաստան։ Եվ այդ ճանապարհի վրա դարերի հետ իրար հաջորդում էին դեպի երկու գետահովիտները սլացող ազգությունները, ահեղ ու նվաճող, խլելու և հարստանալու ագահությամբ լցված։ Այն, ինչ կատարվեց նույն այդ անձուկ ճանապարհի վրա XIX դարի նախօրյակին, սովորական մի տեսարան էր նրան շրջապատող լեռների համար։ Այդ միևնույն հնությունն էր՝ նվաճողական մի արշավանք, զանազանությունն էլ դարձյալ այն էր, ինչ անցած դարերում։ Արշավողները նոր, դեռ այն կողմերում չտեսնված ժողովուրդն էին—ռուսները։ Ալանաց դռներով (այժմ Դարիալ) հարավակողմը թափառող ազգությունները իրենց հետ բերում էին իրականություններ, որոնք կամ տեղական անձուկ նշանակություն ունեին, սահմանափակվելով Հարավային Կովկասի տարածությունների վրա, կամ թե անցնում էին հարևան երկրներն էլ, թագավորում էին ամբողջ Արևմտյան Ասիայի մեջ։ Այս ազդեցությունների տարածողականությունը կախված էր արշավողների ուժի աստիճանից։ Ռուսական արշավանքը հենված էր ընդարձակ տարածողականության վրա, հետևաբար և ահագին նշանակություն պիտի ունենար ոչ միայն Վրաստանի և առհասարակ Հարավային Կովկասի, ոչ միայն Պարսկաստանի և Թուրքիայի, այլ առհասարակ ամբողջ Առաջավոր Ասիայի համար։

Ահա ամենից առաջ ինչ էին բերում Թիֆլիսում տեղի ունեցած փետրվարյան օրերը։ Եթե նրանց գլխավոր դերակատարը Հովսեփ Արղությանն էր, այս միանգամայն բնական է, որովհետև նա էր, որին նվաճողական արշավ սկսած Ռուսաստանը նետել էր առաջ, իբրև նախակարապետ իր գաղափարախոսությունը նվաճվելիք երկրներում տարածելու համար։ Մենք արդեն գիտենք, թե ինչ հանգամանքներ էին նպաստում այդ դերը հաղթականորեն և բարձր հեղինակությամբ կատարելու համար։ Բայց այս դերը չպետք է չափազանցնել։ Հովսեփին փետրվարի 17-ից հետո երեք շաբաթվա մի կյանք էր վիճակվում ունենալ, իսկ նրա այնքան ծայրահեղ սերկտրեն պաշտած Պավելն էլ նրանից երեք օր միայն ավելի ապրեց և սպանվեց պալատական մի ինտրիգի հետևանքով։ Վրաստանն այնուհետև էլ սաստիկ ջղաձգություններ էր անում իր անբավականությունը ցույց տալու համար ռուսական անվերապահ տիրապետության դեմ։ Բայց այս բոլորը չխանգարեց, որ դեպքերն ընթանան իրենց բռնած ուղղությամբ։ Գործող անձինք իջնում էին ասպարեզից, շարժումները հետևում էին իրար, իսկ պատմական անհրաժեշտությունը կատարում էր իր գործը, ոտնահարելով իր ճանապարհին հանդիպած ամեն մի արգելք։ Մի մեծ ու թարմ ազգ, նոր կազմակերպությամբ միացած, իր ցուրտ ու անլույս հյուսիսից անդիմադրելիորեն մղվում էր դեպի հարավի բարիքներ և կենաբույր հեռավորությունները։ Ռուսաց պետականության այն հումկու շարժումն էր այս, որ սկսվել էր Պետրոս Մեծի ժամանակից և եվ-

րոպական դիվանագիտության մեջ ստացել էր «Պետրոս Մեծի կտակ» անունը և այդ տիտղոսով էլ մի մղձավանջ էր դարձել քաղաքական աշխարհում։ Ավելորդ միամտություն կլիներ կարծել, թե այս մեծ տարերային շարժման մեջ կարող էին լինել քմահաճույքի խաղեր, կարող էին անձնական ցանկությամբ ազդեցիկ և վճռական դեր կատարել մի Հովսեփ Արղության, մի հիվանդոտ և ապիկար Գեորգի ԺԲ, անգամ մի խելապակաս, ամենքին իր դաժան բռնություններով զզվեցրած Պավել կայսր։ Սրա որդի Ալեքսանդր Ա-ն, չկամենալով հափշտակման մի գործ կատարած լինել, կամովին հրաժարվեց վրացական ժառանգությունից, բայց Պետական խորհուրդը հարկադրեց նրան մի կողմ թողնել գաղափարական զգայնոտությունը և հպատակվել պետական քաղաքականության շահերին...

Եթե տարօրինակ է թվում Հովսեփ Արղությանի դերը փետրվարյան օրերին, ավելի ևս տարօրինակ պիտի երևա այն հանգամանքը, որ նա գնում էր կաթողիկոսություն անելու Էջմիածնում, որ պատկանում էր Պարսկաստանին, այն պետության, որի ոխերիմ թշնամին էր նա եղել Ռուսաստանում եղած ամբողջ ժամանակ։ Չի կարելի, իհարկե, ասել, թե նա քաղաքագետորեն այնքան բութ էր, որ չէր հասկանում, թե պարսից կառավարությունը չպիտի մոռանա նրա գործունեությունը, որի ամբողջ իմաստն է եղել խլել Անդրկովկասը Պարսկաստանից ռուսների միջամտությամբ։ Մանավանդ, չէր մոռացվի փետրվարի 17-ը։ Եվ եթե, այնուամենայնիվ, Հովսեփը գնում էր մտնելու պարսից հպատակության մեջ, մոռանալով նույնիսկ իր անձնական ապահովության հարցը, այս պարզապես այն պատճառով էր, որ իր ետևից գնում է ռուսական ալիքը, որ ինքը ռուսական արշավանքի առաջընթացն է։

Ռուսական շարժումն, ինչպես տեսանք, այլևս չէր շպարվում ոսկեզօծ և փայլփլուն խաղալիք-գաղափարներով, որպես են, օրինակի համար, փոքրիկ ազգերի անկախություն, նոր քրիստոնյա պետությունների կերտում և այլն։ Այժմ ամեն ինչ բաց ու պարզ էր։ Ռուսաստանը նվաճում էր Մերձավոր արևելքը, ենթարկում էր նրան իր ցարական-բյուրոկրատական ծանր ռեժիմին, բայց այս ռեժիմը, համենայնդեպս, ոչ սուլթանական-փաշայական էր, ոչ շահական-խանական։ Ամենամեծ նշանակությունը ամբողջ Արևմտյան Ասիայում ստանում էր այս տարբերությունը։ Ռուսաստանը հայտնի էր Եվրոպային իբրև մի խավար և բարբարոս երկիր, բայց նա, այնուամենայնիվ, կպած էր այդ Եվրոպային, ենթարկված էր նրա ազդեցությանը որոշ չափով ու աստիճանով, և աշխատում էր վերակազմել իր հին գոյությունը եվրոպական գաղափարներով։ Շնորհիվ այս հանգամանքի նա իր նվաճած ասիական երկրները մտցնում էր քաղաքական և քաղաքակրթական մեծ շարժումների մեջ, այնպես որ Ասիայի դարավոր շղթաների մեջ ծվարված և դիակնացած ազգերը հնարավորություն էին ստանում տաքացնել իրենց ընդարմացած մարմինները իբրև ռուսական ընդհանուր իրականության մասնակիցներ։

Այսպես էր այն նոր ճակատագիրը, որ պատմության անողոք ձեռքը դրոշմում էր ամենից առաջ Հարավային Կովկասի երկու քրիստոնյա ազգերի՝ հայերի և վրացիների, ճակատին։ Փետրվարի 16—17-ը իսկապես մի նոր օր էր, նոր լեզվով և դավանանքով։ Նա մի ամբողջ հեղափոխություն էր ասիական աշխարհում։ Հովսեփ կաթողիկոսի դերակատարությունը Թիֆլիսի փետրվարյան օրերին չափազանց նշանակալից էր, մանավանդ, իբրև մի քայլ այն նոր ուղղությամբ, որի մեջ այդ օրից մտնում էր Հայոց հարցը։

Հայերը իրենց ազատագրական ջանքերը համաձայնեցնում էին, սկզբից

ի վեր, վրացիների ջանքերին։ Վրաստանը Հերակլի ժամանակ կարծես լավագույն կերպով ապահոված կլիներ իր ազգային քաղաքական ինքնուրույնությունը, մտնելով Ռուսաստանի հովանավորության տակ։

Հայերը վրացիներից անհամեմատ ավելի դժբախտ քաղաքական կացության մեջ էին գտնվում։ Եվ երբ նրանք տեսցին, թե անցել են եկատերինաների, պոտյոմկինների, սուվորովների, զուբովների ժամանակները, որ հայերի հետ այլևս անկախության խոսք չպիտի լինի, այլ նրանք այժմ պատրաստ են ամեն կերպ աջակցել, որ ռուսաց զորքերը գնան մտնեն նրանց երկիրը և ամենքին դարձնեն ցարի հպատակ, հայերին ոչինչ չէր մնում, բայց միայն ընդգրկել այդ դերը, թողնել ամեն մի ծրագիր ու ձգտում և բավականանալ նրանով, որ ռուսական սվինները բերում են իրենց հետ ֆիզիկական գոյության ապահովություն, խաղաղ աշխատանքի, զարգացման, կարգ ու կանոնի և սեփականատիրական իրավունքի հաստատուն երաշխիքներ։

Ըստ երևույթին, պետք էր, որ այս նոր վիճակը տրվեր հայերին առանց դժվարությունների, առանց նրանց կողմից ջանքեր և զոհողություններ պահանջելու։ Պետք էր սպասել, որ անպայման հպատակություն պահանջող ռուսները իրենց արշավանքներն առաջ կտանեին իրենց միջոցներով և ջանքերով և ամեն մի տեղ տիրապետություն հաստատելուց հետո միայն կպահանջեին այդ տեղի բնակիչներից, դրանց թվում և հայերից, կատարյալ հպատակություն և հլու հավատարություն։ Բայց այդպես չէր, ռուսական հպատակությունը մի շնորհ էր, որին հայերը, և միայն նրանք, պիտի արժանանային իրենց մեծամեծ ջանքերով, իրենց արյունը թափելով, իրենց գույքն ու կարողությունը զոհելով։ Այսպիսով, ուրեմն, այն ռազմական դերը, որ հայերը բռնել էին Անդրկովկասի ազգաբնակության մեջ իրենց ազատագրական շարժումների սկզբից, մի դեր, որ նրանց դեմ ծառացնում էր մահմեդական դրացիներին, պիտի շարունակվեր և այժմ, թեև այժմ խնդիրն այլևս ազգային անկախություն ստանալը չէր, այլ պարզ ռուսահպատակություն ընդունելը։ Եվ մենք այստեղ պիտի տեսնենք Արղությանին հաջորդած հայ գործիչներ, հոգևորական և աշխարհական, որոնք հայ ժողովրդի բովանդակ ուժը՝ նյութական թե հոգեկան, ծառայեցնում են ռուսական արշավանքներին, ռուսական տիրապետությունը փութացնելու և հեշտացնելու համար։

Մենք այժմ մի ընդհանուր ակնարկ կգցենք այն դրության վրա, որի մեջ գտնվում էր նա (հայ ժողովուրդը—խմբ.) ռուսական տիրապետության հաստատվելուց առաջ։ Այս կլինի մի ուղեցույց այդ ժողովրդի բազմաձև կացությունը հասկանալու համար։

2

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲՈՒՄ

1. **Պարսկական Հայաստան։** *Մեր տեսությունն ամփոփենք բուն Հայաստանի սահմաններում և սկսենք նրա հյուսիսարևելյան ծայրից։ Այստեղ են Ղարաբաղը և Սյունիքը՝ միացած մի խանության մեջ, որ կրում է Ղարաբաղի խանության անունը և որի տերն էր Շուշի բերդում նստող Իբրահիմ խալիլ խանը։*

Հայ մելիքությունների այս դասական հայրենիքը դուրս էր եկել XVIII դարի մեծամեծ ազատագրական շարժումներից բաժանված երկու անջատ

մասերի, որոնք իրարից սաստիկ տարբերվող դրություններ էին ներկայացնում։ Ազատագրական շարժումների սկզբում, մանավանդ Դավիթ Բեկի շրջանում, Սյունիքը սերտորեն կապված էր պատերազմող Ղարաբաղի հետ, կանգնած նրա կողքին միևնույն ընդհանուր ճակատի վրա։ Բայց հետագայում նա, կորցնելով իր զինվորական միությունը և նորից կտրատվելով մանր տեղական առանձնացումների, լքեց իր հերոսական դիրքը ընդհանուր գործի մեջ, այնպես որ մելիքների պատմության այն շրջանում, որ բաց են անում Փանահ և Իբրահիմ խաները, Սյունիքը բոլորովին անհայտացած է, դիմադրական մեծ կարողություն չէ ցույց տալիս Ղարաբաղի խաներին, դառնում է նրանց հպատակը և այն գնով պահպանում է իր հին ավատական կազմակերպությունը, դրա հետ և անդորրություն իր ներքին կյանքի մեջ, որքան այս, ինհարկե, հնարավոր է մի ավատական՝ խանական, երկրում։

Որ Սյունիքը ճիշտ որ այս պատկերն է ունեցել XVIII դարի երկրորդ կեսում մինչև ռուսաց տիրապետության մուտքն այնտեղ, այս մեզ թելադրում է մի պատմական վավերագիր, որ մնացել է Տաթևի վանքում գրված ձեռագրի մեջ[1] և ներկայացնում է Տաթևի թեմը կազմող գավառակները և գյուղախմբերը կառավարող իշխանավորների ցուցակը՝ հետևյալ վերտառությամբ. «Քրիստոնյա և բարեպաշտոն իշխանք, որք ի մերումս համայն թեմի և վիճակի, որք ի ժամանակս Փանահ խանյան Իբրահիմ խանին»[2]: Չնայած իր բովանդակության չափազանց աղքատության, այդ ցանկը կարողանում է մի ընդհանուր հասկացողություն տալ, թե ինչպես էր դրությունը նշանակված ժամանակում և նշանակված տիրողների կառավարության տակ։ Ամենից առաջ շեշտվում է այն հանգամանքը, որ Սյունիքը ենթարկված չէր ռուսական քաղաքականության խաղերին, չուներ Հովսեփ Արղությանի պես մի դիվանագետ, որ սուտ ու պատիր խոստումներով մղեր երկիրը դեպի հախուռն և անհավասար կռիվների խանական ուժի դեմ։ Ընդհակառակը, Սյունիքը գտել էր խանի հետ խոսելու ընդհանուր լեզու և միանգամայն գոհ էր իր դրությամբ։ Իբրահիմ խանը համայն մելիքների համար էր հոգեհան հրեշտակ. իսկ մեր աղբյուրն ահա ինչպես է նկարագրում նրան. «Ի ժամանակ սույն օգոստոսափառ Իբրահիմ խանին որք (մելիքները) են ամենքյան ընդ հրամանու նորա, իբրև զամպ գոռոյր և խրոխտայր ի վերայ ավաղակաց և անհնազանդից և երկուցեալ բովանդակելոց և ծակամուր եղեալ, վասն որոյ գայլք և գառինք ի միասին ճարակէին»։

Եվ ահա ի՛նչ տեղական կառավարիչներ ուներ խանական այդ ոչ հեղ հրամանին ենթարկված երկիրը. 1. Մելիք Քոլին Տաթևում—«այր խորհրդական և յոյժ յղփացյալ կրկնատեսակ գոյիւք»։ Ժամասեր է, գրասեր և դպրոցասեր. 2. Պարոն Դավիթ Բեկը Տեղ գյուղում—«այր իշխանազուն և կարի խոհեմամիտ»։ 3. Մելիք Քարամը Բարգուշատ գավառակում—«այր աստուածասէր»։ 4. Մելիք Հոհանը Մեղրիում—«այր ազնուական, ընդ նմին և ընկերն իւր փառազարդ պարոն Աղաբաբայի»։ 5. Մելիք Փարսադանը Ղարաբաղում—«այր հանճարեղ»։ 6. Մյուս մելիք Փարսադանը Ղափանում—«այր բարեպաշտօն»։ 7. Մելիք Սաֆրազը Սիսիանում— «այր ճարտարախօս և հանճարիմաստ»։

Ամենքն էլ գովված մարդիկ։ Բայց եթե գրողի այս ներբողական-հիացական տրամադրությունը նույնիսկ համարենք առավելապես թե-

[1] Ներկայումս այդ ձեռագիրը գտնվում է Վենետիկի Մխիթարյան վանքում։

[2] Մենք ունենք այդ վավերագրի ամբողջ արտագրությունը։ Նույն այս աղբյուրից օգտվել է Հ. Ալիշանն իր «Սիսականի» մեջ (ԼԹ, եր. 18, 210)։

լազրանք այն իշխանապաշտական աշխարհայացքի, որ այնքան հատուկ է առհասարակ հոգևորական դասին, մենք, այնուամենայնիվ, չենք կարող ժխտել, որ այդ վարդագույն ինքնագոհությունը պարունակում է իր մեջ և որոշ չափով կենսական ճշմարտություն։ Երկիրն, ընդհանրապես, վայելում էր խաղաղություն, որ այնքան հազվագյուտ երևույթ էր ասիական բարբարոս իրականության մեջ, և այս երանավետ դրությունը հնարավորություն էր տալիս անխափան անձնատուր լինելու առտնին հոգսերին։

Այսպես էր Ղարաբաղի խանության հարավային խոշոր մասը։ Կարիք չկա, որ մենք մանրամասն նկարագրենք հյուսիսային մասը, իսկական Ղարաբաղի դրությունը, որ, իբրև հակադրություն Սյունիքին, ներկայացնում էր մի ավերված և խոպանացած երկիր՝ սաստիկ նոսրացած ազգաբնակությամբ։ Բավական է աչքի առաջ բերել XVIII դարի վերջնատասնամյակի տակնուվրայությունները, որոնք առհասարակ ամբողջ միջակող և արդյունավորող ազգաբնակության կյանքն էին ջարդում, և մեզ համար պարզ կլինի, թե ինչու այնքան դժբախտ էր XVIII դարի սկիզբը պարսկական Անդրկովկասի բոլոր կողմերում։ Աղա Մահմադ խանի արշավանքները, անդրկովկասյան խաների շարունակական կռիվներն իրար մեջ, Դաղստանի ավերիչ հարձակումներն ու ասպատակությունները, այս բոլորի վրա ավելացած բնական աղետները՝ սով, ժանտախտ, տարածել էին ամեն տեղ մի անիշխանություն և տնտեսական խորտակում, որոնցից տառապում էին շատ երկրներ։ Բայց առանձնապես ճգնաժամային էր հայ ժողովրդի դրությունը Ղարաբաղում, քանի որ նա այդ անդադրում վայրիվերումների մեջ ուներ իր սեփական, ավելի անողոք և անխնա կռիվը հանուն իր ազատության։ Մելիք Մեժլումի, Մելիք Աբովի, Մելիք Ֆրեյդունի և Մելիք Ջումշուդի անհաջողություններն ու պարտությունները, միացած սովի և ժանտախտի հետ, քանդել և ավերել էին Լեռնային Ղարաբաղի մեծագույն մասը, փախցնելով հայ ժողովրդի խոշոր հատվածները զանազան ուղղություններով. մեկը՝ դեպի Երևան, մյուսը՝ դեպի Շիրվան, մի երրորդը՝ դեպի Վրաստան, դեպի Շաքի։ Իբրահիմ խանը, վերջնականապես ջնջելով հայոց հարցը Ղարաբաղում, կարող էր այնուհետև առանց ներքին վտանգների և սպառնալիքների միացնել իր երկաթե գավազանի տակ ամբողջ ահագին երկիրը Գանձակի սահմաններից մինչև Նախիջևանի սահմանները, ուր, այնքան տակնուվրայություններից և ավերանքներից հետո, մնացել էր, այնուամենայնիվ, մի ահագին հայություն, որի քանակությունը XIX դարի սկզբին վերաբերող մի բարձր պաշտոնական վկայություն որոշում էր 60 հազար տուն[1]։

Մենք շեշտեցինք, որ Սյունյաց երկրում Իբրահիմ խանի խիստ կառավարության տակ, ազգաբնակությունը վայելում էր ներքին անդորրություն։ Այս հանգամանքը, սակայն, չպետք է հասկանալ բացարձակ մտքով։ Անդորրություն կարող էր լինել միմիայն համեմատական չափով։ Լիովին անդորրություն չէր կարող լինել, քանի որ տիրող տնտեսական կարգը իրավական և օրինական էր դարձրել շատ այնպիսի բռնություններ, որոնք հաճախ աղետներով էին լցնում նույնիսկ ամենից շատ գոված անդորրության մեջ։ Հարստության միակ ապահով և առատ աղբյուրը գյուղական տնտեսությունն էր, որ հայթայթում էր բնական բերքեր՝ մարդու և մասնավորապես իշխանավորի բոլոր բազմապիսի պահանջները լցուցանելու համար։ Գյուղացիությունն այսպիսով այն միակ ուժն էր, որ կրում էր իր ուսերին պետությունը և պետական պաշտոնյաներին կերակրելու ծանրությունը։ Գյուղացիությունը մի շատ թան-

1 «Акты Кавказ. Археогр. Ком», II, 623.

կարժեք ստացվածք էր նրա տիրոջ՝ խանի, բեկի, մելիքի համար, առանց նրան ապրել չէր կարելի և առատ ու հարուստ, ուժեղ ու իշխանությամբ հուժկու լինելու ամբողջ գաղտնիքը գյուղական ընտանիքներ որքան կարելի է շատ ունենալու մեջ էր։

Այս իրողությունը իրավունք էր տալիս ամեն մի տիրողի ավելացնել իր գյուղացիների թիվը, դիմելով բռնության, հարկադրանքի, մի իրավունք, որից չէին հրաժարվում թե մեծ և թե փոքր իշխողները։ Եվ ահա աշխատավոր գյուղացիության համար ստեղծվում էր մի անտանելի դրություն՝ իր նստակյաց կյանքով և տնտեսությամբ հանկարծ դառնալ թափառաշրջիկ, այս կողմից այն կողմը և բոլոր ուղղություններով քշվող, տարվող հափշտակվածներ։ Նրանք բռնությամբ պոկվում էին իրենց բնակության տեղերից ոչ միայն հատ-հատ կամ խումբ-խումբ ընտանիքներով, այլ ամբողջ գյուղերով, ամբողջ համայնքներով և գավառներով, նայած թե ով է քշող-տանողը՝ մի ուժեղ տիրապետող խա՞ն, թե մի երկրորդական աղալար, մի բեկ։ Պատճառ կամ պատրվակ պահելու կարիք չկար. ուժ և կամեցողություն՝ ահա ամեն ինչ։ Այսպես էր ամենուրեք, պարսկական իրականության մեջ, բռնացողի և վայելողի ստեղծած արդարությունն ու օրենքը։

Ավելորդ է բացատրել, թե որքան մեծ աղետ էր այն հափշտակողական օրենքը գյուղացիության համար, որքան տանջանքներ, որքան կոտորածներ և տնտեսական քայքայում և այլ թշվառություն էր պատճառում նրան բռնի տեղահանությունը և երկրից երկիր քշելը։ Լինում էին ժամանակներ, երբ այդ աղետը չափազանց մեծ ծավալ էր ընդունում։ Մենք ունենք մի քանի մանրամասնություններ, որոնք մնացել են դարասկզբի ռուս պաշտոնական գրագրությունների մեջ և լավ լուսաբանում են դրությունը։ Այսպես, 1801 թվականին ազգաբնակությունից դատարկված էր Ղազախ գավառը և նրա բնակիչները ցաք ու ցրիվ ապրում էին զանազան կողմերում[1]։ Իսկ նրա հարևան Շամշադին գավառը գրեթե անմարդաբնակ էր դարձված Գանձակի Ջավադ խանի ձեռքով։ Շամշադինում կար 2300 ծուխ բնակչություն (թուրք և հայ), բաժանված 26 թուրք աղալարների և 7 հայ քյոխվաների մեջ։ Այդ քանակությունից 1900 ընտանիք Գանձակի խանը գաղթեցրել էր իր երկիրը, իսկ Շամշադինում մնացած 400 ընտանիքները թափառում էին լեռներում իրենց մեծավորների (4 թուրք աղալար և 1 հայ քյոխվա) հետ[2]։ Ջավադ խանի զինվորները Շամշադինի լեռներում որսորդություն էին սկսել՝ ազգաբնակության այդ թշվառ և աստանդական մնացորդները նույնպես փախցնել տալու համար[3]։ Մենք կտեսնենք իր տեղում, որ այս հափշտակությունները սովորական երևույթ դարձան մանավանդ Ղարաբաղում, Ռուսաց տիրապետությունը մտնելուց հետո։

Հափշտակության մի այլ ձևն էլ գերեվարությունն էր, այն տարբերությամբ, որ այս աղետն այլևս զուտ գյուղացիական չէր, այլ նրան ենթարկվում էր նաև քաղաքային ազգաբնակությունը։ Գերիները հնչուն դրամ էին հափշտակողների համար։ 1801 թվին դեռ տարասփելի սովն էր տիրում Ղարաբաղում, բայց Դաղստանի հռչակավոր գիշատիչ Օմար խանը գնաց այնտեղ թալանի համար։ Սակայն ամեն ինչ չափ ունի, նույնիսկ գիշատչի ախորժակը։ Ընկնելով քաղցամահ դառնալու վտանգի մեջ, Դաղստանի գայլն ստիպված եղավ դուրս հանել իր հրոսակները դժբախտ երկրից։ Բայց այս

1 «Акты арх. Ком.», Т. I, № 784.
2 Ibid., № 786, 787.
3 Ibid., № 787.

չէր նշանակում դատապարտվել անգործության։ Շուտով Գանձակում երևան եկավ վրաց արքայորդի Ալեքսանդրը, որ զորք էր հավաքում ռուսների դեմ կռվելու համար։ Ջավադ խանը միջնորդ հանդիսացավ նրա և լեզգիների միջև։ Նա մարդ ուղարկեց Ջառի երկիրը՝ լեզգիներից զինվորներ հավաքելու համար։ Յուրաքանչյուր զինվոր պիտի տանար 50-ական ռուբլի, բայց որովհետև փողի պակասություն էր, ուստի լեզգիներն ստանում էին գերի հայ երեխաներ, որոնցից տասնյակի փրկանքը պիտի ապահովեր պայմանավորված վճարը[1]։

Կարելի է առանց չափազանցման մեջ ընկնելու ասել, թե չկար մի այնպիսի երկիր Հարավային Կովկասում, ուր ազգաբնակչությունը չտարուբերվեր հուզված ջրի նման և ուր վստահություն լիներ, թե մի օրվա մեջ հաստատաբնակ, իր գործին նվիրված մարդը չէր դառնա տատանդական, բռնի ուժի առջև մղվելով կամ իբրև տեղահանվող, գաղթեցվող մի հարստություն իշխողների համար կամ պարզապես իբրև ծախու ապրանք, որ քշվում էր անասունի պես դեպի գերեվաճառանոցները։ Երևանի և Նախիջևանի խաները միանում են, ներս խուժում Վրաստանի սահմանները և գաղթեցնում տանում 30 թուրքական գյուղեր[2]։ Նույն Վրաստանի մի մասը կազմող Բորչալուից էր, որ Իբրահիմ խանը թուրք ազգաբնակչություն գաղթեցրեց Ղարաբաղի հայաբնակ մասը՝ թուրք տարրը բազմացնելու և ուժեղացնելու համար։ Վրաստանն էլ իր հերթին պարտքի տակ չէր մնում և իր պակասած ազգաբնակչությունը լրացնելու համար գաղթականություններ էր բերում դրսից, գլխավորապես հայերից։ Այսպես էր, օրինակ, Հերակլ թագավորի բռնի գաղթեցումը Արարատյան երկրից XVIII դարի վերջին քառորդում։ Մանավանդ այդ տեսակ ներգաղթների կարոտ էր Վրաստանի հարավարևելյան մասը, որի ազգաբնակությունը ամենահին ժամանակներից կազմում էին հայերը և որ հենց այդ պատճառով ստացել էր Սոմխեթ (Հայաստան) անունը։ XVIII դարի կեսից այդ երկրի ազգաբնակությունը շարունակ նոսրանում, սպառվում էր գլխավորապես Կովկասյան լեռնցիների անընդհատ արշավանքների հետևանքով։ Դեռ Հերակլի ժամանակից էր, որ վրաց կառավարությունը, այդ ամայացած երկիրը վերականգնելու համար, բնակեցնում էր այնտեղ հայ գաղթականություններ, որոնք բերում էին գլխավորապես Ղարաբաղի և Գանձակի կողմերից, քանի որ այդ տեղերի հայերը հայտնի էին իբրև տոկուն աշխատող և քաջարի ինքնապաշտպանության ընդունակ ժողովուրդ։ Այս ձևով էր կազմվել, օրինակ, Շուլավեր մեծ գյուղը։

Հայերի ակամա գաղթը Ղարաբաղից մեծ չափեր է ընդունում ինչպես գիտենք Խամսայի մելիքությունների կործանումից հետո։ Իրենք՝ պարտված մելիքներն էին իրենց ժողովրդի մի մասը հանում երկրից և տանում իրենց հետ, ռուսաց կառավարության ցուցմունքով, Վրաստան, ուր նորեկ գաղթականությունները ավելանում էին Սոմխեթում վաղուց տեղավորված իրենց հայրենակից գաղթականությունների վրա։ Այսպիսով Սոմխեթը դառնում էր մի փոքրիկ Ղարաբաղ, մելիքական երկիր։ Մելիք Աբովն ստացել էր Բոլնիսը, Մելիք Ջումշուդը՝ Դսեղ և Շնող գյուղերը[3], Լոռու բերդն իր շրջականներով, իսկ Մելիք Ֆրեյդունը՝ Օձուն (Ուզունլար) գյուղը[4]։ Ղարաբաղից Վրաստան էր

¹ «Акты арх. Ком.», Т. I., № 829.

² Ibid., № 801—805.

³ «Кавказская Старина», Тиф., 1872—1873, с. 36. Գեորգի թագավորի պարգևագրից երևում է, որ Դսեղում, Մելիք Ջումշուդից առաջ, բնակություն էին հաստատած Ղարաբաղի հայերը (ծն. հեղ.)։

⁴ Ibid.

տեղափոխվել և Դիզակի երբեմնի նշանավոր մելիքության վերջին ներկայացուցիչ Մելիք Ղահրամանը, բայց մեզ հայտնի չէ, թե ուր էր նա բնակություն հաստատել[1]։ Վերջապես Վրաստան էր տեղափոխվել և մելիքական Ղարաբաղի հին կրոնական օջախը՝ Գանձասարի կաթողիկոսությունը, որ նույնպես մի ավատական հիմնարկություն էր և նույնպես ուներ իր գյուղացի ժողովուրդը, թեև այստեղ, Սոմխեթում, ոչ բազմաթիվ։ Համաձայնություն կայացնելով էջմիածնի հետ, Գեորգի թագավորը Գանձասարի հոգևոր իշխանությունը, առանց այլևս կաթողիկոսություն կոչվելու, բնակեցրեց Հաղպատի վանքում իբրև նրա թեմի պարզ առաջնորդական աթոռ։

Սոմխեթական Ղարաբաղի մելիքական իրականությունը, գուցե հենց այն պատճառով, որ կարճատև էր, առանձին մի երևույթ չէր ներկայացնում գաղթական ժողովրդի կյանքի մեջ և չէ թողել գրեթե և ոչ մի հետք նոր հայրենիք կազմած երկրի մեջ։ Բացառություն կազմում է Բոլնիսի Մելիք Աբովը, որ իրապես ներկայացնում է մի խոշոր դեմք ոչ թե, իհարկե, կուլտուրական կամ մտավոր առումով, այլ սոսկ զինական իմաստով։ Մենք տեսանք նրան մեր նախընթաց հատորում նախանձելի դիրք և հեղինակություն ստացած Վրաց արքունիքում և գիտենք, որ նրա հաջողականության ամբողջ գաղտնիքն այն բանի մեջ էր, որ լավ ըմբռնել էր և կիրառում էր անիշխանական ժամանակների միակ ճշմարիտ նշանաբանը, որ լավ ձևակերպված է հին առակի մեջ. «Սահման քաշող զէնն իւրյանց, որքան հատանէ, այնքան առնի»[2]։ Հետևելով այդ խրատին, ինչպես չէր մերժում հետևել նրա ժամանակակից կարողներից և ոչ մեկը, Մելիք Աբովը մեղք չէր համարում ավելացնել իր հպատակների թիվը խիզախ արշավանքների միջոցով և զենքով քշում-հավաքում էր Բոլնիս զանազան կողմերից բերած հայերին։ Ախալցխայի, Կարսի փաշայություններն անգամ նրա արշավանքների ասպարեզ էին դառնում, արշավանքներ, որոնք նոր և նոր հպատակ բնակիչներ էին բերում հերոս մելիքին[3], Էրզրումի սերասքեր փաշան նրա մատուցած օգնության համար շնորհակալություն էր գրում նրան։ Այս համարձակ և ինքնագլուխ գործողությունները միայն ռուս մոլի բյուրոկրատ Լազարև գեներալին էին գրգռում, և նա իր գրավոր հայտարարությունների մեջ առաջ քաշելով Մելիք Աբովի գործերը, աշխատում էր կասկածելի դարձնել ոչ միայն նրան, այլև հայ ժողովուրդը[4], այնպես որ նույնիսկ լիազորություն ստացավ գեներալ Կնորինգից խստությամբ վարվելու Բոլնիսի հռչակավոր տիրապետողի հետ։ Սակայն ռուս գեներալի այս թշնամությունը չէր կարողանում վնասել Մելիք Աբովին, քանի որ Վրաստանի քայքայված դրության մեջ նա էր միակ իրական ուժը, որ կարողանում էր պաշտպանել պետության սահմանները, երկյուղ ներշնչելով հարևան թշնամիներին։ Նրա պաշտպանության տակ էր գտնվում այն գիծը, որի վրա շատ հաճախ էին հարձակվում դաղստանցիները և իրենց թալանն ու գերեվարությունները այդ կողմից էին անց կացնում իրենց պաշտպան Ախալցխայի փաշայությունը։ Հասկանալի է, ուրեմն, թե որքան հարկավոր էր այդ մարդը Վրաստանին։ Նրա քաջություններով հիացած Գեորգին գրում էր նրան. «Բրավո, բրավո, դուք ինչպես որ Մելիք Հովսեփի արժանավոր որդին եք»[5]։

Խամսայի մելիքները Սոմխեթում էլ, իհարկե, հավատարիմ մնացին իրենց

¹ Ղարաբաղում, ինչպես երևում է, մնացել էր միայն Խաչենի Մելիք Ալահվերդին։ Ջրաբերդի Մելիք Հաթամ Բ իր ժողովրդի մի մասի հետ ապաստան էր գտել Գանձակում։

² Խորենացի, Ա, Ը։

³ «Акты...», I, № 882.

⁴ Ibid., № 35.

⁵ «Кавказская старина», с. 36.

ավանդական հոգեբանությանը։ Իրար հետ վիճում էին հպատակների հողերի համար, այն տարբերությամբ, սակայն, որ այդ ավանդական վեճերը չէին կարողանում զինված ընդհարումների հասցնել։ 1801 թվականին Պարսից շահը հարձակվեց Երևանի վրա՝ նրա սարդար Մամհադ խանի անհավատարմությունը պատժելու համար։ Երևանի շրջանում տեղավորված 330 ղարաբաղցի գաղթական հայ ընտանիքներ փախան Վրաստան։ Մելիք Աբովը տիրացավ նրանց մեծագույն մասին և միայն մի փոքրիկ մասը զիջեց Մելիք Ջումշուդին և Մելիք Ֆրեյդունին։ Սկսվեցին վեճեր և դժգոհություններ այս երկուսի կողմից, սակայն ապարդյուն անցան այդ տրտունջները։ Աբովն իր դասակիցներից և՛ շատ ուժեղ էր, և՛ շատ հեղինակավոր։ Մելիք Ջումշուդն առաջ էլ դժգոհում էր, որ իր ստացած երկրները չեն տալիս իրեն բավարար եկամուտ և դեռ Գեորգին, նրա դրությունը բարվոքելու համար, ընծայել էր նրան «Լոռնարխ» անունով ջրանցքը[1]։ Սակայն Մելիք Ջումշուդը մնաց դարձյալ նեղված տնտեսական դրության մեջ և մտածում էր ծախել Լոռի բերդը։ 330 փախստական ընտանիքներից բաժին էր պահանջում և Հաղպատում նստած Սարգիս արքեպիսկոպոս Հասան Ջալալյանը, Գանձասարի նախկին կաթողիկոսը, թվով 80 ընտանիքներ[2], բայց ոչ թե անձնապես իր, այլ իր եղբորորդի Աստվածատուրի համար։ Այս միջոցով նա ուզում էր վերականգնել Ջրաբերդում Խաչենի Հասան Ջալալյանների մելիքությունը։ Բայց գեներալ Կնորինգը նույնիսկ պատասխանի չարժանացրեց Սարգսի դիմումը։

Ահա ինչն է կազմում Սոմխեթում ապաստանած հայ մելիքների ամբողջ պատմությունը։

Անցնենք այժմ Պարսկական Հայաստանի ամենակարևոր մասը, Արաքսի հովիտը, ուր զետեղված էին Երևանի և Նախիջևանի խանությունները։ Իր դիրքով և նշանակությամբ Երևանի խանությունն էր, որ առաջնակարգ կարևորություն ուներ ոչ միայն պարսկական պետականության, այլ նաև համահայկական ազգային գաղափարի տեսակետից։ Ուստի և նա առավելապես պիտի գրավե մեր ուշադրությունը, երկրորդական տեղ հատկացնելով Նախիջևանի խանությանը։

Իբրև պարսկական նահանգ, Երևանի խանությունը քաղաքական-ռազմական ահագին նշանակություն ուներ այն պատճառով, որ, գտնվելով Արաքսի միջին հովտի արևմտյան կողմերը, նա սահմանագլուխ էր Պարսկաստանի և Թուրքիայի մեջ, ռազմական դաշտ՝ այս երկու մեծ պետությունների հաճախակի և երկարատև պատերազմների միջոցին և կռվախնձոր, որ մեկից մյուսին էր անցնում։ Այստեղ էին, այսպիսով, երկու հզոր հարևանները թափում մեծամեծ նվաճողական ջանքեր, դարձնելով հռչակավոր հովիտը փոխադարձ ոչնչացման և հարատև ավերումների արյունոտ ասպարեզ։ Եվ ահա այսպիսի մի տեղ էր տրված ճակատագրից հայ ժողովրդին, իբրև միջավայր, որի հետ կապված էր նրա ազգային շինարարական բախտը։ Երևանի խանությունը հայոց բազմահռչակ Արարատյան դաշտն էր, այն միջնաշխարհը, ուր գլխավորապես կատարվել էր երկար դարերի ընթացքում, հայ ժողովրդի պետական ազգային ստեղծագործությունը, կերտելով սրա համար և՛ պատմություն, և՛ տեղ՝ քաղաքակիրթ մարդկության ծոցում։ Հայությունը բնազդորեն կապված էր իր Արարատյան դաշտի հետ, իր ազգային ինքնապաշտպանության բնածին և տարերային հակումը, հարյուրավոր սերունդների հաջորդական զարգացման և ըմբռնողության մեջ բյուրեղացած, իբրև ցեղային հոգեբանական

[1] Ibid., с. 37.

[2] «Акты...», I, № 883.

կառուցվածք հաստատել էր հնությունը իր անսովոր արգավանդությամբ հռչակված այդ գետահովտում, որ և, այդ դարավոր աշխատանքի հետևանքով՝ հավաքողի և կենտրոնացնողի դեր է կատարել հնագույն ժամանակներից, հայ պետականության սկզբից։ Եվ մեծագործ դաշտը չկորցրեց իր այդ մեծ դերն և այն ժամանակից, երբ Հայաստանն այլևս քաղաքական ինքնուրույնություն չուներ և փռված էր խստասիրտ և անողորմ նվաճողների ոտների տակ իբրև պարտված ստրուկ։ Այս դրությունը հազարավոր տարիներ տևեց, բայց գերության շղթաների մեջ մաշվող ժողովուրդն իր հերթին, անհաղթահարելի ազգային ինքնամփոփումը շարունակեց կենտրոնացած պահել Արարատյան ազգային պաշտամունքի մեջ։

Պահպանել և պաշտպանել այդպիսի մի համազգային արժեք այնպիսի մի միջավայրում, որ շարունակ երերվում և ծխում էր պատերազմական մրրիկներից՝ նշանակում էր կենդանի պահել հայության համար մի սիրտ, որ ամենադժբախտ հանգամանքների մեջ անգամ կատարում էր իր կենսատու պաշտոնը։ Եվ ծանր զոհերով էր կարողանում հայ ժողովուրդը կատարել պահապանի և պաշտպանի իր բնազդային պարտականությունն Արարատյան դաշտում։ Նա զգում էր, որ այդ իր տունն է, իր հայրենի օթևանը և ինքն այդ տան մեջ պիտի լինի եթե ոչ ամբողջություն, գոնե մեծամասնություն, և իր ջանքերը գործադրում էր հենց այդ ուղղությամբ, որ չնվազի իր կենտրոնում, չթուլացնի իր թվական գերակշռության ուժը գոնե, որ, այնուամենայնիվ, ուժ էր, այն էլ այնքան կարոտ ազգային շահերի տեսակետից, որ նրա հարցը դառնում էր կյանքի և մահվան հարց։ Մեր պատմությունը մի քանի խոշոր փաստերով ցույց է տալիս, որ ամեն անգամ, երբ հայության թիվը պակասել է Արարատյան դաշտում, հայ ազգի մեջ մի բնազդային շարժում էր սկսվում դեպի Արաքսի հովիտը՝ պակասը լրացնելու և թվական խոշորություն ձեռք բերելու համար։ Հիշենք հենց Շահ Աբասի գերեվարությունը 1606-ին։ Կատարելապես անապատ դարձավ Արարատյան դաշտը, հայությունը գլխովին քշված-տարված էր և նրա շրջակա երկրներից։ Բայց այդ սարսափներից հազիվ մի 50 տարի անցած՝ Արարատյան դաշտը դարձյալ մշակված է և կենդանի, հայ ժողովուրդը մի զարմանալի մտավոր վերածնություն է սկսել, հղի է նոր, լուսավոր որոնումներով և սկզբնավորումներով, վերականգնել է իր թվական առավելությունը, այնպես որ ֆրանսիացի ճանապարհորդ Տավեռնիեն գրում է. «Չպետք է զարմանալ, եթե քաղաքների և գյուղերի մեջ մի հատ մահմեդականի դիմաց հիսուն հատ հայ են գրավում»[1]։

Սակայն հայ ժողովրդի այս թվական և կուլտուրական հաղթանակները հարատևություն չունեին և չէին կարող ունենալ, որքան որ Արարատյան դաշտն իբրև պատերազմական բեմ ենթարկված էր սասանումների։ XVIII դարի պարսկա-թուրքական պատերազմները, Պարսկաստանի մեջ տասնյակ տարիներով տևած անիշխանական տակնուվրայությունները դարձյալ ջլատեցին հայերի թվական գերիշխանության ուժը։ Եվ առաջին բանը, որ ընկնում է մեր աչքին XIX դարի սկզբում, Երևանի խանության համեմատական սակավամարդությունն է առհասարակ, բայց մանավանդ հայ ժողովրդի թվական նվազումը։ Այս երևույթը լուսաբանելու համար երկիրն ունի իր փաստերը, որոնք դրված են մեր առջև։ Դարի առաջին քառորդում, երբ պարսկական իշխանությունը դեռ անսասան էր Արաքսի հովտում, Երևանի խանության մեջ

[1] "Les six voyages de Jean Baptiste Tavernier en Turquie, en Perse et aux Indes", t. I, Paris, 1688, p. 32.

կային 521 շեն ու մարդաբնակ և 310 ավերակ գյուղեր[1], ասել է՝ ավերակ գյուղերը շեն գյուղերի կեսից ավելի թիվ էին կազմում կամ թե յուրաքանչյուր 3 շեն գյուղին գալիս էր մոտավորապես 2 ավերակ գյուղ։ Այսպես էր մորթվել երկրի բարօրությունը բռնությունների և վատ վարչության երեսից։ Եվ, ինչպես էլ պետք էր սպասել, այդ ավերված գյուղերի մեծագույն մասը, ինչպես ցույց է տալիս նրանց մանրամասն ցուցակը, այն գավառակներին էր պատկանում, որոնք գերազանցորեն հայաբնակ էին։ Այսպես, ամբողջ Ապարանն իր 39 գյուղերով անմարդաբնակ էր[2]։ Ավերակ գյուղի մի պատկեր տալիս է մեզ Գուսանին, մի մեծ գյուղ, որ գտնվում էր բնականից առատապես օժտված և ջրառատ մի տեղում, բայց որ XVIII դարի վերջերում մարդկանց ահ ազդող մի ավերակ էր, ինչպես նկարագրում է ականատեսը. «Այս ամայացած տեղն այժմ ծածկված է պտղատու ծառերով։ Մենք չվստահեցանք մոտ գնալ, վախեցանք, որ այնտեղ կարող էին պատահել թե ավազակներ և թե գազաններ։ Այս վերջիններս գլխավորապես ավելի լինում են պտղաշատ տեղերում։ Այս պտուղները ժողովողները միայն գազաններն են»[3]։

Կյանքի սպառման, մշակույթի վայրենացման հետևանքով էր, որ Երևանի ամբողջ խանությունն ուներ 70 հազար ազգաբնակություն, որից 50 հազար մահմեդական և միայն 20 հազարը՝ հայ[4]։ Այսպիսով, հայությունը 2,5 անգամ փոքրաթիվ էր մահմեդականությունից, իսկ Երևան քաղաքում՝ նույնիսկ երեք անգամ (7300 մահմեդական և 2300 հայ)։ Նախիջևանի խանության մեջ հայերի փոքրամասնությունն ավելի նվազ էր՝ 5000 հոգի 20 հազար մահմեդականների դիմաց։

Մի մահմեդական պետության մեջ այսպիսի թվական հարաբերությունները չէին կարող խոր ազդեցություն չթողնել փոքրամասնություն կազմող և արհամարհված կրոնին պատկանող ժողովրդի ամբողջ հոգեկան կառուցվածքի վրա, դարձնելով նրան ճնշված, նկուն, սարսափահար, միշտ իր ոչնչության ու տիրողի անմրցելի ուժի զգացող։ Բնական է, որ այսպիսի դրության մեջ նույնիսկ չափի զգացմունքն էլ կորցնի իր փոքրամասնությամբ խեղճ ու գլխիկոր մտայնությունը։ Մենք ունենք մեր առջև մի շատ բնորոշ և աչք ծակող օրինակ, որ նույնիսկ սնամեջ խոշորության թույլերի վրա ազդածի հոգեբանությունն է ներկայացնում։ Այդ օրինակը Երևանի բերդն է։ Պատմության մեջ շատ հայտնի է այդ բերդի դերը։ Երբեք նա չէ համարվել բնությունից կամ մարդկային արվեստից անառիկ դիրք ունեցող։ Եվրոպացի ճանապարհորդները, որոնք այցելել են Երևան 1827 թվականից հետո, զարմանում են, թե ինչպես ռուսները մեծ, ամեն տեսակ հիացքի արժանի հերոսություն համարեցին այդ խեղճ կավե ամրության նվաճումը։ Նրանցից մեկը պարզապես գրում է. «Երևանի նվաճումից հեշտ հերոսություն չի կարելի երևակայել։ Երևանի դիրքն ընդհանրապես և նրա բերդը, մասնավորապես, շատ մեծ ռազմագիտական դժվարություններ չեն ներկայացնում, հետևաբար՝ ժողովրդի առասպելական վախկոտությունն աչքի առաջ ունենալով, քաղաքի նվաճումն ամենահեշտ խնդիրներից մեկը կարելի է համարել»[5]։

---

1 И. Шопен, Исторический памятник состояния Армянской Области в эпоху ее присоединения к Российской Империи, Спб, 1852, с. 509—517.

2 Ibid., с 583—587։ Այս դատարկ գյուղերը բնակեցվեցին հայ գաղթականներով 1828—1830 թվականներին, Պարսկաստանից և Թուրքիայից եկած մեծ գաղթականության ժամանակ։

3 «Վաղարշապատեցի Հարություն Արարատյանի կյանքը», Թիֆլիս, 1892, էր. 151։

4 Шопен, с. 635—636.

5 Բոդենշտեդտ, Ճանապարհորդություն դեպի Հայաստան («Հանդես գրական և պատմական», Մոսկվա, 1889, գիրք Բ, էր. 230)։

Բայց այդպես է Երևանի բերդը բոլոր այն մարդկանց համար, որոնք նրա ճնշած և տափակեցրած փոքրամասնությանը չէին պատկանում։ Հայերի համար Երևանի բերդն ամենից ավելի ահարկու, ամենից շատ սարսափ ազդող ամրությունն էր։ Այսպիսի սարսեցուցիչ մտապատկեր հայկական իրականության մեջ ստեղծել էր գրկված ու կուչ եկած փոքրամասնության հոգեբանությունը, որի խոշորագույն արտահայտությունը տվել է մեզ իսկական պարսկահպատակ ծնված և մեծացած, բանաստեղծական չափազանցություններով կրակոտ Խաչատուր Աբովյանը, հայի ժողովրդական ոգու թարգմանը, ինքն էլ այդ մտայնության հարազատ զավակ, ինքն էլ մի անհատ այն սարսափահար փոքրամասնությունից, նրա դարավոր ապրումները ժառանգած և թղթին հաղորդած։ Իր «Վերք Հայաստանի» վեպի մեջ նա տալիս է Երևանի բերդի գեղեցիկ ու գունագեղ նկարագրությունը, ինչպես կարող էր տալ զգացմունքի լեզու առած հայը։ Այդ նկարագրությունը միայն մեր գրական մանկության գոհարներից մեկը չէ, այլ թանկագին է նաև իբրև պատմական վավերագիր։ Բաց անենք նրան մեր առջև, կարդանք, և մենք էլ կզգանք այն, ինչ զգացել է ամեն մի հայ Երևանի խանության մեջ, ինչ եղել է ժամանակի սոսկումը։

«Էն քարափի վրա՝ ցից գլուխը բարձրացնում, թամաշա ա անում հանդարտ՝ հազար գլխանի դևի պես՝ Երևանու՝ հազար տարեկան քավթառ, պառաված, չորս կողմը խանդակով կապած, բրգերով ղայիմացրած, սուր-սուր ատամները գլխին շարած, հինգ գաղաչափ հաստ պատով երկու տակ բռնած, մեկ ոտը Կոնդումը, մեկ ոտը Դամառբուլաղի գլխին դրած, մեկ բերանը հյուսիս, մեկը՝ հարավ բաց արած, չորացած գլուխը երկինք ցցած, լեն փեշերը երկրումը փռած, անամոթ երեսը կոխած, սվաղած հազար բռով, հազար փանջարա աչքերը դես ու դեն չռած, ջուխտ զանգերով Զանգվի քարոտ, զարհուրելի, սևադեմ ձորը խլրտած, դոշին կպցրած անմազ, անլեզու, մարդակեր բերդը, ու գեղնած երեսը հեռու տեղից ծածկում, աղահ աչքերը գետնին գցում, որ միամիտ տեսնողին դհայ շուտով խաբի, դհայ հետ իր ծոցը քաշի ու բերանի, անձեն, անսաս կուլ տա, փչացնի։

«Պարսի՞կ նրան շինեց, խորամանկ, խաբեբա, թե՞ սատանի նրա հիմքը գցեց՝ կարաչի, անհաշտ— ոչ գիր կա, ոչ թարեխ։ Նրա պատմությունը խավարի միջումն ա, մարդ ուղիղ չի գիտի, չի լսել. բայց հազարավոր ժամանակով՝ անահ ու անվախ՝ պինդ երեսը լիրբ գազանի պես դեմ տված, որքան թուփ, թոփխանի գյուլլեք էլ նրա կուշտ քամակին, նրա կակուղ դոշին, նրա բաց գլխին դիպան, ոչինչ չաղցեց, քյար չարեց։ Կոտրած թևերն էլ էդ սաղացրած, ջարդած ոսկորներն էլ քար պնդացրած՝ գլուխը վեր քաշեց, էլ եդ շուռ տալով, վեր կացավ, կանգնեց, ուսերը դզեց, ոլորեց, սարքեց ու էլ եդ հարբա գալով, հաթաթա տալով, իր գլուխը քորողի, իր շվաքի հետ խաղացողի թուլության, փոքրոգության անզորության ու հիմար հանդգնության վրա ծաղր անելով, ծիծաղելով, ծափ տալով, պպզին կանգնեց, մասը ցցեց էն հողաշեն, այլ ո՛չ քարաշեն բերդը ու խենեշ դիմոք՝ իր կոտրած ոտները Զանգվի բերանը խցելով, մնաց տեղը նստած, Զանգվի՝ էդ գիժ, ցերեկ, անքուն, անդադար, գժված, կատաղած նրա բաց դոշին, նրա անիրավ սրտին իր պլոկած ջրի ամբերան թքում, քարի ուրանքով վեր հանում, զարկում ա, բայց տեսնելով, թե չի կարում ջիգրը հանել, վրեժն առնել, նրան քանդել, գոռալով, գանգատվելով, կական բառնալով, թիչ-թիչ ձենը փոքր գցում ու մունչ-մունչ երեսը կոխում, Զանգիբասարի ծոցն ա մտնում ու հույսը կտրած, սիրտը կոտրած՝ տխուր դես ու դեն ցրվում, ցնորվում ու հազար բարի, հազար պտուղ և արդյունք տալով, բաշխելով, ճամփեն մոլորում, կորչում ու չի կարում իր սիրուն թվերն էլ Արաղին մեկ խաբար տանի...

«...Երևանու բերդն, Երևանու բերդն, ախ, որ առավոտը բացվելիս՝ նրան էն լաչար գլուխը մարդու աչքով չէր ընկնում, հենց իմանաս՝ թե դժոխքն ա իր բերանը բաց անում, ատամները դրճտացնում ու իր սպականյալ, թունավոր դառը շունչը չորս կողմը փրփրալով փչում, ցրվում, փռնչացնում, որ կարենա՝ իր հոտած աղիքների կերած, լափած արդար ջանը մարսի, էլի չանգերը դուրս գցի, էլի հազար անմեղ, արդար հոգի անծամ կուլ տա, իր անկուշտ փորին մատաղ անի։ Արեգակը մտնելիս հո՝ հենց իմանաս, թե սադայելի որդիքն և զավակները, նրա զորքն ու զորապետներն ըլին իրենց դիվական խաղը խաղում, իրենց դժոխային քեֆն անում և բոչերի գլխին՝ մեկ կտրած գլուխ էս տեղ էին ոտի տակ տալիս, մեկ անգլուխ լաշ էնտեղ էին կտոր-կտոր անում, վրեն թքնում, ծափ տալիս, ծիծաղում, հռհռում, քրքջում ու թռով, մլրախով, յա փետով մեկ մնացած մարմին էս կողմն, էն կողմն գլորում, քացի տալիս և ներքև գցում։ Ճաշվա ժամանակին՝ հենց իմանաս մեկ կրակի սար ըլեր էնտեղ կանգնած, փոր, ծոց տաք քուրուրթով բոցով լիքը՝ ծխում բորբոքվում էր, որ բերդանքիր ճոնչա, բացվի, որոքի և ինչ կա չկա տակովն անի, լափի։ Ամեն մեկ բուրջը, ամեն մեկ բաղանը՝ ոսկորով, ջամդաքով, յա անմեղ դութսաղներով լիքը, քած խոզի պես՝ հենց իմանաս ծանրացել փորներն էլ չէին կարում քաշել, էնպես ուռել էին, որ բերդի ճաքին, պատին, կտոր-կտոր ըլին։ Մեչիդների ոսկեվարագ գլխներին արեգակի դիպչելիս, պլպլալիս, հենց իմանաս՝ էն իրենց միջի անսիրտ նամազ անողների անխղճմտանք հոգու շունչը փչված, ուզում ըլեին Աստծուն փառաբանություն, աղոթք անելու տեղը՝ որ երկրին խաղաղություն, դինջություն տա, սատանայական կրակն ըլեին ուզում երկնիցը վեր ածել տան, որ սար, ձոր էրեն, խարավեն, տակով անեն։ Հայի թշնամի մոլլեն, որ գիշեր-ցերեկ ուզում էր, որ յա քրիստոնեության անունը վերանա, յա հայ ազգը, մինարեն որ չէր նի ըլում՝ որ ազան տա ու իրեն հավատացյալ ժողովուրդը դան իրենց իմամներին, իրենց Ալուն, Մուգթուզալուն աղոթք անեն, որ էն գյոռնում դժոխքի փայ չըլին, ձեռն որ ականջին չէր դնում ու ծվում, հենց իմանաս՝ հայի համար սադայելյան փողն ըլի հնչում, որ իրանց գլուխը լան, չունքի շատ անգամ էր պատահում, որ մեկ խեղճ, անճար գեղցի հայ, որ քաղաքն էր գալիս, էս հաղաղին, որ իր առուտուրն անի, մեկ քանի շահի ձեռք գցի՝ տանի իր քյուլփաթներին պահի, էն տեղն էին գցում, էնքան էին ոտի-գլխին վերհատում, որ հայն էլ էր մոռանում, էկած ճամփեն էլ, իր օղլուշաղն էլ, չունքի բեզաֆիլ մեկ թուրքի շորի դիպած մուրտառած էր ըլում։ Աշխարքի գլխին հենց գիտենաս՝ կրակ պետք է վեր գար, էնպես էր ամեն մարդ ոտնահարվում, սարսափում, որ իր գլուխը պահի, բալի տակ չընկնի։ Ի՞նչ ասեմ, ի՞նչ պատմեմ, կըլի որ էն սադայելյան փողն ու դատաստանի օրն էնքան սարսափելի չըլին, չունքի աստծո ողորմության հույսը էլի կա, ինչքան էս օրերը, որ իրիկունը գալիս՝ մարդ չէր իմանում, թե յարաբ առավոտը կհասնի, լիսը բացվելիս՝ ումուդ չուներ՝ թե սաղ սալամաթ՝ մթանն աչքը խփի, էնպես ահում, դողում էին երկրի խալխը։

«Երևանու բերդը, Երևանու բերդը, ախ, աչքս դուս գա, քանի-քանի ողորմելի հայի միս ա կերել, քանի-քանի անմեղ հոգի տարիներով չարչարվելուց, տանջվելուց, կենդանի նահատակ դառնալուց, կրակի, բոցի, երկաթե շամփրի, թոխմախի, կրակած քարփիչի տանելուց, համբերելուց եդը, կամ թոփի գլխի հետ ա թռել, հազար կտոր էլել, կամ դարաղաջի (կախաղանի) վրա ա՝ գոռալով, երկինք-երկիր աղաչելով, իր միսն իր ատամներով կրծելով, աչքերը դուրս տրաքելով, զովում դարդաշ, իրավորի, ազգականի, իր որդոց, զավակաց ձենը լսելով, տորոմվելով, փոթոթվելով հոգին ավանդել, երկինք գնացել, որ պրծնի էս դառն աշխարքից, էն կատաղի գազանների ձեռքիցը։ Քանի-քանի ջահել երիտասարդ՝ մեկ սաղ օջախի, մեն-մենակ որդի, մեկ աղքատ, չքավոր տան սյուն, մխիթարություն, մեկ տասը գլուխ քյուլփաթի տեր ու ապավեն, իր ծաղկած, դալար հասակին, իր ըմրի ու արևի, որ բաց էլած ժամանակին՝ կամ սաղ-սաղ քերթվել ա, կամ իր պատվական գլուխը գառան պես թրին դեմ դրել, որ երկնքումը իր ջահելության մուրազն առնի, վայելի, չունքի երկիրը նրա անարատ արյունն էր ծարավ՝ որ շուտով խմի ու բալքի կշտանա»[1]։

Ահա ինչ էր Երևանի բերդը հայի համար։ Եվ չպետք է կարծել, թե նա մի հատ էր, Զանգու գետի ափին կանգնեցրած։ Երևանը նյութական թանձրացումն էր այն ահ ու դողի, որ հազարավոր տարիներով լափել-մաշել էր հայ ժողովրդի մարմինն ու հոգին։ Այդ թանձրացումը ամեն տեղ կար, Երևանի բերդեր շատ կային, թեև ոչ Երևան անունով, բայց ամեն տեղ միատեսակ՝ թույլ ու ողորմելի իրենց իսկական ամրության և ուժի կողմից, բայց միշտ մղձավանջ սարուկների համար։ Այս մղձավանջի նկարագրությունը միայն բանաստեղծություն չէ։ Բանաստեղծ էր Աբովյանը։ Բայց նրա հա՞յրը։ Նա բանաստեղծ չէր, այլ ներկայացուցիչ տարիքավոր սերնդի, որ մանուկ սերնդին էր հաղորդում իր նախնիներից ժառանգած ուժը։ Խաչատուրը հիշում է. «Թե Զանգվի կամրջի վրայովը, յա քաղաքի մեյդանովն անցկենալիս՝ ինչպես էր իմ լուսահոգի հերը ինձ ռասով ձեռքով անում, չունքի լեզվով խոսալն էլ ղաղաբի էր բերում, որ թեզ անցկենանք, մեր թուրքը չտեսնի»։ Հայի դարավոր գերությունն էր կավե բերդի կերպարանքով ցցված ամեն տեղ, ուր նա աշխատում էր արյուն-քրտինքով, «քավթառ, անատամ» մի ծերուկ ազատ և ուժեղ մարդկության համար, բայց դժոխք, այրվող ծծմբով լի մի փոս հայության համար։ Վերածելով այս դրությունը դիվանագիտական լեզվի, մենք կստանանք այն, որ Երևանի բերդը Հայոց Հարցի մարմնացումն էր...

Բարեբախտաբար, մենք բավական առատ նյութ ունենք պատկերացնելու համար, թե ինչպես էր ապրում և ինչպես էր պահվում Երևանի բերդն իր կրծքի վրա տանող հայ ժողովուրդը։ Եվ մեր գլխավոր աղբյուրը նույն ականատես և ժամանակակից Աբովյանն է, որ թողել է ժողովրդական կյանքի մանրամասն նկարագրությունն վերին աստիճանի հետաքրքրական կողմերից ոչ միայն իր «Վերք Հայաստանի» մեջ, այլև այն տեղեկությունների մեջ, որ նա հաղորդել է Երևանն այցելած գերմանացի ճանապարհորդներ բարոն Ավգուստ ֆոն Հաքստհաուզենին[2] և Մորից Վագներին[3]։ Թանկագին են և այն տեղեկությունները, որ հավաքել է Ռուսաց կառավարության հանձնարարությամբ Երևանը գրավելուց անմիջապես հետո (1829), պաշտոնյա Շոպենը մի ամբողջ հանձնաժողովի աշխատակցությամբ[4]։

Ժողովրդական կյանքի նկարագրությունը բնական է սկսել նրա բնակության վայրերից։ Հայ ժողովուրդը գերազանցորեն գյուղաբնակ էր, ամբողջ Երևանի խանության մեջ մի հատ քաղաք էր գտնվում՝ Երևանը, ուր, ինչպես տեսանք, միայն 2300 հոգի էին ապրում այն 20 հազար հոգուց, որոնք բնակված էին ամբողջ խանության մեջ։ Բացի սրանից, քաղաքի ազգաբնակությունն, ինչպես կտեսնենք, համարյա ոչնչով չէր տարբերվում գյուղական ազգաբնակությունից։ Արդ, խոսք սկսելով առհասարակ գյուղերի մասին, Երևանի խա-

[1] Խաչատուր Աբովյան, Վերք Հայաստանի, ողբ հայրենասերի, պատմական վեպ, Թիֆլիս, 1858, եր. 75—76, 83—85։

[2] «Закавказский край. Заметки о семейной и общественной жизни Барона Августа фон Гакстгаузена», Спб, 1856, 2 тома. (Հայերեն թարգմանություն «Ճանապարհորդություն Հայկական Կովկասու», Վաղարշապատ, 1872)։

[3] «Մ. Վագների ճանապարհորդությունն ի Հայաստան», քաղվածք, թարգմ. Վիեննա, 1851։

[4] Шопен, Исторический памятник . և այլն։

նության պաշտոնական նկարագրությունն ասում է. «Չկա ուրիշ անճոռնի բան, քան Երևանի և Նախիջևանի խանությունների գյուղերի տեսքը։ Հողով ծածկված փոսեր, որոնք տեղավորված են առանց որևէ կարգի և իրարից բաժանվում են աղբի գարշահոտ կույտերով կամ ոչ պակաս գարշահոտ ճահճներով։ Փոքրիկ ուղիներ, որոնք պտույտներ են անում տներ փոխարինող այդ փոսերի շուրջը կամ կտուրների վրայով՝ ահա գյուղի ընդհանուր տեսարանը։ Ցածրի շրջաններում գյուղերն ավելի քիչ են անճոռնի, այստեղ շատ այգիներ և անտառներ կան, որոնք գրավում են մարդու հայացքը և ծածկում են գյուղերի մերկությունը, դառնալով մի տեսակ սնգույր և շպար նրանց համար, բայց էապես բոլոր գյուղերն էլ իրար նման են։ Բնակարանների ներքը համապատասխանում է նրանց արտաքինին, ամենալավ ընդունարան սենյակը գոմն է, այստեղ են տանում պատվավոր հյուրերին, եղջերավոր անասունների և ձիերի հետ։ Ասենք այս բանը ձմեռն ունի իր օգուտը, որովհետև գոմերի մեջ շատ տաք է լինում, քան տան մյուս՝ բոլոր քամիների համար բաց բաժանմունքներում։ Իրենք՝ բնակիչներն ու նրանց ընտանիքներն ապրում են առանձին բաժանմունքներում, ուր հատակի մեջտեղ վառված կրակի մուխը լցնում է ամբողջ սենյակը, մինչև որ դուրս է գալիս կտուրի մեջ բացված ծակով, որ թե երդիկ է և թե լուսամուտ։ Այստեղ, երեխաների հետ դաստիարակվում են հորթերը, գառները, վառեկները, իսկ անկյուններում, թառերի վրա՝ հավերն ու ճղճղան աքաղաղները գիշերը շատ անախորժ հարևանություն են սարքում։ Ամենազզվելի միջատների բյուրավոր բույլեր սենյակի դռան հենց շեմքին են ընդունում այցելուին։ Եվ սակայն Երևանի խանության բնակիչներն ընդհանրապես ունևոր էին. տների մեջ դարսված էին բարձերի և վերմակների կույտեր, մեծ քանակությամբ պղնձե ամաններ, զորգեր, որոնցով ծածկում էին հատակները»[1]։

Խաչատուր Աբովյանը վարպետ վրձնով նկարել է գյուղական տան այս երկու բաժինները։ Ահա ընտանիքի կյանքը ձմեռվա առավոտին. «Արեգակի շողքն ընկավ տուն. բուխարը մեկ կողմից էր շվացնում, բղղում. հոսանը մյուս կողմից ֆստացնում, փստացնում, վզվզում, ձյունը փանջարեքովը ու երթքովը ներս ածում, աչք ու ականջ լցնում ու էրեխեքն էլ քնաթաթախ վեր կացած, թոնդրի չորս կողմովը բոլորված շարված ու դեռ անվա՝ ոտընքերը քարին, գետնին էին ծեծում, մորընքերը խփում՝ որ հաց առնեն ուտեն։ Աթարի սև, թանձր ծուխը դուռն ու երդիկը կալել տունը մեխ ծով էր շինել, էնպես որ մարդի աչքը առաջը չէր կարում ջոկի։ Էրեխեքանց սուգ ու շիվանը գլուխ էր տանում, քյալա ծակում։ Որն օրորոցում էր լալիս, որը դեռ յորղանի տակին, աչք ու բերան ծխով լիքը դառում, հարայ տալիս, որն էլ աված հացովը հերիք չէր, էլի ծնգծնգում ուզում էր, որ էլի տան, որ ձենը կտրի։ Խեղճ տանտիկինը հո չէր իմանում, թե ձեռը որի բերնին դնի, որի աչքը կշտացնի ու իր բերանն ու աչքը հո բաց ու խուփ անելով՝ մեռել էր՝ հենց բանի։ Էնքան ծուխ էր կուլ տվել, բռնոթի քաշել, փռշտացել՝ որ սիրտն եկել էր բողազին դեմ առել։ Էնքան աչքերը տրորել էր ու աղի արտասուք թափել, որ աչքի լիսը թռել էր։ Էնքան կուզեկուզ հավկրի պես ման էր եկել, պուճախե-պուճախ ընկել՝ որ էլ մեջքը չէր կարում քաշել։ Թոնդիրն էլ քանի դնում էր, թեժանում էր։ Պղինձներ ղլթղթալով եփ էին գալիս, ինքն էլ թոնդրի չորս կողմը դուբարա ավել քսեց, սրբեց, կերակրների համը տեսավ, աղ քցեց ու մոտիկ էր անում, որ ժամավորը տուն գա։ Աստծո ողորմությունը հասավ. ծուխը նե քաշվեցավ, քամին նե առավ. ջրի գնացողները եկան, աղերքն էլ հավաքվե-

¹ Шопен, с. 484—486.

ցան. արեգակը մեկ չիդա բոյ եկավ՝ բարձրացավ»[1]։ Իսկ գոմի սաքուն, ուր կատարվում էր բարեկենդանի կոչունքը, պատկերանում է այսպես. «Գոմի սաքուն էնպես էր տաքացել, ինչպես համամ։ Աթարի կրակի մարմանդ գոլը մեկ կողմից, եզը, կովը, ծիու հոտը մյուսից՝ մարդի քյալլա էին ծակում։ Փորները ուռած, գլխները դարտակ, ձեռք ու ոտք մրած, գոմի ծանրացած բուղն ու կրակի սև ծուխն էլ որ քթերներին լցվելով, մաղձ ու աղիք իր գլխովը տվեց։ Որը բերնին էր հուպ տալիս, որը աչքին, որը փորին, որը քթին, որն էլ թութուն էր քաշում, որ բալքի թե էն զահրամար հոտը մի քիչ կտրվի։ Որը փռշտում էր, որը հազում, որն էլ էնպես էր զկրտում, որ սիրտ ու թոք հետը դուրս էին գալիս։ Ամեն մեկ քիթ հաղրախանա էր դառել, ամեն մեկ բողազ ղուռուռոտ, ամեն մեկ փոր դափ ու դարյա։ Հազալիս՝ երես ու միրուք էր, որ ներկվում էր։ Փռշտալիս՝ հենց գիդենաս՝ անձրև էր գալիս։ Քթի ցելթուկը ինչ տեղ ասես հասնում էր, երես, բերան, աչք, ունք էլ չէր ասում, թե Աստված ա ստեղծել։ Շատը աղլուխ չունենալով կամ փեշով էր սրբում քիթը, կամ ձեռը պատին քսում կամ թե չէ էնպես էր սատտիկ վեր քաշում, որ մեկ բուռը ծուխ ասես, բաշ ասես, գոմի հոտ ասես, թոզ ասես՝ քուլա-քուլա բարձրանում, բերն էին համբարձվում»[2]։

Քաղաքի տեսքն էլ արտաքուստ շատ անհրապույր էր։ Այդ տեսքն, ինչպես ասում է նույն պաշտոնական նկարագրությունը, միանման էր և վհատեցուցիչ։ Ինչպես համարյա բոլոր ասիական քաղաքներում, այնպես էլ այստեղ, Երևանում, փողոցները նեղ էին և նրանց պտույտներն այնքան ծուռ ու մուռ, որ նրանք իրար դիպչում են համարյա առանց ուղիղ անկյունների։ Փողոցները կազմվում են ցածրիկ և անճոռնի պատերի երկու շարքերից, որոնցից ոմանք անթուրծ աղյուսներից կամ չոր քարից էին շինված, իսկ հաճախ ուղղակի ցեխից։ Անձրևոտ ժամանակները, երբ ցեխի առատություն էր ստացվում, այդ պատերի շինության ամենահարմար միջոցն էին համարվում։ Այս շատ տգեղ պատերի մեջ մեկ-մեկ երևում էին տների փոքրիկ դռները, որոնք միշտ փակված էին։ Գլխավոր փողոցների մեջտեղով հոսում էր ջրի առու, որից ջուրը բաշխվում էր այգիներին կողմնակի ջրանցքներով։ Այդ ջրերը, քանդելով ճանապարհն ու պատերը, կազմում էին վտանգավոր փոսեր, որոնք ամառը դառնում էին գարշահոտ ճահիճներ, իսկ ձմեռը ջուրը սառչում էր, դուրս գալով հունից և ողողելով փողոցները և տեղ-տեղ կազմելով բարձր սառցակույտեր, կտրում էին հաղորդակցությունը[3]։ Բռնակալական կարգերն Արևելքում իրենց հատուկ ճարտարապետական օրենքներն էին ստեղծել։ Առաջին պահանջն, որ ինքնապաշտպանության խորհուրդն ուներ իր մեջ, այն էր, որ տունը փողոցի կողմից պիտի երևար տձև ու այնպիսով չգրավեր ոչ ոքի ուշադրությունը։ Եվ այս պատճառով տան ճակատը փողոցի կողմը չէր դարձած, այլ նայում էր ներսի բակին։ Փողոցի կողմից ոչ մի հատ պատուհան չկար։ Միայն իշխանություն ունեցող մեծավորները, խաներն ու բեկերն էին, որ իրենց տներին տալիս էին, փողոցից մտնելու համար, բարձր ու լայն դռներ, դարբասներ, բայց այս էլ այն պատճառով, որ նրանք այդ դռների մեջ էին ժողովուրդ ընդունում, դատաստան անում։ Մնացած բոլոր տների արտաքին դռները փոքրիկ ու ցածրիկ էին։ Նրանց առջևով, ներսում, քաշվում էր մի պատ, որպեսզի դրսից նայողին ոչինչ չերևա։ Այս նախազգուշությունները, անճոռնացման այս անհրաժեշտությունն ունեին իրենց խոր պատճառները։ «Եթե Պար-

¹ Խաչատուր Աբովյան, Վերք Հայաստանի, էջ. 14—15։
² Անդ, էջ. 38—39։
³ Шопен, с. 406.

սից կառավարիչներից մեկը նկատում էր, որ քաղաքի բնակիչներից մեկն ու մեկը հարուստ է ապրում ուրիշների համեմատությամբ, որ նրա տունն ավելի մաքուր է, կանայք ուրիշներից ավելի շքեղ են հագնված, մի խոսքով` որ նա ունի փոքր ի շատե բարեկեցություն, այն ժամանակ, համայնական հարկաբաշխության միջոցին աշխատում էր, որ այդպիսի մարդուց ստանալի բաժինը մեծացվի։ Եթե սարդարը, խանը կամ մի ուրիշ կարևոր պաշտոնյա նկատում էր քաղաքացու տանը գեղեցիկ կին, ամեն կերպ աշխատում էր հոժարակամ կամ բռնությամբ խլել նրան հորից կամ ամուսնուց, իսկ դիմադրության հանդիպելու դեպքում` դիմում էր հանում բոլոր միջոցներով»[1]։

Հայ ժողովուրդն ընկերական տեսակետից համարյա չէր ցույց տալիս տարբերություններ իր մեջ։ «Հայերի մեջ,— ասում է Հաքստհաուզենը,— բոլորովին նկատելի չէ մի առանձին տարբերություն կամ բացարձակ հակադրություն ժողովրդական զանազան դասակարգերի մեջ։ Այստեղ գոյություն չունի աչք ծակող տարբերություն քաղաքի և գյուղի մեջ, քաղքենու և գյուղացու մեջ։ Գյուղացին քաղաքի բնակչից տարբերվում է միայն նրանով, որ ապրում է գյուղում և ոչ քաղաքում. քաղաքներում բնակիչների մեծ մասը պարապում է առևտրով և արհեստներով, գյուղերում այդ բաներով շատերը չեն պարապում և միևնույնն, ընդհակառակը, կարելի է ասել հողագործության վերաբերմամբ»[2]։ Նշանակում է հայության մեջ դեռ տիրում էր նահապետական կարգը, երբ կենսական կարիքները հոգացվում էին բնական տնտեսության ձևերով, առավելապես փոխանակությունների միջոցով, աշխատանքի և արդյունագործության բաժանումն այնքան որոշ ու խիստ չէր շեշտված, և հետևաբար շահերի բաշխումն այնքան սուր բնավորություն չուներ։ Մենք արդեն ցույց ենք տվել այս աշխատության նախընթաց հատվածների մեջ, որ ազնվական կամ հողատիրական դասակարգը մի ժամանակ այնքան ուժեղ և բազմաթիվ Հայաստանում, հետզհետե ջնջվելով, նվազման ծայրին էր հասել Մահմեդական տիրապետությունը Հայաստանի այս կողմում, որի մասին է այժմ մեր խոսքը, հավասարեցրել էր իր հպատակ ռայան մի ընդհանուր դասակարգության մեջ։ Երևանի ամբողջ խանության մեջ հիշատակվում են երեք գյուղ միայն, ուր կառավարիչների (տանուտերերի) պաշտոնում գտնվում էին այնպիսի հայ տոհմեր, որոնք ժառանգաբար էին վարում այդ պաշտոնը և համարվում էին փոքր ի շատե հին ծագում ունեցող։ Դրանցից մեկն էր Աբովյան տոհմը Քանաքեռ գյուղում, որի նախահայր Աբովը, սակայն, տեղացի չէր, ուրիշ կողմերից (գուցե Ղարաբաղից) էր տեղափոխվել այստեղ։ Կար, բացի դրանից, Մելիք-Աղամալյանների հռչակավոր մելիքական տոհմը Երևանում, թեև դարձյալ չի կարելի ասել հաստատապես, թե նա առաջացած էր հին Հայաստանի ազնվականության շարքերից։

Ավելի ևս անորոշ ու թույլ էր փոքր արիստոկրատիան։ Կապիտալիզմը հայերի մեջ մի երևույթ էր, որ մենք նկատում ենք դեռ Կիլիկիայի թագավորության ժամանակներից։ Բայց խոշոր դրամագլուխները բուն Հայաստան չէին գնում, չգտնելով այստեղ հարմար պայմաններ, այլ հավաքվում էին հայկական վաճառականության գաղութներում։ Թվում էր, թե այս կողմից բացառություն պիտի կազմեր XVI դարը, երբ Երևանից ոչ հեռու, Արաքսի ժայռոտ ափին, կազմակերպվում էր չափազանց հարուստ առևտրական Ջուղան, բայց ահա հենց XVII դարի սկզբում նրան իր բոլոր գանձերով Արաքսի ափից պոկում է Շահ Աբասը և տանում է Պարսկաստանի խորքերը, ուր նա պիտի

[1] Шопен, с. 893.

[2] Гакстгаузен, Закавк. Край, 1, с. 186.

դառնար ավելի հռչակավոր մի բուրժուական գաղթավայր։ Հայաստանի հողի վրա, պարսկական տիրապետության տակ, առևտուրը, ճիշտ է, գլխավորապես հայերի ձեռքին էր գտնվում, բայց այդ այն տեսակ առևտուր չէր, որ դրամական մեծ գումարներ ժողովեր, այլ մանր չարչիական առևտուր էր։ Նախիջևանի գավառի նկարագրության մեջ, որ նույնպես կատարվել է այդ գավառում ռուսական տիրապետության հաստատվելուց անմիջապես հետո, մենք հանդիպում ենք հետևյալ հետաքրքրական տողերին. «Նրանք (հայերը). սաստիկ կապված են նստակյաց կյանքին, առևտրական պարապմունքներին լինելով ուշիմ, սակավապետ կյանքի պահանջների մեջ, անծանոթ լինելով արևելյան լեզուներին, նրանք կարող կլինեին մեծ մասամբ հարուստ վաճառականներ դառնալ, բայց դուրս է գալիս հակառակը. կապիտալիստներ նրանց մեջ չափազանց հազվագյուտ են. սահմանափակվելով մանր հաշիվներով և լինելով ագահ ապօրեն օգուտներ ստանալու մեջ, նրանք իրենք են խորտակում հասարակական վստահությունը դեպի իրենց, որ վաճառականական բարօրության հիմքն է»[1]։

Արդյունաբերական դրամագլխի մասին խոսք լինել չի կարող այն պարզ պատճառով, որ այս զարմանալի հարուստ երկրում մշակության և բնության տված միջոցների շահագործման ձևը դեռ շատ նախնական էր, արհեստները դեռ կիսավայրենի դրության մեջ էին, գործարանական կյանքի նշույլներն անգամ չէին երևում։ Հողագործությունը, այգեգործությունը, որոնք ամենից մեծ և աչքի ընկնող բնական հարստություններն էին, ազգաբնակության տնային տնտեսության առարկաներն էին կազմում և, միշտ մնալով այդ դրության մեջ, ոչ միայն չէին կարող առաջացնել տնտեսական առանձին խոշոր ձևեր, այլև միացնում էին քաղաքի և գյուղի մարդկանց մի ընդհանուր մանր տնային արդյունաբերական տիպի մեջ։

Այս տնտեսական դրությունը միանգամայն համապատասխանում էր հայ ժողովրդի ապրած նահապետական կյանքին, որի հիմքը կազմող տոհմային դրության մնացորդները դեռ ամենայն հեղինակավորությամբ պահվում էին հայ գյուղերում մեծ և անբաժան ընտանեկան կազմակերպությունների ձևով։ «Ինձ,— ասում է բարոն Հաքստհաուզենը,— անհայտ է մի այլ ժողովուրդ, որի մեջ ընտանեկան կապերն ավելի սերտ և մոտիկ լինեն, ինչպես հայերի մեջ։ Քանի կենդանի են ընտանիքի գլուխները, այն է` հայրը կամ մայրը, նրա բոլոր անդամներն ապրում են անբաժան, առանց կայքի մասնավորացման, անպայման հնազանդություն ցույց տալով մեծին։ Քիչ չէ պատահում, որ 80-ամյա նահապետի մոտ ապրում են երեք սերունդ կամ 5 ամուսնացած որդիք 50—60 տարեկան, թոռը` 30 տարեկան, և սրա որդիները։ Չկա բաժանություն, ոչ ոք իր համար բան չէ ձեռք բերում, աշխատանքն ու օգուտները ընտանիքինն են։ Կան տներ, ուր ընտանիքները բաղկացած են 40—50 հոգուց։ Մինչև իսկ եղբայրներն էլ հոժարությամբ չեն բաժանվում. սովորաբար, ծնողների մահից հետո մեծ եղբայրը մտնում է հոր իրավունքների մեջ. բաժանությունն սկսվում է միայն թոռների մեջ»[2]։ Ընտանեկան այս մեծ և հզոր կապերի հավերժացման համար կազմակերպվել էր դաստիարակչական մի ամբողջ սիստեմ, որի արմատները հաստատված էին ժողովրդի կրոնական հասկացողությունների և նվիրական ծեսերի մեջ։ Բայց, ինչպես գիտենք, այս հիմնարկությունը հայերի մեջ նոր չէր, այլ գալիս էր նրանց նախապատմական կյանքի ժամանակներից։ Նրան մենք մանրամասնորեն նկարագրել ենք

[1] В. Г., Статистическое описание Нахичеванской провинции, Спб., 1833, с. 38.

[2] «Кавказск. Край», 1, с. 190.

այս աշխատության առաջին հատորի մեջ։ Եվ եթե այստեղ նորից կարիք է
լինում հիշատակել նրան, այս միայն այն պատճառով, որպեսզի նորից շեշտա-
ված լինի հայ ժողովրդի ցեղական ինքնապաշտպանության խորհուրդներից
մեկը, գուցե ամենակարևորը։ Այս մեր սրբազան օջախն է, որի շուրջը նստած,
որով շաղկապված և գոտեպնդված՝ հայ ժողովուրդը տասնյակ դարեր բոլորեց
իր հայրենիքում, ունենալով քաղաքական հորիզոն, որ միշտ քարաբեկորով
էր ծածկված։ Բայց երկար կյանքը չէր կարող մաշեցնող ազդեցություն չու-
նենալ հայ տոհմային կենցաղի այդ հնագույն հիմնարկության վրա։ Եվ իրավ,
տասնիններորդ դարի սկզբին մենք նրա փլատակներն ենք տեսնում։ Մնացել
է միայն ընտանեկան նեղ շրջանը, որի մեջ դեռ ապրում է տոհմապետության
սկզբունքը, չունենալով այլևս քաղաքական իշխանություն, ինչպես ուներ նա-
խարարական սիստեմի մեջ, և ներկայացնելով միայն բարոյական ուժի հեղի-
նակությունը։ Մեզ արդեն հայտնի է, թե սկսած նախապատմական ժամանակ-
ներից՝ հայ կինն ինչպիսի խոշոր դեր էր կատարում օջախի աշխարհում։
Տասնիններորդ դարը, որ բերում էր իր հետ կնոջ ազատագրության մեծ շար-
ժումը, իր սկզբնավորության մեջ գտնում էր հայ կնոջն իր դարավոր տե-
ղում, իբրև օջախի գլխավոր նեցուկ, իբրև այդ պաշտամունքի գլխավոր էր-
մանի, որ նրան զոհ էր բերում իր ամբողջ անհատականությունը։

Բարոն Հաքստհաուզենը, որ որքան և բարեխիղճ ու լավատեղյակ ուսում-
նասիրող է, բայց և այնպես՝ օտար մի դիտող էր և չէր կարող, իհարկե, իմա-
նալ հայ կյանքի բոլոր մանրամասնությունները, զարմանում է այն անսահ-
ման հնազանդության վրա, որով տոգորված էր նրա ժամանակ հայ կինը նա-
հապետական ընտանիքի ծոցում։ «Ընտանեկան հնազանդությունն,— ասում է
նա,— մի ամուր շղթա է կազմում, և տնտեսական համաձայնությունը հինգ
կամ վեց կանանց մեջ հնարավոր է դառնում հայերի մոտ նրանց կանացի
սեռի առանձին դաստիարակության հետևանքով։ Այս դաստիարակությունն,
իհարկե, շատ խիստ է, բայց նրան չի կարելի անվանել ոչ ստրկություն, ոչ էլ
ճնշում։ Երիտասարդ ամուսիններն են վայելում բարքերի և սովորույթների սահ-
մանների մեջ, մինչդեռ բոլոր մյուս հարևան ժողովուրդների մեջ ամուսնու-
թյուններ կազմելու միակ ձևը գնումն է և մինչև այդ աղջիկներին փակված
են պահում։ Հայաստանում աղջիկներին չի արգելվում երիտասարդների հետ
տեսնվել, խոսել։ Նրանք առանց ծածկույթի և բաց գլխով կարող են գնալ
ուր ուզում են. երիտասարդները բացարձակ տեսակցում են նրանց հետ. սի-
րային վերաբերմունք են ցույց տալիս, և շատ հաճախ ամուսնությունները
հիմնվում են փոխադարձ մտերմության վրա։ Ամուսնությունից հետո, մինչև
իսկ տանը, կինը փաթաթված է, դեմքի ներքևի մասը, բերանը բոլորովին ծած-
կված են, աչքերի վրա իջեցրած է քող։ Փողոցում նրան երբեք չի կարելի
տեսնել, մինչև իսկ եկեղեցի գնում է նա կրկնակի ծածկույթի տակ, եթե մի
օտար մարդ է մտնում տուն կամ այգին, նա անհապաղ թաքնվում է։ Ոչ որի
հետ չպիտի խոսե, նույնիսկ իր հարազատ հոր կամ եղբոր հետ. նա խոսում
է միայն իր ամուսնու հետ, այն էլ միայն այն ժամանակ, երբ երկուսով մենակ
են. մյուս բոլոր մարդկանց հետ կինը բացատրվում է միմիայն մնջկատակու-
թյամբ։ Սովորույթի պահանջած այս մնջության մեջ նա մնում է մինչև առա-
ջին երեխայի ծնունդը։ Այն ժամանակ միայն նա սակավ առ սակավ ազա-
տագրվում է, խոսում է նորածինի հետ, հետո իր ամուսնու մոր հետ, այնու-
հետև իր հարազատ մոր հետ, իր տալերի հետ և իր հարազատ քույրերի
հետ։ Ի վերջո, նա խոսել սկսում է տան ջահել աղջիկների հետ, բայց շատ
կամացուկ, համարյա շշուկով, որ տղամարդ չլսի։ Եվ վեց ու ավելի տարի

հետո նա համարվում է բոլորովին ազատ. նրա դաստիարակությունը բոլո-
րովին վերջացած է»[1]։

Նահապետական այս ընտանիքի մի խոշոր հատկությունն էլ հյուրասի-
րությունն էր։ Խաչատուր Աբովյանը շատ լավ պատկերացրել է այդ գիծն իր
պապ Աբովի օրինակով, որ մի ամբողջ մեծ այգի էր տնկել, չորս այգեպան
վարձած՝ պահում-պահպանում էր միայն և միմիայն օտարական անցորդ-
ների համար։ Ամեն մեկն իրավունք ուներ մտնել այգին, վերցնել նրա պտուղ-
ներից որքան կամենում էր։ Քամու թափած պտուղները հավաքվում էին կո-
ղովների մեջ և դրվում էին այգու մուտքի մոտ, որ անցորդները վերցնեն։
Ձմեռն անգամ այդ այգու պտուղները պատկանում էին բացառապես անծա-
նոթ օտարականներին։ Եվ այս մեծ նշանակություն ուներ մանավանդ սարեցի
հայ և թուրք գյուղացիների համար, որոնք սովոր չէին այգեգործության,
չունեին իրենց սեփական ծառապտուղները, բայց որոնք մշտապես կարոտ
էին նրանց, մանավանդ, այն պատճառով, որ պտուղները ժողովրդի մեջ հա-
մարվում էին ամենազորեղ բուժիչ միջոցները։ Եվ ահա սարեցիները Քանա-
քեռում ունեին իրենց համար տնկած և խնամքով պահպանվող մրգանոցը,
Աբովի լայնասիրտ հյուրընկալության արդյունք այգին[2]։ Այս օրինակը մեզ
պատմողը Հաքստհաուզենն է։ Իսկ ինքը, Աբովյանը բարեկենդանի կոչունքի
նկարագրությունն սկսելուց առաջ դիմում է ընթերցողին և ասում. «Արի՛
հմի՛կ զոմի դուռը կաղնենք ու մեր քեխուդեքանց քեֆին թամաշ անենք։
Բայց ի՞նչ անես, որ չեն թողում, հազար յոլ ու այլազգի էլ որ ըլիս, որոնց
սովորությունն էնպես ա, որ առանց քեզ թիքա չեն բերանները դնիլ, չգնաս՝
կխռովին ու ամեն մարդ իր տունը կերթա. գնանք. ի՞նչ կա որ. հո մեզ չեն
ուտիլ. տարով մեջներումը մնաս, քեզ տնետուն ման կածեն, քեֆ չհանց կտան.
Բարեկենդան օրը հո՝ որ քարվան մտնի գեղը, ճամփից ետ կդարձնեն, քեզ
էլ կպահեն, նոքարներից էլ, ձիանեցդ էլ, իրենք քո հոգսը կհոգան, քեզ քնից,
տնից չեն ժաժ տալ, էնքան ղոնաղասեր են[3]»։

Բայց գտնելով ազգային առանձնահատուկ կենսական պայմանների այս-
քան խիստ շեշտված ուժը հայ ընտանեկան կազմակերպության և նրա իրա-
գործած սովորությունների մեջ, մենք պիտի նկատի առնենք, որ տոհմային
գրությունը, տալով հայ օջախին մի ամբողջ մեծ աշխարհի բովանդակություն,
անցնում էր միևնույն ձևերով, կազմավորելու և առանձին օջախների միա-
ցումը, համայնքը։ Այստեղ էլ նա դնում էր նույն տոհմապետական կամ նույ-
նիսկ ցեղապետական իշխանության սկզբունքը։ Ինչպես ասացինք վերևում,
այս համայնական հիմնարկությունը դարերի ընթացքում փշուր-փշուր էր եղել
ահավոր բախումներից։ Այս, սակայն, չի նշանակում, թե հայ ժողովուրդը
մոռացել էր իսպառ իր այդ հիմնարկության գաղափարը։ Ազգային իշխանու-
թյան ստվերը նրա համար շարունակեց ապրել այն չափազանց հազվագյուտ
համայնական հիմնարկությունների մեջ, ուր մահմեդական տիրապետությունը
թույլ էր տալիս հայի մասնակցությունը։ Այդպես էին տանուտերները (մելիք,
քյոխվա) գյուղերում և քալանթարները կամ դարձյալ մելիքները քաղաքնե-
րում։ Գլխավորապես իրենց անձնական հատկություններով և ոչ թե իրենց
պաշտոնի բերմունքով այս հայ իշխանավորները հաճախ ձեռք էին բերում
շատ ազդեցիկ դիրք և բարձր հեղինակություն։ Իսկ թե միևնույն տոհմից հա-
ջորդաբար առաջանում էին մի քանի այդպիսի անձնական ընդունակություն-

[1] «Кавк. Край», с. 190—192.
[2] Ibid., с. 194.
[3] Խաչատուր Աբովյան, Վերք Հայաստանի, Թիֆլիս, էջ. 38։

ներով օժտված անհատներ, այն ժամանակ ամբողջ տոհմն էր առանում քրիս-
տոնյա փարթամ ու հզոր իշխողների հռչակ։ Այսպես էր Երևանի Մելիք-Աղա-
մալյան տոհմը, որ ժառանգաբար վարում էր քաղաքագլխական և հատկապես
դատաստանական գործերի կառավարիչի պաշտոնը։ XIX դարի սկզբում այդ
տոհմի ներկայացուցիչն էր մեծահռչակ Մելիք Սահակը, որին Աբովյանը
նկարագրում է մեծ հիացմունքով։ Սահակը, ասում է նա, ուշագրավ
արտաքին ուներ՝ բարձր հասակ, ազնիվ տեսք, նրա պատկերի վրա երևում
էր հեզության և խելոքության կնիքը։ Նրա բոլոր շարժվածքների մեջ նկատ-
վում էր հաճելիություն և վեհություն։ «Երբ նա երևում էր բարձրաշուք պար-
սիկ պաշտոնյայի հագուստի մեջ, որպիսին հայերից միայն նա իրավունք
ուներ կրել, հագած նեղ թևքերով ծիրանի վերարկու, որի կրծքին փայլում էին
մի քանի շարք ոսկեթել կոճակներ, նստած Դաղստանի գեղեցիկ ձիու վրա և
շրջապատված իր ծառաներով՝ ամեն մի հայ հանդիպում էր նրան իբրև իր
իշխանի։ Պարսիկներին նա անհագին և կարևոր ծառայություններ էր մատուցել։
Ինքը շահը ճանաչում էր նրան իբրև իր ամենահավատարիմ հպատակներից
մեկին։ Ուստի նրա ազդեցությունը մեծ էր ամենուրեք. Երևանում նա այդ
բանի մեջ միայն սարդարից էր ցած։ Նույնիսկ պերճաշուք պարսիկները շատ
անգամ դիմում էին նրա պաշտպանությանը և օգնությանը։ Որովհետև նրա
դատավարական իշխանության իրավունքն ու սահմանները չափազանց մեծ
էին, ուստի նա առիթ ուներ հարյուրավոր մարդկանց բարիք անել և ազատում
էր նրանց զանազան վտանգներից, նույնիսկ և մահից։ Այս նա անում էր
առանց խտրություն դնելու անձերի և դավանանքների մեջ, և նույնիսկ աղքա-
տները, վայրենի սարեցիները և մահմեդականները սիրում էին նրան և շատ
հարգում այս բանի համար։ Քանի անգամ է նա իր միջնորդություններով ազա-
տել դատապարտվածներին, որոնք կամ գալիս էին նրա մոտ կամ պատահում
էին նրան սարդարի մոտ։ Դեպի իր ազգը նա լցված էր ամենաբոցավառ սի-
րով, և այս պատճառով էլ նրա հավատակիցները նրան անձնվեր էին ան-
փոփոխ հավատարմությամբ... Առավոտը լուսաբացին նրա տան մեջ հավաք-
վում էին ամեն դասակարգի և հավատի մարդիկ։ Նա մտնում էր դահլիճ իր
ծառաներով և այն ժամանակ, երբ նա շրջում էր իրեն սպասող ամբոխի մեջ,
նրա վրա թափվում էր արևելյան հաճոյախոսությունների և բացականչություն-
ների մի ամբողջ հեղեղ։ «Դու մեր արեգակն ես, մեծ, կարող հրամանատարը.
դու մեր ամեն ինչն ես, և մենք միայն քո փոշին ենք. քո հրամանը թանկ է
ինձ համար աչքիցս էլ ավելի»,—այսպես էին կանչում հայերը։ «Ռասուլ Ալլահը
(Աստծու մարգարեն) թող քո հովանավորը լինի ճանապարհին»,— ասում
էին մահմեդականները»[1]։

Բայց, ինչպես ասում է առածը, մի հատ ծաղկով գարուն չի լինում։ Մի
Մելիք Սահակ, եթե անգամ գերբնական հրաշագործություն կատարելու կարո-
ղությամբ օժտված լիներ, այնուամենայնիվ, չէր կարող փոփոխել այն բար-
բարոս կարգը, որ պարսկական պետական ռեժիմի հիմքն էր կազմում։ Գըլ-
խավոր դերակատարն Երևանի խանության մեջ սարդարն էր, անսահման իրա-
վունքներով լիազորված մի պարսկական սատրապ, որ հաճախ նույնիսկ շա-
հական իշխանության դեմ էլ էր ընդվզում և որի համար ոչինչ բան էր խլել
հայ մելիքից նրա դատաստանական գործառությունների գլխավոր իրավունք-
ները։ Մելիքի իրավասությունից միշտ դուրս էր մահվան պատիժը, մի բան,
որ միայն սարդարին էր վերապահված։ Այնպես որ բարձրագույն դատավորն,
այնուամենայնիվ, մնում էր սարդարը, որ և մարդկանց կյանքի տերն էր հան-

[1] «Закавк. Край», I. с. 182—183.

դիսանում։ Հաքստհաուզենը, ընդհանրապես, այս կերպ է բնորոշում այդ տի-
րողներին. «Պարսիկ սարդարներն առհասարակ արնախում բռնակալներ էին»[1]։
Դարի սկզբում Երևանի մեջ տիրող Մահմադ խան սարդարի մասին հայ ժա-
մանակագիրն ասում է. «Որ եկեալ տեղեկացեալ իբրև զգազան ի յորջ յամ-
րոցն Երևանու. եկն և յարեցաւ ի նա և խանն Նախիջևանու Քաբուլի՝ կուրա-
ցուցեալն ի Ներքինոցն[2]. սա կոյր աչօք և նա կոյր մտօք. և կոյրն աչօք Քա-
բուլի եղև առաջնորդ Մահմադ խան կոյրին մտօք. նաև եղև իբրև իժ թիւնաւո-
նմա»[3]։ Այսպիսի մի տիրողի ժամանակ Մելիք Սահակն էլ արդեն անզոր էր
փոքր ի շատե խոշոր մի օգնություն հասցնելու իր ազգակիցներին։ Եվ մենք
տեսնում ենք, որ երբ Մահմադ խան սարդարը, պատերազմական նկատա-
ռումներով, հրամայեց Երևանի և շրջանի հայ ժողովրդին գաղթել, այդ գործը,
նրա հանձնարարությամբ, կատարող հայ իշխանավորներից մեկը հենց նույն
Մելիք Սահակն էր, ինչպես վկայում է նույն ժամանակագիրը։

Ժողովուրդը, սակայն, այսպիսի արտակարգ պատահարներից չէր միայն
տառապում։ Տառապանքը մշտական էր, հարատև և բխում էր տևական, ան-
փոփոխ հանգամանքներից։ Կեղեքումների ամենավատ միջոցները հայթայթում
էր հարկահանական սիստեմը։ Շահը սարդար էր ուղարկում Երևան և դնում
էր նրա վրա որոշ քանակությամբ հարկ տալու պարտականությունը։ Իսկ թե
ինչպես էր հավաքվում այդ հարկը, ինչպես էր բաժանվում ազգաբնակության
վրա, այդ մասին հարցնող ու մտածող չկար։ Հաքստհաուզենը, միշտ աղբյուր
ունենալով մեր Աբովյանին, տալիս է այսպիսի մի պատկեր. «Սարդարները
նշանակվում էին անորոշ ժամանակով և նրանք, կարելիին չափ, օգտվում էին
այդ ժամանակով՝ իրենց հարստացնելու համար։ Սարդարներն, ընտրված լի-
նելով պալատական գրանիկներից և ստրուկներից, գալիս էին երկիր առանց
ճանաչելու նրա հարաբերությունները և աղբյուրները, ուստի որոնում էին
տեղացիների, գլխավորապես զինվորականների, որոնք թալանելու ընդունա-
կություն ունեին։ Այս մարդկանց նրանք տալիս էին խանի կամ բեկի տիտղոս
և կոչում։ Բայց ծույլ էին այդ խաներն ու բեկերը, սիրահար զվարճություն-
ների և ամենևին գլուխ չունեին վարչական, դատաստանական և հարկահա-
վաքության կամ, որ նույնն է, թալանի գործեր կատարելու համար։ Ուստի
նրանք իրենցից նշանակում էին հատուկ պաշտոնյաներ, որոնք կոչվում էին
[illegible]յար և որոնք էլ իսկապես զբաղվում էին գործերով։ Խաներն ու բեկերն
ամոթալի բան էին համարում գրել-կարդալ իմանալը։ Այդ աղքատների բանն
էր, որոնք և այդպիսով ապրուստի միջոց էին գտնում։ Հետևաբար և չէր
կարելի մտածել հաշիվների և գրքերի մասին։ Ամեն ինչ ձեռքից ձեռք անցնելով
էր կատարվում։ Այդ բոլոր մարդիկ իրար հետ մրցում էին հարկերի քանակը
բարձրացնելու և ամբողջությամբ առնելու մեջ, որպեսզի այդ եղանակով ոչ
միայն ձեռք բերվի անմիջական մեծավորների բարեհաճությունը, այլ ամենից
առաջ կարելի լինի սեփական գրպանները լցնել՝ ներկայի բարեբախտության
և ապագայի ապահովության համար, որովհետև բոլոր այս պաշտոնատար ան-
ձինք, բացառությամբ սարդարի, երկար չեն մնում իրենց տեղերում, շատ-շատ
երկու կամ երեք տարուց քիչ ավելի»[4]։

Եվ այսպիսով ահա, պարսկական ամբողջ բռնակալի խանությունը ժո-
ղովրդի համար գալիս էր վերջիվերջո մարմնանում էր մի ստորին պաշտոն-

[1] Ibid., с. 231.
[2] Այսինքն՝ Աղա Մահմադ խանից։
[3] Հովհաննես Քահ. Ոսկերչյան, Յիշատակարան («Կռունկ Հայոց աշխարհին», 1862, եր. [illegible])։
[4] «Закавк. Край». I, с. 184—185.

յալի, մի ազնիվ ու աղքատ սարքյարի մեջ, որ իրական տերն ու կարգադրիչն էր ժողովրդական կյանքի, գույքի և պատվի։ Ժողովուրդը ոչ շահին էր տեսնում, ոչ սարդարին, ոչ էլ խանին ու բեգին։ Նրա տեսածը, նրա ճակատագիրը միայն սարքյարն էր։ Դարձյալ և դարձյալ Խաչատուր Աբովյանն է, որ իր ծանոթ գերմանացի ճանապարհորդի միջոցով թողել է մեզ այս գյուղական սարքյարի՝ վերին աստիճանի բնորոշ պատկերը։ «Յուրաքանչյուր տարի ամառը,— ասում է նա,— մեր գյուղը (Քանաքեռ) էր գալիս սարքյարը, կառավարության հասանելիք հացի բաժինն ստանալու համար։ Այս մի հասարակ գործ էր, որ շատ ժամանակ չէր պահանջում, բայց նա դրա համար ապրում էր գյուղում երեք կամ չորս ամիս։ Այս ժամանակի համար նրան տրվում էր լավագույն բնակարանը գյուղի մեջ, նա պահանջում էր ամենախնամոտ ծառաներ և կեր իր ծառայողների և ձիերի համար. ամեն օր նրա տունն էին տանում լավագույն պաշարեղեններ, հավեր, ձու, յուղ, միս և այլն, մինչև իսկ գինի, որովհետև ամենքը չէին արհամարհում այս խմիչքը։ Գյուղի գզիրն ամեն օր տնետուն էր գնում՝ բոլոր հարկավոր բաները խնդրելու կամ պահանջելու համար։ Նրա հետ սովորաբար գնում էր և սարքյարի ծառան՝ մարակը ձեռին, նրան ստիպելու կամ պատժելու համար դանդաղկոտության դեպքում։ Նա ծեծում էր գզրին, քշում էր իր առջև, թափելով նրա գլխին անթիվ հայհոյանքներ, որոնցով թուրքական լեզուն, համեմատած ուրիշների հետ, այնքան հարուստ է։ Երբ տանտերն իսկույն չէր տալիս բոլոր պահանջվածը, այս մարդը գազանային կատաղությամբ տուն էր խուժում, կոտրում էր ամեն ինչ, անխնա ծեծում էր ամենքին, առանց հասակի և սեռի խտրության։ Եվ այս դեռ ծառան էր, սրանով կարելի է դատել, թե ինչ էր նրա տերը։ Երբ սարքյարը դուրս էր գալիս, խեղճ գյուղացիները գնում էին նրա ետևից գերիների նման և աչքները գցած էին նրա հայացքին, որպեսզի իսկույն իջեցնեն նրա բարկությունը կամ փարատեն վատ տրամադրությունը։ Գյուղի մարդիկ խմբերով կանգնած էին կտուրներին կամ նստած էին դռների մոտ մեծ քարերի վրա կամ թե հավաքված էին պարտեզներում, աղանձ էին ուտում և խոսում իրենց գործերի մասին. բայց հենց որ տեսնում էին, որ մեկը նշան արավ ձեռք կամ գդակ շարժելով, ամենքը դես ու դեն էին փախչում։ Իսկ երբ սարքյարը խոսքի էր բռնվում նրանց հետ, նրանք պատասխանում էին հարգոյական ողջույններով և ամենաստրկական հաճոյախոսություններով, ինչպես, օրինակ. «Իմ արևի տեր», «Իմ հոգու աչք»։ Դժբախտություն էր, եթե նա բարկանում էր. մարակը, սուրը, խենջարը, ինչ որ ձեռքն էր ընկնում, գործի էր դառնում նրա համար։ Նույն հարգոյական վերաբերմունքը դեպի իրեն պահանջում էր գյուղից և սարքյարի ծառան, թեև նա չիբուխ վառողից կամ նրա խողովակը մաքրողից այլ մի բան չէր»[1]։ Հայ գյուղի սարքական դրության պատկերը լրացնելու համար հիշատակենք, որ միայն պաշտոնական դիրք ունեցող մարդիկ չէին բռնանում գյուղացու վրա։ Յուրաքանչյուր մահմեդական զգում էր, որ ինքը տիրապետող է և իրավունք ունի պահանջելու իր համար ամեն ինչ, որ լավ է և գնահատելի։ Պահանջը կարգադրում էր կոպիտ և անողոք կերպով, պահանջողը չափ չէր ճանաչում և վիրավորում էր գյուղացուն, հայհոյելով նրա հավատն ու բոլոր սրբությունները։ Հաքստհաուզենի մոտ գտնում ենք մի պատմություն, թե ինչպես մի դերվիշ մտնում է Աբովյանի հոր այգին, իր համար բաժին պահանջում։ Եվ երբ նրան տալիս են առատ պտուղներ, նա կատաղում է, որ մահմեդական դերվիշին այդպիսի անարժեք բաներով են ուզում խաբել և այնպիսի հայհոյանքներ է թափում, որ Աբովյանի հայրը դուրս է գալիս համբերությունից և ծեծել է տալիս դերվիշին։ Ընդհարումներ այս անչափ և վիրավորական պահանջների հողի վրա հաճախ էին պատահում։

[1] «Закавк. Край», 1, с. 185—187.

Այսպես էր, ընդհանուր և աղոտ գծերով, այն իրականությունը, որի մեջ հայ ժողովուրդը պիտի գոյություն պահպաներ երկար տարիներ։ Պատմական տխուր հանգամանքների մի դաժան դաստիարակություն, որ պիտի աղճատեր նրա բարոյական դեմքը, այլանդակեր նրա հոգեբանությունը, ներշնչելով նրան ստրկի աշխարհայացքներ, հարմարվելու, ստորաքարշ շպարվելու թշվառ փիլիսոփայությունն իբրև միակ միջոց այս աշխարհում ապրողների մեջ մնալու։ Եվ պարսկական նրա աղճատող դաստիարակությունից ազատագրվելուց անմիջապես հետո էր, որ յուրաքանչյուր կողմնակի հետազոտողի աչքի պատկերանում էր, թե ինչեր էր կորցրել այդ ժողովուրդն իր բազմադարյան գերության մեջ։ Այդ հետազոտողներից ոմանք ծայրահեղության մեջ են ընկել, մասնավոր երևույթներն ընդհանրացնելով ամբողջ ժողովրդի վերաբերմամբ, բայց և այնպես, նույնիսկ նրանց բերած մասնավոր երևույթներն ու համեմատությունները լավ ցույց են տալիս հոգեկան այլանդակումների, աղքատացման և առհասարակ ժողովրդի կրած բարոյական կորուստների բնույթն ու ախտաբանությունը։

Այսպես, Նախիջևանի գավառի հետազոտության մեջ, որից հիշատակություն բերինք վերևում, գտնում ենք հետաքրքրական զուգակշիռներ, որոնք բնորոշում են թե դաստիարակողներին և թե դաստիարակվողներին։ Դաստիարակողը կառավարող դասակարգն է. խան, բեկ թե ուրիշ անվան պաշտոնյա՝ պարսիկ թե թուրք։ Այս մեծերն, աշխարհի ու մարդկանց այս տերերն համբարտավան և խստասիրտ են թույլերի հանդեպ և ստոր ու քծնող ուժեղների հանդեպ։ Նրանց կեղծավորությունը չունի սահմաններ։ Քաղաքավարի են, հյուրընկալ են, խոսքով հաճությամբ առաջարկում են իրենց բարեկամությունը, ծառայություններ, նույնիսկ իրենց գույքը. բայց այս բոլորը՝ դրդված կեղծ պատվասիրությունից և անձնական օգուտ փնտրելուց. անկեղծ բարեկամություն հազիվ թե գոյություն ունի նրանց մեջ»[1]։ Դնենք հատկություններին իբրև զուգակշիռ այն ավերումները, որ ներկայացնում է հայ ժողովրդի հոգեբանությունը. «Հայերն արդեն մի քանի դարից ի վեր չկազմելով ինքնօրեն պետություն և ստրկացած լինելով պարսիկների բռնակալական վարչության տակ, կորցրել են բարքերի նախկին մաքրությունը և, ընդունելով իրենց տերերի բոլոր արատավոր հատկությունները, ավելացրին նրանց վրա և ուրիշները, որոնց վերաբերմամբ նրանք, սակայն, իրենց արդարացնում են, անվանելով նրանց իրենց ստրկացած դրության անխուսափելի հետևանք։ Նրանց այժմյան հասկացողությամբ խորամանկությունը, խաբեությունը և խոհեմությունը հոմանիշներ են։ Անվանում են հիմար այն մարդուն, որ չգիտե խորամանկություն անել և խաբել»[2]։

Նույնանման միակողմանի, բայց ոչ միանգամայն անարդար վկայություն հայերի մասին տալիս է Շոպենն Երևանի խանության իր պաշտոնական նկարագրության մեջ, երբ խոսքի հերթը գալիս է երաժշտությանը։ «Այստեղի հայերն,— ասում է նա,— անուրախ ժողովուրդ են. Հաշիվները և առաջվա ստրկացումը ճնշել են նրանց մեջ երևակայության ամեն մի աշխույժ։ Պարսկաստանում և Թուրքիայի մեջ հայ ռամիկը, որ կորցրել է ազգության վերջին նկարագիրը, ուրիշ կերպ չէ ուրախանում և չէ ծիծաղում, բայց միայն նայած իր տիրոջ հոգեկան տրամադրության. բավական է մի հատ խոժոռ հայացք,

[1] В. Г., Описание Нахичеванской провинции, с. 35.
[2] Ibid., с. 37.

որ նրան հարկադրեն անգին ու տեղը լաց լինել նույն անկեղծությամբ, ինչպես դրանից առաջ նա ուրախանում էր և ծիծաղում: Դրա հակառակ, թուրքերը հակված են դեպի ամեն տեսակ զվարճություններ և մանավանդ դեպի երգն ու պարը. նրանք այս արվեստների մեջ դարձել են իրենց ստրկացած հայերի ուսուցիչներ: Ենթադրում են, սակայն, թե հայերը մի ժամանակ ունեցել են ազգային երգեր, բայց հայոց նահանգի (Երևանի և Նախիջևանի խանությունների) բնակիչները բոլորովին մոռացել են նրանց կամ, եթե երգում էլ են, մեծագույն մասը թուրքական կամ պարսկական եղանակներով: Այս երգերը Մովսես Խորենացու վկայությամբ, գոյություն ունեին դեռ նրա ժամանակ Գողթանում (Օրդուբաթի շրջանում): Բայց այդ ժամանակներից հայերին հալածում էր այնքան դաժան մի ճակատագիր, որ նրանց չի կարելի մեղադրել անգամ, եթե, առակի ճպուռի նման, նրանք չէին երգեր երգում շարունակ, այլ, հետևելով աշխատասեր մրջյունի օրինակին, գերադասում էին պաշարներ հավաքել սև օրվա համար: Այժմ, երբ Հայկական նահանգը նվաճված է Ռուսաց արծվի թևի հովանու տակ, սև օրը նրանց համար անցել է անդառնալի կերպով, հետևաբար նրանք կարող են, չդադարելով պաշարներ հավաքելուց, անձնատուր լինել թե երգի և թե երաժշտության բավականություններին»[1]: Մենք այս խոսքերը չենք բերում իբրև երևույթի խորիմաստ վերլուծություն և բացատրություն: Այսպիսի մի բան չի էլ կարելի սպասել մի օտարազգի հետազոտողից, որի համար գաղտնի են մնացել շատ ու շատ աղբյուրներ և ճշմարտություններ, որոնք այն ժամանակները նույնիսկ զարգացած հայերի մեծամասնությանն էլ անծանոթ էին: Հետաքրքրական պիտի համարվի երևույթի բացատրությունը, մի հանգամանք, որի մեջ կան և շատ ճըշմարտություններ: Այդ բացատրությունն, ամենից առաջ, իհարկե, նրանք՝ հայերն էին տալիս: Նշանակում է, որ նրանք զգում էին իրենց ստրկության ամբողջ դժբախտությունը: Բռնակալական լուծը հոգեբանորեն այլանդակել էր ժողովուրդը, բայց չէր սպանել նրա մեջ գիտակցության բոլոր նշույլները:

Եվ ուրիշ կերպ չէր կարող լինել: Որովհետև հայ ժողովուրդը բոլորովին անօգնական չէր իր ներքին ուժերը կազմակերպելու և այդ միջոցով ազգային կապն ու գաղափարը կենդանի և գործուն դրության մեջ պահելու համար: Որքան անլույս լիներ Հայաստանի վրա բռնացած քաղաքական գերությունը, կար, այնուամենայնիվ, այն շատ խոշոր հանգամանքը, որ հայն ուներ իր ցեղական խեցիի մեջ իր սեփական փոքրիկ անկյունը, ուր նա ինքն իրեն էր պատկանում, ուներ իր իրավունքները, նույնիսկ ինքնիրեն կառավարելու ազատությունը: Այդ անկյունը նրա եկեղեցին էր: Ճիշտ է, այստեղ մտել էին մահմեդական բութ և ֆանատիկոս բռնակալության հոսանքները, առաջացնելով վարչական անկարգություններ, բարքերի ապականություն, բայց մանավանդ խտացնելով տգիտության խավարը հանուր հայ հոգևորականության մեջ, սակայն ինչ էլ լիներ, եկեղեցու կամարների տակ հավաքված կիսալույս նեղ ու փոքրիկ աշխարհն էր այն միակ ասպարեզը, ուր հայը կարող էր իր ընդունակությունները, իր մտքի և հոգու ստեղծագործական կորովը գործադրել: Մենք երբեք չպիտի աչքից գցենք այս չափազանց կարևոր և խոշոր իրականությունը: Տասնիններորդ դարի շեմին հայը կանգնած է իբրև մի լոկ կրոնական համայնք, որի համար ազգության գրեթե միակ մի նշանը սեփական, հնար եղածին չափ ինքնուրույնացրած եկեղեցին էր: Նա էր պահպանում ազգության կապն աշխարհի վրա ցրված հայության մեջ: Այս կողմից հայությունը շատ

[1] Шопен, Истор. памят., с. 896.

ճիշտ կերպով նմանեցվում էր հրեաներին[1]: Ինչպես հրեաներն ունեին մի ընդհանուր և գերագույն ազգային սրբություն՝ Երուսաղեմը կամ Սիոնը, մարմնացում ազգային սերտ և ուժեղ միացման, այնպես էլ հայերն ունեին իրենց Էջմիածինը, ընդհանուր Մայր Աթոռը, որ կապում, միացնում էր հայերին Հնդկաստանից մինչև Սանկտ Պետերբուրգ և Նեղոսի ափերից մինչև Աֆղանստան: Իր էությամբ լինելով գերազանցորեն կրոնական հաստատություն, Էջմիածինը իր վայելած համազգային դիրքի և նշանակության պատճառով հեշտ կարող էր յուրացնել իրեն և քաղաքական զորավոր դեր: Արարատյան հռչակավոր աթոռի մեծ հեղինակությունը հենվում էր նախ և առաջ նրա խոշոր հարստությունների վրա, որոնք գոյանում էին բարեպաշտ ժողովրդի նվերներից: Ամեն տարի տեղի ունեին մեծ ուխտագնացություններ, որոնք ամենից շատ ժողովուրդ հավաքում էին, իհարկե, Արարատյան երկրից: Խաչատուր Աբովյանը թողել է և այդ ուխտագնացությունների նկարագրությունը, որոնց նա ինքն էլ մասնակցել է երեխա հասակում: Պատրաստություններն, ասում է նա, սկսվում էին օրերով և շաբաթներով առաջ: Ընտանիքները հագնում էին իրենց լավագույն տոնական զգեստները, հեծնում էին լավ ձիաները, իսկ առանձին բեռնակիր ձիաներով էլ տանում էին նրանց ընծաները մեծահռչակ վանքին: Խոսքն, իհարկե, հարուստ գյուղացիների և քաղաքացիների մասին է: Բայց ուխտավորներ մեծ քարավաններով և ընծաներով գալիս էին նաև շատ հեռավոր տեղերից, Կ. Պոլսից, Աստրախանից, Մոսկվայից և Պետերբուրգից անգամ[2]: Ճանապարհորդությունը շատ վտանգավոր էր. կարավանները հաճախ թալանվում էին ոչ միայն ավազակ քրդերից, այլ նույնիսկ և պարսիկ զինվորներից, լինում էին նմանապես և շատ սպանություններ: Բայց և այնպես, համազգային մեծ օջախի ճանապարհն երբեք չէր գոցվում: Հայ ժողովուրդը տանում էր իր առատ նվերները և վերադառնում էր տանելով, իբրև փոխարինություն, բարոյական մի մեծ մխիթարություն, որ, անշուշտ, ուժ և դիմացկունություն էր հաղորդում նրան՝ ստրկական կացության մեջ: Խանդաղատանքով և արտասուքներով պատմում էին, թե ինչպես եղան սուրբ տեղում, ինչպես տեսան նրան, ինչպես էր կաթողիկոսն օրհնում իրենց և իր աջը դնում գլխներին, ինչպես էին նրանք համբուրում նրա ծունկները, ստանում նրանից օրհնած բաժակ և նշխար:

Ժողովուրդը լավ գիտեր, որ ինքը պարտավոր է տալ Էջմիածնին միշտ, քանի որ Էջմիածինը շարունակ ահագին ծախսեր է անում հենց իր ժողովրդի համար: Ավանդական սովորությամբ Էջմիածինն էր, որ փրկանքներ էր տալիս պարսիկ բռնավորներին և ազատում էր նրանց ձեռքից Թուրքիայից բերած հայ գերիներին[3]: Բացի դրանից, մենք արդեն գիտենք, որ Էջմիածինը մի ոսկե հատակ էր պարսից շահերի և մանավանդ Երևանի սարդարների համար, որոնք շարունակ մեծագումար պահանջներ էին անում նրանցից, այնպես որ վանքը մշտապես ճնշված էր մեծ պարտքերի տակ: Վագների ճանապարհորդության հայերեն թարգմանության մեջ կարդում ենք. «Երևանի վերջին պարսիկ կուսակալը թեպետ չափազանց արծաթասեր էր, սակայն շատ չափավորությամբ ալ վարվելու կը ջանար: Անիկա տարին մեյ մը կաթողիկոսարանին այցելություն կըներ: Էջմիածնո եկեղեցականաց համար աս ժամանակը զարհուրանաց և տրտմության ժամանակ էր, բայց ստիպված էին «դեշ խաղին լուրջ երես ընել» և նույն այցելությունը իրենց մեծ պատիվ եղածի պես ցուցընել: Երբ որ կու-

[1] «Закавк. Край», 1, 189

[2] Ibid., с. 195.

[3] Մ. Թաղիադեան, Ճանապարհորդութիւն ի Հայս, Կալկաթա, 1847, եր. 29:

սակալը խումբ-խումբ բազմությամբ Երևանեն ճամփա կելլեր, որ էջմիածին երթա, բերդին ուրախության թնդանոթներ կը նետվեին ու ձիավորներն արշավելով կուգային, որ ավետիս տան, թե բերած լուրերնին գույժ էր։ Անմիջապես բոլոր կղերականք իրենց հանդիսական զգեստները հագած՝ կուսակալը դիմավորելու կերթային, ճամփաներուն վրա ամենեն աղւոր օթոցները կփռեին, որ պարսիկ կուսակալը վրայեն քալե, ու զանգակները մեկանց հնչելով՝ զանիկա կը բարևեին։ Կաթողիկոսը վար կիջներ ու մենաստանին դռան մեջ հյուրը կընդուներ, և բոլոր բազմությամբ ամենեն լավ սենյակները կտաներ, ուր պատրաստ կըլլար համադամ խորտիկներով զարդարված սեղան մը։ Հասարակորեն պարսիկ կուսակալը իր հացկատակներուն գնդին հետ օրերով վանքը կը կենար, առատությամբ կուտեր, կը խմեր, իրեն ու իրեններուն թանկագին ընծաներ կառներ և ան ատեն կելլեր կերթար, երբ որ մառանն ու սնդուկները կպարպվեին։ Պարսիկ ազդուկներուն մեկուն քաշվելեն ետքը՝ վանքըեն կչքանային, որ կրած վնասներուն տեղը լեցնեն, որուն հօժարակամ գործակից կըլլային ուխտավորներն ու աղքատ գյուղացիները»[1]։ Սակայն Մայր Աթոռի կրած տառապանքները միայն տնտեսական հանգամանք չունեին։ Պակաս կրակրծեցուցիչ չէին և բարոյական տառապանքները։ Շքեղ եկեղեցական արարողությունները պարսիկ խաների համար թատրոնական ներկայացումների նման բաներ էին, «թամաշա», և նրանք հարկադրում էին միաբաններին, կաթողիկոսի հետ, այդպիսի հանդեսներ կատարել, երբ իրենք են կամենում և ապա իրենք նստում էին եկեղեցում ու թամաշ անում...

Դժգոհությունը ծայր էր տալիս հենց այստեղից, Հայոց ամենաբարձր և ամենահեղինակավոր կրոնական հաստատությունից։

2. **Թուրքաց Հայաստան**։ Հայաստանի այն խոշոր մասը, որ Օսմանյան կայսրության բաժինն էր կազմում XIX դարի սկզբում, ինչպես և առաջ, լավ չէ լուսավորված պատմական վավերագրերի մանրամասն նկարագրություններով։ Աղբյուրներ շատ չունենք հայոց գրական հիշատակարանների մեջ, իսկ օտարազգի ճանապարհորդները տալիս են շատ թռուցիկ և մասնակի տեղեկություններ։ Արդ՝ ամենից առաջ, ինչ ուսուցանում են մեզ եղած տեղեկությունները, այն է, որ Թուրքաց Հայաստանում իրականություն ստեղծողները կենտրոնախույս ուժերն էին, բեկերն ու փաշաները։ Ասիայի այս կողմերին վաղուց ի վեր հատուկ կերպարանքը՝ բռնությունն էր, հարստահարությունը, գայլի իրավունքը։ Սա էր մշտական իրականությունը։ Եվ որովհետև տիրապետող էին Վասպուրականի, Բաղեշի, Տարոնի, Մանազկերտի, Բուլանըխի, Ալաշկերտի, Դիարբեքիրի, Խիզանի կողմերում, ուստի ամեն տեղ կյանքն այն է միայն արտադրում, ինչ կարող էր արտադրել քուրդ բեկերի գիշատիչ աշխարհայացքը, այն է՝ պատերազմներ ցեղերի մեջ, անգամ ազգականների մեջ, իրարից խլելու, իրար ոչնչացնելու համար։ Շատ անգամ այս ազգամիջյան պատերազմները ծագում են մի բոլորովին չնչին պատճառից. օրինակ, մենք տեսնում ենք պատերազմ երկու քրդական ցեղերի մեջ այն պատճառով, որ մի ցեղի մարդիկ սպանել են մյուս ցեղի գլխավորի խոհարարին (աշճիին)։ Հաճախ այդ պատերազմների մեջ խառնվում են տեղական թուրք փաշաներն և այն ժամանակ խռովությունները ու խաղաղ աշխատավոր ժողովրդի տակնուվրայությունները ստանում էին ավելի ահռելի և երկարատև կերպարանք։ Մենք կբերենք այստեղ մի քանի հիշատակություններ,

[1] Մ. Վագներ, Ճանապարհորդութիւն ի Հայաստան, Վիեննա, 1851, եր. 48—49։

որոնք չէին վրիպել ականատես ժամանակագիրների ուշադրությունից և ամենից լավ են բնորոշում, թե ինչ մշտական երերումների մեջ էր ծփում ժողովրդական կյանքը։

Ահա Շիրակ գավառը, ուր նշանավոր քուրդ տիրողների տոհմը կոչվում էր Խաթուն օղլի, որ նստում էր Անիի մոտ գտնվող Մաղասաբերդ անունով ամրոցի մեջ։ «Յետ մեռանելոյ Յիւսէին Ալի խանին (Երևանի) և յաջորդելոյ որդւոյ նորին Մահմադ խանի և Ղարսայ Լոման փաշայի ի սակաւ ամս եղև խաղաղութիւն ի մէջ երկուցն. և Ալի բէկն, որ էր նահանգակալ Շիրակայ, վարէր խաղաղութեամբ, իսկ յետ սակաւ ամաց անկաւ խռովութիւն ի մէջ երկուց եղբարց՝ յեղեալ Ալի բէկաց և Խաթուն օղլի երից եղբարց. Մեհեմադ, Ջաֆար և Հէսարբէկից. յետ բազում նեղելոյ իւրեանց, սպանեալ Ալի բէկն ի Մահմադ բէկէն. վասն որոյ և երկրացիք հանդերձ երկրի բդեշխ Լոման փաշային կամեցան արտաքսել զՄեհեմադ և զՋաֆար բէկն ի երկրէն, իսկ Ղարաբէկն բնակէր ի Մաղասբերդ։ Եւ իշխէր բոլոր Շիրակայ և երկու եղբարքն, որք Ղարս զօրութեամբ նորին կամէին ընդդիմանալ բդեշխին և երկրացւոց, վասնորոյ հրամայեցաւ ի փաշայէն և ուղևեցին ի վերին ամրոցէ քաղաքային թնդանօթս ի վերա տանց նոցա. յետ որոյ անճարացեալ թողեալ զբնակութիւն իւրեանց փախեան յԱրդահան առ Զաքիթ փաշայն և նա փաշայացուցեալ զՄահմեդ բէկն եբեր ի Ղարս. իսկ Լոման փաշայն հրաժարեալ գնաց ի Կարին և անդ մեռաւ։ Եւ յիշեալ Մահմադ փաշայն տիրեաց վեցամ ի միջոցս յայնց ամաց էր խռովութիւն ի մէջ Մահմադ խանին Երևանայ և Ղարաբէկին Մաղսաբերդաց. որք պաղատագոդի հօս տանեին զգլուխս ժողովրդոց իւրեանց»[1]։ Ահա և մի երկու դեպք Մուշի իրականությունից, որ տալիս է ս. Կարապետի վանքի տարեգրությունը. «Աղբեշի առաջնորդութեան թուականն է ՌՄԽԹ (1800) և այդ միջոցին 300 քիսայ ստակը, որ վանքի վրայ ընկած էր, Աղբեշը կվճարե իր կողմանե։ Այդ ժամանակ իշխող քրդերն էին Մշո դաշտի Համանցի Հաճի Մահմուդի տղայք Հաճի Սուլեյման, Շաւեշ, Ֆարզգ, Ըմըր, Տայի Մահմադ աղեն։ Այդ ժամանակ, որ դեռ Մուրադ փաշեն չէր գնացած ի Դիարբեքիր, Պայազիտու Մահմադ փաշեն զօրք ժողվեց Մշոյ երկիր գալու Մուրատ փաշան ալ իր գլխավոր վերոհիշյալ էլի (ցեղի) մարդիկ ժողվեց, գնաց պՆոր ընդառաջ, Պաղանու խաչ Ռըստամկեաուկ գյուղ կհանդիպին մեկմեկու։ Եւ կռուի միջոցին կը սպաննուի Հաճի Մահմադի մեծ որդի Սուլեյման, ու Մահմադ փաշեն ետ կը փախչի կերթի։ Բայց իրենց նոր գալու ժամանակ, երբ Մուրատ փաշայի խումբ կերթան, անոնցմե շատերը կելնեն գեղի տներեն մեկի տանիքի վրա՝ նայելու, և տուն կքանդվի, որով և երեքնոց յաղթուիլը կը գուշակեն։ Անկեց ետի Մուրատ փաշեն դառնալով ի Մուշ, պատկանցիք որոնց գլխավոր էլերն էին այն կողմեր Շըղվկանցոց տուն, Ռըշկանցոց տուն, որոնց 1700 տան չափ կային, կը լսե, որ իր աշճին սպանել էին, որ հայ էր, ոխ կպահե, և յարմար ժամանակի սպասելով, օր մի իր էլի աղքատ կժողվե և ձայն կհանե, թե Անդրանու (պարսից) վրա կռիվ կերթա, որպեսզի պատկանցիք անհոգ մնան։ Ուստի այդպիսի հնարքով գիշերով կերթայ խաս գեղեն կանցնի և Մշոյ վերեն Խաչանբզու սարի ճանապարհով՝ մեջ գիշերին հանկարծակի պատկանցոց վրայ կը յարձակի և 32 մարդու չափ կը սպանե, գլուխները կտրելով ի վրեժնդրութիւն իւր աշճի հայուն. օր ըսեր է ինքն թե՝ «Ասոնք իմ Հայու համար են, որ ասոնք ալ անոր գլուխ այսպես կտրած են»։ Թողում աւել մյուս սպանմունքներ և վնասներ, որ տուաւ անոնց ու դարձավ Մուշ։ Ասոր կարճության ձայն տարածուելով, Դիարբեքիրու փաշայությունն

[1] «Դիւան հայոց պատմութեան», գիրք 2, Թիֆլիս, 1912, եր. 445—446։

ալ յանձնուեցաւ Օսմանեան տէրութեան սուլթան Սելիմեն, որ նա ևս լսած էր ասոր քաջութիւնը, որ յարմար դատեց Դիարբեքիրու փաշայութեան, վասն զի այն ժամանակ շատ ապստամբ և աւեր էր այն կողմեր, և ասոր տեղ Քէեպեկ դրուեցաւ իւր եղբայր Ուսուֆ փաշեն Մշոյ մեջ։ Այդ ժամանակնիս այնպես սովորութիւն կար, որ Մշոյ փաշաներ միշտ իրենց կողմեն մարդիկ կը յուղարկեին ս. Կարապետի վանքի առաջնորդներու քով և անոնցմե իրենց ուզած ընծաները կը առնեին։ Ուսուֆ փաշեն ալ օր մ՝ իւր մարդիկներեն թաթար մը կուղարկե Աղբեշ եպիսկոպոսի մոտ ակնկալելով ընծաներ առնալու։ Բայց եպիսկոպոս զայն թաթարը ծեծելով կը քշե դուրս. և այն ալ կերթա Ուսուֆ փաշային կպատմէ»[1]: Այս պատմությունը վերջանում է նրանով, որ Ուսուֆ փաշան բանտարկում է վանահայր եպիսկոպոսին և ապա սպանել է տալիս նրան։

Օտարազգի ճանապարհորդների մոտ էլ մենք գտնում ենք նույնանման տեսարաններ։ 1805 թվականին ֆրանսիացի գիտնական Ամեդե Ժոբեր, Նապոլեոն կայսրի հատուկ հանձնարարությամբ, որի էությունը մենք հետո կիմանանք, գնում էր պարսից շահի մոտ, ընտրելով ճանապարհ Կ. Պոլսից Էրզրում—Բայազետ ուղղությունը։ Արդեն Էրզրումից դեպի Արևելք ֆրանսիացի արևելագետի աչքերին ներկայանում էր ավազակների ահից մահվան լռության և անշարժության մատնված մի երկիր։ Հազիվ թիկնապահների պաշտպանության տակ նա կարողացավ հասնել Բայազետի շրջակայքը և գտավ դրությունն այդ կողմերում ավելի ևս վտանգավոր ու հուսահատական։ Արծափ հայաբնակ գյուղում մնացել էին միայն կանայք, նրանք էլ հենց որ տեսան օտար մարդկանց մի խումբ գյուղը մտնելիս, վազեցին բարձրացան կտուրները՝ սուր ճիչեր արձակելով, որպեսզի այդ տեղից ավելի լավ պաշտպանվեն։ Տների դռներն ամրացված էին զանազան բաներից դարսված պատնեշներով (բարիկադ)։ Այսքան սարսափի պատճառն այն էր, որ տեղացի քուրդ բեկերից մեկը, արհամարհելով նույնիսկ Բայազետի քուրդ փաշային, կազմել էր ավազակային հրոսակախումբ և կողոպտում էր անխտիր ամենքին։ Ցերեկը սրանից պրծում չկար ոչ մի տեղ, ուստի և դադարում էր ամեն մի երթևեկություն։ Միայն գիշերները, երբ ավազակապետը իր խոնջանքից հանգիստ էր առնում կեր ու խումի և պարուհի կանանց շրջանում, քարավաններն ու առանձին ճանապարհորդները համարձակություն էին գտնում շարունակելու իրենց ճանապարհը։ Եթե այսպես էր մի ավազակապետ բեկի կերտած իրականությունը մի ամբողջ երկրում, ավելի լավ չէր նրանից և այն իրականությունը, որ երկրի օրինավոր տերն ու կառավարիչը, Բայազետի փաշան էր պահպանում։ Ժոբերը ոչ միայն թույլտվություն չստացավ շարունակելու իր ճանապարհը դեպի Պարսկաստան, այլ նույնիսկ և կոպիտ կերպով ձերբակալվեց ու բանտարկվեց, ուր մնաց ամիսներ[2]։ Ճակատագրի ծաղր չէ՞ր, որ մեծ Նապոլեոնից երկյուղ չուներ այդ ժամանակները միայն Բայազետի չնչին փաշան։

Ժոբերից քիչ հետո, 1807-ին, Պարսկաստան էր ուղևորվում Նապոլեոնի դեսպան գեներալ Գարդանը։ Դեսպանությունը հետևում էր այն հին և մեծ ճանապարհով, որ գնալով Էրզրումից, անցնում է Ալաշկերտի հովտով՝ Պարսկաստան մտնելու համար։ Եվ ահա Ալաշկերտի հովտում եվրոպական դեսպանության անդամներն ականատես են լինում Հայաստանի համար շատ սովորական մի տեսարանի։ Ցոնջալու գյուղը և նրա հարևան մի քանի այլ չեները, ամենքն էլ հայաբնակ, կողոպտված ու քանդված էին քրդերի ձեռքով։ Ճանապարհորդներին ամեն տեղ հանդիպում էին ծխացող ավերակներ։ Հայ կանայք, իրենց երեխաների ձեռքից բռնած, փախչում էին ազատվելու համար։ Եվրոպացի ճանապարհորդներին նրանք պատմեցին, թե քրդերը կոտորեցին իրենց ամուսիններին և որդիներին[1]։

1 «Դիւան հայոց պատմութեան», գիրք 2, եր. 512—513։

2 P. Am. Jaubert, Voyouge en Armenie et eu Perse , Paris, 1821.

Հայ և օտար աղբյուրների ներկայացրած այս քրդական իրականությունը պետք, կարծել, որ բնական հետևանքներն ունենար։— Ժոբերը ազատվելով Բայազետի բանտից, վերադարձավ Էրզրում և այստեղից նոր մի ճանապարհորդություն սկսեց դեպի Պարսկաստան, այս անգամ Վանի վրայով։ Ճանապարհին հայաբնակ վայրերում նա հանդիպում էր ամայության. երկիրը դատարկվածի էր նման։ Գյուղացիները թողնում էին իրենց դաշտերը և գնում էին պանդխտելու օտար երկրներում, որպեսզի իրենց համար ապրուստ հայթայթեն։ Ուրեմն հին չարիքը, անհրաժեշտ հետևանք երկրի վրա բռնացած քաղաքական-տնտեսական տխուր հանգամանքների, դեռ շարունակվում էր, նվազեցնելով ֆիզիկապես և բարոյապես հյուծելով ազգաբնակությանը։ Երկրի այս դատարկումն ավելի ևս հասկանալի դարձնելու համար մենք պետք հիշեցնենք այն իրարանցումներն ու տակնուվրայությունը, որ մենք նկարագրեցինք XVIII դարի պատմության մեջ[2]։ Այդտեղ մենք տեսանք քրդական ներքին աղգամիջյան պատերազմներ, որոնցից ամենամեծ չափերով վնասվողը հայ ժողովուրդն էր, ինչպես այդ անխուսափելի էր դարձնում նրա իրավազուրկ, ստրկական դրությունը։ Մի քանի թվական փաստերի վերհիշումներ մեզ ավելի ևս պարզորեն կներկայացնեն երկրի քաշածները։ Մանազկերտի շրջանում XVIII դարի առաջին կեսում գոյություն ունեին 360-ից ավելի գյուղեր, մեծ մասամբ հայաբնակ. բայց քրդական էմիրների պատերազմները, որոնք տեղի ունեցան 1762 թվին, այնքան վնասեցին երկիրը և ջնջեցին ազգաբնակությունը, որ չեն մնացած գյուղերի թիվը հազիվ էր հասնում հարյուրի։ Դարի վերջում նոր պատերազմներ բռնկվեցին Մանազկերտի և Խնուսի բեյերի մեջ և գյուղերի թիվը հարյուրից իջավ 20-ի[3]։ Ուշագրավ է այս կողմից մանավանդ Բաղեշի քրդական մեծ իշխանությունը, որ մի ժամանակ տարածվում էր մինչև Վան քաղաքի դռները, իր մեջ էր առնում ամբողջ Մուշի երկիրն, իսկ Արևմուտքում Դիարբեքիրի փաշայության սահմանակից էր։ XVIII դարում այս ամբողջ ընդարձակ անկախությունը կեղեքվում էր ներքին անդադրում և կատաղի կռիվներից, որոնց մեծագույն մասը Բաղեշի մեծ իշխանի կամ խանի ընտանիքի մեջ էր պատրաստվում։ Մեր լավատեղյակ աղբյուրը (հ. Ղուկաս. վ. Ինճիճյանը) պատկերացնում է այդ հանգամանքն այսպես. «Յաջորդութիւնն ոչ է օրենոք, որ պարտ է լինել յորդւոց յորդի, այլ բռնութեամբ և անկարգութեամբ, որդին յառնէ ընդդեմ հօրն, եղբայրն ընդդէմ եղբօր և ազգականք ընդդէմ ազգականաց ի յափշտակել զիշխանութիւն յայր սակս չի՛ք ինչ դժուարութիւն, բայց եթէ տալ գիր աղերսանաց առ Թագաւորն և ընծայ ի դուռն փաշային ի Ստանպոլ. որովք ընկալեալ հրովարտակ արքունի, նովին հրովարտակաւ յառնէ իւրայնովք հանդերձ ընդդեմ առաջին խանին. և ի բաց արկեալ՝ ինքն նստի փոխանակ նորա. յետ նորա միւսն, և յետ նորա այլք. և յայսպիսի բռնութեանց անդադար լինին ի քաղաքին և ի հնամօրէն գաւառին կագ, խռովութիւնք, պատերազմունք ի մէջ նոցա և կեղեքումն և

1 J. M. Tancoigne, Lettres sur ba Perse et la Turquie d'Asie, t. I, Paris, 1819 p. 94.

2 Տե՛ս այս գործի նախընթաց հատորը։

3 Հ. Ղ. վ. ԻՆՃԻՃԵԱՆ, Աշխարհագրութիւն, Չորից մասանց Աշխարհի, մասն առաջին, «Ասիա», հատոր Ա («Հայաստան»), Վենետիկ, 1806, եր. 112։

զրկանք մանաւանդ ի վերայ Հայոց ազգիս։ Այս անընդհատ զրկանք որք յաճախեցին յոյժ յայսմ (այսինքն XVIII) դարու՝ եղեն պատճառ ցրուելոյ Հայոց յայլ երկիրս։ Քանզի նոր խանն առ ի վճարել զծախս զոր արար ի ստացուելոյն զիշխանութիւն արկանէ ծանր-ծանր տուրս ի վերա բնակչաց մանաւանդ ի վերայ քաղաքացւոց, չարչարէ և ի բանտ արկանէ մինչև յառնուլ։ Եւ զի բազմակին զօլով խանից, բազում են որդիք նոցա որք անուանին պէկք. բազում և սուէպ լինին այս կռիւք և զրկանք»[1]. Ու ահա այդ քրդական իրականության հետևանքը. «Բնակիչք Բաղիշոյ յառաջ ժամանակս էին տունք իբրև 25000, այլ յանդադար խռովութեանց և ի սաստիկ սովէ ինչ որ եղև իբրև 60—70 ամօք յառաջ, բազմութիւն քաղաքացեաց ցրուեալ աստ և անդ, այժմ մնացին տունք իբրև 5000. յորոց իբր 1500 տունք են յազգէս Հայոց և 200 կամ 300 տունք է յագուպի ասորւոց. և սակաւ ինչ տունք Նեստորականաց, զորս անդէն կոչեն Նեստո, որք յառաջագոյն բազումք էին։ Տունք ի բաց Թողեալք յԱսորւոց և ի Հայոց, եղեն այժմ բնակարանք և տունք քրդաց»։ Բաղեշի հայերը հալածված էին իրենց կառավարողությամբ։ Մի ժամանակ 500 ջուլհականոցներ կային այնտեղ։ Բայց XIX դարի սկզբում դրանցից շատ քչերն էին մնացել[2]։

Մինչդեռ հալածված Բաղեշն այդքան փոքրացել էր, նրա փոխարեն, քրդական իշխանության տեսակետով, բարձրացել էր Մուշը, որ առաջ նրա ստորադրյալն էր։ XVIII դարի սկզբում Մուշի քուրդ տերն այլևս առաջվա պես բեյ չէր, այլ փաշա և Բաղեշի խանն այլևս առաջվա իրավունքը չուներ Մուշի վրա։ Այս ինքնագլխությունը Մուշի քրդությունը ձեռք էր բերել Բաղեշի դեմ մղած համառ և կատաղի կռիվներով։ Հետևանքը՝ դարձյալ հայ ազգաբնակության նվազում։ Մեր աշխարհագիրն ասում է. «Բնակիչք սորա (Մուշ քաղաքի) տունք իբր 8000, ըստ մեծի մասին քուրդք, յառաջագոյն բազմութիւն էին ի սմա Հայոց, այլ այժմ սակաւք մնացին ի 5 Թաղս որոշեալ, յորոց յուրաքանչյուր Թաղք ունին մի-մի քարաշէն եկեղեցի»[3]։ Մենք արդեն տեսանք վերևում, որ Մուշի քուրդ իշխանության համար մի ամբողջ գանձ էր ս. Կարապետի վանքը, որ հայության համար առաջնակարգ մի սրբավայր էր, հավաքում էր ամեն տարի ուխտավորների մեծ բազմություն և, ուրեմն, ուներ մեծ եկամուտներ։ Քուրդ բեյերը և փաշաները ոչ միայն վանքից էին առնում ինչ ուզում էին, այլև տուրքի էին ենթարկել ուխտավորներին։ «Ի ժամանակի ժողովելոյ անդ ուխտաւորաց սրբոյ Կարապետին, իբրև 8 կամ 10 հազարաց,— ասում է Ինճիճյանը,— իւրաքանչիւր արք ուխտաւորի՝ որք են արտաքոյ սահմանաց փաշայութիւն Վանայ, նաև արտաքոյ Թեմի ս. Կարապետին, ունին տալ պէկին Մշոյ հինգ-հինգ ղուլաթայ»[4]։

Հետաքրքրական երևույթ է, որ երկիրն իրեն սպառնացող անմարդացման դեմ մաքառում էր բոլոր այն միջոցներով, ինչ տրամադրում էր նրա թույլ ու անպաշտպան դրությունը։ Այդ միջոցներից մեկն էլ այն էր, որ գյուղերն ընդունում էին շարժուն դրություն, ինչպես այս նկատում ենք մեր նկարագրած ժամանակներում Բասեն գավառի մեջ։ Գործողությունը կատարվում էր հետևյալ եղանակով։ «Բացի նշանակեալ գիւղերիցս են այնևս յոլով գիւղօրէն ի Բասեն, մեծամեծք և մանունք, մերձ միմյանց. յորոց ոմանք քանդին, ոմանք նորոգ շինին, կամ լաւ ևս ասել՝ անդադար փոփոխին ի տեղւոջէ ի տեղի—խոյս

---

1 Հ. Ղ. վ. Ինճիճեան, *Աշխարհագրութիւն Չորից մասաց Աշխարհի, մասն առաջին,* «Ասիա», հատոր Ա («Հայաստան»), եր. 170—171։

2 Անդ, եր. 172։

3 Անդ, եր. 187։

4 Անդ, եր. 93։

տուեալ բնակչաց ի հարստահարութեանց Թրքաց և քրդաց»[1]։ Անմարդացող երկիր էր և Երզնկայի գավառը։ «Ըստ ոմանց ասելոյ,— շարունակում է մեր «Աշխարհագրությունը»,— յառաջագոյն ունէր 250 գիւղօրէք, այլ այժմ ի պատճառ կեղեքելոյ իշխանաց, բազում գիւղորեք նորայքեալ կան և անմարդաբնակ և գյուղորեք ինչ կործանեալք կամ ըստ կիսոյն քայքայածք»[2]։

Բռնությունն՝ երկիր անմարդացնող։ Այս էր ուրեմն, ասում Թուրքաց Հայաստանը XIX դարի սկզբում իր ամեն մի անկյունի մեջ. Եվ մենք շատ սխալված կլինենք, եթե ավերիչ բռնությունը բացատրեինք կամ նույնիսկ գլխավորապես որոնենք ազգամիջյան քրդական պատերազմների մեջ։ Այդ մեծ և համատարած աղետը քայքայում էր ամեն մի իրավական կարգ ու հասկացողություն, օրինականացնելով ուժի իր իրավունքն իբրև մեն միակ հասկանալի հասարակակարգ։ Եվ ահա այստեղից ծագում էին հարյուր ու մի չարիքներ, որոնք խանգարում էին կյանքը և այնպիսի ժամանակներ, երբ քրդական պատերազմներ տեղի չէին ունենում կամ այնպիսի տեղերում, որոնք հեռու էին մնում պատերազմական դաշտերից։ Այդպիսի չարիքներից մեծագույնն ավազակությունն էր, մի արհեստ, որի մեջ դարձյալ քրդերն էին ամենից շատ հռչակված։ Թե ինչպես էր կարող ավազակությունը հենց միայն խցել երկրի զարկերակները, նրա հաղորդակցությունները և այդպիսով սպանել նրա արտադրական ուժը, ցույց է տալիս այն հռչակավոր և վերին աստիճանի կարևոր ճանապարհը, որ կապում էր Հայկական բարձրավանդակը Միջագետքի, ասել է նաև Հնդկական օվկիանոսի հետ։ Այդ այն ճանապարհն է, որ Արևելյան Տիգրիսի կամ Բոհտանսուի լեռնահովիտներով կտրում է Հայկական Տավրոսի բավիղները, Քսենեֆոնի և նրա տասը հազարի նահանջի ճանապարհը, որ Սղերդից բարձրանում է Բաղեշ և այդտեղից դուրս գալով Վանի ծովի ափը, մի ճյուղով կապում է Դատուան նավահանգիստը Բասրայի հետ, իսկ մյուս ճյուղով գնում է դեպի Մուշի բարեբեր դաշտը, կտրելով մի լեռնադաշտ, որի անունն է Ռահվա։ Այս Ռահվան Հայաստանի բնության ամենախոժոռ և դժնդակ Թակարդներից մեկն է, որոնք այնքան դժվարացնում են հաղորդակցությունն այդ երկրում։ Արդեն տարվա լավ եղանակներին էլ Ռահվան մի կոշտ և անկենդան անկյունի տպավորություն է անում։ Լեռնադաշտը ծածկված է Նեմրութ մեծ հրաբխի ժայթքած լավայով և ունի 6 հազարից ավելի ոտնաչափ բարձրություն[3]։ Իսկ երբ գալիս է Հայաստանի դաժան և ձյունառատ ձմեռը, բուքերն ու ձյունային փոթորիկները դարձնում են Ռահվան սարսափների երկիր, որ ապրելու հնարավորություն չէ գտնում նույնիսկ տեղացին, Նեմրութի և Գրգուռ սարի բնակիչը։ Բայց որովհետև հենց այս սարսափների երկրով է, որ իրենց բեռներն ու բարիքները դեպի հյուսիս են ուղարկում Բաղդադը, Մոսուլը և տաք երկրների այլևայլ կողմերը, ուստի մարդը, հնության հեռավոր ժամանակներից, ջանք է գործադրել արհեստական միջոցներով կորզելու ապրանքաբեր մեծ քարավանները բուքերի ձեռքից։ Ինչպես Հայաստանի ուրիշ շատ կողմերում՝ այստեղ էլ հաղորդակցության ճանապարհի վրա կառուցված էին հաստահեղույս և կամարակապ շինություններ՝ ճանապարհորդներին պատսպարելու համար։ Օսմանյան տիրապետության ժամանակ գտնվեցին այս կողմերը կառավարող փաշաների մեջ մարդիկ, որոնք լավ ըմբռնելով, թե Ռահվայով անցնող ճանապարհն երկրի կենտրոնական աղբյուրն է, պահպանեցին հին կառուցվածքները, իսկ նրանցից մեկը, Խոսրով փաշան, նույ-

---

1 Անդ, եր. 98։

2 Անդ։

3 Х. Б. Линч, «Армения», т. II, 1916, с. 106.

նիսկ մեծագործության չափերին հասավ իր մեծ և նշանավոր շինություններով (1572)։ Ինճիճյանն այսպես է նկարագրում նրա կատարած գործը. «Ձիր կուս իջևանս շինեաց ի մեջ Ռահվայի. և բաղանի, և մզկիթ և 10 կրպակս ածեալ ջուր իբրև ի 12000 կանգուն հեռավորութենէ. եդեալ անդ նաև բնակիչս տունս իբրև 30 ի դիւրութիւն մեծ ճանապարհորդաց»[1]։ Այս շինություններից ավելի մեծ էր այն իջևանը, որ շինված էր Դատուանի ճանապարհին, հայտնի չէ, թե որ ժամանակ և ում ձեռքով։ Ով ահա այս բոլոր մեծագործությունները, որոնք երկիրը բարեշինելու համար էին գլուխ եկել ահագին ծախսերով, ընկած էին անօգուտ, որը քայքայված, որը քուրդ ավազակների որջ դարձած։ Հատկանշական էր մանավանդ այն գործածությունը, որ գտել էր Դատուանի ճանապարհին շինած մեծ իջևանը։ «Այս իջևանը,— ասում է մեր «Աշխարհագրութիւնը»,— մեծ է իբրև բերդ ու քաղաք ինչ, շինեալ առհասարակ ի կոփածոյ քարանց, որ կարե բովանդակել բազմութիւն իբրև 10000-անոց. քառակուսի բերդանման պարսպովք պատեալ. ի ներքուստ կողմանէ ի պարիսպն անդ են բազմութիւնք սենեկաց, կրպակաց, և աստ և անդ բազմութիւն փռանց և մեծամեծ քարեղէն սանդք ցորնոյ և այլն. և աղբիւր կամարակապ։ Այս ամենայն են առհասարակ. քարաշէնք կոփածոյք։ Ունի դրունս երկուս. զմին ի հիւսիսակողմն ի ճանապարհն Վանայ, իսկ զմիւսն ի հարաւակողմն ի ճանապարհն Բաղիշոյ։ Յառաջագոյն լինէր ի սմա տօնավաճառ կամ բանայիր մեծ, յորում հաւաքէին ամենայն վաճառականք։ Իսկ այժմ կողմն ին, սորա է բնակարան աւազակաց. կողմն ինչ գաղար և որջք գայլոց. իսկ ճանապարհորդք առ եկիւղի սոցա բազմութեամբ սպառազինեալք այնպես մտանեն և բնակին յայլ կողմն ինչ»[2]։

Պարզելով, այսպիսով, քրդության դերը հայ ժողովրդի վերաբերմամբ մենք, պատկերը միանգամայն լիակատար դարձնելու համար, պիտի պարզենք նաև, թե ինչու հայ ժողովուրդն այնքան անօգնական էր քրդերի առջև և ինչո՞ւ այնքան լայն հնարավորություններ էր տալիս այդ վայրենաբարո խաշնարած թափառականներին իրեն կեղեքելու և խոշտանգելու։

Այս դաժան հանգամանքը, նկատենք մի անգամ ևս, հետևանք էր բազմադարյան պատմական պայմանների, որոնք ստեղծել էին տնտեսական ստրկության անելանելի դրությունը հայ ժողովրդի համար, տալով նրան ճորտային կացությունն իբրև հավիտենական անփոփոխ վիճակ։ Մեր այս պատմության ընթացքում մանրամասնորեն հետևեցինք, թե ինչպես դեռ X դարի վերջերից քուրդ ժողովուրդը, դուրս գալով իր լեռնաստաններից, սկսում է հետզհետե անդիմադրելի եռանդով գրավել Հարավային Հայաստանը, բազմաթիվ ցեղային անկախություններ և կիսանկախություններ հիմնելով Վանա լճի և Արևելյան Եփրատի ավազաններում։ Քրդական այդ շարժումներին սաստիկ նպաստում էին Միջին Ասիայի աշխարհավեր արշավանքներն՝ առաջ սելջուկների, ապա մոնղոլների։ Անապատների սարսափելի ձիավորների ոտնատակ ընկած Հայաստանը կորցնում է ոչ միայն իր քաղաքական անկախությունը, այլև իր հին ազգային նեցուկը, իր ռազմիկ տարրը, որ նախարարությունն էր։ Թուրք-մոնղոլական սրի առջև հայ ժողովուրդն անպաշտպան հոտի դիրքի մեջ էր։ Եվ այս օրհասական ժամանակներում նրա համար չէր կարող ցանկալի չհամարվել քրդական լուծը, քանի որ բարբարոս և անխնա միջինասիացիներից ավելի նա ճանաչում էր քուրդ ժողովուրդը, որի հետ ապրել էր դա-

[1] Ինճիճեան, եր. 178։

[2] Անդ, եր. 177։

րերով, ոչ միայն իբրև հարևան, այլ շատ հաճախ և երկար՝ իբրև նրա վրա տիրող։ Այժմ, հայության քաղաքական սոսկալի ուժաթափության միջոցին, քրդերն իբրև քաջարի և կովարար ժողովուրդ, իրենց համար արտոնված տիրապետությունների դրություն էին ստեղծում սելջուկյան և մոնղոլական համատարած կայսրությունների մեջ և հայերի վրա ուժգնապես ազդում էին ոչ միայն իրենց ուժով, այլև կուլտուրապես։ Հայերի մեջ շատ կան ավանդական զրույցներ, թե քրդական ամբողջ ցեղեր կան, որոնք հայկական ծագում ունեն։ Այս զրույցները չի կարելի անվանել անհիմն։ Քրդական ցեղեր կան, որոնք նույնպես հիշում են իրենց հայկական ծագումը։ Մենք պատմական փաստեր էլ ունենք աներկբա, թե ինչպես հայերը ձուլվում էին քրդերի հետ։ Շատ են մանավանդ կուլտուրական այն հիշատակարանները, որոնք երկու ազգերի մոտիկ կենակցության և խիստ ազդեցության դարավոր հայտարարներն են։ Առանց մերձավոր շփման, առանց սերտ կենակցության, այսպիսի երևույթներ չէին կարող կազմակերպվել դարերի ընթացքում։ Թափանցելով այն դժբախտ ժամանակաշրջանների խորքը, երբ Արևմտյան Ասիան մոնղոլների, Լենկ Թեմուրի, Թուրքմեն ցեղերի երկաթե ձեռքի տակ էր հեծում, մենք մեր պատմական հիշատակարանների թույլ ու աղոտ ակնարկներն ընտրելով առաջնորդ ուղեցույց մեզ համար, կկռահենք այդ արյունոտ մթության մեջ, որ հայ ժողովուրդը, թեև արդեն միանգամայն կորցրած իր նախարարությունը, ապրում էր հին ազգային կարգերի մեջ, այսինքն՝ դարձյալ անմիջապես իր հարազատ կամ դրսի օտար թագավորներին չէր ենթարկված, այլ իր տեղական ավատական իշխանավորին, որ այժմ այլևս հայ նախարարը չէր, այլ նրան իր բարքերով և զբաղմունքներով, իր դասակարգային դաստիարակությամբ շատ նման քուրդ հողատերը՝ էմիր, աղա, շեյխ և այլ անուններով։ Մենք նույնիսկ հակվում ենք կարծելու, որ մի Լենկ Թեմուրի կամ նրա հաջորդների բռնություններից հայ անզեն գյուղական զանգվածը պաշտպանություն գտնում էր քուրդ տիրողի հովանու տակ, որքան և աննշան լիներ այդպիսի մի տիրողն աշխարհասասան բռնակալների հանդեպ։ Թվում է, թե քուրդ տիրապետությունն այդ զարհուրելի ժամանակներում միանգամայն փոխարինում էր ազգային իշխանությանը։ Այսպես տրամադրում են մտածել հայ գրավոր հիշատակարանների արտահայտության մի քանի ձևերը։ Մենք, օրինակ, կարդում ենք այսպիսի դարձվածքներ ձեռագրական հիշատակարանների մեջ. «ի դառն և ի նեղ ժամանակիս ի ղանութիւն... Ջիհանշին և ի մեր քուրդ ամիրի՝ ամիր Դայուտին». «ի դառն և ի նեղ ժամանակից՝ ի ղանութիւն ամիրզայ Ջիհանշին և ի մեր քուրդ ամիրիս՝ ամիրզայ ղասըմիս, զոր Տէր աստուած անյաղթելի պահեսցէ զսա և քաղցրացուսցէ զսիրտ սորա ընդդէմ քրիստոնէիցս ամէն»։ «ի թագաւորութեան այլասեռից Ջհանշի և ի քաղաքի մերոյ պարոնութեանս ամիր Սլեյմանայ». «ի ղանութիւն Ջհանշայ Միրզին և մեր ամիրութանս Մէլէք Շարաֆին»[1]։ Չափազանց նշանակալից է «մեր» բառով բնորոշումը քուրդ էմիրներին, մինչդեռ երկրի բարձրագույն տերերը, լենկթեմուրյան հաջորդները, ուղղակի «այլասեռ» անունով են որակվում։ Նշանակում է, ժողովրդին քուրդ էմիրն էր ավելի մոտ կանգնած, որ և կառավարում էր նրան, դատում էր նրան, հարկեր ու տուրքեր էր դնում նրա վրա, պատժում էր, տեղն ընկած ժամանակն էլ՝ հնար եղածին չափ պաշտպանում։ Թեև օտար էր այդ էմիրն իր ծագումով էլ, իր հավատով էլ, այնուամենայնիվ, նա հենց միայն իր գրաված դիրքով, մի ինչ-որ մոտիկ, հարազատ բան էր ներկայացնում, իր ազգային կյանքի հին նեցուկը մարմնացրած նախարարության

[1] Ղևոնդ վ. Փիրղալեմեան, Նօտարք հայոց, Կ. Պոլիս, եր. 128, 145, 181, 214։

նման։ Եվ այս անհատ վերաբերմունքին չէին կարող հակասել այն հողային հարաբերությունները, որոնք գոյություն ունեին հայ գյուղացու և քուրդ կալվածատիրոջ միջև։ Այս հարաբերությունները, որքան մենք ի վիճակի ենք ուսումնասիրելու, մեզ հասած ոչ լրիվ տեղեկությունների առաջնորդությամբ, ճորտատիրական էին, իսկ մենք գիտենք, որ հայ նախարարությունների և հայ գյուղացիության միջև էլ ճիշտ այս տեսակից էին հողային հարաբերությունները։ Մենք կարծում ենք, որ քրդական ավատականությունը, եթե ոչ իր բոլոր մասերում, գոնե գլխավոր նշաններով հայ ավատականության շարունակությունն էր, այնպես որ հայ գյուղացի ազգաբնակության վրա մի բոլորովին չտեսնված կամ նույնիսկ բացառիկ ծանր լուծ չպիտի դրած լինի քուրդ կամ քրդացած հայ կալվածատիրությունը։ Այսպես էր մինչև XVI դարի կեսը, երբ օսմանյան տիրապետությունը վերջնականապես հաստատվում է Հայաստանի հարավային մասերում, իր տակ առնելով և Քրդստանը։ Բայց օսմանյան սուլթանները ոչ Ասիայում և ոչ Եվրոպայում հողատիրության նոր կարգեր չստեղծեցին, այլ միայն վերահաստատեցին հին կարգը։ Հողերը, որոնք բաժանեցին իրենց զորավարներին, զորապետներին, տեղերում տիրող կալվածատերերին, որոնք, ըստ ավատական կարգի, պարտավոր էին պատերազմի ժամանակ որոշված քանակությամբ զինվորներ դաշտ հանել իրենց ղեկավարությամբ։ Բայց նրանք, իհարկե, չէին կարող իրենց մշակել պետությունից ստացած հողային մեծ տարածությունները, ուստի իրենց կողմից կտրատում էին հողաբաժինները և տալիս էին մշակելու գյուղացի ազգաբնակության այն մասին, որ իրավունք չուներ զինվորական ծառայության մեջ լինելու, այսինքն՝ ոչ իսլամներին։ Այսպիսով վերահաստատվում էր նախկին ավատական դրությունը, վերահաստատելով և իր հետ անբաժան կապված հիմնարկությունը՝ ճորտությունը։

Հայաստանի մեծագույն մասում զինվորական տարրը կազմում էին քրդերը։ Նրանք էլ, երբեմն, վերստին ստացան հողային հարստություններն իբրև սեփականություն, բաժանեցին այդ տարածությունները մանր մասերի կամ ավանների և դարձան թուրքաց սուլթանների կամ անվանական կամ կիսանկախ վասալները։ Թե որքան բազմաթիվ էր այդ տիրողների դասակարգը, ցույց է տալիս հենց այն փոքրիկ տեղեկությունը, թե միայն Դիարբեքիրի, Վանի և Շեհրիզորի գավառներում գոյություն ունեին 400 քուրդ ցեղապետներ, որոնք կրում էին էմիր տիտղոսը[1]։ Այնպես որ, ընդհանուր առմամբ, Թուրքաց Հայաստանն եթե ոչ ամբողջովին, գոնե իր հարավային մասերում գերազանցապես ներկայացնում էր քրդական ավատականության ամրոցներով խիտ ծածկված մի երկիր։ Եվ սակայն, այս չափազանց խոշոր երևույթը մինչև այսօր էլ դեռ բավարար կերպով չէ ուսումնասիրված հայոց գրականության մեջ։ Հայ գյուղացու ճորտային դրությունը նկարագրված չէ իր բոլոր մանրամասնություններով։ Ավելին կարելի է ասել՝ մինչև XIX դարի յոթանասնական թվականները հայ ժողովրդի առջև ոչ ոք չէր ասել, որ Թուրքահայ գյուղացին քրդի ճորտն է, և այս անշուշտ այն պատճառով, որ դրսի աշխարհին հայտնի էլ չէ եղել, թե գոյություն ունի մի այդպիսի դրություն, այնքան կորած ու մոռացված էր Թուրքահայ գավառը։

Հետաքրքրական է, որ առաջին անգամ եվրոպական գրականության մեջ է, որ Թուրքահայ գյուղացին հանդես է գալիս իր իսկական անունով՝ ճորտ։ Օսմանյան բանակի մեջ Օսման Սեյֆի բեյ անունով ծառայած մի եվրոպացի, որի իսկական անունն էր Ֆրեդերիկ Միլինգեն, 1868 թվին Բրյուսելում հրատարակեց մի ուշագրավ աշխատություն Թուրքիայի վրա և այդտեղ անվերապահորեն ասում էր, թե հայերը քրդերի ճորտերն են[1]։ Այնուհետև հայոց մամուլի, գրականության և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի պաշտոնական գրությունների մեջ հաճախում են տեղեկություններ և նկարագրություններ, որոնք միևնույն դրությունն են հաստատում։ Այս նկարագրություններից մի քանիսը մենք վերին աստիճանի կարևոր ենք համարում ոչ միայն այն պատճառով, որ նրանց մեջ գյուղական ստրկությունը փոքրիշատե լրացված պատկերով է դուրս գալիս, այլ նկատի ունենալով, մանավանդ, այն վերաբերմունքը, որ ունեին դեպի տմարդի ճորտությունը հայ հասարակության ղեկավարող շրջանները։ Ուստի և բերում ենք այստեղ այդ կարևոր վավերագրերը։

Ժամանակագրական կարգով առաջնությունը պատկանում է Գրիգորիս վարդապետ Աղվանյանին, որ 1872 թվականին պատրիարքական փոխանորդի պաշտոն էր վարում Մուշի մեջ և իր թեմին արած իր այցելության միջոցին գիտած դրությունը հաղորդում էր Ազգային Պատրիարքարանին և «Մասիս» լրագրին հետևյալ նամակով.

«Ներկայս հայրենօգուտ թերթերուդ միջոցավ հրատարակել կը խնդրեմ, որոյ մի օրինակն ալ ազգախնամ վարչութեան ղրկեցինք...

Մերազնեա դաս մը ժողովուրդ, որ ի Բռնաշեն, ի Խութ, ի Սասուն և ի Ճապաղ գավառներ, քյուրդերու հետ խառն կընակին. Նոցա գլխավորներուն, որ խաֆիր կըսվին, ճորտ լինելով՝ ամենադաժան կենաց վիճակուած են։ Դասերը նոցա բնածին եղած՝ յուրաքանչյուրն իբրև հպատակ և սեփականություն համարված, տարեկան տուրք կուտան խաֆիրներուն և երեք կարգի բաժնուած են։ Առաջին կարգը, որ Համբա կըսվին, տուն գլուխ 7 բեռ ցորեն կուտա, 1 դուճուր, 5 ոչխար, 2 լիտր յուղ, 2 լիտր ծխախոտ, 1 լիտր չորթան, 4 լիտր ալ, 1 շալվար, 1 զույգ զանկապան, 1 զույգ գուլպա, 1 զույգ խոնձան, 1 զույգ գոգնոցի ժապավեն, 12 ունկի վառոդ, 2 ունկի կապար, 2 ունկի կոնափ, 5 ունկի ձեթ, 5 հատ պուտուկ, 2 շերեփ, 30 գդալ, 4 թի, 2 կողով, 6 ցախավել, 1 դանակ, 4 հավ, 2 աքաղաղ, 10 սարակ, 6 արօր, 1242 դրուշ ստակ և տարին 2 անգամ ունեցած ոչխարաց կաթ, գարնան՝ պանիր շինելու և աշնան՝ մածուն բռնելու։ Երկրորդ կարգը, որ կիսահամբա կըսուի, վերոհիշյալ դրոց 2/3 մասը, իսկ երրորդ կարգը, որ Պճեղ կըսուի, 1/3 մասը կը վճարե։

Այն մարդակերպ վայրենի գազան խաֆիրներ (ճորտատեր)՝ ինքնագլուխ և ապստամբ վիճակի մեջ լինելով, իրենց ճորտ հայերը՝ կանամբ և որդվովք, շարժական և անշարժ կալվածներով իրարու ծախելու սովորություն ունին, և երբ իրարու դեմ կատաղին և թշնամանան, յուրաքանչյուրն իրենց հպատակ հայերը բռնութեամբ առաջնին ձգելով, իրարու սահման կասպատակեն, մանավանդ, թե հայոց բնական գյուղերու վրա հարձակելով կկողոպտեն, կքանդեն, կավերեն, կվիրավորեն, կսպանեն և կվերադառնան տեղերնին։ Հաղթահարյալ թշնամին՝ մյուսեն վրեժը լուծելու համար զորաժողով կլինի, կասպատակե թշնամվույն հպատակ հայերու գեղերը, արջային զայրույթով կկողոպտե, կքանդե, կավրե, կվիրավորե, կսպանե և կդառնայ։ Ահա լսածիս ապացույց։ Երբ այս աղետները ստուգելու համար Բռնաշենու կողման այցելություն կընեի, տեղվույն հայ ռեյիաներ և երեք խաֆիր աղաներ ի ս. Աղբերիկ վանք քովս գալով խաֆիրներու հասուցած չարիքները պատմեցին ինձ։ Եվ ուրիշ շատ մը մարդիկներեն ալ զայս ստուգելով, 1870 նոյեմբերի 10-ի նամակով ս. Հայրիկ պատրիարքին և 1871 մարտի 3-ի նամակով ալ

[1] M. Bebin, Du Regime des fiefs militaires Dans l'Islamisme , Paris 1870, p. 99.

[1] Frederick Millingen (Osman-Seify-Bey), La Turquie sous le Regne d'Abdul-Aziz Bruxelles, 1868, p. 168.

գավառական յանձնաժողովին հաղորդեցի, զոր նույն թվով առ ս. Հայրիկ պատրիարքն ուղղյալ նամակի ծոցով ուղարկած եմ, որոնց երկուքին ևս պատասխան չառնելուս համար կստիպվիմ այսօր ի հրապարակ հանել։

Սասունք գավառի Մահպուպանք գյուղացի խաֆիրներ Խոկան, Ճահվար, Շառո, Հայտար, Մահմադ, Ճիճո, Շավեղ և Մահմադ՝ իրենց մարդիկներով Պլար աղայի սահմանը՝ Գյուղաշեն, Շուշամերկ և Տափքը հայոց գյուղերու և Աթոնագինե վանքի վրա հարձակելով՝ 400 ոչխար, 70 պուճուր տուներու կահկարասիքը և կանանց հագուստները կողոպտեցին, 1 մարդ սպանեցին և 4 մարդ ալ վիրավորեցին։ Պլարի տղայք՝ Միրզոն, Խոզին, Սատոն, Հաշիմ և Մահմադ՝ իրենց մարդերով վերոգրյալ խաֆիրներու սահմանը ասպատակելով հայոց գեղերը Հարթ, Եղիաթ և Սպղանք, 1000-ի չափ ոչխար, 150 պուճուր, տուներ ու կահ-կարասիքը և կանանց հագուստներ կողոպտեցին, 2 մարդ սպանեցին և 5 ալ վիրավորեցին։ Վերոգրյալ կողոպտված հայերու ուրիշ խաֆիրներ՝ Խշման, Խանում, Ալտոն և Խափոն թշնամյաց վրեժը լուծելու համար իրենց մարդերով կը յարձակին ի Մազինք, Արկիրք և Մթրրպանի հայոց գյուղերու վրա, 350 ոչխար, 30 պահար, տուները և կանանց հագուստները կկողոպտեն, 4 մարդ կսպաննեն և 6 ալ կվիրավորեն»։

«...Կարնոյ բարձ. Մուսթաֆա փաշան անցեալ տարի ի Մուշ գալու ատենը, խաֆիրության դժնդակ լուծը բառնալու խնդիր մատուցինք նորին մեծության։ Հաճություն ցուցուց և բսավ «իսկ ատոր համար եկած եմ»։ Ուստի ի Մուշ գալու հրաման ղրկեց խաֆիրներուն, հանձնառու չեղան, այլ իրենց երկրորդականներն մինը՝ հանդերձ երկու սպասավորով ղրկեցին, զորս նորին բարձրության խրատեց և արձակեց։ Նաև խոստացավ զորանոց մի շինել տալ այն կողմը։ Բայց յուր փոխվելեն զկնի ինչ տնօրենություն եղավ, չգիտեմք։

Գերի տեր խաֆերներ՝ երբ մանչ ծնանելու լինին, հանձնյուր ճորտի տունեն ոչխարով և դառամբ աչք լուսի պիտի երթան, տղայի զգեստցու պիտի տանին, մինչ հայոց մերկանդամ կանայք ձեռքով իրենց կուրծքը ծածկելու աղքատ վիճակի մեջ կգտնվին։ Երբ պատանեկության հասնի, զենք պիտի պատրաստեն անոր։ Կին ածելու ատենը՝ գալան (պաշլըխ) պիտի տան հարսնացուի ծնողաց և հարսանյաց պիտույքը պիտի պատրաստեն։ Եթե մեռանիլ պատահի՝ ոչխար, յուղ, պանիր և այլն տանելով կը մխիթարեն զխաֆիրները։ Բայց ընդհանուր ազգության նախատինք այն կետն է, որ նախապետաղն հայոց պարկեշտության առագաստի հարսներ և որբության քողի ներքև սնած աղջիկներ՝ այսօր հոլանի եղած խաֆիրներու տան մեջ իբրև հարճ օրերով ծավարը, կորկոտ շինելու, լաթը լվանալու և կարկատելու ապաստարկությունը կրնեն՝ լռին արտասուքը։ Եվ անոնց կըկըլի արտերը քաղհանելու շաբաթներով կաշխատին մերկ անձամբ և բոկ ոտամբ, արևակեզ և փշահար եղած՝ «զիրենց կանանչ արևը կողբան, զիրենց խավար աստղը կանիծանին»։ Քրիստոս պատարագող քահանայի սրբագործ ձեռքը մատուցված պատարագուցի լումաներեն՝ խաֆիրներու բաժին պիտի հանվի։ Մանավանդ քահանա չգտնված գյուղերը պատարագի երթացող քահանային՝ յուր ընդունած նվերներեն իբրև սուսկ արտոնություն պատարագի բաժին պիտի տա անոնց։

Հայերու ոմանց կիները՝ եթե ամուլ լինին կամ մանչ զավակ չծնանին, խաֆիրները բռնի երկրորդ կին մը առնել կուտան, որպեսզի զավակ յառաջացնելով տարեկան տուրքը տալու յաջորդեն։ Ապօրինավոր ամուսնության կամ երկու կին առնելու սովորությունը թուի թե նախապես այն կողմերեն մուտ գործեր է Տարոնո երկիրը, ուր անցեալ 8—10 տարվան միջոցին ընդհանրանալու կերպարանք մը առած է։

... խաֆիրները էմլաքի գործադրությունը լսելուն պես՝ ակսեցին ավելի

բռնանալ հայոց վրա, նոցա տուները և հողային կալվածները իրարու մեջ ծախել և հայերը այն կողմերեն հալածելու բուռն միջոցներ ձեռք առնուլ, ուստի և շատեր ճարահատյալ կստիպվին իրենց քրտամբ և արյամբ թրջյալ և շաղախյալ արտերը և տները թողուլ և լացող աչոք ցիրուցան լինել զիրենք սնուցած հողերեն։

Վերջի՞ն թշվառություն։ Հազարացվոց արյունակզակ Բուղա ոստիկանին անգութ սրո կոտարածեն ցայժմ ապրած Սասնո ճղակոտոր այգին այսօր ճռաքաղ կլինի՝ քրիստոնեության մոլեռանդ թշնամի խաֆիրներեն։ Ձի կառավարությունը ցայժմ օրենքներով չցանկապատեց զայգին։ Ինքնակալ տերության սնավ դժուարություն մի չկա այն կողմերը բարեկարգելու և խաֆիրներն խլամ ընելու, զի Պետերխան պեյի, Խան Մահմուդի և Խոզան օղլիի պես զորք և կարողություն ունեցողներ չեն խաֆիրները, որոնց գլխավորները 2—3 են և յուրաքանչյուրն հազիվ 40—50 կամակատարներ ունին, մանավանդ որ անբույթ ու դժվարմատչելի վայրեր չեն նոցա բնակած տեղերը։ Ուրեմն ինչո՞ւ ապստամբության կերպարանքի տակը պահված հարստահարին և ցիրուցան ընեն զհայեր, ինչո՞ւ ուրիշի քրտամբ և վաստակով ապրին և աշխարհի ծանրաբեռնություն ըլլան։

Ընթերցող ազգայնաց ի լրո հասած աղետներն աչքով տեսնողին կիսույն չափ ցավ չազդելն գիտեմք, զի սնական է. ուստի երևակայության աչոք թող նկատեն յուրյանց արենակից եղբարց գերությունը, կողոպտիլը, սպանումը, վայրենաբարոյից տուրքեր վճարելը, կրոնքնուս հակառակ բռնի ամուսնության հետևանքն, հայ աղջկանց և հարսանց իբրև հարճ ապաստարքին զազանաբարոյից, հայուն զենքը ի սիրո հայուն շեշտել տալու պարսկական սխերիմությունը, վերջապես՝ ի մի բան՝ հազար դարուս ընձեռամբ մեծահզոր տերության հպատակյալ, ի սահմանադրական վարչության հայոց, հայուն ամոթապարտ սպառումը։ Կաղաչեմք որոց որ պարտքն է, մեծազոր կայսր գութը շարժելու միջոցներ թող որոնեն, թշվառ հայուն արտասուքը սրբելու»[1]։

Այս նկարագրության մեջ գյուղական ճորտատիրությունը կամ, անվանենք նրան իր բուն և հարազատ անունով, խաֆիրությունը նկատվում է իբրև մասնավոր տեղական մի երևույթ, որի վերացումն էլ, ըստ այդ տեսակ ըմբռնողության, կարող էր կատարվել վարչական մասնավոր միջոցներով։ Բայց ահա 1874 թվականին Գարեգին վարդապետ Սրվանձտյանցը, հայկական կյանքին շատ լավատեղյակ մի հեղինակ, իր հրապարակած «Հնոց և Նորոց» աշխատության մեջ վերցնում է խաֆիրությունն իբրև ավելի ընդհանուր պատմական երևույթ, լուսաբանելով նրան նորանոր վիրին աստիճանի հատկանշական փաստերով և բացատրություններով։ Ահա ինչ է գրում հայության ու քրդության շատ լավ ճանաչող այդ երկրացի հեղինակը.

«Յառաջագոյն քան զտիրելն Օսմանեան հզոր կայսրութեան զգաւառացն մեծին Հայաստանի արևելյան և հարավային կողմանց, էին ինքնագլուխ պետք և բռնակալք բազումք յազգէն Մարաց[2] Ամիր կամ Աղա անուանակոչեալ ի կողմանս կողմանս երկրին. բազմագոյն ևս էին ի հարաւ կոյս միջնաշխարհին ի մասին Տուրուբերանի և Աղձնեաց։ Եւ շատ քան զԱմիրայս և Աղայս էին շեխք. և սոցա իբրև տենպետաց՝ հզորագոյն ևս էր ազդեցութիւն ի վերայ բնակչաց, որք միաբան կամ առանձին տիրեին գաւառաց, գյուղորէից, տանեաց և ցեղից, միանգամայն և որոց բնակչինն ի հոսին։ Հարստութիւն երկրին և

[1] «Մասիս», լրագիր, Կ. Պոլիս, 1872, № 1239։

[2] Հետևելով հին մատենագիրներից մի քանիսին, Սրվանձտյանցը Մար անունը գործ է ածում քուրդ անվան տեղ։

տիրապետութիւն բաժին էր նոցա. որք ոչ գիտէին զոք թագաւոր կամ աւագ քան զինքեանս. կամք և հաճոյք նոցին ունէին զտեղի օրինաց վարչութեան։ Եւ քանզի բնակեալքն ընդ բռնակալութեամբ սոցա էին մեծաւ մասամբ քրիստոնեայ հայք, որք զամենայն լկտիս և զրկանս յօժարութեամբ յանձն առնուին միայն զի պահպանիցեն զեկեղեցին և զխաչ, զհաւատս և զտոհմ իւրեանց քրիստոնեայ. վասն այսորիկ և որք տիրէին նոցա՝ համարձակ ասէին, տոյժս, ընծայս և պահանջս առնուին, յաստուածուստ իմն սահմանեալ իրքեանց իրաւամբ՝ տանել զայս ամենայն և եթէ ուրեք լինէր ոք մեծատուն ի հունձս և ի հօտս, մեկնացուցեալ, հանէին մերկ ի ստացուածոց. և բազում այն էր զի յարեւէ հատանէին, ի հող երկրին հնձեալ զարլին, ջնջէին զցեանն ճիւն անդամ ի տանէն և ի տոհմէն. մեղս համարելով տեսանել զքրիստոնեայ յագ, զգեցեալ, անեվոր, և զոյգն ինչ համբաւ առեալ ի գիւղն կամ ի գաւառին՝ նորին խորամանկութեանց պէտք էին ուրուք առ ի զմխոս և զկամս հաճել պետականացն, զի ապրեսցի յերկեալ հասեալ հանապարհորդ վտանգէն կենացև եթէ գեղ լինէր յաջողել ումեք, տալով տայր տիրողին ոչ միայն զոր ինչ հայն կամէր, այլ զամենայն զոր ինչ ինքն ունէր. և միանգամայն կամակատար և անձնուէր պարտէր գոլ ի ճահս և ի յանճահս, և տալով ամենայն հրամանց և նախատանաց յաղագս ընդդէմ պատուոյ անձին և քրիստոնէական կրօնին։ Ծակաւ էր ի տիրողն որ յուշ ածեր զմեծամեծ ծառայութիւնս, զհաւատարմութիւնս, մինչև ի դէպ եկեալ երբեմն զանձինս իսկ եդեալ ի վերայ նոցա փրկանաւորելոյ զտէրն իւրեանց ի սրոյ, ի հրոյ և յայլ այսօրինակ կենսական վտանգէ, զհպատակելոցն իւրեանց առեմ ջնջել և խնայել ի հարստահարութենէ և ի չարեաց պատուհասից զանձն և զտուն իւրոյ ռայային։

Մեծ ևս քան զպետսն արքանեակք և գործակալք և սեսկական ծառայք նոցին հասուցանէին չարիս և կափէին կեղեքէին զեկեղեցիսն, ի յայտնիս և ի գաղտնիս։ Քանզի սոքա զօլով զօրականք բռնակալաց, համարէին զանձինս ազատս յաշխատութեանց. բաժինք և հասք թոշակաց նոցա՝ տալեալ լինէր ըստ արժանեացն և ըստ հաճոյից մեծամեծ նոցին երգս տասն, քսան, երեսուն, քառասուն և ևս առաւել կամ նուազ, որք պարտաւոր էին հասուցանել զամենայն պէտս նոցին և բնտանեաց նոցին տարեկիս, զզգանելին, զկերլին, և զոր ինչ և զորչափ՝ կամէին։ Ըստ այսմ բաժանեալ էին ամենայն տունք և գեղք հպատակաց ի զօրականս զօրականս, ի զօրապետս զօրապետս և ի պետս պետս յամիրայից, յաղայից և ի շեխից՝ բռնակալաց։ Տեարք և առողք բաժնիցս անուանէին խաֆիր, որոց հետք երևին և մնան իսկ ցայսօր ի բնակիչս Սասնոյ և Խույթայ՝ որ ի Մուշ, և Խիզանու՝ Մոկաց և Շատախու և ի գիւղորայսն Վանայ, որք զխաֆիրութեան տուրս տան տերանց՝ ի Քրդաց։ Դիտեմ և զվանորայն Ս. Աղբերիկ Մատին Առաքելոյ որ ի Մուշ, զոցէ իցեն և այլք, որք ցայսօր ժամանակի խաֆիրաց զուրս տան և օսմանեան կառավարութեան տասնորդս։

Ի շինել, ի քակել, ի բերել, ի մշակել, ի հնձել, ի պատրաստել, ի կերակրել, և յայլ ամենայն պէտս ծառայութեանց ծառայել ծառայքն վիճակեալքն խաֆիրաց և մեծամեծացն նոցին։ Տիրողքն էին արտք, անդաստանք, անտառք, այգիք, մարգագետինք և ամենայն երկիր։ Աշխատանաց հետք և մնացորդք են բէգք Ջարանչախին, Քեղուայ, Սասնոյ, Խիզանու, Մոկաց և Շատախու գաւառաց, որք ցաւուրս ցայսօրիկ տիրացեալ ունին սեպհականեալ ինքեանց զհողային կալուածս... Իսկ թէ զի՞նչ ինչ չարիս հասուցեալ իցին զիրքն կիրք սոյն բռնակալաց և հնազանդաց սոցին յաւուրս անցել ազն ի զլուխս քրիստոնէից կամ ոչ մահմէդականացն համօրէն, թողում իմանալ վերծանողացն. շատ է զնոցին զարդի վարս և արարս զի առողացն չափել ընդ հնոյն. որք

ըստ ամենայնի հակառակ աստուածային և մարդկային օրինաց և անձին խղճմտանաց, քամին և տորեն ընդ ոտիւք զիրաւունս և զարև քրիստոնեայ ժողովրդեան՝ ի շուք նոցին ծուարելոց։

...Հերիք չէին այսքան դառնութիւնք ժողովրդեան, այլ և դէպ լինէր զի հակառակէին այս Ամիրայն ընդ այլում Ամիրայի, այս Տիրող ընդ միւսում Տիրողի, և յարուցեալ ի միմեանց վերայ, աւարէին պետ իւրաքանչիւր զիւրաքանչիւր ռայյաս. և արտաքուստ եկեալ այլ ոք բռնաւոր յաղթահարել զմիոյ գաւառի բռնաւորն, ապատակէին, գերեվարս առնուին, և ի պատանդ կամ ի փոխարէն հաշտութեան մատուցանէին միմեանց զայս քան զքրիստոնեայ երգս, կամ երիտասարդս, և աղջկունս, մինչև տալ և հօտս և օժիտս իբրեւ զմարդիկ իբրև զոչխար, զէշն, զեզն կամ զդրամ և զայլ ինչ ստացուածս։

Ո՞ ոք կարէր տոկալ և կեալ այսքանեացս աղետից և զրկանաց. երկիր ուստի բարձեալ էին խաղաղ գութ և խնամք. երկիր՝ յոր բնակեալքն ոչ ճանաչէին երբէք զնշանակութիւն բառին Իրաւանց. ոչ սեպհականութեանց ապահովութիւն, ոչ անդորր շնչելոյ, ոչ ժամ ննջելոյ, և ոչ ար ինչ նշանակէր նոցա գոլ մարդ կենդանի։ Բազումք՝ թողեալ զորս կարծէին իւրեանց, փախստեայ ընդ գաղտս ցրուէին յո՛ և հասանէին. շատ ևս այն էր, զի թաղեալ զկանանին և զմանկտին միանգամայն ընդ առ և ապուր իւրեանց ի ձեռս բռնաւորացն, ինքեանք խուսէին աստ և անդ գաղթական անձնապուրծ, և մնացելոցն բազմաց զգլուխս կորուսեալ և բազմաց զհոգիս, այսօրինակ ամայացեալ եղեն վայրք բազմահայք. և քանզի արհեստագործք և երկրագործք ամենայն ի Հայոց էին, անկան մինչև ցայսօր ընդ անկումն Հայոց և գործք ձեռաց մարդկանց յայն ամենայն գաւառս։ Իսկ ոմանք իբրև ճիւս ողկուզաց կամ սէզ ընդ հողով ծածկեալ թագուցեալ ապրեալ կացին ուր և կէին. և սերունդք նոցա մարտիրոսաբար տանելով ամենայնի ի վերայ եկելոցն, շարունակեն մինչև ցայսօր զհայութիւն և զքրիստոնէական կրօնն, զորացեալ և աճեցեալ օր ըստ օրէ ընդ խնամովք օսմանեան կառավարութեան»[1]։

Հայ գյուղացիության այս ահավոր հողային դրությունը, թվում է, պիտի տեսներ Թուրքահայերի ղեկավար շրջանները, հանձին Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի, ընդարձակորեն ուսումնասիրել կյանքի և մահվան նշանակություն ունեցող այս խոշոր հարցը, լուսաբանել ճորտ գյուղացիության իրական դրությունը վիճակագրական տեղեկություններով, որոնք կպատկերացնեին, թե որ կողմերում և ինչ չափերով էր տարածված քրդական ճորտատիրությունը։ Սակայն այսպիսի մի լուրջ և փաստական ուսումնասիրություն Պատրիարքարանի դիմումների մեջ մենք չենք տեսնում։ Կցկտուր և անորոշ արտահայտություններով էր ցուցադրվում հայաբնակ գավառների իսկական դժբախտությունը կազմող հողային հարցը։ Այսպես, 1874 թվի օգոստոսի 24-ին օսմանյան կառավարության ուղղած իր գրության մեջ, Ներսես պատրիարքը, խոսելով «Ասիո հողային հարցի» մասին, կարողանում էր ասել այսքանը միայն. «Երբ Թանզիմաթի հաստատութենեն առաջ Ասիոյ շատ մը նահանգները, գավառներն ու գյուղերն անկանոն և ապօրեն կերպով կկառավարվեին, խել մը քուրդ պեյեր և աղաներ իրենց զորության և ազդեցության շնորհիվ արտերն, այգիներն ու պարտեզներն յուրացնելով եուրտլաղ, օճագլըղ, զատած և աղքատ գյուղացիները պարզապես իրենց տրուկն համարած էին»[2]։ Այսքան խղճուկ էր նույն այդ ճորտ ժողովրդի միակ ներկայացուցիչը համարվող ազգային իշխանության լավատեղյակությունը։ Միևնույն ժամանակ նույն պատրիարքը,

[1] Գ. վ. Սրվանձտեանց, Հնոց և նորոց, Կ. Պոլիս, 1874, էր. 152—162։

[2] «Տեղեկագիրք գավառական հարստահարությանց», Կ. Պոլիս, 1876, էր. 26։

մի այլ գրության մեջ բերելով Վանի նահանգի Մոկս գավառի մեջ հայ գյուղացիներից խլված հողերի ցուցակը, ավելացնում էր. «Մույն ականի (գաւառի) քուրդ պեյերը գյուղացի հայերին իրենց մեջ իբրև գերի կը վաճառեն»[1]։ Անշուշտ, պատրիարքարանը լավ գիտեր, թե այս փաստն ապացույց է, որ հայ գյուղացիությունը գտնվում է ճորտական դրության մեջ։ Բայց համարելով այս բանը ոչ կարևոր, անցնում էր նրա մոտով առանց ուշադրություն դարձնելու։ Մնում է, ուրեմն, որ մենք դարձյալ ժամանակի աղբյուրների մեջ որոնենք տվյալներ ճորտատիրական դրության մեջ։ Այսպիսի մի աղբյուր է Պողոս վարդապետ Նաթանյանի «Արտօսր Հայաստանի» աշխատությունը, որի մեջ նկարագրված են մի քանի թուրքահայ գավառներ։ Եվ մենք տեսնում ենք, որ դրանցից մի քանիսի մեջ նույն 1870-ական թվականներին մնում էին քուրդ ճորտատիրության խոր հետքերը։ Այսպես է, օրինակ, Ճապաղջուրի շրջանը, ուր ապրում էին մոտ 5 հազար հայեր։ «Աշիրեթներն,— գրում է հեղինակը,— երեք պեկերու իշխանության տակ կգործեն, որք են՝ Սուլեյման պեյ յուր տղայքներով, Յուսուֆ պեյ և Տերիլ աղա. ասոնք երեքն իրենց մեջ հիշյալ հայերը բաժնած և իբրև գերի, կգործածեն զանոնք իրենց հաճոյիցն, այս ինչ հայն այսինչ պեյին հայն է, և այնինչ հայն՝ այնինչ պեյին։ Թեպետև այս նահանգին մեջ իշխող մյուտիր կնստի, սակայն ազդեցություն չի կրնար բանեցնել քրդաց վրա, որով դրեթե անկախ են այս պեյերը... կառավարությունն ազդեցություն չունի և չկրնար պատժել, եթե կամք ալ ընե։ Երբեմն նույն պեյերն իրարու հետ կհակառակին, և որ պեյը հաղթող գտնվի, մյուս հաղթվող պեյին իշխանության ներքև գտնվող հայոց չարաչար վնաս կհասցնե։ Սա ալ չի մոռնամք ըսելու, թե տեղվույն հայերը խիստ քաջ, երկայնահասակ, կորիչ և աներկյուղ զինավարժ մարդիկ են, որով կրցած են իրենց փոքրիկ թվով և դաշույնի զորությամբ քրդերեն պահպանել իրենց կրոնը, հավատքը և ազգությունը։ Իրանց այս վիճակին մեջ դարձյալ նույն քրդերը հիշյալ ցեղերու ձեռոք քանի-քանի հայ կիներ, աղջիկներ, հարսներ տարեր քրդացուցեր են և մինչև ցարդ ալ կնեն, և ոմանք հայեր ալ կան, որ կերթան իրենց աղջիկները կմատնեն, իրենց կյանքը հազեցնելու համար, և նույն պեյն ալ իսկույն ի բանտ կը դատապարտե և մինչև ծանր տուգանք մը չառնու, չը թողեր։ Եթե հայ մը մեռնելու լինի, բոլոր ստացվածքը «մահլուլ» է ըսելով կյուրացնե, իսկ եթե մեռնողը հայր կամ եղբայր ունի, սակ կվճարե պեյին՝ «մահլուլը» ծախու առնելու պես։ Հայոց հարսանյաց ալ միջամտություն կընեն. եթե իրենց ուզած աղջիկը մանչուն, և մանչը աղջկան չի տան, իսկույն մանչուն և աղջկան տեղերը ծանր տուգանք վճարելեն հետո պեյերը իրենց ուզածին տալով, բռնությամբ քահանայի մը պսակել կուտան, իսկ եթե չպսակե՝ չարաչար կգանակոծվի»[2]։ Խարբերդի շրջանի մեջ հայերը քրդերին որոշ տուրք էին տալիս, որ սահմանված էր հին ժամանակներից[3]։ Խիզանի գավառում եթե մի հայ քահանա գնար մի ուրիշ գյուղ՝ պաշտոն կատարելու համար, պիտի որոշ տուրք տար այդ գյուղի քուրդ բեյին, հակառակ դեպքում ձերբակալվում էր բեյի հրամանով և սաստիկ ծեծի ենթարկվում[4]։

Բերենք վերջապես մի վկայություն էլ այնպիսի լավատեղյակ և մանրակրկիտ ուսումնասիրողից, որպիսին է անգլիացի ճանապարհորդ Լինչը։ «Ճորտատիրությունն,— ասում է նա,— մի հիմնարկություն է, որ անծանոթ չէ

1 «Տեղեկագիր գավառական հարստահարությանց», եր. 32։

2 Պողոս ծ. վ. Նաթանյան, Արտօսր Հայաստանի, Կ. Պոլիս, եր. 145—147։

3 Անդ, եր. 137։

4 Անդ, եր. 177։

այս երկրին, թեև նրա գոյությունը մեղմացնում են Թուրքաց իշխանությունները, որոնք վախենում են գործադրել այստեղ միայն անվանական արդարադատություն։ Ճորտ հայերը հայտնի են Զեռ-Կուռոի անունով, որ նշանակում է «ոսկով գնած»։ Եվ իրավ, քուրդ բեյերն ու աղաները նրանց գնում և ծախում են բոլորովին այնպես, ինչպես ոչխարներն ու անասունները։ Միակ տարբերությունն այն է, որ այս մարդիկ չեն կարող կտրվել իրենց հողից և վաճառվում են իրենց մշակած հողի հետ։ Ցեղապետը նրանց տարեկան աշխատանքից վերցնում է փողով և նյութերով որքան ուզում է և փոխարենը պաշտպանություն է ցույց տալիս նրանց ուրիշ քրդական ցեղերի դեմ։ Ես լսել եմ շատ զանազանակերպ պատմություններ, որոնք լուսաբանում են նրանց փոխադարձ հարաբերությունները։ Մի ճորտ սպանվեց հարևան քուրդ աղայի ծառայի ձեռքով. այդ ճորտի սեփականատերը հարկավոր չհամարեց նրա մահվան վրեժը հանել ոչ սպանողից, ոչ էլ նրա տիրոջից, աղայից։ Նա գնաց աղայի կալվածը և այնտեղ գնդակահար սպանեց նրա երկու ճորտերին, որոնց հանդիպել էր պատահաբար։ Մյուս դեպքն այն է, որ Խաղույից մի քանի ժամ հեռավորության վրա ապրող մի ցեղապետի ճորտը բնակություն հաստատեց այդ քաղաքում, ուր Թուրքաց կառավարությունից ստացավ գանձապահի պաշտոն։ Մի անգամ գիշերով այս ճորտի տան վրա հարձակում գործեց մի ուրիշ քուրդ աղա, որ սպանեց թե նրան իրեն և թե նրա հորեղբորորդուն։ Այս անգամ սպանվածների սեփականատերն ավելի քիչ զիջող հանդիսացավ։ Հավաքելով իր մարդկանց, նա խուժեց իր ավազակ եղբայրակցի տան ներսը, սպանեց նրան, այրեց նրա տունը և մահացրեց այն ամենը, ինչ ապրում էր տան մեջ։ Այս երկու դեպքը տեղի են ունեցել դեռ այժմ էլ կենդանի մարդկանց օրով. առաջինի մասին ինձ պատմել է այնպիսի մի հեղինակավոր անձ, որպիսին է անգլիական հյուպատոսը, երկրորդի մասին՝ պատասխանատու պաշտոն վարող մի անձ, որը Թուրք կառավարության կողմնակիցն էր»[1]։

Այսքան են ահա մեր ունեցած տեղեկությունները Թուրքաց Հայաստանի ճորտատիրության մասին։ Մենք ընդունում ենք, որ նրանք, այնուամենայնիվ, լրիվ և բազմակողմանի չեն հարցը սպառիչ ամբողջությամբ պատկերացնելու համար։ Բայց եղած նյութն էլ, կարծում ենք, բավական է անկասկածելի դարձնելու համար, որ Թուրքահայ գյուղացիության խոշորագույն մասը, այն, որ ապրում էր այժմյան Վանի, Բիթլիսի և Դիարբեքիրի վիլայեթներում, XIX դարի սկզբին գտնվում էր վաճառվող ստրկի դրության մեջ և այս վիճակի ամբողջ զարհուրանքը շեշտվում էր այն բանով, որ այդ ստրուկ ժողովրդի կյանքի ու մահվան տերը բարբարոս քուրդ թափառական ազնվականությունն էր։ Մեզ մնում է ցուցահանել այստեղ մի քանի չափազանց հետաքրքրական կետեր, որոնք նույն այդ ստրուկ և խավար աշխարհի արտադրություններն էին և ցույց են տալիս, թե մարդկային հոգուն հատուկ են անկախության և ազատության հույզեր նույնիսկ ամենադժբախտ պայմանների մեջ։

Վերևում, Ճապաղջուրի նկարագրության մեջ, մենք տեսանք, որ այդտեղի հայերը և՛ քաջ էին, և՛ լավ զինվորներ, և՛ գիտեին կռվել քրդերի դեմ, բայց այս հանգամանքն, այնուամենայնիվ, չէր խանգարում, որ նրանք կատարեն ամեն մի ճորտի պարտավորություն, այն է՝ հարսնացու ընտրել քուրդ աղայի հավանությամբ։ Նշանակում է, որ ստրկության աշխարհի ընդարձակության մեջ կային փոքրիկ անկյուններ, ուր հայը խոսում էր քուրդ խաֆիրության հետ նրա համար միակ հասկանալի, միակ հեղինակավոր լեզվով՝ զենքով։ Տեղի ուներ անգամ մաքառում, որ ամեն տեղ հավասար հաջողությամբ չէր,

1 Линч, Армения, II, с. 554—555.

իհարկե, մղվում և միատեսակ հետևանքների չէր հասցնում։ Ծապաղջուրի հայերն իրենց զենքով կարողանում էին, անշուշտ, իրավունքներ պաշտպանել իրենց համար, բայց ոչ ազատ մարդու բոլոր իրավունքները։ Նրանք հարկադրում էին զիջողություններ անել, բայց նրանք էլ զիջում էին։ Այնպես որ այդ մի ճորտություն էր, որ զինված հաշտության մեջ էր ապրում իր տերերի հետ։ Բայց կային նրանցից ավելի երջանիկ հայ համայնքներ էլ, որոնք ներկայացնում էին առանձին-առանձին մանր լեռնային անմատչելիություններ՝ արծվի բույների նման կպած մասնավորապես Տավրոսի հուժկու գագաթներին։ Այստեղ մաքառումն ավելի հաղթական էր, բայց և ավելի դաժան։ Խաֆիրության այդ դասական հայրենիքում հայ համայնքները պահպանում էին իրենց ազատությունը, կորցնելով իրենց համարյա ամբողջ ազգային նկարագիրը՝ լեզուն, բարքերը և հարմարվելով գոյության դժնդակ կռվի միջավայրին՝ քրդությանը։ XIX դարի սկզբում մատնանշվում էին մի քանի այդպիսի անկախ, կիսով չափ կամ բոլորովին քրդացած հայկական համայնքներ, որոնք գտնվում են հենց այն գավառներում, ուր խաֆիրությունն էր միապաղաղ իրականություն կազմում։ Ինճիճյանն իր «Աշխարհագրության» մեջ այսպես է նկարագրում այդ լեռնային խորհրդավոր անկյունները.

«Մոկս։ Բնակիչք այսր վիճակի են հայք և քուրդք. բայց հայք խոսին ի բարբառ ինչ օտար, զոր և ոչ իսկ վանեցիք կարին իմանալ։ Ի ժամանակս նախնի օսմանյան արքայից անկանէր ընդ տերությամբ պեյին Ճէզիրայի. այլ սակս բռնութեան՝ ի բազմաց հետէ անցին ընդ տերութեամբ պեյին Ճուլամերկի. սակայն միշտ ոմն ի հայոց մելիք և գլխաւոր հրամանատար եղեալ հրամանաւ Ճուլամերկի պեյին, զամենայն իշխանութիւն ի գործ ածէ, բացի յարինհեղութենէ»[1]։ «Շատախ։ Վիճակ ի գաւառին Ճուլամերկի, ուր նստի մելիք յազգէս հայոց և ի գործ ածե զամենայն իշխանութիւն և զդատաւորական պաշտոն. զի ոչ թողուն քուրդ պեյից նստիլ աստէն, որպես և ի Մոկս»[2]։ Այստեղ մենք ունենք մեր առջև լեռնային փոքրիկ ինքնավարություններ, որոնք իրենց կազմությամբ հիշեցնում են Պարսկական Հայաստանի Ղարաբաղը։

Այնուհետև անցնում ենք Սասունի լեռները, ուր շատ են քրդական ցեղերը, ուր խաֆիրությունը հաստատուն և անսասան է, բայց ուր կարելի է նկատել և այսպիսի դրություն. «Բնակիչք սորա քուրդք և հայք, որոնց երկուքին եւ զմի և զնոյն ազատութիւն ունին, արք յաղթանդամք և քաջասիրտք երեւելիք ի կորովութիւնս մարմնո, ահեղք ի պատերազմի, որոց միայն ատուարութիւն հերաց՝ մանավանդ ոմանց ի նոցանե ահացուցանէ զտեսողսն, որք ի սկիզբանէ անտի միշտ եղեն ինքնագլուխ, ոչ ումեք ծառայելով. և ոչ ոք ի փաշայից կամ ի պեյից կարող գտաւ զսոսա նուաճել, սակս զորութեան ուժոյ սոցա և սակս ամուր վայրացն, յորս ապաստանեալ ոչ ումեք թողուն մուտս առնել։ Ունին իւրեանց մասնաւոր պէյ ինքնագլուխ։ Մերքն խօսին անդեն ի լեզու ինչ որ մերձաւորութիւն, յոյժ ունի ընդ գրաբառին. այս ցուցանէ զոչ խառնակիլն նոցա ընդ զանազան օտար ազգս»[3]։ Այստեղ ի նկատի է առնված Սասունի ընդհանուր անկախությունը և դիմադրությունն արտաքին աշխարհին, հանգամանքներ, որոնց մեջ միանում էին քրդերն ու հայերը։ Բայց ներքին կազմակերպության մեջ Սասունը մնում էր քրդական մի իշխանություն, և հայերի հարաբերություններն այդ իշխանության հետ բնորոշվում են հենց

1 Ինճիճեան, եր. 161։
2 Անդ, եր. 163։
3 Անդ, եր. 200։

նրանով, որ դեռ XIX դարի վերջերում էլ նրանք հարկ էին տալիս քրդերին։ Այնպես որ հայերի դրությունը կարելի է հասկանալ միմիայն մասնավոր համայնքների ինքնավարության մտքով։ Դրսի աշխարհի հետ մղած պատերազմների մեջ Սասունը հաճախ հենվում էր իր սահմանակից Բռնաշեն լեռնային շրջանի հայկական վանքերից մեկի վրա, որի անունն էր Սուրբ Աղբյուրիկ. «շինված բերդանման, հիմնեալ ըստ աւանդելոյ բնակչացն յաւուրս՝ աշակերտացն Քրիստոսի... Այս մենաստան էր պատսպարան Սասնոց յաւուրս Ալատին պեյին Մշոյ. որոյ թշնամացեալ ընդ նմա, յանկարծակի ապստամբեալ յաւուրի առնուին զմերձակայ գիւղօրեայս Մշոյ և փախուցեալ ամրանային յայս մենաստան իբրև յանկոյթ ամրոցի»[1]։

Բայց լեռնային հայ ազատ համայնքների տեսարանն ավելի հետաքրքրական է դառնում Դիարբեքիրի վիլայեթի մեջ։ Քրդական բացարձակ ինքնագլխությունների և մշտական ընդվզումների դասական երկիրն էր այս, ուր պատերազմը հանապազօրյա երևույթ էր և, հետևաբար, միմիայն ուժեղի իրավունքն էր թագավորում անսահմանորեն։ Եվ ահա այստեղ էլ հայի ազատասիրությունն արել էր մի քանի զարմանալի նվաճումներ։ «Սավուր: Գաւառ ինքնագլուխ և անկախ,— ասում է Ինճիճյանը։— Բնակիչք նորա ըստ մեծի մասին յազգէս հայոց, որք են արք հզօրք և սաստիկ պատերազմողք. իսկ ի քրդաց սակաւք։ Աւան սորա գլխավոր՝ նոյնպես Սավուր կոչեցեալ՝ անկանի մերձ ի Մերտին ի հարաւակողմն Ամթայ, երկու օթեւանօք հեռի ի նմանէ»[2]։— «Ազու կամ Հըզու... գալով Հիւքիմէթ, իշխանութիւն գաւառիս է ի ձեռս պեյին որ է ինքնագլուխ, և ոչ է ընդ իշխանութեամբ փաշային Տիարպեքիրայ. և գրեթե միշտ է պատերազմի մեջ փաշային և բնակչաց սորա։ Ունի ըստ իբրև բազմութիւն գիւղօրէից, որոց բնակիչք ըստ կիսոյն քուրդք և ըստ կիսոյն հայք, որք ոչ որոշին ի Տաճկաց. զի գլխարկ հայոց է սպիտակ որպես և տաճկացն. հայք ոչ առն անդ հարկս, որպես և յայլ կողմանս ինչ Քրդստանու. համարձակ կատարեն զպաշտօն քրիստոնէութեան, մինչև յայտնի տանել սա հիւանդըս զքրութիւն, յայտնի պատարագել և այլն»[3]: Բայց ամենից հետաքրքրականը մեր «Աշխարհագրության» հետևյալ նկարագրությունն է, որ ներկայացնում է կատարյալ քրդացման նախօրյակին հասած մի հայ հատված.

Խեսաճ կամ Խուֆեաճ: Խեսաճ թարգմանի ապստամութիւն, Խուֆեաճ թարգմանի բնակութիւն։ Սովին անվամբ անվանի գաւառ ինչ ինքնագլուխ, ապստամբ ի փաշայէն Տիարպէքիրոյ, 1 օթևանաւ հեռի ի Հազրոյ և իբր 4 օթևանաւ հեռի ի յԱմթայ։ Են ի սմա պէսպէս գիւղօրէք, որոնց բնակիչք գրեթէ առհասարակ հայք, այլ սակաւք են որք խօսին հայերէն և այն ծանր և աղճատեալ լեզուաւ. իսկ հասարակ լեզու նոցա է քրդերէն։ Գրեթէ անուամբ և եթ ունին զքրիստոնէութիւնն, ոչ ունին անդ եկեղեցի և ոչ քահանայ. բազումք ի նոցանէ և ոչ իսկ գիտեն խաչակնքել. միանգամ ի տարւոջ տօնի խաչին բազմութեամբ գնան յուխտ ի Հազրու՝ յեկեղեցին Այնիպրիճի և անդ մնացեալ զաւուրս երիս կամ չորս տան պատարագ առնել. և զուրախութիւն իւրեանց կատարեալ անդադար հրացէնս արձակելով, գան ապա ի սուրբ Առաքելոց վանսն. և այս է բովանդակ տարեկան պաշտամունք նոցա։ Որոշին հայք ի տաճկաց սպիտակ պատտաւ պատելով ի գլխարկս իւրեանց։

Ունի այս գաւառ երկուս մեծամեծ լերինս տարակոյս ի միմեանց իբրև

1 Ինճիճեան, եր. 1[illegible]։
2 Անդ, եր. 230։
3 Անդ, եր. 232։

միով օթևանաւ, և ի մէջ նոցա այլ խոնարհ լերինս, որք են գոտի կցեալ ընդ լերանց Հաղրոյ: Այս երկու լերինք, որ տիրապես կոչին Խնեան կամ Խաբեան. են իբրև դրունք գաւառին և տեղի ապաստանի ապստամբութեան սոցա. զի մի միայն է անցք ելից նոցա: Ի վերայ երկուց լերանցս եւ է մի-մի աւան անպարիսպ. ի միումն բնակին տաճիկ քուրդք. իսկ միւսումն՝ որ է մեծ և բարձր քան զլեառն տաճկաց, բնակին հայք, ի վերայ երկուց լերանց եւ բղխէ ջուր պատուական: Երկիր նոցա բերէ ցորեան և այլ բազում արդիւնս:

Տաճիկք են առհասարակ հեծելազօրք և տիգաւորք, որք զորդիս իւրեանց յառաջին տիոց անտի կրթեն յայս արուեստ. իսկ հայք առհասարակ հետեվակք և ոմբաձիգք, այսինքն թիւֆէնկճիք, ճարտարք յոյժ ի ձգել զռումբս ի նպատակս. զի զորդիս իւրեանց ի հասանել ի չափ հնգից ամաց վարժեն յայս արուեստ. և զի հանապազօր պարապին յայս գործ, ոմանք յաւուցանել մանկանց և ոմանք ի չկորուսանել զուսեալ վարժութիւնն, յայն սակս զօրն ողջոյն լսելին լինին ի վերայ լերին ձայնք հրազինաց: Այս է գրեթէ արուեստ նոցա և զարման, զի առաւել աւաղակութեամբ ապրին քան թէ արուեստիւ. յորս սակաւ են յոյժ արուեստաւորք, զօրօրինակ երկրագործք, կտաւագործք և այլն, և այն կանայք նոցա և ի պէտս իւրեանց միայն և ոչ վաճառի աղագաւ ինչ: Մարմնով են յաղթանդամք բարձրահասակք և զօրաւորք յոյժ. ի գիտս պատերազմի հնարագործք և ճարտարք. շրջին միշտ սպառազինեալք նաև մանկունք նոցա, ի շրջիլն ի գիշերի ի լոյս լուսնի ի յաւազակել զանցաւորս, յոտից մինչև ցգլուխ զգենուն սպիտակ, մինչև ճանապարհորդաց երևիլ հատոր ինչ սպիտակ վիմի: Ի լինել պատերազմի՝ զամենայն զաղթ և զկարասիս տանց գիւղօրէից իւրեանց թաղեն ի գետնափոր գաղտնի գուբս, զոր չէ մարդ իմանալ. իսկ բնակիչքն ամրանան կամ ի լեառն հայոց և կամ լեառն քրդաց, որպէս և դեպ լինի ըստ յարձակման թշնամւոյն և զաւան լերին պատեն առհասարակ հողաշեն պատնեշաւ. և զոյն պատեն արտաքոյ 7,8 մինչև 12 թացեալ՝ խորոզովք, առկախեալ մի զկնի միոյ, ընդ որ ի հասանել ոմբաց՝ ընկլղմեալ ի նմա, ոչինչ վնաս գործեն. զկանայս և զմանկունս իւրեանց դնին յայնմ ամրափակ աւանին. իսկ իւրեանք հետևակք և հեծելազօրք իջանեն ի վայր ի պահպանել զանցս լերին, փոփոխակի և կարգաւ պատերազմին, եթէ տիգաւոր հեծելազօրն խորտակի և տկարանայ, յառաջ անցանեն ոմբաձիգ հետևակք, իսկ ի տկարանալն սոցա՝ յարձակին տիգաւորք: Ի պատերազմիլն, կանայք և մանկունք նոցա յաւանին ձայն արձակեալ ուրախութեան զերգս ընդդէմ թշնամւոյն, այնչափ է նոցա սիրելի պատերազմ. զի զլուր գալստեան թշնամաց աւետիս համարին անձանց: Ուստի չեղև երբէք հնար նուաճելոյ կամ բառնալոյ զսոսա, ի դիւրութիւն և յապահովութիւն անցաւորաց»[1]:

Ահա այսքան հետաքրքրական և ինքնատիպ կենցաղ էր կերտում ազատության տենչը բռնությունների և ստրկության այդ ճնշված, մշտավեր երկրում: Լեռնային մանր անկախության այս պատկերները մեզ, ի վերջո, տանում են Կիլիկիա, ուր ապրում էր մի հոծ բազմություն հայերի անվանապես օսմանյան տիրապետության տակ, բայց իրապես ենթարկված Կոզան օղլու Թուրքմեն ցեղին, որ չէր ճանաչում սուլթանական կառավարությունը և իշխում էր բացարձակորեն ազգաբնակության վրա: Իսկ թե բարքով և բնավորությամբ ինչ տեսակ տիրողներ էին այդ ցեղի ներկայացուցիչները, ցույց է տալիս այս իրողությունը, որ դրանցից մեկը 1801 թվականին, պատահելով Կիլիկիայի Հայոց Թորոս կաթողիկոսին Սիս քաղաքից դուրս, գետի կամուրջի վրա,

1 Ինճիճեան, եր. 243—245:

սպանեց նրան՝ հոշոտելով նրան անդամ-անդամ[1]: Բռնությունների այս աշխարհում էլ բարձրացած էր հայկական մի փոքրիկ ազատ լեռ՝ Զեյթունը, որ ինչպես պատմում է ավանդությունը, պահպանել էր անկախություն Ռուբինյան թագավորության անկումից հետո մոտ չորս դար, պաշտպանելով իր այդ իրավունքը հերոսական պատերազմներով, որոնք պսակել էին զեյթունցի հային անպարտելի քաջության հռչակով: Այդ հերոսամարտերից մի քանիսը տեղի էին ունեցել օսմանյան տիրապետության ժամանակ և վերջնական հետևանք էին ունեցել այն, որ թուրք կառավարության և հայ լեռնականների մեջ կայացել էր երկու կողմերն էլ բավարարող մի համաձայնություն՝ զեյթունցիները պարտավորվում էին յուրաքանչյուր տարի մի որոշ գումար տալ Կ. Պոլսի Այա-Սոֆի մզկիթին[2]: Զեյթունցիների համար այս գումարը հարկ չէր, որ համարվեր նրանց անկախության խանգարման նշան, իսկ թուրք կառավարության համար նա, այնուամենայնիվ, համարվում էր պարտավորված դրություն, վճարողի վիճակի, ասել է՝ հպատակի իրողություն:

Խոսելով ընդհանրապես, հայկական փոքրիկ լեռնային անկախությունները մասնակի, առանձնացած երևույթներ էին հայ ժողովրդի կյանքի մեջ, այնքան համեստ և թույլ երևույթներ, որ, իհարկե, չէին փոփոխում և չէին էլ կարող փոփոխել նրա ընդհանուր վիճակը: Այնուամենայնիվ, այդ անկախություններից մի քանիսը, մասնավորապես Զեյթունը, ինչպես կտեսնենք մեր այս գործի ընթացքում, շատ խոշոր դեր կատարեցին հայության ճակատագրի մեջ, իբրև կենդանի կոթողներ մի ազգի ազատական տենչերի, որոնք անշեջ էին պահում ժողովրդի մեջ ազգային անկախության, ազգային ինքնորոշման գաղափարը, այնպիսի մի գաղափար, որ չէր կարող առանձնապես գրավիչ չլինել ստրկության մեջ տառապող այնպիսի մի ժողովրդի համար, որպիսին էր հայ ժողովուրդը:

Մենք, սակայն, լրացրած չենք լինի այդ ժողովրդի դրության պատկերը, եթե աչքաթող անենք նրա ներքին կյանքի պայմաններից ծնված և օրինականացած հարստահարությունները: Մինչև այժմ մեր նկարագրածը տալիս է մեզ արտաքին ուժերի կատարած ներգործության պատկերը: Հային հարստահարում է քուրդը, որովհետև նա հողատեր է, իշխանավոր է, զենք ու զորություն ունի, հարստահարում է առհասարակ մահմեդականը, որովհետև մի մահմեդական—աստվածապետական տերության մեջ հարստահարվողի դրություն է վիճակված, իբրև օրենք, ամեն մի ոչ մահմեդականի: Իսկ ի՞նչպես է նույն այդ հարստահարվող զանգվածն ինքն իր մեջ, իր տանը, իր նեղ ազգային շրջանակի գրկում:

Մարդկային հանրակեցության բոլոր ձևերի մեջ անխուսափելի են մշտական դրությունները՝ իշխողներ և ենթարկվածներ, կեղեքողներ և կեղեքվողներ: Այսպես է և հայ համայնքի ներսը: Նա բաժանված է դասակարգերի, որոնք իրար մեջ մղում են հավիտենական պայքարներ բարիքներ շատ խլելու և շատ վայելելու համար: Այդ դասակարգերի մեջ ամենաբարձրը հոգևորականությունն էր: Հայոց պատմությունը ցույց է տալիս, թե որքան ընկած և փչացած էր հայ հոգևորականությունը, մանավանդ XV—XVIII դարերում: Իր ժողովրդի վրա նա, իբրև իշխանություն, ընկնում էր այնպիսի մի ծանրությամբ, որ պակաս չէր, քան օտար տիրապետության ծանրությունը: Այսպես, հոգևորականությունն էլ օրինականացրել էր հոգիների առուծախ, ճորտություն: Դեռ XIX դարի երկրորդ կեսում Կիլիկիայի մեջ գոյություն ուներ մի դրություն,

1 Ավետիս վարդ. Պերպերյան, Պատմություն հայոց, Կ. Պոլիս, 1871, եր. 38:

2 Զեյթունցի, Զեյթունի անցյալն և ներկայն, Վիեննա, եր. 29—31:

որ այսպես էր նկարագրում մի պաշտոնական գրություն. «Վաղեմնական սովորություն կամ ճիշտ օրենք մը եղած էր բոլոր Կիլիկիո վիճակաց, գուցե ուրիշ վիճակներու մեջ ևս, որ առաջնորդները կամ բուն իսկ կաթողիկոսները՝ այն քրիստոսի արյամբ գնյալ ժողովուրդները գլուխ առ գլուխ կը վաճառեին քահանայից, ծուխ անվամբ, ուզած գներովը. մեկը երեսուն ղրուշ, մյուսը քսան և մյուսը՝ տասը և վերջապես մինչև հինգ ղրուշ և գուցե ավելի պակաս գնով, և քահանաներն ալ ղանոնք իբրև գերի իրենց սեփական կալված մը համարելով, բռնաբար կոխրապետեին անոնց վրայ զվախճան, մինչև անգամ եթե ժողովուրդ մը յուր քահանային գոհ չըլլալով ուզեր ուրիշի մը հովվության հանձնվիլ, քահանան երբեք թող չը տալով կըսեր. «Ես քեզի սակով գնած եմ, դուն իմ արդար սեփականությունն ես, ո՞վ կրնա ճողոպրել քեզի իմ ձեռքես»[1]: Իսկ 1878 թվին Հայաստան քննիչի պաշտոնով ուղարկված Գաբրիել վարդապետ Սրվանձտյանցը գավառական առաջնորդներին այսպես էր նկարագրում Ներսես պատրիարքին ներկայացրած իր զեկուցման մեջ. «Առաջնորդաց մեջ լավաց բացառություններն չեմ մոռնար, բայց եթե հարցնեք, չեմ կրնար թվել: Առաջնորդ տեսա, որ յուր տանը մշակն էր և կախարդության հարյալ: Առաջնորդներ գինով արբյալ և վիճակին պատուհաս մը: Առաջնորդ, որ զօր և գիշեր միմիայն յուր ձին կը հոգար. և պաշքպղուզ ու անսաստ վարդապետ և եպիսկոպոս տեսա, որք կը շրջին հաշխարհե-հաշխարհ, կուտեն, կխմեն, կխլեն, կձեռնադրեն, հրաշքներ կընեն: Քանի մը տեղ փաշաները ձեռքես բռնելով առանձին կըսեին ինձի, թե «դիտողություններ կընես մեր ղատիներուն վրա, իրավունք ունիս, բայց այս մարդը լցուցանելով առաջնորդը այսպիսի փափուկ ժամանակի մեջ այսպիսի բազմահայ գավառի մը առաջնորդ ընելը՞ւ մարդ է»: ... Ուրիշ տեղ մը փաշային ներկայության, խառըթի անգամ նշանավոր տաճիկ մը, խոսքի կարգին այս ծանր դիտողությունը ըրավ. «Թանզիմաթեն առաջ պեյեր ու աղաներ կային մեր երկրի քրդերեն և թուրքերեն, որ առանձին բանտ, շղթայ, ֆալախա ի գործ կը դնեին և կը բռնանային աղջիկ մը յուր և յուր ծնողաց հակառակ նշանածեն կորզել և իրենց ավելի սատակ տվողին տալ. դուք շատ բաներու վրա դիտողություն կընեք մեր մասին, բայց շնորհ ըրեք՝ կառավարության ատյանը քանի մը միջոց գտնել և կը տեսնեք, թե քանի բողոքներ կուգան տեղվույս առաջնորդին վրայ. որի կնիկը ծեծած է, որը ֆալախա կոխած ու քանի մը օր բանտարկած, որմեն ծանր տուգանքներ առած, որ մեկին աղջիկը կնոջ զավթելով խլած և սատակն ավելի տվողին հետ պսակած, իրեն հավասար վարդապետի մը «շուն» և այլն կոչած և զանի ծեծել տված»[2]:

Բայց հոգևորականների իշխանությունը միայն հոգևոր դասակարգին չէր հարկավոր: Նա հարկավոր էր և այն աշխարհականներին, որոնք պետք է հարստանային կամ ձեռք բերած հարստություններն ապահովեին, ազդեցիկ դիրք ստեղծելով իրենց համար, դառնալով տեր և հրամայող: Այսպիսի աշխարհականները կազմում էին երկրորդ տիրող շերտը: Դրանք «իշխան» անվանված ազդեցիկներն էին կամ «երևելիները»: Իշխանները հասկանալով այս անվան տակ հողային ժառանգական ազնվականությունը, վաղուց էին բոլորովին անհետացել արևմտահայերի մեջ, բայց հասարակական կարգերն այնպես էին, որ առանց այդպիսի արտոնվածների կարծես չէր էլ կարելի ապրել: Կյանքի ձևերն անփոփոխ էին մնացել ու այդ գրության մեջ չէր կարող դատարկություն գոյանալ: Եվ հին իշխանների տեղը ուզեր, կեղեքվող

1 «Մասիս», լրագիր, Կ. Պոլիս, 1873, թիվ 1366:

2 «Մասիս», 1879, թիվ 2227:

ժողովրդի մեջ բռնում էին վաշխառուական կապիտալի տեր մարդիկ: Դրանք իսկական տերեր դառնում էին ոչ միայն փողի ուժով, նրանք գնում էին և իշխանություն. դրանց ձեռքումն էր ազգային իշխանության ներկայացուցիչ հոգևորականությունը, որի միջոցով նրանք կարգադրում էին տեղական գործերը ինչպես այդ պահանջում էր իրենց շահը և այնքան ուժեղանում էին սաստիկ, անգիտակից ամբոխի մեջ, որ նույնիսկ հոգևորականությանն էլ, իր իշխանությամբ հանդերձ, խաղալիք էր դարձնում նրանց քմահաճույքներին:

Այս տեսակ իշխան տերերի դասական հայրենիքը ամենախոշոր չափերով ներկայանում էր Կ. Պոլսի հայ գաղութը, և նրա մասին մենք շուտով մանրամասն խոսք կունենանք: Ավելի մանր, նախնական կոպիտ կերպարանքով այդ երևույթը գավառներում մարմնացնում էին չորբաճիները, մի դասակարգ, որ միայն հայկական միջավայրին չէր հատուկ, այլ հավասար ուժով և հաջողությամբ զարգանում էր Թուրքիայի բոլոր իսլամ և ոչ-իսլամ համայնքների մեջ և միատեսակ քայքայիչ ու սարսեցնող դեր էր կատարում ամենուրեք:

Տարաբախտաբար, հայ ժողովրդական կյանքի այս երևույթն էլ, ինչպես ուրիշ շատերը, մանրամասն և փաստացի ուսումնասիրությունների առարկա չի դարձել: Եղած փոքրիկ գրականությունից մենք առայժմ բավական ենք համարում տալ մի մանրիկ հատված, որ կրում է պաշտոնական բնավորություն, թեև վերաբերում է XIX դարի երկրորդ կեսին: Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովի նիստերից մեկում, 1870 թվին, երբ քննվում էր գավառական հարստահարությունների խնդիրը, տեղի ունեցավ մտքերի մի համառոտ, անցողակի փոխանակություն, հետևյալ բովանդակությամբ.

«Երեմիա եպիսկոպոս.— Գավառաց երկրորդ տեսակ ներքին հարստահարողք դարձյալ մեր մեջ են, անունով հայ են, հավատքով քրիստոնյա են, բայց շատ անգամ օտար և արտաքին բռնավորներեն ավելի վնասակար, ավելի դավաճան են ազգին հայրենյաց: Թերևս գիտեք, թե այսօր գավառաց մեջ այնպիսի բռնավոր հայեր ունինք, որոց եղեռն և բռնությունք ավելի վնասակար են ազգին, քան զվաստակն. նույն հրեշ բռնավորներ գիշեր-ցերեկ բան գործ ըրած են ազգ մատնել, անմեղներ զրպարտել, աղքատ ժողովուրդ կեղեքել և հարստահարել, աշխարհ խառնել, տակն ու վրա անել, իրենց շահուն և ամբարտավանության համար. մեր խեղճ ազգայնոցմե ով որ չուխտեր այն բռնավորաց հնազանդ և կամակատար ծառա լինել, անշուշտ պիտի հալածվի, նախատվի մեծամեծ վնասուց հանդիպելով, մինչև անգամ մահու ենթարկվի: Նույն բնտանի բռնավորք իր մեջն են, մեր անունով կը պարծին, մեր անունով կը հարստանան և կը փառավորվին. բայց չգիտեմ ի ագիտութենե, թե ի չարութենե այսօր այնպիսի վատ դրությանց մեջ կը խարխափեն, որ գոգցես հայության անուն հերկրե բնաջինջ անել կաճապարեն, ուստի երեսփոխանաց և ազգին ուշադրություն խնդրելով՝ կառաջարկեմ, որ փութան այս բռնավորաց բռնությունը խորտակել, որպեսզի նոքա զԱզգը ջնջելով չը խորտակեն»:

«Մալխասյան էֆ.—... Գավառաց մեջ իշխան անունով խել մը բռնավորներ կան, կան նաև անխիղճ առաջնորդներ (ներեցեք, որ այսպես անվանեմ ղանոնք): Անոնց ազդեցությունը ջնջելու և ազգային պաշտոններն զիրենք հեռու պահելու միջոցները խորհիլ (առաջարկություն նույն երեսփոխանի): Ըստ որում հայ չորպաճիներ ժողովրդյան վրա անողորմապես ծանրացած են, զանի կը կեղեքեն և կը ճնշեն, ուստի ղանոնք կամ հուղղություն ածելով կամ ազգային գործերու միջամտութենե հեռի պահելով և կամ ուրիշ որևէ կերպով մը անոնց ազդեցությունը ջնջելու միջոցներ խորհիլ»:

Եթե այսպես էին հոգևորականներն ու չորպաճիները XIX դարի երկրորդ կեսում, երբ Թուրքիան այնպես թե այնպես ուզում էր բարեկարգել իր հին կարգերն ու հիմնարկությունները, և երբ հայ ժողովրդի մեջ այսպես թե այնպես թափանցել էին սկսել եվրոպական ռամկավարական սկզբունքները, հեշտ կարելի է երևակայել, թե ինչ էր դրությունը մեր նկարագրած ժամանակներում, երբ մանավանդ ասիական նահանգներում տիրում էր կատարյալ անիշխանություն, երբ ամեն մի գավառի մեջ նստած էր մի ըմբոստ դերեբեյի, որ իրեն ինքնակալ և անկախ էր պահում, իսկ մնացած ամբողջ ազգաբնակությունը, բայց մանավանդ ռայան, նրա ստրուկն էր։

3

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

Հայոց ժամանակակից պատմության ամենախոշոր, ամեն ինչ վճռող և բացատրող հատկությունն այն է, որ նա կազմվում է հայ գաղութների հզոր ազդեցության տակ, համարյա նրանց ձեռքով միայն։ Բուն Հայաստանն ապրել է սկսում իր գաղութներում ստացած գաղափարներով, ցուցումներով, ներշնչած շարժումներով, նա, տգետ և հետամնաց մի աշխարհ, իր վիճակի տերը չէ, իր սեփական դատողությունը չունի, այլ լոկ գաղութային զարգացման հլու և հնազանդ անդրադարձումն է։ Հասկանալ և բացատրել այն ամենը ինչ XIX—XX դարերում կատարվեց բուն Հայաստանում այնպիսի արագասահ ուժգնությամբ, որպիսին չէ տեսել Հայոց պատմությունն իր առաջին օրերից, երբեք չի կարելի, եթե նրանից անջատենք գաղութները։ Այս բոլորովին անհնարին է, որովհետև ժամանակակից պատմության ընթացքում գաղութների և մայր երկրի կյանքը միախառնված, ամբողջացած է, և անկարելի է բաժանարար գծեր գծել երկու կողմերի մեջ։ Չափազանց նշանավոր դեր կատարել են, մանավանդ, երկու խոշոր գաղութներ. Թիֆլիսն՝ արևելյան հայության մեջ և Կ. Պոլիսն՝ արևմտյան հայության մեջ։ Ուստի նախքան նրանց կատարած գործին դիմելը, մենք ծանոթանանք նրանց հետ, իբրև որոշ պատմական հանգամանքների ուժով ստեղծված առանձնահատուկ միջավայրերի հետ, և այսպիսով հող ունենալ մեր ոտների տակ՝ նրանց կերտած պատմությունը սկզբից հիմնավորելու համար։

1. Թիֆլիս։ Վրաստանի անվերապահ կցումը Ռուսաստանին ուներ մեծ նշանակություն հայության համար ամենից առաջ հենց այն պատճառով, որ այդ նոր քաղաքական դրությունն առանձնապես կարևոր դիրքի մեջ էր դնում Վրաստանի հայությանը, որ աչքի էր ընկնում նախ և առաջ իր թվական խոշոր կազմով, մանավորապես վրաց պետության արևելյան մասերում, այն է Քարթալինիայում և Կախեթում։ 1801 թվին, կցումը հայտարարելուց հետո, երբ ռուսական նոր նահանգը վարչական բաժանումների էր տրոհվում, կազմվեց այդտեղ եղած բոլոր գյուղերի անվանական ցուցակը, որի մեջ նշանակվեց յուրաքանչյուր գյուղի դիմաց, թե ինչ ազգագրական տարրերից էր կազմված բնակչությունը, առանց, սակայն, նրանց թվական քանակը պարզելու։ Այդ ցուցակից մենք իմանում ենք, որ Վրաստանի այդ մասում կային 53 զուտ հայաբնակ գյուղեր և 147 այնպիսի գյուղեր, ուր ազգաբնակությունը բաղկացած էր հայերից և վրացիներից։ Բացի դրանից գոյություն ունեին և 6 գյուղ՝

խառն հայ և թուրք ազգաբնակությամբ[1]։ Մի ուրիշ աղբյուրից, որ վերաբերում է XIX դարի քսանական թվականների սկզբին և որ միանգամայն վստահելի չէ իբրև լավ ճշտված վիճակագրություն, ուստի կարող է լոկ միայն մոտավոր հասկացողություն տալ, մենք տեղեկանում ենք, որ հայ գյուղական ազգաբնակությունը Վրաստանի սահմաններում (հաշված և Գանձակի գյուղերը), 7000 տնից ավելի չէր[2]։ Ամբողջ գյուղական ազգաբնակությունը Վրաստանում, նրա մեջ, իհարկե, և հայերը, ճորտ էր, կազմելով կամ պետության, կամ ազնվական դասակարգի և կամ թե եկեղեցու սեփականությունը։ Իր քանակությամբ հայ գյուղացի ազգաբնակությունը կազմում էր Վրաստանի քրիստոնյա ազգաբնակության ավելի քան մի երրորդ մասը, իսկ վրացի գյուղացիությունը՝ պակաս քան երկու երրորդականը[3]։

Քաղաքներում պատկերը բոլորովին այլ էր։ Ավատական Վրաստանը XIX դարին հասել էր պահելով ամենայն հարազատությամբ իր միջնադարյան ճորտատիրական կերպարանքը, որի ամենախոշոր գիծն այն էր, որ ժողովրդի ահագին զանգվածը ճորտ գյուղացիությունից էր կազմված, իսկ նա ապրում էր իր հողատեր ազնվականության հետ գյուղերում, խմբվելով ավատական ամրոցների շուրջը։ Քաղաքներում վրացի տարրը շատ նվազ փոքրամասնություն էր ներկայացնում, քանի որ քաղաքային դասակարգ նա դեռ համարյա բոլորովին չէր դարձել, ուստի և քաղաքների ազգաբնակությունն Արևելյան Վրաստանում բաղկացած էր գլխավորապես հայերից, իսկ Արևմտյան Վրաստանում՝ հրեաներից[4]։ Եվ իրավ, վերևում հիշված մեր աղբյուրը Արևելյան Վրաստանի քաղաքային ազգաբնակության մասին տալիս է այսպիսի թվանշաններ. Թիֆլիս՝ 2951 տուն հայ և միայն 417 տուն վրացի և ռուս[5]։ Գորի՝ 331 տուն հայ և 121 տուն վրացի և ռուս, Անանուր՝ 123 և 24, Թելավ՝ 236 և 74, Սղնախ՝ 377 և 12[6]։

Դարերի ընթացքում այս խոշոր տնտեսական երևույթը կատարվում և ամրապնդվում էր ամենայն օրինականությամբ, հենվելով վրաց թագավորների ընդգրկած քաղաքականության վրա, որ աշխատում էր ամեն տեսակ դյուրություններով և արտոնություններով գրավել հայերին՝ թե եղած քաղաքներում բնակեցնելու և թե նոր քաղաքներ շինելու համար։ Մենք ունենք այս բանն ապացուցող մի շատ հետաքրքրական վավերագիր։ 1660 թվականին վրաց Ռոստոմ թագավորը կառուցանում է Մեփիսքալաքի (թագավորի քաղաք) անունով քաղաքը (այժմ Ախալքալաք՝ Գորու գավառում), որ այսօր էլ բնակեցված է բացառապես հայերով։ Իր քաղաքի համար թագավորը բնակիչներ ընտրեց արքունական գյուղացի հայերից, որոնց համար շինեց նաև եկեղեցի և վանք։ Այս բոլորը նա պատմում է իր արձանագրության մեջ, որ վրացերեն լեզվով փորագրել է եկեղեցու վրա։ Բնորոշ է, մանավանդ, թագավորի արտահայտությունը. «Մեփիսքալաքի հայերի քաղաքային գոյության համար»[7]։

---

1 «Акты Кавк. Арх. Ком.», т. I, с. 461—474.

2 Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը..., հ. Ա, էր. 139։

3 Անդ., էր. 140։

4 Платон Иоселиани, Города, существовавшие и существующие в Грузии, Тифлис, 1850, с. 81.

5 1832 թվին ռուս կառավարության կատարած մարդահամարը ցույց տվեց, որ Թիֆլիսում ապրում են արական սեռի հայեր 9447, վրացիներ՝ 1947 և թուրքեր՝ 187 («Обозрение российских владений за Кавказом», ч. I, Спб., 1836, с. 196)։

6 Երիցյան, էր. 139։

7 Иоселиани, Города..., с. 27.

Բայց Վրաստանի սահմաններում հայության կատարած չափազանց խոշոր դերի ամենամեծ հուշարձանը Թիֆլիս մայրաքաղաքն է։ Թեև վրաց պատմական ավանդությունները ասում են, թե Թիֆլիսը հիմնարկվել է Վախթանգ Գուրգասլան թագավորի ձեռքով, V դարում, բայց կարելի չէ ասել, թե մինչև այդ միանգամայն անբնակ էր Քուռ գետի աջ ափին, ուր գոյություն էր ստանում քաղաքը։ Այստեղ, աջ ափին են այն հռչակավոր ծծմբային ջերմուկները, որոնք անուն տվին քաղաքին[1]։ Հինգերորդ դարից էլ շատ առաջ բնակության այդ սքանչելի հարմարությունն, անկասկած (և այս հայացքի մեջ համաձայն են բոլոր ուսումնասիրողները), իր շուրջն էր համախմբում մարդկային բնակություն։ Եվ շատ հավանական է, որ այդ նախաթիֆլիսյան բնակչությունը հանքային ջրերի շուրջն եղած լինի հայերից։ Այս հավանականությունն ապահովում է Հին Հայաստանի հյուսիսային սահմանագիծը, որի մասին մենք ճիշտ տեղեկություն ունենք շնորհիվ մի շարք հույն և հռոմեացի հեղինակների (Ստրաբոն, Պլինիոս, Դիոդորոս, Պտղոմեոս, Պլուտարքոս, Տակիտոս), որոնք միաբան վկայում են, թե այդ սահմանագիծը կազմում էր Քուռ գետը[2]։ Այս դասական մատենագիրներից Ստրաբոնը մատնանշում է և մի վերին աստիճանի կարևոր մանրամասնություն։ Նա ասում է, թե Արագոս գետը, որ գալիս է Կովկասի լեռնաշղթայից և թափվում է Քուռի մեջ[3], կազմում է սահման Իբերիայի (Վրաստանի), Հայաստանի և Ալբանիայի (Աղվանքի) մեջ[4]։ Միևնույն փաստը նա կրկնում է, ասելով, թե Հայաստանից Իբերիա մտնել կարելի է թե Քուռի և թե Արագոսի կիրճերով[5]։ Գորին առաջինն էր Վրաստանի քաղաքների մեջ Թիֆլիսից հետո, ոչ միայն իր գրաված վերին աստիճանի կարևոր ռազմագիտական դիրքով Քարթլինիայի սրտի մեջ, այլև իր բազմամարդությամբ, առևտրով և գեղեցկությամբ[6]։ Եվ իր այս բոլոր հատկություններով Գորին բացառապես հայաբնակ քաղաք էր մինչև XIX դարի վերջերը[7]։ Այսպիսով ահա, Արևելյան Վրաստանի երկու կարևորագույն քաղաքները հայկական էին ըստ ազգագրական գունավորման, և այս վերին աստիճանի նշանավոր մի հանգամանք է հայ-վրացական հարաբերությունների մեջ, մի հանգամանք, որ հազիվ թե իր նմանն ունենա Արևելքի պատմության մեջ, և որ ցույց է տալիս, թե որքան օրինապահ և հավատարիմ էր հայ ժողովուրդը Վրաստանի պետականության վերաբերմամբ, որ աստիճան անկեղծ պաշտպան հայրենիքի շահերի։ Մի լռիկ համաձայնությամբ երկու ազգերի մեջ դիրքերը բաժանված էին այսպես. վրացիներին պատկանում էր իշխանություն, կառավարելու իրավունքն առավելապես, հայերին՝ կուլտուրական աշխատանքը դարձյալ առանձնապես։ Այս, իհարկե, չի նշանակում, թե երկու դրությունների մեջ չինական պատ էր քաշված։ Վրաց ազնվականության մեջ կային և շատ հայեր։ Արտոնատեր էր իշխող ու կառավարող կողմը, բայց պակաս չէին և այն արտոնությունները, որոնք հայ կուլտուրական տարրի դիրքն էին ամրապնդում՝ իրենց ասպարեզում հարատևելու համար։

Այս վերին աստիճանի կարևոր հանգամանքն է պատկերացնում «մոքալաք» հասկացողությունը։ Մոքալաք նշանակում է քաղաքացի, և այս անունով կոչվում էին առևտրականները Թիֆլիս և Գորի քաղաքներում, ամենքը, բացառապես հայ ազգի[1]։ Մոքալաքներն ունեին մի շարք արտոնություններ։ Ինչպես ազնվական դասակարգն էր բաժանված մի քանի աստիճանների, այնպես էր և մոքալաքների դասակարգը։ Կային առաջնակարգ, երկրորդական, երրորդական կարգի մոքալաքներ, ինչպես այս ցույց են տալիս Վախթանգ թագավորի օրենքները։ Իրենց իրավունքների մեջ մոքալաքները հավասարեցված էին ազնվականներին։ Այսպես, առաջնակարգ մոքալաքի սպանության դեպքում նրա արյունը գնահատվում էր այն չափով, ինչով գնահատվում էր երկրորդ կարգի ազնվականի արյունը[2]։ Թիֆլիսի մոքալաքները բարձր էին Գորու մոքալաքներից։ Մոքալաքի առջև չէին փակված պետական պաշտոնատարության դռները։ Նա կարող էր լինել պաշտոնյա, կառավարիչ, ինչպես կարող էր լինել նաև արհեստավոր։ Սակայն գլխավորապես նրա զբաղմունքն առևտուրն էր և նա էր կազմում դրամատեր դասակարգը, բուրժուազիան, որ, ինչպես տեսնում ենք, Վրաստանում էլ այնպես փայփայված էր, ինչպես ուրիշ երկրներում։ Վրաստանի դժբախտությունն այն ժամանակներում, երբ այդ խեղճ երկիրը հարկադրված էր տարեկան հարկ տալ Պարսից կառավարության՝ աղջիկներով և տղաներով, մի հարկ, որ կոչվում էր «ասբար», մոքալաքն ազատված էր այդ դժնդակ ծանրությունից և «ասբարի» փոխարեն տալիս էին փրկանքի գումար[3]։ Եթե մոքալաքը կատարեր սպանություն, այդ հանցանքի համար նա մահապատժի չէր ենթարկվում ինչպես ցած խավերի մարդիկ, այլ միայն տալիս էր տուգանք դրամով։ Նա կարող էր և գյուղացիներ գնել[4]։

Որպեսզի պարզ լինի արդյունաբերական ուժին ցույց տված այս փայփայանքը, նրան պետք հակադրենք մյուս մեծ ուժը՝ ազնվականությունն, օգտվելով այն նկարագրություններից, որոնք գտնվում էին ռուսաց այն պաշտոնական հրատարակության մեջ, որից մենք քաղվածքներ ենք մեջ բերում մինչև այստեղ[5]։ Վերցնենք նախ այդ դասակարգի թվական կազմը միմիայն Թիֆլիսում։ Այստեղ դեռ ռուսաց տիրապետությունից մի 30—35 տարի էլ հետո, իշխանների թիվն էր 280 և մյուս տեսակ ազնվականների թիվը՝ 225, ընդամենը, ուրեմն, 500-ից ավելի անհատներ, որոնք լոկ իրենց ծննդյան իրավունքով ապրում էին ժողովրդի աշխատած հացով։ Իսկ թե ինչ էին անում վրաց արքունիքի փայլը կազմող այդ վայելողները, այս հարցին հետևյալ կերպ է պատասխանում մեր լավատեղյակ աղբյուրը. «Խաղաղության այն կարճատև ժամանակներում, որոնք գալիս էին Վրաստանի վրա, իշխաններն ու ազնվականները (թավադներն ու ազնաուրները) թողնում էին Թիֆլիսի արքունիքը, ուր կարող էին ճաշակել հանրակեցության վայելքները, հեռանում էին իրենց կալվածները, Վրաստանի խորքերը և այստեղ որոնում էին առանձին փափկակեցության կոպիտ հաճույքները, քիչ հոգ տանելով իրենց կալվածների բարեկարգման մասին։ Բարակի, բազեի և ուրուրի որսորդությունը նրանց գլխավոր զբաղմունքն էր կազմում։ Իշխանի և նրա

1 Վրացերեն «թփիլի» բառից, որ նշանակում է տաք։

2 Х. Вермишев, Материалы для истории грузино-армянских отношений, Спб., 1904, с. 9—17.

3 "Géographie de Strabon", Paris, 1904, t. II, p. 404.

4 Strabon, t. II, p. 405.

5 Ibid., p. 404.

6 Иоселиани, Города.. с. 43.

7 Е. Вейденбаум, Путешествие по Кавказу, с. 372.

1 Միայն Թիֆլիսը Ռուսաստանին միացնելուց հետո էր, որ մի վրացի ընտանիք գրվեց մոքալաքների դասակարգի մեջ (Е. Вейденбаум, с. 312)։

2 «Сборник законов грузинского царя Вахтанга VI», Тифлис, 1887, с. 13.

3 «Обозрение российских владений за Кавк.», I с. 211. Տե՛ս նաև Иоселиани, с. 83.

4 Ibid., с. 211.

5 Ibid։ Այս գործը կատարված է և հրատարակված Նիկոլայ Ա. կայսեր հանձնությամբ, հետևաբար նրան կարելի է ընդունել իբրև պաշտոնական բնավորություն ունեցող։ Տեղեկությունները վստահելի են և ստուգված։ Վրաց ազնվականությունը փայփայվում էր ռուսական ցարերի կողմից, այնպես որ չի կարելի ասել, թե այս հրատարակության մեջ տեղ է գտել թշնամական կամ նույնիսկ միտումավոր վերաբերմունք դեպի վրաց ազնվականները։

որյարի գյուղագնացությունը հաճախ ոչնչացնում էր նրա ստորադրյալների աշխատանքը, և սրանք չէին էլ կարող սպասել որևէ վարձատրության։ Սպառելով մի գյուղի բոլոր միջոցները, տիրողներն անցնում էին մյուս գյուղը, ստանալով ամեն տեղ ընծաներ[1], կամ իբրև նշան արտահայտության ուրախության, որ տերը շնորհ է բերել գյուղը կամ թե ճանապարհորդելու ժամին, հիշատակի համար[2]։ ... Այսպես գոյացել են վրացու բնավորությունն ու պահպանմունքները, ինչպես հետևանք նախկին ժամանակների առաջացրած հանգամանքների, որոնք հակադիր ուղղությունների մի խառնուրդ են ներկայացնում։ Հակում ձեռք բերելու մի բան, առանց հաշվի առնելու միջոցները և ատելություն դեպի արդեն ձեռք բերածը, հպարտություն ցածրերի առաջ և շողոքորթ պատրաստականություն իշխանության հանդեպ, կրքոտ սեր դեպի ամեն տեսակ խաղեր, ուրախության և սրախոսության մեծ փափագ, անհոգ դատարկապորտություն, անուշադրություն դեպի այն միջոցները, որ տալիս է Վրաստանի շքեղ բնությունը՝ ահա վրացի տիրողների հիմնական բնավորության, պարապմունքների և ապրուստի եղանակի էական գծերը։ Վրաստանի ազնվականները պճնամոլ են, վատնող՝ այս են նախկին անհոգ կյանքի հետևանքները. նրանց զարդարանքների արտաքին փայլը, մեծարժեք զենքը, թանկագին զարդերով ձին՝ ահա ինչի վրա են նրանք ծախսեր անում, մինչդեռ նրանց բնակարանները թողնված են անխնամ, տների մեջ մաքրություն չի տիրում։ Այս հակադրությունները դրսևորում են մի զավեշտի զգացմունք՝ փառամոլություն։ Կանայք էլ պակաս պճնամոլ չեն և անհոգ։ Թիֆլիսում նրանց միակ զբաղմունքն է զարդարել իրենց և լավ հագնվել»[3]։

Հասկանալի է, որ այսպիսի մի դասակարգը չպիտի հարստություններ ստեղծեր և հավաքեր պետության համար։ Եվ հասկանալի է, որ արդյունաբերող, վաճառաշահություն պահպանող տարրերը պիտի առանձնապես հովանավորված դիրքի մեջ գտնվեին, որպեսզի պետությունը գոյությունը պահպանելու համար անհրաժեշտ տնտեսական միջոցները գտներ։ Թագավորն անձնապես էլ ամեն տեսակ հարգանք և ուշադրություն էր ցույց տալիս մոքալաքներին, որոնցից ստանում էր տարեկան որոշ հարկ, «մախտա» անունով և որոնց օգնությանն էր դիմում ամեն անգամ, երբ դրամական փոխառության կարիք էր զգում[4]։ Եվ հենց ինքն՝ ազնվականությունն էլ իր շվայտ և դատարկապորտ կյանքը կեր ու խումի, զարդ ու զարդարանքի վայելքներով լցնելու համար կարոտում էր դարձյալ նույն դասակարգի օգնության, որ կատարվում էր դարձյալ փոխառությունների ձևով։

Սակայն միայն մոքալաքներից չէր բաղկացած Թիֆլիսի հայկական արդյունաբերող ազգաբնակությունը։ Կարևոր դեր խաղում էին և արհեստավորները, որոնք մոքալաքներից անհամեմատ ավելի բազմամարդ մի դասակարգ էին կազմում։ Եթե առևտուրը Թիֆլիսում բացառապես հայերի ձեռքին էր գտնվում, արհեստներն արդեն այն ասպարեզն էին, ուր տեղ էին գտնում և ուրիշ ազգություններ, բայց ահագին մեծամասնությունը դարձյալ հայերին էր պատկանում։ 1832 թվին հավաքված պաշտոնական տեղեկությունները ցույց տվին, որ Թիֆլիսի 9447 հայ (արական սեռի) բնակիչներից միայն 1400

1 Դրանք իսկապես կամավոր ընծաներ չէին, այլ պարտադիր ճորտային տուրքեր։

2 Ժողովրդի վրա ընկած ծանրությունը չափելու համար դեռ պետք է իմանալ, որ ազնվականությունը միայն Թիֆլիսում չէր ապրում և ժամանակ առ ժամանակ գնում դատարկելու գյուղերը. գավառներում էլ մշտապես ապրում էին հազարավոր այդպիսի տիրող-վայելողներ, որոնց գործը պարբերական չէր, այլ մշտական։

3 «Обозрение российских владений за Кавказ.», I, с. 204—206.

4 Е. Вейденбаум, с. 312.

հոգին են պատկանում մոքալաքների դասակարգին[1], մնացած քանակությունը (մոտ 8000 հոգի) եթե ոչ ամբողջովին, գեթ իր մեծագույն մասով մտնում էր արհեստավոր դասակարգի մեջ։ Այս հոծ բազմությունը, նույն տեղեկություններին նայած, բաղկացած էր արքունական, եկեղեցական և մասնավոր կալվածատիրական գյուղացիներից, ասել է՝ գտնվում էր ճորտային դրության մեջ, ինհարկե, չէր վայելում մոքալաքների արտոնությունները, բայց չի կարելի ասել, թե միանգամայն իրավազուրկ կացության էր մատնված։ Հայ արհեստավորները բերել էին իրենց հետ և Թիֆլիսում հաստատել էին Արևելքին հատուկ այն նշանավոր արհեստակցական կազմակերպությունը, որ հայտնի է «համքարություն» անունով։

Այս հիմնարկության մասին մենք մանրամասն խոսել ենք իր տեղում[2]։ Այստեղ կասենք միայն այն, որ այդ արհեստակցական միությունների ցանցը խիտ էր Թիֆլիսում և շատ գործոն իր իրավասության սահմանների մեջ։ Եվ որ գլխավորն է, արհեստավոր և մոքալաք դասակարգերը վիհերով չէին բաժանված իրարից, այլ, ընդհակառակն, միացնում էին իրար հետ իրենց շահերը, շատ մոտիկ շփումներ ունեին իրար հետ։ Մենք արդեն հիշատակեցինք, որ մոքալաքը կարող էր և արհեստներով պարապել։ Եվ առհասարակ, երկու դասակարգերը շատ կողմերով էին իրար մոտենում ընդհանուր տնտեսական պահանջների հողի վրա, այնպես որ մոքալաքը մի տեսակ միջին օղակ էր դառնում հասարակական շերտավորումների այն շղթայի մեջ, ուր մի ծայրը հոգևորական և աշխարհական ազնվապետությունն էր, մյուսը՝ ստրկական դրության մեջ գտնվող աշխատավոր ժողովուրդը։ Նշանավոր դեր միացուցիչ օղակի դրության տալիս էր ներքին վարչական կազմակերպությունը, որ ինքնավարական որոշ իրավակարգ էր ստեղծում Թիֆլիսի ամբողջ հայության համար։ Այդ ինքնավարությունն ուներ այսպիսի հանգամանքներ։ Մոքալաքներն ունեին իրենց միջից ընտրված դատավորները, որոնք վճռում էին քաղաքացիական վեճերը դասակարգի անդամների մեջ[3]։ Այսպիսի դատաստանական ինքնավարություն գոյություն ուներ և յուրաքանչյուր համքարության մեջ։ Բայց հարկերը և տուրքերը համքարների վրա բաժանելու և ստանալու համար յուրաքանչյուր տարի քվեարկությամբ ընտրվում էին երեք մոքալաքներ, որոնք աշխատում էին համքարական միությունների գլխավորների՝ «ուստաբաշիների» հետ[4]։ Այսպիսով կազմվում էր մի տեսակ վարչական միություն, որ դնում էր Թիֆլիսի հայությունը ներքուստ ինքնավար շրջանակի մեջ։ Եվ այս միավորիչ շրջանակն անվթար պահողն ու ամրապնդողը զուտ հայկական մի իշխանություն էր, որ կոչվում էր մելիք, և որի իրավասության միայն Թիֆլիսը չէր ենթարկվում, այլև նրա շրջակաները։ Ռուսաց տիրապետության սկզբում մելիքի պաշտոնը նույնացվեց ոստիկանապետի (պոլիցայ մայստեր) պաշտոնին[5], բայց վրացական կառավարության միջոցին նա, անկասկած, ավելի բարձր նշանակություն ուներ և այս ցույց է տալիս հենց այն հանգամանքը, որ հայ մելիքին ազգաբնակությունը վճարում էր մի շարք տուրքեր զանազան տեսակ առիթներով[6]։ Շատ նշանակալից էր մելիքի մի արտոնությունը։ Վրաստանում անշարժ կալվածների վաճառման և գնման թղթերը, կալվածագրերը վավերացված էին համարվում, երբ նրանց վրա

1 «Обозр. росс. влад.», с. 196.

2 Տե՛ս Հատ. Գ., գիրք Ա.

3 «Акты...», т. I, № 593.

4 «Обозрение росс. влад.», I, с. 215.

5 «Акты...», I, № 538.

6 Ibid., № 159.

տրվում էր Թագավորի կնիքը։ Բացառություն կազմում էին միայն Թիֆլիսի անշարժ կալվածները, որոնց վաճառման և գնման թղթերի վավերականության համար բավական չէր միայն Թագավորի կնիքը, այլ պետք էր, որ լիներ նաև հայ մելիքի կնիքը[1]։ Այս շատ կարևոր արտոնությունը, որ մանավանդ շատ հատկանշական է դառնում, երբ նկատի ենք առնում, որ Թիֆլիսի անշարժ կալվածները գլխավորապես հայերին էին պատկանում, մի խոշոր փաստ է, որ ապացուցում է, թե մելիքն իր իշխանությամբ մարմնացնում էր Վրաստանի մայրաքաղաքի հայության ինքնավարության սկզբունքները։

Բացի մելիքից, Թիֆլիսի մեջ, երբեմն պաշտոնյա բարձր դիրքով, հիշատակվում է և մամասախլիսը, որ բառացիորեն նշանակում է «տան հայր», բայց որի պաշտոնը որոշված չէ պարզ կերպով։ Բայց կա այն հանգամանքը, որ մամասախլիսի պաշտոնը, գոնե XVIII դարում, միացված էր մելիքի պաշտոնին, ասել է դարձյալ հայի ձեռքում էր գտնվում, իսկ այս ցույց է տալիս, թե մամասախլիսությունը հակադրություն չէր մելիքությանը։ Բայց մելիքության բնույթն այսքանով չի սպառվում։ Պետք է ավելացնել և այն, որ այդ պաշտոնը ժառանգական էր մի տոհմի մեջ։ Այսպես, 1714 թվականից[2] մինչև ռուսական տիրապետությունը նա պատկանում էր Բեհբության իշխանական տոհմին։ Այս կարգը չէր խանգարվում և այն ժամանակ, երբ Թիֆլիսում հաստատվում էին օսմանյան թուրքերը կամ պարսիկները, որոնք իսկույն հաստատում էին Բեհբությաններին իրենց այդ ժառանգական վարչական պաշտոնի մեջ։

Այս տոհմը ներկայացնում է հետաքրքրական մի հանգամանք ևս, և այս այն կողմից, որ նրա նախահայր Բեհբութին մենք հանդիպում ենք XVII դարի կեսում «խոջա» տիտղոսով[3], ասել է՝ այն ժամանակ պատկանում էր Թիֆլիսի մոքալաքների դասակարգին։ Միջին դասակարգից անցնելով առաջին դասակարգը, տոհմը XVIII դարի սկզբում այնքան արդեն կարևոր դեր էր գրավում Վրաստանի ազնվականության մեջ, որ ժառանգություն էր ստանում Թիֆլիսի մելիքությունը, իսկ թե ինչ դեր էր տոհմը խաղում քաղաքի հայ համայնքի ազգային գործերի մեջ, այդ ցույց է տալիս իշխան Դարչի Բեհբությանը, որ վերջին մելիքն էր և այնքան խոշոր դեր կատարեց Վրաստանը Ռուսաստանին կցելու գործի մեջ, իբրև ռուսասեր կուսակցության ամեհի և հեղինակավոր անդամներից մեկը։ Ռուսաց տիրապետությունը հաստատվելուց հետո էլ երկար ժամանակ այս իշխանավորը գործադրում էր այն իրավունքները, որոնք ոչ միայն իր տոհմին, այլև իր դասակարգին էին պատկանում դարերի ընթացքում և որոնց նկարագրությունը մեր հետազոտողներից մեկը տալիս է մեզ հետևյալ եղանակով. «Թիֆլիսի զբեթե լիազոր տերը լինելով, նա ամենքի հրամայող էր և իշխող... Միշտ մեծարվում էր որպես քաղաքիս մեջ ամենից մեծ ազդեցություն ունեցող անձ։ Նրա այդ ազդեցությունը տարածված էր նաև Վրաստանի հայոց հոգևոր վարչության վրա, և էջմիածնի կուսակալների առաջն էլ հարգելի էր նրա ձայնը։ Նա տեր էր համարվում իր պապերի շինած քաղաքին կուսանոց վանքի, Նորաշեն, Մուղնի և քանի մի ուրիշ եկեղեցյաց թե Թիֆլիսում և թե շրջակա գյուղերում։ Նորանից էր կախված այդ եկեղեցիներում քահանա նշանակելը կամ ավագ քահանայություն տալը։ Նա հրամայում էր առաջնորդին այսինչ տիրացուին

1 «Акты...», I, № 154.

2 Ibid., № 577

3 Ա. Երիցյան, *Թիֆլիսի հայք և նոցա վիճակագրությունը* («Փորձ», ամսագիր, Թիֆլիս, 1879, № 10, եր. 13)։

քահանա ձեռնադրել, և այդ հրամանը անմիջապես պիտի իրագործվեր։ Նա քահանային հայրաբար խրատում էր ապտակներ տալով կամ չիբուխը վրան կոտրելով։ Երկրիս հայ եկեղեցիքը այն ժամանակ դեռևս երեցփոխներ չունեին, վասն որո հիշյալ եկեղեցյաց եկամուտները նմանապես կենտրոնանում էին իշխանի ձեռքին, և նա պարտավոր չէր հաշիվ տալ ոչ էջմիածնին, ոչ առաջնորդին, ոչ քահանային և ոչ ժողովրդին։ Թե որ աստիճանի արհամարհական ձևով էր վարվում նա հոգևորականների հետ, բավական է ասել, որ քահանայքը ժամերով սպասում էին նրա դռանը և շատ սակավ արժանանալով իշխանին երեսը տեսնելու, եկեղեցական գործերի մասին ծառայի բերանովն էին հետը խոսում։ Երբ առաջնորդի հետ էլ տեսնվել էր կամենում, նա ծառա էր ուղարկում և կանչել տալիս նորան յուր մոտ։ Եվ Վրաստանի արքեպիսկոպոս առաջնորդը իշխանին ներկայանալիս՝ դեռ փողոցում փիլոն կամ շուրջառ էր գցում վրան և այդ զգեստով, քանի մի ժամանակ դռանը սպասելուց հետո, ներս մտնում, խոնարհ ողջույն տալիս չիբուխ քաշող կնյազին և չէր համարձակվում նստել, մինչև որ իշխանը չհրամայեր։ Նա սեփականացրել էր յուրյան առաջնորդի հոգևոր իրավունքները և ինքն էր որոշում չհաս և հաս պսակները, բաժանում էր ամուսիններին, վճռում էր կտակների, հոգեբաժինների և կողոպուտների գործը, իրավունք էր տալիս ննջեցյալներին եկեղեցյաց գավիթներում թաղելու, խլում էր ծուխերը մեկ քահանայից և տալիս մյուսին։ Երբ իշխանը ցանկություն էր հայտնում ժամ գնալու, քահանայք իրավունք չունեին ժամասացությունն սկսելու, մինչ նա չգար»[1]։

Բոլորովին սխալ կլիներ այս հատկությունները վերագրել իշխան Դարչիի անձնական հակումներին, խառնվածքին կամ քմահաճույքին։ Իշխանը գործադրում էր սերունդներից ժառանգաբար իրենց անցած ավատական իրավունքները, որոնց մեջ անաղարտ պահվել էր նույնիսկ եկեղեցիների սեփականության կամ, ուրիշ խոսքով, պատրոնության առանձին, ինքնուրույն հիմնարկությունը, որ մենք տեսանք Միջին դարերում Շիրակի մեջ և որ, ինչպես գիտենք, արևմտյան (բյուզանդական և լատինական) եկեղեցիներից էր վերցված[2]։ Եվ այդ տիպիկ ավատական տիրոջը մենակ չէր կանգնած հայ հասարակության գլխին։ Նրա հետ էին մի մեծ խումբ մարդիկ առաջ ու առաջ, իհարկե, նրա դասակիցները, իշխաններ Բեհբության թե ոչ Բեհբության տոհմերից, ապա ազնվականներ (Հովսեփ Շաղբաթյան, Թումա Զորղանյան, Մկրտում Սուրֆունյան), հետո քահանաներից նրանք, որոնք հեղինակություն էին ստացել (վանքի Տեր-Ղազար Լազարյանը, վանքի տեր Հովհաննես Սարգսյանը, ս. Նշանի տեր Նիկողոսը) և, վերջապես, մոքալաքների առաջնակարգները (Մունթոյենց Մկրտում, Բաստամենց Բեժան)։ Ահա մեր առջև մի խումբ, որ իր ձեռքն է առել Թիֆլիսի հայության ազգային գործերը, կառավարում է միասնաբար, շահվում է ամեն մեկն ինչպես կարող է և որքան կարող է։

Այսպես է ահա ներկայանում, որքան կարելի է հետևցնել մեզ հասած կցկտուր տեղեկություններից, Թիֆլիսի հայոց ներքին ինքնավարական կազմակերպությունը։ Այժմ առաջ է գալիս մյուս կարևոր հարցը՝ ինչ դեր կատարեց Թիֆլիսի հայությունն իր այդ դարավոր արտոնված դրությամբ։

Այս հարցին ամենից առաջ պատասխանում է այն հռչակը, որ վայելում էր Թիֆլիսը հին ժամանակներից Արևելքում։ Մենք տեսնում ենք շարունակ, որ թեև մեծ չէ Թիֆլիսն իր տարածությամբ և ազգաբնակությամբ, բայց քա-

1 Երիցյան, Ամեն. հայոց կաթող., հ. Ա, եր. 86—87։

2 Տե՛ս Բ հատոր, գիրք Բ։

րիշեն, գեղեցիկ և հարուստ քաղաքի համբավ ունի։ Մեր պատմագիրներից ոմանք շոշափում են նրա վերաբերմամբ մեծամեծ գովասանքներ։ Այսպես, Մովսես Կաղանկատվացին, նկարագրելով խազարների արշավանքը Թիֆլիսի վրա, որ տեղի ունեցավ VII դարում, գրում է. «Եւ պատեալ պաշարեցին զփափկասուն, վաճառաշահ, հռչակաւոր մեծ մայրաքաղաքն Տփխիս»[1]։ Քաղաքում գիզված հարստությունների մասին նույն պատմիչը հասկացողություն տալիս է, նկարագրելով, թե ինչ ավար վերցրին խազարները, երբ գրավեցին նրան. «Յայնժամ արկին զձեռս իւրեանց յարկեղս գանձուց մթերեալս. և ծանրաբեռնեալ ամենայն բազմութիւն զօրացն՝ բէքէին, զնէին առաջի իւրեանց բանտարկին շեղջս շեղջս և կոյտս կոյտս. մինչև այնչափ յաճախել բերել առաջի նորա, մինչև ձանձրացեալ ի հայել, տեսանել զանհամար թիւ տաղանդից ոսկւոյ և արծաթոյ»[2]. Տասներորդ դարի մատենագիր Ուխտանես եպիսկոպոսը տալիս է Թիֆլիսին «հրաշաշեն և հրաշալի հռչակաւոր և ականաւոր մեծ մայրաքաղաք» անունները, իսկ Աղվանից Եսայի կաթողիկոսը, որ ապրում էր XVIII դարի առաջին քառորդում, իբրև ականատես՝ այսպես է նկարագրում Թիֆլիսը. «Եւ զի ի յոլով ժամանակաց և այսր անդրդուելի էր ի թշնամեաց և խաղաղացեալ ի պատերազմէ ամենափարթամ և վայելուչ քաղաքն Տփխիս՝ և որպէս ամենացուն է յայտնի բազմաշխատք վաճառականք են աքք տեղւոյն և փափկասունք և գեղեցկատիպ կանայք, ուստերք և դստերք նոցա, և ըստ կենցաղոյն քաղաքավարութեան անձամբք ի բազմաց ապարանիւք գեղապաճուճօք զարդարեալ, կահիւք և կարասեօք ուռճացեալք և ըստ ժամանակի իշխանութեան Հայոց զամենայն սպասս և անօթն տանց և սեղանոց նոցա զյոլովս փոխանակ պղնձոյ արծաթեղէնս և ոսկեղէնս էին կազմեալ. իսկ ըհանգերձից և զգեստուց զարդուց ականակուռ զիպակաց մարգարտաշարաց պաճառութիւն զիտե՛ս որչափ որ միտք քո բաւեն։ Այլ վասն եկեղեցեացն շքեղութեան և պայծառութեան զի՞նչ ասացից. զի յոյժ շքեղացուցեալ էին ոսկեղենօք և արծաթեղէնօք և զիպակօք և ամենայն կահիւք և կարասեօք և անօթեղէն սպասիւք»[3]։

Արդ՝ այսպիսի հռչակ տասնյակ դարերի ընթացքում Վրաստանի մայրաքաղաքի համար կարող էր ստեղծել գլխավորապես, եթե ոչ բացառապես, նրա արդյունաբերող ազգաբնակչությունը և ամենից շատ, ինարկե, վաճառականությունը, մոքալաքությունը, ինչպես և ակնարկում է Եսայի կաթողիկոսը։ Եվ որովհետև քաղաքի առևտուրը ռուսաց տիրապետությունից երեք տասնյակ տարի անգամ անցնելուց հետո գտնվում էր բացառապես հայերի ձեռքին[4], ուստի արդարության պարտքը կատարած կլինենք, եթե ասենք, որ Թիֆլիսի հռչակված շքեղությունը, փայլը, փափկակեցությունը հայկական կուլտուրալի, հայ ժողովրդի շինարարական կորովի արդյունքներն էին։ Սակայն երբեք չպիտի մոռանալ, որ միջավայրը վրացական էր գերազանցորեն, և վրացական կուլտուրան, անկասկած, իր հզոր ազդեցությունն է ունեցել, իր աշխատակցությունն է մացրել այդ դարավոր աշխատանքի մեջ։ Վրաց արքունիքը, վրաց ազնվականության բարձր խավերը Թիֆլիսում են ապրել այն բոլոր ժամանակամիջոցներում, երբ Թիֆլիսն օտար նվաճողների ձեռքում չէր գտնըվում։ Եվ ահա այդ վայելող և սպառող տարրերը պահանջներ էին ստեղծում, ուղղություններ էին տալիս, պետական գանձարանի միջոցներն էին

1 Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից, Փարիզ, 1860, եր. 244։

2 Անդ, եր. 264։

3 Եսայի կաթ. Աղուանից, Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից դիպելոց յաշխարհին Աղուանից, Շուշի, 1839, էջ 68—69։

4 «Обозр. росс. влад.», с. 249.

ծախսում իրենց վայելքների վրա և այսպիսով իրենց խոշոր բաժինն ունեին մայրաքաղաքի զարգացած ճոխությունների և բարքերի մեջ։

Բայց մենք չպիտի կարծենք, թե երկու կուլտուրաների այս սերտ դարավոր աշխատակցությունը միշտ գնում էր հարթ ու հավասար, կատարյալ համաձայնության մեջ։ Թիֆլիսը մի բացառիկ բախտավոր անկյուն չէր մարդկության մեջ, ուր կողք կողքի ապրեին տարբեր աշխարհների մարդիկ առանց իրար հետ ընդհարվելու, իրար մեջ պայքար և մաքառում առաջացնելու։ Որքան և անձուկ ու սեղմ էին այն պայմանները, որոնք միացնում էին Թիֆլիսի վրացիներին և հայերին պետական մի ընդհանուր անհրաժեշտության մեջ, այնուամենայնիվ, նրանց մեջ էլ գոյություն ունեին, այն էլ խիստ չափերով, ազգային նախապաշարմունքները, որոնք հրահրում և հրդեհում էին մանավանդ նախապաշարմունքներից ամենասոսկալիի՝ կրոնականի, միջոցով...

1197 թվին պատահեց հայոց Ծառզատիկը։ Տոմարական սխալ հաշիվներով պարբերաբար հայերի մեջ պատահում էր այնպիսի տարի, երբ Զատիկը մյուս քրիստոնյա ազգերից մի շաբաթ հետո էր տոնվում։ Այս հանգամանքն ահագին անախորժություններ էր պատճառում հայ ժողովրդին, հարուցանելով դեպի նրան ուրիշների և մանավանդ հույների սուր անբավականությունը, որ հաճախ կռիվների և խռովությունների առիթ էր դառնում։ Եվ ահա այդ տարին վրացիները Թիֆլիսում, ինչպես ասում են, հույների դրդումով, իրենց վեճը հասցնում են մինչև այն աստիճանին, որ հարձակվեցին հայոց եկեղեցիներից մեկի վրա և կրակեցին նրան։ Եկեղեցու մեջ եղած հայերից այրվեցին քառասուն հոգի։ Հայերը զինված դուրս եկան վրեժ հանելու համար։ Խռովությունը սաստկացավ, և հայերը չհանգստացան, մինչև որ խոշոր գումարներ չստացան վրացիներից թե այրված եկեղեցին վերանորոգելու համար և թե իբրև այրված քառասուն հայերի արյան գին[1]։ Իսկ XVII դարում, Զաքարիա սարկավագ Քանաքեռցու պատմելով, տեղի ունեցավ այսպիսի մի դեպք։ Վրաց Ռոստոմ թագավորն ուներ Լվարսափ անունով մի մինուճար որդի, որը թագաժառանգն էր։ Մի օր թագավորը նրան իր հետ տանում է որսի՝ Ղարայազ անունով տեղը։ Այդտեղ որսի խռնված ժամանակ, գահաժառանգն սպանվում է գնդակով... Թագավորը փախչում, վերադառնում է Թիֆլիս, և այդտեղ քննություն է սկսվում անհայտ սպանողին երևան հանելու համար։ Քննությունը դրական հետևանքներ չի տալիս, բայց կասկածն ընկնում է երկու ազնվականների վրա, մեկը՝ հայ, Բայանդուր անունով, Մամիկոնյան տոհմից, Յոմանեցի, իսկ մյուսը՝ վրացի, Շիուշ անունով։ Դրանցից ո՞րն էր ոճրագործը։ Մեծ վեճ է սկսվում, որ ընդունում է ազգային սուր կերպարանք։ Վրացիները հային են հանցավոր համարում, հայերը՝ վրացուն։ Թագավորն այդ ժամանակ դիմում է դատաստանական մենամարտի միջոցին, այն է՝ որոշ ծեսեր կատարելուց հետո երկու կասկածվածները պիտի մենամարտեին իրար հետ, և ով որ հաղթվեր, նա էլ պիտի համարվեր հանցավոր։ Երկու ազգությունները մեծ անհամբերությամբ սպասում էին մենամարտի ելքին, և մեր պատմիչը նկարագրում է, թե ինչ միջոցներ էր գործ դնում «նենգ», «կայենանման ազգն վրաց» հայ Բայանդուրին խաբելու համար։ Սակայն հաղթությունը տանողը հայն է լինում, և այս բանն այնքան մեծ գոհություն է պատճառում հայ ժողովրդին, որ ի պատիվ Բայանդուրի, վրացերեն լեզվով երգ է շինվում։ «Յայսմ վայրի,— գրում է Քանաքեռցին,— վերք փոքր ինչ խոնարհեցան ի զոռոզութենէ իւրեանց։ Հայք երգս նախատանաց յօրինեցին լեզուաւ նոցա, և ամենայն տուն յաւարտ ասէին. «Շիուշ ծաղի, Բայանդուր մօուտայ», որ է «Շիուշ

1 Հ. Մ. Չամչեան, Պատմութիւն հայոց, հատ. Գ, Վենետիկ, 1786, եր. 161։

փախիր, Բայանդուրը գալիս է»։ Եւ յերգել զայս մանկանց հայոց, վրացից ամօթ կրէին»[1]։ Նշանակալից հանգամանք է, որ Բայանդուրն այս մենամարտի համար առանձին պատիվներ է ստանում վրաց թագավորից, իսկ պարսից շահը նրան նշանակում է, ինչպես ասում է մեր հեղինակը, «մեծ Տփխիս քաղաքի» իշխան, որ, անշուշտ, նույն այն մելիքությունն է, որ մենք հետո տեսնում ենք Բեհբությանների ձեռքին։

Եվ այսպես, հայ-վրացական հարաբերությունների մեջ դարերի ընթացքում կարմիր թելի պես անցնում են հակադիր սուր շփումներ, դասակարգային, ազգային և կրոնական նախապաշարմունքների հետևանքով։ Այս երևույթը չափազանց հետաքրքրական և որոշիչ է։ Ամենից առաջ նա այն է ցույց տալիս, որ երկու ազգերի կենակցությունը միանգամայն բնական կերպարանք ուներ։ Այդ անհավասար, իրավազուրկ մի կենակցության հանգամանքը չուներ, քանի որ յուրաքանչյուր կողմը միանգամայն ազատ էր իր համակրանքների կամ հակակրանքների մեջ, առանց այս առիթով որևէ զրկանք կրելու իբրև քաղաքացի, իբրև պետության բաղկացուցիչ մի մասը։ Այսպիսի ազատ վերաբերմունքն այն խոշոր առավելությունն էր բերում, որ յուրաքանչյուր կողմը բռնի, արհեստական դիմազրկության չէր ենթարկվում իր ազգային ուրույնության մեջ։ Խտրությունը զուգե հարկավոր էլ էր դառնում երկու կուլտուրաների ինքնապահպանության համար, որպեսզի մեկը մյուսին չկլանե, չոչնչացնե, այլ նրանք երկուսով աշխատեն, իրար լրացնելու և ընդարձակելու համար։

Եվ այդ երևույթին էլ ենք մենք մասամբ պարտական, որ պահպանվեց և անաղարտ մնաց Թիֆլիսի հայի կուլտուրական տիպը, մի տիպ, որ շատ թանկագին է և գրեթե աննման հայ ժողովրդի մշակած կուլտուրական տիպերի մեծ բազմության մեջ։ Մենք քիչ հետո կքննարկենք այդ տիպը, իսկ այստեղ, շարունակելով հայ-վրացական հարաբերությունների վերլուծումը, նկատենք, որ մյուս մեծ հանգամանքը նույն այդ հարաբերությունների մեջ հետևյալն է։ Ներքին անհամաձայնություններն ու հակամարտ բախումները, լինելով միայն հայտարար այն հանգամանքի, որ հայերը Թիֆլիսում ենթարկված ու սահմանափակված մի փոքրամասնություն չէին, այլ միանգամայն իրավատեր ազգաբնակություն էին և ամենևին չէին ենթարկված տիրող ազգության քմահաճություններին, իրապես միանգամայն անվնաս էին ընդհանուր պետական շահերի տեսակետից։ Կրոնի, դասակարգի ներշնչած նախապաշարմունքները չէին մոռացնում ընդհանուր հայրենիքի պահանջները, որոնք և վճռական րոպեին միացնում էին իրար արհամարհող, իրար հետ ընդհարվող տարրերը։ Պատմությունն այս ապացուցանելու համար ունի մի շարք փայլուն փաստեր։

Ասենք այստեղ հենց այն, որ Ծռազատկի առիթով ծագած անկարգությունները տեղի ունեցան Թամար թագուհու ժամանակ, երբ այդ շատ հռչակված թագավորության զարդն ու պարծանքը մի հայ էր՝ Զաքարե սպասալարը, վրաց և հայոց զորքերի գլխավոր հրամանատարը, որ իր հաղթություններով լցրեց ամբողջ Արևմտյան Ասիան։ Մենք արդեն գիտենք[2], որ այս բազմահռչակ զորավարի ժամանակ, մինչդեռ հայ ու վրացի կողք կողքի տված պատուհասում էին սելջուկյան թուրքերին, ետ մղելով նրանց Վրաստանի և Հայաստանի սահմաններից և հաղթական արշավանքներ մտցնելով նույնիսկ Իրանի խորքերը, նույն այդ ժամանակ վրացի և հայ հոգևորականները տարված էին խայտառակ չափերի հասած կրոնական վեճերով, որոնց

[1] «Զաքարիա սարկավագի պատմութիւն», Վաղարշապատ, 1870, հատ. Բ, գլ. ԽԸ։

[2] Տե՛ս հատ. Բ, գիրք Բ։

համեմատությամբ Ծռազատկի անկարգությունները կարելի է համարել անմեղ բան։

Անհաշտ վիճողները միանում էին մանավանդ այն ժամանակ, երբ կործանման վտանգն էր կախվում Վրաստանի գեղեցիկ մայրաքաղաքի վրա։ Երբ այդ արյունոտ Ծռազատկից հազիվ մի 28 տարի անցած, 1225-ին, Պարսկաստանից Թիֆլիսի վրա արշավեց Ջալալեդդին սուլթանը, ահագին մի բանակի գլուխ անցած, քաղաքի ազգաբնակությունը, ինչպես վկայում է վրաց տարեգրությունը[1], զենքի դիմեց՝ ինքնապաշտպանության համար, իսկ ազգաբնակությունը կազմված էր հայերից, վրացիներից[2] և պարսիկներից։ Վերջիններս, սակայն, շուտ դավաճանեցին քաղաքին, գաղտնի հարաբերություններ սկսելով սուլթանի հետ՝ քաղաքը նրա ձեռքը հանձնելու մասին։ Եվ թշնամին, ճիշտ որ, քաղաք մտավ նրանց պաշտպանության հանձնված դռներով։ Հայերն ու վրացիները, մոռանալով նույնիսկ թշնամուն, հարձակվեցին դավաճանների վրա[3] և ապա միայն կոտորվեցին կատաղի թշնամու ձեռքով։

Հենց ինքը՝ Շարդենը, որ այնքան խիստ կերպով շեշտում է հայ-վրացական հարաբերությունների թշնամական կերպարանքը, նույն իր այդ տողերի մեջ պատմում է, որ մահմեդականները Թիֆլիսում չէին կարողանում իրենց համար մզկիթ շինել, քանի որ ժողովուրդը (ասել է թե հայերն ու վրացիները), միահամուռ դիմադրություն էին ցույց տալիս»[4]։ Բայց այս հանգամանքն ավելի խոշոր գծերով արտահայտվում է այն երկարատև և շատ համառ դիմադրության մեջ, որ Թիֆլիսը հանում էր կաթոլիկ միսիոներների դեմ, որոնք հաստատվել էին այստեղ՝ ամբողջ Վրաստանը Հռոմի որս դարձնելու համար։ Այս խոշոր պայքարի վերաբերյալ մի շարք շատ հետաքրքրական փաստաթղթեր, որոնք հանվելով Վատիկանի դիվաններից, հրատարակվեցին, առաջին անգամը լինելով, նորերս[5], բոլորովին նոր լույս են սփռում այն դիրքի և նշանակության վրա, որ ունեին հայերը Թիֆլիսում։ Կաթոլիկ քարոզիչները Հռոմ ուղարկած իրենց հաղորդագրությունների մեջ, XVII և XVIII դարերի ընթացքում, ներկայացնում էին իրենց, ինչ ասել կուզի, անմեղ գառնուկներ, բայց և շարունակ ենթարկված անողոք և կատաղի հարձակումների։ Նրանց այդպես անխղճորեն հալածողները հայերն են միշտ։ Առանց, իհարկե, հետին մտքի չէր, որ միսիոներները վրաց թագավորի մասին վկայում էին, թե նրանք միանգամայն բարյացակամ վերաբերմունք ունեին դեպի իրենց հավատորսական գործունեությունը։ Նույնպես առանց հետին մտքի չէր, որ այդ հալածանքների մեջ վրացիների դերը շատ մեղմացվում էր։ Քարոզիչները չէին կարողանում ժխտել, որ վրացիներն էլ մասնակցում էին իրենց դեմ հարուցած հալածանքներին, խոստովանում էին անգամ, որ հայերի գործողությունները առանց վրացիների թույլտվության չէին, բայց և այդպես, հալածանքները ցուցադրվում էին իբրև համարյա լոկ հայկական գործեր, ամեն անեծք ու հայհոյանք հայերի գլխին էին թափվում։ Մենք ունենք մեր առջև

[1] Brosset, Histoire de la Géorgie, t. II, St.-Petersbourge, 1850, p. 503.

[2] Brosset, Additions et ecclaireissement à L'histoire de la Géorgie, St.-Peters., 1851, p. 314.

[3] Brosset, Hist. de la Géorg., t. I, p. 504.

[4] Шарден, с. 201.

[5] Michel Tamarati, L'Eglise Géorgienne, Roma, 1910, p. 605—643. Հեղինակը կաթոլիկ վրացի հոգևորական է, շավեն հայրենասեր, կաթոլիկ ոգով, այսինքն՝ կաթոլիկ վրացուն ունենալով իբրև իդեալ։ Նա անուղղա հայատյաց է, աշխատում է նվաստացնել հայերի դիրքը Վրաստանում, բայց իր բերած փաստաթղթերով բոլորովին հակառակ հետևանքի է հասնում։

երկու խոշոր ժողովրդական խռովությունների մանրամասն նկարագրությունը։ Այդ խռովություններից մեկը տեղի ունեցավ 1718 թվին, իսկ մյուսը՝ 1742 թվին ուրացյալ վրացի քահանա Սաբա Օրբելիանիի հավատուրացական գործունեության հետևանքով։ Հայերը հարձակվեցին Թիֆլիսի կաթոլիկ եկեղեցու վրա, քարուքանդ արին, պատառոտեցին և ոչնչացրին եկեղեցական պատկերները, ոտնակոխ արին հաղորդությունը, զուռնայով պար բռնելով տաճարի մեջ։ Կաթոլիկ պատերները ստիպված եղան փախչել քաղաքից և գանգատներ գանգատների ետևից ուղարկեցին Հռոմ, միակ թշնամի ներկայացնելով «սատանայի զավակ» հայերին։ Գանգատներ նույն իմաստով ուղարկեցին և Օրբելիանի տոհմի ներկայացուցիչները, որոնք կաթոլիկացած էին Սաբայի ձեռքով, խնդրում էին, որ պապն ազատե իր վրացական հոտն ու եկեղեցին հայերի սարսափելի հալածանքներից։ Եվ Հռոմի տերն, իհարկե, խուլ չէր մնում այդ աղաչանքների վերաբերմամբ։ Նա պարսից շահին էր դիմում իր նվիրակների միջոցով, նրա օգնությունն ու հովանավորությունն էր խնդրում։ Այլ քիչ է, պապը հրահրում էր Եվրոպայի մյուս կաթոլիկ վեհապետներին, որ նրանք էլ գրեն շահին։ Եվ այսպես, եթե հավատանք կաթոլիկ աղբյուրներին, Թիֆլիսի հայերն իրենց վարմունքով մի ամբողջ միջազգային հարց էին ստեղծել XVIII դարում։ Այս փաստերի քննության մեջ մենք այստեղ չենք մտնի։ Բավական է մեզ համար և այն, որ նրանք անհերքելիորեն ապացուցում են մեր մատնանշած երկու դրությունները. ա) հայերն ընդհանուր շահեր ունեին վրացիների հետ, և այդ շահերը նրանց միշտ միացնում էին՝ իրենց ներքին ինքնապաշտպանության համար՝ ընդդեմ արտաքին վտանգի, և բ) հայերը Թիֆլիսում գրավում էին չափազանց ուժեղ դիրք։

Այսպիսի մի դիրք հափշտակված, նվաճված չէր ուժով և բռնությամբ, ոչ էլ հետևանք էր հանգամանքների քմահաճ բերմունքի, այլ միանգամայն բնական և արդար իրավունք, որ ձեռք էր բերել քաղաքի հայ ազգաբնակությունն իր դարավոր աշխատանքի և զոհողությունների գնով։ Մենք տեսանք, որ Թիֆլիսի մոքալաքությունն էր հարստություններ դիզողը, վաճառականության զարգացնողը և այդ մայրաքաղաքին փափկակեցություն, վայելքների, գեղեցկության գրեթե մի հեքիաթական հմայք հաղորդողը։ Այստեղ նկատենք այդ մեծ շինարարության մի կողմն էլ։ Բավական չէր մի անգամ ստեղծել այդպիսի մի դրություն, պետք էր նրան և հարատևություն տալ, իսկ չափազանց ծանր գործ էր այն հեղհեղուկ քաղաքական կացության մեջ, որ վիճակված էր առհասարակ Արևմտյան Ասիային և մանավորապես Հայաստանին և Վրաստանին՝ սրանց պատմության սկզբից։ Մի փարթամ, շքեղ, անգամ «հրաշալի» փափկասուն Թիֆլիս չէր կարող չգրգռել նվաճողների, վայրենի բռնավորների ախորժակը, դարձնել նրան տիրանալու, լավ կողոպտելու, հմայքները վայելելու տենչանքի առարկա։ Եվ Թիֆլիսը շատ անգամ է դարձել այդպիսի առարկա, ինչպես դարձել են և ուրիշ հռչակված քաղաքներն աշխարհի զանազան կողմերում։ Պատմությունը պահել է շատ հիշատակություններ, ուր Թիֆլիսը մեզ ներկայանում է ավերված, հրդեհված, սրի քաշված, կողոպտված։ Ամեն այսպիսի պատուհասից հետո պետք էր լինում նրան վերականգնել իր ավերակներից, նորից շենացնել, նորից հաղորդել նրան նախկին փայլն ու հմայքը։ Իսկ այս աշխատանքը ծանրանում էր ամենամեծ մասամբ Թիֆլիսի հայ ազգաբնակության վրա։ Վերցնենք հենց միայն XIII դարի առաջին կեսը։ Գրեթե անընդհատ միմյանց հետևից, երեք անգամ քաղաքն ավերվում է, ամայացվում. երկու անգամ՝ մեր հիշած Ջալալեդդին սուլթանի ձեռքով, իսկ երրորդ անգամ՝ հենց իրենց, վրացիների ձեռքով։ Այդ դժբախտ ժամանակներում, երբ մի կողմից Ջալալեդդինի պես նվաճողն էր արշավում, իսկ

մյուս կողմից Արևմտյան Ասիայում պատմության ասպարեզն էր իջնում թաթարական սարսափելի բանակը, Վրաստանի գլուխ կանգնած էր Ռուսուդան թագուհին, մի թույլ ու անկարող կին, որ, սակայն, գեղեցիկ էր և հենց այդ պատճառով ուժեղ նվաճողների ցանկության առարկան էր։ Կամենալով խուսափել խայտառակվելուց, առաքինի Ռուսուդանն ամեն անգամ, երբ վտանգ էր գալիս, թողնում էր Թիֆլիսը և հեռանում էր երկրի խորքը։ Այսպես արավ նաև այն ժամանակ, երբ թաթարները Գանձակը վերցնելուց հետո, շարժվեցին դեպի Վրաստան։ Բայց չկամենալով, որ Թիֆլիսն ավար դառնա թշնամու ձեռքին, թագուհին հրամայեց հրդեհել նրան, խնայելով միմիայն թագավորական պալատը[1]։ Այս հրամանը կատարվեց, բայց հրդեհի բոցերը չազատեցին գեղեցիկ քաղաքը Միջին Ասիայի վայրենի և արյունարբու հորդաների ձեռքից։

Եվ միայն պատերազմական արշավները, արյունն ու բոցերը չէին Թիֆլիսի տնտեսական կացությունը ծայրահեղ տագնապի մատնում։ Սովորական, խաղաղ ժամանակներում էլ դիզած հարստությունն իր դերն էր կատարում, ախորժակ գրգռելով և թալանի առնվելով հարկերի, տիրապետության անսահման և անպատասխանատու իրավունքի միջոցներով։ Այս խաղաղ թալանի մեջ, ինչ ասել կուզե, առաջնությունը պատկանում էր ազնվական ֆրիակերության, որի ախորժակը բացվում էր, մանավանդ, երկրի վրա եկած աղետների ժամանակ։ Թաթարական արշավանքների միջոցին, երբ վրաց թագավորությունը նվաղել էր և թուլացել, ի՞նչ էր անում թավադական դասակարգը։ «Իշխանքն,— ասում է մեր Կիրակոս Գանձակեցին,— կողոպտէին և զրկէին զաղքատս և ի զրկանաց անտի գնէին հանդերձս մեծագինս և ագանէին, ուտէին և ըմպէին և մեծամեծս փքային, որպես սովորութիւն է ամբարտաւանութեան վրաց»[2]։ Թաթարները մարդկանց միմիայն կոտորել չգիտեին, այլև խորովում էին դանդաղ կրակի վրա իրենց անտանելի հարկահանություններով։ «Սկսեալք ի տասնամենից և ի վեր,— պատմում է նույն ժամանակակից և ականատես հեղինակը,— գրով ի համար արկանել զամենեսեան, բայց ի կանանց, և յամենեցունց պահանջել խստագոյն հարկս աւելի քան զկար մարդոյն և սկսան չքաւորել, և հեղէին անհնարին կոտանօք և չարչարանօք և գելոցիւք և որ թագչէին՝ ըմբռնեալ սպանանէին և որ ոչ կարէր հատուցանել զհարկն՝ զմանկունս նոցա առնուին ընդ պարտուցն... Այլև զամենայն արուեստագէտս եթէ ի քաղաքս եթէ ի գիւղս՝ զամենայն ի հարկի կացուցին. այլև զծովակս և զլիճս ձկնորսաց, և զերկաթահանս և զդարբինս և զշպարարս, և զի՞ պիտոյ է մասնաբար ասել, զամենայն դուռն շահից հատին ի մարդկանէ և ինքեանք միայն շահէին[3]»։ Տարօրինակ չէ և այն վարմունքը, որ ցույց էր տալիս այդ միջոցին ժողովրդի հյութերով ապրող իշխանական դասակարգը։ Նա իր շահի համար, ինչպես արձանագրում է մեր պատմիչը, թաթարների գործակիցն էր պահանջելու և նեղելու մեջ։ Այս ընդհանուր կողոպուտի մեջ չէր խնայվում, իհարկե, և վաճառականությունը։ Կիրակոսը շարունակում է. «Հանի վաճառականացն բազում ինչ ունել և շահել, կուտեցին բազում գանձս ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց. և այսպէս զամենեսեան աղքատացեալ, վայի և աշխարհով լցեալ զաշխարհս, թողին չար ոստիկան ի վերայ աշխարհացս, զայն պահանջել ամենայն ամի նովին համարով և գրով»[4]։

---

[1] M. Brosset, Histoire de la Géorgie, I, p. 514.

[2] Կիրակոս Գանձակեցի, եր. [illegible]

[3] Անդ, եր. 177։

[4] Անդ, եր. 210։

Եվ այդ տխուր ժամանակներում Թիֆլիսի հայ վաճառական Ումեկն էր, որ իր առատ ընծաներով քաղցրացրեց թաթարների սիրտը, հատուկ թուղթ ստացավ Աղուն խանից և թեթևացրեց հարկերի գեթ մի մասը։ Նույնպես մեծ օգնություն արավ նա և վրաց պետության և այդ պատճառով է, անշուշտ, որ ստացավ Դավիթ թագավորի հայր պատվանունը։ Բացի Ումեկից և իր մեծ ընտանիքից, Կիրակոսը հիշատակում է Շնորհավոր և Մկրտիչ եղբայրներին, որոնք հարուստ վաճառականներ էին[1] և, երևի, նույնպես հասարակական գործեր էին կատարել։

Ռուսաց տիրապետությունը Վրաստանի մայրաքաղաքում հաստատվում էր այնպիսի ժամանակ, երբ նա դեռ կիսավերակ դրության մեջ էր։ Վեց տարի էլ դեռ չէր անցել Աղա Մահմադ խանի արշավանքից (1795), որ կոտորեց ազգաբնակչությունը, հազարավոր գերիներ տարավ և կողոպտեց բոլոր հարստությունները։ Ամենամեծ վնասը կրում էին, իհարկե, հայերը։ Կենդանի մնացածները ոչ միայն պիտի ողբային իրենց կորած սիրելիներին, իրենց վիճակված դառն աղքատությունը, այլև, ինչպես սովորական էր դարձել դարերի ընթացքում, հարստահարվել այն դասակարգի ձեռքում, որ վաստակել չգիտե, այլ միայն վատնել և վայելել... Վրաց աղքատացած ազնվականությունը գայլերի նման ընկավ քաղաքի առևտրական ու արհեստավոր դասակարգերի վրա, նրանցից ուտելիք և հագնելիք խլելու համար։ Ականատեսները մռայլ գույներով նկարագրելով այն դժբախտ կացությունը, որի մեջ ընկել էր Վրաստանը Հերակլ թագավորի մահից հետո, առանձնապես կանգ են առնում Թիֆլիսի դրության վրա։ «Թիֆլիսում,— ասում են նրանք,— թագավորի ազգականներից և քաղաքում ապրող իշխաններից ոչ ոք հոգս չէր անում իր ճաշի մասին։ Երբ գալիս էր ճաշի ժամանակը, մախուրիները (ծառաները) շուկան էին ընկնում ու ծախողներից խլում էին հաց, գինի, հումդեր, բրինձ և ճաշի համար հարկավոր այլ նյութեր։ Ավելի վատ էին նրանք վարվում վաճառականների հետ։ Եթե նրանցից մեկի մոտ փող էին տեսնում, պահանջում էին, որ իրենց տան մի մասը, հակառակ դեպքում չհնազանդվողին նստեցնում էին քթոցի մեջ, Հավլաբարի կամուրջից իջեցնում էին Քուռի մեջ և այդ դրության մեջ պահում էին այնքան ժամանակ, մինչև որ դժբախտը համաձայն չէր լինում վճարել պահանջած փողը[2]։ Բայց դրությունն ավելի վատ էր, քան այն, ինչ տեսնում ենք այն նկարագրության մեջ. հարյուրավոր, մեկը մյուսից տխուր ու հուսահատեցուցիչ փաստեր պատմված են Ռուսաց պաշտոնական թղթերի մեջ[3]։ Այսպես, Հերակլի որդի Փառնաոզը, գրում էր իշխան Էրիստովին. «Երդվում եմ մեր կաթողիկոս եղբոր շնորհով և քո արևով, որ իսկապես իմ բոլոր մարդիկ տկլոր են և եթե գոնե քիչ չազատվեմ պարտատերերից, [illegible] ինձ այլևս ոչ ոք չի հավատա, և ինչու պիտի հավատան, երբ ես չեմ կարողանում գրավական տալ որևէ բան, իսկ ձրի, դու էլ գիտես, ոչ ոք ինձ ոչինչ չի տա»[4]։

Ահա հենց այս տեսակ պայմաններից էին դուրս գալիս այն արտոնությունները, որոնք տրված էին Թիֆլիսի մոքալաքությանը։ Որքան շատ էր կորցնում բուրժուա դասակարգը, նրա պահանջներն ավելի շատանում ու բարձրանում էին։ Եվ որովհետև այդ դասակարգն ուրիշ ոչ մի բանով փոխարինել չէր կարելի, ուստի և տալիս էին նրա պահանջած արտոնությունները, դարձնում էին նրան այնքան ուժեղ հասարակական տարր, որ թագավորն անգամ

1 Կիրակոս (տպ. Թիֆլիսի), եր. 349—350։
2 С. Г. Кишмишев, Последние годы грузинского царства. Тифлис, 1898, с. 113.
3 Տե՛ս «Акты. Кавк. Археогр. ком.», т. I.
4 Ibid., т. II, № 205.

հազիվ էր կարողանում ազատել նրա ձեռքից բռնությունների ենթարկված կաթոլիկ հոգևորականներին։ Ռուսաց տիրապետության հաստատվելուն պես՝ Թիֆլիսի մոքալաքությունը, անշուշտ, կրկնելով այն, ինչ արել էր դարերի ընթացքում զանազան առիթներով, դիմեց գլխավոր հրամանատար գեներալ Կնորինգին և բացատրելով, թե ինքը վերջին տարիներում որքան վնասներ էր կրել արտաքին և ներքին հանգամանքներից, խնդրում էր ոչ միայն վերահաստատել նախկին արտոնությունները, այլև տալ նորերը[1]։ Այսպես, մոքալաքները խնդրում էին. ա) նկատի առնելով, որ առևտուրն ու արհեստները խիստ անկման մեջ են Պարսից արշավանքի հետևանքով, որ բնակիչներից շատերին գերի են տարել և նրանց ազատելու համար պետք է լինում շատ փրկանք տալ, իսկ բնակիչների մի մասն էլ ինքն է փախել քաղաքից և այսպիսով նոսրացել է ազգաբնակչությունը, դադարեցնել առժամանակ «մախթո» անունով հարկը, որ տալիս էր վրաց թագավորին մոքալաքների դասակարգը մինչև Թիֆլիսի ավերումը, և որի քանակությունն էր 4000 ռուբլի տարեկան։ բ) Ազատել իրենց բնակարանները բռնագրավումից, որ կատարվում է ռուս պաշտոնյաներին բնակեցնելու համար, հարգելով այն հանգամանքը, որ իրենք սովոր չեն ռուսական նիստ ու կացին, ուստի և շատ նեղվում են իրենց տնեցիների պատճառով։ Եվ գ) որպեսզի կարելի լինի կենդանացնել առևտուրն ու ուրախությունը, բաց թողնել իրենց պետական գանձարանից փոխարինաբար մի գումար, որի քանակությունը կորոշվի առանձին։ Եվ ռուսաց կառավարությունը բավարարություն տվեց մոքալաքների բոլոր խնդիրքներին։

Սակայն ռուսական տիրապետությունը վերջ էր բերում Թիֆլիսի, իբրև Վրաստանի քաղաքի իրականության, վերջ էր բերում այն անձուկ շրջանակին, որի մեջ ամփոփված էր այս քաղաքի նշանակությունը, հանելով նրան փակ տեղայնության օղակից և դնելով անհամեմատ ընդարձակ հորիզոնների մեջ։ Դառնալով ռուսաց զինվորական և վարչական գլխավոր կենտրոն, նա հենց դրանով ստանում էր համակովկասյան նշանակություն և ավելի մեծ կարևորություն էր հաղորդում իր այն դիրքին, որ ուներ գրաված հին ժամանակներից ի վեր Առաջավոր Ասիայի վերաբերմամբ։ Հաճախակի և ավելի մերձավոր շփումները զանազան աշխարհների հետ, որոնք նրա այդ նոր դիրքի հետ էին կապված, մտցնում էին նրան համապետական և միջազգային տնտեսական-կուլտուրական շահերի հզոր շարժումների մեջ։ Հին վրացական միջավայրն այլևս շատ էր նեղ և նրա տված արտոնություններն այլևս չէին կարող ապրեցնել նոր ժամանակների պահանջների մեջ։ Երկուսից մեկը կարող էր լինել՝ կամ քարանալ գործունեության հին ձևերի մեջ և ասպարեզը թողնել ուրիշ, ավելի ընդունակ ազգերին, կամ թե՝ թևակոխել նոր իրականության, նոր հնարավորությունների պայմանների մեջ և շարունակել իր պատմական դերը՝ ամրապնդվելով նոր աշխարհայացքներով, տնտեսական-արդյունաբերական նոր գաղափարներով։ Մենք շուտով կտեսնենք, որ Թիֆլիսի հայն արագ ըմբռնեց ժամանակի բերած այս երկճյուղությունը և գնաց կյանքի գծած նոր արահետներով, թողնելով հնի մեջ լճանալու և քարանալու խորխորատները։ Այստեղ, XIX դարի սկզբին, երբ արտոնված մոքալաքությունն ու համքարությունները դեռ պինդ են իրենց հին դիրքերի մեջ և նոր միայն կանգնած են երկու հնարավորությունների—կյանքի և մահվան առաջ, մեզ համար չափազանց կարևոր է իմանալ, թե նրանք հոգեկան ինչ կարողություններով են գնում դեպի Կովկասյան աշխարհի համար սկսվող նոր պատմության ասպարեզը և ինչ նոր դեր պիտի կարողանան մշակել իրենց անցյալի տված նյու-

1 Ibid., т. I, № 593.

թերից։ Մի խոսքով, մենք պիտի տեսնենք, թե ինչ է Թիֆլիսի հայն իբրև կուլտուրական տիպ։

Աղա Մահմադ խանի ավերումից հետո էլ Թիֆլիսը, չնայած իր թշվառության, չդավաճանեց իր պատմական հմայքին և շարունակեց մնալ իբրև առաջինը Կովկասյան բոլոր տեղերի մեջ, որ կարող էր վայելչության, ճաշակի, կյանքը քաղցրացնող և ազնվացնող համ ու հոտի կողմից օրենսդիր և դաստիարակող լինել բոլոր մյուս տեղերի համար։ Իմանալու համար, թե ինչ ոգի և խառնվածք է, ինչ հոգեբանություն, բարոյական ինչ ձուլվածք է ընդունում մի ժողովուրդ իր դարավոր կյանքի շրջանակում, մենք պիտի մեր հարցերն ուղղենք նրա միջավայրին, նրա բնակավայրի օդին ու ջրին, նրա երկնքին ու արևին, մի խոսքով այն ամբողջ բնության, որի կերտվածքն է նա։ Արդ՝ Թիֆլիսն իբրև միջավայր, XIX դարի առաջին քառորդում շատ լավ նկարագրել է հայ տաղանդավոր և ուշիմ գրողներից մեկը՝ Մեսրոպ Թաղիադյանը, որի դիտողությունները շատ պարզաբանիչ կարող են լինել մեզ համար։ Ահա նրա խոսքերը.

«Օդ տեղւոյն լեռնային է. ուստի մաքուր և առողջարար։ Բնակիչք նոր հայք և վերք առ այլազգիս միահաշոյն Գուրջին անուանեալ, հռչակաւոր են ի գեղեցկութեամբ մարմնոյ իւրեանց. իրենք նոցա նոճորեն աճեալք, հերին թուխ, աչկունքն արեգակունք, մորթք սպիտակ ու կարմիր, մեջկունքն բարակ և լեզուք անուշախօսք՝ յորինեն զնոսա ցանկալիս ամենայն ազգաց. մանաւանդ Պարսից և Օսմանեան մեծամեծաց. ուստի և ի վտանգի կան միշտ կեանք նոցա։ Թէ յառաջ քան և թէ զկնի տէրութեան ռուսաց։ Վասնզի լէզգիք, որք առ ոչինչ կրեն զամենայն երկիւղ՝ յափշտակեալ ամի ամի աղջկունս և պատանիս ի նոցանէ կայտառս, տանին վաճառեն մեծագնի ի Թեհրան, ի Կոստանդնուպօլիս և ի շրջակայս նոցա։ Գողտրականք են յոյժ և նազարնոյթք կանայք նոցա. որք թէպէտև ճարտարք յուսմանս գրոց և ի պէս-պէս արուեստս կանացի ձեռակերտաց, սակայն և այնպես անձնասերք են յոյժ և գեղոյ իւրեանց անխնայ խնամատարք։ Գրեթէ յամենայն աւուր ի ջերմուկսն լուանին, որ ի սակս խառնուրդս ինչ անելոյ հանքային բաղադրութեանց՝ մեծապես օգտէ փափկութեան մարմնոյ և պայծառութեան դիմաց։ Վարշամակ ի գլուխ դնեն և ճակատանոց ասղարուր, զոր աստ կօտ կամ քամբարա կապեն բասպընդաւ. քողի վերուստ ծաւալ ցծունկ արկանելով երեսանին բաց։ Պատմուճան փորան կեալ. և գօտի խնձորակապ զմիջովքն՝ ծայրակախ։

Սնապարծք են յոյժ, և զարարս գուգնաքեայս իւրեանց զովութեամբ յօդս ամբառնան, զորօրինակ պատահեցաւ ի 1795 յաւուրս արշաւանաց Քէրիմ խանին Գնդւոյ ուրեմն Շաշեանց ասել զմի ի զօրաց նորա. «Նա դուր, նա դուր», այսինքն՝ ի՞նչ է, ի՞նչ է, զոր ցայս վայր զովութեամբ հրատարակին ի լուր ամենայն մարդկան, յասելն «Բարաքալլա Շաշունց Գօզի, քրտիս ասեց, նա դուր, հու դուր։

Բայց առավել քան զառաւելն զարդասէրք են առհասարակ կանայք և մանկտի նոցա, միանգամայն. և տուեալ զանձինս արբեցութեան և խրախճանաց։ Իցէ ոք ի նոցանէ ի վերջին կէտ սնանկութեան կամ աղքատութեան, տակաւին ջանայ որով՝ հնարիւ ինքեան ունիլ պատրաստի զսար մի ազնիւ զգեստուց, որով պճնին յաւուրս կիւրակէից կամ արքունի պրազնիկաց, որ այսինքն է՝ տօնից և տարեգլխոց յաղթութեանց նոցա. յերամակս յերամակս բաժանին, և առեալ ինքեանց գինի, գաւաթ, թմբուկս, և զորս մի անգամ գտանին ազգս ազգս նուագարանաց՝ ելանեն ի զբօսանս դաշտաց. ուտեն և ըմպեն, խաղան և խնդան, ազգաց յամենայն հոգոց։ Ո՛չ տեսնի ես քաղաք ուրախ քան զայս։ Այնքան զուարճաբանք են բնակիչք սորա մինչ ի խնծիղ հեղձուցանել զունկնդիրս բանից իւրեանց։ Փոխանակ ի կեր առնելոյ զերգս Շարականաց Աստուածածնոցի մարմնավոր խրախճանս յօրինեալ են առ այն պէս-պէս նուագս ձաղրալիս, յորոց մին առ տիկ զինւոյ և այսպէս սկսանի.

Ով էիր և տիկ դարձար
Տկահան չարչարվեցար.
Հավլաբրի դարիգուսին,
Տուինք մշակի ուսին.
Ո՛վ ո՛վ սուրբ Տկճուր
Լուլեդ բաց մեզ ողորմեա։

Երգմունք նոցա հասարակօրէն անմեղագոյնք են քան զայլ ամենայն նահանգաց և գաւառացն Հայաստանի, զի են «Քու ղէզին ումրը», «Ապրի քոյ մայրը», «Իս ապրիմ» և այլ ասպիսիք։

Տփղիս քաղաք չունի բերս բաւական բնակչաց իւրոց, այգեստանք նորա բերեն խաղող ազնիւ և միրգս ազգի ազգիս, այլ ի Կախէթոյ օրըստօրէ մտանեն այսր մերձ հարիւրաւոր սայլք գինոյ՝ բարձեալք ի տիկս գոմշոց։ Ի Սալիանայ նոյնաչափ թուով սայլք ձկանց, որոց ծախք մեծ են յոյժ ի քաղաքի այսմիկ։ Մատակարարէ և Կուր գետ զանազան տեսակն համեղ ձկանց։ Առակաւ ասի, թե Գալիանոս բժշկի մտեալ երբեմն և ի Տփղիս, և տեսեալ զանբաւ առատութիւն ձկանցն՝ ասաց. «Այս տեղի է շայեկան արուեստի իմում»։ Բայց իբրև ետես և զմեծ եկամուտ գինւոյ ասաց թէ «Սոքա ինքնին գտին զդեղ իւրեանց»։ Եվ մեկնեցաւ։ Չիք ժողովուրդ ի համօրէն Հայաստան այնքան ձկներ և գինախում, որքան սոքա են։ Շիրակաւան մատուցանէ զկեր ցորեան. Երևան՝ զաղ, բրինձ, բամբակ և չորապտուղս ամենատեսակս, իսկ Ռուսաստան՝ շաքար մաքուր և զամենայն ձեռնակերտ վաճառս իւր։ Արուեստն սկսաներ ծաղկել աստ. այլ դեռ տղայ գոլով ի խանձարուրի կայր և ես հաղիւ թե կարացի տեսանել զերեսս նորա։

Սովորութիւն մի կայր ի քաղաքի այսմիկ վնասակար յոյժ, զոր վերացոյց Տէր Ներսէս[1], զի յաւուրս կիւրակէից ծինանց ժողովեալ պատանեաց Բաղից Թաղից քաղաքին մարտնչէին ընդ միմեանս փայտեայ սուսերօք, մահակօք, պարսատեօք և այլ սոցին նման գործեօք ուստի թող թէ կէս քաղաքին միականի՝ պնչատ և գոնչատ լինէր, այլև մահունք ևս ի տեղւոջն պատահէին։ Այժմ փոխանակ այսր՝ արշաւարան հաստատեցաւ, և պատանիք մեր ո՛չ սակաւ հմտութիւնս ցուցանէին յայնմիկ»[2]։

Եվ այսպես, բոլորովին ինքնատիպ, բոլորովին բացառիկ մի աշխարհ այդ նեղ ու չոր ձորամեջ Քուռ գետի երկու կողքին։ Բնությունն այդ անկյունին հոյակապ տեսարաններ չէ պարգևել, մանավանդ, որ աղքատ է բուսականությունը բերքերի ազնվության և առատության կողմից։ Աղքատ են և նրա շրջականերն, այնպես որ հեռավոր հայկական Շիրակն էր ուղարկում իր թխլիկ, բայց անուշահամ հացը։ Բայց բնությունը տվել էր Թիֆլիսին երեք մեծ բարիքներ, որոնք և նրան անզուգական և աննման էին դարձնում՝ ծծմբային ջերմուկները, ձկնառատ Քուռը և իբրև հեռավոր արվարձան՝ Կախեթի բաղմահոչակ այգեստանները։ Այս երեք մեծ գործոններն էին, անշուշտ, որ Թիֆլիսի հայության ինքնատիպությունն էին կերտում այնքան խոշոր չափերով, դարերի ընթացքում։ Բայց հարկավ, այսպիսի մի միջավայրում ամեն մի

1 Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին, որ Թիֆլիսի առաջնորդն էր 1814 թվից։

2 Մեսրոպ Թաղիադեան, Ճանապարհորդութիւն ի Հայս, Կալկաթա, 1847, եր. 314—318։

ժողովուրդ Թիֆլիսի հայ ժողովուրդ չի դառնա։ Հետևաբար, կուլտուրական այդ տիպի կերպարանավորումը մեզ համար ծածկված խրողություն կմնա՝ առանց նրա ծննդաբանության վրա լույս սփռելու։ Բայց, տարաբախտաբար, այս բանն անկարելի է անել։ Թիֆլիսի հայության ծագումը պատմության առեղծվածային խնդիրներից մեկն է։ Այս մեկը միայն լավ հայտնի է, որ Թիֆլիսի հայությունը հնուց ուներ իր ներքին ազգագրական ուժեղ ձուլվածքը, որ և տալիս էր նրան ինքնամփոփ և ինքնատիպ ազգայնական խմբի դիրքը։ Լինելով համեմատաբար մի փոքրիկ գաղութ, ազգագրական մի փոքրիկ կղզյակ օտար տարրերի ծովի մեջ, Թիֆլիսի հայությունը միշտ ուժեղ և անպարտելի մնաց, ունենալով ամեն մի ներքուստ անկախ ժողովրդին հատուկ ազգային ստեղծագործական ոգին, որ արտահայտված է նրա հարուստ բանավոր գրականության[1], բայց մանավանդ լեզվի մեջ։ Այդ հարստությունների շնորհիվ է, որ Վրաստանի գրեթե ամբողջ հայությունից Թիֆլիսի հայերն էին միայն, որոնք, չնայած վրացերենի խիստ ազդեցության, մնացին հայախոս։

Կա և մի ուրիշ նշանակալից հանգամանք։ Իր ազգագրական ներքին գործոն ինքնուրույնությամբ, իր առանձնահատուկ ինքնօրինությամբ Թիֆլիսի հայությունն այնքան ուժեղ էր, որ դարերի ընթացքում ընդունելով իր մեջ զանազան կողմերից գաղթող հայերին, նա դրանով ոչ միայն չնոսրացրեց իր կուլտուրական ուժեղ խտացումը, ոչ միայն դիմազրկության ենթարկման և մոռացության երևույթներ ցույց չտվեց, այլ պարզապես ձուլեց իր մեջ, թիֆլիսացրեց բոլոր օտար ու խորթ տարրերը։ Այս հանգամանքը Թիֆլիսի հայը մինչև վերջին ժամանակները պատկերավորում էր օտար եկվորներին ուղղված այն ասացվածքի մեջ, թե «Քուռի ջրիցը կխմես, մերը կլինես»։ Եվ Քուռն իր այս պաշտոնը հավատարմությամբ կատարել է այն ժամանակներից, երբ իր աջ ափի ջերմուկների շուրջը հայություն է հավաքել ու կազմակերպել։

Այս կազմակերպման ամենազոր միջոցն է դարձել Թիֆլիսի հայերեն լեզուն, որ անշուշտ հենց Քուռի այս չոր ու ապաժառոտ ափին է ծագել, զարգացել, հարստացել ու ուռճացել ժողովրդական կյանքին համընթաց։ Թիֆլիսի հայության մեծագույն կուլտուրական կերտվածքն է այս, և մի ուրիշ արտահայտիչ ձև հազիվ թե գտներ ստեղծագործող ժողովուրդն իր ամբողջ էությունը, իր ամբողջ հոգեբանական աշխարհը ցուցադրելու համար։ Ինքնատիպ, անզուգական է Թիֆլիսի հայության մշակած կենցաղը, ճիշտ այդպես է և նրա լեզուն։ Այստեղ էլ նկատվում է վրացական կուլտուրայի և լեզվի խիստ ազդեցությունն ու մոտիկ աշխատակցությունը։ Բայց հայությունից էլ միանգամայն անջատված չէր Քուռի ձորում ամփոփված այս փոքրիկ աշխարհը։ Լեզվաբանները ցույց են տալիս, որ Թիֆլիսի բարբառն իր մի քանի ձայնական և քերականական երևույթներով մոտենում է Երևանի բարբառին[2]։ Եվ այս միանգամայն բնական է իբրև հետևանք այն դարավոր իրողության, որ Թիֆլիսը հարավից սահմանակից էր Երևանի բարբառին պատկանող Գուգարքի հետ (Լոռի, Բորչալու) և այս ուղղությամբ էլ պահպանել է կապեր հայ հայրենիքի հետ, մնալով, սակայն, ազգագրական մի ուրույն խումբ՝ օտար պետականությամբ շրջապատված։

Կարևորը, սակայն, այն չէ, թե մի ժողովուրդ ինչ տարրերից է նյութեր վերցնում իր ստեղծագործության համար։ Կարևորն այդ ստեղծագործության

1 Այդ ազգագրական հարստության մի մասն է միայն հրատարակված Գևորգ Տեր Աղեքսանդրյան «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը», մասն Ա (բանաստեղծություն), Թիֆլիս, 1885։

2 Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, (տե՛ս «Էմինյան Ազգագրական ժողովածու», հատոր Ը, Նոր Նախիջևան, 1911, էջ. 52—57)։

ուժն ու թափն է։ Այս կողմից Թիֆլիսի հայն իբրև կուլտուրական տիպ իսկապես մեծագործ է։ Նրա լեզուն պարզ ու վճիտ է, քաղցենի վայելչությամբ և ազնվության շեշտերով տոգորված, զվարթ ու համարձակ, իր արտահայտության ցայտուն և եռանդալից կորովով վարակիչ և նրբենի այլաբանություններով ու պատկերավորումներով չափազանց հարուստ։ Մտածող, զգացող և կյանք փնտրող մի փիլիսոփա ժողովուրդ, որ լեզու հանրակեցության հյուսել է խաղաղ աշխատանքի մեջ, ուրախության և տրտմության գինավետ սեղանների շուրջը, շողեր ու նազանքներ վերցնելով, թե սրտաբաց ուրախության, Թիֆլիսի հանրահռչակ քեֆերի[1] զվարճաբանություններից, հանաքներից, ծաղրից ու ծիծաղից թե հավասարապես վշտի, մաշեցնող թախծի, սուգի այրող լեզվից։ Մի լեզվի կարողությունը ճանաչվում է ամենից առաջ նրա բանաստեղծությունից։ Լեզուն է բանաստեղծական հոգին, նրա ամբողջ էությունը։ Կարելի է ունենալ ծով զգացմունք, բայց այդ զգացմունքը կմնա համր, եթե չկա պատշաճավոր լեզու, նուրբ ու ոլորուն, թովչանքներով և ելևէջներով հարուստ։ Այս կողմից Թիֆլիսի լեզուն չափազանց վայելուչ է և չափազանց մեծագործ։ Նա արտահայտության միջոցներ է տվել տաղանդավոր բանաստեղծներին լի ու լի չափերով, նա երգիչներ է անմահացրել և ինքն էլ անմահացել նրանց հետ։ Նա կարող է անհայտանալ գործածությունից, բայց չի անհայտանա Սայաթ-Նովայի երգերից, որովհետև չէր կարող լինել Սայաթ-Նովա առանց Թիֆլիսի, առանց, մանավանդ, Թիֆլիսի հայերենի։ Վարդի, բլբուլի, յարի այս աննման երգիչը մի ուրիշ միջավայրում այլ կերպարանք կունենար։ Իսկ Քուռի ափին նա մարմնացումն է իր ժողովրդի քնարական ապրումների, միևնույն ժամանակ մարմնացումն այն ժամանակների, երբ Քուռի ափին իրար աշխատակցում էին վրացական և հայկական կուլտուրաները՝ պարսկական կուլտուրայի խիստ ազդեցության տակ։ Եվ ահա այդ աշխատակցող, իրար հետ միասին զգացող, միասին երգող կուլտուրաների տաղանդավոր և քաղցրախոս արտահայտիչն էր Սայաթ-Նովան, ինչպես ցույց տվինք իր տեղում[2]։ Բայց միայն սիրո, վայելքի, նազանքների աստվածային շեշտեր չի պահում իր մեջ Թիֆլիսի հայերենը։ Վիշտը, տխրությունը, սգալու տրամադրությունը պակաս արտահայտիչ ու հուզիչ չեն նրա մեջ իբրև խորունկ շեշտեր։ Զգացմունքների աշխարհի այս մի կողմը, սևը, դժնդակը, դարդը ներշնչել է հասարակ արհեստավոր Շամչի Մելքոյին այնպիսի մի գոհար, որպիսին է Թիֆլիսի ավերումը 1795-ին Աղա Մահմադ խանի ձեռքով։ Բայց Թիֆլիսի բարբառի ճոխությունն ու զարմանալի ճկունությունը միմիայն քնարերգական բանաստեղծության մեջ չէ։ Հավասարապես կարող ու ջղուտ է նա և իբրև վիպական (էպիկ) բանաստեղծության լեզու։ Եվ այս բանն ապացուցել է լավագույն կերպով վրաց հռչակավոր «Ընձենավորը» քերթվածի թարգմանությունը, որ կատարել է Սարգիս անվան տակ մի թիֆլիսեցի հայ[3]։ Արձակ հյուսվածքների մեջ էլ կան սեռեր, որ Թիֆլիսի բարբառն առաջնակարգ է և աննման։ Այսպես է, օրինակ, երգիծանքը։

Ահա այսքան տվյալներ ուներ Թիֆլիսի հայությունը մի կենտրոնաձիգ

1 Գամառ Քաթիպայի վաղագույն և լավագույն բանաստեղծություններից մեկն է «Թիֆլիսի քեֆը»։ 1850 թվականների սկզբին կարճ միջոցով այցելելով Թիֆլիսը, այդ օտարականը գրավվում է իրեն անծանոթ կյանքի այս երևույթով մինչ այն աստիճան, որ նկարագրում է նրան ոտանավորով, այն էլ ոչ թե սովորական գրական լեզվով, այլ Թիֆլիսի լեզվով, որ և հաղորդել է այդ գործին մի աննման թարմություն։

2 Տե՛ս հատոր Դ, գիրք Բ։

3 Սարգիս, Ռուսթավելի, Ընձու մորթի հագած մարդ, («Կռունկ Հայոց Աշխարհին» ամսագիր, Թիֆլիս, 1860, 1861)։

վայր դառնալու համար այնպիսի մի ժամանակ, երբ նոր պատմական պայմանները հրամայաբար պահանջում էին քաղաքակրթական և քաղաքական մեծ կենտրոններ ստեղծել։

5. Կ. ՊՈԼԻՍ։ Հայոց պատմությունը քայլ առ քայլ և մանրամասնաբար արձանագրել է իր երկար էջերում, թե հռոմեական մեծ և աշխարհակալ պետության այս երկրորդ բազմահռչակ մայրաքաղաքն ինչ ահագին դեր սկսեց կատարել հայ ժողովրդի քաղաքական, կուլտուրական և մտավոր կյանքի մեջ այն օրից ի վեր, երբ նրա մեջ հաստատվեց կայսրների գահը։ Այդ դերն ըստինքյան շատ բնական և հասկանալի է, եթե նկատի առնենք այն մեծ քաղաքական և քաղաքակրթական ուժը, որ գործադրում էր հռոմեական պետությունն ամբողջ Արևելքում, ոչ միայն հայերի, այլև այդտեղ ապրող բոլոր ազգերի տերն ու տնօրենը հանդիսանալու համար։ Բայց հատկապես Հայաստանում, բացի քաղաքական խոշոր անցուդարձերից, կայսրության գործադրած հզոր և անդիմադրելի ազդեցության հետևանքն եղավ քրիստոնեության մուտքը, մի մեծ հեղաշրջում, որ պարսկա-ասիական միջավայրին պատկանող այս երկրին տալիս էր կուլտուրական նոր ուղղություն, հաղորդակից անելով նրան արևմտյան, եվրոպական քաղաքակրթության։ Այսպիսով Կ. Պոլիսը դեռ իր հիմնադիր Կոստանդին Մեծի օրից դառնում էր մի չափազանց կարևոր կենտրոն, ուր միայն հայոց պետության գործերը չէին ծեծվում և որոշվում, այլև դարբնվում էր հայ ժողովրդի համար մի նոր կուլտուրական կերպարանք։ Այս հանգամանքն արդեն շատ պարզորեն է ցույց տալիս, որ Հայաստանի և Կ. Պոլսի մեջ երթևեկությունը շատ կենդանի էր չորրորդ դարից ի վեր և, որ գլխավորն է, այդ երթևեկությունը միմիայն որոշ տոնական հանգամանք չուներ, այսինքն, որ միայն իշխանության, քաղաքական, պատերազմական, անգամ եկեղեցական գործիչների ճանապարհորդությունները չէր ներկայացնում Հայաստանից Բյուզանդիոն և հակառակ ուղղություններով, այլ ուներ և ավելի հոժարակամ, անկաշկանդ, մտերմական հարաբերությունների բնավորություն, քանի որ Կ. Պոլիս գնալու կարիք հայերն ունեին և սովորելու, գիտություն և լուսավորություն յուրացնելու, գործ և առևտուր անելու համար, թեև այս վերջին հանգամանքը չափազանց թույլ է շեշտված պատմական նշանակություն ունեցող փաստերի մեջ։ Հարկավ, այսքան կենդանի հարաբերությունները միշտ այն երևույթը չունեին, որ պետական թե կուլտուրական կարիքներով Բյուզանդիոն գնացած հայը, այդտեղ կարճ թե երկար ժամանակ մնալուց հետո, անպատճառ վերադառնում էր հայրենիք։ Անշուշտ լինում էին և շատ այնպիսիները, որոնք հենց այնտեղ էլ մնում էին, Բոսֆորի գեղանկար ափերի բնակիչ դառնում։ Այնպես որ ոչ մի բան մեզ չի արգելում ենթադրել, որ հայկական գաղութ Կ. Պոլսում սկսել էր գոյանալ դեռ չորրորդ դարից։

Մայրաքաղաքի ձգողական ուժն ու հմայքը մեծանալ սկսում է այն ժամանակից, երբ Արշակունյաց պետությունը Հայաստանում սաստիկ թուլանում է, բերելով իբրև հետևանք նախ Հայաստանի բաժանումը Բյուզանդիայի և Պարսկաստանի մեջ, ապա և թագավորական գահերի ոչնչացումն երկու բաժինների մեջ էլ։ Մենք տեսնում ենք շարունակաբար, որ թե՛ պարսկական և թե՛ բյուզանդական իշխանության ենթարկված երկրամասերից հայերը, գլխավորապես, իհարկե, նախարարական դասակարգից, տեղափոխում են իրենց բնակությունը Կ. Պոլիս և դառնում են այնտեղի բնակիչներ։ Այս հոսանքը սաստկանում է, մանավանդ, արաբական տիրապետության շրջանում, երբ կործանվում է Սասանյան պետությունը և նրա հետ միասին փակվում է հայերի առջև պետական ծառայության ասպարեզն Արևելքում, որ բարձր պաշտոններ էր տալիս ընդունակ և գործունյա մարդկանց։ Պարսկական արքաների ոչն-

չացումից հետո միակ բյուզանդական արքունիքն էր մնում այն տեղը, ուր հայը կատարյալ հնարավորություն ուներ հագեցնելու իր փառասիրական և իշխանատենչ հակումների ծարավը նույնիսկ ավելի լայն ու խոշոր չափերով, քան այդ թույլ էր տալիս սասանյան իրականությունը։ Հայ նախարարները Կ. Պոլիս էին գնում իրենց գնդերով, հանդիսանալով բյուզանդական կայսրության մեջ համարյա բացառապես իբրև ռազմական ուժ, որին շատ կարոտում էր կայսրությունը։ Եվ այդտեղ ահա հայ գաղթական ազնվականությունը հասնում էր ամենաբարձր դիրքերի, ձեռք էր բերում անհուն հարստություններ, մեծ հռչակ, նույնիսկ ամբողջ պետությունը, դառնալով նրա կայսրը և այս ոչ միայն անհատապես, կարճ ժամանակով, այլև հաստատելով սերունդից սերունդ անցնող գահակալական հաջորդություն, դինաստիա (հարստություն)։ Լինում էին ամբողջ ժամանակաշրջաններ, երբ բյուզանդական ահագին կայսրությունը գլխովին գտնվում էր հայերի ձեռքին և կռվախնձոր էր դառնում հզոր և ընդունակ ռազմագետ հայերի միջև[1]։ Կուլտուրական կյանքն էլ պակաս հրապուրիչ չէր կամքի ուժով և տաղանդով օժտված հայերի համար, ու մի շարք հայազգի մատենագիրների գոյությունը բյուզանդական գրականության պատմության մեջ լրացնում է մի շարք դարերի ներկայացրած պատկերը. այն, որ մեծ կայսրության բազմահռչակ մայրաքաղաքն էր գնում Հայաստանից ամեն ոք, ով իր մեջ գործելու, որոնելու, պատիվ ու վայելք ձեռք բերելու կարողություն էր զգում։ Եվ կարծել, թե այդպիսի մի մեծ և խոշոր հոսանք, մանավանդ VII—XII դարերի ընթացքում, կարող էր տեղի ունենալ, առանց որի հայերը կազմեին Կ. Պոլսում խոշոր հայկական գաղութ, կլինի մոլորություն միայն։ Այդ գաղութը շատ ազդեցիկ և ուժեղ պիտի լիներ, մանավանդ, այն պատճառով, որ մայրաքաղաքի պաշտպանության համար Թրակիայում և Բալկաններում հիմնված էին բազմաթիվ զինվորական գաղութներ, ուր բնակեցված էին Հայաստանից բռնի գաղթեցված հայեր։

Եվ այսպես, ահա Կ. Պոլիսն իր գոյության ամենահին ժամանակներից հանդիսանում է հայ ժողովրդի կենսունակ հյութերը ծծող, իր մեջ կլանող մի հսկայական բերան, և այս դերի մեջ նա մնում է մինչև այսօր։ Սակայն հազարավոր տարիների այս գործը միակերպությամբ չի կատարվել, այլ ունեցել է իր երանգավորումները, որոնք կախված էին այն հանգամանքից, թե ինչ տեսակ իրականություն էր տիրում Բոսֆորի ափերին։ Բյուզանդական շրջանում հայկական գաղութը, որքան և ազդեցիկ ու բազմամարդ լիներ նա, չէր կարող փոքրիշատե նկատելի հետք թողնել իբրև ազգային ինքնուրույն խմբավորում։ Եվ իրավ, նախաթուրքական Կ. Պոլսում հայությունը գրեթե ոչ մի հետք չի թողել, եթե հաշվի չառնենք մի քանի տեղեկություններ, որոնք վկայում են, թե հայերը բյուզանդական տիրապետության վերջին շրջաններում ունեցել են իրենց եկեղեցին, թե եկեղեցիները։ Եվ այս հասկանալի է միանգամայն պարզ պատճառներով։ Ամենից առաջ այն, որ գլխավորապես ռազմիկ տարրերից էր կազմվում այդ գաղթականությունը, որ և ուներ իր հատուկ շահերն ու տենչերը։ Հայը Բյուզանդիայում սրի մարդ էր և գիտեր միայն տիրել և վերցնել։ Իր այն փառահեղ դիրքին նա ամենայն հեշտությամբ զոհում էր իր ազգային շահերը։ Այնպես որ այդ իշխողները, մասնավորապես ամենից շատ առաջացածները, ինչպես էին օրինակ, կայսրները, իսկապես միայն ծագումով էին հայ, շատերը միայն իրենց հայկական անունները պահած հույներ էին կամ, գործածելով այն ժամանակների հատուկ անվանումը,

---

[1] Մենք այս բոլոր շարժումները մանրամասնաբար նկարագրել ենք իրենց տեղերում, տե՛ս հատոր Բ, գիրք Ա, գիրք Բ։

հոռոմներ էին։ Ազգային կուլտուրական ինքնորոշում և ինքնամփոփում հայերը կարող էին պահպանել այն ժամանակներին միայն մատչելի միջոցով՝ իրենց ազգայնացրած պաշտամունքի, այն է՝ եկեղեցու հովանու տակ։ Բայց բյուզանդական հանրածանոթ ֆանատիկոս անհամբերողության կենտրոնը կազմող Կ. Պոլսում չէր կարող գոյություն ունենալ հայկական ինքնագլուխ եկեղեցի, որ անխնա հալածվում էր կայսրության մեջ իբրև հերձվածողական և հերետիկոսական։ Եվ հայ զորավարներն ու զորականները չպիտի պահպանեին և պահանջեին դավանական անկախություն, քանի որ այդ կարող էր միմիայն խոչընդոտ դառնալ իրենց ասպարեզում և քանի որ հոռոմացումն էր նրանց առջև բաց անում փառքի և հարստության լայնարձակ պողոտաներ մինչև նույնիսկ կայսերական գահը։ Այս բարձրությունների վրա պահվել կարելի էր միմիայն հույն կղերի հաճությամբ և աջակցությամբ, մի բան, որին երբեք, իհարկե, չէր արժանանա մի հերետիկոս հայ։

Բայց հանգամանքները ծանր և խոր հեղաշրջումների են ենթարկվում Հայկական բարձրավանդակի վրա և մեծամեծ տակնուվրայություններ են մտցնում հայ ժողովրդի ճակատագրի մեջ։ Միջինասիական հորդաների (նախ՝ սելջուկներ, ապա՝ մոնղոլներ) հեղեղանման արշավանքները գրեթե իսպառ ջնջում են ռազմիկ տարրերը Հայաստանի հայության մեջ, դարձնելով ժողովուրդը կատարելապես անպաշտպան, ամեն մի ուժեղի կամքին ու քմահաճույքին մատնված մի անասնական հոտ։ Այս սասանեցուցիչ աղետների հետևանքով էլ փոխվում է հայ գաղթականության կերպարանքը։ Այլևս չկան պատերազմական տարրեր, նախարարությունները անհետացել են, նրանց զինվորները դարձել են հարստահարվող անզեն ամբոխ, որով հարստություն ու իշխանություն որոնողների փոխարեն դժբախտ երկրից դուրս են հոսում դեպի աշխարհի զանազան կողմերը, այժմ արդեն ուրիշ տեսակ մարդկային զանգվածներ։ Տնտեսական տագնապի առաջացրած դաժան անհրաժեշտությունը հալածական է անում գյուղացուն, քշում է նրան օտարություն՝ ֆիզիկական ծանր աշխատանքով ապրելու համար։ Իսկ քաղաքներից գաղթել սկսում են վաճառականներն ու արհեստավորները՝ օտար երկնքի տակ բախտ ու հանգիստ որոնելու համար։ Եվ ահա հայկական այն գաղթավայրերում, որոնք մայր հայրենիքից չափազանց շատ հեռու չէին, երևան է գալիս գլխավորապես հայ աշխատավոր դասակարգը՝ գյուղացիություն և արհեստավորություն, մինչդեռ վաճառական դասակարգի համար հեռավորության կամ մերձավորության հարց չկա։ Եթե մինչև նախարարական կազմակերպության բնաջնջումը հայ տարրը դրսի աշխարհին հարկավոր էր գրեթե բացառապես իբրև պատերազմական նյութ, այժմ, երբ նա բոլորովին կորցրել էր իր նախկին դիրքը, առևտուրն էր դառնում այն միակ հնարավոր, միակ թույլատրված ասպարեզը, ուր հայը կարող էր փոքրիշատե ազատ կերպով զարգացնել իր ցեղային ընդունակությունները։ Եվ ընդունակություններ նա, ճիշտ որ, ցույց է տալիս առևտրական աշխարհի մեջ, թեև ոչ այն փայլով ու մեծ տաղանդով, ինչ մինչև այդ ցույց տվել էր զինվորական և քաղաքական ասպարեզներում։ Բայց և այնպես, հայ վաճառականը բավական ճարպիկ ու եռանդոտ էր, շատ խոշոր դեր էր կատարում Արևելքի վաճառականության մեջ, ուստի նա ցանկալի գաղթական համարվեց ամեն տեղ, ուր հարկավորություն էր զգացվում ծաղկեցնել վաճառականությունը։ Այսպիսով, հայ առևտրական դասակարգի համար ստեղծվում է արտոնված միջազգային դիրք։ Նրան տրված արտոնությունների մեջ առաջնակարգ տեղ է գրավում ազգային-կրոնական ինքնավարությունը, որ և շատ էր նպաստում, որ հայ վաճառականությանը բոլորովին օտար և հեռավոր աշխարհներում երկար պահպանե իր ազգային ուրույն դեմքը։

Ահա այս տեսակ տարրերն էլ գերակշիռ հանդիսացան Կ. Պոլսի հայկական գաղութի մեջ բյուզանդական տիրապետության վերջին շրջաններում։ Ազգային տեսակետից գյուղացի, արհեստավոր և վաճառական տարրերն ավելի կայուն և պահպանողական էին, մանավանդ որ ազգայնացումը չէր տալիս նրանց փառքի և հարստության այն դյուրությունները, ինչպես տալիս էր սրի մարդկանց։ Եվ, անշուշտ, այս բոլոր հանգամանքներով պետք է բացատրել այն իրողությունը, որ բյուզանդական շրջանի վերջին ժամանակներում հայ ազգայնությունը Կ. Պոլսում պաշտոնապես շեշտված է ազգային պաշտամունքի բացարձակ թույլատվությամբ։

Այս դրությունն սկսում է զարգանալ 1453 թվականից, երբ Կ. Պոլսում հաստատվում է օսմանյան թուրքերի տիրապետությունը։ Այս նվաճողները, գերազանցորեն խաշնարած-ռազմիկ մի ժողովուրդ, չէին կարող վայելել իրենց գրաված քաղաքակիրթ պետությունը, քանի որ մշակույթի, արդյունաբերության և առևտրի մեջ նրանք գրեթե դեռ երեխաներ էին, մանավանդ որ աշխարհակալության շշմեցնող բախտն էր նրանց ընկերակցում անփոփոխ, նրանց հատկացնելով սրի մարդ լինելու բացառիկ իրավունքը կամ, ուրիշ խոսքով, կառավարող-վերցնողի մենաշնորհը։ Այս պատճառով օսմանյան սուլթանները Կ. Պոլսում, սկսած նրա նվաճող Մեհմեդ Բ-ից, ընդգրկում էին որոշ չափով համբերող մի քաղաքականություն ռայաների վերաբերմամբ, ընդունելով այս բառն իբրև մի ընդհանուր և գործածական անուն, որ առավելապես ոչ իսլամ հպատակները (զիմմիները) նկատի ուներ։ Հույները զրկվելով իրենց քաղաքական բացարձակ տիրապետող դիրքից, վերածվելով պարզապես ռայայի դրության, ստացան կրոնական համայնքի կազմակերպություն, որ անձուկ շրջափակի մեջ կարող էին պահպանել ազգային իշխանության նշույլները հանձին իրենց կրոնապետի, որ նստում էր Կ. Պոլսում և կրում էր «տիեզերական պատրիարք» տիտղոսը։ Այս ձևով սուլթան Մեհմեդ Բ-ն կազմակերպություն տվեց և հայերին, հաստատելով նրանց համար էլ պատրիարքություն (1461), որ նույնպես, ինչպես և հունականը, տեղային նշանակություն չուներ, այլ ներկայացնում էր ամբողջ օսմանյան պետության մեջ ապրող հայությունը։ Այնուհետև Կ. Պոլսի հայ ազգաբնակությունն սկսում է հետզհետե աճել և մեծանալ, ընդունելով զանազան կողմերից թե՛ մեծաքանակ մասսայական գաղթականություններ և թե՛ հատ-հատ, շատ փոքրային խմբակներով տեղափոխվողներ։ Ազգային կրոնական վարչության կենտրոնի ներկայությունը Կ. Պոլսում, անշուշտ, նույնպես խոշոր դեր էր կատարում իբրև ձգողական ուժ, բացի այն բոլոր հարմարություններից, որ թուրքական լծի տակ անգամ տալիս էր եվրոպական հողի վրա կառուցված շքեղ և մեծանուն մայրաքաղաքը։

Հետևել քայլ առ քայլ Կ. Պոլսի հայ գաղթականության աստիճանական զարգացման, մեզ թույլ չէ տալիս պատմական տեղեկությունների աղքատությունը։ Միայն մոտավորապես XVII դարից է, որ մենք ի վիճակի ենք դիտել որոշ և խիտ ընդգծված շերտավորումներ այդ գաղութի մեջ։ Ամենից առաջ նշանակենք մի շատ հետաքրքրական երևույթ։ Գավառներից և այլ տեղերից գաղթած հայերը, փոքրիշատե երկարատև ժամանակ սուլթանների մայրաքաղաքում ապրելուց հետո, դառնում էին «ընիկներ», յուրացնելով առանձին և կղզիացած տեղայնության բոլոր ժխտողական հանգամանքները՝ զուտ գաղութային հոգեբանություն, որ ամեն բանի մեջ գերազանցություն տալիս է իր տեղային շահերին, բարձր կարծիք ունի իր մասին և արհամարհանքով է վերաբերվում դրսից եկողներին, մանավանդ մայր երկրից եկած խեղճ ու դժբախտ գյուղացիներին։ Մշակվում է, այսպիսով, ընիկ պոլսեցիություն, որ

իր ձեռքն է առնում ազգային բոլոր գործերի կարգադրությունը և հայության ներկայացուցիչը կոչվելու արտոնությունն է յուրացնում։

Այդ բնիկ պոլսեցիությունը բաժանված է երկու մասի, մոտավորապես նույն եղանակով, ինչպես այդ մենք տեսանք Թիֆլիսում, բայց, իհարկե, ունեին և իրենց տեղային տարբերությունները։ Մոքալաքների դասակարգին Կ. Պոլսում համապատասխանում էր ամիրաների դասակարգը, իսկ երկրորդ դասակարգը նույնպես բաղկացած էր արհեստավորներից, նույնպես բաժանված համքարությունների, որոնք ունեին իրենց հատուկ անունը՝ էսնաֆ։ Այս զույգ քաղքենի դասակարգերին հակադրված էր շատ խոշոր չափերով ժողովրդական մի մեծ զանգված, որ ներկայացնում էր եկվոր հայությունը, այսինքն՝ այն գավառացիներին, որոնք շարունակ թափվում էին մայրաքաղաք մեծագույն մասամբ սև բանվորական աշխատանք կատարելու համար (բեռնակիր, համալ, մշակ)։ Այսպիսիները գալիս էին մայրաքաղաք սովորաբար մենակ, առանց ընտանիքների, ապրում էին ոչ երկար ժամանակով և հայրենիք էին վերադառնում, երբ փոքրիշատե հնարավորություն էին գտնում։ Այս բազմությունն արդեն «գաղթական» անունով չի որոշվում, այլ «պանդուխտ» (ղարիբ) անունով։ Պետք է չմոռանալ, որ գավառները միայն իրենց աղքատ գյուղացիությունը չէին ուղարկում Կ. Պոլիս՝ հազարավոր բեռնակիր մշակների հետ գնում էին և չորբաճի—վաճառականներ ու արհեստավորներ, որոնք շտկելով իրենց համար Կ. Պոլսում տեղ ու պարապմունք, մտնում էին բուն պոլսեցիության շարքերը, դառնալով կամ ամիրա կամ այս ու այն էսնաֆի անդամ։

Կ. Պոլսի հայ ազգաբնակության այս երկու խոշոր տրոհումները, որոնց մենք կարող ենք տալ քաղքենիություն և գավառայնություն անունները, իրենց դիրքով, շահերով և ձգտումներով հակամարտության, ընդհարումների սկզբունքն էին կրում իրենց մեջ և հենց միմիայն դրանով ահագին դեր կատարեցին ոչ միայն Կ. Պոլսի, այլև առհասարակ ամբողջ արևմտյան հայության ճակատագրի մեջ։ Կարծես հայության բնազդն էր Բոսֆորի ափերը տանում և այնքան խտացնում ու թանձրացնում երկու մեծ ու հակոտնյա հասարակական տրոհումները՝ քաղքենիությունն ու գավառայնությունը, որպեսզի նրանց ընդհարումների հողի վրա պատվաստե այն ազգային շարժումները, որոնք լցնում են ամբողջ XIX դարը մինչև մեր օրերը։ Ահա այս ահագին կարևորությունն էլ մեզ պարտավորեցնում է մանրամասնորեն ծանոթանալ երկու տրոհումները բաղկացնող տարրերին։ Դիմենք նախ քաղքենիության երկու դասակարգերին։

Ամիրաներ: Այս ընդհանուր անունն էր տրվում Կ. Պոլսի դրամատեր, բուրժուա հայերի դասակարգին։ «Ամիրա» անունով մեր հին գրականությունը, մանավանդ Բագրատունյաց ժամանակներում, հասկանում էր առանձին երկրների և գավառների տերերին (պարսկական էմիր բառից, որ նշանակում է հրամայող), ինչպես էին, օրինակ, մեր Նախարարները։ Եվ զուր չէր, որ փողատեր դասակարգին հատկացված էր այդ օտարազգի իշխանական կոչումը, որովհետև նա նույնպես տիրող էր՝ գոնե իր ազգի մեջ։ Այս պատճառով է, որ նույն ամիրաները հասարակորեն կոչվում էին և իշխան, երբեմն նույնիսկ իշխանապետ։ 1860—1870 թվականների շրջանում էր, որ ամիրայական դասակարգն անհետացավ։ Մեր գրականության մեջ գտնում ենք այդ ժամանակների մի ամիրայի, վերջիններից մեկի մի հարևանցի նկարագրությունը, որ շատ աղոտ մի հասկացողություն է տալիս այդ իշխողների մասին։ Ահա մի քանի տողեր այդ նկարագրությունից. «Հագի՛վ հինգ-վեց տարեկան կայի, երբ լսելով իրմեն շատ տկնածողներուն շշնջյունը՝ թե Կարապետ ամիրան կամ

աղան (առսկ առանց հատուկ անունի, աղան) կուգա կոր, վաղեցի հասա Գուզկունճուգ—Իճատիյեի զառիվերին գլուխը, ուրկե պիտի անցներ ամիրան... Ինքը ձիավոր էր այն երեկո, և ձին կընթանար միջակ արագությամբ զառիվերն ի վեր. ետևեն կհևար հետևակ իր անբաժան ծառան՝ Գասպար. քանի մը անցորդ հայեր ալ բարևի կեցան հոն անցողաբար։ Խալֆայ Ամիրան՝ իր ձիուն վրա ուղղաբերձ հեծած՝ վաթսունեհինգնոց կթվեր... Ուներ լայնաշուրթն ֆեսի մը ներքև կիսովի զսպված ճակատ մը անկյունավոր, թանձր, լուրջ և բացակաց հոնքեր, ճերմակ և հորդեկ պեխեր, նույն գույնով և թուլացած այտեր, բերանն ալ բավական խոշոր։ Կլորակ գլուխն բովանդակ, որուն... ճոխ և գոհ և ծածուկ խինդ մը, ճարտարորեն հեցած հաստուն վիզի մը վրա՝ կճոճեցուներ ասիական ու բյուզանդական խառնվածո աղնվականություն մը, հրաման մը։ Շրթունքը կիսաբաց ու աչքն համարձակահայաց՝ ուներ դիրք մը ամենապատրաստ հանկարծ ըսելու և ակնարկելու վեհաբար. «Ի՞նչ է ան, ծո՛», որուն դեմի աղերսավորը պետք էր պատասխանել խոնարհությամբ ու ըսել անմիջապես «ինչ»-ը... Ամիրան բարևողներուն հետ՝ ես ալ կանոնական ահ ու դողով մը երկու-երեք վայրկյան կեցա ու դիտեցի մեծարյալ ձիավորը[1]»։ Այս դեռ Թուրքիայի համեմատաբար բարեկարգված ժամանակի ամիրայի նկարագիրն է։ Կարելի է երևակայել, թե ինչ կլինեին հայ հրամայողները թուրքական հին կարգերի ժամանակ, երբ ամեն մի իշխանություն երևան էր գալիս հպատակների մեջ արևելյան բռնակալության ամբողջ թափով։

Ամիրայական դասակարգի մեջ մտնել կարելի էր մի քանի ճանապարհներով, որոնցից մենք կհիշատակենք երեք գլխավորները։ Առաջինը սուլթանական պալատի մեջ որևէ տեղ ունենալն էր։ Մի քրիստոնյայի համար այդ փակված աշխարհում մտնելի կարող էին լինել միայն արհեստավորների տեղերը։ Հայերը տիրանում են մի քանի արհեստների, այն էլ ժառանգաբար և այսպիսով ստեղծում են արտոնվածների, տիրողների ամբողջ տոհմեր, դինաստիաներ։ Այսպես են, օրինակ, արքունի ոսկերչապետությունը, ճարտարապետությունը, դարբնապետությունը և այլն։ Այս արհեստների հետ կապվում են և մի քանի պետական ձեռնարկություններ, որոնք նույնպես ժառանգաբար անցնում են հայ ամիրայական տոհմերին։ Օրինակ, դրամահատության ամբողջ գործարանը, փողերանոցը, ուր կենտրոնանում էին պետության պատկանող ոսկու և արծաթի պահեստները, գտնվում էր արքունի ոսկերիչների, Տյուզյան տոհմի ձեռքին, ճարտարապետությունը (պետական շինարարությունը) նույնպես մի շատ մեծածախս և շատ բազմապահանջ ձեռնարկություն, Պալյան ամիրաների տոհմին էր պատկանում, արքունի վառոդարանները, որոնք վառոդ էին պատրաստում օսմանյան ամբողջ բանակի համար, հանձնված էին Տատյան ամիրային, որոնք կոչվում էին «վառոդապետ» (բարութբաշի), իսկ նավարանի մեջ դարբնության ամբողջ կառավարությունը հանձնված էր Տեմիրճիբաշյան (դարբնապետյան) ընտանիքին։ Այս հայերը, թեև արհեստավորի համեստ կոչման մեջ, դիրք էին ստանում օսմանյան պաշտոնական աշխարհում, քանի որ նրանց անձամբ ճանաչում էին և սուլթանները, որոնք մեծ վստահություն ունեին նրանց հավատարմության վրա, ուստի և պատասխանատու ու կարևոր հանձնարարություններ էին տալիս նրանց, պարգևատրում էին նրանց հաճախ այնպիսի արտոնություններով, որոնք բացառիկ դիրք էին ստեղծում նրանց համար, օրինակ, առանց մաքսի և տուրքերի առևտուր անելու իրավունք և այլն։ Այսքանն արդեն բավական էր, որ այս տեսակ արհեստավոր ամիրաների հեղինակությունն ու պատիվը շատ բարձր լինի,

[1] Հ. Գ. Մ., Մանկական պատմություն հայ մեծատուններու, Կ. Պոլիս, 1910, եր. 12։

մանավանդ, նրանց ազգակիցների մեջ. բացի սուլթանական պալատներից հայ արհեստավորները նույն տեսակ դիրք ստեղծում էին իրենց համար բարձրաստիճան փաշաների ապարանքներում։ Այսպես, շատ հայտնի է վանեցի Ռահիջանը, XVII դարում, մի չափազանց ուժեղ իշխանավոր, որ, սակայն, ոչ այլ ինչ է, եթե ոչ մեծ վեզիրի «քյուրքճիբաշին» (մուշտակագործների գլխավորը)։

Այսպիսով մենք իմանում ենք, որ ամիրայությունն էլ, Թիֆլիսի մոքալաքության պես, իր մի թևով միանում էր արհեստավորության հետ։ Արհեստավորից ամիրա դառնալու համար անպատճառ հարկավոր չէր, որ արհեստավորը սուլթանական պալատում կամ փաշայության ապարանքում տեղ ունենար։ Էնաֆի այս կամ այն ներկայացուցիչը կարող էր ամիրայանալ հենց միայն իր ձեռք բերած հեղինակությամբ, մանավանդ, հարստությամբ։ Մեր առջև կա դեպք, երբ հացագործների գլխավորը (էքմեքճիբաշի) ամիրաների դասակարգի մեջ շատ զորավոր դիրք է բռնում։ Սակայն, առհասարակ, արհեստավոր ամիրաներից ավելի բազմաթիվ էին և ավելի նշանավոր դեր կատարում էին վաճառական ամիրաները, որոնք հայտնի էին սեղանավոր (սարաֆ, բանկիր) անունով։ Նրանց մեջ աչքի էին ընկնում իրենց թվով և ճարպկությամբ, մանավանդ, Ակն քաղաքից կամ նրա մոտիկ գյուղերից եկածները։ Սովորաբար այս վաճառականները այնքան աչքի ընկնող դիրքի էին հասնում օսմանյան սուլթանների և ավագանու դռներին թե՛ Կ. Պոլսում և թե՛ ուրիշ տեղերում (օրինակ՝ Եգիպտոսում), մենաշնորհներ էին ստանում առևտրի մեջ, այդպիսով ուժեղացնում էին իրենց հարստությունները, ապա դառնում էին սեղանավորներ, կենտրոնացնում էին ձեռքում պետության ելևմտական քաղաքականությունը և այսպիսով ծանրանում անխտիր ամբողջ ազգաբնակության վրա։ Պետության վարչական ձևը խարսխված էր այնպիսի նախնական հիմքերի վրա, որ ոչ մի փաշա չէր կարող երկրի կառավարիչ դառնալ առանց իր սեփական հայ սեղանավորն ունենալու։ Եվ սարաֆ ամիրան հաճությամբ էր ընդունում այս կամ այն վեզիրի, նահանգապետ փաշայի ելևմտական գործերի հանձնումը, քանի որ այս միջոցով նա կարողանում էր վաշխառուական ցանցերի մեջ գցել ամենաուժեղ իշխանավորներին անգամ՝ իր անձնական հարստությունները բազմապատկելու համար։ Սեղանավորի ճանկերում սեղմված ամենազոր փաշան, իհարկե, չէր վհատում և դիրքը պահպանելու համար ինքն էլ իրեն հանձնված ազգաբնակությունն էր կեղեքում։ «Փաշաները,— ասում է XIX դարի պատմագիր Գերվինուսը,— իրենց տեղերը գտնելու ժամանակ դառնալով հայ վաշխառուների պարտականները, քաղցած գայլերի պես հարձակվում էին գառների վրա»[1]։ Սարաֆ ամիրաների ավերիչ դերը մանրամասն նկարագրել են և եվրոպացի գրողները, և դրանցից մի երկուսի վկայությունները մենք կբերենք այստեղ՝ արևմտահայերի կատարած թարգմանությամբ։

«Հայերը,— գրում է այդ հեղինակներից մեկը, որ Կ. Պոլսի անգլիական դեսպանության քարտուղարն է եղել երկար ժամանակ,— էին և են դեռ Թուրքիայի ամենավաճառ և ամենահարուստ ժողովուրդը, որով և լավագույն երաշխավորություններն եղած են առաջի Բ. դռան, ըլլալով ներհուն թուրք լեզվին, ըլլալով նաև հավատարիմ ռայաներ, կը մատուցանեն պաշտոնատար փաշաներու բոլոր այն պետքերը, որ հանձնարարելի կըլլան իրենք թուրք վարչապետի մը հանդեպ, իբրև կարող ու ժիր մարդ գործի, իբրև ամուր սեղանավորներ, իբրև հլու վարկատու։ Հարկերն հաճախ գանձվելով բնական նյութերու ձևին տակ՝ հայերուն տաղանդը իբրև վաճառական ու սեղանավոր,

[1] Г. Гервинус, История девятнадцатого века, т. V, Спб., 1868, с. 5.

կրկնապես օգտակար կդարձնե անոնք և կընծայե անոնց շատ առիթներ արագարագ դիզելու մեծ հարստություններ։ Ինք վեհ. սուլթանն ալ հաշտ աչքով կը նկատե անոնց բարեբաստ հաջողությունները, այնու մանավանդ, որ անոնց հարստությունները չեն դոհվիր շվայտությամբ, ինչպես կըլլան փաշաներու հարստությունները, այլ հոգածությամբ կպահվին կմնան իրենց դրամարկղերուն մեջ՝ մինչև որ կառավարական կամք մը կամ պետք մը դուրս բերե անոնք աճեցունելու համար միրիի հասույթները... Այսպիսի գործառության համար մեծաքանակ դրամագլուխներ հարկ են, որով սարաֆներու թիվը կը թվի հասած ըլլալ 80—100-ի մը. ու եթե իրենք մերժեն երաշխավոր ըլլալ թուրք կառավարիչի մը համար՝ այդ կառավարիչն արժեք չունենար հաջս կառավարության պարզ անհատե մը ավելի. որով այդ սարաֆներն են իրապես գավառներու վարիչներն ու կվարեն ըստ հաճույս և ի շահ անձանց։ Այս իսկ վերջին առենները այնքան հզորացուցած են իրենց կշիռն որ ոչ մեկ սեղանավոր կը հավանի սարաֆն ըլլալ փաշայի մը (որ բարձրացած է այդ աստիճանին՝ կրնանք ըսել՝ բարեհաճությամբ սարաֆին), եթե փաշան չճարե վկայագիր մը անոր նախորդ սեղանավորեն հաստատելու համար, թե վճարած է անոր իր բոլոր պարտքը։ Ենթադրենք, որ փաշային վճարելիք գումարի առ կառավարությունն ըլլայ 500,000 դրուշ (5000 ոսկի) վճարյալ քառորդ մասամբ, սեղանավորը նույն հետայն մեկ անգամեն պարգևատվությամբ մը կառնե փաշայեն ընկալագիր մը ամբողջ այդ գումարին համար, և այս ընկալագիրը կբերե իրեն առնվազն երկու, առ հարյուր (ամսե ամիս) տոկոսիք մը։ Ապա պետք է հայթայթել փաշային զենք, շալեր, չիպուքներ, ձիեր, որոնց համար սեղանավորը կառնե 10 % հանձնարարագին մըն ալ։ Փոխարեն ստակները պետք է վճարվին երկու, չորս ու վեց ամսվան միջոցներուն. բայց ինք անմիջապես կառնե փաշայեն ընկալագիր մը ամբողջ գումարին համար՝ մյուս ընկալագիրին նման տոկոսիքի ենթարկյալ։ Երբ քիչ առենեն փաշան հասնի նշանակյալ գավառը պարտի ջոկել սեղանավորին նվեր մը հազարակայ հասնն հարյուրին տասը կամ հինգ արժեքով, իբր օրինավոր խայրիք իր պաշտոնին, նմանապես նվեր մը սեղանավորին գործակատարին ալ՝ իր գավառին պես-պես արտադրություններեն։ Բայց երբ սեղանավորն իմանա իր գործակատարեն՝ թե փաշան դրամ կը դիզե ամիջապես կը դրկե անոր ծանուցագիր մը սա ձևով. «Դժբախտաբար ձեր բարձրության դեմ տրտունջներ հասած են հոս, բայց ես լռեցուցի անոնք ճարտարությամբ։ Այս գործ 10.000 դրուշի մը ծախք պատճառեց ինձի, զոր անցուցի ձեր հաշվույն, խնդրեմ հաճեցեք անցունել զայն պահանջքիս կողմը»։ Կրնա ըլլալ, որ այս ծախքն իրա՛վ եղած ալ ըլլա, բայց և հաճախ շինծու կըլլա։ Թերևս կարծվի ալ, որ եթե երբեք այսպիսի փաշա մը սատրազամ (մեծ վեզիր) ըլլա՝ պիտի ջանա վրեժն առնել այսօրինակ անիրավության մը, բայց բնավ այդպես չէ։ Հայերն իրենց հարստությամբն հայթայթած ալ են իրենց «թարաֆ»-ներ (կողմնակիցներ), ճարպիկ միջոցներ ու բավական հզոր ազդեցություն մը՝ նպաստավորելու համար սատրազամին անվանումն իսկ, և գործի վրա գտնվող թուրքերը կը համարեն սեղանավորին հարստահարություններն իբրև հարկավոր չարիք, որ և աղբյուրներ են իրենց ալ հարստության։ Սատրազամ ընտրյալն ալ ունի ուրիշ շահ մը ևս խնայելու իր սեղանավորին. նա կընդունի անկե իր պարտքերուն ջնջումը ի վարձ պաշտպանության, զոր կընձեռնե սեղանավորին ընդդեմ ներհակ ազդեցությանց մյուս փաշաներուն։ Ամենեն հարուստ սեղանավորին ունեցածը կրնանք ենթադրել մեկ միլիոն լիրա ստեռլինգ մը։ Բայց և այնպես՝ իրենց միշտ անակնկալով մը ամեն բան կորսնցնելու վտանգի մեջ են։

Գավառներու մեջ փաշայի ընկերացող խորհրդական գործակատարն հաճախ կառնվի սարաֆին ազգականներեն և բոլոր դրամական գործերը կըլլան անոր ձեռքով. դրամին սակն ու հանձնարարող չեքը շատ աչքի զարնող գումարներ են: Այս գործակատարն է, որ կհավաքե գավառին հասույթները, որոնց հանդեպ իր ներկայացուցած տունն երաշխավոր եղած է. և այդ հասույթ-արդյանց վրա շահավաճառներ կընե՝ շատ վար գինով մը ձեռք բերել հնարելով ամեն բան. ըստ այսմ՝ ամեն փաշայի կցորդ կընթանա վերատեսուչ մը ինչպես որսացող ձուկերուն խեցեմորթ մը, որմե չկրնար պրծիլ բովանդակ ճիգերովն անգամ: Փաշային բոլոր շարժումները կհսկվին. անոր բոլոր եկամուտներուն տերի պես է վերատեսուչը, և կըմղե զայն բռնական ու հարստահարիչ գործերու՝ չթողլով, որ ստանա նա իր ամբողջ հասույթը: Փաշան չկրնար ճամփու դնել զայն, վասնզի կապված է անոր տիրոջ երաշխավորությանն իր պաշտոնին բովանդակությանը»[1]:

Իսկ մի կաթոլիկ հույն բժիշկ հետևյալն է գրում. «Հայերն առհասարակ լավաբարո, աշխատասեր, վաճառական ժողովուրդ մըն են: Իրենց սեղանավորական տուները կը վայելեն մեծ վստահություն. անոնք փաշաներու մեծագույն մասին, մեծ անձնավորությանց, մասնավորաց հարստությանցը պահապաններն են: Անոնք կը հայթայթեն և պետք եղած դրամը փաշաներուն՝ հաստատվելու համար իրենց պաշտոններուն մեջ, և արքունի փողերանոցին ընդհանուր տնօրենը սովորաբար հայ մը կըլլա»[2]:

Այս նկարագրություններին մենք կավելացնենք մի քանի մանրամասնություններ ևս, որպեսզի լրացվի աղբյուրների այն ցանկը, ուսկից սեղանավոր ամիրաները հավաքում էին իրենց միլիոնները: Նրանք, բացի իրենց հովանավոր փաշաներին պարտք տալուց, իրենց վրա էին վերցնում և նրանց տների տնտեսական կառավարությունը, այն է՝ ստանում էին եկամուտները և հոգում էին ծախսերը, իսկ փաշաներն երբեք չէին էլ երազում ստուգել նրանց ներկայացրած հաշիվները: Որքան շատ էին սարաֆները վարկ տալիս փաշաներին, այնքան բարձր էր լինում նրանց հեղինակությունը, և այս հանգամանքից էլ նրանք օգուտներ էին հանում իրենց համար: Եթե մեկը, լիներ նա օտարական թե թուրքահպատակ, կարիք էր ունենում իր գործի համար ուղղակի դիմում անել փաշային, նա, ըստ օրինականացած սովորության, պիտի միջնորդ ընտրեր փաշայի սեղանավորին, որին և վճարում էր պայմանավորված մի գումար: Ինչպես հայտնի է, Թուրքիայում ոչ մի բան չէր կատարվում առանց բախշիշի և այս անունով կաշառքից չէին հրաժարվում նույնիսկ և սուլթանները: Սարաֆները, ստանալով, իբր միջնորդ, բախշիշ փաշաների համար, ամբողջը նրանց չէին տալիս, այլ վերցնում էին և իրենց բաժինը: Հիշատակենք, վերջապես, և այն, որ հայ սարաֆներին էր դիմում և ամեն մի հասարակ թուրք, երբ փողի կարիք էր զգում: Իր փոխառությունը նա պիտի ապահովեր գրավականով: Սարաֆը սովորաբար գերադասում էր գրավական վերցնել արժեքավոր իրեր և ոչ թե անշարժ կալվածներ, որովհետև իրերը նրա

[1] D. Urquhart. Թուրքիա և յուր պարագայքը, ֆրանս. թարգման. տպ. Բրյուսել, 1837, էջք 155—159 (տե՛ս Յ. Գ. Մ., Մասնական պատմություն հայ մեծատուններու, Կ. Պոլիս, 1910, եր. 116—119):

[2] Marc-Philippe Zallony, Essai sur les Fianariotes, Marseille 1824 (տե՛ս «Մասնական պատմություն հայ մեծատուններու», եր. 119—120):

սեփականությունն էին դառնում չորս-հինգ տարվա ընթացքում, անչափ տոկոսների պատճառով»[1]:

Եվ այսպես, Թուրքիայի ամբողջ դրամագլխի մեծագույն մասը գտնվում էր հայ սեղանավորների ձեռքին, տալով նրանց գերքին կարևոր նշանակություն նույնիսկ պետական տեսակետից: Եվ բնական է, որ այսպիսի մի միջավայրում հրամայողական լիներ ամեն բանից վեր փառքի և իշխանության ձայնը: Հարստությունը տանում է դեպի հասարակության բարձրերը, դեպի ազնվականություն: Վաշխառությամբ և ժողովուրդներ հարստահարելու միջոցով գանձերի տիրանալուց հետո հայ սեղանավորին ուրիշ փափագ չէր մնում, բայց միայն լինել իսկական իշխան, գրավել հասարակության մեջ այն տեղը, որ կոչվում է գլուխ, հրամաններ տալ, բազմաթիվ գլուխներ խոնարհեցնել իր առջև: Այս հարկավոր էր ոչ միայն անձնական փառասիրությունը հագեցնելու համար, այլ, մանավանդ, ավելի գործնական նպատակներով, այն է՝ շահն ավելացնելու, դրամագլուխն ապահովելու և հակառակորդների դեմ հաջողությամբ մրցելու համար: Ամիրայական դասակարգը միատարր չէր: Մոքալաքության նման, նա բաժանված էր երեք աստիճանների և այս աստիճաններն էլ ունեին իրենց ստորաբաժանումները: Այս անհավասարությունը, ստորադասումներն ավելի ևս պիտի սաստկացնեին դասակարգային ներքին շփումները, մրցություններ առաջացնելով բարձր գնալու, հակառակորդներ տապալելու նշանաբաններով: Ամիրայական տոհմերից ոմանք փորձում էին հին եղանակով բարձրացնել իրենց հեղինակությունը, այն է՝ հրատարակելով իրենց շարունակություն հին երևելի ծնունդների: Այսպես, Ապրոյան ընտանիքն իրեն հրատարակում էր Անիից գաղթած և Բագրատունի թագավորների տոհմից առաջացած[2], իսկ Ալլահվերդյան տոհմը՝ Կամսարական իշխաններից[3]:

Սակայն օսմանյան պետական կարգն այնպես չէր, որ հին ծագումը, այն էլ մի քրիստոնյայի, տար արտոնագիրը: Այդ պատճառով էլ ամիրայությունը իրական իշխանություն որոնելով իր ազգային շրջանակի մեջ, չգտավ և չէր էլ կարող գտնել մի ուրիշը, բացի պատրիարքական իշխանությունից, որ և իր ձեռքն առավ երկարատև և կատաղի մրցությունների առարկա դարձնելու համար: Կ. Պոլսի գաղութային պատմությունը, որ մենք կպահենք իր տեղին[4], լիքն է այդ մրցությունների և կռիվների արարքներով, որոնք կատաղի, նույնիսկ և արյունոտ բնավորություն են ստանում, մանավանդ XVII և XVIII դարերում: Պատրիարքարանի շուրջը կազմվում էին կուսակցություններ, հաճախ մի քանի հատ, որոնք ահագին աղմուկով և խռովություններով գահընկեց էին անում պատրիարքներին, նորերը դնում: Կռիվը հարատև էր: Հաղթությունը շատ անգամ կարճատև էր, և հազիվ փոքր ինչ հանդարտացած կրոնական համայնքը նորից սկսում էր տակնուվրա դառնալ, նորից ներքին պատերազմի դաշտը նետվել: Կուսակցությունների ձգտումները զանազան անուններ ունեին և զանազան առիթների էին հարում: Սակայն էությունը դրանից չէր փոխվում և միշտ իրական էր մնում այն հանգամանքը, թե պատրիարքական իշխանությունը խլելն էր իրական շարժառիթը: Թուրքաց կառավարությունը չէր հարուցանում արգելքներ այդ խռովությունների դեմ, քանի որ

[1] M. A. Ubicini, Lettres sur la Turquie, t. II, Paris, 1854, p. 313—314.

[2] Վ. Զարդարյան, Հիշատակարան, հատ. Բ, Կ. Պոլիս, 1911, եր. 267:

[3] «Ազգաբանություն Ալլահվերդյան տոհմի Կամսարականաց, գրեալ ի տեր Սերոբե վ. Բաճյան», Վենետիկ, 1908:

[4] Կ. Պոլսի, իբրև գաղթականության պատմությունը կքննվի հայ գաղթականություններին նվիրված (Ե) հատորի մեջ:

գնաս չունեն դրանցից, այլ միայն օգուտ։ Բանն այն է, որ մրցող կուսակցությունները իրենց ուժով, առանց մեծ վեզիրի հրամանի, չէին կարող իրար տապալել, իսկ դիմումներ անել մեծ վեզիրին և ուրիշ պաշտոնյաների չէր կարելի, առանց մեծամեծ կաշառքների։ Կառավարական հրամանը պարզապես անուրջի էր հանվում և դատը շահում էր այն կողմը, որ շատ կաշառք էր տալիս։ Այս ճանապարհով ժողովրդական անհուն հարստությունները անցնում էին կառավարությունների անհատակ գրպանները։ Եկեղեցիները մերկացվում էին իրենց անոթներից, զարդերից և դրամագլուխներից շաղ կաշառքներ դառնալու և Թուրք փաշաներին մատուցվելու համար։ Այլևս հաշվի չէին առնվում մարդկային տանջանքներն ու զոհերը՝ նավարանների տաժանակիր աշխատանքներին դատապարտվածներին, աքսոր ուղարկվածներին, կախաղան հանվածներին ու այլ միջոցներով սպանվածներին[1]։ Կռիվը մի ժամանակ եկավ հանգեց իր խակական նպատակին, այն է աշխարհական մարդիկ էին պատրիարքի վարչական պաշտոնը կատարում, սակայն մի կարճ միջոց այդպես մնալուց հետո վերահաստատվեց հին եղանակը՝ կուսակցության նվիրված հոգևորականին պատրիարք դարձնելը և նրա իշխանությունը շահագործելը։

Դալով այն հարցին, թե այս մշտատև պայքարներին ինչ տարրեր էին մասնակցում, մենք պիտի առանձնապես շեշտենք, իբրև շատ կարևոր մի հանգամանք, որ ժողովրդական խավերի մեջ XVII—XVIII դարերում դեռ չկա գիտակցություն, ուստի և մասնակցողներն ամենքն են՝ և նրանք, որոնք այդ կռիվների արդյունքով պիտի տիրապետություն հաստատեն, և նրանք, որոնց վրա պիտի հաստատվի այդ տիրապետությունը։ Կուսակցական բաժանումները դեռ բստ շահերի գիտակցության չէ, այլ այնպես, ինչպես Թելադրում են պատահական հանգամանքներն անգամ, օրինակ՝ հայրենակցությունը, բայց ավելի հաճախ, իհարկե, պարագլուխ հանդիսացող ամիրաների անձնական աղդեցությունը, բաժանված կաշառքները և այլն։ Մասնակցողների մեջ են ոչ միայն բնիկ պոլսեցիության երկու դասակարգերը՝ ամիրայություն և էսնաֆներ, այլ երբեմն նույնիսկ գավառացիությունը, թեև այս պոլսեցիության մեջ միշտ ապրում էր անհաշտ հակառակությունը։

Այս մաքառումների աղգամիջյան կռիվների գնով էր, որ ամիրայությունը XVIII դարի երկրորդ կեսից գլուխ հանեց իր տիրապետական տենչերը և իր իրավունքը դարձրեց պատրիարքներ ընտրելը և հրաժարեցնելը, այսինքն՝ ազգային իշխանությունը միակ իր դասակարգային շահերին ծառայեցնելը։ Սակայն մենք չենք ասի, թե երկարատև խռովությունները բոլորովին ոչ մի օգուտ չբերին հայ ժողովրդին։ Նրանք դաստիարակեցին ժողովրդական զանգվածները փողոց դուրս գալու, համախմբված կամք արտահայտելու և բողոքի ու պահանջի ուժ ցուցադրելու համար։ Իսկ այսպիսի մի դաստիարակություն էլ հենց հարկավոր էր, որ նույն ուժը XIX դարում դարձվի արդեն նույն այդ ամիրայության, այդ բռնակալ և կեղեքիչ դասակարգի տիրապետության դեմ։

Դիզելով հարստություններ Թուրք փաշաների միջոցով ազգաբնակությունը կեղեքելով, հայ ամիրայությունը, ինչ ասել կուզի, ստեղծել էր իր համար մի հոյակապ բարեկեցություն հատակ բուրժուական իդեալներով, որի մի քանի բնորոշ մանրամասնությունները նկարագրված են մեր գրականության մեջ։ Հայ միլիոնատերերի հոյաշեն ապարանքները ձգված էին Բոսֆորի գեղածիծաղ ափերին, գրավելով հեռվից եկողին իրենց արտաքին տեսքով, որ կատարյալ երջանկության գաղափարն էր բերում։ XVIII դարի վերջերում այդ

[1] Մանրամասնություններով հետաքրքրվողներին հանձնարարում եմ իմ «Հայկական տպագրության» աշխատությունը, առաջին և երկրորդ հատորներ (Թիֆլիս, 1901, 1904)։

ապարանքները մտավ Վենետիկի Մխիթարյան վարդապետներից մեկը, նշանավոր գործիչ և գրող Հ. Ղուկաս Ինճիճյանը, որ հետևյալ տողերն է մտցրել Բոսֆորի ափերին և Կ. Պոլսի նկարագրությանը նվիրած իր ոտանավոր մի շատ ընդարձակ գրության մեջ.

Անցի նաւակաւ՝ ընդ ծով քաղաքին,
Տեսի և բզտունս՝ զամարանոցին,
Շրջեղ գեղեցիկ՝ ձգեալ առ ծովին,
Մինչ երանի տալ՝ բնակչաց նոցին։

Այսպես՝ արտաքինը։ Բայց շքեղության մեջ պարուրված ներքինը վերդովմունք է պատճառում բարոյախոս վարդապետին, և նա շարունակում է.

Մըտի շրջեցայ՝ մի-մի ըստ կարգին,
Քննեցի զկայս՝ ներքին վիճակին,
Մըտի անտրտում, առանց ինչ վշտին
Ելի դառնացեալ՝ տխուր վշտագին։
Զի զաղէտս լուայ՝ ինձ կսկըծելին,
Ցուրաքանչիւրոց՝ զհեծումն ցաւագին,
Կարծէի լրոսնուլ՝ ի խոսից նոցին,
Լըցայ Թախծութեամբ՝ և ես ընդ նոսին։
Ոմըն վըշտանայր՝ յախտից ընկերին,
Այլ ումն ի հաղբից՝ հակառակորդին,
Ոմըն ի չարեաց իւր պարտապանին,
Այլ ումն ի վարձոց իւր տան վարձկանին։
Թողում զտեսութիւն իւրեանց պարտիզին,
Մատչին զանգատել՝ առ անձուկ սրտին,
Ազգական բանալ՝ զախտ ազգականին,
Բարեկամ ըզգաւ՝ իւր բարեկամին։
Այրն զհեզգութիւն՝ զանգարծ կողակցին,
Կինն ըզխստութիւն՝ դժնեայ լըծակցին,
Որդւայք ըզգըրկումն՝ զեղբօր մըտերմին,
Մեծըն ըզփոքրուն՝ փոքրըն ըզմեծին[1]։

Դատարկ, անբովանդակ կյանք, որ, ի դեպ ասենք, հատուկ է առհասարակ փողավոր ավատական աշխարհին ամենուրեք, և նրա այս բողոքավոր նկարագրության վրա մեր հեղինակը մի ուրիշ տեղ ավելացնում է ուրիշ շեշտեր, շարունակելով բարոյախոսել.

Ունին հեշտալի՝ անդիս ի գրնին,
Ընդ նեղուց ծովուն՝ յամարանոցին,
Այլ չունին ինչ սիրտ՝ կեանք բանականին,
Ըզմայլել նովաւ՝ ի գործ Արարչին։
— Այնմ որ կարօտի հոգոց մարդկային,
Ոչինչ փոյթ ունին՝ ոչինչ համարին,
Գիտութիւնք բարիք՝ զարդք կենաց անձին,
Ցերկիր անկեալ կան՝ առաջի սոցին,
Առաքինութիւնք՝ բարոյականին,
Կրթողականօք՝ ըզկիրս սանձողին,
Օտար են սոցա՝ յանօգտից սակին,
Որք են տեղք կենաց՝ երկարօղք նըմին։
Ստանան զոհար՝ առ ի զարդ անձին,
Որ յինքեան է զարդ՝ ոչ բստացողին,
Մերժեն ըզբարին՝ բարոյականին,
Որ մարդոյն է զարդ՝ և ոչ ինքըն ինքնին.
Ոմանց լիացեալք՝ և յանկարգին,

[1] Հ. Ղ. վ. Ինճիճեան, «Ամարանոց Բիւզանդեան ի նեղուցին Կոստանդնուպոլսոյ, կոչեցեալ ի Տաճկաց Պօղազ-իչի», Վենետիկ, 1794, եր. 244։

Ողբան չունել ինչ՝ ըղկարևորին,
Քաղց ծարաւ ընչից՝ նախանձ ընկերին,
Ոչինչ ցուցանէ՝ զոր յանձին ունին։
Այլ որդեամբք ողբան՝ չունել զոր ունին,
Զի ոչ վայելեն՝ զինչսըն զոր ունին,
Ունին իղձ անյագ՝ փոխանակ ընչին,
Ոչ իշխեն ընչին՝ այլ յըղձից իշխին[1]։

Մի ուրիշ Մխիթարյան վարդապետ, Հ. Մանուել Ջախջախյան, XIX դարի առաջին քառորդում, կամենալով տալ երգիծաբանական բանաստեղծության նմուշ, նյութ է վերցնում, «իր խորթացեալ և աղաւաղ դարը հարուածելու» համար «խայթիչ և խիստ երգիծանքով» նույն ամիրայական հոյակապ ամառանոցները Բոսֆորի ափերին։ Ահա նմուշներ բանաստեղծի ծաղրից.

Կէսք ի Թրակեան Վոսփորոնի խցռնեալք ըսփիւռ,
Կանգնեն պալատ, կամ յորս երթան ի հեշտ զեփիւռ.
Կէսք յոսկեզօծ արշաւասոյր պարծին մակոյկ,
Կէսք բազմամեայ ոսկեքարիւ լընուլ Թակոյկ։
Այլք ի գնին գոտէմարտից յարձակ հովիտ,
Եւ կամ ի տես մականախաղ կանխիտ առ խիտ...
Ո՞ւր արդ նախնեաց վեպք պատմութեանց արարք պէսպէս.
Զի՞նչ մեր Վահագն արիացաւ և կամ Վարդգէս։
Այժմու զրոյցք,— զի՞նչ այն խոպոպ—զի՞նչ այն նարօտ։
Հնդկահանդերձք սամուրազարդք՝ ճոխ և կարօտ։
Փողոց փախան փոխան մրցականաց՝ սրբինգ սարեակ,
Անցուցանեն անգործ զնոցայն ողջոյն ցերեակ։
Իսկ ի գիշեր նարտ և սատրինջ միշտ խորասոյզ
Մաշէ զնոցայն ի յապշութեան ըզմիտս ի յոյզ։
Այլ ոք կընատ՝ մոտ առբազմեալ յիւր գեղանի,
Եւ սիրտն արտոր ի սէր պլրող միշտ գեղանի։
... Տեսցես բաժէպ և պըսակեալ ոսկեբարձ էշ,
Ի դամարճակ հանճարեղաց յոտոց ուղեղ։
...Թե կեանք նոցա անցցեն այսպէս՝ կարծեն միշտ տօն,
Գրեալք զանձինս յամենայնի գոհք ըն և օն...
Որպես անգէտ փակեալ չերամք յանձուկ ի բոյն
Անդ իւր օրոցք, անդ և դամբանք միշտ կենդանւոյն[2]։

Ազգային տեսակետից այս ոսկեզօծ ամիրայական միջավայրը, բայց նրա հետ և առհասարակ պոլսեցիությունը, ենթարկված էր սաստիկ օտարացման, ինչպես այս բնական էր մի գաղթավայրում և վայելողների թագավորության մեջ, որ օրենսդիր և կարգադրիչ էր հանդիսանում և մյուս քաղքենի դասակարգի՝ արհեստավորության համար։ Ահա ինչպես էր ներկայացնում Կ. Պոլսի հայությունը մեր անվանի գրողներից մեկը 1879 թվականին. «Դեռ շատ ժամանակ չէ, որ պոլսեցի հայք օսմանցոց նման իրենց կանանց համար ջոկ բնակարան ունեին. կանանց հագուստը օսմանցուհիացն էր, նրանց նման հարսանյաց հանդեսն էին կատարում, նրանց նման զրոսնում զվարճանում. մի խոսքով՝ քաղաքականապես միմիայն թուրքախառն և թուրքահնչյուն բարբառովն էին զանազանվում, այդ բարբառն էլ միմիայն կանանց միջումն էր խոսվում, տղամարդիկ առհասարակ թուրքերեն լեզվով էին գրում, մտածում, խոսում ու երգում և թուրքավար էին բան հասկանում, ինչպես եկեղեցումն անգամ եպիսկոպոսք և վարդապետք թուրքերեն լեզվով էին քարոզ տալի, նույնպես էլ և իրենք իրենց մտերմական և առևտրական թղթակցությունը և այս վերջին ժամանակներու մեջ մի քանի լրագիրք թուրքերեն լեզվով են լի-

1 Անդ., եր. 241։
2 «Տաղք Մխիթարեան վարդապետաց», հ. Բ., Վենետիկ, 1853, եր. 43։

նում»[1]։ Նույնանման վկայություններ մենք գտնում ենք և եվրոպական գրականության մեջ[2]։ Պոլսում ապրած մի ֆրանսիացի նույնիսկ գրում էր 1870 թվականին տպված իր գրքի մեջ. «Մի քսան տարի առաջ հայերը թուրք էին իրենց վարք ու բարքով և իրենց լեզվով»[3], իսկ 1830-ական թվականներից թուրքաց զինվորական ծառայության մեջ եղած գերմանացի սպա Մոլտկեն (վերջը հռչակավոր զորավար—ռազմագետ), ավելի ևս խիստ կերպով էր շեշտում այս հանգամանքը, գրելով իր նամակներից մեկի մեջ. «Հայերն ընդգրկել են նվաճող ազգի (թուրքերի) բարքերը և նույնիսկ լեզուն այն աստիճան, որ նրանց կարելի է անվանել քրիստոնյա թուրքեր. հույներն, ընդհակառակը, պահպանել են իրենց ինքնուրույնությունը»[4]։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ այս պատճառով էլ հայերը վայելում էին օսմանցիների կատարյալ վստահությունը, համարվում էին հավատարիմ հպատակ ժողովուրդ։ Բայց այս չէր խանգարում, որ հայ հարուստները նույնպես ենթարկված լինեին հարստահարվելու, իրենց ունեցածից զրկվելու վտանգին, որ սուլթանական ռեժիմի հատկությունն էր կազմում անխտիր բոլոր ազգերի և լեզուների վերաբերմամբ։ Ուստի ամիրաները հետևելով ընդհանուր սովորության, ստիպված էին լինում մի քանի տներ ունենալ մայրաքաղաքի զանազան կողմերում և ապրել այդ տեղերում զանազան ժամանակ իրենց կյանքը պահպանելու համար»[5]։

Բայց ամիրաների դասակարգի նշանակությունը բոլոր կողմերով ըմբռնած լինելու համար պետք է այստեղ, իբրև եզրափակում, ավելացնել, որ նրանց մեջ երբեմն երևան էին գալիս և հասարակական բնազդով օժտված անհատներ, որոնք և կատարում էին հանրաշահ գործեր, իրենց հավաքած հարստությունների մի, սովորաբար չնչին մասը զոհաբերելով իրենց ազգակիցների օգտին։ Այսպիսի անհատներից է կազմված «բարեգործ» կամ «բարերար» հորջորջված ամիրաների շարքը։ Այս հանրաշահ գործունեությունն, իհարկե, դասակարգային հատկություն չէր, բայց որ նրա մեջ առանձին «բարերար» անհատները որոնում և գտնում էին դարձյալ իրենց տիրապետական—դասակարգային շահերը, այս ավելի քան ակներև է։ Բարերարություններով ամիրաներն իրենց համար հմայք, հեղինակություն և երախտագիտություն էին ստեղծում հասարակության մեջ։ Եվ որովհետև, այնուամենայնիվ, փառքի ճանապարհով շատերը չէին գնում, ուստի հասարակական զարգացման և կուլտուրական արժեքների տեսակետից «բարերար» ամիրաները ճիշտ որ նշանակալի տեղ ունեին իրենց ժամանակի տարեգրությունների մեջ, և անկարելի է ուրանալ այն ծառայությունները, որ այս կողմից հարուստ սեղանավորները մատուցել են, օրինակ, դպրոցական գործի զարգացման առավելապես Կ. Պոլսում։ Այս ասպարեզում անուն է թողել, իբրև սկզբնավորող, Շնորհք Մկրտիչ ամիրա Միրիջանյանը, որ 1790 թվականին հիմնեց Կ. Պոլսում Հայոց անդրանիկ թաղային դպրոցը և նրա մոտ էլ մի փոքրիկ տպարան։ Սա մի առաջնակարգ և ազդեցիկ սարաֆ էր և երևի հենց այս պատճառով հաջողացրել է ստանալ սուլթանական հրաման դպրոց բաց անելու և պահելու համար։

1 Մարկոս Աղաբեկյան, Հայկական թատրոնի անցյալը («Փորձ» ամսագիր, 1879, № 10, եր. 60)։
2 Տե՛ս Ubicini, Lettres sur la Turquie , t. II, p. 309 (հայերի խոսակցական լեզուն, նույնիսկ իրար մեջ, թուրքերենն է) և Ch. Rolland, La Turqui : Contempornine, Paris, 1854, p. 292—293 (հայոց ընտանեկան կյանքը՝ թուրքաբարո)։
3 Ch. Mismer, Soirées de Constantinople, Paris, 1870, p. 361.
4 Lettres., du Marichal de Moltke sur l'Orient, Paris, s. d., p. 30.
5 Ch. Rolland, La Turquie Contemporaine, p. 291.

Մինչև այդ այդպիսի հրամաններ չէին տրվում, և երեխաների ուսուցումը կատարվում էր ծածուկ կերպով։ Մինչև 1800 թվականը, նույն ամիրայի ջանքով, բացվեցին և ուրիշ թաղային դպրոցներ, որոնք պահպանվում էին եկեղեցիների եկամուտներով և աշակերտական թոշակներով[1]։ Գնահատելի են և գրասեր ամիրաները, որոնք հրատարակության ծախսեր տալով երբեմն խոշոր գումարներ, մեկենաս հանդիսացան հրատարակչական մի շարք կարևոր ձեռնարկությունների համար։

Էսնաֆ: Արհեստավորությունը Կ. Պոլսի հայ ազգաբնակության մեծագույն մասն էր կազմում և, անշուշտ, ուներ նույն ներքին ինքնավարական-արհեստակցական կազմակերպությունը, որ գոյություն ուներ ամեն տեղ, թե՛ Թուրքիայում և թե՛ Պարսկաստանում։ Այս կողմից տարբերությունը Թիֆլիսի համքարությունների և Կ. Պոլսի էսնաֆի մեջ մեծ չպիտի լինի։ Այլ է այն նշանակությունը, որ ստացավ Կ. Պոլսի հայ էսնաֆը հասարակական կյանքի զարգացման մեջ։ Այստեղ նրա դերը գրեթե բացառիկ է, և համեմատել նրան կարելի է Արևմտյան Եվրոպայի այն քաղաքային արհեստավորական կազմակերպությունների հետ, որոնք կռիվ էին մղում իրենց իրավունքների, կամ, ուրիշ խոսքով, ռամկավարական սկզբունքների համար։ Հայ էսնաֆը Թուրքաց մայրաքաղաքում, ինչպես տեսանք, վաղուց էր վարժվում այն պայքարների մեջ, որոնք մղվում էին պատրիարքական իշխանության շուրջը։ Այդ պայքարների մեջ էլ նա կարողանում էր պահպանել իր արհեստակցական ներքին ինքնավարությունը։ Այսպես, XVIII դարի վերջին քառորդում, Զաքարիա պատրիարքի օրով կատաղի ֆանատիկոսության կերպարանք ընդունեց հայ ժողովրդի վրա հնուց ծանրացած անեծքը՝ ներքին եղբայրական պառակտումը, դավանական խտրությունների պատճառով։ Օգտվելով կաթոլիկ հայերի անպաշտպան դրությունից, միևնույն ժամանակ և գրգռվելով եզվիտ և այլ անուններ կրող կաթոլիկ անհանդուրժելի կղերականների արարքներից, հայ հոգևորականներն իրենց պատրիարքի հետ միասին անդուլ հալածանք էին վարում կաթոլիկության պինդ հարած հայերի դեմ, դիմելով շատ հաճախ ամենապժգալի մատնության։ Թուրք կառավարիչներին նրանք հավատացնում էին, թե միայն իրենք են սուլթանի ամենահավատարիմ հպատակները, և թե հայոց եկեղեցուց բաժանվածներն, ընդհակառակն, պետության թշնամիներ են, որովհետև նրանք հարած են ֆրանկների հավատին, իսկ ֆրանկները Թուրքիայի թշնամիներն են և իրենց դավանակից հայերի միջոցով լրտեսություն են անում օսմանյան պետության մեջ[2]։ Թուրք կառավարությունը, ոչ, իհարկե, ձրի՝ քանի որ այսպիսի սովորություն չուներ ոչ մի դեպքում, նպաստում էր հայ հոգևորականներին այս հալածանքների մեջ, և Զաքարիա պատրիարքն անարգել պատժում էր իրենց մայրենի եկեղեցու ծոցը վերադառնալ չցանկացող հայերին, դատապարտելով այդպիսիներին աքսորի, բայց ավելի հաճախ թիարանի դաժան աշխատանքներին։ Նույնիսկ կանայք չէին ազատվում այս պատիժներից։

Դավանափոխության դեպքեր հաճախ էին լինում էսնաֆ դասակարգի մեջ։ Եվ ահա առաջանում է մի շատ հետաքրքրական երևույթ։ Հավատարիմ մնալով իր արհեստակցական կազմակերպության և ռամկավար ոգուն, էսնաֆը միաբան պահանջով բանակցությունների մեջ է մտնում Զաքարիա պատրիարքի հետ, և փոխադարձ զիջողություններով կնքվում է կողմերի մեջ մի համաձայնություն, որ վերջ էր դնում պատրիարքի միանձնյա գործունեության այս հալածական ասպարեզում, սահմանափակում էր նրա իշխանությունը, կարգ դնելով, որ դավանափոխության յուրաքանչյուր դեպք քննվի և ապացուցվի էսնաֆի կողմից ուղարկված ներկայացուցիչների մասնակցությամբ։ Այդ համաձայնությամբ մեղմացվում էին և պատիժները, սակայն նրանց գործադրությունը թողնվում էր պատրիարքին[1]։ Բայց այս դաշնադրությունը չէր ցույց տալիս, թե Կ. Պոլսի հայ էսնաֆը հակառակ էր Զաքարիա պատրիարքին։ Նա միայն իր իրավունքներն էր պաշտպանում, իսկ երբ անհրաժեշտություն ներկայացավ, որ նա պաշտպան հանդիսանա պատրիարքական կամ, որ միևնույնն էր, ազգային իրավունքների, նա այս էլ կատարեց իր մի խոշոր ցույցով։ Երբ սուլթանի հրամանով Զաքարիա պատրիարքը պիտի աքսորվեր Բրուսա, պատրիարքարանում տեղի ունեցավ ժողովրդական զանգվածների մեծ կուտակում, որ պահանջում էր թողնել պատրիարքին իր պաշտոնի մեջ։ «Գրոհ տուեալ,— գրում է ականատես ժամանակագիրը,— դումարեցան յեկեղեցին Աստուածածնի սրբոյ՝ հազարք հազարանց և բիւրք բիւրուցորք աղաղակեին. տուեք՝ մեք հաճ եմք պատրիարքին մերոյ և ոչ կարեմք բաժանիլ ի նմանէ. և սկսան տալ գիր ծանուցման թագաւորին և եպարքոսին, ընդ ծով և ընդ ցամաք բողոքելով՝ թէ պատրիարքն մեր հաճելի է մեզ. խնդրեմք և աղերսեմք մի՛ փոխեսցես՝ այլ մեզ շնորհեսցես. այլ նոքա սակս ցրւլոյ զբազմութիւնս համոզեցին զնոսա ասելով՝ ոչ ոք փոխէ զպատրիարքն ձեր, երթայք ի խաղաղութիւն և աղօթս արարեք թագաւորին. և նոյն բազմութիւնն դարձեալ անտի եկին և լցան ի պատրիարքարանն՝ և մինչև ցաքսորումն նորա կային անդ. լային և աշխատէին ի սուգ անհնարին վարակեալ ամենեքուն և մինչդեռ այսպէս կային և մորմոքէին՝ տեսին զի եկն ի յարքունական դրանէ սուաճի Իսմայիլ էֆէնտին հանդերձ բազում զինուորօք և հրամանագրովն աքսորմանն»[2]։ Զաքարիան, իհարկե, շատ լավ էր հասկանում, թե ինքը միայն պարտավոր է կատարել սուլթանական հրամանը և սիրով հնազանդվելով նրան, գնաց աքսոր, կանգնեցնելով ժողովրդի տրտունջը։ Նույն աղբյուրը շարունակում է. «Եւ ապա ելեալ ի պատրիարքարանէն կամէին (պատրիարքն ու նրա հետևորդները) գնալ ընդ սուաճի էֆէնտիին անցանել, բազմութեան խուռն ամբոխին. քանզի ամենեքեան փարէին զնովաւ և գրեթէ կամէին ի ձեռաց նորա խլել, եթէ ոչ զինուորացն զգուշացեալ էր զնովաւ»։

Էսնաֆի համագործակցությունը նույն Զաքարիա պատրիարքի հետ մենք տեսնում ենք և Կ. Պոլսի հայության համար շատ ծանր մի հանգամանքի մեջ։ 1787 թվականին պատերազմ ծագեց Թուրքիայի և Ավստրիայի ու սրա դաշնակից Ռուսաստանի մեջ։ Պատերազմ գրգռողը մեծ վեզիր Յուսուֆ փաշան էր, մի նեղ ֆանատիկոս և մեծամիտ մարդ, որի ձեռքին խաղալիք էր Աբդուլ Համիդ սուլթանը։ Պատերազմը տևեց չորս տարի։ Սկզբից ևեթ հայտնի դարձավ, որ օսմանյան բանակը թվական կազմի կողմից թույլ է, և Յուսուֆ փաշան մի քանի միջոցներ մտածեց նրան ուժեղացնելու մասին, որոնցից մեկն էր քրիստոնյաներից զինվոր վերցնելը, մի բան, որ երբեք չէր գործադրված օսմանյան պետության մեջ, ուղղակի կերպով պատերազմի ժամանակ։ Մեծ վեզիրն առաջ հայերին կանչեց և պահանջեց նրանցից 1000 լավ պատերազմող տղամարդ։ Պատրիարքը ժողովի կանչեց էսնաֆը, որ և գտավ իր խորհրդակցությունների մեջ, թե այդ պահանջը մերժել անկարելի է շատ նկատառումներով և ամենից առաջ հենց այն պատճառով, որ հայերն օսմանյան պետության մեջ պաշտպանություն են գտնում, ուրեմն և պարտավոր են օգնել նրան

1 Վ. Զարդարյան, «Հիշատակարան», Կ. Պոլիս, հ. Ա., 1911, էջ 56—57։
2 «Դիւան հայոց պատմութեան» գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 275։

1 Անդ., էջ 313—314։
2 Անդ., էջ 292։

նող դրության մեջ։ Միայն որոշվեց խնդրել, որ պակասեցվի հայ զինվորների թիվը։ Մեծ վեզիրը համաձայնվեց, որ հայերը տան հինգ հարյուր հոգի։ Պահանջ ներկայացված էր և հույներին, որոնք պիտի տային 2000 հոգի նավատորմի մեջ ծառայելու համար։ Նույն ճանապարհով հույներն էլ կարողացան 200 հոգի զեղչել տալ իրենցից պահանջվող թվից։ Եվ այս պարտավորությունը միանվագ չէր. յուրաքանչյուր տարի էին հայերն ու հույները տալիս զինվորների որոշած թիվը, և այս շարունակվեց մինչև պատերազմի վերջը, այսինքն՝ չորս տարի։ Ծանրությունը սակայն, այս չէր միայն։ Պատերազմի երկրորդ տարին սկսվեց դրամական տագնապ։ Եվ ահա նույն հնարիմաց Յուսուֆ փաշան ընտրում է միջոց և այս վտանգի դեմ, հրամայելով, որ մայրաքաղաքի հրեա, հայ և հույն համայնքները մտցնեն պետական փողերանոցը որոշ քանակությամբ արծաթ։ Հայերից պահանջվում էր չորս հազար հոխա (մոտ 250 փութ) արծաթ։ Եվ դարձյալ էնաֆն է, որ հավաքվում է պատրիարքի մոտ, դարձյալ որոշում է տալ այդ քանակությունը, հավաքելու եղանակն է որոշում և որպեսզի ծանրությունը միմիայն մասնավոր մարդկանց վրա չլինի ընկած, մեջ է բերում նաև եկեղեցիների ունեցած արծաթն էլ[1]։

Մենք ունենք այս խորհրդակցությունների մասնակցած էնաֆի անդամների ցուցակը, որ և բերում ենք այստեղ ամբողջովին իբրև մի շատ հետաքրքրական պատկեր, որ ցույց է տալիս, թե ինչ տեսակ պարապմունքներ ուներ Կ. Պոլսի հայ ազգաբնակության այն խոշորագույն մասը, որ կոչվում էր բնիկ։ Արհեստները հետևյալներն էին. սարաֆ (սեղանավոր), խոյումճի (ոսկերիչ), թյուպենտճի (շղարշագործ), հացագործ, քերեստեճի (փայտավաճառ), քեմհաճի (կերպասավաճառ), սանդալճի (մակույկ շինող), քյուրքճի (մուշտակագործ), թերզի (դերձակ), մինթանճի (բաճկոն կարող), հին փարչաճի (հին կարկատան ծախող), սահաթճի (ժամագործ), պեզազ (բեհեզավաճառ), օթուրախճի (հնավաճառ), ղազանճի (կաթսայագործ), ույուրգեր (հյուսն), ֆիլջանճի (բաժակագործ), սեստճի ("), համամճի (բաղնեպան), տղճի (խոհարար), խայեխճի (նավավար), մանկավարժ, խըլըճճի (սուսերագործ), պերպեր (սափրիչ), բաքուճճի (մուշկակար), չիլինկիր (փականագործ) ջուլհակ, խավուխճի (գդակակար), նոր փարչաճի (նոր կտորներ ծախող), պող մահի ("), տողրամաճի (ատաղձագործ), սետեֆճի (սատափագործ), սըվաճի (ծեփող), սառաճ (կաշվեգործ), խորասանճի (ծեփող "), ալչըճի (գաջագործ), չարխճի (տրեխակար), չյումլեկճի (բրուտ), յութուճի (հարթուկ զարնող), պյուքյուճի (թել մանող), թարապխանաճի (փողերանոցի վարպետ), մանավ (մրգավաճառ), չիլփոշճի ("), էսքիճի (հնակարկատ), ղազեզ (մետաքսագործ), ճիզմեճի ("), խափամաճի ("), էքսերճի (բևեռագործ), ղալֆախճի (խույրարար), խաֆաֆ (կոշկավաճառ), թութունճի (ծխախոտավաճառ), սըմաքեշ (ոսկեթելերով բանող), ախտեր ("), փեշտմալճի (գոգնոցագործ), սոֆճի (ասրագործ), եմենիճի (մուճակակար), պլախճի (դանակագործ), մախասճի (մկրատ շինող), չպըխճի (ծխամորճագործ), էնֆիյեճի (քթախոտագործ), թոմպախճի ("), միսկճի (պղնձագործ), բժիշկ, պախալ (նպարավաճառ), քիթապճի (գրավաճառ)։

Գավառացի (պանդուխտ) հայություն։ Մենք արդեն տեսանք, թե տնտեսական և քաղաքական ինչ հանգամանքներ դարերի ընթացքում դատարկում էին Հայաստանը՝ քշելով նրա աշխատավոր ժողովրդի մեծամեծ զանգվածները հեռավոր երկրներ։ Ինքը՝ հայ ժողովուրդը պանդխտությունը միշտ նկատել է իբրև մեծագույն չարիք իր կյանքի մեջ և ողբացել, անիծել է նրան իր բանաստեղծության մեջ բազմաթիվ դրվագներով։ Կ. Պոլիսը պանդխտական հոսանքների ամենախոշոր կենտրոնավայրն էր, և միայն հենց այստեղի պայմանները բավական էին, որ պանդխտությունը ներկայանա գավառացի հայության իբրև մի ճիվաղ, որ կրծոտում է նրա ոսկորներն անգամ։ Աշխատանքի պայմանները ծանր էին, մաշեցնող։ Այս դեռ հասկանալի է, այսպես էր ամբողջ աշխարհը, ամեն տեղ, ուր մարդը շահագործում էր մարդուն։ Կ. Պոլսի մթնոլորտն ուներ իրեն միայն հատուկ ծանրություն, որով ավելի ևս անտանելի էր դարձնում գավառացի հայության կացությունը։ Աշխատավոր մշեցին, վանեցին իր մկանների ուժը տալիս էր անխտիր ամենքին՝ մի կտոր հաց աշխատելու համար։ Բայց այդ սև ու աղտոտ բանվորն իբրև մարդկության ամենաստորին խավ, իր աղքատության և տգիտության պատճառով, գուցե ոչ մի այլ ազգության կողմից այնքան չէր արհամարհված ու ատված, որքան հենց Կ. Պոլսի հայության կողմից։ Մեր գրականության մեջ առաջին անգամ Առաքել պատմագիրն է (XVII դար) նկարագրել այն կատաղի ատելությունը, որ տածում էր պոլսեցիությունը պանդուխտ եկվորության դեմ։ Խոսելով Փիլիպպոս կաթողիկոսի ճանապարհորդության մասին, որ նա կատարեց Թուրքիայի զանազան մասերում, պատմագիրն ասում է, թե կաթողիկոսի Կ. Պոլիս գնալու առաջին և ամենակարևոր դրդապատճառն էր տեղացի և եկվոր հայերին հաղորդեցնելը։ «Քանզի,— ասում է նա,— ի ժողովրդականացն՝ որք բնիկ բնական տեղացիք էին ի քաղաքէն Կոստանդնուպոլսէ, բարձրամիտ, բարձրայօն պարծանօք հպարտահարեալ թէս ածէին ի վերայ եկամուտ ժողովրդոցն, և իբրև զգռեհիկ ի տմարդի ունէին զնոսա եւ զամենայն իշխանական իրակութիւնս, զգործս և զբանս ի ձեռն իւրեանց գրաւեալ ունէին և գործէին. և զեկամուտն ի բացքեցեալ անհաղորդս պահէին. Վասն որոյ և նոքա հոգւով չափ վշտանային ընդ քամահանս իւրեանց, և հանապազ խոցոտիչ և ատելութիւն բանիւ դիմագրաւ լեալ ընդ միմէանս մաքառէին. և հաստատեալ արձանացեալ էր խռովութիւն ի մէջ նոցա անհաշտ, և արեամբ չափ ատելութեամբ»[1], կաթողիկոսին, մեր հեղինակի ասելով, հաջողվեց վերջ տալ այդ դրության և բարի համաձայնություն հաստատել երկու հատվածների մեջ։ Սակայն մի շարք հզոր ընկերական-տնտեսական հանգամանքներից առաջացած նախապաշարմունքներն ու տիրական վերաբերմունքը չէին կարող ընդմիշտ չքանալ մի հոգևորականի խրատների ազդեցության տակ։ Պոլսեցին շարունակեց արհամարհել գավառացուն, անվանելով նրան «խըմպըլ», մի արտահայտություն, որի մեջ նա ծաղրում էր գավառացու անտաշությունը, թանձրամտությունը և այլն։ Այս վերաբերմունքը դարեդար անցավ մինչև XIX դարի վերջերն անգամ։ Եվ վանեցի պանդուխտը գրում էր Կ. Պոլսից իր հորը. «Կալտընանք տաշին խոճիմ՝ տան մշակ էլանք, լերդ ու լեղու կերանք. իրիկնին ժուռ ու թրթյու, զրոցնին քյանց նեխած ժաժիկ կծու, չանց ակնճի կեղտ դառն, ու քյանց օձու լեզուն մոմռուն ինոնց կեր խփիցինք, տախտն ավլլիցինք, կուն թալիցինք, չեռն թափիցինք, աթաշակոտին։ Շատ տիր վեր ծիկ ակլակ դրին, ծի խըմպըլ եւ ասին, սարի արջ ասին, վանից մոխրաթավալ ասին։ Ավոր չէ, ծիը գյուրս մըլիցին, իմ արդար հախն գնաց ինոնց քիսն, իմ սուլն ինկյավ տանիս, վառիցին իմ սիրտն ու խոզիս։ Իսոնք տուն ունեն, տեղ ունեն, խեր խավատ ունեն։ Պյոլ պյոլ արծաթ ու ոսկի ունեն, սեր ու սիրտ չունեն, թուղթ, թամասուկ, ալմաս գինդ, ոսկի պլպլյուկով կյուլյոն կյուլյոն լցվերի ինոնց սընտրկներն չամ պռուկ. աման ճիկրի կտոր չկա ինոնց փոր. մեր վերեն այվընի պես կիրիշկեն, արունին ցամքե ու սրտերնին մեռեբի»[2]։

1 Անդ., եր. 333—338։

1 Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1884, եր. 257։

2 Արիստակես վարդ, Տեր Սարգսենց, Պանդուխտ վանցին, Կ. Պոլիս, 1875, եր. 66—67։

Արհամարհանքի կամ, առնվազն, կատարյալ անտարբերության մի ամենախոշոր հայտարարն էլ այն է, որ պանդուխտ մշակների դժոխային կացությունը Կ. Պոլսի խաների անկյուններում նույնիսկ լուրջ ու բազմակողմանի ուսումնասիրության չէ արժանացել, և եթե Կ. Պոլսի հայոց գրականությունն այս հարցի վերաբերմամբ ունի որևէ բան ցուցադրելու, այդ պանդուխտների կյանքից վերցրած այն պատկերներն են, որ գրել է Հրանտը (Մելքոն Կյուրճյան)[1]։ Սակայն այս սրտառուչ նկարագրությունների մեջ գավառացի չարքաշ աշխատավորը Թուրքաց մայրաքաղաքում ավելի հայրենիքի կարոտը ներկայացնող մի բանաստեղծական սյուժե է, քան շահագործվող մի մարդ, այնպես որ այդ պատկերները չեն տալիս գրեթե ոչինչ հասկացողություն օտար և անտարբեր երկնքի տակ վատնված աշխատանքի մասին։ Ավելի սառն էր Կ. Պոլսի հայոց ազգային վարիչ շրջանների վերաբերմունքը։ Ազգային ժողովն երբեք լուրջ ուշադրության առարկա չդարձրեց հայ համալների թշվառ կացությունը և միջոցներ չորոնեց նրա բարելավման համար։ Շատ բնորոշ է մեզ հետաքրքրող հանգամանքի տեսակետից Ազգային ժողովի մի նիստը, որ տեղի ունեցավ 1870 թ. սեպտեմբերի 18-ին։ Այդ նիստի մեջ ազգային երեսփոխաններից մեկը «Կիլիկիա» թերթի խմբագիր դոկտոր Յություճյանը, հանկարծ խոսք առնելով, սկսեց նկարագրել պանդուխտների դրությունը։ Այդ մի տեսակ գաղտագողի հայտարարություն էր, որ տեղի ունեցավ ի միջի այլոց, իբրև մի միջանկյալ լուսաբանություն, որ նույնիսկ հազիվ արժանացավ ազգային երեսփոխանների ունկնդրության, քանի որ այդ մի հարց չէր իրենց քննության առաջարկված և օրակարգի մեջ մտցրած։ Ահա ինչ ենք կարդում այդ նիստի արձանագրության մեջ.

«Տոքթոր Յություճյան էֆ.— Երեսփոխանք։ Մեծ է մեր պաշտոնը, ծանր պատասխանատվություն ունինք առ ազգն։ Ազգայինք մենե կը պահանջեն չէ թե միայն խնդրոց բառական լուծումն, այլ գործ։ Զը մոռնանք ազգին տխուր վիճակը. ազգայնոց մեծագույն մասը, գավառացի ազգայնոց երիտասարդ մասը, կորովի մասը, ողջ մասը, մեկ խոսքով արական մասը՝ հեռի ընտանիքեն, ծնողքեն, զավկե և ազգականե, օտար ու տար երկիրներու, մութ ու խոնավ խաներու, արևուն կենսատու ճառագայթները չթափանցող, լույս կյանք չտեսնող մութ սենյակներու և աղտոտության մեջ կապրին, անդին...

(Ատենապետ էֆենդին՝ տոքտոր Յություճյան էֆենդիին խոսքն ընդմիջելով կազդարարե, թե իր բառերը մեծ մասամբ խնդրեն դուրս են, թեև շատ գեղեցիկ և ճշմարիտ են իր խոսքերը, բայց ներկա խնդրույն վերաբերություն մը չունենալով, պետք է ժամանակին վերապահվի. երբ նույն խնդիրը ժողովին ներկայանա այն ատեն ավելի ընդարձակ կերպով խոսի։ Տոքտոր Յություճյան էֆենդին «քիչ բան մնաց» ըսելով շարունակեց)

...Անդին գավառաց մեջ հայր, մայր, քույր, եղբայր և զավակ, կարոտության հառաչանքներով, զուրկ ամեն տեսակ ընտանեկան գգվանքներեն, կհալին ու կմաշին տարաբախտ։ Երեսփոխանք, մի կարծեք, թե խոսքես կհեռանամ, ոչ, ոչ, բժիշկ ըլլալուս առթիվ, Պոլսո զանազան խաներու մեջ մնացող պանդուխտ ազգայնոց թիվը միայն իմ ըրած վիճակագրությանս նայելով, երկու տարվան մեջ 1700-ը կանցնի, որոնց ամենուն ալ անունը, արհեստն ու տարիքը նշանակած եմ, որոնց համառոտությունն է այս.

«400 հոգի 30-են մինչև 50 ամուսնացյալ.

380 » 18-են մինչև 30. անոնցմե միայն 250 ամուսնացյալ.

800 » 15-են մինչև 17. որոնցմե 600-ը ամուսնացյալ...

[1] «Մասիս» ամսաթերթ, 1888 և կիսամյա 1889—1890 թվականներ։

Մնացած 120 մեռնողներուն ոչ տարիքը և ոչ ամուսնացյալ կամ չամուսնացյալ ըլլալնին տեղեկանալ կարողացած չեմ։ Զեզ կը թողում, երեսփոխանք, գտնել, թե որչափ այրի, որչափ որբ, որչափ ընտանիքներ անտեր մնացեր և որչափ տուներ մարած են։ Աղքատություն, տգիտություն, ահա ասոնք են մեր ազգին ներկա այս տխուր վիճակին միակ պատճառներ։ Զբաղինք, ուրեմն, այս խնդիրներով, վերջ տանք մեկ կողմանե ոչ այնչափ կարևոր և մյուս կողմանե խիստ վտանգավոր խնդրո մը, այն է կաթողիկոսության խնդրույն»[1]։

Իզուր էր, սակայն, բժիշկ երեսփոխանի այս կոչը. արձագանք տվող չեղավ, մայրաքաղաքի փողոցներում ջարդվող հազարավոր կյանքեր ոչ ոքին չհուզեցին։ Եվ եթե ի նկատի ունենանք, որ այս տեսակ վերաբերմունքը տեղի ուներ մի այնպիսի ժամանակ, երբ Կ. Պոլսի երիտասարդության լավագույն մասը ձգտում էր դարձնել ազգային վարչությունը մի իսկական ժողովրդապետություն, հասկանալի կլինի, թե ինչ էին այն «հին բարի» ժամանակները, XVII—XVIII դարերը մինչև XIX-ի կեսը, երբ հայ ազգի վիճակը կղերական և ամիրայական դասակարգերի ձեռքին էր գտնվում, երբ ժողովուրդը ծածկված էր պահվում այդ իշխողների լայն թիկունքի ետևում։

Խորթ և թշնամի մթնոլորտի մեջ գավառական հայությունն, այնուամենայնիվ, չնայած գոյության և աշխատանքի աննպաստ պայմաններին, չկորավ իբրև բարոյական ուժ, այլ ցույց տվեց մի զարմանալի կենսունակություն, և այս, անշուշտ, շնորհիվ այն հանգամանքի, որ չէր կտրում իր կապը մայր երկրի հետ, մշտապես թարմացնում էր իր կազմը, ամեն տարի պանդխտական հոսանքներ ընդունելով իր մեջ երկրից և ետ դարձնելով երկիր նույնպիսի հոսանքներ իր միջից։ Այսպիսով գավառացիությունը կարողանում էր այս հեռավոր գաղթավայրերում մնալ իբրև բուն ժողովուրդ, իբրև հողի և հայրենիքի մարդկություն, մի խոսքով այն մեծ և մեծագույն զանգվածը, որ ազգային լեզու և ոգի է պահպանում, ազգային ավանդությունների և կուլտուրական այլ առանձնահատկությունների անսպառ և անհատնում աղբյուրն է։ Իր այս էությամբ, նա ներգործություն թողնում էր Կ. Պոլսի օտարացած հայության վրա։ Պանդխտական կյանքը, լի զրկանքներով և մահաբեր վտանգներով, ժամանակների ընթացքում դաստիարակեց գավառացիությանը բնազդորեն համախմբվելու, գոնե նախնական ձևի մի կազմակերպություն ստեղծելու անհրաժեշտության մեջ։ Այստեղ մեծ կատարող հանդիսացավ հայրենակցական զգացմունքը։ Մի գավառի, մի շրջանի մարդիկ միասին էին գնում օտարություն, աշխատում էին, փոխադարձ օգնության բնազդից մղված, միասին մեղմել հայրենիքի կարոտի կսկիծը և իրենց անօգնական գոյության առթած տառապանքները, միասին էլ վերադառնում էին հայրենիք։ Այս խմբակցական ոգին էլ դարձավ գավառացիության գործոն ուժը, որին վիճակված էր գնալով ծավալվել մինչ այն աստիճան, որ դուրս գար պաշտպանելու գավառացիության խոշոր և կենսական շահերը։

Եվ այսպիսով Կ. Պոլսում ապրող գավառացի հայությունը թեև ընդհանրապես մի տեսակ դեմք ուներ, բայց ներկայացնում էր այդ համանմանության մեջ և գունավորումներ ըստ հայրենակցությունների։ Տարբերվում էին վանեցիները, մշեցիները, էրզրումցիները, խարբերդցիները և այլն։ Պետք է նկատել, որ այդ խմբավորումները միատարր չէին ընկերային կյանքի տեսակետից, այսինքն՝ լոկ համալ, մշակ մարդիկներից չէին, սև աշխատանքի ստրուկներից, այլ պարունակում էին իրենց մեջ և այդպիսիներից զիրքով ու պաշտոնով քիչ ավելի բարձր կանգնած շերտեր, օրինակ, գործակատարներ,

[1] «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», 1870, նիստ 18 սեպտեմբերի, եր. 66։

մանր առևտրականներ, արհեստավորներ։ Այս շերտերի միջոցով գավառացի հայությունը գալիս մտնում, անգամ խառնվում էր և արհեստավորության էսնաֆին, որի հետ գտնում էր շահերի համերաշխություն։ Եվ ահա հետզհետե հասարակական-ընկերային պայմանների զարգացման ազդեցության տակ գավառացիությունն ու արհեստավորությունը Կ. Պոլսում կանգնում են գաղափարների և ձգտումների միևնույն հարթոցի վրա իբրև իսկական ժողովուրդ, ժողովրդական աշխատանքի ներկայացուցիչ, միացած միևնույն շահերով։

Տասնիններորդ դարին էր մնում զարգացնել և բարձրացնել այդ ժողովրդական ոգին և նրան հանել մրցության ասպարեզ ամիրայական բռնակալ իշխանության դեմ։ Այդ դարի նախօրյակին էր, 1800 թվականի մայիս ամսին, երբ տեղի ունեցավ մի խոշոր շարժում, որ այս մեծ և նոր իրականության առաջին սաղմնային կերպարանքն էր ներկայացնում։ Հողը, որի վրա պայթեց այդ շարժումը, նախկինն էր՝ պատրիարքությունը։ Ղուկաս կաթողիկոսի մահից հետո (1799-ին), ինչպես գիտենք, էջմիածնում կաթողիկոս ընտրվեց Դանիել Սուրմառեցին, որ այդ ժամանակ Կ. Պոլսի հայոց պատրիարքն էր։ Էջմիածնի ժողովի այդ որոշումը Կ. Պոլիս տանողն էր Դավիթ Ղորղանյան էնեգաբցի կամ լոռեցի եպիսկոպոսը, որ ուժեղ կամքի տեր և այն ժամանակվա սաստիկ փառասեր հոգևորականներից մեկն էր։ Դանիելի տեղ Կ. Պոլսու ամիրաները պատրիարք ընտրեցին հենց նույն այդ Դավթին։ Սա պատրիարքական շուքով գնում է եկեղեցի, բայց այնտեղ պատրիարքին հատկացված տեղը գրաված ուներ կաթողիկոս ընտրված Դանիելը։ Դավթի պաշտպանները տեսնում են, որ էջմիածնի նվիրակ Գալուստ եպիսկոպոսը նստած է իրեն հատկացված տեղում, պահանջում են նրանից զիջել իր տեղը Դավթին և, երբ նա չի համաձայնվում, բռնություն են գործ դնում և ծեծելով նրան հարկադրում են թողնել իր տեղը։ Իբրև բողոքի նշան ծեծված եպիսկոպոսը թողնում է եկեղեցականների դասը և գնում կանգնում է ժողովրդի մեջ։ Այս բռնությունից վրդովվում է ժողովուրդը, որի մեջ գլխավոր տեղը բռնում էին կեսարացի արհեստավորները։ Տեսնելով, որ ժողովրդի մեջ աղմուկ է պատրաստվում, Գալուստը գիտմամբ թողեց եկեղեցին և գնաց իր բնակարանը։ Բայց ժողովուրդը խուռն բազմությամբ գնաց նրա ետևից, մեծ փառքով վերցրեց նրան և բերելով եկեղեցի, նստեցրեց իր տեղը, իսկ կաթողիկոս ընտրված Դանիելին էլ, Դավիթ պատրիարքին էլ վռնդեց եկեղեցուց։ Երբ պատարագի ժամանակ եկավ այն տեղը, ուր պիտի հիշվեր պատրիարքի անունը, ժողովուրդը ձայն բարձրացրեց, որ չհիշատակվի Դավիթ պատրիարքի անունը, նրա տեղ հարկադրեցին հիշել Գալուստի անունը, այսպիսով ընտրելով նրան պատրիարք։ Այնուհետև, երբ վերջացավ ժամերգությունը, ժողովուրդը նույն պատիվներով տարավ Գալուստին նրա բնակարանը, որպեսզի այնտեղից տանի Բ. Դուռը և պահանջե, որ թուրք կառավարությունն էլ հաստատե Գալուստի պատրիարքությունը։ Բայց այստեղ գործի կանգնեց ամիրայական դասակարգը։ Ինքն էր, որ պիտի պատրիարք ընտրեր և մի՞թե կարող էր թույլ տալ, որ ժողովուրդը գործադրե այս անգամ այն, ինչ նրա արտոնությունն էր կազմում։ Տեսնելով, որ ժողովրդական շարժումը գնալով մեծանում է, որ եկեղեցում հավաքվում են նորանոր խմբեր, զինված բիրերով և կացիններով, ամիրաները իսկույն իմաց են անում Բ. Դռան, թե ժողովրդական ապստամբություն է սկսվել։ Կառավարությունը մի ենիչերական զորախումբ ուղարկեց, որ, մտնելով եկեղեցի, խռովարարներին սաստիկ ծեծի ենթարկեց, իսկ նրանց պարագլուխներին ուղարկեց բանտ։ Ամիրաները զորաբաժնի հրամանատարին մեկիկ-մեկիկ պատմեցին «ապստամբության» բոլոր հանգամանքները, գլխավոր պատճառ հայտարարեցին Գալուստ եպիսկոպոսին։ Վերջինս հանվեց իր տա-

նից և հանձնվեց ենիչերիների ձեռքը՝ մեծ վեզիրի դուռը տանելու համար։ Եվ ահա այն մարդը, որ փոքր ինչ առաջ ժողովրդի համակրական ցույցերի առարկան էր դարձել, այժմ մատնվեց մեծամեծ անարգանքների։ Աստվածատուր անունով մի վարդապետ հարձակվեց նրա վրա և սկսեց անխնա ծեծել նրա գլուխը, գրգռում էր զինվորներին կտրել այդ գլուխը, որպեսզի այլևս ապստամբություն չպատահե։ Եվ այդպես չարաչար ծեծելով տարան եպիսկոպոսին վեզիրի մոտ։ Բանից դուրս եկավ, որ խեղճ մարդը մի միամիտ գործիք էր դարձել Կ. Պոլսի եպիսկոպոսներից մեկի ձեռքին, որի անունն էր Հովհաննես Ջամաշըրճյան։ Սա վաղուց համակրություններ էր վաստակել ամիրայական դասակարգի մեջ և այժմ, օգտվելով այդ հանգամանքից, որ ասպարեզից հեռացած էին թե՛ Դավիթը և թե՛ Գալուստը, նա ինքն ստացավ ամիրաների ձեռքից Կ. Պոլսի պատրիարքությունը[1]։ Այսպիսով դարձյալ ամիրայությունն էր իր իրավունքի մեջ մնում։ Բայց այժմ գլխավորն այլևս այդ չէր, այլ այն, որ ժողովուրդը դուրս էր գալիս նրա դեմ՝ իրեն իրավատեր դարձնելու համար։

Այսպես էր ահա այդ միջավայրը, որ պիտի պատրաստեր և հասունացներ ժողովրդական շարժումներ, այնքան մեծ, այնքան խոր հեղաշրջող, որ նրանք պիտի բոլորովին նոր ընթացք տային հայոց պատմությանը։ Նկատենք այդ միջավայրի մի հատկությունն էլ։ Թուրքական իրականությունն էր տիրում այնտեղ, որ կարող էր միայն մեռցնել ամեն մի կենդանության բողբոջ։ Կ. Պոլիսը Թիֆլիս չէր այն կողմից, որ նա չէր նվաճվում փոքրիշատե քաղաքակիրթ մի ազգի ձեռքով, ինչպես էին ռուսները։ Նա շարունակում էր մնալ թուրքական սուլթանիզմի ամուր ճանկերի մեջ։ Եվ հենց այս հանգամանքն էլ թելադրում էր կարծել, թե Կ. Պոլիսը Թիֆլիսի չափ նպաստավոր չի լինի մի նոր կյանքի սկզբունքներն յուրացնելու համար։ Բայց Կ. Պոլիսը չափազանց մոտիկ էր Արևմտյան Եվրոպային։ Կ. Պոլիսը միջազգային մեծ շահերի շփման մի անզուգական կենտրոնավայր էր։ Այս նրա առավելությունն էր, և այդ առավելության ոչինչ չուներ հակադրելու Թիֆլիսն իբրև քաղաքակրթական կենտրոն։ Եթե Եվրոպան զորքով ու զենքով չէր գնում Կ. Պոլիս և կամա-ակամա դաստիարակ և վերանորոգիչ հանդիսանում, Կ. Պոլիսն էր, որ ի դեմս իր ազգաբնակության ընդունակ և կուլտուրապես կենսունակ տարրերի գնում էր Եվրոպայի դուռները՝ նրան աշակերտելու, նրանից հրահանգներ ստանալու համար։ Այդ տարրերն էին հույները և հայերը։ Հայերի կրթական-կուլտուրական շարժումը դեպի Եվրոպա, շատ նկատելի է դառնում դեռ XVIII դարի առաջին քառորդից և երկար ժամանակ ուներ կղերական շարժման կերպարանք։ Այս շարժումից էր, որ, ինչպես տեսանք իր տեղում[2], առաջ եկավ Մխիթարյան միաբանությունը։ Որքան և դարի պահանջների տեսակետից հետադիմական լիներ այդ շարժումը, բայց եթե մենք նկատի առնենք թուրքական արևելքն իր դժբախտությունների հետ միասին, կհաշտվենք այն հանգամանքի հետ, որ հենց այս վանական շարժումն էլ այն միակ ձևն էր, որ հնարավոր էր դարձնում Արևելքի մտավոր շփումը կուլտուրական Արևմուտքի հետ։ Մխիթարյանները սովորական տիպի կաթոլիկ վարդապետներ չէին։ Նրանք իրենց վրա էին վերցրել հայրենիքի, գիտության, մտավոր աշխատանքի առաքելությունը հայերի մեջ։ Եվ կարողացան ահագին դեր կատարել այս գործում, միացնելով Վենետիկը Կ. Պոլսի հետ։ Թուրքիայի մայրաքաղաքը մատակարարեց այդ վանական-գրական հաստատության բազմաթիվ տաղանդավոր, աշխատանքի

1 Ա. Պերպերյան, Պատմություն Հայոց, գլ. Ճ։
2 Տե՛ս Գ հատոր, գիրք Բ։

հնկայական կարողությամբ լցված գնմքեր, որոնք ոչ միայն առեղծագործում էին ս. Ղազար կղզում, իրենց տպագրական մամուլի շուրջը, այլև գործոն կուլտուրական դեր էին կատարում անձամբ Բոսֆորի ափերին։

Մխիթարյանները ճանապարհ բացին և նպաստեցին, որ Կ. Պոլսի հայն Եվրոպա գնա նաև զուտ աշխարհական գիտություն և գլխավորապես բժշկություն սովորելու համար։ Նախ Իտալիայի, ապա և Ֆրանսիայի համալսարաններում երևացին, դեռ XVIII դարից, հայ ուսանողներ։ Կազմակերպվում էր հայ ինտելիգենցիա, որ հայրենիք էր բերում իր հետ եվրոպական գաղափարները։ Այս կերպով արևմտահայությունն ավելի կանուխ էր հաղորդակից լինում ազգային մի նոր մտավոր-գրական շարժման, ավելի շուտ էր իջնում քաղաքական և կուլտուրական ինքնագործունեության ասպարեզը, շատ ետ թողնելով իրենից արևելյան հայությունը...

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՌԱՋԻՆ ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՎ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ 1801–1813

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀՆԳԱՄՅԱԿ

(1801—1806)

1. Երկու մահ: *Հովսեփ կաթողիկոս Արղությանը, ինչպես տեսանք, Վրաստանի միացումը Ռուսաստանին մեծահանդես արարողություններով տոնելուց հետո պատրաստվեց թողնել Թիֆլիսը և ուղևորվել Էջմիածին։ Արդեն նշանակված էր և ուղևորության օրը՝ մարտի 1-ին։ Բայց փետրվարի 20-ին Գեորգի թագավորի հուղարկավորությանը մասնակցելուց հետո Հովսեփը գնաց ռանալու Թիֆլիսի հանքային բաղնիսում, այնտեղ մրսեց և ծանր հիվանդացավ։ Նա պառկած էր իր եղբորորդի Սոլոմոն Արղությանի տանը, ուր և մեռավ մարտի 9-ին։*

Այս բոպեից էլ նորից ծագում էր առնում կաթողիկոսական կնճռալից հարցը։ Չկար այլևս ռուսաց արքունիքի օգնությամբ անչափ ուժեղ մարդը, որ ուզեց և իրեն ընտրել տվեց կաթողիկոս, սեղմելով իր հակառակորդների կոկորդը։ Էջմիածնի միաբանությունը, որի ընտրելին եղել էր և մնում էր Դանիել Սուրմառեցին, նորից իրեն հզոր զգաց։ Ամենից առաջ իրենց ազատ զգացին այն չորս եպիսկոպոսները, որոնք եկել էին Թիֆլիս՝ Հովսեփին Էջմիածին տանելու համար։ Կաթողիկոսի վերաբերմունքը դեպի նրանց այնքան լարված էր, որ նրանք առանձին էին ապրում, և այս հանգամանքը դառնում էր զրույցի առարկա։ Հովսեփի վախճանը, սովորականի պես, շշուկ առաջացրեց, թե նրան թունավորել են, և այդ ենթադրյալ թունավորողների մեջ համարում էին և այդ չորս էջմիածնական հրավիրակներին։

Բայց Հովսեփն էլ առանց կողմնակիցների չէր։ Եվ անկարելի է, որ չգտնվեին մարդիկ, որոնք կամենային շահագործել նրա թողած ժառանգությունը և մանավանդ այն դիրքը, որ նա վայելում էր ռուսաց կառավարչական շրջանակների մեջ, թե՛ Պետերբուրգում և թե՛ Թիֆլիսում։ Եվ ահա կազմվում է երկու հակառակ հոսանք, երկու մրցող կուսակցություն, որոնց կետ նպատակն էր տիրանալ կաթողիկոսական իշխանության։

Այս հակամարտ բախումները չափազանց մեծ աղմուկ են հանել հայ կյանքի մեջ XIX դարի առաջին տասնամյակում, զբաղեցնելով իրենցով ոչ միայն ամբողջ հայությունը, այլև մի քանի օտար պետություններ անգամ։ Այս մեծ շփոթը հռչակված է Դավիթ-Դանիելյան վեճ անունով։ Մի վեճ, որի մասին եթե կարելի է հաստատապես ասել մի բան, այն է, որ նա ոչ միայն անօրինակ չէր հայոց եկեղեցական պատմության մեջ, այլ, ընդհակառակն, կազմում է մեկը նրա սովորական էջերից։ Առաջին անգամ չէր, որ էջմիածնում երկու փառամոլ անհատներ կամ հոսանքներ իրար պատերազմ էին հայտարարում տիրապետության համար։ Դավիթ-Դանիելյան վեճը նույն երևույթի կրկնությունն էր ըստ էության, մի կրկնություն, որ, սակայն, մի աննախընթաց մեծ շռինդով և աղմուկով էր տեղի ունենում։

Այդ վեճը մղելու համար երկու կողմերն էլ գործել են ապշեցուցիչ եռանդով, վատնելով մեծ ժամանակ և ահագին դրամական միջոցներ՝ գրեթե բոլոր հայաբնակ վայրերն իրենց թղթերով, մասնավոր ու պաշտոնական գրագրություններով հեղեղելու, իշխանություն ունեցող անձերին, թե՛ հայ և թե՛ օտար, նույնիսկ սուլթաններին, շահերին, կայսրներին իրենց կողմը գրավելու համար։ Գործել են հարյուրավոր մարդիկ Երևանում, Կ. Պոլսում, Մոսկվայում, Պետերբուրգում, Թիֆլիսում, ամեն տեղ, ուր գտնվում էին ազդեցիկ շրջաններ, կապեր։ Այս համառ, կատաղի, երկարատև վայրիվերումներից, մատնություններից, աքսորներից ու բանսարկություններից հսկայական քանակությամբ գրավոր նյութեր են մնացել, որոնցով լիքն է էջմիածնի կաթողիկոսական դիվանը, բազմաթիվ պատմական հիշատակություններ զբաղվել են այդ վեճով, տալով նրա պատմությունը, դատելով և դատափետելով գործերն ու գործիչներին։ Եվ ներկայումս կաթողիկոսական այդ շփոթն ունի արդեն մի ամբողջ գրականություն ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն լեզուներով։ Տպվել են և հետագա հետազոտողների մանրամասն ուսումնասիրությունները, որոնց մեջ անցքերը քննվել են արդարության և ազգային իրավունքների տեսակետից, դատապարտելով մի կողմը և արդարացնելով, մինչև իսկ սրբացնելով մյուս կողմը։

Պատմական անկողմնակալ վերաբերմունքը, սակայն, չի կարող ընթանալ այն ուղղությամբ, որին հետևել են թե՛ ժամանակակից ականատեսները և թե՛ հետագա հետազոտողները։ Մեզ համար Դավիթ-Դանիելյան շփոթը կարող է մնալ և մնում է լոկ իբրև հոգևորական փառամոլության մի հակաժողովրդական արարք, մեկն այն արարքներից, որոնք այնքան շատ են կրկնվել մեր անցյալ կյանքում, և որոնցից մենք պատմության ուշադրության արժանացնել կարող ենք այնպիսի իրադարձությունները, երբ փառասիրական սանձարձակ ոտնձգությունները արդեն շատ զգալիորեն շոշափում են ժողովրդական շահերը։ Դավիթ-Դանիելյան վեճի զուտ եկեղեցական փառասիրական հողի վրա աճեցին այնպիսի երևույթներ, որոնք ժամանակի հանգամանքների ազդեցության տակ ստացան խոշոր քաղաքական նշանակություն։ Ահա այս կողմից էլ մեզ կարող է հետաքրքրել ամբողջ վեճը, և մենք նրանով կզբաղվենք այն չափով, ինչ չափով հենց այն քաղաքական նշանակության պարզաբանումն է պահանջում։ Ինչպես կտեսնենք, էջմիածնի գահի շուրջը բոլորած կռիվները ռուս-պարսկական մի ամբողջ պատերազմի գլխավոր պատրվակն էր դառնում, միևնույն ժամանակ ճանապարհ էին բաց անում, որ Պարսկաստանի գործերի մեջ խառնվի և ֆրանսիական մեծ կայսր Նապոլեոնը։

Դեպքերի զարգացման հաջորդականությունը մեզ պարտավորեցնում է Հովսեփ Արղությանի մահվան կից դիմել մի երկրորդ մահվան, որ ավելի

կարևոր քաղաքական դեպք է և քիչ էր մնում, որ ջնջե Թիֆլիսում Հովսեփի տոնակատարությամբ հրապարակված իրողությունը։ Հայոց կաթողիկոսի անակնկալ մահից հազիվ երկու օր անցած՝ ավելի ևս մեծ անակնկալությամբ մեռնում է Պավել կայսրը, զոհ գնալով պալատական դավադրության, որ տեղի ունեցավ նրա նորակառույց հոյակապ Միքայելյան ամրոցում մարտի 11-ից լույս 12 գիշերը։ Արղությանի համար պաշտամունքի առարկա դարձած «մեծն Պավելը» պարզապես մի, ինչպես ասվում է հասարակորեն, «ծալը պակաս» բռնակալ էր։ Անգլիական դեսպանը գրում էր բացարձակորեն, թե կայսրը խելագար է[1]։ Կատաղած լինելով, մանավանդ, Ֆրանսիական մեծ հեղափոխության դեմ, այդ խեղճ և փոքրիկ խելապատակը ստեղծել էր այնպիսի մի տիրանական ռեժիմ, որ ոչ ոք ապահովություն չուներ մյուս օրվա համար։ Ընդհանուր անբավականության հողի վրա պալատական մի խումբ գործիչների համար հեշտ եղավ կազմակերպել դավադրություն բռնակալին, միմիայն նրան, գահից հեռացնելու համար։ Այս նպատակով գիշերը քնած կայսրի ննջարանը մտցվեցին արբեցրած զինվորականներ, որոնք և խեղդամահ արին իրենց զոհին, չնայած, որ նա աղաչում էր խնայել իր կյանքը։

Մյուս օրը գահ բարձրացավ նրա որդի Ալեքսանդր Ա, որ ստացել էր լավ դաստիարակություն ազատամիտ Եվրոպայի և ռուս ուսուցիչների ձեռքի տակ, ուստի մեծ հույսեր էր ներշնչում ռուսական սակավաթիվ առաջավոր հասարակական գործիչներին, որոնք երազում էին տեսնել պետության կառավարությունը ժողովրդական-սահմանադրական հիմքերի վրա դրված երիտասարդ, իդեալիստ կայսրի ձեռով։ Առաջին գործերից մեկը, որոնց հետ ծանոթացավ Ռուսաստանի նոր տերը, վրացական հարցն էր։ Երևի Ալեքսանդրի տրամադրությունների և աշխարհայացքի մասին հեռավոր ծանոթություն ստանալուց հետո էր, որ վրաց թագավորական գահին թեկնածող երկու կողմերն էլ՝ Դավիթ արքայորդին և Դարեջան թագուհին, գրեթե միաժամանակ, նոր թագավորության առաջին իսկ ամսին և քիչ հետո նամակներ գրեցին առանձին-առանձին և խնդրեցին, որ վերականգնվի վրացական թագավորությունը։ Դավիթն իր իրավունքը հիմնում էր իր հոր կարգադրության վրա, իսկ Դարեջանը խնդրում էր թագավորեցնել իր որդի Հուլոնին, հիմնվելով Հերակլ Բ թագավորի կտակի վրա։

Այս դիմումները ծնեցրին Ալեքսանդրի մեջ մի շարք տատանումներ։ Արդյոք Վրաստանի կցումը մի հափշտակություն չէ՞ր, լոկ ուժի օգնությամբ կատարված, առանց ժողովրդի ցանկության։ Երիտասարդ կայսրը պատրաստ էր հրաժարվել իր հորից մնացած այդ ժառանգությունից՝ լոկ արդարության սկզբունքները չխախտելու համար, և այս տրամադրությունը նրա մեջ պահպանում և խրախուսում էին նրա գաղափարակից մերձավորները, որոնք թեև պաշտոնական դիրք չէին գրավում կառավարական աշխարհի մեջ, բայց կազմում էին մի մտերմական խորհուրդ, որ և ղեկավարում էին կայսրին պետական այլևայլ հարցերի մեջ։ Տրամադրվելով հրաժարվել Վրաստանից և թույլ տալ, որ նրա ժողովուրդը տնօրինե իր վիճակն ինչպես ինքն է կամենում, Ալեքսանդրը չկամեցավ միանձնաբար վճռել այս կարևոր հարցը, ուստի ենթարկեց նրան Պետական խորհրդի քննության։ Պետական խորհուրդն իսկույն նիստ կազմեց և բուռն վիճաբանություններից հետո որոշեց, թե Վրաստանից հրաժարվել չի կարելի, և թե նրա կցումը Ռուսաստանին անվերադառնալի է։ Ալեքսանդրը բավական չմնաց այդ վճռով և հարցը նորից վերադարձրեց Պետական խորհրդին, բերելով իր պատճառաբանությունները և հայտարարելով,

[1] Е. Шумигорский, Император Павел I, Спб., 1907, с. 194.

թե ինքն էլ անձամբ չի կամենում ընդունել Վրաստանին տիրողի դիրք մինչև այն ժամանակ, երբ կապացուցվի, թե ժողովրդի ցանկությունն է, որ Վրաստանը դառնա ռուսական մի նահանգ։ Սակայն այս անգամ էլ Պետական խորհուրդը եռանդուն դիմադրություն ցույց տվեց իր կայսրին և ջրելով նրա առարկությունները, իր կողմից ցանկություն հայտնեց, որ ժողովրդի կամքին և առհասարակ գործի բոլոր մանրամասնություններին մոտիկից տեղեկանալու համար Թիֆլիս գնա զորքերի ընդհանուր հրամանատար գեներալ Կնորինգը, որի մշտական բնակավայրը գտնվում էր Հյուսիսային Կովկասում։ Այս որոշումը կայանում է ապրիլի 15-ին և կայսրը, հավանություն տալով նրան, հրամանագրում է Կնորինգին ուղևորվել Վրաստան այդ հանձնարարությունը կատարելու համար։ Բոլոր տեղեկությունները ժողովելուց հետո՝ հրամանատարը պիտի գնար Պետերբուրգ անձամբ կայսրին զեկուցում ներկայացնելու համար, որից հետո միայն պիտի վերջնականապես որոշվեր Վրաստանի հարցը[1]։

Այսպիսով գործը հետաձգվում էր առնվազն մի քանի ամսով։ Բայց այս չէր նշանակում, թե ռուսական կառավարությունը թողնում էր կամ նույնիսկ թուլացնում էր իր գործունեությունն Անդրկովկասում։ Ալեքսանդրը ցույց տվեց, որ Վրաստանի վերաբերմամբ իր ունեցած տատանումների ժամանակ էլ ինքն ընդգրկած ուներ Պավել կայսրի Անդրկովկասյան քաղաքականությունը և ինքն իսկ անձամբ վարում էր այդ քաղաքականությունն ամենայն եռանդով և ուշադրությամբ։ Այս բանն առանձնապես շեշտված արտահայտվեց հայոց կաթողիկոսի հարցի մեջ։

2. Դավիթ և Դանիել։ Նախ երկու խոսք այս երկու հակառակորդների մասին։ Դավիթը, ինչպես գիտենք, Լոռու գավառի Էնեգաթ գյուղից էր, Ղորղանյան տոհմից էր, ազնվական ծագում ուներ, ուստի և կոչվում էր «Պարնի որդի»[2]։ Իր այդ դիրքով նա ազգակցական կապեր ուներ թե՛ Թիֆլիսում, ուր հայտնի էր նաև վրացական շրջաններին, թե՛ Երևանում, ուր նրա մոտիկ բարեկամն ու խնամին էր ազդեցիկ Մելիք-Աբրահամը։ Դավիթն աչքի էր ընկնում Էջմիածնի միաբանության մեջ իր խելքով և ըմբռնողությամբ, իր տոկուն բնավորությամբ և կամքի ուժով, խիստ էր ու պահանջկոտ, եռանդով լցված, փառքի և իշխանության սաստիկ սիրահար, մի հանգամանք, որ հատուկ է առհասարակ այդպիսի բնավորություններին մանավանդ հոգևորականության մեջ։ Փառամոլությունն ու իշխելամոլությունը նրա մեջ մոլի կրքեր էին դարձած, և այս կրքերին հագուրդ տալու համար նա պատրաստ էր մոռանալ ամեն չափ ու սահման, մանավանդ, երբ ստիպված էր կռիվ մղել ուժեղ հակառակորդների դեմ։ Մենք արդեն տեսանք նրան Կ. Պոլսում պատրիարք ընտրված, բայց եկեղեցուց դուրս վռնդված ժողովրդի ձեռքով, որ վրդովվել էր նրա սպասավորների գործադրած բռնությունից, մի բան, որ իհարկե, առանց նրա գիտության չէր տեղի ունեցել եկեղեցում, ժամերգության ժամանակ։ Այդ անխտրականությունը կռվի միջոցների վերաբերմամբ ամենից առաջ այն հետևանքն ուներ, որ նա, չնայած իր ընդունակություններին, ժողովրդականություն չուներ։ Իսկ Էջմիածնի միաբանությունը կատարյալ հիմք ուներ չկամենալու, որ հոգևոր բարձր իշխանության գլուխ անցնե այդպիսի մի խստապահանջ և կամքի ուժ ունեցող մարդ։

Այս կողմից, ընդհակառակն, Դանիել եպիսկոպոսն էր Դավթի հակոտն-

1 **Н. Дубровин**, История войны и владычества русских на Кавказе, т. III, с. 389—393.

2 «Դիվան հայոց պատմության», գիրք Է, Թիֆլիս, 1902, եր. 29։

յան, ցանկալի կաթողիկոսը։ Սուրմառվի գավառից դուրս եկած այդ համեստ, բնավորությամբ թույլ և անվճռական մարդը խաղաղություն և հանգիստ էր սիրում, ամենից քիչ մտածում էր փառքի և իշխանության մասին։ Բայց այս անվնաս, համեստ կարողություններով օժտված մարդու մեջ էլ մի վտանգավոր հատկություն էր չափազանց զարգացած՝ գործիք դառնալ ուրիշների ձեռքին մինչև ինքնամոռացում, մինչև ինքնազոհություն։ Այդ հատկության շնորհիվ է, որ նա կարողացավ անհաշտ հակառակորդի դիրք բռնել Դավթի պես մի ամուր բնավորության հանդեպ։ Տառապանքներ էր պահանջում նրանից այդ դիրքը, բայց նա գիտեր տանել այդ տառապանքները նահատակի համբերությամբ։ Դավիթ-Դանիելյան շփոթի մեջ Սուրմառեցին էր անդադար չարչարվողը, տանջվողը, չնայած, որ նրա կուսակցությունն ավելի մեծ էր, քան նրա հակառակորդի կուսակցությունը և ժողովրդականություն էլ նա անհամեմատ ավելի շատ ուներ, քան Դավիթը։

Գալով այն հարցին, թե ովքե՞ր էին գլխավոր գործակատարներն այդ մեծ շփոթության մեջ, մենք պիտի մատնանիշ անենք երկու վարդապետի, երկուսն էլ սպասավոր՝ Գրիգոր Աղքիրմանցի և Ներսես Աշտարակեցի։ Առաջինը Հովսեփ Արղությանի սպասավորն էր, երկրորդը՝ Դանիել եպիսկոպոսի։ Երկու սպասավորներն էլ օժտված էին մեծ եռանդով և իշխելամոլ տենչերով։ Բայց եթե համեմատություն դնենք երկուսին իրար հետ, երկրորդը, Ներսես Աշտարակեցին, ոչ մի համեմատություն չի վերցնի իր անսպառ և անշեջ եռանդով, գործելու ընդունակությամբ։ Նոր մի դեմք էր նա հայոց հոգևորականության մեջ, դեռ ընդամենը մի եպիսկոպոսի սպասավոր։ Ծնվել էր նա Աշտարակ գյուղում 1770 թվականին, Շահազիզյան ընտանիքի մեջ, ուսում ստացել էր Էջմիածնի վանքում, ուր և հոգևոր կոչում էր ստացել, թողնելով իր Թորոս անունը և կոչվելով Ներսես։ Բնությունից ուշիմ և ընդունակ պատանին իր դաստիարակության պակասը լրացրեց, որքան այս, իհարկե, հնարավոր էր իր ճանապարհորդությունների միջոցով, և այս՝ շնորհիվ Դանիել եպիսկոպոսի, որի փոքրավորն էր նա։ Դանիելն, իբրև Էջմիածնի նվիրակ, տարիներով գտնվում էր Զմյուռնիայում, Մոլդավո-Վալախիայում և Կ. Պոլսում, ուր պատրիարքություն էլ արավ։ Ներսեսը միշտ գտնվում էր նրա մոտ։ Պատմվում է, թե Ղուկաս կաթողիկոսն էր, որ Ներսեսին հանձնեց Դանիելին, երբ սա, իբրև նվիրակ, ուղևորվում էր Զմյուռնիա. Ներսեսը շատ նիհար և վատառողջ երեխա էր։ «Դանիել սրբազան,— ասաց կաթողիկոսը,— այս երեխային հետդ տար, գուցե աստված հաջողի այնտեղ հմուտ բժիշկների հանդիպել, և բժշկվի. սա շնորհալի է. հոգիս վկայում է, որ սա ժամանակին պետք կլինի Էջմիածնին»։ Դանիելը վերցնում է ակամա, հպատակվելով մեծավորի հրամանին, այդ պատճառով էլ նրա հետ խստությամբ էր վարվում։ Ինքը՝ Ներսեսը, հետո պատմել է, թե Զմյուռնիա գնալիս ինքը ճանապարհի շատ մասը գնացել է ոտով և հենց այս բանի մեջ էլ գտել է իր կատարյալ առողջացումը։ Այնուհետև նա երախտագիտության զգացմունքով կապվում է Դանիելի հետ, սա էլ իր վերաբերմունքն է փոխում դեպի նրան[1]։ Եվ հասկանալի է, որ Ներսեսն այս պատճառով պիտի հակառակորդ լիներ Դանիելի հակառակորդներին։ Հովսեփ Արղությանին նա ատում էր[2], և այս ատելության պատճառն ուրիշ բան չէր կարող լինել, բացի միայն այն, որ Արղությանը Դանիելի հակառակորդն

1 «Հիշողություններ Ներսես Ե կաթողիկոսի կյանքից» («Բազմավեպ» ամսագիր, 1904, Վենետ., եր. 199)։

2 Գաբրիել Պատկանյան, Տաղկաքաղ ի լիակատար կենսագրութենէ սրբազան Հայրապետի Ներսեսի Ե., Զմյուռնիա, 1876, եր. 53։

էր կաթողիկոսության հարցում և վերացրեց նրա թեկնածությունը։ Իսկ այս փոքր բան չէր Ներսես Աշտարակեցու պես մի եռանդոտ և փառատենչիկ մարդու համար։ Դանիելի կաթողիկոսությունն ընդարձակ ասպարեզ բաց կաներ նրա փառքի և իշխանության համար։ Նրա համար բարեբախտություն էր, որ Հովսեփը չկարողացավ վայելել իր խլած իշխանությունը։ Եվ այժմ, երբ նորից բացվում էր կաթողիկոսական հարցը, Ներսեսը մոլեգնաբար ասպարեզ նետվեց՝ բնազդաբար ըմբռնելով, որ Դավիթ-Դանիելյան կռվի մեջ պիտի նա հռչակ և դիրք ստանա և երկար ժամանակ դառնա հայ ժողովրդի բախտի միահեծան տնօրինող։ Դանիելը նրա ձեռքի գործիքը դառնալով, պիտի միայն բարձրացման և ճոխացման հնարավորություններ հայթայթեր նրան։

Ճիշտ մեծանալու և փառավորվելու նպատակով էր, որ դուրս էր գալիս և Գրիգոր Աղքիրմանցին։ Հովսեփ Արղությանի հետ նա գնում էր Էջմիածին՝ այնտեղ եպիսկոպոս ձեռնադրվելու համար, որից հետո նա պիտի նշանակվեր Ռուսաստանի հայոց առաջնորդ, ասել է հենց Արղությանի տեղ, թեև Ռուսաստանում դեռ Ղուկաս կաթողիկոսից նվիրակության պաշտոնով ուղարկված Եփրեմ եպիսկոպոս Ձորագեղցին արդեն իրեն համարում էր առաջնորդ։ Բայց Թիֆլիսում Գրիգոր վարդապետը տեսավ իր ակնկալությունները խորտակված Հովսեփի մահով, ուստի սկսեց եռանդով աշխատել նոր հնարավորություններ ստեղծելու համար։ Լավագույն միջոցն էր չթողնել, որ մեռնե հովսեփական կամ հակադանիելական հոսանքը կաթողիկոսական հարցի մեջ։ Դանիելյան հոսանքն, ինչպես տեսանք, իսկույն գլուխ բարձրացրեց, հենց որ Արղությանը փչեց իր վերջին շունչը։ Հրավիրակ եկած չորս եպիսկոպոսները, թունդ հակահովսեփյաններ, իսկույն ագիտացիա սկսեցին Արղությանի մահվան հենց մյուս օրը, նրանք շտապեցին նամակ ուղարկել Էջմիածին իրենց համախոհներին, որ անմիջապես ժողով անեն և նորից ընտրեն Դանիելին, թե չէ «հետոյ մեր գլուխն կը ցավի»[1]։ Գրիգոր վարդապետն էլ, առանց տատանվելու, սկսեց կազմակերպել հովսեփյան հոսանքը։ Այս բանի համար նա ուներ շատ հարմարություններ։ Ամենից առաջ այն, որ նա Հովսեփի ամենամոտիկ մարդն էր, նրա կայքին ու գույքին լավատեղյակ հավատարմատար։ Ինքը Հովսեփը մեռնելիս ասել էր Էջմիածնից եկած եպիսկոպոսներից Սիմեոնին, թե իր բոլոր հաշիվներին լավ տեղյակ է Գրիգոր վարդապետը, և թե ինքը նրան ասել է ամեն ինչ, որ հարկավոր է[2]։ Այնուհետև կար այն խոշոր հանգամանքը, որ ռուսաց քաղաքականությունը կարող էր թույլ տալ այնպիսի մի մարդու կաթողիկոսությունը, որ Արղությանի ուղղության հետևող կլիներ, այսինքն՝ անձնատուր ռուսական շահերին։ Այս հողի վրա Գրիգոր վարդապետն, իբրև Արղությանի հավատարմատար և իբրև նրա միջոցով ռուսական վարիչ շրջաններին (գեներալ Կնորինգ, Լազարև և ուրիշներ) մոտիկ ծանոթ ռուսաստանցի մի հայ կարող էր նշանակավոր ցուցմունքներ անել, մատնանշելով հարմարագույն թեկնածուներ։ Եվ նա կանգ առավ Դավիթ Ղորղանյանի վրա, որի ընտրությունն ու վավերացումը կարող էին հեշտացնել նրա ծանոթություններն ու կապերը Թիֆլիսում և Երևանում։ Իբրև մյուս թեկնածու նա տալիս էր Կ. Պոլսի Հովհաննես պատրիարքի (Ճամաշրճյանի) անունը։

Ինչպե՞ս կարող էր, սակայն, մի անհատ, այն էլ հեռուն եկած մի սպասավոր—վարդապետ, դնել թեկնածություններ և ընդունել տալ դրանք։ Ընտրողական սկզբունքն այն ժամանակներում շատ թուլացած էր, դրեթե մի դատարկ ձևականություն դարձած, տեղի տալով ուժեղ անհատների կամքին

[1] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ե, եր. 85։

[2] «Դիւան հայոց պատմութեան», Գիրք Ա—Բ, Թիֆլ., 1893, եր. 82։

կամ ավելի հաճախ՝ ավատական կարգին, որ մեծ նշանակություն էր տալիս այն հանգամանքին, թե ում է իր հաջորդ նշանակել այս կամ այն կաթողիկոսը մահվան անկողնում։ Գրիգոր վարդապետն էլ, հետևելով այդ կարգին, հրապարակ հանեց մի բերանացի կտակ Հովսեփ Արղությանի անունից. մարտի 16-ին նա գրում էր Դավիթ եպիսկոպոսին հետևյալը. «Ի միջօրէի պատեցին խաւար զմեօք. քանզի արփիասարաս լուսատուն ընդհանուր ազգիս գլուխն եկեղեցւոյս Հայաստանեայց, սքանչելին տիեզերաց և մի միակ պարծանքն տոհմիս Յաբեթեան, քրիստոսափոխեան հայրապետն և իմս իսկ յոգներախտ ծնողն ասեմ, զի մինչ հանդերձեալ էաք ելանել աստի, աւուրբ միով յառաջ հիւանդացեալ սրբազան վեհապետն զկնի շաբաթաւ միոյ յամսոյս 9-ի գիշերային ինն ժամուն կիսոյ, աւանդեաց զմաքուր հոգին առ Աստուած, թողլով վասն մեր սուգ անտանելի, ցաւ անբուժելի. ի ժամ մահուան իբրև կտակաւ աւանդեաց ինձ որդեկիս իւրոյ՝ զՀայրապետական Աթոռն յաջորդել կամ Սրբազանութեան ձեր և կամ Պոլսոյ պատրիարք Յօհաննէս արքեպիսկոպոսին, իսկ որովհետև նա հեռի ի սուրբ Աթոռոյդ, ուրեմն մնայ Սրբութեան ձերում կտակակերպ աւութիւն հոգելոյս վեհապետիս, որ յաղագս յաջորդեցման ձերոյ սրբութեան ունիմ գրով յայտնեալ նորին կայսերական մեծութեանն։ Գրեցի և մեր Կարապետ խոհեմառատ վարդապետին ջանալ և հետևիլ զհրաման լուսահոգի տեառս ի յանգ հասուցանել, իսկ եթէ նա յայլ կողմն ուզիցի թեքիլ, յայնժամ և սուրբ հայրդ իմ մի խնայեցիք դնիլ ի գործ զջան ի ժամ հարկաւորութեան։ Իսկ յաղագս ֆէրմանին մի ինչ հոգասջիք, զի որպէս ժողովրդոց յարդանօք հաւանութեամբ, նոյնպէս ջանացայց տալ բերել զֆէրմանն ի յերկուց կայսերացն ևս։ Ահա խանին (Երևանի) ևս գրեցի զկտակերպ աւութիւն լուսահոգի վեհապետիս, և թե բոլոր ընծայքն որ վասն նորա ունիմ տանել ընդ իս. յուսով եմ որ ոչ անտես առնիցէ զխնդիր մեր, նոյնպէս և մեր Կարապետ վարդապետն զպատուէր տեառն իւրոյ հարազատօրէն ջանալն և ի յանկ հասուցանելն ո՛չ երկմտիմ. ես յայն սակս փութացայ տալ գիտել Սրբութեան ձեր՝ ըստ որում եղեալ աստ եպիսկոպոսացն միոջ՝ առ յայլ հակի, այլ նոցա անտի չէին թողլոց տակաւ ժամանակ ինչ, ուրեմն ջանացջէք սուրբ Հայրդ իմ օր մի յառաջ ընկալնուլ զքահանայապետական Աթոռն։ Ստուգիւ գիտեմ զոր ինչ խորհուրդ և կարգաւորութիւն հոգելոյս հայրապետին. ձիոց լինիցի կորուստ, և զարտասուս աչացս՝ դուք միայն ունիք սրբել և սփոփել հայրական ձեր գթութեամբ, զի լուսահոգւոյ եղբօրորդիքն զավլութեամբ պատմեն զձէնջ և յուսադրեն ձեռք մխիթարիլ. բոլոր կառավարութիւն և զգոյիցն իւր զիշխանութիւն եդ ինձ որդւոյս իւրոյ. ի գալն Աստուծով թե զընծայս խանի և թէ սուրբ Աթոռոյ պատկանեալս ունիմ տալ բոլորովին։ Նոյնպես երկրի ռուսաց և քաղաքիս բոլոր հոգացողութիւնն իբրև կտակաւ յանձնեաց ինձ։ Զկնի հոգելոյն ծնողիս՝ սրբազանութիւն ձեր միայն գիտեմ Հայր գորովագութ և մխիթար ի տրտմութեանս յայսմիկ»[1]։

Ամեն ինչ պարզ էր և ամեն ինչ գործի էր դրված, սկսած Երևանի խանին տրվելիք կաշառքից։ Ռուսաց իշխանություններն արդեն սկսել էին աջակցություն ցույց տալ Գրիգոր վարդապետին։ Էջմիածնի չորս հրավիրակներին գեներալ Լազարևը թույլ չտվեց անմիջապես վերադառնալ իրենց տեղը։ Այսպես հարկավոր էր համարել Աղքիրմանցին, որպեսզի Էջմիածնում չիմանան, թե ինչ է կատարվում և կաթողիկոսական ինքնագլուխ ընտրություն չկատարեն։ Նույնպես Գրիգոր վարդապետի կարգադրությամբ էր, որ Հովսեփ կաթողիկոսի դին առժամանակ պահվեց Թիֆլիսում և չուղարկվեց թաղելու Էջմիածնում,

[1] «Դիւան հայոց պատմութեան», հ. Ե., եր. 73—74։

ինչպես նա ցանկություն էր հայտնել հոգեվարքի մեջ։ Վարդապետն ուզում էր, որ առաջ Դավիթը կաթողիկոսանա, որից հետո ինքն ընծաներով և իր բարերարի դիակի հետ կերթար էջմիածին, իր տենչացածներն էլ ստանալու համար։ Բայց նա փոքր ինչ սխալվել էր իր հաշիվների մեջ։ էջմիածնի չորս նվիրակները, ճիշտ է, արգելվեցին Թիֆլիսում, բայց նրանց նամակը Գրիգոր վարդապետի նամակից շուտ հասավ էջմիածին։ Եվ ահա անմիջապես, մարտի 16-ին[1], ժողով է գումարվում միաբաններից, ուր դանիելյան կուսակցությունն առաջարկ է մտցնում նոր ընտրություն չկատարել, քանի որ ընտրված կաթողիկոս Դանիելը կենդանի է և ապրում է Թուրքիայի Թոքատ (Եվդոկիա) քաղաքում։ Պետք է միայն վերահաստատել այդ ընտրությունը և նշանակել հրավիրակներ, որոնք իսկույն ուղևորվեն Թոքատ և բերեն կաթողիկոսին։ Խնդիրն այսպես դնելուց հետո՝ ինքնըստինքյան մերժվում էր ժողովի անդամներից մեկի առաջարկությունը, որ վերաբերում էր Դավիթ եպիսկոպոսին։ Նկատի առնելով, որ Դանիելը շատ է հեռու էջմիածնից, իսկ Աթոռը մնացել է առանց գլխի և մեծ վնասներ է կրում անիշխանությունից, ժողովական միաբանն առաջարկում էր կաթողիկոս ընտրել Դավթին։ Ինքը Դավիթն էլ ներկա էր ժողովին և տեսավ, թե որքան վիրավորական ձևով մերժվեց իր թեկնածությունը։ Այսպիսի վիրավորանքի մոռացողը չէր նա։ Բայց և այնպես, ժողովի վճռին համաձայն էր և ինքն էլ ստորագրեց Դանիելին ուղղած թուղթը, որով միաբանությունը խնդրում էր շտապել գալ Մայր Աթոռը՝ կաթողիկոսական գահը գրավելու համար։ Հրավիրակներ ընտրվեցին Հովհաննես եպիսկոպոս Պառնասյանը և Ներսես վարդապետ Աշտարակեցին։ Երևանի Մահմադ խանը համաձայնություն տվեց, որ Դանիելը կաթողիկոսանա, բայց այն պայմանով, որ նա մինչև երկու ամիսն էջմիածնում լինի։ Հրավիրակներն անմիջապես ուղևորվեցին Թոքատ։

Դրությունը փոխվում է այն րոպեից, երբ Դավիթն ստանում է Գրիգոր վարդապետ Աղքիրմանցու նամակը, որ գալիս էր նրան համոզելու, թե զորավոր աջակիցներ կան իր թեկնածությունը հաջողեցնելու համար։ Ամենաէականն ու ամենից շատ գրավիչը, իհարկե, ռուսական աջակցությունն էր։ Բնատուր փառասիրությունը, գրգռված միաբանակիցների վիրավորական վերաբերմունքով դեպի նրա կաթողիկոսական թեկնածությունը, խոսեց նրա մեջ այնքան հզոր ձայնով, որ նա մոռացավ իր ստորագրությունը Դանիելին ուղարկած թղթի տակ և իրեն հատուկ եռանդով սկսեց գործել, նշանաբան ունենալով մի իրավունք միայն՝ Հովսեփ Արղության կտակը։ Թողնելով, որ Գրիգոր վարդապետը գործ տեսնե Թիֆլիսում, Դավիթը Մահմադ խանի տրամադրությունն սկսեց մշակել Երևանում իր խնամի Մելիք Աբրահամի միջոցով։ Թե՛ Գրիգորի և թե՛ նրա ընտրյալի դիտավորությունները գաղտնի չմնացին և մյուս կողմը, Դանիելյանն, անմիջապես զգալով, թե վտանգի մեծագույն մասն որտեղից կարող է գալ, շտապեց իր ուժը պատրաստել Ռուսաստանում՝ նրան հակադրելու համար Գրիգոր վարդապետ Աղքիրմանցուն։ Դանիելյաններից այդ միջոցին Եփրեմ եպիսկոպոս Ձորագեղցին էր գտնվում Ռուսաստանում։ Գրիգոր վարդապետի դիտավորություններն ամենից առաջ նրան էին հարվածում։ Այս հանգամանքն էլ շտապեցին շահագործել էջմիածնի կուսակցականները, գրելով Եփրեմին մարտի 28-ին մի նամակ, որի մեջ կաթողիկոսական թեկնածուների մասին չէին խոսում, այլ միայն այն մասին, թե Աղքիրմանցին ուզում է խլել նրա ձեռքից Ռուսաստանի թեմը, ուրիշ խոսքերով՝ գրգռում էին Եփրեմի ինքնասիրությունն ու փառասիրությունը, որպեսզի այդպիսով

[1] Մ. Մսերեան, Պատմութիւն կաթողիկոսաց էջմիածնի, Մոսկվա, 1876, էջ. 36։

հարկադրեն նրան գործել իբրև շահագրգռված անձ։ Ահա ինչ էին էջմիածնեցիք գրում այդ նամակի մեջ.

«Իհարկէ մինչև ցայժմ լուեալ իցես Յովսեփ կաթողիկոսի ի տեղւոյդ (Աստրախանից) գալն մինչև ի Թիֆլիզ և անդ վախճանիլն, և աստանօր կրկին երկբորդելն աւելորդ էր, բայց նորին սպասաւոր Գրիգոր վարդապետն զինքենէ ժառանգ մեռելոյն քարոզէ որպէս թէ՝ զիշխանութիւն և զամենայն կայս նորին պարտի ինքեան յանձնիլ. վասն որոյ Թիֆլիզու նստող ենարալի ձեռօքն ծածուկ ջան դնէ զի եթէ հնար իցէ, տեղւոյդ առաջնորդութեան և նուիրակութեան աղագաւ աշխատի և կամի յափշտակել և սեփական գրաւել վասն իւր։ Ուստի հաւանութեամբ տեղւոյս եղեալ քանի անձանց եպիսկոպոսաց գիտութեամբն, գրեմք հայրապատիւ բաղձալի եղբօրդ մերոյ, զի ահա այս է վաստակաւորութեան և քաջութեանդ ժամանակն, զի եթէ բան գործ ունիս տեսցես և մի՛ յապաղեսցես, զի մի՛ կարասցէ թշնամին ամբարտաւանութեամբ յառնել ի վերայ սրբոյ Աթոռոյս և զչար ախտն իւր յառաջ տանել. և ուր արեք լինիս շուտով զայցես Մօզդոկու կուսակալի մօտն և կամ այլոց ձեռօքն բանդ շինել տացես և հաստատուն ամրացուսցես զիշխանութիւնդ, չլինի թէ՝ թոյլ բռնես բանս՝ որ այլք շուտով յառաջացուսցեն զկամս իւրեանց. քանզի ոչ քեզ է օգուտ, ոչ սրբոյ Աթոռոյս և ոչ միաբանութեանս մերոյ և այնպես բան արասցես, որ նորա ձեռքն և ոտքն բոլորովին ի տեղւոյդ կտրիցի, և այլևս չկարողասցի բանի ինչ խառնիլ և կամ մերձիլ յայդր. ամենայն ջանիւ ջանասցես, որ նորին կամք և դիտաւորութիւն ունայնացուսցես, որ այլ ևս մի կարասցէ մուտ գտանել դէպ ի յայդ երկիր։ Այդ Գրիգոր վարդապետի բնութեանն լաւապէս տեղեակ ես թէ որպէս նենգաւոր, խորամանկ և անհաւատարիմ անձն է առ սուրբ Աթոռս, յայտնի է սիրելի եղբօրդ մերոյ. զի եթե դա յառաջ տարցէ զչար ախտն իւր, թէ՝ որքան խեռութեամբ և նենգութեամբ վարելոց է առ սուրբ Աթոռս և առ աթոռայինսն, քաջ գիտակ ես։ Ուրեմն կրկին գրեմք և յորդորեմք զի յամենայն զօրութեան ջան դիցես և թերևս հանիցես զամենայն ջան և զնենգաւոր հնարս նորին. և եթէ կարելի իցէ տեղւոյդ կուսակալեն մեկ թուղթ առեալ առաքեսցես ի վերայ Թիֆլիզու նստող ենարալին որ մեր հրաւիրակք վարդապետացն զիւրին լիցի ելանել գալ ի սուրբ Աթոռս. քանզի Գրիգոր վարդապետն այն բանիւ ենարալի արգելեալ է անդ, որ մինչև իւր ախտն յառաջ տանիցէ, վասնորոյ մեկ այնպիսի սաստիկ կերպիւ թուղթ լինի ի վերայ նորա՝ թէ ինչ բան ունիս ընդ այդ վարդապետացդ՝ որ մեկ չնչին մարդոյ լսելով, դոցա ի զուր տեղև արգելեալ ես այդր»[1]։

Այս պնդումներն ու թախանձանքներն, իհարկե, պարտ ու պատշաճ ազդեցություն գործեցին Ռուսաստանի նվիրակ եպիսկոպոսի վրա, հաղորդակից անելով այն կուսակցական կրքերին, որոնք արդեն եռալ էին սկսում կաթողիկոսության շուրջը։ Սակայն Եփրեմն, ինչպես երևում է, չկարողացավ ոչինչ անել։ Ռուսաց կառավարությունը դեռ միայն Գրիգոր վարդապետին էր հավատում և նրան էր համարում Հովսեփ Արղության հաջորդների թարգման։ Ուստի և բոլոր կարգադրությունները Գրիգորի գործողությունների պաշտպանության համար էին լինում։

Ռուսաց կառավարությունն առանձին կարևորություն էր տալիս կաթողիկոսական հարցին իր արևելյան քաղաքականության շահերի պահանջների հետևանքով։ Այս մենք տեսանք Հովսեփի կաթողիկոսացման նամակից։ էջմիածնի քաղաքական գնահատման տեսակետից փոփոխություն տեղի չէր ունեցել ռուսական վերաբերմունքի մեջ Եկատերինա կայսրուհու ժամանակից։

[1] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ե., էջ. 74—75։

Ալեքսանդր Ա-ն, տեղեկություն ստանալով Հովսեփ Արղության մահվան մասին, իսկույն հանձնարարեց գլխավոր հրամանատար Կնորինգին առանձին հոգացողության առարկա դարձնել նոր կաթողիկոսի ընտրությունը և այդ բանի մեջ աշխատանքներ գործադրել Կ. Պոլսի Ռուսաց դեսպան Տամարանի հետ համաձայնություն կայացնելով: Ալեքսանդրը թույլ էր տալիս, որ նոր թեկնածուներ էլ հրապարակ բերվեն, եթե միայն այդ նորերն էլ միանգամայն համապատասխանում են Ռուսաց կառավարության հայացքներին[1]: Այսպիսով Թիֆլիսում լուրջ ձեռնարկություններ սկսվեցին Գրիգոր վարդապետի առաջին թեկնածուի՝ Դավիթ եպիսկոպոսի, օգտին: Թիֆլիսում և այլ տեղերում հանրագրեր էին կազմվում տիրող դասակարգերի անունից այն մտքով, թե ամենքն ուզում են Դավթի կաթողիկոսանալը: Փորձեր եղան ներգործելու էջմիածնի միաբանության վրա, և Դավիթ արքայորդին հատուկ ուղարկած մարդու միջոցով առաջարկում էր, որ միաբանները նոր ժողով կազմեն և կաթողիկոս ընտրեն Ղորղանյանին: Եվ միաբանությունը կտրականապես մերժեց այդ առաջարկությունը, Ռուսաց պաշտոնական շրջաններն իրենց ջանքերն ուղղեցին Երևանի Մահմադ խանին: Երկու անգամ հատուկ պաշտոնյաներ ուղարկվեցին Երևան: Եվ խանը շուտ հակվեց Դավթի կողմը: Բացի կաշառքներից, ազդեցիկ մարդկանց միջնորդություններից, այդպես պարտավորեցնում էր նրան և ընթացիկ քաղաքականությունը: Բանն այն էր, որ դեռ Աղա Մահմադ խանի ժամանակից Երևանի խանը մեկն էր Անդրկովկասի այն թուրք խաներից, որոնք չէին ճանաչում Իրանի շահի իշխանությունը և հենց այդ պատճառով էլ Մահմադ խանը հեռացվեց պաշտոնից, իսկ Նախիջևանի Քելբալի խանը, որ նրա ժիր ու եռանդոտ գործակիցն էր, կուրացվեց սարսափելի ներքինի շահի հրամանով: Բաբախանի (Ֆաթալի շահի) ժամանակ Մահմադ խանը ներում ստացավ և նորից Երևանի խան նշանակվեց, բայց շարունակեց նախկին կասկածելի վերաբերմունքը դեպի Իրանի գահը: Իսկ Քելբալի խանը, թեև բոլորովին կույր, նորից ստանձնեց իր իշխանությունը և նորից գործակից դարձավ Երևանի խանին: Այժմ երկուսին էլ սաստիկ զբաղեցնում էր միևնույն մտահոգությունը՝ ինչպես պահպանել իրենց ինքնագլուխ իշխանությունը քաղաքական նոր հանգամանքների մեջ, երբ հյուսիսից ռուսական մեծ վտանգն է առաջանում, և այս հանգամանքը հարկադրում է Պարսից կառավարության ավելի խստապահանջ լինել Անդրկովկասի խաների վերաբերմամբ, հարկադրելով, որ նրանք անպայման հավատարիմ հպատակություն ցույց տան Իրանին: Այս դժվար հանգամանքներում, այսպես ասած՝ երկու կրակի մեջ դրված, Անդրկովկասի բոլոր խաները և նրանց թվում, իհարկե, և Երևանի ու Նախիջևանի խաները, փրկություն որոնում էին արևելյան խորամանկ քաղաքականության մեջ, խոնարհվելով դեպի այն կողմը, որ այս կամ այն րոպեին ուժեղ և վտանգավոր էր: Պարսկաստանի պահանջները մղում էին խաներին դեպի ռուսների կողմը, որոնք որոնում էին նրանց համակրանքը, աշխատում էին խաղաղ միջոցներով գրավել նրանց, գցել իրենց իշխանության տակ, խոստանալով պաշտպանություն և հովանավորություն: Բայց երկու կողմերն էլ շատ լավ գիտեին, որ իրար խաբում են, և խաների համար ռուսականությունը լոկ արտաքին մի շպար էր՝ ռուսներին խաբելու և քնացնելու համար: Եվ ամեն անգամ, երբ ռուսական վտանգը վերահաս էր թվում, սկսվում էր խաղի մյուս արարվածը. Իրանն էր կանչվում՝ ռուսներից ազատվելու համար:

1 Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. IV, с. 232.

Մահմադ խանն ու Քելբալի խանը ճիշտ այդ երկերեսանի խաղերի վրա էին, երբ բացվեց Դավթի կաթողիկոսացման հարցը: Ժամանակագիր Ոսկերչյան քահանան շատ լավ է ներկայացնում դրությունը, գրելով. «Բաբախանի միջնորդությամբ մտօ իւրոյ արձակե զՄահմադ խան իշխանութեամբ տիրել Երևանու: Որ եկեալ տեղեկացաւ իբրև զգազան ի յորջ յամրոցն Երևանու: Եկն և յարեցաւ ի սա և խանն Նախիջևանու Քեալբալի՝ կուրացացեալն ի ներքինւոյն. սա կոյր աչօք, և նա կոյր մտօք. և կոյրն աչօք Քեալբալի եղև առաջնորդ Մահմադ խան կուրին մտօք. նաև եղև իբրև իմ թիւնատու նմա...: Ի սոյն ժամանակի (1801) Բաբախան Շահն Պարսից ոտնաձայն առնէր գալ ի վերայ Երևանու, առ ի նուաճել զերկոսին ապստամբեալ խանսն զՄահմադ և զՔեալբալի, որք իբրև զճագարս ղօղեալք էին յամրոցն Երևանու»: Լսելով շահի մտադրությունը, երկու խաները մարդ են ուղարկում Թիֆլիս և խնդրում, որ ռուսներն օգնեն իրենց, վանելով պարսիկներին, խոստանում էին ռուսաց բանակին հաց տալ և ռուսական հպատակություն ընդունել: «Ամեն նմա,— շարունակում է մեր աղբյուրը,— և խօսեին առ Շահն պարսից, թե՝ ե՛կ և փրկեա՛ զմեզ ի ռուսաց և մեք սրտի մտօք ծառայեսցուք քեզ, որ և այսպիսի աղուեսաբարոյութեամբ ի յերկուս ամս խաբեցին զերկոսին կողմունսն, և այնքան հնաբեցին մինչև յարուցին զՌուսս և զՊարսկոս ի վերա իրերաց»[1]:

Այսպիսի քաղաքականության հետևող Մահմադ խանը, պարզ է, չէր կարող անտես անել Թիֆլիսից եկած խնդիրքը Դավիթ եպիսկոպոսի մասին: Այս մի նոր նպաստավոր դիրք էր ստեղծում նրա համար այն խաղի մեջ, որ վարում էր իր իշխանությունը պահպանելու համար: Իհարկե, միայն ռուսներին հաճելի մի գործ կատարած լինելու զգացմունքը չէր նրան ոգևորում: Կար ավելի իրական գրավչություն՝ ամենայն Հայոց Մայր Աթոռի գանձարանը: Երկու խաներն, անկասկած, այնքան միամիտ չէին, որ չհասկանային, թե էջմիածնում երկու կաթողիկոս ունենալը նշանակում է մինչև վերջին կաթիլը քամել հայ ժողովրդին պատկանող հարստությունները: Ոսկերչյանը նույն տողերի մեջ գրում է. «Ի սկիզբն չարութեանց իւրեանց ի 1250 (=1801) թուին՝ ձեռնարկեցին ի գործս կաթողիկոսացն Դանիելի և Դաւթի և ի ձեռն չարահնար առն Մելիք Աբրահամի խնամւոյն Դաւթի աւերեցին զԱթոռն Էջմիածին և արարին գոյաթափ ի հարստութենէ»: Այսպիսով խանի կամեցողությունը միանգամայն պատրաստված էր Դավթի համար իրավունք ստեղծելու Հովսեփ Արղության կտակից: Եվ հակառակորդ կուսակցությունը փոխանակ այդպիսի մի կտակ ոչնչություն հայտարարելու մի գործում, որ ամբողջովին ընտրության վրա պիտի հիմնված լիներ, սկսեց վեճի առարկա դարձնել այդ կտակը, հայտարարելով, թե Արղությանն այդպիսի կտակ չէ արել, հետևաբար Գրիգոր վարդապետը սուտ է խոսում: Այդպիսի մի դրություն ապացուցելու համար դանիելականները չունեին մի այլ փաստ, բացի նրանից, որ էջմիածնի չորս հրավիրակներից մեկը Սիմեոն եպիսկոպոսն է եղել, որ հաղորդություն է տվել մեռնող Արղությանին, հարցրել է նրան, թե ինչ կարգադրություններ է ուզում անել և լսել է նրանից միայն մի քանի ցուցմունքներ իր գույքերի և իր թաղման մասին: Այս մտքով էլ Սիմեոն եպիսկոպոսը մի թուղթ էր գրել[2], որ և դանիելյանները հրապարակ հանեցին իբրև հերքում այն կտակի, որի անունից խոսում էր Գրիգոր վարդապետ Աղքիրմանցին: Բայց այս մի շատ տկար ապացույց էր: Ով կարող էր հավատալ, որ եթե Հովսեփ կաթողիկոսը ոչինչ չէր ասել Սիմեոն եպիսկոպոսին, թե ում է ինքն ուզում, որ հաջորդե

1 «Կռունկ» ամսագիր, Թիֆլիս, 1862, եր. 289—290:

2 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ա—Բ, եր. 81—82:

իրեն, այդ անպատճառ նշանակում է, թե նա ոչինչ չի ասել և Գրիգոր վարդապետին։ Ընդհակառակն, միանգամայն բնական կլիներ, եթե Սիմեոնը լիներ մեռնող կաթողիկոսի ցուցմունքի լսողը մի այնպիսի փափուկ և կարևոր հարցի մեջ, ինչպիսին էր մի նոր մարդու կաթողիկոսացումը։ Մենք արդեն տեսանք, որ Էջմիածնի չորս հրավիրակներին էլ Հովսեփը համարում էր իր հակառակորդներ և հեռու էր պահում նրանց իրենից։ Այն հանգամանքը, ընդհակառակը, պիտի համոզեր, թե Հովսեփը չէր էլ կարող հավատալ իր սրտի խորհուրդը հակառակորդին, այլ ավելի շուտ կհավատար իրեն շատ մոտիկ և հավատարիմ մարդուն, որը կատարել կտար իր այդ ցանկությունը։ Բացի դրանից, Սիմեոն եպիսկոպոսի վկայությունը կարող էր ճիշտ այնքան արժեք ունենալ, որքան ուներ Գրիգոր վարդապետի վկայությունը։ Երկուսն էլ հավասար չափով կուսակցական մարդիկ էին և հավասար չափով էլ կարող էին զոհել ճշմարտությունն իրենց կուսակցական շահերին։

Այս նկատառումներով էր, երևի, որ Ռուսաց կառավարությունը չուզեց ուշադրություն դարձնել Եփրեմ եպիսկոպոսի միջնորդությունների վրա, բոլորովին չուզեց խանգարել Դավթի հաջողությանը։ Իսկ այս հաջողությանը նպաստում էր և ինքը Դանիելը։ Իբրև դանդաղկոտ և թույլ մարդ՝ նա չշտապեց գնալ Էջմիածին, այլ՝ ճանապարհվելով Թոքատից, կանգ էր առնում ամեն տեղ, ուր գտնում էր հյուրասիրություն։ Այս կերպով էլ նա չափազանց երկարացնում էր ճանապարհը։ Այնպես որ Էջմիածնեցիք ստիպված եղան նորից երկու միաբան ուղարկել դեպի Երզրում՝ նրա գալուստը շտապեցնելու համար։ Բայց Մահմադ խանն այլևս ավելորդ համարեց սպասելը, և Դավիթն ստացավ լիակատար հավանություն իրեն կաթողիկոս հայտարարելու։ Այդպես էլ արավ Դավիթը և հիմք բռնելով առաջ ու առաջ Հովսեփի կտակը, ապա նաև Թիֆլիսի և այլ տեղերի ընտրողական թղթերը, նա ապրիլի 28-ին օծվեց կաթողիկոս Էջմիածնում։ Մի անստորագիր նամակի մեջ, որ գրված է Էջմիածնից, հետևյալ մանրամասնություններն ենք գտնում. «Ապա թե խաբեթ խալիֆայական հագուրեալ խանին յղե ի սուրբ Աթոռս. և ի լսել միաբանիցն հագանիլն խալէթին և ի գալն իսկոյն մտեալ յեկեղեցին, հանին զսրբութիւնսն և սկսան փախչիլ դէպ ի տէրութիւն օսմանցւոց. զոր գիտացեալ Մելիք Աբրահամին՝ գնացեալ ազդէ խանին, և նա հեծուցեալ զՄաւղանլու Մահմուդ Հասան բէկն, բազում արամբք յղէ ի դարձուցանել զմիաբանսն. որոնց հասեալ միաբանիցն պատիժ սպառնալով և հարկանելով դարձուցանէ զամենայնսն։ Եւ երեկոյեան ժամուն գնացեալ «Հայր գթած» ասաց, զի վաղուեանն պատարագ մատուցէ և օծցի։ Իսկ ի գիշերին, ի դրունս իւրաքանչիւր եպիսկոպոսաց պահապանս կացոյց, զի մի փախիցեն և օծումն խափանեսցի։ Եւ օծման ժամուն յետկոյս իշման տեղւոյն զերիս մուհասիլս կացուցեալ՝ այնպես օծաւ»[1]։ Այս տեսակ ակնարկներով ուզում էին մեղադրել Դավթին, թե նա միայն բռնության միջոցով է ձեռնադրվել։ Բայց որ ամեն ինչ բռնությամբ չի կարելի բացատրել, այդ ցույց է տալիս Դավթի կաթողիկոսությունը, որ չէր կարող իրականացած մնալ տարիների ընթացքում, եթե Դավիթը, ճիշտ որ, մենակ լիներ մնացած, և Էջմիածնում ոչ ոք չլիներ, որ աջակցեր նրան։ Պարզվում էր, որ միաբանության մի մասն էր նրան հակառակվում, և նա ուներ Մայր Աթոռում բավականաչափ կողմնակիցներ, որպեսզի կարողանար ամենայն եռանդով տանել իր իշխանությունը։

Գրիգոր վարդապետը հաղթանակի գագաթնակետին էր հասել։ Դավթի օծվելուց հետո նա գնաց Էջմիածին, թաղեց Հովսեփ կաթողիկոսին, համա-

1 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ե., եր. 103։

ձայն նրա ցանկության, Սիմեոն կաթողիկոսի կողքին, ապա եպիսկոպոս ձեռնադրվեց, ստացավ Ռուսաստանի հայոց առաջնորդարանը և, ինչպես հավատացնում են հակառակորդները, լիարուն շնորհակալություն արավ իր բարերար Մահմադ խանին հարուստ կաշառքի միջոցով։ Դավիթ կաթողիկոսն իսկույն սկսեց մի շատ եռանդուն գործունեություն։ Բազմաթիվ թղթեր գրեց Թուրքիա, Պարսկաստան, Ռուսաստան, բացատրելով այն պայմանները, որոնք հարկադրեցին իրեն ընդունել կաթողիկոսությունը։ Բոլոր իր ծանոթ ամիրաներին և բարձր դիրքով մարդկանց նա խնդրում էր անհապաղ քայլեր անել, որպեսզի հաստատության հրովարտակներ ստացվեն Թուրքաց սուլթանից և Ռուսաց կայսրից։ Ամենից դժվարը սուլթանական ֆերման ստանալն էր։ Իրա համար պետք էր դեռ համաձայնության բերել ամիրայական դասակարգը։ Եվ ահա հատկապես այս նպատակով Դավիթը Կ. Պոլիս ուղարկեց Կարապետ վարդապետ Նոր-Նախիջևանցուն, որ նույնպես Հովսեփ Արղությանի ձեռնասունն էր և նույնպես եպիսկոպոսության աստիճան էր ստացել Դավթից։ Սակայն Կ. Պոլսում, ինչպես և Հովսեփի կաթողիկոսացման ժամանակ, գլխավոր հույսը մնում էր Ռուսաց դիվանագիտության ուժը։ Նորից ռուսական դեսպան Տամարան պիտի լիներ Հայոց կաթողիկոսության հարցին ճակատագրական ընթացք տվողը։ Այս ուղղությամբ Ալեքսանդր կայսրն ամենակտրուկ հրահանգներ էր տալիս իր դեսպանին։ Ահա ինչ էր գրում նա գաղտնի խորհրդական Տամարային 1801 թ. ապրիլի 28-ին, այսինքն՝ նույն օրը, երբ Դավիթը կաթողիկոս օծվեց Էջմիածնում։

«Յայտնի է ձեզ, որ Հայոց Հովսեփ կաթողիկոսին իր այդ պաշտոնում վերջին ժամանակներս հաստատելու մեջ ռուսական արքունիքն օսմանյան Բ. Դռան հետ համահավասար մասնակցություն է ունեցել և այսպիսով ձեռք է բերել իր համար Վրաստանի այժմյան դրության նայած, բավականաչափ կարևոր իրավունք՝ ապագայում էլ դարձնելու այն առարկան իրենից կախված։ Ձեզ նույնպես հայտնի պիտի լինի, որ Հովսեփ կաթողիկոսը, գնալով Թիֆլիս, վախճանվեց։ Վախճանվելիս նա կտակ արավ, որով իր հաջորդ նշանակեց Կ. Պոլսի Հովհաննես պատրիարքին և Էջմիածնի վանքի տեղակալ Դավիթ արքեպիսկոպոսին։ Բայց այս կտակն ի կատար ածելու միջոցին խիստ հակառակություն հանդիպեց Երևանի մելիքի, յուզբաշիների և այլ առաջնակարգ պաշտոնատարների կողմից, որոնք ձգտում էին կաթողիկոսական գահ բարձրացնել Կ. Պոլսի նախկին պատրիարք Դանիել արքեպիսկոպոսին, որին աքսորել էր Բ. Դուռը։ Տեղեկանալով այս մասին մեր գեներալ լեյտենանտ և Աստրախանի զինվորական նահանգապետ Կնորինգի միջոցով, դրա հետ միասին այն հաղորդագրությունից, որ արել էր նրան հանգուցյալ կաթողիկոսի մոտ գտնված Գրիգոր վարդապետը, իմացանք մենք, որ հակառակ կողմից կաթողիկոս նշանակված Դանիել արքեպիսկոպոսն այնքան կողմնակցություն չունի դեպի ռուսական գահը, որքան այս ենթադրվում է հանգուցյալ կաթողիկոսի Հովսեփի կողմից ընտրված անձերի մեջ, որ այս արքեպիսկոպոսն ապրում է Թուրքական Թոքատ քաղաքում, որ արքեպիսկոպոս Դավթի իբրև կաթողիկոսական ընտրելիներից մեկի օգտին միացած կողմը մինչև այժմ դեռ մնում է ամենաուժեղը և որ, վերջապես, այս բոլոր հանգամանքները նա, Գրիգոր վարդապետը հայտնել է Երևանի խանին, որ վաղուց արդեն որոնում է Ռուսաստանի հովանավորությունը,— ես հարկավոր համարեցի ձեզ գիտել տալ այս բոլոր մանրամասնությունները, որպեսզի նրանց նկատի առնելով, վերաբերվեք այն տեղեկություններին, որ դուք այս առթիվ ունենալ կարող եք և ըստ այնու հարմարագույն կերպով թեքեք դիվանը (Բ. Դուռը), որպեսզի հեռացնելով Դանիել արքեպիսկոպոսին կաթողիկոս նշանակելուց, համաձայնվի

մեզ հետ հաստատելու այն անձինքներից մեկին, որոնց ընտրել է հանգուցյալ կաթողիկոսը, առավելություն տալով նրան, ով ավելի շատ անձնվեր կլինի Ռուսաստանին, նայելով ձեր և գեներալ-լեյտենանտ Կնորինգի ունեցած տեղեկություններին։ Վերջինիս մենք մեր կողմից հանձնարարել ենք գործել և դուք աչքաթող չանեք նրա հետ հաղորդակցություն ունենալը։ Համոզված լինելով, որ դուք առանձին ուշադրության առնելով այս գործը, կգործադրեք ձեզանից կախված բոլոր միջոցները կատարելու համար մեր կամքի համաձայն, մնում ենք դեպի ձեզ բարեհաճ»[1]։

Այսպիսով, ռուսաց կառավարության ձգտումը միանգամայն պարզվում էր. ունենալ Էջմիածնում մի կաթողիկոս, որ իր գործիքը դառնար։ Բայց այս նպատակը չէր կարելի բացահայտ կերպով դնել այն բանակցությունների մեջ, որ Ռուսաց դեսպանը պիտի վարեր Կ. Պոլսում։ Ուստի ռուսական դիվանագիտությունն, իր իսկական դիտավորությունը ծածկելու համար, ընդգրկեց այսպիսի մի բանաձև. ամեն միջոց գործ դնել, որ կաթողիկոս ընտրվի մի հեզ և ոչ կռվարար մարդ, որպեսզի նա իր վարմունքով չխանգարե հանգստությունը Ռուսաստանին սահմանակից երկրների մեջ[2]։ Այս ձևակերպումով էլ դեսպան Տամարան եռանդուն գործունեություն սկսեց Թուրքիայի մայրաքաղաքի մեջ, նպատակ ունենալով, իհարկե, ոչ թե հայ ժողովրդի իսկական շահերը, այլ ավելի խոշոր քաղաքական նպատակ. ռուսական ազդեցության ուժեղացումը թուրքական գործերի մեջ։

Իսկ Դավիթ կաթողիկոսը, զգալով իրեն արտաքուստ միանգամայն լավ պաշտպանված, գործադրում էր իր եռանդը ներքին գժտությունները հարթելու և ամենքին իր կաթողիկոսացման հետ հաշտեցնելու համար։ Իր գլխավոր հակառակորդի, Դանիել եպիսկոպոսի վերաբերմամբ նա ընդգրկեց հաշտեցնող քաղաքականություն։ Ուզում էր, որ Դանիելը գա Էջմիածին և ապրե այդտեղ պատվի և հարգանքի մեջ։ Մայիսի կեսին լուր առնելով, որ Դանիելն իր հետևորդների հետ հասել է Մուշ, Դավիթն ուղարկեց նրան հետևյալ կոնդակը, որ մենք բերում ենք ամբողջովին նրա վերաբերմունքն ու հայացքները մի անգամ ընդմիշտ պարզած լինելու համար.

«Գերապատուելոյ և սիրելւոյ եղբօրդ իմոյ և բազմաշխատ հաւատարիմ որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ Տեառնդ Դանիէլի սրբազնայ արքեպիսկոպոսի։ Որում և գիտութիւն լիցի, զի յանցելումն ամի ի գալն մեր ի Կ. Պոլիս մահսերօք միաբանից և երկրացւոց հրաւիրակ յարգութեանդ, եթէ զի մարդ հոգեյօժար կամօք ցանկացաք ի լինել քեզ կաթողիկոս, յայտնի է վսեմախոհ մտացդ. և ցանկալւոյդ առ մեզ ընդունելութիւն և երախտիքն ևս ոչ մոռացեալ լինի ի մտաց մերոց։ Բայց վասն մեղաց մերոց այնպիսի մրրիկք զարթեան ի վերայ մեր, որ կորուսանք զմիմեանս, և վերջապէս անուն կաթողիկոսութեան կոչեցաւ ի վերայ Հովսեփ արքեպիսկոպոսին հիւսիսոյ և արքունի նոմոսքն յանուն նորա հանեալ եռուն մեզ, զորս բերաք։ Եւ այն ինչ գիտեաք գալոյ նորա, ի Թիֆլիս վախճանեցաւ։ Յետ այնորիկ ևս կամեցաք զսիրելի եղբայրդ և միաբանութեամբ զթուղթ հրավիրանաց գրեցաք. այլ ի բազում աւուրս ոչինչ լուր եղեալ զգալստենէ քումմէ, սկսան մեծամեծքն երկրիս և ժողովուրդք մեր ի խնդիր լինել կաթողիկոսի, որով և քանիցս եղև միաբանիցս երթևեկութիւն յԵրևան և անչափ նեղութիւնք և տագնապք ի վերայ որոց և ի Թիֆլիս քաղաքէ ի քահանայից և ի ժողովրդոցն մահտար եկն վկայութեան կտակի հանգուցեալ Յովսեփ կաթողիկոսին վասն մերս ընտրութեանս յաջորդ նմա. որք և յաղագս ոմանց պատճառաց ստիպեալ էին լինել, զի մի չարչար վնասք պատահեցին. այսու համաձայնեալ մեծամեաց և փոքերց, միաբանից և ժողովրդեան յատկացուցին զմեզ և յԱպրիլի իր. ընկալաք զօծումն կաթողիկոսութեան, որով գրեթէ հաղիւ հաստատեցաւ մրրիկն վնասուց ի զանազան կողմանց. և գիտես թէ մինչև ցայս կէտ ևս որ յամենայն, բազմապատիկ վնասուք վնասեալ և վշտացեալ լինէաք. թո՛ղ զՊարսից յարուցման ձայնն որ զամենեսեան սասանեցուցանէ. և ընդ երկար անգլուխ մնալով սրբոյ տանս՝ յաւերութիւնն հակէր։ Եւ ապա միաբանք և երկրացիք մահսեր գրեցին ի մեծ Պոլիս յաղագս անցիցս և օծման մերոյ և ընդունելութեան. մեք ևս զանդրանիկ օրհնութիւն թուղթս գրեցաք և ընդ Կարապետ նորընծայ եպիսկոպոսին առաքեցաք, յամսոյս 2։ Եվ Գ աւուրբք յառաջ իսկ ի Կարնոյ թուղթս ընկալաք որք վասն գալոյդ ամենևին լուութիւն էին նշանակեալ, ոչ ի Մուշ և ոչ ի մերձակայսն հրնչիլ ինչ։ Բայց ահա այսօր լուաք, եթէ եկեալ իցէք ի Մուշ ընդ ազնիւ սիրելւոյն մերոյ Մկրտիչ աղային և գալոց էք յԻւչքիլիսայ։ Եթէ հաւաստէաք յԻւչքիլիսայ գալն, զայս թուղթ ընդ վարդապետի յուղարկէաք. բայց զի դեռ չէաք ստուգեալ ի կարծիս զոլով այսէս յղեցաք։ Արդ՝ սի՛րելի եղբայր ի՛նչ և իցէ այսպես է եղերեցեալ անցքս մեր եթէ յաստուածային ակնարկութենէ համարիցիս, եղբայրսիրաբար կարեկցօրէն պարտիս ներողամիտ լինել՝ և հանգուցանել զսիրտդ. մանաւանդ խնայելով ի ս. Աթոռս, զի անդր քան զչափ վնասեցեալ է սուրբ տունս, և բաւական նեղութիւնս և տագնապս եմք կրեալ. յապագայիցն Աստուած փրկեսցէ։ Այսուհետև եթէ այլևս խռովութիւն և վնասուց դրունք բացցին, ոչ միայն ինձ, այլև քեզ ցանկալւոյդ մնասցին անբարի յիշատակութիւնք, և լեցուաւ նախատինք ազգի և առիթ գայթակղութեան պարզամտաց. և աւերն սրբոյ տանս մնայ ինձ և քեզ արձան վնասակարութեան։ Ապա խնդրեմ, զի զանց արարեալ զանցելովն որ եղեալ գնացեալ է, ընտրեսցես զբարին քո և իմ և հրամայեսցես քաղցր սրտիւ գալ ի ս. Աթոռս, և որպես զմտաւ ածիցես, այնպես ընդունեսցուք զյարգելիդ. և առ պայման պարտաւորութեանս առ սերդ՝ ոչ իբրև եղբայր, այլ իբրև զհայր պատուեցից զքեզ. և եթէ փառք գիտես ինձ զայս, լիցիս ինձ փառակից, եթէ տառապանք նկատիցես, եղիցիս ինձ չարչարակից. միայն զի անամօթապարտ եկյուք ի փորձանուտ կենցաղոյս, և մի՛ դատապարտի։ Արդ՝ բարեյօժար կամօք կամ քոյդ գրով, կամ միոյ ումեք գրել տալով ազդ արասցես մեզ ժամանելդ յԻւչքիլիսայ զի առաքեսցուք ընդ առաջ որպես արժանն է զվարթապէտս, և որպես կամացդ հաճելի իցէ, այնպես ծանուսցես մեզ պատրաստել ըստ յարգութեանդ։ Եւ այլ զի՞նչ երկարեցից, ահա որպես միտք եղբայրութեանդ վկայէ զինէն ունիլ առ քեզ զսէր և զմեծարանս, զայն անսայթաք պահել խնդրեմ. և բաւ է։ Ողջ լեր ի Տէր, ամէն։ Գրեցաւ ի ՌՄԾ (1250—1801) թուոջն և ի մայիսի 16-ի ս. Էջմիածին»[1]։

Այս մի շատ նշանավոր և հեռատես քայլ էր, որ անում էր Դավիթը գահասիրական գժտությունն իր սկզբում, սաղմի մեջ խեղդելու համար։ Նրա մեջ երևան էր հանվում և սեր դեպի ժողովուրդը, և ահեղ պատասխանատվություն ապագա սերունդների առջև։ Հայ հոգևորականությունը կոչվում էր ապացուցելու՝ կարո՞ղ է նա զոհել իր եսամոլությունն ու փառասիրությունը հարազատ երկրի հանգստության և խաղաղության համար։ Եվ նա գալիս էր մի ավելորդ անգամ ևս ապացուցելու, որ ոչ, ընդունակ չէ։ Դանիել Սուրմառեցին, որ

[1] Н. Дубровин, т. IV, с. 232—234.

[2] Н. Дубровин, Борьба за Эчмиадзинский Патриарший Престол («Русский Вестник»), т. CXLVI, с. 556.

[1] Ձեռագիր էջմիածնի կաթողիկոսական դիվան («Նամականիք և պաշտոնական թուղթք Դիվանատան Վեհարանին» ժողովածուի մեջ)։

իր բազմաթիվ և ժրաջան կուսակիցների կողմից հռչակված է իբրև մի առաքինի, գրեթե սուրբ մարդ, կարիք չզգաց օգտվել Դավթի հետ բանակցություններ սկսելու և չափազանց վնասակար դժտությունը հաշտությամբ և փոխադարձ զիջումներով վերացնելու։ Նա նույնիսկ չպատասխանեց Դավթի այն խաղաղասիրական գրությանը։ Ավելին։ Երբ Դավիթը տեղեկացավ, թե Դանիելը հասել է Բագրևանդի Ցուցքիլիսե վանքը, հրավիրակ վարդապետներ ուղարկեց նրան ընդառաջ՝ Էջմիածին հրավիրելու համար։ Բայց ինչ արավ Դանիելը։ Դավիթ կաթողիկոսն իր թղթերից մեկում գրում էր. «Դանիել վարդապետն հասեալ էր իբրև ամսոյս ՀԳ (մայիսի 13) և խանին թուղթ էր գրեալ, զոր իբրև իմացաք, խանն զգլխաւոր տաճիկ մի յղեաց և զերկուս պատուաւոր զեպիսկոպոսունս յղեցաք հրաւիրակս թղթով մերով առ ի համոզել և բերել։ Իսկ նա ամենևին անլուր եղեալ զվարդապետն տանող կոնդակացն մերոց արհամարհեալ է և գանեալ և զկոնդակն մեր առեալ և զանուն մեր բարձեալ ի յիշատակութենէ յեկեղեցեացն. այլ և ի Կարին թուղթքն հասեալ ի սիրելոյ եղբօրէդ և յիշխանաց ոմանց ի վերայ մեր զորս յանձեալ են Ստեփաննոս եպիսկոպոսին, զայս ևս յափշտակեալ է ի նմանէ»[1]։

Հաշտություն չէր կայանում. Դանիելը չուզեց Էջմիածին գնալ, այլ կանգ առավ Բայազետում աթոռ հաստատելով Ցուցքիլիսե վանքում և այստեղից սկսեց մարտնչել Դավթի հետ։ Էջմիածինն էլ թուրքերեն լեզվով կոչվում էր Ցուցքիլիսե։ Երկու Ցուցքիլիսեներն սկսեցին իրար ամբաստանել ի մեծ դժբախտություն հայ ժողովրդի։ Շատ նշաններ կան, որոնք ցույց են տալիս, թե Դավթի կաթողիկոսացումը ժողովրդական լայն խավերի մեջ արդեն օրինականություն էր ստանում և նրա հետ սկսում էին հաշտվել։ Սակայն կուսակցությունն այդ բանին համաձայն չէր և անհաշտ ու անխնա պայքար հրատարակեց։ Դանիելն սկսեց նամակներ գրել ամեն տեղ, որոնց մեջ Դավթի վրա բարդում էր ծանր մեղադրանքներ և զրպարտություններ, օրինակ, թե նա Էջմիածնի տաճարի արծաթե անոթները վաճառել է կաշառքներ տալու համար։ Դավիթն էլ նույն եղանակով հերքում էր Դանիելի մեղադրանքներն իր բազմաթիվ կոնդակների մեջ։ Դանիելի կուսակիցներն, իհարկե, շատ լավ գիտեին, որ Դավթի ուժն ամենից շատ և ամենից առաջ ռուսական պաշտպանության մեջ է կայանում, և սկսեցին ամենայն եղանակով աշխատել, որ ապացուցանեն, թե իրենք և իրենց կաթողիկոսն անհամեմատ ավելի շատ ռուսասեր են, քան Դավիթը։

Ջանքերն առաջ ու առաջ կենտրոնանում են Կ. Պոլսում։ Այստեղ Դանիելի կողմնակիցների մեջ էին մի քանի անվանի և ազդեցիկ ամիրաներ, որոնց պաշտպանությունը խնդրելու համար Դանիելը, Բայազետ հասնելուն պես, ուղարկեց Կ. Պոլիս իր սպասավոր Մանուել վարդապետ Կյումուշխանեցուն։ Սակայն, ոչ այս վարդապետը, ոչ ամիրաները, ինչպես գրում էր Դավթին շուլավերցի Թադեոս վարդապետը Թուրքաց մայրաքաղաքից, ոչինչ հաջողություն չունեցան։ Թե ինչպիսի լեզու էին յուրացրել կռվող կողմերն իրար վերաբերմամբ, ցույց է տալիս այս վարդապետի նամակը։ «Որոմնացան և բանսարկու չար Մանուելն,— գրում է նա,— եկն աստ, ունելով ընդ ինքեան զրագրում գրեանս չարաշունչ և թունալի. յորոց զազրելի և դժոխային հոտս բուրեալ զզուեց ցոյց զամենեսեան, բայց ոչինչ օգտեաց չարահամբաւն այն, այլ ամօթալից եղեալ գլխակոր եղև»[2]։ Եվ այս պարտության պատճառն ուրիշ ոչ ոք չէր, բայց միայն «Տէրամբ զօրացեալ կայսեր օրհնեալ դեսպանն», այ-

1 «Դիւան հայոց պատմութեան», Գիրք Զ., Թիֆլ., 1904, եր. 32—33։

2 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ե., եր. 110։

սինքն՝ գաղտնի խորհրդական Տամարան՝ Ռուսաց դեսպանատան թարգման Գեորգ Աղայեկովը, մի գրիմեցի հայ, այսպես էր նկարագրում դեսպանի առաջին քայլին իր մի նամակի մեջ. «Պետերբուրգեն Ալեքսանդր թագավոր գիր խրկել էր դեսպանին, մայիսի 13-ին ստացավ ծառայիդ կանչեց գնացի, եկած գիրն ցույց տվավ առաջս կարդաց, գրած էր, որ Սրբազանը հիվանդության կտակ արեր է տեղս, Պոլսու Հովհաննես պատրիարքը կամ Դավիթ արքեպիսկոպոսը ըլլալ տեյին. ծառայիդ ասաց, որ գնա պատրիարքին ասա ինչ կանե, ինծի իմացում տուր տեհին. գնացի պատրիարքին ասի, ճեվապ արավ որ անկարելի բան է ես կարող չեմ գնալում, կխնդրեմ Դավիթ հայր սուրբին արժանի է թող նա ըլլա ասաց, ես ալ կընդունիմ. հետո դուռեն ֆերմեն ելավ պատրիարքին վրա սենաթոս անիս կաթուղիկոս ընտրեք տեհին. այս գիրս գրած օրն սուրբ Աստուածածնա եկեղեցին սենաթոս մեծ կա. քանի մի ամիրա կայ Դանիելին կուզին, մնացեալ էսնաֆով ժողովուրդ ամենն ալ Դավիթ սրբազան կաթուղիկոսը կուզեն. դուռնեն ալ պիտի ասեն որ Դավիթը եղեր է թող ըլլա տեհին»[1]։

Այս հաջողությունը հեշտությամբ չէր ձեռք բերել ռուսական դեսպանը Կ. Պոլսում։ Իր զեկուցման մեջ նա իր աշխատանքները ներկայացնում էր այսպիսի կերպարանքի մեջ։ Ստանալով կայսրի գրությունը, նա անմիջապես դիմեց ռեյս-էֆենդիին (արտաքին գործերի մինիստրին) և հայտնեց նրան Ալեքսանդրի կամքը, այն է, որ կաթողիկոս ընտրվի երկու թեկնածուներից մեկը՝ կա՛մ Հովհաննես պատրիարքը, կա՛մ թե Դավիթ եպիսկոպոսը, և ընտրությունն էլ թողնվի Էջմիածնի ժողովին։ Ռեյս-էֆենդին հայտնեց, թե պատրաստ է անել ինչ որ հաճելի է ռուսաց կայսրին։ Բայց շուտով Տամարան իմացավ որ Կ. Պոլսի սարաֆների գաղտնի ժողովում վճռված է նոր ընտրություն չկատարել, այլ ամեն ջանք գործ դնել, որ կաթողիկոս հաստատվի Դանիելը։ Այս բանը հաջողացնելու համար ամիրաները խոստացել էին վճարել ռեյս-էֆենդիին հիսուն քսակ փող։ Ռուսաց դեսպանն այս մասին նոր խոսակցություն ունեցավ թուրք պաշտոնյայի հետ և նրան անախորժ դրության մեջ դրեց։ Սակայն Դավթի օծումն Էջմիածնում, Դանիելի ուղևորությունն Էջմիածնի դահը Դավթից խլելու համար՝ հանգամանքներ էին, որոնք եկան ռեյս-էֆենդիին թև ու թիկունք տալու և լավ պատրվակներ հայթայթելու ռուսական ոտնձգություններին դիմադրություն ցույց տալու համար։ Նա սկսեց առարկել, թե անարդարություն է Դանիելին հրաժարեցնելը, քանի որ նա երկու անգամ է ընտրվել կաթողիկոս։ «Դանիելը բարձրագույն դռան հայտնի է լավ կողմից,— ասաց նա,— և իր վարքով իբրև այստեղի պատրիարք, այնքան է իր հետ կապել հայ ազգը, որ հայերը հրաժարվում են նոր կաթողիկոսական ընտրության ձեռնամուխ լինել, ընդունելով Դանիելին իրենց հովիվ, ինչպես մի անգամ ընտրվածի։ Բ. Դուռը պետք է բռնություն գործ դնելու հարկադրվի, որպեսզի կարողանա ստիպել իր հպատակներին հեռացնել Դանիելին և հաստատել Դավթին, որ իր բռնավորական վարմունքով ատելի է դարձել։ Բացի դրանից Բ. Դուռն ունի շատ ստիպողական պատճառներ վարվելու համար իր հպատակ հայերի հետ քաղցրությամբ, կկամենար խրախուսել Դանիելի իրեն հայտնի արժանավորությունները և չի հասկանում, թե ինչու սրա կաթողիկոսացումը կարող էր խանգարել հանգստությունը Ռուսաստանի սահմանների վրա, որ պաշտպանված է կայսրության ողորմությամբ»։— «Ձեր դատողու-

1 Անդ., եր. 109։ Այս Գեորգ Աղայեկովը (Աղայեկյան) Կ. Պոլսում շատ խոշոր դեր էր կատարել Արղությանի կաթողիկոսությունը հաջողեցնելու համար։ Նույն ազդեցիկ դերը կատարում էր և այժմ։

թյունները ռուսական սահմանների հանգստության մասին,— պատասխանեց Տամարան,— սիրելի են իբրև մի օտար, թեև բարեկամ պետության արտաքին գործերի մինիստրին, և դուք ազատ եք քաղել ձեր տեղեկությունները ինչ աղբյուրներից ձեզ հաճելի է, թեկուզ հենց Կ. Պոլսի հայերից. բայց ես չեմ կարող ընդունել այնպիսի խրատներ, որոնք հակասական են իմ կառավարության ցուցմունքներին։ Բացի դրանից, ինձ թվում է մեզ երկուսիս հարկավոր է հավատալ միմյանց մեր փոխադարձ գործերի վերաբերմամբ ունեցած անկեղծության մեջ։ Անսասան հետևելով այսպիսի կանոնի, երբեք չեմ հերքել Բ. Դռան մինիստրի կարծիքներն իր կառավարության ներքին և արտաքին անհանգստությունների մասին, թեև նրանք երբեք բոլորովին համաձայն չեն եղել իմ կառավարության կարծիքների հետ։ Այն դեպքում, որոնք մեզ կարևոր էին թվում, մենք մեր օգնությունն ու խորհուրդներն էինք տալիս ըստ չափու կաթողիկոսության, երբեք չզայթակղելով Բ. Դռան կողմից արված հակառակ եզրակացություններով։ Մենք, օրինակ, կորստաբեր ենք համարում փաշաների անհնազանդությունը, որոնց աղգամիջյան կռիվները և Ռուսաստանի մեջ մի գյուղի թշնամությունը մյուսի հետ կարևոր գործ կհամարվեր մեզ համար։ Ես խնդրում եմ ձեզ, պահպանելով ինձ հետ ունեցած հարաբերությունների մեջ արդարություն, ներել իմ կառավարության հոգացողություն ունենալ իր սահմանների հանգստության մասին, որ կասկածամտություն է թվում, ինչպես մեղանում ներում են Բ. Դռան հանգստությունը, որ մեծ անհոգություն է թվում։ Ես առաջարկում եմ արհամարհել մի 10—12 հայ սեղանավորների առարկությունները, ճիշտ այնպես, ինչպես նրանք արհամարհեցին Հովսեփի ընտրության ժամանակ, և հարգել այն պատճառները, որոնք այն ժամանակ բացասեցին Դանիելի ընտրությունը։ Ես խնդրում եմ այնպես չցույց տալ, թե Բ. Դուռը զղջում է, թե զիջել է ռուսաց կայսերական կառավարության և նայում է այդ զիջողության իբրև մի հանցագործության։ Երևանի խանի վարմունքի մասին ունեցած տեղեկություններին պետք է վերաբերվել մեծ հավատ չընծայելով և դատողություն ունենալ այդ առարկայի առիթով մի արդար զգուշավորությամբ, նայելով խանին իբրև մի տեղական իշխողի, որ հեռացնում է իր երկրի մեջ այնքան կարևորություն ունեցող մի կոչումից (կաթողիկոսություն), իր թշնամուն և հաստատում է նրա տեղ իր բարեկամին։ Բ. Դռան բաժին եմ թողնում դատել այն տպավորության մասին, որ ինձ վրա պիտի թողնե Կ. Պոլսի սեղանավորների քմահաճույքները շոյող ռեյս-էֆենդին՝ ռուսական սահմանների հանգստության մասին իր տված և բարեմիտ կերպարանք ունեցող խրատներով»[1]։

«Զգիտեմ,— ավելացնում է դեսպանն իր այս զեկուցմանը,— դեռ ինչի կհասնե իմ վիճաբանությունը ռեյս-էֆենդիի հետ, որովհետև ինձ հայտնի չէ, թե կա՞ն Թուրքական մինիստրության մեջ այնպիսի անդամներ, որոնց իրենց կողմն են գցել սեղանավորները։ Սակայն պիտի ջանամ հակառակվելու նոր կաթողիկոսի ընտրությեան, մինչև որ չիմանամ թէ ընտրվածը կլինի Դավիթ արքեպիսկոպոսը և թույլ չտալու որ Բ. Դուռը հաստատե Դանիէլի նախկին ընտրությունը, ուղարկելով նրան հաստատման բարաթներ»։ Եվ իրավ, Տամարայի այս եռանդուն գործունեության շնորհիվ Բ. Դուռը հրաժարվեց այլևս Դանիելին պաշտպանելուց և առաջարկեց Կ. Պոլսին նոր կաթողիկոսական ընտրություն կատարել։ Սեղանավոր ամիրաները դարձյալ պնդում էին Դանիելի ընտրության վրա, երկպառակեցին ռեյս-էֆենդիին առաջարկած 50 քսակ

[1] Н. Дубровин, История войны и владычеств русских на Кавказе, т. IV, с. 234—236.

փողը, այսինքն՝ այժմ խոստանում էին տալ 100 քսակ, բայց Ռուսաստանի ազդեցությունն այս հարցի մեջ այնքան ուժեղացել էր, որ ռեյս-էֆենդին հրաժարվեց և այդ գումարն ընդունելուց, ուստի սեղանավորներն ստիպված եղան կամա-ակամա հպատակվել կառավարության հրամանին։ Մայիսի 27-ին ընտրողական ժողով գումարվեց Ս. Աստվածածնի եկեղեցում, և այս անգամ այլևս չտրվեց Դանիելի անունը։ Ամիրաները գրին երկու թեկնածուների անուններ— Բարսեղ արքեպիսկոպոս և Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես եպիսկոպոս։ Այս երկանուն ցանկին ավելացվեց իբրև զիջողություն կառավարության և երրորդ ընտրելին, որ Դավիթ կաթողիկոսն էր։ Բայց դրանցից Բարսեղը լոկ ավագացույնի իրավունքով էր մտել ցանկի մեջ, իսկ Հովհաննեսը, լինելով հանդերձ Դավթի կողմնակից, համարվում էր Թուրքական շահերին նվիրված մարդ։ Այնպես, որ Դավիթն էր միայն մնում, որին կարող էր պաշտպանել Ռուսաց կառավարությունն իբրև իր քաղաքական նկատառումներին միանգամայն համապատասխանող մարդու։ Տամարան նույբ քաղաքականությամբ տարավ գործն այնպես, որ Թուրքաց կառավարությունը համաձայնվեց նրա հետ, թե կարելի է երեքից միայն Դավթին հաստատել կաթողիկոսական պաշտոնի մեջ։ Այս մտքով էլ նա հրաման տվեց Հովհաննես պատրիարքին, պատվիրելով նրան պատրաստել մի խնդրագիր Կ. Պոլսի հայության անունից, որով խնդրվում է Դավթի հաստատությունը։ Պատրիարքը կատարեց այս հրամանը և այսպիսով Կ. Պոլսի հայ ամիրաներն էլ իրենց համաձայնությունը տվին, որ Դավիթը լինի էջմիածնի կաթողիկոս։ Այս թղթի հիման վրա էլ սուլթանը հատուկ բարաթով հաստատում էր Դավթին։

Կաթողիկոսական հարցն, այսպիսով, փակված էր թվում։ Ռուսաց քաղաքականության հաղթանակը կատարյալ էր։ Օգոստոսի 16-ին դեսպան Տամարան, իր գործողությունների ընդհանուր հաշիվը ներկայացնելով Ալեքսանդր կայսրին, գրում էր. «Շատ ջանքեր հարկավոր եղան չչարացնելով մեր դեմ Դանիելի կուսակից ուժեղ հայերին, նրանց հօժարակամ հասցնելու համար էջմիածնից բերած ընտրության ստորագրությունը, որ խոսում էր նրանց հակառակորդի օգտին։ Այդ նպատակով ժամանակ վաստակելու համար, ինչպես և նորընտիր կաթողիկոսին ու նրա բարեկամներին հապաղումով չանհանգստացնելու համար՝ Հովհաննես պատրիարքը Բ. Դռնից ստացված բարաթի պատճենն ուղարկեց այնտեղ (էջմիածին), հուսադրելով նրանց այն հզոր ազդեցությամբ, որ ունի ռուսաց կառավարությունը Թուրքաց կառավարության վրա, և հետո նա (Հովհաննես պատրիարքը) կամաց-կամաց համոզում էր հակառակ կուսակցությանը, միաժամանակ ինձ էլ իմաց էր տալիս իր արարքների մասին, որպեսզի ես էլ ներշնչումներ անեմ Բ. Դռան, որ նա էլ իր կողմից հարկադրե հայերին շուտով վերջացնելու այս գործը։ Այս բոլորը նա (պատրիարքը), սակայն, չէր կարող անել, եթե համաձայնություն չտար և չստորագրեր, որ Դանիելը նշանակվում էր Մուշ քաղաքի արքեպիսկոպոս՝ պարսկական սահմանի վրա։ Այս քաղաքը հին ժամանակ նշանավոր թեմ էր, բայց վաղուց է, որ զրկվել է այդ նշանակությունից։ Պատրիարքը, ծանուցանելով ինձ այս մասին, գաղտնաբար հայտարարեց ցավակցությամբ, թե այդ տեղից (Մուշից) Դանիելը կարող է շատ վնասել ձեր մեծության հովանավորության տակ գտնվող Դավթին։ Ուստի, հիմնվելով իմ նախկին բերանացի և գրավոր հայտարարությունների վրա, շտապեցի ներշնչել ռեյս-էֆենդիին, որ այս նոր դավերն ոչնչացվեն, և Թուրքաց մինիստրը հրամայեց պատրիարքին կանգնեցնել այդ գործը մինչև նոր հրամանը»[1]։

[1] Н. Дубровин, т. IV, с. 236—237.

3. Լազարյան եղբայրների նաղքանակը: *Բայազետ քաղաքում կայան*
բռնած Դանիել արքեպիսկոպոսը պիտի տաներ տված համարեր իր գործը:
Բայց այսպես չէին մտածում նրան շրջապատողները: Հակառակ Ռուսաց կա-
ռավարության բռնած անհաշտ դիրքի, հակառակ Բ. Դռան կողմից եղած կար-
գադրությունների, նրանք նորից ասպարեզ նետվեցին՝ իրենց ընտրյալին գահ
բարձրացնելու համար: Ոչինչ նշանակություն չուներ, որ հարթվել էին Դավթի
կաթողիկոսության հետ կապված դժվարությունները և հայ ժողովրդի շահերը
պահանջում էին հաշտվել այդ իրողության հետ: Հոգևորական փառամոլու-
թյունն ու իշխնլամոլությունը բավարարված չէին Դանիելին գործից դարձ-
րածների մեջ: Ուստի խռովությունը չէր հանդարտվում, այլ, ընդհակառակը,
արծարծվում էր ավելի մեծ եռանդով: Դանիելականները վճռեցին իրենց ամե-
նահզոր ախոյանը-ռուսական քաղաքականությունը հաղթահարել և իրենց
կողմնակիցը դարձնել՝ ոչ իհարկե, բացարձակ պայքարով և մրցությամբ, այլ
ղապելով նրան մի անվերապահ և ծայրահեղ ռուսասիրությամբ:
Այս քաղաքականության կենտրոն և գլխավոր ղեկավարը է դառնում
Ռուսաստանի նվիրակ Եփրեմ եպիսկոպոս Ձորագեղցին, մի թույլ և նույնիսկ
ապիկար հոգևորական, որ սակայն, լավ գործիք դարձավ հակաղավթության
կուսակցության ձեռքին, ինչպես և իր սեփական շահերն էին պահանջում:
Ռուսաստանի հայաբնակ քաղաքներում (Մոզդոկ, Ղզլար, Աստրախան, Մոսկ-
վա) պրոպագանդա սկսվեց Գրիգոր Նորապատկ եպիսկոպոս Աղքիրմանցու
դեմ, որ Դավիթ կաթողիկոսից նշանակվել էր Ռուսաստանի հայոց առաջնորդ՝
հանգուցյալ Հովսեփ Արղության փոխարեն, ինչպես և նա ինքն էր կարգադ-
րել իր կաթողիկոսությունից հետո: Պրոպագանդի նշանաբան էր՝ չընդունել
Գրիգոր եպիսկոպոսին, Ռուսաստանի Հայոց առաջնորդ ճանաչել միայն Եփ-
րեմ արքեպիսկոպոսին: Եվ որովհետև, Գրիգորի իշխանության աղբյուրը
Դավիթ կաթողիկոսն էր, ուստի պետք էր նրան էլ չընդունել, հակառակ նույ-
նիսկ Ռուսաց կառավարության տրամադրության: Եվ այս հոսանքը Ռուսաս-
տանի հայության մեջ ծավալվում և ուժեղանում էր Եփրեմ արքեպիսկոպոսի
ջանքերով: Պրոպագանդը լավ կազմակերպված էր թե թղթակցությունների և
թե բերանացի խոսքի միջոցով: Միաժամանակ Դանիել եպիսկոպոսը Բայա-
զետից դիմում էր Ալեքսանդր կայսրին մի ընդարձակ գրությամբ, որի մի
քանի կտորները մեզ հասկացողություն կտան, թե ինչպիսի ճանապարհներով
էր հակադավթության հոսանքն առաջ տանում իր քաղաքականությունը: Ծկսում
էր կես ճանապարհին կանգնեցրած կաթողիկոսական թեկնածուն, իհարկե,
շողոքորթություններով. «Թագաւորի աստվածասերի և բարեպաշտի քրիստո-
սապսակեալ ինքնակալ ամենաողորմած կայսեր մեծազոյն մասին աշխարհի,
բարեր տերութեանց քաջազտի ազգին Ռուսաց և ապավենի ամենայն ազգաց
քրիստոնեից՝ օգոստոս Ալեքսանդր Պավլովիչ, շնորհօքն Աստուծո նորոգ բարձ-
րացելոյ ի գահոյս ողորմութեան: Դանիել արքեպիսկոպոսս հայոց ողջունիւ
քրիստոսական ողջունեմ զօծեալդ Աստուծոյ և շնորհաւորիմ բոլոր յարգութեամբ
զշնորհազարդ գահակալութիւնդ յաթոռ երանելի հարցն քոյ, խնդրել յամենա-
կալէն Աստուծոյ՝ բարձութեան ձերում զերկար կեանս: Լուաք զլուր յաստեացս
փոխման երջանիկ կայսերն մեծի մերում առատախնամ բարերարի և բաղում
արտասուեցաք, զի պակասեցաւ հովանի նորա ի գլխոյ տառապեալ ազգի
մերոյ: Այլ սակայն կանխաւ ընդ նմին ծանուցեալ և զփոխանորդել հարազա-
տիդ նորա ընդ նորա, մերկացաք ի բաց սուգ մեր և զարմութիւն, յուշ ածեալ
զգրեալն թէ՝ մեռաւ նա, և ոչ մեռաւ, զի եթող նման զինի իւր: Ցաղագս մե-
ծազոյն ողորմութեան Ձերում առ ողորմելի ազգ մեր՝ պարտական եմք,
վասնորոյ և բաղկատարած հայցմամբ զաղօթն առ Աստուած մատուցանեմք,

զի որ ըստ կամաց և հաճոյից իւրոյ փոխեաց յաշխարհէ զերանելի բարերարն
ամենայնի, հանգուսցէ զնա ի խորանս լուսոյ ի կարգս լուսապսակ թագա-
ւորդելոցն[1]*, և զքարի յիշատակ ժառանգ նորին՝ ընդ հովանեաւ աջոյ ձե-*
ռին իւրոյ ամրացուցեալ, պահպանեսցէ երկար կենօք և բարձրիշխան ի վերայ
ամենայն թշնամեաց. Ամէն»:
Այս երկար առաջաբանից հետո Բայազետի կաթողիկոսական թեկնա-
ծուն դնում էր իր պատմությունը, խիստ լեզու բանեցնելով իր բոլոր հակա-
ռակորդների դեմ, սկսած նույնիսկ Հովսեփ կաթողիկոսից և նույնիսկ Տամա-
րա դեսպանից. «Այլ թե,— ասում էր,— Հովսեփ արքեպիսկոպոս կողմանցդ
մեր ազգի զի՞նչ ինչ անցոյց ընդ մեզ և ընդ խղճալի ազգն մեր որի Պոլսոյն ի
ձեռն Տամարով դեսպանին, և ընդ անտրտունջ միաբանութիւն սրբոյ էջմիածնի,
ի ձեռն վերայ Գեորգի արքային, և որչափ վնասուց հանդիպեցոյց զմեզ զա-
մենեսին՝ մինչև բռնաբարաբար ձեռքն զայն կոչումն, ծանուցեն զամենայն
Եփրեմ արքեպիսկոպոսն, եթե բարձր տերութիւն ձեր յօժարիցի ի լսել և
հասու լինել»: Հովսեփին այսպես դատապարտողը չէր խնայի, իհարկե, Դավ-
թին: «Եւ լուաք աՀա,— շարունակում էր նա,— որ Դաւիթ եպիսկոպոսն առա-
ջին մահապարտերն մեր օծեալ և նստեալ է յաթոռ ս. էջմիածնի, թեկադրու-
թյամբ Յովսեփ արքեպիսկոպոսի աշակերտ Գրիգոր եւալիր վարդապետին և
Թիֆլիզու այժմեան եկարալին, և Կեորգինեան Դաւիթ խանին. որք ընդդեմ
կամաց ս. էջմիածնի միաբանութեան և առհասարակ ազգի հայոց, զգիր և
զմարդ յղեալ առ Երևանու պարսիկ իշխանն, շարժեալ էին զնա ի կամս իւ-
րեանց յանուն բարձր Տերութեան Ձերում»[2]*: Այս բոլորից հետո Դանիելն իրեն*
հանձնում էր Ալեքսանդրի ողորմության և նորից մատնանշում է, թե կայսրն
ամեն մանրամասնություն կարող է իմանալ Եփրեմ արքեպիսկոպոսից: Այս-
պիսով, Ռուսաստանի մեջ ամբողջ շարժման ղեկավարությունը հանձնվում էր
Եփրեմին, որ, ինչպես երևում է նրա թղթերից, լցված էր կատաղի թշնա-
մությամբ Դավթի և դավթյանների դեմ:
Դավիթ կաթողիկոսն անտեղյակ չէր Ռուսաստանում սկսված այդ շարժ-
մանը: Գրիգոր Աղքիրմանցի եպիսկոպոսն իր անվայել բռնակալական արար-
քով արդեն գրգռումներ էր առաջացրել Ռուսաստանի մեջ, որոնք և գանգատ-
ներ էին ուղարկել նրա դեմ էջմիածնի միաբանություն, անտես անելով Դավիթ
կաթողիկոսին: Այսպես, Գրիգորը, հուլիսին մտնելով Մոզդոկ և տեսնելով, որ
իրեն ոչ միայն ընդունելություն չեն ցույց տալիս, այլև հրաժարվում են բնա-
կարան անգամ հատկացնել, նա դիմում է տեղային զինվորական իշ-
խանության և, զինվորներ վերցնելով, ժողովրդի դեմ գործադրում է բռնու-
թյուն, ասելով թե ժողովուրդն ապստամբել է: էջմիածնի միաբանությունը,
տեղեկություններ առնելով այդ բոլորի մասին, ի պատասխան իր ստացած
թղթերի, ուղարկում է մի հավաքական շրջաբերական Աստրախանի, Մոզդոկի
և Ղզլարի հայ հասարակություններին, հորդորելով ամենքին, ոչ, իհարկե,
առանց ներշնչման Դավիթ կաթողիկոսի, վերջ դնել վնասակար վեճերին,
ճանաչել Դավթի կաթողիկոսությունը, իսկ Գրիգոր Աղքիրմանցու արարքների
նկատմամբ դիմում անել ուղղակի կաթողիկոսին: Այս թղթին ստորագրում
էին 43 հոգի, որոնցից 14 եպիսկոպոս (դրանց թվում և այն 4 եպիսկոպոս-
ները, որոնք Թիֆլիս էին գնացել Հովսեփին էջմիածին հրավիրելու), 20 վար-

[1] Այս շողոքորթությունները, հավանաբար, Ալեքսանդրին չպիտի հասնեին, քանի որ
նրա գիտությամբ էր կազմակերպվել դավադրությունը իր հոր դեմ, որին սպանողները նույ-
նիսկ դատի չենթարկվեցին և մնացին անպատիժ:
[2] «Դիվան հայոց պատմութեան», գիրք Ե., էջ. 113—118:

դալիս և 9 հոգի էլ Երևանի մելիքներից, քահանաներից ու քաղաքացիներից։ Մի համառոտ հայացք գցելով անցյալ անցքերի վրա, էջմիածնի միաբանությունը գրում էր.

«Եւ արդ՝ այսքան ինչ անցք անցեալ ի երկուս ամս, և բազմապատիկ նեղութեամբք նեղեալ մեր և վնասեալ սրբոյ տանս, այժմ ներկայապես սրբազան Հայրապետս շնորհեցեալ եղև մեզ գլուխ և կառավարիչ, և որ մի անգամ ընտրեցեալ և օծեալն է ո՛չ փոփոխի. ապա որո՞վ դիտմամբ է սիրելեացդ այնպես գրելն՝ մեզ ոչ է դիւրհասկանալի. մի՞թէ կրկին վրդովմամբ և շփոթութեամբ օգուտ ի՞նչ է յառաջանալոց, ո՛չ այլ վնասք ի վերայ վնասուց, և դառնութիւնք ի վերայ դառնութեանց։ Ապաքէն խնդրեմք ի բարեպաշտ սիրելեացդ, զի վասն Աստուծոյ և վասն շինութեան սրբոյ Աթոռոյս և խաղաղութեան խղճալի ազգիս, զտարաձայնութիւնն բարձցիք ի միջոյ. և քրիստոնէապատուէր սիրով և հեզութեամբ հպատակեսջիք հովուապետութիւն նորապսակ սրբազան կաթողիկոս, զի լիցուք միակամք և համաձայնք, և միաբան աղաչեսցուք զմարդասէրն Աստուած վասն այցելութեան ազգիս մերոյ և հաստատութեան սրբոյ Աթոռոյս»[1]։

Բայց զուր էին այդ հորդորները, միաբանության և համերաշխության կոչերը։ Սեպտեմբեր ամսին Մոսկվայում պիտի տեղի ունենար Ալեքսանդր Ա-ի թագադրությունը։ Այստեղ գնացին և Եփրեմ արքեպիսկոպոսն ու Գրիգոր Աղքիրմանցին։ Մոսկվա էր տեղափոխվում Դավիթ-Դանիելյան վեճի վճռական շրջանը, որ պիտի առաջացներ մի ամբողջ հեղաշրջում, մի անակնկալություն, որ ընդունակ էր զարմանք պատճառել նույնիսկ և քաղաքական խաղերի մեջ մարզվածներին։

Այս անգամ մրցության ասպարեզում երևան է գալիս մի խոշոր ուժ— Լազարյան տոհմը, որի ներկայացուցիչներն էին երեք եղբայրներ—Հովհաննես, Մինաս և Հովակիմ։ Հարուստ վաճառական-գործարանատերերի այս ընտանիքը Ռուսաստան տեղափոխվել էր XVIII դարի կեսում Նոր Ջուղայից, ուրեմն իր ծագումով պատկանում էր այն զարմանալի ընդունակ և ձեռներեց առևտրականության միջավայրին, որ այնքան հռչակվեց XVII դարից և այնքան խոշոր դեր կատարեց մեր նոր պատմության մեջ։ Այդ դերին մենք բավականաչափ ծանոթ ենք մեր այս աշխատության նախընթաց հատորից։ Ջուղայեցիությունը նշանակում էր, շատ խոշոր չափերով, հասարակական շահերին ու միանգամայն խորթ կապիտալ, որ իր շահերի և իր փառքի համար հաճախ որոշ բաժիններ էր տալիս՝ հայ ժողովրդի կուլտուրական և կրթական կարիքները հոգալու նպատակով։ Լազարյանները հայ ազնվական-ամիրայական դասակարգի ամենատիպիկ ներկայացուցիչներն էին։ Նրանց ավելի մեծ չափով, քան իրենց մյուս դասակիցներին, հաջողվեց միացնել փողատիրությունը հողային ազնվականության հետ։ Ինչպես սովորական էր, նրանք հնարեցին իշխանական ծագում ունեցող մի տոհմապետ իրենց տան համար, այդ հիմքով ստացան Եկատերինա Բ կայսրուհուց ազնվականության տիտղոս և ձեռք բերին հողային անհուն հարստություններ, գյուղեր, ճորտեր և այլ տիրապետական բարիքներ։ Երեք եղբայրների մեջ շատ հռչակվեց մանավանդ, ավագը, Հովհաննեսը, որ Ռուսաց արքունիքում ընտանի մարդ էր, ստացավ Ավստրիայի կայսրից կոմսի տիտղոս և թագավորի ապրուստ ուներ Պետերբուրգի մոտ գտնվող իր փառահեղ կալվածքում, որ գնել էր հենց ռուսական արքունիքից։ Այս երևելի մեծատունն էր, որ, ինչպես տեսանք նախընթաց հատորի մեջ, առանձին հետաքրքրություն ցույց տվեց դեպի իր ազգի ճակատագիրը

1 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ե., էջ. 120—121։

և, արձագանք տալով Եկատերինյան արքունիքի մեջ արծարծվող փառասիրական և նվաճողական տենչերին, սկսեց մտածել և իր հայրենակիցների քաղաքական ազատության մասին։ Նա էր, որ Պետերբուրգում կառուցեց Հայոց եկեղեցի, արքունիքի շրջանների մեջ մտցրեց Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանին, որի հետ ծրագրեր էր կազմում անկախ Հայաստան ստեղծելու մասին և այս առարկայի վերաբերմամբ բանակցություններ էր վարում Ռուսաստանը կառավարող բարձրաստիճան պաշտոնյաների հետ։ Բնականաբար այս բոլոր գործերը մեծ հռչակ պիտի տային Հովհաննես Լազարյանին հայ ժողովրդի մեջ, դասելով նրան հայ առաջնակարգ իշխանի դիրքի մեջ։

Եկատերինյան ծրագրները մոռացվելուց հետո Հովհաննես Լազարյանն էլ մոռացվում էր, ամբողջապես իր մասնավոր կյանքի մեջ էր մտնում։ Այժմ նա նորից հրապարակ էր գալիս ազգային գործերի մեջ, բայց ոչ թե այլևս մենակ, այլ իր երկու եղբայրների հետ։ Այսպիսով նա ամբողջ Լազարյան տոհմն էր առաջ քաշում հայ ժողովրդի գործերի մեջ, շատ խոշոր, գրեթե ճակատագրական դեր կատարելու համար։ Եվ կարծես մի տեսակ նախազգացում էր նրան թելադրում դուրս բերել իր եղբայրներին։ Մի երկու ամսից հետո նա պիտի մեռներ, բայց Մինասն ու Հովակիմը պիտի շարունակեին նրա «վեհազնյա իշխանապետական» դիրքը հայերի մեջ, թեև երկուսն էլ պաշտոնական մեծ դիրք չունեին Հովհաննեսի նման, բայց ազդեցիկ էին իբրև վաճառական-ազնվականներ։

Ահա այս ուժեղ երրորդության թևի տակ էր մտնում Եփրեմ արքեպիսկոպոսը՝ «չօծյալ» (ինչպես ինքն էր ասում) Դավթին հեռացնելու համար։ Սկսվում է մի խոշոր և լայնածավալ պրոպագանդ, վատնվում է անսպառ եռանդ, որ արժանի էր ծառայեցնելու մի ավելի լավ նպատակի և ոչ թե գահեր ու իշխանություններ հափշտակելու։ Եփրեմը կարողանում է բոլորովին թշնամացնել Լազարյաններին Գրիգոր Աղքիրմանցու հետ։ Գեներալ Կնորինգը, որ թագադրության տոների պատճառով նույնպես Մոսկվայում էր գտնվում, փորձեց հաշտեցնել երկու հայ հոգևորականներին, բայց ոչ մի հաջողություն չունեցավ։ Գևորգ Աղայեկյանը Կ. Պոլսից գրում էր Դավիթ կաթողիկոսին. «Եւ լսեցինք, թե Եփրեմ վարդապետն անդ ի Մոսկով չորս գրագիր է նստուցեալ, և աշխարհն ամենայն լցեալ է աղաչանքագրովն՝ թե ի շնորհկս մանաւանդ ի քաղաքս Պոլիս, և թե ինչ բարբարանս է գրեալ ի տերութեննդ՝ ոչ համարձակիմ գրել»[1]։ Սեպտեմբերի 15-ին Ալեքսանդր կայսրը մեծ հանդեսով մտավ Մոսկվա, ուր սկսվեցին թագադրության տոները։ Հովհաննես Լազարյանն առաջ քաշեց Եփրեմին, որին, նրա միջնորդությամբ, մի բացառիկ պատիվ արեց թագադրության օրը, այն է՝ կանգնել սոբորի (մայր եկեղեցու) մեջ ռուս եպիսկոպոսների շարքում, «որ բնաւ,— գրում էր Եփրեմը,— յինչ ինչ ժամանակս յազգս մերմէ արքեպիսկոպոս չէր պատահեալ այսպիսւոյ բարեբախտութեան, թեպետ անկարելի էր և իմս պատահելին անդ՝ ի մեջ սոբորին, բայց Տէր օրհնեսցէ զծնունդ նորին գերազանցութեան՝ աղա Յովհաննեսին և եղբարց իւր վեհազնեայ աղա Մինասին և աղա Յովակիմին, որ գոչով վառեալ ի սէր մեր և բոլոր ազգիս՝ այնքան հետևողութիւնս արարին, զի առհասարակ մեծամեծացն Ռուսաց թէ հոգևորականաց և թէ մարմնաւորականաց նախ ծանոթս արարին զմենջ, և ապա ի սոբորն մուծին»[2]։

Միևնույն ճանապարհներով կայսրին ներկայացվեց նորից էջմիածնի կաթողիկոսական հարցը։ Առիթը Դանիելի դիմումն էր, Եփրեմն իր թեմից հա-

1 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ե., էջ. 128։
2 Ա. Պերպերեան, Պատմութիւն Հայոց։ Կ. Պոլիս, 1871, էջ. 33—34։

վաքել էր ստորագրություններ Դավթի և Գրիգոր Աղքիրմանցու մասին։ Իբրև գլխավոր հանգամանք, որ իրավունք էր տալիս Դավթի կաթողիկոսացումն այժմ անվավեր համարվեր, մատնանշվում էր այն, որ Հովսեփ Արղության մեռնելիս կտակ չի արել և որ կտակը Աղքիրմանցու սարքած կեղծիքն է, կայսրը համաձայնում է այս հայացքներին, թեև մինչև այդ ժխտում էր կեղծիքը և հրաման է տալիս, որ ամբողջ կաթողիկոսական հարցը հեղաշրջվի բոլորովին հակառակ ուղղությամբ, այն է, որ կաթողիկոսացվի Դանիելը, իսկ արդեն օծված և ճանաչված Դավիթը համարվի ապօրեն։ Հայ եկեղեցականները դարերի ընթացքում համառ կերպով պաշտպանում էին իր ազգայնացրած պաշտամունքի ծեսերը, զոհելով նրանց նույնիսկ հայ ժողովրդի կենսական շահերը, ֆիզիկական գոյությունն անգամ, իսկ այժմ Ռուսաց կայսրի հրամանն էր աղերսում ամենախոշոր ծեսերից մեկը, կաթողիկոսական օծումը ոտի տակ տալու և ոչնչացնելու համար, քանի որ այսպես էր պահանջում փառամոլության կիրքը։ Մինաս և Հովակիմ Լազարյաններն գրում էին Դանիելին. «Գրութիւնք ձեր վաղուրեմն ժամանելով առ ամենաողորմ կայսրն և էրեց եղբայրն մեր, նա աստ ի Պետերբուրգ և մեք երկուքին եղբարքս ի Մոսկով վառեալ ի սեր ճշմարտութեան սրբոյ հաւատոյն և զգալով մեծաւ ջերմեռանդութեամբ զհամաձայնական ընտրութիւն որ վասն ձեր, համազգի յարգեացն մերոց ուղղամիտ և ճշմարտընթաց ամիրայիցն Պոլսոյ և բոլոր ազգին, ի բաց լքեալ սեպհական անձանցն մերոց զհոգս և ի մեծագոյնս ջանս կալանաւորեալ զսրբազան Եփրեմ արքեպիսկոպոսն առաջնորդն կողմանցս ներկայացուցաք առ ամենաողորմ կայսրն, որոյ զիջանելով ամենագթածաբար ընդ աղերս ձեր հրամայեաց պարոն Տամար դեսպանին զձերդ սրբութեան յառաջացուցանել ի հայրապետական աստիճան և զԵփրեմ արքեպիսկոպոսն եւ շնորհեաց մեզ առաջնորդ»[1]։

Ռուս պատմագիրներից մեկը, կամենալով բացատրել թե ինչ հանգամանքներ կարող էին դրդել Ալեքսանդրին փոխելու իր ընթացքը կաթողիկոսական հարցի մեջ և ջնջելու իր այն գործը, որ դեռ երեկ պաշտպանում էր ամենայն եռանդով, փորձում է գաղափարական հողի վրա դնել այդ վարմունքը, ասելով. «Միշտ առանձնապես ուշադիր դեպի ժողովրդական ձայնը, Ալեքսանդր կայսրը չէր կարող ուշադրություն չդարձնել» Աստրախանից, Մոզդոկից և Ղզլարից ստացված հանրագրերի վրա[2]։ Բայց հազիվ թե կարելի լինի հավատալ, որ ցարական ինքնակալությունը առհասարակ որևէ գործ ունեցած լինի այս դեպքում, ինչպես չուներ առհասարակ որևէ դեպքում։ Պարզապես քաղաքական հանգամանքների մեջ պահելով այս փոփոխության բուն պատճառները, պատմագրությունն ավելի հաստատուն հողի վրա կլիներ կանգնած։ Եվ իրավ, հետագա դեպքերը մեզ ցույց կտան, որ հայ ժողովուրդն իր շահերով գոյություն չուներ ոչ միայն ռուսաց քաղաքականության համար, այլ մինչև իսկ և հայ հոգևորականության համար։ Կաթողիկոսական գահի վրա ստեղծված դրության մեջ ամեն մեկը որոնում էր օգուտ և շահ։ Անշուշտ ռուսաց քաղաքականությունն արդեն զգացել էր, որ Դավթից շատ Դանիելն է համապատասխանում այն նպատակներին, որ ուներ նա Պարսկաստանի վերաբերմամբ։ Դավիթ բավականաչափ ուժեղ և ինքնակամ մարդ էր, որպեսզի կարողանար կույր ու կամազուրկ գործիք դառնալ ռուսական քաղաքականության ձեռքին։ Եվ բացի դրանից, հեղաշրջելով կաթողիկոսական գործը, Ռուսաստանը մի նոր առիթ էր գտնում իր կամքը թելադրելու Թուրքիա-

1 Ձեռագիր։ Էջմիած. կաթող. դիվան

2 Н. Дубровин, IV, с. 238.

յին և Պարսկաստանին։ Թե սուլթանը և թե շահն արդեն հաստատել էին Դավթին իրենց ֆիրմաններով։ Այժմ, լոկ Ռուսաստանի կամեցողությամբ, սուլթանն էլ, շահն էլ պիտի ետ վերցնեին իրենց հրովարտակները և հայերը պիտի գրեին Ռուս կառավարության ցուցմունքով։ Այս արդեն ավելի մեծ հաղթանակ էր, քան այն, ինչ մինչև այդ տարել էր դեսպան Տամարան։

Եվ ահա հաղթական թղթեր են թռչում Թուրքաց մայրաքաղաքը։ Առաջ Եփրեմ արքեպիսկոպոսի նամակն է հասնում, որ ավետում է, թե ահա կայսրի հրամանը գալիս է պահանջելու, Տամարայի միջոցով, Թուրքաց կառավարությունից, որ Դանիելին ճանաչել է կաթողիկոս։ Եփրեմը ջերմ մարտահրավերներ էր կարդում, հորդորելով, որ Կ. Պոլիսն ոտքի կանգնի։ «Զարթիր Պոլիսդ,— գրում է նա,— և տես, թէ զիա՞րդ ի թուլութենէ և ի զանցառութենէ ազգին մերոյ քակտեցան հիմունք հաւատոյ մերոց. դարձան օրէնք և կրօնք մեր ի տեսարանում թէատրոնից և ճշմարտութեան ճրագ լուսավորչադաւան կրօնից մերոց՝ ի ներքոյ գրուանի թագուցաւ. և բանականութիւն մարդկայինս սնոտի աղաւաղեալ ոչ զգայ ընաւ զցաւս. Արդյօք զի՞նչ է պատճառ այսց ամենից խանգարմանաց, եթե ոչ՝ բարձումն սիրոյ և համաձայնութեան։ Զրկեցաք ի թագաւորութենէ, ո՞վ տառապեալ մերազնեայք և մխիթարութիւն մեզ է հոգևորապէս եթէ ունիմք բարձրագահ աթոռ ի քրիստոսէ հիմնեցեալ, աթոռ սուրբ Լուսաւորչին՝ որով պարծէմք ի մեջ ամենայն ազգաց, այժմ նոյն պարծանքն մեր եղև մեզ նախատինք ի մէջ ամենայն աշխարհի, միթէ նոյն բռնութեանցն զօրութիւնք բարձա՞ն, քա՛ւ լիցի. այլ մեք մեղէն արարաք զլուսատու տունն այն՝ տուն աւազակաց։ Աւա՜ղ կարդամ ի վերայ անձինս, ո՛վ Պոլիսդ լռեալ, զի որ երբեմն զճշմարտութենէն բուռն հարեալ, ի մի շունչ և մի հոգի գոլեալ՝ զգաշինս կռէիր, գահակալ սուրբ Լուսաւորչին՝ ընտրութեամբ բոլոր ազգին լինել, այժմ օտարածնին հնազանդի, որ պատառեաց զքօղ հարսինն անարատի։ Ո՞ւր է տառապեալն Դանիել, ո՞չ ապաքէն ի Պօլիսդ էր, որ կալեալ զնա բարձրացոյց յաստիճան պատրիարքութեան, ո՞չ ապաքէն ընտրութիւն ընդհանուր ազգին էր, և խորհուրդ սինհոդոսին արքեպիսկոպոսաց և բոլոր միաբանիցն՝ ի պատրիարքութենէ հանել զնա և հրաւիրել ի ծայրագոյն պատրիարքութիւն ամենայն Հայոց»[1]։

Այսպիսի երկարաբան ճարտասանական հորդորներով հրավիրելով պոլսեցիներին, որ նրանք այժմ օգտվեն Ալեքսանդրի փոփոխամտությունից և Դանիելին կաթողիկոս դնեին, Եփրեմը շոշափում էր և մի գործնական հարց. Էջմիածինը ոչ Թուրքիային էր պատկանում և ոչ Ռուսաստանին, ապա ուրեմն ինչպես պիտի այնտեղ մտներ Դանիելը, ի՞նչպես պիտի կաթողիկոս օծվեր, և ո՞վ պիտի հեռացներ Դավթին կաթողիկոսական աթոռից։ Այս հարցերի վերաբերմամբ բնականաբար Եփրեմը ոչ էլ, հարկավ, որևէ մի ուրիշ դանիելյան, չէր կարող դրական խոստումներ անել։ Դժվարությունը լուծվում էր ուրիշ եղանակով, այն է՝ Դանիելին կաթողիկոս օծել Էջմիածնից դուրս։ Հավազույն տեղը համարվում էր հենց նույն Յուչքիլիսեի վանքը Բագրևանդում, որ գտնվում էր թուրք-պարսկական սահմանագլխի վրա, Էջմիածնից ու Մասիս սարից ոչ հեռու, հետևաբար ոչ բոլորովին զրկված այդ անունների ազդած հմայքից։ Հոգևորականությունը, որ այնքան լավ գիտե շահագործել իր օգտին ամեն մի ավանդություն և առասպել, Յուչքիլիսեի, իբրև կաթողիկոսական աթոռի համար գտնում էր այն առավելությունը, որ այդ վանքը շինված է Եփրատ գետի վրա, այն իսկ տեղում, ուր Լուսավորիչը մկրտել է Տրդատ թագավորին և Հայոց ամբողջ ազգը։ Եվ Եփրեմը գրում էր պոլսեցի-

1 Ա. Պերպերեան, Պատմութիւն Հայոց, եր. 30—34։

ների. «Բայց որովհետև ամենողորմ կայսրն բարեհաճեալ է թողուլ ի կամս ազգիս ըստ նախնական ծեսի մեր և օրինի ընտրել զօրինաւոր հայրապետ, ահա մեր երկիցս ընտրեալն Դանիէլն է, արդ և թէ ձեռք և թէ Պարսից բռնակալութեամբ զապօրինաւորդ այդ արտաքսեցէք, և զԴանիէլն մուծէք ի ներքս իսկ թէ երկիւղ իցէ ի կողմանէ Պարսից, գրեցէք Դանիէլին գնալ յՈւչքիլիսա, և անդ օծանիլ: Գիտէ Աստուած, որ ես հանդերձ վիճակաւս իմով ոչ թէ ի յօգուտ և ի նպաստ Դանիէլին առնիմ զայս, այլ թէ վասն հաստատութեան նախնական բարի ծիսի և կրօնի մերում, զի մի՛ իսպառ ոտնհար լիցի. իմ պարտաւորութիւնս այսչափ և ձեռդ բարեաց նախանձախնդիր լինելն դուք գիտէք»[1]:

Այս թղթի հետ համարյա միաժամանակ Կ. Պոլսում ստացվում է և Ալեքսանդր Ա-ի հրովարտակը Տամարա դեսպանի անունով: Նորապսակ կայսրը, հրահանգելով իր ներկայացուցչին՝ այժմ հակառակ ընթացք էր բռնել իր հովնավորած Դավթի դեմ, արդարացնում էր իր այդ վարմունքը գեղեցիկ խոսքերի ճանապարհով: Ահա ինչ էր ասում նա. «Թեև ձեր վերջին հայտարարություններից երևում է, որ Դավթի հաստատումը կաթողիկոսական գահի վրա պետք է համարել բոլորովին վերջացած, բայց որքան էլ օգտակար երևա Ռուսաստանի համար հայոց կաթողիկոսների ընտրության մեջ այն գերակշռությունը (իրավ ունեք), որ ձեռք է բերված այդ հաստատումով, ես ավելի լավ կամենում եմ այս անգամ զոհաբերել այդ իրավունքը, քան արհամարհել ժողովըրդական ձայնը և ձեռնամուխ լինել խանգարելու արդարությունը, որ ես հարգում եմ ամեն բանից առավել»[2]: Սակայն ինքն այդպես ասողն էլ, երևի համոզված էր, որ այդ պատճառաբանությունը գին չի կարող ունենալ ցարական մի կարգադրության մեջ և հավատացողներ էլ չի գտնի, հանձնարարում էր իր դեսպանին, որ նա լավագույն եղանակը գտնե կայսերական այս արարքն արդարացնելու համար: Եվ իրավ, ժողովրդական ձայնի իրավունքը, բայց մանավանդ, արդարության խոսքն ամենից քիչ էր վայելում այս դեպքին, երբ կայսրը վճիռ էր ընդունել հանկարծորեն, լսելով միայն այնպիսի կույր և մոլի կուսակցականի զեկուցումը, որպիսին էր Եփրեմ Ջորագեղցին, առանց վերահասու լինելու, թե որքան ճիշտ են նրա պատմությունները Դավթի վատությունների և չարությունների մասին, մի խոսքով, առանց դատաստան անելու, վճիռ կայացնելով ցուցաբար, քմահաճորեն, բռնակալության իրավունքով միայն:

Տամարային, իհարկե, մնում էր լոկ հպատակվել իր տիրոջ կամքին: Բայց այս անգամ նրա առջև առանձին դժվարություններ չկային: Այս անգամ Կ. Պոլսի հայ ժողովրդի մեջ սկսված սովորական խռովությունն էր, որ գալիս էր հեշտացնելու Դանիելի գործը: Եփրեմ արքեպիսկոպոսի նամակը, որից կտորներ բերինք վերևում, խիստ աղմկություն արավ հայերի մեջ, և իսկույն պարզվեց այն պատկերը, որ դարերի ընթացքում այնքան հաճախ կրկնվում էր Բոսֆորի ափերին: Բռնկվեցին կուսակցական կրքերը (—), իրար դեմ ծառացան: Դանիելյան կուսակցությունն էր ուժեղ հանդիսանում այս անգամ: Մեծ աշխատանք այս ազգամիջյան խռովության մեջ կատարում էր Ներսես Աշտարակեցին: «Եփրեմը փայլում է և որոտում է մեզ դեմ,— գրում էր Գրիգոր Աղքիրմանցին Դավիթ կաթողիկոսին Ռուսաստանից,— իսկ Դանիելյան Ներսեսը չի դադարում Կ. Պոլսից լցնել մեր աշխարհը կղերով, շրջաբերական-

[1] Պերպերեան, Պատմ. Հայ., եր. 35:

[2] Н. Дубровин, IV, с. 239.

ներով և զանազան նամակներով»[1]: Ռուսական դեսպանատունն իրենց կողմն առնելուց հետո, դանիելականներն իսկույն ձեռք զարկին Հովհաննես Ջամաշրճյան պատրիարքին, իբրև Դավթի կողմնակցին, հեռացնելու: Այս բանը հեշտ կատարվեց «ի ձեռն բազում և մեծամեծ ընծայից և կաշառաց», ինչպես գրում է ժամանակակից Պերպերյանը[2]: Այդ մեծամեծ ընծաներն ու կաշառքները Թուրք փաշաների գրպանները մտցնողն էր նույն Ներսես վարդապետը, որ իր հետ հարուստ գանձեր էր բերել Բայազետից, ասել է՝ Էջմիածնի վանքի ունեցածներից: Գեորգ Աղայեկյանը գրում էր Դավիթ կաթողիկոսին. «Զիր Ներսես վարդապետն մէկ մեծ խուրջին ոսկի և է (5) բողչայ թիրմայ շալ ի մէջ բամբակի եռեալ բերեալ ասա ընդ հետ իւր. և կիւմիւրուկչիքն բացին տեսին և հիացան, և տօխսան քիսայ եատն ի դուռն թագաւորի»[3]: Հովհաննես պատրիարքը գահընկեց եղավ և աքսոր ուղարկվեց Թոքաթ քաղաքը: Նրա տեղ պատրիարք նշանակվեց Գրիգոր եպիսկոպոս Խամսեցին, մի մոլի դանիելական, որ Էջմիածնի նվիրակի պաշտոնով գտնվում էր Թոքաթի կողմերում: Նոր պատրիարքը Կ. Պոլիս հասավ 1801 թ. դեկտեմբերի 19-ին: Նրա կողմնակիցների առաջին գործն եղավ ստանալ Բ. Դռնից բերաթ, որով կաթողիկոսական պաշտոնի մեջ հաստատվում էր Դանիելը: Այդ հաստատությունը Ներսես Աշտարակեցին տարավ Դանիելին, Բայազետ:

Գործը, սակայն, այսքանով չէր վերջանում: Դավթականներն անտարբեր չմնացին, նույնպես գործում էին իրենց հակառակորդների ընդգրկած միջոցներին հետևելով: Աղայեկյանը վերոհիշյալ իր նամակում, պատմելով Ներսեսի տարած գանձի և տված կաշառքների մասին, գրում էր. «Եւ դու քեզ համա՞ր պիտի խնայես. որքան փող ունիս, չխնայես, ձեռդ բաց լե՛ր»: Նույնը գրում էր և Գրիգոր Աղքիրմանցին Ռուսաստանից: Ընծաներ անհրաժեշտ էր տալ ոչ միայն Կ. Պոլսում և Թուրքերին, այլև ռուս պաշտոնյաներին: Կնորինգը կաշառք էր ստացել Լազարյաններից: Գրիգոր Աղքիրմանցին, դառնապես գանգատվելով, որ Եփրեմի գործը տանողներն իսկապես Լազարյաններն էին, մի տեսակ սրտի գոհունակությամբ ավելացնում էր, թե ավագ եղբայր Հովհաննեսն այժմ կաթվածահար հիվանդ է, մահամերձ և այսօր կամ վաղը իր հոգին կտա սատանաներին, իսկ մնացած «ամենաչար» եղբայրները դեռ շարունակում են գործել, ընկերանալով դևերի հետ[4]: Գրիգորն էլ խորհուրդ էր տալիս Դավթին չխնայել միջոցներ, առատ կաշառքներ ուղարկել Ռուսաստան: Դավիթն, իհարկե, այս բանը գիտեր իր խորհրդատուներից ոչ պակաս լավ: Եվ դարձյալ միևնույն աղբյուրից, այսինքն՝ նույն Էջմիածնի գանձարանից, գումարներ էին ուղարկվում արևմուտք և հյուսիս՝ Դավթի գործին ծառայելու համար: Այս տեսակ բաների վրա էին վատնվում աղքատ և հարստահարված ժողովրդի միջոցներն այդ խառն և վերին աստիճանի կարևոր ժամանակներում, որոնք արմատական փոփոխություններ էին բերում ժողովուրդներին:

Դավիթն, իհարկե, անմռունչ չհպատակվեց Ռուսաց ցարի մի շարժումով ստեղծված դրությանը: Նա պատրաստվեց դիմադրության՝ իր նվաճած դիրքը պաշտպանելու համար: Ամենից առաջ նա փորձեց, ինչպես խորհուրդ էին տվել և իր կողմնակիցները, ցույց տալ Ալեքսանդրին, որ նրան սխալեցրել են իր թշնամիները: Եվ 1802 թ. հունվարին երկու եպիսկոպոսի ձեռքով նամակ ուղարկեց, ընծաների հետ, կայսրին՝ Պետերբուրգ: Այդ նամակով կաթողիկոսը

[1] Ibid., c. 244

[2] «Պատմ. հայ.», եր. 37:

[3] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ս., եր. 289:

[4] Н. Дубровин, IV, с. 244.

խնդրում էր կայսրին, որ իր ներկայացուցիչ երկու եպիսկոպոսներին ընդուն-
վեն նրա մոտ և բացատրություններ տան, որոնց հիման վրա կայսրը կարող
է քննություն անել իր՝ Դավթի, կաթողիկոսացման բոլոր պարագաների վե-
րաբերմամբ։ Նա ժխտում էր Եփրեմի պատմած հանգամանքները, ասում էր,
թե ինքը կաշառքով և բռնությամբ չէ կաթողիկոսացել, այլ ընտրվել է ժողո-
վրդի ձայնով և ունի այս հանգամանքը վավերացնող հանրագրեր, թե աշ-
խարհականների և թե հոգևորականների կողմից։ Գլխավոր հիմք բռնելով այս
ընտրողական հանգամանքը, Դավիթն այլևս իր իրավունքը չէր հիմնում Հով-
սեփ Արղության կտակի վրա, որի վավերականության վրա նա չէր պնդում,
բայց որի գոյությունը չէր էլ մերժում։ Սակայն Դավթի ուղարկած երկու եպիս-
կոպոսները թույլտվություն չստացան անցնել Կովկասի սահմանը։ Կնորինգը
նրանց ձերբակալել տվեց և ետ ուղարկեց՝ երևի իրոք ապացուցելու համար,
թե իր կայսրը ճիշտ որ ամեն բանից բարձր է դասում արդարությունը։

Վերադառնալով Թիֆլիս, երկու եպիսկոպոսները միջոց գտան ուղարկելու
կայսրին ուղղած նամակը Գրիգոր եպիսկոպոս Աղքիրմանցուն։ Այս առիթով
Գրիգորը գրեց Դավթին մի նամակ, որի մեջ գտնում ենք ժամանակը և մարդ-
կանց շատ լավ բնորոշող մանրամասնություններ, ուստի և բերում ենք մի
քանի հատվածներ. «Տեր իմ, այն մարդիկ, որոնք դեպի ինձ սեր և բարեկա-
մություն ունեին, այժմ երես են դարձրել դեպի հակառակ կողմը և այս ոչ մի
այլ պատճառով, բայց որովհետև սակավաձեռն եմ ես։ Աստծուն է հայտնի, որ
եթե պ. Սիմեոնը չգա այստեղ, ես հարկադրված պիտի լինեի անպատվու-
թյամբ հեռանալ այստեղից, որովհետև իմ բարեկամներն ու բարյացակամ-
ներն առաջին իսկ տեսակցության միջոցին սպասում էին ինձանից պարգևներ,
և երբ ոչինչ չէին ստանում, տեսնելով Եփրեմի առատաձեռնությունը, սրտով
նրա կողմն էին անցնում և միայն լեզվով են անձնվիրություն հայտնում, այն
էլ ամաչելուց, որովհետև իմ վաղեմի բարեկամներն են։ Ինչ և լինի, բարե-
բար իմ, բոլորովին մի վախենաք այն խռովությունից, որ կա այստեղ և
Կ. Պոլսում և որ առաջացել է մի քանի մարդկանց դրդումներից։ Մի մոռանաք,
որ հանգուցյալ Ղուկասի ժամանակ այս երկպառակությունն ավելի մեծ էր,
քանի որ հակառակորդներն այն ժամանակ ուժեղ էին, իսկ այժմյան քո հա-
կառակորդները բոլորովին անուժ են։ Առաջինների կռիվը շարունակվեց երեք
տարի, իսկ ձերն, ընդհակառակն, դեռ միայն մի քանի ամիս է շարունակվում։
Ունեցե՛ք ամուր ոգի և մի վախենաք, հուսացեք ձեր տեսչության մեջ գտնված
մասունքների բարեխոսության և օգնության։ Արծաթ, ոսկի մի խնայեք ձեր
պատվի համար, որովհետև ամեն ինչ կարող եք ձեռք բերել, բացի անունից
և պատվից, որոնցից, Աստված ազատե, եթե զրկվեք, այլևս երբեք չեք ձեռք
բերի։ Այս բանի համար դուք պարտավոր եք միշտ ամուր կերպով աշխատել,
Ձեր խանից չհեռանաք. այստեղ շուտով կթուլանա և արդեն իսկ թուլացել է
իշխանությունը (Եփրեմը), մանավանդ, որ այստեղի ժողովուրդը չի հեռանա
էջմիածնի սուրբ աթոռից և չի ուզի լինել Ցուցքիլիսի կամ ս. Կարապետի
վանքի իշխանության տակ։ Եթե միջոց կա, նամակ գրեցեք Կնորինգին և իշ-
խան Սողոմոնի (Արղության) միջոցով մի գումար խոստացեք նրան։ Նրանից
է կախված ինչպես տեղեկացնել կայսրին, և ինչպես նա խորհուրդ տա խա-
նին, այնպես էլ կլինի։ Շտապեցեք իշխանի միջոցով նամակ ուղարկել նրան,
բայց գրեցեք այնպես, որ երբ գործը կվերջանա, այն ժամանակ այսքան
գումար կվճարեք նրան։ Նույնպես գրեցեք գեներալ Կովալևսկուն, որ նույն-
պես ծանոթ է իշխան Սողոմոնին։ Նա Թիֆլիսի քաղաքացիական նահանգա-
պետն է, ինձ շատ սիրում է և բոլոր հանգամանքներն, անցյալի թե ներկայի,
նրան հայտնի են։ ... Երկու անգամ ինձ գրել է իշխան Սողոմոնը այս խոս-

քերը. «Ինձ ծախիր, բայց աշխատիր տալ գործին բարեհաջող ընթացք»։ Իմ
թարգմանիչները մինչև այժմ չէին թարգմանում այս արտահայտությունը, և
որովհետև այս նամակները գրված են վրացերեն լեզվով, ուստի ինձ հայտնի
չէր նրանց բովանդակությունը, իսկ այժմ, խղճահարվելով, իմ թարգմանիչները
բացատրեցին ինձ իշխան Սողոմոնի նամակների բովանդակությունը, որից ես
փոքր ինչ հանգստացա և կարողացա համարձակություն ունենալ պարտքի մեջ
մտնելու, իսկ առանց դրան, որքան էլ աղքատ լինեի, չէի համարձակվի
պարտքի մեջ մտնելու. ոչ ոք ինձ չէր հավատա, որովհետև այստեղ փող
չունեցող մարդը հավասար է վատ շանը, որ ոչ մի տեղ տուն չի թողնվում։
Իսկ Եփրեմը չգիտեմ որտեղից, բայց համարյա օր չի անցնում, որ չստանա
երեք հազարով, հինգ հազարով փող և զանազան իրեր, որով և նա կուրաց-
նում է բոլորի աչքերը։ Ես նույնիսկ օրապահիկ չունեմ, իսկ պարտքի մեջ
մտնել չեմ համարձակվում, հիշելով անցյալ անհարթությունները։ Ինչ վերա-
բերում է աշխատանքին, ես իմ կյանքն էլ չեմ խնայի ինչպես այժմ, մենակ,
այնպես էլ եպիսկոպոսների գալուց հետո և այս ոչ թե այն բանի համար, որ
հույս ունենամ ձեզանից վարձատրություն ստանալու, ոչ, այլ որպեսզի իմ
հոր ճրագը չհանգչի և թե ցույց դուք նրա գերեզմանին պատիվներ կմատու-
ցանեք»[1]։

Մինչդեռ Պետերբուրգում և Մոսկվայում կաշառքներ էին կանչում, կա-
շառքներ էին հավաքում ռուսական գահից չնչին անձնական շնորհներ մու-
րալու համար, Կ. Պոլսում կաշառքն արդեն կատարել էր իր գործը, և Դանիելի
կաթողիկոսացումն առաջ էր գնում խոշոր քայլերով։ 1802 թ. հունվարի 15-ին
Կ. Պոլսից բազմաթիվ կնիքներով ծածկված մի հանրագիր ուղարկվեց Բայա-
զետ, Դանիել եպիսկոպոսին։ Ստորագրողներն իրենց անվանում էին՝ «Որ եմք
Կոստանդնուպոլսոյ համայն ուխտին Հայաստանեայց հոգևորականք և աշ-
խարհականք»։ Ահա ինչ էին գրում Կ. Պոլսի դանիելականները. «Աստուա-
ծային հոգով հրահանգեալ լսելիքդ՝ ոչ ձայնի կարօտի ի զգալ, բան թէ ի
շարժմանէն ճանաչել զամենայն ապաքէն՝ սրբազնեալ հայրութիւնդ սուրբ
սիրոյն զոյս ի հոգիս մեր անշէջ ի մրրկաց ջահաւորեալ միշտ փայլէ և ըստ
վերին տեսչութեան համազգային կանոնս ընտրութեան երկրորդ անգամ եւ
յօժարակամ ջանացաք յաշտանակ ոսկի բարձրացուցանել ի լոյս աշխարհի.
սակայն զարանակալին միգապատ մառախուղ պատեալ զմեօք—ակամա կա-
մօք բանադատեալ առժամանակ մի նստաք ի խաւարի օտար մթութեան. առ
որ աշխարհ ամենայն ամենայն թախծեալ վարանեալ վերին այցելութեանն
ակնկալեալ սպասեր վրէժխնդրութեան։ Իսկ այժմ նա՝ որում անհնարինքն ի
մարդկանէ հնարաւորք են, և ի յամենազօր ձեռըն կալեալ ունի զպատուական
սիրտ թագաւորաց ի խստացուցանել և ի քաղցրացուցանել, զլոյս փառաց ողոր-
մութեան իւրոյ ծագեալ՝ հերքեալ վանեաց զօտար մթութեանց մառախուղն, այս
է զի շարժեաց զարդարախորհ սիրտս բարեբախտ օսմանեան մեծազօր տէ-
րութեանն՝ առ ի խնամ տանիլ իրաւունս առնել աղքատաց ժողովրդեանս, որ
և հրապարակական քննութեամբ արդարապես դատեալ՝ յետս կոչեաց զպէ-
րաթ և զֆէրման Դաւթին և նոր պէրաթ և ֆէրման յարժանաւոր յանուն սըր-
բազնութեան քո շնորհելով, հաստատեաց բարձր իշխանութեամբ իւրով
զաստուածընտիր վեհանձնութիւն քո՝ կաթողիկոսն ամենայն Հայոց։ Վասն
որոյ ըստ բարեբախտ թագաւորին մեր բարձրահրամանին և ըստ համազգա-
յին անհրաժեշտ կրկնակի ընտրութեանցն՝ զաստուածարեալ հայրութեան ձեր
ճանաչեմք միմիայն օրինաւոր կաթողիկոս և վայելչապատիւ ծայրագոյն պատ-

[1] Н. Дубровин, IV, с. 247—249.

բռարք և աստուածարենտիր զլուխ ընդհանուր եկեղեցւոյ Հայաստանեայց. և արժանաժառանգ մաքուր փեսայ հարսինն անարատի մօր մեր լուսոյ սուրբ էջմիածնի։ Ամեն իրի և յամենայն եկեղեցիս մեր վայելչապէս յիշատակեցաք և յիշատակեմք։ Եւ արդիս աՀաւասիկ ընդ դրոյս առաքեցաք առ սրբազանութիւնդ զխակ զպէրաթդ և զֆէրմանդ. որոյ զօրինակն ևս յառաջ եղեալ եմք-ա՛ռ ընկալ սիրով Հոգևոր բերկրութեամբ։ Սպաքէն՝ եՀաս ժամանակ զի լցուն բերանք մեր խնդութեամբ և լեզուք մեր ցնծութեամբ, և միաբան սիրով խրախուսեալ զիրեարս ասեմք նախապէս՝ օրՀնեալ է Աստուած Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և ծնրադրական գոՀութեամբ յազգս ազգաց մեծացուցանեմք և փառաւորեմք զի յաւիտենից փառաւորեալ սուրբ անունն Աստուծոյ։ Երկրորդապէս՝ մեծապէս շնորՀակալութիւն ունեմք զարդարադատ բարեբար օսմանեան տէրութենէս. արդարև՝ յիրաւունս և յողորմութիւն անդրդուելի Հաստատեսցի աթոռ նորա ի միջոյ քաղցր ակամբ խնամածութիւն աշխարՀի և մանավանդ տառապեալ ազգիս. ամեն։ Երրորդապէս՝ մեծավայելուչ յարգանօք և սիրով շնորՀավորեմք զաստուածարենտիր կոչմանդ ի կաթողիկոսութիւն և ի ՀոգեՀրաւէր Հովուապետութիւն ընդՀանուր ազգիս։ Եւ զաստուածարեալ վեՀանձնութիւնդ ընդ մեզ յարախակցութիւն Հրաւիրեմք վասն նորապսակ սիրախրատոյս պատրիարքութեան Հարազատ սիրելի որդւոյ Սրբազանութեանդ, երջանկափայլ տեառն Գրիգորի արքեպիսկոպոսի և շնորՀազարդ պատրիարքի մեծի մայրաքաղաքիս։ Որոգդ երջանիկ երջանիկ Հովուապետութիւն Հայցեմք ուղիղ վարդապետութեամբ շնորՀել մեզ Աստուծոյ Համայն բարեաց օրինակ ընդ երկայն աւուրս։ Յաւէտապէս մաղթեմք և աղաչեմք զի ամենախնամ ներող Հայրութեամբդ զառՀաւաբակ զյանցաւորն շաՀեսցես ըստ աստիճանաց, ըստ որում քում Հովուապետութեանդ յանձնեալ է ի յԱստուածոյ ո՛չ զոք ի փոքրկանց կորուսանել, որպէսզի յամբից քարոզեսցի անաչառ անոխակալ զթութիւնդ, որպէս և գիտեմք։ Ի վախճան բանիս՝ ջերմեռանդ բղձիւ աղօթս և պաղատանս մատուցանեմք առ Աստուած, զի ըստ անշուշտ յուսոյ և ակնկալութեան ամենեցուն՝ զաստուածընտիր զլուխդ արժանացուսցէ օծութեան սուրբ Հոգւոյն. կատարեսցէ Տէր զանվրէպ զերդումն իւր ըստ կարգին Մելքիսեդեկի յաւիտեան Հաստատիլ զաթոռ քաՀանայապետութեան քո. յորմէ իւղ աստուածային շնորՀաց և առաքելական օրՀնութեանց իջեալ ծաւալեալ զեղցի ի մօրուս և ի գրպանս Հանդերձի մարմնոյ լրութեան եկեղեցւոյ Քրիստոսի. որում ակնկալեալ մնամք յաղօթս առ Աստուած Համակեալք»[1]։

Հինգ օրից Հետո Խամսեցի Գրիգոր պատրիարքը, այս շարժման գլխավոր ղեկավարը, շրջաբերական իր անդրանիկ կոնդակն էր ուղղում Թուրքիայի բոլոր Հայ եկեղեցիներին, մի կոնդակ, որ սկզբից մինչև վերջ նվիրված էր Դանիելին, փառաբանում էր նրան ու նրա ընտրությունը և ՀրաՀրում էր ամբողջ Հայությանը տոնել այն Հաղթանակը, որ տարավ արդարությունն ի դեմս Հալածված, բայց այսօր բարձրացած Դանիելի։ Բնորոշ է, որ պատրիարքն էլ, նախընթաց Հանրագրին ստորագրողների նման արդարության այդ խոշոր Հաղթանակը Համարում էր բացառապես սուլթականական շնորՀ, առանց նույնիսկ մի բառով Հիշատակելու Ռուսաց ցարին։ «Զի Տէր ձեռնարկալու եղև նմա (Դանիելին),— գրում էր Խամսեցին,— և շարժեաց զսիրտ Հզօր Թագաւորութեանն Հանել ի լոյս զծածկեալ ճշմարտութիւնն, որ և աՀաւասիկ ողորմած մեծաՀրաման յաղթող Թագաւորս մեր արդարացուցեալ զդատաստան զրկեալ և դաւաճանեալ Տեառն Դանիէլ Հոգեընտիր սրբազանի ունայնացեալ զպէրաթ և զֆէրմանն որ յանուն Դավթի և ըստ ըղձի ազգին շնորՀեաց զնորոգ զայլ

1 Ձեռագիր (Հեղինակին պատկանող ժողովածուի մեջ)։

պէրաթ և ֆէրման յանուն սրբազան Տեառն Դանիէլի և Հաստատեց զնա բարձաւ իշխանութեամբ իւրով կաթողիկոս ամենայն Հայոց և ծայրագոյն պատրիարք սրբոյ էջմիածնի»[1]։

Նույն Գրիգոր պատրիարքի Հրամանով էր, որ մայիս ամսում Ուչքիլիսե վանքում Հավաքվեց եկեղեցական ժողով, որին մասնակցում էին Աղթամարի Կարապետ կաթողիկոսը, 13 եպիսկոպոսներ Թուրքաց Հայաստանի այլևայլ կողմերից, 18 վարդապետներ և շատ քաՀանաներ։ Ժողովն իրեն Հայտարարեց «Սյունհոդոս» բարձրագույն մի դատարան, որ սկսեց դատել Դավթին. առանց, սակայն, նրան լսելու։ Հասկանալի է, թե ինչ կարող էր անել այդ դատարանը Դանիելի և Ներսես Աշտարակեցու ձեռքի տակ։ Նա դատապարտեց Դավթին և նրա ՀամախոՀներին և արդարացրեց ու բարձրացրեց Դանիելին, որին և մայիսի 25-ին Հանդիսավոր կերպով կաթողիկոս օծեցին նույն Ուչքիլիսեի վանքում։ Մինչդեռ Բագրևանդում այդ «ՍյունՀոդոսը» նիստեր էր անում, Ալեքսանդր կայսրն իր Հրովարտակով նույնպես Հաստատում էր Դանիելի կաթողիկոսությունը մայիսի 19-ին[2]։ Ուչքիլիսեի «ՍյունՀոդոսի» դատապարտական վճիռը, մանրամասն պատճառաբանված, ուղարկվեց Կ. Պոլիս, ուր կարդացվեց բոլոր եկեղեցիներում և ապա տպագրվեց առանձին տետրակով Գրիգոր պատրիարքի Հրամանով[3]։ Դանիելականների Հաղթանակը կատարյալ էր, ուրախությունն անսաՀման։ «Ուրախացան մեծապես դանիէլեանք,— գրում է Պերպերյանը,— և ծափ զծափի Հարեալ՝ տօն ուրախութեան սկսան կատարել ի տունս միմեանց, երգիծանելով և զմիւս կողմն Դաւթի, որ իբրև յանցաւորս մաՀաշափ մեղաց սկսանէին Հայիլ ի խոնարՀ տրտմալից սրտիւ և խոժոռեալ դիմօք»[4]։ Ամենից անզուսպն ինքը՝ Գրիգոր պատրիարքն էր։ Եվ իր այս վարքով նա, ինչպես շուտով կտեսնենք, անկում պատրաստեց ոչ միայն իր, այլև իր գործի Համար։

Բայց իսկական և մեծագույն Հաղթանակը պատկանում էր ոչ դանիելականներին, ոչ էլ դավթականներին, այլ ռուսական քաղաքականությանը։ Մայիսի 19-ի Հրովարտակով ցարականությունը ձեռք էր բերում Արաքսի Հովտում, իր նվաճողական առաջխաղացության կարևորագույն Հանգրվաններից մեկում, մի էջմիածին, տոգորված ստրկի երախտագիտությամբ, այն է՝ անվերապաՀ Հլու ծառայական Հպատակության զգացմունքով, մի ամբողջ ցարապաշտությամբ, որի առջև պետք էր միայն սողալ՝ ստանալու Համար այնպիսի «մեծ» ողորմություն, ինչպիսին էր այս մեկին կաթողիկոս Հաստատելը կամ այն մյուսին չՀաստատելը։ Դանիել կաթողիկոսը զգացվեց Ալեքսանդրի Հրովարտակով մինչև չափազանցություն, մինչև կուրություն. նա այնուՀետև իր կոնդակների մեջ ցարին Հատկացնում էր «սուրբ» անուն, մի բան, որին դեռ չէր Հասել նույնիսկ ռուսաց մոլեռանդ և ստրկաՀոգի եկեղեցականությունն անգամ։ Իր շնորՀակալական կոնդակը նա սկսում էր այսպես. «Միրանածին ինքնակալ օգոստոս Ալէքսանդր Պաւլովիչ սուրբ կայսր,

1 Անդ։

2 «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ե., եր. 213—215։

3 ԱՀա այդ տետրի վերնագիրը՝ «Վճիռ ՍյունՀոդոսին. Դրակ որ կոչի Հայելի ծանոթութեան, որ պարունակէ զժամանակ կիրս Տեառն Դանիէլի Հոգեընտիր կայսերակոչ և ազգաՀրաւէր կաթողիկոսի, և Հարազատից նորին Գրիգոր պատրիարքի Կոստանդնուպոլսոյ և այլ ճշմարտասիրաց և բարեկարգ եպիսկոպոսաց ի դաւաճանութենէ Դաւթի լռեցւոյ որդւոյ Պորչալւոյ Թիֆլիզեցի անուանելոյ։ Հրամանաւ իսկ վերոյիշեալ Հոգեւէր և սրբազան Պատրիարքի. Տպեալ յամի Տեառն՝ 1802 և Հայոց ՌՄԾԱ Հոկտ. գ.-ի տպարանի ՅովՀաննիսեան Պօղոսի ի Կոստանդնուպոլիս»։

4 «Պատմութիւն Հայոց», եր. 45։

Լրկնաւորին աթոռակալ ի երկրի ամենաողորմ տեր մեր և խնամատար աշխարհի»։ Ըստ այս սարկական տրամաբանության էլ ամենայն Հայոց կաթողիկոսն իրեն համարում էր նաև Աստուծուց կանչված, ապա՝ կայսրից, ապա հոգևորականությունից և ապա միայն հայ ազգից։ «Աղոթարար սուրբ թագաւորութեան ձերոյ և Յիսուսի Քրիստոսի ծառայ տեր Դանիէլ շնորհիվ Տեառն և հաճութեամբ ձեր կաթողիկոս ամենայն հայոց և ընտրութեամբ սրբազան Սյունհոդոսին և բոլոր ազգին մերոյ ծայրագոյն պատրիարք Արարատեան աթոռոյն սրբոյ էջմիածնի»։ Տալով իրեն այսքան ստորաքարշ գիրք, կաթողիկոսը դրա համաձայն էլ լեզու էր բանեցնում իր շողոքորթված ոչնչության Աստծու աթոռակալի առաջ երախտագետ ցույց տալու համար։ Նա ասում էր. «Գետնամած երկրպագութեամբ ողջունիւ քրիստոսական և գքրիստոսատիպ մարդասեր բարերարդ մեր, որ ոչ անտես արարեալ զաղաղակ եղկելոյս, խոնարհեցար ի ծայրագոյն բարձրութէնն հանգոյն Նախատիպդ (այսինքն՝ Քրիստոսի), և տարածմամբ հզոր ձեռացդ վերածեր ի գթոյ տառապանաց զբազմավիշտ սասանեալս ողջոյն ազգովին. այլև այսու ոչ բաւականացեալ պսակեցիր զմեզ մեծաշուք բարձրահրաման ղրամատիւ ամենաողորմած սուրբ կայսերութեանդ։ Զոր երկրորդ յետ աստուածեղեն մատանցն գրաւորութեան պսակ պարծանաց ընկալեալ ընդ այլ երկնածիր պարգևոյն ի ձեռն մերս պատկերկամացդ առաջնորդ Եփրեմ արհիեպիսկոպոսի, թագ կապեցուք ոչ միայն ի գլուխս մեր, որ տրուպն իսկ եմք աշակերտելոց բանին ճշմարտութեան, այլ ի գլուխս անայցելու ընդհանուր ազգի մերոյ»[1]։

Եթե ի նկատի առնենք, որ այսպիսի զգացմունքներ արտահայտում էին մի թագավորի վերաբերմամբ, որի իշխանության տակ ապրում էր հայ ժողովրդի մի շատ փոքրիկ, համարյա աննշան մասը, մենք կտեսնենք, որ դանիելյան կուսակցությունը, շարունակելով Հովսեփ Արղությանի քաղաքականությունն ավելի չափազանցրած ծավալով, թեև համարում էր այդ հոգևորականին իր հակառակորդ, տանում էր ամբողջ ազգի ճակատագիրը դեպի անվերապահ ռուսասպաշտություն, որ այնուհետև դառնում էր մեր պատմության գլխավոր երևույթներից մեկը և դնում էր հայությանը միանգամից հակառակորդի դերի մեջ այն պետությունների վերաբերմամբ (Պարսկաստան և Թուրքիա), ուր ապրում էին նրա խոշորագույն հատվածները։ Վերևում մենք տեսանք, որ Կ. Պոլսի հայության ներկայացուցիչները և պատրիարքը Դանիելի կաթողիկոսացումը հոչակում էին բացառապես սուլթանական շնորհ։ Բայց Դանիել կաթողիկոսը, որ գիտեր Ալեքսանդր կայսրին սուրբ եւ անվանել, քրիստոսանման էլ, մի տող չգրեց սուլթանին՝ իր շնորհակալությունը հայտնելու համար։ Ավելի վատ էր դանիելականների վերաբերմունքը դեպի Պարսկաստանը։ Էջմիածինը տերունական հող էր, և, սակայն, այդտեղ ապրող միաբանության դանիելական մասը, Ուչքիլիսեի վանքում տեղի ունեցած «Սյունհոդոսի» և օծումից հետո, առանձին եռանդ ցույց տալ է սկսում, դիմումներ անելով ռուսաց կայսրին, որ նա ազատե Մայր Աթոռը Դավթից, ուրիշ խոսքով՝ օտար և թշնամի մի պետության միջամտությունն էր հայցում։ Ահա, օրինակ, ինչ լեզվով էին խոսում էջմիածնական դանիելականներն Եփրեմ արքեպիսկոպոսի ուղղած իրենց թղթերի մեջ. «Տանի՛ր, հայր հոգևոր։ Զի մինչև ցայժմ մեք ակն ունէաք թէ հասանելոց է առ թշուառացեալ ազգս մեր՝ ողորմութիւնն ամենողորմ և գթառատ ինքնակալի կայսերն մեծի, զորմե լուեալ էաք յառաջմէ, և որպէս դու իսկ վկայէս միշտ։ Որում և այժմ իսկ հաստատմամբ աներկբայ յուսով հաստատուն լինելի, և առաւել քան զարժանն

[1] «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ե., եր. 269—270։

հասանել առ մեզ քաղցր գթութեան նորին։ Բայց զինչ շահ որ իսպառ քայքայեցաւ աստուածաշէն Աթոռս այս և բնաւ անհետ եղև աստուածապարգև օրէնք ցանկալի աւանդութիւնք նախնեաց երանելեաց։ Յառաջ քան զամենայն այս է բարեզուրկ վատաբախտութիւն մեր՝ զի ի դրանէ աստուածապարգև և ողորմած մեծի կայսերն ինքնակալի զրկեցեալ և հեռացեալ եմք և բերանով աղերսել և զցաւս մեր պատմել ոչ կարեմք. ուստի քարտիսիւ և մելանաւ ոչ է մարթ ծանուցանել տառապակրութիւնս մեր. մինչ զի և ո՛չ մինն է բազմաց։ Զի ոչ ունեմք միջոց երկարապէս պատմելոյ և ոչ մի բան միջոէ ասել կարող եմք զրկեալս մերս»[1]։ Մի այլ դիմումի մեջ, ուղղված Ալեքսանդր կայսրին, միաբանությունն ասում էր. «Ուրեմն աղաչեմք ամենեքեանքս աղետալի աղերսանօք տեղեկացեալ տառապակրութիւնս մերում յարքեպիսկոպոսէն Եփրեմայ, աստուածաբար գթասցես և ողորմեսցես ի մեզ ազատելով զմխաբանութիւնս և զպատրիարքական աթոռ մեր ի գերութեանց՝ զի մեք յուսով մեծաւ ակն ունիմք գտանել զփրկութիւն յաստուածատիպ սուրբ թագաւորէդ»։ Բանը հասավ այն աստիճանին, որ նույն միաբանությունը, մոռանալով կղերական այն ոճրագործ նախապաշարմունքները, որոնք դարերի ընթացքում խտրականություն և անողորմ թշնամություն էին հաստատել դավանությունների տարբերվող քրիստոնյա ազգերի մեջ փոխադարձորեն, մի երկար աղերսագրով դիմեց նաև Ռուսաց Սինոդին և վերջացնում էր այդ դիմումն այսպիսի խոսքերով. «Արդ, ով սրբազան հարք բժիշկ մարմնոյ Քրիստոսի սրբոյ եկեղեցւոյ. ահավասիկ հայտնեցաք զվերս եկեղեցւոյս որ ոտից մինչև ցգլուխ վիրաւորեալս ի ձեռն ապօրինաբար հովուի չունի առողջութիւն։ Ուրեմն աղաչեմք ամենքին գթացեալ առ հասարակ յազգ մեր՝ խնդրեցեք յօգոստոսափառ յողորմած կայսերէն՝ զի եղիցի քաղցր ակնարկութիւն նորա ի վերայ ազգին և ի վերայ օրինաւոր հայրապետին մերոյ և ազատեսցէ զմեզ և զաթոռս ի ձեռանէ սորա, որ ի գործս բռնաւորութեան կայ, առաւել քան ի քահանայապետութիւն»[2]։

Այսպիսի չափերի էր ահա հասնում այն ռուսասպաշտական շարժումը, որ սկիզբ էր առել Իսրայել Օրիի ժամանակից և ունեցել էր այնպիսի խոշոր ներկայացուցիչ, ինչպիսին էր Հովսեփ Արղությանը։ Սակայն պետք է խոստովանել, որ XVIII դարի և XIX-ի սկզբի գործիչների մեջ տարբերությունն այս ասպարեզում շատ էական էր։ XVIII դարի ռուսասիրությունը գոնե իրեն արդարացնող խոշոր բովանդակություն ուներ՝ հայրենիքի ազատություն, քաղաքական անկախություն. հայերն ու ռուսներն այդ ժամանակ կողմեր էին, որոնք բանակցում էին իրար հետ, պայմաններ էին առաջարկում իրար։ Մի Արղության կարող էր միանգամայն ներելի կամ գեթ հասկանալի դարձնել իր ծայրահեղ ռուսասիրությունը, ցույց տալով իր բանակցությունները Պոտյոմկին իշխանի, Սուվորով զորավարի և ուրիշների հետ հայկական անկախ թագավորություն հաստատելու մասին։ Այդ ծրագրները, որքան և ուտոպիկ ու մշուշային, այնուամենայնիվ, ընդունակ էին ոգևորել մարդկանց մինչև հեղափոխական շարժումների, ապստամբության, երկարատև համառ լեռնային պատերազմների հասցնելու աստիճան։ Մինչդեռ XIX դարի սկզբի ռուսապաշտությունը մի անվերապահ զգացմունք էր, զուրկ ընդհանուր հայրենական—ազատագրական հանգամանքներից։ Ազատությունն այժմ խնդրվում էր ոչ թե պարսից շահերի և խաների բռնապետությունից և դրա հետևանքով չէր վեր հանում իբրև պայման և նպատակ, ազգային քաղաքական իշխանու-

[1] «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ե., եր. 246։
[2] Նույն տեղը։

թյուն կազմելը, այլ մի Դավիթ կաթողիկոսից, որի մեղքն այն էր, որ նա պակաս փառամոլ կամ իշխելամոլ չէր, քան մի Դանիել կամ ավելի ճիշտը, քան այն մարդիկ, որոնց կույր գործիքն էր դարձել նա։ Ալեքսանդր կայսրն աստված և աստվածաբար գործող էր դառնում հայ հոգևորականների համար անձնական փոքրիկ կրքեր սնուցանելու և իրագործելու համար։ Թե որքան փոքր էր ըստ բովանդակության դավիթ-դանիելյան ահագին վեճը, ցույց է տալիս այն հանգամանքը, որ դանիելականները ողողացնում էին ամբողջ աշխարհն իրենց վայնասունով, չունենալով իրենց ձեռքի տակ իրական և ծանրակշիռ փաստեր։ Դավթին նրանք հայհոյում էին սոսկալի կերպով, անվանում էին նրան գազան, բայց նրա գազանությունը հաստատելու համար լոկ զրպարտություններ էին հերյուրում կամ մատնանշում էին այնպիսի մի հանցանք, ինչպես էր միաբաններին ծեծելը, կարծես թե էջմիածնի պատերը չէին տեսել ոչ մի ժամանակ ծեծով և խանական խստություններով կառավարող կաթողիկոսներ։ Այդպես չէ՞ր, օրինակ, Ղազար Ջահկեցին, որի բռնություններն անցնում էին ամեն չափ[1] և որ, սակայն, գազան չէր կոչվում, քանի որ չուներ իր դեմ կուսակցական կրքերով վառված միաբանություն։ Ուզում ենք ասել, որ միաբանական աղբախառն աղերսագրերը լոկ պայքարի միջոցներ էին։ Եվ դավթականներն էլ գիտեին հանրագրերի ձևին դիմելը, հավատացնելով նրանց մեջ, թե դանիելականների ասածները զրպարտություններ են և հորդորելով հաշտվել Դավթի կաթողիկոսության հետ, որպեսզի չավերվի Մայր Աթոռը։ Թե որքան խղճալի միջոցներ անգամ չէին արհամարհում դանիելականներն իրենց պայքարի համար՝ ցույց է տալիս այն, որ նրանք հավատացնում էին իրենց մի հանրագրի մեջ, թե Դավիթն Երևան ուղարկեց ս. Գեղարդ կոչված իրը, որ էջմիածնի ամենագլխավոր սրբություններից մեկն էր կազմում, և այդ մեծ հանցանքի դեմ բնությունն անգամ բողոքեց մի մեծ երկրաշարժով, որ սկսվեց սրբությունն անարգանքով տեղափոխելու հետևանքով[2]։ Չափազանց բնորոշ է և հետևյալ դեպքը։ Էջմիածնի միաբան Հովհաննես արքեպիսկոպոսը՝ Գեղարդակիր մականունն ստացած մեկը, մոլի դանիելականներից, փախչում է էջմիածնից՝ Դավթի դեմ կռիվ մղելու համար, և գնում է Թիֆլիս, ուր և ստանում է առաջնորդական պաշտոն։ Էջմիածնի միաբանությունը տեղեկություն ունենալով, որ գեներալ Կնորինգը Ալեքսանդր կայսրի հրամանով ժամանել է Թիֆլիս, ուղարկում է նրան մի թուղթ, որի մեջ այսպես է նկարագրում այդ Հովհաննես Գեղարդակիրին.

«Եւ ապա զայս ծանիցէ համառօտ ձերդ գերազանցութիւն։ Զի Յովհաննէս եպիսկոպոսդ այդ որ ինքնահալած փախուցեալ անկաւ ի քաղաքդ այդ, է այր խռովարար բանսարկու և վրդովիչ քաղաքի և ազգի, քանզի մոռացեալ զամենայն բարութիւնս սրբազան Տեառնս մերոյ (այսինքն՝ Դավթի), առ ոտն հարեալ զբազում երախտիս սորին չուքեաց յայդ կոյս, որպէսզի և յայդր պղտորեսցէ զժողովուրդսն և զպարզ սիրտս ձերդ գերազանցութեան իւրով խոտորեալ բարուքն։ Վկայեմք միք ամենքին, որ յորէ յօծմանէն սրբազան Տեառնս մերոյ մինչ ցարդ զբազում չարիս գործեաց դա արժանի պատժոց, և եցոյց յայտնի և ի ծածուկ զպէսպէս նենգագործութիւնս, բայց զոչինչ պատկանաւոր տրիտուր ընկալաւ ի գթաշատ Տեառնէս մերմէ, եթէ ոչ զսէր և զքաղցրութիւն, և ի վերայ այնքան չարութեանց կամեցաւ և զաթոռակալ Սիմեոն արքեպիսկոպոսն ի ճանապարհին Ղարսայ սպանանել տալ, խոստացեալ զքառասուն թուման սպանողացն, բայց նոցա ոչ հնազանդեալ չար խորհրդոց դորին՝ եկեալ պատմեցին սրբազան Տեառնս մերոյ առաջի մեր ամենեցուն և մեք լուեալ ի բերանոյ սոցացն, կնքեցաք և գրով ետուք վկայութիւն սրբազան Տեառնս մերոյ, իսկ Տէրս մեր գթաշատ հայրաբար ներեաց մեծագոյն յանցանանց դորին, և զկնքեալ վկայական մեր ևս ինքեան շնորհեաց։ Եւ մինչ Յովհաննէս վարդապետդ այդ ետես զայսչափ և զայսքան խնամարկութիւնս և զճշմարիտ հայրութիւնս ի սրբազան ծնողէս մերմէ, ուխտեաց և երդմամբ երդուեաց անուամբ բարձրելոյն, և սուրբ Գեղարդեամբ նորին և սրբոյ մասամբքն, կալ այնուհետև ի հնազանդութեան և դադարել ի խռովելոյ զժողովուրդսն, բայց փոխանակ այնր զայդ չարիս գործաց փախստեալ անկանելով յայդր ընդդէմ ամենայն իրաւանց, ուստի որպէս յայտնի է մեզ և միաբանութեան մերոյ ինքն և խոտորեալ գործիքն իւր, նոյնպէս և ձերդ գերազանցութեան առաջի՝ ատելի երևեսցի ինքն և ունայնախօսութիւնք իւր, և զոր ինչ բան խօսեսցի ի դիմաց մերոց իբրև ի մենջ առաքեցեալ և կամ ցուցանելով զմեզ խորհրդակից ինքեան, զհաւատ չընծայեալ, ծանիցէք զդա այր ոչ միայն խռովարար, այլ և երդմնազանց»[1]։

Այսպես էր կռիվը, այսպես էին կռվողները։ Եվ միանգամայն բնական էր, որ ռուսական բյուրոկրատիան շատ ստոր կարծիք ունենար հայ ժողովրդի այդ ներկայացուցիչների մասին, գործածեր նրանց իր օգտին ինչպես ինքն էր կամենում, փոխարենը մի-մի անգամ բավարարելով նրանց մանր ինքնասիրությունը պատահական, անարժեք շնորհներով։ Հասկանալի է, որ այսպիսի հանգամանքների մեջ ռուսական կառավարությունն ավելի ևս քիչ անհրաժեշտություն կզգար գեթ ձևականորեն իրեն արդարության և ժողովրդական գերագույն շահերի պաշտպան-դատավոր ցույց տալու։ Այս տեսակ խաղի կարիք չկար, քանի որ ռուսաց նվաճողական քաղաքականությունը հայոց եկեղեցու մեջ որոնում էր լոկ կույր և հլու գործիքներ խռովություններ հարուցանելու և միջամտություններ առաջացնելու համար, իսկ այդպիսի գործիքներ շատ էին արտադրում հայ եկեղեցու խորքում բոլորած փառատենչիկ պայքարները, և գործիքները չէին էլ զգում, թե կարող են գոնե փոքր ի շատե շոշափելի գնահատում անել իրենց հլու և անվերապահ ծառայությանը։ Այս էր գլխավոր պատճառը, որ Դավիթ կաթողիկոսը չէր կարողանում Լազարյան եղբայրների տարած հաղթանակին հակադրել իր վրա բարդվող մեղադրանքների և ամբաստանությունների ուժեղ հերքում և այդպիսով գեթ մասամբ զինաթափ անել իր թշնամիներին։ Նա անթիվ թղթեր գրեց ռուսաց բոլոր պատշաճավոր բարձր պաշտոնյաներին իրեն արդարացնելու, իր իրավունքները հաստատելու համար։ Միանգամայն զարմանալի է այն եռանդը, որ կաթողիկոսը ցուցադրում էր այդ գործի մեջ։ Բայց ռուսաց կառավարությունն այդ հերքումներով չէր հետաքրքրվում և բոլորովին այն չէր որոնում, թե կա՞ ճշմարտություն դանիելականների այն հավաստիացումների մեջ, թե Դավիթը կողոպտել է վանքը և բոլոր անոթները վաճառել ու կաշառ էր տարել խաներին ու բեկերին։ Ռուսաց կառավարության համար միևնույն էր և այն, որ Դավիթն, ընդհակառակը, հավատացնում էր, թե էջմիածնական գանձերը վատնողները դանիելականներն են։ Իսկ այն, ինչ որ հետաքրքրական էր և շատ նշանակալից ռուսաց կառավարության համար, Երևանի խանի վարմունքն էր։ Գեներալ Կնորինգին հանձնարարված էր համոզել Մահմադ խանին, որ նա հեռացնե Դավիթ կաթողիկոսին և Դանիելին դնե նրա տեղը։ Այդպիսի մի քանի փորձեր կատարվեցին։ Կնորինգի պատվիրակները գնացին Երևան, նամակներ տարան, այցելեցին և էջմիածին։ Մահմադ խանը թեև շարունակում

---

[1] Տե՛ս այս գործի նախընթաց հատորը։

[2] Ձեռագիր (հեղինակի ժողովածուի մեջ)։

[1] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Զ., եր. 364—365։

էր խաղալ իր աղվեսային խաղը, հավատացնելով ռուսներին, թե ինքը պատրաստ է ռուսական հովանավորությունը ջուխտ ձեռքով գրկելու, բայց և այնպես, չուզեց անարգել Դավթին և հայտարարեց նրան օրինավոր կաթողիկոս։ Այս արդեն պարզ ապացույց էր, որ Դավիթը Դանիելի չափ չէ ցանկալի ռուսաց քաղաքականության տեսակետից, որ Դավիթը կարող է դառնալ Ռուսաստանի դեմ կանգնած մի դեմք Արևելքի գործերի մեջ։ Այս պատճառով էլ ռուսաց կառավարությունը Դանիելին իրեն նվիրված անձնավորություն էր համարում։ Իսկ Դավիթը շարունակում էր եռանդով հերքումներ ուղարկել ռուսական պաշտոնյաներին։ Ահա մի նմուշ շատ շատերից։ Օգտվելով Կնորինգի ներկայացուցչի ժամանումից Երևան, էջմիածնի միաբանությունը գրում էր գլխավոր հրամանատարին հետևյալ թուղթը.

«Թեպետ վասն ամենայն դրպարտութեանց ոմանց խառնակչէ և խռովարար անձանց ի զանազան ժամանակս գրեալ եմք բազմակնիք թղթովք սատուածապսակեալ մեծի կայսերն, և ձերդ գերազանցութեանց և յայլ և այլ տեղիս, սակայն ոչինչ օգնութիւն անտի ժամանեցին մեզ։ Իսկ այժմ մինչև եկն հաւատարիմ դեսպան ձեր պարոն Եփրեմ Դաւիթիչն, մեք և բոլոր միաբանք սրբոյ Գահիս գնացեալ առ նա ծանուցաք բերանօք զուղիղն նմա, և խնդրեցաք ի նմանէ՝ յայտնել ձերդ գերազանցութեանց զոր ինչ ետես, և զոր ինչ լուաւ ի մէնջ, և զնոյն բանս մեր ահա բոլոր միաբանութեամբ՝ բազմակնիք ի գիր արձանացուցեալ ճշմարտութեամբ՝ անխառն ի ստութեանց յայտնեմք առանց կեղծաւորութեան միով կամաւ և յօժարութեամբ թարց բռնադատութեան ումեք՝ և առաջի ձերդ աստուածապաշտութեանց։ Նախ՝ եթէ արք քուք, և խառնակիչք ազգի և քաղաքի, պատճառեն և թշնամութեամբ զբաբանեն զսրբազան և զԱստուածընտիր հայրապետէս մերմէ, իբրու թէ՝ արծաթով և կաշառօք իցէ նստեալ, և զարծաթեղեն զարդս եկեղեցւոյ խորտակեալ և վաճառեալ և այլն։ Ըստ ամենայնի սուտ է, և անաստուածութիւն մեծ, քանզի՝ մեք ամենքին այսու մերով կնքով վկայեմք առաջի ճշմարտին Աստուծոյ և առաջի ամենայն մարդկանց, և երդնումք յանուն բարձրելոյն, որ ամենայն զարդք սրբոյ Տանս և արծաթեղենք կան ամբողջ յըսկզբանց անտի մինչ ցարդ, որպէս և հարազատ դեսպանն ձեր ետես աչօք զայնս և կարէ ընդ մեզ և ինքն վկայել հոգւով, իսկ եթէ սուտ լիցի այս մեր գրութիւն, մեք պատասխանատու լիցուք դատողին երկնի և երկրի, և մանաւանդ վկայեմք, որ նա ինքն Դանիէլ վարդապետն է վատնիչ ընչից և արդեանց սրբոյ Աթոռոյս, քակտիչ սորին և պղտորիչ ժողովրդոց, և ուր և եգիտ զինչս սրբոյ Աթոռոյս յափշտակեաց և փչացոյց, քանզի հաւասար անօթոց սատ եղելոց զոյին անօթք և զարդք և դրամք Աթոռոյս ի Բայազիտ և ի Կարին, յաւանդ եդեալք զայնս ամենայն ի պէտս ախտի իւրոյ ոչնչացոյց, և այժմ զյանցանսն իւր թարց խղճի և իրաւանց ի վերայ հոգընտիր սրբբազան Տեառնս մերոյ կամի դնել, և զանարատ անունս նորին վատահամբաւել՝ այնու և զինքն արդարացուցանել։ Իսկ եթէ զազգն և զմիաբանութիւնս պատճառեսցեն նոյն թշնամիքն արդարութեան, իբրու ազգն և մեր միաբանութիւն ոչ կամի զհայրապետութիւն երջանիկ և ապտուական գլխոյս մերոյ, զոր բազում յօժարութեամբ օծաք, և արժանաւորապէս ի վերայ բոլոր Տանս Հայոց և ի վերայ մեր պատրիարք և կաթողիկոս կացուցաք, և զոր ընդունիմք և յարգեմք և եմք հնազանդ մահուամ չափ և այլն։ Առ այդ եւ՝ յիշեալ եմք զբոլոր Ազգի մերոյ զհամահաճական մահուէրաւ հանդերձ բազմակնիք մահուէրօք բոլոր միաբանութեանս և երկրացւոցս, ընդ Կարապետ և Աբրահամ եպիսկոպոսացն մերոց, անտի կարէք դիւրաւ իմանալ զճշմարիտն և զստուտն և զբերանս անաստուածից կարկեցուցանել։ Եւ եթէ յանոքիկ թուղթք և բազմակնիք վկայութիւնք ոչ բաւականացին ի յե-

ծանել զանտի բանս եղծանելեացն, ահա նորապես առաքեմք առ ձերդ գերազանցութիւն, զնորոգ գրեցեալ թուղթսն կարնեցւոց և դարսեցւոց, կարէք ի սոցունց գիտել զԱզգի մերոյ զկիզձս և զփափագս, զորս ունի առ երջանիկ սրբբազան հայրս մեր, և տեսէք զի՞րդ տենչան պատուական անուան ընտիր գլխոյս մերոյ և որպիսի բաղձանօք յիշատակեն զփափագելի անուն մեծի վեհիս յեկեղեցիս իւրեանց՝ բառնալով զչարահամբաւ անուն չարասիրին ի սրբոց տաճարացն Աստուծոյ»[1]։

Ռուսաց կառավարությունն այս ուժեղ առարկությունների և պահանջների դիմաց մի պատասխան էր կարողացել ձևակերպել.— Հայոց կաթողիկոսի ընտրությունն, ասում էր նա, ամբողջովին պետք է թողնել հայ ժողովրդի ազատ կամքին։ Այս արտաքին բարեվայելուչ ձևի մեջ, սակայն, դրվում էր մի իրականություն, որ դարձյալ նույն քաղաքական շահախնդրությունն էր պարունակում իր մեջ։ Իր գեղեցկատեսիլ ասացվածքին բացատրություն տալով, ռուսաց կառավարությունն ասում էր, թե ժողովրդական ազատ ընտրությամբ կաթողիկոսական պաշտոնին կանչված նա համարում է միայն Դանիելին։ Հետևաբար և մերժվում էին Դավթի և նրա կուսակիցների բոլոր առարկությունները, և այս բանի մեջ Ռուսաց կառավարությունը նույնիսկ ջղայնություն էր ցույց տալիս։ Այսպես, Դավթի ուղարկած երկու եպիսկոպոսներին այնպես էլ թույլտվություն չտրվեց Պետերբուրգ գնալու և կայսրին ներկայանալու համար—Գրիգոր Աղքիրմանցին հրաման ստացավ հեռանալ Պետերբուրգից, իսկ Աստրախանի մաքսատան մի հայ պաշտոնյա Ալեքսանդրից հանդիմանություն էր ստանում այն պատճառով, որ նա համարձակվել էր Դավթի իրավունքները պաշտպանել և նրան համարել օրինավոր կաթողիկոս։ Մայիսի 19-ի հրովարտակից հետո Դավիթը ռուսաց համար այլևս անվերադառնալիորեն «կեղծ կաթողիկոս» էր և, իհարկե, ուրիշ կերպ ճանաչվել չէր կարող, թեկուզ ինչ ապացույցներ էլ հավաքվեին այդ հորջորջման դեմ։

Հովհաննես Գեղարդակիրը, որ Դանիելի կողմից ճանաչված էր Թիֆլիսի առաջնորդ, հուլիսի 13-ին մեծ հանդեսով տոնեց կայսերական վավերացումը։ Այդ տոնախմբությունը փոքր չափերով հիշեցնում էր այն, որ կատարեց Հովսեփ Արղությանը Վրաստանի կցման առիթով։ Ալեքսանդր Ա-ի հրովարտակը և պատկերը դրված էին բերդի ս. Գեորգ եկեղեցու շքեղ բարձերի վրա։ Հրովարտակից պատրաստված էին և երկու թարգմանություններ—հայերեն և վրացերեն, որոնք նույնպես դրված էին բարձերի վրա։ Նշանակված ժամին մեծ թափոր սկսվեց ս. Գեորգ եկեղեցուց դեպի վանքի եկեղեցին։ Թափորի առջևից գնում էին տասներկու խաչվառներ, որոնց հետևում էին վարդապետները, ավագերեցները, քահանաները, սարկավագները, զգեստավորված, զույգ-զույգ, ըստ ավագության կարգի։ Ապա մի վարդապետ, աջ ու ձախ ունենալով մի-մի ավագերեց, տանում էր բնագիրը, (ռուսերեն) հրովարտակը, նրա ետևից, նույն կարգով, հետևում էին երկու վարդապետներ, որոնք տանում էին հայերեն և վրացերեն թարգմանությունները։ Այնուհետև գնում էին եպիսկոպոսները, շրջապատված իրենց ստորադրված հոգևորականներով, հետո բոլոր հայազգի իշխանները, ազնվականները, քաղաքացիները և առհասարակ ժողովուրդը։ Վանքի եկեղեցում թափորն ընդունում էր Հովհաննես Գեղարդակիրը, որ և պատարագիչ էր։ Կարդացվեց կայսերական հրովարտակը նախ ռուսերեն, ապա հայերեն և վրացերեն լեզուներով, պատարագիչ առաջնորդը համառոտ ատենաբանություն արավ, որի մեջ փառաբանեց այն ողորմությունները, որ թափել է Ալեքսանդր կայսրը հայոց ազգի և հատկապես Դանիել կա-

[1] «Դիւան հայոց պատմութեան», Գիրք Զ, եր. 379—381։

թողիկոսի վրա։ Եկեղեցական հանդեսը վերջացավ գոհացողական մաղթանքով Ալեքսանդրի առողջության և արեշատության համար։ Թե այդ և թե հետևյալ երկու օրերը Թիֆլիսի բոլոր հայ եկեղեցիներից անընդհատ ղանգահարություն էր կատարվում, իսկ բերդի ս. Գևորգ և վանքի եկեղեցիները լուսավորվում էին[1]։

Դավիթ կաթողիկոսն, իհարկե, անտեղյակ չմնաց այս տոնախմբություններին և, իհարկե, հասկացավ, որ այնուհետև զուր է ռուսաց կառավարության վրա հույս դնելը։ Եվ նա իր համար նեցուկներ է որոնում, պայքարի մի նոր շրջան սկսելու համար, հակառուսական քաղաքականության մեջ, մրցության ասպարեզ հանելով, ինչպես կտեսնենք, և Պարսկաստանը, որ մինչև այդ անտարբեր էր մնացել էջմիածնի կաթողիկոսական հարցի մեջ։ Բայց իբրև խելոք և շրջահայաց մարդ, նա շարունակեց բարեկամական հարաբերություններ պահպանել ռուս իշխանավորների հետ, արտաքուստ ցույց տալով, թե ինքը դեռ սպասում է, որ Ալեքսանդր կայսրը կհանդիսանա արդար դատավոր իր գործի մեջ։

Դանիելի հաստատման հրովարտակն էլ Լազարյան երկու եղբայրների գործն էր[2], որ վերջնականապես ամրապնդում էր նրանց հաղթանակը։ Եվ նրանց ծառայությունն անվարձ չէր մնում։ Իբրև փոխանակություն Մինաս աղա Լազարյանն ստանում է հայ ազգի ներկայացուցչի վերին աստիճանի պատվավոր կոչումը։ 1803 թ. հոկտեմբերի 21-ին Դանիել կաթողիկոսը գրում էր Ալեքսանդր կայսրին. «Այլ զի մերս պատկեր Եփրեմ արքեպիսկոպոս առաջնորդն ընդ ողորմութեամբ ձեր եղեալ մերազանց, պարտաւորի շրջագայել յամենայն վիճակս իւր, նմին իրի ի դիմաց մեր և իր դիմաց Արարատեան Աթոռոյն սրբոյն էջմիածնի, և բոլոր ազգի Հայոց՝ երկրորդ յետ յիշեալ Առաջնորդին որպէս պատկեր մեր փոխանորդ և տեղակալ կարգացեք ի դրան սուրբ կայսերութեան ձերոյ՝ մտերիմ և ջերմեռանդ հպատակն մեծի տէրութեան ձեր, իշխան Հայոց Մինէ Լազրեւ Լազրեան. զի ի հանդիպելն հարկաւոր իրողութեանց ի կողմանէ Արարատեան Աթոռոյն կամ ի կողմանէ ազգին մերոյ, որովհետև է նա մշտապէս յայդր ընդ խնամովք ձերդ կայսերականի մեծութեան, նա յայտնեսցէ առաջի բարձրագոյն Աթոռոյ մեծ ողորմութեան ձեր։ Վասնորոյ ամենախոնարհ երկրպագութեամբ խնդրեմ, զքաղցր ակնարկութիւն ունել ի վերայ դորա, և ի վերայ Առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոս բազմաշխատ զաւակի սրբոյ Աթոռոյն էջմիածնի»[3]։ Այս խնդիրքը հարգվում է, և Մինաս Լազարյանը կոչվում է հայոց վեքիլ, հավատարմատար Պետերբուրգի արքունիքում, ինչպես մի ժամանակ, Եկատերինայի օրով, գոյություն ուներ «Արարատյան դեսպան» անունով մի ներկայացուցչություն, և ներկայացուցիչն էր Ստեփան Դավթյան անունով մեկը։ Վեքիլի կոչումը շատ բարձրացրեց Լազարյան տոհմի պատիվն ամբողջ հայ ազգի աչքում, և Մինաս աղան, լինելով իրապես մի հարուստ վաճառական, զարդարվեց իշխանական պերճ տիտղոսներով և հորջորջումներով։ Նրան էին դիմում, ինչպես կտեսնենք, հայերն աշխարհի բոլոր կողմերից, երբ կարիք էր լինում որևէ հարաբերություն ունենալ ռուսաց կառավարության հետ։ Եվ այս չափազանց պատվավոր պաշտոնում, որ ազդեցություն, ուժ և հեղինակություն էր հաղորդում ամբողջ մեծափարթամ դրամատեր ընտանիքին, նա մնաց մինչև իր մահը (1809)։

4. Նոր բարդություններ։— Դանիելական կուսակցության այս լիակատար

[1] Ա. Երիցյան, *Ամենայն հայոց կաթողիկոսությունը*, էր. 26—27։

[2] Մ. Մսերեանց, *Պատմութիւն կաթողիկոսաց էջմիածնի*, էր. 57։

[3] *«Դիվան հայոց պատմության», Գիրք Ե., էր. 271—272։*

հաղթանակի միջոցին, 1802-ի երկրորդ կիսամյակին, հանկարծորեն տեղի են ունենում փոփոխություններ, որոնք նորանոր բարդություններ են մտցնում կաթողիկոսական այս խճճված հարցի մեջ, կշեռքի նժարն այս անգամ թեքելով դեպի Դավթի կողմը։ Այս նոր դեպքերի ծննդաբանությունը վերլուծելու համար պետք է նախ ծանոթանալ Երևանի Մահմադ խանի քաղաքականությանը։ Ինքը Դավիթ կաթողիկոսը Ղարաբաղի Մելիք Ջումշուդին գրած իր կոնդակի մեջ մանրամասնորեն նկարագրել է այդ քաղաքականությունը դեռ այն ժամանակ, երբ չէր գումարվել Ուչքիլիսեի «Սյունհոդոսը», երբ Դանիելը դեռ կաթողիկոս չէր օծվել և Ալեքսանդր կայսրն էլ հաստատության հրովարտակ չէր տվել նրան։ Ահա ինչ էր գրում այդ կոնդակի մեջ. «Ի ներկայս մէկ սուրհանդակ և մէկ սևագլուխ էր յղեալ նա (Դանիէլը) ի Կարնոյ՝ հանդերձ կաթողիկոսութեան ֆերմանի օրինակով, որք եկեալ առ Դօլվաթլու խանն մեր՝ յայտնեցին զվնասակար խորհուրդ իւրեանց. որոյ աղւագաւ և խոստացան իշխողաց և այլ մեծամեծաց զբաղում և զանթուեալ կաշառս՝ զոր մեզ անդէպ համարելով գրել աստ՝ թողումք յայլոց իմանալ։ Բայց մեծապատիւ խանն՝ ընդ միաբանից և երկարցւոց խորհելով, և իմանալով՝ թէ նոքա առ նախանձու կամին աւերել զԱթոռս, ջուղապ ետ սուրհանդակին և սևագլխին՝ թէ անկարելի է, այդ գլուխ գալոյ բան չէ, մինչև ցարդ չեմք լուեալ՝ և չեմք տեսեալ՝ թէ օծեալ կաթողիկոսն փոխեսցի, վասն որոյ մեք ևս չեմք առնելոց՝ եթէ հայք ներհակեսցեն առ այս՝ և ձեռս բարձեն Աթոռոյն՝ մեք ձեռն քարշող չեմք գոյիւք պահպանելոց եմք զնա՝ և պատճառ աւերման նորա չեմք լինելոց։ Այսպիսի աստւթեամբք յետս դարձոյց զնոսա ունայն։ Ապա գրեաց վերստին արզայ առ տէրութիւն օսմանցւոց՝ թէ մեք ինքնագլուխ չեմք կորզեալ զսա կաթուղիկոս. այլ խնդրանօք շրջակայ երկրացւոց և միաբանիցն եղև, ձեր տէրութիւն ևս շնորհեաց յանուն սորա զֆէրմանս հաստատութեան. բոլոր ազգն սորա ևս իմացեալ՝ ընկալան, թե կնքելով զհամահաճական մահզէրն, և թէ գրելով զյատուկ յատուկ մահզէրս և թուղթս հաւանութեան։ Շահն ևս գիտեցեալ և զկաթուղիկոս լինելն սորա, որում և շնորհեալ է զքանիս ռաղամս։ Ապա՝ ընդէ՞ր է որ այժմ կամիք դուք զֆէրմանն ձեր եղծել՝ և զսա փոխել. խնդրեմք՝ շնորհել զկրկին ֆէրմանս՝ զի մնասցէ սա ի հաստատութեան։ Գրեաց և զթուղթս առ Ղարսայ և Կարնոյ փաշայսն, զի նոքա ձայնակից լինելով ինքեան՝ արզ գրեսցեն առ Թագաւորն, և մերազնեայ ժողովրդոցն ևս հրամայեսցեն զմահզէրս գրել առ Պօլսեցիսն զի ի բաց կացցեն ի վնասակար խորհրդոց»[1]։

Այս քաղաքականությունը, որի ձգտումն էր հակադրել ռուսական ոտնձգություններին, մի պարսկա-թուրքական համաձայնություն, ավելի ևս հրամայողական էր դառնում այն րոպեից, երբ Ալաշկերտի Ուչքիլիսեում հաստատվում էր կաթողիկոսական մի նոր աթոռ իբրև բացարձակ ռուսական մի գործիք։ Մահմադ խանը, վարելով իր երկդիմի խաղը ռուսական տիրապետության հանդեպ, հավատացնելով ռուսներին, թե ինքն անպատճառ ուզում է հպատակվել Ռուսաստանին էջմիածնի կաթողիկոսական հարցի մեջ, սակայն, այն հայացքն էր անցկացնում Կնորինգի հետ վարած բանակցությունների միջոցին, թե Դավթին հաստատել են օսմանյան սուլթանը և Պարսից շահը, որոնք նույնպիսի ինքնակալ թագավորներ են, ինչպես ռուսական ցարը[2]։

Այս հայեցակետն ամրացնելու համար հարկավոր էր, որ Թուրքաց սուլթանը նորից հաստատեր Դավթին, քանի որ Դանիելին հաստատելու ժամանակ նա հետս էր կոչել Դավթին տրված ֆերմանը։ Իսկ այսպիսի մի փոփոխու-

[1] *«Դիվան հայոց պատմության», գիրք Զ., էր. 331—332։*

[2] Н. Дубровин, IV, с. 257.

թոլիկոսի վրա։ Եկեղեցական հանդեսը վերջացավ գոհացողական մաղթանքով Ալեքսանդրի առողջության և արևշատության համար։ Թե այդ և թե հետևյալ երկու օրերը Թիֆլիսի բոլոր հայ եկեղեցիներից անընդհատ զանգահարություն էր կատարվում, իսկ բերդի ս. Գևորգ և վանքի եկեղեցիները լուսավորվում էին[1]։

Դավիթ կաթողիկոսն, ինարկե, անտեղյակ չմնաց այս տոնախմբություններին և, ինարկե, հասկացավ, որ այնուհետև զուր է ռուսաց կառավարության վրա հույս դնելը։ Եվ նա իր համար նեցուկներ է որոնում, պայքարի մի նոր շրջան սկսելու համար, հակառուսական քաղաքականության մեջ, մրցության ասպարեզ հանելով, ինչպես կտեսնենք, և Պարսկաստանը, որ մինչև այդ անտարբեր էր մնացել էջմիածնի կաթողիկոսական հարցի մեջ։ Բայց իբրև խելոք և շրջահայաց մարդ, նա շարունակեց բարեկամական հարաբերություններ պահպանել ռուս իշխանավորների հետ, արտաքուստ ցույց տալով, թե ինքը դեռ սպասում է, որ Ալեքսանդր կայսրը կհանդիսանա արդար դատավոր իր գործի մեջ։

Դանիելի հաստատման հրովարտակն էլ Լազարյան երկու եղբայրների գործն էր[2], որ վերջնականապես ամրապնդում էր նրանց հաղթանակը։ Եվ նրանց ծառայությունն անվարձ չէր մնում։ Իբրև փոխանակություն Մինաս աղա Լազարյանն ստանում է հայ ազգի ներկայացուցչի վերին աստիճանի պատվավոր կոչումը։ 1803 թ. հոկտեմբերի 21-ին Դանիել կաթողիկոսը գրում էր Ալեքսանդր կայսրին. «Այլ զի մերս պատկեր Եփրեմ արքեպիսկոպոս առաջնորդն ընդ ողորմութեամբ ձեր եղեալ մերազանց, պարտաւորի շրջագայել յամենայն վիճակս իւր, նմին իրի ի դիմաց մեր և իւր դիմաց Արարատեան Աթոռոյն սրբոյն էջմիածնի, և բոլոր ազգի Հայոց՝ երկրորդ յետ յիշեալ Առաջնորդին որպէս պատկեր մեր փոխանորդ և տեղակալ կարգացեք ի դրան սուրբ կայսերութեան ձերոյ՝ մտերիմ և ջերմեռանդ հպատակն մեծի տէրութեան ձեր, իշխան Հայոց Մինէ Լազրիչ Լազրեան. զի ի հանդիպելն հարկաւոր խրոզութեանց ի կողմանէ Արարատեան Աթոռոյն կամ ի կողմանէ ազգին մերոյ, որովհետև է նա մշտապէս յայտր ընդ խնամովք ձերդ կայսերականի մեծութեան, նա յայտնեսցէ առաջի բարձրագոյն Աթոռոյ մեծ ողորմութեան ձեր։ Վասնորոյ ամենախոնարհ երկրպագութեամբ խնդրեմ, զքաղցր ակնարկութիւն ունել ի վերայ դորա, և ի վերայ Առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոս բազմաշխատ զաւակի սրբոյ Աթոռոյն էջմիածնի»[3]։ Այս խնդիրքը հարգվում է, և Մինաս Լազարյանը կոչվում է հայոց վեքիլ, հավատարմատար Պետերբուրգի արքունիքում, ինչպես մի ժամանակ, Եկատերինայի օրով, գոյություն ուներ «Արարատյան դեսպան» անունով մի ներկայացուցչություն, և ներկայացուցիչն էր Ստեփան Դավթյան անունով մեկը։ Վեքիլի կոչումը շատ բարձրացրեց Լազարյան տոհմի պատիվն ամբողջ հայ ազգի աչքում, և Մինաս աղան, լինելով իրապես մի հարուստ վաճառական, զարդարվեց իշխանական պերճ տիտղոսներով և հորջորջումներով։ Նրան էին դիմում, ինչպես կտեսնենք, հայերն աշխարհի բոլոր կողմերից, երբ կարիք էր լինում որևէ հարաբերություն ունենալ ռուսաց կառավարության հետ։ Եվ այս չափազանց պատվավոր պաշտոնում, որ ազդեցություն, ուժ և հեղինակություն էր հաղորդում ամբողջ մեծափարթամ դրամասեր ընտանիքին, նա մնաց մինչև իր մահը (1809)։

4. Նոր բարդություններ։— Դանիելական կուսակցության այս լիակատար

[1] Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը, եր. 26—27։

[2] Մ. Մսերեանց, Պատմութիւն կաթողիկոսաց էջմիածնի, եր. 57։

[3] «Դիւան հայոց պատմութեան», Գիրք Ե., եր. 271—272։

հաղթանակի միջոցին, 1802-ի երկրորդ կիսամյակին, հանկարծորեն տեղի են ունենում փոփոխություններ, որոնք նորանոր բարդություններ են մտցնում կաթողիկոսական այս խճճված հարցի մեջ, կշեռքի նժարն այս անգամ թեքելով դեպի Դավթի կողմը։ Այս նոր դեպքերի ծննդաբանությունը վերլուծելու համար պետք է նախ ծանոթանալ Երևանի Մահմադ խանի քաղաքականությանը։ Ինքը Դավիթ կաթողիկոսը Ղարաբաղի Մելիք Ջումշուդին գրած իր կոնդակի մեջ մանրամասնորեն նկարագրել է այդ քաղաքականությունը դեռ այն ժամանակ, երբ չէր գումարվել Ուչքիլիսեի «Սյունհոդոսը», երբ Դանիելը դեռ կաթողիկոս չէր օծվել և Ալեքսանդր կայսրն էլ հաստատության հրովարտակ չէր տվել նրան։ Ահա ինչ էր գրում այդ կոնդակի մեջ. «Ի ներկայս մէկ սուրհանդակ և մէկ սեազլուխ էր յղեալ նա (Դանիէլը) ի Կարնոյ՝ հանդերձ կաթողիկոսութեան ֆերմանի օրինակով, որք եկեալ առ Դօլվաթլու խանն մեր՝ յայտնեցին զվնասակար խորհուրդ իւրեանց. որոյ աղագաւ և խոստացան իշխողաց և այլ մեծամեծաց զքաղում և զանթուեալ կաշառս՝ զոր մեք անդէպ համարելով գրել աստ՝ թողումք յայլոց իմանալ։ Բայց մեծապատիւ խանն ընդ միաբանից և երկարցուց խորհելով, և իմանալով՝ թէ նոքա առ նախանձու կամին աւերել զԱթոռս, ջուղապ ետ սուրհանդակին և սեազլխին՝ թէ անկարելի է, այդ գլուխ գալոյ բան չէ, մինչև ցարդ չեմք լուեալ՝ և չեմք տեսեալ՝ թէ օծեալ կաթողիկոսն փոխեսցի, վասն որոյ մեք ևս չեմք առնելոց՝ եթէ հայք ներհակեսցեն առ այս՝ և ձեռս բարձեն Աթոռոյն՝ մեք ձեռն քարշօղ չեմք գոյիւք պահպանելուց եմք զնա՝ և պատճառ աւերման նորա չեմք լինելոց։ Այսպիսի ասութեամբք յետս դարձոյց զնոսա ունայն։ Ապա գրեաց վերստին արզայ առ տէրութիւն օսմանցւոց՝ թէ մեք ինքնագլուխ չեմք կորզեալ զսա կաթուղիկոս. այլ խնդրանօք շրջակայ երկրացւոց և միաբանիցն եղև, ձեր տէրութիւն ևս շնորհեաց յանուն սորա զֆէրմանս հաստատութեան. բոլոր ազգն սորա ևս իմացեալ՝ ընկալան, թե կնքելով զհամահաճական մահզէրն, և թէ գրելով զյատուկ յատուկ մահզէրս և թուղթս հաւանութեան։ Շահն ևս գիտեցեալ և զկաթուղիկոս լինելն սորա, որում և շնորհեալ է զքանիս ռաղամս։ Ապա՝ ընդէ՞ր է որ այժմ կամիք դուք զֆէրմանն ձեր եղծել՝ և զսա փոխել. խնդրեմք՝ շնորհել զկրկին ֆէրմանս՝ զի մնասցէ սա ի հաստատութեան։ Գրեաց և զթուղթս առ Ղարսայ և Կարնոյ փաշայսն, զի նոքա ձայնակից լինելով ինքեան՝ արզ գրեսցեն առ Թագաւորն, և մերաղնեայ ժողովրդոցն ևս հրամայեսցեն զմահզէրս գրել առ Պօլսեցիսն զի ի բաց կացցեն ի վնասակար խորհրդոց»[1]։

Այս քաղաքականությունը, որի ձգտումն էր հակադրել ռուսական ոտնձգություններին, մի պարսկա-թուրքական համաձայնություն, ավելի ևս հրամայողական էր դառնում այն րոպեից, երբ Ալաշկերտի Ուչքիլիսեում հաստատվում էր կաթողիկոսական մի նոր աթոռ իբրև բացարձակ ռուսական մի գործիք։ Մահմադ խանը, վարելով իր երկդիմի խաղը ռուսական տիրապետության հանդեպ, հավատացնելով ռուսներին, թե ինքն անպատճառ ուզում է հպատակվել Ռուսաստանին էջմիածնի կաթողիկոսական հարցի մեջ, սակայն, այն հայացքն էր անցկացնում Կնորինգի հետ վարած բանակցությունների միջոցին, թե Դավթին հաստատել են օսմանյան սուլթանը և Պարսից շահը, որոնք նույնպիսի ինքնակալ թագավորներ են, ինչպես ռուսական ցարը[2]։

Այս հայեցակետն ամրացնելու համար հարկավոր էր, որ Թուրքաց սուլթանը նորից հաստատեր Դավթին, քանի որ Դանիելին հաստատելու ժամանակ նա հետս էր կոչել Դավթին տրված ֆերմանը։ Իսկ այսպիսի մի փոփոխու-

[1] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Զ., եր. 331—332։

[2] Н. Дубровин, IV, с. 257.

թյուն թուրքական կառավարության գործողությունների մեջ մտցնելու համար հարկավոր էր, որ Կ. Պոլսի պատրիարքը Գրիգոր Խամսեցին չլիներ։ Այս մարդն էլ ահա կարևորություն էր ստանում այն դեպքերի մեջ, որոնք պատրաստվեցին 1802-ի աշնանը։

Եվ գլխավոր պատրաստողը հենց ինքը Խամսեցին էր։ Նա, ինչպես տեսանք, Դավթի կատաղի թշնամիներից էր։ Եվ Դավիթը շատ լավ գիտեր այն։ Բայց հետևելով իր խաղաղեցնող և հաշտեցնող քաղաքականության, նա մի գեղեցիկ քայլ արավ Կ. Պոլսի հակառակությունը սիրով ընկճելու համար, այն է՝ ուղղակի դիմում է անում իր այդ թշնամուն 1802 թ. հունիս ամսին։ Իր թուղթը Դավիթն սկսում էր թեթև և մեղմ հիշատակումներով այն հակառակության մասին, որ Գրիգորը միշտ ցույց է տվել իր վերաբերմամբ։ Բայց այժմ, մոռացության տալով անցյալը, Դավիթը դիմում էր նրան իբրև իր սիրելի եղբոր և շնորհավորելով նրա պատրիարքությունը, հորդորում էր սեր և միաբանություն հաստատել հայ ժողովրդի մեջ. «Եւ արդ,— ասում էր նա,— արժան էր արդարև, և անշուշտ պարտաւորութիւն ինձ մատչել հառաջագոյն շնորհաւորական բանիւք առ ձերդ սիրելութիւն, բայց զանազան հոլք և մանաւանդ ազգի օտարաձայն լուրք հասեալք առ մեզ, կասեցուցին զարդ։ Այժմ ի բաց եդեալ զխուժանն, և մոռացեալ զանցեալ անցսն, որք գործեցան կամայ և ակամայ՝ այսու սիրալրական գրով շնորհաւորեմ զպատրիարքական պատիւդ և իշխանութիւնդ այդ՝ զոր պարգևեաց ձեզ նոյն առատաբաշխ ձեռն բարձելոյն, և հայցեմ ի նմանէ պահել զպատուական եղբայրութիւն ձեր խաղաղ և անվրդով կենօք ի վայելել ամաց երկարաձգութեամբ զայդ ի շինութիւն եկեղեցեաց մերոց. և ի ձեռն խաղաղսեր եղբօրդ մերոյ՝ խաղաղացուսցէ Տէր զխռովութիւն ազգի մերոյ, և ի միաբանական սէր սիրով բաղադանեսցէ (՞), և արասցէ մի հետ միահոգի ի փառս ամենամեծ անուան իւրոյ և ի պարծանս Ռաբեթական տոհմիս։ Խնդրի և ի ձերդ եղբայրութենէ, բառնալ զչարն ի միջոյ, և սիրովն Քրիստոսի զարդարիլ, և զհետ խաղաղութեան երթալ, և այնու գանձել ձեզ զանուն բարի, աստ, և զկեանս անմահականս ի հանդերձելումն ժառանգելով զայն, զոր պարգևէ Տերն ամենայն խաղաղարար»[1]։

Սակայն Գրիգոր Խամսեցին այնպիսի մարդկանցից չէր, որոնք արժանի են այսպիսի եղբայրասիրական դիմումների։ Ահա ինչպես է նկարագրում ժամանակակից պատմագիրը. «Եւ այսպես երկու կաթողիկոսք երևեցան ի մի և ի նոյն ժամանակի՝ և ի վերայ մի և նոյն աթոռոյ և ազգի և երկպառակութիւն մի և նոյն ազգի երկուց կողմանց սկսաւ ճարակել օր քան զօր, և հրդեհել աւերել զգեղեցիկ շէնս և զընտրութիւնս ողորմելի ազգիս։ Եւ Գրիգոր պատրիարք՝ փոխանակ խոհեմութեամբ և քաղցրութեամբ ամոքելոյ զխռովս ժողովրդեան երկուց կողմանց և հայրաբար խրատելոյ և հանդարտելոյ զաղմուկ խռովութեանն, ըստ անխոհեմ բարուց իւրոց և սա՝ ի միւսմէ կողմանէ նաւթ և ձէթ արկանէր ի հուրն բորբոքեալ, առաւելուլ և տարածեալ զխռովութիւնն վնասիչ օգտի հասարակութեանն։ Քանզի սկսաւ բռնաբար խոշտանգել զդաւթեանս, և զկծծուցի, բանիւք նախատել երգիծանել և զայրացուցանել զնոսա ի քարոզս և յայլ զինչ ի իցէ ատենաբանութիւնս իւր»[2]։ Այս ուղղությամբ նա գնաց մինչև փողոցային պժգալի այլանդակություններ։ Այսպես, նա մի անգամ, ինչպես պատմում է նույն աղբյուրը, պատրիարքական եկեղեցում իր քարոզի մեջ, ունկնդիր ժողովի առջև, սկսեց ստուգաբանել, թե ինչ է նշանակում Դավթի անունը։ Փոխելով այս բառի առաջին տառը (ըստ արտա-

1 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Զ., եր. 489։

2 Ա. Պերպերեան, Պատմութիւն հայոց, եր. 48—49։

սանության Դ-ի փոխարեն Թ), նա ստանում էր Թավիթ անունը, որ բաժանում էր երկու մասի՝ թաւ և իթ, առաջինը հայերեն բառ և երկրորդը՝ թուրքերեն (իթ՝ շուն)։ Ու հաղթականորեն հայտարարում էր Աստծու տաճարում, թե Դավիթը չի նշանակում և ուրիշ ոչ մի բան, բայց միայն թավամազ շուն: Ավելի հեռուն գնալու տեղ այլևս չէր մնում կուսակցական մոլեգնության համար։ Պատրիարքի անունն կրող այդ հոգևորականն իր ապուշ համառության մեջ մոռացավ, որ Դավիթ անունը միայն Էջմիածնում նստած կաթողիկոսը չէ կրում, որ կան իր հոտի մեջ և ուրիշ շատ դավիթներ, որ նույնիսկ Քրիստոսը սերված էր համարում մի մարդուց, որի անունն էր Դավիթ։ Եվ բռնկվեց պատրիարքի դեմ մի կատաղի անբավականություն։

Խամսեցու այս արարքները լսելուց հետո Դավիթ կաթողիկոսն այլևս անկարելի համարեց հանդուրժելի վերաբերմունք պահպանելը դեպի իր անողոք թշնամին և մի շրջաբերական կոնդակով (1802, օգոստոս), բանադրեց նրան ամենախիստ կերպով։ Թվելով պատրիարքի խռովահույզ գործերն ու խիստ հալածանքները, կաթողիկոսական կոնդակն ասում էր. «Ուստի՝ մեք վասն այսքան և այսչափ եղեռնագործութեանց նորին, ընդ բանիւ արարեալ յկարգաղերծն, և աստուածային սրով ընդ մէջ հատեալ զդա՝ որոշեցաք իմիաբանութենէ սրբոյ Աթոռոյս և ի բանաւոր հօտից Քրիստոսի, և զնզովս և զանէծս կարդացեալ ի գլուխ անզգամին առաջի սրբոյ և սարսափելւոյ սեղանոյս Քրիստոսաէջի հանդերձ բոլոր միաբանութեամբ և հոգևորական դասուք՝ հատուկ ի բաց իբրև զնեխեալ և զապականարար անդամ յամբողջ անդամոյդ Քրիստոսի, և բարձրու հրամանաւ սրբոյ և աստուածարեակի Աթոռոյս, և հայրապետական իշխանութեամբս մերով ըստ հրամանին Քրիստոսի և ըստ արդար իրաւացն Աստուծոյ կապեցաք անլոյծ կապանօք և բանադրեցաք զանիծեցեալդ յԱստուծոյ զչէք և զպիղծ Գրիգոր չպատրիարքդ Պօլսոյ ի յերկինս և ի յերկրի, և մերկացուցաք զդա յաստուածային սուրբ շնորհաց՝ ի կարգաց և յաստիճանաց և եդիցի նզովեալ և անիծեալ յԱստուծոյ, յամենայն սրբոց նորին և ի մէնջ»[1]։

Այս բանադրանքը գալիս էր յուղ ածելու բորբոքված բոցերի վրա։ Ազդանշանը տրված էր։ Դավթի կուսակցությունը հանդես էր հանում մի ուժեղ կազմակերպություն՝ ստեղծված դրությունը լավագույն կերպով օգտագործելու համար։ Այս ուղղությամբ խոշոր գործ էր կատարում ոչ միայն ինքը՝ Դավիթը, այլև նրա հովանավոր Մահմադ խանը, որ իր առաջնակարգ պաշտոնյաներից մեկին ուղարկեց Թուրքաց մայրաքաղաքը՝ համոզելու համար Բ. Դուռը, որ նա վերստին հաստատե Դավթին։ Բայց դրանից ավելի ուշագրավ է այն դերը, որ բռնեց Ռուսաց դիվանագիտությունը։ Ըստ երևույթին, այն օրվանից, երբ Դանիել կաթողիկոսն արժանացել էր Ալեքսանդր կայսրի առանձին հովանավորության, Կ. Պոլսի ռուսական դեսպանության համար էլ, ինչպես և ամեն մի ռուսական հիմնարկության համար, Դավիթը պիտի համարվեր կեղծ կաթողիկոս և ռուսական դիվանագիտության ամբողջ ուժը պիտի այժմ ուղղվեր Դանիելի պաշտպանության համար, ինչպես հույս ունեին թե՛ ինքը՝ Բագրևանդի կաթողիկոսը և թե՛ նրա կողմնակիցները։ Բայց այսպես չեղավ. Դանիելին կաթողիկոս հաստատող կայսերական հրովարտակը Կ. Պոլիս հասնելուց հետո էլ դեսպանատան ծառայության մեջ մնալ շարունակեց Գևորգ Աղայեկյանը, Դավթի ամենաջերմեռանդ կողմնակիցը, որին այնուհետև էլ չէր արգելվում նույն ազդեցիկ և կարևոր դերը խաղալ Դավթի պաշտպանության գործում։ Բացի դրանից, դեսպան Տամարան մտերմական հարաբերություններով կապ-

1 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Զ., եր. 568—569։

ված էր Դավիթ կաթողիկոսի հետ, ստանում էր նրանից նամակներ, ինքն էլ գրում էր նրան, և այս մտերմական հարաբերություններից նա չհրաժարվեց և այն ժամանակ, երբ նրա կառավարությունն Անդրկովկասում ամեն ջանք գործ էր դնում Դավթին կաթողիկոսական գահից հեռացնելու համար։ Մեր ձեռքին գտնված փաստաթղթերը չեն թողնում և ոչ մի կասկած, որ Կ. Պոլսի ռուսական դեսպանությունը Դավիթ-դանիելյան շփոթի այս շրջանի մեջ վարում էր մի քաղաքականություն, բոլորովին ներհակ այն քաղաքականությանը, որ վարվում էր Թիֆլիսում, և այս, իհարկե, ոչ առանց նույն ռուս կառավարության գիտության։

Այսպես, Դավիթ կաթողիկոսը գրում էր (1803 թ., հունիս) Տամարային. «Զի յառաջ քան զայս բազմիցս գրեալ եմ ձերդ պատուականութեան զմեր անցսն, և զսրբոյ Աթոռոյս և զմիաբանից որպիսութիւնսն և զնախանձոտաց զրաբանութիւնս զմէնջ զորս և ձեռամբ հաւատարմաց մերոց յղեալ առ մեզ. որպէս զվերջինն ընդ Ստեփաննոս արքեպիսկոպոսին յղեցաք այդր. և յուսամք զի լիապէս տեղեկացեալ էք զգրուածսն մեր և գիտեցեալ զչար արարմունս չարասիրաց, զորս ոչ երկրորդեմ, նոյնպես և ի ձերդ գերազանցութեանց ունիմք ընկալեալ քանիցս զսիրոյ և զբարեկամութեան թուղթս, բայց այժմ զայսքանս գրեմ, զի ճշմարտութիւնն գոլով յաղթօղ՝ իբրև զարեգակն բացերևապես ունի փայլել Աստուծով հուպ ընդ հուպ...։ Բայց այսու համառօտ գրով շնորհակալիմք մեք ի բոլոր սրտէ զամենայն ատուրս մերոց զձերդ բարեխաւութեանց և ձեռնտուութեանց ցուցելոց հանապազ մեզ և մերայնոցն, որք յայտր են և չեմք մոռացեալ զայնս. այլ միշտ ի մտի ունենալով զպատուական անուն ձեր, զմարդասեր գործս ձեր և ի հոգւոց իմ անցրելի տպաւորեալ զհաւատարմութիւնդ և զկատարեալ բարեկամութիւնդ զորս առաւելապես ցուցեր և ցուցանես մերս անարժանութեան, պարտաւորս զիս վարկանիմ օրհնելով զանդին և զբարեացապարտ կեանս ձեր առաջի աստուծային սուրբ տաճարիս բոլոր միաբանութեամբ. ի վերջոյ խնդրեմ ի ձերդ գերազանցութենէ զամենայն զբանս ննդաւորաց և խռովարարաց անպիտան համարեալ՝ ի սէրդ ճշմարիտ և ի բարեկամութիւնդ կատարեալ հաստատուն կացջիք. և մի՛ մոռասջիք զնուաստութիւն մեր, այլ սիրով սրտիւ և բանիւ, և երբեմն գրով՝ ևս եթէ կարելի է, ընդ մեզ միակցեալ և վշտապատ սիրտ մեր մխիթարեալ, բանից և գործոց մերոց օգնական լինիջիք որպես յառաջնումն և Ստեփաննոս արքեպիսկոպոսի մերոյ ձեռնտու լեալ՝ ի վերադարձուցանել առ մեզ փութապջիք աւետալիր գրովք հանդարտեցուցանելով զխռովութիւն քաղաքիդ»[1]։

Հետագա դեպքերը ցույց են տալիս, որ ռուսաց դեսպանը հենց այս հրահանգներով էլ գործել սկսեց Դավթի կողմնակիցների հետ միասին։ Նորից հանդես եկավ կաշառքը, որից թելադրված թուրքաց կառավարությունը պաշտոնանկ արավ Գրիգոր Խամսեցի պատրիարքին և նորից պատրիարք հաստատեց Հովհաննես Զամաչրճյանին, որ աքսորված էր Թոքատ։ Մինչև նրա գալը փոխանորդ նշանակվեց Անդրեաս արքեպիսկոպոսը, Դավթի մոլի կողմնակիցներից մեկը, որ իսկույն հալածանք սկսեց դանիելականների դեմ։ Այս հեղաշրջումը տեղի էր ունենում 1802 թ. հոկտեմբերի կեսին։ Դանիել կաթողիկոսը ռուսաց պաշտոնյաներին ուղղած իր բողոքավոր գրությունների մեջ բացահայտ կերպով մեղադրում էր Կ. Պոլսի ռուսական դեսպանատանը իբրև դավթական դավաճանության գլխավոր օջախ. մեղադրում էր ոչ միայն Գեորգ Աղայեկյանին, այլև դեսպան Տամարային։ Այսպես, նա գրում է իշխան Ցիցիանովին. «Եւ այսպես դեմ եղեալ, կայսերական մեծ ողորմութեանն որ

¹ «Դիւան հայոց պատմութեան», գիրք Զ., եր. 431—432։

առ մեզ՝ առաքեցին ի Կոստանդինուպօլիս խանն Երևանու զմի պարսիկ նախարար իւր. և Դաւիթ զՍտեփաննոս եպիսկոպոս Թիֆլիսեցի՝ որք գնացեալ մտին՝ պարսիկն ընդ թևօք ղափու քեահեասուն Իւսուֆ փաշայ վէզիրի և յիշեալ եպիսկոպոսն ընդ թևօք Տամարով դեսպանի բնակեալ ի սենեակ Գէորգ Աղայեկովի Ղրիմեցւոյ»[1]։ Իսկ Հովակիմ Լազարյանին գրած նամակի մեջ Ուչքիլիսեի կաթողիկոսը դառնությամբ ասում էր. «Քանզի պատճառաւ Գրիգոր վարդապետ նեստրագործին՝ հիմնայատակ եղև սուրբ Աթոռն, և ազգն հայոց սպանաւ՝ ի սիրտ և յոգի Մահմեդ խանի և Դաւիթ իբր եպիսկոպոսի ինքնահաճ և կամապաշտ արարմամբն. և իշխանքն Պօլսոյ անկերպարան եղեն էլչի Տամարովին անաստուածութեամբն մեռեալ և տկարացեալ ամենայնի արդ երկիցս անգամ. և այժմ յահէ օրհնեալ կայսրութեանդ, ախտաւորութիւն Տամարովին տկարացոյց զամենայնսն և յետս կացին ազգն ամենայն ի Սրբոյ Աթոռոյն իբրև ոչ ի նմանէ ծնեալ»[2]։ Դանիելը նույնիսկ Ալեքսանդր կայսրից էլ չծածկեց իր մեղադրանքը և գրում էր նրան առանց քաշվելու. իր ամենախոնարհ ստրկաբան նամակներից մեկում նա նույնիսկ համարձակվում էր ասել, թե կայսերական կառավարությունն անգամ անտես առավ իր խնդրվածքը, որ դեսպան Տամարային հրամայվի քաղցր վերաբերվել Գրիգոր Խամսեցի պատրիարքին։ Տամարան ոչ միայն այդպիսի բան չարավ, այլև համառ և երկարատև պաշտպանություն ցույց տվեց Դավթի կողմնակիցներին։ Այսպես, Զմյուռնիայի առաջնորդ Մարտիրոս եպիսկոպոսն իր եռանդուն գործունեությամբ հզորապես պաշտպանում էր Դավթին և սաստիկ վնասում էր դանիելականներին, ուստի Գրիգոր պատրիարքը Բ. Դռնից հրաման հանեց, որ այդ եպիսկոպոսին կապեն և ուղարկեն Դանիելին, սակայն Տամարան վեց ամիս շարունակ պաշտպանեց Մարտիրոսին և թույլ չտվեց, որ գործադրվի թուրք կառավարության հրամանը։ Եվ Դանիելը գանգատվում էր իր ողորմած թագավորին. «Այլ արդ, տեր թագաւոր, զառաջինն թագաւոր հայոց՝ խնդրեաց ի Քրիստոսէ և ընկալաւ զոր հայցերն՝ իսկ այժմ աթոռ Քրիստոսի սուրբ էջմիածին հանդերձ տառապեալ միաբանութեամբ իւրով և ինչ որ շնորհօք ողորմութեան ձերոյ ստացայ զաթոռ պատրիարքութեան նորա ի սուրբ թագաւորութենէ ձեր խնդրեաց զայցելութիւն իւր. և ձեր է ողորմութիւն թէ առնուցու, զոր խնդրէ։ Սակայն մի լիցի բանս ընդդէմ մեծութեան ձերոյ սուրբ թագաւոր՝ զի մինչ ողորմութեամբ ձերով ստացաք զհրովարտակ ի տէրութենէ օսմանցւոց, ասոխն մեր Մարտիրոս եպիսկոպոս՝ որ ի յԶմիւռնոյ գնացեալ յարեցաւ առ ոմանս ի մերազնէից, որք ունէին զնումս ի դեսպանէ մեծութեան ձերոյ... Եւ առ այս էր, զի խնդրեցաք յամէնաողորմ աթոռոյ ձեր՝ հրամայել. Տամարով դեսպանին քաղցր լինել առ Գրիգոր պատրիարքն. բայց թէ զիարդ, ոչ գիտեմք՝ այլ ազգն մեր և յիշեալ պատրիարքն խնդրեցին ի տէրութենէն Հագարացւոց, յատուկ հրովարտակաւ առաքել զնոսա (Մարտիրոս և Ստեփաննոս եպիսկոպոսներին) առ մեզ, և պաշտպանեաց զնա յիշեալ դեսպանն ի մայիսի ամսոյն մինչև ցայսօր»[3]։

Այսքան փաստերն կասկած չեն թողնում, որ ռուսաց քաղաքականությանը միանգամայն ձեռնտու էր այն ընթացքը, որ ստացել էր Դավիթ-դանիելյան վեճը 1802-ի աշնանը։ Առարկություն չի կարելի անել, թե դեսպան Տամարան անձնական քաղաքականություն էր վարում, բացարձակ պաշտպանություն ցույց տալով դավթականներին։ Էջմիածնի կաթողիկոսական հար-

¹ «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ե., եր. 310։

² Անդ, եր. 356։

³ Անդ., եր. 290—291։

ջը չափազանց քաղաքական նշանակություն ուներ Ռուսաստանի համար, և չի կարելի թույլ տալ այնպիսի մի միտք, թե մի մեծ պետության դեսպան կարող էր այդքան կարևոր հարցի մեջ իր անձնական տրամադրություններով առաջնորդվել, չունենալով իր կառավարության որոշ հրահանգները, բայց մանավանդ, հակառակվելով նրա տրամադրություններին։ Որ այս այսպես էր, որ դեսպան Տամարան Կ. Պոլսում հաստատված պաշտոնական ռուս քաղաքականության հրահանգներն էր կատարում դավթականների հետ միասին գործելով, այս մեզ ուսուցանում է մի շատ կարևոր փաստ։ Դեսպան Տամարան արձակվեց Կ. Պոլսի դեսպան պաշտոնից, բայց այս հանգամանքը ոչինչ փոփոխություն չմտցրեց ռուսական դեսպանության բռնած դիրքի մեջ։ Գեորգ Աղայեկյանը մնաց իր դիրքի և պաշտոնի մեջ և շարունակեց իր գործունեությունը հօգուտ Դավթի, իսկ նոր դեսպան Իտալինսկին Տամարայի նման էր վերաբերվում Դավթին։ Պոլսեցի դավթականներից մեկը գրում էր. (1803 թ. մարտի 3) «Դեսպան Տամարովը բոխվեցավ (փոխվեցավ) տեղը նոր Թեսպան եկավ, շատ լավ մարդ է, մեր կողմը կդառնի»[1]։ Այնպես որ Դավիթ կաթողիկոսն այդ նոր դեսպանին օրհնության կոնդակ գրեց, շնորհավորեց նրա ժամանումը Թուրքաց մայրաքաղաք և խնդրում էր, որ պաշտպանե իրեն և իր կուսակիցներին[2]։ Որ Տամարայի գործողության եղանակը Պետերբուրգի կառավարության համար անցանկալի չէր, ոչ մանավանդ դատապարտելի, ցույց է տալիս այն հանգամանքը, որ Դավիթը նրան էր դիմում և դեսպանական պաշտոնը թողնելուց հետո և խնդրում էր, որ նա Պետերբուրգում միջնորդություններ անե Ալեքսանդր կայսրին, նկարագրելով նրա առջև իրերի իսկական դրությունը և հերքելով իր, Դավթի, հակառակորդների զրպարտությունները[3]։

Եվ այսպես, Երևանում տեղ պատրաստել Դանիելի համար, իսկ Կ. Պոլսում՝ Դավթի համար. այսպես էր ռուսաց դիվանագիտական խաղը, որի նպատակն էր բարդություն առաջացնել պարսկական գործերի մեջ և զինված միջամտության ուղիներ հարթել նվաճողական դիտումներով։ Թե Դանիելը և թե Դավիթը բացի համարժեք գործիքներ լինելուց՝ ուրիշ նշանակություն ունենալ ռուսական դիվանագիտության տեսակետից չէին կարող։ Եվ իսկապես, ռուսական դեսպանության աջակցությամբ ստեղծված բարդությունը շատ լուրջ էր։ Պատրիարքական տեղապահ Անդրեաս եպիսկոպոսն անխնա բանել և ծեծել էր տալիս դանիելականներին, բանտի, աքսորի և թիարանի ծառայության էր մատնում նրանց։ Նոյեմբերի կեսին Հովհաննես Ճամաշրճյանը վերադարձավ աքսորից և, նորից հագնելով պատրիարքական կապան, կարգադրեց, որ պատարագի մեջ հիշատակվի Դավթի անունը, սաստկացրեց հալածանքները դանիելականների դեմ[4] և միանգամայն ընդմիշտ դավիթ-դանիելյան վեճին վերջ տալու համար ձեռք առավ մի շարք կտրուկ միջոցներ։ Նրա միջնորդությամբ Թուրքաց կառավարությունը նորից հաստատում էր Դավթին կաթողիկոսական պաշտոնի մեջ, իսկ մի ուրիշ հրամանագրով էլ արտոնում էր նրան աքսորել Դանիելին և նրա կողմնակիցներին ուր հարկավոր կհամարի։ Այս հրամանի հիման վրա Գրիգոր Խամսեցի պատրիարքն ուղարկվում էր Բայազետ՝ Դանիելի և նրա հետ եղած կողմնակիցների հետ էջմիածին աքսորելու համար։ Այսպիսով, Դավթի ձեռքն էին հանձնվում նրա բոլոր հակառակորդները։ Իսկ ի լրումն այդ բոլոր միջոցների՝ Կ. Պոլսում

1 «Դիվան հայոց պատմության», գիրք Ե., եր. 330։
2 «Դիվան հայոց պատմության» գիրք Է, Թիֆլիս, 1909, եր. 362։
3 Անդ, եր. 179։
4 Ա. Պերպերեան, Պատմութիւն հայոց, եր. 49։

կազմվում էր մի մեծ համախոսական, որ ծածկվում էր հազարավոր կնիքներով և ստորագրություններով և նորից վերահաստատում էր, թե Դավիթն է Ամենայն Հայոց կաթողիկոսը և միայն նրան է ճանաչում Կ. Պոլսի հայ ժողովուրդը[1]։

Դավիթն, ստանալով տեղեկություններ այս բոլոր անցուդարձի մասին, այլևս ժամանակ չի կորցնում և Մահմադ խանի հետ միասին մարդիկ է ուղարկում Բայազետ՝ Դանիելին և նրա մոտ եղածներին էջմիածին բերելու համար։ Դանիելը փորձում է դիմադրել, հենվելով այն հանգամանքի վրա, թե իրեն հաստատել է ռուսաց կայսրը։ Բայց այս հայտարարությունը նրան չի փրկում։ Բայազետի փաշան, ունենալով կարգադրություն Կ. Պոլսից, կատարում է Երևանի խանի պահանջը և Դանիելին բռնությամբ հանձնում է խանի մարդկանց։ Դանիելն իր կողմնակիցների հետ, որոնց մեջ էին Գրիգոր Խամսեցին և Ներսես Աշտարակեցին, տարվում է էջմիածին։ Պատմվում է, թե Դավիթը, կամենալով այս անգամ խաղաղասեր քաղաքականության միջոցը գործադրել, Դանիելին դիմավորելու համար ընդառաջ ուղարկեց Աբրահամ եպիսկոպոս Տաթևացուն, խոստանալով նրա միջոցով քաղցրությամբ վարվել իր ձեռքը հանձնված հակառակորդի հետ և կաթողիկոսական պատիվներով պահել նրան էջմիածնում, միայն թե վերացվի խռովությունը։ Սակայն երբ Դանիելն իր հետևորդների հետ հասնում է Ղազարապատի դռներին, Դավթի սպասավորներն ավազակորեն հարձակվում են նրանց վրա, խլում են նրանց զենքերը, ժամացույցները և այլն։ Աբրահամ Տաթևացին այս առիթով իր վրդովմունքն է հայտնում Դավթին՝ համարելով այդ վարմունքը տված խոսքի դրժում։ Այն ժամանակ Դավիթը գնում է Դանիելի մոտ. «Ի Ներսի Ղազարապատ կոչեցեալ տեղւոջ,— ասում է պատմագիրը,— ուր իջևանեալն էր նա. և անդ ողջունեալ զնա քաղցրութեամբ և զգալուստն շնորհաւորեալ՝ խօսել սկսաւ և ասէ. «Որ ինչ եղեն՝ եղև. մի ինչ յայսմ հետէ վշտացուսցուք զմիմեանս, զի արք եղբայրք եմք երկոքեանս. եթէ ես և եթէ դու՝ Աթոռոյն եմք որդիք։ ...Ուստի և արժան է մեզ հանգչել ի գիրկ ծնողիս մերոյ, վարել ընդ իրեարս եղբայրաբար՝ աշխատեալք մի քան զմի յԱթոռոյս պայծառութիւն. և զուր է մեզ մաշել զկեանս յերկիւղ՝ ի կասկած՝ և ի անոտի հոգս անցաւորաց. զի ոչ քեզ պատառ մի հացի պակաս էր, և ոչ ինձ ումպ մի ջրոյ»[2]։ Ինքը՝ Դավիթն էլ մոտավորապես այս կերպ է նկարագրում իր ընդունելությունը, երբ Դանիելը նոյեմբերի 26-ին հասավ էջմիածին. «Եւ մեք առընկալաք զնա սիրով և գթով, և զանրեալսն անցեալ վարկուցեալ եդաք ի յատուկ տեղւոջ առ ի նստել հոգալով զամենայն զկարեւոր պիտոյս նորա, և զգեցուցանելով զվայելուչ հանդերձս յոտից մինչև ցգլուխ, և պատուական փիլոնաւ ևս խելայազարդելով։ Եւ ի սուրբ եկեղեցւոջն ևս կանգնեցուցաք ի դաս, ի վերայ յատուկ օթոցի առաջի սրբոյ իջման տեղւոյն յեցեալ ի քարն որ կայ արձանացեալ ի դիմս սրբոյ սեղանոյն յաջ կողմն կաթուղիկոսարանին։ Այսպէս ի յատուկ սէր վերընկալեալ զնա կամիմք ըստ ամենայն պատուել և շահել և մխիթարել որպէս արժանի է»[3]։

Այս ուշադրությունը, սակայն, չէր նշանակում, թե Դավիթը միանգամայն մոռանում էր ամեն վեճ և ոխ, որ նա այլևս կասկած չուներ, թե Դանիելը կարող է որևէ վնաս պատճառել նրան, ինչպես չէր նշանակում նաև այն, թե Դանիելն էլ, որքան հանդարտ ու խաղաղասեր լիներ նրա բնավորությունը, միանգամից կթողնե ամեն մի փառասիրական միտք կամ այլևս գործից չի դառնա

1 «Դիվան հայոց պատմության», գիրք Ե., եր. 503—513։
2 Մ. Մսերեան, Պատմ. կաթ. էջմիածնի, եր. 56—57։
3 «Դիվան հայոց պատմության», գիրք Զ., եր. 673։

իրեն շրջապատող փառասերների ձեռքին, այլ, համարելով իր գործը տանուլ տված, կրավորականաբար էջմիածնի պարզ միաբան դիրքով իր ոխերիմ թշնամու անմիջական հրամանի տակ։ Երկու վիճող կողմերն էլ չափազանց շատ էին հեռու գնացել, և պահանջել երկուսից էլ անձնազոհություն անկարելի էր։ Մինչդեռ Դավիթն իր գրությունների մեջ ամեն կերպ աշխատում էր մեղմ ցույց տալ Դանիելի վերաբերմամբ իր գործադրած ռեժիմը, Դանիելն, ընդհակառակը, ընդունում էր լալկան գանգատավորի դիրք, աղաղակում էր Դավթի գործադրած բռնությունների մասին, ցույց տալով իրեն և իր կողմնակիցներին անմռունչ զոհեր գազանաբարո բռնավորի ձեռին։ «Գնեցին (Մահմադ խանն ու Դավիթը) զմեզ ի նմանէ (Բայազետի փաշայից),— գրում է նա,— իբրև զգերի անարգ և բերեալ ի սուրբ աթոռս եդին ի դիպահոջ անտես ի մարդկանէ»[1]։ Եվ ծերունի կաթողիկոսի լալկանությունը մեծագույն մասամբ իրավացի էր։ Հաղթությունը Դավթին չափավորության սահմաններից դուրս հանեց։ Չափազանց խեղճ ու վախկոտ էր Դանիելը, և այս արդեն բավական էր, որ փառասեր, կամքի մեծ ուժով օժտված Դավիթը գործադրեր նրա վրա նույնիսկ աններելի բռնություն։ Այսպես, դեկտեմբերի 31-ին (1802) նա հարկադրեց իր հակառակորդին ստորագրել մի հրաժարական, որի յուրաքանչյուր բառը ցույց է տալիս, թե նա Դավթին և միմիայն նրան է պատկանում, և եթե նրա տակ դրված է Դանիելի ստորագրությունը, այդ միայն մահվան երկյուղի թելադրությամբ։ Այդ հրաժարականը չափազանց կարևոր է պայքարող կողմերը բնորոշելու համար։ Դավիթը նրա մեջ հանդես է գալիս իբրև անողոք, խստապահանջ մի տեր, որ իր ձեռքն ընկած խեղճին հարկադրում է ստրկանալ ցածաբար, մի կտոր կյանք վայելելու համար, ինքն իրեն հանցավոր հրապարակել և զրկել մարդկային իրավունքներից։ Ահա այդ տխուր փաստաթուղթը։

«Յետ վախճանի Տեառն Ղուկասու երանեալ սրբազան կաթողիկոսին՝ մինչ էի յԱթոռ Պատրիարքութեանն Կոստանդնուպօլսի Դանիէլ արքեպիսկոպոսս՝ բոլոր միաբանք սրբոյ էջմիածնի և մերձակայ հայոց հասարակութիւնն բազմակնիք մահուէրօք յառկացուցեալ էին ի կաթողիկոսութիւն ամենայն հայոց, զիս, զՅովսէփ արքեպիսկոպոսն կողմանցն հիւսիսոյ, և զնուիրակն նոյն կողմանց զԵփրեմ արքեպիսկոպոսն. սակայն Յովսէփն յառաջեալ ի կողմանցն հիւսիսոյ աքսորեալ ետ զմեզ և յինքն կորզեաց զայն կոչումն. և իբրև մեք ազատեալ ի յաքսորանց մերոց եկաք ի Թոխաթ քաղաք, նա ևս եկեալ ի Թիֆլիզ հանդիպի օրհասին մահու. և ի ժամ վախճանելոյն իւրոյ՝ կտակ աւանդէ յետ իւր լինել կաթողիկոս զՏէր Դաւիթ Սրբազանն. որ և զայն արձանագուցեալ հասարակութիւնն Թիֆլիզու քաղաքի, բազմակնիք մահուէրաւ գրեցին միաբանութեանն սրբոյ էջմիածնի որք և համաձայնեալ նոցա ըստ աղդեցութեանն Աստուծոյ օծին ի կաթուղիկոսութիւն ամենայն Հայոց զՏէր Դավթի Սրբազան Վեհապետն. և հաստատեցին զայն օծութիւն նորա տէրութիւնք օսմանցւոց և Պարսից հրովարտակօք իւրեանց. և զազգն Հայոց բազմակնիք մահուէրօք հաճութեամբ իւրեանց։ Սակայն և մեք քանզի յառաջագոյն կոչեցեալ էաք յայն կոչումն՝ դժդմնեալ ընդ վերնածիր օծութիւն նորա ջանացաք լինել հակառակաթոռն նմա. որ և եկեալ ի Երեք վանքն որ ի Բագրևանդ գաւառ ներհակ Սրբազան Վեհապետիս և սրբոյ էջմիածնի, օծաք անդէն կաթուղիկոս և օրհնեաց ևս զՄեռոն։

Այլ սակայն զղջացեալ հետևաբար ընդ հակառակ արարսն մեր կատարեալ զղջմամբ դիմեցաք ի սուրբ էջմիածին ի համբոյր Քրիստոսաէջ սրբոյ տեղւոյն և մաքուր աջայ տեառն Դավիթ եռերանեալ սրբազան կաթողիկոսին հանդերձ մեղայիւ։ Քանզի ծանեաք զմեզ յանցաւորս ընդդէմ Աթոռոյն և յիշեալ աստուածընտիր սրբազան վեհապետին. և այսու յայտարարական գրութեամբս յայտնելով զիմ զջերմեռանդական զղջումն՝ յայտ առնեմ և զայնս թէև օծանիլն իմ անդ և օրհնելս զմեռոն՝ են ընդդէմ սրբոյ Աթոռոյն և արժանընտիր օծելոյն Աստուծոյ, և նախնի հարցն կանոնաց՝ վասն որոյ և անընդունակք։ Քանզի Երեք վանքն որ ի Բագրևանդ՝ չէր աթոռ ընական, և ես յանդգնեալ կամեցայ առնել զայն աթոռ ընդդէմ սուրբ էջմիածնի. ուստի և ահա ի զղջանալս իմ եղծանելով զայն ամենայն, աւանդեմ այսու յայտարարական գրովս իմով, թէ յայսմ հետէ որ ոք զիս՝ և զարարս իմ պատճառ առեալ վերստին յօժարեսցի օծանիլ անդ կաթողիկոս՝ նզովեալ եղիցին օծեալն և օծանողքն։ Այլ և այսու ամենայնիւ յայտ առնեմ, թէ ես լաւ համարեցա յայսմ հետէ միայն պաշտպանելով զկեանս խոկալ զփրկութենէ հոգւոյ ըստ մարգարէին. վասն որոյ և խոստացա զի ոչ միայն ի ժամանակս փափագելի կենաց. սրբազան Վեհապետին մերում այլ թէ նաև կեանք մեր լիցին երկարագոյն քան զպատուական կեանս նորին, չլինիցեմ ի յամենայն կեանս իմ ցանկացող կոչման կաթողիկոսական. որ թէև այլքն զիս ստիպեսցեն՝ ո՛չ առնուցում յանձն. և որպէս Սիմեոն Ղուկաս կաթուղիկոսունքն սպասեն փառացն Քրիստոսի ի յարութեանն հասարակաց, նոյնպէս և ես ակնկալեալ այցելութեանն Քրիստոսի ի յարութեանն արդարոց ցանկամ քաւութեան յանցանացս զորս յանցուցեալ եմ Սրբոյ էջմիածնի լուսանկար Աթոռոյն, և օծելոյն Աստուծոյ Դավիթ քրիստոսատիպ Սրբազան կաթուղիկոսին. և այս ի կատարեալ միամտութիւն նորին Սրբազանութեանն փակեմ նզովիւք զորս գրեցի ի ծանուցումն ընդդեմ Սրբոյ էջմիածնի և գերընտիր Սրբազան Վեհապետին գործոցս վկայութեամբ Աստուծոյ և ճշմարտութեամբ Ամենասուրբ Երրորդութեանն։ Որոց վասն կատարեալ զղջմամբ առեմ մեղայ Աստուծոյ և Սրբոյ էջմիածնի և գերագահ արժանաընտիր երջանկաւէտ Աստուածարեալ Սրբազան կաթուղիկոսի ամենայն Հայոց. և խնդրեմ ինձ զներումն՝ առ ի նոցունց բաւչարչար զօրութենէ. վկայութեամբ ստորակնքող եպիսկոպոսաց։ Գրեցի իմով ձեռամբ Դանիէլ արքեպիսկոպոս բնիկ միաբան Սրբոյ էջմիածնի։ Գրեցաւ ի ՌՄԾԱ (=1802) թուոջս և ի դեկտեմբերի ԼԱ (31). ի Բարձրագահ Աթոռս Սուրբ էջմիածին»։ (Հետևում են 12 վկա արքեպիսկոպոսների ստորագրությունները)[1]։

Եթե Դավիթ կաթողիկոսին հաջողված լիներ Դանիելի այս հրաժարականը նրա համար ավելի պատվավոր և բնական ձևի մեջ դնել, այն ժամանակ նա թե՛ հրաժարման փաստի և թե՛ Կ. Պոլսից իր ստացած մեծ հանրագրի զորությամբ կարող էր իրեն օգտին լուծած համարել տալ կաթողիկոսական հարցը։ Բայց իր առջև չոքեցնելով իր ոխերիմ թշնամուն, հարկադրելով նրան անվանել իրեն «Քրիստոսատիպ», նա միայն Դանիելի անչափ թուլամորթ ողորմելիությունը չէր հրապարակ հանում գուցե մի ավելորդ անգամ ևս, այլև վատ բան էր անում և իր համար։ Ոչ ոքի համար ոչինչ կասկած չէր կարող մնալ, թե այդ ստրկական ինքնամտրակումը կորզված է մի դժբախտ մարդուց ահի, մահվան սպառնալիքի ազդեցության տակ։ Դավիթն ինքն էր բարձրացնում և ուժեղացնում իր թուլամորթ զոհին, դարձնելով նրան բռնության անպաշտպան առարկա, նահատակ։ Այս մի մեծ սխալ էր, որ Դավիթը մտցնում էր իր քաղաքականության մեջ, սկսած այն օրից, երբ նրան էր հանձնվում Դանիելը։ Որքան և աչալուրջ լիներ նրա հաստատած հսկողությունը, Դանիելը, այնուամենայնիվ, բոլորովին կտրված չէր դրսի աշխարհի հետ հաղորդակցություն ունենալու հնարավորությունից, մանավանդ որ նրա հետ էին նրա կողմնակիցները, որոնք արդեն ամեն տեղ թղթեր էին հասցնում, նկարագրելով նրանց մեջ, որ Դանիելը բանտարկ-

[1] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ե, եր. 310—311։

[1] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ե, եր. 297—299։

ված է և ենթարկված Դավթի բռնություններին[1]: Այս հաղորդակցական հարմարությունից օգտվելով, Դանիելն իր հրաժարականը ստորագրելուց հազիվ մի օր անցած, թուղթ էր ուղարկում Թիֆլիս, որ հավատ չընծայեն իր ստորագրածին, քանի որ նա այդպես արել է ոչ միայն իրեն, այլև իր կողմնակիցներին մահից ազատելու համար: Թեև միանգամայն անհավանական էր, թե Դավիթն իսկապես կարող էր սպանությունների միջոցին դիմել, բայց դանիելականները հավատացող ձևացան, որովհետև այդպես էր ձեռնտու նրանց: Ամենալավ առիթն ընծայվում էր ռուսաց զորքերի նոր հրամանատարին, որ Կովկաս գալուն պես պահանջում էր Երևանի Մահմադ խանից ազատել Դանիելին բանտից՝ սպառնալով, հակառակ դեպքում, զենքի ուժ գործադրել նրա դեմ[2]: Ահա ինչի համար էր հարկավոր եղել ռուսաց դիվանագիտության Կ. Պոլսի միջոցով քշել Դանիել կաթողիկոսին դեպի Դավթի և նրա հովանավոր խանի բանտը:

5. Իշխան Ցիցիանով: Մենք տեսանք, որ Ալեքսանդր կայսրը, կամենալով իմանալ, թե արդյոք Վրաստանն ինքն է կամենում միացված լինել Ռուսաստանին, հրամայեց գեներալ Կնորինգին գնալ Թիֆլիս, անձամբ տեղեկանալ վրաց ժողովրդի տրամադրություններին, քննել առհասարակ երկրի բոլոր հանգամանքները և այս բոլորի մասին անձամբ զեկուցում ներկայացնել իրեն: Կատարելով այդ հրամանը, Կնորինգը Մոզդոկից ճանապարհորդեց Թիֆլիս, երեք շաբաթ մնաց այդտեղ, կանչեց իր մոտ իշխաններին և գյուղական տանուտերերին, խոսեց նրանց հետ և իր լսածներից իր ուզած եզրակացությունները հանեց: Այսպիսի նախնական-բյուրոկրատիկ ձևով էր իմացվում մի ամբողջ ժողովրդի կամքը և այս միջոցով էր Ալեքսանդր կայսրն ուզում հանգստացնել իր ազատամտության վարանումները, թե արդյոք բռնություն չէ՞ գործում ինքը, միացնելով իր կալվածներին մի ամբողջ երկիր՝ առանց նրա ժողովրդի արտահայտած կամքի: Չնայած, սակայն, և այս՝ բոլորովին անբավարար ձևին, Կնորինգը, ինչպես ինքն էր գրում, չէր համարձակվում ասել, թե Վրաստանի ամբողջ ազնվականությունն է կամենում, որ երկիրը միացվի Ռուսաստանին անպայմանորեն և անվերապահորեն: Առնվազն, ասում էր գեներալն իր զեկուցագրի մեջ, ազնվականության կես մասը կկամենար, որ պահվի վրաց թագավորությունը: Այս նշանակում էր, թե վրացի ժողովրդի ցանկությունն էր պահպանել իր ազգային ինքնավար իշխանությունը, բայց գտնվել Ռուսաստանի հովանավորության տակ, կազմելով ռուսական պետության մի մասը: Այսպես էր եղել Վրաստանը դարերի ընթացքում և Պարսկաստանի վերաբերմամբ: Բայց այս անգամ երկրի դժբախտությունն այն էր, որ նրա մեջ միություն և համաձայնություն չկար: Կնորինգը գտավ այնտեղ կատարյալ անիշխանություն: Թագաժառանգության դժբախտ հարցը շարունակում էր երկպառակության և կռիվների մեջ պահել ամբողջ արքայական ընտանիքը: Ոչ ոք չէր մտածում որևէ զիջողություն անել, երկու կողմերն էլ (Հերակլի և Գեորգիի ժառանգները) պատրաստվում էին ազգամիջյան անխնա պատերազմի, և ամեն մեկն աշխատում էր դրսի թշնամի տարրերից (օրինակ, դաղստանցիներից և թուրք խանություններից) դաշնակիցներ գտնել՝ հակառակ կողմի վրա հարձակվելու համար: Եվ Կնորինգն ասում էր, թե հենց որ ռուսական զորքի վերջին վաշտերը կհեռանան Վրաստանից, այնտեղ կբորբոքվի ներքին արյունահեղ պայքարը: Որքան երկիրն անզոր էր ներքին թշնամիների դեմ, այնքան և դեռ էլ ավելի, նա թույլ և ան-

[1] Դանիելի յուրաքանչյուր քայլը ղեկավարող Ներսես վարդապետ Աշտարակեցին նույնիսկ ծածուկ այբուբեն էր հնարել նամակագրությունների համար (տե՛ս Միքայելի «Ներսեսյան ծածկագիր» հոդվածը, «Արարատ» ամսագիր, էջմիածին, 1888, եր. 35—49):

[2] В. Потто, Утверждение русского владычества на Кавказе, т. I, Тифл., 1901, с. 52.

կարող էր արտաքին թշնամիների դիմաց: Ընդհանրապես Կնորինգն այնպիսի տրամադրություն էր անցկացնում իր զեկուցման մեջ, թե Ռուսաստանը պիտի կցե իրեն Վրաստանը:

Հարցը նորից հանձնվում է պետական խորհրդին: Եվ նորից կրկնվում էր անցյալը: Պետական խորհուրդը միանգամայն անհրաժեշտ էր գտնում Վրաստանի անպայման կցումը, իսկ Ալեքսանդրի մտերիմներից կազմված ոչ պաշտոնական հանձնաժողովն, ընդհակառակը, պնդում էր, թե պետք է հրաժարվել անվերապահ կցումի մտքից և միակ ձևը, որ հնարավոր էր համարում ընդունել Վրաստանի վերաբերմամբ, հայտարարում էր հովանավորությունը կամ, ուրիշ խոսքերով, ազգային ինքնավարությունը: Ալեքսանդրը երկար ժամանակ անվճռականության մեջ էր, չգիտեր, թե երկու հակառակ հոսանքներից որին հարի[1]: Վերջապես գերակշռեց ցարական իմպերիալիզմի ժառանգական զգացմունքը. կայսրն ընդունեց Պետական խորհրդի կարծիքը և 1801 թվի սեպտեմբերի 12-ին, երեք օր իր թագադրությունից առաջ, հրատարակեց վրաց ժողովրդին ուղղված մի հրովարտակ, որով հայտարարում էր Վրաստանը միացված Ռուսաստանին: Այդ հրովարտակը բավական երկարաբան էր, որովհետև կայսրը հարկավոր էր համարում բացատրել, թե իր արարքը մի պարզ նվաճողություն չէր, այլ մի դժբախտ երկրի ազատագրումն է նրա պատմական դառն ճակատագրից: Գաղափարական զեղզեղումներն առհասարակ միշտ պատրաստ են ցարական գրականության մեջ ոսկեզօծելու աշխարհակալական ամեն մի գործողություն, բայց Ալեքսանդրն իր այս հրովարտակի մեջ առանձնապես աչքի ընկնող փայլով էր տարել իր իմպերիալիստական գեղգեղանքները, և այս պատճառով էլ այդ հրովարտակը համարվում է և՛ հռչակավոր, և՛ զարմանալի: «Ձեր գրգռված հույսն,— ասում էր կայսրն ի միջի այլոց,— այս անգամ խաբված չի լինի: Ոչ թե ուժեր ավելացնելու համար, ո՛չ թե շահի համար, ո՛չ թե առանց այն էլ աշխարհի մեջ ամենաընդարձակ եղող կայսրության սահմաններն ընդարձակելու համար է, որ մենք վերցնում ենք վրաց թագավորության կառավարության լուծը, միայն արժանապատվությունը, միայն պատիվը և մարդկությունն են, որ դնում են մեզ վրա սրբազան պարտք լսել տանջվողների պաղատանքները և նրանց վիշտը վերացնելու համար հիմնել Վրաստանում մի կառավարություն, որ կկարողանար ամրապնդել արդարադատությունը, անձնական և կալվածական ապահովությունը և ամեն մեկին հայթայթել օրենքի պաշտպանությունը: Ուստի, ընտրելով մեր գեներալ լեյտենանտ Կնորինգին լինել կառավարչապետ ձեր մեջ, մենք նրան տվինք կատարյալ հրահանգներ բաց անելու այս կառավարությունը մեր անունից տրված մի առանձին հայտարարությամբ և ուժի ու գործողության մեջ դնել մեր գծած որոշումը, որի կատարման համար կցելով նաև ձեզանից իրենց արժանավորություններով և ընդհանուր վստահությամբ ընտրվածներին, հուսով ենք, որ դուք, հավատով վերաբերվելով այդ կառավարության, անկասկած ձեռք կբերեք նրա հովանու տակ նախ հանդարտություն և ապահովություն, ապա նաև բարեկեցություն և ընչավետություն: Ձեր երկրի բոլոր հարկերը մենք հրամայեցինք դարձնել ձեր օգտին և ինչ որ ավել կմնա վարչական ծախսերը կատարելուց հետո, գործածել քանդված քաղաքներն ու գյուղերը վերականգնելու համար: Ամեն մեկը կմնա իր դասակարգային արտոնությունների մեջ, ազատ կլինի իր հավատի պաշտամունքի մեջ, և նրա սեփականությունն անձեռնմխելի կլինի: ... Թող, ուրեմն, որ դուք էլ վերջապես ըմբռնեք բարի կառավարությունը և գինը, թող հաստատ-

[1] В. Потто, Утвержд. рус. влад. на Кавк., I, с.33.

վեն ձեր մեջ խաղաղությունը, արդարադատությունը, անձնական և կալվածական ինքնավստահությունը, թող վերանան ինքնագլխությունն ու դժնդակ կեղեքումները, թող ամեն մեկն դիմե իր և հասարակական լավագույն օգուտներին, ազատ և անարգել վարժվելով երկրագործության, արդյունաբերության, վաճառականության, ձեռարվեստների մեջ, ամենքին հավասարապես պաշտպանող օրենքի հովանու տակ։ Ձեր ընչասիրությունն ու բարօրությունը կլինեն ամենաախորժելի և միակ պարգևը մեզ համար»[1]։

Այս հրովարտակը հայտարարվեց Թիֆլիսում միայն հետևյալ տարին (1802), ապրիլի 12-ին։ Հատկապես այս օրվա համար Հյուսիսային Կովկասից Թիֆլիս եկավ Կնորինգը, բերելով իր հետ մի խումբ ռուս պաշտոնյաներ (չինովնիկ), որոնք այնուհետև պիտի լինեին Կովկասի ճակատագրի տնօրինողները։ Հրովարտակի հայտարարությունից մի ամիս չանցած, Կնորինգը հանդիսավոր կերպով բաց արավ ռուսական կառավարությունը Թիֆլիսում։ Այդ օրվանից հաստատվում էր չինովնիկական Ռուսաստանի տիրապետությունը, որ իսկույն ցույց տվեց իր անհրապույր դեմքը։ Վրաստանի բարձր կառավարությունը հանձնվում էր Կնորինգին, որ միացնում էր իր անձի մեջ նաև զինվորական իշխանությունը։ Բայց նա Վրաստանի սահմաններից դուրս էր ապրում, թողնելով քաղաքական գործերի կառավարությունը մեզ արդեն ծանոթ Կովալենսկուն, որ նշանակվում էր Վրաստանի կառավարիչ, մի կոչում, որ համապատասխանում էր մոտավորապես նահանգապետի պաշտոնին։ Այս պաշտոնյան իր առաջին իսկ քայլերից պարզեց ռուսական բյուրոկրատիայի բոլոր արատները՝ ամբարշտություն, արհամարհանք դեպի տեղացիները, բայց մանավանդ կաշառակերություն։ Նույնիսկ գլխավոր կառավարիչ Կնորինգն էլ, ինչպես տեսանք Գրիգոր վարդապետ Աղքիրմանցու նամակից, որ ուղղված էր Դավթին, չէր հրաժարվում կաշառքներ վերցնելուց։ Այս հատկությունը նրան պիտի մոտեցներ կաշառակերության գլխավոր աղբյուրները կազմող Կովալենսկուն։ Եվ իրավ, նա անպայման կերպով հավատում էր վերջինիս, թույլ էր տալիս սրան գործել ազատ կերպով, իսկ սա, պաշտոնների կանչելով իր ազգականներին, կողոպտում էր ժողովուրդն անպատիժ կերպով։ Կովկասյան ռուս չինովնիկության վատությունն առաջանում էր մոտավորապես և այն հանգամանքից, որ Կովկաս ծառայելու էին գնում այնպիսի մարդիկ, որոնք հաջողություն չէին գտնում Ռուսաստանի մեջ իրենց անընդունակության կամ բարոյական արատների պատճառով։ Եվ այսպիսով կազմվում էր Կովկասում այն սոսկալի վարչական չարիքը, որի դեմ միանգամայն անզոր էին հանդիսանում կռվելու նաև լավ տրամադրություններով լցված կառավարչապետներն ու փոխարքաներն անգամ։ Առաջին իսկ օրվանից տեղային ազգաբնակությունը տեսնում էր մի սառն անհարազատ, կասկածամիտ վերաբերմունք դեպի իրեն՝ ռուս պաշտոնականների կողմից։ Գեներալ Կնորինգը հրովարտակի ընթերցման օրն, ապրիլի 12-ին, հավաքեց իշխաններին և ժողովրդի այլ խավերը՝ հավատարիմ հպատակության երդում ընդունելու համար և շրջապատեց այդ ամբողջ բազմությունը զորքերով։ Այս անիմաստ արարքը շատ իրավացիորեն վրդովմունք պատճառեց ամենքին, որոնք հոժարակամ գնացել էին երդվելու հավատարմություն Ալեքսանդր կայսրին[2]։

Եվ ահա կայսերական մեղրածորան խոստումների փոխարեն ժողովուրդը տեսնում է զեղծումներ, կամայականություններ, արծաթապաշտություն միայն

---

[1] Ibid, с. 35—36.

[2] **Н. Дубровин**, III, с. 444.

Եվ Պետերբուրգ են թռչում դժգոհություններ և գանգատներ, պահանջելով հեռացնել ոչ միայն Կովալենսկուն, այլ նույնիսկ և Կնորինգին։ Այս ընդհանուր անբավականությունը սաստկացնում էր մասնավորապես և այն հանգամանքը, որ Ալեքսանդր Ա-ի հրովարտակն ու խոստումներն առհասարակ չբավարարեցին վրացիներին, նույնիսկ խիստ դժգոհություն պատճառեցին նրանց։ Հայրենի ազատության զգացմունքն էր խոսում նրանց մեջ, և 1802-ի ապրիլի 12-ից հետո էլ նրանք պահանջ էին ներկայացնում, որ վերականգնըվի վրացական թագավորությունը, տալով նրան վասալական դրություն Ռուսաստանի վերաբերմամբ։ Այս ցանկությունն իրենց եռանդուն շարժումներով պաշտպանում էին թագավորական ընտանիքի անդամները։ Պետք է ասել, որ Գեորգիի ժառանգներն այժմ թուլացել էին, որովհետև արքայորդի Դավիթն այլևս ոչ թե պաշտպանություն չէր գտնում ռուսներից, այլև միանգամայն անտես էր արվում։ Նրան անպատիվ կերպով արձակեցին պաշտոնից[1], և նա այնուհետև դարձավ ռուսների թշնամին։ Ուժեղացավ Հերակլի ժառանգների կողմը, որ առաջ էր քաշում արքայորդի Հուլոնի թեկնածությունը։ Դարեջան թագուհին, չնայած իր ծեր հասակին, աշխատում էր կրկնապատկած եռանդով։ Նրա որդիները ցրվել էին Վրաստանի և Իմերեթի զանազան կողմերը, աշխատում էին անբավականություն տարածել ժողովրդի մեջ և ապստամբական տրամադրություն պատրաստել։ Գեներալ Լազարևը նրանցից մի երկուսին կալանավորել տվեց, բայց այս փորձերն ավելի ևս գրգռում առաջացրին. արքայորդիները թաքնվում էին անտառներում և անմատչելի վայրերում։ 1802 թվականի ամռանը Կախեթում կազմակերպվում էր մի ամբողջ շարժում հօգուտ Հուլոնի թագավորեցման։ Ազնվականները հավատարմության երդում տվին Ալեքսանդրին, բայց նրանից հետո հավատարմություն երդվեցին նաև Հուլոնին։ Ալեքսանդրին ուղարկվում էր հետևյալ խնդրագիրը 69 անձանց ստորագրությամբ.

«Երբ մենք երդվում էինք հավատարիմ մնալ ձեր կայսերական մեծության, մեզ այդ ժամանակ հայտարարվեց բարձրագույն հրովարտակ, որի մեջ գրված է, որ իբր թե մենք հայտարարել ենք բարձրագույն դռան, թե չենք ուզում թագավոր ունենալ և որպես թե առանց թագավորի մենք մտել ենք ձեր մեծության հովանավորության և բարձրագույն կառավարության տակ։ Այս նման կլիներ ֆրանսիական հանրապետության։ Մեր թագավորները ոչ մի մեղք չեն գործել մեր առջև, և մենք նրանցից հրաժարվելու պատճառ չունենք։ Հազար տարիներից ավելի է, ինչ Բագրատունիների տոհմը թագակիր է. նրանցից շատերը Քրիստոսի և մեզ համար նահատակվել են և իրենց արյունն են թափել, իսկ մենք նրանց ժամանակ մեռնում էինք։ Եվ այսպես, նրանցից հրաժարվելը մեր գործը չէ, այլ խաբեբաների հնարած բանն է. մեր ցանկությունը և խնդիրքը կայանում է այն բանի մեջ, որ հայրենիքի համար կատարած իր մեծ քաջագործություններով հռչակված հանգուցյալ Հերակլ թագավորի կտակը հաստատվի և նրա զորությամբ մեզ տրվի թագավոր, որի հետ միասին մենք կմնայինք ձեր բարձրագույն հովանավորության տակ և մեր ուժերի ներածին չափ մեզ կնվիրեինք ձեր մեծության ծառայության։ Այս բանը խնդրում ենք ծնկաչոք ու հառաչանքով»[2]։

Ազգերի իրավունքների անունից ճառող, իր անշահասիրությունը, իր գթասրտությունը վեր հանող Ալեքսանդրը ոչ միայն տրամադիր չէր իր հինավուրց ազատություններին ամուր կպած ժողովրդի արդարացի խոսքը լսել,

---

[1] Ibid, с. 445.

[2] **Н. Дубровин**, III, с. 515—516.

այլ, արհամարհելով ծնկաչոք հառաչանքները, շտապում էր խիստ միջոցներ ձեռք առնել, որպեսզի Վրաստանում տարածված անբավականությունը ռուսական չինովնիկների դեմ և քաղաքական շարժումները չընդունեն ավելի լայն չափեր։ Ուստի որոշեց Կովկասյան կառավարչապետությունը հանձնել մի ուժեղ և եռանդուն մարդու, որ կլիներ գործի, կտրուկ միջոցների մարդ և արագ կարգ ու կանոն հաստատելով Կովկասյան լեռների հարավային ստորոտներում ամուր կապերով կկապեր այդ երկրները Ռուսաստանի հետ։ Այսպիսի մի կարող ուժ նա գտավ հանձին գեներալ-լեյտենանտ իշխան Պավել Դմիտրևիչ Ցիցիանովի, որին 1802 թվականի սեպտեմբերի 8-ի իր հրովարտակով հայտնում էր, թե ստանալով գանգատներ Կնորինգի և Կովալենսկու վրա, ինքը բարի է համարում այդ երկուսին արձակել իրենց պաշտոններից և նրանց այս պաշտոնները հանձնում է նրան, Ցիցիանովին[1]։

Նույն տարվա նոյեմբերին նոր գլխավոր հրամանատարը Հյուսիսային Կովկասում էր, ուր երկու ամսվա չափ մնաց՝ թե՛ տեղային գործերը կարգադրելու և թե՛ պաշտոնի վերաբերյալ թղթերը Կնորինգից ստանալու համար։ Սակայն իր նախորդների նման նա նույն Հյուսիսային Կովկասում չպիտի հաստատեր իր մշտական բնակավայրը։ Ռուս կուսակալներից նա առաջինն էր, որ գնում էր Թիֆլիս՝ այդտեղից կառավարելու թե՛ Հյուսիսային և թե՛ Հարավային Կովկասը։ Թիֆլիս Ցիցիանովը հասավ 1803 թ. փետրվարի 2-ին և անմիջապես սկսեց ծավալել մի շատ եռանդուն անհանգիստ քաղաքականություն ի փառս ցարական նվաճողականության։

Ռուս բոլոր պատմագիրները, որոնք գրել են ռուսական Կովկասի պատմությունը, միալար գովասանքներ են շռայլում իշխան Ցիցիանովին, խոսում են նրա մասին հիացմունքով, փառաբանելով նրա պետական խոշոր, խորաթափանց միտքը, նրա վարչական բարձր արժանավորությունները։ Այս աղբյուրների կարծիքով, իշխան Ցիցիանովն էր, որ օրինակ տվեց ռուս բյուրոկրատիայի ապագա սերունդներին, թե ինչպես պետք է կառավարել մի ասիական երկիր, որ մատնված էր անիշխանության, և որի բնակիչները գիտեին միայն քծնել, կեղծել, սուրով և խորամանկություններով գլուխ պահել։ Սակայն, մենք պետք է ասենք, որ այս հրճվանքներն ու հիացմունքները կարող են նշանակության արժանի համարվել ոչ թե իրերի իսկական և արդար գնահատության տեսակետից, այլ ելնելով այն նվաճողական փափագներից, որոնցով տոգորված էր պաշտոնական Ռուսաստանն առհասարակ և մանավորապես Կովկասի վերաբերմամբ...

Իշխան Ցիցիանովը միանգամայն համապատասխանում էր այս հասկացողության, ինքն էլ ամբողջովին տոգորված էր այդ գաղափարներով, որոնց ծառայում էր մոլեռանդությամբ, ուստի և հերոս էր իմպերիալիստական հայացքների երկրպագուների համար՝ անկախ այն հանգամանքից, թե ովքեր են դրանք՝ մի հանճարեղ բանաստեղծ արդյոք, և թե ցարական գեներալներ, որոնք պատմություն են շինել Կովկասում (օրինակ, Երմոլով, Վորոնցով) կամ գրել են Կովկասի պատմությունը (օրինակ, Պոտտո, Դուբրովին և ուրիշներ)։ Արդարությունն երբեք այնքան չմոտեցավ այդ մարդկանց, որ նրանք գոնե մի քիչ էլ նկատի առնեն Կովկասյան ազգերը, մի քիչ էլ նրանց կենսական շահերի տեսակետից կշռադատեն այն հերոսին, որ եկել էր իբր թե նրանց երջանկացնելու, նրանց առջև բախտի նոր դռներ բաց անելու համար։

[1] «Акты Кавказ. Археогр. Ком.», т. II, Тифл., 1868, № 1.

Մոտենալով Ցիցիանովին այս Կովկասյան տեսակետից, մենք ամենից առաջ պիտի նկատենք, որ նա մի ռուսացած վրացի էր, ծագում էր Ցիցիշվիլի[1] իշխանական տոհմից, որ Վրաստանում կարևոր դիրք ուներ գրաված և ազգակցական կապերով կապված էր վրաց թագավորող տան հետ։ Այսպես, Գեորգի վերջին թագավորի ամուսին Մարիամ թագուհին նույն այդ Ցիցիշվիլիների տոհմից էր։ Պավլե Ցիցիշվիլի պապը գաղթել էր Ռուսաստան Պետրոս Մեծի ժամանակ, մտել էր զինվորական ծառայության մեջ և մշտական բնակություն հաստատել Մոսկվայի մեջ։ Այդտեղ էլ ծնվեց Պավել Ցիցիանովը 1754 թվականին։ Սա էլ ընտրեց զինվորական ծառայություն և քաջ զինվորի համբավ ստացավ։ 1796-ին մասնակցել էր Զուբովի անդրկովկասյան արշավանքին, երկար ժամանակ Բաքվի մեջ զորքերի հրամանատար էր և այդտեղ էլ ծանոթացավ ասիական բարքերի հետ, մանավանդ լավ ուսումնասիրեց խաների խորամանկ, երկդիմի քաղաքականությունը և կազմեց այն հասկացողությունը, թե Ասիայում համոզելը, բանակցություններ վարելը ոչինչ է, իսկ ուժը՝ ամեն ինչ է»[2]: Այս նշանաբանն էլ նա իր համար սկզբունք դարձրեց և հետևում էր նրան անշեղ մինչև իր կյանքի վերջը։ Ուժեղի իրավունքով հանդես գալով ասիական թույլ ու խավար ազգերի մեջ, նա, բնականաբար, պիտի լիներ կոպիտ ու անողոք մի զինվոր, հախուռն բնավորությամբ, հոխորտացող, լցված արհամարհանքով դեպի հակառակորդը, որին նա հայհոյում էր նույնիսկ պաշտոնական թղթերի մեջ։ Նրա համար միայն մի սրբություն գոյություն ուներ՝ ցարական Ռուսաստանի շահը, և ամեն ինչ նա կշռադատում էր նվաճողական արշավի հաջողության տեսակետից։ Իսկ թե ինչպես էր նա նայում կովկասյան ազգերին, այդ ամենից լավ ցույց է տալիս նրա վերաբերմունքը դեպի սեփական, հարազատ ազգը։

Վրաստանը լռեցնելու, անպայմանորեն հպատակեցնելու լավագույն միջոց էր համարվում բոլոր անբավական տարրերի և մանավորապես արքայական ամբողջ ընտանիքի հեռացումն երկրից։ Այս մի դժվար գործ էր, որ չէին կարողացել գլուխ բերել Կնորինգն ու նրա օգնականները։ Ցիցիանովը, հատուկ լիազորություններ ստանալով Ալեքսանդր կայսրից, Թիֆլիս հասնելուն պես սկսեց առանձին եռանդով և խստություններով կազմակերպել այդ գործը։ Ամբողջ արքայական ընտանիքը բաղկացած էր 26 հոգուց, և ամենքը՝ տղամարդ, կին, անգամ ծծկեր երեխա, պիտի ենթարկվեին միևնույն վիճակին՝ աքսորական գնային Ռուսաստան, առանց հայրենիք վերադառնալու իրավունքի։ Սակայն այդ 26 հոգուց մի քանիսը կարողացել էին դուրս գալ ռուսների ձեռքի տակից. դրանցից մեկն էր Հերակլի որդի Ալեքսանդրը, որ, ինչպես գիտենք, անցել էր Պարսկաստան և աշխատում էր պարսկական ուժի օգնությամբ վանել ռուսներին Վրաստանից և ստանալ հայրենի գահը։ Նրա ավագ եղբայր Հուլոնը, որին Հերակլը նշանակել էր գահաժառանգ Գեորգիից հետո, փախել էր իր եղբայր Փառնավազի հետ Իմերեթի Սոլոմոն թագավորի մոտ և աշխատում էր այդ տեղից վեր կացնել վրաց ժողովուրդը՝ հայրենի անկախությունը վերականգնելու համար։ Մնացած անդամներն ապրում էին Թիֆլիսում և նրա շրջականներում և այդպիսով միանգամայն գտնվում էին ռուսական իշ-

[1] Վրաց տարեգիրը, հաճախ թողնելով իշխանի անվան և ազգանվան ռուսական ձևերը, անվանում է նրան վրացական ձևով՝ Պավլե Ցիցիշվիլի (M. Brossei, Historie de la Géorgie, t. II. liv. II; p. 275 et suiv).

[2] В. Потто, Утвержд. рус. влад. на Кавк., I, с. 41.

խանության ձեռքին, որ և կարող էր անել նրանց հետ ինչ որ ուզում էր։ Մինչև Ցիցիանովի գալը Կնորինգն էր, որ գեներալ Լազարևի և վարիչ Կովալենսկու միջոցով աշխատում էր ի կատար ածել կայսրի հրամանը։ Առաջ ու առաջ ձեռք էր առնվում ընտանիքի ավագագույն անդամը, Դարեջան թագուհին, որին առաջարկվեց, խոր ձմեռվա մեջ, ճանապարհվել Ռուսաստան։ Այս մի բոլորովին անհնարին պահանջ էր, որովհետև Դարեջանը, բացի նրանից, որ մի զառամյալ պառավ էր, նոր էր ապաքինվում երկարատև հիվանդությունից և այնքան թույլ էր, որ չէր կարող տանից անգամ հեռանալ, ուր մնաց ճանապարհորդություն կատարել Կովկասյան լեռներում հունվար ամսին։ Ռուս պաշտոնյաները, սակայն, կարծում էին, թե Հերակլի այրին կեղծում է, և այդ պատճառով էլ փութացնում էին Ցիցիանովին, որ նա շտապի Թիֆլիս գալ և իր ձեռքով կատարել արքայական ընտանիքը վտարելու դժվար գործը։ Եվ նա, շտապելով Թիֆլիս, կարճ ժամանակ տվեց Դարեջանին, իսկ մյուս արքայազուններից պահանջեց անհապաղ կատարել կայսերական կամքը։ Ոչ ոք, սակայն, չկամեցավ ինքնահոժար կերպով ենթարկվել անդարձ աքսորի։ Թեյմուրազ արքայորդին, չնայած Ցիցիանովի խիստ հետապնդումներին, փախավ Թիֆլիսից, կարողացավ անցնել սահմանը և գնաց Պարսկաստան, Ալեքսանդր արքայորդու մոտ։ Այս փախուստն առիթ տվեց Ցիցիանովին անողոք խստություններ գործ դնել աքսորի դատապարտված մյուս արքայազունների վերաբերմամբ։

Իսկ Հուլոն արքայորդին Իմերեթից փորձում էր խաղաղ բանակցությունների առարկա դարձնել վրացական դատը։ Փետրվարի 16-ին նա նամակ գրեց Ցիցիանովին, որի մեջ իր ուրախությունը հայտնելով, որ նա գլխավոր հրամանատարի պաշտոնով եկել է իր «նախնիքների հայրենիքը», ասում էր, թե վրաց ժողովրդի դժբախտությունն այն բանի մեջ է, որ նրա իղձերն ու խնդրվածքները չեն հասնում ռուսաց կայսրին։ Այս բանի պատճառ համարում էր Կնորինգին և կարծելով, թե Ցիցիանովը նրանից ավելի կսիրե իր ժողովուրդը, խնդրում էր, գոնե, այս անգամ ճանապարհ բաց անել, որ երկրի ձայնը հասնե կայսերական գահին։ Բանն այն էր, որ Ալեքսանդրի հրովարտակի մեջ ասվում էր, թե պետությունը մեծացնելու և կամ որևէ ուրիշ օգուտ չէ, որ Վրաստանը կցվում է Ռուսաստանին, այլ միմիայն ժողովրդի խնդիրքով և այն պատճառով էլ, որ երկպառակություններ կան արքայական ընտանիքի անդամների մեջ։ Հուլոնը մատնանշում էր այն հանգամանքը, որ վրաց ժողովուրդն երբեք այդպիսի խնդրանք չի արել կայսրից, այլ, ընդհակառակը, միշտ կամեցել է, որ շարունակվի իր թագավորությունը։ Արքայորդին ուներ իր ձեռքում բազմաթիվ թղթեր, որոնցով ժողովուրդը կամք է հայտնում, որ նա ժառանգե հայրենի իշխանությունը։ Այժմ նույնիսկ մյուս ժառանգների մեջ էլ տարաձայնություն չի մնացել, և Դավիթ արքայորդին էլ արդեն գրավոր համաձայնություն էր տվել, որ Հուլոնը լինի Վրաստանի թագավոր։ Իր նամակն արքայորդին վերջացնում էր՝ խնդրելով, որ ինքը թագավոր հաստատվի և խոստանում էր հավատարմությամբ ծառայել Ռուսաստանին մինչև արյան վերջին կաթիլը։

Ցիցիանովն այս նամակին պատասխանեց, բայց ոչ թե ուղղակի Հուլոնին դիմելով, այլ նրա կնոջը, որի առջև մի շարք շողոքորթություններ էր անում, անվանելով նրան իր ամենասիրելի քույր։ Ըստ էության նա ոչինչ չէր ասում, այլ միայն ծնկաչոք աղաչում էր, որ նա համոզե իր ամուսնուն ուղևորվել Պետերբուրգ, հավատացնելով, թե այդպես պահանջում է արքայորդու իսկական օգուտը։ Միաժամանակ նա Իմերեթ է ուղարկում ազնվական Արաշիձեին, որ այդ երկրում եղած մի քանի հոգևորական և ազնվական ռուսասերների աջակ-

ցությամբ համոզե Հուլոնին և Փառնավազին գնալ Թիֆլիս[1]։ Բայց մինչդեռ մի կողմից այսպես էր գործում նորեկ կուսակալը, մյուս կողմից նա անխնա խստությամբ էր բռնանում Դավիթ և Վախթանգ թագավորազունների վրա, որոնք մնացել էին Թիֆլիսում։ Նախ սանձվեց հարմար պատրվակ։ Լուր տարածվեց, թե պարսիկները պատրաստվում են հարձակվել Վրաստանի վրա իրենց նոր տարվա օրը (Նովրուզ, մարտի 10-ին)։ Իբր թե այս վտանգից խուսափելու համար էր, որ Ցիցիանովն իր գալուն պես հրամայեց Դավիթ և Վախթանգ արքայորդիներին, որ նրանք անմիջապես ճանապարհվեն Ռուսաստան։ Դավիթն ակամա համաձայնություն տվեց, բայց խնդրեց, որ իրեն ժամանակ տրվի մինչև մարտի վերջը, որովհետև ինքն այժմ հիվանդ է և կարող է ճանապարհին մրսել ու մեռնել։ Եվ բացի դրանից, նա ուզում էր խնդիրք ուղարկել կայսրին, որ իրեն թողնեն հայրենիքում։ Իսկ Վախթանգը լսել անգամ չէր ուզում Ռուսաստան գնալու մասին, պատրաստ էր մնալ իր հայրենիքում իբրև հասարակ հողագործ։ Այս մասին արքայորդին խնդրում էր Ցիցիանովին ծնկաչոք։ Բայց ցարական ամենակարող սատրապը չափազանց բարձրից էր նայում այդ աղերսարկուների վրա։ Նա կատաղում էր և այն ժամանակ, երբ արքայորդիներից մեկն ու մեկը մի կոշտ խոսք, մի հանդիմանություն էր ուղղում նրան։ Հանդիմանական դարձվածքներով լիքն էր և Դավթի վերոհիշյալ նամակը։ Ուստի Ցիցիանովը, զիջման ոչ մի տրամադրություն ցույց չտալով, փետրվարի 19-ին երկու արքայորդիներին էլ ծածկված կառքի մեջ, երկու վաշտ զորքով շրջապատված, ուղարկեց Ռուսաստան։ Մինչև Վլադիկավկազ նրանց տարավ գեներալ Լազարևը, որի ինչ տեսակ ռուս պաշտոնյա լինելն արդեն մեզ հայտնի է նախընթաց անցքերից և մանավանդ այն վերաբերմունքից, որ նա ուներ Բոլնիսի հերոս Մելիք Աբովի նկատմամբ[2]։ Տեսանք նաև, որ այս մարդու միջամտությունը վրաց արքայական ընտանիքի գործերի մեջ միայն գրգռում էր առաջացնում, ավելի ևս սրելով հարաբերությունները։

Դավթի և Վախթանգի բռնի աքսորը ծանր տպավորություն, մինչև իսկ սարսափ տարածեց Վրաստանում։ Կախեթի իշխաններից մի քանիսը, վախենալով, թե հերթն իրենց էլ կհասնի, փախան ուրիշ երկրներ։ Լուրը հասավ և Հուլոնին, որ և գրեց Ցիցիանովին իր հոգու վրդովմունքը պերճորեն արտահայտող հետևյալ նամակը.

«Մեզնից խլված է հնագույն թագավորությունը, այժմ մեր կյանքն էլ զրկում են ազատությունից. եթե մարդն աստված է, նա պիտի գթած լինի դեպի մահկանացուները, իսկ եթե նա էլ մահկանացու է, այն ժամանակ նա չպիտի մոռանա իր բնությունը, որովհետև մեծ է աստված, հզոր է բնությունը և մահը միշտ հիշելի։ Դուք մեզ հրամայում եք ճանապարհվել Պետերբուրգ. դնենք, թե մենք մեր անզորությամբ զիջելով անընկճելի ուժին, արդեն ճանապարհվել ենք. բայց մեր ձեռքին ի՞նչ երաշխիք կա ապահովության համար, ո՞ւր է նորին մեծության ձեռագիրը, որ մենք կարողանայինք վստահել նրան, վերցնել նրան մեր ձեռքը և գնալ Պետերբուրգ։ Մենք այսքան ժամանակ հեռու ենք գտնվում մեր հայրենիքից, օտարության մեջ. իսկ մեր Վախթանգ և Դավիթ եղբայրները, որոնք թեև երդվել էին մինչև իրենց արյան վերջին կաթիլը զոհել իրենց կայսրին հավատարիմ մնալու, բայց ահա ի տրիտուր ստացան երկաթապատ մի տապան[3], իսկ իբրև փառք՝ մի մեղսագործ մուժիկի յուրատեսակ պատիվը։ Անիծում ենք այն մարդկանց անունները, որոնք

---

[1] Н. Дубровин, Закавказье, с. 84.

[2] Տե՛ս նախընթաց հատորը։

[3] Ակնարկում է այն ծածկված կառքը, որի մեջ աքսորվեցին Դավիթն ու Վախթանգը։

խնայել են իրենց կյանքը և ոչ թե իրենց տոհմը, և եթե մենք չիմանայինք մեր եղբայրներին անպատվությամբ տանելու մասին, այն ժամանակ տեղի տալով թագավորի (Իմերեթի) սախպողական խորհրդին, կգայինք Թիֆլիս և ամենքս էլ կընդունեինք նույն տեսակ պատիվ, որի համար անիծում ենք մեր դժբախտությունը»[1]։

Սակայն Ցիցիանովին չէին անհանգստացնում այս բողոքները, երկրի մեջ տարածված դժգոհությունը, և նա շարունակեց բռնի աքսորները, կանգ չառնելով նաև այն րոպեին, երբ նրա բռնություններից խոշտանգվածների բողոքը հասավ արյունահեղության։ Այսպիսի մի տեսարանի թատերաբեմ հանդիսացավ ապրիլի 18-ի գիշերը և 19-ի առավոտը. Վրաստանի վերջին թագավոր Գեորգի ԺԲ-ի ընտանիքը, որի անդամներն էին. այրի թագուհի Մարիամը, ծնյալ իշխանուհի Ցիցիշվիլի, հետևաբար և ազգականուհի իշխան Ցիցիանովի, և նրա զավակները. Միքայել՝ 17 տարեկան, Ջաբրայիլ 15, Իլիկո 11, Օքրոփիր 7, Հերակլ 3, Թամար 14 և Աննա՝ 2 տարեկան։ Հայտնի չէ, թե ինչ վտանգ կարող էր սպառնալ անչափահասների այս ընտանիքը ռուսական կայսրության, բայց բռնակալությունն առհասարակ չի սիրում գործ ունենալ բանականության հետ, և Ցիցիանովը պահանջում էր իր ազգականուհուց, որ նա էլ իր երեխաների հետ տեղափոխե իր բնակությունը Ռուսաստան։ Թագուհին բնականորեն չուզեց աքսորական վիճակը և, տեսնելով, թե ինչ է կատարվում իր շուրջը, նա, բռնի վտարումից խուսափելու համար, մտածեց գաղտնի հեռանալ Թիֆլիսից Թիոնեթ, խևսուր և փշավ ցեղերի մոտ, որոնք հնուց հայտնի էին իրենց անձնվիրությամբ դեպի վրաց թագավորական տունը, ապրել այդ քաջ ցեղերի պաշտպանության տակ մի քանի ամիս, և այս ժամանակամիջոցում խնդրագիր ուղարկել Ալեքսանդր կայսրին, որ իրեն և իր երեխաներին թույլ տրվի մնալ Վրաստանում։ Այս դիտավորության մեջ ոչ մի հանցավոր արարմունք չկար հենց այն պատճառով, որ Թիոնեթն էլ Վրաստանի մի մասն էր կազմում, հետևապես ռուսական երկիր էր, ենթարկված Ցիցիանովի իշխանության։ Սակայն լավ ճանաչելով Ցիցիանովին և հույս չունենալով, թե նա կթույլատրե իրեն մի այդպիսի քայլ անել, Մարիամն, ինչպես ինքն էր խոստովանում, վճռեց ծածուկ հեռանալ Թիֆլիսից և Թիոնեթ հասնելուց հետո միայն, մի երկու շաբաթ անցած, իմաց տալ նրան, թե ո՞ւր է ինքը և ինչու է գնացել[2]։ Եվ թագուհին սկսեց պատրաստություններ տեսնել։ Այս ձեռնարկության մեջ նա մեծ վստահություն ուներ Զուրաբ Եվանգուլով անունով մեկի վրա, որ հայ մոքալաքներից էր և, ինչպես երևում է, նրա մերձավոր դրանիկներից մեկն էր։ Ահա այս հայն էլ սկսեց խաբել թագուհուն և նրա դիտավորության խանգարիչ հանդիսացավ։ Ստանալով Մարիամից երկու անգամ նամակներ՝ Թիոնեթ ուղարկելու համար, և իմանալով, որ դրանց մեջ խևսուրների և փշավների իշխաններն ու տանուտերները հրավիրվում են աջակցություն ցույց տալ արքայական ընտանիքի փախուստին, Եվանգուլովը երկու անգամ էլ այրեց այդ նամակները և թագուհուն հայտնեց, թե նամակներն ուղարկվել են, բայց Թիոնեթից եկած պատասխանների մեջ կտրականապես ասվում է, թե ոչ ոք չի ուզում օգնել թագուհուն այդ գործի մեջ[3]։ Չէ կարելի ասել, իհարկե, թե Զուրաբն այստեղ գործում էր, չունենալով առանձին նպատակներ։ Ամեն ինչ ցույց է տալիս, որ նա դավաճանում էր իրեն անպայմանորեն հավատացող թագուհուն։ Իշխան Ցիցիանովը հաստատ տեղեկություններ ուներ

[1] «Акты...», т. II, № 210.

[2] «Акты...», т. II, № 199, с. 115.

[3] «Акты...», т. II, № 201, с. 116—117.

այն ամենի մասին, ինչ կատարվում էր Գեորգի թագավորի ընտանիքում։ Եվ այդ տեղեկությունները նրան, անշուշտ, Զուրաբն էր հաղորդում։ Գլխավոր հրամանատարն իր միջոցները ձեռք առավ, ինչպես միշտ, խիստ և կոպիտ։ Գեներալ Լազարևին նա գրում էր, թե ռուսական բանակի համար նախատինք կլինի, եթե թագուհին փախչի քաղաքի միջից, և հանձնարարում էր նրան ոչ միայն արգելել փախուստը, որ նշանակված էր ապրիլի 18-ին, այլև մյուս օրն ևեթ տանել նրան և նրա երեխաներին Վլադիկավկազ։ Պետք է ասել, որ թագուհին ատում էր Լազարևին, որովհետև նրանից շատ անգամ էր վիրավորանքներ ստացել։ Այնուամենայնիվ, իշխան Ցիցիանովը չկամեցավ իր ազգականուհու ինքնասիրությունը խնայել գոնե այս վճռական րոպեին։ Եվ Լազարևը գնաց կատարելու իր մեծավորի հրամանն, ինչպես ինքը գիտեր կատարել։ Եվ հետևանքն այն եղավ, որ նա սպանվեց հենց թագուհու սենյակում։

Ռուսական բյուրոկրատիան հավատացնում էր, թե այդ սպանությունն իր ձեռքով կատարել է Մարիամ թագուհին և բերում էր հետևյալ մանրամասնությունները։ Ապրիլի 18-ին, երեկոյան դեմ Հավլաբարի քաղաքադռները պահպանող ռուսական պահակը, որ վաղօրոք իրազեկ էր կացուցվել թագուհու փախուստի մասին, չթողեց, որ քաղաքից դուրս բերվեն մի քանի ձիաներ և ջորիներ, որոնք փախստականների համար էին պատրաստված։ Քաղաքից նույն այդ պատճառով չկարողացան դուրս գալ և թագուհու երկու երեխաները, որոնք դրսում պիտի սպասեին ընտանիքի մյուս անդամներին։ Դիտավորությունն, ուրեմն, բացված էր։ Լազարևը նույն երեկոյան պահապաններ դրեց այրի թագուհու բնակարանի շուրջն, իսկ մյուս օրը, վաղ առավոտյան, նա մի քանի օֆիցերների հետ մտավ թագուհու ննջարանը և պահանջեց, որ նա իր բոլոր երեխաներով դուրս գա՝ կառքեր նստելու և անմիջապես ճանապարհ ընկնելու համար։ Թագուհին, պատճառաբանելով իր հիվանդությունը, խնդրեց ժամանակ տալ իրեն։ Լազարևը դուրս է գալիս կարգադրություններ անելու, հենց այդ միջոցին թագուհու տղա Ջաբրայիլը և աղջիկ Թամարը մերկացրած խենջարներով հարձակվում են սենյակում մնացած սպաների վրա, կամենալով արգելել, որ նրանք բռնությամբ տանեն իրենց ընտանիքը։ Լազարևը լսելով այս աղմուկը, վերադառնում է սենյակը և երբ մոտենում է թագուհուն, որ նստած էր անկողնի վրա և սկսում է նրան համոզել, որ խրատե երեխաներին հանգարտ մնալ, այդ միջոցին նա հանում է վերմակի տակից մի մերկացրած խենջար և կոխում է գեներալի ձախ կողը։ Հարվածն այնքան սաստիկ էր, որ խենջարի ծայրը դուրս եկավ մյուս կողից։ Լազարևը հազիվ կարողացավ երկու քայլ անել և անշնչացած ընկավ սենյակի շեմքում։ Այն ժամանակ Թիֆլիսի նացվալ (ոստիկանապետ) Սարգսովը, ձեռքը փաթաթելով մի հաստ փափախի մեջ բռնում է թագուհու խենջարից և խլում է նրան։ Թամարը հարձակվում է նրա վրա, բայց Սարգսովը ետ է մղում նրա խենջարի հարվածը, որ, շեղվելով իր ուղղությունից, դիպչում է թագուհու ուսին և վիրավորում նրան։ Կատաղած թագուհին ուզում է խլել Թամարի խենջարը և նրանով սպանել Սարգսովին, բայց վիրավորում է իր մատները։

Այսպես է այդ արյունահեղ դեպքի պաշտոնական նկարագրությունը, որ ներկայացրեց իշխան Ցիցիանովն Ալեքսանդր կայսրին[1]։ Եվ այս տեսակ լուսաբանությունը Ցիցիանովը միանգամայն բավարար համարեց շարունակելու

[1] «Акты...», т. II, № 192.

համար իր գործողությունները այնպես, ինչպես տարել էր մինչև այդ։ Սակայն պաշտոնական ստախոսությունն ակնհայտ է առաջին իսկ հայացքից։ Շատ զարմանալի են, իրավ, այդ երկու երեխաները, որոնք խենջարներով հարձակվում են մի խումբ զինված ցարական օֆիցերների վրա, որոնք գառնուկի նման անմեղ են և հեզ։ Իսկ Լազարևը որ գառնուկների գառնուկն է այդ անպաշտպան կնոջ դիմաց, որից նա ատված էր և որին ատում էր։ Ցիցիանովը, հարկավ, պիտի ամեն ինչ աներ՝ Լազարևին անմեղ զոհ, նահատակ և միևնույն ժամանակ պարտքի հերոս հրատարակելու համար։ Չէ՞ որ Լազարևը ռուսական բյուրոկրատիայի փառքն ու պարծանքն էր կազմում իբրև տեղական ազգայնությունների անհաշտ թշնամի և ռուսացման քաղաքականության ռահվիրա։ Եվ ինչպես զարմանալ, որ Ցիցիանովն այդպես էր, քանի որ երեք քառորդ դար անցնելուց հետո էլ նույն վերաբերմունքն էին ցույց տալիս ռուսաց պաշտոնական պատմագիրները, զարդարված ոչ միայն գեներալների շքանշաններով և աստիճաններով, այլև «ակադեմիկոսի» գիտնական տիտղոսով[1]։

Լազարևի սպանությունն արձակում էր Ցիցիանովի ձեռքերն ամեն կապանքներից, և նա շտապեց օգտագործել այդ պատեհությունն իր դաժան սրտի թելադրանքների համաձայնությամբ։ Արյունահեղ դեպքի լուրն առնելուն պես նա հրամայեց գեներալ Դմիտրի Օրբելիանիին քշել Մարիամին և նրա ամբողջ ընտանիքը մինչև Վլադիկավկազ, ճանապարհին վարվելով նրանց հետ իբրև սովորական ոճրագործների հետ[2]։ Այս հրամանը կատարվեց ճշտությամբ։ Դժբախտ ընտանիքը, շրջապատված ռուսական մի ամբողջ զորաբաժնով, տարվեց մինչև Դարյալի կիրճի բերանը կազմող Կազբեկ գյուղը, ուր զորաբաժնի հրամանատար գեներալ Տուչկովը լուր առավ, որ կիրճը բռնել են Թագավոր կոչված լեռնցիները, որոնք վճռել են թույլ չտալ, որ իրենց թագուհուն գերի տանեն։ Տուչկովն առաջ շարժվեց ռազմական կարգով և կիրճի ամենանեղ տեղում հրացանաձգության բռնվեց լեռնցիների հետ։ Քայլ առ քայլ առաջանալով, ռուսական զորքին հաջողվեց դուրս մղել դիմադրողներին կիրճից և հասցրեց գերիներին Վլադիկավկազ։ Այդ դիմադրությունը ցույց էր տալիս, որ Վրաստանը միանգամայն անտարբեր չէ այն արարքների վերաբերմամբ, որ ռուսական կառավարությունը կատարում էր նրա հինավուրց քաղաքական իրավունքներն իսպառ ջախջախելու համար։ Իշխան Ցիցիանովն այս մասին աներկբա առհավատչյաներ ուներ և այն վրդովմունքի մեջ, որ ամեն տեղ պատճառել էր Մարիամ թագուհու վրա գործադրված բռնությունը։ Բայց և այնպես, նա մեծ զինվորական հանդեսով թաղեց Լազարևին Թիֆլիսի վրացական մեծ սրբավայրը կազմող Սիոնի մայր եկեղեցում, այսպիսով հարկադրելով, որ ազգային նվիրական հիմնարկությունը մի տեսակ պաշտամունք դարձնե ազգային նվիրական իրավունքների ուխտյալ թշնամուն։ Միևնույն ժամանակ նա հայտնում էր Ալեքսանդր կայսրին, թե ամբողջ ժողովուրդն է ողբում ռուսականության հերոսին։ Իսկ Մարիամ թագուհին տարվեց Վորոնեժ քաղաքը, ուր պիտի սպասեր, թե ինչ վճիռ էր կայացնում Ալեքսանդր կայսրն իր, իբրև ոճրագործի մասին։ Իսկ այդ վճիռն այն էր, որ թագուհին փակվի Վորոնեժի մի կուսանոցում։

Այսպես է պաշտոնական պատմությունը, հիմնված լոկ ռուսական չինովնիկների տված տեղեկությունների վրա։ Սակայն մենք ունենք թագուհու

1 Այսպես է, օրինակ, գեներալ Դուբրովինը, Պետերբուրգի ակադեմիայի անդամ և հայտնի կովկասագետ (տե՛ս «История войн. и влад. русс. на Кавказе, т. IV, гл. III):

2 **В. Потто,** Кавказская война, т. II, вып. III, Спб., 1885, с. 341.

ցուցմունքներն էլ, որոնց վրա ոչինչ ուշադրություն չեն դարձրել ոչ միայն դատաստան անող ցարական ծառայողները, այլև նրանց հավատարիմ պատմագիրները։ Այդ վկայությունից մենք տեսնում ենք, որ ապրիլի 18—19-ի արյունահեղ դեպքը գեներալ Լազարևի դրաման չի եղել, այլ Մարիամ թագուհունը։ Դեռ Վլադիկավկազ չհասած՝ թագուհին նամակ գրեց Թիֆլիսի բերդապահին, որի մեջ երդումներով հավատացնում էր, թե ոչ ինքը, ոչ իր հետևորդներն ու երեխաները ոչ մի հանցանք չեն գործել և խնդրում էր իշխան Ցիցիանովին դադարեցնել իրենց դեմ հարուցած հալածանքները։ Սակայն զոռող կառավարչապետը միանգամայն արհամարհանքով էր վերաբերվում այդ նամակին[1]։ Երկրորդ անգամ Մարիամը դիմում էր անում արդեն իրեն՝ Ալեքսանդրին, գրելով նրան մի նամակ Վորոնեժ հասնելուց հետո և մի առ մի նկարագրելով նրա մեջ իր աքսորման բոլոր հանգամանքները[2]։

Նրա ասելով, գեներալ Լազարևի գործողություններն սկսվում են ապրիլի 18-ի երեկոյան։ Մութը կոխելուց ժամ ու կես անց՝ նա շատ զինվորներ է մտցնում թագուհու սենյակների մեջ, պահապաններ դնելով յուրաքանչյուր դռան և պատուհանի մոտ, թե ներսից և թե դրսից։ Զորքերով գրավում է նաև թագուհու ապարանքի առջև գտնված հրապարակը։ Լազարևը մի քանի սպաների հետ մտնում է թագուհու ննջարանը, ուր այդ միջոցին գտնվում էին նրա մայրը, փեսա Ասլան Օրբելիանին, նաժիշտներն ու ծառայողները։ Ամենքին գեներալը հրամայում է դուրս գնալ և թողնում է միայն Ասլան Օրբելիանիին, ինչպես խնդրել էր թագուհին։ Ապա հայտնում է վերջինիս, թե այս խիստ պահպանությունը հաստատել հրամայել է իշխան Ցիցիանովը, որովհետև տեղեկություն է ստացել, թե թագուհին ծածուկ հեռացրել է իր երկու երեխաներին Թիֆլիսից։ Ասլան Օրբելիանին հերքում է այդ տեղեկությունը, բաց անելով հարևան սենյակի դուռը և ցույց տալով գեներալին, որ բոլոր երեխաներն այնտեղ են. Մարիամն ամենքին կանչում է իր մոտ, որպեսզի Լազարևն ավելի լավ համոզվի, որ արքայական ընտանիքից ոչ ոք չէ պակասել, որից հետո նա խնդրում է գեներալին հայտնել իր կողմից Ցիցիանովին, որ նա չհավատա անհիմն լուրերին և հավատացած լինի, որ ինքը թույլ չի տա իրեն փախուստի դիմել կամ հակառակվել ռուսաց կայսրի կամքին։ Լազարևը գնում է իբր թե Ցիցիանովին հայտնելու համար այդ խոսքերը և տանում է իր հետ նաև Ասլան Օրբելիանիին, որպեսզի նա խոսե թագուհու կողմից։ Սակայն սենյակից դուրս գալուց հետո Լազարևը կալանավորում է Ասլանին և բանտարկում։ Ամբողջ գիշերը թագուհու բնակարանը մնում է պաշարողական խիստ դրության ենթարկված, ամեն հաղորդակցություններից կտրված։ Թագուհին իր երեխաներով ամբողջ ժամանակը սարսափի մեջ էր գտնվում։ Երեխաները քնել չկարողացան, և մայրը փոքրիկ Հերակլին հանգստացնելու համար ստիպված եղավ պառկեցնել նրան իր կողքին, անկողնի մեջ։ Զինվորները նույնիսկ ընթրիքն էլ չէին ուզում թույլ տալ տանել թագուհու մոտ, վախենալով, թե մի գուցե կերակուրները դիտմամբ թունավորած լինի թագուհին՝ իր և յուրայինների կյանքին վերջ տալու համար։

Լուսաբացին նորից եկավ Լազարևը, դարձյալ շրջապատված սպաներով, մտավ թագուհու ննջարանը՝ այս անգամ արդեն հայտարարելու, որ իշխան Ցիցիանովը հրամայում է նրան իսկույն, առանց ժամանակ կորցնելու, վեր

1 «Акты...», т. II, № 199.

2 Այս նամակն առաջին անգամ հրապարակել է Դուբրովինը («Закавказье от 1803—1806 года» Спб., 1866, с. 494—500), սակայն ամենաթեթև չափով անգամ ուշադրություն չէ առել այդ վավերագիրը դեպքերի նկարագրության և գնահատման մեջ։

կենալ և ճանապարհվել, կառքն էլ արդեն պատրաստ էր դրսում։ Մարիամն անակնկալի է գալիս. այդպիսի մի հրաման նա նոր էր լսում և երբ զարմանք է հայտնում, թե ինչու այդ մասին երեկ երեկոյան չէր հայտնում իրեն, որ կարողանար պատրաստվել, ստանում է պատասխան, թե երեկ Ցիցիանովից հրաման չկար նրան այդպիսի հայտարարություն անելու։ Այն ժամանակ Թագուհին խնդրում է, որ իրեն գեթ մի ժամ ժամանակ տան մի քանի պատրաստություններ տեսնելու։ Լազարևը մերժեց։ Թագուհին հայտնեց, որ մանուկ Օքրոփիրը հիվանդ է, տաքության մեջ, և խնդրեց թույլ տալ թողնել նրան Թիֆլիսում, որպեսզի լավանալուց հետո ուղարկեն իրեն։ Լազարևը հայտարարեց, թե ինքը Ցիցիանովից հրաման չունի այդպիսի պատասխան տանել նրան կամ ժամանակ տալ։ Դժբախտ մայրը խնդրում էր, որ գոնե սպասեն մինչև որ երեխաները իրենք կզարթնեն։ Այս էլ չընդունվեց։ Այս բոլոր խնդիրները Լազարևը համարում էր պատրվակներ՝ անմիջապես ճանապարհ ընկնելու հրամանից խուսափելու համար, և ասաց, թե ինքը շուտով ցույց կտա, թե ինչպես դուրս կտանե սենյակից. և իրավ, նա դուրս է գնում և իսկույն էլի ներս գալիս, բերելով իր հետ 13 կամ 14 սպաներ և կազակներ։ Մոտենալով անկողնի մեջ իր երեխայի հետ պառկած Թագուհուն և ցույց տալով նրան, հրամայում է վերցնել նրան զոռով և դուրս տանել։ Այդ հրամանի վրա ութ սպա և կազակ Թագուհուն են բռնում, հինգն էլ շրջապատում են Թամարին։ «Ինձ շրջապատողներից մեկը,— գրում է Թագուհին,— բռնեց իմ աջ ձեռքը, իսկ մնացած յոթը, անկողինս զանազան կողմերից բռնած՝ քարշ տվին։ Տեսնելով այս բանը, իմ որդի Ջաբրայիլը մերկացրեց իր խանջարը, ասելով նրան, թե քանի ինքը կենդանի է, չի թույլ տա քարշել իր մորը, և պահանջեց, որ նրանք դուրս գնան, և նրանց կհետևենք մենք ինքներս հոժարակամ։ Իսկ իմ աղջիկ Թամարին, երբ շրջապատում էին հինգ հոգով, նա էլ տեսնելով վառարանի վրա դրած խանջարը, վերցրեց նրան իր ձեռքը, և այս տեսնելով մեզ շրջապատող մարդիկ, թողին մեզ ու դուրս փախան։ Շուտով մեզ մոտ մտավ գեներալը մերկացրած սուրը ձեռքին, նույնպես և օֆիցերներն ու կազակներն էլ մերկ սրերով ներս թափվեցին։ Ես նստած էի և այդ միջոցին ինքս էլ տեսա վառարանի վրա դրած մի խանջար և ձեռքս առի նրան, իսկ իմ մայրը, տեսնելով ներս մտածներին մերկացրած սրերով, գնաց նրանց առաջ, ծունկ չոքեց, համբուրում էր նրանց ոտները և ամենքին աղերսագին խնդրում էր կռիվ չսկսել. իսկ նրանք, ընդհակառակը, նրան աքացի տալով գցեցին իրենց ոտների տակ և անցան նրա վրայով։ Այդտեղ Լազարևը սուրը շարժեց դեպի ետ, ես մի կողմ քաշեցի գլուխս, և նա սրով խփեց ուսիս, խոր կտրվեց մարմինս և ոսկորս մի ափ տեղի մեծությամբ»։

Սկսվում է, ինչպես պատմում է Թագուհին, մի կատարյալ պատերազմ մի կնոջ և երկու երեխաների դեմ։ Թագուհին սրի մի հարված ստանում է մի ուրիշ սպայից և մի երրորդն էլ դարձյալ Լազարևից և նոր վերք է ընդունում ափի վրա։ Ջաբրայիլն ու Թամարը շրջապատվում են, Թիֆլիսի ոստիկանապետը նրանց զինաթափ է անում, իսկ կազակներից թե սպաներից մեկը սուր է քաշում Թամարայի վրա, բայց սրա դայակը ձեռքով ուզում է ետ մղել այդ հարվածը, և սուրը կտրում է նրա ձեռքը։ «Այսպես խղճալիորեն հոշոտված ու վիրավորված էի ես, իմ արյունով թաթախված Հերակլն սկսեց աղիողորմ լալ,— շարունակում է Թագուհին,— մանուկ Աննան նույնպես ճիչ բարձրացրեց, որովհետև նրան խլեցին ծծմոր ծծերից և դուրս տարան։ Իմ բոլոր մյուս երեխաներին էլ, մեծին թե փոքրին դուրս տարան զորքերով բռնված հրապարակը, պահեցին այնտեղ։ Տեսնելով այս սարսափելի տեսարանը, իմ խեղճ մայրը, մոտենալով ինձ և տեսնելով արյունաթաթախ և հոշոտված,

ուշագնաց, ողբում էր ինձ և ուշքի բերում իմ մի աղախնի հետ. բայց շրջապատող զինվորներից ոմանք վազեցին նրանց մոտ, հրացանների հետույքով դուրս վռնդեցին նրանց հրապարակն անպատիվ կերպով, իսկ ինձ ցած քարշեցին թախտից, որի վրա պառկած էի, այնպես որ մարմնիս կեսը թախտի վրա մնաց, կեսը հողի վրա էր ընկած։ Այս դժբախտությունը տեղի ունեցավ արշալույսին. դեռ բոլորովին չէր լուսացել, և ճրագները դեռ վառված էին սենյակներում, երբ ինձ մոտ մտցրին զինվորներին, որոնք շրջապատեցին թախտը, որի վրա ես պառկած էի։ Բավական ժամանակ անցած, արևը ծագելիս, եկավ Թիֆլիսի ոստիկանապետը մի կազակի հետ. նրանք իրենց հետ ջուր բերին, և կազակը ինձ վրա ջուր փչեց բերանով, իսկ ոստիկանապետը ձեռքով էր սրսկում, և այսպես ինձ ուշքի բերին։ Դրանից հետո եկավ իշխան Դմիտրի Օրբելիանին և հրամայեց վերցնել ինձ թախտից և դնել վերմակի վրա. և հետո դուրս տարան ինձ ձեռքերի վրա և դրին վաղօրոք Լազարևի պատրաստած արկղ-կառքի մեջ։ Հետո ոստիկանապետը՝ տուն մտնելով, դուրս բերեց իմ արյունաթաթախ բարձն ու դրեց գլխատակիս։ Այս միջոցին վերին հարկից վազեցին ինձ մոտ իմ Հռիփսիմե և Գայանե աղջիկները փետելով իրենց մազերը, իսկ նրանց հետ նաև իմ պալատական տիկիններն ու օրիորդները, որոնք ողբում էին իմ վիճակը, բայց վերջիններին զինվորները՝ հրացանների հետույքներով հարվածելով, նորից տուն քշեցին։ Դրանից հետո կառք նստեցնելով իմ երեխաներին տարան. բայց փոքրիկ Հերակլը որովհետև շատ էր լաց լինում, նրան բերին և ինձ մոտ նստեցրին։ Այս միջոցին էլ բերեցին իմերել մշակներ, մինչև 40 թե 60 հոգի, որոնք վերցրին ինձ և տարան. և որովհետև այդ ժամանակ իմ վերքերը դեռ չէին կապված, իմ արյունը հոսում էր նրանց վրա՝ ինձ տանելու ժամանակ։ Ամեն տեղ ժողովրդի սարսափելի կուտակում էր թե փողոցում և թե կտուրների վրա, դուրս էին թափվել ամենքը՝ թե օտարներ, թե Թիֆլիսի բնակիչներ և թե ռուսներ, որոնք նայում էին ինձանից հոսող արյան ողորմելի տեսարանին, լաց էին լինում աղիողորմ, փետում էին իրենց մազերը և կուրծք ծեծում, տեսնելով ինձ և իմ երեխաներին այդքան թշվառ դրության մեջ. թեև զինվորները նրանց վանում էին, բայց նրանք, այնուամենայնիվ, խմբերով շարունակեցին հետևել մեզ մի ամբողջ վերստ տարածության վրա հոգևորականների հետ միասին, մինչև որ զինվորները ետ դարձրին ամենքին»։ Անցնելով հինգ վերստ, Թագուհուն տանողները կանգ առան, և այդ ժամանակ միայն արքունի վիրաբույժ Թաթուլը (հայ) կապեց նրա վերքերը և այդտեղ էլ հաղորդեց նրան, թե Լազարևը սպանված է։ Իր նամակի մեջ դժբախտ Թագուհին երդվում էր աստուծով և կայսրի թանկագին արևով, որ մինչև այդ նա չէ իմացել, թե ինչ է եղել Լազարևը և չգիտե, թե ով է նրան սպանել։ «Ես լսել եմ,— գրում էր Մարիամը,— որ Ցիցիանովը թղթով հայտնել է ձեր մեծության, դատապարտելով ինձ չարագործությամբ ձեր մեծության առջև»։ Հերքելով իր ազգականի զրպարտությունը, Թագուհին ասում էր, թե ինքն այնքան տանջանքներ կրելուց հետո իրավունք էր համարում հուսալ, թե հովանավորություն կգտներ կայսրից։ Չէ որ նրա ամուսին Գեորգին էր, որ երկու թագավորություն (Քարթալինիա և Կախեթ) տվեց Ռուսաստանին և իր մահից առաջ գրած նամակով կայսերական հզոր աջի պաշտպանության հանձնեց իր կնոջն ու երեխաներին։ Բայց մինչդեռ այսպիսի ակնկալության մեջ էր, Վորոնեժի նահանգապետը հայտնեց նրան սարսափելի վճիռը, որ պիտի սպանե իր և իր երեխաների կյանքը (վանքի մեջ փակելու վճիռն է ակնարկում)։ Ուստի աղաչում էր, որ կայսրն ողորմություն անե և ազատե իրեն գերուհու դրությունից։ «Կանչիր քեզ մոտ և լսիր իմ պաղատանքը,— ավելացնում էր դժբախտ կինն ի վերջո,— ինքդ դիտիր

նրանց ինձ պատճառած տանջանքը և իմ հոշոտած մարմինն ու իմ սեփական արյունով ներկված հագուստս»[1]:

Այսպիսի նամակներ նա գրեց և կայսրուհուն ու Պետերբուրգի միտրոպոլիտին: Բայց իզուր: Հրովարտակների մեջ մեծախոս, արդարությունն ամեն բանից բարձր դասող Ալեքսանդրը, նույնիսկ որևէ պատասխանի չարժանացրեց թշվառ կնոջը[2]: Եվ միայն վերջին ժամանակներս է, որ նույնիսկ պաշտոնական պատմագրությունը գալիս է այն եզրակացության, թե ինչպես հայտնի չէ, թե ով էր Լազարևի սպանողը[3]: Կան մի քանի հավանականություններ՝ պնդելու համար, որ սպանողն եղել է թագուհու դրանիկներից մեկը, ազնվական Խիմշիևը: Եվ եթե այս ինչպես ճիշտ է, իսկ կասկածելու հիմքեր շատ չկան, այն ժամանակ պարզ կլինի, որ Ցիցիանովն էր այս հրեշավոր պատմության հեղինակն իր կամքը կատարել տալու և Վրաստանի վերջնական նվաճումն իրականացնելու համար:

Ահա ինչ տեսակ գործիչ էր երևացել Կովկասում՝ այնտեղ նոր իրականություն ստեղծելու համար: Հասկանալի է, որ իր սեփական հայրենիքի, իր հարազատ ազգի հետ այնպես վարվողը պիտի ավելի բացասական տրամադրություն ունենար դեպի Կովկասյան մյուս ազգությունները: Տեղայնություն, օտար ազգային իրավունք և առհասարակ ամեն մի այլ գաղափար, որ կանգնած էր իբրև խոչընդոտ ցարական նվաճողականության և ռուսացման ճանապարհին, ատելի էին նրան: Մասնավոր ատելություն նա ուներ, ինչպես կտեսնենք, դեպի հայերը: Նա էր, որ վերջնական հարվածով ոչնչացրեց հայ ազատագրական շարժման բոլոր ջանքերը, որոնք մի ամբողջ դարի տևողություն էին ունեցել: Սակայն նա, կատարելով Ալեքսանդր կայսրի հրահանգները, առանձին բացառություն էր դարձնում, զուտ քաղաքական նպատակով, չոկ պարսկական գործերի մեջ խառնվելու առիթ ունենալու համար, Էջմիածնի կաթողիկոսությունը, որի պաշտպան և հովանավոր էր նա իրեն հանդիսացնում: Եվ այսքանն արդեն բավական էր, որ աթոռի համար իրար ծվատող կողմերը կպչեին Ցիցիանովի փեշերին, անվանեին նրան ոչ միայն քրիստոնեության, այլև հայության պաշտպան, երկրպագեին նրա իմաստության և փառաբանեին նրա առաքինությունները:

Այս ուղղությամբ առաջնությունը պատկանում էր դարձյալ Դանիելի քծնող սուրկական ոճին: Իր առաջին իսկ նամակի մեջ նա Ցիցիանովին դարձնում էր «տիեզերահռչակ հաղթող կուսակալ ամենաողորմած ինքնակալ կայսերն մեծի»[4]: Պատմելով, թե ինչպես իրենից Դավիթը մահվան երկյուղով հրաժարական խլեց, նա խնդրում, աղաչում էր, որ այդ թուղթը համարվի անվավեր և անզոր, պատճառ չդառնա իրենից կաթողիկոսությունը խլելու: Տեսնելով, որ հրաժարականն էլ չօգնեց, մանավանդ տեղեկություններ ստանալով իր կողմնակիցներից, թե Դանիելի մարդիկ ուզում են նրան փախցնել Թիֆլիս և այդտեղ հաստատել նրա կաթողիկոսությունը, Դավիթն ավելի ևս խստացրեց հսկողությունը: Էջմիածինն ապահովություն շատ չէր տալիս, ուստի Մահմադ խանը փոխադրեց Դանիելին Երևան և բանտի մեջ դրեց նրան:

1 Н. Дубровин, «Закавказье от 1803—1806 гг.», с. 494—500.

2 Ութ տարի վանքում փակված մնալուց հետո, Մարիամ թագուհին, թույլտվություն ստացավ գնալու Մոսկվա, ուր նա անցկացրեց մինչև խորին ծերություն, չտեսնելով հայրենի երկրի երեսը: Մեռավ 1850-ին, և միայն այդ ժամանակ պաշտոնական կեղծավորությունը պատիվներով բարձրացնել ուզեց նրա անշնչացած դիակը, որ շքեղ հանդեսներով տարվեց Մցխեթ և արքայական շուքով թաղվեց վրաց թագավորների տոհմային գերեզմանոցում:

3 «Утвержд. русс. влад. на Кавк.», т. I, с. 58—61.

4 «Դիվան հայոց պատմության», գիրք Ե., եր. 307:

Եվ այնտեղից Դանիելն արձակում էր ռուսաց կառավարության շատ հաճելի աղաչանքներ: Ահա ինչ էր նա գրում Ցիցիանովին. «Սակայն յատուկ խնդրանօք ի բանտէ աստի զօրութեամբ հոգւոյ կալեալ քղանցից հանդերձի պայծառափայլութեան ձերոյ, զայս աղերս մատուցանեմ ձեզ, զի թէպէտ և մեզ հասցէ մեռանիլ աստ ի կալանս մեր, վերստին արիւն իմ հեղեալ յերկիր բողոքէ առ արդարադատ ինքնակալ յաղթող սուրբ կայսրի, չթողուլ զիրաւունս մեր թշնամեաց խաչին Քրիստոսի, զի մի պարծեսցին անօրենք յանօրէնութեան իւրեանց և մի կարասցեն ասել հեթանոսք թէ ուր են Աստուած քրիստոնէից: Աղաչեմ ուրեմն մաղթեմ, կամ այցելու լինել վասն անուանն Քրիստոսի և կամ յայտնել նորին սուրբ կայսրութեան զայս կտակ աղերսանաց իմոց զի ըստ առատ ողորմութեան ողորմեալ ննջեցելոց և կենդանեաց քահանայակարգ ողորմելի միաբանութեան մերում և տաճարին Աստուծոյ Արարատեան Աթոռոյն սրբոյ Էջմիածնի, այց արասցէ անպարտելի զօրութեամբ իւրով. քանզի մեծ է արդարև՝ թէ ողորմութիւն նորա հայեր ի սահմանս Արարատու մինչև յերկինս բարձրասցի և շուք նորա զգինս արեան Քրիստոսի և զսուրբ տաճարն Աստուածաէջ աստ ոչ ապահովացուսցէ և թողցէ մինչ իսպառ ճնճերիլ բոցով անօրինաց»[1]:

Մյուս կողմից դիմումներ նույն Ցիցիանովին, նույն Ալեքսանդր կայսրին անում էր և Դավիթը, այն էլ ոչ մի անգամ և ոչ էլ երկու, երեք անգամ: Եվ Ալեքսանդրը, Ցիցիանովին Թիֆլիս ուղարկելով, նրան էր թողել ընտրություն անել երկու կողմերի մեջ: Ո՞ւմ պիտի ընտրեր «տիեզերահռչակ հաղթող կուսակալը», այս շատ պարզ է: Դանիելը ծնկաչոք, անվերապահորեն կանչում էր ռուսներին հանուն անօրենների ձեռքին գտնվող խաչի, տաճարի և քահանայության: Դավիթը խաչակրություն չէր քարոզում, որովհետև նրա մեջ ավելի զարգացած էր քաղաքագիտական հասունությունը: Նա գիտեր, թե ինչ աղետներ էր բերել խաչակրության ակնկալությունը Ղարաբաղին, գիտեր և այն, որ հայ ժողովրդի տերը միայն ռուսը չէ, այլ մեծագույն չափով և պարսիկը: Իր մտերիմ Գևորգ Աղայեկովին գրած նամակներից մեկի մեջ Դավիթը զարմանք էր հայտնում, թե ինչպես եղավ, որ ռուսաց կառավարությունը՝ սկզբում հանդիսանալով իր պաշտպան, հետո փոխեց այդ ընթացքը բոլորովին հակառակ ուղղությամբ և Դանիելին հանեց իր դեմ: «Եթէ,— ասում էր,— այնպիսի հաւատարմութեան ցանկան, զի մեք և բոլոր ազգ մեր կորիցէ ի սրոյ պարսից, յորպիսի եղեն տունն Աղուանից և հայրապետ նոցին Յովհաննէս, որ ի տանջարանի աւանդեաց զոգին[2], չեմ բաւական այնմ, բայց յայնմանէ կամ ի մեծի հնազանդութեան, և բոլոր ուխտիւք աղօթեմք անդադար վասն անդին կենաց օծելոյն մեծի և համայն թագաժառանգ նորին պալատականացն և տենչամք հանապազ ընդարձակիլ գաւազանի նորին և մինչև առ մեզ ևս տարածանիլ, և զմեզ զվարթեալքս ի ներքո քաղցր հովանաւորութեան իւրոյ ժողովել, զայս ամենայն տացէ ինձ Տէր, որ թշնամի համարեցեալ եմ յաչս նոցին տեսանել, և մեռանիլ»[3]: Այս խոսքերով Դավիթը բացարձակորեն ցույց էր տալիս, թե ինքը հետևում է մի քաղաքականության, որ շատ նման էր 18-րդ դարի նշանավոր կաթողիկոս Սիմեոն Երևանցու քաղաքականությանը, այսինքն՝ նա սրտով ուզում էր, որ ռուսները տիրապետեն Հայաստանին, բայց բոլորովին չէր ուզում, որ հայերը գործիք դառնան ռուսական արշավանքի համար և այսպիսով գրգռեն Պարսկաստանի և առհասարակ իս-

1 «Դիվան հայոց պատմության», գիրք Ե, եր. 319:

2 Ակնարկում է Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին, որ ռուսների հետ գաղտնի հարաբերություններ ունենալու համար ձերբակալվեց Շուշու Իբրահիմ խանի հրամանով և խեղդամահ եղավ:

3 «Դիվան հայոց պատմության», գիրք Զ, եր. 220:

լամ աշխարհի բարեկամությունը, որ կարող էր կոտորած և ավերում առաջացնել։ Այսպիսի մի քաղաքական ըմբռնման բնական հետևողությամբ Դավիթը բարյացակամ վերաբերմունք ցույց էր տալիս և պարսիկներին, շահագործելով, ինչպես մի բանիմաց քաղաքագետ, ամեն մի հարմար առիթ։ Դանիել կաթողիկոսը գրում էր Ցիցիանովին այսպիսի տողեր։ «Այլ սակայն ամենահնար Դաւիթ կաթողիկոսն այսու ամենայնիւ ոչ բաւականացեալ, այլ և գրեալ է առ սարդարն պարսից, թե ահաւասիկ թշնամին մեր որ զրամատու ռուսաց կայսեր զինեալ ընդդէմ շահին, և եկեալ ջանայր ընկենուլ զմեզ ևս և զերկիրս զայս տալ նոցա, կալեալ ունիմ ի ձեռին իմում, այլ չկարեմ շահել ի բազում ժամանակս ուստի ծանուցանեմ ձեզ, զի առաքեալ տացիք զաս և այլն և այլն»[1]։

Պարզ է, թե ում պիտի ընտրեր Ցիցիանովը, մանավանդ այսպիսի մի վեհափառական մատնությունից հետո։ Դեռ Հյուսիսային Կովկասում էր գտնվում Ցիցիանովը, երբ ստացավ Թիֆլիսից, գեներալ Լազարևից հաղորդություն, թե Դանիել կաթողիկոսը բռնությամբ փոխադրված է Էջմիածնից և բանտարկված։ Դեկտեմբերի 15-ից նա հրամանագրում էր Լազարևին իմաց տալ Երևանի խանին, թե Դանիել կաթողիկոսի կյանքի համար նա կլինի պատասխանատու ռուսաց կայսրի առաջ և կենթարկվի նրա այնպիսի խիստ պատժին, որ կզղջա, բայց այլևս ուշ կլինի։ Այս սպառնական նախազգուշացումը Լազարևն ուղարկում էր, նույն դեկտեմբերի վերջերում, Երևան՝ իշխան Թամազ Օրբելիանիի միջոցով։ Դանիելն այդ ժամանակ տարված էր Երևան և արգելված Անանիա առաքյալի վանքում։ Նրա հետ էին և նախկին պատրիարք Գրիգոր Խամսեցին և Ներսես վարդապետ Աշտարակեցին։ Մահմադ խանը, միշտ խորհրդակից ունենալով Նախիջևան Քալբալի խանին, սկսեց մի դիվանագիտական ճարպիկ խաղ։ Բանն այն էր, որ Ախալցխայի Շերիֆ փաշան, ապստամբելով Թուրքաց կառավարության դեմ, պաշտոնանկ էր եղել և, տեղի տալով իր տեղը նշանակված նոր փաշային, փախել էր Երևան։ Մահմադ խանն ամեն կերպ աշխատում էր ուժեղացնել Շերիֆ փաշային, որպեսզի նա կարողանա կռվով դուրս վռնդել Ախալցխայի նոր փաշային և նստել իր տեղը։ Ռուսական սպառնալից պահանջը խանին առիթ էր տալիս փոխադարձության սկզբունքի վրա դնելու կաթողիկոսական հարցը։ Նա համաձայնություն էր տալիս հեռացնելու Դավթին և նրա տեղը Դանիելին նստեցնելու, եթե ռուսներն էլ կհամաձայնվեն օգնական զորք տալ Շերիֆ փաշային Ախալցխան վերցնելու համար։ Պետք էր, ուրեմն, որ Թամազ Օրբելիանին վերադառնար Թիֆլիս այս ուղղությամբ բանակցություններ սկսելու համար։ Նրա վերադարձից օգուտ քաղեցին Գրիգոր եպիսկոպոսն ու Ներսես Աշտարակեցին, որոնք կարողացան հավատացնել խանին, թե իրենք, իբրև ռուսների կողմնակիցներ, հեշտ կարող են համոզել նրանց, որ ընդունեն Շերիֆ փաշային օգնելու միտքը։ Դանիել կաթողիկոսն էլ այս մտքով նամակ գրեց Թիֆլիս, այնպես որ խանին ուրիշ ոչինչ չէր մնում անել, բայց միայն թույլ տալ, որ եպիսկոպոսն ու վարդապետը Թիֆլիս գնան իշխան Օրբելիանիի հետ։ Բայց այս միայն մի ճարպիկ խաղ էր, որ խաղում էին դանիելականները։ Գրիգորն ու Ներսեսը Երևանից դուրս գալուն պես անմիջապես մոռացան Շերիֆ փաշային և սկսեցին ամենայն եռանդով աշխատել իրենց դատի համար։ Հասնելով Թիֆլիս հունվարի 31-ին, նրանք տեսան, թե ինչ շքեղ պատրաստություններ էր տեսնում Հովհաննես Գեղարդակիր եպիսկոպոսը դիմավորելու համար իշխան Ցիցիանովին, որ պիտի մուտք գործեր Թիֆլիս հետևյալ օրը, փետրվարի 1-ին։ Ահա ինչպես է նկարագրում Ներսեսն այդ ընդունելությունն իր նամակներից մեկի մեջ։

[1] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ե, եր. 311—312։

«Եկեալ ժամանեցաք մեք աստ ի Թիֆլիս քաղաքս ի 31-ն յունվարի. և եկն եմուտ ի քաղաքս մեծահանդէս փառօք պայծառափայլ քնեազ Պաւ Դիմիտրևիչ Ցիցիանովն ի 1 փետրվարի, որում ընդ առաջ ելեալ նահատակ կենդանի սուրբ հայրն իմ հոյակապ Յովհաննէս արհին, յանդիման լինի նմա ի Դուշէթ և ողջունեալ զնա ըստ արժանւոյն մատուցմամբ աղ ու հացի ընդ գրկեալ աւետարանաւ և խաչիւ լսէ զբազում բանս ախորժականս, նաև զխոստումս լաւագոյնս զայս օրինակ՝ թե իսկոյն ընդ մտանելս (ի Թիֆլիս) յերկրորդում աւուր առաքեցից յԵրևան զայր հաւատարիմ և կատարեցից զանդառնալի հրաման կայսերական և այլն։ Ի վերայ այսորիկ հրաման խնդրեալ վերադառնայ (Յովհաննէս եպիսկոպոսը) ի քաղաքս տնօրինել աստ զհանդէս հոգևորականաց՝ յառաջավորեալ նմա ի մտանել իւրում, որ և պատրաստեալ ըստ արժանւոյն՝ զմեծ հանդես հանդիսացոյց կարգաւորաբար ի դուռն բերդին զարդարեալ պատուական զգեստուք և մեծամեծ խաչիւք և վառօք. և ի մերձելն նորա հանդէսն յառաջ կացեալ՝ յիշեալ հոյակապ արհին զրուատէ զնա պերճիմաստ բանիւք ներբողից, զոր և արձանացուցեալ գրովք մատուցանէ նորին բարձր գերազանցութեան. որ և առաջնովք և վերջնովք գրաւեալ զնա շնորհօք հոգևորական կացուցանէ զմեծ նախարարն բաւական շնորհակալու, որ և ի նոյն երեկոյի, որում հանգիստ կալնույր ի օթևան իւր՝ իսկ և իսկ կոչեալ զսրբազան հայրս մեր պանծալի՝ խօսի ընդ նմա զբազում մխիթարականս և խնդրէ ցուցանել զօք գիտակ լեզուի ռուսաց և տաճկաց, զնա առաքել յԵրևան և այլն»[1]։

Այսպես ահա, դանիելական ըմբռնողության պատկանող հայ հոգևորականությունն սկսում էր իրոք էլ ապացուցանել իր անվերապահ անձնվիրությունը ռուսական շահերին, առաջնորդելով ցարական ուժը նրա նվաճողական ճանապարհին։ Այսպիսի աղմկավոր ցուցամոլություն չէր երևում Կովկասյան ուրիշ ազգերից և ոչ մեկի մեջ։ Եվ հասկանալի է, որ Ցիցիանովի առաջին գործն է դառնում դավիթ-դանիելյանի խնդրով զբաղվելը։ Փետրվարի 6-ին նույն Թամազ Օրբելիանին կրկին ճանապարհվում է Երևան, տանելով Ցիցիանովի նամակը, որի մեջ կտրուկ խոսքերով և իրեն հատուկ սպառնական-հոխորտալից ոճով պահանջում էր ամենայն Հայոց կաթողիկոսությունը տալ Դանիելին, որ հաստատված է ռուսաց մեծ կայսրից և օսմանյան մեծ Սուլթանից։ «Այսքան բարձրահզոր հրամայողների ձայնից և կամքից հետո թող լռեն նրանց սողուն հպատակների խոսքն ու զրույցները»,— գրում էր նա[2], ի վերջո խորհուրդ տալով խանին այնպես անել, որ չգրգռվի ռուսաց մեծ ցարի բարկությունը, թե չէ այն ժամանակ կզղջա խանը, բայց այլևս ուշ կլինի։

Դանիելյան ազատության հետ գնում էր և նվաճողականությունը։ Թամազ Օրբելիանիի հետ Ցիցիանովն ուղարկում է Երևան և կապիտան Զույկոյին, որին տված հրամանագրի մեջ ասվում էր, թե դեսպանության առաքման նպատակը Դանիելի կաթողիկոսացումն է, բայց և իսկույն ավելացվում էր. «Դուք ուղարկվում եք և այն բանի համար, որ այս առաքելության պատրվակով դիտեք թե բերդը, թույլ և ամուր տեղերը, նույնպես և հարմարությունն այն ամբողջ ճանապարհի, որ տանում է Վրաստանից Երևան»[3]. Երևանի խանն, իհարկե, շատ լավ էր հասկանում, թե ինչ է պատրաստվում իր շուրջը, մանավանդ որ Դավթի կողմնակիցներն ամեն կողմից մանրամասն տեղեկություններ էին

[1] Ա. Երիցեան, Ներսէս Աշտարակեցին վարդապետ ժամանակ, («Փորձ», հանդես, 1877—1878։ № 1, եր. 233—234)։

[2] «Акты...», II, № 1214.

[3] «Акты...», II, № 1216.

ուղարկում։ Բայց և այդպես, այս անգամ էլ նա ուրիշ պատասխան չտվեց ռուսներին, բայց միայն կրկնելով նախընթացը, այսինքն՝ առաջարկելով օգնություն տալ Շերիֆ փաշային։

Մինչև իր դեսպանության վերադարձն Երևանից և Մահմադ խանի պատասխանն ստանալը Ցիցիանովն արդեն կազմել էր ծրագիր, թե ինչ քաղաքականության պետք է դիմել հայերի վերաբերմամբ։ Ալեքսանդրն իր հրամանների մեջ նրան խորհուրդ էր տալիս առհասարակ բարեհամբույր վարվեցողություն ունենալ հայերի հետ, քանի որ նրանք ազդեցիկ՝ վաճառականական ժողովուրդ են Պարսկաստանում, և պետք է խրախուսել, որ նրանք գաղթեն Վրաստանի սահմանները[1]։ Ռուսաց քաղաքականության առանցքը պետք է դառնա Էջմիածնի կաթողիկոսության հարցը։ Պարսկական գործերի մասին տեղեկություններ առնելու համար, ասում էր Ալեքսանդրը Ցիցիանովին, օգտակար կլինեն Դանիել կաթողիկոսն ու նրա կողմնակիցները[2]։ Բայց և այդպես նա չէր կանխորոշում, թե ով պիտի մնա երկու կաթողիկոսներից Էջմիածնի գահի վրա և սպասում էր, որ Ցիցիանովը ստուգապես տեղեկանա, թե ով է իսկապես վայելում հայ ժողովրդի համարումը։ Ահա այս հանձնարարությունը կատարելու համար էր, որ Վրաստանի կառավարչապետը փետրվարի 20-ին գրում էր կայսրին, թե ինքն արդեն ուսումնասիրել է հայերի հետ ունենալիք հարաբերությունները՝ Պարսկաստանի գործերի մեջ ազդեցություն ձեռք բերելու համար։ Թիֆլիսի հայությունը հակված է ավելի դեպի Դանիելը, քան թե Դավիթը։ Եվ այս բանը Ցիցիանովը բոլորովին բավական էր համարում իբրև որոշիչ, թե ամբողջ հայ ազգն էլ, ուրեմն, Դանիելին է ցանկանում[3]։ Ուրիշ կերպ Ցիցիանովն, իհարկե, չէր էլ կարող մտածել, գտնըվելով Հովհաննես Գեղարդակրի, Գրիգոր Խամսեցու և Ներսես Աշտարակեցու ազդեցության տակ, որոնք վառված էին սաստիկ ցանկությամբ տանելու ռուսաց զորքերն Երևան՝ իրենց դժբախտ կաթողիկոսին և նրա հետ ամբողջ հայ ազգը պարսկական լծից ազատելու համար։ Այս փաստը լավապես արտահայտում է Խամսեցու և Աշտարակեցու հետևյալ նամակը, ուղղված Ցիցիանովին։

«Սուրբ Յովհաննէս մկրտիչ մինչ էր ի բանտի, ըստ գրելոյ սուրբ աւետարանին Ղուկասու (7.13), առաքեաց առ Յիսուս զերկուս յաշակերտաց իւրոց և ասէ՝ Դո՞ւ ես որ գալոցն ես թէ այլում ակնկալցուք։ Ըստ այսմ ի ներկայս Նորին կայսերական աստ ողոմութեամբն պատրիարք Արարատեան աթոռոյն և այժմ բռնաւորութեամբ պարսից կալանաւորեալ հոգևոր տէրն մեր Դանիէլ, ի վերայ կրկնակի գրութեանց որ առ բարձր գերազանց պայծառափայլութիւն ձեր, բազում ջանացողութեամբ և մանաւանդ թէ յատուկ ողորմութեամբն Աստուծոյ հնարեցաւ առաքել առ ոտն ձերինդ պայծառափայլութեան զընիկ պաշտօնեայս իւր, զի որպէս առաջի պատկերի Նորին կայսերական մեծութեան՝ ձերինդ պայծառափայլութեան մեք ծանուսցուք բերան առ բերան՝ դէմ յանդիման՝ զայն ամենայն, զորս չէր հնար ի թուղթսն իւր՝ յերկիւղէ ճանապարհորդական վտանգին։ Արդ յօրէ անտի գտանելոյ նորա պշնորհս առաջի Նորին սուրբ կայսերութեան միշտ խնդիր նորա յաթոռոյ ողորմութեան Նորին այս է՝ յամենայն գրութիւնս իւր, զի ազատեսցի սուրբ աթոռն Արարատու հանդերձ բոլոր միաբանութեամբ և ժողովրդովք իւրով ի հեթանոսական տարապանաց, ամեն իրի, լսելով պշնորհաբեր գալստենէ Նորին իսկական պատկեր հզօր կուսակալիդ, առաքեաց զմեզ առ ոտս մատուցանել զնոյն խնդիր։ Աղաչէ արդ ուրեմն, Դանիէլ պատրիարքն, բազմավիշտ հոգևոր տէրն մեր, զի թէ հասեալ իցէ ողորմութիւն Աստուծոյն երկնաւորի ինքնակալ յաղթող սուրբ կայսրութեան, ահա ժամանակ ընդունելի, ահա օր փրկութեան, յորում ժամանեալ են պատրիարքն և Աթոռն Արարատեան ի վերջին ծայր եկին թշուառութեան և բոլոր ազգաւ և ամենայն միաբանութեամբ կան ի դրունս մահու, ուստի զի մի յանդգնեսցի ասել հեթանոսաց՝ թե ո՞ւր է Աստուած քրիստոնէից։ Խնդիրք են Դանիէլ պատրիարքի զի մեծ արասցիք ողորմութիւն անպատմելի սուրբ կայսերութեանն, զօրացուցիք զաջ նորա և բարձր արասցիք զձեռն նորա ըստ սաղմոսին (8. 8. 14) և յայց ելեալ ողորմելի պատրիարքին և Աթոռոյն Արարատեան և ժողովրդեան հայոց, ազատեսջիք զնոսա ի բռնութենէ պարսից ի փառս ամենամեծին Աստուծոյ և ի պատիւ մեծութեան սուրբ կայսեր նորա, ամենաողորմած տիեզերահրաման օգոստոսափառ սուրբ կայսեր մերոյ Ալեքսանդր Պաւլովիչի»[1]։

Այս ուշագրավ փաստաթուղթը հաստատում է, որ դանիելյան խնդիրն այլևս դադարել էր լոկ կաթողիկոսական թեկնածուի խնդիր լինելուց։ Նա դառնում էր ավելի խոշոր, համազգային խնդիր։ Պարսից բռնակալությունից ազատվողը միայն Դանիել Սուրմառեցին չպիտի լիներ, այլ նրա հետ նաև ամենայն հայոց Մայր Աթոռը, իսկ նրա հետ նաև ամբողջ հայ ժողովուրդը։ Այսպիսով դանիելական կուսակցությունը մի տեսակ պատերազմ էր հայտարարում պարսկական տիրապետության, տանելով, նրան ոչնչացնելու համար, դեպի Արաքսի հովիտը ռուսական մի ամբողջ արշավանք։ Եվ, հարկավ, Ցիցիանովը չպիտի լիներ այն մարդը, որ դժգոհ լիներ իրերի այս տեսակ ընթացքից։ Մարտ ամսին Երևանից վերադարձավ Թամազ Օրբելիանիի պատվիրակությունը, բերելով, իբրև պատասխան, Մահմադ խանի առաջարկությունը Շերիֆ փաշային օգնելու մասին։ Այդ պատասխանը Ցիցիանովը համարում էր հանդուգն և անհանդուրժելի, որովհետև Շերիֆ փաշան Ռուսաստանի ոխերիմ թշնամին էր։ Ուստի և նա որոշեց պատերազմական գործողություններ բաց անել Երևանի խանի դեմ։ Բայց այս պատերազմը լոկ Դանիելի համար չէր, ոչ էլ նույնիսկ լոկ հայ ժողովրդի ազատության համար, այլ պարզապես՝ սկզբնավորությունն այն շարժման, որի նպատակն էր ամբողջ Անդրկովկասի նվաճումը։ Այս ամբողջ ծրագիրը Ցիցիանովը բացատրում էր մարտի 12-ին Ալեքսանդր կայսրին ուղարկած իր հայտարարության մեջ։ Որակելով Մահմադ խանի վարմունքն ոչ թե իբրև մի օտար անկախ իշխողի կամք, այլ իբրև «անհնազանդություն», նա գրում էր.

«Այս բացարձակ անհնազանդությունը թողնել առանց պատժի, կարող է տկարացնել այն ազդեցությունը, որ ձեռք է բերված ձեր կայսերական մեծության զենքով։ Ուստի մտադիր եմ ես, հենց որ Երևան տանող ճանապարհի վրա գտնվող լեռնային բարձրությունները կմերկանան իրենց ծածկող ձյուներից, գնալ Երևանի վրա վեց բատալիոն զորքով, բարձրացնել Դանիելին կաթողիկոսական գահը, պատժել Մահմադ խանի համառությունը և թողնել բերդապահ զորք, եթե այնտեղի հայ վաճառականությունը կհամաձայնվի պարենավորել այդ բերդապահ զորամասը, ինչպես խոստանում է այժմ։ Սրան համարձակվում եմ կցել, որ բարձրագույնս ի գիտություն իմ տված նախագծի կատարման համար Պարսկաստանի կողմից ամենաբարեպատեհ հանգամանքներ են դրված մեր առջև։ Դաղստանը և առհասարակ լեռնաբնակները, նեղվելով ամենուրեք ռուսական զորքերից, պիտի շուտով մտածեն ոչ թե

1 Ibid., № 5
2 Ibid., с. 8.
3 «Акты...», II, № 537.

1 Ա. Երիցեան, Ներսէս վարդ., («Փորձ», 1877—1878, № 1, եր. 234—235)։

արշավների մասին, այլ իրենց սեփական փրկության մասին։ Դերբենդը, Շամախին և Բաքուն գրավելու համար միայն հարկավոր է ունենալ բավականաչափ բերդապահ զորք, որի մասին ես բախտ եմ ունեցել ամենահպատակորեն գրել հունվարի 8-ի իմ հայտարարությամբ։ Երևանի վրա, ինչպես մի տեղի վրա, որ արժանի է ձեր կայսերական մեծության բարեհաճության, պիտի ես ինքս գնամ և Աստծու օգնությամբ հպատակեցնեմ ձեր կայսերական մեծության հաղթական զենքին։ Բաբախանը, որ այնքան սարսափելի է Պարսկաստանում և պատերազմական գործի ընդունակություն չունի, այժմ ավելի ևս քիչ կարող է զբաղվել մեր շարժումներով, քանի որ նրա ուշադրությունը գրաված են Խորասանի ներքին անկարգությունները և, ինչպես հավատացնում են, Հնդկաստանի Անգլիական Ընկերության վրա ունեցած անբավականությունները, ուր անակնկալ կերպով ծագած մի կռվի մեջ սպանվել է նրա դեսպաններից մեկը։ Գանձակի Ջավադ խանն իմ գալուց հետո թվում է, թե թեքվում է դեպի մեր հովանավորությունն որոնելու կողմը, Շուշու կամ Ղարաբաղի Իբրահիմ խանից ես ստացա հատուկ սուրհանդակի միջոցով բարեկամության, անձնվիրության և բարյացակամության հավաստիացումներ, որոնց ոչ մի հավատ չընծայելով, տեսնում եմ, սակայն, նրանց սեփական օգուտները, որոնք կապված են մեր հովանավորության հետ, քանի որ Ադրբեջանի խաների մեծ մասը անկեղծորեն ատում է պարսկական կամայական կառավարությունը։ Ի վերջո համարձակվում եմ ասել, որ երբ լրիվ հետևակ զորագունդ, մի գունդ կանոնավոր հեծելազորքի՝ ինձ մոտ եղած զորքերը լրացնելու համար և 100.000 արծաթ ռուբլին, որ միանվագ կտրվեր ինձ արտակարգ և չնախատեսված ծախսերի համար ինձ կդնեին հարձակողաբար գործելու դրության մեջ և Երևանը բարեհաջող կերպով նվաճելուց հետո ես կերթամ Նախիջևանի վրա, այնտեղից էլ Շուշու վրա և այսպիսով Քուռի և Արաքսի վրայով սահմաններ գրավելով կատարել այս արշավանքի գլխավոր մասը Պարսկաստանի կողմից»[1]։

Սակայն հպարտացող և խրոխտ զորավարը շատ շուտով տեսավ, որ այնքան էլ հեշտ չէ իր ծրագրածի պես զինվորական գրոհներ կատարելը։ Գարունն էլ եկավ, լեռների ձյուններն էլ հալվեցին, բայց նա չկարողացավ արշավել Երևանի վրա։ Ամենագլխավոր պատճառն այն էր, որ Երևան արշավելով, չէր կարելի թիկունքում թողնել մի այնպիսի վտանգավոր թշնամի, ինչպես էին Ջարի և Բելաքանի (այժմյան Զաքաթալայի շրջանի) լեզգիները։ Այս քաջ և գիշատիչ լեռնցիները շատ հին ժամանակներից ամբողջ Անդրկովկասի, բայց մանավորապես իրենց սահմանակից Վրաստանի պատուհասն էին կազմում իրենց մշտական արշավանքներով։ Այժմ այնտեղ էին գտնվում վրաց Ալեքսանդր և Թեյմուրազ արքայորդիները, որոնք աշխատում էին լեզգիներից մի կազմակերպված խոշոր ուժ պատրաստել՝ ռուսներին հարվածելու համար։ Ցիցիանովն ստիպված եղավ նախ արշավանք սկսել Բելաքանի և Ջարի դեմ և հրամայեց գեներալ Գուլյակովին մի փոքրիկ զորաբաժնով անցնել Ալազան գետը, նվաճել Բելաքանն ու Ջարը, հարկադրել նրանց ընդունել ընդմիշտ Ռուսաստանի հպատակությունը։ Գեներալ Գուլյակովը փայլուն հաջողությամբ կատարեց այդ հանձնարարությունը շնորհիվ այն հանգամանքի, որ նրա փոքրիկ բանակին միացան հինգ հազարից ավելի վրացի կամավորներ, և այսպիսով խոշորացած ուժի գլուխ անցած՝ քաջ գեներալը մտավ ամուր երկրի սիրտը, հարձակումով վերցրեց Բելաքան անառիկ բերդը, քանդեց ու երկրի երեսից ջնջեց ոչ միայն նրան, այլև մի խումբ այլ գյուղեր։

1 «Акты...», II, № 1216.

Ջարը, տեսնելով Բելաքանի վիճակը, հրաժարվեց դիմադրություն ցույց տալուց և հաշտություն խնդրեց։ Նրա պատգամավորներն եկան Թիֆլիս, ուր հաղթանակով ավելի ևս հպարտացած Ցիցիանովը թելադրեց նրանց մի շարք պայմաններ, որոնցով ռուսական տիրապետությունը մշտապես հաստատվում էր այն երկրում, որ, սակայն, պահում էր իր ներքին ինքնավարությունը։ Ամառվա սկզբին, վերջացած համարելով լեզգիների հարցը, Ցիցիանովն սպասում էր Ռուսաստանից նոր զորքերի, որպեսզի ձեռնարկե այլ արշավանքների։ Այժմ հերթն Երևանինը չէր, այլ Գանձակինը։ Ցիցիանովը պահանջեց նրա Ջավադ խանից ընդունել ռուսաց հպատակություն, տարեկան հարկ վճարել և իր որդուն էլ պատանդ տալ ռուսներին։ Ջավադ խանն անպատասխան թողեց այդ ստորացուցիչ առաջարկությունը։ Գլխավոր հրամանատարը պատրաստվեց պատերազմի։ Բայց այդ միջոցին տեղի ունեցան անցքեր, որոնք ցույց տվին, թե լեզգիների հարցը բոլորովին վերջացած չէր։ Բելաքանի և Ջարի շրջաններում դարձյալ սկսվեց խմորում։ Ազգաբնակությունը չէր համաձայնվում վճարել իր խոստացած տուրքը մետաքսով։ Իսկ Ախալցխայում ապրող լեզգիներից մի խոշոր հրոսախումբ ներս խուժեց Գորու գավառը և այդտեղ բնաջինջ արավ ռուսական փոքրիկ սահմանապահ զորամասը։ Թեև այս հանդուգն արշավանքը նեղվեց վրա հասած ռուսական զորքից մինչև այն աստիճան, որ ամբողջ հրոսախումբը անձնատուր եղավ նրան, բայց և այնպես, իշխան Ցիցիանովն ստիպված էր առժամանակ, մինչև օգնական զորքի հասնելը, պաշտպանողական դիրք բռնել։

Ամենից շատ նրան վրդովմունք պատճառում էր Ջարի և Բելաքանի վարմունքը։ Եվ նա գրում էր լեռնցիներին մի ընդհանուր դիմում, որ շատ լավ բնորոշում էր այդ տաքարյուն և խստասիրտ իշխանավորին։ «Ապերախտներ,— ասում էր նա,— մի ուրիշ անգամ դուք ինձ չեք խաբի։ Կջնջեմ ձեզ աշխարհի երեսից, և չեք տեսնի դուք ձեր գյուղերը։ Հրով կանցնեմ ըստ ձեր սովորության, և թեև ռուսները սովոր չեն այրել, բայց ես կկրակեմ ամեն ինչ, որ գրավված չի լինի զորքերով և հավիտենապես կհաստատվեմ ձեր երկրում։ Իմացեք, որ գրելով այս նամակը ձեզ, ապերախտներիդ, իմ արյունն եռում է ինչպես ջուրը կաթսայի մեջ, և բոլոր անդամներս դողում են կատաղությունից։ Գեներալ չեմ ուղարկի ձեզ մոտ զորքերով, այլ ինքս կգամ, ձեր երկիրը կծածկեմ արյունով, և նա կկարմրի, բայց դուք, նապաստակների պես, կմտնեք կիրճերը, այնտեղ էլ ես ձեզ կհասնեմ և եթե ոչ ինձանից, գոնե ցրտից կսատկեք»[1]։

Այս ահարեկիչ խոսքերը, սակայն, չէին ազդում։ Ալազան գետի մյուս կողմում պատրաստվում էին նոր ահեղ շարժումներ։ Դաղստանից հազարավոր ձիավորներ էին եկել Ջառ՝ Կախեթի վրա հարձակման պատրաստվելու համար։ Եվ Ցիցիանովն ստիպված էր նորից հրամայել գեներալ Գուլյակովին գնալ Ջառ անհնազանդ բնակիչներին պատժելու համար։ Իսկ ինքն էլ միաժամանակ Թիֆլիսում էր պատրաստվում Գանձակի վրա հարձակվելու համար։

Այս ամբողջ ժամանակ Գրիգոր եպիսկոպոսն ու Ներսես վարդապետը գտնվում էին Թիֆլիսում և զբաղվում էին լայն և անխոնջ գրավոր պրոպագանդով։ Նրանց նամակները հեղեղում էին հայաբնակ փոքր ի շատե աչքի ընկնող վայրերը մինչև Հնդկաստան։ Ամեն տեղ ժողովրդականացվում էր այն միտքը, թե հասել է ժամանակ, որ ռուսները գնան զենքով ու պատերազմով Դանիելին կաթողիկոսացնելու և հայ ժողովուրդը պարսկական լծից ազատելու համար։

1 В. Потто, Утв. русск. влад. на Кавк., т. I, с. 85.

6. Գանձակի նվաճումը: *1803 թվի աշնան Վրաստան մտան նոր գունդ ռուսական զորքեր, որոնք ուղարկված էին Ռուսաստանից, և Ցիցիանովն իր ձեռքի տակ ունեցած ուժերը բավական համարեց երկու ուղղությամբ գործողություններ սկսելու համար. ինքը պատրաստվեց գնալ Գանձակի վրա, իսկ գեներալ Գուլյակովին հրամայեց նորից անցնել Ալազան գետը՝ լեզգիներին պատժելու և նորից հնազանդեցնելու համար։ Գանձակի դեմ արշավող զորամասը նոյեմբերի 20-ին հավաքվեց Թիֆլիսի մոտ գտնվող Սողանլուղ գյուղում։ Ռուսական արշավանքին մասնակցում էին և հայ ու վրացի կամավորական ուժեր։ Հայկական մի առանձին զորագունդ ուներ Վարանդայի Մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարյանը, որ այդ միջոցին ապրում էր, ինչպես գիտենք, Լոռում։ Բայց այդքանը բավական չէր։ Ցիցիանովը պատրաստել էր և Գանձակի ու նրա շրջակաների հայ ազգաբնակությունը՝ ռուսներին աջակցելու համար, լայն կերպով շահագործելով դանիելյան ռուսամոլությունը։ Այս ուղղության երկու խոշոր ներկայացուցիչները, Թիֆլիսի առաջնորդ Հովհաննես Գեղարդակիր եպիսկոպոսը և Ներսես վարդապետ Աշտարակեցին, որոնք գտնվում էին ռուսաց բանակում, և գնում էին գործելու տեղն ու տեղը։ Հայերի պատրաստումն սկսվել էր վաղուց և դեռ տարվա սկզբին Վրաստանի ռուսական իշխանություններն ունեին տեղեկություն, թե «Գանձակի բոլոր հայերը անհամբեր ցանկանում են, որ ռուսական զորքերը գնան Գանձակ, և այս բանի համար բոլոր մահմեդականները սպառնում են ճնշումներ գործ դնել նրանց վրա»[1]: Ցիցիանովը, հասնելով Շամխոր, հայերի այդ տրամադրությունը ավելի ևս հրահրելու համար ուղղեց նրանց հետևյալ հայտարարությունը. «Ես ռուսաց հաղթական զորքերի հետ մտնելով Գանձակի շրջանին պատկանող հողը, ձեզ բոլորիդ հավատացնում եմ նորին կայսերական մեծության իմ ամենաողորմած թագավորի անունով, թե ով ձեզանից կապաստանե համառուսական հզոր գահի պաշտպանության, նա կապահովվի բոլոր անձնական և կալվածական վտանգներից, չկրելով ոչ մի բանի մեջ ամենափոքր վնաս անգամ, կազատվի բոլոր ճնշումներից և թալաններից, որ կատարում էին մահմեդականները մինչև այժմ, և կունենա անվիճելի իրավունք գնալու և բնակվելու Վրաստանի որևէ մասում, իմանալով, որ այնտեղ կդառնա պետական գյուղացի, չպատկանելով ոչ մելիքներին, ոչ էլ ուրիշ որևէ կալվածատիրոջ»[2]:*

Ռուսական արշավանքը հանկարծակիի չէր բերում Ջավադ խանին։ Նա վաղուց էր սպասում այս վտանգին, ուստի և տեսել էր մի շարք ռազմական և դիվանագիտական պատրաստություններ։ Գանձակի տերը 50—55 տարեկան մի մարդ էր և ներկայացնում էր անդրկովկասյան թուրք խանի տիպիկ պատկերը՝ խորամանկ, արևելյան դիվանագիտության ճարպկություններով օժտված մի տիրոջ, ոչ զուրկ անձնական քաջությունից, քաղաքական մոմենտը նրբությամբ վերագնահատող և ստեղծված դրությունները հմտությամբ օգտագործող։ Ռուսական վտանգն ստիպել էր նրան հաշտվել իր վաղեմի և ոխերիմ թշնամու, Շուշու Իբրահիմ խանի հետ և խնդրել Պարսից Բաբախանի օգնությունը։ Իրանի տերն այդ միջոցին զբաղված էր Խորասանի գործերով, խոստանում էր Ջավադ խանին այդ հարցը կարգավորելուց հետո ուղարկել նրան օգնական զորք, իսկ մինչև այդ նա հանձնարարում էր տեղական թուրք իշխողներին միացնել իրենց ուժերը Ջավադ խանի հետ՝ ռուսներին դիմադրելու համար։ Միաժամանակ Ջավադ խանը կազմակերպում էր ներքին պաշտպանություն. հավաքում էր ռազմիկ ուժեր, ամրացնում էր իր մայրաքաղաքի

[1] «Акты...», II, № 1168.
[2] Ibid., № 1174.

արտաքին հողե պարիսպներով։ Վճռած լինելով պաշտպանվել մինչև վերջին ծայր Գանձակի բերդի մեջ, նա դրսում գտնվող ազգաբնակությունը հնազանդության մեջ պահելու համար հավաքեց և բերդի մեջ փակեց հազարավոր կանանց, որպեսզի նրանց ամուսինները չհամարձակվեն թշնամու կողմն անցնել։ Միևնույն նպատակով նա սահմանագլխի վայրերից հեռացրեց հայ բնակիչներին, համարելով նրանց, և այս ամենայն իրավունքով, անվստահելի տարր[1]: Խանն, այո, իրավունք ուներ անվանելու հայերին ապերախտ ժողովուրդ, որովհետև, ինչպես ցույց է տալիս XVIII դարի ամբողջ պատմությունը, Անդրկովկասյան ոչ մի մահմեդական երկրում հայերն այնպիսի բարյացակամ վերաբերմունք չէին տեսել դեպի իրենց, ինչպես Գանձակի խանության մեջ։ Ղարաբաղի մարտնչող հայությունը միշտ այդտեղ էր գտնում ապահով բարեկամական ապաստան և Գանձակի խաներն էին (առաջ Շահվերդի խանը, ապա՝ Ջավադ խանը), որ հայ մելիքներին ամեն տեսակ պաշտպանություն էին ցույց տալիս և նրանց հետ միացած մաքառում էին ընդհանուր թշնամու, Ղարաբաղի Իբրահիմ խանի դեմ։ Այժմ, երբ երկիրը ենթարկված էր ռուսական նվաճման վտանգին, նույն հայ ժողովուրդն էր կանգնած թշնամու կողմն և նրան էր օգնում։

Չնայած այս բոլորին, Ջավադ խանը լցված էր վճռականությամբ պաշտպանելու իր անկախությունը մինչև արյան վերջին կաթիլը։ Ուստի և ոչ միայն չէր վախենում Ցիցիանովի մեծամիտ հոխորտանքներից, այլև ինքն էլ հպարտ ու հոխորտալից լեզու էր բանեցնում այն գրագրության մեջ, որ ուներ նրա հետ Ցիցիանովը, նախքան պատերազմական գործողություններ սկսելը, կամենալով համոզել խանին, որ նա առանց դիմադրություն ցույց տալու անձնատուր լինի Ռուսաստանին։ Ռուսական քաղաքականությունն Անդրկովկասի նվաճման համար գործադրում էր հետևյալ ընդհանուր սիստեմը։ Ամեն մի խանի առաջարկվում էր ընդունել Ռուսաստանի հպատակությունը, վճարել տարեկան հարկ, ապահովել իր հպատակային հավատարմությունը պատանդներ տալով։ Իսկ ռուս կառավարությունը զորքերով գրավում էր խանության բերդերն ու մայրաքաղաքը, իր հովանավորության տակ էր վերցնում խանին, թույլ տալով, որ նա կառավարե իր երկիրն առաջվա պես։ Նվաճման այս եղանակն սկզբում շատ չպիտի խրտնեցներ խաներին, քանի որ նրանց իրավական դրության մեջ իսկապես մեծ փոփոխություն չէր կատարվում։ Խաները Պարսկաստանի վասալներն էին, այժմ դառնում էին Ռուսաստանի վասալներ։ Սակայն այս արտաքին հեշտ ձևը, որ նկատի ուներ կատարել նվաճողություններ առանց արյուն թափելու, գրեթե ոչ ոքի չէր խաբում, և ամեն մի խան շատ լավ զգում էր, որ ինքնավարության սիստեմը ժամանակավոր միջոց էր՝ անվերապահ նվաճողությունը, որ բուն նպատակն էր կազմում, փոքր-ինչ աքողելու համար։ Ջավադ խանն որոշեց չմտնել ռուսների հետ խաբուսիկ ժամանակավոր համաձայնությունների մեջ։

Իսկ Ցիցիանովն սկսեց իր նվաճողական արշավը, ինչպես լինում է միշտ, հիմնվելով իր իրավունքի և պատմական արդարության վրա։ Առանց նախապես պատերազմ հայտարարելու, նա մտավ օտար պետության սահմանները և այդտեղ միայն հայտարարեց իր կամքը։ Նույն Շամխոր կայանից, ուր ստորագրված էր հայերին ուղղած կոչը, Ցիցիանովը նոյեմբերի 29-ին գրում էր Ջավադ խանին. «Մտնելով Գանձակի երկիրը, հայտարարում եմ ձեզ այստեղ գալու պատճառների մասին։ Առաջինը և գլխավորը այն է, որ Գանձակն իր շրջանով Թամար թագուհու ժամանակները պատկանում էր Վրաստանին և

[1] Дубровин, Ист. войны, IV, с. 127.

խլված է նրանցից վրաց թագավորների թուլության պատճառով։ Համառուսական կայսրությունը, ընդունելով իր մեծազոր հովանավորության և հպատակության տակ Վրաստանը, չի կարող անտարբերությամբ դիտել Վրաստանի օտարացումը և մեծազոր և աստուծով բարձրացված Ռուսական կայսրության ուժին և արժանապատվության անհամապատասխան կլիներ թողնել Գանձակն, իբրև Վրաստանի սեփականություն և մաս, օտար ձեռքերի մեջ։ Երկրորդ, ձեր բարձր աստիճանությունը, պատասխանելով իմ նամակին, որ գրել էի ձեզ Վրաստան գալուցս հետո և որով պահանջում էի ձեր որդուն պատանդ տալ, ասում էիք, թե վախենում եք Իրանի թագավորից, մոռանալով, որ 6 տարի սրանից առաջ դուք ռուսական հպատակ էիք և Գանձակի բերդում գտնվում էին ռուսական բարձրափառ զորքերը։ Երրորդ, ձեր մարդկանց ձեռքով կողոպտված են Թիֆլիսի վաճառականները, որոնք բավարարություն չեն ստանում ձեր բարձրաստիճանությունից։ Այս երեք պատճառներով ես ինքս գալով վերցնելու քաղաքը, հետևելով եվրոպական սովորության և իմ դավանած հավատին, պարտավոր եմ, չձեռնարկելով մարդկային արյան հեղման, առաջարկել ձեզ հանձնել քաղաքը և պահանջել ձեզանից իբրև պատասխան երկու խոսք ձեր ընտրությամբ՝ այո կամ ոչ, այսինքն՝ հանձնում եք թե չեք հանձնում։ Թող նույնպես հայտնի լինի ձեզ, որ թույլ տալով զորքերը գալ այսպիսի վատ եղանակին և մտնել ձեր իշխանության սահմանների մեջ, ոչինչ պայմանագրեր այլևս ընդունելի լինել չեն կարող, իսկ ձեզ թողնում եմ միայն անձնատուր լինել իմ կամքին, որից հետո դուք կճաշակեք նորին կայսերական մեծության, իմ ամենաողորմած թագավորի գթասրտությունը։ Իսկ եթե այս չեք ուզում, այն ժամանակ, սպասեցեք այն դժբախտ վիճակին, որին մի ժամանակ ենթարկվեցին Իզմայիլ, Օչակով, Վարշավա և այլ քաղաքները։ Եթե վաղը կեսօրին պատասխան չստանամ, կբորբոքվի պատերազմը, Գանձակի տակ կտանեմ ես հուր և սուր, որին դուք վկա կլինեք և կիմանաք՝ կարողանու՞մ եմ արդյոք պահել իմ խոսքը»[1]։

Հետաքրքրական է այն պատասխանը, որ տալիս էր ասիացի տիրապետողը ռուսական զոռոզ ու ինքնապարծ գեներալին։ «Ստացա քո նամակը,— գրում էր Ջավադ խանը։— Դու գրում ես, թե Թամար թագուհու ժամանակ Գանձակը Վրաստանից կախված է եղել։ Այս պատմությանը ոչ ոք չի հավատա։ Իսկ մեր նախնիները, Աբաս Կուլի խանը և ուրիշները, կառավարել են Վրաստանը։ Եթե չես հավատում, հարցրու վրացի ծերերից՝ արդյոք Աբաս Կուլի խանը կառավարե՞լ է Վրաստանը, թե՞ ոչ։ Այսօր էլ Վրաստանում գոյություն ունեն նրա մզկիթները և խանութները։ Շատ վրացիների մոտ պահվել են նրա հրամանագրերը։ Հերակլի և մեր հոր ժամանակից Վրաստանի և Գանձակի սահմանները որոշված են։ Եթե ես ասեմ, թե իմ նախնիքները վալիներ են եղել Վրաստանում ոչ ոք նկատի չի առնի այդ խոսքերը, և ոչ ոք չի վերադարձնի ինձ Վրաստանը։ Դու գրում ես դարձյալ, թե 6 տարի առաջ ես հանձնել եմ Գանձակի բերդը ռուսաց փադիշահին։ Այս ճշմարիտ է։ Այն ժամանակ քո փադիշահն ուղարկեց ինձ հրովարտակ, և ես, ընդունելով նրա առաջարկությունները, հանձնեցի բերդը։ Եթե այժմ էլ քո փադիշահը ուղարկել է այդպիսի հրովարտակ, ցույց տուր այն ինձ։ Այն ժամանակ ես, տեսնելով նրա կամքը, կհամակերպվեմ նրան։ Դու դարձյալ գրել ես, թե ես առաջ որպես թե կախված եմ եղել Վրաստանից. բայց թող հայտնի լինի քեզ, որ իմ ձեռքիս այժմ էլ գտնվում է քո փադիշահի հրովարտակը։ Նայիր տես, անվանվա՞ծ եմ ես նրա մեջ Գանձակի Բեգլեր բեգ կամ Վրաստանի վալու։ Սրանից պարզ երևում է, որ քո խոսքերը սուտ են։ Բացի դրանից, այն ժամանակ, երբ ես հանձնեցի Գանձակը քո փադիշահին, պարսից շահը գտնվում էր Խորասանում, և իմ ձեռքը չէր հասնում նրան և ես հարկավոր համարեցի հպատակվել ռուսաց փադիշահին։ Իսկ այժմ, փառք Ալլահին, պարսից շահն ինձանից մոտ է գտնվում, և նրա գլխավոր հրամանատարի ուղարկած մարդն արդեն հասել է այստեղ. եկել է նույնպես զորքը և էլի կգա։ Դարձյալ դու գրում ես, թե Վրաստանը պատկանում է ռուսաց փադիշահին, և ես իրավունք չունեի հարքունիս գրավել նրա վաճառականների գույքը։ Այս ճիշտ է։ Բայց երբ դու դեռ նոր էիր եկել Վրաստան, և ես գրեցի քեզ խլել ինձ դավաճանած իմ հպատակ Նասիբ բեկից և վերադարձնել ինձ այն գույքը, որ նա հափշտակել էր մեր վաճառականներից, ես համոզված էի, թե դու կկատարես իմ ցանկությունը, նույնպես և կվերադարձնես ինձ դավաճանած շամշադինցիներին և Նասիբ բեկին. դու ոչ մեկն արիր, ոչ մյուսը։ Ես հարքունիս եմ գրավել Գանձակի և Շամխորի բնակիչների և բոլորովին ոչ թե Վրաստանի բնակիչների գույքերը։ Եթե դու ինձ հետ պատերազմելու միտք ունես, ես պատրաստ եմ։ Եթե դու պարծենում ես քո թնդանոթներով, իմ թնդանոթները քոնիններից վատ չեն. եթե քո թնդանոթներն ունեն մի արշին երկարություն, իմոնքը 3 և 4 արշին են, և հաջողությունը կախված է Ալլահից... Որտեղի՞ց է հայտնի, թե ձեր զորքերը պարսկական զորքերից ավելի քաջ են։ Դուք միայն ձեր պատերազմներն եք տեսել, իսկ պատերազմ պարսիկների հետ չեք տեսել։ Դու առաջարկո՞ւմ ես ինձ պատրաստ լինել կռվի։ Ես պատրաստվում եմ այն օրից, երբ դու, գալով Շամշադին, դարձրիր նրա ազգաբնակությունը քեզ ենթարկված։ Եթե ուզում ես պատերազմել, մենք կպատերազմենք։ Դու ինձ դժբախտություն ես գուշակում, եթե չընդունեմ քո առաջարկությունը, բայց ես ենթադրում եմ, որ դժբախտությունը հենց քեզ է հալածում և նա է, որ քեզ բերել է Պետերբուրգից գցել այստեղ։ Հետևանքները ցույց կտան, թե մեզանից ով կլինի անբախտը»[1]։

Հետևանքը, սակայն, Գանձակի խանին չէր ժպտում։ Պատերազմական գործողություններն սկսվեցին դեկտեմբերի 2-ին, երբ իշխան Ցիցիանովը, մոտենալով Գանձակի արվարձանին, վճռեց գրավել նրա այգիները։ Բացվեց մի համառ կռիվ, խանական զորքերը, պաշտպանություն գտնելով այգիների կավե բարձր պատերի ետևում, հաջողությամբ դիմադրում էին ռուսներին, բայց $1\frac{1}{2}$ ժամվա կռվից հետո ստիպված եղան քաշվել բերդը, և Ցիցիանովը, որ անձամբ հրամայում էր արշավող զորքի մի մասին, գրավեց այգիները։ Այստեղ նրան անձնատուր եղան 200 շամշադինցիներ և 300 հայեր։ Կանգ առնելով այգիներում, Ցիցիանովը հետաձգեց բերդի վրա հարձակվելու միտքը և աշխատում էր հարկադրել Ջավադ խանին, որ նա անձնատուր լինի առանց արյունահեղության։ Այս պատճառով նա բերդը պաշարման և ռմբակոծության ենթարկեց, շարունակելով միաժամանակ գրագրություն վարել Ջավադ խանի հետ, որից անդադար սպառնալիքներով պահանջում էր բերդի հանձնումը։ Բայց այս միջոցներից ոչ մեկն էլ չկարողացավ կոտրել խանի անհողդողդ համառությունը։ Պաշարումը տևեց մի քանի ամիս և քաղաքի ազգաբնակությանը տանջանքներ պատճառեց։ Մթերքների, բայց մանավանդ վառելիքի, սուր ճգնաժամ սկսվեց։ Քաղաքի առուները, որոնք խմելու ջուր էին մատակարարում, լցված էին սպանված մարդկանց դիակներով։ Այս հանգամանքից առաջացան տարափոխիկ հիվանդություններ։ Եվ, այնուամենայնիվ, անսասան էր Ջավադ խանի վճռականությունը։— «Ես կվերցնեմ

[1] «Акты...», т. II, № 1172.

[1] Ibid., № 1173.

քաղաքը և քեզ կսնթարկեմ անարգ մահվան»,— հայտնում էր Ցիցիանովը խանին։— «Դու ինձ կգտնես մեռած՝ պարսպի վրա»,— պատասխանում էր խանը։ Վերջապես, զինվորական խորհուրդը վճռեց վերցնել բերդը գրոհով, և այդ վճիռը գործադրվեց 1804 թ. հունվարի 3-ին։ Ցիցիանովը բաժանեց իր զորքին երկու մասի, որոնցից մեկը հանձնվում էր գեներալ Պորտնյագինին, իսկ մյուսը՝ գնդապետ Կարյագինին։ Վերջինս առավոտից շատ հաջող առաջխաղացությամբ հասավ բերդի պարիսպներին, սանդուղքներ դնելով բարձրացավ վերև և տիրեց բերդի մի մասին, Պորտնյագինի զորասյունը, չունենալով նույն հեշտ ու արագ հաջողությունը, բայց և այնպես, կարողացավ համառ մաքառումով ներս խուժել բերդը նույնպիսի եղանակով։ Մի կարճ միջոցում որոշվեց բերդի վիճակը։ Ջավադ խանը հերոսաբար կատարեց իր պարտքը։ Հենվելով բերդի ամենամեծ թնդանոթի վրա, նա հանեց իր սուրը և նրանով պաշտպանվում էր, մինչև որ ռուս զինվորները կտոր-կտոր արին նրան։ Նրա հետ սպանվեց նրա որդիներից մեկը, իսկ մյուսները կարողացան փախչել։ Քաղաքում մեծ խուճապ էր տիրում։ Թուրքերը խռնված էին փողոցների մեջ, նրանց կանայք հուսահատական ճիչեր էին արձակում։ Բայց մի երկու ժամից հետո հանդարտություն տիրեց։ Քաղաքի ամբողջ թուրք ազգաբնակությունը, մոտ 17 հազար հոգի, հայտարարվեց գերի։ Խանի կանայք ընկան Ցիցիանովի ձեռքը, որ միանգամայն ասպետական վերաբերմունք ցույց տվեց նրանց, թոշակ նշանակելով և թույլ տալով, որ նրանք գնան ուր կուզեն։ Ի պատիվ ռուս զորավարի՝ պետք է ասել, որ բավական խնայվեց քաղաքի մահմեդական ազգաբնակությունը, մանավանդ կանայք ու երեխաները։ Բայց կա և այն, որ նույն Ցիցիանովը ռուսական եկեղեցի դարձրեց մահմեդական գլխավոր մզկիթը։

Ռուսաց բանակում գտնված Հովհաննես Գեղարդակիր եպիսկոպոսը և Ներսես Աշտարակեցին այսպես էին նկարագրում Գանձակի առումն ու տեղական հայերի դրությունն իրենց մի նամակում, որ ուղղված էր Մոսկվա, Եփրեմ արքեպիսկոպոսին և Աղա Մինաս Լազարյանին. «Ի 3 ամսոյս ընդ լուսածագն առաւօտուն դէմ եդեալ յանդիման ամրոցին Ճավատայ և զօրութեան նորա քաջացն հզօրեղաւքն և գրոհ տուեալ քան զալիս ծովու առաւել սաստկապես և ևս ի չափ միջոցի կէս ժամու, կանգնեցին զսանդուխս մեծամեծս ընդ պարիսպ անմատչելի կարծեալ դղեկին և լցեալ ի ներքս ի դղեակն սուր եդեալ կոտորեցին զթշնամին հաւատոյ և զհակառակորդս պաշտպանին հաւատոյ յաղթող ինքնակալին ամենայն ռուսաց աւելի քան զ1300 ընդ այր և ընդ կին։ Այլ մեծութիւն անուանն Քրիստոսի և ի պատիւ ամենաողորմած քաղցր ակնարկութեան նորա, որ ապրեցոյց զքրիստոնեայս զազգս մեր աքանչելի իմն եղանակաւ որ ի բազմութեան անդ կոտորածի անկեալ են ի մերազանց միայն երկու արք և երկու կամ երեք կանայք. իսկ այլքն ամենեքեան ապրեալք ողջութեամբ և առողջութեամբ և հանդերձ այնուամենայնիւ գտեալ և զողորմութիւն յաչս պայծառ կուսակալին և ամենայն զօրացն Ռուսաց ըստ մեծի մասին մնացին անկապուտ ի զգեստուց իւրեանց զոր ունէին զգեցեալք. շատք ևս խառն ընդ զօրս մտեալ ի բերդն առին և զանկողինս և ինչ ինչ ի ծածկութից և սփռոցաց. յորոյ ամենից զրկեալ են ի ցրտութեան եղանակին ամենայն ապրեալքն ի տաճկաց։ ...Մեծ կին խանին, որ է քոյր Նուխու Մահմադ Հասան խանին, անդէն ի տուն իւրում կապտեալ ի զօրացն մտելոց ի ներքս, յետոյ ուրեմն մտախոհ եղեալ առ ապրեցուցանելոյ զանձն, երթալ անկանի առ դուստր վարպետ Եասիյի արուեստապետի դրամահատութեան Հերակլի, որ էր հարսնացեալ որդւոյ Մելիք Մեճլումի, կարծեալ թե իցեն ոմանք

ի նորայնոց ընդ զօրացն հաղթողաց որք ապրեցուսցեն և զինք ընդ նմա, իրաւի ապրեցոյց զինքն այս խոհականութիւն նորա. զի որդի Եասիյին եկեալ ընդ Հախվերդովին, ընդ որում ունին զվաղեմի լաւ ծանօթութիւն, իսկոյն ընդ բանիլ դրանն մտի ի ներքս ռուսաց նշանով գտանե զքոյր իւր և առ նա զկիչեալ կինն խանի, զորս հանեալ հրամանաւ պայծառ կուսակալին պահէ ի տուն քեռն իւրոյ մինչև ցայսօր»[1]։

Այս նկարագրությունները ցույց են տալիս որ Գանձակի հայերը ռուսական ներխուժման ժամից սկսել էին իրենց լավ զգալ, թե այն պատճառով, որ ազատ էին ռուս զինվորների թալանից և թե մանավանդ այն պատճառով, որ հովանավորված էին այն աստիճան, որ կարող էին հովանավորել ուրիշներին, և ոչ ոք չէր արգելում, որ նրանք էլ մասնակցեն ընդհանուր թալանին ռուս զինվորների հետ հավասար իրավունքով։ Անշուշտ այս մի վարձատրություն էր հայերին՝ նրանց մատուցած ծառայությունների համար։ Առանձնապես աչքի ընկնող է եղել դանիելյան կուսակցության ռուսասիրական գործունեությունը։ Ուստի Ցիցիանովը հենց Գանձակին տիրանալու երկրորդ օրը մի ամբողջ ցույց է անում դանիելականության հասցեին, մի ցույց, որ այսպես է նկարագրում նույն Գեղարդակիրն իր վերոհիշյալ նամակի մեջ։ «Բայց աստ՝ պատմեսցուք զմեր սիրեցեալն,— գրում է նա,— զի ի 4 ամսոյս, որ էր օր երկրորդ առման բերդին, կատարեցին մեծաւ հանդիսիւ զտօն յաղթութեան Քրիստոսապսակ ինքնակալին, ուր էաք ներկայացուցեալ և մեք։ Յետ կատարման տօնին ժողովեցան ամենայն մեծ և փոքր զօրապետք ի ճաշել առ կուսակալն։ Կոչեցաք և մեք յայն սեղան թէպէտ և ոչ ի ճաշ, ըստ որում պաք էր մեր օրն այն։ Բայց իրաւի զուարթացոյց զսիրտ մեր. օրհնեալ կուսակալն առաւել քան համադամ իւղալիր ախորժամիս կերլեաւ, զի մինչ եհաս ժամանակ և արբին զբաժակ յանուն կենաց ամենաողորմած ինքնակալին, յետ նորա ընկալեալ ի ձեռն իւր զբաժակն, ձայնեաց առ բազմութիւն ամենայն երգել զերգես հոգևորականս. և յաւարտ երգոցն՝ ասէ բարձրաձայն. արբցուք և յաղագս կենաց Դանիէլ պատրիարքին Հայոց զբաժակ ուրախութեանս։ Առ որ անծանօթ բազմունք ի տարակուսի եղեալ թէ ո՞վ արդեօք իցէ այն, յետոյ իբրև ծանեան ի միմեանց՝ ամենքին միաձայնութեամբ կոչեցին բարձրաբարբառ ուռա՜յ, ուռա՜յ, եօթնիցս և ութիցս կրկին և կրկին. և ի վաղճանի ասէ ի լուր ամենեցուն բարձր բարբառով՝ եթէ արեամբ և եթէ առանց արեանց նստուցանել պարտիմք յաթոռս իւրում զԴանիէլ պատրիարքն ի լինել մեր ողջ ողորմութեամբն Աստուծոյ»[2]։

Այս կենացով հաղթությամբ հղփացած Ցիցիանովը պարզապես հայտարարում էր, թե նվաճված լինելուն հերթն այժմ Երևանինն է և թույլ էր տալիս, որ հայ հոգևորականությունն իր միամտությամբ ըմբռնե այդ նվաճողական արշավանքն իբրև լոկ Դանիելի կաթողիկոսացման հոգս։ Այսպիսի ըմբռնողությամբ հափշտակված Հովհաննես Գեղարդակիր արքեպիսկոպոսը մտածեց մահմեդական դառն լծից ազատված գանձակեցի հայերի ուրախական զգացմունքը հասցնել Ալեքսանդր կայսրին մի պատգամավորության միջոցով և դարձնել այդ հավատարմական և շնորհակալական դիմումը մի նոր ցույց հօգուտ դանիելյան կուսակցական պրոպագանդի։ Կազմվեց հավաքական դիմում Գանձակի հայ համայնքի կողմից, որ ազդու գույներով ներկայացնում էր ազատված բազմության հոգեկան հրճվանքը։ Սակայն ծրագրված

1 Ձեռագիր (հեղինակի ժողովածուի մեջ)։
2 Անդ.։

պատգամավորությունը, ինչպես կարելի է դատել մի քանի նշաններից, չկայացավ[1]։

Գանձակի նվաճումը տեղի ունեցավ պատերազմական այնպիսի գործողությունների միջոցով, որոնց չի կարելի դասել առանձնապես ծանր դժվարին գործողությունների շարքում։ Որքան և Ջավադ խանն ու իր զորքը լցված լինեին դիմադրական կորովով, նրանք, այնուամենայնիվ, ասիական զինվորություն էին, որ չէր կարող ընկճելի ուժ դառնալ եվրոպական վարժություն ստացած զորքի համար։ Այս ցույց է տալիս հենց այն հանգամանքը, որ ռուսների կողմից սպանվածների թիվն էր 38 և վիրավորվածներինը՝ 204։ Սակայն Ցիցիանովի պես մի պարծենկոտ և ինքնահավան մարդու համար այդ մի մեծ հաղթություն էր, որ նա ավելի ևս ուռցնում էր, հայտնելով Ալեքսանդր կայսրին, թե Գանձակը, հնուց հռչակված մի բերդ, ամբողջ Ադրբեջանի բանալին է կազմում։ Իր հաղթության նշանակությունը նա ավելի ևս բարձրացնում էր, խնդրելով կայսրին, որ նորանվաճ քաղաքը կորցնե իր վաղեմի Գանձակ (Գանջա) անունը և այնուհետև կոչվի, ի պատիվ Ելիզավետա կայսրուհու (որ Ալեքսանդրի ամուսինն էր), Ելիսավետպոլ։ Ալեքսանդրն ընդունում է այս առաջարկությունը, առանձին հրովարտակով վեր է հանում Գանձակի գրավման գործը և վարձատրում է Ցիցիանովին հետևակազորի (ինֆանտերի) գեներալի աստիճանով։ Ցիցիանովը, սակայն, ավելին էր ակնկալում և դժգոհ մնաց իր ամենաողորմած տիրոջից, որից սպասում էր ստանալ ս. Գեորգի երկրորդ աստիճանի շքանշանը։ Խաբված մնալով այդ սպասելիքի մեջ, նա խնդիրք ներկայացրեց կայսրին, խնդրելով արձակել իրեն ծառայությունից հիվանդության պատճառով։ Սակայն այդ հրաժարականը չընդունվեց, և Ցիցիանովը

[1] Այնուամենայնիվ, այդ դիմումը, որի սևագրությունը հասել է մեզ, շատ լավ արտացոլում է իր մեջ ժամանակի տրամադրությունն ու մտածողության եղանակը, ուստի ավելորդ չենք համարում դնել նրան այստեղ ամբողջովին.

«Ամենայուսափայլ ծայրագոյն տիրող մեծ Թագաւոր կայսր Ալեքսանդր Պավլովիչ, ինքնակալ ամենայն Ռուսաց Թագավոր ամենաողորմածագոյնդ.

«Հարքն մեր և նախնիք առաջինք ամօք հարիւրաւորօք տանջեալք և չարչարեալք ի ձեռս խստասիրտ անօրէն բարբարոսաց, հոգւոյ անձկութեամբ ակնկալեալ միշտ մնային տեսանել զայս մեծ այցելութիւն երկնակիր և ոչ տեսին։ Իսկ մեք ծնունդքս յետին տառապանց նոցին ի վերջին կէտ կենդանութեան շնչոյ մերոյ մարդասիրութեամբ քաղցր Արարչին մերոյ Աստուծոյ, ահաւասիկ ի վեր քան զհաստումն մտաց մերաց տեսանեմք զմերս ողորմելութիւն հանդիպեալ մասին աւետարանական երանութեան (Մատ. 13. 17)։ Քանզի տեսանեմք զերկրպագելի սուրբ խաչն Քրիստոսի փրկչին մերոյ զերագոյն փառօք պատուեալ և բարձրացեալ, և թշնամիք արհամարհողք ի փայլակնացայտ ճառագայթից նորա պատկառեալք և ամաչեցեալք։ Տեսանեմք զեկեղեցի Քրիստոսի և սուրբ հաւատն քրիստոնէական արեգակնանման ճառագայթիւք շքեղազարդ պայծառացեալ, և որք յաղթահարէին զնա դրունք դժոխոց տարակուսեալք և լռեալք։ Տեսանեմք զհովանին ազանց քրիստոնէից արծուին երկգլուխ ահաւոր դրօշակ Քրիստոսատիպ խաչապատ ամենողորմած թագաւորիդ մերում ի վերոյ սասանեալ ծառայիցս աստուածադուլ սուրբ կայսերութեանդ երկնանման հովանեացեալ, և նեղիչք մեր և թշնամիք տկարացեալ և հեղացեալ։ Արդ, տէր ամենաողորմած, տկարանան լեզուք մեր բանիւ բարբառոյ յայտնել արժանապէս զեղանակ առաջին անօրինակ թշուառ ծառայութեան և զայս նորոգ անհամեմատ բախտաւորութեանս մերում, վասն որոյ ուրեմն՝ կամեցեալ իբրօ զայնս պատկերացուցանել առաջի ամենահայեաց քաղցր աչաց բարերար տեառնդ մերում, համարձակեցաք առաքել ի դուռն ողորմութեան զմի քահանայ և զմի ժողովրդական՝ զի ի դիմաց մեր ամենեցուն համբուրեսցեն զկենսածիր հետս ոտից Քրիստոսատիպ փրկչիդ մերում. և ընդ նոսա մատուցաք անարժան քարող անարգ գերութեան մեր զնշան արգասեաց երկրի մերոյ 5 փութ կամ թէ սակաւ մեղաքս, որով լաւ ևս կարէ ողորմելութիւն մեր անպատրուակ յայտնի լինել, մինչ բնակչաց իւրոց երկիր մեր ընծայէ առատութեամբ զայնպիսիս, իսկ մեք ամենեքին չարչարեալք, նեղեալք և կարօտեալք աւուրն պարենի։ Եւ այսու եղեալ ի կշիռ ջերմեռանդութեան բղձից զողորմութիւն գտեալ ծառայիցս ամենաողորմած թագաւորիդ մերում. ապա ամենեքեան առհասարակ ծերք և տղայք գետնամած երկրպագութեամբ համբուրեմք շրթամբք հողոյ զոտն ամենողորմած աթոռոյ

շարունակեց իր եռանդուն գործունեությունն ամբողջ Անդրկովկասը նվաճելու համար։ Թողնելով Հովհաննես արքեպիսկոպոսին Գանձակում՝ տեղական հայերի գործերը կարգավորելու համար, նա վերադարձավ Թիֆլիս, ուր նրան սպասում էին մի շարք շատ կարևոր հարցեր։ Առաջին լուրը, որ նա առավ այնտեղ, լեզգիների դեմ գնացած գեներալ Գուլյակովից էր, որ նորից վերցրել էր Ջարը և հրդեհել էր նրան։ Ցիցիանովն շտապեց այդ առիթով իր հրճվանքը հայտնել Գուլյակովին։ Սակայն մինչև նրա նամակը տեղ կհասներ, քաջ գեներալը զոհ դարձավ մի խոշոր անհաջողության։ Լեզգիները շրջապատեցին նրա զորաբաժինը մի նեղ կիրճի մեջ և փախուստ դարձրին նրան։ Գուլյակովն սպանվեց, զորքն անկարգ կերպով ետ փախավ՝ խուճապի մատնված։

Այս անհաջողությունը մեծ վիշտ էր պատճառում Գանձակի նվաճողին։ Բայց շուտով Անդրկովկասի արևմտյան մասերում ձեռք բերած հաջողությունները մոռացնել տվին Ջարի մոտ կրած խիստ պարտությունը։ Դեռ Գանձակը չվերցրած՝ Ցիցիանովը հրաման էր ստացել Ալեքսանդր կայսրից հերթական գործ դարձնել Իմերեթի նվաճումը։ Այս հանձնարարությունը Ցիցիանովը կատարեց խաղաղ բանակցությունների միջոցով, առանց զենքի ուժին դիմելու։ Իմերեթի Սողոմոն թագավորը հավատարիմ հպատակության երդում ընդունեց։ Նույն ճանապարհով Ռուսաստանին էին միացվում և Մինգրելիան ու Գուրիան։ Եվ այսպիսով Ռուսաստանը Կովկասյան լեռնաշղթայի հարավային կողմից հնարավորություն էր ստանում դուրս գալ Սև ծովի ափը և, ուրեմն, կապվել Անդրկովկասի հետ ծովային կարճ և հարմար հաղորդակցությամբ։ Այժմ Ցիցիանովը կարող էր իր հայացքը դարձնել դեպի արևելք, ուր Կասպից ծովը պիտի նույնպիսի հնարավորություն տար Արևելյան Անդրկովկասը Ռուսաստանի հետ կապելու համար։ Բայց իր ուշադրությունը նա դեռ դարձրեց Երևանի վրա։

Երևանյան արշավանքը։ Թեև ամբողջ 1803 թվականի ընթացքում Ցիցիա-

սուրբ կայսրութեան ձեր. և անբաւական խակախօս բարբառով մատուցանեմք զշնորհակալութիւնս յաղագս անպատում շնորհաց աստուածանման սուրբ թագաւորիդ մերում առատացելոյ ի վերայ մեր և հայրենեաց մերոց. զոր և յուսափայլ փայլմամբ գերազանցապես հանդիսացոյց յանդիման տեսութեան ամենայն աշխարհի՝ արդարակշիռ ամենախոհեմ արի զօրապետն տիեզերաստատ մեծութեան ձեր՝ եռապատիւ յեսուենանդ պայծառափայլ կնեազ Պաւլ Դիմիտրիչ պարոն Ցիցիանովն, որ զօրէն քաջարուեստ հովուի զի կալեալ ի ձեռս զաղն ախորժելի՝ գերէ դիւրաբար զախոտս հօտին ամենայն ընթանալ վազելով զհետ իւր, կալեալ նոյնպէս ի ձեռին իւրում նկարագիր ամենաքաղցր ողորմութեան հասելոյ ի վերա մեր՝ զպատուական հայրն մեր և զԱռաջնորդն հոգելի զտէր Հովհաննես սրբազան արքեպիսկոպոսն. ժողովեալ զմեզ զամենեսին ապահովացոյց ի ներքոյ խնամոց իւրոց և մեծ հոգացողութեամբ ապրեցոյց ի վերամբարձ սատակիչ թշնամեաց սայրասուր սրոյ բարձր փառաւորագոյն յաղթող զօրութեան տիեզերահրաման կայսերութեան ձերոյ զազգս և զընտանիս մեր. զամենեսին առհասարակ նոր ստացեալ վասն մեր ի փառս առատ ողորմութեան ձեր։ Այսուհետև թէպէտև մեռանիցեմք, մշտնջենաւոր անմահ կենաց ունողս զմեզ համարիմք. քանզի լցաւ անմահութեամբ յոյս մեր ամենեցուն որք զոլով հասեալք ի վերջին ծայր թշուառութեան արժանացաք տեսանել աչօք մերովք զայս մեծ փրկութիւն և ազատութիւն մեր և սուրբ օրինաց մերոց։ Խոստովանիմք, տէր թագաւոր, զի եղեր մեր երկրորդ յետ Քրիստոսին փրկեցար զմեզ ի թշնամեաց մերոց. հաստատուն պահեսցէ Քրիստոս Աստուած զաթոռ թագաւորութեան ձեր յաւիտեանս յաւիտենից։ Բայց և աղաչեմք զի մշտնջենաւորեսցէ ողորմութիւն ձեր ի վերայ մեր, որպէս Աստուծոյ ի քեզ եմք յուսացեալ յայժմ հետէ։ Եւ առ այս՝ որպէս յառաջագոյն բազմաչարչար Դանիէլ սրբազան կաթողիկոսն մեր և ազգն Հայոց վէքիլ են արարեալ զհարազատ պօղղանն մեծի տէրութեան ձեր Մինէ Լազրիչ Լազրեան վեհազնեայ իշխան հայոց, նոյնպէս և մեք ի կողմանէ մերումս հասարակութեան վէքիլ արարաք զնա՝ զի յայտր ի դուռն ողորմութեան եղիցի նա մեր ամենեցուն բերան և լեզու մշտնջենապես պաղատել վասն մեր զայսն։ Ուստի զգետին համբուրելով միջնորդութեամբ երկրպագելի անուանն Քրիստոսի մաղթեմք խոնարհ ծառայութեամբ զի եղիցի անսպասելի շնորհք ողորմութեան ձեր ի վերայ նորա և ի վերայ մեր» (Ձեռագիր, հեղինակի ժողովածուի մեջ)։

նովն ստիպված էր երկրորդական կարգի մեջ դնել Երևանի գործը, բայց այս, իհարկե, չէր նշանակում, թե նա ոչինչ չէր անում հասունացնելու համար Արաքսի հովտում այն դեպքերը, որ ռուսական քաղաքականությունը որոնում և ստեղծում էր իր նպատակներն իրականացնելու համար։ Գիտենք արդեն, որ հայ հոգևորականությունն էր այն գերազանց գործիքը, որի միջոցով հյուսիսային նվաճողականությունը կատարում էր իր ծրագրածը։ Մենք տեսանք, որ Գրիգոր Խամսեցին և Ներսես Աշտարակեցին եթե կարողացան ստանալ Մահմադ խանի հավանությունը ռուսաց ներկայացուցիչ Թամազ Օրբելիանիի հետ Երևանից Թիֆլիս գնալու համար, այդ միայն այն պայմանով էր, որ նրանք միջնորդեն, որ ռուսներն իրենց հովանավորության տակ առնեն Ախալցխայի Շերիֆ փաշային։ Սակայն շատ քիչ ժամանակ հարկավոր եղավ, որ խանը համոզվի, թե երկու հոգևորականները պարզապես խաբել են իրեն։ Շերիֆ փաշայի համար նրանք ոչ մի բան չարին, բայց ամբողջ եռանդով աշխատում էին ռուսներին տանել Երևան՝ Դանիելին կաթողիկոսացնելու համար։ Իրենց հակառակորդներին վախեցնելու համար նրանք շարունակ կրկնում էին, դիտմամբ տարածում ամեն տեղ, թե ռուսներն արշավանքի պատրաստություններ են տեսնում, շուտով կբռնեն Երևանի ամբողջ հողը։

Այս իրողությունը, բնականաբար, ավելացնում էր խանի կասկածամտությունը, որի հետևանքով դժվարանում էր և հայ ժողովրդի դրությունը։ Ռուսական վտանգը չափազանց մեծ էր, չափազանց ահավոր, որպեսզի մի իշխող կարողանար հեշտությամբ և անտարբերությամբ լսել, թե գալիս է այդ վտանգը։ Բնականաբար հայ ժողովուրդն էր համարվում այդ մեծ վտանգը բերողը, և նա մահմեդական տիրողների աչքում դառնում էր անհավատարիմ, դավաճան։ Հասկանալի է, որ Դավիթ կաթողիկոսը պիտի շատ ջանքեր գործ դներ հայ ժողովուրդն այդ վտանգավոր կասկածամտության առարկա չդարձնելու համար։ Մահմադ խանը նրանից էր պահանջում, որ լավ հսկողության տակ պահվի ռուսական արշավանքի պատրվակ դարձած Դանիել կաթողիկոսը, որին կամ տանում էր Երևան և այդտեղ բանտարկում, կամ թե կրկին ուղարկում էր Էջմիածին։ Ամեն մի ճնշում, որ գործադրվում էր Դանիելի վրա, չափազանցրած, հաճախ նաև աղավաղված կերպարանքով տարածվում էր ժողովրդի մեջ դանիելականների ձեռքով, և Դավթի վրա բարդվում էին հրեշավոր մեղադրանքներ։ Այս հանգամանքն ավելի ևս դրդում էր թե՛ խանին և թե՛ Դավթին։ Բոլոր հանգամանքները ցույց են տալիս, որ Դավիթը կանոնավոր կերպով կաթողիկոսություն էր անում, որ հայ ժողովուրդն իր ամբողջությամբ շատ հեռու էր նրանից երես դարձնելուց, և միայն դանիելական կուսակցությունն էր, որ համառորեն, միջոցների խտրություն չգտնելով անգամ, աշխատում էր տապալել նրան։ Հաջողության դեպքում դանիելականները չպիտի, իհարկե, խնայեին նրան, ուստի մրցությունը նրանց հետ Դավթի համար իր տեղը պահպանելու խնդիր չէր, այլ անձնական ապահովության, գուցե նույնիսկ, կյանքի և մահվան խնդիր։ Այս էր պատճառը, որ նա նախազգուշությունների դեպքում միանգամայն անողոք, նույնիսկ անգութ էր դառնում։

Եվ դեպքերը հասկանալի էին դարձնում Դավթի այս խստությունները։ Խամսեցու և Աշտարակեցու արարքի հետևանքն այսպես էր նկարագրում Դավիթն իր թղթերից մեկի մեջ. «Առեալ ի մէնջ (խանն) զԳրիգոր չիք պատրիարքն, որ կայր ի դիպահոջ՝ ի սուրբ Աթոռս, և զկտրի Ներսէսն, յղեաց առ մեծամեծսն Թիֆլիզու վասն այսմ, և մինչ օրհնեալքն տեղւոյն (ռուսները) յանձն չառին ըստ կանոնի իւրեանց՝ խառնիլ ի գործս օսմանւոց և փաշային. Գրիգորն և Ներսէսն առ ահի մնացին անդ, և կան մինչև յայժմս և Դանիէլն

նկաց աստ առաջի խանին և Շէրիֆ փաշային և այլոց ամօթապարտ։ Զորոյ զբոլոր խաբեութիւնսն և զփառամոլութիւնսն տեսեալ և իմացեալ խանին, ի բարկութիւն մեծ բրդեալ անպատուեաց յոյժ ի հրապարակի ամենայն մեծամեծացն իւրոց և կալեալ եդ ի բանտի նախապէս ի մէջ բերդին առ ժամանակ մի։ Եւ զմեզ բազում փառօք և յարգանօք վերադարձոյց ի սուրբ Աթոռս՝ տալով և զնա ինքն զԴանիէլն ի ձեռս մեր, զի ըստ կամս արասցուք ընդ նմա, և հատուցուք զորիտուրն արարից իւրոց։ Այլ մեք խնայելով ի ծերութիւն նորին և մանաւանդ զրնական գութն ևս ի մէջ բերելով, միայն ի մէջ եպիսկոպոսացն մերոց զփիլոնն, զվեղարն և զմատանին առեալ, և կարգընկէց արարեալ՝ եդաք ի միում առանձին սենեկի սպասելով կատարման ելից իւրացս, և կայ տակաւին այնպէս»[1]։

Այս խիստ պատժին դանիելականները պատասխանում էին սպառնալիքով, թե իրենք ռուսներին կտանեն Էջմիածին՝ Դավթին պատժելու համար։ Եվ Դավիթը շարունակում էր իր այդ գրության մեջ. «Բայց ի Թիֆլիզ եղեալ Յովհաննէս չիքն, և այլք ընդ նմա, ոչ դադարին երբէք ի չարութեանց իւրեանց, այլ միշտ ի ձեռն կողմնակալաց և զօրապետաց ահացուցանեն զմեզ և զերկրականս մեր, զօրօք խաղալ յառաջ և վնասել զմեզ և սաստիկս սպառնան խանին երկրիս և այլոց վասն մեր, և այլն։ Որովք և նորանոր վնասուց և աւերութեան բանան մէջ յղրունս։ Եւ այսպէս կամք ի մէջ երկսայրի սուսերաց՝ զի նոքա որպէս գրեցի, զայսպիսիս խօսին, իսկ Պարսիկք կամին զմեզ հանգերձ բոլոր միաբանիւնք և սրբութեամբք խաղացուցանել ի խորս Պարսկաստանի, որովհետև ասեն վասն ձեր գան նոքա յերկիրս, և ի պատճառս ձեր ունին երկիր մեր աւերել, և այլն»[2]։ Այսպիսով ստիպված լինելով խաղալ երկու սրերի մեջ, Դավիթը պիտի իր բոլոր ջանքերը լարեր երկու կողմից հավասարապես սպառնացող վտանգը չեզոքացնելու համար։ Մի կողմից նա աշխատում էր հաշտեցնել իր հետ ռուսներին, և դրա համար անդադար դիմումներ էր անում ցարին, ռուսաց Սինոդին, նույնիսկ և իշխան Ցիցիանովին. հայտնում էր, որ Եփրեմ, Հովհաննես եպիսկոպոսները և մի քանի այլ հոգևորականներ, թշնամացած լինելով իր հետ, մոլորության մեջ են պահում ռուսաց կայսրությունն Էջմիածնում տեղի ունեցած դեպքերի վերաբերմամբ, դատ էր պահանջում նրանց դեմ, առաջարկում էր, որ իրեն էլ լսեն և պատրաստակամություն էր հայտնում ուղարկել իր ներկայացուցիչներին, որոնք կապացուցանեն իր անմեղությունը, և իր թշնամիների ստությունը։ Սակայն զուր էին անցնում այս դիմումները։ Ռուսները չէին էլ արժանացնում նրան պատասխանի։ Այսպես պահանջում էր նրանց քաղաքականությունը։ Եվ Դավիթ, արդարություն որոնելու իր միամիտ ջանքերի մեջ խաբված, պիտի, իհարկե, մյուս կողմից, այսինքն, պարսկական կառավարության կասկածները փարատեր դեպի նրան ունեցած իր օրինապահ և կամակատար քաղաքականությամբ, որպեսզի կարողանար ազատել ամենայն Հայոց Մայր Աթոռը Պարսկաստանի խորքերը քշվելու վտանգից։

Իսկ նրա հակառակորդների համար ոչինչ նշանակություն չուներ այդ վտանգը, և նրանք ռուսական արշավանքով վախեցնելը գնալով հասցնում էին չափազանցությունների։ 1803-ի ապրիլի 3-ին իշխան Ցիցիանովը ուղարկեց Երևանի հայերին մի թուղթ, որ պիտի ահագին գրգռումներ առաջացներ ոչ միայն Երևանի խանության մեջ, այլև հարևան երկրներում։ Ահա ինչ լեզու էր

1 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Է, եր. 158—159։

1 Անդ., եր. 159։

բանեցնում ռուսաց ցարի կովկասյան սատրապը մի երկրի վերաբերմամբ, որ նրան չէր պատկանում և ուներ իր անկախությունն ու առանձնությունը[1]։

«Պատուական Մելիք Աբրահամու, համայն բնակչաց և պարագայից եկեղեցական դասուց և աշխարհայնոց Հայոց ազգին Երևանու։

Եհաս առ իս համբաւ, զի ընտրելոյ յազգէն ամենայն հայոց և ըստ բարեհաճութեան յերկուց ևս կարողագոյն և փառաւորագոյն յամենայն երկրի՝ տիեզերակալաց հաստատեալ բարձր ամենապատուական Դանիէլ կաթողիկոսին՝ ըստ առելութեան այլ և այլ ամբարիշտ մարդկան, եղև ի նոցանէ նեղութիւն և վատաբաղդութիւն։ Էմ ես ամենայն սրտիւ կատարող աստուածաշնչ հրամանի նորին կայսերական շքեղափառութեան ամենողորմ թագաւորին իմում, որոյ բարեհաճութիւնն կայ յայսմ դիտաւորութեան, զի հաստատեսցի Դանիէլն՝ կաթողիկոս ի վերայ Արարատեան Աթոռոյն պատրիարքական վեհարանի։ Ունիմ զանշարժ մտահոգութիւն, զի կատարեսցի զկամեցողութիւնն զայն՝ անսասանելի հրաղդեաց զօրութեամբն Ռուսաստանու, որ սպառէ յերեսաց ամենայն երկրի զթշնամիս և զհակառակորդս իւր։

Պարտաւորութիւնն մարդավարութեան իմոյ և կապակցութիւնն ընդ քրիստոնէութեան՝ հրաւիրեն զիս, զի յառաջագոյն յայտնեցից ձեզ. զի եթէ արդարև եղեալ իցեն վերոյիշեալ Դանիէլ կաթողիկոսի՝ զինչ և իցէ նեղութիւնք, վատաբաղդութիւնք և նախատինք անպատկանք իւրումն բարձր աստիճանի, յայնժամ ոչ միայն առ ի գաղանական բարս ընտելացեալ՝ ոսոխս նորին հասցէ իրաւադատ թագաւորին և կայսերն իմոյ բարկութիւն յաղագս տարապարհակ և անմեղ կրելոյ նորա զչարչարանս, այլև առ մրրկայոյզ ի մարդիկ, որք կարողք էին խափանել զկամս նախանձաբեկ ինքնհաճոյից. որք կլանել ունին հզօր հրացանիւք և ցոլմամբ հրոյն Ռուսաստանու. և տունք նոցա աւերակք լինիցին մինչև ցտունս հեռաւոր ազգայնոց։

Ես ո՛չ կամիմ վասն ձեր զայսպիսի տարաբաղդ պատահմունս. ուստի յորդորեմ զձեզ, զի ստասջիք զանօրէնութիւն բարուք կենցաղավարութեան ձերում՝ պահպանելով զբարձր ամենապատուական Դանիէլ կաթուղիկոսն անվնաս և ի յարգանս ըստ աստիճանի նորա։ Իսկ եթէ ընդդէմ այսմ գրուածոյս շարժեսջիք, ոչ թէ ես՝ այլ դուք եղիջիք պատճառ ամենակատար կորստեան ձերում։ Բայց յորժամ զգասջիք զըստ գործոց ձերոց զարժանաւոր փոխարինութիւն. յայնժամ ապաշաւութիւն ձեր ոչինչ օգնեսցեն ողորմելի տառապակրութեանց ձերոց, որք ժամանեսցեն առ ձեզ՝ յաղագս յանդգնութեան ամանց թերամիտ և խելառ արանց։ Ամփոփեսջի՛ք զմիտս՝ հրաւիրեմ զձեզ առ յատկեղ բարութիւն ձեր։ Խանն՝ ձեր պետն է, այլ ո՛չ օրինակից և ո՛չ քրիստոնեայ. վասն որոյ չե՛ն ինչ զարմանք թէ դա՝ (ըստ պատրեցման իւրում յանկուցն և ի մեծագին ականց Էջմիածնի) համարձակեսցի այսքան առ այսպիսի ամենապատուական ծերունւոյն և Քրիստոսատիպ գլխոյն Եկեղեցւոյն Հայաստանեայց։ Օրէնք մահմեդականի հրամայեն խանին՝ հալածել զքրիստոնեայս, այլ զձեզ ընդ հովանեաւ բարձր ամենապատուական Դանիէլ կաթողիկոսի զմի և զնոյն զՔրիստոսադաւանողսդ զի՞նչ արգելու. զի թողեալ զնա՝ առ հակառակն նորա դիմէք։ Մահմադ խանն ըստ հաճոյս սուտ պատրիարք Դաւթի՝ արմատախիլ առնելով զկենցաղավարութիւն նորին ամենաբարձր պատուականութեան Դանիէլ կաթուղիկոսի, կատարէ զհրաման իւրոց օրինաց։ Այլ դուք մատնելով ձեր զնա ըստ Յուդայի (որոյ յիշատակն այսօր նզովաբանի), պարտական լիջիք պատասխանատուութեան յահեղ ատենին Քրիստոսի։ Արդ՝ ի հասանելն բար-

[1] Դնում ենք այդ թուղթը հին թարգմանությամբ, որովհետև հենց այդ թարգմանությունն է եղել հայ ժողովրդի ձեռքին։

կութեան Տեառն Աստուծոյ առ ձեզ՝ աղաղակեսցէ նոյն ամենաբարձր պատուականութիւն առ Աստուած՝ թե Հա՛յր, թո՛ղ սոցա, զի ո՛չ գիտեն զ՞ինչ գործեն. յայնժամ զի՞նչ լինիցի ձեզ։

Մահմադ խանն յափշտակիչն Եկեղեցւոյ՝ ի մերձենալն իմ զօրօք իմովք առ ձեզ՝ փախիցէ (ըստ օրինակի բելաքանեցւոց և ճարեցւոց), հանդերձ ամենայն հարստութեամբ իւրով, և դուք յայնժամ մնասջիք որպէս ողջակէզ սրոյ և հրոյ մերում։ Կրկնեմ ամփոփել զմիտս ձեր. մի՛ յափշտակեցուցանէք զհոգիս ձեր օձին, եթէ տակաւին չիցէք խաբեալ ի նմանէ. բաղդատեցէ՛ք զհեզութիւն քրիստոնեական կառավարութեանց՝ ընդ սաստկութեան և ընդ գազանաբարոյութեան մահմեդականաց կառավարութեանն. արկէ՛ք ընդ չափու զյետնոյն բարբարոսութիւն և զյառաջնոյն համբերութիւն. որով կարող էք գտանել զմերն՝ հետևող կանոնաց Քրիստոսի գրեցելոց ի սուրբ Աւետարանի և զնոցայն՝ հակառակ կանոնաց։

Հաւաքեսջի՛ք զմիտս ձեր, և սարսեսջի՛ք. զի զոր ինչ ասեմ ձեզ՝ ո՛չ են բանք միայն թղթածիրք, այլ բանք՝ որք զկատար առցեն նախքան զներկայ լուսնոյ զշրջանակաւ թաւալման կատարումն։ Դուք տեսջի՛ք, զի համախոհքն ձեր՝ գրողքն աստի՝ թէ ոչ եկեսցեն յայդր բարձր փառաւորագոյն զօրքն Ռուստաց, նեղմուծցեն զձեզ յեղր կորստեան։ Լինիցիք կոխան ոտից զօրաց, և գերեզմանքն ձեր անարտասուելի. այժմ մնայ ձեզ այս՝ զի յերկուց աստի ընտրեսջիք զբարեգոյնն։

Իւրոյ կայսերական մեծութեանն ամենաողորմածագոյն թագաւորին իմոյ՝ գեներալ-լեյտենանտ՝ տանն Վրաց նախկին կառավարիչ՝ Կովկասու, ինսպեքցու ինսպեկտոր Աստրախանու և Կաւկասու զօրաց գուբերնատոր, նոյնպես արք քաղաքական վիճակաց, կառավարիչ Կովկասու, լինիու սահմանական գործոց, և նշանակիր զօրաց սրբոյ մեծի վկայի և քաջազգեաց Գէորգայ չորրորդ աստիճանին և սրբոյն առաքելասարաս քնէազ Վլատիմէրու երկրորդ աստիճանի կաւալէր Քնէազ Պաւլ Ցիցիանով։ 1803 յապրիլի 3»[1]։

Այսպիսի թղթերով և մանավանդ այսպիսի սպառնալիքներով չէր, որ պիտի ստեղծվեր Դանիելի համար փոքրիշատե տանելի կացություն էջմիածնի մեջ։ Ցիցիանովը, վիրավորելով Մահմադ խանի ինքնասիրությունը, մեծ դըժբախտություններ սպառնալով ոչ միայն նրան և Դավիթ կաթողիկոսին, այլև Երևանի ամբողջ հայության, որին նա իրավունք էր համարում հրամաններ ուղարկել, ավելի ևս գրգռում էր կրքերը Դանիելի դեմ, որ բոլոր այդ արյունոտ և հոխորտալից սպառնալիքների միակ պատճառ էր հանդիսացվում։ Եվ անօրինակ գրգռիչ գործողությունը բերում էր, իբրև հետևանք, և անօրինակ խայտառակություն Ռուսաստանի պաշտպանած կաթողիկոսի համար։ Գրգռումից կատաղած Դավիթը գործադրեց իր ձեռքում գտնվող հակառակորդի վրա մի կոշտ և կոպիտ բռնություն, որ նպատակ ուներ անվանարկելու և զինաթափ անելու այդ հակառակորդին, բայց, ընդհակառակն, անվանարկիչ եղավ հենց իր համար։ Այդ բռնությունն այն էր, որ նա ածիլել տվեց Դանիելի միրուքն ու գլուխը։ Այդ արտակարգ խայտառակությունն, իհարկե, իսկույն շահագործվեց Դանիելի կողմնակիցների ձեռքով, որոնք այդ առիթով զանգատ ուղարկեցին Ալեքսանդր կայսրին, այսպես պատմելով նրա մեջ Դավթի վայրենի գործողությունը։ Մայիսի 25-ին նա հրամայեց հնչեցնել զանգակները և հանել Դանիելին հավաքված ամբոխի առաջ։— Ահա նա, որին դուք արդեն մեռած էիք համարում,— ասաց Դավիթը,— դեռ կենդանի է. այժմ հագեցե՛ք նրան նայելով, նա պիտի շուտով մեռնի»։ Եվ դիմելով Դանիելին, նա շարու-

[1] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ե, եր. 332—334. Հմմտ. «Акты...», № 538.

նակից. «Քո հովանավորը միրուք չունի, և դու էլ պիտի նրա նման լինես»։ Այս խոսքերից հետո նրա հրամանով ածիլեցին Դանիելի գլուխն ու միրուքը։ «Ահա այդպիսի կերպարանքով է վայել քեզ մնալ»,— հեգնաբար ասաց Դավիթը և հրամայեց տանել նորից բանտարկել իր զոհին[1]։ Ինքը, Դավիթը չէր թաքցնում իր այս գործը և նայում էր նրա վրա իբրև ինքնապաշտպանության մի բնական միջոցի վրա։ Ահա ինչ էր նա գրում Գեորգ Աղայեկյանին. «Արդ՝ սուրբ Աթոռս կայ ի պայծառութեան և միաբանքն ի խաղաղութեան, երկիրս եւ շնորհօքն Աստուծոյ ի միջակ հանգստութեան։ Եւ թէպէտ Դանիէլեանցն որք ի Թիֆլիզ կան որջացեալ, անտի ձայնիւք ահացուցանեն զմեզ և այլն, այլ ի ցանկութիւնս իւրեանց մաշելոց են. քանզի մինչև ցայժմ ոչինչ կարացին առնել՝ այլ յաւէտ զինքեանս վնասեցին և գերծման մօրուաց Դանիէլի պատճառք գտան, զի տեսեալ մեր թէ ոչ դադարին բնաւ իր չարեաց իւրեանց և օրքանզօր գործեն եւ զնորանորս, ի մայիսի 25 ի ներկայութեան եպիսկոպոսաց զմօրուսն գերծեալ՝ վերստին եդաք ի գիպանոց, սպասելով կատարման ելից իրացն»։

Դավիթը, սակայն, շարունակ մոռանում էր, որ իր անտեղի խստություններով նահատակի լուսապսակ էր պատրաստում իր հակառակորդի համար և դրանով հարվածում էր ինքն իրեն։ Կաթողիկոսական աստիճանին հասցրած այդ անարգանքը չէր կարող, իհարկե, ներելի համարվել ոչ մի տեղ, իսկ անպատված և բանտի զրկանքներին ենթարկված Դանիելը պիտի հետզհետե ավելի և ավելի գթաշարժություն և համակրանք վաստակեր։ Իր բանտի մեջ Դանիելն անհամբեր սպասում էր ռուսների գալստյան, որոնք և պիտի ազատեին իրեն, մի-մի անգամ էլ հաջողացնում էր դրսի աշխարհին ուղարկել իր խնդրանքներն ու զգացածները, որոնք կարող էին միայն խոր համակրական տրամադրություն ստեղծել մարդկանց սրտերի մեջ նրա վերաբերմամբ։ Ահա, օրինակ, ինչ էր գրում նա օգոստոսի 25-ին (1803) իր բարեկամ Թաթուլին, որ, ինչպես կարելի է ենթադրել, մեզ ծանոթ արքունի բժիշկն էր և Թիֆլիսից գնացել էր Երևան.

«ՅԱստուծոյ օրհնեալ ամենաբարեպաշտ պարոն Թաթուլ հարազատի սրբոյ Լուսավորչին ողջոյն տամ և օրհնութիւն կարօտալի։

Յանկամ զքեզ տեսանել և ոչ կարեմ. վարդապետաց գիրն կարդացի, ուրախացա. երանի էր թէ գրէիր իւրեանք էլ գ... մէկ մի յառաջ. մինչև նոքա չգան ինձ ազատութիւն չկայ. կամ թէ ինչ ունին ասած մեզ իմաց անես զէնայ այն տղայովն, որ գիրն բերած էր. ես յետին թշուառութեանն եմ հասել. զիս մահացուցանել խոստանայ թէ որ նաչար մնամ կանեմ կուէ. թէպէտ մահն ինձ կեանք է և լոյս, և ոչ երկնչիմ յուսովն Քրիստոսի, բայց քանի անգամ սրբութիւն և խոստովանահայր ուզեցի, չի տուին. եթէ գիտես ուղղոյն (*) կու գայ և քեզ վնաս չի գար, խանին կամ խանումին խօսք անցրու ինձ միաբանից մէջն մէկ խուց տալ տուր. այս կապանոցես ազատիմ. բանի որպիսութիւնն ինչպես գիտես այնպէս հոգա, թէ որ մէկ գիտեցած մարդ ունիս, հարցրու և լաւ հոգա. ապա թէ ոչ, մնայ, Աստուած ողորմած է, ողջ լեր ամենայն ցնծութեամբ և ուրախութեամբ, ամեն։

Դանիել կալանաւորեալ ծառայ Քրիստոսի Աստուծոյ»[2]։

Ահա ինչ սուր կացություն էր ստեղծում ռուսական քաղաքականությունն իր միջամտություններով։ Ցիցիանովն իր փքուն հոխորտանքներով միանգամայն հասնում էր իր նպատակին։ Կաթողիկոսական գահի համար կռվող-

[1] Н. Дубровин, IV, с. 284.

[2] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ե, եր. 353—354։

ները դառնում էին հետզհետե ավելի ևս անհաշտ, ավելի ևս կատաղի։ Եվ այդ կռիվը գալիս էր վերջիվերջո ռուսական գործը հաջողացնելու։ Այս ուղղությամբ ակամա և անգիտակցաբար աշխատում էր նույնիսկ և Դավիթն իր դաժան խստություններով։ Որքան շատ էր նա նահատակի կերպարանք հագցնում Դանիելին, այնքան ավելի շատ էր ժողովրդականանում ռուսներին բերելու միտքը։ Լարման այս աստիճանին հասցնելով Էջմիածնի դժբախտ հարցը, Կովկասի գլխավոր հրամանատարը, զբաղված լինելով կովկասյան լեռնականների, Գանձակի, Իմերեթի և այլ կարևոր հարցերով, գրեթե մի տարի մոռացության տվեց իր պաշտպանյալին և Դավիթ-դանիելյան աղմուկն առժամանակ երկրորդական նշանակություն ստացավ։ Սակայն 1804-ի գարնան, Գանձակի նվաճման հետևանքով, ռուս-պարսկական հարաբերություններն ընդունեցին վերին աստիճանի սպառնալից կերպարանք։ Պատերազմի հոտ փչեց, և Էջմիածնի հարցը նորից առաջնակարգ քաղաքական նշանություն ստացավ։ Պարսից շահը վճռեց զենքի ուժով պաշտպանել Իրանի հին տիրապետական իրավունքները Կովկասում։ Առաջին անգամն էր, որ պարսկական զորքերը պիտի չափվեին ռուսների հետ, և արշավողական ծրագիրը Թեհրանում կազմված էր, հենակետներից մեկն ունենալով Վրաստանի հարցը. շահն առաջ էր քաշում իր մոտ գտնվող Ալեքսանդր և Թեյմուրազ արքայորդիներին, որոնց խոստացել էր վերականգնել վրացական նախկին թագավորությունը։ Այս մասին ինքը Ֆաթալի շահը (Բաբախանը) հայտնում էր Կախեթի վրաց իշխաններին հատուկ ֆերմանով, որի մեջ ասում էր. «Հայտնի է, որ Վրաստանն Իրանի կալվածների մի մասն է կազմում։ Վրաց թագավորների սխալների պատճառով, մոլորված ռուսները սկսել են արդեն մտածել հաստատվել այդ երկրում։ Ալեքսանդր միրզան և Թեյմուրազ միրզան եկան մեր դուռը։ Մեր բարձրագույն կամքը կայացավ՝ ցույց տալու համար հովանավորություն այդ արքայորդիներին և խլելու համար Վրաստանը ռուսների անիծյալ ձեռքից։ Ուստի այժմ, արժանացնելով նոցա բարձրությունները մեր արքայական շնորհներին, նրանց կարգեցինք մեր ժառանգ Աբաս Միրզայի մոտ, որին ուղարկեցինք Վրաստան 50.000 զորքի և բոլոր հրազենների և պատրաստությունների հետ։ Արքայորդիները պիտի գտնվեն նրա մոտ և ծառայեն նրա բանակի մեջ։ Իսկ մենք ինքներս սաֆար ամսի առաջին թվերում դուրս կգանք մայրաքաղաքից և կուղևորվենք Վրաստան և Ղզլար։ Աստուծո ողորմությամբ այն երկրները կմաքրվեն ռուս գյավուրներից, որոնք կոչնչացվեն հաղթական զորքերի սրերով և արքայորդիները կհաստատվեն Վրաստանում։ Ապա ուրեմն, դուք պարտավոր եք հավաքել ձեր զինվորությունները և լինել պատրաստ, որպեսզի հենց որ մեր բանակը կգա այդ կողմերը, օգնեք նրան ռուսներին ոչնչացնելու մեջ ձեր անձնազոհությամբ և ծառայություններով և այդպիսով արժանի դարձնել ձեզ մեր արքայական շնորհներին և բարեհաճության»[1]։

Հենվելով այս շահական խոսքի վրա, Ալեքսանդր և Թեյմուրազ արքայորդիներն էլ իրենց կողմից նամակներ գրեցին վրաց իշխաններին։ «Մեզանից,— ասում էին նրանք,— հայտարարված թող լինի ամենքին և մեր հանգամանքների մասին հայտնի լինի, որ հենց որ մենք դիմեցինք մեր ամենաողորմած թագավորի (շահի) դարշապարներին և մեր գանգատը հայտնեցինք նրանց, թագավորն իր անսահման գթասրտությամբ իսկույն ամբողջ Իրանում հրաման արձակեց և սկսեց պատրաստվել Վրաստանի վրա գնալու համար։ Միաժամանակ շատ շնորհներ արավ ինչպես մեզ, նույնպես և մեզ մոտ գտնված իշխաններին, ինչպես է փողով, խալաթներով, ձիերով և զենքով։

[1] «Акты...», II, № 1654.

Այնպիսի մեզ շնորհներ արավ և հարգանք ցույց տվեց, որպիսիներն Իրանի ոչ մի թագավոր չի արել երբեք մեր նախնիներին, և ոչ մի ժամանակ թագավորից չեն ստացել իշխաններն այնպիսի շնորհ, որպիսին ստացել են մեզ մոտ գտնվողները։ Ամեն կողմից բերվեցին, Նովրուզից քառասուն օր առաջ զորքեր և թագավորը, հաշիվ անելով, տվեց իր ավագ որդի Աբաս Միրզային մի մեծ բանակ և մեզ էլ նշանակեց նրա մոտ։ Մարտի 28-ին դուրս եկանք մենք Թեհրանից և գնացինք դեպի ձեր կողմը և ինքը թագավորը, 17 օր անցնելուց հետո, իր, ծովի նման ալեկոծվող, զորքերով։ Մենք այս մասին ենք գրում, որ երբ թագավորը մեզ այդպիսի անթիվ շնորհներ է անում և մեր տունը ջնջողներին բարեհաճում է դուրս քշել, դուք չպիտի անեք այնպիսի բան, որով ձեզ վրա հրավիրեք մեծ թագավորի բարկությունը և դառնաք Վրաստանի ավերման պատճառներ և ձեր ընտանիքներն էլ գերության ենթարկեք։ 1300 տարի մեր տան մեջ եղել են վրացական թագավորներ, Իրանի թագավորի հպատակներ։ Ձեր նախնիքները մեր տան համար և մեր նախնիքների առաջ իրենց արյունն էին թափում. դուք այնպիսի բան մի անեք, որ ձեր տներն էլ կործանեք և ձեր ծառայությունն ու արյունի թափումն արհամարհեն։ Պարսիկները լեզգիներ չեն, 5 հազար չեն, 10 հազար չեն, 30 հազար չեն։ Ղաջար և, ինչ Ղաջարից բարձր ամբողջ Իրանն է գալիս այդտեղ։ Աստծուն է հայտնի, որ նրանք կամ պիտի բոլորը կոտորվեն, կամ պիտի վռնդեն ռուսներին։ Դուք ամենքդ այժմ մեզ դիմավորելու եկեք, զորքերը գնում են երկու բանակի բաժանված. մեկի հետ բարեհաճում է լինել ինքը շահը, իսկ մյուսի հետ՝ շահի որդին. մի բանակը կերթա Ղարաբաղի վրայով, իսկ մյուսը՝ դեպի Գյոկչա։ Մենք այն ժամանակ կլինենք կամ շահի հետ կամ նրա որդու հետ, նայած թե որ ճանապարհը կլինի մոտիկ և հարմար։ Եկե՛ք մեզ դիմավորելու և որքան հեռվում հանդիպեք մեզ, այնքան լավ կլինի։ Դուք նույնպես կստանաք հավատարմության ֆերման։ Այժմ ժամանակ է, եկեք ստանալու թագավորից մեծ շնորհ, և ինչպես ձեր հայրերն էին հավատարիմ, դուք ավելի հավատարիմ կհանդիսանաք, եթե կլսեք մեր խորհուրդը և կգաք այդ, իհարկե, լավ կլինի, իսկ եթե ոչ՝ ինչպես կամենում եք։ Հավատացե՛ք Աստծուն, որ այս նամակի մեջ ամեն ինչ ճիշտ և ուղիղ է։ Այս նամակի պատճենը մենք ուղարկեցինք ամենքին Քարթալինիայում և Կախեթում և այսպիսով մեր պարտքը կատարեցինք, իսկ այժմ դուք ինքներդ գիտեք»[1]։

Այսպիսով պարսիկները հույս ունեին հրդեհել Վրաստանն ապստամբության բոցով, որ պիտի անելանելի դրության մեջ դներ ռուսական զորքը, որ աննշան մի քանակություն էր կազմում, համեմատած շահի շատ խոշոր բանակի հետ։ Մայիսին Աբաս Միրզայի բանակն արդեն անցել էր Արաքսը, բայց փոխանակ Ղարաբաղի վրա գնալու, բռնեց Երևանի ուղղությունը։ Նույն մայիսին Թիֆլիս ժամանեց պարսից կառավարության ուղարկած պատվիրակը, որ բերեց Ցիցիանովին մեծ վեզիր (սադրազամ) Միրզա Մահմեդ Շաֆիի հետևյալ նամակը. «Մեր անկեղծ բարեկամից պատշաճավոր կերպով ողջունելուց հետո ծանուցանում եմ ձեզ, որ այժմյան ժամանակ իմ շահինշահը տեղեկություն է ստացել, թե ձեր բարձրաստիճանությունը շարունակելով ձեր մնալը Թիֆլիսում առևտուր անելու պատրվակով, այժմ ճնշման ձեռք եք մեկնում Գանձակի և Դաղստանի կողմերը։ Եվ որովհետև մենք մինչև այժմ ձեր՝ Իրանի երկրների սահմանները գալու պատճառը համարում էինք միայն առևտրական նպատակները, այժմ ձեր ներկա արարմունքից հավաստիանալով, որ դուք ոտնակոխ եք անում բարեկամության մտերմության պատվիրանները, չենք

[1] Н. Дубровин, Закавказье от 1803—1806 гг., с. 299—300.

կարողանում հասկանալ, թե ով է ձեր այդ գործողության պատճառը։ Ուստի շահինշահը գահաժառանգին զորքի և իմաստուն զորավարների հետ ուղարկելով դեպի այդ կողմերը, դեպի ուր նա շարժում է սկսել Ղազվինից մուհարրեմ ամսի 12-ին, նորին մեծությունը նրա ետևից կբարեհաճի դուրս գալ իր մայրաքաղաքից և իջևան առ իջևան պիտի հետևե թագաժառանգին։ Ուստի ձեզ, ինչպես ձեր պետության օգուտների համար տքնողի, որ նախատեսում է դեպքերի հետևանքը, վայել է հանգցնել այս վառված կրակի բոցը։ Այս նպատակով ես ուղարկում եմ ձեզ մոտ Յակուբ բեկ Գերայլեցուն, և եթե դուք ունեք նվաճողական դիտավորություններ, այն ժամանակ խնդրում ենք պահվել ձեր տեղը, որպեսզի ականատես լինեք այն վիճակին, որին կենթարկվեք դուք։ Ամենակարող Աստծու օգնությամբ բարեկամն ու թշնամին վկա կլինեն, թե երկու զորքից Քուռ գետի վրա ինչ գլուխներ կլողան առանց մարմինների փամփուշտների նման և ինչ մարմիններ Կասպից ծովի վրա տեղատվության և մակընթացության միջոցով կգարնվեն ափերին և ետ կտարվեն ափից։ Կուռքերի մեհյաննե՞րն արդյոք կկործանվեն, թե մահմեդականների մզկիթները, վարդապետների շուրջառնե՞րն արդյոք կմնան անտեր, թե հաղթողների սրերը պիտի պսպղան։ Բայց եթե դուք Հերակլ խանի ժառանգների հետ, ձեր խորամանկության հովանու տակ, առուծախի դաշն ունեք Թիֆլիսում առևտուրը տարածելու, այդ քաղաքին տիրանալու համար, այն դեպքում այդ տեսակ խորամանկության ամոթալիությունն ակնհայտ է, ուստի շահական նահանգները դուք առանց ամենափոքրիկ պատրվակի պարտավոր եք մաքրել և լիազորված մի անձ ուղարկել Գուրգեն խանի որդու մոտ, որ գտնվում է թագաժառանգ իշխանի ասպանդակների մոտ, բանակցություններ վարելու և երկուստեք համաձայնությունը վերականգնելու համար։ Մնում ենք այն համոզման մեջ, որ ձեր բարձրաստիճանությունը պետության սիրո զգացմունքից դրդված, բարեկամության հրաշքներով կշնորհեք Մարիամի (Աստվածածնի մասին է խոսքը) չոր ծառին տերևներ և պտուղներ և ձեր իմաստության մտքերով բարեկամության Ավետարանի ցիրուցան թերթերը, Հիսուսի նման, ոտից կմիացնեք մի տեղ և կկազմեք, որպեսզի բազմաթիվ ռուսների և իրանցիների արյունը թափված չմնա»[1]։

Պարսկական հոխորտանքներին Ցիցիանովը պատասխանեց իսկույն իր սեփական հոխորտանքներով։ «Եթե,— գրում էր նա Միրզա Շաֆիին,— Պարսկաստանի բարիքը ցանկալով, ուշքի կգաք և կմտածեք, թե նրանց համար, որոնք սովոր են հաղթել աշխարհի բոլոր ծայրերում, չեն կարող սարսափելի լինել ո՛չ դատարկ փառահեղ սպառնալիքները, ո՛չ պարսկական զորքերը, որոնք բազմաթիվ են ծովի ավազի նման և պատերազմում են գրիչներով, այլ ոչ սրերով. եթե իմ որդիների սվինները ձեզ դուր չեն գալիս, ուղարկեցեք Վրաստանից հեռացած արքայորդիներ Ալեքսանդրին և Թեյմուրազին, որոնք կեղեքում են Վրաստանն ազգամիջյան կռիվներով, և այն ժամանակ հաշտություն կլինի և պարսիկների արյունով թրջված չեն լինի առատ արտերը»[2]։

Պատերազմը հայտարարված էր, և նա իր ամբողջ ծանրությամբ ընկնում էր առաջ ու առաջ հայ ժողովրդի գլխին։ Ցիցիանովը չսպասեց, որ Ֆաթալի շահը պատերազմական գործողություններն անցկացնե Վրաստանի հողի վրա։ Ամեն կողմից ընդունելով պաշտպանողական դիրք, նա միայն մի կողմն էր ընտրում հարձակողական գործողություններ սկսելու համար, և այս՝ Երևանի ուղղությունն էր։ Այստեղ Ցիցիանովը, մինչև շահական զորքերի ժամանումը,

[1] «Акты...», II, № 1665.
[2] Ibid., № 1666.

գործ ուներ միայն Մահմադ խանի հետ։ Այս իշխանավորին ընկճելու առիթն, ինչպես գիտենք, միշտ պատրաստ էր՝ Դանիելի կաթողիկոսացումը։ Դեռ մինչև Միրզա Շաֆիի նամակն ստանալը, մայիսի 10-ին, Ցիցիանովը կրկնում էր իր ցասկոտ դիմումներից մեկը Մահմադ խանին։ «Ոչինչ բերանացի բանակցություններ ես չեմ ընդունում,— գրում էր նա,— որովհետև ամեն մի պարսկական խան կարող է հետո նրանից հրաժարվել, որպիսի օրինակներ եղել են։ Ոչ մի բանակցության մեջ ես չեմ մտնի, մինչև որ չուղարկեք իրեն կաթողիկոս անվանող Դավթին և կաթողիկոս չեք հայտարարի Դանիելին, ինչպես հրամայել է նորին կայսերական մեծություն իմ ամենազորմ թագավորը։ Դրա հետ դուք պիտի ուղարկեք թուղթ ձեր կնիքով, թե դուք համաձայն եք հետևյալ կետերին. 1. Բերդի մեջ պետք է դնել ռուսական զորքեր, իսկ դուք ազատ կլինեք ապրել ուր ուզում եք՝ բերդի մեջ կամ նրանից դուրս. 2. Դուք պիտի ընդունեք ռուսաց կայսրին ձեր թագավոր և երդվեք, որ նրա հավատարիմ հպատակը կլինեք. 3. Ձեր բարձր աստիճանությունը պիտի վճարեք հարկ 80.000 ռուբլի տարեկան, տալով երկու ժամանակամիջոցում, այսինքն՝ Նովրուզի մյուս օրն, առաջին կեսը, իսկ մյուսը՝ հուլիս ամսից հետո։ Եվ այն ժամանակ կգամ ես հաստատելու ձեզ հավատարմության երդումով և պաշտպանելու ձեզ ձեր թշնամիներից նորին կայսերական մեծության զորքերով։ Բացի դրանից, եթե ուշանաք այս բանն անելու, այլևս մի սպասեք թողության։ Այլև եթե բաց թողնեք Դավթին, այն էլ Էջմիածնի հարստության հետ, թողություն մի սպասեք։ Այլև երդվում եմ կենդանի աստուծով, որ որքան ես չեմ կարող առանց զորքերով բերդը գրավելու մնալ, այնքան ձեր կյանքը և խանական իշխանությունը հավիտյան կմնան անվնաս։ Ահա իմ վերջին խոսքերը, ահա ձեզ բարի ճանապարհ։ Իսկ եթե նրանով չեք գնա, ես չեմ լինի մեղավոր ձեր կորստյան մեջ»[1]։

Պահանջելով, որ իրեն հանձնվի Դավիթ կաթողիկոսը, Ցիցիանովն Ալեքսանդր կայսրի անունից խոսք էր տալիս, որ նրա կյանքը վտանգված չի լինի, և նա կստանա առաջնորդական պաշտոն և կապրի ապահով։ Մահմադ խանը դրված էր երկու կրակի մեջ։ Մինչդեռ մի կողմից ռուսներն էին այսպիսի պահանջ ներկայացնում, մյուս կողմից պարսից շահն էր սպառնական կերպով պահանջում, որ նա իր զորքերով ուղևորվի Աբաս Միրզայի բանակը և միանա նրան։ Եվ որովհետև դեռ Աղա Մահմադ խանի ժամանակ նա իրեն հայտնի էր կացուցել իր անհավատարմությամբ և անհնազանդությամբ, ուստի շահի հրամանն էր, որ խանը կամ պիտի կատարե այս պահանջը կամ պիտի դուրս գա շահական երկրներից և գնա Մեքքա, կամ եթե այս էլ չի ուզում, «իր վրա խաչ հագնե և չմնա շահի հողում»[2]։ Այսպիսի պահանջ արվում էր և Նախիջևանի Քյալբալի խանին։ Եվ ահա երկու խաները վերսկսում են իրենց հին քաղաքականությունը. խաղալ երկու մեծ հակառակորդ ուժերի, այն է՝ Ռուսաստանի և Իրանի բախումների մեջ և, հարմարվելով հանգամանքներին, իրենց բարեկամ ձևացնել կամ մեկին կամ մյուսին։ Սկզբում ավելի մոտիկ և անմիջական համարելով ռուսական վտանգը, նրանք Ցիցիանովին հայտնում էին, թե պատրաստ են ընդունել ռուսական հպատակությունը, սակայն խուսափում էին կատարել ռուսաց գլխավոր հրամանատարության առաջարկած պարզ պայմանները, այնպես որ խանական խոստումները մնում էին լոկ խոսքեր։ Ցիցիանովն, իհարկե, լավ էր ըմբռնում, որ այդ բոլորը ժամանակ վաստակելու մի լավ միջոց է։ Ուստի Թիֆլիսի մոտերքը քաշելով

[1] «Акты...», II, № 1224

[2] Ibid., № 1221.

այն բոլոր զորքերը, որոնք կարող էին ազատ համարվել մյուս ճակատների պաշտպանությունից, հրաման տվեց նրանց սկսել արշավանքը դեպի Երևան։

Մահմադ խանը լավ իրազեկ լինելով ռուսական պատրաստություններին, ինքն էլ, չնայած իր հավատարմական խոստումներին, սկսեց եռանդով պատրաստություններ տեսնել. ամրացնում էր Երևանը, իսկ գավառի ազգաբնակչությունը հնազանդության մեջ պահելու համար հավաքեց և Երևանի բերդի մեջ փակեց բազմաթիվ պատանդներ, որոնք բաղկացած էին գլխավորապես կանանցից և երեխաներից։ Նույն բերդի մեջ ամբարվեց և ցորենի ու վառոդի բավականաչափ պաշար։ Բայց այս բոլորը շատ քիչ էր համարվում հանդեպ այն վտանգի, որ սպասվում էր հայերից։ Ամբողջ հայ ազգաբնակչությունը համարվում էր ռուսների կողմնակից, նրանց շահերին անձնատուր, և ահա հենց այս պատճառով նրանք հանդիսանում էին երկու խաներին իբրև մի չափազանց վնասակար տարր, որ չէր կարելի թողնել երկրում պատերազմի ժամանակ։ Ուստի Մահմադ խանը հրամայեց մոտ չորս հազար տուն հայեր հանել իրենց տեղերից և քշել տանել Կարսի երկիրը[1]։ Սկսվեց հայ կյանքի պատմական ամենամեծ աղետներից մեկի՝ բռնի տեղահանության մի կրկնությունը։ Այս նոր աղետն ունեցավ իր պատմագիրը։ Դա Վաղարշապատի Հովհան քահանա Ոսկերչյանն է, որից մենք իմանում ենք մի շարք մանրամասնություններ[2]։

Տեղահանության գործը խանը հանձնել էր երկու երևանցի հայի՝ Մելիք Աբրահամի որդի Սահակին և Հովհաննես յուզբաշուն, որոնք կատարեցին այդ հանձնարարությունն ամենայն խստությամբ։ Գաղթեցումն սկսվեց ապրիլի 17-ին։ «Վարեցին զմեզ արտաքս ի հայրենեաց մերոց,— գրում է Ոսկերչյանը,— մինչև չկարացանք գէթ ևս բառնալ զհաց և անկողինս մեր ըստ անձին, վասն որոյ և ամենայն ստացուածք մեր մնաց աւար և յափշտակութիւն օտարաց։ Արդ թէպէտ ի ճանապարհորդութեան մերում անցին զմեօք անթիվ նեղութիւնք, այլ մեք զոմանս ի նոցանէ միայն նշանակելով՝ զանց առնեմք ի բոլորեցն զի մի լիցի ծանրութիւն լսելեաց բանասիրաց։ Գիտելի է և այս՝ զի ժողովուրդն Էջմիածնի կարի նեղացեալ էր ի խստութենէն Դաւթայ որ յայնժամ բռնութեամբ կալեալ ունէր զԱթոռն Էջմիածնի, և հազիւ գտանիւր անձն որ ոչ իցէր յուսահատ ի գահից և ի տուգանաց նորա. էին և քանի մի անձինք ի ժողովրդեանն արքանեակք և համախոհք նորա, որք խառն ընդ միմեանս ճանապարհորդեալք հասին մինչև ցԱպարան որ սահման է Շիրակայ և Փամբակու նահանգացն։ Աստէն խորհեցան բազումք ի ժողովրդենէն Էջմիածնի, որք արբեալք էին զմրուր դառնութէանն Դաւթայ, անցանել ի Փամբակ և ոչ գնալ ի Կարս, նմանապէս և ժողովուրդք նահանգին Ղրխպուլաղու, որք տաղտկացեալք էին ի Պարսից նեղութենէն, կամէին անցանել ընդ մեզ ի Փամբակ յերկիր մեծի կայսեր»։

Այս տողերը վկայում են, որ ինչպես և բնական է սպասել, դավիթ-դանիելյան կուսակցությունների հակամարտությունը տեղի ուներ և Էջմիածնի վանքի պարիսպներից դուրս, գյուղի մեջ էլ, այնպիսի սաստկությամբ, որ Դավիթն ստիպված էր պատժողական միջոցներ գործադրել և այդտեղ, աշխարհական ժողովրդի մեջ, իր իշխանությունը պաշտպանելու համար, մի հանգամանք, որ ցույց է տալիս, թե կաթողիկոսական իրավասությունը, գոնե Էջմիածնապատկան գյուղերում, տարածվում էր և հասարակ ժողովրդի վրա։

[1] «Утвержд. русс. влад. на Кавк.», I, с. 136.

[2] «Կռունկ Հայոց Աշխարհին», ամսագիր, Թիֆլիս, 1862, եր. 278—316։ Պետք է նկատի առնել, որ հեղինակը Դավթի հակառակորդներից է և ռուսական տիրապետության կողմնակից։

Մեր վաղարշապատցի հեղինակը, սակայն, իբրև Դավիթ կաթողիկոսի հակառակորդ, չի խոսում այն հոգսերի մասին, որոնք այդ իսկ միջոցին բռնացած էին այդ հոգևոր իշխանապետի վրա։ Արարատյան բաց ու անպաշտպան դաշտի մի կտորը կազմող Էջմիածինը դարավոր դառն և անթիվ փաստերով գիտեր, որ երբ բարձրանում է պատերազմական մրրիկը, ամենից առաջ իր հարստություններով հռչակ հանած կաթողիկոսական վանքն էր, որ ենթարկվում էր կողոպուտի և ավերման արհավիրքներին։ Դավիթ կաթողիկոսն իր բազմաթիվ նախորդների նման կանգնած էր այն շատ դժվար հարցի առջև՝ թե ինչ պետք է անել հայոց Մայր Աթոռը պահպանելու համար։ Մահմադ խանը չէր կատարում, ճիշտ է, Ցիցիանովի չեչտակի պահանջը Դավթին ռուսների ձեռքը հանձնելու մասին, բայց բացատրում էր իր այդ վարմունքը նրանով, որ, միևնույն է, ռուսները ընդունելով խանի հպատակությունը, պիտի տիրեն և Էջմիածնին, որից հետո և կարող են անել ինչ որ ուզում են։ Թեև այդպես, բայց Մահմադ խանը չէր ուզում թողնել Էջմիածնի հարստությունները ճակատագրի կամքին, մանավանդ որ վճռել էր դիմադրել պարսիկներին և այս դեպքում թողնել կաթողիկոսական վանքն անձեռնմխելի, կնշանակեր թողնել պարսիկներին մի հարուստ մթերանոց, որ նրանց ապահովություն կտար Երևանի դեմ ավելի զորավոր և տևողական ջանքեր լարելու։ Այս պատճառով խանը որոշեց տեղափոխել Էջմիածնի հարստությունները, մինչև իսկ գահը, Երևան։ Իսկ Դավիթը, պատերազմական բոլոր պատահականություններից իր աթոռն ապահովելու համար, ուղղակի դիմում արավ պարսկական զորքի գլխավոր հրամանատար Աբաս Միրզային և նրա մոտ գտնվող բարձրաստիճան և ազդեցիկ զորավարներին, խնդրելով նրանցից հայոց ընդհանրական օջախի պաշտպանությունը։ Այդ զորավարների թվումն էր և վրաց արքայորդի Ալեքսանդրը, որին նույնպես ուղղում էր Դավիթն առանձին խնդիրք։ Նա այդ բոլորին գրում էր. «Թե մեք չեմք անձանց տէր և կամք մեր ոչ է ի ձեռս մեր, զի մնայցեմք ի սուրբ Աթոռոջս՝ և կամ ոչ մնայցեմք, ուրեմն՝ խնդրեմք, զի ի գալն ձեր յերկիրս մեր՝ եթէ մեք աստ ի տեղս մեր չլինիցիմք, խնամք տարջիք օջախիս, և մարդկանց մերոց՝ որք աստ գտանիցին, յատուկ մարդ պահապան դիցիք ի մէջ սորա, զի ի զօրաց ձերոց վնասք և վնաս ինչ չհասցին սմա և սորայնոց»։ Պարսից հրամանատարությունը մեծ ուշադրությամբ վերաբերվեց կաթողիկոսի այս դիմումին։ «Նոքա ևս,— շարունակում է Դավիթն իր մի ընդարձակ գրության մեջ,— զյատուկ յատուկ յուսադրութեան և միամտութեան թուղթս էին գրեալ առ մեզ. և մանաւանդ նա ինքն շահզադայն ևս առաքեալ էր մեզ զյատուկ ռաղամ մի, թէ ըստ ամենայնի խաթրջամ կացցես մնասցես ի կողմանէ մերմէ, զի որպէս կամքն է ձեր՝ ըստ այնմ կատարելոց եմք. գիտեմք՝ որ այդ օջախդ մշտնջենական է, ոչինչ ունիմք վնասել դմա, այլ որպէս յառաջին թագաւորացն խնամեցեալ է դա, նմանապես և առաւել ևս խնամք և պատիւ ընդունելոց է ի մէնջ, մի՛ բնաւ կասկածեսջիք»[1]։ Մնում էր պաշտպանվել և մյուս հարձակողական կողմից, այսինքն՝ ռուսներից։ Սակայն Դավիթը նրանց դիմում չարավ այն պարզ և բնական ենթադրությամբ, որ նրանք, իբրև քրիստոնեաներ, ձեռք չեն տա մի քրիստոնեական հռչակավոր սրբավայրի։

Մինչդեռ կաթողիկոսն այսպիսով իրեն ապահոված էր տեսնում երկու կռվող կողմերից էլ, պարսից գալստյան լուրերն սկսեցին օրըստօրե սաստկանալ։ Ձեռնարկելով Վաղարշապատի և այլ տեղերի հայ ազգաբնակության տեղահանություն, Մահմադ խանը վճռական միջոցներ գործադրել սկսեց և

1 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Է, եր. 431։

Էջմիածնի վերաբերմամբ, քանի որ Դավիթ կաթողիկոսը չէր ուզում հոժարակամ տեղափոխվել Երևան։ Նրա երևելի մարդկանցից մեկը 30 մարդկանցով գնաց ամենայն Հայոց աթոռը՝ ավարի առավ վանքի ամբողջ հարդն ու խոտը, ծեծեց նրա գործակատարներին, ապա և սկսեց բռնադատել կաթողիկոսին, որ երեք կամ չորս օրում տեղափոխե վանքական կայքն Երևան, քանի որ պարսիկները հեռու չեն։ Սովորություն էր, որ այսպիսի դեպքերում Էջմիածնի հարստությունները տեղափոխվում էին բեռներով Բայազետ կամ Կարս կամ մի ուրիշ քաղաք, ուր պահ էին տրվում տեղական հայերին մինչև ժամանակի հանդարտվելը։ Այսպես էր արել, օրինակ, Ղուկաս կաթողիկոսը։ Սակայն Դավիթը փորձով գիտեր, որ ապահովության այդ եղանակն անկայուն է, քանի որ Բայազետում պահ տված հարստությունները Դանիել կաթողիկոսը և նրա կողմնակիցներն էին հափշտակել, իսկ Կարսի մեջ պահվածները՝ տեղային թուրքերը։ Ուստի նա վանքական հարստությունների մեծագույն մասը՝ ոսկեղեն, արծաթեղեն, երկաթեղեն, պղնձեղեն և կերպասեղեն, թաքցրեց վանքի գաղտնարաններում և միայն մի փոքրագույն մասն ուղարկեց Երևան։ Նույնպես և գաղտնի պահեստների և շտեմարանների մեջ թաքցրեց ուտելիքի և ըմպելիքի (հաց, գինի) պաշարները, որոնք խոշոր էին՝ վերջին տարվա առատ բերքի պատճառով, այնպես որ նրանցով կարող էին կերակրվել ամբողջ միաբանությունն ու վանք եթևեկողները մի տարի, առանց դրսի օգնության սպասելու։ Ապա ինքը, կաթողիկոսն էլ գնաց Երևան, բայց այդտեղ հայ և թուրք մեծամեծները, խորհրդակցություն կատարելով, պատշաճ չհամարեցին, որ նա մնա բերդում և խորհուրդ տվին հեռանալ գնալ օսմանյան պետության պատկանող մի քաղաք։ Դավիթը չկատարեց այդ խորհուրդը, նկատի առնելով, որ իր բացակայությունը կնպաստե վանքի ավերման, ուստի և վերադառնալով Էջմիածին, վճռեց մնալ այդտեղ մինչև պատերազմի վերջը։ Բայց հազիվ էր նա մի օր անցկացրել իր աթոռում, Երևանի խանից նոր հրաման եկավ, որ վանքի բոլոր նշանավոր սրբությունները տեղափոխվեն մի քանի եպիսկոպոսների ձեռքով Երևան, իսկ ինքը Դավիթը կարող է գնալ ուր որ կամենում է։ «Իսկ մենք,— ասում է Դավիթը,— բազումս տարակուսեցանք առ այս վասն երկուց. նախ՝ թէ գնալովն մեր յայլ տեղ՝ սուրբ Աթոռս մնալոց է անտէրունջ և երկրորդ՝ որ սրբութիւնքն ելանելոց են ի ձեռաց մերոց. վասն որոյ զելս իրացն այսպէս գտանելով՝ գրեցաք առ իշխօղն թէ՝ ոչ կարեմք թողուլ զսրբութիւնսն՝ և երթալ ի տեղ ինչ, ուր ուրեք մեր սրբութիւնքն իցեն, անդ և մահն մեր պարտի լինել։ Եւ նա ևս հրաման արարեալ էր մեզ՝ որ մեք վերառաք զամենայն երևելի սրբութիւնսն և տարաք յԵրեվան, թողեալ զամենայն միաբանսն մեր աստ։ Եւ անդուստ զԾ (50) հայ զինուորս առաք յիշխողէն և յուղարկեցաք ի սուրբ Աթոռս ի պահպանութիւն»[1]։ Սակայն բոլոր միաբանները չմնացին Էջմիածնում։ Լսելով, որ պարսիկները բոլորովին մոտեցել են, նրանք փախան Երևան, և Դավիթ կաթողիկոսը հազիվ կարողացավ նրանցից վեցին համոզել վերադառնալ՝ վանքը պաշտպանելու համար։ Նրանց հրահանգվեց, որ պարսիկների գալու դեպքում ցույց տան նրանց Աբաս Միրզայի վերոհիշյալ ռաղամը, իսկ երբ ռուսները կգան, դիմավորեն նրանց եկեղեցական հանդեսով, և զանգահարությամբ։ Երևան տեղափոխված էր և Դանիել կաթողիկոսը։ Այսպես էր դրությունը, երբ հունիսի մեկին Աբաս Միրզայի բանակը կանգ առավ Երևանի մոտ։

Այս միջոցին տարագրվող գյուղական հայ ժողովուրդը դառն օրեր էր քաշում։ Մենք տեսանք, որ Ապարանի կողմն ուղղված գաղթականները վճռել

1 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Է, եր. 433։

էին փոխանակ Կարս գնալու՝ անցնել Փամբակ, որ ռուսաց տիրապետության տակ էր գտնվում և հանգստություն որոնել այնտեղ։ Գաղթականությունը վարող Սահակն ու Հովհաննես յուզբաշին իսկույն ձիավոր են ուղարկում Երևան և խանին իմաց են տալիս ժողովրդի դիտավորությունը։ Խանը հրամայում է իր երկու զորապետներին, թեթևաշարժ մի զորաբաժնի գլուխ անցնելով, հասնել գաղթականներին և քշել նրանց դեպի Կարս. «Բայց մեք,— պատմում է Ոսկերչյանը,— չիմանալով զորագայթս իշխանացն մերոց յԱպարանու ելեալ միամտութեամբ չուէաք ի ճանապարհացն Փամբակու ի յԱլաղայեաւ ուէրակ ինչ գեօղի հայոց յաւուր շաբաթու ի Մայիսի 28, մինչդեռ գնայաք օրն սկսաւ նսեմանալ մութն ամպով՝ և հողմն ցրտաշունչ պատրաստեալ զամպս թանձրամածս արկանէր ի վերայ կարաւանին մերոյ և գնայաք միջոցս ձիգս խառն ընդ ամպն՝ սառուցեալք ի խստութենէ օդոյն. և զկնի կէս աւուրն. սկսաւ որոտալ և թօրել զանձրև, և զկնի սակաւու տեղեաց կարկուտ թանձրախիտ ընդ դէմ երեսաց կարաւանին և հատեալ զմարդ և զանասուն կասեալ յընթացից կացուցանէր յետս ի ժամս երիս. և ոչ մնայր բնաւին չորութիւն ոչ ի հանդերձս և ոչ յուտելիս, մինչև մոռանալ առն զընտանիս իւր և մարց զորդիս իւրեանց ի խստութենէ օդոյն, զի սառեալ և ընդարմացեալ կայաք՝ միայն անձանց և եթ հոգալով զփրկութիւն. իսկ մատաղ մանկտին վտանգեալք լինէին որ յետ քանի աւուրց մեռան և քանիք ի նոցունց։ Եւ այսպէս մինչ ցերեկոյ ոչ եռուն մեզ հանգիստ կարկուտն և անձրև մինչև հազիվ հազ հասաք աւերակն Ալաղայեայ, յորում ոչ կարացաք գտանել ծեղ ինչ խուոյ յաղագս հրոյ, վասն որոյ յաւուրն երկուշաբթի չուեալ անտի կամէաք անցանել ի հողն Փամբակու, և դեռ չեաք գնացեալ մղոն մի՝ ահա հասին զկնի մեր զօրն առաքեալ ի խանէն յԵրևանու և անկեալ ի վերայ բանակին մերոյ հարեալ վիրաւորէին և իբրև զապստամբեալս զմեզ կողոպտէին, և բռնի վարեալ դարձուցանէին զմեզ դեպ ի Կարս. յորում նուագի էր տեսանել զաղէտ վտանգի նեղութեան կարաւանին հայոց, զի զառաջընթացս նոցա հարեալ ընկրկէին և շփոթեալ արկանէին ընդ միջնովքն, և դիզեալ ի վերայ միմեաց կործանէին զմարդ և զանասուն վասն զի և տեղին պատահեցաւ առապար և խոխոմք ձերոց. և այսպէս ժամս 5 ոչ դադարէին ի կոփելոյ և ի կողոպտելոյ զմեծ բանակն հայոց, մինչև դարձուցին և հասուցին առ ափն Արփոյ գետոյն Կարուց»[1]։

Այս տեղն այժմյան Ալեքսանդրապոլից դեպի հյուսիս 7 վերստ հեռավորությամբ գտնվող Մարմաշենն էր, ուր, ինչպես հայտնի է, բարձրացած է XI դարում իշխան Վահրամ Պահլավունու շինած հոյակապ եկեղեցին։ Այստեղ, Արփաչայ գետի ափին, բռնադատված գաղթականությունը մնաց հինգ օր։ Հանկարծ Երևանից գուժկան է գալիս և հաղորդում այդ բազմությանը ահարկու մի բոթ, թե շահզադան (Աբաս Միրզան) անթիվ զորքով մտել է Երևան, և ահա այդ զորքից մի գունդ շտապով գալիս է գերելու և ավարի առնելու բոլոր գաղթականներին։ Վերահաս աղետից ազատվելու միակ միջոցն էր, նույն գուժկանի ասելով, անցնել գետը և մտնել Կարսի հողը։ Եվ մեր պատմիչը շարունակում է. «Զայս լուեալ իշխանացն մերոց յիշեալ Սահակայ և Յօհաննէսի ի շաբաթու առաւօտուն, որ էր օր երկրորդ Համբարձման փրկչին, բռնադատեալ զժողովուրդս Վաղարշապատու և Ղըրխպուլաղու հարկանէին անցանել ընդ գետն ի Կարս յաշխարհ օսմանցւոց, սակայն ոչ հաճէր բոլոր բանակն Հայոց՝ անցանել ի գետն, զի լուեալ էին զասացեալն Կարուց փաշային թէ՝ մի՛ մտցեն դոքա յաշխարհ իմ, ապա թէ ոչ՝ ես կալեալ տաց զդոսա ի ձեռս Պարսից, յորժամ նոքա զդոսա յինէն պահանջեսցեն։ Սակայն իշխողքն մեր

[1] «Կռունկ», 1862, եր. 291—292։

ոչինչ համարեալ զբանս փաշային՝ բռնի վարեալ զաղս և զանասուն բանակին լռելին ի գետն անցանել յայնկոյս, և ի լինելն մեծի շփոթի և հակառակութեան ի մէջ իշխօղացն և բանակին՝ բռնացաւ բազմութիւնն և դարձոյց զերեսս դէպ ի Փամբակ յերկիր մեծի կայսեր, զոր տեսեալ զօրացն Կարուց, որք Ղարափափախք ասին, և մեր երկրական Պարսից, որք Զօպանքեարայ կոչին, և այլոց ևս այլազգաց զրոհ տուեալ ընթացան զկնի մեր իբր ապստամբելոց և ի չորրորդ ժամէ յաւուրն սկսեալ մինչև ցմուտ արեգականն անդադար պատերազմաւ վարէին զմեզ առ ճանապարհն որ գնայք և զի զարնանային էր եղանակն և օրն մթացեալ թանձր ամպով և հուէր անձրև մանր ցրտաշունչ հողմով և գնայաք ընդ կիրճս նեղս քարանձաւ առապարաց թացեալ անձրևով և շաղախեալ տղմով ճանապարհին և զի բազումք ի բեռնակիր անասնոց վասն խիստ վարելոյ անկանէին առ ճանապարհաւն և թշնամեացն ի վերայ հասեալ իբրև զգազանս յափշտակէին, և իբրև զճռաքաղս այգեաց զկնի եկեալ մեր կրճատէին մինչև հասանիլ մեզ ի դաշտ ինչ սակաւ դիւրընթաց, որք իբրև տեսին թշնամիքն թէ՝ ելաք ի ձորոց ի դաշտ և մերձեցաք մտանել յերկիր մեծի կայսեր՝ խմբեցան ամենեքեան և խորհեցան միահամուռ ձիարշաւ միջամուխ առ մեզ լինիլ և խլպաւ առնուլ զինչս մեր աւարի, բայց մեք իբրև իմանայաք յետին ճիգ մտաց թշնամեացն, խրախուսեալ զհամատի մանկունս մեծին Վաղարշապատու՝ ետապահս կարգէաք մերոյ կարաւանի և զայլևս օգնականս ի թևս նոցա. և եղև իբրև ճչեաց բազմութիւն թշնամեացն ըստ տարազու պարսից պատերազմի և ձիարշաւ եղեն գալ ի վերայ բանակին, յայնժամ և մերքն ի բաց եղեալ զերկիւղ՝ սկսան և ինքեանք արձակել զթուֆանկս առ նոսա իբր ի նշանակս, որք և հարեալ զխրոխտ զօրապետ նոցա ի վայր ի ձիոյն կործանէին յերկիր, և զայլս ևս վիրաւորս զմարդ և զձի առնէին և վերջ մարտին անկումն զօրապետի նոցա լինէր։ Եւ մերքն զկնի ընթացեալ զաւար առեցեալս ի նոցանէ զանասուն և զոչխար դարձուցանէին յետ. և ի մուտս արեւուն մուտ լինէր և մեր ի մասն ինչ Փամբակու փոքր ինչ ոգի առեալ ի պատերազմէ թշնամեացն»[1]։

Այս տեղի ունեցավ հունիսի 4-ին, այն ժամանակ, երբ ռուսաց բանակի առաջավոր մասը, գեներալ Տուչկովի հրամանատարությամբ, սկսել էր արշավանքը և հասել էր Փամբակի Ղարաքիլիսա գյուղը։ Այդ զորաբաժնի հետ էին և Թիֆլիսի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոս Գեղարդակիրը և Ներսես վարդապետ Աշտարակեցին։ Գանձակի նվաճման ժամանակ հայերի միջոցով ռուսական բանակին մեծամեծ ծառայություններ մատուցած այս երկու հոգևորականներն այժմ գնում էին նույն պաշտոնը կատարելու և Արարատյան երկրում։ Գեղարդակիրը վարձատրվել էր կայսրից ոչ միայն շքանշաններով և հրովարտակներով, այլև նշանակվելով Վրաստանի հայոց հոգևորականության ծայրագույն կառավարիչ։ Երևանի արշավանքին մասնակցելու համար Ցիցիանովը հրամայել էր Լոռու, Ղազախի, Շամշադինի և Գանձակի հայերից կազմել կամավոր խմբեր։ Ղարաբաղի այն մելիքները, որոնք բնակվում էին Վրաստանում, նույնպես միացրին իրենց ուժերն այդ արշավանքին։ Բոլնիսի քաջարի Մելիք Աբովը, ծերության պատճառով, չկարողացավ անձամբ մասնակցություն ցույց տալ, ուղարկեց իր միամոր որդի Ռոստոմ բեկին, որ իր մեծամեծ քաջագործություններով հոր արժանավոր ժառանգ հանդիսացավ։ Գեղարդակիրն ու Աշտարակեցին էլ ունեին իրենց հետ հարյուր զինված հայեր[2]։ Իսկ վրացի իշխաններից և ազնվականներից մասնակցում էին 200 հոգի։

[1] «Կռունկ», եր. 293—294։

[2] Ա. Երիցեան, Ներսես Աշտարակեցին («Փորձ», 1877—78, № 1, եր. 245)։

Պատերազմով Մարմաշենից Փամբակ շարժվող վաղարշապատցի փախըստականները, լսած լինելով Հովհաննես արքեպիսկոպոսի ժամանումը Ղարաքիլիսա, մարդ ուղարկեցին նրա մոտ և օգնություն խնդրեցին։ Ռուսաց բանակից մի ձիավոր ջոկատ ուղարկվեց, բայց նա տեղ չհասավ, այնպես որ փախստականներն իրենց ուժով ետ վանելով հետապնդող թշնամուն, ազատվեցին կորստից։ Այնուհետև գերեվարության առաջնորդներ էին Սահակն ու Հովհաննես յուզբաշին, որ գնացին Գեղարդակրի մոտ, Ղարաքիլիսա։ Ցիցիանովը հանձնարարել էր արքեպիսկոպոսին, որ նա աշխատե հայ գաղթականություններ դուրս բերել Երևանի խանությունից և բնակեցնել Վրաստանի սահմաններում, ուր դատարկ տեղեր շատ կային։ Եվ նա, կատարելով այդ հանձնարարությունը, հուսադրեց Սահակին և Հովհաննեսին խորհուրդ տվեց, որ փախստականները մնան Լոռում և հեռու չգնան, որպեսզի երբ ռուսները վերցնեն Երևանը, նրանք հնարավորություն ունենան շուտով վերադառնալ իրենց տները։ Այդպես էլ արին գաղթականները։ Բայց ինչպես կտեսնենք հետո, այնքանով չէին վերջանում նրանց տառապանքները, և վերջիվերջո նրանց մեծագույն մասը կորչում էր իր հայրենիքի համար։

Գեներալ Տուչկովի զորաբաժինը, առաջ գնալով, գրավեց Շորագյալը (Արևելյան Շիրակը), որ Երևանի խանին էր պատկանում։ Հալածելով խանական ձիավոր խմբերը, գեներալը մոտեցավ Գյումրի բերդին և ամուր դիրք գրավեց, բանակվելով Արթիկ գյուղում։ Այդտեղ հասան Գեղարդակիրն ու Աստարակեցին իրենց 100 զինված թիկնապահ հայերով և լուր առած լինելով, թե հայ փախստականների մի մեծ հատված, երևանցիների հատվածը, թվով երկու հազար տուն, մեծ վտանգի մեջ են, խնդրեցին Տուչկովի օգնությունը, ասելով, թե փախստականների վրա արշավում է պարսկական մի խոշոր բանակ, որի մեջ են և Ալեքսանդր և Թեյմուրազ արքայորդիները, դիտավորություն ունենալով կամ ետ քշել բոլորին և տանել Երևան կամ թե կոտորել բոլորին[1]։ Այս փախստականության մասին Ոսկերչյան քահանան տալիս է հետևյալ մանրամասնությունները. «Եւ հասեալ (Գեղարդակիրը) յԱրթիկ գեօղ ինչ Շիրակաւանու, ընթանայ առ նա դուժկան ի կարուց ի Հայոց Երևանցւոց անդ գնացելոց թե՝ փութա և ազատեա զմեզ ի ձեռաց Ջանտից զի ահա գերեալ տանին զմեզ։ Քանզի որպէս պատմեցաք... մինչ էաք մեք առ անդս Արփոյ գետոյն ի Մարմարաշէնն սուրհանդակ հասեալ մեզ յԵրևանու ծանոյց զգալն Ջանտին ի վերայ մեր. և մեք անճարացեալ յաւուր շաբաթու յունիսի 4 փախուցեալ անկաք ի Փամբակ. իսկ յաւուր կիւրակէին գայ Ջանտն ի տեղի իջեւանին մերոյ ի Մարմարաշէն, և իբրև ոչ գտանէ զմեզ անդ՝ դիմէ ի վերայ այլ փախուցեալ Երևանցւոցն որ ի Կարս և յայլ տեղիս, և գերեալ զհայս և զպարսիկս իբր զապստամբեալս ի Շահէն և արարեալ զբանակ մեծ կամէին վարեալ յԵրևան»[2]։

Հունիսի 10-ի լուսաբացին գեներալ Տուչկովը գնաց Գյումրիի վրա և ճանապարհին հանդիպեց գերի վարող թշնամուն Խլի-Ղարաքիլիսա գյուղի մոտ (Ալեքսանդրապոլից 10 վերստ դեպի հարավ, կոչվում է և Փոքր Ղարաքիլիսա)։ Սկսվեց հրաձգություն։ Տեսնելով, թե որքան փութկոտությամբ են թշնամի ձիավոր զորքերը հարձակվում, Տուչկովը մի բատալիոն հետևակ զորք մտցրեց կռվի մեջ, իսկ մյուս բատալիոնն արագ անցկացրեց թշնամու թիկունքը և կտրեց նեղ լեռնանցքը, որ պարսիկների միակ ճանապարհն էր իրենց բանակը վերադառնալու համար։ Այդ հանգամանքը մեծ խառնակություն գցեց

1 «Утвержд. русс. влад.», I, с. 136.

2 «Կռունկ», եր. 295։

թշնամու շարքերի մեջ։ Նրանք, որոնք առանձնապես քաջ էին, սաստկապես հարձակվեցին իրենց համար ճանապարհ բաց անելու դիտավորությամբ, բայց ռուսական թնդանոթների գնդակները հնձում էին այդպիսիներին։ Մնացածները, սարսափի բռնված, ցրվեցին և սարերն ընկան՝ իրենց գլուխն ազատելու համար։ Փախստական բազմությունն ազատված էր և կարողացավ նույնպես դեպի Փամբակ ուղղել իր քայլերը։ Իսկ ռուսաց զորքը գրավեց Գյումրին։ Այս հաջողությունից երկու օր անցած, հունիսի 12-ին, Գյումրի հասավ և Ցիցիանովը։ Եվ իր բոլոր զորքերն այդտեղ կենտրոնացնելուց հետո նա սկսեց շարժվել դեպի Երևան։

Իսկական պատերազմն այժմ էր սկսվում։ Պարսից բանակն ուներ իր մեջ, ինչպես կարծվում էր ընդհանրապես, 60 և ավելի հազար մարդ, իսկ Ցիցիանովն այդ ահագին քանակության դեմ դնում էր, ունենալով իր հրամանատակ ոչ ավելի, քան 3512 հետևակազոր, 12 թնդանոթ և մի քանի հարյուր ձիավոր։ Եվ այսպիսի մի ուժով նա կամենում էր նվաճել ոչ միայն Երևանը, այլև ամբողջ տարածությունը մինչև Կասպից ծովը, սահմանագիծ դարձնելով Արաքսգետը[1]։ Այս մի ապացույց էր, թե որքան անձնապաստան էր Ցիցիանովը և ինչպես էր արհամարհում ասիացի թշնամուն։ Ընդհանուր առմամբ, իհարկե, ճիշտ էր, որ պարսկական զորքը դաստիարակված ասիական կարգ ու սարքով չէր կարող, չնայած իր թվական մեծության, չափվել ռուսական զորքի հետ, որ ներկայացնում էր եվրոպական կարգերով մարզված և խիստ կարգապահության ենթարկված մի բանակ։ Եվ այս հանգամանքը պարզվում էր երկու բանակների հանդիպման առաջին իսկ օրերից։

Մենք տեսանք, որ Աբաս Միրզայի բանակը մոտեցավ Երևանին հունիսի 1-ին։ Մահմադ խանը բաց չարավ նրա առջև իր բերդի դռները։ Նա, ուրեմն, ըմբոստանում էր շահնշահի դեմ։ Այսպիսի հանդգնության նա հասել էր գլխավորապես մի քանի երևելի հայերի դրդմամբ, որոնք, լինելով Դանիել կաթողիկոսի կողմնակիցներ, էին, հետևաբար, և ռուսական իշխանության գործակատարները։ Այսպես էին, օրինակ, Գաբրիել հարյուրապետը, մեզ ծանոթ գերեվար Հովհաննես հարյուրապետի եղբայրը և իշխան Գեորգ Խուբյանը։ Վերջինս թողել է մի հետաքրքրական հիշատակարան, որի ռուսերեն թարգմանությունն է գտնվում մեր ձեռքում[2] և որ պարունակում է իր մեջ մասնավորապես 1804 թվականի անցքերը։ Մենք տեսնում ենք, որ Խուբյանը Հովհաննես Գեղարդակրի թղթակիցն էր և կատարում էր նրա հանձնարարությունները Գաբրիել հարյուրապետի հետ, հենվելով այն խոշոր հեղինակության և ազդեցության վրա, որ այս երկու հայերն ունեին խանի ապարանքում։ Պարզ երևում է, որ նրանք մեծ հաջողությամբ վառ էին պահում Մահմադ խանի մեջ կասկածամտությունը պարսից կառավարության նկատմամբ, ներշնչելով նրան երկյուղ, թե շահը պիտի խլե նրանից խանությունը և նույնիսկ զրկե կյանքից, մինչդեռ ռուսական հպատակությունն ընդունելը կլինի ամենալավ ապահովությունը խանական իշխանությունը ժառանգաբար և անփոփոխ պահպանելու համար։

Աբաս Միրզան, անձնատրության մերժում ստանալով բերդից, պատերազմական գործողություններ սկսեց, սակայն՝ անհաջող։ Նա բանակ էր դրել բերդից ընդամենը մի վերստ հեռու, բայց և այդպես բերդեցիները ոչ միայն

1 «Утвержд. русс. влад.», I, с. 137—138.

2 «Описание достопамятных происшествий в Армении, случившихся в последние тридцать лет, т. е. от патриаршества Симеонова (1779 г.) до 1809 года. Сочинение князя Егора Хубова, с армянского перевел армянской церкви архидиакон Иосиф Иоаннесов», Спб., 1811.

չթողեցին, որ նա մոտենա պարիսպներին, այլև իրենք, դուրս գալով բերդից, հարձակման դիմեցին և ետ քշեցին պարսիկներին վեց ժամ տևած արյունահեղ կռվից հետո, որի հետևանքով պարսկական բանակն արդեն երեք վերստի վրա էր կանգ առնում։ Բայց և այնպես, խանն իրեն համարում էր մեծ վտանգի մեջ։ Խուբյանը և Գաբրիել հարյուրապետը նրան շարունակ հուսադրել էին, թե ռուսները շուտով կգան։ Օրն օրին սպասվում էր ռուսների գալուստը։ Նրանք, սակայն, չէին երևում, և նա կատաղության մեջ էր ընկնում, ինչպես ասում է Խուբյանը, «անագորույն գազանի պես մռնչում էր հայերի դեմ, հանդիմանելով մեզ, թե մեր խորհուրդներն էին, որ հասցրին նորան այդ դրությանը[1]»։ Այդ լարված կացությունը շարունակվեց մոտ երկու շաբաթ։ Հունիսի 16-ին սուրհանդակ եկավ Երևան, բերելով նամակներ խանին Ցիցիանովից և Խուբյանին՝ Գեղարդակրից։ Վերջինիս նամակը գրված էր հունիսի 11-ին, այսինքն՝ Ալի-Ղարաքիլիսայի կռվի հաջորդ օրը։ Հայտարարվում էր, թե ռուսները մեծ հաղթություն են տարել, ջարդելով և ցրելով պարսիկներին։ Իսկ Ցիցիանովը հաղորդում էր, թե երկու օրից հետո ռուսական բանակը կմտնե Երևանի սահմանները։ «Խանը,— գրում է Խուբյանը,— այս մի ցնորք էր համարում և հարցնում էր հայերից, թե ճի՞շտ է այն տեղեկությունը։ Ամենքը կատարյալ հավատով պատասխանեցին, թե հույս ունեն, որ երեք օրվա ընթացքում կկատարվի իրենց ցանկությունը»[2]։ Խանն իսկույն նամակ ուղարկեց Ցիցիանովին, ողջունում էր նրա գալուստը, նորից իր պատրաստակամությունն էր հայտնում մտնելու ռուսաց հպատակության մեջ և հարցնում էր՝ մնալո՞ւ է Ցիցիանովը Գյումրիում, թե պիտի առաջ արշավե։

«Ես,— պատասխանում էր Ցիցիանովը (հունիսի 14-ի նամակով),— Գյումրիի տակ կանգնելու համար չեմ եկել, այլ նրա համար, որ վերցնեմ Երևանը։ Դուք ասում եք ձեր նամակի մեջ, որ ես ձեզանից ծառայություններ պահանջեմ, իսկ ես պահանջում եմ ձեզանից բերդն իր բոլոր ռազմամթերքներով, և երդվում եմ կենդանի աստուծով, որին ես դավանում եմ, թե ձեր բարձրապատվության համար փրկության ուրիշ ճանապարհ չկա, բացի նրանից, որ երբ ես կմոտենամ բերդին, հանդիպեք ինձ, բերեք բանալիները և անձնատուր լինեք իմ ամենաողորմած և մեծ թագավոր կայսրի սրբազան կամքին։ Այն ժամանակ ձեր ամբողջ երջանկությունն ես կհայտարարեմ ձեր նորին կայսերական մեծության, Աստուծով բարձրացված կայսրության թագավորի անունով։ Ահա ձեզ միակ ճանապարհը դեպի ձեր բարօրությունը, մնացածն ինչպես ձեր կամքն է։ Ընդ սմին, պիտի ես ստանամ, Էջմիածին հասնելուց հետո, պատվավոր անձինքներից ընտրված ձեր դեսպաններին, որոնք կբերեն գրավոր հավաստիացում և հայտարարություն, թե դուք պատրաստ եք, հենց որ ես կմոտենամ բերդին, բերել ինձ բանալիները՝ նորին կայսերական մեծության իմ թագավոր կայսրին մատուցանելու համար, իսկ հետո և կհանձնեք ինքը՝ բերդը և բոլոր ռազմամթերքը մեր բերդապահ զորքին։ Չեմ կարող լռել ձեր բարձրաստիճանության առաջ, որ այլևս պարսկական քաղաքականության և խուսափողական խաղերի ժամանակը չէ։ Կամ խնդրեցեք ողորմություն և խնայում, կամ սպասեցեք Ջավադ խանի վիճակին, որ ես ձեզ չէի ցանկանա, բայց եթե կհամառեք մի օր թեկուզ, ես ցույց կտամ, որ զուր կամ անօգուտ տեղից անհաղթելի զորքերիս հետ ման գալ ես չգիտեմ»[3]։

Ուղարկելով այս զոռոզ հրամայողական թուղթը, Ցիցիանովը մյուս օրը,

1 Хубов, с. 24.
2 Ibid., с. 27—28.
3 «Акты...», II, № 1230.

հունիսի 15-ին, դուրս եկավ Գյումրիից դեպի Երևան Ապարանի վրայով, հանձնելով իր բանակի առաջապահ մասը գեներալ Տուչկովին, իսկ վերջապահ մասը՝ գեներալ Լեոնտևին։ Հունիսի 17-ին ռուսական զորքն Ապարան անունով ավերակ գյուղի մոտ կարճատև կռվի բռնվեց Երևանի բեկերից մեկի գլխավորությամբ գործող մի հրոսակախմբի հետ, որ բաղկացած էր մոտ 500 պարսիկներից և տեղական թուրքերից և որ քշել տարել էր Փամբակի գյուղերից մեկի անասունները։ Այս կռվի հեռավոր արձագանքը լսվեց Երևանում և ահագին տպավորություն թողեց մանավանդ հայերի մեջ, որոնք, ինչպես տեսանք, երկյուղով պաշարված լինելով, անհամբեր սպասողության մեջ էին։ «Իրենց հույսերի մեջ,— ոգևորված շեշտում է Խուբյանը,— խաբված չէին, որովհետև 17-ին, երբ ծագող արևն սկսել էր ոսկեզօծել իր ճառագայթներով սարերի և բլուրների կատարները, և Երևանի հայերն իրենց փրկության հույսը կորցրած ավելի սպասում էին իրենց համար կործանարար ժամին, երբ նրանք, զրկվելով ոգու արիությունից ինչպես բազեների առջև դողացող աղավնիներ, սպասում էին իրենց մահվան, հանկարծակի լսվեցին որոտմունքներ սարերի ետևում։ Օդը երերաց սաստիկ հրաձգությունից, որ գալիս էր քառասուն վերստ տարածությունից, Ապարան անունով տեղից։ Այս որոտմունքները քրիստոնյաների համար փրկության ավետաբերներ էին, իսկ մահմեդականների համար՝ անսպասելի կորստյան համբավաբեր»[1]։ Մահմադ խանն, ավելի ևս մտրակված այս տրամադրությամբ, մի նոր պատգամավորություն ուղարկեց Ցիցիանովի մոտ, որպեսզի նա, ինչպես գրում էր խանը հրամանատարին, «գտնվելով ձեր պայծառափայլության մոտ, դառնա առաջնորդ և ցույց ամենուրեք տեղերն ու ճանապարհները»[2]։ Պատգամավորության գլուխն էր խանի սիրելի զորապետներից մեկը, Կասումբեկը, որի հետ այս անգամ ուղարկվում էին և երկու հայ հոգևորականներ՝ Բարսեղ և Գրիգոր եպիսկոպոսները։ Առհասարակ այժմ դանիելական կուսակցության նշանակությունը բարձրացել էր խանի աչքում։ Ինքը Դանիելը գտնվում էր բերդում Դավթի հետ միասին և պահվում էր պատվի մեջ։ Խանը նրա միջնորդությանն էր դիմում՝ ռուսների հետ բանակցություններ վարելու համար, մի բան, որ Դանիելը հոժարությամբ էր հանձն առնում, տեսնելով իր նվիրական իղձի կատարում։ Անշուշտ, խանի կարգադրությամբ էր նույնպես, որ Դավիթն էլ սկսեց շատ մեղմ վարվել իր հակառակորդի հետ, որի մասին գրում էր. «Եւ զԴանիէլ վարդապետն ես (զոր ունէաք ընդ մեզ և սեղանակից առնելով մեզ շահէաք և պատուէաք) էարկ (խանը) միջնորդ բանին. և նա ես ըստ դիւրափոփոխ բարուցն իւրոց շուտով անսալով և իբրու գիտելով թէ ունի հասանել ցանկութեան, ստեպ ստէպ գրեաց զթուղթն առ համախոհսն իւր՝ և մեծամեծսն Ռուսաց, թէ դուք անդանդաղ եկեսջիք յօգնութիւն իշխօղիս, և բերդին ես խնդրակք մի լիցիք, և յայնժամ՝ որպէս կամքն է ձեր, այնպէս կատարելոց է սա»[3]։ Եվ իրավ, Մահմադ խանը համաձայն էր ռուսաց բոլոր պայմաններին, բացի միայն մեկից՝ բերդը հանձնելուց։ Իսկ այդ մասին Ցիցիանովը լսել անգամ չէր ուզում և դրանով մի ավելորդ անգամ էլ ցույց էր տալիս, որ իր արշավանքի առաջին նպատակը հայոց կաթողիկոսությունը չէր, ինչպես ինքն էր հայտարարում, այլ Երևանի նվաճումը։

Հունիսի 19-ին ռուսաց զորքը մոտեցավ Էջմիածնին։ Դեռ հեռվից լսվում էր ղանգահարության ձայնը, և Ցիցիանովն այնպես կարծեց, թե միաբանու-

1 Хубов, с. 28.
2 **Н. Дубровин**, «Ист. войн.», IV, с. 308—309.
3 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Է, եր. 434—435։

թյունը պատրաստվում է իրեն ընդունել խաչ ու խաչվառով, այդ պատճառով էլ հրաման տվեց, որ զորքերն առանց կանգնելու շտապեն գնալ վանքը։ Դավիթ կաթողիկոսն իր ընդարձակ նամակի մեջ գանգատվում էր, թե ռուսական զորքն Էջմիածին տանողները Բարսեղ և Գրիգոր եպիսկոպոսներն էին, որոնք փոխանակ ցույց տալու այն ուղիղ ճանապարհը, որով կարելի էր գնալ Երևանի կամ պարսից բանակի վրա, առաջնորդեցին դեպի վանքը[1]։ Սակայն ակներև է, որ եպիսկոպոսների լոկ ցանկությունը չէր այդ շարժման մեջ գերկատարողը. ինքը Ցիցիանովն էլ կամենում էր անպատճառ վանքում հաստատվել և այդտեղից շարունակել բանակցությունները Երևանի խանի հետ։ Նրա բանակն, անցած լինելով այդ օրը 44 վերստ տարածություն, մեծ մասամբ անջրդի, լեռնային և անապատ տեղերով, սաստիկ հոգնած էր և թուլացած։ Զինվորները հազիվ էին կարողանում շարժվել, լքել էին իրենց շարքերը և գնում էին՝ ցրված երկար տարածության վրա։ Ճանապարհին մնացողների թիվն այնքան մեծ էր, որ յուրաքանչյուր բատալիոնի մեջ մնացել էին 60 հոգուց ոչ ավել։ Չնայած այս հանգամանքին, Ցիցիանովն շտապեցնում էր իր զորավարներին գրավել վանքը։ Պարսիկները թեև հետևում էին ռուսներին, բայց չօգտվեցին նրանց այս կազմալուծումից, թողեցին նրանց հանգիստ։ Այս անհոգությունն էր պատճառը, որ Ցիցիանովն իր անզգուշության համար չպատժվեց։ Նա կարծում էր, թե ճանապարհը բաց է, պարսիկներ չկան վանքի մեջ և շրջականերում։ Բայց հենց որ գեներալ Պորտնյագինը մի փոքրիկ առաջապահ խմբով, որ բաղկացած էր ձիավոր զինվորներից և վրացիներից, մոտեցավ «վերին» կոչված այգիներին, հանկարծ աջից ու ձախից պարսիկները, թաքնված այգիների մեջ, կրակ բացին հրացաններից և փոքրիկ թնդանոթներից (զամբուրակներից)։ Գեներալն ստիպված էր ձիուց իջեցնել իր զինվորներին և կռվով դուրս քշել պարսիկներին այգիներից։ Օրը մթնեց, Ցիցիանովը գիշերեց Էջմիածնի վանքի մոտ, թողնելով նրա գրավումը հաջորդ օրվան։

Վանքի մեջ գտնվում էր պարսկական մի զորաբաժին, որի քանակությունը ռուսական աղբյուրներն որոշում են 400 մարդ[2]։ Դավիթ կաթողիկոսի պատմելով, այդ փոքրիկ գունդն իրեն շատ լավ էր պահում, բավականանալով այն չափավոր պարենով, որ միաբանությունը հոժարակամ նշանակել էր նրա ապրուստի համար։ Այսպես կարգադրել էր թագաժառանգ Աբաս Միրզան, 21 տարեկան մի վառվռուն երիտասարդ, որ օժտված էր արտասովոր ընդունակություններով և պայծառ հայացքների տեր մարդ էր։ Հավատարիմ մնալով իր տված խոսքին, նա իր առանձին հովանավորության տակ էր վերցրել ամենայն Հայոց Մայր Աթոռը։ Անձամբ այցելության գնալով վանքը, երիտասարդ շահզադեն հարց ու փորձ էր արել նրա շինության ժամանակի և այլ հանգամանքների մասին, ցույց էր տվել կատարյալ պատկառանք դեպի այդ հնադարյան հիմնարկությունը, անշուշտ լավ հասկանալով, թե ինչ նշանակություն ունի նա ամբողջ հայ ժողովրդի համար։ Աբաս Միրզան առանձին հոգատարությամբ էր վերաբերվում և վանքում մնացած միաբաններին, որոնցից Մարտիրոս վարդապետը հարկավոր եղած ամեն մի դեպքում դիմում էր անում նրան և իսկույն բավարարություն ստանում։ Պարսիկ զինվորների կատարած ամենափոքրիկ գողությունն անգամ պատժվում էր[3]։

Հունիսի 20-ի վաղ առավոտյան Ցիցիանովը նկատեց, որ գիշերվա ըն-

[1] Անդ, եր. 435։

[2] Н. Дубровин, «Ист. войн.», IV, с. 310.

[3] «Դիւան հայոց պատմութեան», գիրք է, եր. 435—436։

թացքում շատ բան է փոխվել։ Նրա առջև կանգնած էր պարսկական 20 հազարանոց ձիավոր բանակը, որ Երևանի տակից էր եկել նույն ինքն Աբաս Միրզայի գլխավորությամբ։ Հարձակումն սկսեցին պարսիկները։ Կռվի ճակատը տարածվում էր Շողակաթի և Հռիփսիմեի վանքերից մինչև Գայանեի վանքը։ Ռուսական բանակը, մի քանի մասերի բաժանված, քաջաբար դիմադրում էր իրենից հինգ-վեց անգամ ավելի թշնամուն։ Անսովոր լինելով եվրոպական կարգով մղվող պատերազմին, պարսիկները չկարողացան դիմանալ մանավանդ ռուսական թնդանոթների կրակին, որ տեղում էր անընդհատ, դիակներով ծածկելով դաշտի երեսը։ Բայց և այնպես, նրանց թվական գերազանցությունը չէր թույլ տալիս ռուսներին իրենց կամեցած գործողությունները զարգացնել և ստիպված էին, բանակից կտրված չլինելու համար, փոփոխել իրենց դիրքերը, սակայն այս շարժողականություններն էլ չէին օգնում, և Ցիցիանովը շրջապատված էր երեք կողմից։ Վեց ժամ շարունակվեց կռիվը։ Պարսիկները չկարողանալով հաղթահարել ռուսների կուռ և համառ դիմադրությունը, շարունակ նեղվելով նրանց շեշտակի կրակից և շատ մարդ կորցնելով, ստիպված եղան անճապարանքով ետ քաշվել և փախուստի դիմել, չնայած որ Աբաս Միրզան ամեն ջանք գործ էր դնում, որ իր զորքերը կարգ պահպանեն և շարունակեն կռիվը։

Հովհան քահանա Ոսկերչյանն այսպես է նկարագրում Էջմիածնի այդ ճակատամարտը. «Այլ իբրև եմուտ կուսակալն մեծի կայսեր արքն Ցիցիանով ի դաշտն Վաղարշապատու՝ եգիտ զշահզադայն ամենայն պատրաստութեամբ ելեալ ընդ յառաջ իւր անհուն այրուձիովք և հրազէն հետևակօք, պատնէշ արարեալ սկսեալ ի վերին կոչեցեալ յայգեացն Էջմիածնի մինչև ցվանս սուրբ կուսանացն Հռիփսիմէի և Գայանէի, և այնքան միջոցի ընդ երկարութեան ծակոտեալ զորմունս գետեղեալ էր յայնս թնդանօթս, զամբարակս և ջէզայիրս. և անտի սկսեալ ի հարաւակողմ մինչև ցվերջ անդաստանացն Էջմիածնի և պատեալ ընդ Քասաղ գետովն յարևմտեան կուսէ թեթևաշարժ ձիամարտիկօք. և մնայր միայն հիւսիսային կողմն խաչակիր զօրացն ընդ որ եկեալ էին, և ընդ հսկել ուրեք խաչակիր զօրացն ի դաշտն Վաղարշապատու ակնածիր մարտն ի Պարսից կուսէն. այնու դիտմամբ որպէս զի՝ մի՛ տայցեն ժամանակ զօրապետին կարգել զհանդէս իւրոյ գնդին, ուստի զառաջապահ զօրն Պարսից միաձայն ճչեալ դիմէր ի վերայ Ռուսաց մինչև զքանի սայլս հացի և այլ կարասեաց ի վերջոյ բանակին հատեալ տանէին։ Բայց անվեհեր արքն Ցիցիանով զաղխս իւրոյ բանակին գետեղեալ ի դաշտ մերձ Ցորանէից կոչեցեալ բլրին շրջափակ զօրաց պատնեշէր, դնէր և ի կատար բլրոյն զթնդանօթս և զմնացեալ զգունդն առեալ իջանէր ի ճակատ Պարսից գնդին սկսեալ ի վերին յայգեացն Էջմիածնի մինչև ցվերջ սուրբ Շողակաթ վանիցն կարգէր զփոքրիկ զիւրն խումբ։ Եւ եղև զի ի բլրոյն մինչև ցայգին մնայր՝ միջոցն դատարկ. վասնորոյ զօրն պարսից թեթևընթաց երիվարօք որպէս զհողմս ընթացեալք զսա և գտանէին արս, կարաւանս և ծառայս արտաքոյ պատնէշին Ռուսաց՝ հարեալ սպանանէին, ընդ որս սպանաւ և Յակոբ վարդապետ Պօլսեցի վարժապետ կոչեցեալ, և Տրդատ սարկաւագ Հաշտարխանցի և այլ ևս քանի անձինք, որք եկեալ ի պաշտնէչէն ի գնին պատերազմին սպանան տարապարտ մահուամբ։ Եւ քանզի դեռ Պարսիկք չէին առեալ զփորձ՝ հզօր բազկի կայսերական զօրացն, վասնորոյ հայեցեալ ի փոքր քանակութիւն նոցա՝ կամէին կենդանւոյն կլանել զնոսա. իսկ իբրև կարգեցան գունդքն խաչակիր զօրաց և հարան բարապանք նոցա և սկսան ցոլել զհրահոսան գնդակս որոտաձայն թնդանօթից և սալտաթեան թուանկաց իբր զհրախառն թանձրախիտ կարկուտի ի վերայ Պարսից ճակատոյն՝ տեսանէին Պարսիկք զի հնձեալ դիզանէին դիակունք ինքեանց

զորաց ի վերայ միմեանց, վասնորոյ սկսան եռալ զեռալ և ընդ կրունկն յետս սորել, բայց Շահզատայն խրոխտայր ի վերայ զորապետաց զօրուն իւրոյ ոչ կամէր ի բաց դառնալ ի փոքրիկ գնդէն Ռուսաց առ ամօթոյ հօրն և եղբարց իւրոց՝ զի Թերևս ի յերկարութենէ պատերազմին մարթասցէ գտանել զյաղթութիւն, այլ իբրև ետես թէ քանտեցան և պատնէշք կողմանն իւրոյ և հարեալ ցրուեցան թնդանօթք և զամբարակք և զօրք նոցա, խոնարհեցաւ, և ինքն ի փախուստ մինչև ցՔանաքեռ գեօղ Հայոց, որ վերոյ կայ յամրոցէն Երևանու ժամու միոյ ճանապարհի»[1]։

Մոտավորապես այսպես են ներկայացնում պատերազմի պատկերը և ռուսական աղբյուրները։ Բայց այստեղ շատ բան, անտարակույս, չափազանցված է։ Որ պարսիկները բոլորովին չքեցին էջմիածինը և նրանց փախուստը միահամուռ չէր, ցույց է տալիս հենց այն հանգամանքը, որ այդ հաղթությունից հետո Ցիցիանովը դեռևս երեք օր էլ ստիպված եղավ մնալ իր տեղում, շարունակելով մաքառում պարսիկների դեմ, որոնք կտրել էին ջուրն, այնպես որ ռուսական բանակը մեծ տագնապի մեջ էր ծարավից հունիսյան անտանելի տոթին։ Զգրավելով էջմիածնի վանքը, թողնելով նրան պարսիկների ձեռքին, Ցիցիանովը հունիսի 23-ին շարունակեց իր արշավանքը և ուղարկեց Երևան իր մոտ գտնվող Կասում բեյին (անշուշտ և սրա հետ եղած Բարսեղ և Գրիգոր եպիսկոպոսներին)։ Մահմադ խանին նա գրում էր համառոտորեն, թե ինքը նոր ասելիք չունի, մնում է նախկին պայմանների վրա և Կասում բեյին էլ ուղարկում է այն նպատակով, որ նա մանրամասն և բերանացի նկարագրե ռուսաց զորքի կռիվը և հաղթությունը։ Հունիսի 20-ի տապալությունը, պետք է խոստովանել, առանց այդ ականատեսների վկայության էլ, չափազանց մեծ էր Երևանում։ «Ամեն տեղ,— գրում է Խուբյանը,— զարմանում էին այդպիսի հաղթության վրա։ Իրանի պարսիկները կարծում էին, թե իրենք կռվում էին ինչ-որ աստվածների հետ, որոնք հարվածում էին իրենց ամպրոպներով և կայծակներով»[2]։ Այս հանգամանքը, սակայն, այնքան չէր սարսեցնում Մահմադ խանին, որ նա լքեր ճարպիկ ու կեղծավոր քաղաքագետի իր դիրքերը և անվերապահորեն անձնատուր լիներ հաղթողին։ Ընդհակառակը, Ցիցիանովն իր խորտակիչ արշավանքով ավելի ևս հեռացնում էր իրենից խանին։ Ասիացի խորամանկ տիրողը, մանավանդ այժմ, իրավունք էր համարում սարսափել ռուսական ուժից, և նրա մեջ, ինչպես նաև առհասարակ ամբողջ մահմեդական ազգաբնակության մեջ, խոսում էր կրոնական անհաշտության զգացմունքը։ Ռուսաց զորքը հունիսի 23-ին մի ընդհարում ունենալով պարսիկների հետ, փախուստ էր դարձնում նրանց և տիրանալով նրանց գույքին, գտնում էր նրա մեջ մի թնդանոթ, որ Մահմադ խանն էր ուղարկել Աբաս Միրզային։ Այս ցույց էր տալիս, որ խանն իրապես, գործով պարսիկների հետ էր, իսկ խոսքով միայն՝ ռուսների հետ։ Այս քաղաքականությունը գոնե այն առավելությունն ուներ, որ նրանով կարելի էր լինում ժամանակ վաստակել։ Պարսկական բանակի տրամադրության մեջ էլ, ինչպես երևում է, հունիսի 20-ի պարտությունը փոփոխություն էր առաջացրել։ Պարսիկ զինվորներն զգում էին իրենց ցույց տված վախկոտության ամբողջ ամոթը և, ինչպես ասում է Խուբյանը, խնդրում էին իրենց հրամանատարներին «նորից սկսել ճակատամարտը, որի մեջ խոստանում էին չխնայել իրե՛նց կյանքը, որպեսզի դրանով մոռացնեն իրենց նախկին վարմունքը»[3]։

[1] «Կռունկ», 1862, եր. 295—297։

[2] Хубов, с. 30.

[3] Хубов, с. 31.

Օգտվելով այդ նոր տրամադրությունից, Աբաս Միրզան վերակազմում է իր բանակը, բաժանելով նրան երեք մասի, որոնցից մեկի հրամանատարությունը պահում էր իր ձեռքի մեջ, մյուսը հանձնում էր Փիր Ղուլի խանին, իսկ երրորդը բաղկացած էր միայն հազար Թուրքմեններից։ Հրամանատարներն ասում էին զինվորներին. «Ինչի՞ եք սպասում դուք, ով սիրելի հայրենիքի պաշտպաններ. հպատակվե՞լ արդյոք, թե հաղթել, թողնելով առաջին դեպքում միայն անեծք և անփառունակություն ապագա սերունդներին»։ Նախքան գործողությունների որևէ ծրագիր կազմելը, պարսիկ մեծավորները դեռ Աբդուլ Ասին անունով մի զորապետի ուղարկում են դիտելու ռուսաց բանակը։ «Նա,— պատմում է մեր աղբյուրը,— հանդիպեց պարսիկ զինվորների, որոնք տանում էին մի քանի մեռած ռուսների գլուխներ։ Հայհոյելով և խայտառակելով այդ գլուխները, զինվորներն ասում են Աբդուլ Ասինին. «Ահա ինչ դրության մեջ են գտնվում այժմ մեր թշնամիները. բայց շուտով մնացածներին էլ մենք ոտի տակ կտանք, նրանք չեն խուսափի մեր վրեժից»։ Աբդուլ Ասինը, լսելով այս բաներն իր հավատակիցներից, շտապեց այս տեղեկությունները տանել խաներին, որոնք անկեղծորեն կամենում էին լինել ռուսաց հպատակության մեջ. խորամանկ լրտեսն ասում էր նրանց հանդիմանորեն. «Ի՞նչ եք անում։ Դուք գտնվում եք մի մռայլ անգիտության մեջ։ Ո՞ւմ վրա եք հույս դրել։ Ա՞յս չէ (ռուսները) ձեր նեցուկը։ Ճանապարհին ես տեսա մի սարսափելի տեսարան։ Շահի զորքի ձեռքերում ես տեսա բազմաթիվ սպանված ռուսների գլուխներ (այս գլուխները կտրված էին մեռած դիակներից, որոնց թիվը տասից ավելի չէր, պարսիկները տանում էին նրանց ընծա շահզադեին իբրև հաղթանակի նշաններ). և այսպես դուք կարող եք այն բանից հետևցնել, որ եթե դուք վաղօրոք չհպատակվեք շահին, երդվում եմ մեր մեծ մարգարե Մուհամմեդով, որ դուք կկատարեք աններելի մի հանցանք»։ Պարսիկ մեծամեծներն ու իշխանները, որոնք գտնվում էին խաների մոտ, Աբդուլ Ասինի ճառը վճռեցին իրենց օգտին. ընդհանուր համաձայնությամբ նրանք բերդից ուղարկեցին շահզադեին 300 հեծելազոր երկու փչացած թնդանոթների հետ, միաժամանակ Թագաժառանգի ներողամտությունը խնդրելով իրենց համառության համար։ Սա ուրախացավ խաների հոժարակամ անձնատրության վրա, որի համար ապացույցներ ուներ և շնորհակալություն հայտնեց հաստատելով երկուսին[1] իրենց նախկին տեղերում»[2]։

Եվ այսպես, Երևանը բացարձակորեն անցնում էր Պարսից կառավարության կողմը, դրդված հարազատության զգացմունքից։ Այս հանգամանքը շեշտում է և Դավիթ կաթողիկոսն իր ընդարձակ նկարագրական նամակի մեջ, ասելով. «Իսկ Երևանցւոց իմացեալ թէ և Հիւսիսայինք խնդրակք են բերդին և եկեալ են վասն օգտի իւրեանց՝ և ոչ վասն օգնութեան, հրաժարեցան ի նոցունց և անկան ի կողմն դենակցաց իւրեանց, որք և ետուն Շահզատային զգինուորս և զԹնդանօթս ի յօժանդակութիւն»[3]։ Եվ այս իրողությունը թաքուն չէր մնում Ցիցիանովից, ավելի ևս հաստատելով նրան այն մտքի մեջ, թե քանի որ պարսկական բանակը ջարդված չէ, Երևանի խանը չպիտի իրեն զգա իսկապես ստիպված ընդունելու և կատարելու ռուսական պահանջները։ Այդ պատճառով էլ նա, թողնելով առժամանակ Երևանը, գնաց Աբաս Միրզայի բանակի վրա, որ իր համար կայան էր ընտրել Ղրխբուլաղ անունով տեղը,

[1] Չպետք է մոռանալ, որ Նախիջևանի Քյալբալի խանը շարունակ Երևանում էր լինում և գործում էր Մահմադ խանի հետ միասին։

[2] Хубов, с. 32—33.

[3] «Դիւան հայոց պատմութեան», գիրք է, եր. 436։

առաջավոր մասեր ունենալով Քանաքեռ գյուղում։ Կանգ առնելով Զանգու գետի աջ ափին, նա նախ և առաջ մի գունդ ուղարկեց մաքրելու Քանաքեռ գյուղը պարսիկներից։ Գնդի հրամանատար գնդապետ Ցեխոնսկին փայլուն կերպով կատարեց այդ հանձնարարությունը։ Դուրս քշելով պարսիկներին գյուղից, նա նրանց հալածեց երկար տեղ իր ձիավորներով։ Այս դեպքը տեղի է ունենում հունիսի 25-ին և դարձյալ շատ ուժեղ տպավորություն է թողնում ամեն տեղ։ Չափազանցությունների սիրահար իշխան Խուդյանը հավատացնում է, թե սպանված պարսիկների թիվը յոթը հազարից անց էր։ «Երևանի խանը դեռ դուրս չգալով բերդից, սկսեց ցավակցություն հայտնել իր կրոնակիցներին վիճակված դրության առիթով,— գրում է նա։— Երկրորդ անգամ կանչեց նա իր զորականներին և իշխաններին, խորհուրդ խնդրեց նրանցից, ասելով. «Այժմ ասացեք ինձ, ինչ միջոցներ են հարկավոր մեզ ձեռք առնել մեր հայրենիքն ազատելու համար, երբ արդեն մենք գտնվում ենք մեր հավատի թշնամիների ձեռքում»։ Ինչո՞ւ համար մենք պիտի թույլ երևանք և սորանանք թշնամու առջև,— պատասխանեցին նրան,— երբ մենք կամրանանք մեր անմատչելի բերդում, այն ժամանակ ի՞նչ կարող է անել մեզ թշնամին»[1]։

Խանական այս տագնապը սաստկացնում էին մանավանդ երկու հանգամանքներ։ Մի կողմից Աբաս Միրզան, տեսնելով իր բանակի կազմալուծումը, վճռում է այլևս պատերազմական գործողություններ չվարել ռուսների դեմ, ուստի իր բանակով նահանջում է դեպի Արաքս՝ Գառնիի վրայով, մտադրություն ունենալով նույնիսկ անցնել Արաքսի մյուս ափը, երևի այդտեղ սպասելու համար իր հոր գալստյան, որ սպասվում էր օրեցօր։ Մյուս կողմից Ցիցիանովն էր ահաբեկում իր սպառնալիքներով։ Հունիսի 26-ին, Քանաքեռի հաջողության երկրորդ օրը, նա գրում էր Մահմադ խանին. «Թեև ես պիտի զարմանամ, նախ այն բանի վրա, որ ձեր բարձրաստիճանությունը, այնքան շատ աղաչանքներից հետո, որ արել եք ինձ ձեր պաշտպանության համար և այնքան գրավոր հավաստիացումներից հետո չուղարկեցիք ինձ մոտ ձեր ներկայացուցչին, երբ ես եկա այստեղ, երկրորդ՝ որ ինձ իմ ստորադրյալները հայտնեցին, թե Երևանի մարդիկ համարձակվել են հրացան արձակել ռուսաց անհաղթելի զորքերի դեմ, թեև ասում եմ ես, այս երկու պատճառներով ինձ հարկավոր չէր այլևս ձեզ հետ գրագրության մեջ մտնել, բայց, հետևելով եվրոպական կարգին, պարտավոր եմ, չձեռնարկելով քաղաքը հարձակման ենթարկելուն, առաջարկել հանձնել այն և եթե այս նամակի դրական և վճռական պատասխանը չստանամ այսօր երեկոյան, այն ժամանակ քաղաքն ինձ կտան ասոված և սվինները, չնայած 100 հազար Բաբա խանների, որի որդին հեվում է ման գալիս իր զորքի հետ, ինչպես մի նապաստակ, որ չէ համարձակվում մոտենալ առյուծների բանակին, որին ձեր մարդիկ էլ երեկ վկա եղան, ինչպես և տեսան այն, որ 100 մարդիկ գետի վրա գտնված այգուց դուրս մղեցին մի րոպեում։ Ես իմ պարտքը կատարեցի և ձեզ սրանով հայտարարում եմ, իսկ ձեր կամքն է ամեն շաբաթ փոխել ձեր թագավորներին և հովանավորներին, և եթե ճիշտ է, որ երեկ երևանցիները հրացան էին արձակում, դուք կամ պիտի մնաք պարսից կնանման զորքի մեջ կամ համոզված լինել, որ ձեր ամբողջ կյանքում խաբված և ամոթահար կմնաք»[2]։

Հաղթողը և՛ սպառնում էր, և՛ պայմանաժամեր հրամանագրում, իսկ թույլ խանն իր խորամանկ խաղերով էր կաշկանդում նրան։ Այդ նամակին նա իսկույն չպատասխանեց։ Առաջ ու առաջ նա պատգամավորություն և ընծաներ

[1] Хубов, с. 35.
[2] «Акты...», II, № 1232.

ուղարկեց նահանջող գահաժառանգին և խնդրեց նրան թախանձագին հեռու չգնալ և իրեն չդարձնել ռուսների զոհ[1]։ Աբաս Միրզան լսում է այդ խնդրվածքը և վերադառնալով, գրավում է գրեթե իր նախկին դիրքերը Քանաքեռ գյուղի մոտ, Երևանից երեք վերստ հեռավորության վրա։ Միաժամանակ Մահմադ խանը Ցիցիանովի նամակն ուղարկում է Ֆաթալի շահին և գրում է նրան գանգատներով լի մի նամակ, որի մեջ ասում է, թե իր դրությունը շատ ողբերգական է, թե իրեն նեղում է թշնամին և իրեն չպետք է հանդիմանել հետևանքների համար, եթե շահն իսկույն օգնության չհասնի[2]։

Ցիցիանովը չստանալով իր նշանած ժամանակին պատասխան խանից, հարձակողական գործողություններ սկսեց Երևանի դեմ։ Նրա ուշադրությունը բերդից անցավ դարձյալ վերադարձած շահզադեի բանակի վրա և նա որոշեց արագ մի հարձակում գործել նրա դեմ։ Բոլոր պատրաստությունները տեսնվեցին, և Ցիցիանովը վերջին կարգադրություններն արավ հունիսի 29-ի երեկոյան։ Նույն գիշերը ժամի մոտ 2-ին նա ինքն անցավ Զանգուի ձախ ափը, նրան հետևեցին և մյուս զորքերը։ Անմիջապես սկսվեց զորարշավը պատերազմական կարգով, որի տեսարանն այսպես են ներկայացնում ռուս ականատեսները. «Լուսանում էր։ Ծագող արևը խոստանում էր տոթագին և խեղդող օր։ Զորքերը գնում էին առույգ և ուրախ, ռազմական կարգով և նվագածությամբ, աչքանչանալով շրջակաների գեղեցիկ տեսքով։ Նրանց առջև երևում էին սարերը, որոնց վրայով անցնում էր նրանց ճանապարհը։ Ձախ կողմից՝ քաղաքն էր, որի պատերն ու աշտարակները ծածկված էին ժողովրդի մեծ բազմությամբ, որ հավաքվել էր նայելու ռուսաց զորքի համաչափ շարժվող գնդերին, իսկ աջ կողմին, գեղահրաշ բարձրացած էր վեհատեսիլ Արարատը (Մասիս), որի սրածայր գլուխը, սպիտակ մազերի նման ծածկված հավիտենական ձյունով, լուսավորված էր ծագող արևով»[3]։ Հինգ վերստ այսպես գնալուց հետո զորքերը մտան մի լայն կիրճ, որ ամեն կողմից շրջապատված էր բարձր սարերով։ Պարսիկներ չէին երևում։ Բայց որովհետև տեղագրական հանգամանքներն այնպես էին, որ նրանք կարող էին շատ թաքստոցներ գտնել ծածկվելու և հանկարծակի հարձակվելու համար, ուստի Ցիցիանովը հրամայեց առջևից գնացող 9-րդ եգերյան գնդին բաժանվել երկու մասի և բարձրանալով կիրճի կողմերի գլուխը, գնալ այդ ուղղությամբ, կիրճի միջով անցնող զորքերի հետ համընթաց և այդպիսով ապահովելով նրանց հարձակումներից։ Գունդը ճշտությամբ և արիաբար կատարեց այդ հրամանը։ Երբ նա իր երկու մասերով բարձրանում էր կիրճի աջ և ձախ կողմերը, պարսիկները բարձրություններից սկսեցին ցած գլորել քարեր և գերաններ։ Բայց եգերները սվիններով քշեցին նրանց բարձրություններից և այնուհետև էլ սվիններով ճանապարհ էին բաց անում կիրճի միջով շարժվող զորքերի համար։ Գնալով կիրճն ավելի և ավելի նեղ էր դառնում, և գնալով պարսիկներն էլ համառությամբ էին դիմադրում ռուսական արշավին։ Յուրաքանչյուր քայլ պետք էր լինում խլել կռվով։ Հինգ տեղ պարսիկները պատնեցին քարերի ետևում և կրակ բացին, բայց հինգ անգամն էլ նրանց վանեցին քաջ եգերները։ Զորաբանակի առաջխաղացությունը գնալով դժվարանում էր։ Իսկ երբ նա ամբողջովին մտավ կիրճի ամենանեղ տեղը, պարսիկները փակեցին նրա բերաններն առջևից և ետևից ու այդպիսով շրջապատեցին ռուսներին բոլոր կողմերից։ Ստեղծվեց մի ավելի ևս վտանգավոր դրություն։ Հետևելով ուղեցույց-

[1] Н. Дубровин, Ист. войны, с. 315.
[2] Хубов, с. 36.
[3] Дубровин, V, с. 316.

ներին, բանակը մի կողմ թողեց ճանապարհը, որ ծածկված էր պարսիկներով, և, առաջ գնալով, դեմ առավ մի մեծ բարձրության։ Ճանապարհ չկար. առջևում ցցված էին ժայռոտ և ուղղաձիգ բարձրունքներ։ Պարսիկները, տեսնելով այդ դրությունը, որի մեջ ընկել էր ռուսական զորքը, սիրտ առան և սկսեցին ավելի ևս հաճախ հարձակումներ անել թևերից և թիկունքից, իսկ ռուսները պաշտպանվելու հնարավորություն անգամ չունեին։ Նրանց շարքերն սկսեցին տրտընջալ, լսվում էին «դավաճանություն» աղաղակները։ Այս թակարդից դեռ կարելի եղավ ազատվել եգերների և կովկասյան գրենադեր գնդի միահամուռ ջանքերով, որոնց հետևանքով զորքերը նորից ճանապարհը ձեռք բերին և սկսեցին նրանով առաջ շարժվել։

Բայց առջևում սպասում էին կորստաբեր արգելքներ։ Կիրճը նեղ էր դառնում, իսկ նրա կողերը ցցված էին ուղղաձիգ։ Պարսիկները վերևից հրացանների և զամբուրակների կրակ էին թափում, գործի դրին նաև երեք թնդանոթ, որոնք բերված էին Երևանից։ Միայն մի հանգամանք կար, որ ազատում էր ռուսական բանակը վերջնական կորստից. այդ այն էր, որ ժայռերի ուղղաձըգության պատճառով վերևից կրակ թափողները չէին կարողանում նշան բռնել։ Բայց երբ հայտնի դարձավ, թե այդպիսի դրության մեջ պետք է անցնել դեռ մի քանի վերստ էլ, այն ժամանակ միայն հայտնի դարձավ, թե որքան վտանգավոր է ամբողջ բանակի դրությունը։ Ինչպե՞ս վանել թշնամուն, երբ ձորից բարձրանալու ճանապարհ չկա, երբ ամեն տեղ ուղղաձիգ են կիրճ կազմող ժայռերը։ Եվ սակայն, ուրիշ ելք չկար, ընդհանուր փրկությունը կարելի էր միայն մի եղանակով՝ բարձրանալով ձորի հատակից ժայռերի գլուխը և այնտեղ հարվածելով թշնամուն։ Այս վերին աստիճանի հանդուգն և դժվար ձեռնարկությունը հանձն առավ կատարել նույն կովկասյան գրենադեր գնդի մի բատալիոնի հրամանատար գնդապետ Կոցլովսկին։ Ստանալով գլխավոր հրամանատարի թույլտվությունը, Կոցլովսկին առաջ նետվեց բարձրանալու ուղղաձիգ, գրեթե անմատչելի լեռը։ Զինվորները հետևեցին նրան, և սկսեց մի գրեթե անօրինակ՝ ռազմական գործողություն։ Ամբողջ լանջը ծածկված էր մեծ ու փոքր քարերի կտորներով, որոնք պատրաստ էին ամեն մի թեթև շարժումից ահագին արագությամբ ցած գլորվել և տանել իրենց հետ ամեն ինչ։ Այդ քարերը սաստիկ դանդաղեցնում էին շարժումը, և զինվորները, մագլցելով ժայռերը, ընկնում էին, վեր կենում, ցած էին գնում գլորվող քարերի հետ, նորից էլի մագլցում էին դեպի վեր։ Սարի գրեթե ուղղաձիգ թեքությունը, դրոհ տվող քաջ գրենադերների համար, թե՛ օգնություն էր և թե՛ փրկություն։ Թշնամու կրակը շուտով անվնաս դարձավ հարձակվողների համար, գնդակները թռչում էին գլուխների վրայով։ Սարի խորդուբորդերը, ժայռոտ կույտերը ծածկում էին բարձրացողներին, որոնք շուտով անհետացան պարսիկների աչքից։ Միաժամանակ խրախուսվելով թե՛ իրենց հրամանատարի օրինակով և թե՛ ներքևում գտնվող զորքերի բացականչություններով, գրենադերները ճիգ էին թափում սարի գլուխը հասնելու, բայց ուժասպառ էին դառնում, և միայն մոտ 40 զինվորների և մի քանի սպաների հաջողվեց հասնել գագաթին, շարունակ հետևելով անխոնջ գնդապետ Կոցլովսկուն, որ գնում էր առջևից։ Օգուտ քաղելով այն հանգամանքից, որ ինքը դեռևս աննկատելի է մնում պարսիկների համար, նա իր մի բուռը մարդկանցով ամենայն ուժգնությամբ հարձակում գործելով հանկարծակիի բերեց թշնամուն, որ, բռնվելով մեծ վախից, սկսեց փախչել, նույնիսկ մի անգամ գոնե ետ չնայելով, որպեսզի տեսնե թե որքան մարդուց է բաղկացած իր վրա հարձակված զինվորական ուժը։ Պարսկական բանակը գտնվում էր այդտեղից երեք վերստ հեռավորության վրա։ Փախչողները հասնելով այդտեղին, կանգ չառան,

որպեսզի պաշտպանվեն, այլ շարունակեցին իրենց գլխապատառ փախուստը, խուճապի մատնելով և այդտեղ գտնված մյուս զորքերը, որոնք նույնպես սկսեցին փախչել։ Պարսկական ամբողջ ահագին բանակն էր այժմ փախչում մի բուռը ռուսների առջև, թեև իշխան Ցիցիանովը չուներ ձեռքի տակ բավականաչափ հեծելազորք այդ ահագին բազմությունը հալածելու համար։ Փախչող բանակն անցավ Երևանի միջով, ուր նրան կողոպտեց խանական բերդապահ զորքը։ Հարուստ ավար էր անցնում ռուսների ձեռքը։ Հետևյալ օրը Ցիցիանովը հանգստություն տվեց իր հոգնած զորքին։ Հոգևորականությունը գոհացողական մաղթանք կատարեց, եղավ հանդիսավոր ճաշկերույթ, օրվա հերոսը գնդապետ Կոցլովսկին էր։ Ռուսական զենքի հմայքն ավելի ևս բարձրանում էր արևելյան ազգերի աչքում։ Տպավորությունն ամեն տեղ ահագին էր։ Ուրախ էին մանավանդ հայերը, որոնք գնացին հավաքվեցին տոնական կերպարանք ընդունած բանակը և այդտեղ պատմում էին հարյուր ու մի բաներ Երևանի և նրա մեջ գտնվող խաների մասին[1]։

Մահմադ խանը շատ արագ հարմարվեց իրերի նոր դրության։ Աբաս Միրզայի կազմալուծված բանակը թաքնվեց Արաքսի մյուս ափին։ Նրանից, ուրեմն, չէր կարելի, գեթ առժամանակ, ոչինչ օգուտ սպասել։ Եվ մենակ դեմ առ դեմ մնացած հաղթող Ցիցիանովի առջև, նա գործի դրեց իր ամբողջ քծնողական քաղաքականությունը։ Թեև ռուսական աղբյուրները լռում էին այն մասին, թե ինչ դիրք էր բռնել Մահմադ խանը հունիսի 30-ի պատերազմի ժամանակ, բայց մեր Խուբյանը հաստատապես պնդում է, թե նա էլ մասնակցում էր կռվին և դրա համար իր զորքով դուրս եկավ Երևանի բերդից և հարձակվեց ռուսների վրա թիկունքից[2]։ Այժմ, պարսիկների փախչելուց հետո, նա նորից իր դեմքն ուղղում էր դեպի ռուսական կողմը և նրա բերանում նորից շարժվում էին հավատարիմ հպատակության խոսքերը։

8. Երևանի պաշարումը։ Նախանշը։ Հուլիսի 2-ին վաղ առավոտից Ցիցիանովը գրավեց Երևանի արվարձանները և իր զորքերի մասերը դրեց այնպիսի դիրքերի վրա, որոնք չորս կողմից շրջապատում էին Երևանի բերդը։ Ինքը գլխավոր հրամանատարը բնակության վայր ընտրեց Կոզեռ անունով թաղը, քաղաքի հյուսիսարևելյան մասում։ Սկսվում էր Երևանի պաշարումը։ Թեև ռուսներն այնքան զորք չունեին, որ դնեին բերդը բոլոր կողմերից սեղմ օղակավորված դրության մեջ, բայց և այնպես, նրանց գրաված դիրքերն այնքան մոտիկ էին իրար, որ հնարավորություն էին տալիս խիստ հսկողություն ունենալ բերդի վրա և կտրել նրան դրսի աշխարհից։ Այսքանը Ցիցիանովը բավական էր համարում բերդականներին նեղելու և այդպիսով նրանց անձնատրության ստիպելու համար։ Այս մի սխալ էր, որ գործում էր տաքարյուն և չափազանց ինքնավստահ և սնապարծ գլխավոր հրամանատարը։ Մոռացվում էին մի շարք հանգամանքներ և ամենից առաջ Երևանի սաստիկ վատառողջ կլիման ամառային տոթագին ամիսներում, ապա այն, որ դեպի Երևան էր շարժվում Պարսից շահը, բերելով իր հետ մի խոշոր բանակ։ Որքան և Ցիցիանովն իրեն ցուցադրում էր պարսկական քաղաքականության բոլոր խորամանկ և խաբեական միջոցներին շատ լավատեղյակ, բայց այնուամենայնիվ, թույլ էր տալիս, որ իրեն էլ խաբեն պարսից պաշտոնյաները։ Միայն արագ և վճռական գործողությունները կարող էին օգտագործել ռուսների առաջադրած նպատակները։ Բայց փոխանակ գործողությունների այդպիսի եղանակի՝ Ցիցիանովը գրագրություն էր վարում Մահմադ խանի հետ, ամեն

[1] Н. Дубровин, Ист. войны, с. 317—320.
[2] Хубов, с. 37—38.

ջանք գործ էր դնում, որ թղթով համոզե նրան անձնատուր լինել։ Եվ Երևանի խանն էլ հենց այդ էր ուզում։ Լինելով միանգամայն թույլ և անկարող զենքի կողմից, նա կարող, նույնիսկ հաղթող էր խոսքի և գրագրության ասպարեզում։

Հուլիսի 2-ին, պաշարողական գործողությունները սկսած օրն և եթ Ցիցիանովն ստանում է Մահմադ խանից հունիսի 26-ի իր նամակի պատասխանը։ Ահա ինչ էր գրում նա. «Ձեր պայծառափայլության և զորքերի գալուստով ես գոհ եմ։ Իմ պարտքն էր, որ ես ամենից առաջ ուղարկեի ձեզ դիմավորելու համար մի հատուկ նշանակված անձի իմ շնորհավորությունների հետ, բայց մի քանի հանգամանքներ մինչև այդ չթույլատրեցին կատարել այդ բանը, սակայն վերջապես մտադիր էի ճշմարտապես այսօր ուղարկել մարդ ձեր պայծառափայլության մոտ։ Մինչ այս մտքի վրա էի, հանկարծաբեն մի քանի անհնազանդներ, հակառակ իմ կամքի, պատերազմական գործողություններ սկսեցին մեծ և փոքր թնդանոթներից կրակ բաց անելով, և երկու կողմի մեջ տեղի ունեցավ կռիվ։ Երդվում եմ Աստուծով, որ այսպիսի աջակցությամբ ես բավական չեմ, քանի որ դրանով ես կարող էի հեռանալ ամենողորմած մեծ թագավոր կայսրի հովանավորությունից և ձեր պայծառափայլության բարեհաճությունից. ես երբեք հոգուս մեջ ձեզ հակառակվելու միտք չունիմ և չեմ իմանում, թե ձեր պայծառափայլության կողմից ինչ գլխավոր պատճառ կա մերժելու իմ անձնվիրությունը և ինչով եմ արժանացել ատելության, ուստի համարձակվում եմ, ներողություն պատճառելով ձեր պայծառափայլությանը, խնդրել որ բաց անեք ձեր այդ տեսակ սառնության պատճառն իմ վերաբերմամբ»[1]։

Ցիցիանովն իսկույն պատասխանեց. «Ձեր նամակն ստացա և իրազեկ լինելով նրա բովանդակությանը, պատասխանում եմ։ Եթե ձեզ հանգամանքները խանգարեցին, ինչպես ասում եք, հատուկ մարդ ուղարկելու, որ ինձ դիմավորեն և շնորհավորեն,— այս վատ էր հենց ձեզ համար, որովհետև մենք երեկ ձերոնցից շատերին կոտորեցինք։ Եթե հանկարծորեն ձեզ չհնազանդվողները, հակառակ ձեր կամքի, կրակ բացին թնդանոթներից և հրացաններից, ինչպես ասում եք,— էլ ինչո՞ւ բարձր և Աստուծով բարձրացված պետության մեծ թագավոր կայսրը պիտի նպատակ ընտրե այնպիսի խաների, որոնց չեն հնազանդվում նրանց հպատակները։ Այժմ որովհետև դուք հարցնում եք, թե ինչ պատճառով ես ձեզ մերժում եմ դեպի թագավոր կայսրն ունեցած անձնվիրությունից, պատասխանում եմ. 1. դուք որոնում եք նորին կայսերական մեծության իմ ամենաողորմած և արեգակնանման թագավորների թագավորին, իսկ նրա հրամանները, անցյալ տարվանից կամ իմ Վրաստան ժամանելուց ի վեր բազմիցս կրկնված, Դանիելին կաթողիկոսական գահի վրա հաստատելու մասին չեք կատարել. 2. խնդրեցիք իմ պաշտպանությունը Բաբախանի որդու հրամանի տակ եղած պարսկական զորքերից, և փոխանակ դրան, երբ ես նրան վռնդեցի Քանաքեռից, և նա, ահաբեկված իբրև մի նապաստակ, իր բանակից փախավ Գառնի, որ փախչե Արաքսի մյուս կողմը,— դուք ընծաներով, խոստումներով և խնդիրներով համոզեցիք նրան վերադառնալ և բանակվել Քանաքեռի մոտ, որպեսզի հետո ընդհանուր ուժերով կռվեք ինձ դեմ։ Բայց ես քիչ սնապարծություն անելով և շատ գործ կատարելով, թե ինչ հաղթություն տարա այդ կնանման զորքի վրա, դուք ինքներդ էլ գիտեք, որովհետև դուք, դառնալով նրա բարեկամը, երբ նա ինձանից փախչում էր իր՝ մեզ ավար թողած բանակից, դուք չխանգարեցիք երևանցիներին կողոպտել նրան փախուստի միջոցին։ Եվ այսպես, ես ինձ հանձնում եմ ձեր իմաստուն քաղաքա-

[1] «Акты...», № 1233.

կանության դատաստանին և հարցնում եմ այժմ, ի՞նչն է ավելի ուժեղ գործում՝ ձեր պարսկական մեղրածորան գրի՞չն արդյոք, թե ռուսական սվինները.— Որտե՞ղ է լսված, որ դուք խնայում եք խնդրում, իսկ ձեր մարդիկ կրակ են բաց անում։ Վերջապես, այս նամակն ստանալուց հետո շնորհ արեք ինձ կարճորեն ասելու. տալի՞ս եք ինձ բերդը, անձնատո՞ւր եք լինում դուք իմ կամքին։ Իսկ ով ձեզ չէ հնազանդվում, նրան իմ ձեռքը տվեք և համոզված եղեք, որ նրա կյանքն անվտանգության մեջ կլինի։ Պատասխանի համար ժամանակ տալիս եմ մինչև վաղվա կեսօրը»[1]։

Դրած պայմանաժամն այս անգամ չարհամարհվեց. խանը հատուկ պատգամավոր ուղարկեց Ցիցիանովի մոտ և նամակ էլ գրեց, թե ինքը պատրաստ է ամեն ինչ կատարել, բայց բերդը հանձնել չի կարող։ Խանի հանձնարարությամբ նամակներ գրել էին և հայոց երկու կաթողիկոսներն էլ՝ Դավիթն ու Դանիելը։ Դավիթը դեռ առաջ էլ, երբ ռուսական բանակը գտնվում էր Կավակերտ գյուղում, խնդակցության և շնորհավորության նամակ էր գրել գլխավոր հրամանատարին, հաջողություն ցանկանալով նրան ձեռնարկած արշավանքի մեջ։ Սակայն Ցիցիանովը չէր ընդունել նրա նամակը և նույնիսկ բանտարկել էր տանողին։ Այժմ, պաշարման սկզբին, Դավիթը կրկնեց իր այդ փորձը, տալով նրան ավելի ևս վայելուչ ձևեր «Հիսուսայինքն,— գրում է նա,— մտին ի քաղաքն Երևանու ի յուլիսի Բ (2) և պաշարեցին զբերդն։ Եւ իշխողն կամելով վերստին շողոքորթել զնոսա, առաքեաց զթուղթս, թէ զբերդս իմ մի՛ առաջիք ի ձեռացս, և այլ զոր ինչ կամիք կատարելոց եմք։ Դրեաց առ այս և Դանիելն զբազում թուղթս։ Եւ մինչ յայսմիկ խորհրդեան էին սոքա, մեք ևս հրամանաւ իշխողին դարձեալ գրեցաք զթուղթս առ նոյն զօրապետն թէ մեք չեմք թշնամի քրիստոնեիցդ և չունիմք ինչ յանցանս առ ձեզ և առ կայսրն. ապա՝ վասն է՞ր այդպես սրտնեղեալ երևիք առ մեզ. յայտնեսջիք մեզ մի անգամ զմիտս ձեր և զհրաման կայսերն, մեք ըստ ամենայնի պատրաստ եմք ի կատարել։ Ընդ թղթոցն չինեցաք և զԴ (4) բեռն ընծայս՝ որք էին ուտելիք և ըմպելիք, և ձեռամբ Ստեփանոս և Սիմէօն արքեպիսկոպոսաց առաքեցաք։ Որք եկեալ ի բերդէն՝ այն ինչ կամեցեալ էին գնալ, զինուորք նոցա արձակեալ էին առ նոսա զհրացանս, և ի բարձրաւանդակ տեղւոջէ թափեցուցեալ ի վայր, Սիմէօն վարդապետի ոտն վնասեցեալ էր և միում ի թիկնկճացն եւ ոսկր փշրեալ էր. վերջապես թողեալ նոցա զբեռինսն արտաքոյ բերդին անտէրունջ, ինքեանք մազապուրծ թափեցան առ մեզ, իսկ ընծայքն ոչնչացան ի բերդայնոցն։ Կրկին ես հօգ տանելով մեր՝ յղեցաք զթուղթն միայն ձեռամբ նոյն Ստեփանոս վարդապետին, և մինչ կամէաք զընծայսն վերստին ևս պատրաստել՝ յղել, նա դարձաւ և պատմեաց որ զօրապետն այլ ևս չէր ընկալեալ զթուղթն մեր»[2]։

Ավելի լավ ընդունելության չէր արժանանում Մահմադ խանի նամակը։ Ցիցիանովն այլևս բանակցությունների մասին չէր մտածում, այլ բերդը և նրա հետ ամբողջ Երևանի շրջանը նվաճելու մասին։ Նրան հարկավոր էին փառք բերող պատերազմական գործողություններ, և զուր չէր, որ ականատեսներից մեկը գրում էր. «Իշխան Ցիցիանովի բոլոր վարմունքներից երևում էր, որ նա ոչ մի բան այնպես չէր ուզում, ինչպես պատերազմը և իր բոլոր գործերը տանում էր դեպի պատերազմը»[3]։ Խանի պատգամավորին նա ընդունեց չափազանց սառն և, լսելով նրա բոլոր առաջարկությունները, տեղից վեր

[1] Ibid., № 1234.

[2] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Է, եր. 483։

[3] Н. Дубровин, IV, с. 326.

թավ բարկացած և հայհոյելով թե նրան և թե խանին, հրամայեց հայտնել, թե որևէ բանակցությունից առաջ խանն իրեն պիտի հանձնե Դանիելին էլ, Դավթին էլ, Էջմիածնի վանքի բոլոր հարստությունների հետ, թե ոչ միայն պայման չպիտի կնքվի քաղաքի հանձնման մասին, այլ պայմանների մասին առհասարակ ավելորդ է խոսել նրա ուխտադրժության այնքան ապացույցներից հետո։ Գլխավոր հրամանատարն, այնուամենայնիվ, այնքան էր կարելի համարում ասել խանին, թե նա կուղարկվի Ռուսաստան և նա կարող է տանել իր հետ իր շարժական կայքը։ Ռուսաց կառավարությունը բավականաչափ թոշակ կտա նրան՝ առանց կարիքի ապրելու համար։ Պատասխանի համար Ցիցիանովը տալիս էր միայն երկու ժամ ժամանակ։ «Այդքան ժամանակը,— պատասխանեց խանի դեսպանը,— հազիվ բավական կլինի, որ ես հասնեմ բերդին, և սակայն մեզ հարկավոր է խորհրդակցություն գումարել»։ Ցիցիանովը համաձայնվեց երկարացնել ժամանակը և նշանակեց մի օր ու գիշեր, նկատի առնելով, որ իրեն էլ հարկավոր է ժամանակ վաստակել։ Նա սպասում էր ռազմամթերք ստանալ, որից հետո մտադիր էր ռմբակոծել քաղաքը և դրանով այնքան ահաբեկել ազգաբնակությունը, որ նա, իրեն փրկելու համար, խանին բռնե ու հանձնե ռուսներին։ Քաղաքից դուրս եկող հայերը պատմել էին ռուսներին, թե ժողովրդական տրտունջն արդեն սկսվել է, որովհետև պաշարողներն արդեն կտրել էին ջրի մեծ մասը[1]։

Եվ իրավ, ռուսական թնդանոթները, հետևյալ օրից, երբ խանից պատասխան չստացվեց, սկսեցին ծեծել Երևանի բերդը։ Այդ թնդանոթաձգության հետևանքներին և թողած տպավորության կենդանի նկարագրությունը տալիս է մեզ իշխան Խուբյանը։ «Մյուս օրն,— ասում է նա,— ամենքի համար անսպասելի կերպով ռուսները մի հատ ռումբ արձակեցին։ Թեև նա ոչ մի վնաս չպատճառեց, ջարդելով միայն մի սյուն, որ կանգնած էր մի տան մոտ, բայց ամենքը սարսափահար եղան։ Հուլիսի 5-ին ռուսներն երկրորդ ռումբն արձակեցին. ի մեծ անհանգստություն բնակիչների, ռմբակոծությունը կրկնվեց զանազան ժամանակներ։ Բնակիչները տեղափոխվեցին ներքնահարկ մառաններ, չնայած որ հրաձգության ամբողջ ընթացքում սպանված եղան միայն մի քանի ձիաներ և մի զառամյալ կին։ Բերդում գտնված պարսիկները տրտնջում էին ռուսների վրա, անվանելով նրանց կախարդներ, որովհետև այն վարպետությունը, որով նրանք արձակում էին թնդանոթներից, պարսիկները վերագրում էին ոչ թե մարդու ուժին, այլ մի անտեսանելի ուժի, որ այդպիսի որոտոցներ է առաջացնում։ Հրաձգությունն օր օրին սաստկանում էր. վերջապես մի օր իրիկնապահին պաշարողները շինեցին երեք մեծ մարտկոցներ, որոնց թնդանոթներն ուղիղ խանի տանն էին նայում։ Բնակիչները, լուսաբացին տեսնելով այսքան սարսափելի պատրաստությունը, այս բոլորը ցնորք էին համարում. նրանք կարծում էին, որ եթե չլիներ նրանց (ռուսների) ձեռքի ժրությունը, ոչ մի ուժ չէր կարող մի գիշերվա ընթացքում կառուցանել այսպիսի վիթխարի բաներ. բացի մարտկոցից, բերդի պատերին դրված էին մեծամեծ սանդուխքներ, որոնցով կարելի էր բարձրանալ նրանց գլուխը... Ամեն մեկը կարող է ներկայացնել իրեն, թե ինչ շփոթության մեջ էր այն ժամանակ այս կատաղի պարսիկների ոգին, պարսիկների, որոնք պատճառներ ունեին ատելու իրենց իշխանության ենթարկված քրիստոնյաներին։ Նրանց սրերը պատրաստ էին հասցնել մեզ վերջին հարվածը։ Նրանք հանդիմանում էին մեզ ինչպես ամբարիշտների և անհավատների։ Մեր սուրբ հավատն անգամ հայհոյվում էր նրանց ամբարիշտ բերաններով։ Զրկված ազատությունից և

[1] Ibid., c. 326.

կայքից, մենք մուրացկանների պես խնդրում էինք ամենօրյա մի կտոր հաց, վախենում էինք, որ երկինքը, գրգռված մեր անօրենություններից, վեր է կացել մեզ վրա։ Խաները, նախազգուշություն բանեցնելով, բայց առավելապես երկյուղից դրդված, հրամայեցին բազմացնել բերդի պատերի վրա պահապանների թիվը և զենքերը։ Ամեն օր անպատճառ նրանք անձամբ դիտում էին բերդական պահապաններին, որոնց վրա դրել էին տասներկու գլխավոր պետեր։ Ամեն գիշերվա համար նշանակվում էր առանձին գիշերվա խոսքը, որով մի պահապան ճանաչում էր իր ընկերին։ Ամեն ինչ խառնաշփոթության մեջ էր ռուսաց զորքերի ներշնչած երկյուղից, իսկ այդ զորքերն արդեն բանակվել էին քաղաքային հրապարակում։ Ասենք, ռուսները, չնայած որ հայերը հասցնում էին նրանց ամեն տեսակ պաշարեղեններ, հացի պակասություն ունեին։ Չէին նկատվում պատրաստություններ բերդի վրա գրոհ տալու համար։ Այս բանից պարսիկները հետևցնում էին, թե ռուսները չեն համարձակվում այսպիսի մի խիզախություն անել։ Նրանք կշտամբում էին իրենց, թե առաջ կուրորեն հավատացին նրանց քաջությանը և կարծեցին, թե ռուսական զենքի միայն մի փայլը զրկել է իրենց խիզախությունից։ «Ի՞նչն էր մեզ այն ժամանակ երկյուղի մեջ գցում,— ասում էին նրանք,— և ո՞վ, եթե ոչ հայերը, ռուսների հավատակիցները և համախոհները, պատճառ դարձան այս խայտառակության և ամոթին, որ հասցված է մեր հայրենիքին։ Նրանք գայթակղեցրին խանին իրենց խաբամանկ խորհուրդներով և մեր հայրենիքը թշվառության մեջ գցեցին»։ Եվ նրանց սանձարձակ լեզուն, արժանի նրանց բարբարոս բարքերին, թունավորեցին նետերի նման, վիրավորում էին մեր սրտերը։ Նրանք չէին կարողանում բավականանալ միայն հիշոցներով, որոնք թափվում էին մեզ վրա։ Սակայն խանը, որ բազմիցս տեսել էր մեր հավատարմության և անկեղծության փորձերը, զգում էր, թե որքան անտանելի են մեզ համար այդ հանդիմանությունները։ Կանչելով ինձ և Գաբրիել Հազարապետին, նա նախ դաժան և կոպիտ կերպով ասաց. «Ահա ձեր միջնորդության հաջողությունները, ձեր խորհրդով մենք այսպիսի միջոցներ ձեռք առանք մեր հայրենիքին խաղաղություն վերադարձնելու համար, բայց այս միջոցներով մենք նսեմացրինք մեր նախորդների պատիվն էլ, փառքն էլ»։ Հետո, ցավակցություն հայտնելով մեր վիճակի առիթով և հիշատակելով մեր մատուցած ծառայությունները, նորից խնդրեց մեր խորհուրդները։ Նա ուզում էր գրել իշխանին (Ցիցիանովին) իսկական խնդիրք, թողնելով իր կանոնները և մոռանալով, ինչպես ինքն էր ասում այդքան հպարտ մի զորավարի առջև, ու ոչ թե իր շահի կամ փառասիրության, այլ ամբողջ ժողովրդի օգտի համար և փառավոր քաղաքն էլ ազատելու համար։ Այո, ինչի մասին պիտի խնդրեմ, շարունակեց խանը, կարծեմ վնասակար չի լինի Ռուսաստանի համար։ Տեղեկացնելով, թե շահն այստեղ 100 հազար զորք է բերում, ես կառաջարկեմ ռուսական զորավարին մտնել մեր բերդը, ուր նաև նրա զորքը կմնա անվտանգ. ես արդեն նրանով կլինեմ բավական, եթե նա կթույլատրե ինձ իմ ընտանիքով մնալ իմ սեփական տան մեջ։

Մենք, շարունակում է Խուբյանը, գովեցինք այդ դիտավորությունը, որի կատարումը, սակայն, հետաձգվեց։ Վերջապես խանը վճռեց գրել իշխանին հետևյալը. «Չնայած ձեր դեպի ինձ ունեցած վատ տրամադրության, ես ունեմ դեպի ձեզ զգացմունքներ, որոնք բոլորովին հակառակ են ձերիններին։ Պարտավորություն եմ համարում ինձ համար տեղեկացնել ձեզ, որ շահը մոտենում է։ Մտածեցեք, թե ինչ միջոցներ պիտի գործադրեի այս դեպքում։ Եթե չեք ուզում լինել իմ դաշնակիցը և պաշտպանը, նախազգուշության միջոցներ ձեռք առեք ձեր թշնամիների դեմ»։ Մենք խնդրեցինք Հովհաննես եպիսկոպ-

սին գործ դնել բոլոր ուժերը, որպեսզի իշխանը հարգե մեր խնդիրքը և ընդունե դեսպաններին պատվով և քաղցրությամբ, կամ գոնե քաղաքավարի կերպով հուսադրելով նրանց, խնայել քրիստոնեական արյունը։ Գրեցինք նրան և այն մասին, որ ռուսները, եթե սկսեն պաշարել բերդը, գործողություններն առաջ տանեն ավելի այն բարձրությունից, որ գտնվում է բերդի արևելյան կողմում, որովհետև այդ տեղը բոլոր մյուս տեղերից ավելի թույլ է ամրացված (մի բան, որ հայտնի էր միմիայն ծերունիներին), այնպես որ ոչ մի ռումբ չի կարող անցնել առանց նպատակին խփելու։ Ի միջի այլոց, հայտնեցինք և այն մասին, թե ռուսները կարող են պաշարեղեն ստանալ էջմիածնից, ուր գտնվում էին հացի մեծ ամբարներ, որոնք, սակայն, փոքր ինչ ավերված են պարսիկների ձեռքով»[1]։

Երևանի ամենազդեցիկ հայերից մեկի այս միամիտ և մանրամասն նկարագրությունը շատ լավ պատկերացնում է այն դերը, որ կատարում էին հայերը ռուսների համար, մոռանալով ոչ միայն իրենց ազգային և համայնական շահերը, այլև իրենց ֆիզիկական գոյության պահանջներն իսկ։ Միանգամայն հասկանալի է, որ թուրքերը պիտի վերին աստիճանի կասկածամտությամբ վերաբերվեին նրանց այնպիսի մի ժամանակ, երբ հզոր և անողոք թշնամին շրջապատել էր նրանց, իր գործողությունների մեջ աջակցություն գտնելով հայերից, որոնք ոչ միայն կերակրում էին նրան, այլև լրտեսում էին, դավաճանելով իրենց հետ միասին ապրողներին։ Հայերի այս դերը հասկանալի է դառնում նրանց տեսակետից, մի ժողովրդի տեսակետից, որ դարերով տանջվել էր իր տերերի ձեռքից, շարունակ երազելով մի օր, երբ նա կազատվի իր ստրկական կացությունից։ Համարելով ռուսներին ազատիչներ, այդ ժողովուրդը ձգտում էր դեպի նրանց իր բոլոր ուժերով, մոռանալով ամեն ինչ, այրելով իր ետևից բոլոր նավերը, անհաշտ թշնամության վիհեր բաց անելով իր և իր հարևանների մեջ։ Դրության տրագիզմը հենց այս բանի մեջ էր։ Հայ ժողովրդի առաջնորդները կարծում էին, թե միանգամայն... ռուսասիրությունն է, ամեն տեսակ չափազանցություններով ուռճացրած, որ պիտի ոչ միայն փրկե հայությանը, այլև նրա համար ստեղծե լավագույն մի ապագայոց ռուսական տիրապետության ծոցում... Ցիցիանովը, պաշարելով Երևանը, ուներ իր կողքին Հովհաննես Գեղարքակցի, Ներսես Աշտարակեցու, Գրիգոր եպիսկոպոս Խամսեցու նման հզոր և անխոնջ գործակալներ, իսկ պաշարված բերդի մեջ, բացի Դանիել կաթողիկոսից, նաև մի խումբ առաջնակարգ հայեր, որոնք ավելորդ էին համարում գոնե զգույշ լինել Մահմադ խանի մոտ իբրև նրա խորհրդականներ, այլ բացարձակորեն մղում էին նրան դեպի ռուսական ամենակուլ նվաճողությունը։ Ունենալով այսքան անվերապահ գործակալներ, Ցիցիանովն արտաքուստ այնպիսի դիրք էր բռնած, որ թույլ էր տալիս նրան շահագործել հայերի զգացմունքը մինչև վերջին կաթիլ, բայց ներքուստ մնում էր հայ ժողովրդի ոխերիմ թշնամի։ Նկատում էին այս բանը նրա գործակալները։ Նկատել դժվար չէր։ Ցիցիանովը պատերազմն սկսել էր իբր թե Դանիելի կաթողիկոսության համար։ Եվ սակայն, եթե այս միայն լիներ նպատակը, հարցը վճռված կլիներ վաղուց և պատերազմական գործողությունները դադարած կլինեին ռուսների առաջին իսկ հաղթությունից հետո։ Մի Մահմադ խան, համենայն դեպս, այնքան անխելք չէր, որ մի կաթողիկոսի համար վտանգի ենթարկեր իր տիրապետությունը։ Բայց ամենքի համար պարզ էր, որ Դանիելը միայն պատրվակ է, իսկական նպատակը բոլորովին նա չէ, այլ Երևանի և նրա ամբողջ խանության նվաճումը։ Մենք արդեն տեսանք, որ

[1] Хубов, с. 44—63.

սկսած այն օրից, երբ ռուսներն իջան Արարատյան դաշտը, Մահմադ խանը շարունակ հայտարարում էր, թե ինքը պատրաստ է կատարել ռուսական բոլոր պահանջները, ուրեմն և Դանիելի կաթողիկոսացումը, միայն թե Երևանն իրեն մնա։ Այս մասին ռուս հրամանատարությունը լսել անգամ չէր ուզում, հետևաբար հանդիսանում էր իբրև միայն իր նվաճողական գրոհ, որ տարերային թափով գնում էր, անկախ այն հանգամանքից, թե ինչպես կվերաբերվեն նրան հայերը և ինչ դեր կկատարեն նրա մեջ։

Երևանի պաշարումն առաջ էր տարվում առհասարակ մի անվճռականությամբ, որ, ինչպես տեսանք Խուբյանի պատմածից, աննկատելի չմնաց և պաշարվածներին։ Ռմբակոծությունը թույլ էր, պաշարողական գծի վրա ռուսները բավականանում էին մանր գործերով, որոնք ոչ մի ազդեցություն անել չէին կարող բերդի ճակատագրի վրա։ Իսկ ժամանակն անցնում էր, տանելով իր հետ արժեքավոր հնարավորություններ։ Պարսկական բանակը նորից կենդանության նշաններ էր ցույց տալիս։ Աբաս Միրզան նորից անցավ Արաքսի ձախ ափը և բանակ դրեց Ազատ (Գառնի չայ) գետի վրա։ Այդտեղ հուլիսի 14-ին նրա հետ միացավ Բաբա խանը (շահը), բերելով իր հետ մի ամբողջ խաշար բանակ, որի մեջ կային, ինչպես ասում էին լրտեսները, մոտ 15 հազար մարդ։ Այլևս րոպե չկորցնելով, այդ միացած բանակը շարժվեց Երևանի վրա՝ հարկադրելու համար, որ Ցիցիանովը վերացնե պաշարումը և ետ քաշվի։ Սակայն Ցիցիանովն իր համար անպատվաբերություն համարեց թշնամուն տեղի տալը և պաշարումը վերացնելը, ուստի վճռեց հանդիպել պարսիկներին իր գրաված առանձին դիրքերի վրա, ասել է՝ ոչ թե միահամուռ ուժերով, այլ բաժան-բաժան զորաբաժիններով։ Նրա բախտն էր, որ հենց կռվի նախօրյակին նա ստացավ հրացանների փամփուշտների և թնդանոթային ռումբերի բավականաչափ պաշար[1]։ Դեռ նոր էր բաժանվել այդ պաշարը զորամասերին, և դեռ նոր էր Ցիցիանովը վերջացրել իր կարգադրությունները, երբ լույս 15-ի գիշերը, ժամի մոտ 2-ին լսելի եղավ հրացանաձգություն բերդի արևելյան կողմում։ Այս նշան էր, թե սկսվեց հարձակումը։

Այս կողմում ռուսները կառուցել էին երկու մարտկոց, որոնցից մեկը կոչվում էր մայոր Հոլցեի մարտկոց, որովհետև նա կառուցվել էր այդ սպայի ձեռքով և հենց նրա պաշտպանությանն էր հանձնված։ Երկու մարտկոցների վրա պարսիկները հարձակվում էին մեծ խմբերով, մինչդեռ նրանց պաշտպանողները մի բուռն զինվորներ էին։ Միաժամանակ պարսիկները, անցնելով Զանգուի աջ ափը, հարձակվում էին 9-րդ եգերյան գնդի վրա, որ գրաված ուներ այդ կողմի ընդարձակ այգիները, խանի ապարանքի հանդեպ։ Գնդապետ Ցեխանսկին արիաբար հանդիպեց թշնամուն սվիններով և ետ քշեց, հարկադրելով նրան նորից անցնել գետի ձախ ափը և այնտեղ միանալ այն զորքերի հետ, որոնք շրջապատել էին մայոր Հոլցեի մարտկոցը և աշխատում էին վերցնել նրան։ Այս փոքրիկ ամրության պաշտպանությունը մայոր Հոլցեն կատարեց մի այնպիսի բացառիկ քաջությամբ, որ նույնիսկ պարսկական բանակի և հենց Շահի զարմանքը գրգռեց։ Ընդամենը 56 մարդիկ էին նրան պաշտպանողները և դրանց հետ Հոլցեն դիմադրում էր պարսկական գրոհներին ամբողջ հինգ ժամ։ Վեց սպաներից մնացել էին միայն երկուսը, իսկ փոքրիկ զորաբաժնից միայն 39 հոգի էին, այն էլ կես մասով վիրավորված, որոնք դեռ պահում էին կռվելու ընդունակություն, բայց և այդպես, մայոր Հոլցեն ոչ միայն պաշտպանվում էր, այլև ինքն էր հարձակվում թշնամու վրա

[1] Այդ պաշարն ուղարկել էր Թիֆլիսից Բոլնիսի Մելիք Աբովն իր Ռոստոմ բեկ որդու հետ («Кавк. старина», 1872, с. 44)։

և վանում նրան։ Մարտկոցն, այնուամենայնիվ, մոտեցել էր իր անկման և կընկներ, եթե նրան չօգներ գնդապետ Ցեխանսկին գետի մյուս ափից։ Չկարողանալով անցնել ձախ ափը և անձամբ մասնակցել Հոլդեի անհավասար կռվին, 9-րդ գնդի հրամանատարը բաց արավ այգիների կողմից ուժեղ թնդանոթաձգություն, որ հարվածում էր պարսիկներին թիկունքից։ Նրանք չդիմացան այդ հարվածներին և հեռացան քաջարի մարտկոցից։

Զարմանալի քաջություններ ցույց տվին ռուսաց սպաները և պաշարողական գծի ուրիշ կետերում։ Այսպես էր, օրինակ, պորուչիկ Լաբինցևը, որ երկու անգամ հարձակվեց թշնամու գրաված մի բարձրության վրա և ինքը, հաստատվելով այնտեղ, ազատում էր ներքևում կռվող ռուս զորաբաժինը վտանգավոր դրությունից և խոշոր կորուստներից։ Մահմադ խանն իր բերդի միջից կողմնակի դիտողի դերը չբռնեց, այլ հավաքելով իր զորքը, դուրս եկավ բերդից և հարձակվեց քաղաքի հյուսիսային արվարձանում գտնվող ռուսների վրա։ Այս մի չափազանց կարևոր դիրք էր, ուր գտնվում էր և Ցիցիանովի բնակարանը։ Եվ եթե խանին հաջողվեր վերցնել այդ դիրքն, այն ժամանակ ռուսաց բանակը պիտի կորցներ իր ռազմամթերքի պահեստն, իր ամբողջ հարստությունը և նույնիսկ իր զորքի մի մասը, հարկադրված կլիներ վերացնել պաշարումը։ Սակայն այդպիսի հաջողություն Մահմադ խանին չէր տրված։ Նրան հանդիպեց քաջարի փոխգնդապետ Սիմոնովիչը, որ չորս ժամ տևած պատերազմի մեջ ջարդեց խանի զորքը, կոտորելով մինչև 400 հոգի։ Եվ Մահմադ խանն ստիպված էր նորից մտնել բերդը։

Երևանի արյունահեղ պատերազմը, որ սկիզբ էր առել գիշերվա ժամի երկուսին, տևեց մինչև ցերեկվա ժամի մեկը և վերջացավ շահական զորքերի պարտությամբ։ Այդ պարտությունն այնքան սաստիկ էր, որ պարսկական բանակն այլևս փորձ չարավ հարձակումներ գործելու։ Դրա փոխարեն Ֆաթալի շահն ընդգրկում էր պատերազմական ուրիշ եղանակ, այն է՝ պաշարման մեջ դնել պաշարող ռուս բանակը, կտրելով նրա հաղորդակցության ճանապարհները և մատնելով նրան սովի և հիվանդությունների։ Ցիցիանովը, շարունակելով արհամարհանքով վերաբերվել շահի «կնանման զորքին», չկարողացավ դեմ դնել այդ սիստեմին խելացի միջոցներով և պատրաստեց իր համար աղետալի մի դրություն։

Շահի գալուստը և, մանավանդ, պարտությունը ավելի ևս սրում էին մահմեդականների և քրիստոնյաների կամ, որ նույնն է, հայերի հարաբերությունները։ Դավիթ կաթողիկոսը գրում է. «Եւ զի պատերազմ էր նոցա ընդ քրիստոնէից և ասէին թէ և հայք միաբան և համաձայն են ռուսաց, վասն որոյ և զօրք նորա ուր-ուրեք և պատահէին, ի տառապեալ ազգէս մերմէ զորս գերէին, և զորս կողոպտէին»[1]։ Սարսափ տարածվեց հայ ազգաբնակության մեջ, որ այսպես է նկարագրում Խուրյանը. «Քրիստոնյաները սարսափահար եղած այդ տեղեկությունից (շահի գալու մասին) արդեն ողբում էին իրենց դառն վիճակը, չիմանալով ինչ ընտրել իրենց ազատության համար, որովհետև մենք նախատեսում էինք արդեն սովը և շոգը, որոնց պիտի տանեինք մեր բնակարանների կործանումից հետո։ Ամեն տեղ լսվում էին մայրերի հեծեծանքները, որոնք ողբում էին սոսկալի թշվառությունների ենթարկվելն իրենց զավակների։ Ոգու արիությունը մեզ թողեց և մենք միակ մի մխիթարություն գտնում էինք բարձրյալի բարության վրա դրած հույսի մեջ և այդ հույսով էլ պատրաստ էինք կրել այն ամենը, ինչ կարող էր պատահել մեզ»[2]։ Եվ ահա այսպիսի մի ժամանակ Դավիթ կաթողիկոսի բռնած քաղաքական գիծն էր, որ գալիս էր թեթևացնելու հայ ժողովրդի դրությունը։ «Եւ,— շարունակում է Դավիթն իր նամակի մեջ,— հանդիպեցաւ Աստուծով՝ որ Շահն ինքն թուղթ էր գրեալ մեզ, թէ ընդէր ոչ քոյդ մէկ մարդն գայ առ մեզ և ոչ թէ մէկ թուղթ գրես և ծանուցանես մեզ որպիսութիւն քո, զոր և հարկադրեալ էր մեզ առնել իշխողին մերոյ ևս գրելով, վասնորոյ և մեր ժամ գտեալ գրեցաք առ մեծութին նորին զարզայ մի և ձեռամբ Ստեփաննոս եպիսկոպոսին յղեցաք, և նովին արզային ծանուցանելով զարարս զօրաց նորա առ ազգս մեր, յատկապես խնդրեցաք թէ ազգ մեր միշտ հնազանդ ծառայք են տէրութեանդ, ողորմութիւն արարէք տէրութիւն առնել նոցա և հրամայել զօրաց, զի մի վնաս ինչ հասուսցեն, ինքն բարեհամբոյր Շահն ևս գրեալ էր մեզ թէ այսուհետև խնամք և գթութիւն լինելոց է ի մէնջ առ ազգս ձեր, որոց վասն և յատուկ ռազամ շնորհեալ էր թէ դուք և ազգք ձեր ըստ ամենայնի խաթրջամ կացջիք ի մերս կողմանէ՝ որ նեղութիւն ինչ ոչ է լինելոց ձեզ. ահա և հրամայեցաք զօրապետաց և զօրաց ամենից, զի չիշխեսցեն այսուհետև վիրաւորել զոք յազգէ ձերմէ, և կամ գերել, և կամ սպանանել և այլն։ Այսու ուղամոլս և ազգ մեր գտան զանդորրութիւն»[1]։

Շահական այս կարգադրությունն, ինչպես երևում է, միայն Երևանից դուրս զորություն ունեցավ, այն տեղերում, ուր պարսկական զորքերն էին գործում։ Երևանի մեջ ստեղծվեց ուրիշ տեսակ տրամադրություն։ Թուրքերի գրգռումը հայերի դեմ սաստկանում էր, և չի կարելի ասել, թե առանց լուրջ պատճառների։ Դանիելական կուսակցության պատկանող հայերն սկսեցին սաստկացնել իրենց ռուսասիրական արարքները, մանավանդ այն ժամից, երբ հայտնի դարձավ, որ ռուս պաշարող բանակը մատնված է սուր կարիքի ուտելեղենների կողմից։ Պարսկական զորքերը մեծ եռանդով և հաջողությամբ էին առաջ տանում իրենց ձեռնարկած այդ ռազմական եղանակը։ Նրանք այրել էին շրջակայքի բոլոր արտերը, կտրել էին բոլոր ճանապարհները, չէին թույլ տալիս, որ մեկը նույնիսկ ամենափոքր պաշար տանե ռուսական բանակը։ Ցիցիանովն իզուր էր սպասում ստանալ պաշարեղեն Թիֆլիսից և Ղազախից. նրա խիստ պահանջները թե՛ կատարող պաշտոնյաներ չկային և թե՛ անհնարին էին դառնում հենց այն պատճառով, որ ապստամբական խմորումներ էին սկսվել Վրաստանում և Ղազախում։ Այսպիսի դժվարությունների մատնված ռուսական ամբողջ բանակը թողնված էր միմիայն հայ ժողովրդի խնամքին։ Սովի մատնված զինվորներին եթե աղքատիկ մի պարեն էր հասնում, այդ էլ դուրս էր գալիս միայն հայերի հորերից ու ամբարներից։ Էջմիածնի բոլոր պահեստները, բաց թե գաղտնի, բանակի կերը դարձան. ցորեն, գարի, ալյուր, գինի, աղ՝ ոչինչ չէր թողնվում պահեստների մեջ և փոխադրվում էր ռուսական բանակը։ Բայց այս դեռ հնարավոր էր, քանի որ Էջմիածինը գտնվում էր ռուսների ձեռքին։ Գրգռիչ հանգամանքն այն էր, որ Երևանի հայերը, մոռանալով թե իրենք մի պաշարված բերդի մեջ էին գտնվում, ամեն ջանք գործ էին դնում պաշարներով օգնելու ռուսներին։ Այս ուղղությամբ գործում և քարոզում էին թե ինքը Խուրյանը և թե Գաբրիել յուզբաշին։ Թուրքերի համար վերջ ի վերջո անհանդուրժելի դարձավ այս իրողությունը։ Հայերն ամենքի աչքում դավաճաններ էին, և նրանց ոչնչացնելու

[1] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Է, էջ 439։

[2] Хубов, с. 53—54.

[1] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Է, եր. 439։ Իսկ Խուրյանն, ընդհակառակն, ասում էր, թե Դավիթ կաթողիկոսն ավելի էր գրգռում շահի անբարյացակամությունը հայերի դեմ (с. 10)։ Այս՝ դանիելականների սովորական չարախոսություններից մեկն է, ապացույց, թե որքան անհաշտ էր կուսակցական կռվությունը դավիթ-դանիելյան կռվի մեջ։

համար սկսվում է մի ամբողջ վտանգավոր շարժում, որի մանրամասնությունները տալիս է մեզ դարձյալ Խուբյանը միշտ նրան հատուկ մի միամիտ պարզասրտությամբ։

«Ռուսները,— գրում է նա,— պաշարեղենի պակասություն էին զգում, որովհետև դադարեցին ստանալ այնտեղից (Ապարանից) պտուղներ և հունդեր։ Ձիանները մնում էին առանց կերի։ Հայերը հուզվում էին իրենց կրոնակիցների այդ դժբախտությունից։ Ես, իմանալով նրանց բոլոր հանգամանքները, աշխատում էի համոզել ուրիշներին, որ կարեկցություն ունենան այդ դժբախտության մեջ. համոզում էի նրանց իրենց հատուկ բարեպաշտությամբ և սիրով դեպի Քրիստոսի զինվորները, որոնք եկել էին մեզ ազատելու բարբարոսների ձեռքից և հենց մեզ համար էլ տանում են շոգն ու վատ եղանակը, որովհետև այս ջանասերների համար մի հարմար դեպք էր ցույց տալու անձնվիրություն ռուսական գահին, հասցնել ռուսներին ցորեն և այլ պաշարեղեն։ Մեծ պահեստներ ունեցողները պատրաստ էին ամեն բան զոհել, շնորհակալություն հայտնելով ինձ այս դեպքի համար, որ իրենց ծառայասիրությունն է զարթեցրել։ Բայց նրանք չէին կարողանում այս բանը կատարել, որովհետև պարսիկները առանց որոնց թույլատվության ոչ մի պատրվակով չէր կարելի դուրս գալ բերդից, վտանգ էին սպառնում նրանց... Միաժամանակ Գաբրիել Հազարապետն էլ նամակ գրեց ռուսաց բանակում գտնվող իր կառավարիչին, որ նա ցույց տա ռուսներին իր ցորենի հորերը... Այսպիսի հորեր այնքան շատ էին, որ միայն Երևանի բնակիչները կարող էին շատ երկար ժամանակ կերակրել ռուսներին։ Բայց որովհետև այդ հորերը, ինչպես և տան պատկանող ամեն մի բան, գտնվում էին քաղաքում, իսկ տերերը գտնվում էին բերդում, ուստի նրանց նայելը հանձնված էին կառավարիչներին։ Վրացիներն, իմանալով այդ բանը կառավարիչների անզգուշության պատճառով, դուրս հանեցին այդ պահեստներից ամեն ինչ։ Իշխանը (Ցիցիանովը), վշտացած այդ անիրավությունից, հրամայեց խլել նրանցից բոլոր նրանց հափշտակածը, իսկ իրենց՝ վրացիներին, ուղարկել Վրաստան։

...Երեք օր և երեք գիշեր այլևս հրաձգություն չէր լսվում ռուսաց զորքերի մեջ։ Ամեն մեկը հասկացնում էր այս բանին իր պատճառները։ Բերդի մեջ գտնվող հասարակ ժողովուրդը սկսեց մի քանի շարժումներ գործել։ Երկու հայեր, հետաքրքրվելով իմանալ, թե ինչ դրության մեջ են քաղաքում գտնվող իրենց տները, դուրս եկան բերդից, ունենալով իրենց հետ մի քիչ կարմիր գինի և հաց։ Բերդի պատերի մոտ եղած պահապանները բռնեցին նրանց և տարան Քյալբալի խանի մոտ, որի հպատակներն էին նրանք։ «Ի՞նչպես դուք համարձակվեցիք,— հարցրեց խանը պինդ ձայնով,— կերակուր տանել ռուսներին, ձեր թշնամիներին։ Թե՞ դուք նրանց գործակիցներն եք»։ Չտալով նրանց ժամանակ արդարանալու և ոչ մի խոսք իրենց արդարացնելու համար, նա հրամայեց դնել նրանց թնդանոթի առջև և փչել նրանց ռումբ արձակելով. այս բանն անհապաղ կատարվեց այդ ամարդության անմեղ զոհերի վրա։ Այս իսկ կերպով էլ ցերեկվա պահապանները խանի առաջ տարան մի հայ պատանու, որ վերցված էր պատերից, ուր դրված էին թնդանոթներ, իսկ նա կանգնած էր նրանց մոտ իր զվարճության համար։ Նրան մեղադրում էին այն բանի համար, որպես թե նա սովորեցված էր հայերի կողմից իմանալ գաղտնիքներ, որպեսզի հետո բերդը հանձնվի ռուսներին։ Միաժամանակ մատնում էին և տասը հայերի, որոնց նրանք իզուր կասկածում էին այդ դավաճանության մեջ։ Խանը թեև գիտեր, որ նրանք ամբաստանված են չարամտությամբ, բայց չհամարձակվեց հակառակվել այս մատնությանը։ Նրանք վերջացրին իրենց կյանքը կախաղանի վրա. զզվելի ամբոխը փութացրեց նրանց մահը. նա, նշավակե-

լով նրանց մարմինները, թափում էր նրանց վրա քարեր և ամեն ինչ, որ ձեռք էր ընկնում։ Նրանց դիակները կախված էին ամբողջ երեք օր ու գիշեր։ Ոգու ինչ տրամադրությամբ պիտի նայեինք մենք մեր հայրենակիցների այսքան խայտառակ մահվան։ Ի՞նչ կարող էինք սպասել, եթե ոչ մահապատիժ այդ բարբարոսներից, որոնք իրենց պարտականությունն էին համարում անմեղ քրիստոնյաների արյունը թափել, արյունը, որի մեջ նրանք բազմիցս թաթախել են իրենց ձեռքերը։ Նրանք կազմեցին իրենց առաջնակարգ մարդկանցից խորհրդակցություն, որի մեջ հնարում էին այդպիսի կորստյան համար զանազան պատրվակներ։ Մեր դավաճանության ճշմարիտ ապացույցներ ընդունում էին այն, որ մենք, իբրև ռուսների դաշնակիցներ, հաց էինք տալիս նրանց և մեզ համարում էին նրանց լրտեսներ իրենց բերդի մեջ։ Ուստի համաձայնվեցին առժամանակ, թողնելով արտաքին թշնամիներին, ոչնչացնել մեզ, ինչպես իրենց ներքին թշնամիներին։ Հետևյալ երեկոյան կամեցան ծածուկ կատարել իրենց դիտավորությունը։ Նրանցից ոմանք առաջարկում էին առաջ ու առաջ կալանավորել իրենց խանին, և հետո բռնոտել բոլոր հայերին. բայց մյուսները, լինելով ավելի խոհեմ, հակառակվում էին այս բանին, ասելով թե «Հայ ժողովուրդը քաջ ժողովուրդ է և անվախ, մանավանդ երբ զենք ունի ձեռքին։ Մենք չենք կարող ի կատար ածել մեր դիտավորությունը»։ Եվ նրանք վճռեցին խնդրել շահից տասը հազար զորք, որպեսզի ութ հազարը դնեն բերդից դուրս, մնացածը դնեն բերդի մեջ. և այսպիսով տիրանալով բերդին թե դրսից և թե ներսից, շղթայել խանին իբրև հայերի պաշտպանի, իսկ հետո և բոլոր հայերին և ներկայացնել շահին։ Ամենքն ընդունեցին այս առաջարկությունը։ Բայց մինչդեռ նրանք խորհրդակցում էին, թե ինչ լավագույն միջոցներ կարելի է ընդունել իրենց դիտավորությունը կատար ածելու համար, մենք իմացանք այդ մասին և անհապաղ հայտնեցինք խանին, որ և նույն րոպեին հրամայեց Գաբրիել Հազարապետին փոխել պարսիկ պահապաններին և իր պահպանության տակ առնել նրա մոտ եղած չորս ամրական աշտարակները։ Դավադիրներն այդ միևնույն գիշերը ձեռնարկեցին իրենց գործին, ունենալով իրենց ձեռքի տակ չորս հարյուր զինված մարդիկ, որպեսզի կալանավորեն խանի ախունդին (հոգևորականին)։ Բայց տեսնելով, որ հայերն արդեն պահպանում են նրա տունը, սարսափահար հեռացան, չիմանալով, թե ո՞վ է բաց արել նրանց դավադրությունը։

«Հետևյալ գիշեր շահն ուղարկեց նրանց պահանջած զորքը, որ և բանակվեց այն տեղերի մոտ, ուր գտնվում էին ռուսները։ Մենք լսում էինք նրանց սպառնալիքները, որ անում էին իրենց տեղերից, տեսնում էինք մեր մոտալուտ կորուստը, բայց ողորմած Արարիչն անսպասելի կերպով ազատեց մեզ չարագործներից։ Այն ժամանակ, երբ մենք, գանգատվելով մեր դժբախտությունների վրա, պատրաստվում էինք մեռնել պարսիկների սպանիչ ձեռքից, շահի ուղարկած զորքի գլխավոր հրամանատարը, համարելով դավադրության կատարումն անկարելի, չհամարձակվեց այդպիսի մի անհայտության փորձի խիզախությունն ունենալ։ Նրա զորքերը թողին և հեռացան շահի մոտ, իսկ 2000 հոգի մնացին բերդի մեջ»[1]։

Մինչդեռ այսպիսի օրեր էին անցկացնում հայերն իրենց ռուսասիրության հետևանքով, զորավար Ցիցիանովն ավելի և ավելի փաթաթվում էր անհաջողությունների մեջ։ Պարսկական զորքերը բաժանվել էին երկու մասի. մեկը շահի գլխավորությամբ, բանակված էր Երևանից դեպի հարավ, Զանգվի վրա գտնվող մի գյուղում, որ ռուսական աղբյուրների մեջ անվանված է,

[1] Хубов, с. 69—70.

անշուշտ սխալմամբ, Քանագիր, իսկ մյուսը, Աբաս Միրզայի հրամանի տակ
առաջվա պես գտնվում էր Ազատ (Գառնի չայ) գետի վրա։ Ցիցիանովն ուզեց
օգուտ քաղել այդ ցրվածությունից, հարձակվելով բանակի մի մասի, այն է՝
Աբաս Միրզայի վրա։ Այս գործը հանձնվում էր գեներալ Պորտնյագինին, որի
քաջության մասին գլխավոր հրամանատարը չուներ ոչ մի կասկած։ Սակայն
Ցիցիանովի սխալն այն էր, որ այսպիսի մի գործի նա ձեռնարկում էր չափա-
զանց սակավաթիվ մի զորամասի միջոցով։ Պորտնյագինին նա հանձնում է
ընդամենը 670 հետևակ զինվոր, վեց թնդանոթ, 30 հատ կազակ, մի հար-
յուրյակ վրացի կամավորներ և մի հարյուրակ էլ պարսիկ ձիավորներ,
որ բերել էր իր հետ խոյի Ջաֆար Ղուլի խանը, երբեմնի մի ուժեղ տիրող, որ
Ֆաթալի շահի երեսից փախել էր իր երկրից և ընդունել էր ռուսաց հպատա-
կություն։ Այդ փոքրաթիվ զորաբաժնին հանձնարարվում էր գիշերային հան-
կարծակի հարձակում գործել Աբաս Միրզայի բանակի վրա։

Հուլիսի 24-ից 25-ի գիշերն էր, որ Պորտնյագինը, չորս ուղեցույց հայերի
առաջնորդությամբ, սկսեց իր արշավանքը։ Սկզբում ամեն բան հաջող էր
գնում։ Արշավազորն արդեն անցել էր պարսկական առաջապահ գիրքերի գծից
և մոտենում էր բուն բանակին, բայց այստեղ ընդունված ռազմական կարգը
խանգարվեց։ Թեև հրամայված էր շարժումը կատարել միանգամայն անաղ-
մուկ, որպեսզի պարսկական բանակը հանկարծակիի բերվի, բայց Ջաֆար
Ղուլի խանի ձիավորները մթության մեջ հանդիպեցին հետևակ պահնորդների
մի խմբի և չկարողացան պահել իրենց, մի համազարկ տվին, որ իրարանցում
գցեց բանակի մեջ։ Ձիավոր զորքն իսկույն ոտքի ելավ, բանբերներ թռան
շահի բանակին էլ իմացում անելու, և երկու ժամ չանցած՝ Պորտնյագինը դեմ
առ դեմ կանգնած էր պարսից 40 հազարանոց բանակի դեմ։ Հարձակումը
շարունակելու մասին, իհարկե, մտածել չէր կարելի, և զորաբաժնի գլխավորի
առջև կանգնում էր սարսափելի անհրաժեշտությունը՝ կամ զոհել զենքի պա-
տիվը և փրկել իրեն հանձնված հարյուրավոր կյանքերը, կամ թե փրկել
զենքի պատիվը, զոհ բերելով դրան հարյուրավոր կյանքեր։ Պորտնյագինն
ընդունեց վերջին վճիռը և սկսեց մի հերոսական նահանջ, որ ավելի փառավոր
էր, քան մի ամբողջ հաղթություն։ Քաջարի զորավարը ետ էր գնում քայլ
առ քայլ շրջապատված և ճնշված մի թշնամիով, որ քառասուն անգամ գե-
րազանցում էր իրեն։ Այս նահանջը տևեց 14,5 ժամ. այդքան ժամանակ էլ
ռուսական զորքն անընդհատ կռիվ էր մղում քսան վերստ տարածության վրա։
Պարսիկներին թվում է, թե ահա կորցրեն կոչնչացնեն համարձակների այդ
փոքրիկ խումբը և իրար ետևից սուրհանդակներ էին թռցնում Երևան՝ ավե-
տելու իրենց կատարյալ հաղթությունը[1]։ «Պարսիկները,— գրում է Խուբյա-
նը,— հատուկ սուրհանդակի միջոցով հայտնում էին խանին իրենց հաղ-
թության մասին, որ տարել էին ռուսների վրա, և այս բանը դարձավ ընդ-
հանուր տոնախմբության և ուրախության առարկա։ Մենք չէինք ուզում հա-
վատալ այս բանին, որովհետև, բանբերի ասելով, սպանված ռուսների թիվը
հասնում էր մինչև երկու հազարի, մինչդեռ ամբողջ զորքի թիվն էր հինգ հար-
յուր հետևակ և երկու հարյուր կազակ։ Այսքան բազմություն էին նրանք երե-
վացել պարսիկներին։ Մի ուրիշ բանբեր հայտնում էր, թե ռուսները գրկվել
են տասներկու թնդանոթներից և 18 կրտսեր սպաներից։ Երրորդն շտապում
էր ուրախացնել այն տեղեկությամբ, թե բոլոր ռուսները ջարդվել են, բացի
միայն վեց մարդուց, որոնք մնացել են մի թնդանոթի հետ։ Խանը նրանց
բոլորին առատ վարձատրեց այդքան ուրախալի տեղեկությունների համար։

[1] «Утвержд. рус. влад. на Кавказе», I, стр. 148—149.

Վերջապես չորրորդ, ամենամեծ արագությամբ եկած բանբերն ընդհանուր
ուրախություն պատճառեց՝ ասելով, թե ռուսները վերջնականապես պարտ-
ված են։ «Ուրախացեք և տոնեցեք հաղթությունը, որ պարգևել է մեզ մեր
մարգարե Մուհամմեդը,— ասում էր այս ստախոսը և ավելի բախտավոր կամ
ավելի խորամանկ էր մյուսներից, որովհետև ամենից շատ ընծաներ ստա-
ցավ»[1]։ Ամբողջ օրը բերդից ողջույնի թնդանոթաձգություն էր կատարվում։
Բայց իրիկնապահին երևաց Պորտնյագինի զորաբաժինը, որ շարժվում էր
կարգ ու կանոնով, չթողնելով թշնամու ձեռքին և ոչ մի իր։ Զորաբաժինը կորց-
րել էր 64 մարդ, բայց այդ բոլոր դիակներն էլ բերել էր իր հետ, թեև ան-
ընդհատ կռվում էր իրեն ամեն կողմից շրջապատած թշնամու անհուն խմբերի
հետ։

Ռազմական գիտության տեսակետից Պորտնյագինի նահանջը մի աննման
հերոսական գործ էր։ Բայց այս ոչ թե ասիական ժողովուրդների մեջ։ Պար-
սիկների համար հաղթություն էր, որ ռուսները չկարողացան իրենց հաղթել,
ստիպված եղան ետ դառնալ և թողնելով ծեծողի դերը, պաշտպանվում էին,
բշվելով մեծ ուժի առջև, որ, ինչ էլ լիներ, այսօր իր գերազանցությունն էր
ցույց տալիս։ Հասկանալի է, որ պարսիկների և տեղական թուրքերի տրա-
մադրությունն այս օրվանից շատ պիտի բարձրանար, իսկ ռուսներինը՝ նվա-
զեր։ Վերջնական հաշվով Ցիցիանովը կորցնում էր շատ բան, և ամենից
առաջ անհաղթելիության հմայքը, որ ռուսական զենքը ձեռք էր բերել այս
կողմերում այնքան կարճ ժամանակամիջոցում։ Այնուհետև նա չպիտի կա-
րողանար իր անհեռատեսության և պարծենկոտության մեղքերը քավել։ Իր
զորքերով նա կանգնած էր մի սաստիկ վատառողջ տեղ, ամառվա ամենա-
տոթ ժամանակին, երբ շուրջն ամեն տեղ բռնացած էր անողորմ ջերմախտը։
Բանակի մեջ հարյուրներով էին հաշվվում հիվանդները։ Շատերը մեռան, դրանց
թվում էր և 9-րդ եգերյան գնդի քաջարի հրամանատարը, գնդապետ Ցեխանո-
կին։ Այն կիսաքաղց կացությունը, որին մատնված էր զորքը, անկարելի էր
դարձնում մրցությունը դաժան հիվանդության դեմ։ Դրությունն այնքան վա-
տացավ, որ վրացի իշխանները, որոնք, ինչպես գիտենք, կամավորապես
մասնակցում էին արշավանքին, չկարողացան մնալ բանակում և իշխան Ցի-
ցիանովի թույլտվությամբ լույս օգոստոսի 8-ի գիշերը ճանապարհվեցին դեպի
Փամբակ՝ իրենց տները վերադառնալու համար։

Հեռացողներն օգտվում էին այն հանգամանքից, որ հենց այդ միջոցին
Երևանից Փամբակի Ղարաքիլիսա գյուղն էր գնում, պաշարեղեն բերելու փորձ
անելու համար, Բոլնիսի Մելիք Աբովի որդի Ռոստոմ բեկը, որ ուներ իր ձեռքի
տակ 60 կտրիճ հայերից բաղկացած մի ձիավոր խումբ ուժեղացված ռուսա-
կան մի փոքրիկ զումարտակով, որ պիտի պահպաներ փոխադրելի պաշարե-
ղենը։ Ռոստոմ բեկը հանձն առավ իր պաշտպանության տակ տանել ազնվա-
կանների խումբը, որ միայն վրացիներից չէր բաղկացած, այլ ուներ իր մեջ
և հայ ազնվականներ և առևտրական մարդիկ։ Երկու անգամ Ռոստոմ բեկը
մեծ հաջողությամբ կատարել էր ռազմամթերքների և պաշարեղենի փոխադրու-
թյուն, անց կացնելով իր հսկողության տակ ռուսական փոքրիկ զորախմբեր,
որոնց հանձնված էր այդ ծանրոցների պահպանությունը, պարսիկ զորքերի
սաստիկ ահից փակված ճանապարհներով։ Ինչպես տեսանք, առաջին անգամ
այս քաջ երիտասարդն էր, որ ռազմամթերք էր հասցնում Ցիցիանովին՝
ռուսաց բանակի համար մահվան և կյանքի նշանակություն ունեցող րոպեին,
այն է՝ հուլիսի 14-ին, երբ մի քանի ժամից հետո բանակը պիտի ենթարկվեր

[1] Хубов, с. 75.

շահի անհամար զորքի հարձակման[1]։ Սակայն բախտը, որ ժպտում էր երիտասարդ մելիքազնին, այս երրորդ անգամը նրանից երես էր դարձնում։ Ճանապարհին նա ենթարկվեց պարսկական զորքերի հարձակման, որի մասին հետևյալ մանրամասնություններն են մնացել հայկական աղբյուրների մեջ[2]։

Հարձակումը տեղի ունեցավ Փամբակաձորում։

Այդտեղ Ռոստոմ բեկի խումբը հանդիպեց Փիր Ղուլի խանին, որ ուներ ձեռքի տակ 8000 հոգի։ Շուտով նրան միացավ Ալեքսանդր թագավորազնը 3000 մարդկանցով։ Թեև այնքան ստվարաթիվ էր պարսկական բանակը, բայց և այնպես, նա երեք օր կանգնած էր Ռոստոմ բեկի հանդեպ, սիրտ չանելով կռիվ սկսել։ Իսկ երբ, վերջապես, բոլորվեց ճակատամարտը, Ռոստոմ բեկը մեծ թափով հարձակվեց պարսիկների առաջավոր շարքերի վրա, բայց նրա տակի ձին՝ վերք ստանալով, սպանվեց։ Ուրիշ ձի նստելով, Ռոստոմ բեկը նորից նետվում է կռվի մեջ և թեև այդտեղ երկու վերք է ստանում, բայց և այդպես, շարունակում է կռվել միևնույն քաջությամբ, մինչև որ նոր մի վերք է ստանում աջ թևի վրա և արյունոտված վայր է ընկնում։ Պարսիկները վերցնում են նրան և երկու ընկերների հետ տանում են Ալեքսանդրի մոտ։ Գերի են ընկնում Ռոստոմ բեկի հետ եկած բոլոր մարդիկ, և միայն մի քանի հոգի կարողանում են փախչել և հասնել Ղարաքիլիսա, ուր պատմում են աղետի մանրամասնությունները։ Այս էլ մի ուրիշ դեպք էր, որ դարձնում էր պարսիկներին հաղթողներ։ Եվ հաղթողները, իհարկե, չեն խնայում իրենց ձեռքն ընկած գերիներին։ Մանավանդ Ալեքսանդր թագավորազնը հարմար ժամանակ էր համարում իր վրեժը հանելու Վրաստանի ազնվականներից, որոնք տարիների ընթացքում անտես էին անում իր դիմումները և չէին օգնում իրեն՝ ռուսների դեմ սկսած իր մրցության մեջ։ Այդպիսիներից էր մանավանդ Մելիք Աբովը, որի որդուն արքայորդին ճանաչում էր անձամբ։ Ամենքին շղթայակապ ուղարկեցին Պարսկաստան[3]։ Այստեղ ոմանց բանտարկեցին Թավրիզում, ոմանց տեղափոխեցին Թեհրան։ Թավրիզում պահվողներից էր և Ռոստոմ բեկը, որ և հենց բանտում էլ Աբաս Միրզայի հրամանով մատնվեց դահճի ձեռքը և սպանվեց[4]։

[1] Որ կյանքի և մահվան նշանակություն ուներ ռազմամթերքների հարցը, այդ ցույց է տալիս ռուս պատմագրի բերած փաստը։ «Պատերազմից հետո,— ասում է նա,— Բաբախանը հրամայեց կախել իր լրտեսին, որ հայտնել էր նրան, թե մեզանում վառոդի և ռումբերի պակասություն էր։ Իրավ, եթե Բաբախանը դրա տար մի քանի ժամով առաջ, Երևանի բանակի դրությունը չափազանց դժվար կլիներ, որովհետև վառոդի, փամփուշտների և ռումբերի մեծ կարավանը կարողացավ բանակ հասնել միայն կռիվն սկսվելուց քիչ առաջ, մի բան, որ լրտեսը, իհարկե, չէր կարող իմանալ» (Дубровин, История войны, т. IV, с. 333)։ Իրավունք ուներ, ուրեմն, Մելիք Աբովն ասելու, թե ինքն է փրկել Ցիցիանովի և ռուսաց ամբողջ բանակի կյանքը («Кавк. старина» 1872, с. 44).

[2] Հաղորդել է Պարսկաստանի գործերին շատ լավատեղյակ Գալուստ Շիրմազանյանը Թիֆլիսի «Կովկաս» հայերեն լրագրում (1846 թ.), իսկ քաղվածաբար արտատպել է Վենետիկի «Բազմավեպ» կիսամսյա հանդեսը (1847, № 2, էջ. 39—41)։

[3] Գերիների մեջ հիշված են հետևյալ հայերը, Բեժան Բեհբության, Զանգուր Ենիկոլոպյան, Ղայթմազյան, Գևորգ Ղորղանյան, վիմագործ Խաչատուր, իսկ ազատվածների մեջ էր, ի միջի այլոց, իշխ. Թ. Արղության («Акты», II, 1672)։

[4] Ռոստոմ բեկի մահը սրտառուչ մանրամասնությունների մեջ է դրել վերոհիշյալ պատմությունը։ Աբաս Միրզան, ասում է նա, Ղարաբաղի հայ մելիքներին չէր սիրում այն պատճառով, որ նրանք էին իր հորեղբայր Աղա Մահմադ խանի կործանման առիթը դարձել։ Ռոստոմ բեկը մնաց բանտում, մինչև որ Թագաժառանգը 1805-ին վերադարձավ ռուսական պատերազմից հաղթված։ Նա ինքն անձամբ հարց ու փորձի ենթարկեց իր կալանավորին։ Եվ

Ռոստոմ բեկի վրա տարած հաղթությունը նոր համարձակություն ներշնչեց Փիր Ղուլի խանին և Ալեքսանդր արքայորդուն զարգացնելու իրենց գործողությունները։ Նրանց ջանքերով մի կարճ միջոցում ապստամբվեցին Ղազախի և Բորչալուի թուրքերը։ Ամեն տեղ սարսափ տարածվեց։ Ապստամբները ամենից առաջ սկսեցին կողոպտել Երևանի կողմից եկած փախստականներին, որոնք կանգ էին առել Փամբակում և Լոռում։

Եվ նորից հալածանքի ու տանջանքների օրեր են սկսվում այդ դժբախտների համար։ Ոսկերչյան քահանան գրում է.

«Եւ ի լինելն մեր անդ յաւուրս 10 ապստամբեցան որք շուրջ զմեօք էին պարսիկք, որք ըստ անուան ցեղի իւրեանց կոչին ղազախ և պօռչալու։ Որոց յարադրութ մի ի սոցունց Նաղի անուն ապստամբեալ ի ռուսաց եկն և եհար զբանակս ձիոց մերոց և խումբ մի որիկայիւք էանց առ Շահն և եղև խափան ճանապարհաց զօրուն որ Երևան։ Վասն որոյ երկպառակեցաւ երկիւղ մեր ի դիմաց և ի թիկանց, ի դիմաց Ղազախ պօռչալուէն, և թիկանց զօրաց Շա-

բանից դուրս եկավ, որ Մելիք Աբովի որդին միայն զինված գործերի մեջ չէր քաջ, այլև բանաստեղծության։ Նա տվեց թագաժառանգին հայերեն լեզվով գրված մի ոտանավոր, որի մեջ խրոխտական շեշտերով իր մահվան երգն էր անում։ Ահա այդ երգը.

Մունետիկն ի ձայն բարձր աղաղակէ,
Ժանտ դահիճըն սուր ի ձեռին անյագ սըրէ,
Վաքեր հանդոյն զիմ կենաց թել կտրել խնդրէ,
Ի կախաղան և կամ ի սպանդ ո՞ւր զիս տանէ.
Քաղաքս համայն մահմեդական զի՞ խուռն գան,
Զիմ մահ սըգան։
Դառնագին լան զիս Երովեան քաջ ախոյեան։
Միթէ չի՞ք ոք աստ քրիստոնեայ, զիս փրկեսցէ
Ցայս ամէհի և մահաբույժ վայրագ դահճէ.
Ընդէ՞ր զանմեղ արիւն թափել յերկիր ցանկայ,
Նըւիրական զենման հիման ըերումս վկայ.
Սէր հայրենեաց ի թըշնամեաց ի ձեռըս մատնեաց.
Ուրախ մեռայց,
Եւ դասեցայց ընդ դիւցազանց իմոց նախնեաց։
Փշրանք մնացեալ իմ սիրելի Հայոց ազգի
Որք գտանիք ի ձեռս պարսից յայս քաղաքի,
Մի մոռասջիք պատմել՝ զայս յորդւոց յորդի,
Թէ քաջն Ռոստոմ վասն հայրենեաց ի սպանդ վարի.
Թէպէտ ցաւիմ զի չմեռանիմ ի մարտ ընդդէմ
Թշնամեաց իմ,
Այլ յօժար եմ զի զոհ լինիմ այսպէս վսեմ.
Այս քաջ բազուկք յաղթեաց պարսից հսկայ հզօրս,
Տապաստ արկին ի բազում նուագս հարիւրաւորս։
Աւաղ, կընատ անգութ դահճի եղէ ես որս։
Պատմեսջիք զայս վէհ դիւցազին զառաքեալ հօրս,
Քաջ նահատակ որդիդ միակ ի ձեռն վայրագ Պարսից էանկ
Իւր յաղթանակ՝ մահ դըժընդակ էառ պըսակ։
Մեծըդ յԱբեաց արքայորդիդ Աբաս Միրզայ,
Սուր ի ձեռին դահիճըն հեզ սըրնթեր կայ.
Զիս թըշնամիս քոյոյ ազգի պատրաստ ի մահ,
Զի՞արդ կամիս ըսպանանել՝ շուտ հրամայեա.
Միայն սըգամ զի կապեալ կամ. թէ միւս անգամ
Հրացան տուր իմ
Ի ձեռս ունիմ, ըզբազուկ իմ ձեզ ցուցանեմ։

Լսելով թարգմանությունը, ասում է պատմողը, Աբաս Միրզան ավելի ևս բարկացավ և հրամայեց դահճին տանջալից մահվան ենթարկել նրան, եթե չի ուզենա իսլամանալ։ Ժողովուրդը երկար ժամանակ երգում էր հավատի և ազգության Ռոստոմ բեկի երգը։

հին»[1]։ Եվ սկսվում են փախստականների աստանդական դեգերումները մի խաղաղ անկյուն գտնելու համար։

Ռուստոմ բեկի և վրաց իշխանների դժբախտ պատահարից հազիվ մի 10 օր անցած՝ տեղի էր ունենում մի այլ աղետ ռուսական զորքի համար, որ գալիս էր ավելի ևս վատթարացնելու դրությունն ոչ միայն Երևանի տակ, այլև ռուսական տիրապետության ճանապարհների վրա, մինչև Վլադիկավկազ։ Օգոստոսի 15-ին Ցիցիանովը Ղարաքիլիսա էր ուղարկում իր զորքի ամենաքաջ, ընդունակ և եռանդուն սպաներից մեկին, որ ուներ մայորի աստիճան և կոչվում էր Մոնտրեզոր, տալով նրան 110 հետևակ զինվոր և մի հատ թնդանոթ։ Ղարաքիլիսայում Մոնտրեզորը պիտի փոխարիներ մայոր Վարդազար Խոջայանին, որ տեղական զինվորական պետն էր, բայց իրեն ցույց էր տվել միանգամայն անընդունակ երկրին այդպիսի մի դժվար ժամանակ կառավարելու համար և մանավանդ թույլ ու անկարող էր հանդիսացել ռազմամթերք և հացի պաշար փոխադրելու գործի մեջ։ Իմանալով, որ ճանապարհի վրա վխտում են պարսկական զորքերը, Ցիցիանովը հրահանգում է Մոնտրեզորին վտանգավոր տեղերն անցնել գիշերով։ Բայց հազիվ էր փոքրիկ զորաբաժինը մի քանի վերստ հեռացել բանակից, և ահա նրան շրջապատեցին պարսիկները։ Երեք օր Մոնտրեզորը կռվելով առաջ էր գնում, ճանապարհ բաց անելով սվիններով։ Երրորդ օրը նա իջավ լեռներից Փամբակի հովիտը, ուր Ղարաքիլիսան է գտնվում, բայց այդտեղ հանդիպեց Ալեքսանդր արքայորդուն, որ գալիս էր Ղարաքիլիսայի կողմից և ուներ իր հետ վեց հազար զորք։ Շրջապատելով ռուսներին, նա նրանց առաջարկեց անձնատուր լինել։ Բայց Մոնտրեզորը պատասխանեց, որ մահը գերադասում է ամոթալի գերությունից։ Այն ժամանակ արքայորդին հարձակվեց նրա վրա իր ամբողջ բանակով։ Մոնտրեզորը ընդունեց կռիվը, բայց երբ նրա զինվորները վերջացրին իրենց բոլոր փամփուշտները, այն ժամանակ նա հանեց իր նշանազգեստը և ասաց զինվորներին. «Տղերք, ես այլևս ձեր պետը չեմ։ Շնորհակալ եմ ձեր քաջության և ծառայության համար։ Այժմ ով ուզում է ինձ թողնել, կարող է գնալ, ազատվել»[2]։ Այս թույլտվությունից օգտվեց միայն մի հատ թմբկահար զինվոր. բոլոր մնացածները մի համազարկ տվին իրենց վերջին փամփուշտներով և ապա սվիններով հարձակվեցին թշնամու վրա։ Մի քանի րոպեում փոքրիկ գումարտակն իսպառ ոչնչացավ։ Փախչողը մեկն էր, 15 հոգի ծանր վիրավորվածներ ընկան թշնամու ձեռքը, իսկ մնացած 94 հոգին կոտորվեցին։ Իրեն, մայոր Մոնտրեզորին պարսիկները գտան կտոր-կտոր եղած և ընկած թնդանոթի վրա, որը նա, անշուշտ, պաշտպանելիս է եղել մինչև վերջին շունչը։

Մի բուռն մարդկանց այս հոյակապ անձնազոհությունն, իհարկե, մի հերոսություն էր, որով կարող էր պարծենալ ռուսական զենքը։ Բայց պարսիկների համար նա մի նոր հաղթություն էր, որ չափազանցրած գունավորումներ ստանալով ռուսական տիրապետության ակամա հպատակված ժողովրդական տարրերի մեջ, պիտի ավելի ևս բարձրացներ ըմբոստացման տրամադրությունը նրանց մեջ։ Փիր Ղուլի խանն ու Ալեքսանդր արքայորդին լավ օգտագործում էին այս տրամադրությունը։ Ղազախ-Բորչալուի թուրքերը նրանց դրդմամբ և ղեկավարությամբ արդեն Թիֆլիսի շրջականներում էին գործողություններ կատարում։ Գլուխ բարձրացրին և Ջարի լեզգիները, իսկ Վլադիկավկազի ճանապարհը, որով Թիֆլիսը կապվում էր Ռուսաստանի հետ, կտրել էին ապստամբված օսերը։ Նրանց վրա հենված գործում էին և վրաց գահի

1 «Կռունկ», 1862, եր. 298։

2 «Утвержд. рус. влад. на Кавк.», I, с. 151.

մյուս թեկնածուները, ինչպես էր, օրինակ, Փառնավազ արքայորդին[1]։ Թիֆլիսում վերին աստիճանի անհանգիստ, հուզումնալից դրություն սկսվեց։ Ամենքը հավատացած էին, թե Ցիցիանովի ամբողջ բանակը չպիտի կարողանա վերադառնալ Երևանից և դատապարտված է բնաջնջման։ Այսպես էր տրամադրությունը և Պետերբուրգում։ Թիֆլիսում շփոթությունն այնքան մեծ էր, որ նույնիսկ գլխավոր հրամանատարի (Ցիցիանովի) բնակարանը համարվեց վտանգված, ուստի այդտեղից հանվեցին և բերդը տարվեցին բոլոր թղթերը, գանձը և այլ հարստությունները։ Դրանով ավելի ևս սաստկացավ հուզմունքը[2]։ Եթե ավելացնենք այդ բոլորի վրա և այն հանգամանքը, որ շարժումների նշաններ երևում էին և Արևելյան Անդրկովկասի խանությունների մեջ, այն ժամանակ կստանանք տպավորություն թե ռուսական տիրապետության դեմ ծառանում էին Արաքսի և Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի մեջ ապրող ազգերը, ոչ միայն մահմեդական, այլև քրիստոնյա։ Բացառություն կազմում էին միայն հայերը, միակ տարրը, որի վրա կարող էին հենվել ռուսներն այդ շատ դժվար և սպառնալից ժամանակներում։ Այս հանգամանքը լավ ըմբռնում էր Թիֆլիսի նահանգապետ (Վրաստանի կառավարիչ) գեներալ-լեյտենանտ իշխան Վոլկոնսկին։ Թիֆլիսը հուզող խուճապային դրության մեջ նա մի այլ հնար չգտավ, բայց միայն դիմել հայերին։ «Դուք ինքներդ զգում եք,— ասաց նա նրանց,— որքան ես երախտապարտ եմ ձեր մատուցած ծառայությունների համար և լավ տրամադրված եմ դեպի ձեզ ձեր բարեկամական հյուրասիրության համար իմ վերաբերմամբ։ Այժմ, իմ բարեկամներ, դուք պարտավոր եք պաշտպանել այս քաղաքը թշնամու հարձակումներից։ Դրանով դուք ավելի ևս ցույց կտաք, թե գիտեք ջանադիր խանդով ծառայել նորին կայսերական մեծության»[3]։

Հայերն ուրախությամբ արձագանք տվին այս հրավերին և իրենց ձեռքն առան Թիֆլիսի պաշտպանությունը։ Կազմակերպիչն էր Մելիք Աբովը, որ լսելով Թիֆլիսի դրությունը, թողել էր իր Բոլնիսը և եկել էր մի անգամ ևս, վերջին անգամ իր զառամյալ հասակում, ծառայություն մատուցանելու ռուսական գործին։ Այս մասին նա ինքը գրում էր Եփրեմ արքեպիսկոպոսին ուղղած իր նամակում[4]։

«Մինչ պարոն Վօլխօնսկին նախարան քաղաքիս և բոլոր բնակիչք սորին լուեալ զայսպիսի աղետս հանդիպեալս Ցիցիանովին և զօրաց նորին, յահի և ի տագնապի կային և պէսպէս հնարիւք ապրեցուցանել քաղաքս նախահոգային, ես էի, որ զամենայն ընտանիս իմ և մարդկանց իմոց բերեալ ի քաղաքս և ազգի հաւատարիմ ծառայութեամբ օգնական և ձեռնատու լեալ նորին իշխան Վօլխօնսկուն, իմոյին քաջարամբք ու հատու նման և պահպանիչ քաղաքիս»։ Իսկ Խուբյանը, շարունակելով իր խոսքն, ասում է. «Հայերը հոժարությամբ հնազանդվեցին նրան (Վոլկոնսկուն) և խոստացան չխնայել ոչ մի կաթիլ արյուն քաղաքի պաշտպանության համար։ Իշխանը դրեց նրանց, պահպանություն կատարելու համար, քաղաքի զանազան մասերում, ուղարկում էր գիշերային ձիավոր պահակներ և ինքն էլ միշտ նրանց հետ էր լինում։ Պար-

1 Փառնավազը գործում էր իր եղբայր Հուլոնի հետ, ամեն կերպ աշխատելով ապստամբեցնել ամբողջ Վրաստանն ու Դաղստանը։ Հուլիս ամսին Հուլոնը գերի ընկավ ռուսների ձեռքը։ Այնուհետև Փառնավազը մենակ շարունակեց իր գործը, մինչև որ ինքն էլ նույնպես գերի ընկավ (հոկտեմբեր ամսին) ռուսների ձեռքը։

2 «Утвержд. рус. влад. на Кавк.», I, с. 152.

3 **Хубов**, с. 86.

4 Նամակը, որ ամբողջովին կբերենք հետո, ձեռագիր է, գրված Թիֆլիսում 1806 թ. մայիսի 12-ին և գտնվում է մեր ժողովածուի մեջ։

սից լրտեսները իմաց տվին իշխանի (Վոլկոնսկու) այսպիսի պատրաստության մասին։ Ալեքսանդր արքայորդին և Փիր Ղուլի խանը, որոնք չէին սպասում թե այդպիսի բան կլինի, չգիտեին, թե ինչ սկսեն այս դեպքում, որովհետև նրանք վախենում էին հարձակվել քաղաքի վրա գիշերով՝ որպեսզի իրենք չենթարկվեն վտանգի և ամոթահար չլինեն շահի առջև։ Չէին համարձակվում և բաց կերպով գործել, որովհետև քիչ վստահություն ունեին իրենց ուժերի վրա[1]։

Այսպես էին այն հանգամանքները, որոնք շրջապատում էին իշխան Ցիցիանովին այն ձեռնարկության վերջում, որ նա սկսել էր այնքան հոխորտալից անձնապաստանությամբ։ Թիֆլիսից կտրվելուց հետո նա այլևս հույս չուներ, թե պիտի կարողանա կերակրել իր զինվորներին, քանի որ սպառվեցին և էջմիածնի ամբարները, որոնք ռուսական բանակի միակ հույսն ու ապավենն էին մնացել։ Եվ ահա մինչդեռ շուրջն ամեն տեղ, մինչև Կովկասյան լեռները, ազգերն ու լեզուները խոսում էին, թե ռուսներն ոչնչացվել են, թե շուտով պարսից զորքը Թիֆլիս կմտնե, Ցիցիանովի և Մահմադ խանի մեջ վերանորոգվում էր նամակագրությունների կատակերգությունը։ Խոյի Ջաֆար Ղուլի խանը, բանակցելով Երևանի խանի հետ, որ իր մոտիկ ազգականներից էր, հավատացնում էր Ցիցիանովին, թե Մահմադ խանը պատրաստ է անձնատուր լինել նրան, միայն վախ ունի, թե իր կյանքը չեն խնայի ռուսները։ Ուստի օգոստոսի 25-ին Ցիցիանովը գրում և հավատացնում էր խանին իր կայսրի անունից, թե նրա կյանքն ու ապրուստը միանգամայն ապահովված կլինին ռուսաց տիրապետության տակ։ Իսկ Երևանի խորամանկ տերը խաղացնում էր ցարական միամիտ սատրապին իր մատների վրա։ «Պարտք եմ համարում,— գրում էր նա (օգոստոսի 30-ին),— ճշմարտությամբ հայտարարել ձեր պայծառափայլության, թե Ջաֆար խանը հայտնեց ինձ, որ ես իբր թե փոփոխական եմ. ամենակարող Աստուծով երդվում եմ ձեր պայծառափայլության, որ ես երբեք անարդար հայտարարություններ չեմ արել ձեզ և ընդմիշտ տրամադրված եմ ծառայել ամենայն ռուսաց ամենազորմած թագավոր կայսրին հավատարմությամբ. պարսից տիրապետողի կողմը պահել մտադիր չեմ։ Ձեր պայծառափայլությանը խնդրում եմ խոնարհաբար, ինչ ժամանակ տվեք և համբերություն ունեցեք, որ Բաբախանն այստեղից հեռանա. այն ժամանակ ինչ որ դուք միայն կհրամայեք ինձ, չեմ հրաժարվի կատարելուց։ Թեև մինչև այժմ զանազան հանգամանքներով իմ ջանադիր տրամադրությունները դեպի ձեզ մի քանի մարդիկ գուցե ձեզ ուրիշ կերպ են բացատրել,— խնդրում եմ այսուհետև չհավատալ և ինձ չզրկել ձեր շնորհներից և հովանավորությունից և համարել ինձ անձնվեր դեպի ռուսական կայսրության ծառայությունը։ Ճիշտ է, ձեր պայծառափայլությունն ունի իրավունք ինձնից վրդովված լինելու մի քանի հանգամանքների պատճառով, բայց հավատացեք իմ ճշմարիտ խոստովանությանը. Աստուծով ինձ երդվեցնում եմ, ես չեմ դրա պատճառը, այլ կողմնակի մարդիկ, և ես ուշ տեսնելով, չկարողացա ուղղել. մեծահոգությամբ ներելով ինձ այդ բանը, թողություն արեք և մի զլանաք հովանավորել ինձ և այս նամակն էլ ծածուկ պահեցեք, ուստի և ես չգրի իմ կնիքը»[2]։

Հավատացած այս բոլոր խանական հավաստիացումներին, Ցիցիանովը գրեց պատասխան, որի մեջ հանդիմանում էր խանին, թե նա չիմացավ իր օգուտն երկու ամսվա ընթացքում և չբաց արավ բերդի դռներն իր առջև։ Եվ պատասխանի վերջնական ժամանակ նշանակում էր նույն օրվա գիշերը, երբ

---

1 Хубов, с. 86—87.

2 «Акты...», II, № 1238.

խանը պիտի, վերջապես, ցույց տար, թե ինքը միայն խոսել չգիտե, այլ և գործով արդարացնել իր խոսքը։ Այս թուղթը նա ուղարկում է օգոստոսի 31-ին, բայց և միևնույն օրը զինվորական խորհուրդ է գումարում քննելու դրությունը և որոշելու, թե ինչ կարելի է և պետք է անել ստեղծված հանգամանքների մեջ։ Ցիցիանովը դրեց իր խորհրդակիցների առջև երկու անհրաժեշտություն՝ կա՛մ գրոհ տալ քաղաքի վրա, կա՛մ վերացնել պաշարումը և նահանջել դեպի Թիֆլիս։ Գրոհի կողմնակից հանդիսացան միայն ինքը՝ գլխավոր հրամանատարը և գեներալ Պորտնյագինը. մնացածները ձայների առավելությամբ որոշեցին վերացնել պաշարումը և նահանջել։ Հասկանալի է, թե որքան Ցիցիանովի պես մի գոռոզ զինվորականը պիտի վշտանար այդպիսի մի անհրաժեշտությունից, որքան և նա թելադրված լիներ իրերի անողոք պահանջից։ Այդ պատճառով էր, որ նա մյուս օրը, սեպտեմբերի 1-ին, մի անգամ էլ բախտ փորձեց իր փքուն թղթերի միջոցով։ Նա մի դիմում գրեց, ուղղած ոչ միայն երկու խաներին, այլև երկրի հոգևորականության և ամբողջ ժողովրդին, առաջարկելով հանձնել իրեն Երևանի բերդը։ Պայմանների մեջ այս անգամ մի խոսք անգամ չկար Դանիելի կաթողիկոսացման մասին, մինչդեռ նախկին պայմանների մեջ, մենք այս շատ անգամ տեսանք, նա զբաղվում էր առաջին տեղը։ Խաներին նա այս անգամ թողնում էր իրենց իշխանության մեջ Ռուսաստանին հավատարիմ մնալու պայմանով։ Անձեռնմխելիություն էր խոստանում և մահմեդական կրոնին ու կրոնավորներին[1]։

Երևանի պաշարումը վերացվեց, համաձայն վճռի, սեպտեմբերի 4-ին։ Զորքերն սկսեցին ետ քաշվել։ Իբրև բախտի մի նուրբ հեգնանք, Ցիցիանովը նույն այդ օրը ստանում է Մահմադ խանի հետևյալ նամակը. «Ձեր պայծառափայլությունը հաճել եք գրել նամակ ամբողջ հասարակության անունով, որ ես լավ չհամարեցի ցույց տալ նրանց։ Մի քանի անգամ ձեր պայծառափայլության հայտարարելու պատիվ եմ ունեցել. մի երկմտեք, որ ես փութաջան եմ ձեր վերաբերմամբ, քանի որ շահն այստեղ է գտնվում, և իմ ընտանիքը գրավական է նրա մոտ. անկարելի է կատարել այն կետերը, որ առաջարկում է ձերդ պայծառափայլությունը։ Երբ շահը կվերադառնա, այն ժամանակ, պատրաստ եմ ձեզ ծառայել. իսկ եթե այժմ սկսեմ այդ բանը, այն ժամանակ նա մեր ընտանիքը կոչնչացնե,— կարծում եմ, որ դուք այս չեք ուզի։ Խոնարհաբար խնդրում եմ հավատաք այս բանին. հաստատապես հայտնել կարող եմ, որ շահը շուտով կվերադառնա. նա միայն սպասում է Փիր Ղուլի խանի վերադարձին։ Պարսիկները որոշել են, որ մի երկու անգամ հարձակում գործեն ձեզ վրա։ Զգույշ եղեք»[2]։

Նահանջող զորքն երեք օր կայան ունեցավ Էջմիածնում։ Հովհաննես Գեղարդակիրն ու իր ընկերները պատեհ առիթ համարեցին հանել տանել Էջմիածնից բոլոր հարստությունները, որպեսզի Դավիթը չկարողանա տիրանալ նրանց։ Եվ սկսվեց վանքի կողոպուտը հենց հայ հոգևորականների ձեռքով և ռուսաց քրիստոսաղեն զորքի աջակցությամբ։ Եթե դանիելյան կուսակցությունը կանգ չառավ մի ամբողջ աշխարհի տակնուվրայության առջև ի սեր իր տիրապետական փառամոլ տենչերի, ինչո՞ւ պիտի կանգ առներ մի այսպիսի բարեպաշտական կողոպուտի առջև, որ պիտի միջոցներ տար շարունակելու այդ ավերիչ վեճը։ Կատարվում էր մի հասարակ բան. հայ հոգևորականության արատների գիրքը հարստանում էր մի ավելորդ էջով ևս։ Դավիթ կաթողիկոսը, նկարագրելով, թե ինչպես էին ռուսները մաքրել և սրբել վանքի

---

1 «Акты...», II, с. 1240.

2 Նույն տեղը, էջ 1243։

ամբարները, շարունակում է. «Որանի թէ՝ այս միայն լինէր աւերմունք նոցա. Քանզի՝ իբրև զի սուրբ Աթոռոյս եղեալսն ևս սպառեցուցին, և բնաւ սովալուկք եղեն ինքեանք և անասունք իւրեանց, և ազգի ազգի հիւանդութիւնք ևս տիրեաց ի մէջ նոցա՝ և կոտորեաց զբազումս, ապա կամեցան դարձ առնել և ելեալ ի քաղաքէն Երևանու ի սեպտեմբեր ամսոյ 4, եկին ի սուրբ Աթոռս բոլոր զօրքն ևս և յերիս աւուրս կացեալ աստ՝ ամենայնիւ յամենայնի կեղեքեցին և կողոպտեցին զխղճալի սուրբ Աթոռս մեր։ Քանզի՝ անագորոյն փչանալի սևագլուխքն մեր իբրև խլուրդ մկունք բացեալ զամենայն պահստանսն և զգարանսն, թէ ի մէջ սրբոյ եկեղեցւոյն եղեալսն և թէ արտաքոյ ի կացարանսն մեր եղեալսն, թշնամաբար կողոպտեալ էին, թէ վոսկեղէնս և զարծաթեղէնս, թե զեկեղեցական զարդս և զսպասսն զամենայն, այսինքն՝ զխաչըսն, զսկիհս, զվարագոյրս, զբուրուառս, զաշտանակս, զշուրջառս և զայլ իշատակիսւ Եւ թէ զերկաթեղէնս և զպղինձեղէնս, զհանդերձեղէնս և զխեցեղէնս։ Նա զՓիլիպպոս սրբազան կաթուղիկոսի գրքատունն, ընդ որում և զայլ գրքատունսն մեր ևս բացեալ՝ վեր առեալ էին զբոլոր գրեանսն։ Յետ իւրեանց կողոպտելոյն զայսոսիկ, հրաման եղեալ էր և զօրացն ամենից, որ նոքա ևս աւար հարկանելով զմնացեալսն զամենայն իսպառ աւերեալ և խանգարեալ էին զսուրբ Տունս՝ առնելով զսա իբրև զհիւղս մրգապահաց։ Զամենայն դրունըսն կացարանաց մերոց աւերեալ էին, և զփականսն հանեալ և զլուսամուտըսն կործանեալ, և զայլ դրունս տանց և սննեկաց խորտակեալ և զամենայն շինուածս և զգործիս ջախջախեալ և կործանեալ և ցիրցան արարեալ զբամբակ և զայմենան պիտոյս։ Զայսպիսի անօրինակ չարիս անխնայաբար գործեալ էին նոքա զոր Կովկասականք և այլ հեթանոսք չէին առնելոց։ Վերջապէս զամենայն զմիաբանսն մեր ևս բռնութեամբ վեր առեալ և տարեալ էին, այլ երկուք նոցունց Զաքարիա և Մարտիրոս վարդապետք խոյս տուեալ՝ եկեալ էին առ մեզ ի բերդն, և պատմեցին զաղետս զայսոսիկ, և Աւետիս եպիսկոպոսն ևս զերեսս թագուցեալ՝ աստ մնացեալ էր»[1]։ Հալածվելով պարսիկներից, Ցիցիանովն շարունակեց իր արագ նահանջը և սեպտեմբերի 15-ին հասավ Ղարաքիլիսա, ուր կանգ առավ Փամբակի, իբրև սահմանագլխի գավառի գործերը կարգավորելու համար։ Այդ ժամանակ Լոռու ձորերում դեռ շարունակվում էին Արարատյան երկրից փախած հազարավոր ընտանիքների աստանդական տանջալից թափառումները։ Տեղի տալով Փամբակի, Ղազախի և Բորչալուի ապստամբ թուրքերի ճնշումներին, փախստականներն ապաստանեցին նախ Օձուն գյուղում, ապա իջան Ձորագետի (Դեբեդի) ձորը, բայց այստեղ էլ հանգստություն չգտնելով, բարձրացան Հաղպատ գյուղը։ Սակայն հազիվ թե ամբողջ Լոռում գտնվեր մի հատ հայ գյուղ, որ ի վիճակի լիներ բավարարել բազմահազար անտուն մարդկանց պետքերն առանց սասանի նեղելու իրենց սեփական գոյությունը։ Ուստի փախստականները Հաղպատում հազիվ մի քանի օր կարողացան մնալ և ստիպված եղան ուրիշ տեղերի ճանապարհներ որոնել գլուխ գնելու տեղ գտնելու համար։ Այդ վճիռը փութացրեց Դոնմազ անունով մի մարդ, որ երևաց Հաղպատում, բերելով իր հետ Ալեքսանդր արքայորդու թուղթը հետևյալ բովանդակությամբ. «Երդնում ի կենդանի գերեզման հօր իմոյ Հերակլյայ, ի յաղթող թագաւորութիւն շահին, զի բնաւ ոչ լինի ձեզ վնաս, եթե գան իշխանք և քեթխուդայք ձեր ընծայիւք ի տեսութիւն ընդ մեզ եղեալ խանին»[2]։ Այս առաջարկությունը, հիշեցնելով գաղթականներին, թե պարսիկները մոտիկ են և հետապնդում են, հետևաբար

[1] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Է, էր. 440—441։
[2] «Կռունկ», 1862, էր. 301։

կարող են ամեն րոպե կտրել ճանապարհներն ու շրջապատել, հարկադրեց ...ով թողնել Հաղպատը, մանավանդ որ տեղացի հայերն էլ, իրենց գլուխը ...տեղերից ազատելու համար, հորդորում էին գնալ հեռանալ այդտեղից։ ...— ասում է Հովհան քահանա Ոսկերչյանը,— յորժամ տեսաք զայն թուղթ՝ ...մահու եհաս մեզ. և նկատէաք զի երկրականքն ևս շշնչէին վասն ...՝ իբրու թէ այն զօր պարսիցն յանկարծակի թափեալ ի վերայ գերելոց է ...վասնորոյ ստիպէին զմեզ ելանիլ ի միջոյ իւրեանց. յորոյ վասն երիցս ...գրեցաք զթուղթ աղերսախառն արտասուօք ի Տփխիս առ Վօլխոնսկին ...եղեալի նմա և զօրինակ թղթոյն Աղեքսանդրի, որպէս զի ...զզօրս հանցէ զմեզ ի նեղութենէն և տարցէ ի Թիֆլիզ՝ ոչ լուաւ»[1]։

Այս անուշադրությունն ավելի ևս սաստկացնում է փախստականների ...։ «Տեսեալ մեր թէ՝ ոչ ուստեքէ եղև օգնութիւն մեզ, զի հատան ճանա...Երևանու և Թիֆլիզու և ոչ ոք է որ հոգայ զփրկութենէ մերմէ, իջաք ի ...՝ ընդ ձոր ի վեր գնացաք մինչև ի գեօղն Շնող՝ զի թերևս ի գի...փախստեամբ կարասցուք անկանիլ ի Թիֆլիզ։ Իբրև գիտացին երկ...պարսիկքն թէ իջաք ի Հաղպատու և կամիմք գնալ ի Տփխիս, եկին և ...զճանապարհս ձորոյն, և ի բազում յաւուրս սպասէին մեզ իբրև զորս... զի թերևս կարիցեն արկանել զմեզ ի ցանցս իւրեանց։ Ուստի էաք բազ...տեալ նեղութեամբ և կայք վարանեալ ի սովոյ և յահէն հեթանոսաց, ...զօրն Աղեքսանդրի ի յետուստ կուսէ սպառնայր, և երկրական պարսիկք ...զմաց կային զճանապարհն ընկճեալ։ Վասնորոյ և բարձեալ էր յոյս փըր...թեան յամենայն հասակէ, և չէր ոք որ հոգայր վասն ընչից և ապրանաց, ...հոգայր վասն գերութեան իւրոյ՝ և ընտանեաց և զաւակաց իւրոց՝ և էր ...տեսանել զերեսս բազմամբոխ բանակին հայոց թօշնեալ և թալկացեալ, ...տխրութիւնն հանդերձ աշխատութեամբ իբրև զբաղեղն փակեալ զամենե...մբք, և երևէին գեղաւորքն իբրև զգերիս, զի (որպես պատմեցաք) ի մա...17-էն սկսաք չուել յԱրարատայ, հազիւ ի 10-ն ամսոյն հոկտեմբերի ...ընդ յարկաւ ի Տփխիս, փախչելով որպէս զօրսն յորսորդաց ի լերանց ի ...ի ձորոց ի ձորս, ի մացառաց ի մայրիս, վասնորոյ և ոչ մնաց հան...ձեղէն նոր՝ ոչ վրանք, ոչ արկանելի անկողինք և ոչ ագանելիք մարդ..., ոչ և անասուն ամբողջ. զի գոլով երկիրն լեռնային՝ անընդհատ հեղոյր ...ձրև և զկարկուտ, որոյ վասն պատեալ վառեցան ամենայն կարասի կե...թեան բանակին. Թուլացան և սիրտք արի երիտասարդացն՝ մինչև խուսա...առն յըստուերէ իւրմէ։ Իսկ յաւուր միում մինչ կամէաք փոխել զտեղի բանակին ի թու մայրիս, որպէս զի մի տեսանիցիմք ի դիտաց թշնամեաց, յանկարծակի աղաղակեաց զէտն մեր թէ՝ փախերուք, զի ահա եկն Աղեքսանդրն ընդ ձորովս, և ընդ գուժել դիտին՝ շփոթեցաւ բանակն՝ ընդ ճիչ և աղաղակի կանանց և մանկանց մերոց ձայնակցեցան և քարանձաւքն՝ եղև օր աղաղակի նման ձորոյն Յովսափաթու էր զի ոմանք փութային ի զէնս առ ի փակել զճանապարհս ձորոյն, և ոմանք առեալ զընտանիս փախչէին հանդէպ երեսաց թողեալ զամենայն կարասիս ի բացեալ՝ միայն անձանց և եթ հոգային զփրկութիւն։ Իբրև իրն ստուգեցաւ թէ՝ ոչ էր այն զօր Աղէքսանդրին, այլ կարուան Պօռչալուին, որք գնային ի գեօղօրայս իւրեանց, ահաբեկեալք այլ ոչ կարացին անդրէն մնալ. այլ դարձ արարեալ յետս ընդ կրունկն եկեալ իջևանեցաք զառաջեաւ հին մատանին»[2]։

Այս դրության մեջ էին փախստականները, երբ նրանց հանդիպեց Հով-

[1] «Կռունկ», 1862, էր. 302։
[2] Նույն տեղը, էր. 302—304։

Հաննես եպիսկոպոս Գեղարդակիրը, որ Ցիցիանովի զորքերի հետ վերադառնում էր Թիֆլիս։ Նա մխիթարեց և սփոփեց տառապող աստանդականներին խնամելով նրանց և մանրամասն ցուցակագրելով, ուղարկեց Թիֆլիս։ Ցիցիանովն իր բանակով նրանցից առաջ գնաց, իսկ նրանք Թիֆլիս մտան հոկտեմբերի 10-ին և այդտեղ բնակության տեղեր ստացան Հավլաբար և Տուփի Բաղ մասերում։ Իսկ փախստականների մյուս մասը, որ դուրս էր եկել Երևանի կողմերից (Ղրխբուլաղ), թվով մոտ 1500 տուն, մնաց Փամբակում, սպասելով այն ժամանակին, երբ ռուսները կվերցնեն Երևանը, որից հետո միայն նրանք պիտի վերադառնային իրենց հայրենիքը։

Այսպես էր ահա վերջանում երևանյան արշավանքը։ Ցիցիանովի համար նա մի լավ խրատ էր, որ կարող կլիներ նրան ազատել մեծամտությունից, եթե միայն ցարական սատրապին մատչելի լիներ առհասարակ որևէ խրատ։ Ռուսական քաղաքականության համար այդ ձեռնարկությունն ուներ այն դժբախտ նշանակությունը, որ նրանով փոքր ինչ նսեմանում էր ռուսական զենքի հեղինակությունը պարսիկների աչքում։ Պարսկաստանի համար երևանյան արշավանքն, ընդհակառակն, շոշափելի օգուտներ ուներ։ Վերջ ի վերջո հաղթողի, թշնամուն երկրից դուրս վանողի դերում Ֆաթալի շահն էր մնում, որին այնքան արհամարհում էր Ցիցիանովն իր կույր մեծամտության մեջ։ Ռուսների հեռանալուց հետո նա մուտք գործեց Երևան և իր սրտի գոհունակությունն արտահայտեց, ի միջի այլոց, նրանով, որ վերադարձրեց Մահմադ խանին իր մոտ պատանդ պահվող նրա ընտանիքը, ապա և վերականգնելով Երևանի վաղեմի սարդարությունը, հենց նույն խանին էլ տալիս էր սարդարի պաշտոնը։ Մահմադ խանն, ուրեմն, լիովի հասավ իր նպատակին շնորհիվ իր խորամանկ և երկերեսանի քաղաքականության։ Ավելորդ է ասել, որ տեղային մահմեդական ազգաբնակությունն էլ շատ գոհ էր, որ այսպես վերջացավ ռուսական արշավանքը, թողնելով իշխանության մեջ դարձյալ մահմեդական տիրողներին։

Արդ՝ եթե կար այս պատերազմի մեջ ամենից շատ վնասված մի կողմ, այդ միայն հայ ժողովուրդն էր։ Մենք արդեն տեսանք նրա երկիրն ավերված, տեսանք նրան փախստական իր հայրենի օջախից, քաղցածության, հիվանդությունների մատնված, նրանից կոտորվելիս։ Չորս հազար փախած ընտանիքներից մեծագույն մասը կորած էր իր հայրենիքի համար։ Վնասվեցին և իրենց տեղերում մնացածները և ամենից շատ, իհարկե, երևանցիները։ Խուրյանը բերում է այսպիսի մի հաշիվ. «Երևանի քաղաքացիներից (հայ) գերի են վերցված 65, ռուսաց բանակում կռիվների ժամանակ նրանցից մեռել են 38 մարդ, իսկ բերդի մեջ մեռած հայերի թիվն էր 1895 մարդ»[1]։ Կենդանի մնացածները դուրս եկան բերդից սեպտեմբերի 1-ին։ Եվ ի՞նչ տեսան։ «Տեսանք,— պատասխանում է նա,— տները, այգիները և ուրիշ շինությունները, որոնք առաջ հոյակապ էին, այժմ ավերակների կույտեր և անպետ դարձած։ Մենք չունեինք օդի փոփոխություններից պաշտպանվելու տեղ, ամբողջ քաղաքն էր ավերման ենթարկված, մենք կարծես նոր աշխարհ էինք եկել կամ զարթել էինք երկարատև քնից. սկսեցինք վերանորոգել մեր բնակարանները, ամեն քայլի վրա և ամեն րոպե գտնում էինք մեր դժբախտությունների հետքերը, որոնց հիշողությունը նորից նեղում էր մեր սրտերը։ Միայն այն հույսը, որ իշխան Ցիցիանովը խոստացել էր նորից գալ, ամրապնդում էր մեզ, որ երևում էին ծովի փոթորկով տարուբերվող նավի նման։

1 Хубов, с. 94.

Օր ու գիշեր աշխատում էին պատրաստել մեզ համար մի որևէ օթևան, որպեսզի ազատենք մեր կյանքը և մեր ընտանիքը»[1]։

Բայց այս բոլորը դեռ համեմատաբար հեշտ մոռանալի և թեթև զրկանքներ էին։ Ամենավատն այն էր, որ փոխվել էին հարաբերությունները հայ և թուրք ժողովուրդների մեջ։ «Մենք,— գրում է Խուրյանը,— իբրև դավաճաններ և մատնիչներ, ստիպված էինք տանել պարսիկներից ամենակծու հալածանքներ։ Ես ամենից շատ էի ենթարկված այդ բանին։ Նրանք ինձանից վրեժ էին հանում, ավերելով իմ այգիները և ինձ պատկանող ուրիշ անշարժ կալվածները»[2]։ Ամենքը գիտեին, որ եթե Ցիցիանովը նորից գար, իրենք այլևս չէին կարող մտնել բերդը, որովհետև թուրքերը կկոտորեին իրենց, իբրև դավաճանների։ Ֆաթալի շահը հազիվ կարողանալով դուրս խլել ռուսական թաթերից Իրանի մի նշանավոր և անվանի երկրամասը կազմող Երևանը, մշակում էր իր համար քաղաքականության մի նոր գիծ հայերի վերաբերմամբ։ Այս բանն իմացավ Խուրյանը Նորջուղայեցի մի հայից, որի անունն էր Ռոկան և որ կարևոր պաշտոն ուներ պարսկական բանակում։ «Նրանից էլ (Ռոկանից),— ասում է նա,— ես իմացա, որ շահը Ջուղայով անցնելիս հրամայեց նրա բնակիչներին պատրաստել տեղ, ուր նա մտադրություն ուներ տեղափոխելու Երևանի հայերին, մի բան, որ երևում է և այն հրամաններից, որ նա տվել էր շատ խաների, ասելով որ հայերին ուղարկեն իր մոտ։ Շահն, ասում էր այս Ռոկանը, ձեր խաների հետ դաշնակցության մեջ է մտել միայն այն պատճառով, որ դուք պաշտպանություն էիք որոնում սահմանակից ռուսների մոտ։ Նա այդ բանից նախատեսում էր իր համար վտանգ և գործածեց բոլոր միջոցները, որպեսզի թեքե հայերին իր կողմը։ Այս միևնույնը լսեցի ես և ուրիշ շատ մարդկանցից»[3]։

Եվ այն շատ ճիշտ էր։ Նկատելով հայերին իբրև մի տարր, որ բերում է ռուսներին Իրանը նվաճելու, Ֆաթալի շահը վճռում էր դառնալ մի նոր Շահ Աբաս և քշել Արարատյան երկրի հայերին Պարսկաստան՝ իր հյուսիսային սահմանները Անդրկովկասում ապահովելու համար։ Այս ծրագրի մասին շատ էր խոսում մանավանդ հետևյալ 1805 թվականին և ռուսական իշխանություններն էլ լավ տեղյակ էին, որ այսպիսի դիտավորություն կա Իրանի վեհապետի մեջ։ Հայերի ռուսասիրական գործունեությունն այնուհետև էլ տարիների ընթացքում հաստատում էր Շահի մեջ այն գիտակցությունը, որ առանց հայերի հզոր աջակցության ռուսները չէին կարող նվաճումներ անել Պարսկաստանում։ Ինչպես կտեսնենք իր տեղում, շահական այս հայացքը հաղորդվեց և օսմանյան սուլթանին և ազդեցություն ունեցավ նաև Թուրքիայի հայերի ճակատագրի վրա։

Այսքան խոշոր էին այն վնասները, որ հասցնում էր հայերին ռուս-պարսկական առաջին պատերազմը։ Օգուտ չէր ստանում նրանից նույնիսկ և կղերական փառամոլությունը, քաղաքական հաշիվների դժբախտ զոհ դարձած Դանիել կաթողիկոսը։ Ցիցիանովը նահանջում էր, թողնելով իր պաշտպանյալին պարսիկների ձեռքին։ Դավիթ կաթողիկոսը պատմում է, թե ինքը, տեղեկանալով որ ռուսները սաստիկ ավերել են Էջմիածինը, չուզեց գնալ այնտեղ։ Բայց շահը, կամենալով այցելել հայոց մեծ օջախը, հրաման արավ, որ գնա այնտեղ՝ իրեն ընդունելու համար։ «Եւ գրեալ էր առ մեզ ինքն շահն՝ թէ էլ միաբանիւք ի բերդէդ և երթ յօջախն ձեր և մաքրեալ յարդարեա զնա, որ մեք

1 Хубов, с. 97—98.
2 Ibid, с. 91—92.
3 Хубов, с. 96.

գալոց եմք ի զիարէթ։ Իսկ մեք թէպէտ չկամէաք գալ, գիտելով թե ի ձեռաց գնացեալ է Տունս և ամենևին բան չէ մնացեալ աստէն, բայց չկարելով զանց առնել առ բարձր հրամանաւ շահին, ելաք եկաք ի սուրբ Աթոռս ի սեպտեմբերի 8, կացեալ և նեղսակրեալ և վշտացեալ ի բերդն Երևանու յերիս ամիս ժամանակ։ Եւ զի ողորմելի միաբանք մեր հիւանդացեալ անդ վասն կրելոյ իւրեանց զդառնութիւն և զծանրութիւն օդոյ տեղւոյն՝ և զայլ ևս նեղութիւնս՝ խսպառ անզօրացեալք էին, որպէս և մեք իսկ. և ի գալն մեր աստ՝ չունէաք զբեռնակիրս, զի նոքօք կամ զնոսին զհիվանդացեալսն և կամ զոնեայ զնոցունց մէկ մէկ ձեռք տեղաշորսն վիրառնուլ և բերել տայաք, քանզի զամենայն բեռնակիրսն մեր այնպէս վերջացուցեալ էին, որ մէկ հատ չորքոտանի և ոչ էր մնացեալ մեզ։ Ուստի զքանիս չորիս և զփշանս կալեալ ի վարձու ի տաճկաց, որք զհիւանդ անկելոցն այնոցիկ զտեղաշորսն բարձեալ բերին, և ինքեանք ողորմելիքն հետիոտս և երեսքարշ եկին թափեցան ի սուրբ Աթոռս։ Եւ այն ինչ մտաք աստ այնպէս տապալեալ և քայքայեալ՝ որ տեսողաց ամենից զսոսկումն և զդառնադառն կսկիծ և մորմոք առ բերեր ի սիրտս. եկեղեցին մերկ խսպառ ի բարեզարդութեանց և լի աղբիւք և ամենայն անմաքրութեամբ։ Ներքին և արտաքին պարիսպքն զեղուն սատակովք մարդկանց և ձիոց և այլ անասնոց և ամենայն գարշահոտութեամբք և ապականութեամբք լցեալք և դրեանք և բամբակք՝ և աղբք՝ և այլ պղծութիւնք խառնիխուռն ընդ իրեարս անկեալք և ցրուեցեալք։ Եւ կացարանք մեր և այլ տեղիք դռնաբացք, ծակոտեալք և դար դար եղեալք յատակաց, և փայտեղէն կերտուածոց վայելչութիւնք խաթարեալք՝ և վայրիվերոյ եղեալք։ Զոր մին ի յաղեաց պատմեսցուք, սիրելիք, զի չէին թողեալ զչարիս չոր ոչ էին գործեալ մինչև զսուրբ Լուսաւորչի խորանի դրան երկաթեայ փականսն ևս ի բաց հանեալ էին, և դուռն բաց էր մնացեալ։ Եւ զամենայնս արտաքին տեղիսն արոնելով և ծակոտելով զայնպիսի դարանս գտեալ էին՝ և հասեալ դրան, զոր մեք ոչ տեսեալ էաք և ոչ գիտեցեալ ի չորից ամս հայրապետութեան մերոյ։ Եւ այսպէս՝ ոչ ուտելոյ բան էին թողեալ մեզ, ոչ նստելոյ և ոչ ագանելոյ»[1]։

Ավերող և ապականող «քրիստոսազեն» զինվորների ամոթն ավելանում էր նրանով մանավանդ, որ «անհավատ» մահմեդական շահն էր հոգացողություն անում մաքրելու քրիստոնեական սրբավայրը։ «Եւ ապա,— շարունակում է Դավիթը,— մեծախնամ Շահն դարձեալ առաքեալ էր զմարդ ի սուրբ Աթոռս, որ եկեալ մաքրել եւ զսա յամենայն գարշութեանցն և յապականութեանցն յերկուս աւուրս, և ի սեպտեմբերի ամսոյ ժ (10), որոյ պատկեր աւուրըն էր շաբաթ, յետակայ կիւրակէն էր վերացման սրբոյ խաչին, եկն ի սուրբ Աթոռս նա ինքն Շահն, և ի գալն քանի եպիսկոպոսօք ելաք ընդ առաջ մինչև յերկուց ժամուց ճանապարհ և ի հանդիպելն մեր մեծութեան նորա կանգնեցոյց զերիվարն և սիրով և քաղցրութեամբ հարցոյց զխաթրն մեր և զայլ ողջխսութիւնս և ապա անկաւ ի ճանապարհ, և մեք փոքր ինչ ի զատ յառաջելով քան զնա՝ գայաք, վասն որոյ և երիցս և չորիցս ևս առաքեալ նորա առ մեզ զերևելի մարդն իւր մերձակայ, նովաւ ևս հարցոյց զխաթրն մեր՝ և սիրաշահեաց զմեզ։ Միաբանքն մեր ևս ելին ընդ առաջ մինչև զդուռն պարըսպին, և հնչեցուցմամբ զանգակաց բերաք զնա»։

Շահը մնաց էջմիածնում իբրև ուխտավոր. հաճախում էր եկեղեցի կամ պտույտ էր տալիս նրա շուրջը և առհասարակ ջերմեռանդությամբ էր վերաբերվում դեպի այդ հին սրբավայրը, որի մասին պատմական տեղեկություններ ստանում էր Դավիթ կաթողիկոսից։ Իմանալով այդ տեղեկություններից,

1 «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Է, եր. 442։

որ պարսից շահերը վանքի խնամողներն են եղել, «ինքն ևս,— ասում է Դավիթը,— սկսաւ մեծապէս յուսադիր լինէր, առ ի միշտ պահել զմեզ խնամով ընդ քաղցր ակնարկութեամբ իւրոյ. և տեսեալ զաւերս սրբոյ Տանս՝ ետ մեզ զյատակ ռաղամ՝ որ առ ժամանակ ինչ բան պահանջող չլիցի ի մէնջ և ի գիւղացւոց մերոց։ Եւ ասաց մեզ՝ թէ գրեա՛ առ ազգդ ամենայն, զի ովք և կամեսցեն արասցեն զերթևեկութիւն յերկիրս մեր վասն վաճառականութեան և զերկիւղ ինչ չունիցին ի մէնջ այսուհետև։ Շնորհեաց մեզ և զայլ յատուկ ռաղամս՝ ի նորոգութիւն մտաց ի վաղնջուց ունեցեալ ռաղմացն մերոց՝ զոր նախնի թագաւորք պարսից տուեալ են սրբոյ Աթոռոյս՝ վասն կարևոր իրացս»[1]։

Դավիթն իր հետ էջմիածին էր տարել և Դանիելին։ Նրա բոլոր թշնամիներն ասում են, թե նա էր, որ այդտեղ շահի ձեռքը տվեց Դանիելին։ Սակայն և Դանիելն ինքն է այսպես պատմում եղելությունը. «Մինչ դուք գնացիք ի Մնացորդացն միաբանից և զմեզ Դաւիթն առեալ եբեր ի սուրբ աթոռն վասն զպլատեան հեղաշուք և քաղցրաբարոյ շահին, որ և եկն զմեզ առեալ տարաւ ընդ յառաջ որ և ամենայն զօրք խնդրեալ հարցանէին թէ ո՞րն է Շփեխտատի խալիֆայն»[2]։ Այս վկայությունը ցույց է տալիս, որ այդ միջոցին, քանի որ ռուսական վտանգն հեռացել էր, Դավիթը Դանիելին պահում էր իրեն հավասար պատվով։ Եվ Դանիելը շարունակում է. «Ի շաբաթ երեկոյին շահն ի շրջիլն ընդ աստիճանօք սրբոյ եկեղեցւոյն եկեալ կանգնեցաւ յաստիճան սրբոյն Ստեփաննոսի հիւսիսահայեաց արտաքին կողմանցն և զիս կոչեալ ասաց, թէ դու ի՞նչ ասացիր Իրանու շահն թողիր և Ըռուսէն ֆերման առիր։ Ասացի, թէ չեմ համարձակ ընդ քեզ խօսելոյ, երկու քեթխուդայից հրամայես գալ և իմանալ որ ինչ իմ անցքս են և թէ ես Ստամպոլ խալիֆայ էի թողի և եկի զի այս կռիւքս մի՛ լիցին, 11 ամեայ այս աթոռոյս ծառայեալ եմ և երեվանցի եմ, ի՞նչ կասեմ, որ Երևանու շահն չեմ ուզեր։ Ասաց թէ քեզ պիտի սպանել, Դաւիթն իբիչայ արար բաշխեցի, որպէս և ի մօրէն խրատեալն առ Յօհաննէս»[3]։ Շահը Դանիելին աքսոր ուղարկեց Թավրիզ, ուր նա պիտի մնար մինչև շահի վերադարձը։ Այստեղ նա բանտարկվեց նույն այն բանտում, ուր փակված էր Մելիք Աբովի որդի Ռոստոմ բեկը։ Թավրիզ գնալուց հետո, շահը Դանիելին աքսորեց Մարաղա քաղաքը։ Լսելով Դանիելի աքսորը, Ցիցիանովը ճարահատյալ մի քայլ արավ, որ կարող էր արդարացնել միայն նրա սատրապական հասկացողությունը։ Այդ միջոցին Թիֆլիսում էր գտնվում դավթական կուսակցության պարագլուխներից մեկի, Մելիք Աբրահամի որդին, որին և բանտարկեց Ցիցիանովը մինչև որ կազատվեր Դանիելը։

Ֆաթալի շահն էջմիածնում մնաց երեք օր, և արդյունքը միմիայն Դանիելի աքսորը չէր, այլ ավելի մի կարևոր քաղաքական ձեռնարկություն ևս։ Այստեղ էր, անշուշտ, որ Դավիթ կաթողիկոսը, Ֆաթալի շահի հետ խոսակցելիս, խորհուրդ տվեց նրան դաշնակցություն կնքել Նապոլեոն կայսրի հետ։ Այս մասին չոր և հակիրճ տեղեկություն գտնում ենք միայն ֆրանսիական աղբյուրների մեջ[4]։ Մանրամասնությունները հայտնի չեն, բայց մենք, երևի, հեռու չենք լինի ճշմարտությունից, եթե ընդունենք, որ Դավիթը լավ տեղյակ էր այդ ժամանակ Եվրոպայում տեղի ունեցող քաղաքական անցուդարձին, արդեն գիտեր, թե ինչ է Նապոլեոնը մասնավորապես Ռուսաստանի վերաբերմամբ։— Նապոլեոնն արդեն ծանոթ էր շահին իր այն հաղթություններով, որ տարել էր

1 «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Է, եր. 444։

2 Անդ, եր. 371։

3 Անդ։ .

4 H. Castonnet des Fosses, Les Relations de la France avec la Perse, Angers, 1889, էջ 33. Տե՛ս և R. Quarré de Verneuil, Napoleon Ier et la Perse, Paris, 1904, p. 6

նա Եգիպտոսում։ Դավիթն ավելացրեց այդ ծանոթության վրա նաև տեղեկություններ Ֆրանսիայի ձեռք բերած նոր քաղաքական դիրքի և զինվորական ուժի մասին։ Եվ կաթողիկոսի այդ բոլոր տեղեկություններն ու խորհուրդները գալիս էին լավագույն կերպով համապատասխանելու այն տրամադրություններին և հաշիվներին, որոնք շարունակ խոսում էին Իրանի տիրոջ մեջ։ Սկսած այն օրից, երբ նրա ձեռն անցավ շահերի գահը, ամենագլխավոր հոգսը նրա համար դառնում էր այն մեծ վտանգը, որ գալիս էր հյուսիսից՝ մարմնացած ռուսական անընդհատ և հետևողական նվաճող շարժման մեջ։ Վրաստանի գրավումն այնպիսի մի հարված էր, որ մոռանալ չէր կարելի։ Պարսկական այս մեծ և բերրի նահանգի բախտին պիտի հետևեին և մյուս պարսկական նահանգները Կովկասյան լեռների հարավային կողմերում։ Ֆաթալի շահն իր ձեռքում եղած միջոցները չէր խնայում ռուսներին կանգնեցնելու համար։ Այդ նպատակով էր, որ նա թողեց Սպահան հին մայրաքաղաքը և տեղափոխեց իր արքունիքը Թեհրան իբրև մի տեղ, որ ավելի մոտիկ էր պետության հյուսիսային, պաշտպանության այնքան կարոտ, սահմաններին։ Սակայն շահի համար պարզ էր, որ Իրանը մենակ, իր ուժերով, չպիտի կարողանա դիմադրել Ռուսաստանին։ Ուստի և նա որոնում էր դաշնակիցներ և պաշտպաններ։ Եվ ամենից առաջ նրա հայացքն, իհարկե, ուղղվում էր դեպի իր հարավարևելյան հարևանը, դեպի Հնդկաստան, ուր հաստատված էր Անգլիան։ Բրիտանական կառավարությունը համաձայնություն տվեց պաշտպանողական դաշնակցության մեջ մտնելու Պարսկաստանի հետ, բայց, հավատարիմ մնալով իր գիշատիչ քաղաքականության, դրեց այնպիսի պայմաններ, որ շահն ստիպված էր փախչել այդ դաշնակցությունից։ Անգլիացիներն իրենց աջակցության փոխարեն պահանջեցին մի քանի նավահանգիստներ Կասպից ծովի վրա և Պարսից ծոցում։ Շահը մերժեց այդ առաջարկը։ Եվ այս դրության մեջ, բնականաբար, նրա համար շատ գնահատելի պիտի լիներ Դավիթ կաթողիկոսի ցուցմունքը, և նա որոշեց այժմ էլ Անգլիայի մեծ ախոյան Ֆրանսիայի պաշտպանությունը որոնել։ Պարսկաստան վերադառնալուց հետո նա այլևս չուշացրեց իր մտքի իրագործումը և նամակ գրեց Նապոլեոնին, առաջարկելով նրան դաշնակցություն կնքել։ Նամակը նույն 1804-ի դեկտեմբերին հասցվեց Կ. Պոլիս՝ ֆրանսիական դեսպանին, իսկ 1805-ի հունվարին Նապոլեոնի ձեռքին էր։ Իր փայլուն հաղթությունների հետևանքով նոր միայն (գրեթե կես տարի առաջ) Ֆրանսիայի կայսր հռչակված Նապոլեոնն այդ միջոցին մեծ նվաճողական ծրագրի վրա էր, ուր նրա դեմ կանգնած թշնամիներն էին Անգլիան, Ավստրիան և Ռուսաստանը։ Պարսկական դաշնակցության գաղափարն իսկույն գրավեց նրան այդ մտածմունքների մեջ։ Պարսկաստանը հարձակվում է Ռուսաստանի վրա թիկունքից, Պարսկաստանը՝ ճանապարհ դեպի Հնդկաստան, ուր միայն կարելի է խորտակել անգլիական զորությունը. այս բոլորը հաստատ տեղ բռնեցին հանճարեղ զորավարի նկատառումների մեջ, և նա իսկույն երկու առաքելություն է ուղարկում Պարսկաստան՝ իր պատասխանը տանելու և շահի հետ բերանացի բանակցելու համար։ Այդ դեսպաններից մեկը, հայտնի արևելագետ Ամեդե Ժոբերը, ճանապարհ ընկավ նույն 1805-ի փետրվար ամսին։ Այսպիսով սկսվում են շատ եռանդուն փոխհարաբերություններ ֆրանսիական և պարսկական կառավարությունների մեջ, որոնք, ինչպես կտեսնենք, ի վերջո հանգում էին ֆրանս-պարսկական պաշտպանողական և հարձակողական դաշնակցության։

Ցիցիանովի ձեռնարկած երևակայական արշավանքի հետևանքները դեռ երկար պիտի ծանրանային հայ ժողովրդի վրա։ Առայժմ, 1804-ի դեպքերի նկարագրությունը վերջացրած լինելու համար, հիշատակենք, որ ռուսաց զորքի

Թիֆլիս և շահի Պարսկաստան վերադառնալը, ինչպես նաև Դանիելի աքսորը Մարաղա, չմարեցին այն դժբախտ և կործանարար կռիվը, որ բոլորված էր կաթողիկոսական գահի շուրջը։ Հենց որ լռեց պատերազմական ժխորը, նորից խոսել ու վիճել սկսեցին դանիելականները։ Ամենից շատ աղմուկ հանեց Գևորգ Խուբյանը, որ թեև այնքան նեղություններ էր կրել իր սաստիկ ռուսասիրության համար, բայց դեռ, ինչպես երևում է, չէր խրատվել։ Պատճառ բռնելով իր առած տեղեկությունները՝ իբր թե Դավիթը մտադիր է վերցնել Էջմիածնի հարստություններն ու սրբությունները և փախչել Բայազետ, նա եռանդոտ դիմումներ է անում Մահմադ խանին և սաստիկ բողոքելով, պահանջում է, որ արգելվի Դավթի այդ դիտավորությունը։ Մոլի դանիելականը միանգամայն արդար էր համարում, երբ Էջմիածնի վանքը կողոպտողները Դանիելը, դանիելականները կամ հենց ռուս զինվորներն էին, և կուրծք էր ծեծում, երբ Դավիթն էր ձեռք տալիս այդ հարստություններին։ Բայց թուրքերն էլ երեխաներ չէին, որ Խուբյանին ներեին այժմ էլ շարունակել իր դերը, որ, ինչպես գրում է ինքը Խուբյանը, որակվում էր իբրև «դավաճան և մատնիչի դեր»։ Եվ սկսվեց տրտունջը հատկապես նրա և նրա համախոհ Գաբրիել յուզբաշու դեմ։ «Պարսիկները,— գրում է հենց ինքը Խուբյանը,— իմանալով, որ նորից աշխատում էին զինել ռուսներին նրանց դեմ, առիթ էին որոնում մեր արյունով կշտանալու։ Բայց ամենից շատ թշնամություն ունեին ինձ դեմ և Գաբրիել հազարապետի դեմ և, համաձայնվելով ոչնչացնել մեր ժողովուրդը, չէին համարձակվում սկսել այդ բանը բացարձակորեն»[1]։ Մահմադ խանը ցավ հայտնելով, որ կրքերը նորից գրգռվում են, հրամայեց Խուբյանին անմիջապես, իր ամբողջ ընտանիքով, հեռանալ Երևանից և գնալ Թիֆլիս։ Խուբյանը ստիպված է լինում կատարել այդ հրամանը ցուրտ ձմռանը և հասնում է Թիֆլիս, ուր և բնակություն է հաստատում։ Ցիցիանովը նոր էր վերադարձել օսերի երկրից, ուր ճնշել էր ապստամբությունը։ Կատարելով Մահմադ խանի հանձնարարությունը, Խուբյանը դիմումներ է անում նրան և ազատել է տալիս Մելիք Աբրահամի որդուն բանտից։

9. Ղարաբաղ, Շաքի, Շորագյալ։ Երևանյան արշավանքի անհաջողությունը չէր կանգնեցնում ռուսական նվաճողության տարածումը։ Ցիցիանովը, ընդհակառակն, ավելի մեծ եռանդ էր գործադրում այդ ուղղությամբ, աշխատելով վարձատրել այդ անհաջողությունն այնպիսի գործերով, որոնք պիտի մոռացնեին նրան։ Եվ իրավ, 1805 թվականի առաջին կեսը բերում էր Ռուսաստանին երեք կարևոր և մեծարժեք և, որ ամենագլխավորն է, անարյուն նվաճումներ։ Ղարաբաղի և Շաքիի խանությունները, անունով պարսկական, բայց իրապես անկախ մեծ նահանգներ, և Շորագյալը, որ Երևանի խանությանն էր պատկանում։

Գանձակի անկումը հերթական էր դարձնում և նրա երկու հարևանների՝ Ղարաբաղի և Շաքիի գոյության հարցը։ Կարևոր էր մանավանդ Ղարաբաղը, որ բացի իր բնական հարստություններից՝ ուներ Ռուսաստանի համար ռազմագիտական առաջնակարգ նշանակություն, քանի որ այդ երկիրը, հարավում սահման ունենալով Արաքս գետը, կազմում էր մի նախադուռ՝ Պարսկաստանի Ադրբեջան նահանգը մտնելու համար։ Ղարաբաղի մայրաքաղաքը Շուշին էր, մի շատ ամուր և ընդարձակ բերդ, որ կանգնած էր դեպի Արաքսի վրա շինված հին հռչակավոր Խուդափերին կամուրջը տանող ճանապարհների վրա և կարող էր այսպիսով դառնալ հենարան Ադրբեջան արշավելու համար։ Ղարաբաղի խանն էր Իբրահիմ խանը, արդեն 85 տարեկանին հասած, բայց

[1] Хубов, с. 102.

գեռ շատ առույգ, ուժեղ և վերին աստիճանի ճարպիկ մի մարդ։ Ռուսներին նա վաղուց էր ճանաչում, շատ անգամ էր կարողացել խաբել նրանց իր դիվանագիտական խաղերով և այդպիսով հաղթել նաև հայերին, որոնք իրենց ազգային տիրապետական իրավունքները պաշտպանելու դիտավորությամբ, ինչպես տեսանք 18-րդ դարի պատմության մեջ, այնքան անվերապահ միամիտ հավատով անձնատուր էին եղել ռուսներին։ Ցիցիանովի հափշտակողական քաղաքականությանը ծանոթանալուց հետո, Իբրահիմ խանը, ինչպես տեսանք վերևում, պաշտպանողական դաշն կապեց իր վաղեմի թշնամու Գանձակի Ջավադ խանի հետ, մի միություն, որ չկարողացավ փրկել Գանձակի խանությունը ռուսական նվաճումից։ Ցիցիանովը, Գանձակը վերցնելուց հետո անմիջապես առիթ ուներ Շուշու ծերունի խանին էլ ճաշակել տալու իր սպառնական և անհաբեկիչ պահանջները։ Գանձակի խանության բնակիչները՝ հայերն ու թուրքերը, պաշտպանելով իրենց ստացվածքը ռուսների՝ դեպի Գանձակ կատարած արշավանքի միջոցին, քշել անց էին կացրել իրենց տավարն ու ոչխարը Ղարաբաղը, իբրև մի բարեկամ և դաշնակից երկիր, որ դեռ անմիջական վտանգի չէր ենթարկվել։ Ահա այդ հոտերի վերադարձումն էր նա պահանջում Իբրահիմ խանից 1804 թ. հունվարի 8-ին գրած իր նամակով.

«Քիչ չեմ զարմանում ես,— ասում էր նա նամակի մեջ,— որ ես մի ամսից ավել է ինչ գտնվում եմ այստեղ ռուսաց բարձրափառ և անհաղթելի զորքերի հետ, և արդեն 6 օր է անցել, որ բերդը Ջավադ խանի համառության և կատաղության պատճառով գրոհով է վերցված, իսկ նա իր Հուսեին Ղուլի աղա որդու և 1500 մարդկանց հետ ընկել է ռուսական սվինից, իսկ դուք, գտնվելով այդքան մոտիկ հարևանության մեջ և պարտավոր լինելով որոնել ուժեղի հովանավորությունը, մարդ չեք ուղարկում ինձ ողջունելու։ Ջավադ խանի հպարտությունը լվացվեց արյունով և ես նրան չեմ խղճում, որովհետև հպարտներին Աստված է հակառակվում. բայց ափսոսում եմ նրանց, որոնց նա ենթարկել է իր վիճակին։ Ես հույս ունեմ, որ ձեր բարձրաստիճանությունը չեք կամենա նմանվել նրան և կհետևեք ընդհանուր կանոնին, որով թույլը հպատակվում է ուժեղին, և չի երազում չափվել նրա հետ։ Ռուսական ուժը և նրա կառավարության հեզությունը բավականաչափ արդեն հայտնի են այս կողմերին։ Եվ այսպիսով ձեզ է մնում ընտրել լավագույն ճանապարհը»։ Բացի Գանձակի երկրի հոտերի վերադարձնելու պահանջից՝ Ցիցիանովը պահանջում էր նաև, որ Իբրահիմ խանը վերադարձնե Վարանդայի Մելիք Ջումշուդի որդի Բեհրամին և Թոռն Աստվածատուրին, որոնք գտնվում էին նրա մոտ, պատճառաբանելով որ մելիքն արդեն մշտապես հաստատվել է Վրաստանում և ռուսաց հպատակ է։ Այս նամակը նա վերջացնում էր բացարձակ հրավեր կարդալով խանին. «Վերջապես,— գրում էր նա,— բաց անելով ձեր առջև ճանապարհ դեպի մեր մեծ և Աստուծով բարձրացված թագավոր կայսրի հովանավորությունը, կսպասեմ ձեզանից լիազորված անձին կամ թե ձեր որդիներից մեկին՝ որոշելու համար այն կանոնները, որոնցով դուք կարող եք ընդունված լինել»[1]։

Թե ինչ պատասխանեց խանը, մենք չգիտենք։ Բայց որ այդ պատասխանը լիքն էր խուսափումներով, երկդիմության և խորամանկության խաղերով, այդ կարելի է հետևեցնել այն բարկությունից, որ պարսկական սատրապը պատճառել էր ցարական սատրապին, հարկադրելով այս վերջինիս շարել թղթի վրա իրեն հատուկ հայհոյանքները։ Ահա ինչ էր նա ասում խանին. «Ձեր նամակը իր մեջ չէ պարունակում գործի և ոչ ամենափոքրիկ էությունը, բայց որ լիակա-

[1] «Акты...», II, № 1416.

տար կերպով արտահայտում է պարսկական խորամանկ ոգու պատկերը. ես ստույգ. ո՛չ բերանացի հայտարարությունները, ոչ (ինչպես դուք արել եք) այն գրավոր հրահանգները, որոնք տրված են Միրզա Մահմեդ Ալիին առանց ստորագրության և կնիքի, չեմ ընդունում, և դուք այդպիսի պարսկական քաղաքականության համար հատուցում կտաք ձեր արյունով, ինչպես Ջավադ խանը։ Ձեր հնազանդությունն ու հպատակությունը չեմ ուզում և չեմ ուզեցել, քանի որ ես ձեր պարսկական հավատարմության վրա այնքան հույս ունեմ, որքան կարելի է ունենալ քամու վրա. այլ ես պահանջել եմ Գանձակի անասունների վերադարձումը, և սպասեցեք Նովրուզին, սպասեցեք Բարախանի օգնության, իսկ ես ժամանակին առանց սպասելու ձեզ կայցելեմ։ Ես գիտեմ, որ քանի կանգնած էի Գանձակի տակ, դուք դողում էիք իբրև տերևը ծառի վրա և այսպես չէիք պատասխանի. ես գիտեմ որ մինչև Գանձակի տակ իմ գալը՝ իբրև վախկոտ նապաստակ և շողոքորթ աղվես, դուք մարդ էիք ուղարկում Շամշադինի մելիքով Անդրոնիկովի մոտ. այն ժամանակ դուք չէիք համարձակվում այն ոճով խոսել, ինչպես այժմ եք խոսում, համարելով ինձ այդ տեղերից հեռացած։ Բայց հավատացեք ինձ, որ Գանձակի զորքն էլ բավական է ձեզ միանգամայն խորտակելու համար. հավատացեք ինձ, որ ձեր բերդի անառիկությունը ռուսների համար հեշտ կլինի. այդ կտեսնեք իրոք իր ժամանակին. այդպես էլ Ջավադ խանն էր ասում մինչև որ ճաշակեց հողը։ Ես իմ խոսքը պահել գիտեմ։ Լսվա՞ծ բան է աշխարհի վրա, որ ճանճը բախվի արծվի հետ. ուժեղին հատուկ է հրամայել, իսկ թույլը ծնվել է նրա համար, որ հպատակվի ուժեղին»։ Եվ վերջանում էր այս ահեղ նամակը հետևյալ խոսքերով. «Հրավիրում եմ ձեզ ապաշավության և ոչ թե հպատակության.— նա ինձ հարկավոր չէ և եթե ուզում եք լինել կենդանի ու հանգիստ, այս նամակի մեջ իմ պահանջը կատարեցեք»[1]։

Իբրահիմ խանը չկատարեց, և Ցիցիանովը դիմեց սպառնալից գործին։ Նա հրաման տվեց գնդապետ Կարյագինին, որ Գանձակը գրաված 17-րդ եգերյան գնդի հրամանատարն էր, մի պատժիչ զորամաս ուղարկել Ղարաբաղ պահանջվող հոտերն ուժով ետ դարձնելու համար։ Այս գործը Կարյագինը հանձնեց մայոր Լիսանևիչին, որ մի խիզախ և ձեռնարկու մարդ էր և հենց այդ պատճառով ժողովրդի մեջ ստացել էր «Դալի մայոր» (գիժ մայոր) անունը։ Լիսանևիչը մի փոքրիկ զորաբաժնով արշավանքի գնաց, բայց ղարաբաղցիները, տեսնելով նրան, կարողացան բոլոր հոտերն ու երամակները քշել սարերը։ «Գիժ մայորը», ձեռնունայն մնալով, մտածեց վրեժ հանել Իբրահիմ խանից ուրիշ եղանակով։ Եթե հայ ժողովուրդը Ցիցիանովի համար ուներ որևէ արժեք, այդ միայն իբրև երկրագործ ժողովուրդ, որով պետք է բնակեցնել դատարկ տեղերը, մանավանդ երբ այդ տեղերը հեռու էին նրա հայրենիքից։ Այսպես էլ ահա Գանձակը բնակեցնելու համար նա հարկավոր էր համարում ունենալ հայեր, որոնց նա նայում էր իբրև պատրաստ նյութի, որ կարելի էր այս ու այն կողմ շպրտել՝ հողեր մշակելու և հաց բուսնելու համար։ Մայոր Լիսանևիչը, տեղյակ լինելով իր մեծավորի այս հայացքին, իր անհաջող արշավանքից վերադառնալիս քշեց տարավ 250 ղարաբաղցի հայ ընտանիքներ, որոնք և բնակեցվեցին Գանձակի արվարձանում։ Դարձյալ ուրեմն, Ղարաբաղի հայությունն էր հարվածվում իշխողների քմահաճույքները բավարարելու համար։

Սակայն Ղարաբաղի թուրքերն անպատասխան չթողին Լիսանևիչի այս արշավանքը։ Ապրիլ ամսին, երբ ռուսական գնդերին պատկանող ձիաների երա-

[1] «Акты...», II, № 1418.

մակն արածում էր Գանձակից տասը վերստ հեռավորության վրա, երևաց Ղարադաղից եկած մի խոշոր հրոսախումբ, որ, անկասկած, մտադրություն ուներ քշել տանել այդ երամակը։ Կարյագինն այդ ելուզակների դեմ ուղարկեց 50 կազակներից և 10 հայերից բաղկացած մի խումբ, որ կռվի բռնվեց հափշտակիչների հետ։ Ռուսների կողմից երեք սպա, քսան կազակ և երկու հայ թրակոտոր եղան։ Մնացածները ցրվեցին։ Երկու-երեք շաբաթից հետո կրկնվեց նույն արշավը Ղարադաղի կողմից, այս անգամ ավելի ևս հանդուգն կերպով. հրոսակը քշեց տարավ արվարձանի պատերի տակ արածող 290 գլուխ ձին։ «Գործերը բարդանում էին,— ասում է ռուս պատմագիրը,— մինչև այդ խաղաղ սահմանի վրա ստեղծվում էր պատերազմական գործողությունների մի նոր բեմ, որ առավել վտանգավոր էր այն պատճառով, որ պարսիկները պատրաստվում էին արդեն մտնել Ղարաբաղ և գրավել Շուշին իրենց զորքով»[1]։

Եվ իրավ, ինչպես տեսանք վերևում, 1804-ի գարնանը սպասվում էր, որ պարսից բանակի մի մասը Ղարադաղի կողմից կմտնե ուղղակի Ղարաբաղ։ Այս հանգամանքը հարկադրում էր Իբրահիմ խանին բռնել քաղաքական նոր գիծ։ Եթե պարսկական զորքը մտնե Շուշի, ամենից առաջ նա՝ խանը և իր ընտանիքը պիտի նրա վրեժխնդրության զոհ դառնա, քանի որ ոչ ոք դեռ չէր մոռացել, թե խանն Աղա Մահմադ խանի անհաշտ թշնամին էր, և հենց նա էր պատճառը, որ անհարկու ներքինի շահը գնաց Շուշի և այնտեղ սպանվեց։ Եվ երկյուղը հարկադրում էր խորամանկ խանին չվատացնել հարաբերությունները ռուսների հետ, որոնք որոնում էին իր հպատակությունը, հետևաբար, ինչ էլ եղած լիներ մինչև այդ, դարձյալ կպաշտպանեին իրեն վտանգի ժամին։ Ուստի նա եռանդուն միջոցներ ձեռք առավ, որ այլևս ասպատակային խմբեր չանցնեն Գանձակի հողը և խաղաղություն հաստատվի սահմանագլխի վրա։ Այսքանն, իհարկե, բավական չէր, և Իբրահիմ խանը դիմեց Ցիցիանովին քծնողական մի նամակով, որի մեջ խնդրում էր իրեն պաշտպանել պարսիկներից։ Եվ Ցիցիանովը քծնողական մի ուրիշ եղանակով պատասխանում էր նրան մայիսի 26-ին։ «Թեև ձեր վարքագիծը չէ համաձայնվում այն նամակի հետ, որ ինձ հանձնեց Իսրաֆիլ բեկը,... և ինձ հարկավոր չէր ձեզ պաշտպանել պարսիկներից, որոնք իրենց սովորությամբ կհանեին ձեր աչքերը կամ կկտրեին քիթն ու ականջները, թեև, կրկնում եմ, հարկավոր էր, որ ես տայի ձեզ նրանց ձեռքը և հետո խլեի Շուշին նրանց ձեռքից. բայց նմանվելով իմ ամենաողորմած և աստուծով բարձրացված թագավորների թագավորի և կայսրի անսահման գթասրտությանը, իմ թագավորի, որ օրվա կարմիր արևի նման տաքացնում է, կերակրում է, բարերարում է և լուսավորում է նրանց բոլորին, որոնք ուզում են նրանով հրճվել, հայտարարում եմ ձեզ ամենապայծառագույն և ամենակարող թագավոր կայսրի և համայն Ռուսաստանի ինքնակալի, սրբազան, բարձրահռչակ և փառավորագույն անունով, որ նա բարեհաճում է շնորհել ձեզ ներում բոլոր անցածի համար, ամեն ինչ մոռացության տալով, ընդունելով ձեզ համառուսական երջանիկ հպատակության մեջ, այն պայմանով, որ ձեր բարձրաստիճանությունը 1) պահպանեք անխախտելի հավատարմություն, 2) հաստատեք այդ երդումով իմ ուղարկած պաշտոնյայի առջև, 3) տաք բերդը զորքի բնակության համար, 4) պատանդ տաք ձեր ավագ որդուն և 5) հպատակություն ցույց տալու համար տվեք 10 հազար ոսկի։ Ի փոխադարձություն այս բանի, ամենապայծառափայլագույն, ամենակարող մեծ թագավորը հաստատում է ձեզ և ձեր տոհ-

[1] «Утвержд. рус. влад. на Кавк.», I, с. 132.

մը ժառանգաբար խանական կոչումի մեջ բարձրագույն հրովարտակով, բոլոր իրավունքներով և առավելություններով։ Եթե համաձայն եք այս բոլորին, շտապեցեք ինձ հաղորդել, ես ձեր երդումն ընդունելու համար կուղարկեմ պաշտոնյա, իսկ դուք միևնույն ժամանակ կուղարկեք ձեր որդուն և նրա հետ՝ ձեզ հավատարիմ մի մարդու, որի առջև ես կտամ հավաստիացումներ, որոնք պատշաճավոր են այս որոշումը պահպանելու համար, և կուղարկեմ ձեզ մոտ զորք թնդանոթներով։ Ես խոսք պահել գիտեմ, երբեք սուտ չեմ խոսել և երդվում եմ ամենակարող Աստծով, որ ձեզ համար չկա բարօրության մի ուրիշ ճանապարհ, և որ դուք երջանիկ կլինեք, միայն թե հավատարիմ մնաք։ Վերջապես կրկնում եմ, որ բերանացի խոսք չպիտի ընդունեմ և պահանջում եմ, որ ամեն ինչ լինի գրավոր»[1]։

Սակայն Իբրահիմ խանը բավականաչափ ասիացի էր իբրև երկրի տեր, որ այնքան հեշտությամբ զրկվեր իր անկախությունից և ընդուներ Ցիցիանովի փառաբանած ռուսական հպատակությունը։ Իր խոստումների և խընդիրքների հետ նա աչք էր ածում դեպի պարսիկների կողմը, որոնց շարժումներն էլ թելադրում էին նրան գործողության այս կամ այն եղանակը։ Երբ պարզվեց, որ պարսկական ամբողջ բանակը պիտի գործե Երևանի կողմերում, 80-ամյա խանի հպատակական ջերմեռանդությունը Ռուսաստանի վերաբերմամբ սկսեց թուլանալ մինչև այն աստիճան, որ Ցիցիանովը պատասխան չստացավ նրանից և այդպես էլ վերկացավ և Երևանը առնելու գնաց։ Զգձգումների քաղաքականությունը լավագույն կերպով պահպանեց խանին պատահականություններից և այն առավելությունն էլ ունեցավ, որ Կովկասի ցասկոտ կառավարչապետը մեղմացավ, մոռանալով իր առաջին երկու կասաղի նամակները և սովորելով փոքր ի շատե վայելուչ մարդկային լեզվով խոսել։

Երևանից վերադառնալուց և Վրաստանի շարժումները ճնշելուց հետո Ցիցիանովը վերանորոգեց բանակցությունները Ղարաբաղի խանի հետ, հատուկ մարդ ուղարկելով Շուշի և հանձնարարելով նրան համոզել, որ խանն ընդունե ռուսական պահանջները։ Այս առիթով Ցիցիանովը 1804 թ. դեկտեմբերի 30-ին գրում էր Ալեքսանդր կայսրին. «Թիֆլիսում ինձ սպասում է Շուշու խանի դեսպանը։ Երևանից վերադառնալուց հետո ես նրա մոտ ուղարկեցի վրաց ազնվական Նինիա Ջորաևին... որպեսզի նա ներշնչե Իբրահիմ խանին, թե ինչ բարօրություն կհաստատե նա թե իր ընտանիքի մեջ և թե ժողովրդի մեջ, որը ցրել է հանգուցյալ Աղա Մահմադ խանն իր երկրորդ գալստյան ժամանակ, երբ հենց ինքն էլ սպանվեց այդտեղ։ Այս 80-ամյա ծերունին, այսինքն՝ Իբրահիմ խանը, մինչև այդ ժամանակ ուներ մոտ 60 հազար տուն միայն ղարաբաղցի հայեր, որոնք կառավարվում էին հինգ ամենաբարետոհմիկ մելիքների ձեռքով, որոնցից ոմանք, ինչպես կարծում եմ, հիմարությամբ իրենց ծագումը բերում են Հին Հայաստանի թագավորներից, իսկ այժմ 4 հազար տանից ավելի չկա. մնացածները Շամախու և Շաքիի խաների մոտ են, նույնպես Վրաստանում։ Առաջին երկու երկրներից, հենց որ Ղարաբաղը կապահովվի ռուսական զորքերով, ամենքն անկասկած կարճ միջոցում կվերադառնան, և Ղարաբաղը կծաղկի առաջվա պես»[2]։

Բանակցությունները Շուշում դանդաղ էին առաջ գնում, ուստի Ցիցիանովը 1805 թ. հունվարի 16-ի իր հրամանագրով առաջարկում էր մայոր Լիսանևիչին ճանապարհվել Շուշի և իր ձեռքն առնել այդ գործը, հանձնելով

[1] «Акты...», II, № 14[illegible]0.
[2] «Акты...», II, № 1240.

Իբրահիմ խանին իր նամակը, որի մեջ գրված էին հպատակության պայմանները: Մայորը պիտի ներշնչեր խանին, որ նա ընդունե բոլոր պայմանները առանց որևէ բան պակասեցնելու: Համաձայնության դեպքում պետք է պայմանավորվել, թե ուր պիտի ստորագրվի դաշնագիրը երկու կողմերից: Ցիցիանովն առաջարկում էր, որ խանը դրա համար գնա Գանձակ, ուր կճանապարհվեր և նա ինքը՝ տեսակցության համար: Փետրվարի 8-ին Լիսանևիչը հասավ Շուշի և տեսավ որ Իբրահիմ խանն այդտեղ չէ, այլ գնացել է Արաքսի ափը՝ ճնշելու համար այն ապստամբությունը, որ հարուցել էր նրա որդիներից մեկը, Աբդուլֆետ աղան: Թողնելով իր տեղը կառավարիչ իր ավագ որդուն, Մեհտի Ղուլի աղային, խանը նրան հանձնարարել էր, որ եթե ռուսաց պաշտոնյա գա, անմիջապես իրեն իմաց տրվի: Այդպես էլ արվեց, և Իբրահիմ խանը շտապեց վերադառնալ Շուշի՝ բանակցությունների համար: Այս մի հանգամանքը միայն բավական էր ցույց տալու համար, թե Ղարաբաղի խանն այս անգամ անկեղծորեն ցանկանում էր վերջացնել հպատակության հարցը: Եվ այս հասկանալի էր: Նրա որդին Աբդուլֆետ աղան շահի արքունիքում պատանդ էր եղած, այժմ եկել էր ապստամբություն հարուցանելու իր հոր դեմ հենց այն պատճառով, որ նա թեքված էր ռուսների կողմը և ուզում էր հպատակվել նրանց: Այս ցույց էր տալիս, որ Պարսկաստանն արդեն ուշադրության առանձին առարկա էր դարձրել Ղարաբաղը: Ֆաթալի շահը, վերադարձնելով խանի պատանդ որդուն, հայտնում էր, թե ինքը մոռացության է տալիս անցյալը, և Իբրահիմ խանը կարող է հանգիստ շարունակել իր իշխանությունը, եթե հավատարիմ մնա Իրանին: Սակայն Իբրահիմ խանը չէր հավատում շահական հավաստիացումներին: Այս կողմից նա համարյա մենակ էր մնացել իր ազգականների և խորհրդականների մեջ: Ռուսական հպատակության հարցը քննելու համար խանը խորհրդի կանչեց իր բեկերից նշանավորներին, և նրանք, օրերով խորհրդակցելուց հետո, հայտարարեցին իրենց հակառակորդ ռուսական տիրապետության: Իբրահիմ խանն, այնուամենայնիվ, անդրդվելի մնաց իր վճռի մեջ և փետրվարի 21-ին, իր մոտ կանչելով մայոր Լիսանևիչին, հայտնեց թե ընդունում է Ցիցիանովի առաջարկած բոլոր պայմանները[1]: Գլխավոր հրամանատարն, ինչ ասել կուզի, մեծ գոհունակությամբ իմացավ այս բանը, և նրա գրությունները դարձան այնուհետև քաղաքավարի, հարգոյական, մինչև իսկ բարեկամական: Մնում էր այնուհետև որոշել Ցիցիանովի և խանի տեսակցության տեղը: Լիսանևիչին չհաջողվեց համոզել Իբրահիմ խանին, որ նա գնա Գանձակ: Ծերունին հավատացնում էր, թե պատրաստ է Թիֆլիս գնալ, բայց չէ կարող այժմ թողնել իր երկիրը, քանի որ նրա մեջ ապստամբություն կա: Վերջ ի վերջո համաձայնություն կայացավ մի տեղի վերաբերմամբ, որ Գանձակից 30 վերստ հեռավորության վրա էր գտնվում — Քյուրակ չայ գետը, որ սահմանագլուխ էր երկու երկրների՝ Ղարաբաղի և Գանձակի միջև:

Այստեղ ահա, գետի ափին զարկված վրաններում, տեղի ունեցան տեսակցություններ Ցիցիանովի և Իբրահիմ խանի միջև: Ցիցիանովը բերել էր իր հետ և զորքեր: Հայերից ներկա էին Թիֆլիսի և Գանձակի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոս Գեղարդակիրը և Վարանդայի մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարյանը: Մայիսի 14-ին Ցիցիանովն ու խանը ստորագրեցին հետևյալ դաշնագիրը.

Հանուն ամենակարող Աստծու

Մենք, այսինքն՝ Շուշու և Ղարաբաղի խան Իբրահիմ և համառուսական զորքերի հետևակազորի գեներալ, Կովկասյան տեսչության ըստ հետևակազորի

[1] Дубровин, IV, с. 423.

տեսուչ և այլն իշխան Պավել Ցիցիանով ըստ լիազորության և իշխանության, որ տրված է ինձ Նորին կայսերական մեծության իմ ամենաողորմած մեծ թագավոր կայսր Ալեքսանդր Պավլովիչից, ձեռնարկեցինք, Աստծու օգնությամբ, Շուշու և Ղարաբաղի Իբրահիմ խանի՝ իր բոլոր ընտանիքով, ժառանգներով և երկրներով՝ համառուսական կայսրության և այժմ երջանկորեն թագավորող մեծ թագավոր կայսր Ալեքսանդր Պավլովիչի և նրա բարձր հաջորդների մշտնջենական հպատակության մեջ մտնելու գործին, կնքեցինք, որոշեցինք և ստորագրեցինք հետևյալ հոդվածները.

Հոդված առաջին: *Ես՝ Շուշու և Ղարաբաղի Իբրահիմ խանս, իմ, իմ ժառանգների և հաջորդների անունից հանդիսավորապես ընդմիշտ հրաժարվում եմ Պարսկաստանից կամ մի այլ պետությունից վասալական կամ առհասարակ ուրիշ որևէ տիտղոս ունեցող որևէ կախում ունենալուց և սրանով հայտարարում եմ ամբողջ աշխարհի առաջ, որ ես ինձ և իմ հաջորդների վրա չեմ ճանաչում ուրիշ մի ինքնակալություն, բացի Նորին կայսերական մեծության համառուսական մեծ թագավոր կայսրին և նրա բարձր ժառանգների և համառուսական կայսերական գահի ժառանգների գերագույն իշխանությունը, խոստանալով նույն գահին հավատարմություն, ինչպես նրա հավատարիմ ստրուկը, որի համար և պիտի երդվեմ սուրբ Ղուրանի վրա:*

Հոդված երկրորդ: *Նորին կայսերական մեծությունն, ընդունելով Նորին բարձրաստիճանության կողմից տված անկեղծ խոստումը, հավասարաչափ խոստանում՝ հուսադրում է իր կայսերական խոսքով իր և իր հաջորդների անունից շնորհն ու բարեխնամությունը Շուշու և Ղարաբաղի Իբրահիմ խանից և նրա ժառանգներից, ինչպես իրեն հավատարիմ հպատակների, երբեք չեն խլվի, որին իբրև ապացույց Նորին մեծությունը տալիս է իր կայսերական հրաշխիքը, թե Նորին բարձրաստիճանության և նրա ժառանգների ներկա կալվածների ամբողջականությունը պահպանված կլինի:*

Հոդված երրորդ: *Ի վարձատրություն այն անկեղծության, որով Նորին բարձրաստիճանություն Շուշու և Ղարաբաղի Իբրահիմ խանը ճանաչում է համառուսական կայսրների գերագույն և միակ իշխանությունն իր և իր հաջորդների վրա, որոշված է, որ հիշյալ խանը, իսկ նրանից հետո նրա ավագ որդին և այսպես շարունակ, որդոց որդի, ըստ ավագության պարտի, մտնելով խանական իշխանության մեջ, կստանան Վրաստանի կառավարչապետի միջոցով խանության կայսերական հաստատությունը և իշխանության նշանը, որ բաղկացած կլինի պետական կնիքով վավերացված հրովարտակից, և որի ստանալուց հետո նոր խանը պարտավոր է հանդիսավորապես երդվել, թե հավատարիմ հպատակ կլինի ռուսական կայսրության և թե ճանաչում է համառուսական կայսրների գերագույն և միակ իշխանությունն իբրև իր ժառանգների վրա: Իսկ երդման ձևը կցվում է այս դաշնագրին, որպեսզի և այժմ տիրող խանը, Շուշու և Ղարաբաղի Իբրահիմ խանը կատարե այդ ծեսը, ներկայությամբ Վրաստանի կառավարչապետ և այս որոշումը կայացնող՝ հետևակազորի գեներալ իշխան Ցիցիանովի:*

Հոդված չորրորդ: *Ես, Իբրահիմ խանս Շուշու և Ղարաբաղի, ապացուցելու համար, թե անբիծ են իմ դիտավորությունները իմ և իմ հաջորդների հավատարիմ հպատակության վերաբերմամբ դեպի ռուսական կայսրությունը և այդ կայսրության ամենապայծառափայլագույն տերերի գերագույն և միակ իշխանության ճանաչման նկատմամբ, խոստանում եմ առանց Վրաստանի կառավարչապետի համաձայնության չունենալ հարաբերություններ հարևան տիրողների հետ, իսկ երբ նրանցից եկան բանբերներ կամ կուղարկվեն նամակներ, այս դեպքում մեծ կարևորություն ունեցողներն ուղարկել կառավարչա-*

պետին և պահանջել նրանից լուծում, իսկ փոքր կարևորություն ունեցողները հաղորդել և խորհրդակցել այն անձի հետ, որ պիտի նշանակվի Վրաստանի կառավարչապետի կողմից ինձ մոտ մնալու համար։

Հոդված հինգերորդ։ Նորին կայսերական մեծությունը, բարեհաճությամբ ընդունելով իր ծայրագույն և միակ իշխանության ճանաչումը Շուշու և Ղարաբաղի Իբրահիմ խանի երկրների վրա, իր և իր հաջորդների անունով խոստանում է. 1) այդ երկրների ժողովուրդները համարել իբրև իր հավատարիմ հպատակներ, նույնիսկ ամենափոքր չափով չզանազանելով ռուսական ընդարձակ կայսրության մեջ բնակվողներից. 2) բարձրաստիճան Իբրահիմ խանին և նրա տան ժառանգներին և հաջորդներին պահպանել անպատճառ Շուշու խանության վրա. 3) ներքին կառավարության հետ կապված իշխանությունը, դատն ու դատաստանը, ինչպես նաև նրա կալվածների եկամուտները թողնել նորին բարձրաստիճանության կատարյալ կամքին. 4) նորին բարձրաստիճանության անձի, տան, ինչպես նաև երկրների պաշտպանության համար դնել Շուշու բերդում համառուսական զորքից թնդանոթներով 500 մարդ իրենց ավագ և կրտսեր սպաներով, իսկ եթե հարկավոր լինի ավելի մեծ պաշտպանություն, Վրաստանի կառավարչապետը պարտավոր կլինի, նայած հանգամանքներին և կարիքին, ուժեղացնել այդ զորաբաժինը և զինվորական ձեռքով նորին բարձրաստիճանության երկիրը, ինչպես պատկանող համառուսական կայսրության։

Հոդված վեցերորդ։ Ես, Շուշու և Ղարաբաղի Իբրահիմ խանս, ի նշան իմ հավատարիմ հպատակական եռանդի, պարտավորվում եմ. 1) ինչպես սկզբում, այնպես էլ հետագա ժամանակներում պատրաստել վերոհիշյալ զորքերի համար հարկավոր քանակությամբ ցորեն և ձավար, չափավոր գնով, որ կհաստատվի կառավարչապետի կողմից, որովհետև Գանձակից բերելը պիտի համարվի դժվար կամ բոլորովին անհնարին. 2) Վերոհիշյալ զորքին Շուշու բերդում տալ ապրելու համար մի տուն, ըստ ընտրության զորապետի, և տալ նմանապես վառելափայտի հարկավոր քանակություն. 3) Շուշի բերդը մտնելու ճանապարհը Գանձակի կողմից հարմար դարձնել, այնպես որ այդ ճանապարհով սայլեր կարողանան երթևեկել. 4) Ի դեպ, եթե կառավարության հաճելի լինի ճանապարհ տանել Շուշու բերդից դեպի Ջավադ, այդ բանի համար հարկավոր մշակներին վարձեմ ես այն գնով, որ կնշանակվի կառավարության կողմից։

Հոդված յոթերորդ։ Նորին կայսերական մեծությունն ի նշան իր առավել բարեհաճության և շնորհի դեպի նորին բարձրաստիճանություն՝ Շուշու և Ղարաբաղի Իբրահիմ խանը ամենաողորմածաբար շնորհում է նրան և նրա ժառանգներին դրոշակ համառուսական կայսրության զինանշանով, որ պիտի մնա նրա մոտ և նրա մահից հետո՝ տիրող խանի մոտ, իբրև խանության և իշխանության նշան, բարձրագույնս շնորհված այդ երկրների վրա և որի հետ պատերազմ դուրս գալ, եթե այս պահանջում է, ոչ ոք չէ կարող, բացի խանից։

Հոդված ութերորդ։ Ես՝ Շուշու և Ղարաբաղի Իբրահիմ խանս, ունենալով նորին կայսերական մեծության բարեհաճությունը օգտվելու իմ սովորական եկամուտներից, պարտավորվում եմ իբրև հարկ մտցնել նորին կայսերական մեծության գանձարանը, որ Թիֆլիսում է գտնվում, տարին 8000-ական ոսկի, վճարելով այդ գումարը երկու նվագ, այսինքն՝ փետրվարի 1-ին մի կեսը, իսկ մյուսը՝ սեպտեմբերի 1-ին, սկսելով առաջին կեսի, այսինքն՝ 4000 ոսկու վճարումն, երբ այս դաշնագիրը կհաստատվի նորին կայսերական մեծության կողմից, և, բացի դրանից, ըստ ասիական սովորության, պարտավորվում եմ ես, բացի հավատարմության երդումից, իբրև նրա գրավական, տալ իմ ավագ

որդի Մահմադ Հասան աղայի երկրորդ որդի Շաքար Ուլլահին մշտապես ապրելու Թիֆլիսում։

Հոդված իններորդ։ Նորին կայսերական մեծությունն ըստ իր առանձին գթասրտության շնորհում է նորին բարձրաստիճանության թոռան, որ պիտի գնա Թիֆլիս իբրև հավատարմության գրավական, օրական 10 ռուբլի, ապրուստի համար։

Հոդված տասներորդ։ Այս դաշնագիրը մշտնջենական ժամանակով է կազմվում և չպիտի ենթարկվի ոչ մի փոփոխության այժմից առմիշտ։

Հոդված տասնմեկերորդ։ Այս դաշնագրի հաստատումը նորին կայսերական մեծության հրովարտակով, որ պիտի վավերացված լինի պետական կնիքով, պետք է հասցվի 6 ամսվա ընթացքում, ստորագրության օրից կամ ավելի շուտ, եթե հնարավոր է։

Ի հաստատություն որո, ներքո ստորագրողներս ստորագրեցինք այս հոդվածները և դրինք մեր կնիքները Գանձակի շրջանի Քյուրակ գետի մոտ գտնըվող բանակում Քրիստոսի 1805 թվականի (իսկ մահմեդական տարեթվով 1220) մայիս (սաֆար) ամսի 14-ին[1]։

Յոթ օրից հետո, այս նույն պայմաններով, նույն Քյուրակ գետի բանակում, ռուսական հպատակություն ընդունեց և պայմանագիր ստորագրեց նաև Շաքիի Սելիմ խանը, որ նույնպես սաստիկ կարիք ուներ ռուսական պաշտպանության, քանի որ երկար ժամանակ վեճ էր ունեցել իր եղբոր հետ իշխանությունն իր ձեռքը գցելու համար և այդ վեճի մեջ էլ վաստակել էր այնպիսի մի հզոր թշնամի, որպիսին էր Շիրվանի Մուստաֆա խանը։ Ծանր ու անհավասար մրցություններից հետո հազիվ կարողանալով իբրև խան հաստատվել Նուխի քաղաքում, Սելիմ խանը շատ պարզ տեսնում էր, որ իր սեփական միջոցներով չպիտի կարողանա անարգել տիրել։ Եվ որովհետև Ցիցիանովը նրա մոտ էլ գործակալ էր ուղարկել, խոստանալով ամեն բարիք և փոխարենը պահանջելով միայն հպատակական երդում և հարկ, ուստի նրան ոչինչ չէր մնում, բացի այդ միակ ապահով ճանապարհով իր իշխանության մեջ հաստատվելուց։

Այս խոշոր հաջողությունները մեծ բավականություն էին բերում Ցիցիանովի պարծենկոտ ոգուն։ Հովհաննես Դեղարդակիրը գրում էր Քյուրակ չայի բանակից Աղա Մինաս Լազարյանին. «Զգալուստ մեր յառաջագոյն յանդերձ ինչ ինչ որպէսութեամբ։ Այժմ հարկաւորագոյն քան զամենայն և մանաւանդ թէ առիթ իսկ մեծագոյն ուրախութեան զայս համարեալ՝ ծանուցանեմք ձերդ մեծանձնութեան. քանզի պայծառափայլ յաղթող կուսակալ կնեազ Ցիցիանովն մինչև եկն եմուտ յԵլիսավետպօլ յանցեալ ամսոյ 21-ի կողմանս յայսոսիկ յորս լցեալ էր խառնակութեամբ, թշնամութեամբ և արեան հեղութեամբ, սփռեալ տարածեցաւ խաղաղութիւն, հաշտութիւն և հնազանդութիւն. և ամենայն թշնամիք՝ որք զբաղում չարիս և զվնասս հասուցեալ էին և հասուցանէին միշտ, առ երկիւղն ստէպ ստէպ հրեշտակութիւնս առաքեալ առ նորին պայծառափայլութիւնն խոստացան զկատարեալ հնազանդութիւն և զծառայութիւն տիեզերասաստ հզօր տէրութեանն Ռուսաց։ Ըստ որոյ ահա Իբրահիմ խանն Շուշուա հանդերձ որդւովքն իւր և մեծամեծօքն, ըստ որում Սէլիմ խանն Նուխու ամենայն խոնարհութեամբ եկեալ առ ոտս նորին պայծառափայլութեանն, ընծայեցին զերդ և զերկիրն իւրեանց հանդերձ պատանդիւք. առ որ ըստ օրինի իւրեանց երդուեալ, ետուն զյաւիտենական ձեռագիրս, և այս ամենայն իրողութիւնք եղեալ եղեն առ ափն Քիւրակ անուանեալ գետոյն (որ է

[1] «Акты...». II, с. 705.

մերձ չնլիսավետալօլ ըստ երից ժամուց ճանապարհի) յամսոյս 10-էն սկսեալ մինչև ի 21։ Վասն որոյ այսօր կամ վաղն ունին գնալ զօրքն կայսերական ի Շուշի և ի Նուխի ըստ հրամանի նորին պայծառափայլութեան»[1]։

Ուղարկելով Ղարաբաղի և Նուխու դաշնագրությունների համառոտությունն իր զորավարներին և այլ պաշտոնյաներին, Ցիցիանովը հրամայում էր, որ բոլոր եկեղեցիներում գոհացողական մաղթանքներ կատարվեն։ Իսկ Ալեքսանդր կայսրին, առանձին սուրհանդակի միջոցով ներկայացնելով Շուշու բանալիները, գրում էր մի ընդարձակ զեկուցում, բացատրելով, թե ինչ արժեք ունին նոր ձեռք բերած երկրները։ «Ղարաբաղի խանության սահմանները,— ասում էր նա,— հետևյալներն են. հյուսիսից Կուր գետով Շաքիի և մասամբ Շամախու խանությունները, արևելքից՝ այս վերջին խանությունը, հարավից Արաքս գետով մասամբ Ղարաբաղի և մասամբ Նախիջևանի խանություննրը և վերջապես արևմուտքից՝ Թարթռ գետով Գանձակի շրջանը և մասամբ Երևանի խանությունը Գոկչա կամ Սևան լճի վրայով։ Մարդավետությունը գործերի ներկա դրության մեջ շատ տարբեր է համեմատած նախկինի հետ, որովհետև միայն Աղա Մահմադ խանի արշավանքը, որից Ղարաբաղի անկման շրջանն է սկսվում, միայն հայեր գտնվում էին այդտեղ 40 հազար տուն[2]։ Ես, ունենալով պարտավորություն գրավելու մյուս խաներին, ձեր կայսերական մեծության այս նոր հավատարիմ հպատակին մտադիր եմ հովանավորել գործունյա կերպով, այս աշնան պիտի վերցնեմ Շամախու Մուստաֆա խանից Ղարաբաղի այն բոլոր բնակիչներին, որոնք փախել են այնտեղ Աղա Մահմադ խանի արշավանքից և որոնց թիվը հասնում է 8000 տան, բայց այս բռնի գրավման միջոցին կդիմեմ այն ժամանակ, երբ կհրաժարվի կատարելու իմ առաջարկությունը՝ նրանց հանձնելու մասին, իսկ եթե հարմարություն ներկայանա, Արաքսի մյուս կողմում գտնվող Ղարադաղի խանությունից էլ կվերցնեմ Ղարաբաղի բնակիչներին։— Ղարաբաղի ձեռք բերելը Ռուսաստանի համար հետևյալ օգուտներն ունի. 1) Ղարաբաղն իր տեղի դիրքով կարող է համարվել Ադրբեջան կամ, որ նույնն է, Պարսկաստան մտցնող դռներ և երկուսին էլ պիտի երկյուղի մեջ պահե։ 2) Ղարաբաղով Վրաստանը մոտենում է Բաքվին, որը մտադրություն կա գրավելու այս աշնան. 3) Երբ Սալյանում ամրություն կշինվի և Ջավադը՝ այն տեղը, ուր Կուրը միանում է Արաքսի հետ, կխլվի Շիրվանի խանից, իբրև մի տեղ, որ միշտ պատկանել է Ղարաբաղի խանին, այն ժամանակ Աստրախանից այստեղ, Ջավադ կամ Սալյան, կգան իրենց ոչինչ նշանակություն չունեցող ապրանքներով և նրանց փոխարեն կստանան Ղարաբաղից և Շամախուց մետաքս, իսկ Գանձակից՝ շիբ, որ ձեր կայսերական մեծության գանձարանի համար գնվում է այստեղ փութը 80 կոպեկով, մինչդեռ Աստրախանում ծախվում է փութը 16 ռուբլով»։ Միաժամանակ նա միջնորդում էր, որ պարգևներ շնորհվեն այն մարդկանց, որոնք մասնակցել են Ղարաբաղի հանձնման և նպաստել են այդ գործի հաջողության։ Իբրահիմ խանին նա խնդրում էր տալ գեներալ լեյտենանտի, նրա ավագ որդի Մահմադ Հասան աղային և միջնակ որդի Մեհտի Ղուլի աղային՝ գեներալ-մայորի, իսկ կրտսեր որդի Խանլար աղային բրիգադիրի աստիճաններ և ռոճիկ, ինչպես նաև շքանշաններ՝ զանազան ռուս պաշտոնյաների։ Չէր մոռանում և իր ազգական սպա Ցիցիանովին, որ Պետերբուրգ էր տարել Շուշու բանալի-

1 Ձեռագիր (հեղինակի ժողովածուի մեջ)։

2 Մի ուրիշ թղթի մեջ Ցիցիանովն, ինչպես տեսանք վերևում, Ղարաբաղի հայերի թիվը որոշում էր 60 հազար տուն։ Այս խոշոր տարբերությունը ցույց է տալիս, որ գոյություն չունեի ճիշտ և հաստատ տեղեկություն։

ները և որի համար էլ խնդրում էր կայսերական պարգև[1]։ Մոռացված մնացին միայն Ղարաբաղի հայերը։ Ցիցիանովը չէր կարող հիշել այս րոպեին նրանց գործերը որևէ լավակամ դիտավորությամբ։ Ընդհակառակն, ինչպես կտեսնենք քիչ հետո, Քյուրակ չայի ափին նա խողխողեց և թաղեց հայոց հարցը, որի վերջին շրջանը մի դարի արյունոտ և տանջալից պատմություն ուներ։

Մայիսի 22-ին, այսինքն՝ Նուխու Սելիմ խանի հետ կնքած դաշնագրության հետևյալ օրը, Ցիցիանովը գրում էր Ալեքսանդր կայսրին. «Երջանկություն ունեմ ամենահպատակորեն հայտարարելու ձեր կայսերական մեծությանը, որ իր հացավետությամբ ամենահարուստ Շորագյալի գավառը, որի բնակիչները հաճախ անհանգստացնում էին Փամբակի գյուղերն իրենց արշավանքներով, այժմ ընկած է ձեր կայսերական մեծության գարշապարի մոտ և միացված է համառուսական ընդարձակագույն կայսրության, որի համար շտապում եմ այս միացման հանգամանքների մասին ամենահպատակորեն նկարագրել ձեր կայսերական մեծության առջև այն դեպքերի կարգը, որոնք ի կատար ածեցին այդ միացումը»[2]։

Իսկ այդ դեպքերն այսպես էին դասավորված։ Մենք արդեն տեսանք, որ երևանյան արշավանքի ժամանակ ռուսները գրավեցին Արթիկ գյուղը, որ Շորագյալի (Արփաչայի արևելյան ափի Շիրակի) գլխավոր կենտրոնն էր։ Սակայն նահանգից հետո այդ երկիրը նորից անցավ Երևանի խանին, մնալով, սակայն, ինչպես առաջ էր, մի ինքնավար գավառ՝ հպատակված Բուդաղ Սուլթանին։ 1804 թ. հոկտեմբերին այս Բուդաղ Սուլթանի որդին հարձակում գործեց Փամբակի վրա և քշեց տարավ հայ գյուղացիների անասուններր։ Այդ միջոցին Ղարաքիլիսայի ռուս զորքերի հրամանատարն էր գեներալ Նեսվետաևը, որ նոր էր վերադարձել օսերի ապստամբված երկրից, ուր մեծ անուն էր հանել իր քաջարի գործողություններով։ Նեսվետաևը պահանջեց վերադարձնել տարած ապրանքը, իսկ մինչև այդ կալանավորեց 10 հատ շորագյալցիների, որոնք այդ միջոցին Փամբակում էին գտնվում իրենց առևտրական գործերով։ Ցիցիանովը հավանություն չտվեց այդ կարգադրության և առաջարկեց Նեսվետաևին արձակել կալանավորվածներին, իսկ Բուդաղ Սուլթանին հարկադրել վերադարձնել անասունները մի պատժողական արշավանքով, որի նպատակը պիտի լիներ հասնել մինչև Արթիկ՝ քանդելով պատահած գյուղերը։ Սակայն մինչև որ կպատրաստվեր այդպիսի մի արշավանք, դեպքերն ուրիշ դասավորություն ստացան Շորագյալում։ Մահմադ խանը, Երևան կանչելով Բուդաղ Սուլթանին, բանտարկեց նրան և պահանջեց փրկանք 30 հազար ռուբլի, սպառնալով, հակառակ դեպքում, զորք ուղարկել Շորագյալ՝ ժողովրդից բռնությամբ ստանալու։ Իսկ ժողովուրդը, չկամենալով վճարել այդպիսի մի մեծ գումար, դիմեց ռուսներին և խնդրեց նրանց պաշտպանությունը։ Նեսվետաևն օգտվեց այդ հանգամանքից և մի թեթև զորամասով արշավանք սկսեց այլևս ոչ թե շորագյալցիներին պատժելու, այլ նրանց Երևանի խանի բռնություններից ազատելու համար։ Արշավանքը պատրաստել կարելի եղավ միայն 1805 թվի գարնանը, և մարտի 27-ին նա սկսվեց մասնակցությամբ 250 հետևակ զինվորների։ Մարտի 30-ին Արթիկ գյուղն արդեն գրավված էր, և Բուդաղ Սուլթանի որդին ու ժողովուրդն ընդունեցին ռուսական հպատակություն, ստորագրելով առանձին պայմանագիր։ Այս էլ, ուրեմն, մի անարյուն նվաճում էր, որ Ռուսաստանի ձեռքն էր տալիս հին առասպելական Շարայի հացաշատ գավառը։ Բայց Երևանի խանը, կատարելու հա-

1 «Акты...», II, № 1436.

2 Ibid., № 1128.

մար իր սպառնալիքը, 3000 մարդուց կազմված մի զորաբաժին էր ուղարկել Շորագյալի դեմ։ Եվ այս առիթ եղավ, որ գեներալ Նեսվետաևը, չբավականանալով Արթիկի գրավմամբ, առաջ գնա՝ Երևանի զորքը ետ վանելու համար։ Այս մի քաջարի և փայլուն հարձակողական էր, որ եռանդուն ռուս գեներալը տարավ դեպի Արևելք։ Հալածելով խանական զորքը, ռուսները գրավեցին Թալին գյուղը և այնտեղից էլ առաջ խաղալով, հասան ոչ միայն Էջմիածին, այլ նույնիսկ մինչև Երևանի շրջանները, ապա էլի վերադարձան իրենց տեղերը։

Եվ այսպես, Շիրակի գրավումն ամբողջապես գեներալ Նեսվետաևի գործն էր, որ նա կատարեց իր նախաձեռնությամբ, ստանալով Ցիցիանովից միայն համաձայնությունը և իր վրա վերցնելով ամբողջ պատասխանատվությունը։ Այսպես էլ Ցիցիանովը հայտնում էր Ալեքսանդր կայսրին, խնդրելով քաջ գեներալի համար պարգև պատշաճավոր շքանշանով։

Սակայն քաղաքական անարյուն հաղթանակների մեղրալուսինը խիստ կարճատև էր։ Գարնան բացվելուն պես նորից սկսվեցին պարսկական զորքերի շարժումները ռուսների դեմ։ Դարձյալ շարժման միևնույն կարգն էր պահպանվում։ Առջևից գնում էր թագաժառանգ Աբաս Միրզան և նրա հետ էին նույն Փիր Ղուլի խան Ղաջարը և Դավիթ արքայորդին։ Փոխված էր միայն ուղղությունը։ Այս անգամ պատերազմական գլխավոր բեմ հանդիսանում էր Ղարաբաղը։ Ֆաթալի շահն, իհարկե, մոռանալ չէր կարող Իբրահիմ խանի բանակցությունները ռուսների հետ, որոնք բերին հասցրին Քյուրակ չայի դաշնագրությանը։ «Մահմեդական հավատի մատնիչ և անօրեն,— գրում էր նա խանին։— Ինչպես դու կարողացար ինքնագլուխ քեզ տալ ռուսների ձեռքը»[1]։ Սակայն անհրաժեշտության և անողոք պատժի զգացմունքով չէր, որ շահը գնում էր Ղարաբաղի վրա։ Միաժամանակ նա աշխատում էր գրավել ծերունի խանին իր կողմը, պատրաստականություն հայտնելով անցյալը մոռանալու և խանին իր իրավունքների մեջ պահելու։ Եվ պետք է ասել, որ միանգամայն ապարդյուն չէր անցնում հավաստիացումների եղանակը։ Իբրահիմ խանը մի ամենակարճ ժամանակում սկսեց երերվել իր ռուսասիրական զգացմունքի մեջ։ Քյուրակ չայի դաշնագրից հետո անմիջապես Շուշի ուղարկվեց մայոր Լիսանևիչը 17-րդ եգերյան գնդի մի մասով։ Խանն սկսեց զգալ, թե ինչ է նշանակում ռուս պաշտոնյայի հսկողության տակ ապրելը։ Լիսանևիչը չէր թողնում, որ խանը փոքր ի շատե անկախ և ինքնագլուխ զգա իր կառավարչական գործերի մեջ։ Լիսանևիչը արգելքներ ու պահանջներ էր դնում համարյա իր ձեռքն առնելով կառավարությունը։ Եվ «հին աղվեսն», ինչպես անվանում էր խանին Ցիցիանովը, դեպի պարսիկների կողմն էլ էր նայում, աշխատելով չգրգռել շահին և անկատար թողնելով ռուսական պահանջներից որքան կարելի է շատ բան։ Քյուրակ չայի դաշնագրությունը բարեկամական անուշության շեշտեր էր մտցնում Ցիցիանովի գրությունների մեջ Իբրահիմ խանի նկատմամբ։ Իսկ 1805 թվի պարսկական արշավանքը վերացնում էր այն անուշությունը և նորից հաստատում է գրությունների մեջ նախկին կոպիտ և հայհոյիչ կասկածամտությունը։

Աբաս Միրզան, իր գլխավոր ուժերը դեպի Ղարաբաղ ուղղելով, մի փոքրաթիվ զորաբաժին Երևան է ուղարկում Մեհդի Ղուլի խանի առաջնորդությամբ, որ, կատարելով նրա տված հանձնարարությունը, մտցնում է իր 3000-անոց բանակն Երևան և կալանավորելով Մահմադ խանին ու նրա ընտանիքը, պահում է հսկողության տակ։ Այսքանով էլ սահմանափակվում էին, առժամանակ, պարսից պատերազմական գործողություններն Երևանի խանու-

[1] Хубов, с. 105.

թյան մեջ։ Թագաժառանգը նախ շտապում էր վերջացնել Ղարաբաղի հարցը։

10. Ցիցիանովը և հայերը։ Մեր տված նյութերից ընթերցողն արդեն բավականաչափ գիտե, թե ինչ վերաբերմունք ուներ Ցիցիանովը դեպի հայերը։ Այդ հարաբերությունները կարելի է որակել մի ընդհանուր անունով՝ թշնամական։ Սակայն գլխավոր հրամանատարը լավ գիտեր, հայտնի դեպքերում, ոչ միայն թաքցնել այդ թշնամությունը, այլև կեղծել, եթե այդ էր պահանջում ռուսաց նվաճողական քաղաքականությունը։ Այս բանն ամենամեծ չափերով մենք արդեն տեսանք Էջմիածնի կաթողիկոսական հարցի մեջ։ Ըստ երևույթին, հայ ժողովրդի իրավունքների պաշտպան էր հանդիսանում, պահանջելով, մինչև իսկ պատերազմական գործողությունների ճնշման տակ, որ կաթողիկոսական աթոռի վրա նստե ժողովրդի ընտրյալը։ Բայց այդ ժողովուրդն, իրապես, նրան այնքան հարկավոր էր, որքան կարող էր ծառայել իբրև ազգաբնակչական նյութ մի որևէ դատարկ երկիր բնակեցնելու և շենացնելու համար։ Վրաստան գալուց հետո նա աշխատում էր գրավել այդ երկիրը հայերին բնակեցնելու համար։ Երևանյան արշավանքից առաջ նա Հովհաննես Գեղարդակրին ուղարկում էր Փամբակ համոզելու համար, որ Երևանի կողմերից փախած հայ ժողովուրդը բնակություն հաստատե Վրաստանում, բայց միևնույն ժամանակ հրամանագրում էր պաշտոնյաներին, որ նույն այդ փախստականներին տեղավորելու ժամանակ «հայ իշխաններին գլխավորներ չդարձնել»[1]։ Այս արգելքն, իհարկե, չէր բխում պայծառափայլ իշխանի ռազմավարական պաշտամունքից, որ չկար նրա մեջ։ Եվ որովհետև այդպիսի արգելք չէր դրվում ոչ վրացի, ոչ էլ թուրք ազնվականների վերաբերմամբ, ուստի հասկանալ մի այդպիսի կարգադրություն կարելի է միայն այն մտքով, որ Ցիցիանովը չէր կարողանում հանդուրժել, որ հայ ժողովրդի մեջ պահպանվի ազգային իշխանության գաղափարը։ Նա նույնիսկ չէր ուզում, որ հայ ժողովուրդը բազմություն կազմե իր պատմական հայրենիքում։ Այսպես, երբ Գանձակի թուրք ազգաբնակության մի մասը 1805-ի ամռանը, ինչպես կտեսնենք, հեռացավ Աբաս Միրզայի հետ, դատարկ թողնելով իր տներն ու այգիները, Ցիցիանովը խնդրում էր Հովհաննես Գեղարդակրին, որ նա Երևանի փախստականներին ուղարկե Գանձակ բնակվելու։ Բայց երբ գեներալ Նեսվետաևը Ղարաքիլիսայից հաղորդում է, թե ինքը Քոչար անունով մի հայ լրտես է ուղարկել Բայազետ, և այնտեղի հայերը հաղորդել են նրան, թե իրենք, թվով 10 հազար ընտանիք, պատրաստ են գաղթել Երևանի երկիրը, հենց որ նա կանցնի ռուսների ձեռքը, Ցիցիանովը պատասխանում էր նրան. «Եթե նույնիսկ Երևանի երկիրը մեր ձեռքում էլ գտնվեր, ես նրանց այնտեղ գաղթեցնելու կարիք չէի ունենա, ինձ հարկավոր է բնակեցնել Վրաստանը, ուստի, եթե նրանք չեն կամենա բնակվել Վրաստանի խորքերում, ուրեմն նրանք համարյա հարկավոր չեն ինձ, որովհետև բնակեցնելով նրանց Երևանի շրջանում, դժվար կլիներ պահել նրանց պարտ ու պատշաճ հնազանդության մեջ և նրանք անարգել պիտի փախչեն Արաքսի մյուս ափը կամ հարաբերություններ ունենան այնտեղի հետ»[2]։ Պետք է չափազանց սառը հասկացողություն ունենալ մի ժողովրդի մարդկային իրավունքների մասին՝ նրա համար ճակատագրական նշանակություն ունեցող հարցին այսպես վերաբերվելու համար։ Պայծառափայլ իշխանը բարձրից էր նայում հայ ժողովրդին, արհամարհանքով ու ատելությամբ էր դատում նրա մասին։

Եվ ահա այսպիսի մի գործիչն էր, որ մայիսի 14-ին Քյուրակ չայի ափին

[1] «Акты...», II, № 1228.
[2] «Акты...», II, № 1267.

դաշնագիր էր կնքում Ղարաբաղի Իբրահիմ խանի հետ։ Մենք արդեն նկատեցինք, որ այդ գործի մեջ մոռացված էր միայն հայ ժողովուրդն իր դարավոր իրավունքներով։ Նա էր Ղարաբաղի հին և բնիկ տերը, և Իբրահիմ խանը մի եկվոր տոհմ էր ներկայացնում, որի իշխանությունը միայն մի հիսուն տարի էր տևել, այն էլ ոչ թե հանգիստ ու անվեճ, այլ բնիկ ժողովրդի, բուն երկրատիրոջ հետ մղելով բռնությամբ տիրելու մի երկարատև և անողոք մաքառում։ Այս մաքառման մեջ եռանդուն մասնակցություն էր ունեցել ռուսական քաղաքականությունը, կանգնած լինելով հայերի կողմը, խրախուսելով նրանց ազատագրական տենչերը, իր մեծամեծ խոստումներով սաստիկ սուր բնավորություն տալով ընդհարումներին։ Ղարաբաղի հայությունն անթիվ զոհեր էր տվել, կործանվել էր Իբրահիմ խանի դեմ մղած երկարատև պատերազմի մեջ, բայց պահել էր իր հին իրավունքները։ Եվ Քյուրակ չայի դաշնագրից մի վեց տարի միայն առաջ էր, որ Պավել կայսրը հրովարտակի մեջ ճանաչում էր հայ մելիքներին Ղարաբաղի միահեծան և բնիկ տերեր։ Այժմ այդ մելիքներից մեկը, Մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարյանը, որ Պավելի այդ հրովարտակի մեջ անվանված էր Վարանդայի տեր, Քյուրակ չայի բանակումն էր գտնվում, դաշնագրի ստորագրության րոպեին։ Եվ ի՞նչ էր նա ստանում։

«Այստեղ չեմ կարող,— գրում էր Ցիցիանովն իր ամենահպատակ զեկուցման մեջ Ալեքսանդր կայսրին,— իմանալով ձեր կայսերական մեծության սրտի քնքշությունն ու զգայնությունը, լռության տալ մի անցք, որ տեղի ունեցավ այդ դեպքում[1]։ Գանձակը (որ այժմ Ելիզավետպոլ է), վերցնելուց հետո, անցյալ տարի ես իմ նամակով պահանջեցի Ղարաբաղի Իբրահիմ խանից, որ նա հանձնե Մելիք Ջումշուդի (որ եղել է Ռուսաստանում և երջանկացել է երջանիկ և հավերժական հիշատակի արժանի ձեր կայսերական մեծության ծնողի, հանգուցյալ Թագավոր կայսր Պավել Պետրովիչի առատ շնորհներով) որդուն. բայց այն ժամանակ իմ դեսպանությունն այս առիթով ցանկալի հաջողություն չունեցավ։ Իսկ այժմ խանը, իմ գրաված բանակի մեջ ինձ տեսակցելու մյուս օրը, առանց որ ես հիշեցնեի, ուղարկեց ինձ հիշյալ Մելիք Ջումշուդի որդուն 11 տարեկան և 13 տարեկան թոռանը, որոնք 10 տարի բաժանված էին նրանից. Նրանց ես ձեր կայսերական մեծության անունով հանձնեցի հորը և տեսա, թե ինչպես նա չէր կարողանում շնորհակալության արտասուքից մի բառ անգամ արտասանել, ինչպես և այն որ ձեր կայսերական մեծության գթառատ և քնքուշ սրտին արժանի այս տեսարանի վկաներից ոչ ոք չկարողացավ պահել իր արտասուքները։ Այս լռությունը Մելիք Ջումշուդն ընդհատեց արտասանելով ձեր կայսերական մեծության սրբազան անունը, բայց դրանից ավելին, որքան և ջանք էր անում, արտասուքներից ուժ չունեցավ ասելու։ Ուստի տեսնելով նրա տանջանքը, որ առաջանում էր այնքան ուժեղ և այնքան բնական շնորհակալություն արտահայտելու անկարելիությունից, խորհուրդ տվի նրան գնալ երեխաների հետ տուն, հանգստանալ և օրհնել ձեր կայսերական մեծության բազուկը, որ ազատել է նրա երեխաներին 10-ամյա գերությունից»[2]։

Այս էր ահա հայությունն ստանում իր այն մեծ շարժումից, որ տևել էր գրեթե մի ամբողջ դար և որ նրա նոր պատմության գլխավոր առանցքն էր կազմում։ Այսպիսի խղճուկ վերջավորություն էր ստանում՝ երկու երեխաների ազատություն, Իսրայել Օրիի, նրա ժամանակակիցների և հաջորդների սկսած

1 Այսինքն՝ խանի հետ դաշնագրական համաձայնություն կնքելիս։

2 «Акты...», II, № 1436.

և ոգևորությամբ առաջ տարած ազգային պայքարը։ Մենք, իհարկե, չենք կարող ասել, թե միմիայն իշխան Ցիցիանովի անձնական կամքն ու տրամադրությունն էր այսպիսի վերջավորություն տալիս հայոց հարցին։ Կար այստեղ նրանից բարձր ու ուժեղ անհրաժեշտություն՝ պետական քաղաքականությունը, որ երբեք և ոչ մի տեղ չէ քաշվում նենգություններից։ Բայց որ Ցիցիանովի, իբրև այդ քաղաքականությունը տանողի և մշակողի անձնական հատկությունները ու տրամադրությունները մեծ նշանակություն ունեին հարցի վերջնական ձևակերպման մեջ, այս էլ անուրանալի է։ Ցիցիանովը հիմարություն էր համարում, որ հայ մելիքներից ոմանք իրենց սերված էին համարում հայոց հին թագավորներից, բայց հիմարություն չէր համարում, որ 60 հազար տուն հայ ժողովրդի վրա բռնանա, կամայականության բոլոր անսահմանափակ իրավունքներով, մի թուրք խան, որին եթե որակելու լինենք հենց այս խոսքերով, որ այնպիսի առատությամբ գործ էր ածում ինքը՝ Ցիցիանովն իր պաշտոնական թղթերի մեջ, կստացվի այն հրեշավոր երևույթը, որ քաղաքակրթությունից, քրիստոնեությունից ճառող մի պետություն զոհ է բերում մի ամբողջ ժողովուրդ բռնակալությունների ամենավատ տեսակին։ Խրախուսել մի ժողովուրդ, որ նա իր բոլոր ուժերով մարտնչել է քաղաքական ազատություն ձեռք բերելու համար, անկախության խոստումներով բարձրացնելով նրա հերոսական տրամադրությունը, և ապա, գրչի մի հարվածով, մի փոքրիկ գետի ափին մի խանի հետ դաշնագրություն կնքելով, երեսի վրա գցել այդ ժողովուրդը, լքել նրա նվիրական դատը՝ այս ցարի քաղաքականության գործն էր։ Եվ Ալեքսանդր կայսրն էր, որ Դանիել կաթողիկոսին պաշտպանում էր՝ իբր թե հայ ժողովրդի իրավունքները պաշտպանած լինելու համար, իսկ այստեղ նա խողխողում էր հայ ժողովրդի դարավոր և իսկապես կենսական արժեք ունեցող իրավունքը, այն, ինչ որ ամփոփվում է հայոց հարց հասկացողության մեջ, այսինքն՝ այն, ինչ որ նրա ամբողջ պատմության էությունն է կազմում։

Մեծ անարդարության փաստը կատարված էր, և նրա առջև նշանակություն չուներ այն հանգամանքը, թե խանական իշխանության վերականգնումը դաշնագրերի միջոցով նույնպես քաղաքական նենգություն էր, թե խաներն էլ չպիտի մնային, այլ ամեն ինչ, վերջիվերջո, պիտի կլաներ ռուսական միապետությունը։ Էականն այն էր, որ ջնջելով հայ հողատիրությունը, չէր ջնջվում, այլ, ընդհակառակը, ավելի ևս ընդարձակվում և զարգանում էր թուրք հողատիրությունը, որ ծանրանում էր հայ գյուղացիության վրա ազգային և կրոնական նկատառումներով։ Պայքարն, այսպիսով, վերջանում էր Իբրահիմ խանի հաղթանակով և նրա հակառակորդ հայ մելիքների կատարյալ ոչնչացմամբ։

Մենք պիտի խոստովանենք, որ հենց իր, հայ ազգի մեջ էլ գոյություն ունեին շատ հանգամանքներ, որոնք նպաստում էին այս ազգային-քաղաքական հանկարծակի խորտակման։ Մելիք Ջումշուդը բավականանում էր իր երկու երեխաներին գտնելով և թողնելով իր Լոռին, վերադառնում էր Վարանդա՝ Իբրահիմ խանին նորից ենթարկվելու համար, այս անգամ մի քիչ ավելի լավացած պայմանների մեջ, քանի որ Իբրահիմ խանից վերև այժմ ռուսներ կային։ Մյուս մելիքները չէին երևում։ Գյուլիստանի Մելիք Աբովը գտնվում էր Բոլնիսում և թեև վառ ցանկություն ուներ վերադառնալու իր հայրենիքը, բայց թույլտվություն չէր ստանում, որովհետև առանց նրան՝ Վրաստանի այդ մասը հանգստություն չէր ունենա ավազակներից և գիշատիչ հրոսակներից, և սակայն զլանում էին Բոլնիսում այնքան հող տալ, որ նա կարողանար ապ-

ռուստի բավարար միջոցներ գտնել[1]։ Իսկ Ջրաբերդի, Խաչենի և Դիզակի մելիքները ոչնչով չարտահայտեցին իրենց գոյությունն այնպիսի մի կարևոր քաղաքական րոպեում, երբ Ղարաբաղի բախտն էր տնօրինվում։ Այսպիսով, ուրեմն, հայ ժողովրդի քաղաքական և ազգային ինքնորոշումը ներկայացնող իշխանության վրա դեռ շարունակվում էր ծանրանալ հին մեղքը՝ միանալու, պահանջներ առաջադրելու, իրավունքներ պաշտպանելու անկարողությունը։ Ինչպես տեսանք պատմության ընթացքում, այս անկարողությունը, քաղաքական մտքի այս ուղղությունն էր, որ խորտակեց հայ ժողովրդի քաղաքական ինքնօրինության այս վերջին նշույլը, որ պահվել էր Ղարաբաղի լեռներում։ Այժմ էլ նույն ցավը թույլ էր տալիս, որ գերեզմանի մեջ թաղվի հայության գործի նույն այդ վերջին բեկորը։

Եթե մելիքները շարունակում էին թույլ, անգիտակից և խակամիտ հանդիսանալ, հայ հոգևորականությունը, որ կարող էր նրանից ավելի շատ գործ տեսնել և արդյունավետ լինել ազգային դատի պաշտպանության համար այդ կարևոր ժամանակամիջոցին, պակաս ապիկարություն չէր ցույց տալիս։ Մենք տեսանք և դեռ պիտի տեսնենք նրա հարուցած դավիթ-դանիելյան շարժման նշանակությունն ու նպատակները։ Մի ամբողջ ժողովրդի համար հոգևոր դասակարգը, որ տիրող էր, որ ուներ բարոյական հեղինակություն և նյութական խոշոր միջոցներ, չկարողացավ մի ավելի լավ բան մտածել՝ քան գահական թեկնածության մոլի, ամեն չափազանցություններ արհամարհող պայքարը։ Հոգևորականության համար ուրիշ հարց ու հոգս չկար, բացի Դանիելի կաթողիկոսացումը, որի համար և փաթթվել էր ռուսաց ցարի ու նրա կովկասյան սատրապի փեշերին, գրկելով միմիայն սուտ աղաչավորի դիրք, որ միայն քծնել գիտեր, որ միայն փշրանքներ հավաքելով էր գոհ։ Հասկանալի է, որ այսպիսի պայմանների մեջ պիտի հաղթեին Ցիցիանովն ու Իբրահիմ խանը։ Ցիցիանովի բանակում Հովհաննես Գեղարդակիրն էր գտնվում, ցարական մի հլու գործիք, որ մեծամեծ ծառայություններ էր մատուցել Ցիցիանովին և հենց այդ պատճառով էլ նրա մերձավորներից մեկն էր դարձել։ Քյուրակ չայի դաշնադրության միջոցին նրա համար Ղարաբաղի հայության գործի կամ, որ միևնույն է՝ հայոց հարցի խորտակումը չկար, այլ իր առաջնորդական հարցերի հարցը։ Իբրահիմ խանի բանակում էլ կար հայ մի բարձրաստիճան հոգևորական՝ Աղվանից Իսրայել կաթողիկոսը, այն մարդը, որ, խանի նեցուկն ու գործիքը դառնալով, քանդել ու ոչնչացրել էր իր հայրենիքի հնադարյան ստացվածքը, նրա ազատությունը, լոկ եկամուտներ և փառք վաստակելու համար։ Այժմ էլ նա Քյուրակ չայի տեսակցության վայրն էր եկել ոչ թե, իհարկե, հայկական իշխանության վերջին բեկորներից գեթ մի բան փրկելու, այլ դարձյալ իր եկամուտը պաշտպանելու համար, դարձյալ և դարձյալ Իբրահիմ խանի օգնությամբ։ Ահա ինչ ենք կարդում Գեղարդակիրի Մինաս Լազարյանին գրած նամակի մեջ.

«Իսրայել կաթողիկոսն ես եկեալ էր ընդ Իբրահիմ խանին, որպես զի խոսեսցի վասն Ելիսավետպոլու թէ իմ է վիճակդ այդ, և այլն։ Ըստ որոյ և քանիցս արդ էր մատուցեալ թէպէտ կնեազին, բայց օրհնեալն այն ոչ թե միայն չէր կատարեալ զխնդիրն, այլ և չէր երբէք ունկն մատուցեալ անյարմար բանից նորին։ Որ և ապա արկեալ էր առ այս միջնորդ զխանն Իբրահիմ, որում ես այսպէս էր պատասխանեալ կնեազն թէ զիարդ կարելի է անհնարին բանդ այդ, ես չեմ կարող բնաւ կատարել զխնդիրդ զայդ անպատկան, քանզի ընդ զօրօքն կայսերական ով ոք որ զանձն իւր ոչ խնայեաց և մահու չափ ծառայեաց նորին կայսերական մեծութեանն, նմա միայն է վի-

[1] «Кавказ. Старана», 1872, с. 44.

ճակս այս իրաւամբ և արդարութեամբ։ Եւ զկնի այսպէս պատասխանելոյ խանին, մարդ էր առաքեալ և կոչեալ առ ինքն, զի մեզ չէաք եկեալ ընդ ինքեան ի բանակս։ Ըստ հրամանի որոյ մինչ եկեալ ներկայացաք առաջի պայծառափայլութեան նորին, եհարց զմեզ՝ թէ զի՞նչ պատճառք է այդ որ եկեալ է և խօսի այսպէս անպատշաճս. որում պատասխանեալ և մեր ըստ տեսչութեան Հոգւոյն սրբոյ ծանուցաք լիովին զզիարդ լինելն նորին և զայլն ամենայն։ Ապա կրկնեալ զխօսս իւր, միամտեցոյց զմեզ յամենայնի ասելով, եթէ եկեալ էիր և եթէ ոչ, մինչ զի թէև դու ինքդ իսկ կամեցեալ էիր, մեք չէաք կատարելոյ զխնդիրս նորին, այլ վասն այնորիկ կոչեցաք զքեզ առ մեզ, զի տեղեկացուք միայն արդիւնութեան նորին։ Բայց սակայն այժմ ի խաթեր Իբրահիմ խանին այսպիսի թուղթ շնորհեաց նմա, իբր զի ժողովուրդքն Շուշւոյ, Նուխու, Շամախու և Դարբանդու նմա հնազանդ լիցին և ի ներքոյ հովւութեան նորին մնասցեն հատուցանելով զհասանելի արդիւնս իբր առաջնորդի ինքեանց և ոչ կաթողիկոսի, զի կաթողիկոսն մի պարտի լինել ասէ և ոչ բազում. որ այն ինքն է միայն Դանիէլ սրբազան պատրիարքն. և զնոյն թուղթն այսպէս ձեռագրեաց, թէ ոչ եւս քեզ զայս մշտնջենաւոր, այլ մինչ ի բազմիլ Դանիէլ սրբազան հայրապետին յաթոռն էջմիածին. յայնժամ որպէս կամեսցի նա, թող այնպէս արասցէ. և յետ բազմելոյ նորին յամենայնի անընդունակ եղիցի թուղթս այս, և մի կարողասցի ունենալ զզօրութիւն ինչ և ոչ բնաւ»[1]։

Այսպես էր ազդեցիկ և ղեկավարող հոգևորականությունը։ Ով կարո՞ղ էր նա Ղարաբաղի հարցի մասին մտածել, Ցիցիանովի գործունեությունից դժգոհ լինել և նրա դեմ բողոքարկու հանդիսանալ առհասարակ, երբ նույն այդ միջոցին Արարատյան երկրից գալիս էին լուրեր, որոնք նորանոր հույսեր էին ներշնչում լցված դանիելականության, մեծ ուրախության և ավետիսի առարկա դառնում։ Մենք տեսանք, որ գեներալ Նեսվետաևը, Շորագյալը գրավելուց հետո, դուրս եկավ նրա սահմաններից և մի արշավանք տարավ գրեթե մինչև Երևանի պատերը։ Եվ ահա Դանիելականները սուրհանդակներ և նամակներ են թռցնում ամեն կողմ, ավետելով, թե ռուսները նորից վերցրին էջմիածինը։ Ահա ինչպես էր նկարագրվում այդ «ուրախալի» դեպքը մի նամակի մեջ, որ երկու հայ հոգևորականներ ուղղել էին նույն Աղա Մինաս Լազարյանին, որին նրանք անվանում էին «հույս ազգիս հայոց, ապավեն տառապեալ հոգևորականացս և նեցուկ սրբոյն էջմիածնի»։

Այսօր ի ժամ 7 եկին միաբանք սրբոյ Աթոռոյն առ ի քաղաքս Թիֆլիզ։ որոց առաջինք են Ստեփաննոս եպիսկոպոս Կուչուրեան, որ յառաջ հարազատ Դաւթի և այժմ յագեալ ի անպարտակելի չարութեանց նորին, ես և բարձր արժանապատիւ Յովհաննէս վարդապետ Կարբեցի, այն, որ երբեմն գերծեալ զմօրուսն՝ պահեաց Դաւիթն ի անլոյս բանտի ամիսս 4։ Վեհազնեայ Աղա՝ հարազատ պատմութիւն սոցա այս է՝ որ իբրև զօրք ռուսաց գնացեալ են ի Թալին, հայքն Մաստարայ անուն գիւղի, որ յատուկ մեր սրբոյ Աթոռոյն են գիւղն և ժողովուրդն, փոլով փախուցեալ ի Կեչիլու անուն գիւղն դղեկավոր, զմարդ յղեալ առ Ենարալ Նեսվէտաևն Սարաթովու պօլկի, խնդրեն օգնել ինքեանց և յորժամ երթան զօրքն ի Կեչիլու, լսեն ժողովուրդքն հայոց, որք ժողովեալ ի սուրբ Աթոռն և զմարդ յղեալ հանդերձ գրով, նոքա ևս խնդրել օգնել ինքեանց՝ որով և յիշեալ Ենարալն ի գուբ շարժեալ, ի գիշերին, որ լուսանալ հինգշաբաթ ի 4 ամսոյս՝ ընդ լուսածագն առաւօտուն իսկոյն հասանին ի սուրբ Աթոռն էջմիածին և մտեալ ի ներքս, բնակին անդ զօրք ռուսաց պաւուրս 3։

[1] Ձեռագիր (հեղինակի ժողովածուի մեջ)։

Ի մտանելն ի սուրբ Աթոռն, ենարալ Նեսվէտայովն առաքէ գիր առ Դաւիթն թէ դու որ պատրիարք հայոց ես, ոչ վայել է քեզ այդպէս հետեւ լինել տաճկաց, այլ որպէս վայել է քրիստոնէի առաւաւել մեք քրիստոնեայ և դու պատրիարք քրիստոնէից, պարտ է ուրեմն զի ելեալ եկեսցես ի մեծ ողորմութիւն վայելես ի ամենաողորմած կայսերէն մերմէ։ Երբ ոչ ընդունի Դաւիթն զայս գիր և ոչ գայ, լսես յայնժամ, թէ զխորհուրդ չարութեան ես խորհեալ նա ընդ խանին՝ զզօրս պարսից ժողովեն զի ձեռեւ վտանգեսցեն զզօրսն ռուսաց և աստ յայնժամ կոչէ զվարդապետսն ենարալ Նեսվէտաւն և առէ ցնոսա՝ որովհետև սուտ պատրիարքն Դաւիթ զխրտ իւր առեալ է պարսից, գիտեմ զի զամենայն զինչս սրբոյ Աթոռոյ ես յօժար է նա տալ պարսից, վասն որոյ լաւ ես է, որ մեք տարցուք ընդ մեզ։ Ուրեմն զամենայն որ ինչ գտանի երկու թէւթէր արասցուք, մինն մեք առնիցեմք և մինն դուք և այնպէս ամենայն իրքն տարեալ ծանուցանեմք կայսեր, որ առնէ որպէս և հաճոյ իցէ բարեբար կամաց իւրոց։ Յառաջագոյն այնպէս խոստանայ ենարալն, որ մի թէւթէր միաբանքն ունիցին և մի ես ինքեանք, բայց յետոյ ամենևին միաբան ոչ հանդիպեցուցանէ, այլ ինքն ենարալն իւր արամբն բացեալ զամենայն զդրունս ծածուկ սենեկաց սրբոյ Աթոռոյն, ժողովեն զամենայն զոր ինչ գտանի։

Արդ՝ ազնիւ աղայ՝ թէ զինչ ինչ իցեն հանեալ, ումեք ի միաբանից ոչ է յայտնի, բայց միայն որ ամենայն ինչքն սրբոյ Աթոռոյն կարծեմք, որ անդ է եղեալ. քանզի Դաւիթն փախչելոյ կամք ունենալով՝ ամենայն պատուական իրքն, զորս յատուկ վասն իւր պատրաստութիւն անելով բեռնիս է կապեալ եղեալ, այն ամենայն մնացեալ է ի ձեռս ենարալ Նեսվէտայովին՝ համարին թէ տասն աւելի կամ պակաս՝ բեռն. բայց այսպէս իմա, պատուական աղայ, որ բոլոր ուղղ և ծուծն մեր սրբոյ Աթոռոյն բոլորովեմբ այսոքիկ են, զորս բերեալ են։ Նաղդ դրամ 15 հազար թուման ասեն՝ ի սակաւուն, և թուղթ մի ևս գտեալ են ռուսքն որ յայտնեալ են վարդապետացն, ուր գրեցեալ է եղեալ, թե ի մէջ երեք ծրարի գոնե ծրարեալք յամեն միումն 6500 հատ Պոլսոյ ոսկիք։ Յետոյ ևս յայտնեալ են թէ մի ծրարն գտաք։ Զկնի յայտնեալ են թէ մինն ևս գտաք. բայց առաջին սպասաւորս Դաւթի, որ յանցեալ ամին կապեալ է զբեռինս փախչելոյ պատրաստութեանն Դաւթի, նա առ մեզ է և առէ, թէ յանցեալ յամին իմ ձեռօքն եղեալ իմ ի մէջ 4 թէմպէզիթի իբրև 50 հազար թումանը ոսկի։ Երկու արքալուղ ես է յօրինել տուեալ բամպակով։ Իւրաքանչիւրոց մէկն երկու երկու հազար ոսկի. որոց մինն այժմ տեսեալ են մեր վարդապետքն ի ձեռս ենարալին, իսկ միւսն ոչ։ Դաւթի յառաջև եղեալ, չաքմաճայն ջարդեալ են. ի մէջն թէ զինչ իցէ եղեալ, ոչ է յայտնի. բայց միայն որ քանի պատուական գոհար մատանիք վաճառեալ են ի մէջ զօրացն ի գալն ի ճանապարհին։

Իսկ որ մեծն է՝ լուր զմեծս զայս, բայց վերստին որքան հնարաւորն իցէ ջանասջիք զի մի առաւել հրատարակեալ տարածեսցի, ով վեհաղնեայ բարեբար. զի կողամուխ սուրբ Գեղարդն Քրիստոսի, այն, որ ճշմարտապէս մխեալ է ի կենսատու կողմն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, է այժմ ի ձեռս ռուսաց ընդ այլ իրացն. նաև ամենայն սրբութիւնքն՝ բաց ի սուրբ Լուսաւորչի աջոյն և սուրբ Յակոբայ աջոյն, յԱմենափրկիչ առացեալ պատկերէս և մի կենաց փայտէ և երկու երեք այլ մասանց և օրինակէ սուրբ Գեղարդին. քանզի, ով վեհաղնեայ Աղայ, որովհետև սուրբ Գեղարդն վասն ցաւոց խնդրէին ի հեռաւոր. տեղեաց, երկիւղ ունենալով առաջին սուրբ հայրապետաց մերոց թէ գուցէ վտանգն իմն հանդիպեսցի անգին գանձին այնորիկ հայոց ազգի, նման նմա յօրինեալ են զայլ միւս գեղարդ և օրհնեալ զայն, և այնպես ուր և խնդրէին

տանել զսուրբ Գեղարդ եթէ ի Թիֆլիզ և եթէ յայլուր, զայն օրինակն յղէին, իսկ այն, որ իսկն էր, համարեա թէ բազում միաբանից ես անգիտելի մնայր մինչև ցայժմ. իսկ այժմ ահա մահու չափ տրտմութեամբ լցեալ ամենքին թէպէտ ոչ կամիմք յայտնել զի մի գայթակղութիւն լիցի ռամկաց, այլ զի ոչ կարեմք ծածկել, այլ յաւիտենից ի սկզբանէ ծածկեալ խորհուրդ սրբոյ գեղարդեանն ահա ձեզ միայն յայտնեցաք, զի գիտացեալ որ տէրդ ես ազգի և Աթոռոյ Հայաստանեայց, հոգ տարցես որպէս և արժանն իցէ, քանզի ահա իսկն սրբոյ գեղարդեանն մերոյ, այն, որ մխեալ է ի կողմն Քրիստոսի և թաթաւեալ սուրբ արեամբ նորա, ընդ այլ մեծ գանձուց և բազում զանազան մասանց սրբոյ Աթոռոյն մերոյ է այժմ ահա ի ձեռս ռուսաց։ Առաւոտուն ընդ Դելիպալլի մօզզօկցի Ստեփան հաւատարմի մերոյ՝ գրելոց եմք այսպես նաև առ Առաջնորդն զի յայտնեսցէ նորին պայծառափայլութեան կնեազ Ցիցիանովին։ Տեսցուք թէ ինչպիսի հոգացողութիւնն իցէ առնելոց կնեազն, այն ես յայտնեսցուք իհարկե, յիւրում ժամանակին։

12 գիւղ ևս Հայոց ժողովուրդ են բերեալ, որք կարեն լինել ի չափ 600 տանց. որոց զոմանս թողեալ են ի Շիրակատուն, զոմանս ի Բամբակաձոր և զոմանս բերին ի քաղաքս»[1]։

Ջնայած, որ այս նամակը բարեկամ կողմից է գրված, զգուշավոր ոճով և մանավանդ ուղղված ռուսաց արքունիքում ընդունված և ամբողջովին ռուսական շահերին նվիրված անձին, բայց և այնպես, նկարագրությունը կասկած չի թողնում, որ գեներալ Նեսվետաևը կատարել է Էջմիածնի վանքում մի թեև բարեկամական, բայց շատ հիմնավոր թալան, որի դեմ Ցիցիանովն ոչ մի առարկություն անել չէր կարող, քանի որ հենց ինքն էր այդպիսի մի վարմունքի օրինակը տվել Երևանից նահանջելու ժամանակ։ Չկարողանալով Դավթին բռնությամբ հեռացնել կաթողիկոսությունից, ռուսներն աշխատում էին գեթ ոչնչացնել Էջմիածնի նշանակությունը, զրկելով նրան ոչ միայն հարստություններից, այլև այն սրբություններից, որոնք մեծ հմայք ունեին ժամանակի հավատացող ժողովրդի մեջ։ Եվ այս թալանը կատարվում էր այն կոպտությամբ, այնպիսի արհամարհանքով դեպի այդ շլացուցիչ հարստությունների տեր հանդիսացող ժողովուրդը, որ եթե ոչ քրիստոնյա պարսիկները թույլ տային իրենց այդպիսի մի անպատկառ վերաբերմունք, իսկույն լացուկոծ կբարձրանար մինչև երկինք։ Ցիցիանովը, Նեսվետաևը և նրանց հետ բոլոր դանիելականները պատրվակ էին բռնում, թե թալանը կատարվում է, որպեսզի Դավիթը չկարողանա հափշտակել կամ իր հետ փախցնել վանքի հարստությունները։ Սակայն մինչև այստեղ մենք շատ փաստեր տեսանք, որպեսզի միանգամայն անարժեք համարենք այս պատրվակը, քանի որ հաստատ է, որ դանիելականները պակաս անխնա չէին վերաբերվում վանքի գանձերին, և Դավիթն էլ շարունակ հերքում էր իր թշնամիների տարածած լուրերը, թե նա վատնում է եկեղեցական ստացվածքը։ Ընդհակառակն, այն հանգամանքը, որ իրենք ռուսները զարմանում էին իրենց մերկացրած վանքի անհուն հարստությունների վրա, ցույց է տալիս, որ Դավիթ կաթողիկոսն այն աստիճան վատնիչ չէր, ինչպես նրան ներկայացնում էին, իսկ պարսից տիրապետությունն էլ, որքան և ճնշող ու գիշատող, արգելք չէր հանդիսանում, որ վանական հարստությունները տարեցտարի հավաքվեն ու կուտակվեն։

Թե ինչպես տեղափոխվեցին գանձերը Թիֆլիս, այդ մասին բավական պերճախոս վկայություններ տալիս են վերևում բերած նամակի հեղինակները։ Կասկածից ու մեղադրանքից ազատ չմնաց նույնիսկ և Նեսվետաևը, որ մեղք չէր համարել գրպանել ոչ միայն դրամ և ակունք, այլև իր մեջ մասունքներ

[1] Ձեռագիր (հեղինակի ժողովածուի մեջ)։

կրող ինչ-որ մի ռակնզոծ խաչ, ինչպես ինքն էր խոստովանում Ցիցիանովին
գրած մի նամակի մեջ[1]։ Եվ գլխավոր հրամանատարը ներեց իր քաջ ստո-
րադրյալի այդ տգեղ արարքը, իսկ այն բոլոր կայքերն ու սրբությունները,
որոնք կարողացել էին անվնաս հասցնել Թիֆլիս, նա հրամայեց գեներալ
Պորտնյագինին ցուցակագրել։ Միաժամանակ նա հայտնում էր Ալեքսանդր
կայսրին, որ թե իր և թե Նեսվետաևի բերած եկեղեցական գանձերը կպահվեն
Թիֆլիսում մինչև որ Դանիելը կնստե կաթողիկոսական աթոռի վրա կամ
էջմիածինը կանցնե ռուսաց տիրապետության տակ[2]։ Եթե ամբողջ մի ազգի
մեծագույն սրբավայրի և կրոնական ամենաբարձր կենտրոնի՝ զինվորների
ձեռքով կողոպտելու փաստին ավելացնենք և այն, որ գեներալ Նեսվետաևը
բռնի տարավ իր հետ 12 գյուղերի հայ ազգաբնակչությունը և ճանապարհին
ցրվում էր այդ բնակչությունը (600 տուն) ինչպես ինքն էր ուզում, մի մասը՝
Շիրակում, մի մասը՝ Փամբակում և մի մասն էլ տանում էր Թիֆլիս, այն
ժամանակ մեր առջև նորից կներկայանա մի ժողովրդի պատկեր, որի հետ
կարելի էր անել ինչ կամենում էին, առանց ամենևին նրա կամքին ու սրբա-
զան իրավունքներին դիմում անելու։ Այսպես էին վարվել հայ ժողովրդի հետ
նրա դարավոր տերերը, ասիական զանազան նվաճող բռնակալությունները։
Այսպես էր վարվում և ցարական բռնակալությունը, թեև նա խոսում էր ար-
դեն եվրոպական կարգերի ու սկզբունքների անունից։ Ցիցիանովն ուղղակի
ցինիկություն էր հասցնում ցարական այդ քաղաքականությունը, մանավանդ
Ղարաբաղում, Քյուրակ չայի՝ դաշնագրությունից հետո։

Մայոր Լիսանևիչի զորամասը Շուշում 300 հոգուց էր բաղկացած։ Դեռ
նոր էր նա տեղավորվել այդ բերդի մեջ, երբ Իբրահիմ խանի լրտեսները հա-
ղորդեցին, թե պարսից զորքը Ղարադաղի վրայով գալիս է Ղարաբաղի վրա։
Լիսանևիչն իր զորքով գնաց նրան հանդիպելու Արաքսի վրա։ Փիր Ղուլի խանն
անցավ Արաքսի ձախ ափը Խուդափերինի կամուրջով, բայց ընդհարվելով
ռուսների հետ, ետ մղվեց նորից գետի աջ ափը։ Մինչդեռ Լիսանևիչը, թողնելով
կամուրջը, կարծում էր, թե կտրել է թշնամու ճանապարհը, պարսիկները նո-
րից անցան գետը զանազան կողմերից։ Ջաբրայիլի այգիների մոտ ունեցած
կռվի մեջ Լիսանևիչը, տեսնելով, որ թշնամին բազմաթիվ է և հեշտությամբ
կարող է իրեն շրջապատել բոլոր կողմերից և կտրել Շուշու ճանապարհը,
սկսեց ետ քաշվել և սարերով հասավ Շուշի, ուր, մանավանդ, հարկավոր էր
նրա ներկայությունը, որովհետև Իբրահիմ խանի բեկերը, որոնք, ինչպես տե-
սանք, դեմ էին ռուսաց հպատակությունն ընդունելուն, պատրաստ էին, օգտա-
վելով պարսիկների արշավանքից, ապստամբություն բարձրացնել և վռն-
դել ռուսներին բերդից։ Գոնե այսպես էր հավատացնում Իբրահիմ խանը, և
Լիսանևիչը հավատաց նրան։ Եվ «Դալի մայորը» չէր հասկանում անշուշտ,
որ այդ վախի մեջ ավելի շատ խանական խաղեր պիտի տեսնել, քան իրա-
կանություն։ Այնչափ խորամանկություն հազիվ կարելի լիներ սպասել Լիսա-
նևիչից, երբ Ցիցիանովի պես փորձված մարդն էլ սկզբում նույնպես հավա-
տացողի դիրքում գտնվեց։ Դեռ այն ժամանակ, երբ պարսկական զորքը չէր
էլ հասել Խուդափերինի կամուրջին, Իբրահիմ խանը, լուր առնելով, որ Աբաս
Միրզան արդեն մտել է Ղարադաղ, շտապեց այդ մասին հաղորդել Ցիցիանո-
վին և խնդրել, որ նա շտապով էլ զորք ուղարկե իր կալվածքը պաշտպանելու

1 Ձեռագիր (հեղինակի ժողովածուի մեջ)։

2 Էջմիածնական այս հարստությունները երկար մնացին Թիֆլիսում և հետզհետե մաշվե-
լով ու փոքրանալով ռուս բյուրոկրատիայի ձեռքին, մի մասը միայն վերադարձվեց կաթողի-
կոսին, իսկ մնացածը կորավ («Փորձ», եռ. հանդ. 1877–78, № 1, եր. 250)։

համար։ Այսպիսով խանը պահանջում էր, որ կատարվի Քյուրակ չայի դաշ-
նագրության պատշաճավոր կետը, որ Ռուսաստանի համար պարտավորական
էր դարձնում Ղարաբաղի խանության ամբողջությունը պաշտպանելը ռուսա-
կան զինքով։ Սակայն, Ցիցիանովն իսկույն նկատեց այն հանգամանքը, որ
ինքը խանը դեռ չէ կատարել իր վրա վերցրած պարտավորություններից և ոչ
մեկը։ Ուստի և գրում էր նրան հունիսի 13-ից. «Ստանալով ձեր բարձրաս-
տիճանության նամակը, որի մեջ, հաղորդելով հավաստիորեն, թե շահզա-
դեն զորքով եկել է Ղարադաղ, խնդրում եք, որ անհապաղ ուղարկեմ որքան
կարելի է ռուսական զորք պաշտպանելու ձեր տիրապետությունը, պարտք եմ
համարում պատասխանել ինձ հատուկ ամբողջ անկեղծությամբ, մի բան, որ
այժմ ավելի ես պիտի ցույց տամ, որ ես և դուք այժմ միևնույն թագավոր
կայսրի հպատակներ ենք, թե ավելի լավ կլիներ, եթե ձեր բարձրաստիճա-
նությունը բարեհաճեիք նախ և առաջ հոգատար լինել ձեր տված խոսքի կա-
տարման մասին, չգործածելով պարսկական և ոչ մի առարկություն, որոնց
ես չպիտի ընդունեմ և ուղարկեիք պատանդ ձեր թոռը Շուքուր Ուլլահ աղա-
յին, որ արդեն մի շաբաթից ավել ուշացել է դրած ժամանակից։ Ընդ սմին ես
պատրավոր եմ ասել ձեր բարձրաստիճանության, որ չպահանջելով ոչ ոքից
խրատներ, ինքս եմ իմանում երբ և որքան զորք պետք է ուղարկել, նույնիսկ
ինքս էլ գնալ, երբ հարկավոր կլինի՝ ձեր տիրապետությունը պաշտպանելու
համար՝ բայց այս բոլորը կլինի միայն այն ժամանակ, երբ ձեր բարձրաստի-
ճանությունը կուղարկեք պատանդին,— հակառակ դեպքում, ես մնացած
զորքն էլ ետ կվերցնեմ»[1]։

Սակայն այս վճռական խոսքով գլխավոր հրամանատարը չկարողացավ
ընկճել Իբրահիմ խանին։ Սա շարունակեց վախ հայտնել, իսկ պատանդի
մասին առարկում էր, թե ամբողջ Շուշին գտնվում էր Լիսանևիչի ձեռքին, և
մի՞թե այս ամենալավ պատանդը չէ։ Մյուս կողմից, խանի խնդիրքը պաշտ-
պանում էր Լիսանևիչը, որ նույնպես խնդրում էր օգնական զորքով ուժեղաց-
նել Շուշու բերդապահ զորաբաժինը։ Երրորդ կողմից էլ դեպքերն էին գալիս
իրենց արագ ընթացքով մտրակելու Ցիցիանովին։ Հունիսի 9-ին էր, որ Լի-
սանևիչը կռվի բռնվեց պարսիկների հետ Ջաբրայիլի այգիներում, և ահա 7
օրից հետո, ամսի 16-ին, մայոր Լիսանևիչը հայտնում էր Ցիցիանովին, թե
պարսից զորքի առաջապահ հեծելազոր խմբերն արդեն երևացել են Ասկարան
բերդի մոտ[2], որ Գանձակի ճանապարհի վրա էր, 25 վերստաչափ հեռավո-
րության վրա Շուշուց դեպի հյուսիս։ Այս առաջապահ խմբերը պատկանում
էին Փիր Ղուլի խանի բանակին, որ բաղկացած էր 10 հազար հոգուց։ Իսկ
Աբաս Միրզայի բանակը, որ հետևում էր Փիր Ղուլի խանին, գտնվում էր
Խոնաշեն գետի վրա։ Պարսիկներն ամեն կերպ աշխատում էին գրավել Իբրա-
հիմ խանին իրենց կողմը։ Փիր Ղուլի խանը գրում էր նրան. «Երբեք ես չեմ
խանգարի այն խոսքերն ու պայմանները, որ տվել եմ ձեզ սրանից առաջ և
որոնց մեջ է իմ շահինշահի և շահզադեի բարձրագույն հրամանը, և երբեք
մի մտածեք դուք, թե իմ խոսքերի մեջ որևէ պակասություն կա, որի համար
երդվում եմ Աստուծով, նորին մեծություն շահով և շահզադեով։ Արեք այն-
պիսի բան, որ նրանով մենք և դուք ամոթի մեջ չլինենք. այսօր, որ այս լուսնի
4-ն է, շահզադեն իր բոլոր անպարտելի զորքերի հետ եկավ Աղ Օղլան[3] և մտա-

1 «Акты...», II, № 1444.

2 Ibid., № 1704.

3 Այս անունով թուրքերը կոչում էին Ամարասի ս. Գրիգորիս վանքը, որ գտնվում է Վա-
րանդայի գավառում։

դիր է գնալ այնտեղ շուտով, բայց ես աղաչելով խնդրեցի սպասել մի 3 կամ 4 օր էլ և ես սպասում եմ այս նամակի պատասխանին։ Նորին մեծություն շահը ճանապարհվել է Ղարադաղի Ահարից անպարտելի զորքերի և թնդանոթների հետ, հինգշաբթի օրը կգա Խուդափիրինի կամուրջը և այնտեղից էլ անհապաղ այստեղ և դրա համար էլ հայտնում եմ, թե որովհետև արդեն ես քեզ պայման եմ տվել երդումով սուրբ Ալղուրանի վրա, ուստի եթե քո օգուտն ես տեսնում, արի շահի և շահզադեի մոտ, և աստուծով երդվում եմ, որ քո բոլոր գործերը կատարված կլինեն քո ցանկության համաձայն, կամ թե տեղ նշանակիր և ինձ գրիր, ես կգամ այնտեղ կտեսնվենք իրար հետ, և կամ թե ուղարկիր քո հավատարիմ մարդուն, որ նա հավաստիանար քո գործի վերաբերմամբ, և հավատացնում եմ քեզ, որ շահի և շահզադեի կողմից առանձին շնորհ կա դեպի քեզ և իզուր ես երկյուղ կրում։ Արա այնպիսի գործ, որ քո անունն աշխարհում վատ չլինի։ Ահա Երևանի Մահմադ խանն անցյալ տարի այնքան լավ վարվեց, որ ամենքի գովքին արժանացավ»[1]։ Իբրահիմ խանին նամակ գրում էր և Ալեքսանդր արքայորդին։ Նա զարմանում էր, որ խանը, չնայած շահից տեսած բարերարություններին, ռուսների կողմն է անցել և հանձնել է նրանց Շուշին և խորհուրդ էր տալիս վռնդել ռուսաց փոքրիկ զորքը բերդից։ «Ի՞նչ պատճառով,— գրում էր նա,— դուք հանձնում եք տիրապետությունը և ուժեղացնում եք նրանց (ռուսներին), քանի որ մինչև այժմ ոչ ոք նրանց հետ միանալուց ոչ մի օգուտ չէ ստացել»[2]։

Այս թղթերը և առհասարակ այն բոլոր առաջարկությունները, որոնք գալիս էին պարսիկների կողմից, Ղարաբաղի խանն իսկույն ուղարկում էր Ցիցիանովին, որ և վերջ ի վերջո ստիպված եղավ օգնական զորք ուղարկել Շուշի։ Այս մի շատ պատասխանատու քայլ էր, որ անում էր գլխավոր հրամանատարը, նկատի առնելով այն չնչին ուժերը, որոնք գտնվում էին նրա տրամադրության տակ։ Պետք է իմանալ, որ Ալեքսանդր կայսրն այդ միջոցին Ավստրիայի դաշնակիցն էր Նապոլեոնի դեմ կռվելու համար և ռուսական մի խոշոր բանակ գտնվում էր Եվրոպայում։ Այսպիսով Ռուսաստանը չէր կարող առանձին ուշադրություն դարձնել Կովկասին և այնտեղ գտնված իր զորքերին օգնություն ուղարկել։ Ուստի Ալեքսանդրը հրամանագրել էր Ցիցիանովին նախահարձակ պատերազմական գործողություններ չսկսել Պարսկաստանի դեմ և բավականանալ լոկ անհրաժեշտ ինքնապաշտպանությամբ։ Սակայն Ցիցիանովն այնպիսի բնավորություն չէր, որ կարողանար հանգիստ նստել իր տեղը։ Բռնված լինելով նվաճողական բուռն տենդով, նա թեև նախահարձակ չէր լինում, բայց պատերազմի առիթներ շարունակ ստեղծում էր։ Այսպես էր, օրինակ, Ղարաբաղի խանության միացումը Ռուսաստանին։ Այժմ, երբ այդ պատճառով պարսից շահը նորից 40 հազարանոց մի բանակ էր շարժում նրա դեմ, նա այդ ուժի դեմ պիտի դուրս գար մի զորքով, որ գրեթե 1200 հոգուց ավելի չէր[3]։ Շուշու բերդապահ զորքն ուժեղացնելու համար նա ուղարկում էր Գանձակում գտնված զորքը, որ բաղկացած էր 17-րդ եգերյան գնդի մի բատալիոնից և այդպիսով թողնում էր Գանձակը համարյա առանց պաշտպանության։

Հունիսի 18-ին Գանձակից դուրս գալով, դեպի Շուշի ուղևորվեց մի զորաբաժին, որի մեջ կային 493 հետևակ զինվոր և երկու թնդանոթ[4]։ Զորա-

[1] «Акты...», II, № 1443.
[2] **Н. Дубровин**, IV, с. 441.
[3] Ibid., с. 439.
[4] «Утвержд. рус. влад. на Кавказе», II, с. 201.

բաժնի գլխավորն էր 17-րդ եգերյան գնդի հրամանատարը, գնդապետ Կարյագինը, մի զինվորական, որի մազերը, ինչպես ինքն էր ասում, սպիտակել էին հրացանի տակ։ Ինչպես մայոր Լիսանևիչին վտանգ չէր սպառնում և Ցիցիանովը շատ լավ գիտեր, որ Շուշին վերցնել չէ կարողացել նույնիսկ և Աղա Մահմադ խանը, թեև այն ժամանակ այդ բերդի մեջ ռուս զորք էլ չկար։ Վերցնել այդ բնական անառիկ ամրությունը չէր կարող մանավանդ Ֆաթալի շահը, այն էլ ռուսների ձեռքից, որքան և սակավաթիվ լինեին նրանք։ Եվ եթե, այնուամենայնիվ, գնդապետ Կարյագինն ուղարկվում էր այնտեղ, այդ, ինչպես խոստովանում էր Ցիցիանովը, լոկ այն պատճառով, որ բավարարություն տված լինի Իբրահիմ խանի և Լիսանևիչի թախանձանքներին[1]։ Գլխավոր հրամանատարն, իհարկե, շատ լավ գիտակցում էր, թե մի բուռն զինվորներ նա գցում էր անհուն քանակությամբ հեծելազորք ունեցող թշնամի բանակի բերանը։ Բայց նա ուներ մի շարք նկատառումներ, որոնք ներելի էին դարձնում այդքան անզգույշ մի ձեռնարկությունը։ Ամենից առաջ նա հույս ուներ, որ Իբրահիմ խանը կմիացնե ռուս զորքերին իր հեծելազորը, որ բավական ուժեղ էր և ստվարաթիվ և ուներ հռչակված անուն։ Բացի դրանից, ռուսաց զորքի դրությունը լավ կլիներ և պարենավորման տեսակետից, դարձյալ նույն Իբրահիմ խանի ջանքերով, ինչպես այդ նախատեսված էր և Քյուրակ չայի դաշնագրությամբ։ Մնում էր մի դժվարություն և դրա դեմ էլ Ցիցիանովը ձեռք էր առնում հարկավոր նախազգուշություն։ Այդ Ասկարան բերդի հարցն էր։ Ասկարանը շինված էր Կառկառ գետի երկու ափերին, այնտեղ, ուր այդ գետը դուրս էր գալիս մի նեղ կիրճից, որի միջով էլ անցնում է Շուշի տանող ճանապարհը։ Եթե մինչև Կարյագինի հասնելը՝ Ասկարանը գրավեին պարսիկները, այն ժամանակ կտրված կլիներ Շուշու ճանապարհը։ Բայց այս դեպքում Ցիցիանովը հույս ուներ, թե Լիսանևիչը, դուրս գալով Շուշուց, կգար Կարյագինին ընդառաջ և հարձակում կգործեր Ասկարանի պարսկական զորքի վրա թիկունքից և, միանալով Կարյագինի հետ, միացյալ ուժերով ճանապարհ բաց կաներ մինչև Շուշի։

Սակայն գլխավոր հրամանատարի այս ակնկալություններից ոչ մեկն էլ չարդարացավ։ Իբրահիմ խանը ձիավոր զորք չհավաքեց և բավականացավ նրանով, որ իր որդի Մամեդ Հասան աղան ուներ 100 հոգուց բաղկացած մի ձիավոր խումբ, որ գործել էր Լիսանևիչի հետ Արաքսի ափին։ Ռուսաց զորքը պարենավորելու տեսակետից էլ Իբրահիմ խանը կատարելապես պարտազանց գտնվեց։ Մայոր Լիսանևիչն էլ դուրս չեկավ Շուշուց՝ Կարյագինին օգնության ձեռք կարկառելու համար, թեև այս մասին ուներ վճռական հրաման Ցիցիանովից։ Այստեղ էլ դարձյալ նույն խանի ձեռքն էր խաղում։ Նա հավատացնում էր, թե հենց որ ռուսական զորքը դուրս կերթա Շուշուց, իսկույն հայերն ու թուրքերը կապստամբեն[2]։ Այն հանգամանքը, որ ապստամբելու պատրաստ բերդականների առաջին շարքում խանը դնում էր և հայերին, մի շատ լավ ապացույց էր, թե նա իսկությունը չէր ասում, այլ հնարում էր, քանի որ հայերը ռուսներին դիմադրելու տրամադրություն երբեք չեն ունեցել։ Վաղորոք նախատեսելով, որ զուր են Իբրահիմ խանի վրա դրած հույսերը, Ցիցիանովը, նեղն ընկած, տեսնելով նրան շրջապատված մահմեդական թշնամի տարրերով, որոնք պատրաստ էին ապստամբվելու հարմար րոպեին, հիշեց Ղարաբաղի հայերին, որոնց ինքն այնքան արհամարհել էր, այնքան վնասել։ Հունիսի 19-ին, Կարյագինի ուղևորության մյուս օրը, նա գրում էր մայոր Լիսա-

[1] «Акты...», II, № 1451.
[2] «Акты...», II, № 1441.

նեիշին, թե որովհետև ինքը հույս չունի, որ Իբրահիմ խանն այսուհետև կհավաքե և դուրս կբերե որևէ ձիավոր զորք, ուստի ուղարկում է Ղարաբաղի հայերին ուղղված մի կոչ իր թարգմանությամբ հանդերձ և հրամայում է տարածել ամեն տեղ, բայց ոչ առանց խանի գիտության։ Եվ ահա ինչ էր գրում այդ հայատյաց մարդը.

«Մի՞թե դուք, Ղարաբաղի հայեր, որ մինչև այժմ փառավորվում էիք ձեր քաջությամբ, փոխվել եք այժմ, երբ ձեր տիրողը, Ղարաբաղի բարձրաստիճան Իբրահիմ խանը մտել է ռուսական կայսրության մշտնջենական հպատակության մեջ։ Դուք այժմ ավելի քաջ պիտի լինեիք, հույս դնելով կայսերական ուժերի կարողության վրա, բայց դարձել եք կնանման և նմանվում եք մյուս հայերին, որոնք պարապում են միայն առևտրի գործերով։ Ինձ հայտնի է ձեր վաղեմի քաջությունը, ուստի և կանչում եմ ձեզ մեծ և ամենազոր թագավոր կայսրի սրբազան անունով՝ միանալ նրա մեծափառ և անպարտելի համառուսական զինվորներին ընդդեմ պարսկական զորքերի, որոնք ձեռնարկել են ավերելու Ղարաբաղի երկիրը և հափշտակելու ձեր ամեն մեկիդ անձնական կայքը։ Ձեզանից պահանջված ամբողջ օգնությունը կլինի այն, որ մինչդեռ ռուսական անպարտելի զորքերը կկոտորեն թշնամուն, դուք թիկունքից կխփեք նրան ձեր հեծելազորով և փախչողին հարվածեք ու ոչնչացնեք։ Այս բանի համար ուղարկում եմ ձեզ մոտ զորքերի նոր ուժեղացումով, քաջ և հրացանի տակ մազերն սպիտակացրած՝ ռուս զորքերի գնդապետ Կարյագինին և նորից կոչ եմ անում ձեզ աջակցել նրան պատերազմական գործողությունների մեջ։ Ուշքի եկեք, ներշնչվեցեք ձեր նախկին քաջությամբ, պատրաստ եղեք այս տարվա հաղթություններին և ռուսական զորքերի ուժեղ օգնությամբ ցույց տվեք, որ դուք այժմ էլ նույն քաջ ղարաբաղցի հայերն եք, ինչպես առաջ եղել եք ահարկու պարսկական հեծելազորքի համար»[1]։

Այս կոչը տարածվեց Ղարաբաղի հայության մեջ։ Բայց ի՞նչ եղավ։ «Բայց ամայացած երկրի մեջ,— ասում է ռուս պատմագիրը,— այժմ այլևս չկային ոչ հին մարտիկները, ոչ նրանց անվեհեր առաջնորդները՝ մելիքները։ Ոմանք պառկած էին գերեզմաններում, մյուսները տնավեր էին դարձել հենց Իբրահիմ խանի ձեռքով, իսկ մեծամասնությունը բոլորովին թողել էր հայրենիքը, ցրվելով հարևան իշխանությունների մեջ։ Հին հարգելի տոհմերի տեղ գյուղապետներ էին նշանակված հասարակ ծագման տեր մարդիկ, որոնք ժողովրդի աչքում ամենափոքրիկ հեղինակություն անգամ չունեին և որոնք, առաջիններից զանազանվելու համար, կոչվում էին «խանական մելիքներ»։ Ամենուրեք, ուր դեռ նոր կային ծաղկած հողեր, այժմ երևում էին միայն գյուղերի ավերակներ, թթենիների ընդարձակ այգիների մնացորդներ, մեկ էլ երեսի վրա թողնված ու լքված արտեր»[2]։ Հազիվ թե կարելի լինի ռուսաց պաշտոնական պատմագրության այս խոսքերից ավելի բնորոշ և ուժեղ արտահայտություն գտնել ցարական տմարդի քաղաքականությունն իր ամբողջ էությամբ ներկայացնելու համար։ Ցիցիանովն, այդ քաղաքականության ամենավատ ստրուկ գործիչներից մեկը, չստացավ հայերից հին ահարկու հեծելազոր, որ կարողանար Կարյագինի փոքրիկ արշավախմբի թև ու թիկունք հանդիսանալ։ Եվ անարդարություն էլ կլիներ, եթե ստանար։ Բայց և այդպես դարձյալ հայերն էին, որ բարերարություն արեցին իրենց ցեղի անհաշտ թշնամուն։ Եթե Ղարաբաղի լեռներից քաջարի հայկական հեծելազոր չիջավ, դուրս եկավ, սակայն մեկը, որ ինչպես կտեսնենք, Կարյագինի զորաբաժնի փրկիչը հանդիսացավ։ Այդ մեկը

[1] «Акты...», II, № 1714.

[2] «Утвержд. рус. влад. на Кавказе», II, с. 200.

Վանի (Հովհաննես) յուզբաշի Աթաբեկյանն էր, Ջրաբերդի Կուսապատ գյուղից, որդի Հարություն յուզբաշու, որ իր ծագումն առաջ էր բերում հին հայ ազնվական մի տոհմից։ Վանի յուզբաշու կատարած գործն այնքան խոշոր էր, որ նա արժանացել է նույնիսկ առանձին կենսագրության[1], ուր գտնում ենք մի քանի մանրամասնություններ այն հանգամանքների մասին, որոնք այդ երիտասարդ հայ հայրենասերին ստիպեցին բերել Շուշի դիմող ռուսական զորքերի զորաբաժնի մեջ։ Վանի յուզբաշին իր հոր և Հակոբ անունով եղբոր հետ ապրում էր իր հայրենի Կուսապատ գյուղում, երբ 1804 թվի վաղ գարնան, ինչպես տեսանք, տեղի ունեցավ մայոր Լիսանևիչի արշավանքը Գանձակից Ղարաբաղի վրա, մի արշավանք, որ չհասնելով իր բուն նպատակին, վերջացավ նրանով, որ 250 հայ ընտանիքներ քշվեցին Գանձակ։ Դրանց մեջ էր և Վանի յուզբաշու ընտանիքը։ Երիտասարդ հայ յուզբաշին ծանոթացավ գնդապետ Կարյագինի հետ, որ բարեկամական զգացմունքով կապվեց նրա ընտանիքի և մանավորապես ծերունի Հարություն յուզբաշու հետ։ Կարյագինի ջանքերով էր, որ Աթաբեկյանների ընտանիքը թույլտվություն ստացավ վերադառնալ դարձյալ Կուսապատ գյուղը, տանելով իր հետ իր բոլոր գույքն ու կայքը։ Այդ բարերարությունը Վանի յուզբաշին չմոռացավ։ Եվ երբ Կարյագինը գնում էր Շուշի, նա թողեց իր գյուղը և միացավ արշավախմբին, գրվելով կամավոր։

Կարյագինի զորաբաժինը, յոթ օր ճանապարհ կտրելուց հետո, հունիսի 24-ին, անցնելով Շահ Բուլաղ անունով գետակը, մոտեցավ Ասկարանի կիրճին և գտավ նրա բերդը գրավված պարսիկներով։ Շահ Բուլաղից պարսիկների ձիավոր խմբերն արդեն սկսեցին հետամուտ լինել ռուսաց փոքրիկ զորախմբին, շրջապատելով նրան չորս կողմից։ Կարյագինը կռիվ տալով առաջ էր գնում, բայց Ասկարանը ցույց տվեց նրան, որ Շուշու ճանապարհը կտրված է, ուստի և կանգ առավ, որոնելով հարմար դիրք, ուր կարելի կլիներ հաջողությամբ պաշտպանվել։ Այս րոպեից, ահա Վանի յուզբաշին սկսում է անգնահատելի ծառայություններ մատուցել ռուսներին, շնորհիվ այն հանգամանքի, որ իր հինգ մատների պես ճանաչում էր ամբողջ շրջանը։

Ասկարանի բերդին դեռ մոտ երեք վերստ չհասած գտնվում է մի հին և մեծ թաթարական գերեզմանատուն, որ կոչվում է Կարա Հաջի Բաբա։ Գերեզմանատունը տափարակ տեղ է, բայց նրա մեջտեղ մի փոքրիկ թումբ է բարձրանում, որի վրա շինված էր մի մեծ քարակերտ «քյումբազ» (գմբեթավոր հուշարձան)։ Վանի յուզբաշին այդ տեղը ցույց տվեց իբրև լավագույնը պաշտպանողական նպատակների համար։ Կարյագինն իր ամբողջ զորաբաժնով բնակվեց այդտեղ, ամրացրեց այն, ինչպես կարելի էր։ Պարսիկները, նկատելով ռուսական զորքերի սակավավորությունը, հախուռն հարձակումներ գործեցին նրանց վրա հաջորդաբար մի քանի անգամ, բայց ամեն անգամ էլ ետ քշվեցին ռուսական դիրքերից։ Այս պաշտպանությունը, սակայն, շատ թանկ նստեց ռուսներին. համառ և արյունահեղ կռիվը նրանց շարքերից դուրս բերեց զորաբաժնի համարյա կես մասը. սպանվեցին 33 և վիրավորվեցին 163 զինվորներ։ Առաջին իսկ օրվանից ստեղծվում էր շատ ծանր և վտանգավոր դրություն։ Մայոր Լիսանևիչից լուր չկար և այս ցույց էր տալիս, թե նա չէր էլ դուրս եկել Շուշուց. իսկ առաջ գնալ, վերցնելով Ասկարանը, կնշանակեր հոժար կամքով ընկնել թակարդի մեջ, որովհետև թշնամին իսկույն կկտրեր կիրճի բերանը, և զորաբաժինը չէր կարող այլևս դուրս գալ այդ նեղ ձորից։ Հետևյալ օրը պարսիկները հարձակում չգործեցին, այլ բավականացան միայն

[1] В. Потто, Перв. добров. Карабага, Тифлис, 1902.

հրաձգությամբ։ Փիր Ղուլի խանը, տեսնելով ռուսական զորքի փոքրությունը, համոզված էր, որ նա մի օրից ավելի չի դիմանա և անձնատուր կլինի։ Բայց երբ այդ ակնկալությունը չարդարացավ, այն ժամանակ նա հրամայեց Կառկառ գետի ափին դնել ղամբուրակներ (փոքրիկ թնդանոթներ) և ամրակոծել գետի հակառակ ափը, որպեսզի ռուսները չկարողանան խմելու ջուր վերցնել։ Այս մի մեծ զրկանք էր ամեն կողմից շրջապատված զորաբաժնի համար։ Անտանելի շոգը և ծարավը տանջում էին մարդկանց. կորուստներն օր օրի վրա շատանում էին։ Կարյագինը վճռեց հարձակում գործել ջրի ճանապարհը կտրող ղամբուրակների վրա և ոչնչացնել նրանց։ Այս նպատակի համար նա ընտրեց 100 զինվոր և հանձնեց նրանց Լադինսկի ազգանունով սպային, որին պատվիրում էր գրոհ տալ թշնամու դիրքերի վրա։ Հանձնարարությունը կատարվեց փայլուն հաջողությամբ։ Քաջարի զինվորները սվիններով վանդեցին պարսիկներին և նրանց բոլոր ղամբուրակները գետը թափեցին։ Սակայն այդ հաջողությունը շոշափելի բարվոքում չմտցրեց պաշարվածների դրության մեջ։ Նրանց թիվը հետզհետե պակասում էր։ Իսկ պարսկական բանակը մեծանում էր։ Աբաս Միրզայի զորքն էլ անցնելով Ասկարանի կողմը, միացավ Փիր Ղուլի խանի զորքին։ Ռուսների ձեռքն ընկավ Աբաս Միրզային տարվող մի նամակ, որ գրել էր Ֆաթալի շահը։ Նամակից երևում էր, որ Աբաս Միրզան խնդրել էր իր հորը օգնական զորք ուղարկել, մանավանդ թնդանոթներ։ Հայրը, ուղարկելով թե մեկը, թե մյուսը, գրում էր, թե ինքը մտադիր էր գումարել պետական բոլոր զորքերը և անձամբ գնալ ռուսների վրա, նրանց բույնը ոչնչացնելու համար։

«Բայց,— ասում էր նա,— ստանալով ձեր զեկույցը, թե ռուսներին դուք չափազանց նեղել եք և թուլացրել եք նրանց ուժերը, այժմ ձեզ հրամայում եմ, որ այսօր ռուսների վիճակն անպատճառ դուք վճռեք։ Հարձակվեցեք ռուսների պաշտպանության տեղի վրա և նրանց փոշի դարձրեք իմ քաջ զորքերով և թնդանոթներով։ Դուք գրում եք, թե այն պատճառով չեք հարձակվել ռուսների վրա, որ ափսոսում էիք կորցնել իմ պետական զորքը, բայց ես ձեզ կասեմ, որ ով ուզում է հավատարմությամբ ծառայել իր թագավորին և հայրենիքին, նա պիտի չխնայի իր հոգին ու արյունը։ Մեր պետության և ամբողջ աշխարհի օգտի համար երբեք այսպիսի օգտակար և հարմար առիթ գուցե չի լինի, ինչպես այժմ»[1]։

Ի լրումն ամենայնի, պաշարվածների հացն ու ռազմամթերքն էլ հատնում էին։ Լքման նշաններ սկսեցին երևալ։ Մի սպա, Լիսենկո անունով, 55 զինվորների հետ փախավ պարսիկների մոտ և անձնատուր եղավ։ Այդ օրը, հունիսի 27-ը, ամենածանր օրն էր Կարյագինի համար։ Բայց նա չկորցրեց իր հոգեկան արիությունը և չնայած, որ ինքն էլ վիրավորված էր, ամուր մնաց իր հերոսական համառության մեջ և թուղթ ուղարկեց Ցիցիանովին, որին հայտնում էր, թե իր զորաբաժինն սպառել է ոչ միայն իր պաշարն ու ռազմամթերքները, այլ քաջության և անձնազոհության բոլոր միջոցները և խնդրում էր իրեն օգնության հասնել։ Կարյագինի դրության մասին գլխավոր հրամանատարին իմաց էր տվել և Իբրահիմ խանը, ասելով, թե ինքն ու մայոր Լիսանևիչը չեն կարող թողնել Շուշին և օգնության գնալ Ասկարան, քանի որ բերդում սպասվում է հայերի և թուրքերի ապստամբություն։ Խանն առաջարկում էր, որ ինքը Ցիցիանովը, որ գտնվում էր Գանձակում, գա ազատելու Կարյագինին չափազանց վտանգավոր դրությունից։ Ցիցիանովն ինքն էլ այդպես էր վճռել, բայց չէր կարող արագություն ցույց տալ այս պարագայի մեջ,

[1] Дубровин, IV, с. 449.

քանի որ սպասում էր, որ Թիֆլիսից զորքեր գան, որ նրանց վերցնե իր հետ։ Առհասարակ Կարյագինի զորաբաժնի դրությունը չափազանց անհանգստացնում էր Ցիցիանովին, հասցնելով նրան հաճախ հուսահատության դուռը։ Իր այդ տրամադրությունը նա արտահայտում էր մանավանդ Իբրահիմ խանին և մայոր Լիսանևիչին գրած նամակների մեջ, քանի որ այդ երկուսին էր համարում պատճառ, որ Կարյագինի զորաբաժինն ուղարկվեց Շուշի։ Այսպես, նա ասում էր Իբրահիմ խանին իր նամակի մեջ. «Ինչպե՞ս եք դուք ուզում, որ ես ինքս գամ զորքով և ձեր տեղ կռվեմ պարսիկների հետ, երբ դուք և ամենափոքր չափով ձեր կողմից չեք աջակցում ռուսական զորքերին, երբ դուք ոչ մի օգնություն չարիք գնդապետ Կարյագինին, որ նա կարողանա միանալ մայոր Լիսանևիչի հետ և հասնել Շուշու բերդը և երբ ձեր բարձրաստիճանությունը գուցե չէ պատրաստել պաշարեղեն՝ զորքերը պարենավորելու համար, առանց որի ես երկյուղ եմ կրում, որ Կարյագինն էլ չմնա, իսկ պաշարեղեն հասցնել նրան այստեղից, դուք ինքներդ էլ գիտեք, որ անհնարին է։ Իսկ ես, ուղարկելով ձեզ մոտ զորքեր ձեր երկիրը պաշտպանելու համար, երբեք չեմ երևակայել, որ նրանց գնալուց հետո ձեր զինվորները կդառնան կնանման, և որ ձեր բարձրաստիճանությունը հանգիստ նստած, ոչ մի բանի մեջ, նույնիսկ ձեր օգտի համար, չեք աջակցի։ Նկատի առնելով այս ամենը, ձեր բարձրաստիճանությունն ինքներդ կհետևցնեք՝ կարո՞ղ եմ ես, պարտավո՞ր եմ ես ուղարկել ձեզ մոտ նոր զորքեր, երբ ձեզանից ոչ մի օգնություն չկա նրանց։ ... Իսկ ձեր այն գրության առիթով, որի մեջ գրում եք, թե թեպետ և հարկավոր էր, որ դուք մայորի հետ գնայիք Կարյագինին օգնության, բայց չկարողացաք թողնել բերդը, վախենալով հայերի և թուրքերի ապստամբությունից, ես պիտի ասեմ ձեր բարձրաստիճանության, որ ձեր հպատակների այդ տեսակ տրամադրության մեղքը ձերն է, որովհետև այս հետևանքներն են այն փաղաքշանքներին և ընդունելություններին, որ գտնում էին ձեզ մոտ Բաբա խանից ուղարկվածները, որի մասին ես բավական խոսել եմ ձեզ հետ բանակում, մեր տեսակցության միջոցին»[1]։

Ավելի խիստ լեզվով նա խոսում էր Լիսանևիչի հետ։ «Չեմ զարմանում ես,— գրում էր նա,— այն բանի վրա, որ Ղարաբաղի Իբրահիմ խանը չէ աջակցում իր հեծելազորով, բայց ինձ համար չափազանց տարօրինակ է այն, որ դուք մնում եք ինչպես բերդին մեխված այնպիսի մի ժամանակ, երբ գնդապետ Կարյագինը, Իբրահիմ խանի ուղարկած այս սուրհանդակի խոսքերով, գտնվում է վտանգի մեջ. նա Ասկարանի մոտ ճակատամարտ է ունեցել պարսիկների հետ, իսկ Ասկարանն երեք աղաջից ավելի հեռու չէ և դուք չմիացաք նրա հետ, որպեսզի օգնեք նրան.— այն ժամանակ նա կտրված չէր լինի և ազատ կհասներ Շուշի»[2]։ Իսկ հետևյալ հրամանագրության մեջ, հունիսի 28-ից, Ցիցիանովն արդեն բոլոր մեղքը գցում էր Լիսանևիչի վրա։ «Պիտի նկատեմ ձեզ,— այսպես էր գրում նա,— որ Կարյագինին իմ ձեռքով ուղարկելու առիթ դառել է ձեր ավելորդ շտապողականությունը, և եթե նրան մի բան պատահե, դուք կլինեք պատճառը, որովհետև դուք, գտնվելով զորաբաժնի հետ բերդի մեջ, երկյուղ կրելու տեղիք չունեիք։ Պարսիկներն երբեք նրան (Շուշին) չեն վերցնի»[3]։

Բայց այսպիսի թղթերով չէր, որ պիտի լավանար Կարյագինի զորաբաժնի հուսահատական դրությունը։ Ամբողջ պաշարված բանակի կյանքը մազից էր

[1] «Акты. .», II, № 1448.
[2] Ibid. № 1718.
[3] Ibid., № 1721.

կախված։ Վանի յուզբաշին, որ ինչպես երևում է գնդապետ Կարյագինի տված վկայականից, քաջաբար կռվում էր ռուսաց զորքի հետ մի շարքում, պաշարման սկզբում հանձն առավ նամակ տանել Շուշի՝ մայոր Լիսանևիչին և երեկոյան դուրս գալով բանակից և զգուշությամբ թաքնվելով անցավ պարսից պահակների զորքերի գիծը, հասավ Խարամորթ հայաբնակ գյուղը, ուր հանդիպեց Ջրաբերդի հռչակավոր Մելիք Մեժլումի որդի Մելիք Հաթամին, ասրի բեկ Փիրումյանին և ուրիշ հայերի, որոնք այդտեղի բարձրություններից վրդովահար դիտում էին, թե ինչպես մի բուռ քրիստոնյաներ մաքառում են անթիվ պարսիկների դեմ։ Այդ տեսարանը կանգնեցրեց Վանի յուզբաշուն։ Մտածելով, որ օրհասական րոպեին ինքը կարող է շատ հարկավոր լինել գնդապետ Կարյագինին, նա նամակը Շուշի ուղարկեց մի ուրիշ ձեռքով, իսկ ինքը նույն գիշերը, նույն ճանապարհով վերադարձավ պաշարված բանակը։ Դրությունն այստեղ, ճիշտ որ, օրհասական էր դարձել։ Արաս Միրզան իմանալով դասալիք ռուս զինվորներից, թե որքան չնչին է Կարյագինի ուժը, սաստկացրեց իր հարձակումները նրա վրա։ Եվ այդ բախումներին դիմադրելու համար ռուսական բանակում մնացել էին ոչ ավելի, քան 150 մարդիկ, որոնք դեռ ընդունակ էին կռվելու։ Այլևս մարդկային ոչ մի հնարավորություն չկար այդպիսի պայմաններում մնալու համար։ Կարյագինը գումարեց զինվորական խորհուրդ։ Մայոր Կոտլյարևսկին, որ ապագա պատերազմներում պիտի ստանար հերոսական մեծ հռչակ, խորհուրդ տվեց ետ քաշվել, պատռելով թշնամու շարքերը, մինչև Շահ Բուլաղ անունով աղբյուրը, ուր կար մի հին ամրոց, գրավել այն և դիմադրել պարսիկներին, մինչև որ Ցիցիանովը օգնություն կհասներ։ Այդ առաջարկությունն ընդունվեց միաձայն։ Սակայն կարելի՞ բան էր, որ բազմաթիվ վիրավորներով ծանրաբեռնված մի բուռ քաղցած մարդիկ կռիվ տալով ճանապարհ բաց անեին թշնամու ահագին բանակի միջով, որ շրջապատել էր նրանց ամեն կողմից։ Այս հարցը շատ չէր զբաղեցնում պաշարվածներին։ Արդեն ստեղծվել էր այն հոգեբանական դրությունը, երբ ամեն մեկի համար լավ էր պատերազմի մեջ սպանվելը, քան թշնամուն անձնատուր լինելը։

Վճռվեց գործողությունն սկսել հունիսի 27-ից լույս 28-ի գիշերը։ Բայց Վանի յուզբաշին, խոսակցություն սկսելով Կարյագինի հետ ասաց. «Կռվով ճանապարհ բաց անել անկարելի է. մեզ բոլորիս կոչնչացնեն առանց որևէ օգուտի։ Վստահեցեք ինձ. Ղարաբաղն ես ճանաչում եմ իմ հինգ մատների պես և անց կկացնեմ ձեզ այնպիսի կածաններով, որոնցով ոչ ոք չէ գնացել և որոնք հենց այդ պատճառով պարսիկների հսկողության համարյա թե չէին ենթարկված»։— «Իսկ այդ տեղերով կանցնե՞ն թնդանոթները»,— հարցրեց Կարյագինը,— «Ուր չեն անցնի, այնտեղ մենք նրանց կտանենք ձեռքերի վրա,— պատասխանեց Վանի յուզբաշին,— ես կազատեմ և մարդկանց, և թնդանոթները»։ Կարյագինը և Կոտլյարովսկին անպայման վստահեցան հայ երիտասարդին[1]։

Գիշերվա մթության մեջ սկսվեց նահանջը։ Կարյագինը գերեզմանատանը թողեց իր ծանրոցը, որպեսզի պարսիկները, եթե նկատելու էլ լինեն իր հեռանալը, նախ թալանով զբաղվեն և այդպիսով հնարավորություն տան ռուսներին առաջ անցնել։ Թնդանոթները տանում էին զինվորները, որովհետև եթե կենդանի էին մնացել մի քանի ձիեր, դրանց վրա էլ հիվանդ և վիրավոր սպաներին էին նստեցրել։ Վանի յուզբաշին գնում էր առջևից, իսկ նրան, խորին լռության մեջ, աշխատելով ոչ մի աղմուկ չբարձրացնել, հետևում էր ամբողջ

В. Потто, Перв. добров. Карабага, с. 20—21.

զորաբաժինը։ Ահա ռուսներն այնքան առաջ գնացին, որ իրենց ետևում թողին պարսից պահակախմբերի պաշարողական գիծը, միայն հեռվում մի կողմում դեռ նշմարվում է մի մեծ ու մութ զանգված։ Վանին բացատրում է, թե այդ պարսկական գլխավոր պահակն է, որ հսկում է Գանձակ տանող մեծ ճանապարհի վրա։ Անփորձ անցան և այդ զանգվածի մոտով, բայց ահա հանկարծ երես առ երես հանդիպեցին մի ինչ-որ ձիավոր խմբի։ Գիշերային լռության մեջ հանկարծ հրացանի պայթյուն է որոտում, որ կրկնվում է պարսկական գլխավոր պահակախմբի կողմից, և սկսվում է իրարանցում։ Բայց մինչև որ այնտեղ գլխի ընկան, թե բանն ինչումն է, մինչև որ ոտքի կանգնեցրին զորքերը և ուղարկեցին գնացողների ետևից, ռուսները, արագացնելով իրենց քայլը, հեռացան և կանգնած էին արդեն Շահ Բուլաղի ամրոցի պատերի տակ։

Շահ Բուլաղ կոչվում է մի մեծ աղբյուր, որ բխում է մի մեծ և քարքարոտ բլուրի տակից և առվակ կազմելով կտրում է Շուշուց Գանձակ տանող ճանապարհն ու գնում ոռոգելու տափարակ դաշտերը։ Վատառողջ է համարվում այդ հորդ ու մեծ աղբյուրի ջուրը, բայց և այդպես, նրա շուրջը նկատվում են շինությունների հետքեր, որոնք ցույց են տալիս, թե մի ժամանակ այդտեղ եղել է բնակություն, և բնակվողն էլ, անշուշտ, եղել է մի հզոր տիրող։ Աղբյուրի կողքին բարձրացած է մի փոքրիկ բլուր, որի գլուխը գրաված է մի հին ամրոց, շրջապատված բարձր պարիսպներով, որոնք ունեն վեց ատամնավոր աշտարակներ։ Ամրոցը գրաված ունեին պարսիկ զինվորները, թվով 150 հոգի։ Ռուսները թնդանոթի հարվածներով խորտակեցին ամրոցի դուռը և, սվիններով դուրս քշելով պարսիկներին, իրենք գրավեցին ամրոցը։ Նրանց դրությունը լավանում էր այն կողմից, որ այս նոր դիրքը Դարա Հաջի Բաբայի գերեզմանատունը չէր, այլ հայթայթում էր պաշտպանության ավելի հզոր միջոցներ։ Սակայն փոքրաթիվ զորաբաժինը դրանից ավելի օգուտներ չէր ստանում։ Իր՝ Շահ Բուլաղ մտնելուց երկու ժամ հազիվ անցած, երևաց պարսից ամբողջ բանակը։ Փոքրիկ ամրոցը շրջապատվեց բոլոր կողմերից։ Իսկ ամրոցի մեջ նստած ռուսները հացի փոխարեն խոտ էին ուտում և խոտն էլ շուտով հատավ։ Պարսիկներից խլված ձիաներն էլ մորթվեցին և արագ ոչնչացվեցին։ Դրությունը դարձյալ դառնում էր հուսահատական։ Լուր ստացվեց, թե Ղարաբաղ է մտել և դեպի Ասկարան է շարժվում պարսից գլխավոր բանակը Բաբա խանի (Ֆաթալի շահի) գլխավորությամբ։ Դրությունը վատանում էր օր օրին, այս բանը գիտեր Ցիցիանովը, որ, կատարյալ հուսահատության հասած, արդեն կորած էր համարում Կարյագինին և նրա զորաբաժինը։ Եվ գլուխը կորցրած գլխավոր հրամանատարը շարունակում էր մայոր Լիսանևիչի վրա թափել իր մաղձը։

«Հարկավոր չեն ինձ,— գրում էր Ցիցիանովը Լիսանևիչին հուլիսի 1-ին,— ձեր տեղեկությունները, երբ գրված ձեր ավելորդ վախերից (արտահայտված հունիսի 26-ի զեկուցագրի մեջ), ես ուղարկեցի դժբախտ, բայց քաջության մեջ իր հավասարը չունեցող գնդապետ Կարյագինին, զոհ տալով նրան, որպեսզի ամրացնեմ ձեզ, այն բերդի մեջ նստածից, որ Աղա Մահմադ խանն էլ չկարողացավ վերցնել, թեև բերդն այն ժամանակ ռուս զորք չուներ, իսկ ձեզ մոտ կան 300 զինվորներ և 3 թնդանոթ, բայց վախեցած էիք Բաբա խանի գալուց։ Լավ կլիներ ձեզ համար, գտնելով լավ ուղեցույցներ, գիշերով պարեն հասցնեիք մի որևէ կերպով գնդապետ Կարյագինին, որ զրկվելով համարյա բոլոր ձիերից, ունենալով 160 վիրավոր, կարողացավ պատռել թշնամու շարքերը և նահանջել բերդը փառքով, և այդտեղ կսպասե մինչև իմ գնալը, եթե պարեն ունենա, թեև ինքն էլ վիրավորված է, և շատ սպաներ նույնպես վիրավորված են։ Սարսափից չեմ կարողանում երևակայել նրա

դրության մասին, որ ճշտապես ձեզանից է գոյացել։ ...Ինքս սպասում եմ Թիֆլիսից (զորքերի) և կարծում եմ, որ արդեն ուշ կլինի ի մեծ դժբախտություն իմ, որ հանդիպում է ինձ իմ 35 ամյա ծառայության ընթացքում»[1]։

Մինչդեռ այսպես էր գլխավոր հրամանատարը, Շահ Բուլաղի փոքրիկ ամրոցի մեջ դրությունը հանգել էր օրհասականի։ Սովը տանջում էր հին ատամնավոր պարիսպների պաշտպաններին։ «Այս սոսկալի ծայրահեղության մեջ,— գրում է ականատես սպա Լադինսկին,— այն ժամանակվա մեր իսկական բարերարը, որի անունն անմոռանալի պիտի մնա բոլոր նրանց համար, որոնք գտնվում էին Կարյագինի զորաբաժնում,— մեր հավատարիմ յուզբաշին (Վանին) առաջարկեց մեզ ձեռք բերել, ինչքան հնարավոր կլինի, ուտելեղեն, բայց ամենագլխավորը,— հանձն էր առնում իմաց տալ իշխան Ցիցիանովին մեր անելանելի դրության մասին»[2]։ Օգուտ քաղելով այդ հանգամանքից, Կարյագինը թուղթ էր գրում Ցիցիանովին, հայտնելով, որ եթե նա օգնության չհասնի, զորաբաժինը կարող է ոչնչանալ ուտելիքի պակասությունից։ Վանի յուզբաշին պատմել է, թե ինչպես նա կատարեց իր վրա վերցրած գործը, և մենք կարդում ենք այդ պատմվածքի մեջ հետևյալը. «Ստանալով Կարյագինի թուղթը և խնամքով թաքցնելով նրան, նկատի առնելով, որ պարսիկները կարող են ինձ բռնել, ես վճռեցի գնալ Կուսապատ գյուղը, որ հեռու էր Շահ Բուլաղից մոտ 20 վերստ, ուր ապրում էր հայրս և ուր, ինչպես գիտեի, կարելի էր գտնել հաց, որ հայերը թաքցրել էին հորերում։ Շահ Բուլաղից ես դուրս եկա գիշերը և անփորձ անցնելով թշնամու զորքերի միջով, հասա վերջապես, մեր տունը։ Գյուղում բնակիչներ չկային, բացի իմ հորից և եղբորից իրենց ընտանիքներով և մի քանի ռանչպարներով, բոլոր մնացածները փախել էին թշնամու ահից։ Իսկ կրտսեր եղբայր Հակոբին, որ չափազանց անվեհեր և համարձակ մեկն էր, ես իսկույն ուղարկեցի Գանձակ Կարյագինի թղթի հետ, իսկ ինքս սկսեցի իմ հոր հետ աղալ ցորենը և մինչև հետևյալ գիշերը թխեցի 40 մեծ հաց, սխտոր և այլ տեսակ հունդեր վերցրի հետս և լուսաբացի մոտ այս բոլորը հասցրի Շահ Բուլաղ։ Կարյագինն ու Կոտլյարովսկին բաժանեցին այդ աղքատիկ պաշարը զինվորների մեջ, վերցնելով իրենց համար ուրիշներին հավասար բաժին։ Առաջին հաջող փորձն ստիպեց Կարյագինին ուղարկել ինձ հետ հետևյալ օրը մի սպայի և 50 զինվորի՝ պարենի ավելի մեծ քանակություն ամբարելու համար։ Մենք բերդից դուրս եկանք գիշերը, մեզ հաջողվեց թաքնվելով անցնել պաշարողների միջով, առանց նրանցից նկատված լինելու և արդեն քիչ հեռացել էինք պարսից բանակից, երբ հանկարծակի հանդիպեցինք ձիավոր պահակախմբի։ Նա ամբողջապես ոչնչացվեց, այնպես որ և մի հատ մարդու էլ չհաջողվեց ազատվել, և մենք իսկույն հողով ծածկեցինք արյունը, իսկ սպանվածների մարմինները քաշեցինք ձորը և այնտեղ ծածկեցինք քարերով ու թփերով։ Մենք այսպես արինք այն պատճառով, որպեսզի թաքցնենք մեր բռնած ուղղությունը, և եթե մյուս օրը պարսիկներն ուղարկեին մի նոր պահակ՝ ոչնչացվածին որոնելու համար, նա մեր կատարած գործի հետքերը չգտներ։ Լուսաբացին մենք արդեն Կուսապատ էինք։ Հայրս մինչ այդ աղացել էր մնացած ցորենը, մենք նոր հացեր թխեցինք, կերակրեցինք զինվորներին, իսկ մնացած քանակությունը վերցնելով մեզ հետ, գնացինք Ջերմուկ անունով քանդված բերդը, ուր, ինչպես ես իմացել էի, թաքնվել էին մեր հայերը։ Ջերմուկում ես նրանցից գնեցի 60 ոսկով, որ վերցրել էի հորիցս, 12 գլուխ եղջյուրավոր անասուն, իսկ

---

[1] «Акты...», II, № 1726.

[2] В. Потто, Перв. добров. Караб., с. 23.

շրջակա գյուղերում էլ գտա քիչ գինի, մրգեր, մածուն, հունդեր և երկու էլ կաթսա. այս բոլորը բեռնեցինք եզների վրա և գիշերն անփորձ վերադարձանք բերդը»[1]։

Աբաս Միրզան, չկարողանալով ուժով վերցնել Շահ Բուլաղը և տեսնելով, որ պաշարումն էլ չէ օգնում՝ առաջարկեց Կարյագինին անձնատուր լինել պատվավոր պայմաններով։ Կարյագինը, ժամանակ վաստակելու համար, համաձայնություն տվեց, բայց այն պայմանով, որ իրեն թույլ տրվի նախ ստանալ գլխավոր հրամանատարի համաձայնությունը։ Շահզադեն համաձայնվեց և չորս օր ժամանակ տվեց՝ Ցիցիանովի հետ հարաբերություն սկսելու համար, մինչև իսկ հանձն առավ այդ չորս օրվա ընթացքում ինքը կերակրել ռուսներին։

Բայց Կարյագինը թույլտվություն չէր խնդրում Ցիցիանովից, այլ գրում էր նրան (հուլիսի 5-ին) հետևյալը. «Համարձակվում եմ զեկուցանել ձեր պայծառափայլության, շտապեցեք այստեղ։ Բաբա խանը անպատճառ Ասկարանում կլինի երկուշաբթի օրը և մտադիր է, զորք թողնելով Լիսանևիչի և ինձ վրա հարձակվելու համար, 30 հազարով գնալ Գանձակի վրա, մի բան, որ հաստատ իմացվում է այն ֆերմանից, որ նա գրել է իր որդուն։ Իմ զորաբաժինը պարենի կողմից ծայրահեղ դրության մեջ է գտնվում։ Չորս օր գործ էին ածում խոտ, իսկ այժմ, երբ ուժեղացված են պարսկական բանակներն անտառում և ամեն տեղ, ձիեր են ուտում։ Աբաս Միրզան իր զորքերով բանակվել է բերդից ոչ հեռու և իրն է համարում իմ զորաբաժինը, հուսալով և ենթադրելով, երևի, թե շուտով անձնատուր կլինեմ։ Իսկ ես աշխատում եմ թույլ չտալ, որ նա ձեռք զարկե իսկական պաշարման միայն նրանով, որ ասում եմ, թե կարող եմ պատասխանել նրան ամեն բանի մասին այն ժամանակ, երբ կստանամ ձեզնից հրաման։ Եվ եթե ձեր պայծառափայլությունը չշտապեք, զորաբաժինը կարող է ոչնչանալ ոչ թե անձնատրությունից, որին ձեռնամուխ չեմ լինի մինչև արյան վերջին կաթիլը, բայց պարենի պակասությունից, որի մասին որքան գրեցի Լիսանևիչին և Իբրահիմ խանին, բայց ոչինչ չստացա։ Դարձյալ հայտնում եմ, որ գանձակեցիներն ամեն օր գրում են Աբաս Միրզային, թե ձեզ մոտ 600 հոգուց ավելի զորք չկա, և որ դուք նրանց հետ որևէ տեղ գնալ չեք համարձակվի։ Աբաս Միրզան առանձնացրել է երեք հազար զորք Գանձակ ուղարկելու համար»[2]։ Այս հուսահատական դրության Ցիցիանովը պատասխանում էր հուլիսի 6-ին ոչ պակաս հուսահատական ձևով. «Որքան ինձ ցավալի է,— գրում էր նա,— այնքան էլ ես հուսահատված եմ ձեր դրությունից. աղաչում եմ աստծուն պաշտպանել և ամրապնդել ձեզ։ Տասն անգամ գրել եմ, որ զորքեր ուղարկեն խիստ շտապողական քայլով, բայց հազիվ թե շաբաթ օրը կհասնեն, իսկ կիրակի, չնայած որ սաստիկ ջերմ ու տենդ ունեմ, դուրս կգամ, մի բան, որ վաղուց կանեի, եթե զորքերն եկած լինեին»[3]։ Այս պատասխանը հասկացրեց Կարյագինին, որ Գանձակի օգնությունը, համենայնդեպս, շուտ չի հասնի իրեն։ Ուստի նա վճռեց դարձյալ իր միջոցներով պաշտպանել իր զորաբաժնի կյանքը։ Սպասվում էր, որ շահն իր զորքով կգա հուլիսի 9-ին։ Լրտեսները հաղորդում էին, թե գալուն պես նա կհրամայե կտրել պաշարվածների ջուրը և կհարկադրե նրանց անձնատուր լինել։ Իսկ Աբաս Միրզան, իմանալով, որ Գանձակից սուրհանդակ

---

[1] Ibid., с .24—25.

[2] Н. Дубровин, IV, с. 453.

[3] «Акты...», II, № 1728.

է նկել և բերել է Ցիցիանովի պատասխանը, պահանջեց Կարյագինից, որ վերջացվի պատվավոր անձնատրության հարցը։

— Ես համաձայն եմ,— պատասխանեց Կարյագինը,— թող նորին բարձրությունը վաղն առավոտյան գրավի Շահ Բուլաղը։ Այսպիսի վստահությամբ նա խոսում էր, վճռած լինելով նույն գիշերն եթե պարպել բերդը և նահանջել դեպի լեռները, ուր հայոց գյուղերն էին գտնվում։ Սկսվում է մի նոր դժվարին շարժում, որի հոգին դարձյալ Վանի յուզբաշին էր հանդիսանում։ Վանին էր, որ ցույց էր տվել Կարյագինին պատսպարվելու մի լավ տեղ։ Այդ այն ամրոցն էր, որ գտնվում էր Մուխրաթաղ գյուղի մոտ, և որ շինել էր Ջրաբերդի մեծանուն Մելիք Հաթամը։ Հուլիսի 7-ի երեկոյան ժամը 10-ին զորաջոկը դուրս եկավ Շահ Բուլաղի ամրոցից։ Թշնամուն խաբելու համար Կարյագինը պարիսպների վրա թողեց պահապաններին, որոնք, սովորականի պես, իրար ձայն էին տալիս և այսպիսով մոլորության մեջ էին պահում պարսից պահապաններին։ Առաջնորդելով զորաջոկը և բավական տեղ տանելով նրան, Վանի յուզբաշին վերադարձավ Շահ Բուլաղ և վերցնելով պահապաններին, հիմա էլ նրանց տարավ մյուս զորքի մոտ միացնելու։ Բայց այս անգամ չհաջողվեց միանգամայն ծածկված մնալ թշնամուց։ Կաբարդու գյուղի մոտ տեղի ունեցավ մի անակնկալ դեպք։

«Հազիվ էինք մենք կարողացել միանալ,— պատմում է Վանի յուզբաշին,— և ահա նորից հանդիպեցինք մի հեծելազոր պահակի, որ փախուստի դիմեց և աղմուկ բարձրացրեց թշնամու բանակում։ Բայց պարսիկները չկարողացան մեզ հասնել, որովհետև չիմացան, թե որ ճանապարհով գնացինք մենք։ Ճանապարհին մեզ հանդիպեց մի հեղեղատ, որի միջով անկարելի էր անց կացնել թնդանոթները, և չկար փայտ, որից կարելի լիներ կամուրջ շինել։ Չորս զինվոր հոժարակամ հանձն առան պառկել հեղեղատի մեջ և նրանց վրայով անցկացրին թնդանոթները. նրանցից երկուսը մեռան, իսկ երկուսը կենդանի մնացին։ Մի քանի ժամից հետո մենք հասանք Կուսապատ գյուղի այգիները և բանակ դրինք այգիների մեջ, իսկ Կոտլյարևսկին, բոլոր վիրավորներով, առաջ շարժվեց դեպի Մուխրաթաղ, որ այստեղից հեռու է մոտ հինգ վերստ դեպի հյուսիս-արևմուտք։ Մինչ այս, մինչ այն՝ Աբաս Միրզան մեզ վրա հասավ Կուսապատում։ Սկսվեց համառ կռիվ, և պարսիկները կարողացան նույնիսկ տիրանալ թնդանոթներին, բայց ռուսները սվինամարտով ետ խլեցին։ Մեր բախտից, Կոտլյարևսկին այդ միջոցին արդեն գրավել էր Մուխրաթաղը և տեսնելով, որ այգիների մեջ պահվել այլևս անկարելի է, սկսեց նահանջել, կռվելով պարսիկների հետ ամեն քայլափոխում»[1]։

Մուխրաթաղի մեջ Կարյագինի մաշված ու տանջված զորաջոկը համեմատաբար հանգիստ էր, որովհետև տեղի լեռնոտ դիրքն, անտառները հնարավորություն չէին տալիս պարսկական հեծելազորին պատերազմական գործողություններ զարգացնել։ Աբաս Միրզան ետ քաշվեց թողնելով երեք հազարանոց մի զորաջոկ՝ ռուսներին հսկելու համար. Վանի յուզբաշին դարձյալ Կարյագինի մոտ էր և ամեն գիշեր դուրս էր գալիս՝ շրջակա հայ գյուղերից ուտելիքներ հավաքելու Մուխրաթաղի փոքրիկ բանակի համար։ Հուլիսի 9-ին Կարյագինն իմաց է տալիս Ցիցիանովին, թե ինքն այլևս վտանգի մեջ չէ։ Այս լուրն անպատմելի ուրախություն էր պատճառում գլխավոր հրամանատարին, որ հենց այդ միջոցին էլ զորք էր ստանում Թիֆլիսից, այնպես որ հուլիսի 11-ին դուրս էր գալիս Գանձակից, Վանի յուզբաշու եղբայր Հակոբի միջոցով թուղթ ուղարկելով Մուխրաթաղ, որ իրեն սպասեն այդտեղ։ «Այդ ժամանա-

1 В. Потто, Перв. добров. Караб., с. 27—28.

կից,— պատմում է յուզբաշին,— ես և Լադինսկին ցերեկներն ու գիշերները հսկում էինք թումբի վրա, աչք դցած, թե երբ ռուսները կերևան Թարթառ գետի վրա։ Շուտով մենք տեսանք հեռվում նրանց զորասյուները։ Մի հայ, որին ուղարկել էր Ցիցիանովը, եկավ հասավ մեզ, բերելով հրաման, որ եթե կարելի է՝ միանանք նրա զորաբաժնի հետ Մարդակերտ գյուղի վրա։ Գիշերն ես հանեցի ռուսներին Մուխրաթաղից և երրորդ անգամ անփորձ անցկացրի նրանց պարսկական ամբողջ զորքի միջով. լուսաբացին մենք արդեն գլխավոր հրամանատարի բանակումն էինք»[1]։ Այս տեղի ունեցավ հուլիսի 15-ին։ Ցիցիանովն ու իր զորաբաժինը մեծ ուրախություններով հանդիպեցին Կարյագինի զորքի մնացորդները։ Ինքը Ցիցիանովը բոլոր զորքերի առաջ գրկեց Կարյագինին և Կոտլյարևսկուն, շնորհակալություն հայտնեց բոլոր սպաներին և զինվորներին։ Առանձնապես շնորհակալություն հայտնեց նա և Վանի յուզբաշուն, որին ընծայեց իր մեծ արծաթե ժամացույցը։

Մյուս օրը նա շարունակեց իր առաջխաղացումը դեպի Շուշի, իսկ Կարյագինին և հրացանավորներին ուղարկեց Գանձակ հանգստանալու և բժշկվելու համար։ Սակայն պարսից բանակը խուսափում էր Ցիցիանովին հանդիպելուց։ Աբաս Միրզան իր զորքով գնաց դեպի Գանձակի կողմն, ընտրելով այնպիսի ճանապարհ, որ նրան հեռու էր պահում ռուսներից, իսկ նրա հայրն անակնկալ կերպով ետ դարձավ և գնաց Արաքսն անցնելու։ Այս մասին Ցիցիանովը դեռ հուլիսի 17-ին էր հաստատ տեղեկություն ստացել Իբրահիմ խանից և մայոր Լիսանևիչից, բայց և այնպես, շարունակեց իր առաջխաղացումը և 20-ին բանակ դրեց Ասկարանի մոտ, ուր մնաց մինչև 24-ը, որպեսզի հանգստություն տա իր զինվորներին։ Իբրահիմ խանի որդիներն ամեն օր գնում էին Ասկարանի բանակը, տեսնվում գլխավոր հրամանատարի հետ, և խոստանում էին միանալ նրա զորաբաժնին իրենց հավաքած 600 ձիավորներով։ Եվ այս խոստումն այնքան հաստատ էր երևում, որ Ցիցիանովը նույնիսկ այդ մասին հայտնեց Ալեքսանդր կայսրին։ Բայց իրոք դուրս եկավ, որ բոլոր խոստումները դատարկ էին, և Իբրահիմ խանը ռուսաց զորքին ոչինչ չտվեց, մի հանգամանք, որ գրգռում էր ցասկոտ Ցիցիանովին և հարկադրում էր նրան խիստ հանդիմանական նամակներ ուղարկել խանին նույնիսկ այն ժամանակ, երբ գտնվում էր նրա հողի վրա։

Մենք արդեն գիտենք, որ խանի որդիներից մեկը, Աբդուլ Ֆեթ աղան, գալով Պարսկաստանից, աշխատում էր ապստամբեցնել Ղարաբաղի թուրք ժողովուրդը և նրա միջոցով հեռացնել ռուսներին այդ երկրից։ Իբրահիմ խանն իրեն անզոր էր ցույց տալիս իր որդուն ընկճելու և հնազանդեցնելու համար, և Ցիցիանովն իրավունք էր համարում կասկածամտությամբ վերաբերվելու խանի այդ հավաստիացումներին։ Այսպես, դեռ այն ժամանակ, երբ Ցիցիանովը չէր հասել Ասկարան, խանն ուղարկում էր նրան Աբդուլ Ֆեթ աղայից ստացած նամակը, որի մեջ նա հորը հայտնում էր, թե գլխավոր հրամանատարը Շուշի է գնում նրան վերջնականապես խլելու և թուրքերին կոտորելու համար։ Ցիցիանովը հուլիսի 20-ին Ասկարանից վերադարձնում էր նրան այդ նամակը և գրում էր. «Հարցնում եմ՝ ինչո՞ւ եք դուք նրան ինձ ուղարկել. որովհետև այդպիսի սրիկայի և դավաճանի գրագրությունները ինձ հարկավոր չեն, և այդ նամակը նա ուղարկել է ոչ թե ձեզ համար, այլ նրա համար, որ գիտե թե ձեր ստացած ամեն մի նամակը շուկայում հրապարակվում է ձեզ շրջապատողների ձեռքով և դրանով կգրգռե ձեր անհավատարիմ հպատակներին։ ...Զարմանալի՞ է, որ թշնամին ցրում է իր օգտի համար մեզ վերա-

1 Ibid., с. 28—29.

բերող անախորժ լուրեր, որոնց հավատալ վայել է միայն դյուրահավատ ասիացիներին։ Ինչ վերաբերում է այն բանին, որ նա ձեզ վախեցնում է նրանով, որ իբր թե գալիս եմ բերդը խլելու և թուրքերին կոտորելու համար, այս արվում է ոչ թե մի այլ բանի համար, բայց միայն որպեսզի ձեր մեջ անվստահություն սերմանե դեպի ռուսաց զորքերը, իսկ հիմար ու դյուրահավատ ժողովրդի մեջ՝ երկյուղ, որ նա արդեն ստացել է շուկայում այդ նամակից։ Սակայն, թեև դուք, դատելով ձեզ ու ձեզ, հավատացել եք դրան, բայց ես պատրաստ եմ, հակառակն ապացուցելու համար, վերցնել մայոր Լիսանևիչի զորաբաժինը Գանձակ, մանավանդ որ հրաժարվում եք տալ պարեն, որից ինձ հարկավոր է 400 չետվերտ (ցորեն) և 100 գլուխ անասուն։ Ձեր բարձրաստիճանության ապերախտության օրինակն ես դեռ չեմ տեսած. ռուսական զինվորությունը կորցրել է 300 ամենահավատարիմ զինվորներ, որոնք ձեր անհավատարիմ 30.000 հպատակներից էլ թանկագին են. առանց ռուսական զորքի դուք մի օր էլ չէիք նստի ձեր Շուշու բերդում, իսկ այժմ հասաք և այն բանին, որ Բաբախանն էլ գնաց։ Նկատի առեք այս բոլորը և կտեսնեք, շա՞տ եք դուք հավատարմություն և շնորհակալություն ցույց տալիս ձեր հպատակության առաջին քայլում. ամեն նամակում կրկնում եք, որ ձեզանից ես ծառայություններ պահանջեմ, բայց մերժում եք պարեն տալ։ Մի՞թե կարծում եք, թե ծառայությունները կայանում են միայն դատարկ, սուտ ու պատիր տեղեկություններ տալու մեջ, ինչպես որ երկու օր առաջ հայտնել էիք, թե շահզադեն միացել է Բաբա խանի հետ, իսկ այժմ ասում եք. թե շահզադեն գնացել է Գանձակի վրա»[1]։

Ասկարանից Ցիցիանովն անցավ Վարանդա և առաջացավ 19 վերստ, բայց ստանալով Իբրահիմ խանից և Լիսանևիչից տեղեկություն, թե Բաբա խանն արդեն Արաքսի պարսկական ափից հեռու է 24 աղաջ, նա այլևս ավելորդ համարելով շարունակել ճանապարհը, հուլիսի 25-ին նորից վերադառնում է Ասկարան։ Բայց նախքան Ասկարանից Վարանդա գնալը, հուլիսի 24-ին, նա նամակով նորից խիստ դժգոհություն էր հայտնել Իբրահիմ խանին, գրելով այսպիսի տողեր. «Չեմ կարող չզարմանալ ձեր վարմունքի վրա. ես 4 օր կանգնած էի Շուշու բերդի տակ և ձեզ հայտնի է, որ գնացի դեպի Արաքս, իսկ ձեր բարձրաստիճանությունը ոչ մի զորք չուղարկեցիք օգնության։ Մի՞թե դուք կարծում եք, թե Ռուսաստանը պարտավոր է իր զորքը կորցնել ձեր պատճառով, իսկ դուք, ոչ մի մասնակցություն չունենալով, պիտի նստեք դավաճաններով շրջապատված բերդի մեջ։ Մի՞թե դուք կարծում եք, թե ինձանից լավ եք և բարձր եք։ Միայն ի հարգանս ձեր տարիների, ես ձեզ ներում եմ այս և հայտարարում եմ, որ ես ոչ մի պատճառով կանգ չառնելով, վաղն այստեղից վերադառնում եմ Գանձակ և ցանկանում եմ Ասկարանի տակ տեսնվել ձեզ հետ իմ պահանջները կատարելու համար»[2]։

Միայն այսպիսի եռանդուն պահանջից հետո էր, որ Իբրահիմ խանը հուլիսի 26-ին գնաց Ասկարան՝ տեսնվելու Ցիցիանովի հետ և հրավիրեց նրան Շուշի։ Ընդունելով խանի հրավերը և մնալով նրա բերդում մի օր ու գիշեր, գլխավոր հրամանատարն այսպես էր նկարագրում իր ստացած տպավորությունն Ալեքսանդր կայսրին գրած իր ամենահպատակ զեկուցման մեջ. «Դիտելով նրան (Շուշու բերդը), ես գտա, որ այս բերդը չափազանց հազվագյուտ է այս երկրում, մի կողմից շրջապատված է քարե բարձր պարիսպներով, որոնք աշտարակներ ունեին, ինչպես սովորություն է ասիացիների մեջ, իսկ մյուս

1 «Акты..», II, № 1461.

2 Ibid., № 1463.

կողմից ամրացված է բնական դիրքով, որ տվել է նրան շատ խոշոր ճեղքված, որից քաղաքը պաշտպանում են 15 սաժեն բարձրություն ունեցող ուղղաձիգ ժայռերը, որոնց դեմ ոչ մի <ռազմական> արվեստ վերցնելու ժամանակ չէ կարող գործ տեսնել. բայց դրանից ունի այն առավելությունը, որ, տեղավորված լինելով մեծ բարձրության վրա, օդն այստեղ չափազանց առողջ է, և մեր բերդապահ զորքը, որ բաղկացած է 350 մարդուց, հաշված շարքերի մեջ չմտնողներին, երեք ամսվա միջոցում չէ ունեցել մի հատ մեռած, և միայն 6 մարդ են հիվանդացել»[1]։ Բերդում ապրող թուրք ազնվականության մեջ Ցիցիանովը գտավ շատերին, որոնք սրտով ու մտքով նվիրված էին պարսիկներին, մարդ էին ուղարկել Աբաս Միրզայի մոտ, հրավիրել էին նրան գալ Շուշի մտնել և խոստացել էին բաց անել դռները նրա առջև։ Չուզենալով գրգռում առաջացնել բեկերի դասակարգի մեջ, Ցիցիանովը պատիժների չենթարկեց նրանց և միայն երկուսից, որոնք խանի մերձավոր բարեկամներն էին, պատանդ վերցրեց նրանց երեխաներին։

Վերադառնալով Շուշուց, նա կարգադրում է անհապաղ ճանապարհվել Գանձակ, քանի որ տեղեկություն էր ստացել այն արյունահեղ դեպքերի մասին, որոնք տեղի էին ունեցել Գանձակում նրա բացակայության միջոցին։ Սակայն որչափ և շտապում էր նա, չէր կարողանում, այնուամենայնիվ, երկար տարածություններ անցնել, այնքան սաստիկ էին ամառային շոգերը, այնպես որ միայն օգոստոսի 3-ին նա մտավ Գանձակ։ Բայց տեղի ունեցածի մասին արդեն մանրամասն տեղեկություններ նա ստացել էր ճանապարհից։

Կարյագինի զորաբաժինն, ինչպես տեսանք, հուլիսի 16-ին բաժանվելով Ցիցիանովից Թարթառ գետի մոտ, գնաց դեպի Գանձակ։ Նրա հետ էին և Վանի յուզբաշին և նրա եղբայր Հակոբը, որոնք այժմ ունեին իրենց ձեռքի տակ 60 զինված հայեր բանակի պահպանության համար։ Վանին տարավ Կարյագինին լեռնային կարճ ճանապարհներով։ Հենց այն ժամանակ, երբ զորաբաժինն սկսում էր իր երթը, Գանձակում ծայր էր տալիս մի վտանգավոր ապստամբական շարժում, որի գաղտնի ղեկավարն էր Ջավադ խանի որդի Ուղուրլու աղան։ Մենք տեսանք, որ Գանձակի թուրքերը շարունակ կանչում էին Աբաս Միրզային, որ և գնաց ու իր 15 հազարանոց բանակով նստեց շրջակա գյուղերում։ Գանձակի թուրքերը խմբերով գնում էին պարսկական բանակը և վերջապես, հուլիսի 17-ի գիշերը, բերին նրան այգիների արվարձանը և գրավեցին, իսկ հետևյալ օրը կտրեցին բերդի ջուրը և սաստիկ կրակ բաց արին ռուսաց զորքի դեմ, որ գրաված ուներ բերդը։ Այդտեղից շատ մոտ էր Քիլիսքյանդ գյուղը, որի բնակիչները հայեր էին։ Տեսնելով թուրքերի դավաճանությունը, այդ հայերը թողին իրենց գյուղը և միահամուռ դիմեցին բերդը ռուսներին օգնելու համար։ Սակայն Աբաս Միրզայի նպատակը Գանձակն առնելը չէր. նա ուզում էր արշավանք գործել Թիֆլիսի վրա, իսկ Գանձակը նա ենթարկում է թալանի։ Մյուս օրը բերդից նկատեցին, որ պարսիկները քշում տանում են արվարձանի թուրքերին ընտանիքներով։ Կամենալով ետ խլել դրանց գոնե մի մասը, բերդապահն ուղարկեց այնտեղ մի զորագունդ, որ բաղկացած էր 200 զինվորից, 50 կազակից և 300 հայերից, որոնք արիաբար կռվի բռնվեցին, դուրս քշեցին թշնամուն իր դիրքերից. վերջնական պարտությունից պարսիկներին ազատեցին Գանձակի թուրքերը, որոնք օգնության հասան և կրակել սկսեցին գետի մյուս կողմից։ Օգտվելով այդ հանգամանքից, պարսիկները տարան 400 թուրք ընտանիք և բերդեցիները հազիվ

1 «Акты...», II, № 1737.

կարողացան նա խլել մի 25 ընտանիք։ Աբաս Միրզան այդ թուրք ընտանիքները տանում էր նրանց միջոցով Շամշադինի գավառը ապստամբեցնելու համար։ Եվ շտապով գնաց դեպի Ջագամ գետը[1]։

Գանձակի այս կռվի մասին տեղեկություններ տալիս էր և Հովհաննես արքեպիսկոպոս Գեղարդակիրը Մինաս Լազարյանին գրած իր նամակում (1805, օգոստոսի 13-ին). «Նախ քան զայս,— ասում էր նա,— ի 18 յուլիսի գրեալ եմք զհարկաւորսն. այժմ ի դէպ վարկանեմք ծանուցանել զբեկումն և զկորուստ անօրէն պարսիցն. զի հասեալ Բաբախան շահն ի սահմանս Շօշոյ Հրամայէ որդւոյ իւրում և Ալեքսանդր արքայորդւոյն վրաց դնալ առնուլ զԵլիսաբեթապօլ և զքաղաքն Թիֆլիս. որք առեալ զքաջսն ի զօրացն թուով իբր 2000 (20000 "), մինչ դեռ մերձեցան յԵլիսաբեթապօլ, եկանեն անտի և խաչադգեաց զօրքն ռուսաց կարի սակաւք որք անպատում քաջութեամբ պատերազմեալ ընդ նոսա, հալածական առնեն մինչ խալառ, յորում նաւագի և անօրեն տաճիկ բնակչացն երկրին՝ յայտնեալ զթունալի ծածուկ նենգութիւնս իւրեանց, սկսանին առհասարակ դիմել առ զօրս Պարսիցն հանդերձ իւրեանցայնովք ամենայն, և արձակեալ զհրացանս ի վերայ զօրացն կայսերական և Հայոցն մեր. յորոց և բազումք անդէն իսկ ի փախչելն՝ լինին հրոյ ճարակ իյահագնաձայն թնդանօթիցն ռուսաց։ Իսկ աղամամիտ ամենայն հայ բնակիչքն ըստ բնիկ հարազատութեանն իւրեանց միացեալ ընդ յաղթող զօրացն կայսերական, ոչ խնայեն խառնել զարիւնս իւրեանց ընդ արեանց նոցին վասն անդին կենաց նորին կայսերական մեծութեանն և այսպես միաբան ի միասին բարձրացուցեալ զեղջիւր քրիստոնեութեանն, առանան զանուն մեծ արժանի զովութեանս»[2]։

Շամշադինում Աբաս Միրզային իսկ որ հաջողվում է ապստամբեցնել թուրք ազգաբնակությանը։ Բայց տեղացի հայերը, չդրժելով իրենց հավատարմությանը, պատերազմող կողմ են դառնում և դուրս են գալիս պարսիկների դեմ։ Այս մասին մենք հիշատակություն անգամ չենք գտնում ռուսական աղբյուրների մեջ, մինչդեռ ահա ինչ էր գրում Հովհաննես Գեղարդակիրը քիչ առաջ մեր բերած իր նամակի մեջ. «Թողեալ ապա զնոսա անօրինացն այսպիսի պարտութիւն, դան անտի ի վերայ երկրին Շամշադինու, որոյ ամենայն տաճիկ բնակչացն իսկոյն և ուրացեալ խայտառ զվայելումն ողորմութեան նորին կայսերական մեծութեանն, գնան միանան ընդ նոսա։ Այլ քաջասիրտ և առիւծասիրտ ամենայն Հայքն տեղւոյն ամրացեալ առհասարակ՝ զբարձր բաղուկ հզօրին Աստուծոյ ունելով. միայն ի օգնութիւն ինքեանց, զարմանալի արիութեամբ պատերազմեալ՝ արարեալ են զխաթառ զոչ սակաւս ի նոցանէ. և այսպէս խորտակեալ խայտառ զզօրութիւն Պարսիցն, ջերծուցեալ են զինքեանս ի գերեվարութենէ, որովք այսօրիւք ամենեքումբք արդար և եղեալ ի գլուխ զպսակ հարազատութեան, եղեն հանդիսացեալք գեբազանց քաջութեամբ, զՎարդանանցն առերեւելով յինքեանս զնմանութիւն, որք վասն պահպանութեան սուրբ հաւատոյ պատերազմեալ՝ պսակեցան ի Քրիստոսէ։ Ապա՝ տեսեալ անօրինացն թէ ոչինչ իւրք զօրքն հասուցանել նոցա զվնաս ինչ, հրեշտակութիւնս առաքեալ, խոստանան այլ ոչ ևս մերձենալ կամ առնել ինչ, միայն զի՝ յետս տայցեն ինքնեաց զգիւղօրայս սատակացն, զորս թուով աւելի քան զ300, առաքեն քաջքն ըստ աղաչանաց Շանազարային, որպէս պատմեն աւետաբեր Հայքն իսկ եկեալք անտի։ Եւ մինչ այսպես յամենայն կողմանց ի պարտութիւն մատնեալ՝ խորհին զփախստենէ իւրեանց, դան պա-

1 «Акты...», II, № 1731.

2 Ձեռագիր (հեղինակի ժողովածուի մեջ)։

տահին հաց բարձեալ սայլիցն և չաբախանիցն, զորս 300 արամբք տանէին ի քաղաքէս յԵլիսաբեթապօլ»։

Այս հանդիպումը տեղի է ունենում Ջագամ գետի վրա հուլիսի 23-ին։ Աբաս Միրզայի զորքը, շրջապատելով պարեն և ռազմամթերք տանող այդ կարավանը, պահանջում է, որ նա անձնատուր լինի, սպառնալով, հակառակ դեպքում, բնաջնջել անել ամենքին։ Կարավանի պահապան զորաբաժինը, բաղկացած ընդամենը 300 հոգուց, մերժում է այդ առաջարկությունը և վճռում է պաշտպանվել մինչև արյան վերջին կաթիլը։ Սկսում է մի սարսափելի մաքառում, որ տևում է ամբողջ չորս օր։ Զորաբաժինը կորցնում է իր սպաներին, բայց հասարակ զինվորները վճռում են առանց հրամանատարի շարունակել կռիվը։ Սկզբից ևեթ պաշարված զորախումբն իմաց էր տվել իր դրության մասին Գանձակ։ Նույն 23-ին, երբ կարավանը շրջապատվեց պարսիկներից, Գանձակ էր մտնում գնդապետ Կարյագինը։ Տեղեկություն առնելով Ջագամի դաշտում օրհասական դրության մեջ գտնվող զինվորների մասին, նա 25-ին, չնայած որ հիվանդ էր և վիրավոր, դուրս եկավ Գանձակից, ունենալով իր հետ 571 զինվոր, և ամենայն շտապողականությամբ գնաց թշնամուն հանդիպելու։ 27-ի երեկոյան նա տեղ հասավ, իսկ հետևյալ առավոտը սաստիկ թափով հարձակվեց պարսիկների վրա։ Միայն նրա անունը, որ հռչակվել էր Ասկարանի մոտ և Շահ Բուլաղում, բավական էր, որ սարսափ տարածեր պարսկական բանակում։ Աբաս Միրզան սարսափելի պարտություն կրեց, կորցրեց իր բանակի բոլոր հարստությունները և փախուստի դիմեց[1]։

Այս կռիվների մեջ, անշուշտ, մեծ աջակցություն ցույց տվին ռուսներին Շամշադինի հայերը։ Բացի Հովհաննես Գեղարդակրի վկայությունից, որ բերինք վերևում, մենք ունենք նաև հետևյալը, որ ստորագրել են Գրիգոր և Բարսեղ եպիսկոպոսներն ու Ներսես Աշտարակեցին։ «Մեծ իշխանն պարոնց որ կարեալ էր անտի ի Ղարաբաղու, որդիք նորին ևս յառաջ եկեալ խրոխտանօք որպէս թէ ի Թիֆլիզ կամին գալ, ամօթապարտ եղեն ի սակաւ Հայոց Շամշադինու, որք քաջաբար դդէմ եդեալ նոցա զհարիւրաւորս ի նոցանէ սատակեալ և զինքեանս ամենևին անվնաս պահեալ զօրացան»[2]։ Այս շարժումների և կռիվների արձագանքը Թիֆլիս հասնելով, հուզմունք տարածեց այնտեղ, և գեներալ Պորտնյագինը, որ նահանգապետի պաշտոն էր կատարում, հարկավոր համարեց պաշտպանողական միջոցներ ձեռք առնել։ Եվ որովհետև քաղաքի մեջ զորք շատ քիչ էր մնացել, ուստի նա հայերից նշանակեց պահապաններ՝ զգուշանալու և պաշտպանվելու համար[3]։ Սակայն շուտով հայտնի դարձավ, որ Աբաս Միրզային այս անգամ էլ չի հաջողվել մտնել Վրաստանի սահմանները։ Այս մասին առաջին անգամ լուր բերողն եղավ Գեորգ Գալոյան անունով հայը, որ վերադառնում էր պարսից բանակից, ուր նրան ուղարկել էր Ցիցիանովն առաջարկելու համար Ալեքսանդր արքայորդուն, որ նա վերադառնա Վրաստան։ Եվ իրավ, Ջագամի պարտությունից հետո Աբաս Միրզան անցավ Ղազախ՝ այդտեղի թուրքերին ոտքի կանգնեցնելու համար, ինչպես այդ եղել էր անցյալ տարի։ Սակայն այս անգամ այդ շարժումը չհաջողվեց։ Գրգռվելով այն հանգամանքից, որ պարսիկները բռնաբարեցին իրենց գեղեցիկ տղաներին ու աղջիկներին[4], Ղազախի թուրքերը հարձակվեցին նրանց վրա Դիլիի (Դիլիջանի) նեղ ձորում, մեծ կոտորած արին, այնպես որ Աբաս

1 «Утвержд. рус. влад. на Кавказе», с. 217.

2 «Փորձ», 1877/78, էր. 258։

3 Хубов, с. 110.

4 Այսպես պատմում է Հովհաննես Գեղարդակիրը (տե՛ս նրա վերոհիշյալ նամակը)։

Միրզան փախավ Երևան։ Ցիցիանովը հիացմունքով էր հիշատակում Ղազախի թուրքերի այս գործն իր ամենահպատակ զեկուցման մեջ, իսկ Շամշադինի հայերի քաջագործությունների մասին ոչ մի խոսք չէր ասում ոչ մի տեղ։ Առհասարակ, շատ մեղմ վերաբերմունք ցույց տվեց Ցիցիանովը դեպի Գանձակի և Շամշադինի ապստամբված թուրքերը, որոնց համարում էր խաբված և հրավիրում էր նորից բնակվել իրենց տեղերում։

Իսկ Աբաս Միրզայի երևալը Երևանում մեծ տագնապ էր առաջացնում այնտեղի հայերի մեջ։ Հաստատապես գիտեին, որ այս անգամ նա վճռել էր, հայերի դավաճանական գործերից ազատվելու համար, նրանց բոլորին գաղթեցնել Պարսկաստան, ինչպես մի ժամանակ արել էր Շահ Աբասը։ Սարսափն այնքան մեծ էր, որ Գաբրիել յուզբաշին (Գեղամյանը), ռուսներին սաստիկ նվիրված և ազդեցիկ դանիելական մի գործիչ, փախավ Փամբակ։ Նրա հետ գնաց և Մելիք Աբրահամը, որ, ընդհակառակը, հակադանիելիական էր, և այս հանգամանքը ցույց է տալիս, թե վախն ընդհանուր էր։ Նրանց հետ, այդ վախի հետևանքով, փախան և 200 տուն հայեր։ Պարսիկները ձիավոր զորք ուղարկեցին փախստականների ետևից, բայց նրանք կարողացան ճողոպրել և Ղարաքիլիսա հասնել։ Խուճապի տրամադրությունը սաստկանում է Երևանում մանավանդ այն ժամանակից, երբ Աբաս Միրզան, Պարսկաստան ուղևորվելով, տարավ իր հետ Մահմադ խանին և նրա ընտանիքը կալանավորների դրությամբ։ Ստեղծվում է գաղթելու այն դժբախտ ստիպողականությունը, որ դարերով ավերել էր հայությունը։ Բայց պարսիկներն այս անգամ անզոր էին։ Մեծ խմբերով գաղթելն անհնարին դարձավ, բայց դրա փոխարեն գործում էր անհատական փախուստի զգացմունքը։ Այս էլ, սակայն, հզոր արգելքների է հանդիպում։ Չորս խեղճ հայեր իրենց ընտանիքներով դուրս են գալիս Երևանից, որպեսզի Փամբակի վրայով գնան Վրաստան, սակայն բռնվում են և տարվում նոր խանի մոտ։ «Մեզանից ի՞նչ ճնշումներ եք տեսնում և ռուսների մոտ ի՞նչ օգուտներ եք գտնում, որ փախչում եք նրանց մոտ»,— հարցրեց նա բռնվածներին և կտրել տվեց չորսի գլուխները հրապարակում, ժողովրդի առաջ, իսկ նրանց կանանց տվեց զորքերի ձեռքը՝ խայտառակելու համար[1]։

Խստությունները հարկադրում էին հայերին ամփոփվել իրենց մեջ, իրենց ամբողջ հույսը դնել ռուսների վրա և խնդրել նրանց աջակցությունը՝ որպեսզի իրենք կարողանան դուրս գալ իրենց բնակության վայրերից և գնալ Վրաստան, մի բան, որ միշտ խրախուսել էր Ցիցիանովը։ Այս խնդրվածքների թարգմանն էր հանդիսանում Փամբակ փախած Գաբրիել յուզբաշին, նամակ գրելով Ցիցիանովին, անշուշտ խրախուսված այն զգացմունքով, որ անցյալ տարի, երևանյան արշավանքի ժամանակ, ինքը մի բան նշանակում էր այդ գոռոզ և ինքնապարծ իշխանավորի աչքում՝ իբրև ռուսական շահերին նվիրված մի մարդ, որ այնքան աշխատում էր հաջողեցնել Երևանի անարյուն նվաճումը։ Ահա ինչ էր գրում Գաբրիել յուզբաշին Ղարաքիլիսայից 1805 թ. օգոստոսի 15-ին։

«Հայտարարում եմ ձեր պայծառափայլությանը Երևանի և Պարսկաստանի բոլոր հանգամանքների մասին հետևյալը. 1) որ Աբաս Միրզան 15.000 զորքով Երևան եկավ, ունենալով հետը 400 վիրավոր և շատ սպանվածներ. 2) բերեց իր հետ Գանձակի բնակիչներին և էլի բաց թողեց որ գնան. 3) նույն Աբաս Միրզան 4 օր անցնելուց հետո գնաց Նախիջևան, ուր պիտի մնա մի քանի օր. 4) Երևանի բերդում թողեց Մեհտի Ղուլի խանին, կույր Քյալբալի խանին և Հերակլի որդի Ալեքսանդրին 3000 զորքով, որի մեծ մասը հետևակ

է, իսկ ձիավորները պիտի ծախեն իրենց ձիանները. 5) Երևանի Մահմադ խանին ընտանիքով վերցրեց իր հետ. 6) հիշյալ Մեհտի Ղուլի խանը, որ թողնված է բերդի մեջ, ոչինչ պաշար չունի, ամեն օր պաշարեղեն է առնում, ուտելիքի ծայրահեղ պակասություն ունի, և զորքը սրան չի լսում։ Եթե հաճեք զորք ուղարկել Երևան, հեշտ կարող եք տիրանալ Երևանին, որովհետև պարենը չկա բերդի մեջ և ժողովուրդը դեռ չէ հավաքվել։ Եթե դուք կդանդաղեք այնքան, որ նա հաց հավաքի, այն ժամանակ էլի դժվարություն կլինի, ինչպես անցյալ տարի։ Այժմ ժամանակ է և խնդրում եմ զորք ուղարկեք Երևան և ինձ էլ նրա հետ,— Աստծու օգնությամբ շուտով կնվաճենք։ Իսկ Քյալբալի խանն ինձ խոսք է տվել և երդվել, թե նա ցանկանում է մտնել ռուսաց մեծ կայսրի բարձր հովանավորության տակ, այն պայմանով, որ երբ նրան ընդունեք ձեր հովանավորության տակ, նա նորից կստանա Նախիջևանի խանությունը, և այն ժամանակ ինչ տեսակ ստորագրություն հաճելի կլինի ձեր պայծառափայլության, ես կարող եմ վերցնել նրանից և ներկայացնել ձեզ, և Երևանը վերցնելու ժամանակ էլ նա կարող է օգնություն անել։ Այս նրա խոսքն է, մնացածը ձեր կամքն է։

Իսկ Հերակլի որդի Ալեքսանդրի մասին զեկուցում եմ ձեր պայծառափայլության, որ Աբաս Միրզան թողել է նրան առանց պատիվների, չունենալով դեպի նրան որևէ շնորհ, հանձնարարություններ չէ տալիս, և նա վատ դրության մեջ է գտնվում և թեև ուզում է գալ ձեզ մոտ, բայց վախենում է ձեր պայծառափայլությունից. եթե ձեր պայծառափայլությունն էլի ողորմած կլինիք, այն ժամանակ նա էլ կգա։ Անաստված Դավիթը գտնվում է ծայրահեղ վատ դրության և անհանգստության մեջ, նա էլ ուզում է գալ ձեզ մոտ, և այն ժամանակ ինչպես հաճելի կլինի ձեր պայծառափայլության, այնպես էլ կանեք։ Իսկ ես իմ ժողովրդով, ավելի քան 200 ընտանիք, անցա Ղարաքիլիսա, և Մելիք Աբրահամն էլ մտադիր է փախչել այստեղ իր ժողովրդով. այսօր կամ վաղը նա էլ կգա այստեղ, թեև Մեհտի Ղուլի խանը մտադիր էր բոլոր հայերին փոխադրել Թեհրան։ Իսկ Երևանի թուրքերն աղաչում են աստծուն, որ ձեր պայծառափայլությունը գնաք այնտեղ. նրանք խոսք տվին, որ անձնվեր են ձեզ. եթե շուտով ձեր պայծառափայլությունն ուղարկեց զորքեր Երևան, դրանով կդառնաք բոլոր բնակիչների փրկության պատճառ, քանի որ նրանք իրենց հացը չեն տվել պարսիկներին. իսկ ձեր թշնամիները դողում են ձեր քաջությունից, որի ականատես վկան ես եմ։

Ամենապայծառափայլ իշխան, շնորհ արեք, գերությունից ազատեցեք հայերին, որոնք ոչ մի կողմից օգնություն չունեն, մի զրկեք նրանց ձեր հովանավորությունից։ Այստեղի պետ գեներալը մեզ ցույց տվեց շատ ողորմած ընդունելություն, և մենք շատ բավական ենք և շնորհակալ։

Երբ մենք փախանք Երևանից, Բաբա խանն ուղարկել էր 100.000 ռուբլի Երևան՝ հաց պատրաստելու համար, բացի դրանից հրամայված է նախիջևանցիներին, խոյեցիներին և ղարաբաղցիներին բերել Երևան 10.000 խալվար ցորեն մինչև 2 կամ 3 ամիս։ Նույնպես ամենախոնարհաբար խնդրում եմ ձեր պայծառափայլությանը, եթե կարելի է, հրամայեք որ տան մեզ մի գյուղ այստեղ, Փամբակում։ Խնդրում եմ դարձյալ ձեր պայծառափայլությանը, ներել ինձ այսպիսի համարձակության համար, որովհետև ինչ որ գիտեի, չէի կարող չհաղորդել. մնացածը թողնում եմ ձեր պայծառափայլության կամքին»[1]։

Իսկ բազմահոլով աղերսված պայծառափայլության կամքն էր ոչ թե գթա-

[1] Хубов, с. 114—115.

[1] «Акты...», II, № 1256.

շարժվել այդ խոնարհ հաճոյական դիմումից, այլ դարձնել նրան լպիրշ փողոցային հայհոյանքներ թափելու և նրանցով իր ամբողջ ատելությունը հայ ժողովրդի վերաբերմամբ արտահայտելու մի առիթ։

Քաղաքական ոչ մի խրատ դանիելականությունն այս աղաղակող հանգամանքներից դուրս չէր բերում հայ ժողովրդի պաշտպանության համար։ Եվ պետք է ասել, որ երբեք էլ փաստերի պակասություն չէ ունեցել իմանալու համար, որ իր «պայծառափայլը» մի անուղղելի հայատյաց է։ Այսպես, դեռ նույն 1805-ի հունվարի 16-ին էր, որ Հովհաննես Գեղարդակիրը՝ «պայծառափայլի» մերձավորը և նրա շնորհիվ կայսերական շքանշաններով և պատիվներով ուռճացած արքեպիսկոպոսը, գրում էր Մինաս Լազարյանին. «խօսեցաւ և վասն տեղւոյս մերազանց ոչ արդէօք զսովորական իւր, որում յայնժամ և մեք վստահեցեալ առաջի արարք զհաստատուն հարազատութիւն համօրէն ազգի մերոյ առ մեծազօր կայսրութիւնն, և զխնդիր մատուցաք զի մի ևս լիցի ինքն ատեցող նոցին, այլ գթասցէ մարդասիրաբար, ըստ որում ժողովուրդք Քրիստոսի. և ինքն երևեցուցանէր զուղղութիւն մտաց և ասէր զատեցութիւն իւր անել մի այն ի մասնաւորի իբրև առ քաղաքացիս միայն ոչ ըստ որում հայազնեայք, այլ ըստ որում ոչ հնազանդին կամաց և հրամանաց իւրոց յաղագս շինելոյ զկաղարմայս։ Զիարդ և իցէ այսքանիկն ևս բաւական համարիմք առ նշանակելոյ թէ իցէ յայսմհետէ ողորմած՝ եթէ ոչ գթութեամբ, գոնէ և ոչ ևս յատուկ ատեցութեամբ որպէս յառաջն. զորոյ զատոյգն յայտնի առնէ հետևեալ կառավարութիւնն նորին յայսմհետէ եթէ լինելոց իցէ բարի ակնարկութեամբ»[1]։ Սակայն Գեղարդակիրն այս տողերը գրելուց մի քանի ամիս հետո, հենց օգոստոսին, տեսնում էր, որ իր «պայծառափայլը» ոչ միայն չէ բուժվել իր հայատյացությունից, այլ, ընդհակառակն, այդ ատելությունը Թիֆլիսի հայ վաճառականներից տեղափոխել է ամբողջ հայ ազգի վրա։ Եվ, այնուամենայնիվ, նա մնում էր իր տենչանքներով տարված մի դանիելական։ Եվ օգոստոսի 13-ի իր նամակը Լազարյանին, որից քաղվածներ բերինք վերևում, նա վերջացնում էր այսպիսի խոսքերով. «Ներկայիս որպէսն այն էր, զոր գրեցաք լիապէս. Աստուծով ոչ յետ բազմաց ինչ աւուրց ունիմք գրել և այլ ուրախականս քան զայս. քանզի ունիմք զայս մեծ, որ ոչ անագան եղիցի այցելութիւնն սրբոյ Աթոռոյն մեր և օրինատր սրբազանակատար տեառն մերոյ. զոր Տէր յաջողեսցէ»։

Նշանակում է, որ համազգային բնավորություն կրող տագնապների մեջ էլ հայ հոգևորականության համար միայն աթոռի և աթոռակալության հարց կար։ Այդ հարցը, բայց, իհարկե, շատ ավելի փոքրիկ չափով, բոլորվում է և Թիֆլիսի առաջնորդական աթոռի շուրջը։ Ցիցիանովն, էջմիածինն ամայացնելու համար, Թիֆլիս էր տարել միաբանների մեծ մասը։ Այս կղերական համախմբման մեջ, իհարկե, չէր կարող այնպես պատահել, որ փառատենչ ինտրիգներ և ոտնձգություններ չառաջանային։ Հովհաննես Գեղարդակրի դրությունն իր պայծառափայլ հովանավորի թևի տակ չափազանց լավ էր և չէր կարող նախանձ ու չարակամություն չհարուցանել։ Միևնույն ժամանակ Գեղարդակիրն, իրեն շատ լավ զգալով իր ստեղծած դիրքի մեջ, չէր կարող չծավալել իր մեջ ավելի մեծ տիրապետական տենչեր և դրանով ավելի ևս սուր բնավորություն չտալ իր և իր դասակիցների մեջ սկսված շփումներին։ Եվ իրեն ավելի ևս ուժեղացնելու, տիրացելի ու անմրցելի դարձնելու համար, Գեղարդակիրն ավելի ևս պինդ էր սեղմվում իր ռուսասիրությանը և, մանավանդ, իր հովանավորին։ Այս խուլ պայքարի հետևանքով էր, որ Ներսես վարդապետ

[1] Ձեռագիր (հեղինակի ժողովածուի մեջ)։

Աշտարակեցին այլևս Գեղարդակրի հետ չէր։ Դանիելականների մեջ պատրաստվում էր պառակտում։ Իսկ այդ միջոցին հայ ժողովուրդը մատնված էր կատարյալ անտերության։ Երևանում մնացած հայությունը շարունակում էր խուճապային տրամադրության մեջ մնալ և փրկություն որոնում էր Վրաստան գաղթելու մեջ։ Չնայած Ցիցիանովի տված կոպիտ-հայհոյական պատասխանին, նա խնդրեց Թիֆլիսում ապրող իշխան Խուրյանին անձամբ դիմել նրան և խնդրել։ Խուրյանը, սակայն, հաջողություն չունեցավ, և որովհետև Ռուսաստանի առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսը նրան իր մոտ էր հրավիրել «ժամանակը լավ անցկացնելու» համար[1], ուստի նա տարվա վերջին գնաց Ռուսաստան, տանելով իր հետ Երևանի ժողովրդի աղերսագիրն Ալեքսանդր կայսրին, որին նա աղաչում էր միջոցներ ձեռք առնել իր փրկության համար։ Բայց ի՞նչ կարող էր անել կայսրն իր քաղաքականության դեմ, մանավանդ, առանց Ցիցիանովի համաձայնության։ Այսպես էր երևանցիների գործը, և նրանք հարկադրված եղան միայն երազի մեջ տեսնել իրենց ավետյաց երկիրը։ Բայց ի՞նչ դրության մեջ էին այդ ավետյաց երկրում արդեն գտնվող այն հարյուրավոր ընտանիքները, որոնք գնացել էին Մելիք Աբրահամի և Գաբրիել յուզբաշու հետ։ Ցիցիանովը սպառնում էր նրանց քշել Պարսկաստանի խորքերը, եթե նրանք այնքան հաց չեն ցանի, որ ավելորդը ծախ հանեն։ Բայց ինչպե՞ս և ինչո՞վ վարեին նրանք հողը։ «Որովհետև այս հայերի մեծ մասը երկրագործներից էր բաղկացած, ուստի նրանք, թեև չունեին այնպիսի արգավանդ հող, որպիսին ունեին Երևանում, մասամբ երկրագործությամբ էին այստեղ զբաղվում, մասամբ էլ այգեգործությամբ և այլ հողային գործերով։ Նրանք անասուններ ունեին, որոնց մի մասը թշնամին խլեց նրանց ձեռքից, մի մասը կոտորվեց ճանապարհին, մի մասն էլ իրենք մորթեցին կերան։ Այս պատճառով ստիպված էին ուրիշ աշխատանքներ որոնել, բայց, չգտնելով, ցրվում էին գյուղերում և այս ժամանակից էլ վրացիների և մահմեդականների ճորտերն էին դառնում»[2]։ Ահա, վերջ ի վերջո, ինչին էր հանգում հայ ժողովրդի դժբախտությունը։ Բայց այս վերջին ծայրը չէր։ Ոչ ռուսաց նվաճող քաղաքականությունն էր կանգ առնում, ոչ նրա կույր գործիքը դարձած դավիթ-դանիելյան վեճը։

Վերաբերվելով հայերին իբրև մի ստո՛ր ցեղի, որի մատուցած ծառայություններն էլ հաշվի չէին առնում և որի անխնա հավատարմությունը համարվում էր արդեն այդ իսկ վիճակից բխող մի մեծ պարտականություն, որի համար չէր կարող ունենալ որևէ փոխարինություն, Ցիցիանովը թուրք իշխողների հետ վարվելու ուրիշ, ավելի զիջող հարաբերություններ էր պահպանում, անշուշտ ընկճված այն հանգամանքից, որ այդ իշխողները հենվում էին իրական ուժի վրա, պահանջող էին և ոչ երբեք նմանվում էին մի աղաչող դանիելականի։ Այսպես, Ղարաբաղի Իբրահիմ խանն իր աղվեսային քաղաքականությամբ վերջը հաղթող հանդիսացավ, այնպես որ Ցիցիանովը ոչ միայն այլևս չէր գրում նրան կոպիտ վիրավորական նամակներ, այլև ստիպված էր խնդրել, որ խանն իր նամակների մեջ քաղաքավարի ոճ գործ ածե։ Իսկ հոկտեմբերի մեկից Իբրահիմ խանն այլևս «բարձրաստիճանություն» չէր, այլ «նորին գերազանցություն», որովհետև Ալեքսանդր կայսրը, հարգելով Ցիցիանովի միջնորդությունը, տվել էր նրան գեներալ-լեյտենանտի աստիճան և խանական իշխանությունը մարմնացնող սուր և դրոշակ։ Հարաբերությունները փոխվում, դառնում են եթե ոչ բարեկամական, գեթ պաշտոնական-քաղաքա-

[1] Хубов, с. 127.
[2] Ibid., с. 125—126.

վարի։ Ցիցիանովն, իհարկե, այնպես միամիտ չէր, որ կարծեր թե գեներալ-լեյտենանտի աստիճանը Շուշու խանի մեջ անկեղծ հավատարմություն է հաստատել դեպի ռուսաց բանակը։ Նա շատ պարզ էր տեսնում, որ խանի մի աչքն, այնուամենայնիվ, նայում է դեպի Պարսկաստան, բայց քաղաքագիտության արհեստն անտանելի կլիներ նույնիսկ նրա ճկուն պաշտոնյաների համար, եթե նրանք չիմանային հաճախ խաբել իրենց ձևական երևույթներով։ Այս է պատճառը, որ երբ 1805—թ. նոյեմբերի 19—ին մեռավ Իբրահիմ խանի մեծ որդին, Ցիցիանովը նույնիսկ իր սրտի ճնշումն զգաց։ «Սրտի ճնշումով,— գրում էր նա Ալեքսանդր կայսրին,— շտապում եմ ամենահպատակորեն զեկուցանել ձեր կայսրության մեծության, որ ձեր կայսերական մեծության ամենաանձնվեր և ամենահավատարիմ ստրուկը, Ղարաբաղի խանի ավագ որդի Մահմադ Հասան աղան, որ ժառանգ էր ճանաչված բարձրագույն, վավերացված դաշնագրով, հիվանդացած լինելով թոքախտով, այս ամսի 19-ին մեռավ, և ես ի վիշտ իմ պարտքն եմ համարում ընդամին ամենահպատակորեն ավելացնել, որ կորցնելով նրան, ես զրկվեցի լավագույն հենարանից Ղարաբաղի համար, որ ես միշտ սպասում էի նրանից, որովհետև խանական ամբողջ տոհմից ոչ ոքի չէի ճանաչում այնքան հավատարիմ Ռուսաստանին և ջանադիր»[1]։ Եվ այս պատճառով Ցիցիանովն մտածում էր նույնիսկ փոփոխել ժառանգական կարգը խանության մեջ այնպես, որ Իբրահիմ խանին, մահից հետո, ժառանգե ոչ թե նրա երկրորդ որդի Մեհտի Ղուլի աղան, ինչպես օրինականացրել էր Արևելքի սովորության օրենքը, այլ Մահմադ Հասան աղայի որդի Ջաֆար Ղուլի աղան, քանի որ սա իր հոր նման ռուսասեր էր։

1805 թ. աշնան ընթացքում Ցիցիանովը բոլորովին աչքաթող արավ Երևանի գործերը, որովհետև զբաղված էր դեպի Կասպից ծովը ճանապարհ բացանելու ծրագրով։ Ղարաբաղի և Շաքիի խանությունների հարցը վերջացնելուց հետո հերթը հասել էր Շիրվանի ուժեղ, հարուստ և ընդարձակ խանությանը։ Ցիցիանովն իրեն հատուկ եռանդով բանակցություններ էր վարում Շիրվանի Մուսթաֆա խանի հետ, համոզելով նրան հոժարակամ ընդունել Ռուսաց հպատակություն այն պայմաններով, ինչ ընդունել էին Շուշու և Նուխու խաները։ Սակայն Մուսթաֆա խանը, գոռոզ և հպարտ իբրև շառավիղ հին մեծահռչակ շիրվանշահերի, չէր ենթարկվում համոզումներին, ուստի Ցիցիանովը դիմեց վերջին, բայց ամենահամոզիչ, միջոցին՝ զենքին։ Անցնելով մի զորաբաժնի գլուխ, նա մտավ Շիրվանի խանության հողը և իր անունից պատերազմ հայտարարեց խանին և դրեց պայման՝ կա՛մ հպատակվել ռուսներին, կա՛մ ենթարկվել արշավանքի հետևանքներին, որոնք այլևս այն պայմանները չէին բերի, ինչ առաջարկվում է այժմ։ Եվ Մուսթաֆա խանը, վերջիվերջո, ստիպված եղավ զիջել ուժին և ընդունել Քյուրակ չայի պայմանները, բայց այն շատ կարևոր բացառությամբ, որ ռուսական զորքերով չէր գրավվում խանության մայրաքաղաք Շամախին։ Դաշնագիրն ստորագրվեց դեկտեմբերի 25-ին և Ցիցիանովը հրճվանքով մատուցանում էր այդ նոր խաղաղ նվաճումն իր ամենաողորմած կայսրին և թվում էր, թե ինչ նշանակություն ունի Շիրվանը։ Նախ և առաջ, այդ մի շատ խոշոր քայլ էր ծովին հասնելու համար։ Մնում էր նույն ձևով հպատակեցնել և Բաքվի խանությունը, և ռուսաց ապրանքները մի նոր շուկա կգտնեն Վրաստանում և նրա սահմանակից երկրներում։ Իսկ Շիրվանն էլ շատ հարուստ երկիր էր և նրա ազգաբնակությունն ապրում էր առատության և շքեղության մեջ, մի հանգամանք, որի ապացույց կարող էր համարվել հենց այն, որ ռուս զինվորներն ամենաղատարկ գյուղերում անգամ

1 «Акты...», № 1485.

հասարակ գյուղացիների տների մեջ գտնում էին անգլիական հախճապակյա ամաններ[1]։

Թևավորված այս հաջողությամբ, Ցիցիանովը, ուշադրություն չդնելով ցուրտ ձմեռվա վրա, գնաց Բաքուն վերցնելու, որ նրա տենչանքների մեջ առանձին տեղ էր բռնում շնորհիվ այն դիրքի, որ այդ նավահանգիստը գրավում էր Կասպից ծովի ափին։ Նրա հետ եղողները պատմում են, թե նա բռնըված էր մի վատ նախազգացումով, հիվանդ էր սաստիկ տառապեցնող ջերմախտով, բայց նրա զարմանալի եռանդն անշեջ էր մնում. լինում էին օրեր, երբ ջերմը նրան բռնում էր երկու անգամ. նրան վեր էին բերում ձիուց, բայց հենց որ անցնում էր դողացումը, նա իսկույն ձի էր նստում և հասնում առաջ գնացող բանակին։ Պետք է իմանալ, որ ռուսաց զորքը նոր չպիտի պատերազմական գործողություններ սկսեր Բաքվի դեմ։ Ցիցիանովը ծրագրել էր վերցնել նրան ծովի կողմից և այս գործը հանձնել էր անընդունակ գեներալ Զավալիշինին, որ դեռ ամառը (օգոստոս 1805 թ.) նավերով մոտեցել էր բերդին, ռմբակոծել էր նրան, ափ իջեցրել իր հետ բերած զորքերը, հարձակվել էր, նույնիսկ հաջողությամբ, բերդի վրա, բայց տեսնելով որ Դերբենտի Շեխ Ալի խանն օգնության է գալիս բաքվեցիներին, շտապով ետ էր քաշել զորքը, նավերի մեջ նստեցրել նրանց և հեռացել ծովափին մոտ կղզիներից մեկը։ Այս բոլորի վրա սաստիկ վշտացած Ցիցիանովը հրամանագրեց Զավալիշինին նորից վերադառնալ Բաքու, նորից ափ հանել զորքերը և պաշարելով բերդը, պահանջել, որ նա հանձնվի իրեն։ Զավալիշինը կատարեց այդ բոլորը, բայց չկարողացավ համոզել Հյուսեին Ղուլի խանին, որ նա իր խանությունն ու մայրաքաղաքը հպատակեցնե Ռուսաստանին այն պայմաններով, որոնք նրան թելադրվում էին Թիֆլիսից։ Սպառելով խաղաղ ներգործության բոլոր միջոցները, Զավալիշինը խնդրում էր, որ Ցիցիանովն ինքը գնա Բաքվի հետ բանակցություններ վարելու, գուցե նա իր դիրքով կարողանա ազդել Հյուսեին Ղուլի խանի վրա։ Եվ ահա Ցիցիանովը գնում էր ինքն իր ձեռքով ստանալու Բաքուն։ Միանալով Զավալիշինի զորաբաժնի հետ, նա պահանջեց Հյուսեին Ղուլի խանից, որ նա անձամբ իրեն հանձնե բերդի բանալիները։ Եվ Հյուսեին Ղուլի խանը չմերժեց։ Փետրվարի 8-ին (1806 թ.) նշանակված էր անձնատուրությունը։ Ցիցիանովը գնաց խանի հետ տեսակցելու, վերցնելով իր հետ միայն մի սպա և երկու կազակ։ Համարձակությունը նրան միշտ հաջողություններ էր հասցրել, և նա, այս անգամ էլ արհամարհանքով վերաբերվելով հակառակորդներին, ավելորդ համարեց զգուշություններ ձեռք առնել։ Տեսակցությունը տեղի ունեցավ Բաքվի պարիսպների մոտ։ Հյուսեին Ղուլի խանը դուրս եկավ բերդի դռներից, ողջագուրվեց գլխավոր հրամանատարի հետ, և մինչդեռ բարեկամական խոսակցություն էր սկսվում, խանի հետ եկած Իբրահիմ Բեկ անունով մեկն ատրճանակի երկու հարվածով սպանեց Ցիցիանովին։ Սպանվեցին նաև նրա հետ եղած սպան և երկու կազակները։ Միաժամանակ բերդի պարիսպների գլխից հրաձգություն սկսվեց ռուս զորքի դեմ, որ մոտեցել էր՝ բերդը ներս մտնելու համար։ Ցիցիանովից հետո զորքի հրամանատարությունն անցնում է Զավալիշինին, իսկ նա վատաբար ետ էր քաշում զորքը, փախչում էր դեպի նավերը, թողնելով գլխավոր հրամանատարի դիակը թշնամիների ձեռքին։ Իբրահիմ բեկը խենջարով կտրեց Ցիցիանովի գլուխը, տարավ Թավրիզ՝ Աբաս Միրզային, որ պարգևատրեց նրան խանության աստիճանով, իսկ քաղաքն ընդունեց նրա գլուխը հաղթական ուրախություններով։ Կատարելով այդպիսի մի դավադրություն, որ գուցե միակ հնարավորն

1 «Акты...», II, № 1366.

է Թուլյերի ձեռքին՝ աճեղ հզորներին ընդմիշտ լռեցնելու համար, Բաքվի թուրքերը չկարողացան իրենց պահպանել ասիական բարբարոսություններից և հայհոյեցին Ցիցիանովի անգլուխ դիակը, գցելով նրան մի ձորակի մեջ, ուր թափվում էին քաղաքի անմաքրությունները։ Այդ աղբերի մեջ էլ նա մնաց թաղված։ Եվ միայն հայերն էին, նրա ատած և արհամարհված հայերը, որ դիին այդ հայհոյված դիակը ձյութապատ դագաղի մեջ և դրին իրենց Աստվածածին եկեղեցու մեջ, ուր պահեցին երկար ժամանակ[1]։

Այսպես էր վերջանում այդ խանդաշատ և գործունյա կյանքը, որ երեք տարում գոհեր տալով, նվաճեց Անդրկովկասի մեծագույն մասը ծովից ծով։ Նա փայփայում էր այն միտքը, թե Բաքվից հետո անմիջապես կգրավե և Երևանը, որից հետո կարելի կլինի հրավիրել պարսից շահին հաշտության պայման կնքել, ռուսական սահմաններ դարձնելով Քուռն ու Արաքսը։ Սակայն բավական էր և մի Իբրահիմ բեկի խենջարը, որ մարմնից հեռացներ փառահեղ տիրապետական տենչերով տարված այդ գլուխը։ Անփառունակ էր աճեղ ու գոռոզ իշխանավորի մահը։ Նրա ամբողջ բանակը չքացավ Կասպից ծովի ափից։ Կարծում էին, թե նա բնաջինջ է եղել մինչև վերջին մարդը, բայց հետո հայտնի դարձավ, որ Զավալիշինը, համարելով ամբողջ գործը սատկալի թակարդի մեջ ընկած, փրկության միակ միջոց էր համարել նավերով փոխադրել բանակը նույն կասպիական կղզին, ուր նա մի ամիս մնաց սոված ու հյուծված։

Ցիցիանովի մահը բաց էր անում հայ գրկվածների բերանը։ Մինաս աղա Լազարյանը, Դանիել կաթողիկոսից վեքիլ նշանակված Պետերբուրգում, ինչպես տեսանք շատ անգամ, հայոց միակ հույսն էր համարվում և նրան էին դիմում ամենքը՝ ազգային ամեն մի գործի առիթով։ Պետք է ասել, որ Մոսկվայի այս հարուստ հայն, իսկապես, շատ մեծ ուշադրությամբ հետևում էր հայոց կյանքին, ընդարձակ գրագրություն ուներ բոլոր փոքր ի շատե նշանավոր հայերի հետ և մանրամասն տեղեկություններ էր հավաքում այն բոլոր անցքերի մասին, որոնք առնչություն ունեին հայոց կյանքի հետ։ Իր պաշտոնի բերմունքով խնդրողի, միջնորդողի, բարեխոսի դեր կատարելով ռուսաց բարձր պաշտոնական շրջաններում, Մինաս աղան պիտի, իհարկե, փորձեր հաջողություն երաշխիքներ որոնել հայանպաստ տրամադրություններ ստեղծելու մեջ։ Այսպիսի աշխատանք արդյունավորել կարելի էր այն դեպքում, եթե ղեկավար շրջանների համար պարզ լիներ, որ հայերը Կովկասում օգտակար դեր էին կատարում ռուսական շահերի տեսակետից, մանավանդ, հաջողեցնելով ռուսական նվաճումներն իրենց գործնական աշխատակցությամբ։ Այս պատճառով Լազարյանի համար անհասկանալի էր, թե ինչու իշխան Ցիցիանովի ղեկավարությամբ կատարվող պատերազմական գործողությունների նկարագրությունների մեջ չեն հիշատակվում քաջություն ցույց տվող հայերի անունները։ Եվ այս հարցը նա ուղղում էր իր նամակներում հայ գործիչներին։ Այսպիսի մի հարցում նա դեռ 1804-ի վերջերին ուղղել էր Թիֆլիսի նախկին մելիք և մեղ քաջածանոթ Դարչի Բեհբությանին, որ և շտապում էր պատասխանել նրան մի նամակով, որի մեջ, ի միջի այլոց, ասում էր.

«Հրամացեալ էիք զայս՝ իբր ասա եղեալ ազգն հայոց զպաշտոնս և զծառայութիւնս զորս պարտեմք գործածել առ նորին օգոստոսափառ կայսրութիւնն, զայն ոչ կարողանամք յայտնի ցուցանել, քաւ լիցի, մեք ոչինչ իմիք ժամանակի թէ ի դեպ յանդիման պատերազմունս և թէ ներքնային խառնակութիւնս զմերս հաւատարմական ծառայութիւն ոչ եմք պակասեցուցեալ և կամ թողեալ առանց յայտնելոյ, զորս քաջօրէն գիտեն սոսա եղեալ զօրապետք և գործունեայ կայսերն մեծի, որպէս և յառնուլն ամրոցին Ելիսաբեթպոլոյ իշխանացն վրաց հնգից անձանց յամենամեծ կայսերէն շնորհեցան սուսերք հանդերձ կաւալերիւ սրբոյն Աննայի երրորդ աստիճանի, յոյս էր և հօրեղբայրս իմ Յովսեփ Միրիշկարբաշին, որ և ընկալաւ զայս պարգևս, և ի յերևան Արցախ երկրին իշխան Մելիք Աբովի որդի Ռուստամ բէկն զորքան քաջութիւնս արար և քանիցս անգամ առիւծօրէն կատարէաց զպաշտօնս իւր և ի կրկնել ծառայութեանն անկաւ ի ձեռս պարսից և մինչև ցարդ[1] կայ ի գերութիւն. նոյնպէս և իշխանն հայոց Մելիք Ջիմշիդն մտերմապէս ծառայեաց մինչև ի յետին կէտն պատերազմին և սոտ ելանողացն յախտնիկութիւն 9 իշխանաց հրամայեցաւ շնորհակալութիւն օգոստափառ թագաւորէն, յորոց էին հօրեղբայրն իմ նազվօրնի սովետնիկ Յովսեփ Միրիշկարբաշին և հօրեղբօրորդին իմ կոլլեժսկի ասեսօր Աբիսողոմ, որք մինչև ի վախճան և յաւարտ պատերազմի հաւատարմապէս ծառայեցին, նաև յայսպիսի ժամանակս ուր ուրեք և բնակեալք կային ազգի հայոց, որպիսի հաւատարմութեամբ և քաջազոյն արիութեամբ ծառայեցին, այն քաջայայտ է ամենեցուն. բայց որովհետև ազգս Հայոց ի վաղնջուցն է ապաբախտ, ասյա զայս ո՞ հասուցանէ առ ամեն ողորմած թագաւորն, զի զորպիսութիւն հայոց քաջ գիտէ ակնատես և յառկացեալ ողորմածն ի վերայ Հայոց՝ տանս վրաց կառավարիչ կնեազ Դիմիտր Միխայլովիչ Վալխոնցկին, որ և բաղում խնամս ունէր առ ազգս մեր և որքան ասա էր միշտ ջանայր բախտաւորել զազգս մեր»։ Եվ իշխան Դարչին վերջացնում էր իր նամակը հետևյալ տողերով. «Վերջապես խնդրեմք զի որպէս մինչև ցայժմ ունեցեալ էք զսէր ջերմեռանդ ի վերայ ազգին Հայոց, վերստին ի պատկանաւոր տեղւոջ անմոռանալի ունիցիք զիղձալի ազգս Հայոց զոնէ՝ թէ ողորմութեամբ օգոստափառ կայսերն երջանկութեան իմիք հասանիցէ»[2]։

Երբ գրվում էր այս նամակը, Ցիցիանովը դեռ կենդանի էր, ուստի և հասկանալի է, թե ինչու իշխան Դարչին չէր գրում, թե ով է պատճառը, որ հայերի կատարած գործերի մասին տեղեկություններ չեն հասնում ռուսաց կայսրին։ Բայց ահա Ցիցիանովի մեջտեղից վերանալուց հետո առաջինը Բոլնիսի ծերացած հերոս Մելիք Աբովն էր, որ բաց էր անում բերանը՝ հայտնելու համար, թե ինչ էր այդ մարդը հայերի համար։ 1806 թվի մայիսի 12-ին նա գրում էր Թիֆլիսից հետևյալ նամակը Ռուսաստանի հայոց առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոս Ձորագեղցուն.

«Արդարև զգամ ինձէն զիմն ամարդութիւն և սխալանք. զի յայսքան միջոց չգրեցաք զարժանաւոր պարտ ու պատշաճ խոնարհ մեր որդիական պաշտօն յայտնել ձերդ բարձր սրբազանութեան։ Մանաւանդ առաւել պարտաւորիմ այնու, զի դուք շարժեալ ի հայրական ձեր սիրոյ, քանիցս գրեցիք մեզ զթուղթս սիրալիրս և մեք ակարացաք և նոցին զանդրադարձն գրել, և մերս որդիական սէր և մտերմութիւն, զորս ունիմ ի վաղուց ընդ սրբասնեալ ձեր վեհանձնութիւն, յայտնել և օրհնութեանց ձերոց արժանաւորիլ։

Լուիցի քաղցրութեամբ ձերդ բարձր սրբազանութիւն մերս բանից և ուշադիր լիցի հեզութեամբ մերս ցաւոց, զորս յայնժամ չկարելով ծանուցանել, այժմ բանամք առաջի իբրև հմուտ և հզօր բժշկապետի, և այսու զարման տանել մարդասիրաբար հայցեմք բաղում կողկողանօք։ Ոչ նուազութեամբ սիրոյ և որդիութեան և ոչ դարձեալ հեղգութեամբ ծուլացաք ի գրութեանց, այլ յանի մեծի և երկիւղի գոլով, ընդ որում կուսակալ Ցիցիանովն թշնամութեամբ կայր

¹ Н. Дубровин, с. 490.

¹ Նամակը գրված է 1805 թ. փետրվարի 25-ին։

² Ձեռագիր (հեղինակի ժողովածուի մեջ)։

ոչ միայն ընդ մեզ, այլև ընդ բոլոր մեր ազգին և սպառնայր ևս միշտ այնոցիկ, որք կամէին յայտնել ինչ այլուր, յետս կասեցաք և մեք ի սիրոյ բարեկամաց և ի թղթոց, և ամօթապարտ գաք առաջի մերոյ բարերարին։

Արդ՝ ո՞չ ապաքէն մեք նոյն մարդ եմք, որ բազում ուրեք բազմազիմի ծառայութեամբ և քաջութեամբ ցուցաք անձինս մեր հաւատարիմս և հպատակս նորին կայսերական մեծութեանն և նորին անյաղթ տէրութեանն, զի՞ է այսպէս զի իբրև անարգս և անզօրս անպահունցաք ի նորին կուսակալ Ցիցիանովէն, և անարգ համարեցաք առաջի թիւր և ախտակիր դատողութեն նորա։ Մեք յամենայն ժամ յայտնեալ եմք զմերս քաջութիւն և զարիութիւն ընդ մեծագոյն ի սրտէ հաւատարմութեանց ամենուրեք առաջի հզօր տէրութեան մեր ամենողորմ ինքնակալաց պանծալի ազգին ռուսաց թէ ի ժամանակս Զուպովին ի Շուշի, թէ ի ժամանակս նորին Ցիցիանովին և թէ յետ նորին զարդին, որպէս և քարինք կարեն բարձրաբարբառ վկայել և քարոզել, թող թէ մարդիկ, բայց ոչինչ իւիք մխիթարեալ և կամ զվարձս վաստակոց և մերոց ջանից և քաջութեանց տեսեալ և ընկալեալ, և փոխանակ պսակաց և պատուոյ, այլ և զանարգանս և զանապատուութիւնս լուեալ և տարեալ և իբր զտկար և զանարի ոք համարեցեալ, զուցէ և յայլոց։

Առ Զուպով զօրագլխաւ և յառաջ քան զնա ևս ցուցեալ մեր յաղթութիւնք և քաջագործութիւնք և ազգի ազգի հպատակութիւնք առ մշտնջենաւոր փառաց արժանաւոր՝ մայրն հասարակաց թագուհին Ռուսաստանեայց և առ համագին իմ լուսաւորչածին յաղագս հայրենի օրինաց մերոց և քրիստոնեական սուրբ հաւատոյ յայտնիք են ձեռամդ բարձր սրբազանութեան, և ոչ դարձեալ տալ զձանձրոյթ ձերդ մաքուր լսելեաց կամիմք։ Իսկ առ երախտամոռ և թշնամասէր Ցիցիանով կուսակալին՝ երիւք հանդիսացաք ծայրագոյն մտերմութեամբ և արիութեամբ։ Նախ՝ մինչև ինքն Ցիցիանովն շրջապատեալ ի թշնամեաց, ի Շահէն և ի Շահզատայէն և ի հարիւր հազար զօրաց նոցին՝ յոգիս կայր ապաստան և մերձ ընդ մերձ կեր և կուլ լինել Պարսից հանդերձեալ էր, ես էի, որ յիմ միածին, անդրանիկ և քաղցր որդին ոչ խնայեալ, այլ իբրև բոլորապտուղ ողջակեզ մատուցեալ յանուն քաղցր և ողորմած թագաւորին իմ որ՝ Աստուածապսակ կայսրն ամենայն Ռուսաց, զնա ինքն զանդրանիկն իմ Ռոստոմ պէկ բարուք և գիւղային և ամենայն պատրաստութեամբ ի քաղաքէս յերևան առ նա ինքն Ցիցիանովն փութացուցի, ի բաց եդեալ զհայրականութիւն, որ առ որդիս և զսնոտի երկիւղ մարդկանց. և այսպէս օժանդակութեամբ իմով և ձեռնտուութեամբ իմ անդրանիկ որդւոյս և քաջութեամբ իմային անձանց ապրեցաւ ինքն, և ընդ նմա եղեալ խաչակիր զօրքն բարեհամբաւ։

Երկրորդ՝ իբրև զօրացան թշնամիք զօրք պարսից ի վերայ Ցիցիանովին յանզգուշութենէ նորին, և զամենայն ճանապարհս և զանցս կալեալ և կապեալ, ի սպառ հատին զուտս երթևեկաց, և յուսակտուր զնա արարին, և ի վերայ այսր ամենայնի եկեալ ի գաւառն Տաշրաց ի Բամբակաձոր կոչեցեալ տեղին ի գիւղն Ղարաքիլիսայ, և սաստիկ մարտ եդեալ ընդ այն, այնինչ հանդերձեալ էին առնուլ, և ի սուր սուսերի մաշել զամենայն զօրս Ռուսաց և զամենայն բնակիչս և իբրև յարմարեալ ապաստանեալ ժողովուրդսն նորին, և ոչ ոք էր որ օգնէր նոցա, ոչ ինքն Ցիցիանովն և ոչ ի Թիֆլիզ եղեալ զօրապետքն և զօրքն. անճարացեալ ապա Ցիցիանովին, զաղերս էր մատուցանեալ իմ որդի Ռոստոմ պէկին զի ինքն իւրով քաջաբամբք և սակաւ ինչ զօրօք ռուսաց յօգնութիւն հասանիցի ի Ղարաքիլիսայ եղելիցն և անտի դարձեալ հաց, գիւղայ և բարութ հասուսցանիցին ինքեան. որոց պատահեալ ի ճանապարհին քան հազար Զօրք պարսից և սաստիկ մարտ եդեալ զերիս տիւս և զերիս գիշերս ընդ նոսա, որք էին իբրև տասն հազարք և քսան, հուսկ յետոյ ի պակասել բարութ և

գիւղայից, ինքեանք կամովին գրեթէ անձնատուր էին եղեալ թշնամեաց։ Նա և հանձն այսու օրինակաւ անկան ի մարտի հարիւր և քսանքն, և իբրև նահատակ բարի եղեալ պսակեցան յերկնաւոր թագաւորէն. իսկ զորդեակն իմ Ռոստոմ պէկ կալեալ և կապեալ կրկին շղթայիւք, խաղացուցին ի Դաւրէժ, ուր և հանգաւ ի Տէր՝ կրեալ զպէս պէս վիշտս և զտանջանս, և մատոյց զանձն բանաւոր ողջակէզ յանուն ինքնակալին ամենայն Ռուսաց, և զիս արար խղճալի և որդեմեռ, և եթող սուգ անմխիթար և տրտմութիւն անփարատելի և զարտասուս մշտնջենաւորս։

Եւ երրորդ՝ մինչ պարոն Վօլխօնեցկին նախարան քաղաքիս և բոլոր բնակիչքն սորին քուեալ զայսպիսի աղէտս հանդիպեալս Ցիցիանովին, և զօրաց նորին, յահի մեծի և ի տագնապի կային և պէս պէս հնարիւք ապրեցուցանել զքաղաքս նախահոգային, ես էի որ զամենայն ընտանին իմ և մարդկանց իմոց բերեալ ի քաղաքս, և ազգն ազգի հաւատարիմ ծառայութեամբ օգնական և ձեռնտու լեալ նորին ինքեան Վօլխօնցկուն, իմոյին քաջարամբք ուժու եղէ նմա և պահպանիչ քաղաքիս, և այլն։

Արդ՝ ո՞ւր են և ո՞ւր մնացին այսոցիկ ամենից վարձ և պսակ, զի առաւել ևս վառեալ և բորբոքեալ ի սէր քրիստոսապսակ կայսերն իմոյ ողորմածի, օր քան զօր իբրև զարփի փայլեցուցանէի զիմ արութիւն քաջութեան հանդերձ մեծամեծ և նորանոր խոնարհ և հարազատ ծառայութեամբ և բազմօգուտ ջանացողութեամբ, քանզի պատիւ և պսակն է, որ խրախուսէ զքաջ առաքինիսն ի մահ և ի սուր կամ վասն երկնաւորին առ ի ժառանգել զարքայութիւնն, և կամ վասն երկրաւոր թագաւորի, առ ի ընկալնուլ զարժանին պատիւ։

Ի վերջոյ՝ զայս խնդրեմք աղերսանօք ի ձերդ բարձր սրբազնութենէն, որպէս և գերագնիւ աղա Մինասին զայնս գրեալ խնդրեցաք, զի զիարդ եղանակաւ և լինիցի ջան դիգիք, զմերս նուաստութիւն հանդիպեցուցանել ձերդ տեսութեան, զի եկեալ այդր, բերան ի բերան ծանուցից զամենայն տառապանս իմ և ուր հարկն է ձեօք հանդերձ յայտնեցից մեծագոյն հաւատարմութիւնք իմ, և ընդ ձեզ խորհրդակցեալ նախահոգասցուք զապագայ առնելեաց և այնպէս բարձից զնախատինս իմէնջ և սրբեցից զկեղտ անուանն յազգէս մերմէ, և այնուհետև՝ թէև մահ դիպեսցի մեզ, ուրախութեամբ հանգեայց, զի քաջութեամբ բարեհամբաւ մեռանիմ և ոչ իբրև անարգ ոք յանկողնի և վատանութեամբ[1]։

Ծերունի հերոսի այս խնդիրքն անկատար մնաց, և նա հետո էլ, ինչպես կտեսնենք, ստիպված էր նույն դանգատներն անել, ստիպված լինելով մնալ Բաղխիսում և զգալ իրեն ապերախտության և մոռացության զոհ։ Մելիք Աբովի նման դանգատավոր էր Ցիցիանովից և Ղարաբաղի մյուս նշանավոր տերերից մեկը, Վարանդայի Մելիք Ջումշուդը։ Նա, գտնվելով Ղարաբաղում, ուշ ստացավ Մինաս Լազարյանի նամակը։ Եվ միայն 1806 թ. վերջերին գալով Թիֆլիս, գրեց (դեկտեմբերի 2-ին) պատասխանը, որ սկսվում էր այսպիսի տողերով. «Թէպէտ յառաջ քան զայս քանի գրով գրեալ եմ առ վեհապետութիւն ձեր զպատասխանիս գրութեանց ձերոց, իսկ որովհետև ոչ գիտեմ հասանելն այնոցիկ առ ձեզ, վասն որոյ այսու համապատասխանեմ այնց ամենից՝ զոր դուք գրէք։ Արդ նախ տեղեկիք թէ զիա՞րդ ոչ յիշի անուն մեր ի շարս իշխանացն վրաց յառկացելոց ի մէջ պատերազմի։ Առ այս ասեմ խայթոցիւ, թէ և մեք մելիքանքս Խամսայու առաւել քան զնոքա յառկացաք ի մէջ պատերազմի և առաւելագոյն պարգևաց և շնորհաց էաք արժանի, սակայն արմատացեալ նախանձ, ի սիրտ հանգուցեալ կնեազ Ցիցիանովի առ ազգն հայոց ոչ թողլա-

1 Ձեռագիր (հեղինակի ժողովածուի մեջ)։

րեցին նմա բացայայտել առ ամենազթած կայսերն զյոզնաժէտ ծառայութիւնս և զջանս մեր, զորս ցուցաք որպէս ի ժամ առմանն Գանձակու, այնպէս և յուղևորակս յԵրևանու և Շրուանու, ուր տեսանելով զիս միայն ընդ զօրաց իմոց բարւք կարգադրութեամբ և անակնկալ ծառայող սէրութեանն ամենայն Թուրաց, Հարկադրեալ իբաւանց՝ խոստացաւ խնդրել ի կայսերէն վասն իմ զգրոշակս, զորս ստանալոց էի ճարց կարծեաց, եթէ ոչ պատահեցէր նմա այնպիսի ապերջանկութիւնս»[1]։

Հարց է՝ կարո՞ղ էր Ցիցիանովի մահը նշանակել, թե հայերն ավելի արդար վերաբերմունքի կարժանանան ռուսաց կառավարության կողմից։ Այս հարցին պատասխանում է այն հանգամանքը, որ հենց այդ նույն Ցիցիանովն էր կազմում ռուս բյուրոկրատիայի պարծանքը և նրան նմանվելը բարձր պետական իմաստություն էր համարվում Կովկասը կառավարած նույնիսկ անվանի պաշտոնյաների համար։ Այսպես, Կովկասի հռչակավոր փոխարքա իշխան Միխայիլ Սեմյոնովիչ Վորոնցովը,— ասում է ռուսաց տիրապետության պաշտոնական պատմությունը,— շատ էր սատամ, թե իրեն համարում է միմիայն շարունակող Ցիցիանովի ծրագիրների և կատարող նրա նախագծերի[2]։ Այս արդեն չափազանց լավ բնորոշում է ցարական կառավարությունը Կովկասում։

Գլուխ երկրորդ

ԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿ.— ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՐՑ.— ԹՈՒՐՔԻԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԵՏ.— ԳՅՈՒԼԻՍՏԱՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1807—1843

1. Կոմս Գուդովիչ։ Իշխան Ցիցիանովի սպանությունն առաջին տպավորությունն թողեց Արևելքում, ցույց տալով միաժամանակ, թե նրա զինական և դիվանագիտական նվաճումները փայլուն էին արտաքուստ, իսկ ներքուստ խախուտ էին և անկայուն։ Բավական էր, որ մեջտեղից վերանա նվաճողը, և ահա ամեն տեղ, ուր հավատարիմ հպատակության երդումներ էին եղել, ուր ռուսական զորքեր էին մացվել, հավատարմությունը երաշխավորող պատանդներ էին վերցվել, ըմբոստումներ առաջացան։ Սկսած Սև ծովից՝ Իմերեթը, Մեգրելիան, Ջառը, Շաքին, Ղարաբաղը, Շիրվանը փութացին վերականգնել իրենց անկախությունը, հեռացնելով կամ ոչնչացնելով ռուսական փոքրիկ զորամասերը։ Կազմվեց մի ընդհանուր հակառուսական դաշնակցություն, որի մեջ կովկասյան ազգերից չէին երևում միայն հայերը և Կախեթի ու Քարթլիայի վրացիները։ Վտանգավորն այդ համակովկասյան շարժման մեջ այն էր, որ նրա գլուխ էին կանգնում Դաղստանի ցեղերը։ Կազմված էր մի շատ սրամիտ ծրագիր— Ղաղիղումուխի Սուրխա խանը պիտի հարձակվեր Գանձակի վրա, միանալով Երևանում գտնվող Ալեքսանդր արքայորդու հետ, և այդպիսով ճանապարհ բաց աներ, որ արդեն դեպի ռուսական սահմանները շարժվող պարսկական զորքերը գնան վերցնեն Թիֆլիսը։

Ռուսական տիրապետության ճգնաժամն էր սկսվել։ Զորքերի թիվը սաստիկ նվազել էր. դրությունը շատ վտանգավոր կդառնար, եթե չլիներ գեներալ Գլազենապը, որ իր ձեռքն առավ զորքերի հրամանատարությունը մինչև Ցիցիանովի տեղ ուրիշ հրամանատար նշանակվելը, և եռանդուն կարգադրություններով կարողացավ Հյուսիսային Կովկասից կարգ պահպանել։ Անդրկովկասի զորքերի հրամանատարությունը նա հանձնում է իր ընդունակություններով հայտնի գեներալ Նեսվետաևին, որ Ղարաքիլիսայից տեղափոխվեց Թիֆլիս, մնալով ստորադրված Գլազենապին։ Վերջինս, միանգամայն ուղիղ ըմբռնելով և գնահատելով իրերի դրությունը, մի շարք խելացի հրահանգներ ավեց գեներալ Նեսվետաևին, իսկ ինքը մի ուրիշ զորաբաժնով մոտեցավ Դաղստանի սահմանին և կանգ առավ, բռնելով սպառնական դիրք, որ միանգամայն բավական եղավ քանդելու լեռնցիների միաբանությունը։ Յուրաքանչյուր տիրող, տեսնելով ռուսական զորքերը, հարձակման պատրաստ վիճակի մեջ, չհամարձակվեց հեռանալ իր երկրի սահմաններից և թողնել նրանց անպաշտպան։ Եվ Սուրխա խանը, որ արդեն արշավանք էր սկսել դեպի Նուխի՝ նրա խանի հետ միանալու համար, ստիպված եղավ, քանի որ մենակ էր մնացել, վերադառնալ Ղազիղումուխ։ Միաժամանակ Գլազենապը, Կովկասի մյուս կողմում գտնված զորքերն ուժեղացնելու համար, Թիֆլիս ուղարկեց Տրոիցկի հետևակ գունդը, որի հրամանատարն էր գեներալ-մայոր Ներոլսինը։ Մինչև այդ զորքերի տեղ հասնելը, գեներալ Նեսվետաևը պիտի բավականանար լոկ պաշտպանողական գործողություններով։

Մայիս ամսին էր, որ Տրոիցկի գունդը հասավ Թիֆլիս։ Նա իսկը ժամանակին էր գալիս։ Պարսից զորքերը, Աբաս Միրզայի առաջնորդությամբ մոտենում էին Արաքս գետին դարձյալ Ղարաբաղի կողմից։ Իբրահիմ խանն արդեն մոռացել էր իր հավատարմական երդումը և գաղտնի բանակցություններ էր վարում Աբաս Միրզայի հետ՝ Շուշին նրան հանձնելու և մայոր Լիսանևիչի զորաբաժինը ոչնչացնելու համար։ Մելիք Ջումշուդը, տեղեկանալով այս հանգամանքին, շտապեց հայտնել Նեսվետաևին իր իմացածը և ցույց տալ այն միջոցները, որոնց գործադրությունը պահանջում էին հանգամանքները։ Այս մասին ահա ինչ էր նա գրում Մինաս Լազարյանին իր նամակի մեջ, որի սկիզբը մենք բերինք վերևում. «Զկնի մահուան նորին (Ցիցիանովի) գտանելով իմ աստ (Թիֆլիս) և գիտենալով զամենայն չար խոկմանս Պարսից, առ ի ամրացուցանել զնորաբուսաց աշխարհն Ղարաբաղու, եսու գրութեամբ զքանի մի զլխաւորութիւնս իմ տեառն գէնէրալ մայոր Նեսվէտաևին և գնացի ցամօքն Շուշուայ և միացա ընդ զօրացն ռուսաց»[1]։ Պահվել են Մելիք Ջումշուդի բոլոր գրածները Նեսվետաևին, նրանցից մենք իմանում ենք, որ Վարանդայի տերն առհասարակ շատ լավատեղյակ էր տեղի ունեցող շարժումներին և շատ լավ գիտեր պարսից կառավարության դիտավորությունները ու ծրագրած գործողությունները։

«Արդովս յոյժ խոնարհաբար ծառայութիւն մատուցանեմ,— գրում է նա իր առաջին թղթի մեջ,— և յայտ առնեմ պայծառութեանն ձերոյ, զոր յառաջոց էլ յաղագս Ղլլբաշի անցման հրամանոցդ ռուսերէն գրած եմ, կարծեմ մինչև այսօր ստացած լինիս, և ահա թէ կամենաս տեղիս որպէսութիւն և անցանցն հարցանել, մինչև ցարեւս ոչինչ չի կայ այժմոյս շահզադան Արդաբիլ նստած է, բայց Մարաղուցու Ահմադ խանն մեծ զորքով Արասխի ափումն է և շահզադի դալի կայ Հասան խան անուամբ, նա էլ զօրքով Ահմադ խանի մոտն է։ Իմացյա հաստատ իմանաս, որ մինչև մայիսի ամսոյ 12-ումն շահզադան գաղորմած, հաստատ իմանաս, որ մինչև մայիսի ամսոյ 12-ումն շահզադան դալոց է Արասխի ափն, որ կարմուչն շինեն, անցնեն Ղարաբաղս, զոր այս երկրի

---

[1] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ե, էջ 494։

[2] «Утвержд. рус. влад. на Кавказе», I, с. 234.

[1] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ե, էջ 494—495։

կիրս էլ առ Նորին ամենաողորմածաբար կայսերական պօդան (=подданный, հպատակ) է և ինքնակալ թագավորի ողորմութիւն հասել է այս երկրիս վրէն վասն որոյ պարտ է ռուսաց զօրքն կայ (=գայ) տեղս որ թողեն ու Ղզլբաշն այս կողմս անցնել. յատուկ և հաստատ իմանաս, որ եթէ հէքուան պէս Ղարաբաղի հացն ձեռաց դուրս եկաւ կամ աւերե տեղիս ռուսաց զօրքի բանն էլայ դժվարին և այս երկրիս բանն էլ. խնդրեմ աղերսանօք այս մօտի ժամանակս ռուսաց զօրք իւր խօրակովն հասուցանես ի մեզ, որ հացն աստուծով վեր առնելոյ յետ զօրքի հացն էլ տեղիցս կուտան իւր հէքսարովն և յայտ լիցի պայծառութեանդ, որ այս տարիս երկու թարափով է պատերազմունք լինելոյ, մէկն Ղարաբաղովս և միւսն Երևանով, բայց մեծ պատերազմունքն և շատ կռիւն կողմովս կուլնի, այս տեղիս ռուսի զօրքն պէտք է, որ զօռով լնի և թէ Շիրվանի ահվալաթն խաթր բերես Աթայ խան կայ Շահսէվան եկեալ է Մուստափայ խանի մօտ էնտեղ խօսակցութիւն են արել, որ Բաքուայ Հուսէյին Ղուլի խանն կամ Շիխ Ալի խանը Մուստափայ խանի հետ կամ Քուբի ափումն Մարաղալու Ահմադ խանի հետ կօբշմիշ ընեն և տեսնան, որ այս թարափովս շահզադան կայ (=գայ) Ղարաբաղիս վրէն և այն կողմովն Շիրվանի խաներն կան։ Կրկին յուսամ, որ մինչև Ահմադ խանն և Մուստափայ խանն մէկիս մէկն տեսնուլն մինչի Ռուսաց զօրք հասուցանես. եթէ զօրքն տեղս հասնիցի ոչ տուցաւ Ղարաբաղիս բանն շատ դժվարին կուլնի»[1]։

Մելիք Ջումշուդի տված տեղեկությունների մեջ մեծ արժեք ուներ մանավանդ այն, որ պարսկական արշավանքն այս անգամ էլ ընտրել էր երկու ուղղություն—Խուդափիրինի կամուրջով Ղարաբաղի վրա և Ջուղայի մոտով՝ Երևանի վրա, և որ գլխավոր հարվածն ուղղված պիտի լինի Ղարաբաղի դեմ։ Թե այս տեղեկությունը և թե Վարանդայի տիրոջ ստիպողական պահանջը, որ ռուսական զորք ուղարկվի Ղարաբաղ՝ համոզեցին գեներալ Նեսվետաևին գլխավոր հակահարված պատրաստել Ղարաբաղի կողմում։ Այս պատճառով էր, որ, Քյուրակ չայի գետի բանակում, գեներալ Նեբոլսինի գլխավորությամբ հավաքված զորքը հրաման էր ստանում պատրաստ լինել շարժվելու դեպի Ղարաբաղ՝ թշնամուն այնտեղ հանդիպելու համար։ Իսկ Մելիք Ջումշուդը մայիսի 16-ին մի նոր գրություն էր ուղարկում Նեսվետաևին և գրում էր նրա մեջ հետևյալը.

«Արզովս յոյժ խոնարհաբար ծառայութիւն մատուցանեմ և յայտ առնեմ բարձր գերազանցութեանդ ձերոյ զոր թարեղս յառաջ հանգուցեալ ողորմածահոգի կնեազ Ցիցիանովն կենդանի ժամանակն այս Ղարաբաղիս ամենայն որպէսութիւնն և ահվալն հարցումն էր առնում ինձնից և ձերոյ պայծառութեանդ ես այս տարի Թիֆլիս քաղաքում ժամանակն, որ կամենում էի տեղս գալն ինձի հրամայեցիր Ղարաբաղի և Ղզլբաշի ինչ որ ահվալ իմանաս ինձի գրես։ Իմ ողորմած, վասն որոյ մինչ ի թարեղս երկու անգամ պայծառութեանդ գրած եմ տեղիս ամենայն որպէսութիւն, կարծեմ ստացած լինես։ Եւ այժմոյս, եթէ կամենաս տեղիս որպէսութիւնն և անցանքն հարցանել, յայտ առնեմ պայծառութեանդ, որ Ղզլբաշի մին փարայ զօրք Փիրղուլի խանն վեր է առել եկել Արասխի ափումն է, և շահզադան էլ մեծ զօրքով մարդ եկաւ, թէ այս քանի աւուրս գալոյ է, որ անցնեն այս թարափս։ Իմոյս ողորմած, հաստատ իմացիր, որ թէ Ռուսի զօրքն շուտով մեզ չի հասաւ Ղզլբաշն շուտով եկաւ Ղարաբաղս, հացն փչացրուց և ձեռաց դուրս եկաւ, էն ժամանակն Ղարաբաղիս հալն էլ է խարար հացի կողմաց և Ռուսի զօրքի բանն էլ շատ դժվարին կլինի։ Խնդրեմ աղերսանօք ձերոյ բարձր գերազանցութեանն, որ մին-

[1] «Акты Кавк. Арх. Ком.». т. III, Тиф., 1869, № 598.

չի մայիսի վերջն ռուսաց զօրքն հասուցանես ի մեզ, որ Ղարաբաղի հացն ձեռաց դուրս չի գայ և խարաբ չլինի կամ թողեն ու Ղզլբաշն այս կողմս անցնելոյ։ Նա ես արզ առնեմ պայծառութեանդ, զոր հրամանքդ գրեալ էք Իբրահիմ խանի վրէն հաց հազրեցեք ռուսաց զօրք ուղարկեմ, պայծառութեանդ լաւ ես տեղեակ, թէ անցած տարիս հացի կողմաց այս երկրիս գլուխն ինչ է եկել, որ ողջն սոված են այժմոյս և բանջար են արածում հեյվանի պես, խնդրեմ մինչ ի տեղս հացն դուրս գալն, զօրք իւր հացն յետն (=հետն) պիտի, որ Աստուծով հացն վեր առնելոյ յետ ես եմ կարող զօրքի հացն իր հեսաբովն տալ, կրկին յուսամ, ռուսաց զօրն շուտով մեզի հասուցանես, որ շատ դժվարին ժամանակն է այս երկրիս»[1]։

Այս նամակից հազիվ մի քանի օր անցած Ղարաբաղի ժողովուրդը դարձյալ տագնապի և իրարանցման մեջ էր։ Մի մասը, պարսից զորքերից ազատվելու համար, ինչպես սովորություն էր դարձել, փախավ Շուշի բերդն՝ այնտեղ փակվելու համար։ Թուրքերի մի խոշոր մասն արդեն ապստամբված էր Իբրահիմ խանի Աբուլ Ֆեթ որդու առաջնորդությամբ և սպասում էր պարսիկների գալուն։ Այդ սպառնալից միջոցին ինքը՝ Իբրահիմ խանը բռնել էր շատ կասկածելի մի դիրք։ Շուշու ամրություններին ապավինող ժողովրդին նա հորդոր էր կարդում վերադառնալ իր տեղերը, հավատացնելով թե պարսիկները վնաս չեն հասցնի նրան։ Քոչվոր թուրքերին նա, սովորականի պես, ուղարկեց Շուշու մերձակա սարերը, ասելով, որ նրանց համար վտանգ չկա։ Ինքն էլ դուրս եկավ Շուշուց և իջավ այգին, որ գտնվում էր Կառկառ գետի վրա, բերդից չորս վերստ հեռու։ Այդտեղ նա վրան զարկեց «Միրզա Ալի բեկ Սանգյարի» անունով (որ նշանակում է Միրզա Ալի բեկի ամրոց) տեղում։ Նրա հետ էին իր կանանցից մեկը, երկու անչափահաս տղաները և երկու աղջիկները։ Իր ծառաներով նրան միացավ և նրա որդի Մամադ Կասըմ աղան։ Հետզհետե այդտեղ հավաքվեցին և Շուշու բեկերից մի քանիսն իրենց ծառաներով, քոչվոր թուրքերից մի քանի խմբեր, այնպես որ ընդհանուր առմամբ կազմվեց 4—5 հարյուր զինված մարդկանց մի խումբ, որ սկսեց վրանների շուրջը նույնիսկ ամրություններ էլ շինել։

Շուշու բերդապահ մայոր Լիսանևիչը, նոր փոխգնդապետի աստիճան ստացած, Իբրահիմ խանի այս բոլոր գործերը համարեց դավաճանություն ռուսների դեմ և պարտք համարեց խիստ միջոցներ ձեռք առնել։ Ինչպես երևում է նրա մի ընդարձակ գրությունից, խանի դավաճանությունն ապացուցող մի շարք շատ համոզիչ փաստեր էլ ուներ նա իր ձեռքին։ Նա գրում էր, թե խանը դրանից առաջ հատուկ մարդ էր ուղարկել Պարսկաստան՝ Ֆաթալի խանի հետ խոսելու համար և առաջարկելով, որ շահը մոռանա անցյալն ու իրեն կատարյալ ներում շնորհե, իր կողմից պատրաստակամություն էր հայտնել հպատակվելու շահին և նրան հանձնելու Շուշի բերդը, դուրս վռնդելով այնտեղից և առհասարակ ամբողջ Ղարաբաղից ռուսաց զորքը։ Ավելի սերտ բարեկամական հարաբերություններ հաստատելու համար Իբրահիմն իր երկու աղջիկներին տալիս էր շահի երկու որդիներին կնության։ Ֆաթալի շահի համար կատարյալ անակնկալ էր Իբրահիմ խանի այս դարձը։ Ներելով նրա բոլոր մեղքերը, շահը խոստանում էր ուղարկել նրան օգնական զորք, 120 հազար ռուբլի Թեհրանի դրամով և բացի այդ բոլորից՝ Ղարաբաղն էլ տալիս էր նրա որդի Աբուլ Ֆեթին։ Ինքն՝ Իբրահիմն էլ չէր սպասում այդքան առատ շնորհներ Իրանի տիրոջ կողմից։ Այս պատճառով էլ նա դուրս գնաց Շուշուց, որպեսզի մոտ լինի շահի զորքերին և միանա նրանց, երբ կմոտենան այդ կող-

[1] Ibid., № 599.

մերին։ Դոնն այսպես էր բացատրում Լիսանևիչը խանի վարմունքը։ Եթե նա իր հետ տարել էր և իր երկու աղջիկներին էլ, այդ անշուշտ այն դիտավորությամբ, որ նրանց ամուսնացնե շահի երկու որդիների հետ։ Երբ իրողություն դարձավ, որ Աբաս Միրզայի զորքը, թվով մոտ 20 հազար հոգի, արդեն մտել է Ղարաբաղ, Լիսանևիչը պահանջեց խանից իր ընտանիքի հետ վերադառնալ Շուշի։ Խանը մերժեց այդ պահանջը, հայտարարելով, թե ինքը բացի շահի իշխանությունից իր վրա չի ճանաչում և ոչ մի այլ իշխանություն։ Համոզվելու համար Լիսանևիչն ուղարկեց նրա մոտ նրա որդի Մեհտի Ղուլի աղային և թոռն Ջաֆար Ղուլի աղային, որոնցից առաջինը՝ մի խորամանկ, տակնուտակ և երկդիմի մարդ էր, հաշվից դրդված՝ իրեն ռուսների կողմնակից էր ցույց տալիս, մինչդեռ երկրորդն իր հոր նման անկեղծորեն նվիրված էր Ռուսաստանին։ Մի ամբողջ օր մնալով խանի մոտ, նրանք վերադարձան և հայտնեցին Լիսանևիչին, թե նա շարունակ հայհոյում է ռուսներին։ Իսկ Ջաֆար Ղուլի աղան հայտնեց նաև, թե իր պապն իրեն համոզում էր, որ կանչե իր մոտ Լիսանևիչին, կալանավորե նրան և այդպես հանձնե իր՝ խանի ձեռքը։ Երկուսով միասին, Մեհտի Ղուլին և Ջաֆար Ղուլին համոզում էին ծերունուն, թե դավաճանելը լավ չէ, մի անիր այդ բանը, հավատարմությամբ ծառայիր թագավորին, բայց ամեն ինչ իզուր էր։ Եվ Լիսանևիչը, իր ասելով, գտնվելով անհրաժեշտության մեջ, որոշեց կալանավորել Իբրահիմ խանին[1]։

Այսպես է ներկայացնում դրությունը Լիսանևիչը։ Իսկ խանի կողմնակիցները բոլորովին այլ կերպ էին պատմում եղելությունը։ Իբրահիմը հեռացել էր բերդից պարզապես այն պատճառով, որ այլևս չէր կարողանում տանել Լիսանևիչի խնամակալությունը։ «Դալի-մայորն» ամեն բանի խառնվում էր խանի գործերի մեջ, պահանջներ էր անում, ստանում էր խանից կաշառք[2]։ Հեռանալով բերդից, խանն ուզում էր փոքր-ինչ շունչ առնել, բայց որ նա դավաճան չէր, ցույց է տալիս հենց այն հանգամանքը, որ իր ընտանիքի մի մասը թողել էր բերդում, ինքն էլ ամեն 2 օրը մի անգամ գալիս էր տուն՝ վերահասու լինելու իր գործերին։ Խանի հետ գտնվում էին ոչ թե 4—5 հազար մարդ, այլ 30 հոգուց ոչ ավել։ Սակայն խանի այդ կողմնակիցներն էլ, որոնք բաղկացած էին Շուշու բնակիչներից (դրանց մեջ էր և հայոց առաջնորդ եպիսկոպոսը) չէին ժխտում, որ նա իսկապես հարաբերություններ ուներ պարսիկների հետ և այդ բանը բացատրում էին նրանով, որ խանն ուզում էր բանակցություններով պաշտպանել ժողովուրդը, քանի դեռ փոքրաթիվ էր ռուսական զորքը[3]։

Այսպես թե այնպես, Լիսանևիչը, վերցնելով իր հետ 100 զինված և դուրս գալով բերդից, ուրիշ ճանապարհով գնաց դեպի խանի վրանները, քանի որ բերդից մինչև այդտեղ դրված էին թուրք պահապաններ։ Ռուս զինվորներին հրամայված էր հրացան չարձակել, մինչև որ հակառակորդը կրակ չբաց անե։ Հարձակումը տեղի ունեցավ գիշերով։ Առաջինը խանի մարդկանց կողմից էր, ինչպես ասում էր Լիսանևիչը, որ գնդակ արձակվեց, վիրավորելով մի ռուս զինվորի։ Հարձակման հրաման տրվեց, և սկսվեց կոտորածը։ Փախչող-ազատվողներ քիչ եղան։ Իբրահիմ խանն ու նրա ընտանիքը սպանված էին։ Լիսանևիչը պատմում էր, թե գիշերային մթության մեջ խանն ու իր երեխաները վազեցին մերձակա թփերի մեջ ծածկվելու համար, զինվորները, չճանաչելով

1 «Акты...», III, № 610.

2 Լիսանևիչը չէր ժխտում այդ հանգամանքը, բայց արդարանում էր նրանով, որ խանն ինքն էր հոժարակամ տալիս նվիրեղեններ, դրամ այնքան, որ պետական գանձարանը ծախսեր չէր անում Շուշու զորաբաժինը պահպանելու համար։

3 «Акты...», III, № 624.

նրանց մութի մեջ, սպանեցին, մինչդեռ խանի կողմնակիցները հավատացնում էին, թե խանն, ընդհակառակը, դեպի զինվորներն է վազել՝ նրանց մեջ պաշտպանվելու համար, բայց սպանվել է[1]։ Լիսանևիչն իր արած գործն ավելի և օրինական անհրաժեշտություն դարձնելու համար բերում էր մի թուրք բեկի վկայությունը, որ եթե այդ գիշեր Իբրահիմ խանը չսպանվեր, մյուս օրը նա պիտի միանար պարսից զորքի մի հատվածի հետ, որ արդեն երևացել էր Շուշու մոտիկ շրջակայքում և պիտի պաշարեր բերդը, որի մեջ ուտելիքի պաշար չկար։ Եվ Լիսանևիչը, հենց պարսկական այդ արշավանքի դեմն առնելու համար էր, որ նույն գիշերը վերադարձավ Շուշի և պաշտպանողական միջոցներ ձեռք առավ։ Իբրահիմ խանի սպանությունն արդարացնող վկայություն տալիս էր և Մելիք Ջումշուդը, գրելով Նեսվետաևին այսպես.

«Արդովս յոյժ խոնարհաբար ծառայութիւն մատուցանեմ և յայտ առնեմ բարձր գերազանցութեանն ձերոյ զոր եթէ կամենաս տեղիս որպէսութիւն և անցանքն հարցնել, որոյ թաղերումս Իբրահիմ խանն ճանապարհից դուրս եկաւ և մեծի կայսերական ծառայութիւնն խափանեց. Ղզլբաշի հետ խոսակցութիւն արաւ, Ղզլբաշի զօշունները բերեց մոտացրուց, որ ինքն էլ գնա Ղզլբաշի մէջն միատեղ գան բերդիս չորս դոլն առնէ։ Իմայս ողորմած, այս կողմանե իւր որդի Մէհտի Ղուլի խանն և Ջաֆար Ղուլի աղան ամենայն կերպիւ թագաւորին ծառայութիւն բաց չի թողեցին երկուսն եկին բարեծնունդ Միտր Տխխինիչ մայեօրի ասյան, թէ մենք ողորմած թագաւորին ուղիղ սիրով ծառայելոց ենք և մենք որչափ մեր հայր Իբրահիմ խանի հետ ասեցինք, թէ այդ մէկ բան չի մի անիլ և թագաւորին լաւ ծառայէ չի լինում այսուհետև հրամանք ձերն է. որպիսի մեծի կայսերական և ձերոյ Ղանուն և սալահն է այնպէս արա, իմ ողորմած, հաստատ իմացիր, որ մահօրին էլ չարայ չի ունէր այն գիշերն, որ գնէր ոչ իւր Իբրահիմ խանի վրէն, առաւօտն Ղզլբաշի զօրն գալոյ էր որոյ ինքն էլ գնայ մէջն և Իբրահիմ խանն էլ իւր տան Ղալիցն դուրս էր բերել վասն որոյ մայեօրն մին փարայ ռուսաց զօրքով գիշերն գնաց Իբրահիմ խանի վրէն և խառնակութիւն եղած ժամանակն Իբրահիմ խանին գուլով տուելին և քանիցս մարդ էլ իւր ամալիցն սպանել էին և Մեհտի Ղուլի խան կամ Ջեֆեր-Ղուլի աղան լավլաղէս ամենաողորմածաբար թագաւորին ծառայութին տրին և իւրեանց հայրիցն ձեռն վեր առին և այժմէս էլ Ղզլբաշի զօրքն Ղարաբաղումս կայ, բայց այս երրորդ, չորրորդ աւուրս շահզադան մեծ զօրքով գալիս վրէն գնի, իմ ողորմած, որ այս քանի աւուրս մեզի ռուսաց զօրք չի հասնէ, ոչ բաներնիս ոչինչ է»[2]։

Այսպես էր հեռանում աշխարհից Ղարաբաղի հռչակավոր Իբրահիմ խանը, մի արյունարբու, անգութ և միևնույն ժամանակ վերին աստիճանի խորամանկ և նուրբ քաղաքագետ ասիացի բռնակալ, որ տիրեց 52 տարի, ընդարձակեց իր խանությունը և միևնույն ժամանակ ծանր և մահացու հարվածներ հասցրեց Ղարաբաղի հայությանը, զրկելով նրան դարավոր ազատությունից և տկարացնելով վերջին աստիճան։ Կռիվը, որ բորբոքված մնաց երկար ժամանակ նրա և հայերի ազգային իշխանության միջև, այժմ էր բոլորովին մարում, 1806-ի այս մայիսյան գիշերը, Շուշու բերդի մոտ «Խանի այգի» կոչված տեղում, ուր 80—85 ամյա մոլեռանդ բռնակալը գնդակ էր ընդունում ռուս զինվորից, որ եկել էր ոչ միայն նրան սպանելու, այլև կո-

1 Նույն տարին Լիսանևիչը Թիֆլիսում ենթարկվեց զինվորական դատի, մեղադրվելով, թե սպանել է Իբրահիմ խանին առանց հարկեցուցիչ պատճառի։ Սակայն դատարանն արդարացրեց նրան։

2 «Акты...», III, № 600.

դոպանելու նրա հարստությունները, թեև նա ռուսաց զորքի գեներալ-լեյտենանտ էր, ուներ երկգլխյա արծիվով զարդարված դրոշակ և պատվավոր սուր։ Նա իր երկարատև խանության ընթացքում չհասկացավ, որ թուլացնելով հայերին, թուլանում է և ինքը։ Եվ ահա մեծ պայքարը վերջանում էր նրանով, որ Ղարաբաղի տերն ինչպես ոչ հայը պիտի լիներ, ոչ էլ թուրքը, այլ մի երրորդ, դրսից եկած ուժ, որ պիտի ընկճեր երկուսին էլ իր երկաթե գավազանով։ Բայց ռուսաց քաղաքականությունը դեռ չէր վտանգում միանգամայն ջնջել խանությունները և անմիջապես կառավարել Կովկասի հարստահարված ժողովուրդները։ Իբրահիմ խանից ազատված երկիրը նա տալիս է մի նոր և նրան բոլորովին նմանվող խանի։ Քյուրակ չայի դաշնագրով Ղարաբաղի խանությունը պիտի անցներ Իբրահիմ խանի ավագ որդի և ժառանգ Մահմադ Հասան աղայի որդի Ջաֆար Ղուլի աղային, բայց այս 19 տարեկան երիտասարդից ժառանգությունը խլեց Իբրահիմ խանի երկրորդ որդի Մեհտի Ղուլի աղան, որ հորից ժառանգել էր նրա ամբողջ խորամանկությունը, երկդիմությունը, ուխտանենգությունն ու անգթությունը։

Շուշու խանի սպանությունն շտապեցնում էր պարսկական զորքերի շարժումները։ Նրանց արևմտյան հատվածը, որի մեջ էր և Ալեքսանդր արքայորդին, բանակ դրեց Աղստ (Գասնի չայ) գետի վրա, սպասելով Աբաս Միրզայի առաջխաղացության, որպեսզի համաձայնեցնի իր գործողությունները նրա հետ։ Աբաս Միրզան Ղարաբաղի վրայով պիտի անցներ Գանձակ և, Ղազախի ու Շամշադինի թուրք ազգաբնակությանն ապստամբեցնելով, շարժվեր Թիֆլիսի վրա։ Եվ ահա Գասնի չայի բանակից երկու զորաբաժին, որոնցից մեկն Ալեքսանդր արքայորդու հրամանատարության տակ, կանգ առան Սևանի լճի մոտ և Ջագամ գետի վերևի կողմում, սպասելով, որ Աբաս Միրզան հասնի Շամշադին։ Բայց շահզադեին ուրիշ ճակատագիր էր սպասում, դարձյալ Ղարաբաղում։ Գեներալ Նեբոլսինը Քյուրակ չայից արշավանք սկսելով Շուշու պաշտպանության համար, կանչեց Մելիք Ջումշուդին իր զորքով, որ գտնվում էր Բերդում և որ խուլ ճանապարհներով միացավ արշավող զորքին։ Շահ Բուլաղի և Ասկարանի միջև Նեբոլսինը դարձյալ, անցյալ տարվա նման, շըրջապատվեց պարսկական զորքերով և ստիպված եղավ, Կարյագինի նման, որ այս անգամ էլ գտնվում էր արշավող բանակի մեջ իր գնդի զինվորներով, կռվով ճանապարհ բաց անել իր համար։ Բայց այս անգամ Լիսանևիչն շտապել էր գրավել Ասկարանն իր զորքերով, այնպես որ Նեբոլսինն անարգել մտավ այդ ամրոցը, թողեց այդտեղ իր բանակի ծանրոցքը և թեթևակի առաջ խաղաց՝ թշնամուն գտնելու համար։ Հանդիպումը տեղի ունեցավ Խոնաշեն գետակի վրա, ուր Աբաս Միրզայի բանակն էր գտնվում։ Ռուսները նախօրոք վերցրին այն կիրճը, որ պարսկական բանակի պաշտպանողական ամուր գիծն էր կազմում և պաշտպանվում էր նրա կողմից համառորեն։ Այս կիրճում Աբաս Միրզան կենտրոնացրել էր մոտ 20 հազար զորք, որից 4 հազարը հետևակ էին։ Հունիսի 13-ի կռվում այս բանակը սաստիկ ջարդ կերավ և փախչելով դեպի Արաքսը անցավ այս գետի մյուս կողմը։ Նեբոլսինը բավականացավ այդքանով։ Նա առաջ ուղարկեց մայոր Լիսանևիչին, որ 7 օրից հետո հանդիպելով պարսից բանակի մի մասին Մեղրի գետակի ակունքներում, ջարդեց նրան և փախցրեց Արաքսի մյուս ափը։ Այս կռիվների մեջ շատ քաջագործություններ ցույց տվեց Մելիք Ջումշուդն իր զորքով, և Նեբոլսինը հայտնեց այդ բոլորի մասին գեներալ Նեսվետաևին[1]։

Հունիսի 2-ին Կովկասի զորքերի գլխավոր հրամանատար, Իշխան Ցի-

[1] «Դիվան հայոց պատմության», գիրք է, եր. 495։

ցիանովի փոխարեն, նշանակվեց կոմս Իվան Գուդովիչը։ Կովկասին նա անծանոթ մեկը չէր, զորքերի հրամանատար եղել էր և Եկատերինա մեծի ժամանակ, բայց ապրել էր միշտ Հյուսիսային Կովկասում, չունենալով Անդրկովկասը, որ այն ժամանակ Ռուսաստանին չէր պատկանում։ Այս այն Գուդովիչն էր, որին Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը համարում էր գլխավոր պատճառ, որ Աղա Մահմադ խանը 1795-ին քանդեց Թիֆլիսը։ «Մեղավորը, —գրում էր նա իր մի նամակի մեջ,— Գուդովիչն է։ Թշվառ և չարաբախտ թագավորը (Հերակլը) դեռ մարտ ամսին (1795 թ.) մարդ էր ուղարկել նրա մոտ և գրել էր՝ օգնել կամ հրաժարվել. թեև ես շատ ասացի նրան (Գուդովիչին), թե երկիրը (Վրաստանը) առանց ձեր օգնության կկործանվի, բայց նրա պինդ գլուխը չվերցրեց այս բանը»[1]։ Այդ պինդ գլուխն այժմ 70-ամյա մի ծերունի էր և իր նոր պաշտոնին գալիս էր, ինչպես սովորություն է բյուրոկրատիկ աշխարհում, իր նախորդի, այսինքն՝ Իշխան Ցիցիանովի գործունեության եղանակին և քաղաքականությանը հակառակ ձգտումներով։ Դա անհամարակ մի անընդունակ վարչապետ և զորական հրամանատար էր։ Գալով Կովկաս, նա մի քանի ամիս մնաց Գեորգիևսկում Հյուսիսային Կովկասի գործերը կարգավորելու համար և միայն հոկտեմբեր ամսին ժամանեց Թիֆլիս։

Բայց մինչև որ նա իր ձեռքը կառներ Կովկասի ամբողջ կառավարությունը, Գլազենապ և Նեսվետաև գեներալները բավական հաջող կերպով առաջ էին տանում մաքառումն այն վտանգավոր շարժումների դեմ, որոնք ծագել էին Իշխան Ցիցիանովի սպանության հետևանքով։ Ռուսաց կառավարությունը վճռել էր պատժել Հյուսեին Ղուլի խանին, խլելով նրա Սաքուն և ոչնչացնելով ընդմիշտ նրա խանությունը։ Գեներալ Գլազենապն իր զորաբանակով արշավանք սկսեց դեպի Դերբենտ և գրավեց այն հունիսի 22-ին։ Այս ժամանակներն էլ գեներալ Նեսվետաևը մի քանի կողմերից փոքրիկ զորաբաժիններ էր ուղարկում պարսկական այն երկու բանակների դեմ, որոնցից մեկն, ինչպես հիշեցինք, Ալեքսանդր արքայորդու հրամանատարությամբ, գտնվում էր Սևանի լճի մոտ, մյուսը՝ Ջագամ գետի վերին մասերում։ Այս զորական շարժումներն այնպիսի սպառնական դրություն ստեղծեցին երկու բանակների համար, որ նրանք սկսեցին շտապով նահանջել դեպի Արաքս։ Այնուամենայնիվ, Ալեքսանդրը չկարողացավ խուսափել ռուսների հետ հանդիպումից և, պարտություն կրելով նրանցից, աճապարեց վերադառնալ Պարսկաստան։ Այնպես որ ամառվա մնացած մասը միանգամայն հանգիստ էր անցնում Ղարաբաղի համար, և նրա այն բնակիչները, որոնք պարսիկների ահից փախել, ամրացել էին լեռներում, նորից վերադարձան իրենց տեղերը։ Գեներալ Նեսվետաևը, հաստատ տեղեկություն ստանալով, որ Երևանը մնացել է առանց որևէ պաշտպանության, որ Աբաս Միրզան, թողնելով Թիֆլիս գնալու միտքը, Մուղանի դաշտով անցել է Շիրվան, դիտավորություն ունենալով գործողություններ սկսել ռուսական այն զորքերի դեմ, որոնք արշավում էին Բաքվի վրա,— թույլտվություն է խնդրում Գուդովիչից գնալ վերցնել Երևանը։ Իր զեկուցման մեջ գեներալն ապացուցում էր, որ եթե ռուսական հրամանատարությունն այժմ օգտվի բարեհաջող հանգամանքներից, Երևանի նվաճումը կդժվարանա այնքան, որ կարող է արդեն դառնալ նվաճման միտքն իրագործելու։ Գուդովիչը խիստ առնվում է իր ստորադրյալի այդ խրատներից և հանդիմանություն է գրում նրան, հրամայելով փոխանակ Երևան զորք ուղարկելու, ուշադրություն դարձնել Աբաս Միրզայի շարժման վրա, որը կասեցնելու համար ուղարկել

[1] «Кавказ. старина», 1872, с. 30.

ղարաբաղցիներ նրա թիկունքն անցնելու համար։ Այսպիսով, Երևանի գրավումը հետաձգվում էր մի առ ժամանակ ևս, իսկ Աբաս Միրզան լուր առնելով, որ գնդապետ Կարյագինը շարժվում է դեպի Ջավադ, շտապով ետ քաշվեց Արաքսի մյուս ափը, վախենալով կորցնել նահանջի ճանապարհը։ Հոկտեմբերի 3-ին ռուսները գրավեցին Բաքուն, քիչ հետո նաև Ղուբան։ Նույն ամսին Նեբոլսինը ջարդեց Նուխու Սելիմ խանի զորքը և այդպիսով ճնշեց այն ապստամբությունը, որ երեք ամսից ի վեր բարձրացրել էր այդ տիրողը ռուսաց իշխանության դեմ։ Այնպես, որ կոմս Գուդովիչը, Թիֆլիս ժամանելուց հետո, կարող եղավ հայտնել Ալեքսանդր կայսրին ոչ միայն այն, որ նորից նվաճված են Անդրկովկասյան երկրներից այնպիսիները, որոնք կամ ապստամբվել էին և կամ պատրաստված էին անցնելու պարսից կողմը, այլև այն, որ նոր կարևոր երկրներ (Բաքու—Ղուբա և Դերբենդ) միացված են Ռուսաստանին։

Վերջացնելով պատերազմական գործողությունները, Կովկասի նոր կառավարչապետն սկսեց զարգացնել իր սեփական քաղաքականությունը, որ, ընդհանուր առմամբ, Ցիցիանովի քաղաքականության ժխտումն էր։ Մինչդեռ Ցիցիանովն աշխատում էր որքան կարելի է արագ ռուսացնել նվաճված երկրները և ռուսական վարչություն էր մտցնում ուր որ միայն կարելի էր, Գուդովիչն, ընդհակառակը, ձգտում էր ուժեղացնել տեղական իշխողներին և այսպիսով, գուցե, մեղմացնել այն սուր անբավականությունը, որ Ցիցիանովը շարունակ գրգռում էր իր հիշոցաբան և արհամարհական գրություններով, մանավանդ իր մեծամիտ սպառնալիքներով։ Այսպես, նա Ղուբայի և Դերբենդ խանությունները տվեց Դաղստանի տիրողներից մեկին, իսկ Դաղստանցի մի քանի ուրիշ իշխանավորներին, որոնք դեռ նոր կռվում էին գեներալ Գլազենապի դեմ, գրավեց ռուսաց կողմը, բերել տալով նրանց համար կայսերական բարձր ընծաներ, սկսած գեներալության աստիճանից։ Ղարաբաղի խանության նկատմամբ Գուդովիչն արավ այն, ինչ կարելի էր անել՝ Ցիցիանովի հակառակը ցույց տալու համար։ Ինչպես տեսանք, Ցիցիանովը կամենում էր, որ Իբրահիմ խանի ժառանգը լինի նրա թոռը՝ Ջաֆար Ղուլի աղան, ինչպես որ այդ սահմանագրված էր Քյուրակ չայի դաշնագրությամբ։ Գուդովիչը, դրա հակառակ, աշխատեց և հաջողեցրեց, որ խանական իշխանությունն անցնի Իբրահիմի որդի Մեհտի Ղուլի աղային, թեև սա հայտնի էր իբրև երկդիմի և խորամանկ մի մարդ, այն ինչ Ջաֆար Ղուլին անկեղծորեն նվիրված էր Ռուսաստանի շահերին։ Բայց ավելի տարօրինակ լուծում էր ստանում Նուխու (Շաքիի) խանության հարցը։ Ապստամբ Սելիմ խանը, պարտություն կրելով ռուսներից, փախավ և հայտարարեց ընդմիշտ զրկված իր իշխանությունից։ Փոխանակ օգտվելու այս հանգամանքից և ժողովուրդն ազատելու խանական բռնակալությունից, Գուդովիչը Շաքիի խանությունը տվեց Խոյի Ջաֆար Ղուլի խանին, որ փախել էր Ռուսաց երկիրը, բերելով իր հետ մոտ 400 տուն հայ և թուրք հպատակներ։ Նոր խանը, անծանոթ տեղական ազգաբնակության ոգուն և սովորություններին, Պարսկաստանի կարգերն էր բերում իր հետ։ Լինելով սահմանափակ միջոցների տեր մարդ և պարտավորված լինելով վճարել ռուսներին հարկ՝ տարեկան 9000 ոսկի, Ջաֆար Ղուլի խանն ստիպված պիտի լիներ ավելի կեղեքել իր նոր, այնքան հեշտությամբ ստացած հպատակներին, ասիական բարբարոսության թելադրած բոլոր միջոցներին դիմելով։ Եվ ռուսական բյուրոկրատիան չէր, ճորտատիրական ոգով դաստիարակված, որ պաշտպաներ ժողովուրդն այդ կեղեքումներից։ Հատկապես Շաքիի խանության մեջ գոյություն ուներ այս աղաղակող փաստը։ Ռուսաց կառավարությունն այդ խանությունը նվաճելուց հետո ոչ միայն չվե-

րացրեց նախորդ խաների դրած «ղինիփնդի» (հավատի մետաքս) անվանված ամոթալի հարկը, որ ստացվում էր քրիստոնյաներից (հայերից) իբրև մի տեսակ տուգանք կրոնով քրիստոնյա լինելու համար[1], այլև աջակցում էր խաներին, որ անթերի ստանան այդ հարկը և պատժում էր այն գյուղացիներին, որոնք այդ հարկի անարդարություն զգալու չափ գիտակցություն էին ցույց տալիս և բողոքում էին նրա դեմ։

Եվ այսպես, Կովկասյան նոր կառավարչապետի քաղաքականությունը տեղական ազգությունների վերաբերմամբ ընդհանրապես մեղմ էր, բարյացակամ արտահայտություններով։ Հայերն, իհարկե, բացառություն չէին կազմում, և մենք շատ վկայություններ ունենք ժամանակակիցների գրությունների մեջ, թե Գուդովիչը խնամք ուներ դեպի հայոց ազգը։ Ամենից շատ այս վկայությունն արտահայտվում էր դանիելական կուսակցության կողմից։ Ցիցիանովի սպանությունն այդ կուսակցության ղեկավարների կողմից ընդունվեց իբրև մի սարսափելի հարված, որ գալիս էր ջախջախելու այնքան եռանդով ու ջանքերով կառուցած գործը։ Ճգնաժամ էր սկսվում դանիելական շարժման համար։ Թեև Հովհաննես Գեղարդակիրը լավ հարաբերություններ ուներ գեներալ Նեսվետաևի հետ, բայց հույս չունենալով, թե Կովկասում կարող է նորից վերականգնվել այնպիսի մի բացառիկ նպաստավոր դրություն, որպիսին ստեղծել էր հզոր և վճռական Ցիցիանովը, դանիելականները որոշեցին տեղափոխել պայքարի գլխավոր կենտրոնը Ռուսաստան։ Ներսես վարդապետ Աշտարակեցին ուղևորվեց այնտեղ, որպեսզի Եփրեմ արքեպիսկոպոսի և Լազարյանների ջանքերը բազմապատկե կուսակցական դատը չկորցնելու համար։ Դանիելական շեֆերի եռանդն ու վճռականությունը հասցրել էին այն եզրակացության, որ եթե ուրիշ հնար չլինի կաթողիկոսական հարցն իրենց կողմը շրջելու, ձեռնարկվի նույնիսկ հեղափոխական միջոցի։ Վճռված էր, Դավթին ոչնչացնելու համար, կաթողիկոսական աթոռը տեղափոխել մի օտար պետության, որ ներկա դեպքում կարող էր լինել, իհարկե, միմիայն Ռուսաստանը[2]։

Գուդովիչի հետ էլ Հովհաննես Գեղարդակիրը լավ հարաբերություններ մշակեց և այդ մասին գրում էր Մինաս Լազարյանին (1806-ի դեկտեմբերի 8-ին). «Իսկ զնորին պայծառափայլութեանն զսէր և յարգութիւն զոր ցուցանէ առ մեզ, որչափ և պարտիմք, ոչ կարեմք ասել շատն քանզի զոր ինչ կարևոր խնդիրս առնեմք, ոչ զանց առնէ. մինչ եմուտ նա ի քաղաքս և հրամայեաց տեսանել զպատրաստութիւնս իւրեանց գնալոյ յԵրևան, բայց յետոյ ետ արգելս այժմ գիտեմ, թէ ի՞նչ պատճառաւ՝ ինքեանք յայտ, վասն որոյ խորհուրդ տուաք մեք մէլիք և խզպաշի աղայից[3], արդ գրել ի դիմաց իւրեանց, զոր և գրեցին և արարին զերկուս խնդիրս. մին՝ առնուլ զԵրևան և ժողովել զինեալս ի տեղիս իւրեանց, ցուցանելով զպատշաճաւորութիւն ժամանակին առման նորա և խոստանալով ևս ըստ պիտոյից զօրացն տալ զծառայութիւնս. և միւսն՝ հրամայել զի էլլիկքն իւրեանց ցուցցին առ ինքեանս զհպատակութիւն ըստ բնական սովորութեան և այլն։ Զայս արզագիր ետուն մեզ, և մեք մատուցաք նորին պայծառափայլութեանն և բերանով ևս խօսեցաք՝ և խնդրեցաք զնոյնս. և նա՝ առ առաջին խնդիրն ետ մեզ պտուղար, թէ խաղացուցանել զզօրս ի հեռաւոր տեղի առնուլ զայնպիսի երկիր՝ կայսերական բեռն է,

1 Այս մասին տեղեկություններ հաղորդում էր ռուսաց կառավարությանը Հարություն Երարատյանը (ձեռագիր, Էջմիածնի հայրապետական դիվան)։

2 «Փորձ», 1877—1878, № 1, եր. 265։

3 Խոսքը Մելիք Աբրահամ Մելիք-Աղամալյանի և Գաբրիել ու Հովհաննես յուզբաշիներ Դեղամյանների մասին է։

և ինձ պատկանի, յորժամ կայսերութեանն տեսանեմ զօգուտ, յայնժամ առնեմ. բայց մեծայայս լերուք և փոքր ևս համբերեցէք, Աստուծով տանելոց եմ զձեզ փութով յերկիր հայրենեաց ձերոց։ Իսկ առ երկրորդ խնդիրն ևս շնորհեաց երկոցուն իսկ զյատուկ հրամանագիրս, զի էլլիկք նոցա կացցեն հպատակք ինքեանց, և թէ աստ այսպէս, ինարկէ, յՕրեան ևս այնպես լինելոց են»[1]։

Այսպիսի «շնորհների» համար էր Գուդովիչը համարվում հայ ժողովրդի պաշտպան և հովանավոր։ Բայց էապես այդտեղ մի առանձին ուշադրություն կամ բարյացակամություն չէ կարելի գտնել։ Դանիելական հայերն առաջվա պես աշխատում էին տանել ռուսներին Երևան և վերցնել տալ նրան։ Եվ այս ձգտումը չէր կարող խրախույսներ չգտնել Գուդովիչի, իբրև մի ռուս պաշտոնյայի մեջ։ Հայ ժողովրդի շահերն այստեղ, Երևանն առնելու համար կամ մի քանի հարյուր հայ ընտանիքներ հայ ազնվականներին սորկության տալու մեջ չէին շոշափում, այլ Ղարաբաղի հարցում, ուր 60 հազար տուն հայ ազգաբնակություն զրկվել էր իր դարավոր քաղաքական իրավունքներից։ Ահա այստեղ պիտի երևար Գուդովիչի տրամադրությունը վերացնելու այդ խոշոր անարդարությունը և այս հանգամանքում միայն Գուդովիչը կարող էր հայ ժողովրդի իսկական բարեկամը համարվել։ Սակայն փաստերը ցույց են տալիս, որ նա այդպիսին չէր։ Եվ այս փաստերը Ղարաբաղի մելիքների նամակներն են։

Վերևում մենք բերինք Մելիք Ջումշուդ Մելիք Շահնազարյանի նամակի սկիզբը, որի մեջ նա հիշատակում էր, թե ինչեր է արել Ցիցիանովի ժամանակ։ Այժմ պետք է տեսնել այն, ինչ նա կատարել էր Ցիցիանովից հետո։ «Զկնի մահուան նորին,— ասում էր մելիքը շարունակության մեջ,— գտանելով իմ աստ (Թիֆլիսում), և դիտելով զամենայն չար խոկմունս Պարսից առ ի ամրացուցանել զնորաբնակ աշխարհն Ղարաբաղու, նոու զրութեամբ զքանի մի դիտաւորութիւնս իմ տեառն գէնէրալ մայիոր Նեսվետայովին և գնացի ես յամրոցն Շուշուայ և միացայ ընդ զօրացն Ռուսաց. Պարսիկք լսելով զմահն քնիազ Ցիցիանովին բազմաթիվ զօրօք ընդ յառաջընթացութեամբ Աբաս Միրզայ որդւոյն Բաբախանի, արտորանօք ժամանեցին ի Ղարաբաղ և միացան ընդ համայն տաճկաց անդ բնակելոց, և յառաջադրեցին սրախողխողել զամենայն զօրս Ռուսաց և Հայոց յամրոցն գտանելոց, առ որ համաձայն էր և տիրապետողն Իբրահիմ խան, որով ընկալաւ պատիժս ըստ արժանւոյն։ Ցայսմ միջոցի գէնէրալ մայեօր Նեսվետաեն հաւանեալ զդիտաւորութիւնս իմ առաքէ զՏրօյէկցի պօլկն ի Ղարաբաղ յօգնութիւն զօրացն Ռուսաց անդ գտանելոյ, որով եկեալ ի Գանձակ առնու ընդ ինքեան զԿարակին (—Կարյագին) պօլկօվնիկ ընդ զօրօք և աճապարէն առ յօգնութիւն մեզ, և գոլով նոցա տակաւին ի ճանապարհի, գրեն առ իս ընդ առաջել նոցա զօրօք իմովք, ըստ որոյ թողեալ իմ զբաւական զօրս ընդ մնացեալ զօրացն ռուսաց առ ի պահպանութիւն ամրոցին, գնացի զօրօք և միացայ ընդ նոսա և զկնի երից աւուրց ի միասին պատերազմեցաք և յօգնականութեամբն ամենաբարձրելոյն Աստուծոյ կատարելապես յաղթահարեցաք զթշնամիս մեր և յետս դարձուցաք, այնպիսի իմն արշաւանօք մինչ զի 20 հազար արք հեծելազօրք սարսափելի երկիւղիւ անցին ընդ գետն Երասխ։ Ղէնէրալ մայիօր Նէբոլսինն շէֆն նոյնոյ Տրօյիցկի պօլկի, պօլկովնիկ Կարէգինն շէֆն եագրի (—եգերի) պօլկի, տեսանելով ի մէջ պատերազմի զքաջութիւն զօրաց իմոց և զհաւատարմութիւն իմ (որով հաստուցանէ զպաշարս վասն զօրացն ռուսաց ի ժամ պակասութիւն հացի և ցուցանէի զայլ բազմադիմի ծառայութիւնս) յոյժ հաւանեցան, և ման-

1 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ե, եր. 499—500։

րամասնաբար գրելով զայսոսիկ ամենայն հաւատարմութիւնս և զծառայութիւնս իմ առ նոյն գէնէրալ մայիօր Նէսվէտայովն` խնդրեցին ներկայացուցանել առաջի ամենաողորմած կայսերն մերոյ, սակայն ըստ ապերջանկութեան իմոյ ոչ գիտեմ թէ որո՞յ պատճառաւ ոչ ներկայացոյց, որոյ աղագաւ ի գալն իմ աստ խնդիր մատուցի նորին պայծառափայլութեան գրաֆ Իւան Վասիլիչ Գուտուդովին (=Գուդովիչին), որ և ակն ունիմ ի սէր ձեր և ազգին մերոյ (որոյ ցուցանէ խնամս) վարձատրեսցէ ինձ վասն այնց ամենից զոր արարի, եթէ յօգնութիւն տեառն ամենակալի և վեհազնութեան ձերոյ` ժամանեսցէ ի վերայ իմ»[1]։

Այս հույսը, սակայն, զուր էր։ Գուդովիչի բարյացակամությունը դեպի հայ ժողովուրդը ձևական քաղաքավարությունից և անբովանդակ խոստումներից հեռու չէր գնում։ Ժամանակը և հանգամանքները շատ լավ բնորոշում է Մելիք Աբովն իր երկրորդ նամակի մեջ, որ գրել է Մինաս աղա Լազարյանին 1807 թ. նոյեմբերի 23-ին և որի մեջ նա մի համարձակությամբ, որ վայել էր նրա պես մի հռչակված հերոսին, ներկայացնում էր հայերի վերաբերմամբ հաստատված ռեժիմը։ Մի վավերագիր է այս, որ բացատրում է դրությունն ամենապայծառ գույներով, և որի մեջ խոսում է հայի համար դարբնվող նոր ճակատագիրը։

«Ձեր գեղեցիկ անունը,— գրում էր Աբովը Լազարյանին[2],— բարձր շողշողում է արեգակի պես և աշխարհի բոլոր կողմերում օրհնաբանվում է մարդկանցից։ Այժմ դուք միայն մեր հույսն եք մեր հռչակավոր նախնիների, հերոսների և օրհնության արժանիքների սերնդից եք։ Եվ որովհետև դուք նման եք ծաղկած և պտղատու ծառի, իսկ Ամենաբարձրյալի աջի օգնությամբ համարձակություն ունիք լինելու ամենաողորմած կայսրի առաջ իբրև բարեխոս մեր ժողովրդի համար, ուստի մենք, որ մնացել ենք առանց վարձատրության մեր հավատարիմ հպատակության և ցույց տված քաջությունների համար և այժմ, մոռացված, ընդունվում ենք (կառավարությունից) իբրև աննշան և հասարակ անձնավորություն, էլ ում կարող ենք դիմել և մեր վիշտը հայտնել, եթե ոչ ձեզ, և ե՞րբ պիտի խնդրենք, որ վերադարձվի մեզ երջանկությունը, եթե ոչ այժմ։

Երջանկահիշատակ Շամիր աղան[3], իմանալով Ղարաբաղի մելիքների քաջությունը, հիանում էր և մեզ օգնություն էր ցույց տալիս։ Դուք հո այժմ, Ամենաբարձրյալի օգնությամբ, փառքով և պատիվներով բարձր եք նրանից, ուրեմն նրանից որքան առավել պարտավոր եք դուք օգնել մեզ, ցանկալ մեզ երջանկություն և թույլ չտաք, որ մեր ծառայությունները և անունը կորչեն առանց վարձատրության, իսկ մենք մեռնենք քաջությունից զրկվածների նման։ Իմ մեծ ծառայությունը, որ մատուցել եմ Ռուսաստանի սուրբ գահին, և Շուշում իմ ցույց տված քաջագործությունները, դեռ Զուբով զորավարի ժամանակից, հայտնի են ամենքին։ Գուցե ձեզ ևս անհայտ չէ, թե ինչպես հալածական արինք և ցրվեցինք երկրի երեսին Աղա Մահմադ խանի ուժեղ բանակը։ Այս պատճառով Հերակլ թագավորը, կամենալով մեզ իրեն պաշտպան ունենալ, երդումներով և նամակներով համոզեց մեզ գալ իր մոտ, ապրել իր թագավորության մեջ և համարվել հավասար իր առաջնակարգ թավադների և իշխանների հետ։ Մենք եկանք։ Իր խոստման համեմատ թագավորը տվեց մեզ

1 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ե, եր. 494—496։

2 Նամակի ռուսերեն թարգմանությունն է միայն մնացել (տե՛ս «Кавк. старина», 1872, с. 43—45)։ Քաղվածորեն թարգմանել է Րաֆֆին («Խամսայի մելիքությունները», Թիֆլիս, 1882, եր. 252—255)։

3 XVIII դարի հայտնի հնդկահայ գործիչ Շամիր Սուլթանում Շահամիրյանը։

Բոլնիսը, իսկ իր պալատում մեզ տեղ նշանակեց իր բոլոր ավագանուց բարձր։ Մեր այսպիսի կյանքը շարունակվեց Հերակլի և Գեորգիի թագավորության ընթացքում, իսկ այժմ մենք զրկված ենք թե հողից, թե կալվածներից, և թե հարգ ու պատվից, որովհետև ամենքը նեղացնում են մեզ, աշխատում են խլել մեզանից Բոլնիսը և պահանջում են տասանորդ մեր հունձերից։ Այդ բոլորն այն աստիճան անախորժ է մեզ, որ մենք այսուհետև ամենևին ցանկություն չունենք բնակվել այստեղ (Բոլնիսում)։ Երբ ես շինություններով և բնակիչներով ծաղկեցրի այդ գավառը, մաքրեցի նրան բոլոր թշնամիներից և գիշատիչներից,— ապա այնուհետև միայն հայտնվեցին զանազան տերեր, որոնցից մեկը ջրանցքների տեր է կանգնում, մյուսն աշխատում է սեփականել լեռները, երրորդը՝ հողը. մեզանից տասանորդ են պահանջում՝ հացից էլ, շոր խոտից էլ։ Չեն թույլ տալիս մեզ, որ վարենք, չեն թույլ տալիս խոտ հնձել և անասուններ արածացնել, ուստի մեր բոլոր անասունները կոտորվել են, և մենք, մասահոլված լինելով, այս տարի վար ու ցանք չենք արել։ Այսուհետև, եթե նույնիսկ Բոլնիսի բոլոր քարերը ոսկի դառնան, այն ժամանակ էլ հրաժարվելով հրաժարվում ենք այս կալվածից։ Ոչ փող է մնացել մեր քսակում, ոչ համբերություն... Մեր օրերն անց ենք կացնում դիվանատների շեմքերի մոտ և ոչ մի տեղից օգնություն չունենք։ Այս բոլորի հետևանքով ես բարձրագույն անունով մի ամենահպատակ խնդիրք ունի, որպեսզի ամենաողորմածորեն թույլատրվի մեզ և մեր ժողովրդին գաղթել իրենց հայրենի Ղարաբաղը, ապրել և բնակավորվել այնտեղ։ Իսկ այն ամենն, ինչ թղթով խոստացել եմ ամենաողորմած թագավորին, այսուհետև էլ երդվում եմ և խոստանում կատարել գանձարանի օգտի համար։

Մելիք Ջումշուդին թույլատրված է գաղթել իր հայրենիքը, ինչո՞ւ մեզ չեն թույլատրում։ Խոնարհաբար խնդրում եմ ձեզ, ողորմած տեր, աշխատել ամբողջ ուժով և դառնալ բարեխոս մեզ համար, ստանալով մեզ համար այդպիսի թույլտվություն։ Մի խուսափեք հարկավոր եղած ծախսերից, որովհետև ես նրանց շնորհակալությամբ կվերադարձնեմ ձեզ։

Հերակլ թագավորը, բացի Բոլնիսից, խոստացել էր մեզ և 100 ծուխ գյուղացի և քաղաքի (Թիֆլիսի) մեջ տեղ՝ մեզ արժանավայել տուն կառուցանելու համար. ինքը վախճանվեց, իսկ մենք չաշխատեցինք, որ կատարվի այդ խոստումը. իսկ ապացուցելու համար, որ գոյություն ուներ այդպիսի խոստում, ուղարկում ենք սրա հետ թագավորական հրովարտակների պատճենները։ Թագավորների ժամանակ մենք հարգանք էինք վայելում ավելի, քան թավադներն ու իշխանները, իսկ այժմ չենք հավասարվում և վերջին գռեհիկին։ Գեորգի թագավորը մեզ տվեց կարավանապետի (քարվանբաշի) պաշտոն, որից մենք տարեկան մինչև 500 թուման եկամուտ էինք ստանում, բայց նրա մահից հետո այդ պաշտոնն էլ կորավ, և այսօր մի կոպեկ անգամ օգուտ չենք ստանում նրանից։ Գեորգի թագավորի ինձ գրած նամակները ես ներկայացրի իշխան Ցիցիանովին. նա խոստացավ միջնորդել թագավորի առաջ, որ կարավանապետի պաշտոնի փոխարեն մեզ տրվեն ռոճիկ և աստիճան, բայց այս էլ մնաց առանց կատարման. ինքը (իշխան Ցիցիանովը) մեռավ, իսկ Գեորգի թագավորի նամակները մնացին նրա դիվանատանը։

Որքան մեծ է իմ ծառայությունը, որ մատուցել եմ իմ ամենաողորմած թագավորին, այս մասին տեղյակ չէ բարձր կառավարությունը։ Այլևս ինչ է մնում ինձ անել։ Ունեի ես անդրանիկ որդի՝ Ռուստամ բեկը, իմ ծերության ղավակը (Նեցուկը) և իմ նախնիքների ժառանգը, և նրան էլ զոհ բերի իմ ամենաողորմած և ինքնակալ կայսրին... Ինչ որ ես արել եմ և ինչ որ անում եմ այժմ, դրանից ավելին անել չի կարող ոչ ոք։ Մի կաթիլ արյուն ունիմ, այն

էլ ամեն ժամ պատրաստ եմ թափել իմ թագավորի անվան համար։ Սրանից ավել էլ ի՞նչ կարող եմ անել։

Ինձ այսպես երևում է մի բան միայն. այն է, որ ես հայ եմ, և այդ պատճառով բոլոր գլխավոր հրամանատարները և զորավարները չարանում են ինձ վրա՝ իմ կատարած հաղթությունների և քաջագործությունների համար։ Իմ գործողությունների մասին նրանք չեն կամենում տեղեկություններ տալ ուր որ հարկն է, որովհետև ցանկանում են, որ ես հուսահատվեմ և խորտակվեմ վշտից անհայտության մեջ։ Աստծու օգնությամբ այդ չի լինի։ Մինչև գերեզման չմտնեմ, վիշտն ու հուսահատությունը չեն կարող վհատեցնել ինձ։ Ընդհակառակն, ես և այսուհետև նպատակ ունիմ կատարելու այնպիսի քաջագործություններ, որոնք կզարմացնեն ամենքին, իսկ գերեզման կգնամ քաջությամբ և տղամարդությամբ լի գործեր կատարելով, բայց չեմ մեռնի այն ուժասպառների և հիվանդների նման, որոնք հոգի են ավանդում անկողնի մեջ։

Սրա հետ ուղարկում եմ ձեզ մինիստր Կովալենսկու թղթերը։ Նրանցից դուք կիմանաք այն ամենը, ինչ ես կատարել եմ և թե ինչ ծառայություններ եմ ես մատուցել Գեորգի թագավորի և նույն մինիստրի ժամանակ։ Ես էի իշխան Ցիցիանովի և նրա ամբողջ բանակի կյանքի փրկության պատճառը, որովհետև ես էի, որ այստեղից ուղարկում էի Երևան պաշար, վառոդ և գնդակներ նրա համար։ Ամեն անգամ այս իրերը տանում էր նրան իմ անդրանիկ և սիրելի որդի Ռուստամ բեկը, ունենալով իր հետ 60 կտրիճներ իմ մարդկանցից։ Մի անգամ Ռուստամ բեկ որդիս հասցրեց Ցիցիանովին վառոդ և գնդակներ ճաշի մոտ ժամին, իսկ երեկոյան իշխանի վրա հարձակվեց շահն իր անհամար զորքով։ Պետք է մտածել, որ եթե վեց ժամ առաջ Ռուստամ բեկը չհասցներ մեր զորքին վառոդ, այն ժամանակ ինչ կդառնար Ցիցիանովը։ Սակայն չբավականանալով սրանով, իշխան Ցիցիանովը նոր մեկ էլ ուղարկեց իմ որդուն Ղարաքիլիսա պաշար տանելու, բայց այստեղ ճանապարհին, նրա վրա հարձակվեց թշնամին թվով մոտ 12 հազար մարդ։ Այստեղ իմ մարդկանցից ոմանք մարտիրոսության պսակ ընդունեցին դեպի համառուսական կայսրն իրենց ունեցած սիրուց, մյուսները, իմ որդու հետ միասին, ուղարկվեցին Թավրիզ։ Այսպիսով իմ անդրանիկ որդի Ռուստամ բեկը տարվեց Պարսկաստան, ինչպես ոչխարը սպանդանոց։ Այնտեղ նրանք ամենքը մատնվեցին զանազան տանջանքների և թագավոր կայսրի համար ընդունեցին սոսկալի մահ։ Այսպես կորավ իմ որդին և նրա հետ կորան և իմ 60 կտրիճներն՝ իմ տված ձիաներով, զենքերով և բոլոր զարդարանքներով։ Ձեզ եմ թողնում դատել իմ տխրագին դրության մասին, որ, սակայն, լավ հայտնի է գեներալ Տուչկովին և պարոն Լեոնտևին։

Թող Վոլկոնսկին ինքը վկայի, թե ինչ ծառայություն եմ մատուցել ես նրան։ Պակաս աչքի ընկնող չէին իմ ծառայությունները և կոմս Գուդովիչի ժամանակ, երբ Ախալքալաքի բերդի մոտ ես երկյուղ և սարսափ գցեցի թշնամի զորքերի վրա և այլն։ Բայց նա, կոմս Գուդովիչը, իր նախորդների նման, ուշադրություն չդարձրեց ինձ վրա, շնորհակալություն իսկ չարավ և չհայտնեց իմ մասին նույնիսկ թագավորին։ Դուք նրան հանձնարարական էիք տվել իմ մասին, բայց այս էլ անօգուտ անցավ. թեև նա ցույց տվեց ձեր նամակը և ասաց ինձ, թե ահա այդ Մինասը բարեխոսում է քո մասին և այլն, բայց, կրկնում եմ, այդ հանձնարարականը չտվեց արժանավոր և օգտակար հետևանք։ Մի քանի անգամ խնդրեցի ես կոմսին թույլ տալ մեզ գաղթել, Մելիք Ջումշուդի նման, մեր հայրենիքը, Ղարաբաղ, բայց նա չհամաձայնվեց, պատասխանելով, որ եթե մենք գաղթենք, Բոլնիսը կքանդվի, իսկ ախալցխացի-

ները, լեզգիները և մյուս գիշատիչներն ու ավազակները կավերեն Թիֆլիս քաղաքի շրջակա գյուղերը: Իսկ երբ մենք ասում ենք, թե որովհետև Հերակլ թագավորը մեզ ընծայել է Բոլնիսն իր բոլոր հողերով, ջրով, անտառով և ուրիշ պատկանելիքներով միասին, ուստի խնդրում ենք, որ դուք ևս հաստատեք այս բոլորն, այն ժամանակ կոմսը մեզ պատասխանում է. ես չեմ կարող ուրիշի կալվածները տալ ձեզ, և այլ այսպիսի բաներ. բայց ես չեմ համարձակվում անհանգստացնել բոլոր մանրամասնություններով:

Այժմ, շնորհիվ ձեր բարեխոսության, իմ խնդիրքը նորին կայսերական մեծության թագավոր կայսրից, կայանում է չորս կետերի մեջ. 1) թույլ տալ մեզ գաղթել, մեզ ենթարկված ժողովրդի հետ միասին, ինչպես ասված է վերևում, մեր հայրենիքը, Ղարաբաղ: Մեզ հարկավոր չեն ոչ Բոլնիսը, ոչ 100 ծուխ գյուղացիները, ոչ էլ հողը քաղաքում, ինչպես որ այս բոլորը խոստացել էր Հերակլ թագավորը. 2) փոխարեն կառավարապետի պաշտոնի, որից մենք տարեկան ստանում էինք մինչև 500 թուման, խնդրում ենք նշանակել մեզ թոշակ, որովհետև այս մեզ խոստացել է դեռ իշխան Ցիցիանովը. 3) մեր ցույց տված ծառայությունների համար, որոնք վկայված են Հերակլ թագավորի հրովարտակներով և իշխ. Ցիցիանովի խոստումներով, տալ մեզ գընդապետի աստիճան. և 4) որովհետև իմ որդի Ռոստոմ բեկը 60 կտրիճների հետ, հանուն թագավոր կայսրի, սուսերի մահվան զոհ դարձավ, ի փոխարինություն իմ որդու և նրա 60 ընկերակիցների ծառայության, խնդրում եմ մայորի աստիճաններ տալ իմ մյուս որդուն, Եսայի բեկին և իմ քեռորդի Հաթամ բեկ Մելիք Մեժլումյանին»:

Մեզ չպիտի զարմացնե այն հանգամանքը, որ Մելիք Աբովը, դառնացած սրտով այնքան գանգատներ անելուց և բողոքի այնքան բարձր շեշտեր մտցընելուց հետո, իր նամակի վերջում գալիս հանգում էր մի քանի խնդրվածքների, որոնք, մեր այժմյան հայացքներով, շատ փոքր են և չափազանց նեղ անձնական: Իրը մենք պետք է դատենք իր ժամանակի հասկացողությունների տեսակետից, և այս կողմից Մելիք Աբովի ակնկալությունները ու փոխարինական չափերը միանգամայն համապատասխանում են ժամանակի գաղափարներին: Մենք չգիտենք, կարողացա՞վ Մինաս Լազարյանը աստիճաններ (չիներ) ստանալ թե քաջարի մելիքի և թե նրա որդու և քեռորդու համար: Հայտնի է միայն, որ անկատար մնաց նրա առաջին և ամենակարևոր խնդրանքը, այն է՝ Ղարաբաղ գաղթելու թույլտվությունը: Ծերունի հերոսը հարկավոր էր Թիֆլիսի շրջակաները պաշտպանելու համար, և այդ պատճառով նրան հարկադրեցին մնալ Բոլնիսում, զրկված պահելով նրան իր պաշտպանած հողից օգտըվելու իրավունքից: Եվ այսպես անում էր մի կառավարություն, որ առանց տատանվելու մի ամբողջ նահանգ էր տալիս Խոյից փախած խանին, աջակցելով նրան, որ կեղեքե հպատակներին ինչպես կամենում է: Այս անձնական, մանր խնդիրների մեջ էր, որ պարզորեն հանդես էր գալիս ցարական քաղաքականությունը, որ գործադրվում էր հայերի վերաբերմամբ: Վերին աստիճանի գնահատելի է Մելիք Աբովի արած մի ծառայությունը. այդ այն է, որ նա, ռուսական շահերին նվիրված մի մարդ, մեկն առաջիններից և ամենանշանավորներից, որոնք տարածում էին ռուսական նվաճողականությունը, պարզ և բացարձակ հայտարարում էր, թե միայն հայ լինելը բավական է, որ այդ ժողովրդի ամեն մի անդամը զոհ դառնա ամեն մի անարդարության:

Մենք, սակայն, չենք կարող ասել, թե Ղարաբաղի հայ մելիքները միայն անձնական բարիքների ակնկալություններ ունեին, առանց համայնական գաղափարներին խոշոր նշանակություն տալու: Նրանք երազում էին վերականգնել, գեթ համեստ չափերով, նախկին ազգային ինքնավարությունը: Այս

մի շատ բնական և օրինավոր ցանկություն էր, քանի որ ռուսական կառավարությունը մահմեդական ազգաբնակության վերաբերմամբ խստորեն հետևվում էր տեղական ինքնօրենության սիստեմին, ինքը բավականանալով միայն հսկողի և հովանավորողի դերով: Հայրենի կարգերի վերականգնման մասին խոսք էր անում Մելիք Ջումշուդ Մելիք Շահնազարյանն իր՝ մեզ արդեն քաջածանոթ նամակի մեջ:

«Գրեցեք,— ասում էր նա այդտեղ,— թէ զի՞րդ ոչ կազմեք զգունդ. առ այս պատիք հաւաստի լինել որ դիւրին կարէաք զայս առնել թարց օգնականութեան ումեք եթէ ունիք առաջին փարթամութիւնս և զժողովուրդս, որք ի պատճառս գալստեան Աղայ Մահմադ խանին՝ սովու և ժանտախտի ցիրուցան եղեն ի Շիրուան և ի Վրաստան, քանզի հայրն իմ և նախնիքն մեր միշտ ունեցեալ են առ ընթեր իւրեանց զայնպիսի գունդս զորս դուք պահանջէք լինել, ըստ որում երկիրն Ղարաբաղու տիրապետեալ են ինքեանք և բոլոր հայք և տաճիկք հպատակք են եղեալ նոցա: Ուստի՝ եթէ վեհազնութիւն ձեր բաղձաք զի ազգն հայոց զերծցի համանգամայն ի բռնութենէ բարբարոսաց և համաժողովեսցին ի բնիկ հայրենիս իւրեանց՝ և ունիցին զգունդ և բարւոք պէս ծառայեսցեն երկրորդ փրկչին իւրեանց ամենագթած կայսերն մերոյ, ուրեմն խնդրեա զի նախ հրամայեսցէ վերադառնալ ի բնիկ հայրենին իւրեանց ամենայն ցիր և ցան եղեալ ժողովուրդքն մեր ի Շրուանու և ի Վրաստանու: Երկրորդ՝ ազատ լինել նոցա ամենայն հարկապահանջութեանց և ի ծանրութեանց երեք ամ ժամանակաւ, երրորդ՝ ազգն հայոց մի լիցին ի ներքոյ իշխանութեան Տաճկաց, ըստ որում նոքա ոչ կարեն մնալ միշտ ի հաւատարմութեան առ տէրութիւնս քրիստոսապսակ կայսերն մերոյ, այլ ջանան օր ըստ օրէ նուազեցուցանել զազգն հայոց առ ի դիւրապէս ներգործել զչար դիտաւորութիւնս իւրեանց, և չորրորդ՝ շնորհեսցէ զումարս՝ որով կարողասցուք պատրաստել զզէնս վասն կազմելի գնդոյն, զի առանց իմիք կարօտոյ պատրաստի լիցին ի յապագայ պատերազմունս ընդ զօրացն ռուսաց մինչ ցԵրասխ գետն: Զայսպիսի ողորմութիւն առնելով ամենագթած կայսրն մեր, արդարև՝ վերանորոգելոց է զզօրութիւնս ազգին հայոց և հարկադրելոց է նոցա յամենայն ուրեք գալ և բնակել ի ներքոյ ամենաքաղցր հովանաւորութեան իւրոյ կայսերական մեծութեան:

Եւ ոչ հարկաւոր համարիմ խնդրել ի վեհազնութենէ ձերմէ յոգուանակել առ կատարումն սորին, ըստ որում դուք հազարապատիկ քան զիս ջանայք սակս պայծառութեան ազգիս Հայոց, և ի տուէ և ի գիշերի միշտ ի նոյնն պարապէք, ուրեմն թարց իմոյ խնդրանաց՝ անձանձիր հետևելոց էք առ ի կատարումն գործոյս, և թողլոց էք ի վերայ աշխարհի յիշատակ և արձան զայսպիսի բարերարութիւնս ձեր ազգին մերոյ»[1]:

Պետք է ասել, որ այս քաղաքական հայացքը միայն Մելիք Ջումշուդին չէր հատուկ, այլ և Խամսայի մյուս չորս մելիքներին, որոնք նույնպես աշխատում էին, որ հայերին էլ տրվի ինքնավարություն այն պայմաններով, ինչպես ստացել էր մահմեդական ազգաբնակությունը: Միայն Ղարաբաղի զրկված և արհամարհված տերերն էին զգում, թե հայ ժողովրդի քաղաքական դատը այնպակաս կարևոր չէ, քան մի Դանիել կաթողիկոսի դատը, որի համար այնքան աշխատողներ կային և որ այնքան տակնուվրայությունների առանցք էր դարձել: Այս ճշմարտությունը գոնե հայկական ղեկավար շրջաններում հնչեցնելու համար Խամսայի հինգ մելիքները միանում են և գրում են հավաքական մի պատասխան Մինաս աղա Լազարյանին: Վերջին անգամն էր, որ խո-

1 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ե, եր. 496—497.

սում էր Ղարաբաղի հին ազգային իրավունքը, և այդ խոսքն իր կողմից հույս էր տալիս, թե որքան անօգնական ողորմելիության էր հասցրել ցարական քաղաքականությունն այդ հինավուրց իրավունքը, իսկ մյուս կողմից՝ թե ինչպես նա, նույն այդ իրավունքը, լավ գիտակցում էր իր էությունը նույնիսկ իր հոգեվարքի ժամին։ Հինգ մելիքությունների ներկայացուցիչները գրում էին այդ հավաքական նամակը 1806 թվին, պատասխանելու համար Մինաս աղայի այն առաջարկությանը, որի բովանդակության մասին հասկացողություն տալիս են մելիքների նամակի հետևյալ տողերը. «Դուք բարեհաճում եք ասել, որ մենք, մելիքներս, հավաքվենք այստեղ միասին և մատուցանենք պայծառափայլ կոմսին (Գուդովիչին) մի խնդրագիր, որի մեջ գրենք մեր ապագա դրության մասին, նույնպես և այն մասին, թե ով և ինչպես է ծառայել նորին կայսերական մեծության կամ թե ինչ հարկեր պիտի տանք կամ թե ինչ եղանակով զունդ կազմակերպենք»[1]։

Այս առաջարկության առիթով մելիքները գրում էին. «Իրավ, այս բոլորը մեր ցանկությունն էլ էր, և դուք որպես թե կանխավ գուշակել եք և թղթի վրա դրոշմել։ Այս բոլորը սրտագին ցանկություն էր և մեր նախնիքների համար, որոնք դեռ վաղեմի ժամանակներից այնպիսի շնորհ խնդրում էին Ռուսաց տանը ամենաողորմած գահից երջանկահիշատակ մեծ կայսր Պետրոսի ժամանակ։ Բայց խոր նայելով մեր ներկա դրության, գտնում ենք հարգելի պատճառներ, որոնք մեզ արգելում են դիմել այդպիսի խնդիրքով նորին պայծառափայլության. նախ և առաջ այն պատճառով, որ մեզ պատկանող ազգաբնակությունը ցանուցիր դրության մեջ է և թափառական մասամբ Վրաստանում, մասամբ էլ Պարսկաստանում. իսկ մենք, ձեռքներս ծալած, մնացել ենք ինչպես հովիվներ առանց հոտի։ Իսկ ժողովրդի այն փոքր մասը, որ դեռ մնում է մեզ մոտ, համարյա թե հազիվհազ է մեզ կերակրում։ Մեր հայրենիքի կառավարիչ դեռ էլի մնում է Իբրահիմ խանի ավագ որդի Մեհտի խանը։ Եթե մենք այժմյան ժամանակ տանք այդպիսի խնդիրք, այն ժամանակ, գուցե, պայծառափայլը (որ թեև մեծ շնորհ և հոգատարություն է ցույց տալիս մեր ժողովրդին), մինչև Երևանը վերցնելը կթողնե այդ թուղթն առանց քննության և, մեր խնդիրքը կատարելուց առաջ, այդ մասին կիմանա Մեհտի խանը և որովհետև նա մի խորամանկ պարսիկ է, և ուստի մեզ վնաս կհասցնի։ Իսկ եթե առանց նորին պայծառափայլության մեր խնդիրքն ուղղակի արքունիքն ուղարկենք, համոզված ենք, որ նրան կվերադարձնեն այստեղ՝ փոխարքայի վերահասության և այս մեզ համար ամոթալի կլինի։ Այս պատճառով մեր դիտավորությունն այն է, և դրա հետ դուք էլ համաձայն կլինեք, որ դուք այդտեղ (Պետերբուրգում) մի միջոց գտնեիք, որ առանց մեր խնդիրքի բարձրագույն գահից (արքունիքից) հարցապնդում ուղարկվեր պայծառափայլ կոմսին, թե ինչ դրության մեջ է գտնվում Ղարաբաղի Արցախ շրջանը և թող այս մասին մեզ գրավոր հարցում անեն։ Այն ժամանակ մենք համարձակ և առանց որևէ վախ զգալու տեղային տիրող խանից, ամեն ինչ կգրեինք թղթով, և այս դեպքում մեր խնդիրքը կայացած կլինի նրա մեջ, որ թույլ տան մեզ մեր ժողովուրդն ու ազգաբնակությունը հավաքել այնտեղ մեր կառավարության տակ. երկրորդ, որպեսզի մենք ազատվենք խանի իշխանությունից և որպեսզի մեր ժողովուրդը բաժանվի թուրքերից և գտնվի այս առիթով նշանակված ռուս պաշտոնակալի կառավարության տակ, և երրորդ, որպեսզի մեզ շնորհվի ինչպես այդ խոստացված էլ է վաղ ժամանակներից, նույն ամենաողորմած

[1] Այս նամակի հայերեն բնագիրն էլ չկա մեզ մոտ. ռուսերեն թարգմանությունը տե՛ս Кавказ. старина, 1872, с. 40—41:

արտոնությունը, որով օգտվում է Նախիջևան[1] քաղաքը, որպեսզի, այդպիսով, մեր իրավունքը և դատավարությունը հիմնված լինի մեր նախնիների սովորույթի և ավանդությունների վրա։ Եվ եթե մեզ արված կլինի այսպիսի բացարձակ շնորհ, այն ժամանակ մեզ կմնա վերանորոգել մեր նախնիքների՝ Մուշեղի և Վարդանի հերոսությունը, կազմակերպել զորք և ռուսական զորքերի հետ միասին չխնայել մեր հավատարմությունը ռուսական կառավարության մինչև արյան վերջին կաթիլը։ Բացի դրանից, մենք պարտավորվում ենք ծառայել վճարելով տարին 4000 չեթվերտ հաց և 4000 ոսկի. կարող ենք և ավելի շատ վճարել, եթե մեր հավաքած ազգաբնակության թիվն ավելանա։

Իրավ, եթե մեր հիշատակած ցանկությունը կատարվի, այն ժամանակ կտեսնենք, մեր ազգի քաջությունը, իսկ դուք կլինեք ձեր ժողովրդի նոր լուսավորիչ և կատարյալ ծնող և հայր։ Իսկ մենք դրա փոխարեն ի՞նչ կարող ենք անել, եթե ոչ արձաններ կանգնեցնել մեր երկրի բոլոր գյուղերում ի պատիվ ձեր բարերարության, որպեսզի իմանան գալոց սերունդները, որոնք կհիշեն մեծ գովասանքով, այսինչ ժամանակ ապրել է այնպիսի մի իշխան մարդ, որ այն ժամանակ էլ միջոց գտավ երջանկացնելու իր ժողովուրդը։ Եթե մի ապօրեն կերպով գահազուրկ արած հովվապետին (Դանիել կաթողիկոսին) վերականգնելու համար դուք ծախսել եք այնքան շատ փող և այնքան շատ դեսուդեն ընկել (որի համար ամենքն այժմ ձեզ գովում են), իմացեք որ դուք ձեզ ավելի մշտնջենական և փառավոր արձան կկանգնեցնեք, բարձրացնելով հարյուր հազարավոր ձեր ազգայիններ, նրանց ողբալի անկյալ դրությունից և սրբելով նրանց երեսից վշտագին արտասուքները։ Մենք համոզված ենք, որ մեր ամենաողորմած թագավորը ցույց կտա մեզ աստվածային բարերարություն և մեզ չի զանազանի իր սեփական հպատակներից»։

Նամակի տակ գրված էին ստորագրություններ «փոխգնդապետ և Վարանդայի տիրող Մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարյան.— Գյուլիստանի տիրողներ՝ Մելիք Բաղր և Մելիք Աբով Մելիք Բեգլարյան Մելիք Հովհաննիսյաններ.— Խաչենի տիրող Մելիք Ալլահվերդի Մելիք-Միրզախանյան.— Ջրաբերդի տիրող Մելիք Հաթամ Մելիք-Մեժլումյան.— Դիզակի տիրող Մելիք Ղահրաման Մելիք-Ավանյան»։

Բայց զուր էին բոլոր ակնկալությունները։ Ոչ կոմս Գուդովիչը մտոք մատին խփեց արդարության մի ցույց անելու հայ ժողովրդին, որի բարեկամն էր համարվում, ոչ հայության միակ հույս ու ապավեն Մինաս Լազարյանը։ Թեկուզ և ծանրաբեռնված «Հայոց վեքիլ» կոչումով, այն աստիճան հրաշագործ չէր, որ կարողանար հեղաշրջել ռուսաց քաղաքականությունն ի նպաստ հայերի։ Այդ քաղաքականությունն ամենևին մտադիր չէր վերակենդանացնել հայկական ազգային իշխանությունը հանձինս հայ ֆեոդալական տերերի։ Եվ այս՝ ինչպես տեսանք շատ անգամ, ոչ թե այն պատճառով, որ ավատական կարգն անհանդուրժելի էր ռուսաց կառավարության համար, որ հենց այդ ժամանակ ճորտատիրական սկզբունքներով էր տարված և առանձին բարեհաճությամբ զարգացնում էր և ուժեղացնում վրաց և թուրք ազնվականությանը։ Ճնշվող և կործանվողը միայն հայ կալվածատիրությունն էր, մի հանգամանք, որ չէր կարող մեծ նշանակություն չունենալ հայ ժողովրդի համար, քանի որ նրա մշակած հողային հարաբերությունները տիրող դասակարգի հետ, լինելով արդյունք դարավոր առանձնահատուկ հոգեբանական կառուցվածքի, ավելի մեղմ և ավելի տանելի էին ազգային և կրոնական առումներով, քան մահմեդական հողատիրության պայմանները, որոնց ենթարկվում

[1] Խոսքը Նոր Նախիջևանի մասին է։

էր հայ գյուղացիությունն իր ազգային ավանդական կարգը կորցնելուց հետո.

Այսպիսով կոմս Գուդովիչի բարյացակամ վերաբերմունքը դեպի հայ ժողովուրդն արտահայտվում էր, և ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, միայն այնպիսի հարցերի մեջ, որոնք չէին կարող ազդեցություն ունենալ պետական հատուկ քաղաքականության վրա։ Եվ եթե մենք որոնելու լինենք իրական փաստեր Գուդովիչի հայասիրության, վերջիվերջո, դարձյալ պիտի մտնենք եկեղեցական գործերի և հատկապես դավիթ-դանիելյան վեճի մեջ։ Միաժամանակ վերացնելով քաղաքական իրավունքները, որքան նրանք ազգային ինքնօրինակության կողմն էին կազմում, ռուս կառավարությունը դեռ հարգի էր առնում հայ ժողովրդի կրոնական իրավունքները, մանավանդ, երբ այդպես էր պահանջում նրա քաղաքական շահը։

2. Դանիելականների հաղթանակը։ 1806 թվականի ամառը, երբ կոմս Գուդովիչը դեռ Հյուսիսային Կովկասում էր գտնվում, եղավ մի միջոց, որ Դավթի կուսակիցներին քիչ էր մնում հնարավորություն տա փոխելու ռուսաց կառավարության վերաբերմունքը դեպի էջմիածնի կաթողիկոսական հարցը՝ այժմ արդեն Դավիթ կաթողիկոսի համար նպաստավոր ուղղությամբ։ Դավթականների ամբողջ դժբախտությունն այն էր, որ դանիելականները հսկում էին ամեն տեղ և չէին թույլ տալիս իրենց հակառակորդներին մոտենալ ռուսաց բարձր կառավարության, խոսել նրա հետ անձամբ։ Այս արգելքն այնքան սաստիկ էր և անհաղթահարելի, որ դավիթականներն ստիպված եղան դիմելու ծայրահեղ միջոցի։ Որովհետև Թիֆլիսի ճանապարհը բոլորովին փակված էր նրանց առջև, ուստի փորձ արին ուրիշ տեղով գնալ Պետերբուրգ իրենց դատը պաշտպանելու համար։ Աչքի ընկնող դավթական հոգևորականներից մեկը, Աբրահամ եպիսկոպոս Քոլյան Տաթևցի, Կ. Պոլսից ճանապարհվում է Օդեսա, տանելով իր հետ Հովհաննես պատրիարք Զամաչրճյանի հոգացողությամբ պատրաստված մի մեծ հանրագիր, որ ծածկված էր «անհամար», ինչպես ասում է ռուսական աղբյուրը, ստորագրություններով և գալիս էր մի անգամ ևս խնդրելու, որ ռուս կառավարությունը ճանաչե Դավթի կաթողիկոսությունը և այդպիսով վերջ դնե հայերի մեջ տեղի ունեցող երկպառակություններին։ Ռուսական սահմանները մտնելու համար Քոլյանն ստիպված էր դեն դնել իր հոգևորական կոչումը և ծպտվել վաճառական և իրեն տալիս է Գրիգոր սարկավագ անունը։ Այսպիսի եղանակով նա գնում է Գրիգորիպոլ քաղաքը, ուր գտնվում էր Գրիգոր եպիսկոպոս Աղքիրմանցին, որ ուղարկված էր այդտեղ կառավարության հրամանով և ապրում էր մի տեսակ աքսորի մեջ՝ իբրև Դավթի կաթողիկոսացման գլխավոր հեղինակներից մեկը[1]։ Երևի այս հոգևորականի խորհրդով և աջակցությամբ էր, որ Քոլյանը հայտնվեց Օդեսայում դարձյալ եպիսկոպոսի կերպարանքով, բայց փոխած իր ազգանունը և այժմ դարձած «Իշխան Օրբելյան»[2]։ Ինքնակոչ իշխանը ներկայացնում է տեղական նահանգապետ Դուքս դը Րիշելիեին մի խնդրագիր Ալեքսանդր կայսրի անունով[3]։ Խնդրագիրը տեղ է հասնում և արտաքին գործերի մինիստր բարոն Բուդբերգը, ուղարկելով նրա պատճենը Գուդովիչին, հունիսի 14-ի իր գրությամբ հաղորդում էր նրան, թե կայսրը կամենում է, որ Գուդովիչն իր կարծիքը հայտնե այս հարցը մի անգամ ընդմիշտ պարզելու համար, նկատի առնելով այն հանգամանքը, որ ռուսական կառավարությունը մի տեսակ

[1] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ա, եր. 189։

[2] Քոլյանը, երևի, ազգականություն ուներ Տաթևի Օրբելյանների հետ, որոնք, ինչպես հայտնի է, վրացի Օրբելիանի իշխանական տոհմի մի ճյուղն են կազմում և մի ժամանակ տիրողներ էին Սյունիքում։

[3] Ռուսերեն թարգմանությունը տրված է «Акты Кавказ. Археолог. Ком.», III, с. 78.

կանոն է դարձրել Դանիելին պաշտպանելը, մինչդեռ գոյություն ունի և այն հարցելի հանգամանքը, որ Դավիթ կաթողիկոսն էլ հաստատված է եղել ռուսաց կառավարության կողմից։ Այս հանգամանքը ցույց էր տալիս, որ ռուսաց կառավարությունը մտադրություն ունի վերաքննելու դավիթ-դանիելական հարցը։ Միայն այս երևույթը բավական էր, որ դանիելականներն ամեն տեղ, վտանգ զգալով, գործի հրավիրեին իրենց զարմանալի եռանդը։ Իսկույն Ներսես վարդապետ Աշտարակեցին գնում է Օդեսա՝ Քոլյանին դիմագրավ անելու համար, Մինաս Լազարյանը թղթեր է գրում մինիստրությանը՝ ցույց տալու համար Գրիգոր Աղքիրմանցու մեղավորությունն այս գործի մեջ, և մինիստր Բուդբերգը գրում էր այս առիթով, թե կայսրը հրամայել է նրան դուրս վռնդել Ռուսաստանի սահմաններից[1]։ Նույն վիճակին ենթարկվում է և ինքնակոչ Օրբելյան արքեպիսկոպոսը, երբ դանիելականները բաց են անում նրա կատարած կեղծիքը։ Դավթականներն այս անգամ էլ պարտություն են կրում[2].

Բայց այս պարտությունն, իհարկե, վճռական նշանակություն չէր կարող ունենալ Դավթի համար։ Վճռական նշանակություն ունեցողն այն քաղաքական դրությունն էր, որ ստեղծվեց 1806 թվականի երկրորդ կեսին։ Մի շարք հզոր հանգամանքներ գալիս էին անհրաժեշտ դարձնելու, որ թշնամական գործողությունները Պարսկաստանի մեջ գեթ ժամանակ դադարեն։ Այս անհրաժեշտությունն զգում էր Ֆաթալի շահը (Բաբա խանը) Իրանի ներքին գործերը կարգավորելու և շահական գահի վրա իր դրությունն ամրացնելու համար։ Եվ այդ պատճառով նա ինքն էր, որ հաշտություն էր առաջարկում ռուսներին։ Արհամարհել այսպիսի մի հնարավորություն չէին կարող և ռուսները, որոնց համար Նապոլեոնյան պատերազմների ընթացքը կատարելապես ստիպողական էր դարձնում ոչ միայն հաշտվել պարսիկների հետ, այլև դաշնակցել նրանց հետ, քանի որ այդ իսկ միջոցին, Նապոլեոնի հորդորներով, Ռուսաստանի դեմ գլուխ էր բարձրացնում օսմանյան պետությունը։ Կովկասյան ռուս դիվանագիտությունից պահանջվում էր թույլ չտալ, որ օսմանցիները միանան պարսիկների հետ և Ալեքսանդր կայսրը, զբաղված Եվրոպայի հողի վրա կատարելիք խոշոր պատերազմական գործողությունների ծրագրով, հրամանագրում էր կոմս Գուդովիչին հաշտության բանակցություններ սկսել պարսիկների հետ, Թեհրան ուղարկելով մի լիազորված անձ։ Գուդովիչն այդ նպատակի համար ընտրում է իր ադյուտանտ մայոր Ստեփանովին և դեկտեմբեր ամսին ուղարկում է նրան Թավրիզ՝ այդտեղից Թեհրան անցնելու և մեծ վեզիր Միրզա Շաֆիին ներկայանալու համար։ Ստեփանովը Թավրիզում պիտի ներկայանար թագաժառանգ Աբաս Միրզային և նրա վեզիր Միրզա Բյուզուրգին։ Գուդովիչը հանձնարարել էր իր լիազորին խոսել Միրզա Բյուզուրգի հետ Դանիել կաթողիկոսին ազատելու և էջմիածին իբրև կաթողիկոս ուղարկելու մասին[3]։ Եվ ահա հաջողվում էր այս առաջարկությունը, առիթ տալով պարսից կառավարության ընդգրկել հայոց կաթողիկոսության վերաբերմամբ մի նոր քաղաքականություն։ Այս փոփոխության միակ հեղինակը, սակայն, Գուդովիչի առաջարկությունը չէր։ Գործում էին մի քանի հանգամանքներ, և առաջին տեղը դրանց մեջ բռնում էր, իհարկե, Աբաս Միրզայի կամքը։

Միրզա Բյուզուրգը նրան ներկայացրեց Դանիելի հարցը, որի համար շատ աշխատում էր, ի դեպ ասած, Թավրիզի ականավոր հայերից մեկը, Մահտեսի Հովհաննեսը։ Երիտասարդ թագաժառանգը պետական լայն ըմբռնողու-

[1] «Акты...», III, № 148.

[2] «Փորձ», 1877—1878, № 1, եր. 262։

[3] «Акты...», № 150.

թյունների ընդունակ մի խելք էր, ոգևորված Իրանը բարձրացնելու և ուժեղացնելու գաղափարով։ Ռուսական փոքրաթիվ զորքերի հետ ունեցած ընդհարումները, որոնք մեծագույն մասամբ անհաջողություններով էին վերջանում, նրա համար պարզ ուղեցույցներ էին, թե որքան հետ է մնացել Իրանը, և թե որքան շատ բարենորոգումներ են հարկավոր նրա պետական կյանքն առողջացնելու և արդյունավոր դարձնելու համար։ Հենց նույն 1806 թվականին էր, որ նրան ներկայացավ Նապոլեոնի կողմից նրա հոր մոտ ուղարկված Ժոբերը։ Ֆրանսիացի արևելագետը գտնում էր թագաժառանգին տխուր և ճնշված տրամադրության մեջ, որ հետևանք էր Ռուսաստանից կրած պարտությունների։ «Օտարական,— ասաց նա Ժոբերին,— դու տեսնում ես այս զորքը, այս դուռը, հզորության այս բոլոր նշանները։ Մի հավատար, սակայն, թե ես երջանիկ եմ․ Ոչ, ինչպե՞ս կարող եմ ես երջանիկ լինել։ Նման ծովի զայրացած ալիքներին, որոնք փշրվում են անշարժ ժայռերին ընդհարվելով, իմ քաջության բոլոր ջանքերը հետ են մղվել ռուսաց փաղանգներից... Խոսիր, օտարական, ասա ինձ, թե ինչ պետք է անել պարսիկներին վերածնելու համար։ Պետք է, որ ես էլ, ինչպես Մոսկովի թագավորը[1], որ երբեմն իջավ իր գահից ձեր քաղաքներն այցելելու համար, պետք է որ ես էլ թողնեմ Պարսկաստանը և այս սին հարստությունը... Ով Արաքսը, որ մի ժամանակ ամբողջովին պարսկական նահանգների ծոցով էր հոսում, այսօր բխում է մի օտար երկրից և գնում է ինքն իրեն կորցնելու մի ծովի մեջ, որ ծածկված է իմ թշնամիների նավերով»[2]։ Այսպիսի խորհրդածությունների ընդունակ մի միտք չէր կարող, իհարկե, դժվարանալ ընդունելու, որ Արաքսի ձախ ափին ստեղծված քաղաքական վտանգավոր հանգամանքների մեջ պետական իմաստություն է հայերի վերաբերմամբ մեղմ վարվեցողություն գործադրելը։ Մենք տեսանք արդեն, որ պարսից շահի համար ակներև էր, թե ինչ դեր են կատարում հայերն իբրև Ռուսաստանի գործիքներ, ուստի և վճռել էր այդ վտանգավոր տարրը գաղթեցնել Իրանի խորքերը։ Աբաս Միրզան այդ անհաշտ և անագորույն քաղաքականության փոխարեն առաջ էր քաշում հաշտության ոգին։ Այս նոր վերաբերմունքին նպաստում էր, մանավանդ այն հանգամանքը, որ այլևս չկար Մահմադ խանը, որ այնպիսի տոկունությամբ պաշտպանում էր Դավթին։ Երևանի սարդար նշանակվել էր Հյուսեին խանը, որ առհասարակ մեղմ, իր երկրի շահերը լավ հասկացող և շինարար կառավարիչ էր, «բարեբարո», ինչպես անվանում են նրան դանիելականներն իրենց գրությունների մեջ։ Գալով Երևան և տեսնելով երկիրն ավերված, նա իսկույն հասկացավ, որ պետք է փոխել նախկին քաղաքականությունը, վերադարձնել փախած հայ ժողովուրդն իր տեղերը՝ նրանց նորից շենացնելու համար։ Անթույլատրելի էր, մանավանդ այն դրությունը, որի մեջ գտնվում էր էջմիածնի վանքը՝ լքված ու կողոպտված, մինչդեռ նրա բարեկեցությունը հարստության աղբյուր էր նախ և առաջ հենց Երևանի խաների համար։ Այս է պատճառը, որ Հյուսեին խան սարդարն էլ խնդրեց Աբաս Միրզային արձակել Դանիել կաթողիկոսին և նստեցնել նրան էջմիածնի գահի վրա։ Կա մի վկայություն, որ նույնատեսակ միջնորդություն հարուցել է և Յուսուֆ փաշան՝ օսմանյան զորքերի գլխավոր հրամանատարն Էրզրումում, խնդրելով շահից և նրա որդուց, «որպէս զի,— ասում է մեր աղբյուրը,— բազմեցուսցեն զարհին սրբազանութեան ի գահոյս իւր և կամ վաճառեսցեն զնա ինքեան»[3]։

[1] Խոսքը Պետրոս Մեծի մասին է։

[2] P. Joubert, Voyage en Arménie en Perse, Paris, pp. 155—156.

[3] «Փորձ», 1877—78, I, էջ. 266։

Այս բոլոր հանգամանքների հետևանքով Աբաս Միրզան գրով համոզում է իր հորը կաթողիկոսական ռաղամ (հրամանագիր) տալ Դանիելին և արձակել նրան էջմիածին։ Շահը չի մերժում իր անդրանիկ որդու միջնորդությունը, և Դանիելն ազատություն է գտնում, բայց այն պայմանով, որ ամենայն Հայոց կաթողիկոսության աթոռի վրա հակառակ չգնա Պարսկաստանի շահերին, ետ բերել տա Վրաստան քշված փախստականներին և էջմիածնի միաբանությունը, այլև միջնորդ հանդիսանա, որ ռուսների ձեռքին գերի գտնվող մի քանի խաներ փոխանակվեն պարսից մոտ գերի եղած վրացի թավադների հետ։ Այնուհետև Դանիելը Մարաղա քաղաքից ճանապարհվում է Թավրիզ՝ Երևան վերադառնալու համար։ Թե որքան լավ կազմակերպված էր դանիելական կուսակցությունը, ցույց է տալիս և այն հանգամանքը, որ Մինաս Լազարյանը դեռ 1807-ի ապրիլին էր Պետերբուրգում լուր առնում, որ Դանիելը կատարյալ ազատություն է ստացել և կարգադրում էր, որ նա մեծ շուքով գնա էջմիածին։ Ահա ինչ էր նա այս առիթով գրում Եփրեմ արքեպիսկոպոսին. «Ի համայնիցս բաղձալի Դանիէլ աստուածընտիր կաթողիկոսէն ընկալայ նամակ շնորհալի գծեալ սիրելի մատամբք իւրովք. զպատասխանն մեր ուրախ և խոնարհութիւնս յայտնեալ եմ և խնդրեալ եմ, որ երբ Աստուծով Թավրիզու գալոց լինի նախ դեպի Փամբակ կամ Գեանճայ Թիֆլիս գայ՝ որ յետոյ մեր զօրօքն և օգնականութեամբ ի սուրբ Աթոռն գնասցէ որ մի լիցի թշնամութեամբ չարեացն մի կերպիւ վնաս պատահեսցէ»[1]։ Հայության «միակ հույսը» կազմող այս աղայի տողերը ցույց են տալիս, թե նա շատ էլ մոտ ծանոթություն չուներ քաղաքական նրբանկատության հետ, ուստի և հարց չէր տալիս իրեն, թե ի՞նչ տպավորություն կգործե պարսիկների վրա Մարաղայի աքսորականի վերադարձը ռուսաց սվինների ուղեկցությամբ։ Բարեբախտաբար, Դանիելը լուրեց կամ չկարողացավ հետևել իր վեքիլի ցուցմունքին։ Աքսորն, այնուամենայնիվ, դաստիարակիչ ազդեցություն էր գործել կաթողիկոսի վրա, մեղմացնելով նրա ծայրահեղ ռուսամոլությունը և փոխելով նրա վերաբերմունքը դեպի պարսից իշխանությունը։ Մայիսի 14-ին նա պատվով հասավ Երևան, իսկ 20-ին էջմիածնում էր, ուր, վերջապես, արժանացավ իր տենչանքի իրագործմանը, նստելով կաթողիկոսական գահի վրա։ Դավիթը տանուլ էր տվել իր գործը։ Եվ նա ամենայն սառնասրտությամբ գնաց հպատակվելու իր նոր վիճակին, առանց իր հակառակորդի լալկան թուլամորթությունը ցուցադրելու։ Դանիելական այս մեծ տոնը սրտի մեծ գոհունակությամբ նկարագրել է Թիֆլիսի Մելքիսեդ քահանա Ղամազյանը, աչքի ընկնող և գործունյա դանիելականներից մեկը, Մինաս Լազարյանին ուղղած իր հետևյալ նամակի մեջ.

«Ծարաւի հոգի իմ զովացաւ, մինչ գտի զգիր ողորմած Տեառնդ իմոյ և լուայ զառողջութիւն անգին անձինդ, զի՞նչքան զայս՝ աւելի մխիթարութիւն սրտիս։ Յանցեալ փօստին սրբազան հայրապետի մինչ ի յԵրևան հասանելն ծանուցի, ներկայիս վաճառականք եկին և հաւաստի եղև, որ ինչ ժամանակն Դանիէլ հայրապետն մտանում է յԵրևան, իսկոյն Դաւիթն մեծաւ հանդիսիւ յառաջընթաց է լինում, խաչով ալամով, ապա յԵրևան նստող սարդարն որ շատ ողորմած է Դանիէլին վերայ, Շահի և Շահզադի ռաղամներն կարթում է Դաւիթի առաջեն, թէ այսուհետև կաթողիկոսն Դանիէլն է, դու որպէս ծառայ պարտիս հնազանդիլ. այդ մատանիդ, խաչդ և գաւազանդ պարտիս հանձնել սմա։ Դաւիթն պատասխանում է, իմ կարգս ո՛չ շահն է տված, ո՛չ շահզադէն, այլ էջմիածնայ միաբանքն. ես կերթամ էջմիածին, և տեղն միաբա-

[1] «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ե, էջ. 504։

նաց մօտ կը մատուցանեմ, սարդարի հետ գնում են Էջմիածին. իսկոյն Դաւիթն խաչն վզէն հանում է և կաթողիկոսական մատանին յիւր ձեռաց, ի ծունկս խոնարհեալ մատուցանում է սրբազան հայրապետին Դանիէլի. և տեղւոյն միաբանքն ձայնում են՝ կեցցէ արքայ. յետ որոյ Դաւիթն միաբանաց հետ յառաջ ընկած տանում են յեկեղեցին և Դանիէլ սրբազանին կաթողիկոսարանումն կանգնեցնում են։ Եվ Դաւիթն միաբանաց կարգում է կանգնած. սարդարն յաղթութեան ձին է փէշքաշ անում Սրբազան Դանիէլին։ Փա՛ռք ամենազօրին Աստուծոյ, որ այս ձայնն մեր ականջն հասաւ. Վեհազնութեանդ աչքն լոյս լիցի. Աստուած վարձահատույց եղիցի, որ ինչ աշխատանս կրեցիք, յուսամք այս քանի օրումս կարմիր կնքով կոնդակն ստանամք և մատուցանեմք հրամանոցդ»[1]։

Դանիելականներն իրար աչքալույս էին տալիս, բայց մոռանում էին, որ մեծ աչքալույսը պատկանում էր հայ ժողովրդին, որին իսկապես պետք էր շնորհավորել, որ նա իր մեծ տառապանքների մեջ ազատվեց դավիթ-դանիելական ապարդյուն, բայց մեծ դժբախտությունների աղբյուր դարձած վեճից։ Վեց տարի էր տևել այդ անօրինակ համառ վեճը, և նրա ամբողջ տխուր պատմությունը մի պարզ ապացույց է, թե կուսակցական պայքարը հանրային մի շոշափելի օգտի շուրջը չէր պտտում, այլ առարկա ուներ լոկ անձնական շահեր։ Ի՞նչ օգուտ էր ստանում հայ ժողովուրդը Դանիելի վերադարձից։ Ոչինչ չէր փոխվում հայ իրականության մեջ, բացի միայն նրանից, որ Էջմիածնի աթոռից կարմիր կնիքով զարդարված կոնդակներ ուղարկելու կղերական երջանկությունն այլևս Դավթին չէր պատկանում, այլ Դանիելին։ Մարաղայի առաջնորդը դարձյալ, իհարկե, նույն Թումյ, կամագուրկ ծերունին էր, որ կուսակցական գործից դառնալուց շահել էր այն միայն, որ չարչարվել էր, կորցրել առողջությունը, այնպես որ գրեթե մի տարի միայն պիտի վայելեր կաթողիկոսությունը ատի վրա վարելու հնարավորությունը։ Միակ բանը, որ նա կարողացավ անել այդ միջոցում, այն էր, որ նա Էջմիածնում հաստատեց կրոնական մի ժողով, «Սյունհոդոս» կամ «Կառավարիչ Ս. ժողով» անունով, որ պիտի սահմանափակեր կաթողիկոսի միահեծան իշխանությունը, քանի որ առանց նրա համաձայնության ոչինչ կարգադրություն չէր կարող անել կաթողիկոսը։ Այս ժողովի բացումը տեղի ունեցավ 1808 թ. հունիսի 23-ին։

Իսկ ինչպե՞ս վերաբերվեց ռուսաց կառավարությունը դեպի այն մարդը, որ իր նվաճողական առաջխաղացության այնքան հլու և կամակատար գործիքն էր եղել։ Ալեքսանդր կայսրը շնորհավորեց Դանիելի կաթողիկոսությունը, շնորհելով նրան Ս. Աննայի շքանշանը, որ չափազանց ուրախացրեց փառասեր հոգևորականին իբրև ապացույց նրա պաշտած կայսրի ողորմած ուշադրության և բարեհաճության դեպի իր անձը։ Սակայն այդ ողորմածությունը շքանշանի սահմաններից դենը չտարածվեց։ Ռուսական շահերի համար նահատակված Դանիելի խնդիրքը հայ փախստականներին վերադարձնելու մասին Գուդովիչը թողեց անհետևանք։ Նույնիսկ Էջմիածնի կողոպտված հարստություններն էլ Կովկասի կառավարչապետն անկարելի համարից վերադարձնել ամբողջովին, ինչպես խնդրում էր կաթողիկոսը։ Վերադարձվեց միայն մի փոքրիկ մասը, իսկ մնացածը կողոպտված մնաց ռուսական բյուրոկրատիայի կնիքների տակ հետզհետե հալվելու և փոքրանալու համար։ Բայց ավելի ցայտուն կերպով ռուսաց կառավարության վերաբերմունքն արտահայտվեց Թիֆլիսի առաջնորդի հարցի մեջ։

Մենք արդեն տեսանք, որ Թիֆլիսի մեջ գտնված դանիելականների շար-

1 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ն, եր. 508—509։

քերում առաջացել էր պառակտում։ Հովհաննես Գեղարդակիր եպիսկոպոսն էր, ուժեղ կամքի տեր և իշխելու տենչով տոգորված մի մարդ, վտանգավոր էր դառնում իր համախոհների մեջ նրանով, որ կարող էր կաթողիկոսանալ Դանիելից հետո, մանավանդ որ շատ լավ համարում ուներ Վրաստանի ռուս պաշտոնական շրջանակների մեջ։ Այս պատճառով այն դանիելականները, որոնք խմբված էին Ռուսաստանի հայոց առաջնորդ Եփրեմ Ձորագեղցու շուրջը, աշխատում էին հեռացնել Գեղարդակիրին առաջնորդական պաշտոնից և այս մասին առաջին անգամ Մինաս Լազարյանն էր, որ գրում էր Դանիելին «անձել զնա», այսինքն՝ Գեղարդակիրին[1]։ Եվ երբ Դանիելը կատարելով այդ առաջարկությունը, կանչեց Թիֆլիսի առաջնորդին իր մոտ, ասելով, թե նա իրեն շատ հարկավոր է և նրա տեղը նշանակեց Կ. Պոլսի նախկին պատրիարք Գրիգոր Խամսեցուն, Գեղարդակիրը, չկամենալով հեռանալ իր պատվավոր տեղից, իր համար հենարան և պաշտպան է ընտրում ռուսաց իշխանությունը, և այս պատճառով, բավական չհամարելով մինչ այդ իր արածները, դրամական ընծաներ էր տալիս ռուսաց զորքին և ստանում էր, Գուդովիչի միջոցով, կայսերական շնորհակալություն[2]։ Եվ այսպիսով, հայ հոգևորականը, երբ այդ պահանջում էր իր անձնական շահը, պատրաստ էր հակառակ գնալ իր կաթողիկոսին, նույնիսկ այն դեպքում, երբ այդ կաթողիկոսի համար այնքան մեծ պայքարներ էր մղել, իսկ ռուսաց կառավարությունն էլ տրամադրություն էր ցույց տալիս պաշտպանելու իր համար ցանկալի հոգևորականին ընդդեմ նրա բարձրագույն իշխանության։ Այս տեսակ վերաբերմունք նա ցույց տվեց և ապագայում ավելի խոշոր օրինակներով։

Գուդովիչը Թիֆլիսի առաջնորդին զորեղ պաշտպանություն ցույց տվեց և այն ժամանակ, երբ նրա շահերին սպառնալ սկսեց և մի ուրիշ կաթողիկոս. Դա Աղվանից Իսրայել կաթողիկոսն էր, իր շահամոլությամբ Ղարաբաղի հայության ճակատագրի մեջ պատուհասի դեր կատարած այդ հոգևորականը, որին պատմությունը տեսնում է ամեն տեղ իր եկամուտների շատացման համար անխնա եռանդով աշխատող, առանց միջոցների խտրականության։ Մենք տեսանք նրան իր պաշտպան և հովանավոր Իբրահիմ խանի հետ Քյուրակ չայի բանակում, ուր եկել էր հատկապես Գանձակի հոգևոր արդյունքներն իր վրա հաստատելու համար, բայց ստացել էր մերժում Ցիցիանովից, քանի որ Գանձակի առաջնորդ նշանակվել էր Հովհաննես Գեղարդակիրը։ Ցիցիանովի մահը վերանորոգում էր Ամարասի արծաթամոլ կաթողիկոսի մեջ իր հարկատուներին ետ ստանալու հույսը։ Հենց որ Գուդովիչը նշանակվեց Կովկասի կառավարչապետ, Իսրայել կաթողիկոսը նամակ գրեց նրան, խնդրելով իրեն տալ Գանձակի հայ ժողովուրդը, որ սկզբից ի վեր պատկանել է Աղվանից աթոռին[3]։ Գուդովիչն անկատար թողեց այդ խնդիրը։ Այն ժամանակ Իսրայելն անձամբ գնաց Գանձակ և սկսեց ինքնագլուխ հավաքել տալ հոգևոր տուրքերը։ Գեղարդակիրը գանգատվեց Գուդովիչին, որ Գանձակ ուղարկեց Մինաս անունով եպիսկոպոսին, որպեսզի ետ ստանա բոլոր հավաքած տուրքերը և տանե նրան։ Այս առիթով Գանձակի հայերի մեջ տեղի ունեցան անկարգություններ, եկեղեցու զանգակները տվին, հավաքվեց մոտ 500 հոգուց բաղկացած ամբոխ, որ ծեծեց Մինաս եպիսկոպոսին և քարեր արձակեց նրա վրա, մինչև որ հարկավոր եղավ ռուսաց զինվորական իշխանության միջամտությունը։ Գուդովիչը հրամայեց խիստ քննություն կատարել այս առիթով, մանավանդ պար-

1 «Փորձ», Տփղիս, 1877—1878, № 1, եր. 269։

2 Նույն տեղը, եր. 268։

3 «Акты...», III, № 149.

դնելու համար, թե ովքեր էին, որ զանգահարությամբ կանչեցին ժողովուրդ
անկարգությունների, իսկ Իսրայել կաթողիկոսին մի սպայի ուղեկցությամբ
դարձնում էր իր տեղը, Ղարաբաղ։ Այս կարգադրությունը կատարվում էր
1807-ի նոյեմբերին[1]։

Բայց Դանիել կաթողիկոսի վերադարձից, եթե եղավ մեկը, որ խսկապես
օգտվեց, դա Ներսես վարդապետ Աշտարակեցին էր։ Դավիթ-դանիելյան շար-
ժումը կարծես հարկավոր էր հայ ժողովրդին միայն այն պատճառով, որ նրա
այդ շարժման, միջից պիտի դուրս գար մի նոր իշխանավոր, համառ, ուժեղ
իր անսովոր եռանդով, որ պիտի իր ձեռքն առներ ամբողջ ժողովրդի ճակա-
տագիրը և վճռեր նրան, ճիշտ է, ժամանակի և իրական ուժերի փոխհարա-
բերությունների բերմունքով, բայց մտցնելով այդ պատմական խոշոր առա-
քելության մեջ գունավորումներ, որոնք իր կրակոտ խառնվածքի, կրքերի,
անսահման փառասիրության և բուռն հայրենասիրական ըմբռնումների ար-
դասիքն էին։ Վերջին անգամ մենք նրան տեսանք Օդեսայում։ Այդտեղից նա
անցնում է Մոլդավո-Վալախիա, որտեղ, Գրիգոր եպիսկոպոս Աղքիրմանցին,
Ալեքսանդր կայսրի հրամանով աքսորվելով Ռուսաստանի սահմաններից, գնա-
ցել էր այնտեղ և ստանձնել էր հայ գաղութի առաջնորդական գործերը։ Ներ-
սեսը, մղված անսահման հալածասիրական եռանդով, գնաց նրա ետևից՝ այդ
առաջնորդությունն էլ խանգարելու համար և բնակվելով Յաշ քաղաքում, տար-
բանակիրվ ակսեց, միշտ նույն Գրիգորի պատճառով, Բուքրեշի հայերի հետ։
Սակայն լուր առնելով Դանիելի կաթողիկոսացման մասին, նա թողնում է
ամեն ինչ և ուղևորվում է Էջմիածին, ուր այժմ նրա առջև բացված էր գոր-
ծունեության լայն ասպարեզ։ 1808 թ. հունիսին նա Դանիելից ձեռնադրվում
է եպիսկոպոս և համարյա միաժամանակ էլ ստանում է արքեպիսկոպոսու-
թյան աստիճան, նշանակվելով անդամ Սյունհոդոսի, որի հաստատությունն
ու բացումը տեղի էին ունեցել նրա ջանքերով։ Թեև ամենակրտսերն էր նա
Սյունհոդոսի անդամների մեջ, բայց իսկույն իր ձեռքն առավ նրա ամբողջ
իշխանությունը և այդ ժամանակից էլ դարձավ իրապես կաթողիկոս, թեև
Էջմիածնի գահի վրա նստած էր հաստատված և օծված կաթողիկոս։ Ինչպես
վայել է իշխանապետական ոգի կրողին, Ներսեսն, իր տիրապետական տեն-
չերի ասպարեզն իջնելուց առաջ իր համար պատվավոր, ազնվական ծագում
և հռչակավոր նախնիքներ էր որոնում և կանգ առավ Շիրակի հին տերերի,
Կամսարական իշխանների վրա, որոնցից էլ իրեն սերված հրապարակեց։

Ասպագան էլ իր համար նպաստավոր պայմանների մեջ դնելու նպատակով
Ներսեսն սկսեց թույլ և կամազուրկ Դանիելին շարժել այնպես, ինչպես հար-
կավոր էր համարում իր դիտավորությունների համար։ Ամենից գլխավորը,
կուսակցական շահի տեսակետից, Դավիթ կաթողիկոսին անվնաս դարձնելն
էր, թե՛ ներկայի և թե՛ ապագայի համար։ Այս ուղղությամբ հոգատարություն
ցույց էր տալիս, դեռ մինչև Ներսեսի վերադարձն Էջմիածին, Մինաս Լազար-
յանը։ Դանիելի կաթողիկոսանալուց հազիվ մի երեք ամիս անցած, նա գրում
էր Եփրեմ արքեպիսկոպոսին. «Սիրելի Ներսես վարդապետի, ճանապարհոր-
դելդ գրես, շատ բարի է, և նորա հաւատարիմ անձն պիտոյ է, տացէ տէր որ
փութով հասանի, առաւել որ փոքր ի շատէ տեղիս դրութիւնն տեղեակ է, ըս-
գուշացուցանելոց է ես երևի որ չափիցս աւելի բարի է, որ օձաբարոյ Դավիթն
փառաւորութեամբ մոտն դեռ ես պահում է։ Յովաննէս վարդապետն գրում է,
որ չարն (Դավիթը) ծածուկ գիր է գրած էլ կրկին որ 4 հազար թուման Շահ-

[1] Ibid., №151.

[2] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ե, եր. 517—525.

զադին և 2 հազար թուման Միրզա Բեզորկին որ եթէ կամին կրկին իւրն հաս-
տատել. ուրեմն օձն պահելն թիւն (թույն) է, և կարելի է, կարելի է հրամայի
պատեն և իւր չարագործն և քակտումն աթոռոյ հատնեն և հաստատեն. ապա
5 կամ 10 տարի ի տեղի ապաշխարանաց արգիլեն, եպիսկոպոսական գոր-
ծից և թակն (թագն *) բառնան, ողորկեն Նախիջևանա սուրբ Խաչ վանքն կամ
Ղռիմու մնալ ապաշխարի, յետոյ թողութիւն և արձակումն տան, թէ ոչ գո-
ղացած փողն կարծեօք որ մինչի այժմ էլ բաւական ունենայ, ինձ զարմա-
ցումն է տալիս էլ ուրէն կամքն»[1]։

Որքան կարելի է կռահել հայ ժողովրդի «վեքիլը» եղող աղային պատիվ
լինող այս անգրագետ գրությունից, նրա առաջարկն էր դրկել Դավթին եպիս-
կոպոսական աստիճանից և 5—10 տարով աքսորել Նոր Նախիջևան կամ Ղրիմ,
նո ստանալ նրա մոտ եղած փողերը։ Բայց այս առաջարկությունը չկատա-
րեց Դանիել կաթողիկոսը։ Դրա փոխարեն նա 1808 թվի հուլիսի 4-ին, անշուշտ
Ներսես Աշտարակեցու թելադրությամբ, գրում է աղերսագիր Ալեքսանդր կայս-
րին, որով իրենից հետո կաթողիկոս էր նշանակում Եփրեմ Ձորագեղցուն և
խնդրում էր, որ Դավթին չթույլատրվի այդ ժամանակ էլ մոտենալ կաթողի-
կոսական աթոռին։

«Սուրբ կայսերութիւն ձեր,— գրում էր նա,— գիտէ լաւապէս զամենայն
անցսն զորս անցոյց Դաւիթ կաթողիկոսն անուանեալն, ընդ ամենայն ազգն
հայոց և ընդ սուրբ Աթոռն Էջմիածին և բոլոր միաբանութիւն նորին, զորս
զամենեսին աւերեաց չարաչար յոյժ. այժմ ես մինչդեռ մենք կենդանի եմք,
նոյնպէս անկեալ ի դրունս բարբարոսաց խոստանայ նոցա զկաշառս զի վերս-
տին ստասցի զքռնաւորական իշխանութիւնն իւր։ Այլ զի յայտնի է Ձերում կայ-
սերական Մեծութեան զի յամենայն հոգևորականաց և մարմնաւորականաց
հայոց ընդ իս և Եփրեմ Արքեպիսկոպոս գերապատիւ առաջնորդն հայոց
Ռուսաստանու ընտրեցեալ է յառաջագոյն, մեք ես յատկացուցեալ եմք զնա
փոխանորդ մեզ. վասն որոյ ամենախոնարհաբար խնդրեմք յԱթոռոյ ողոր-
մութեան ձերոյ հրամայել առաջին կառավարչին Վրաստանու, զի թէ հան-
գիպեսցի մեզ մեռանել, իսկոյն գրեսցէ առ Երևանու պարսից սպարապետն ևս
և առ Շահզատայն, զի զԴաւիթն մի՛ ևս միւս անգամ յառաջ բերցեն ի բռնա-
ւորութեան իւրում։ Եւ սուրբ կայսերութիւն Ձեր ողորմութիւն առնելով Արա-
րատեան Աթոռոյն և բոլոր ազգին Հայոց բարեհաճեսցիք զգերապատիւ Եփրեմ
Արքեպիսկոպոսն արժանացուցանել պատրիարգական աթոռոյ Արարատեան։
Եւ վասն Դաւթի, որպէս յառաջագոյն, նոյնպես յայսմհետէ մի՛ լիցի ընդու-
նելի առաջի սուրբ կայսերութեան ձերոյ որպէս և իցէ գրութիւն,
զի որպէս յառաջ նոյնպէս և այժմ՝ թէ գտանիցէ զժամանակ, գրեցուցանեք
ըստ հաճոյս իւր ի ձեռն բռնութեան եպիսկոպոսաց, վարդապետաց և ամենե-
ցուն, զորոց բաց ի ձէնջ, ոչ գոյ այլ օգնական»[2]։

Ահա այսպես հայ ժողովրդի անունից խոսող, իր շահերը հայ ժողովրդի
շահերին նույնացնող դանիելական կուսակցությունը մոլեգնության այն աս-
տիճանին է հասնում, որ զրկում է ժողովուրդն իր համար կաթողիկոս ընտրե-
լու իրավունքից, այս կարևոր հարցի կատարյալ տերն ու տնօրենը դարձնելով
ռուսաց կայսրին։ Բայց կուսակցական մոլեգնությունը Ներսեսին ավելի հեռուն
է տանում։ Նրա թելադրությամբ էր, անկասկած, որ Դանիելը դիմեց գերմա-
նական (ավստրիական) կայսրին՝ նրան ևս իր կուսակցական պայքարին մաս-
նակից դարձնելու և Գրիգոր եպիսկոպոս Աղքիրմանցուն հալածելու համար։

[1] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ե, եր. 532։

[2] Նույն տեղը, եր. 559—560։

Այն ժամանակ, երբ Ֆրանց Բ. կայսրը զբաղված էր Նապոլեոնի դեմ գոռ պա-
տերազմներ մղելով, որոնք սպառնում էին տապալել նրա ամբողջ պետու-
թյունը, էջմիածնի կուսակցությունները գրում էին նրան, իրենց մանր աթո-
ռակալական հաշիվները դրստելու համար, այսպիսի տողեր. «Այլ և ի վերա-
յնորիկ յամի 1807, յամսեանն օգոստոսի՝ սուտ եպիսկոպոս մի Գրիգոր
անուն, որ վասն լինելոյ իւրոյ մտերիմ Արարատեան Աթոռոյն և խանգարիչ
բարեկարգութեան Հայրենի ազգին արգելեալ յամենայն Հոգևորական պաշ-
տօնէ արտաքսեալ կայր յեկեղեցւոյ դատաստանաւ ժողովոյ բազմութեան արք-
եպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, վարդապետաց և աւագ երիցանց հարիւրա-
ւորաց... մտեալ առ Նոսա խաբէութեամբ, պաշտեալ ի Սշով քաղաք զպաշտօն
եպիսկոպոսութեան և սերմանեալ է անդէն զբազում տարաձայնութիւնս և
գայթակղութիւնս»[1]: Այսպիսի մի վտանգավոր հակառակորդից ազատվելու
համար կաթողիկոսը խնդրում էր, որ բոլոր ավստրիահպատակ լուսավորչա-
կան հայերը դրվեն էջմիածնի անմիջական իրավասության տակ, և որ առանց
այդ աթոռի թույլտվության ոչ մի հոգևորական իրավունք չունենա գնալու այդ
հայերի մոտ և պաշտոնավարելու:

Կուսակցական բարեբախտության համար կայսրների դռներ մաշողներն,
իհարկե, իրենց չէին զրկի իրենց հակառակորդների հետ անձամբ հաշիվ տես-
նելու հաճույքից, երբ այդպիսի հնարավորության տեր էին դառնում: Գահա-
զուրկ Դավիթ կաթողիկոսն երկար չվայելեց դանիելականների համբերու-
թյունը: 1808 թ. սեպտեմբերի սկզբին Դանիելը հիվանդանում է և մտնում
անկողին, որից այլևս չպիտի դուրս գար: Հրավիրվում է տեղական «հեքիմ»,
որ պահանջում է տալ իրեն Ամիրդովլաթի բժշկարանը, որպեսզի դեղ պատ-
րաստե նրա ցուցմունքներով: Սակայն այդ ձեռագիր բժշկարանից միայն մի
հատ կար էջմիածնում և այն էլ կազմում էր Դավիթ կաթողիկոսի սեփակա-
նությունը: Մի վարդապետ է ուղարկվում բժշկարանը տանելու, բայց Դավիթը
չի տալիս: Այս երևի մի պատրվակ էր Ներսես Աշտարակեցու համար: Վիճա-
բանություն է տեղի ունենում Դավթի և նրա մոտ գնացած վարդապետի մեջ,
որից հետո դանիելականները Ներսեսի կարգադրությամբ, թափվում են Դավթի
վրա, ծեծում ու ցած գլորում և ոչխար խուզելու մեծ ու կոպիտ մկրատով
կտրում են նրա միրուքը, ապա և սափրել տալիս: Այս մի վրիժառություն էր.
Ներսեսը Դավթի վրա գործադրում է նույն վայրենությունը, ինչ Դավիթը գոր-
ծադրել էր Դանիելի վրա: Անպատված հոգևորականն ապա բանտարկվեց
սուրբերկրյա մի փոսի մեջ: Այս անվայել բռնութեան հետևած դեպքն ավելի
ևս բնորոշ է ոչ միայն Ներսեսի, այլ մանավանդ Դանիելի համար: Երևանի
Հյուսեին խան սարդարը, լուր առնելով տեղի ունեցած անկարգության մասին,
գնում է էջմիածին՝ անձամբ իրողության վերահասու լինելու համար: Դանիե-
լականների համար այդ «բարեբարոյ» խանը, իհարկե, առանձին սրտացա-
վությունից դրդված չէր այդ ճանապարհորդությունը հանձն առնում, այլ պար-
զապես այն պատճառով, որ հարմար պատրվակ է գտնում՝ հայոց մայր աթոռի
հարստություններից օգտվելու համար: Եվ իրավ, նա հայտարարեց, որ եթե
Դավթի վրա գործադրված բռնությունը Դանիել խալիֆայի հրամանով է գոր-
ծադրվել, նա ոչինչ անելիք չունի, բայց եթե մի ուրիշի գործն է եղել այդ, այն
ժամանակ նա կիմանա թե ինչ կանե: Եվ իր մոտ եղած խաներից մեկին
ուղարկում է Դանիելի մոտ հարցնելու՝ թե արդյոք ի՞նքն է հրամայել, որ
սափրվի Դավթի միրուքը: Ներսեսն այդ հայտարարությունից խուճապի է
մատնվում, և նա բազմաթիվ ընծաներով և դրամական գումարով շտապում

[1] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ե, եր. 558:

Հ սարդարի մոտ, աղերսում է նրան բաց չանել հանցանքը: Հետո նա Դանիելի
մոտ է վազում և խնդրում, որ նա իր վրա վերցնի հանցանքի պատասխանատ-
վությունը և ասե, թե իր կարգադրությամբ է կատարվել Դավթի միրուքի սափ-
րումը: Դանիելը նույնիսկ մահճի մեջ չէ կարողանում մերժել նրան կաթողի-
կոսացրած Ներսեսի խնդրանքը և սուտ է ասում, դրականապես պատասխա-
նելով իր մոտ եկած խանին, թե այո, ինքն է եղել այդպես կարգադրողը: Դա-
նիելն էլ մեծամեծ ընծաներ է տալիս Հյուսեին խան սարդարին և այսպիսով
շահելով նրա սիրտը, վերադարձնում է Երևան[1]: Այս էլ հենց որոնում էր
խանը, թե չէ նրա համար, անշուշտ, միևնույնն էր, որ քրիստոնեական մի
ամբողջ եկեղեցու գլուխը ծերության ալիքներով զարդարված և մահվան ան-
կողնում պառկած, դավաճանում էր իր պաշտած Աստծու հրամանին՝ «Մի՛
ստիր»:

3. Ռուս-թուրքական պատերազմը: Անցկացնելով իր հորձանքները Կով-
կասյան մեծ լեռնաշղթայի հարավային կողմը, ռուսաց նվաճողական առաջ-
խաղացությունն, ինչպես տեսանք մինչև այստեղ, գործ ուներ միմիայն Պարս-
կաստանի հետ, նրանից էր հողամասեր խլում, իսկ մահմեդական մյուս մեծ
պետությունը, Թուրքիան, դեռ մնում էր այդ տեսակ գործողությունների շըր-
ջանակից դուրս:

Այս հանգամանքը բացատրվում է, ի միջի այլոց և նրանով, որ Թուր-
քիան Պարսկաստան չէր ոչ միայն այն պատճառով, որ նա անհամեմատ
ուժեղ էր Պարսկաստանից, այլ առավելապես շնորհիվ այն դրության, որ օս-
մանյան պետությունը եվրոպական հակամարտ շահերի մրցության ասպարե-
զում գտնում էր պաշտպանության համար նեցուկներ, որոնք և փրկում էին
նրա գոյությունը հուսահատական ժամերին անգամ: Հարձակվել Թուրքիայի
վրա, նշանակում էր հրապարակ նետել Արևելյան հարցը, մի կնճռալից և
արյունոտ առեղծված, որի մեջ մասն ունեին եվրոպական բոլոր գլխավոր պե-
տությունները:

XVIII դարից, մանավանդ Եկատերինա Բ-ի պատերազմներից, Արևելյան
Հարցը դարձել էր գերազանցորեն ռուսական հարց, Ռուսաստանի և Թուրքիայի
հարաբերությունների հարց: Ամբողջ Արևմտյան Եվրոպան ուշի ուշով հետե-
վում էր այդ հարաբերություններին, դարձնում նրանց իր քաղաքականության
ամենակարևոր գործոններից մեկը: Բայց այս չէր նշանակում, թե Արևելյան
Հարցի հարուցումը միշտ Ռուսաստանի կամքից էր կախված: Այդ կախված էր
մի խոշոր չափով և եվրոպական քաղաքականության մեջ գերակշիռ հանդի-
սացող հոսանքներից: Ուստի և Արևելյան Հարցն առանձնապես կարևորություն
ստանում էր XIX դարի առաջին տարիներից, և Ռուսաստանն այդ ժամանակից
էլ վերսկսում է Թուրքիան անդամահատելու և ոչնչացնելու իր գործը, որ այն-
քան հաջողությամբ տանում էր XVIII դարում մղած իր պատերազմների մի-
ջոցով: XIX դարում ռուս-թուրքական պատերազմներն ավելի ընդարձակ տա-
րածություններ են դարձնում իրենց գործողությունների թատերաբեմ: Գլխա-
վոր առանձնահատկությունն այն է, որ այժմ այլևս միայն Եվրոպական Թուր-
քիան չէ, ուր ամփոփվում են պատերազմական գործողությունները և որոշ-
վում է նրանց ճակատագիրը: Միաժամանակ պատերազմը բորբոքվում էր և
Ասիական Թուրքիայի մեջ, որովհետև Վրաստանի գրավումով Ռուսաստանը
Թուրքիայի անմիջական սահմանակիցն էր դառնում Անդրկովկասում:

Այս նոր արշավողական ուղղությունը Ասիական Թուրքիայի ռազմաբեմը
ճիշտ է, երկրորդական նշանակություն էր ստանում և գլխավոր վճռական դերը

[1] Մսեր Մսերեան, Պատմութիւն կաթողիկոսաց էջմիածնի, Մոսկվա, 1876, եր. 74—75:

մնում էր, առաջվա պես, Դանուբ, հովիտներին, Բալկաններին, սակայն այլ մի հայտարար չէր, թե Ռուսաստանը պակաս կամեցող է հաստատվելու նաև Ասիական Թուրքիայում և իր համար նվաճողական հենակետներ ամրացնելու դեպի Միջերկրական ծովը և Հնդկական օվկիանոսը տարածվելու համար։ Այս ընդարձակ տարածությունների առաջավոր ռազմաբեմն էր Հայկական Բարձրավանդակը,— ուր որոտում էին թնդանոթները և հոսում էր մարդկային արյունն ամեն անգամ, երբ պատերազմ էր հայտարարվում Ռուսաստանի և Թուրքիայի միջև։

Ռուս-թուրքական պատերազմները Հայաստանում միայն Թուրքիայի հպատակ հայերի վրա չէր, որ ունեցան անհունապես խոշոր ճակատագրական ազդեցություն։ Նրանք էին, որ մտցրին ամբողջ հայությունն Արևելյան հարցի արյունոտ շրջանակի մեջ, որով և կարգադրվեց այս ժողովրդի ամբողջ ճակատագիրը, նրա գոյության հարցն անգամ։ Այստեղից է ահա առաջանում մի խոշոր պահանջ հայոց պատմության համար. այսուհետև, XIX դարի սկըզբից, խորին ուշադրությամբ և քայլ առ քայլ հետևել Արևելյան Հարցի բոլոր այն անցուդարձին, որոնք գալիս էին դրություններ ստեղծելու Եվրոպայի և մասնավորապես Թուրքիայի մեջ, դրություններ, որոնք ոտքի կանգնեցրին Արևելյան Հարցի մի մասնիկը դարձած Հայոց Հարցը և մղեցին նրան դեպի իր վճռական ահավոր լուծումը։ Մենք կաշխատենք այս գործի մեջ, որքան հնարավոր է, լիակատար կերպով բավարարել այդ խոշոր պահանջը։

Ա.—Տասնիններորդ դարն Եվրոպայում լուսանում էր մի ահավոր պայքարի մեջ, որի մեծագույն գործոններն էին տնտեսական զարգացման նոր ձևերը և հին քաղաքական կարգերի խորտակումը։ Այս մեծ և արյունահեղ պայքարի մեջ մի կողմում կանգնած էր Ֆրանսիան, որ 1789 թվականին սկսած իր մեծ հեղափոխությամբ ռամկավարական սկզբունքներ էին հայտարարել աշխարհին, տապալելով «հին կարգը»։ Այս մի անհաղացունց դասակարգային կռիվ էր, որի մեջ խորտակվում էր ժողովրդի գլխին նստած և նրա արյունը ծծող ավատական կալվածատիրությունը, բաժանված երկու հրամայող դասերի, հոգևորական և աշխարհական ազնվականության մեջ։ Հաղթողն այդ կռվի մեջ երրորդ դասակարգն էր, բուրժուազիան, քաղքենիությունը, առևտրի, արդյունաբերության կապիտալի ներկայացուցիչը, որ այսպիսով դառնում էր տիրապետող դասակարգ նոր հասարակության մեջ, զարդարելով իր հաղթական դրոշակը «ազատություն, հավասարություն, եղբայրություն» բառերով, որոնք պետք է նոր հասարակության հիմքերը դառնային, բայց հենց բառեր էլ մնացին։

Մյուս կողմում, Ֆրանսիայի դեմ, խմբված էին Եվրոպայի ուժեղ պետությունները՝ պաշտպանելու համար «հին կարգը», այն է՝ միապետության սկզբունքը, կալվածատիրական-ազնվապետական տիրապետությունը։ Այս հին կարգը հեղափոխական Ֆրանսիայի վրա էր արշավում ամեն կողմից։ Բայց հեղափոխությունը չընկրկեց իր թշնամիների միացած ուժի առջև, այլ, ընդհակառակը, զենք բարձրացրեց նրանց դեմ։ Սկիզբ առան հեղափոխական Ֆրանսիայի և հակահեղափոխական Եվրոպայի պատերազմները։ Սկզբում Ֆրանսիան ինքնապաշտպանության համար էր կռվում, իր հեղափոխական նվաճումները դրսի արշավներից պաշտպանելու համար։ Եվ այդ կռվի մեջ հաղթանակը նրան էր պատկանում։ Ամրապնդելով իր դիրքը, սպառազինված հեղափոխությունն ինքն էր հարձակողականի դիմում և դուրս գալով ֆրանսիական սահմաններից, արշավում էր զանազան կողմեր՝ իր սկզբունքները սվինի ծայրով ամեն տեղ հաստատելու համար։ «Պատերազմ պալատներին, խաղաղություն խրճիթներին»։ Այս էր այդ արշավանքների նշանա-

բանը։ Եվ բռնության տակ ճնշված ազգերը բերկրանքով էին ընդունում այդ պատգամը, իրենց համակրությամբ և աջակցությամբ հեշտացնելով հաղթական հեղափոխության նվաճումները, որոնք ամեն մի երկրում հաստատում էին հանրապետություններ, ազատական կարգեր, այդ նորակազմ մանր հանրապետությունները համարվում էին ֆրանսիական մեծ հանրապետության դուստրերը և վայելում էին նրա հովանավորությունը։

Բայց ֆրանսիական այդ արշավանքները զուտ գաղափարական ճեֆպաբանքի մեջ չմնացին։ Հաղթական դիրքերի վրա բարձրացած բուրժուազիան բոլորովին մտադիր չէր ծրի բարերարություններ անել և ամեն տեղ որոնում էր իր համար շահեր։ Ֆրանսիան պիտի օգտագործեր իր նվաճած երկրները. տնտեսական գերակշռություն պիտի ստեղծեր իր բուրժուազիայի համար։ Եվ նրա պատերազմներն ընդունում են իմպերիալիստական բովանդակություն։ Այս բանի մեջ էլ բուրժուազիան ցուցահանում է մեծ կազմակերպչական կարողություն, որի ամենաբարձր արտահայտությունն էր ամբողջովին նրան նվիրված մի նորելուկ զինվորական հանճար, Նապոլեոն Բոնապարտ անունով գեներալը, որ Կորսիկա կղզուց էր, ուներ իտալական ծագում և արագ բարձրացել էր հեղափոխական զորքերի մեջ։

Առաջին հաղթությունները, որոնք հռչակեցին Նապոլեոնին, տեղի ունեցան Իտալիայում, ուր Ֆրանսիան կռվում էր Ավստրիայի դեմ։ Բայց Ֆրանսիայի ամենաուժեղ թշնամին Ավստրիան չէր, այլ Անգլիան։ Հին էր թշնամությունն այս երկու երկրների մեջ, և նրանից առաջացած էր մի երկարատև համառ պատերազմ, որ ընդհարումներով տևել էր մոտ հարյուր տարի։ Պատճառն Անգլիայի անդադար հզորացումն էր, որ սկսվել էր XVI դարից, բայց զարգացման բարձր աստիճանին հասավ XVIII դարից, երբ Անգլիան, ընկճելով իր հակառակորդներին, ձեռք բերեց բացարձակ գերակշռություն ծովերի վրա և դրա հետևանքով դարձավ առաջնակարգ գաղութային պետություն։ Այս գաղութային նվաճումների հողի վրա, շահերի անհաշտ ներհակություն ստեղծվեց Անգլիայի և Ֆրանսիայի մեջ, որ նույնպես գաղութային մի պետություն էր։ Պատերազմներ ծագեցին առաջնության համար և առաջնությունը ձեռք բերեց Անգլիան, խլելով Ֆրանսիայից նրա երկու խոշոր ու հարուստ գաղութները—Կանադան՝ Հյուսիսային Ամերիկայում և Հնդկաստանն՝ Ասիայում։ Անգլիական առևտրական կապիտալի այս խոշոր հաղթանակը ետ էր մղում ֆրանսիական առևտուրը, և այս բանն, իհարկե, մոռանալ չէր կարող մեծ հեղափոխության հետևանքով իշխանության տեր դարձած ֆրանսիական բուրժուազիան։

Բացի դրանից, XVIII դարի երկրորդ կեսում Անգլիայի մեջ տեղի ունեցավ տնտեսական խոշոր հեղաշրջում, որի շնորհիվ անգլիական արդյունագործությունը դուրս էր գալիս արհեստանոցային սահմանափակ շրջանակից և ընդունում էր գործարանային լայն ծավալ։ Այդ հեղաշրջումը կատարում էին մի քանի գյուտեր, որոնցից նշանավոր են շոգեշարժ մեքենայի, մանող ու գործող մեքենաների գյուտերը։ Այս հեղաշրջումն առաջ էր քշում անգլիական արդյունագործությունը, ավելի մեծացնելով նրա արտադրության չափերը և էժանացնելով արտադրած ապրանքները։ Ֆրանսիան իր հետամնաց արդյունագործական ձևերով չէր կարող մրցել անգլիական ապրանքների հետ, պիտի ամբողջովին ենթարկվեր Անգլիային, զրկվեր իր շուկաներից և աղքատանար։

Այսպիսի ստրկացումի դեմ ֆրանսիական բուրժուազիան դուրս էր գալիս ոչ թե համանման տնտեսական առաջադիմության զենքերով, այլ պատերազմով, որ պիտի ոչնչացներ անգլիական արդյունագործությունը, խլեր նրա

շուկաները և հովանավորող դրություն ստեղծեր ֆրանսիական հետամնաց և դանդաղ զարգացող արդյունագործության համար։ Ահա այսպիսի մի պատերազմ հաղթականորեն, մինչև վերջը տանելու անհրաժեշտությունն էլ դառնում է Նապոլեոնի ամենագլխավոր նպատակը։ Եվ սկսվում է նրա և Անգլիայի մեջ մի մենամարտություն, որ պատերազմական բոցերով հրդեհում է ամբողջ Եվրոպան, պատրաստելով կրակի և արյան ծովի մեջ ամեն հնարավորություն, որ Նապոլեոնը հասարակ գեներալի դիրքից բարձրանա մինչև Ֆրանսիայի կայսրի գահը։

Անգլիան ջարդելու և տնտեսապես ոչնչացնելու ծրագրի կենտրոնական տեղը գրավում է, իհարկե, այդ երկրի նվաճումը, որի համար պետք էր արշավանք կազմել, անցնել Լա Մանշ նեղուցը, և խուժել երկրի ներսը։ Բայց այդ գլխավոր գործողությունը դեռ պետք էր պատրաստել, հասցնելով հարվածներ անգլիական հզորության՝ նրա իսկական սահմաններից դուրս, նրա գաղութներում։ Ամենից հեշտ իրագործելին թվում էր Հնդկաստանն Անգլիայի ձեռքից խլելը։ Եվ Նապոլեոնը սկզբից ևեթ, դեռ իր գործունեության արշալույսին, աչք էր տնկում այն ճանապարհների վրա, որոնք տանում էին դեպի բարեբեր և կախարդիչ Հնդկաստանը։ Այդ ճանապարհների վրա էին գտնվում Թուրքիան իրեն պատկանող Միջերկրականի ծովափերով (գլխավորապես Սիրիա և Եգիպտոս) և Պարսկաստանը։ Առանձնապես կարևորը Թուրքիան էր, որ անկախապես էլ առևտրական կապիտալի և առանձնապես ֆրանսիականի սիրած ու վաղուց նվաճած շուկան էր։ Եվ ֆրանսիական կառավարությունը (դիրեկտորատը) որոշում է մի զինվորական արշավանքով ձեռք բերել Եգիպտոսը և հանձնում է այդ գործը Բոնապարտին։

Բայց այսպիսով նորից արծարծվում էր Արևելյան Հարցը։ Մենք գիտենք, որ Արևելյան հարցի վերջնական լուծումն եվրոպական պետությունները հասկանում էին այն մտքով, թե պետք է թուրքերին Եվրոպայից հետ քշել Ասիա և բաժանել նրա հողերը։ Այսպիսով Արևելյան Հարցը համարվում էր մի հարց, որ վերաբերում էր լոկ Եվրոպական Թուրքիային։ Եվրոպայի համար ոչ մի հետաքրքրություն չուներ, թե ինչ կլինեին թուրքերն Ասիայում, և թե ինչ դրության կենթարկվեին այնուհետև այդտեղ ապրող ոչ թուրք ազգությունները։ Թվում է, թե հեշտ պիտի լիներ Եվրոպական Թուրքիայի բաժանումն իրականացնելը, քանի որ օսմանյան գահը թուլացել էր, սաստիկ խախուտ դարձել։ Եվ մենք տեսնում ենք, որ մրցակից պետություններից ոմանք փորձում են իրար հետ համաձայնություն կայացնել բաժանման վերաբերմամբ։ Բայց և այնպես, բաժանումը չէր կայանում, որովհետև միշտ գտնվում էր մի կողմ, որ անբավական էր իրեն առաջարկված բաժնով և առաջ էր քաշում հակառակ սկզբունք—անհրաժեշտություն՝ պահպանելու Թուրքիայի ամբողջությունը։ Այս երկու հասկացողությունները՝ բաժանում և անձեռնմխելիություն, այնուհետև դառնում են խաղեր պետությունների մեջ մղվող դիվանագիտական մրցությունների համար, և մենք տեսնում ենք այդ խաղերը մերթ մեկի, մերթ մյուսի ձեռքին, նայած թե քաղաքական րոպեն որն է պահանջում՝ բաժանո՞ւմ արդյոք, թե անձեռնմխելիություն։ Այսպես, XVIII դարի երկրորդ կեսին բանակցություններ կային Ռուսաստանի և Ավստրիայի մեջ՝ Եվրոպական Թուրքիան բաժանելու մասին, բայց այս բանին դիմադրում էր Պրուսիան։ Հետո ինքն Ավստրիան դուրս եկավ Ռուսաստանի դեմ՝ Թուրքիայի ամբողջությունը պահպանելու համար և այդ նպատակով նույնիսկ դաշնակցություն կնքեց Թուրքիայի հետ։ Այս, սակայն, չխանգարեց, որ նույն Ավստրիան մի քանի տարուց հետո միանա Ռուսաստանի հետ և միասին պատերազմի Թուրքիայի դեմ և երկրներ խլե նրանից։

Թուրքիայի անձեռնմխելիության եռանդուն և հավատարիմ կողմնակից էր, մանավանդ Ֆրանսիան, որ առևտրական մենաշնորհներ ուներ ստացած Միջերկրական ծովի արևելյան ափերում և այդ դրությունից ստացվող օգուտները բազմապատկելու և անխափան վայելելու համար իրեն համարում էր Թուրքիայի ամենահին ու ամենաանկեղծ դաշնակիցը։ Այստեղ պետք է շեշտել և մի շատ կարևոր հանգամանք։ Վոլտերը, իր դարի մեծագույն հեղինակությունը, թուրքական տիրապետությունը գնահատում էր ոչ թե Մարսելի վաճառականի տեսակետից, այլ քաղաքակրթության, ազատության ու մարդկայնության տեսակետից, ուստի և ամենաջերմ ցանկացողն էր, որ թուրքերը վռնդվեն Եվրոպայի հողից։ Այս էր նա քարոզում Եվրոպայի վեհապետների և մանավանդ Եկատերինա Բ կայսրուհու հետ իր ունեցած նամակագրությունների մեջ։ Եկատերինային նա մեծարում էր իր առանձին հիացմունքներով, որոնց պատճառներից մեկն այն էր, որ հռչակավոր փիլիսոփան և մատենագիրը հավատում էր, թե Ռուսաստանը պիտի իրագործե Թուրքիայի գոյության վերջ դնելու ծրագիրը[1]։ Եվ միայն Վոլտերը չէր Ֆրանսիայում, որ այսպես էր հասկանում Արևելյան հարցի լուծումը։ Պետերբուրգի ֆրանսիական դեսպան Սեգյուրը տարված էր նույնպիսի քաղաքական ծրագրով Եվրոպան «մահմեդական բարբարոսներից» ազատելու համար[2]։ Բայց չպետք է կարծել, թե վոլտերները, սեգյուրները որևէ ազդեցություն անում էին Ֆրանսիայի արևելյան քաղաքականության վրա։ Այլ էր մտքի, զգացմունքի Ֆրանսիան, այլ էր պաշտոնական, կառավարական Ֆրանսիան։ Վերջինս առաջինին չէր հպատակվում, այլ վաճառականության գծծի հաշիվներին ու շահերին, իսկ այս հաշիվներն ու շահերը չափազանց ցանկալի էին համարում, որ «մահմեդական բարբարոսությունը» մնա Եվրոպայի հողի վրա՝ չաղ տոկոսներ տալու համար, և նա մնում էր, և պաշտոնական Ֆրանսիան մեջքից երեքծալ խոնարհվում էր նրա առջև, միայն թե նա թույլ տար իրեն լավ ծծել։ Ուրեմն, ոչինչ գործնական նշանակություն չուներ, եթե Ֆրանսիայում «հասարակական կարծիք» էր կազմվում հակաթուրքական բովանդակությամբ։ Հասարակությունը խոսում էր, իսկ կառավարությունն իր գործն էր տեսնում։

Դեռ մեծ հեղափոխության նախօրյակին էր, երբ տեղի ուներ Եկատերինա Բ-ի պատերազմը Թուրքիայի դեմ, և Լուի ԺԶ թագավորը դուրս էր գալիս պաշտպանելու օսմանյան պետության ամբողջությունը։ Բայց ահա պայթեց հեղափոխությունը, Լուին գլխատվեց, իսկ նրան հաջորդած հեղափոխական կառավարության հարկավոր եղավ թաթ դնել Թուրքիայի չաղ կտորների վրա։ Եվ մոռացվեց հին բարեկամությունն էլ, թուրք պետության անձեռնմխելիությունն էլ։ Այժմ հարկավոր էր Թուրքիայի բաժանումը, և այս բանը համարվում էր և՛ կարելի, և՛ բնականոն։ Եվ հեղափոխական կառավարությունը կարող էր ասել, թե ինքը չէր, որ Ֆրանսիայում առաջին անգամ ձայն է բարձրացնում ֆրանսիական հին բարեկամին և դաշնակցին անդամահատելու մասին։ Նրանից առաջ էլ եղել էին այդպիսի օրինակներ։ Թուրքիային ավելի ինչ մոտ և հավատարիմ բարեկամ, քան Լուի 14-րդ թագավորը։ Եվ սակայն սա ինքն էր, որ 17-րդ դարի երկրորդ կեսում ծրագրում էր ամբողջ Թուրքիայի նվաճում և քրիստոնյաների ազատագրում։ Իսկ Լուի 16-րդը, որ ինչպես հիշեցինք վերևում, ջանքեր էր գործ դնում Թուրքիան Ռուսաստանի հափշտակություններից ազատելու համար, միաժամանակ աչք ուներ Եգիպտոսի վրա և մտածում էր, թե ինչպես կցեր այդ երկիրը ֆրանսիական հողերին։

---

[1] Albert Sorel, La question d'orient au XVIIIe siècle, Paris, 1902, ch. v, XIV.

[2] Edouard Driault, La question d'orient, Paris., 1909. p. 37.

Այսպես էր Թուրքիայի բախտը՝ բարեկամ, թե թշնամի, միևնույն էր, ամենքը խաղեր էին խաղում նրա գլխին, և բոլոր խաղերի վերջնական նպատակն էր նրանից մի բան խլելը։ Եվ այս տեսակ վերաբերմունքը բխում էր Թուրքիայի դրությունից։ Այն ժամանակ, երբ Ֆրանսիայի հեղափոխական կառավարությունը պատրաստում էր արշավանք Եգիպտոսի գրավման համար, Թուրքիայում թագավորում էր Սուլթան Սելիմ Գ.-ն, մի տիպիկ օսմանյան բռնակալ, որ ժառանգելով հին աշխարհակալական ժամանակների գոռոզ արհամարհանքը դեպի օտար, մանավանդ ոչ իսլամ ազգերը, մնում էր իրապես անկման շրջանին հատուկ մի թույլ ու անկարող ինքնակալ։ Անգլիական հյուպատոս Պարիերը պատմում է, թե ինչպես ինքը անգլիական նոր նշանակված դեսպանի հետ ներկայացավ այս սուլթանին։ «Դեսպանը,— գրում է նա,— մեր և գահուն մեջ տեղ ոտքի վրա կեցած էր։ Նորին վեհափառությունը բոլորովին անտարբեր կեցավ, աչքն անգամ չշարժեց մեր ներկայացած ատեն. միայն իր խոնարհեալ արտևանունքը քիչ մը վեր վերցուց, և անզգալի կերպով վեզիրին կողմը դառնալով, հարցուց, թե այս գյավուրն ո՞վ է։ Վեզիրը պատասխանեց թե՝ նորին վեհափառության շնորհքը խնդրելու համար Անգլիո թագավորին կողմանե ղրկված գերի մ՚է։ Միևնույն ատեն վեզիրն իր ծոցեն մետաքսապատ թուղթ մը հանեց և սուլթանին երկնցնելով ըսավ, թե գերին այս թուղթը գահուն առջև դնելու հրաման ունի։ Սելիմ, որ քնեած կերևեր, չառավ թուղթը. քիչ մը վերջը նուաղեալ աչքերը իր պաշտոնեին դարձունելով, ցած ձայնով հարցուց՝ թէ շանը ուտելիք տվի՞ր, և հագվեցուցի՞ր։ Վեզիրն այս պատասխանելուն վրա ըսավ. «Շատ լավ, այդպես թող ըլլա»։ Սելիմ այս խոսքն արտասանելեն վերջը, թիկնապահները զմեզ մինչև ցած դուռը ետ մղեցին սափրելով, որ հետևույս քալենք»[1]։

Այսպես էր գոռոզ ասիական բռնավորն իր պալատում։ Իսկ դրսում նրա պետությունը, մանավանդ հեռավոր ծայրերում, ներկայացնում էր կատարյալ անիշխանություն. ապստամբված էին շատ կուսակալներ։ Եվրոպական Թուրքիայում քրիստոնյա հպատակները (հույները, բուլղարները, ռումինները, սերբերը) պատրաստվում էին ազատագրական շարժումների։ Եվրոպայում կարծիք էր կազմվել, թե Թուրքիան մոտեցել էր իր օրհասին։ Այսպես էր համոզված և ֆրանսիական կառավարությունը, որ և Եգիպտոսի գրավումով ուզում էր իր բաժինը վերցնել օսմանյան ժառանգությունից վաղօրոք, նախքան օսմանների պետության հրապարակային անդամահատումը, մենակ, առանց Ռուսաստանի աշխատակցության,— նույնիսկ հակառակ Եվրոպայի[2]։ Բայց այս բացարձակ բռնությունը պետք էր քողարկել, և քողարկելու հոգսն իր վրա վերցրեց դիվանագիտությունը, որ և հավատացնել սկսեց սուլթանին, թե նա շարունակում է մնալ Ֆրանսիայի բարեկամը, և եթե ֆրանսիական զորքերը գնում են Եգիպտոս պատերազմելու, այս միայն սուլթանի օգտի համար, որովհետև ֆրանսիացիները կռվում են միմիայն մամլյուկների[3] դեմ։

1 «Եգիպտոս և Սուրիա» («Ցոլյա» ամսագիր, Արմաշ, 1877, էջ. 111)։

2 Th. Lavallée, Histoire de l'Empire Ottoman, Paris, 1855. p. 425.

3 Մամլյուկ արաբական բառ է և նշանակում է ստրուկ: XIII դարի սկզբում Եգիպտոսի սուլթանը գնեց Կովկասի լեռնականներից (գլխավորապես չերքեզներից) 12 հազար հոգի, որոնք վաճառվում էին շուկաներում, և դրանցից զորք կազմեց իր իշխանության պաշտպանության համար։ Սակայն այդ զորքը, քիչ անցած, սպանեց սուլթանին և իր ձեռքն առավ Եգիպտոսի իշխանությունը։ Մամլյուկները սարսափ էին տարածում Արևելքում և մեծարվում էին իբրև անպարտելի զինվորություն։ Նրանց հարվածների տակ էր, որ կործանվեց Կիլիկիայի հայկական թագավորությունը։ Երկար պահպանեցին նրանք իրենց իշխանությունն ու համբավը, որովհետև նրանց շարքերը միշտ լրացվում էին այն գերիներով, որոնք բռնվում էին Կովկասյան լեռներում և վաճառվում էին Եգիպտոսում։ Դրանք երեխաներ էին, որոնք դաստիարակվում էին իսլամա-

Հասնելով Եգիպտոս և սկսելով պատերազմական գործողությունները, գլխավոր հրամանատար Բոնապարտը միևնույն հայտարարությունն էր անում Եգիպտոսի ժողովրդին, առաջ քաշելով, իբրև համոզեցուցիչ հանգամանք, այն, որ Ֆրանսիան Թուրքիայի հին դաշնակիցն էր, բայց միևնույն ժամանակ Փարիզում ֆրանսիական արտաքին գործերի վարիչ հռչակավոր Թալեյրանը, դիվանագիտական մի մեծ խաղ, գաղտնի ծրագիր էր կազմում միանալու Ավստրիայի և Անգլիայի հետ ընդդեմ Ռուսաստանի, առանց այս վերջինի մասնակցության Օսմանյան կայսրությունը բաժանելու համար։ Ինքը գեներալ Բոնապարտը մի կողմից հավատացնելով, թե սուլթանի իշխանությունն Եգիպտոսում պաշտպանելու համար է ֆրանսիական բանակն այնտեղ գնում, մյուս կողմից գրում էր իր կառավարության. «Թուրք պետությունն օրն օրին կործանվում է, և այս կղզիներին (Հոնիական) տիրելը մեզ կարողություն է տալիս կամ աշխատել կանգուն պահել նրան որքան հնարավոր է կամ վերցնել նրանից մեր բաժինը»։ Փառատենչությամբ լցված, եգիպտական արշավանքի մեջ նվաճողական նորանոր դափնիներ որոնող և նրանցով դեպի բարձր, դեպի իշխանության գագաթնակետը ճանապարհ հարթող Բոնապարտը ուրիշ դիտավորություններ էլ կապում էր արշավանքի հետ. ոչնչացնել մահմեդական իշխանությունը Թուրքիայում, ազատել նրան հպատակ քրիստոնյաներին և հարձակվել Ավստրիայի վրա արևելքից, գործածելով դրա համար այն զորաբանակները, որոնք կազմված կլինեն ազատագրված քրիստոնյա ազգերից[1]. Եգիպտոսում Նապոլեոն Բոնապարտը միայն սրով չէր գործում։ Նվաճողական մի ուրիշ հզոր միջոց դարձրեց նա իր դիվանագիտությունը։ Հաղթել բավական չէր, պետք էր նաև խաբել հաղթվածներին։ Եվ Նապոլեոնը, եթե հանճար էր պատերազմական գործերի մեջ, հանճար հանդիսացավ նաև խաբեբայություններով, ստոր ստերով ու կեղծիքներով ապրող դիվանագիտության ասպարեզում։ Մենք պետք է ծանոթանանք և այս մարդի արհեստի հետ, որովհետև նա սեփականություն էր ոչ թե լոկ Նապոլեոնի, այլ ընդհանրապես բուրժուական Եվրոպայի և մանավանդ ֆրանսիական քաղաքականության, մի նենգավոր, սրիկայական քաղաքականություն, որին վերջ ի վերջո

կան կրոնի մեջ և վարժվում էին զինվորական արհեստի մեջ։ XVI դարի սկզբում Եգիպտոսը նվաճեց օսմանյան սուլթան Սելիմը, բայց ոչնչացնել մամլյուկներին չկարողացավ։ Երկիրը բաժանվեց նրանցից առաջացած քսան և չորս բեյերի մեջ, որոնք կառավարում էին, հարկեր հավաքում։ Այդ բեյերը շարունակեցին պահպանել մամլյուկների զինվորական կազմակերպությունը, այնպես որ Կովկասում երեխաներ գողանալը և այդ բեյերին ծախելը շարունակվում էր։ Մամլյուկների մեջ պատահում էին և հայեր։ Մենք ունենք այդպիսիներից մեկի պատմությունը, որից տեղեկանում ենք, թե այդ հայ մամլյուկը կոչվում էր Ռուստամ, ծնվել էր (1782 թ.) Թիֆլիս քաղաքում, բայց ծագումով ղարաբաղցի էր, Ավերկան անունով մի տեղից, որին նա «թաղաք» անունն է տալիս և որ գտնվում է Գանձակի և Շուշու մեջ, այս վերջինից մի օրվա հեռավորությամբ (գուցե «Ավերկան» բառի մեջ մենք պիտի տեսնենք «Ակնարան» անվան աղավաղված ձևը)։ Ռուստամը պատմում է, թե Շուշու Իբրահիմ խանի և Մելիք Մեջլումի մեջ բորբոքված պատերազմը, որ տեղի ուներ Գանձակի շուրջը, տակն ու վրա էր արել ամբողջ երկիրը։ Երբ խաղաղությունը վերահաստատվում է, նա իր մոր և քրոջ հետ Շուշուց ուղևորվում է Գանձակ՝ այնտեղից Ղազախ, իր հոր մոտ գնալու համար, բայց Գանձակում երեք հոգին էլ գողացվում են և ծախվում ստրկավաճառներին, որոնք տանում են նրանց Դաղըստան, Ղըլար, շուկայից շուկա, ծախում են նոր և նոր գնորդներին։ Ռուստամը բաժանվում է ծնողից և քրոջից, տարվում է Անապա, այնտեղից՝ Կ. Պոլսի վրայով Կահիրե, ուր թլպատվում է և մտցվում մամլյուկների շարքի մեջ, երբ նա հազիվ 15 տարեկան էր։ Նապոլեոնը նրան իր հետ տարավ Ֆրանսիա, և այդտեղ հայազգի մամլյուկը հայտնի դարձավ, գտնվելով միշտ կայսերական շրջախմբի մեջ։ Նա ծառայում էր անձնապես կայսրին, սիրված էր նրանից և թողեց իր հիշողությունները, գրված ֆրանսերեն լեզվով, որոնք հրապարակված են առանձին հատորով (“Souvenirs de Roustam Mameiouk de Napoleon Ier,” Paris, s. d.).

1 Ч. Файф, История Европы XIX века, Спб., 1904, с. 77.

զոհ պիտի գնար նրան հավատալու դժբախտությունն ունեցած հայ ժողովուրդը։

Տեղական ազգաբնակությունը խաբելու և կուրացնելու համար՝ Նապոլեոնը Եգիպտոսի ափերում իրեն ցուցադրեց իբրև ջերմեռանդ համակրող իսլամական կրոնի, համարյա իբրև իսլամ հավատացող, շրջապատեց իրեն շեյխերով և այլ հոգևորականներով, մասնակցում էր մահմեդական կրոնական արարողություններին տեղական հագուստ հագած, հաճախակի դիմում էր ազգաբնակության և հոգևորականության փքուն կոչերով, որոնց մեջ ամեն ճիգ թափում էր ամբոխի և տգետ հոգևորականների ֆանատիկոսությունն օգտագործելու և իրեն ծառայեցնելու համար։ Այսպես, ֆրանսիական զինվորներին նա ասում էր, թե պետք է կռվել մամլյուկների դեմ, որովհետև նրանք նախադասում են անգլիական առևտուրը և գնում են անգլիական ապրանքներ, մինչդեռ Եգիպտոսի ազգաբնակության ուղղած կոչի մեջ ասում էր, թե ինքն եկել է ազատելու նրան մամլյուկների լուծից, քանի որ ինքը մամլյուկներից շատ է հարգում աստծուն, նրա մարգարեին և Ղուրանը[1]։ Եվրոպայում անհավատ, հակաեկեղեցական Նապոլեոնը պարծենում է Մեքքայի շերիֆի առաջ, թե իբրև աշխատում է, որ Մեքքայի և Մեդինայի սուրբ մզկիթների եկամուտների արդյունքները լրությամբ հավաքվեն Եգիպտոսում։ Իր դիմումի մեջ նա ասում էր ժողովրդին, թե փշրել է Հռոմի Պապի իշխանությունը հենց այն պատճառով, որ նա շարունակ պատերազմ է քարոզում մահմեդականների դեմ[2]։ Կահիրեի Դիվանին գրած թղթի մեջ նա ասում էր. «Այն նավատորմի մեջ կան ռուսներ, որոնք սարսափի մեջ են պահում մի միակ Աստծուն հավատացողներին, որովհետև իրենց մոլոր վարդապետության հետևելով, հավատում են, թե երեք աստվածներ կան։ Բայց շատ չի անցնի՝ նրանք կտեսնեն, որ աստվածների թիվը չէ, որ ուժ է ստեղծում և կա միայն մի հատ աստված, հաղթության հայր, ողորմած ու գթած, որ մշտապես կռվում է բարիքի համար, խառնելով չարերի ծրագիրները և որ իր իմաստության մեջ վճռել է, որ ես գամ Եգիպտոս՝ նրա կերպարանքը փոփոխելու և մի ավերիչ ռեժիմի փոխարեն կարգի և արդարության ռեժիմ հաստատելու համար»[3]։

Քաղաքակրթված նվաճողականությունը, հազիվ թե կարողանար ավելի հեռուն գնալ ցած տեսակի քծնողության և ստախոսության մեջ։ Այս արհեստի բարձր կատարելագործման նշան էր և այն, որ Նապոլեոնն իր կոչերը, ուղղած իսլամ հոգևորականներին և ժողովրդին սկսում էր «Լա իլա իլ Ալլահ, Մուհամմեդ Ռասուլ Ալլահ», դավանական ձևակերպությամբ, որ ստեղծված էր մահմեդականների ձեռքով մահմեդականների համար։ Այսպիսի արարքներով նա, իհարկե, որոշ տպավորություն թողնում էր, բայց չէ կարելի ասել, թե վերջնականապես խաբեց արևելքցիներին։ Սուլթան Սելիմն իր պետության բաժանման մի գործողություն նկատեց ֆրանսիական հարձակումը Եգիպտոսի վրա և պատերազմ հայտարարեց Ֆրանսիային, այսպիսով միանալով Անգլիային, որ արդեն պատերազմական դրության մեջ էր Ֆրանսիայի հետ։ Թուրքիայի հետ այս պատերազմի մեջ է, իբրև նրա դաշնակից, նաև Ռուսաստանը, որ մոռացել է իր ամբողջ քաղաքական «հավատո հանգանակը» և պատերազմում է Թուրքիայի հողային ամբողջությունը պահպանելու համար։ Այսպես փոփոխական էին դիրքերը արևելյան հարցի ներկայացրած կատակերգության մեջ։ Ռուս-թուրքական նավատորմը հետ է խլում ֆրանսիացիներից գրաված Հոնիական կղզիները, իսկ ֆրանսիական զորքը, Սիրիայի հարավային կողմում հաղթելով թուրքերին, վերցնում է մեծ քանակությամբ գերիներ, բայց որովհետև ինքը փոքրաթիվ էր և չէր կարող պահպանել այդ մեծաքանակ բազմությունը, ուստի Նապոլեոնը անգթորեն կոտորել է տալիս ամենքին և այսպիսով ցույց է տալիս, թե որքան կեղծ ու պատիր էին նրա ցուցադրած սերն ու համակրանքը դեպի իսլամ ժողովուրդը։

Ֆրանսիայի դեմ գործող դաշնակցությունը (Անգլիա, Ռուսաստան, Ավստրիա և Թուրքիա) հաջողություններ ուներ զանազան տեղերում։ Անգլիական ծովակալ Նելսոնը ոչնչացրեց ֆրանսիական նավատորմն Եգիպտոսի ափերում, և այսպիսով ֆրանսիական բանակը կտրվեց մայր հայրենիքից։ Ռուսաց նշանավոր զորավար Սուվորովը հաղթություններ տարավ Իտալիայում և Շվեյցարիայում։ Խախտված էր հեղափոխական կառավարության դիրքը Ֆրանսիայի մեջ։ Այս բոլոր հանգամանքները հարկադրում էին Նապոլեոնին Ֆրանսիա վերադառնալ, թողնելով իր բանակն Եգիպտոսում։ Հաշվի առնելով դաշնակիցների ուժերը, Նապոլեոնն ավելորդ համարեց պատերազմական գործողությունների շարունակումը բոլորի դեմ և սկսեց հաշտության բանակցություններ Ռուսաստանի հետ։ Պավել կայսրը հեշտությամբ ենթարկվեց Նապոլեոնի դիվանագիտական ճարպկության և բաժանվելով իր դաշնակիցներից, միացավ Ֆրանսիային։ Նրան գրավողն այն էր, որ Նապոլեոնը խոստանում էր թույլ Թուրքիայի բաժանումը, այն իսկ Թուրքիայի, որի անձեռնմխելիությունը պաշտպանելու համար ռուսաց ցարը նոր էր պատերազմել Ֆրանսիայի դեմ։ Եվ ահա 1800 թվականին ռուսաց հայտնի պետական գործիչներից մեկը, կոմս Ռաստոպչինը մի մանրամասն զեկուցագիր է ներկայացնում Պավել կայսրին, թե ինչ քաղաքականության պիտի հետևեր Ռուսաստանը, և թե ինչ են պահանջում նրա իսկական շահերը։ Խոսքը վերաբերում էր Արևելյան հարցին, և Ռաստոպչինը պերճորեն ապացուցում էր, թե պետք է համաձայնություն կայացնել մյուս պետությունների հետ և բաժանել Թուրքիան։ Թուրքիայի դրությունը ռուս պետական գործիչը ներկայացնում էր այսպիսի խոսքերով. «Բ. Դուռը, քայքայված իր բոլոր մասերի մեջ, իր անվճռականությամբ խլում է իր կառավարության վերջին ուժերը։ Բոլոր միջոցները, որ նա ձեռք է առնում այժմ, ուրիշ ոչինչ չեն, բայց միայն մի դեղ, որ տալիս են անհուսալի հիվանդին, որին բժիշկները չեն ուզում հայտնել, թե որքան վտանգավոր է նրա դրությունը»[1]։ Ռուսաստանն, ըստ այդ ծրագրի, պիտի ստանար Ռումինիան, Բուլղարիան, Ավստրիան՝ Բոսնիան, Սերբիան և Վալախիան, իսկ Ֆրանսիան՝ Եգիպտոսը, Հունաստանը և Արշիպելագոսի կղզիները։ Այս բաժանմանը մասնակցում էր և Պրուսիան, բայց նա Թուրքիայից չէր հողամասեր ստանում, այլ, իբրև փոխանակություն, իր հարևան երկրներից։

Պավել կայսրը հավանություն տվեց Ռաստոպչինի այս ծրագրին և հրամայեց գործադրության մեջ մտցնել այն։ 1801 թվականի սկզբին դաշնագրություն կնքվեց Ռուսաստանի և Ֆրանսիայի մեջ, որով համաձայնություն էր կայացվում արևելյան քաղաքականության վերաբերմամբ։ Թալեյրանի պես մի ճարտար քաղաքագետի համար դժվար չեղավ իր ձեռքն առնել ռուսական ուժը։ Շոյելով ռուսական ախորժակը Թուրքիայի վերաբերմամբ, նա առաջ ու առաջ ուղղեց ռուսական ուժը Ֆրանսիայի մահացու թշնամի Անգլիայի դեմ։ Ռուսական զորքերն, ըստ այդ համաձայնության, պիտի Միջին Ասիայով իջնեին Հնդկաստան և նվաճեին այդ երկիրը։ Պավելը հրամայեց արշավանքի

---

[1] Christian Cherfils, Bonaparte et l'Islam. Paris, 1912, p. 8.
[2] Ibid., p. 9.
[3] Ibid., p. 23.

[1] С. Жигарев, Русская политика в Восточном вопросе, т. I, Москва, 1896. с. 251.

պատրաստություններ տեսնել։ Կազակ զորքերի մի մասը, որ պիտի առաջապահի դերը կատարեր, ուղարկվեց Օրենբուրգ, որտեղից էլ պիտի սկսվեր արշավանքը։ Բայց այս իսկ միջոցին կայսրն սպանվեց իրեն շրջապատող ազնվականների ձեռքով, որոնք այդ ոճիրով պաշտպանում էին իրենց դասակարգային շահերը։ Ռուս ազնվականության բոլորովին ձեռնտու չէր Անգլիայի հետ պատերազմի բռնվելը։ Անգլիան, դառնալով արդյունաբերական երկիր, դադարում էր գերազանցորեն գյուղատնտեսական երկիր լինելուց։ Նրա ազգաբնակությունը, որ գյուղերից տեղափոխվում էր արդյունագործական կենտրոնները, այլևս չէր կարող սեփական հացով կերակրվել, ուստի սկսվում էր հացահատիկի ներմուծումն օտար երկրներից և գլխավորապես Ռուսաստանից։ Իսկ Ռուսաստանում, ինչպես ճորտատիրական մի երկրում, հողագործությունը գտնվում էր ազնվականության ձեռքին և նրա հարստությունն էր կազմում։ Պատերազմ սկսել Անգլիայի դեմ, կնշանակեր ահագին հարված հասցնել ազնվական դասակարգին, որին այս դեպքում միանում էր և առևտրական դասակարգը. Ռուսաստանն այդ միջոցին անգլիական մի շուկա էր, որ բացի հացից՝ անգլիական արդյունագործության մատակարարում էր նաև հում նյութեր և ընդունում էր Անգլիայից պատրաստի մանած թել։

Տնտեսական հզոր շահերին դիմադրել չկարողացավ և ռուսական ցարի ինքնակալական ամենակարողությունը, նույնիսկ երբ նա գտնվում էր Պավելի նման մի խենթուկ բռնակալի ձեռքին։ Այդ սպանությամբ միայն անգլիական շահերը չէին պաշտպանվում, այլև ահագին Ռուսաստանն ազատվում էր մի ախտավոր ուղեղի վայրենի քմահաճություններից։

Ալեքսանդրը, հաջորդելով իր հորը, իհարկե, լավապես խրատված էր ազնվականների կատարած սպանությունից, որ առանց նրա գիտության չէր տեղի ունեցել։ Սկզբում ուզեց չեզոք դիրք բռնել եվրոպական մեծ մրցությունների վերաբերմամբ, բայց հետո բռնեց Անգլիայի կողմը։ Բացի վերոհիշյալ տնտեսական հանգամանքներից, որոնք շարունակ հրամայողական դիրքի մեջ էին, երիտասարդ ցարին գրավում էին և ուրիշ նկատառումներ, որոնք հատուկ էին նրա հոգեկան կազմվածքին։ Նա իրեն համարում էր մի ազատաբար սկզբունք և այն ամենից առաջ իր երկրի համար, որին կամենում էր տալ սահմանադրական կարգեր։ Դրա հետ միասին նա իր մեջ փայփայում էր մեսիական առաքելության գաղափարը, որ ծագում էր Եվրոպայի այն ժամանակվա դրությունից։ Ազատել եվրոպական ազգերը ֆրանսիական զորական բռնակալություններից, վերականգնել խանգարված հավասարակշռությունը Եվրոպայում և դրա հետևանքով բարձրացնել ռուսական ազդեցությունը միջազգային քաղաքականության մեջ. ահա ինչ մտքեր էին շարժվում նոր ցարի մեջ։ Իր երկրին նա սակայն, ոչինչ չտվեց, և նրա բոլոր խոստումներն ու դիտավորությունները մնացին ցարական խաբեբայության սովորական երևույթներ։ Ինչ վերաբերում էր Եվրոպային, այստեղ Ալեքսանդրը մենակ և ինքնագլուխ դեր կատարել չէր կարող և պիտի հարեր Անգլիային՝ նրա հետ միասին Նապոլեոնի դեմ կռվելու համար։

Ռուսաստանն անմիջապես չէր վտանգված ֆրանսիական աշխարհակալություններից և կարող էր իր շահերն ապահովել չեզոքություն պահպանելու մեջ։ Բայց նրա տնտեսական կախումն Անգլիայից իր հետ բերում էր և քաղաքական կախում։ Կռիվն Անգլիայի և Ֆրանսիայի միջև կյանքի և մահվան հարց էր առաջինի համար։ Եթե նույնիսկ չլիներ Նապոլեոնը, այդ կռիվն, այնուամենայնիվ, անխուսափելի էր։ Կառավարությունների ու կառավարիչների կռիվ չէր այդ, այլ տնտեսական հակադրությունների կռիվ։ Ֆրանսիան ուժեղանում էր իբրև ծովային պետություն, և ահա այս հանգամանքն էր, որ ահ ու երկ-

յուղ էր ազդում Անգլիային։ Անգլիական հռչակավոր պետական գործիչ լորդ Չաթամն ասում էր. «Միակ բանը, որից պիտի վախենա Անգլիան, այդ՝ Ֆրանսիայի ծովային, առևտրական և գաղութային պետություն դառնալն է»[1]։ Այս վախը տիրապետող մնաց Անգլիայում XIX և XX դարերի ընթացքում ուրիշ պետությունների (օր. Ռուսաստանի, Գերմանիայի) նկատմամբ։ Եվ Անգլիան պատերազմների միջոցով էր ոչնչացնում իր գերակշռությանը սպառնացող պետությունների ուժը։

Այսպես ուրեմն, Ֆրանսիայի դեմ պետք էր կռվել ինչպես էլ լինի։ Կռիվը ահավոր և անհավասար էր, եթե նկատի առնենք, որ Անգլիայի դեմ կանգնածը սովորական Ֆրանսիան չէր, Նապոլեոնյան Ֆրանսիան էր։ Ուստի Անգլիային մնում էր խփել Նապոլեոնին ոչ այնքան իր զենքով, այլ իր ոսկով։ Նա պարզապես գնում էր եվրոպական ցամաքային պետությունները, նրանցից կազմում էր դաշնակցություններ (կոալիցիաներ) և ուղարկում էր նրանց Նապոլեոնի դեմ։ Ալեքսանդրն էլ մտավ այդ դրության մեջ, և Ռուսաստանը Անգլիայից իր ստացած ոսկու փոխարեն, իր անխոս ստրուկ գյուղի ազգաբնակությանն ուղարկում էր մեռնելու Եվրոպայի դաշտերում Անգլիայի շահերը փրկելու համար։ Բայց Անգլիան ու Ռուսաստանն էլ ունեին հակադիր շահեր։ Այս Թուրքիան էր։ Ռուսաստանն ուզում էր հոշոտել Թուրքիան, իսկ Անգլիան ուժեղ կերպով պաշտպանում էր նրա հողային ամբողջությունը։ Այս հակառակությունը, սակայն, առայժմ մոռացվում էր՝ հականապոլեոնական կոալիցիաները չխանգարելու համար։

Իսկ Նապոլեոնն, ընդհակառակն, Թուրքական հարցն էր շահագործում Ռուսաստանն իր կողմը որսալու համար։ Այդ միջոցին նա արդեն Ֆրանսիայի իսկական կառավարիչն էր «առաջին կոնսուլ» տիտղոսով և գործի էր դնում իր դիվանագիտական ամբողջ ճարպկությունը Ալեքսանդրին իրեն մոտեցնելու համար, լավ զգալով թե որքան խոշոր նշանակություն պիտի ունենա Ռուսաստանի պես մի մեծ և ուժեղ պետության թշնամությունը Ֆրանսիայի դեմ։ Փարիզի ռուսաց դեսպանին նա աշխատում էր հավատացնել, թե Ռուսաստանի դեմ Ֆրանսիան թշնամական դիտավորություններ ամենևին չունի, թե Ռուսաստանի շահն է բարեկամ լինել Ֆրանսիայի հետ։ Եվ իբրև ապացույց՝ առաջ էր քաշում դիվանագիտական հին ձեռնածությունը՝ Թուրքիայի բաժանումը։ «Թուրքական կայսրությունն,— ասում էր նա դեսպան Մարկովին,— պատրաստ է փլվել, և այս դեպքում հարևան պետությունները, Ռուսաստանը և Ավստրիան, բնականորեն կկամենան ժառանգել նրա փլատակները. իմ կողմից ես ոչինչ չունեմ այդ բանի դեմ, եթե միայն Ֆրանսիային կտրվի շահավետ բաժին»[2]։ Սակայն Ալեքսանդրը ոչ միայն մերժեց այդ առաջարկը, այլև առժամն Թուրքիայի անձեռնմխելիության պաշտպան հանդիսացավ և Նապոլեոնի այդ խոսքերը հաղորդեց սուլթան Սելիմին։ Մենք արդեն գիտենք, որ գոյություն ուներ ռուս-թուրքական զինակցություն։ Հարաբերությունները երկու պետությունների մեջ սերտ բարեկամական էին, ռուսական դեսպանը տիրապետում էր Կ. Պոլսում, և նրան ամեն կերպ աջակցում էր անգլիական դեսպանը։ Երկուսն էլ եռանդով աշխատում էին, որ Թուրքիան հեռու մնա Ֆրանսիայից։ Ռուսաստանի համար չափազանց նպաստավոր դրություն էր ստեղծվել։ Նոր կնքված մի դաշնագրությամբ Ռուսաստանը ճանաչվում էր Թուրքիայում ապրող քրիստոնյաների հովանավոր և իրավունք էր ստանում իր

[1] П. Гальберштадт, Внешняя политика России в царствование Александра I. (Տե՛ս Сборник «Три Веха», т. V, Москва, 1913, с. 181).

[2] Ibid., c. 185.

պատերազմական նավերն անց կացնել նեղուցներով և հանել Միջերկրական ծով։

Ռուսաց քաղաքականության այս հաջողություններն անհանգստություն էին պատճառում Նապոլեոնին, և նա այժմ սկսեց սուլթանին որսալ իր կողմը։ Բայց սկզբում անհաջող էին նրա փորձերը։ 1804 թվականին նա իրեն հայտարարեց Ֆրանսիայի կայսր։ Եվ երբ հատուկ դեսպանության միջոցով այս մասին նա հայտնեց սուլթանին, Սելիմը հետևելով Ալեքսանդրի օրինակին, հրաժարվեց ճանաչել նրան Ֆրանսիայի կայսր։ Գրգռված Նապոլեոնը ետ կանչեց իր ուղարկած հատուկ դեսպանությունը և ուղարկեց Սելիմին մի սպառնական նամակ, որի մեջ ասում էր.

«Այն միջոցին, երբ ես ամեն տեսակ հարգանքներ և պատիվներ եմ անում ձեզ, ինչո՞ւ համար դուք հրաժարվում եք ճանաչել իմ իրավունքները։ Ինչո՞ւ համար եք համբերությամբ տանում Ռուսաստանի արարքները։ Նրա զորքը Կորֆու կղզում այժմ հասնում է 15.000 հոգու։ Ի՞նչ նպատակով է նա այնտեղ գտնվում։ Ռուսական նավատորմը հաճախ անցնում է ձեր մայրաքաղաքի առջևով, և Ռուսաստանը չէ թաքնում իր դիտավորությունը նվաճելու հույներին։ Համապատասխանո՞ւմ է ձեր օգուտներին դրա վրա ուշադրություն չդարձնելը և ինձ հակառակ գործելը։ Եթե ես չիմանայի Ռուսաստանի իսկական նպատակը, չէի խոսի ձեզ հետ անկեղծորեն։ Ձեր մինիստրները Ռուսաստանին անձնատուր եղան։ Զգուշացնում եմ ձեզ, որ եթե այսուհետև էլ դուք հավատաք ռուսների գայթակղեցուցիչ խոսքերին և կմերժեք ինձ այն օգուտները, որ վայելել է Ֆրանսիան ձեզ հետ հին ժամանակներից, պիտի իմ մեջ տեսնեք ձեր թշնամուն։

Դիվանը հոգս չէ անում Կահիրեի, Դամասկոսի, Մեքքայի և Մեդինայի մեջ տեղի ունեցածների մասին, և մինչդեռ ռուսները նվաճում են Պարսկաստանը, մի բան, որի հետևանքները պիտի ընկնեն ձեզ վրա, ձեր մինիստրները մինչև իսկ չեն հիշեցնում ձեզ այս մասին և գործում են ընդդեմ ինձ։ Ձեր արքունիքում ես չունեմ և ոչ մի կողմնակից մարդ, ուստի վճռեցի գրել ձեզ ուղղակի, համոզելով ձեզ հավատալ Ֆրանսիային, որ ձեր բնական դաշնակիցն է, թե չէ՝ դուք կենթարկվեք վտանգի, որի մասին ես նախազգուշացրի ձեզ։ Ես գիտեմ, թե մինչև որ աստիճան են տարածվում Ռուսաստանի դավադրական մտքերը ձեր դեմ։ Ձեր հպատակների կեսը նրա հետ մի հավատ է դավանում և անձնատուր է եղած նրան։ Յոթը կղզիների[1] վրա դուք այլևս հպատակներ չունեք։ Այնտեղ բոլոր առևտրական նավերի վրա ռուսական դրոշակ է։ Մինչև իսկ ձեր մինիստրները Կորֆու կղզեցիներին հարգում են ինչպես ռուսների։ Ձեր խոհականությունից չեն կարող թաքնվել Դիվանի այս արարքները։ Լինելով ձեր դաշնակիցը, Ռուսաստանը կնքել է անջատ հաշտություն։ Երբ բանը վերաբերում է իր օգուտներին, Պետերբուրգի արքունիքը ուշադրություն չէ դարձնում Բ. Դռան օգուտների վրա և այն պարտավորությունների վրա, որ դնում է նրա վրա ձեզ հետ կապված դաշնագիրը։ Այսուհետև ձեր հարաբերությունները կախված են իմ՝ ձեզանից սպասվող պատասխանի անկեղծության մեծությունից և փոքրությունից։ Եթե ուզում եք խզել հարաբերությունները Ֆրանսիայի հետ, ես չպիտի ափսոսամ այն հետևանքների վրա, որոնք կառաջանան այս բանից։ Գնացեք ձեր նախորդների, Սելիմ և Մուսթաֆա սուլթանների հետքերով»[2]։

[1] Այսպես էր կոչվում այն հանրապետությունը, որ կազմված էր Հոնիական կղզիներից, որոնք պատկանում էին Թուրքիային, բայց ֆրանսիացիներից ետ խլելուց հետո դրվեցին Ռուսաստանի հովանավորության տակ։

[2] **Н. Дубровин,** V, с. 101—103.

Սելիմը, սակայն, չվախեց այս սպառնալիքներից և նամակի պատճենն ուղարկեց իր դաշնակից Ալեքսանդրին։ Ցարը գրեց սուլթանին մի մտերմական նամակ, ուր հավատացնում էր նրան, թե ինքն է Թուրքիայի իսկական անկեղծ բարեկամը, թե Ռուսաստանը ոչ մի վատ դիտավորություն չունի իր դաշնակցի վերաբերմամբ։ «Ձերդ մեծություն,— գրում էր ցարը,— չեք կարող չհամաձայնել, որ եթե Ռուսաստանը աչք դրած լիներ Օսմանյան կայսրության նահանգների վրա, ֆրանսիական հեղափոխության ժամանակից նա շատ դեպքեր ուներ իր դիտավորությունները ի կատար ածելու համար»։ Ալեքսանդրը հավատացնում էր մինչև իսկ, թե իր տատը, Եկատերինա Բ իր թագավորության վերջում փոխել էր իր մտածողության եղանակը Թուրքիայի վերաբերմամբ և հետևում էր այն սիստեմին, որին հետևում է այժմ ինքը Ալեքսանդրը։

Ո՞ւմ պիտի, վերջիվերջո, հարեր Սելիմը։ Այս հարցը լուծում էր 1805 թվականը, երբ հակաֆրանսիական կոալիցիան (Անգլիա, Ռուսաստան, Ավստրիա) հարձակողական պատերազմի մեջ մտավ։ Նրան վիճակվում էր մի խոշոր հաղթություն ծովի վրա։ Հոկտեմբերի 21-ին անգլիական նավատորմը ծովակալ Նելսոնի հրամանատարությամբ հարձակվեց ֆրանսիական նավատորմի վրա Տրաֆալգար հրվանդանի մոտ և ոչնչացրեց նրան։ Բայց դրա փոխարեն Նապոլեոնը տարավ ցամաքային երկու մեծ և փառավոր հաղթություններ, որոնք ավելի ևս հռչակեցին նրա անունը։ Հոկտեմբերի 19-ին նա ավստրիական բանակն էր ոչնչացնում Ուլմի մոտ և հաղթանակով մտնում էր Վիեննա, իսկ դեկտեմբերի 2-ին Աուստերլիցի մոտ ռուսական բանակն էր ահավոր պարտության մատնվում, որից հետո, այլևս չկարողանալով շարունակել պատերազմը, վերադարձավ Ռուսաստան։ Ալեքսանդրը, սակայն, սուրը պատյանի մեջ չդրեց։ Արագ կազմակերպվեց մի նոր կոալիցիա, որի մեջ այս անգամ մտնում էր Պրուսիան։ Պատերազմական բեմը փոխադրվում էր Գերմանիա։

Այս զարմանալի հաջողությունները շատ խոր տպավորություն գործեցին Թուրք կառավարության վրա և Սելիմը, որ չէր հավատում Նապոլեոնին և ռուսաց կայսրի հետ էր ուզում ավելի ևս սրտագին հարաբերություններ մշակել, ստիպված էր խոնարհվել ուժի առաջ։ Աուստերլիցի մեծ հաղթությունը ցույց տվեց Բ. Դռան, որ ոչինչ չէ կարելի անել մի մարդու դեմ, որ կարողացավ ջարդել երկու մեծ պետությունների միացած ուժը։ Սելիմն շտապեց բարեկամական հարաբերություններ սկսել Ֆրանսիայի հետ։ Նա ճանաչեց Նապոլեոնի կայսրությունը և Թուրքիայի դեսպանություն հաստատեց Փարիզում։ Նապոլեոնն ուրախ էր, այդպես եղավ և իր ձեռքն առավ Թուրքիան, Ռուսաստանի դեմ իբրև գործիք գործածելու համար։ Ռուս-թուրքական հարաբերությունները սկսեցին վատանալ արագորեն, այնպես որ պատերազմն անխուսափելի էր դառնում երկու՝ դեռ նոր իրար հետ դաշնակցությամբ կապված պետությունների մեջ։

Ռուսաց կառավարությունը, կամենալով վաղօրոք պատրաստվել թուրքական պատերազմի համար, հրահանգներ էր տալիս Կովկասի կառավարչապետ կոմս Գուդովիչին, որ սա աշխատե վերջ դնել այդ միջոցին շարունակվող ռուս-պարսկական պատերազմին և հաշտություն կնքե Պարսկաստանի հետ, որպեսզի կարելի լինի Կովկասում գործող ռուսական բանակն ամբողջովին ուղղել Թուրքիայի դեմ։

Այս անհրաժեշտությունն ստիպողական էր դառնում մանավանդ 1806 թվականի ամառվա վերջից, երբ Կ. Պոլսում երևան էր գալիս մի նոր քաղաքական գործիչ՝ ֆրանսիական մի գեներալ, Սեբաստիանի, մի շատ եռանդոտ և գործունյա մարդ, ուժեղացած Նապոլեոնի լիազորություններով իբրև

Նրա արտակարգ դեսպանը Թուրքաց մայրաքաղաքում։ Սեբաստիանին եկել էր Կ. Պոլիս՝ տատանվող սուլթանին միանգամից իր ձեռքն առնելու և թուրքական քաղաքականության նոր ընթացք տալու համար։ Խստապահանջ էր Նորապսակ կայսրը, կտրուկ ու անողոք, պահանջկոտ էին նրա ցանկությունները։ Այստեղ, Կ. Պոլսում, որ մի շուկա էր դիվանագիտական առուծախի համար, Նապոլեոնն ուզում էր մի նոր Աուստերլից շահել ջախջախելով այս անգամ ոչ թե ռուսական զորքերը, այլ ռուսական ամբողջ քաղաքականությունը։ Ինքն իր ձեռքով գրում էր լակոնական խիստ հրահանգներ իր արտակարգ դեսպանին, բաղկացած ութ կետերից։ Առաջ ու առաջ նա հանձնարարում էր «ներշնչել վստահություն և ապահովություն Բ. Դռան—Ֆրանսիան միայն նրա ուժեղացումն է ուզում»։ Երկրորդ կետը. «Եռյակ նիզակակցություն ինձանից, Բ. Դռնից և Պարսկաստանից ընդդեմ Ռուսաստանի։ Արգելում էր բարեկամական հարաբերություններ ունենալ Կ. Պոլսի ռուսական դեսպանության հետ։ Յոթերորդ կետը պահանջում էր. «Փակել Բոսֆորը Ռուսաստանի առջև, փակել բոլոր նավահանգիստները, վերադարձնել Բ. Դռան իր միահեծան իշխանությունը Մոլդավիայում և Վալախիայում»։ Իսկ ութերորդ և վերջին կետում Նապոլեոնն իր ուխտն էր ուխտում. «Ես ամենևին չեմ ուզում բաժանել Կ. Պոլսի կայսրությունը. եթե ինձ կամենան առաջարկել նրա երեք քառորդ մասն անգամ, ես չեմ ուզում բոլորովին։ Ես ուզում եմ ամրացնել և հաստատել այս մեծ կայսրությունը և դարձնել նրան Ռուսաստանին դիմադրող»[1]։

Օգոստոսի սկզբին Կ. Պոլիս մտնելով, Սեբաստիանին մի երկու-երեք շաբաթվա ընթացքում կատար էր ածում Նապոլեոնի հրահանգների գլխավոր մասերը և հատկապես այն, որ բովանդակված էր յոթերորդ կետի մեջ, այնպես որ հարաբերությունները Թուրքիայի և Ռուսաստանի մեջ միանգամից ստանում էին շատ սուր կերպարանք։ Հարցը վերաբերում էր Թուրքիային պատկանող և Ռուսաստանի սահմանակից երկու դանուբյան երկրներին, Մոլդավիային և Վալախիային, որոնք այսօր միացած են Ռումինիա անվան տակ։ 1802 թ. կայացած ռուս-թուրքական համաձայնությամբ սուլթանը պարտավորվել էր այս երկու երկրների համար կառավարիչներ (հոսպոդար) նշանակել Ռուսաստանի համաձայնությամբ և յոթը տարի ժամանակով։ Այդ համաձայնության հիման վրա նշանակված երկու հոսպոդարները, երկուսն էլ հույն իշխաններ, Ռուսաստանին նվիրված մարդիկ էին և երևան էին գալիս իբրև ռուսական ազդեցիկ գործակալներ։ Նապոլեոնն ահա այս բանը չէր կարող տանել և պահանջում էր, որ սուլթանի անսահման և միահեծան իշխանության ենթարկվեն Մոլդավիան և Վալախիան։ Սուլթան Սելիմը, ենթարկվելով այդ պահանջին, արձակում էր երկու ռուսասեր հոսպոդարներին պաշտոնից, թեև նրանք դեռ երկու տարի ժամանակ ունեին, և նշանակում էր երկու նորերին առանց ռուսաց կառավարության գիտության։ Ռուսաստանն այդ համարեց իր իրավունքների և դաշնագրերի խախտում, և նրա դեսպան Իտալինսկին Կ. Պոլսում սկսեց, անգլիական դեսպանի աջակցությամբ, խիստ պահանջներ անել, որ հեռացված հոսպոդարները վերահաստատվեն իրենց պաշտոնների մեջ՝ սպառնալով, հակառակ դեպքում, հարաբերությունների խզում և պատերազմ։ Թուրք կառավարությունն այդ եռանդուն պահանջի ազդեցության տակ առաջին նվագ վախեց և կատարեց ռուսական ներկայացուցչի դրած պայմանները, հրաման արձակելով, որ հրաժարեցված հոսպոդարները նորից պաշտոնի կոչվեն։ Բայց գեներալ Սեբաստիանին կարողացավ

[1] Ed. Driault, La Politique orientale de Napoleon, Paris, 1904, p. 60.

տանձին ունկնդրություն ստանալ սուլթան Սելիմից և համոզեց նրան մնալ առաջին վճռի վրա։ Այսպիսով հաղթում էր ֆրանսիական քաղաքականությունը։ Թուրք կառավարությունը, որ համարվում էր ռուսասեր, հեռացվում էր պաշտոնավարությունից։ Ռուսաստանը պատասխանում էր այս անցուդարձին մտցնելով իր զորքերը Մոլդավիա և Վալախիա, ուր նրանք գրավում էին բոլոր աչքի ընկնող վայրերը։ Այս արդեն ռուս-թուրքական պատերազմի առաջին ազդանշանն էր։

Բ. Գեներալ Սեբաստիանին սուլթանին և թուրք պետական բարձր պաշտոնյաներին ներշնչում էր հակառուսական սաստիկ թշնամական զգացմունքներ, բացատրելով, թե Թուրքիայի բոլոր վնասները ռուսական անհաշտ քաղաքականությունից են առաջանում, և թե Ռուսաստանը շարունակ ոչնչացում է նյութում Թուրքիային։ Ամենամեծ ուժն այս ուղղությամբ ֆրանսիական դեսպանին մատակարարում էին այս խոշոր դեպքերը, որոնք հենց նույն այդ 1806 թվին տեղի ունեին Սերբիայում, ուր քրիստոնյա ռայան ապստամբել էր օսմանյան տիրապետության դեմ և հաղթական պատերազմներ էր մղում։ Սեբաստիանիի համար ոչինչ դժվարություն չէր հավատացնել թուրքերին, թե ապստամբությունը ներշնչվում և հովանավորվում է ռուսների կողմից, ինչպես այս պահանջում է նրանց կրոնակցությունն ու ցեղակցությունը սերբերի հետ։ Մինչդեռ Նապոլեոնն իր գրած հրահանգների մեջ հաստատապես ասել էր, թե ինքը ոչ մի կերպ չի պաշտպանի ապստամբությունները։ Թուրք կառավարությունն արդեն ինքն էլ հավատացած էր, որ այդպես է Ռուսաստանի դերը, և ֆրանսիական դեսպանի հավաստիացումները նրան պիտի այն խոր համոզումը թելադրեին, թե ճիշտ որ Ֆրանսիան է միայն, որ այդ րոպեին կարող է փրկել Թուրքիան։

Իսկ փրկիչներ որոնելն այժմ ավելի քան անհրաժեշտ էր։ Տասնիններորդ դարի սկզբից ևեթ Թուրքիան մտնում էր իր պատմության մի նոր շրջանը, որ բերում էր նրան քայքայում և անդամահատում, գործողություններ, որոնց կատարողները պիտի լինեին հենց Թուրքիայի արհամարհված, ստրկացած հպատակները, քրիստոնյա ռայաները։

Մի ահագին շարժում էր այս, որ, ինչպես տեսանք այս գործի նախընթաց հատորի մեջ, դանդաղորեն սաղմնավորվում և զարգացման աստիճաններն էր թևակոխում 16—17-րդ դարերից սկսած՝ զանազան նպաստավոր քաղաքական և մշակութային հանգամանքների ազդեցության տակ։ Ռայայի այս շարժումը, հետզհետե ծավալուն ընդարձակումն ստանալով իր չափերի և տարածության մեջ, դեռ 18-րդ դարի սկզբից առնում էր իր մեջ և հայ ժողովրդի կյանքը և դառնում էր նրա պատմության գլխավոր բովանդակությունը։ Ուստի մեզ հարկավոր է միշտ աչքի առջև ունենալ թուրքահպատակ ռայաների շարժման փոփոխություններն ու անցած ճանապարհները իբրև պատմական շրջանակներ, որոնց մեջ դետեղվում է և հայկական շարժումը։

Թուրք պետությունը, Ասիայի հողի վրա ամրապնդվելուց և ուժեղանալուց հետո, իր երիտասարդ և վայրենի նվաճողական կարողության ամբողջ թափով հարձակվեց Եվրոպայի վրա և նրանից կորզեց այն մեծ թերակղզին, որ կոչվում է Բալկանյան, և որի սահմանը հյուսիսում կազմում է Դանուբ մեծ գետը, հարավում՝ Հունաստանը, արևմուտքում՝ Ադրիական և արևելքում՝ Սև ծովերը։ Այս ընդարձակ տարածության վրա կային մի խումբ պետություններ. հարավում Բյուզանդիան էր, հունական ցեղի քաղաքական կազմակերպությունը, իսկ հյուսիսային մասերում գլխավորապես սլավոնական ցեղերը, որոնց մեջ գլխավորներն էին սերբերը և բուլղարները։ Բոլորին էլ նվաճեց օսմանյան սուրը։ Բոլորն էլ վերածվեցին ռայայի դրության, որից

դուրս գալու համար ազգաբնակչության շատ խոշոր հատվածներ մահմեդականություն ընդունեցին և այսպիսով պահպանեցին հին ավատական հողատիրության վրա հիմնված հասարակական կարգը։

Օսմանյան նվաճողականությունը փլվում, պարծենում էր իր եվրոպական հողերով, իր Բալկանյան թերակղզով։ Բայց հենց այս թերակղզին էլ նրա մեծ պետության խորտակողը պիտի դառնար։ Այս մի դարավոր անդուլ աշխատանք էր, որ կատարում էին ոչ թե մահմեդականություն ընդունած տարրերը, որոնք արտոնություններ էին վայելում, հողային ազնվականության խոշոր մասն էին կազմում, այլ ռայաները, որոնց տիրողները հարստահարում և կեղեքում էին, դարձնելով նրանց հարստության աղբյուր իրենց համար։ Այս արհամարհված բազմությունն էր, որ իր դժբախտությունը դարձնում էր իր համար ազատագրության դաստիարակիչ։ Ռայան իր անկման մեջ նվիրական ուխտ ուներ՝ կռվելու իրեն կեղեքողների հետ այն խղճուկ միջոցներով, որոնք մնում էին նրա ձեռքում։ Նրա ծոցից դուրս էին գալիս համարձակ մարդիկ, որոնք զենք էին վերցնում, բարձրանում էին սարերը, հյուսում էին անմատչելի ժայռերի վրա, ձորերի կրծքում արծվի բույներ և այդ տեղերից ավազակային հարձակումներ էին գործում, զարնում էին կառավարական պաշտոնյաներին, զինվորներին, հարկահաններին և առհասարակ բոլոր նրանց, որոնք կեղեքում և տանջում էին ժողովուրդը։ Այս մի ժողովրդական դանդաղ ու մանր պատերազմ էր։ Կռվողները, որոնք գործում էին խմբերով, Հունաստանում կոչվում էին կլեֆտներ, իսկ սլավոնական երկրներում հայդուկներ։ Նրանք ժողովրդական հերոսներ էին և նրանց քաջագործությունները երգվում էին ժողովրդական երգերի մեջ։ Այս կազմակերպություններն էլ դառնում էին ժողովրդի մեջ ռազմական ոգի և ազատագրական տրամադրություն դաստիարակողներ ու ամրապնդողներ։

Թուրքական լծից ազատվելու տենչանքը, որ հաղորդվում էր սերնդից սերունդ, իբրև կտակային ավանդ, ամենից առաջ հույների մեջ էր շարժման կերպարանք ընդունում։ Կար մի ահագին բարոյական ուժ, որի վրա կարող էին կռթնել հույները, և այդ այն համակրանքն էր, որ գտնում էին նրանք իբրև հին մեծագործ հելլենական ցեղի՝ մեծ մասամբ կարծեցյալ ժառանգներ։ Վերածնության ժամանակից եվրոպական խոշոր գրական, գիտական գեղարվեստական գործիչների մեջ կազմվում էր մի ջերմեռանդ հելլենասիրություն (ֆիլհելլենիզմ), որի համար կսկծալի մի հանգամանք էր, որ Սոկրատի, Արիստոտելի, Պերիկլեսի և այլ անթիվ մեծ ու պաշտելի անունների թոռները գտնվում են թուրքական գերության մեջ։ Այս հանգամանքն ահագին նշանակություն ունեցավ հույն ժողովրդի ազատագրության մեջ։ Հենվելով արևմտյան ազգերի մեջ տարածված այս բուռն համակրանքի վրա, հույները ամենից առաջ հասան այն եզրակացության, թե կարելի է և պետք է ազատություն ձեռք բերել ընդհանուր ժողովրդական ապստամբության միջոցով։

XVIII դարում էր, որ այս գաղափարը խոր արմատներ էր գցում ոչ միայն հույների, այլև նրանց հյուսիսային սլավոն հարևանների մեջ։ Գլխավոր դեր կատարողը շրջապատող քրիստոնյա պետությունների և գլխավորապես Ռուսաստանի պրոպագանդան էր։ Սկզբում Պետրոս Մեծն էր, որ իր արևելյան հափշտակողական քաղաքականությանը հաջողություն տալու համար ծրագրում էր վերականգնել հունական կայսրությունը, խորտակելով Թուրքիան։ Նրա գործակալները շրջում էին Բալկանյան թերակղզում և ռայաների ականջին շշնջում էին, թե պետք է պատրաստ լինել «անհավատ» թուրքերի դեմ ապստամբելու համար։ Այս միևնույն ծրագիրն ավելի աղմկաշատ ցույցերով և ավելի լայն կազմակերպված պրոպագանդով կրկնում էր Եկատերինա Բ

կայսրուհին։ 1768 թվին սկսվում էր ռուս-թուրքական պատերազմը և ռուսական նավատորմի մի մասը մոտենում էր Պելոպոնես թերակղզու ափին և ռմբակոծում էր մի քաղաք, որ թուրքական բերդ էր։ Այս մի ազդանշան էր հույն ժողովուրդն ապստամբեցնելու համար։ Ապստամբությունը տեղի ունեցավ 1771-ին, բայց ռուսական նավատորմը ոչինչ օգնություն չարավ ապստամբներին, հեռացավ հունական ջրերից, թողնելով ապստամբված ժողովուրդն անհավասար կռվի մեջ։ Թուրքերն իրենց օգնության կանչեցին Ալբանիայի վայրենի մահմեդական ցեղերը, որոնք ահագին քանակությամբ (մինչև 60 հազար հոգի), թափվեցին Հունաստան և անմարդաբնակ դարձրին նրան։ Բայց այս առաջին ապստամբության անհաջողությունը չէր թաղում հունական ազատության գաղափարը։ Ժողովրդի մեջ վերածնության աշխատանք էր կատարվում երկար ժամանակ, մի աշխատանք, որի գլուխ էին կանգնած հունական հարուստ գաղութները և որ արտահայտվում էր լուսավորության գործի, տնտեսական զարգացման ծավալման մեջ։ Այսպես հույն ժողովուրդը պատրաստվում էր մի փառավոր ասպարեզի, երբ պիտի նվաճեր իր ազգային ազատությունը։

Նույն Եկատերինայի ժամանակ տեղի ունեցած թե այս և թե երկրորդ ռուս-թուրքական պատերազմները խոշոր դաստիարակչական նշանակություն ունեցան և բուլղարների համար։ Այս ժողովուրդը դարերից ի վեր, իր անկախությունը կորցնելուց հետո, մատնված էր ռայայի թշվառ դրության և թվում էր, թե միանգամայն մեռած էր իբրև ազգություն։ Ռուս-թուրքական պատերազմները զարթեցնում են այդ դիակի մեջ վերածնության, ազատության զգացմունքներ։ Շատ բուլղարներ մտնում են ռուսական զորքերի մեջ, սովորում են կռվել թուրքերի դեմ։ Եվ որովհետև 1788—1792 թվականների ռուս-թուրքական պատերազմը վերջանում էր մի հաշտությամբ, որ դարձյալ Թուրքիայի տիրապետության տակ էր թողնում Բուլղարիան, ուստի շատերն անցնում են Դանուբի մյուս ափը, հիմնում են, մանավանդ Ռուսաստանում, բուլղարական գաղութները, որոնք հարաբերություններ են պահպանում մայր երկրի հետ և ազգային ազատագրման գաղափարի արծարծողներ են հանդիսանում։ Բայց միայն ռուսական պրոպագանդան ու պատերազմները չէին ազգային զգացմունք զարթեցնում Բալկանյան թերակղզու սլավոն ռայայի մեջ։ Այս կողմից նշանավոր դեր կատարեց և մի մահմեդական Բոսնիացի, Փազվան Օղլու անունով, որ 18-րդ դարի վերջին տարիներում ապստամբեց թուրք կառավարության դեմ, հավաքելով իր դրոշակի տակ 16 հազարանոց մի բանակ, որ բաղկացած էր թե մահմեդականներից և թե քրիստոնյաներից, գլխավորապես բուլղարներից։

Իր ձեռքն առնելով Դանուբ գետի վրա շինված Վիդդին բերդը, Փազվան Օղլուն նվաճեց ամբողջ Բուլղարիան և Արևելյան Սերբիան և նպատակ ուներ գնալ Կ. Պոլսի վրա, գահընկեց անել թուրք սուլթանին և վերականգնել Բյուզանդական կայսրությունը մի բուլղար թագավորի գայիսոնի տակ։ Ջարդելով և փախուստի դարձնելով օսմանյան բանակը, նա գնաց մինչև Ադրիանուպոլիս, բայց այդտեղ նրան կանգնեցրեց սուլթան Սելիմը ոչ թե զենքի ուժով, այլ ընծաներով և հաշտությամբ։ Փազվան Օղլուի շարժումը մեռնում է նրա հետ 1807-ին։ Եվ այնուհետև Բուլղարիան նորից ընկղմվում էր ռայայի մահանման դրության մեջ։

Հույներից և բուլղարներից ավելի հաջողակ հանդիսացավ այն փոքրիկ ու ժայռոտ սլավոնական երկիրը, որ կոչվում էր Չեռնոգորիա (Կարադաղ), որ պահպանել էր իր հին ավատական կազմակերպությունը և գտնվում էր մի եպիսկոպոսի իշխանության տակ, որ միաժամանակ նաև այդ լեռնաստանի

աշխարհական տերն էր։ Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Չեռնոգորիան զենք բարձրացրեց և ստիպեց, որ Թուրքիան ճանաչի իր անկախությունը։ Այնուհետև էլ փոքրիկ և քաջարի լեռնաստանը Թուրքիայի դեմ անհաշտ թշնամություն էր ցուցադրում և սուլթան Սելիմը, նրան հանգստացնելու համար, ասում էր իր հրովարտակի մեջ, թե Չեռնոգորիան երբեք էլ Թուրքիայի հպատակ չէր եղած։ Չեռնոգորիայի հարևանությամբ, ծովափնյա Դալմաթիայում ապրում էին, դարձյալ թուրքական ռայայի դրության մեջ, սլավոն ցեղեր։ Այստեղ, Նապոլեոնի՝ Իտալիայում տարած հաղթությունների հետևանքով, ֆրանսիական ազդեցությունն էր հաստատված, որ պահպանում էին երկիրը գրաված ֆրանսիական զորքերը։ Ֆրանսիայի կառավարական կարգերը դաստիարակ էին հանդիսանում թուրքական լծի տակ ճնշված քրիստոնյա ազգաբնակության համար, զարթեցնելով նրա մեջ և նրա միջոցով նաև հարևան երկրների սլավոն ազգաբնակության մեջ սեր դեպի ազատություն։

Բոլոր այս երկրների՝ Չեռնոգորիայի, Դալմաթիայի, Բոսնիայի, Հերցոգովինայի սլավոնները պատկանում էին սերբ ցեղին։ Բուն Սերբիան հանդիսանում էր այս երկրների սիրտն ու հոգին, որ, սակայն, դարերից ի վեր Բուլղարիայի վիճակակիցն էր, ենթարկված լինելով թուրքական վայրենի բռնակալության։ Երկիրը բաժանված էր փաշալըգների: Վարչությունն ամբողջովին մահմեդական էր, փաշան կառավարում էր անսահման իշխանությամբ։ Դատաստանական իշխանությունը պատկանում էր մահմեդական կադիներին: Ազգաբնակության այն տարրերը, որոնք մահմեդականություն էին ընդունել, կենտրոնացնում էին իրենց ձեռքում ամբողջ հողատիրությունը։ Այդ մի ամբողջ զինվորական դասակարգ էր, որ կոչվում էր սպահի: Նրանից դուրս կար և մի երկրորդ, դարձյալ տիրապետող, զինվորական դասակարգ, որ կոչվում էր դահիա և բաղկացած էր երկիրը գրավող օսմանյան զորքերի (ենիչերիների) ներկայացուցիչներից։ Ազգաբնակության մեծագույն մասը մնացել էր քրիստոնյա, բայց իբրև քրիստոնյա էլ ենթարկված էր օտար եկեղեցական տիրողների վայրենի կամայականություններին։ Եպիսկոպոսներ սերբ ժողովրդի համար նշանակում էր թուրք կառավարությունը հույներից։ Եվ ահա այդ կրոնական իշխաններն էլ սերբ ռայայի մեջ հանդես էին գալիս իբրև մի-մի փաշա, կողոպտում էին իրենց հոտը։ Նրանք շրջում էին ձիով, զինված էին սրով, շրջապատված մահմեդական թիկնապահ զինվորներով։ Սերբ ծագում ունեցող քահանաներն այդ կատաղի մարդկանց կատարյալ ստրուկներն էին։ Եպիսկոպոսը նրանց բանտարկում էր, ծեծի էր ենթարկում, իսկ երբ նրանք մեռնում էին, նա շտապում էր ստանալ նրանց ժառանգության մեծ մասը[1]։

Երբ այսպես էին Քրիստոսի հաջորդները, հասկանալի է, թե ինչ պիտի լինեին Մահմեդի կարգերով իշխողները։ Քրիստոնյա ռայան կարծես ստեղծված էր միայն իրենից բարձր կանգնած հոգևոր և աշխարհական բռնավորների համար հող մշակել, հարստության աղբյուր դառնալ, ինքը մնալով միշտ զրկված ու կեղեքված։ Սերբ ռայան էլ թվում էր միանգամայն քաղաքականապես մեռած։ Բայց նա իր կյանքի խորքերում կարողացել էր պահպանել իր հին ազգային կազմակերպության հետքերը։ Գյուղերում գոյություն էր պահպանել համայնական ինքնավարության մի նահապետական ձև։ Ժողովուրդն ընտրում էր համայնական վարչություն, որ կոչվում էր կմետ: Այդ վարչությունների գլխավոր էր ընտրվում համայնքի անդամներից մեկն ու մեկը, որ կոչվում էր կնեզ (կնյազ, իշխան)։ Այս հին փոքրիկ կազմակերպությունները, որոնք համարվում էին թուրք կառավարության կողմից

[1] Э. Лавис и А. Рамбо, История XIX века, т. II, Москва, 1905, с. 115.

իբրև անկարևոր հիմնարկություններ, սերբերի համար ահագին դեր կատարեցին ազգային-ազատագրական շարժման ժամանակ։

Բացի այս համայնական մանր կազմակերպություններից՝ սերբերի ազգային կյանքի մեջ շատ խոշոր դեր կատարում էին և սերբական հին վանքերը, որոնք գտնվում էին անմատչելի վայրերում, զինված էին ինքնապաշտպանության համար ոչ միայն ամրություններով և զենքերով, այլև սուլթանական ֆերմաններով և իրենց այս դիրքն օգտագործում էին ազգային հին մշակույթը պահպանելու, ժողովրդի մեջ գրագիտություն տարածելու համար։ Մանավանդ խոշոր էր այն նշանակությունը, որ այդ վանքերից շատերը հայտնի ուխտատեղիներ էին և գրավում էին դեպի իրենց ուխտավորների մեծ բազմություններ զանազան կողմերից։ Այսպիսով ստեղծվում էին համազգային ժամադրավայրեր, ուր զանազան կողմերից եկած ամբոխը կատարում էր տոներ, ուտում, խմում էր, պարում էր, առևտուր էր անում, հարսանիքներ կատարում, մտքեր ու դատողություններ էր փոխանակում իր մեջ։ Այդ տոնախմբությունների զարդերը ժողովրդական գուսաններն էին, որոնք երգում էին նախնիքների փառքը, քաջագործությունները, և նրանց լսում էր ժողովուրդը մեծ հետաքրքրությամբ։ Բայց միայն վաղուց անցած-գնացածը չէր ոգևորում երգիչներին։ Կային և ժամանակակից ժողովրդական հերոսներ, որոնք անդադար կռիվ էին մղում թշնամիների դեմ։ Դրանք հայդուկներն էին, լեռների ծերպերում, անտառների մթության մեջ բույն դրած քաջերը, որոնք հարձակվում էին ժողովրդի նեղիչների վրա, կողոպտում էին նրանց։ Ժողովրդական երգը մեկիկ-մեկիկ նկարագրում էր, թե ինչպես է հայդուկը ծունկ չոքում, ինչպես է ուղղում հրացանը, ինչպես է թնդում հարվածը և այլն[1]։

Արտաքին հանգամանքներն էլ դրսից էին գալիս սերբ ժողովուրդը դաստիարակելու համար։ Այստեղ ահագին դեր կատարում էր Ավստրիան, այն պետությունը, որ ոչ միայն կանգնեցրեց օսմանյան թուրքերի հաղթական առաջխաղացումը դեպի Միջին Եվրոպա, այլև առաջինն էր, որ, միացած Լեհաստանի հետ, ջախջախում էր սուլթանների զինվորական ուժը, ետ էր քշում նրան և անկման դուռն էր հասցնում օսմանյան պետությունը։ Սերբիան այդ պատերազմների դաշտ էր դառնում, սերբերը մտնում էին ավստրիական զորքերի շարքերը, սպայի աստիճանների էին հասնում։ Նրանք մեծ քանակությամբ տեղափոխվում էին Դանուբի մյուս ափը, բնակություն էին հաստատում Հարավային Հունգարիայում, ուր ապրում էին պետական մի այնպիսի ռեժիմի տակ, որ ոչինչ նմանություն չուներ թուրքականին։ Իսկ 18-րդ դարի ավստրո-թուրքական պատերազմների հետևանքով Սերբիայի մի մասը մնում էր Ավստրիայի իշխանության տակ։ Շատ խոշոր նշանակություն ունեցավ մանավանդ այն պատերազմը, որ Ավստրիան Ռուսաստանի հետ սկսեց Թուրքիայի դեմ 1787-ին։ Ավստրիան նվաճեց ամբողջ Սերբիան։ Բայց երեք տարուց հետո (1791-ին) Սիստովոյի դաշնագրով Սերբիան նորից վերադարձվում էր Թուրքիային։ Նորից վերականգնվեց թուրքական հին կարգը, էլի հաստատվեցին փաշաները, կադիները, կալվածատեր սպահիները, ենիչերիները։ Բայց նրանք տեսնում էին, որ ռայան այլևս առաջվանը չէ, որ սրա մեջ կատարվել է մի փոփոխություն։ Եվ թուրքերն անկեղծորեն ասում էին ավստրիական պաշտոնյաներին. «Հարևաններ, հարևաններ, այս ի՞նչ եք արել մեր ռայան»[2]։

[1] Л. Ранкэ, История Сербии, Москва, 1876, с. 79.
[2] Э. Лавис и А. Рамбо, т. II, с. 116.

Այսպես ահա, ռայան ամբողջ Բալկանյան թերակղզում խմորման մեջ էր, իր համար քաղաքական վերածնություն էր պատրաստում։ Իսկ այնտեղ Եվրոպայում մի Նապոլեոն կար, որ իր հաղթությունների պատճառով արդեն պսակվել էր «մեծ» տիտղոսով, բայց ուներ այնքան փոքր հոգի, որ իր և իրեն պաշտող բուրժուազիայի գծի հաշիվներից դրդված՝ թշնամի էր հանդիսանում դարավոր ստրկության գերեզմաններից հարություն առնող ազգերին և աշխատում էր, որ արյունարբու սուլթանականության լուծը անխախտ մնա այդ ազգերի վզին։ Սակայն անասնական դրության հասցված ռայան իմացավ արհամարհել մեծափառ նվաճողին։ Եվ այս արհամարհանքի առաջին օրինակը տալիս էր Սերբիան։

1804 թվականին սկսվում էր սերբերի ապստամբությունը։ Այս մի պատասխան էր Սերբիայում բռնացած ենիչերիների խժդժություններին։ Ենիչերությունն արդեն մի սոսկալի դժբախտություն էր դարձել Թուրքիայի բոլոր կողմերում անխտիր ամբողջ ազգաբնակության համար։ Սերբիայում, ինչպես և ուրիշ տեղերում, ենիչերիները բռնանում էին թե՛ մահմեդականների և թե՛ քրիստոնյաների վրա։ Անդադար գանգատներ էին տեղում Կ. Պոլիս։ Եվ սուլթան Սելիմը սպառնալիքով ուզեց կարգապահություն հաստատել իր անկարգ զինվորների մեջ։ Այս սպառնալիքն այն էր ասում, թե սուլթանը Սերբիա կուղարկեր ենիչերիներին հնազանդեցնելու համար, մի նոր զորք, որ կունենա ուրիշ տեսակ հրամանատարներ։ Այս ինչ զորք պիտի լինի՝ մտածում էին ենիչերիները։ Եվ իրենց մեջ վճռեցին, թե նոր զորքը սերբերից պիտի լինի կազմված, իսկ նոր տեսակի հրամանատարները պիտի լինեին հենց սերբ կնեզները։ Եվ ահա որոշում են կոտորել բոլոր կնեզներին, որպեսզի նրանք զորքի առաջնորդներ չդառնան։

Սկսվում է կոտորածը։ Բայց կնեզներից մի քանիսը կարողանում են փախչել և ծածկվել անտառներում, ուր և կազմակերպում են ժողովրդական ապստամբություն։ Իրենք՝ այդ կնեզները, հարուստ մարդիկ էին։ Կաղնիների մեծամեծ անտառները Սերբիայում առաջացնում էին խոզաբուծություն լայն չափերով, տնտեսության մի ձև, որից փախչելով փախչում էին մահմեդականները և որ այդպիսով միայն գյավուր ռայային էր հատուկ։ Այդ խոզարած իշխանների մեջ առանձնապես աչքի էին ընկնում Սև Գեորգը (Կարա Գիորգի), Միլոշը, Հակոբ Նենադովիչը, որ սպանվում է ենիչերիների ձեռքով։ Բայց նրա տեղը կանգնում է որդին, Մատթեոս քահանա Նենադովիչը։ Նախ և առաջ հավաքվում է սերբական ազգային ժողով (սկուպշչինա), որ սերբ ժողովրդի առաջնորդ է ընտրում Կարա Գիորգիին։ Սա վիթխարի հասակով մի կոշտ ու կոպիտ, հարբեցող, բայց անպարտելի քաջության տեր խոզարած էր և կարողացավ կուռ կազմակերպություն տալ ժողովրդական ապստամբության։ Արգելառիթ հանգամանքներ շատ կային, բայց նրանց դեմ հաջողությամբ մաքառում էին Կարա Գիորգին և նրա ընկերները։ Պետք է փող գտնել, զենքեր ձեռք բերել, ներշնչել ժողովրդից հավաքված մարտիկներին տոկունություն։

Սերբ խոզարածները նուրբ քաղաքագետներ էլ էին։ Սկզբում հայտարարվեց, թե ապստամբությունը սուլթանի դեմ չէ, այլ լոկ ենիչերիների դեմ, որոնք չեն հպատակվում սուլթանին։ Այս պատճառով թուրքական կառավարությունը ոչ միայն չէր հակառակվում ապստամբներին, այլև հովանավորում էր նրանց։ Այսպես քնացնելով կառավարությունը, սերբերն սկսեցին օգնություն որոնել դրսում։ Ամենից առաջ նրանք դիմեցին Նապոլեոնին և մի հատուկ պատգամավորություն ուղարկեցին Փարիզ։ Բայց Նապոլեոնը ոչինչ խոստումներ

չարավ, այլ միայն մի պատվի սուր ուղարկեց Կարա Գիորգիին[1]։ Այն ժամանակ սերբերը դիմեցին ռուսաց կառավարության։ Նենադովիչ քահանան երկու ուրիշ պատգամավորների հետ գնաց Պետերբուրգ։ Ալեքսանդր կայսրն այնտեղ չէր, իսկ կառավարությունը լոկ միայն քաղցր խոսքեր ասաց պատգամավորությանը և 500 ոսկի տվեց նրան։ Զորքով օգնություն անել նա չէր կարող, քանի որ պատերազմ կար Նապոլեոնի պես մի թշնամու դեմ[2]։

Ձեռնթափ մնալով դրսի օգնությունից, սերբերն իրենց հույսը դրին իրենց վրա և հաջողությամբ առաջ տարան իրենց պատերազմական գործողությունները։ Թուրքաց կառավարությունը նոր միայն նկատեց, որ սերբերի ապստամբությունն իր դեմ է ուղղված և ոչ թե լոկ ենիչերիների դեմ։ Սելիմը հրամայում է Նիշի Հաֆիզ փաշային պատերազմական գործողություններ սկսել ապստամբների դեմ։ Հաֆիզ փաշան ուներ 20 հազար մարդ և, սակայն, ստիպված եղավ փախչել Կարա Գիորգիի 10 հազարի առջև։ 1805-ի գարնան երկու կողմից՝ արևմուտքից և հարավից Սերբիա խուժեցին թուրքական երկու խոշոր բանակ։ Արևմտյանը, Բեքիր փաշայի հրամանատարությամբ, բաղկացած էր 30 հազար բոսնիացիներից և հերցեգովինացիներից, որոնք թեև սերբերի ցեղակիցներն էին, բայց պատկանում էին մահմեդական կրոնին. իսկ հարավի բանակը, Իբրահիմ փաշայի հրամանատարությամբ, ուներ իր մեջ 40 հազար ալբանացիներ և ռումելիացիներ։ Արևմտյան ճակատը պահպանող սերբական զորքը փախչում է տեսնելով Բեքիր փաշայի ստվար բանակը։ Բայց վրա է հասնում Կարա Գիորգին 1500 մարդով և հարկադրում է փաշային ետ քաշվել դեպի Շաբաց բերդը։ Այնուհետև հավաքելով փախստական զինվորներին և կազմելով 9 հազարանոց մի բանակ, Կարա Գիորգին նորից հարձակվում է Բեքիր փաշայի վրա և երեք օր տևող պատերազմի մեջ բոլորովին ջարդում է նրան, խլելով մեծ քանակությամբ գերիներ և պատերազմական ավար։ Վերջացնելով այստեղ, Կարա Գիորգին գնում է Իբրահիմ փաշայի վրա, բայց վերջինս հանդիպում է նրան ոչ թե զենքով ու կռվով, այլ խաղաղ բանակցություններով։

Սերբերը միայն զենքի վրա չդնելով իրենց հույսը, առանձին եռանդ էին ցույց տալիս նաև զուգընթացաբար վարվող դիվանագիտական բանակցությունների մեջ։ Բանակցություններ նրանք ունեին նաև Ավստրիայի, բայց առավելապես հենց իրենց՝ Թուրքիայի հետ[3]։ Այն իսկ միջոցին, երբ Կարա Գիորգին հաղթություններ էր տանում Շաբացի մոտ, սերբական մի պատգամավորություն Կ. Պոլսում թուրք կառավարության հետ համաձայնություն ստեղծել էր աշխատում։ Եվ որովհետև թուրքերը Ռուսաստանի մատն էին տեսնում սերբական շարժումների մեջ, ուստի երկյուղից համաձայնվեցին, որ Սերբիան լինի մի ինքնավար երկիր, բայց այն պայմանով, որ վճարե տարեկան 900 հազար ղրուշ հարկ և Բելգրադում նստե թուրքական մի կոմիսար և ունենա 150 հոգուց բաղկացած մի թիկնապահ խումբ[4]։ Բայց թուրքաց կառավարությունը հետո ետ կանգնեց իր տված խոսքից, որովհետև այդ ժամանակ տեղի ունեցավ Աուստերլիցի ճակատամարտը, որ Ռուսաստանի պարտությունն էր բերում։ Բ. Դուռն այլևս Ռուսաստանից վախենալու պատճառ չուներ[5], ուստի

[1] Adolphe Potel, Aperçu historique des affaires d'Orient, Paris, 1889, p. 22.

[2] Милан Джуричич, Сербский протоиерей Матфей Ненадович, Спб., 1881, с. 16—17.

[3] Մանրամասնությունները տե՛ս Нил. Попов, Россия и Сербия, Москва, 1869, гл. I.

[4] Э. Лавис и А. Рамбо, II, с. 119.

[5] Ibid.

և ուզում էր ձերբակալել և պատժել սերբ պատգամավորներին, բայց նրանք կարողացան մի կերպ փախչել և ազատվել։

Ապստամբությունը շարունակվեց Սերբիայում 1806 թ.։ Թե որքան մեծ էր ժողովրդական ոգևորությունը, ցույց է տալիս այն հանգամանքը, որ Կարա Գեորգիի դրոշակի տակ հավաքված կռվողների թիվը հասնում էր 65 հազարի[1]։ Այսպես էր գործում իր ազատության համար այն ժողովուրդը, որ դեռ երեկ թուրքական իրավազուրկ ռայայից ավելի բան չէր։ Կարա Գեորգին ուրիշ հաջողություններ էլ ունեցավ, և թուրքերն էին, որ պարտություններ էին կրում։ Եվ զենքը ձեռքին կռվող ժողովուրդը օգտվելով իր հաղթություններից, շտապում էր ստեղծել իր համար պետական կազմակերպություն։ Մշակվում է հատուկ սահմանադրություն, որ կառավարության հիմք էր դարձնում Ազգային ժողովը կամ Սկուպշչինան իբրև բարձրագույն օրենսդրական մարմին։ Կառավարության գլուխ ընտրվում է Կարա Գեորգին, որ շարունակում էր իր գյուղական կյանքը։ Վարում էր իր տնտեսությունը, հաղորդելով այսպիսով սերբական կառավարության մի նահապետական կերպարանք։ Ազատագրված, ինքն իրեն կառավարող Սերբիային մնում էր կատարել մի դժվարին քայլ ևս՝ ընդունել տալ թուրքաց սուլթանին իր նվաճած ազատությունը և դադարեցնել պատերազմը։ Բայց այստեղ դրությունը շատ բարդացնում էր ֆրանս-ռուսական մրցակցությունը։ Հենց որ Սերբիան իրապես ազատ ու ինքնավար դարձավ, իսկույն այնտեղ երևան եկավ ռուսական պրոպագանդը, որ և, իհարկե, պարարտ հող էր գտնում սերբական իրականության մեջ։ Ամբողջովին ռուսական ազդեցության տակ էր գտնվում Սերբիայի առաջին մարդը, Կարա Գեորգին։ Եվ ռուսների այս ցեղակցական ու կրոնակցական հաղթանակը բավական էր, որ ազատագրվող ռայայի թշնամի հանդիսանա Նապոլեոն Բոնապարտը։ Ֆրանսիական Մեծ հեղափոխությունը նշանաբան էր դարձրել «Պատերազմ պալատներին և խաղաղություն խրճիթներին»։ Իսկ նույն այդ հեղափոխության ծոցից դուրս եկած զինվորական մարդն անթույլատրելի էր համարում, որ գերի ազգությունները դուրս գան սուլթանների արյունարբու բռնակալության տակից։ Իբրև քաղաքակրթված բռնակալ, Նապոլեոնը գիտեր ոսկեզօծել իր այս հակամարդկային ձգտումը։ Նա ասում էր, թե սերբերը, հույները գործիքներ են Ռուսաստանի ձեռքում Բալկանյան թերակղզին և Կ. Պոլսի նեղուցները նվաճելու համար, իսկ ինքը, Նապոլեոնը չի կարող այդ թույլ տալ և բաց անել Միջերկրական ծովի դռները ռուսների առջև, որովհետև ռուսները բարբարոսներ են[2]։ Բայց սրանք միայն գեղեցիկ խոսքեր էին։ Եթե իսկապես բարբարոսությունը չպիտի տիրանար Միջերկրականի ափերին, այն ժամանակ բնական պետք էր համարել, որ Նապոլեոնը թուրքերին պետք է հեռացներ այդ տեղերից, որովհետև թուրքերն իսկապես բարբարոսներ էին։ Եվ սակայն Նապոլեոնը փայփայում էր նրանց, երբ այդ հարմավոր էր իրեն։ Եվ ահա 1806-ին մինչդեռ գեներալ Սեբաստիանին Կ. Պոլսում ամեն ջանք գործ էր դնում Թուրքիան Ֆրանսիայի դաշնակիցը դարձնելու համար, ազատագրված Սերբիան դառնում էր աչքի փուշ ոչ միայն Թուրքիայի, այլև նրա զինակցությունը որոնող Նապոլեոնի աչքում։ Մենք տեսանք, որ Ռուսաստանը 1806-ի երկրորդ կեսում իր զորքերը մտցնում էր Մոլդավիա և Վալախիա։ Եվ իսկույն կապ էր հաստատում այդ զորքերի և սերբական ապստամբության մեջ։

Այս, իհարկե, ավելի ևս պիտի գրգռեր Նապոլեոնին։ 1806-ի աշնանը

[1] М. Джуричич, с. 60.

[2] Ed. Driault, La Politique oriental de Napoleón, p. 55.

բորբոքվում է պատերազմ Նապոլեոնի և նրա դեմ կազմված չորրորդ կոալիցիայի մեջ, որ բաղկացած էր Պրուսիայից և Ռուսաստանից։ Հոկտեմբերի 14-ին Նապոլեոնը ջարդեց պրուսական բանակը Ենայի և Աուերշտադտի մոտ, որից հետո նրա առջև բացվեցին Բեռլինի դռները։ Իր այս փառավոր հաղթանակի մասին Նապոլեոնը նամակով հաղորդում էր սուլթան Սելիմին։ Հայտարարելով, որ Պրուսիան ոչնչացել է, իսկ Ռուսաստանը այնպիսի դրության մեջ է ընկել, որ պիտի մտածե իր անկախությունը պահպանելու մասին, կայսրը քաջալերում էր սուլթանին, ամենաջերմ բարեկամական զգացմունքներ էր հայտնում նրան։ Հաղթողի ցանկությունն էր, որ Մոլդավիան և Վալախիան անպայման ենթարկվեն սուլթանի իշխանության։ Հասկանալի է, որ Ենայի հաղթությունը միանգամայն ֆրանսիական ազդեցության տակ էր դնում Թուրքիան, որ և շտապում էր վաճառվել մեծ կայսրին։ Բանակցություններ են սկսվում ֆրանս-թուրքական դաշնակցության մասին, իսկ Նապոլեոնը շարունակում էր թովել Սելիմին իր բարեկամական նամակներով։ Այս, սակայն, չխանգարեց, որ սերբերը հասնեն իրենց հաղթանակի գագաթնակետին։ 1806-ի դեկտեմբերի 12-ին նրանք վերցրին իրենց մայրաքաղաք Բելգրադը, և թուրքերը հեռացան այնտեղից։ Այդ իսկ միջոցին Նապոլեոնը գրում էր Սելիմին. «Չհամաձայնես այն առաջարկություններին, որ անում են սերբերը զենքը ձեռքին։ Ուղարկիր քո զորքերը Խոտիմի վրա։ Ռուսներից մի վախենաս»[1]։ Եվ Սելիմը, ճիշտ որ, այս անգամ սիրտ առավ։ Դեկտեմբերի 24-ին նա պատերազմ հայտարարեց Ռուսաստանին։

Գ. Նույն 1806-ի աշնանը Կովկասի կառավարչապետ կոմս Գուդովիչը, կատարելով Պետերբուրգից իրեն տրված հրահանգները, բանակցություններ է բաց անում Պարսկաստանի հետ հաշտություն կնքելու մասին։ Այս հաշտությունը նա ընդունում էր Պարսկաստանից նոր երկրներ խլելու պայմանով։ Վճռված էր ռուս-պարսկական հաստատուն սահմանագիծ ընդունել Քուռ գետը Կասպից ծովից մինչև այնտեղ, ուր նրա հետ միանում է Արաքս գետը և այնտեղից արդեն Արաքսը մինչև այնտեղ, ուր նրա մեջ թափվում էր Արփաչայ (Ախուրյան) գետը։ Այսպիսով Պարսկաստանը պիտի ինքնահոժար կերպով զրկվեր Երևանի և Նախիջևանի խանություններից, որոնք այնքան խոշոր կարևորություն ունեին նրա համար։ Բայց Երևանը կարևորություն ուներ և Ռուսաստանի համար։ Եվ Անդրկովկասում գործող ռուս գեներալներից մեկը խորհուրդ էր տալիս Գուդովիչին զենքի ուժով վերցնել Երևանը, քանի նրա մեջ ընդամենը հազիվ մի 1500 պարսկական զինվոր լինեն, որոնց մեջ, ինչպես և ամբողջ ազգաբնակության մեջ սաստիկ տարածված է ջերմախտի համաճարակը։ Գուդովիչը, սակայն, մերժեց այդ առաջարկը։ Նա դեռ Հյուսիսային Կովկասում էր գտնվում, դեռ չէր տեսել Անդրկովկասը, հետևաբար ծանոթ չէր ո՛չ տեղերին, ո՛չ հանգամանքներին։ Նա ավելի լավ համարեց իր համհարզ (ադյուտանտ) կապիտան Ստեփանովին Պարսկաստան ուղարկել ուղղակի Ֆաթալի շահի կառավարության հետ բանակցություններ վարելու համար։ Այսպիսով մի տեսակ արհամարհվում էր թագաժառանգ Աբաս Միրզան, որ նստում էր Թավրիզում։ Ստեփանովն այս քաղաքը ժամանեց դեկտեմբերի 31-ին, բայց թե Աբաս Միրզայի և թե նրա վեզիր Միրզա Բյուզուրգի հետ խոսակցություն չունեցավ ռուսական պայմանների մասին և գնաց Թեհրան, ուր բանակցության մեջ մտավ շահի մեծ վեզիր Միրզա Շաֆիի հետ։ Սակայն Թեհրանի արքունիքում էլ տիրում էր ֆրանսիական ազդեցությունը։ Նապոլեոնը, ինչպես գիտենք, հարաբերություններ ուներ շահի հետ և նրան

[1] Adolphe Potel, Aperçu etc., p. 22.

էլ, Թուրքիայի պես, պատրաստում էր Ռուսաստանի դեմ հանելու համար։ Իզուր չէր նա ներշնչում սուլթան Սելիմին այն միտքը, թե նա պետք միանա Պարսկաստանի հետ մի ընդհանուր գրոհի մեջ ընդդեմ Ռուսաստանի։ Գուդովիչը փորձում էր գործել Թեհրանի արքունիքում ստեղծված աննպաստ դրության դեմ ստություններով և խաբեբայություններով։

«Ջանացեք,— գրում էր նա Ստեփանովին,— որ ձեզ շուտով ուղարկեն Թեհրանից պատասխանի հետ միասին և սրա համար ներշնչեցեք վեզիրին, որ նա չհավատա ֆրանսիական և թուրքական խոսք ու զրույցներին. մենք շատ մեծ բանակ ունենք ֆրանսիականի դեմ և բազմաթիվ է ֆրանսիականի հետ համեմատած։ Բոնապարտը ճակատամարտ ունեցավ իր ամբողջ բանակով, որի հրամանատարն ինքն էր, մեր մի հատ կորպուսի հետ, իսկ մեր ամբողջ բանակն այդ ժամանակ գտնվում էր ետևում, բայց այդտեղ Բոնապարտը տանուլ տվեց ճակատամարտը, ջարդվեց և վանվեց ու այժմ պառկած է մերձիմահ պրուսական մի վայրում, գուցե արդեն մեռել է, իսկ եթե կենդանի էլ մնա, այնքան հեռու է տարված, որ նրա ոչնչացումն անխուսափելի է, և Ռուսաստանը կխորտակե նրան»։

Այս պաշտոնական ստախոսության հետ, որ դնում էր Թեհրան միամիտ կարծված պարսիկներին խաբելու համար, Գուդովիչը մի հիմար խորամանկություն էլ էր առաջ քաշում։ Առաջարկելով, որ Պարսկաստանը տա Ռուսաստանին Երևանն ու Նախիջևանը, Գուդովիչը խոստանում էր աջակցություն, որ Պարսկաստանը նորից ետ խլե Թուրքիայից մի ժամանակ իրեն պատկանած մի շարք նահանգներ։ «Պաշտոնապես ներշնչեցեք վեզիրին,— շարունակում էր նա,— որ նրանք շտապեն մեզ հետ հաշտություն անելու, որովհետև պատերազմ անելով՝ միայն մարդիկ կկորցնեն. իսկ մեզ հետ դաշնակից դառնալով, կարող են մի տարում ձեռք բերել Թուրքիայից նշանավոր, առաջ պարսկական եղած նահանգներ, ինչպես օրինակ, Էրզրում, Բայազետ, ես նրանց կօգնեմ։ Թուրքերը չափազանց թույլ են և իրենց կորստի համար էր, որ լսեցին Բոնապարտին, որ աշխատում է խաբել։ Ոչինչ նշանակություն չունեցող Սև Գեորգը (Կարա Գեորգին) վերցրել է նրանցից Բելգրադ մեծ բերդը և միացել է մեր զորքերին... Ձեզ և ամենքին հայտնի է, որ ես Թուրքերին անցած պատերազմների մեջ ջարդել եմ ամեն տեղ, իսկ վերջին պատերազմում ես վերցրի նրանից հինգ բերդեր. Կիլիա, Իզմայիլ, Անապա, Սուջուկալե և Հաջիբեյ, որ այժմ կոչվում է Օդեսա, վերցրի նրանցից ավելի քան 300 թնդանոթ, մինչև 30.000 գերի, և այժմ էլ կքշեմ ինչպես ոչխարների»[1]։

Բայց ոչինչ չօգնեց՝ ո՛չ ստերը, ո՛չ կեղծ խոստումները, ո՛չ ինքնագովությունները։ Թեհրանի արքունիքի համար պարզ էր մի հանգամանք՝ Ռուսաստանն ինքն էր հաշտություն որոնում, և այս ամենից առաջ վկայում էր, թե նրա դրությունն այնքան էլ փայլուն չէր, ինչպես ներկայացնում էր Գուդովիչը։ Եվ հասկանալի է միանգամայն, որ այս դրության դիմաց Պարսկաստանը չէր կարող խաբվող ու զիջող լինել։ Միրզա Շաֆին մերժեց ռուսական առաջարկները։ Այդ ժամանակ պարսից կառավարությունը հավաստիացած էր, թե ինքը ոչ միայն ստիպված չի լինի նոր զիջումներ անել, այլև ի վիճակի կլինի պահանջելու, որ ռուսները հեռանան Անդրկովկասից։ Ահա ինչ էր այս առիթով գրում Աբաս Միրզան Դաղստանի տիրապետողներին.

«Երևի ձեզ էլ է հասել այն համբավը, որ մի քանի ժամանակ սրանից առաջ ինձ մոտ եկավ ռուսաց գլխավոր հրամանատարի ուղարկած մարդը և բանակցություններ սկսեց բարեկամության մասին, ներողություն խնդրելով

1 «Акты...», III, № 804.

առաջվա իրենց գործողությունների համար։ Ես այդ դեսպանին ուղարկեցի շահի բարձրագույն դուռը։ Այս դեսպանի նպատակն այն է, որ մենք հաշտվենք ռուսների հետ, որպեսզի թշնամության փոշին սրբվի մեջտեղից. բայց նրա խնդիրքը հարգված չի լինի, մինչև որ այս երկրների փեշերը սրբված չեն լինի նրանց գոյության զարշանքից։ Ես արդեն իմ բարձր եռանդը դրել եմ այն բանի վրա, որ նրանց վռնդեմ Իրանի սահմաններից, և այս բանը կհաջողվի ալլահի օգնությամբ։ Ամեն մեկին, ով ծանոթ է պատմության և տարեգրություններին, հայտնի է, որ ոչ մի թագավոր ճանապարհ չէ ունեցել դեպի Պարսկաստան. այս մի իսկական ճշմարտություն է և սրանից հետո ալլահի օրհնությամբ և փադիշահի երջանկությամբ, այդպիսի ճանապարհ բոլորովին չի լինի։ Ձեզ այս հանգամանքների մասին հայտնելը անհրաժեշտ էր, ուստի և մենք ծանոթացնում ենք ձեզ, որպեսզի դուք ամրապնդվեք ձեր ազգի բազմագույն դրոշակների փողփողումով և իսլամի պատժող զինվորների շարժումով, պատրաստվեք սրբազան պատերազմի և շտապեք դեպի փրկություն և ազատություն ձեռք բերելը»[1]։

Գուդովիչի ուղարկած կապիտան Ստեփանովը մնաց Թեհրանում մինչև հունիս ամիսը։ Շահի կառավարությունը ժամանակ էր վաստակում, առերես ցույց էր տալիս պատրաստակամություն հաշտություն կնքելու և իր կողմից մարդ էր ուղարկում Գուդովիչի մոտ և առաջարկում էր, որ Ռուսաստանն իր սահմանը տանե Հյուսիսային Կովկաս, այնպես որ Ղզլար քաղաքն ու Դաղըստանը մնային Պարսկաստանին։ Գուդովիչն երկար ու բարակ բացատրում էր պարսից կառավարության, թե որքան նրա համար ձեռնտու էր հաշտ ապրել Ռուսաստանի հետ և, լավ իմանալով, որ շահի կառավարության համառությունը ֆրանսիական ներշնչումների արդյունք է, ապացուցանում էր, որ Ֆրանսիան չէ կարող զորքով օգնել Պարսկաստանին, չէ կարող իրական օգնություն հասցնել նաև Թուրքիան, որ Ֆրանսիայի ձեռքում խաղալիք է դարձել և նրա թելադրությամբ աշխատում է արգելք հանդիսանալ, որ պարսիկների և ռուսների մեջ հաշտություն չկայանա։

Բայց ռուս հրամանատարի այս խրատների ու խորհրդածությունների անկեղծության հավատալու ոչ մի հիմք չուներ պարսից կառավարությունը, որ կորցրել էր գրեթե ամբողջ Անդրկովկասը և պետք կորցներ նրանից մնացած վերջին կտորն էլ՝ Երևանի և Նախիջևանի խանությունները։ Ֆրանսիական խոստումներն ավելի լայնարձակ էին, ավելի գրավիչ, բայց որ գլխավորն էր՝ ավելի հեշտ իրագործելի։ Նապոլեոնը դարձել էր Եվրոպայի տերն ու տնօրենը։ Գրչի մի շարժումով նա պետություններ էր կործանում, պետություններ էր ստեղծում, թագավորական գահեր էր խորտակում և իր եղբայրներին ու ազգականներին թագեր էր տալիս։ Ֆաթալի շահը երազում էր Իրանը նախկին մեծության մեջ։ Նապոլեոնից նա խնդրում էր ոչ միայն Անդրկովկասի, այլև պարսկական երկու հին նահանգների՝ Բաղդադի և Միջագետքի վերադարձը պարսկական իշխանության։ Եվ ֆրանսիական կառավարությունը հուսադրում էր նրան նույնիսկ Բաղդադի և Միջագետքի վերաբերմամբ, թեև այս երկրները պետք խլվեին նրա դաշնակից Թուրքիայից։ Շահը նույնիսկ այն էլ էր երազում, որ Նապոլեոնը կոչնչացնե ռուս Ռոմանովների գահը, Ռուսաստանի վրա թագավոր կդնե իր եղբայր Ժերոմին, և այն ժամանակ Ռուսաստանը բաժանված կլինի երեք պետությունների՝ Ֆրանսիայի, Թուրքիայի և Պարսկաստանի միջև[2]։

1 «Акты...», III, № 800.

2 E. Driault, La politique orientale de Napoléon, p. 175.

Այսպիսի երազներ կարելի էր տեսնել, այսպես էր հավատացնում պարսից կառավարության ներկայացուցիչը Փարիզում։ Նապոլեոնը պատրաստ էր գրավոր դաշնագրությամբ կապվել Պարսկաստանի հետ։ Եվ ահա շահի կառավարությունը հատուկ լիազորություններով դեսպան էր ուղարկում կայսրի մոտ, որ այդ միջոցին ապրում էր Լեհաստանի Ֆինկենշտայն դղյակում։ Այստեղ էլ նա ընդունեց դեսպան Միրզա Ռիզա խանին մեծ հանդիսավորությամբ (ապրիլի 26, 1807)։ Հետևյալ երկու օրերը կայսրը զորահանդեսներ սարքեց ի պատիվ դեսպանի և ցույց տվեց նրան իր հետևակ և հեծյալ զորքերը[1]։ Այս բոլոր պատիվներից և տոներից հետո, մայիսի 4-ին, ստորագրվեց ֆրանս-պարսկական դաշնակցության պայմանագիրը։

Ֆինկենշտայնի դաշնագրության գլխավոր կետերն էին[2] հետևյալները. 1) Նապոլեոնը երաշխավորում էր Պարսկաստանի հողային անձեռնմխելիությունն իր ներկա սահմանների մեջ և ճանաչում էր Վրաստանն իբրև Պարսկաստանի սեփականություն, ուստի և պարտավորություն էր հանձն առնում գործ դնել ամեն միջոց, որ ռուսները հեռանան այդ երկրից։ 2) Ֆրանսիան պարտավորվում էր տալ Պարսկաստանին այնքան թնդանոթներ, սվինավոր հրացաններ, այլև այնքան թնդանոթաձիգ և ինժեներական սպաներ, որքան պարսից շահը հարկավոր կհամարե իր երկիրը եվրոպական ռազմագիտության կանոններով ամրապնդելու համար։ 3) Իր կողմից պարսից շահը պարտավորվում էր խզել բոլոր քաղաքական և առևտրական հարաբերությունները Անգլիայի հետ, չթողնել, որ նրա ապրանքները մտցվեն պարսկական նավահանգիստները, մի խոսքով՝ ենթարկվել «ցամաքային պաշարման» այն կանոններին, որ Նապոլեոնը հաստատել էր Եվրոպայում՝ անգլիական առևտուրը ոչնչացնելու համար։ Բացի սրանից՝ շահը պիտի գործադրեր իր ամբողջ ազդեցությունը, որպեսզի աֆղանները և Կանդահարի այլ ժողովուրդները զինվեն Անգլիայի դեմ և անցնելով նրանց հողը, ուղարկեն մի զորաբանակ Հնդկաստանի անգլիական կալվածները։ 4) Եթե մի ֆրանսիական նավատորմ մոտենա Պարսից ծոցի ափերին, այդտեղ նա պիտի գտնե ամեն դյուրություններ և օգնություն, որոնց նա կարոտ կլինի։ 5) Եթե Նապոլեոն կայսրին հարկավոր լինի ցամաքային ճանապարհով մի բանակ ուղարկել հարձակվելու համար Անգլիայի հնդկական կալվածների վրա, պարսից շահն, իբրև հավատարիմ դաշնակից, թույլ կտա այդ բանակին անցնել իր հողով, և այս դեպքում առանձին համաձայնություն կկնքվի, թե ինչ ճանապարհներով կանցնի բանակը, փոխադրական ինչ միջոցներ կհայթայթվեն նրան և այլն։ 6) Դաշնագիրը, վերջապես, պարտավորեցնում էր երկու կողմերը կնքել իրար հետ առանձին առևտրական դաշինք։

Ֆրանս-պարսկական դաշնագրությունն ավելորդ էր դարձնում կապիտան Ստեփանովի մնալը Թեհրանում։ Եվ նա վերադառնում է Գուդովիչի մոտ։ Պարսկական խորամանկ քաղաքականությունը չուզեց բաց ճակատով դուրս գալ ռուսների դեմ։ Ստեփանովի հետ Գուդովիչի մոտ եկավ նաև մի պարսիկ պաշտոնյա, որ իր կառավարության անունից հավատացնում էր նրան, թե շահը կամենում է բարեկամական հարաբերություններ պահպանել ռուսների հետ։

Մինչդեռ տեղի ունեին մեր նկարագրած ռուս-պարսկական և ֆրանս-պարսկական բանակցությունները, պատերազմական գործողությունները Թուրքիայի և Ռուսաստանի միջև զարգանում էին Դանուբ գետի ափին։ Ալեքսանդր կայսրը հրամանագրել էր Գուդովիչին հարձակողական դիրք բռնել թուրքերի վերաբերմամբ և պատերազմական գործողություններն անցկացնել Ասիական Թուրքիայի հողի վրա, որպեսզի սուլթանի կառավարությունը չկարողանա իր բոլոր ասիական զորքերը փոխադրել եվրոպական ռազմաբեմը։ Կատարելով այդ հրամանը, կոմս Գուդովիչը բաժանեց Թուրքիայի դեմ գործող զորաբանակը երեք մասի։ Առաջինը, ձախ թևը, գտնվում էր Փամբակում, գեներալ Նեսվետաևի հրամանատարության տակ։ Երկրորդը, որ կազմում էր կենտրոնը, իր, Գուդովիչի անմիջական հրամանի տակ էր և հավաքված էր Թիֆլիսի մոտ։ Իսկ երրորդ կամ աջ թևի զորաբաժինը հավաքված էր Մինգրելիայում և պիտի պաշտպաներ ռուսական Անդրկովկասի սահմաններն այդ կողմից։ Սակայն առաջին անգամ հարձակվողները թուրքերն էին, որոնք, դուրս գալով իրենց պատկանող Փոթի քաղաքից, 1807-ի փետրվարի 8-ին հանկարծակի հարձակվեցին նրա մոտ գտնվող ռուսաց սահմանապահ փոքրիկ ամրոցի վրա, որ կոչվում էր Ռեդուտ-կալե և, չնայած ռուս բերդապահ փոքրաթիվ զորքի քաջ դիմադրության, այրեցին ու ոչնչացրին նրան։ Այս փոքրիկ հաջողությունը, սակայն, առանձին նշանակություն չունեցավ։

Կարևոր նշանակություն ունեին Փամբակի և Թիֆլիսի զորաբաժինները և մանավանդ առաջինը, որ ամենից մոտ էր թուրքական սահմանագլխին և կարող էր գործողություններ սկսել Կարսի նման մի ամուր բերդի դեմ։ Սկզբում շատ հեշտ էր թվում Կարսը վերցնելը, որովհետև դեռ պատերազմից առաջ գործերի դրությունն այնպիսի ընթացք էր ստացել, որ ռուս կառավարության համար գրեթե անկասկածելի էր, թե Կարսը գրեթե առանց կռվի կանցնի իր իշխանության տակ։ Ահա ինչպես։

Ախուրյան գետի վրա, Անիի ավերակներից մոտ հինգ վերստ դեպի հարավ, գտնվում է Մաղասբերդ անունով փոքրիկ բերդը, որ իր արտաքին գծագրություններով նմանվում է Անիին, ներկայացնելով երեք կողմից ձորերով շրջապատված մի եռանկյունի։ Եռանկյունիի հիմքն է միայն, որ միանում է ցամաքի հետ, և այս կողմից բերդը պաշտպանված է բարձր աշտարակավոր պարիսպով։ Թե ինչ հեռավոր անցյալ է ունեցել այս բերդը, հայտնի չէ։ XVIII դարի վերջերում և XIX-ի սկզբում այս փոքրիկ ամրությունը պատկանում էր Խաթուն օղլու անունով քրդական տոհմին, որի տիրապետության տակ էին գտնվում շրջակայքը, Անին և ամբողջ Արևմտյան Շիրակը[1]։ Խաթուն օղլու տոհմի ներկայացուցիչներն էին Մամեդ բեկ և Կարա բեկ։ Մամեդ բեկը Թուրքաց կառավարության կողմից ստացավ փաշայության աստիճան և նշանակվեց Կարսի նահանգի կառավարիչ, իսկ Կարա բեկը մնաց Մաղասբերդում։ Հետևելով Թուրքիայի ծայրգավառները կառավարող փաշաների օրինակին, Մամեդ փաշան էլ ուզեց դառնալ Կարսի և նրա նահանգի անկախ տերը և թողնել այդ իշխանությունն իր ժառանգներին։ Այսպիսի մի բան նա կարծում էր հեշտությամբ գլուխ բերել ռուսների աջակցությամբ, ուստի և բանակցություններ սկսեց Փամբակի ռուսական զորքի հրամանատար գեներալ Նեսվետաևի հետ։ Բանագնացությունները կատարվում էին հայերի ձեռքով։ Մամեդ փաշայի կողմից ռուսական բանակն էր գալիս մի հայ քահանա, որ բերում էր փաշայի նամակները, որոնք գրված էին լինում հայերեն լեզվով, իսկ ռուսների կողմից գործում էր մի ոմն կոլլեժսկի ռեգիստրատոր Արշագով, որ թարգմանի պաշտոն էր վարում։ Մամեդ փաշան պատրաստություն էր հայտնում ռուսական զորքը մտցնել Կարսի մեջ միայն այն պայմանով,

1 Ibid., p. 147.

2 Դաշնագրության ամբողջ բնագիրը տե՛ս "Mission du Général Gardane en Perse", Paris, 1865, p. 71—80.

1 «Դիվան հայոց պատմության», գիրք Ժ, եր. 445—448։

որ ռուսաց կայսրը ճանաչե նրան ժառանգական և ինքնագլուխ տեր Կարսի և նրա ամբողջ նահանգի։ Ոչ միայն կոմս Գուդովիչը, այլև Ալեքսանդր կայսրը հավանություն տվին այդ առաջարկին և Կարսի փաշան երկու անգամ ծանրագին ընծաներ ստացավ ռուսաց կառավարությունից։ Հարցը վերջացած էր համարվում, և կոմս Գուդովիչը Նեսվետաևի միջոցով ռուսաց կառավարության կողմից բացահայտ խոստումներ էր անում ծախվող փաշային։

Սակայն վաճառքը պարտուպատշաճ գաղտնապահությամբ չէր կատարվում։ Կարսի թուրք բնակիչները հասկացան, թե Մամեդ փաշան կասկածելի վարքագիծ է ընդգրկել և հայտնեցին այս մասին Էրզրումի սերասքեր Քյոռ Յուսուֆ Զիա փաշային, որ նշանակված էր բոլոր ասիական զորքերի գլխավոր հրամանատար։ Սա հսկողություն նշանակեց Մամեդ փաշայի վրա, որ տեսնելով, թե որքան անկարելի է այդպիսի մի կարևոր պատերազմական ժամանակ Կարսի պես բերդը թշնամուն մատնելը, դիմեց խորամանկության և խաբեբայությունների։ Իսկ ռուսները դեռ միամտորեն հավատում էին նրան և Նեսվետաևը 1807-ի փետրվարին արդեն պահանջում էր, որ փաշան կատարե իր խոսքը։ Վերջին անգամ փաշան Նեսվետաևի մոտ ուղարկեց, ինչպես հաղորդում է հայկական մի աղբյուր[1], Կարսում գտնվող Հովհաննես եպիսկոպոս Կարբեցուն, որ հետո կաթողիկոս դարձավ, համոզելու համար թե ինքը չէր կարող իսկույն կատարել ռուսական պահանջը, թե թող ռուսները նախ Ախալցխան վերցնեն և ապա գան Կարսի վրա և այլն։ Այս ժամանակ միայն Գուդովիչը գլխի է ընկնում, որ Կարսի փաշան խաբեբա է և հրամայում է Նեսվետաևին պատերազմով անցնել Ախուրյան գետը և մտնել Կարսի երկիրն ինչպես մի թշնամի երկիր։ Մարտի 16-ին (1807) ռուսական զորքն անցնում է սահմանը։

Առաջին անգամն էր, որ Ասիական Թուրքիայի հողը դառնում էր ռուս-թուրքական պատերազմի բեմ, և առաջին անգամն էր, որ ռուսական զորքերը շարժվում էին հայերով բնակեցված վայրերում։ Ուստի չափազանց հետաքրքրական է լուսաբանել թուրքահպատակ հայ ժողովրդի վերաբերմունքը դեպի այդ նոր փաստը...

Ինքնըստինքյան հասկանալի է, որ ճնշված դրության մեջ գտնվող հայությունը, չնայած որ ռուսական զորքն ընդամենը մի հինգ-վեց տարի էր, ինչ երևացել էր Արփաչայի ձախ ափին, արդեն ռուսասեր էր, նվիրված ռուսական շահերին։ Այս երևում էր նույնիսկ Մաղասբերդի անձուկ շրջանում։ Պետք է ասել, որ խաթուն օղլու Կարա բեկը համամիտ չէր իր եղբոր, Մամեդ փաշայի հետ՝ Կարսը ռուսներին հանձնելու վերաբերմամբ և ուժգնապես դիմադրում էր նրա այդ մտքին։ Բայց ռուս հրամանատարությունը մեծ նշանակություն չէր տալիս այդ հանգամանքին, քանի որ գիտեր, թե Ռուսաստանին նվիրված բազմաթիվ հայեր կան Կարա բեկի շուրջը, որոնք կազդեն նրա վրա, կփոխեն նրա հայացքը[2]։

Երբ սկսվեց թուրքական պատերազմը, հաշտության բանակցությունները Պարսկաստանի հետ, ինչպես տեսանք, դեռ ոչ մի դրական արդյունքի չէին հասցրել, այնպես որ Ռուսաստանն Անդրկովկասում պատերազմական դրության մեջ էր երկու պետությունների՝ Թուրքիայի և Պարսկաստանի հետ։ Այդ իսկ միջոցին Պարսկաստանը մասնակի պատերազմի մեջ էր և Թուրքիայի կամ ավելի ճիշտը, Բաղդադի փաշայի հետ։ Այս, սակայն, արգելք չհանդի-

1 «Դիվան հայոց պատմության», գիրք Ժ, էջ 447։
2 «Акты...», III, № 1023.

սացավ, որ երկու մահմեդական պետությունները, կատարելով ֆրանսիական հրահանգները, միանան իրար հետ Ռուսաստանի դեմ հանուն պաշտպանության իսլամ կրոնի։ Քյոռ Յուսուֆ փաշան մեծախոս և հոխորտալից կոչեր էր ուղարկում Դաղստանի տիրողներին, ասելով թե Նովրուզի տոնին (մարտի 10-ին) ինքն իր «առյուծանման զորքերի» հետ կմտնե Թիֆլիս և հրավիրում էր, որ նրանք էլ ոտի կանգնեն։ Նույնանման կոչեր ուղարկում էր և Աբաս Միրզան Արևելյան Անդրկովկասի շիա խաներին։ Ստեղծվում էր, այսպիսով, բավական լուրջ դրություն ռուսաց տիրապետության համար։ Անդրկովկասի ազգաբնակության մեծամասնության համար այդ տիրապետությունը մի բռնություն էր, սվինների վրա հաստատված մի անխուսափելի չարիք։ Խանական կառավարության սիստեմը, որի վրա ռուսական բյուրոկրատիան կառուցել էր իր նվաճողական ապահովությունն, ամեն հարմար միջոցին պատրաստ էր թոթափել գյավուրների լուծը և միանալ նորից իր հարազատ Պարսկաստանին։ Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի խաները կասկածավոր երկդիմի խաղեր էին խաղում, չթաքցնելով թե ում կողմն է իրենց համակրանքը։ Խռովությունների մեջ էր և Վրաստանը, մանավանդ նրա արևմտյան մասը, որ կամենում էր ազատվել ռուսական նվաճումից և վերականգնել իր սեփական ազգային անկախությունը։ Եվ կարելի է հաստատապես ասել, թե հայերն էին միայն, որոնք իսկապես ռուսական տիրապետության մեջ էին տեսնում իրենց փրկությունը դարերով հալումաշ արած մահմեդական լծից։ Այս է պատճառը, որ նրանք ամենից շատ էին նվիրված Ռուսաստանին, թեև արդարապես չէին գնահատվում վերջինիս կողմից։

Գուդովիչն այսպիսի մի խառնահույզ երկրում, որ ամեն րոպե կարող էր փոխարկվել հրաբուխի, ուներ միայն մի դիվիզիա զորք։ Նոր զորքեր ստանալ Ռուսաստանից նա չէր կարող, որովհետև այդ միջոցին Նապոլեոնը, ջարդելով Գերմանիան, իր զենքը դարձրել էր նրա դաշնակից Ռուսաստանի դեմ, որ և լարում էր իր բոլոր ուժերը՝ ահավոր նվաճողին դիմադրելու համար։ Այս փոքրաթիվ զորքով Գուդովիչը վճռում էր Պարսկաստանի դիմաց պաշտպանողական դիրք բռնել, իսկ Թուրքիայի դեմ հարձակողական գործողությունների եղանակին դիմել։ Պարսկաստանի դեմ Արևելյան Անդրկովկասը պաշտպանելու համար նա մի առանձին զորաբաժին էր դնում Ղարաբաղում, Թարթառ գետի վրա, գեներալ Նեբոլսինի ղեկավարությամբ։ Այս մի երկրորդական ճակատ էր։ Գլխավոր ուշադրությունը գրավում էր արևմտյան, թուրքական ճակատը։

Անցնելով Արփաչայը Գյումրի (Ալեքսանդրապոլ, այժմ Լենինական) բերդի մոտ, գեներալ Նեսվետաևը, միևնույն օրը, մարտի 16-ին Բաշ-Շորագյալ (Շիրակավան) գյուղում հանդիպեց մոտ 1000 հոգուց բաղկացած մի զորամասի, որի հրամանատարն էր Մաղասբերդի Կարա բեկը։ Կարծելով, թե այս բեկն արդեն համակերպված պիտի լինի իր եղբոր, Մամեդ փաշայի ծրագրին, Նեսվետաևը հայտնեց նրան, թե գնում է Կարսը գրավելու, ուստի առաջարկում էր նրան անձնատուր լինել իր զորամասին։ Բայց Կարա բեկն այդ առաջարկության պատասխանեց հրացանաձգությամբ, ուստի ռուսները հարձակվեցին նրա վրա, մի քանի րոպեի մեջ վերցրին ամրացրած գյուղը և թշնամուց 400 գերի տարան։ Ինն օրից հետո Նեսվետաևն արդեն գտնվում էր Կարսի պարիսպների տակ։ Արդեն այն ժամանակն էլ Կարսն առաջնակարգ մի բերդ էր, շրջապատված կրկնակի բարձր պարիսպներով և զինված բազմաթիվ թնդանոթներով։ Նեսվետաևը չվախեց այդ ահարկու ամրություններից և վճռեց վերցնել բերդը գրոհով։ Մի քաջարի հարձակումով նրա զորքի մի մասը գրավեց Կարսի արվարձանը՝ Բայրամ փաշա անունով։ Բայց հենց այդ մի-

ջոցին նա ստացավ հրաման Գուդովիչից չձեռնարկել այնպիսի գործողություններ, որոնք կարող են պատճառել զինվորների մեծ կորուստ։ Ուստի Նեսվետաևը հեռացրեց իր զորքերը Կարսից և ետ նահանջեց դեպի ռուսական սահմանը։ Այս հանկարծակի նահանջը համարվեց թուրքական մեծ հաջողություն, որ ուրախություն էր պատճառում թուրք ազգաբնակության, իսկ վաճառվող Մամեդ փաշան դառնում էր հերոս, և սուլթանը պարգևներ էր ուղարկում։

Հայաստանի հողի վրա սկսված այս առաջին ռուս-թուրքական պատերազմը առաջին իսկ վայրկյանից թշվառություն էր բերում հայերին։ Նեսվետաևը դեպի Կարս գնալիս ստիպված եղավ մարտի 23-ին կանգ առնել Մուշկո գյուղում, ուր նա հանդիպեց 500 տուն հայերի, որոնց թուրքերը «բարբարոսաբար», ինչպես ասված է պաշտոնական հաղորդագրության մեջ[1], քշել տարել էին զանազան գյուղերից։ Դժբախտները ռուս զորքի պաշտպանությունը խնդրեցին, և Նեսվետաևը նրանց ազնվաբար ազատեց գերությունից և ետ ուղարկեց իրենց գյուղերը հեծելազորքի հովանավորության տակ։

Ապրիլ ամսին հարձակողական գործողություններ սկսեց ինքը գլխավոր հրամանատար Գուդովիչը, տանելով իր զորքերը Թիֆլիսից Թրիալեթի լեռներով Ախալքալաքի վրա, որ թուրքական մի բերդ էր և կազմում էր Գուդովիչի գլխավոր նպատակի՝ Ախալցխա բերդի բանալին։ Ախալքալաքն էլ լավ ամրացված էր։ Բայց Գուդովիչը արհամարհանքով վերաբերվեց նրան և նամակով պահանջեց հրամանատար փաշայից բերդը հանձնել իրեն։ Նամակը մնաց անպատասխան։ Գուդովիչը գրեց երկրորդ նամակը, հոխորտալից և պարծենկոտ, որի մեջ մեկիկ-մեկիկ համրում էր, թե ինքը քանի հատ թուրքական բերդեր է վերցրել։ Սակայն այս նամակն էլ անպատասխան մնաց։ Կատաղած Գուդովիչը, երեք մասի բաժանելով իր զորքը, հարձակում գործեց բերդի վրա, բայց պարտություն կրելով, գլխիկոր վերադարձավ ռուսական սահմանները։ Կարսին հետևած այս երկրորդ անհաջողությունը շատ ծանր հետևանքներ ունեցավ։ Բոլոր թշնամի տարրերը գլուխ բարձրացրին, կարծելով, թե ռուսական թույլ ուժը ջախջախվում է։ Ամենից առաջ մեծ հոխորտանքով առաջ էր խաղում Էրզրումից Քյոռ Յուսուֆ փաշան, բերելով իր հետ Անատոլուի թուրքական խոշոր և ընտիր բանակը։ Նրան ձեռնտու լինելու համար Աբաս Միրզան իր բանակով գալիս էր Երևան։ Մահմեդական հոխորտանքների և հաղթական պարծենկոտության մի շատ բնորոշ հիշատակարան էր այն նամակը, որ ուղարկեց Յուսուֆ փաշան գեներալ Նեսվետաևին, պահանջելով, որ նա անձնատուր լինի նրան։ Մի նմուշ տալու համար բերում ենք այդ վավերագրի ամբողջ առաջին մասը ռուսերեն թարգմանությունից[2].

«Հզոր, փառահեղ, ամենաողորմած, օգոստոսափառ, տիեզերքի հողի երկրի և ժողովուրդների բարօրության և հանգստության պատճառ, երկրային թագավորների թագավոր, ընդհանուր բարեբար, ամենաարդարադատ թագավոր, բարձր գահը զարդարող իմ սուլթանի կողմից նշանակված լինելով, ռուսական զինվորությունը նվաճելու և ոչնչացնելու համար, գլխավոր հրամանատար երկնքի աստղերի պես անթիվ և հաղթական զինվորության, որ զետեղված է Էրզրումի, Տրապիզոնի, Կարահիսարի, Օրդուի, Բայրամլուի, Տրիպոլիի, Քեյֆիի, Վիզայի, Բայաղետի, Ալեշկերի, Խամուրի, Դիադինի, Կարսի մեջ և կայսրության այլ կողմերում,— ես, զինվոր Հաջի Յուսուֆ Զիա փաշա, ի հետևումն իմ ամենաերջանիկ փադիշահիս, տիեզերքի տիրոջ հրամանի,

[1] «Акты...», III, № 1033.
[2] «Акты...», III, № 922.

դուրս եկա Էրզրումից, ուղեկից ունենալով երջանկությունն ու բախտը և հասա Կարսի սահմանները մի ամենօրհնյալ և բախտավոր ժամի։

Մի քանի ժամանակ առաջ դուք, անկարող լինելով դիմանալ մեր փոքրաթիվ զորաբաժնի հրաշունչ սրերին և թշնամու կուրծքը պատռող նիզակներին, փակվեցիք Ջամասլի և Կըզըլ Ջաֆչակ տեղերում և մի քանի ժամից հետո, այնտեղից փախաք։ Այժմ ձեզ դեմ կազմակերպվում է մի բավականաչափ զորագունդ, որ քաջ է բազեների նման և ճակատամարտերի մեջ փորձված, առաջապահ զորքերի պետ ամենաքաջ Ալի փաշայի առաջնորդությամբ և նրա ետևից այն ռաբի-ուլ-էվվել ամսի 15-ին նույնպես ուղարկված է բազմաթիվ զինվորություն, կազմված առյուծանման կտրիճներից, որոնք կռվի մեջ Հեյդարի պես քաջարի են, Կարսի վալի՝ Ռուստեմի պես իմաստուն վեզիր, քաջարի և աներկյուղ, ամենահարգելի Մամեդ փաշայի գլխավորությամբ, իսկ նրանից հետո, Ալլահի ողորմությամբ, հովանավորված նրա օրհնությամբ, մի քանի օր անցած՝ դուրս կգամ ես և ես ինքս մի բազմաթիվ բանակով, որ ծփում է ծովի պես և աչքի է ընկնում իր քաջությամբ։ Ուստի և արթնացնում եմ ձեզ քնից և հայտնում եմ. իսլամական փադիշահիս, երկրագնդի այս տիրապետողի, Իսկենդերի պես հզորի արժանապատվության վայել է արդարություն և գթություն, ուստի նրա բարձր պաշտոնյաներին, զորապետներին և հաղթական զինվորներին նույնպես հարկավոր է լինել գթած և ողորմած և, իսլամը հատկանշող ազնվության գծերին հետևելով՝ անհրաժեշտ է զարթեցնել թշնամուն վաղօրոք, նախազգուշացնելով նրան իրենց ձեռնարկության մասին, ուստի ես վստահանում եմ տեղեկացնել ձեզ, գեներալ Նեսվետաև, որ ռուսական զորքի հետ գտնվում եք Վերին Շորագյալում, թե Ալլահի օգնությամբ ես մի կարճ ժամանակամիջոցում կգամ ձեզ վրա ճակատամարտերի մեջ փորձված և կռիվների մեջ եփված իսլամական կտրիճներով։ Եթե կյանքի ասպարեզում ուզում եք դեռ էլի մի առժամանակ հավաքել հանգստության հատիկներ և թափվելուց ազատել արյունը ձեր խեղճ և դժբախտ զինվորների, նույնպես և ձեր շուրջն ակամա հավաքված թափառականների և հայերի արյունը, շտապեցեք հանձնել ձեր թնդանոթները և ռազմամթերքը հիշյալ վալիին, իսկ դուք ձեր ամբողջ զորքով փութացեք մտնել նրա հովանավորության տակ»։

Նեսվետաևն այս ամբարտավան հոխորտանքին պատասխանեց համեստորեն, թե ինքն ունի միայն 3000 զինվոր և նրանցով կպաշտպանվի օսմանյան մեծ բանակի դեմ։ Եվ իրավ, երկու անգամ նա փայլուն կերպով կատարեց իր խոսքը։ Մայիսի 19-ին և հունիսի 2-ին թուրքերը հարձակվեցին Գյումրիի վրա, որի մեջ ամրացած էր Նեսվետաևը, բայց երկու անգամն էլ, կատաղի կռիվից հետո, պարտվեցին և ետ շպրտվեցին։ Իսկ Գուդովիչը, Ախալքալաքի անհաջողությունից հետո, իր բանակը քաշել էր Ծալկա։ Այդտեղից նա գնաց Նեսվետաևին վտանգավոր դրությունից ազատելու համար։ Մեծ դժվարություններով անցնելով Լոռու լեռներն ու գետը, նա ժամանակին հասավ Գյումրի, միացավ Նեսվետաևի զորքին, իսկ հունիսի 18-ին Արփաչայի վրա ջարդեց և ցրվեց Յուսուֆ փաշայի բանակը։ Մեծախոս սերասքիրը հազիվ կարողացավ մի 2000 հոգի հավաքել իր մեծ բանակի մնացորդներից և նրանց հետ փակվեց Կարսում։ Գուդովիչն առաջ չգնաց։ Միայն մի փոքրաթիվ զորամաս ուղարկեց Մաղասբերդ՝ այնտեղ գտնված պաշարներին տիրանալու համար։ Այս զորամասն իր վերադարձին հետը բերեց 170 տուն հայեր, որոնք փախչում էին թուրքական բռնություններից։ Առհասարակ, երևում է, որ հայերի կատարած դերն այդ պատերազմի մեջ շատ եռանդուն է եղել, որովհետև Ալի փաշան հայտարարել էր, թե ով կբերի իրեն մի ռուս զինվորի, հայի կամ ղարա-

փափախի գլուխ, նա կստանա պարգև 200 դրուշ։ Եվ այս կերպով փաշան հավաքեց 80 գլուխ[1]։

Արփաչայի հաղթությունը նորից վերականգնում էր ռուսական տիրապետության հեղինակությունը, գեթ առժամանակ հեռացնելով այն վտանգը, որ սպառնում էր նրան։ Աբաս Միրզայի զորքերն այնքան մոտեցել էին պատերազմի դաշտին, որ նրանց մի քանի մասերը հեռվից ականատես եղան Արփաչայի ճակատամարտին։ Տեսնելով Յուսուֆ փաշայի փախչող բանակը, Աբաս Միրզան, փոխանակ նրան օգնության հասնելու, ետ դարձավ նորից դեպի Երևան։ Ջարդված սերասքերն այնքան էր վախենում ռուսներից, որ երբ լսեց, թե նրանք առաջ են արշավում, դուրս եկավ Կարսից և գնաց դեպի արևմուտք։ Միայն այն ժամանակ, երբ իմացավ, թե այդ մի փոքրիկ արշավանք է դեպի Մաղասբերդ, նա վերադարձավ Կարս։ Իր վախկոտությամբ նա իր դեմ գրգռեց նույնիսկ Կարսի կանանց, որոնք խմբով գնացին նրա մոտ և պահանջում էին, որ նա պարապ չմնա, գնա պատերազմելու։ Եվ թղթի վրա այնքան քաջ Քյոռ Յուսուֆը ստիպված էր գեղեցիկ սեռի պահանջկոտությունը ստախոսությամբ մեղմացնել։ Նա հավատացրեց, թե զորքեր է հավաքում նոր կռիվ սկսելու համար։

Սակայն նոր ճակատամարտի հարկավորություն չկար։ Հունիսի 14-ին, Արփաչայի հաղթությունից առաջ մեծ և վերին աստիճանի արյունահեղ պատերազմ էր տեղի ունենում պրուսական հողի վրա, Ֆրիդլանդի մոտ, Նապոլեոնի և Ալեքսանդրի միջև։ Սաստիկ պարտություն էին կրում ռուսները։ Թեև Ռուսաստանն սկսեց արագությամբ նոր բանակ կազմել, բայց արդեն շատ պարզ էր դառնում ամենքի համար, թե այս սոսկալի արյունահեղությունները միայն Անգլիայի համար են և ոչ մի օգուտ չեն տալիս Ռուսաստանին։ Երկու կողմերն էլ ուզում էին հաշտություն կնքել։ Հունիսի 25-ին Նապոլեոնն ու Ալեքսանդրը իրար հանդիպեցին Տիլզիտ քաղաքում, Նեման գետի վրա, իրար ձեռք սեղմեցին։ Ալեքսանդրը հայտնեց, թե ինքը պատրաստ էր Նապոլեոնի հետ միասին մաքառել Անգլիայի դեմ։ Այս պատրաստակամությունն արդեն բարեկամություն էր հաստատում երկու կայսրների մեջ։ Այստեղ էլ, Տիլզիտում, հուլիսի 7-ին ստորագրվում էր ֆրանս-ռուսական դաշնակցության պայմանագիրը։ Սահմանվում էր քաղաքական նոր ուղղություն։ Նապոլեոնը մոռանում էր ռուսների հետ իր ունեցած վեճերը և թույլ էր տալիս Ալեքսանդրին գործնական քայլեր անել Թուրքիայի բաժանման համար և առաջին գլուխ սկսել այդ Մոլդավիայից և Վալախիայից, որոնց վրա սուլթանի միահեծան իշխանությունը տարածելու մասին նա այնքան հոգ էր տանում մինչև այդ։ Այժմ քաղաքական հաշիվը հարկավոր էր համարում վաճառել իր դաշնակցին և բարեկամին, և Նապոլեոնն այդ անում էր առանց որևէ անհարմարություն զգալու։ Նույն կերպով նա վարվում էր և իր մյուս բարեկամի՝ Շվեդիայի հետ, թույլ տալով Ալեքսանդրին խլել նրանից Ֆինլանդիան։

Նույն Տիլզիտի դաշնագրության հետևանքով էր, որ Նապոլեոնը դադարեցրեց պատերազմական գործողությունները Թուրքիայի և Ռուսաստանի միջև։ Բայց այդ վերջնական հաշտություն չէր, այլ միայն զինադադար երկար ժամանակով։ Երկու կողմերին էլ ձեռնտու էր այդ զինադադարը։ Ռուսաստանը նապոլեոնյան պատերազմներից էր շատ թուլացած, իսկ Թուրքիայի մեջ այդ միջոցին կատարվեց մեկն այդ պետության համար այնքան սովորական պալատական հեղափոխություններից, որոնք տակնուվրա էին անում

[1] «Акты...», III, № 1043.

մայրաքաղաքի կյանքը։ Բայց 1807-ի ցնցումներն ավելի խորունկ էին, ավելի վտանգավոր։

Փետրվար ամսին Անգլիան, իր դաշնակից Ռուսաստանին օգնելու համար, խառնվեց պատերազմին և նրա նավատորմի մի մասը, անցնելով Դարդանելի նեղուցը, մոտեցավ Կ. Պոլսին։ Սուլթանական պալատում սարսափ տիրեց։ Վճռվեց առաջարկել գեներալ Սեբաստիանիին, որ նա հեռանա քաղաքից, գուցե այդպիսով կարելի լինի մեղմացնել անգլիացիների ցասումը։ Սակայն Սեբաստիանին ոչ միայն չհեռացավ, այլ իր օգնական ֆրանսիացի սպաների հետ սկսեց մի շատ եռանդուն ինքնապաշտպանական գործունեություն, որով մի քանի օրում նեղ դրության մեջ դրեց հաղթանակած անգլիացիներին։ Զբաղեցնելով անգլիական ծովակալին բանակցություններով, Սեբաստիանին արագորեն զինեց ծովափը հարյուրավոր թնդանոթներով։ Այս գործը դարձավ համաժողովրդական։ Աշխատում էին ծերերը, կանայք ու երեխաներն անգամ։ Աշխատում էին ոչ միայն թուրքերը, այլև հույները, հայերը, հրեաներն իրենց հոգևոր պետերի ղեկավարությամբ[1]։ Անգլիացիները նոր նկատեցին իրենց դեմ ուղղած անթիվ թնդանոթները, որոնք պատրաստ էին կորուստ բերել իրենց նավերին։ Եվ որովհետև լուր առան, թե նույնպիսի պատրաստություններ սկսել են և Դարդանելի ափերին, ծովակալը, վախենալով, թե կկտրվի իր նահանջի ճանապարհը, շտապեց դուրս գալ Միջերկրական ծովը և արշավեց Եգիպտոսի վրա՝ այդ երկիրը հափշտակելու համար։ Նավերից ափ իջեցվեցին 7—8 հազար անգլիական զինվորներ, որոնք գրավեցին Ալեքսանդրիան։ Սակայն այդ զորքերի մի խոշոր մասը բնաջինջ եղավ նեղ փողոցներում ալբանացի Մեհեմեդ Ալի փաշայի մի բուռն ալբանացի զինվորների ձեռքով։ Փաշան 100 անգլիական գլուխներ ուղարկեց Ռեմլե՝ նրա մի հրապարակը դրանցով զարդարելու համար։ Անգլիացիներն այս երկրորդ անհաջողությունից ստիպված եղան հեռանալ Միջերկրական ծովի արևելյան մասից։

Սուլթան Սելիմը կարող էր իրեն համարել երջանիկը բռնակալների մեջ, եթե միայն բռնակալներին նույնիսկ ավելի շատ ծաղրական չափով հատուկ չլինեն մարդկային իշխանատենչության հեղհեղուկ բախտը։ Եգիպտոսի անցքերից հազիվ մի քանի շաբաթ անցած՝ Կ. Պոլսում ահավոր ապստամբություն էր ծագում Սելիմի դեմ։ Պատճառն այն էր, որ նա փորձեր էր անում թուրքական բանակը վերակազմելու եվրոպական կարգերով, մի բան, որ ամենից առաջ նշանակում էր, թե անսահման իշխանությունից պիտի զրկվեն կատաղի, անկարգ, վայրենաբարո ենիչերիները, որոնք վաղուց էին մի կատարյալ պատուհաս դարձել թուրքական պետության համար։ Թուրք ազգաբնակությունը լինելով տգետ և կրոնամոլ, ֆանատիկոսաբար ատում էր օտարներին, ուստի նա էլ հակառակ էր զինվորական ռեֆորմին։ Տեղի ունեցան արյունահեղ ընդհարումներ, որոնց մեջ նոր զորքերը ահավոր պարտություն կրեցին հներից. և Սելիմը, թեև շտապեց ոչնչացնել իր բոլոր զինվորական նորմուծումները, մնալով մենակ ու անպաշտպան, մայիսի 29-ին լաց ու կոծով հրաժարվեց իր բռնավորական գահից, հետո նաև սպանվեց։ Նրան հաջորդեց Մուսթաֆա Դ, մի ողորմելի միջակություն, որին հետաքրքրում էին լոկ իր զվարճությունները։

Կոմս Գուդովիչը, զինադադարի ձեռնտու պայմաններ կնքելով Քյոռ Յուսուֆ փաշայի հետ, իր զորքերի մեծ մասը տեղափոխեց Վրաստան՝ ձմեռելու համար։ Արփաչայի հաղթության համար նա ստացավ Ալեքսանդրից

[1] Э. Лавис и А. Рамбо, II, с. 91.

գեներալ-ֆելդմարշալի բարձր աստիճանը և գնաց Թիֆլիս՝ դափնիների վրա հանգչելու համար։ Հետևյալ տարին պիտի բերեր դառն ծաղր նրա այդ դափնիների վրա։

4. Երևանի երկրորդ պաշարումը։ Ֆինկենշտայնի դաշնագրության կնքումից հետո անմիջապես Նապոլեոնն ուղարկում է Պարսկաստան մի նոր դեսպանություն գեներալ Գարդանի գլխավորությամբ։ Դեսպանության պաշտոնն էր, ինչպես տրամադրում էր Նապոլեոնի ստորագրած հրահանգը, կյանքի մեջ մտցնել ֆրանս-պարսկական դաշնակցությունը։ Գեներալ Գարդանը պիտի ամեն ջանք գործ դներ Պարսկաստանն ու Թուրքիան միացնելու համար, որպեսզի նրանք Ֆրանսիայի հետ մի դաշնակցություն կազմեն Ռուսաստանի դեմ գործելու համար։ Միաժամանակ պետք էր չորս ամսվա ընթացքում հետազոտել Պարսկաստանը ռազմական-տնտեսական տեսակետից՝ ֆրանս-պարսկական դաշնակցության երկրորդ խոշոր նպատակը—արշավանք Հնդկաստանի վրա, գործադրության մտցնելու համար[1]։

Բայց գեներալ Գարդանը, ուղևորվելով Ֆրանսիայից, հազիվ սեպտեմբեր ամսին հասավ Կ. Պոլիս։ Իսկ այդ միջոցին կնքված էր Տիլզիտի դաշնագիրը, ֆրանս-ռուսական թշնամությունը դարձել էր ֆրանս-ռուսական դաշնակցություն, որ բոլորովին այլ կերպարանք էր տվել միջազգային քաղաքական հարաբերություններին։ Կ. Պոլսում Գարդանը նոր հրահանգ է ստանում իր կառավարությունից, թե պետք է նկատի առնել, որ ռուսներին Վրաստանից հեռացնելն այլևս չէ կարող լուրջ ձեռնարկություն մնալ ֆրանսիական քաղաքականության մեջ և Ֆրանսիայի դերը Ռուսաստանի և Պարսկաստանի մեջ կարող է այնուհետև լինել միայն բարեկամական, հաշտեցնող։ Մնում էր Ֆինկենշտայնի դաշնագրության երկրորդ մասը՝ հնդկական ծրագիրը, և նրանով էլ պիտի զբաղվի Գարդանը[2]։

Գարդանն իր բազմաթիվ հետևորդներով, որոնք կազմում էին նրա դեսպանությունը, Կ. Պոլսից գնաց Էրզրում, ուր նրան մեծամեծ պատիվներով ընդունեց Յուսուֆ փաշան։ Սակայն ֆրանսիացի ճանապարհորդներից ծածկված չմնաց երկրի աղետալի դրությունը։ Էրզրումից մինչև Պարսկաստանի սահմանը նրանք տեսան քրդերի ձեռքով կողոպտված ու հրդեհված գյուղեր[3]։ Գարդանի հետևորդներից մեկը նկարագրում է Հայաստանի համար այնքան սովորական դարձած մի տեսարան։ Դեսպանությունն անցնում էր քրդական խժդժությունների դասական հայրենիք դարձած Ալաշկերտի հովտով։ Քրդերը քանդել էին և կողոպտել Յոնջալու և շրջակա հայ գյուղերը։ Ամեն տեղ երևում էին ծխացող ավերակներ։ Սարսափահար փախչում էին հայ կանայք, իրենց երեխաներին բռնած, և պատմեցին, թե քրդերը սրի են քաշել բոլոր չափահաս տղամարդկանց ու պատանիներին[4]։

Այս աղետն, անշուշտ, ոչինչ չէր ասում եվրոպացի դիվանագետների սրտին։ Եվ առաջին հանգամանքը, որ գրավում էր նրանց ուշադրությունը, այն էր, որ հալածվող ու ջնջվող հայերը որոնում էին ռուսների հովանավորությունը։ Նապոլեոնի կողմից Պարսկաստան ուղարկված քաղաքական գործակալները, ճանապարհ ընտրելով գլխավորապես Տրապիզոն-Թավրիզ ուղղությունը, ծանոթանում էին Էջմիածնի հետ կամ անձամբ այցելելով նրան կամ անցնելով նրա մոտով։ Բնականաբար նրանց աչքից չէր կարող վրիպել այն դերը, որ կատարում էր այդ վանքը ռուսաց արևելյան քաղաքականու-

[1] "Mission du Général Gardane en Perse", p. 81—94.

[2] Ed. Driault, La Politique orientale de Napoléon, p. 341.

[3] "Mission du Général Gardane en Perse", p. 37.

[4] I. M. Fancoigne, Lettres sur la Perse et la Turquie l'Asie, t. I, Paris, 1819, p. 14.

թյան մեջ։ Այս դերը նկատեց նաև գեներալ Գարդանը։ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրին գրած իր պաշտոնական նամակներից մեկի մեջ նա ասում էր, թե Ռուսաստանն իր արևելյան քաղաքականության հիմքերից մեկը դարձրել է կրոնական հարցը։ Այս մի խախուտ հիմք չէ։ Կրոնն Արևմտյան Եվրոպայում է, որ կորցրել է իր նախկին նշանակությունը։ Արևելքն այդպես չէ։ Այստեղ դեռ հզոր է կրոնը և իր քահանաների միջոցով սաստիկ ազդում է ժողովրդական զանգվածների վրա։ Արդ, Ռուսաստանն Արևելքում իրեն հայտարարում է ճնշված քրիստոնյաների պաշտպան։ Իր այս դիրքից նա շատ օգուտներ է քաղել Թուրքիայում։ Միևնույն եղանակով նա վարվում է և Պարսկաստանի վերաբերմամբ։ Եվ այստեղ նրա ձեռքին հզոր միջոց է Էջմիածնի (Ուչքիլիսեի) վանքը։ Իր մարդկանցից մեկին Ռուսաստանը նստեցրել է այստեղի կաթողիկոսական աթոռի վրա և այսպիսով դարձրել է նրան մի հզոր գործիք՝ իր ազդեցությունն Արևելքում տարածելու համար, փոխարեն խոստանալով հարստահարված հայերին լավագույն ապագա[1]։

Այս դիտողությունները, որոնց ճշտությունն, իհարկե, անկարելի է ժխտել, ֆրանսիական պաշտոնակալները միայն ի տեղեկություն չէին արձանագրում իրենց թղթերի մեջ, այլ արծարծում էին և տեղում, ոչ միայն Պարսից կառավարության առաջ, այլ նույնիսկ և Էջմիածնում։ Եվ աշխատում էին հակադրություն ստեղծել ռուսական ազդեցության դեմ, ներշնչելով Էջմիածնի մարդկանց, թե Նապոլեոնն էլ կարող էր դառնալ քրիստոնյաների պաշտպան։ Եվ Էջմիածնի հոգևորականները չէին, իհարկե, որ համարձակվեին չհավատալ, թե աշխարհի առաջին հերոս Նապոլեոնը չէ կարող, եթե կամենա, պաշտպանել հայ բնաջնջվող ժողովուրդը։

Այս հանգամանքից է ծագել այն իրողությունը, որ Էջմիածինը գեներալ Գարդանի դեսպանության միջոցին երկու անգամ դիմում է արել Նապոլեոնին, խնդրելով նրա հովանավորությունը և պաշտպանությունը։ Առաջին անգամ Դանիել կաթողիկոսն էր, Ռուսաստանի այն հլու սպասավորը, որ 1808-ի ամառը, ընդունելով Էջմիածնում Պարսկաստանից վերադարձող ֆրանսիական հյուպատոս Ժան Բատիստ Բուասոնին[2], նրա միջոցով դիմում ուղարկեց Նապոլեոնին, որի մեջ ասում էր.

«Յաւիտենից ժամանակաց կայսերք Հռովմայեցւոց[3] մեծագոյն գթասիրութեամբ բարերար և ողորմած են եղեալ միշտ Թագաւորաց և քահանայապետաց Հայոց և ողջոյն ազգի նոցա և մինչև ցայսօր ժամանակի անմոռաց ունի եկեղեցին Հայաստանեայց և պարծի նովաւ միշտ, բայց ի բազմանալ անտանելի նեղութեանց և աշխարհաւերծան մեծամեծ խռովութեանց յԱսիոյ և մանաւանդ աշխարհս Հայոց օրըստօրե զրկեալ յամենայն բարերախտութեանց, ահա հարիւրաւոր ամք են, զի վասն ժամանելոյ ի յետին նուաստութիւն իբրև ի մոռացօնս եմք յամենալուսափայլ մտաց հասարակախնամ կայսերաց Հռովմայեցւոց»։

Ուրախ եմք և առաւելապէս գոհանամք զԱստուծոյ և զանապատում շնորհաց ողորմութեան նորա, զի բարերար ակնարկութեամբ նորա առ մեզ եկն ի սմին ժամանակի ի Քրիստոսաէջ Աթոռս Արարատեան խոհեմութեամբ և իմաստութեամբ հռչակեալ դեսպան Ջերոյ մեծահրաման կայսրութեանց առ բա-

[1] "Mission du Général Gardane en Perse", p. 256—257.

[2] Բնագրի մեջ անվանված է «դեսպան», բայց Պարսկաստան գնացած ֆրանսիական դեսպանների ցանկի մեջ չկա այդպիսի մի անուն։ Մենք կարծում ենք, թե նա դեսպան չէ եղել, այլ հյուպատոս կամ մի այլ պաշտոնյա Գարդանից առաջ եղած դեսպանությունների մեջ։

[3] Նապոլեոնը կրում էր կայսր Ֆրանսիայի և Թագավոր Իտալիայի տիտղոսները։ Վերջին տիտղոսը դարձնում էր նրան հռոմեական կայսրների հաջորդ։

բերարոյ և ողորմածագոյն բարձրաստիճան Շահն հզօրաց Պարսից և առյատուկ պաշտպանն սրբոյ Աթոռոյս մերում Աբպաս Միրզա որդի նորա ողորմութեամբ և մարդասիրութեամբ և իմաստութեամբ գերապատուեալ բարձբարեծնունդ արեգական նշանակիր Ժան Բատիստ Բուասո, զոր կարեմք հանգանատիպ ընդունել նշան մեծագոյն ողորմութեան Աստուծոյ, որ երբեմն Հայրն աշխարհի զաղանին՝ յորժամ ի տապան անդր տարածեալ ծփիւր յերես աշխարհահեղձոյց ջուրց։

Լաւ ևս կարէ պատմել յիշեալ դեսպանն ամենողորմած աստուածատիպ սուրբ կայսրութեան։ Այլ մեք փստահացեալ յաստուածագութ յողորմութիւն ձեր և ի բարեբար ակնարկութիւնս նախնի աթոռակալաց ձերոց աստէն ի ծագս տիեզերաց ի ծունկս անկեալ առաջի ամենողորմած Աթոռոյ Ձերոյ բարձրագոյն կայսերութեան, որպէս աթոռակալի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, յանձն առնեմք շնորհաց աշխարհատարած ողորմութեան և մարդասիրութեան ձերոյ և զԱթոռս Արարատեան և զամենայն զհոգևորականս և զմարմնաւորականս Հայոց և ամենախոնարհաբար խնդրեմք զի ուր տարածեսցի ողորմութիւն աթոռոյ ձերոյ կայսերական մեծութեան եղիցի հովանի ազգի և եկեղեցւոյ Հայաստանեայց»[1]։

Գեներալ Գարդանը մտավ Թեհրան 1807 թվականի դեկտեմբերի 4-ին և ընդունվեց, ինչպես, ջերմությամբ։ Դեռ երիտասարդ մարդ, Նապոլեոնի առանձին ուշադրության արժանացած և նրա համհարզը (ադյուտանտը) կոչվելու շնորհով պատվված գեներալ Գարդանն սկսեց մի շատ եռանդուն գործունեություն, որ հիշեցնում էր Սեբաստիանիի գործունեությունը Կ. Պոլսում։ Իր հետ բերած սպաներին նա դրեց պարսից հրամանատարության տրամադրության տակ՝ պարսկական զորքերը եվրոպական կարգերով վերակազմելու և կրթելու համար։ Ֆաթալի շահին հաստատել տվեց Ֆինկենշտայնի դաշնագրությունը, առևտրական դաշնագրի պայմաններ մշակեց մեծ վեզիր Միրզա Շաֆիի հետ, որի հետևանքով Ֆրանսիային էր զիջվում Պարսից ծոցում գտնվող մի կղզյակ, որ շատ կարևոր նշանակություն ուներ, և որի վրա աչք էին դրած նաև անգլիացիները։ Միաժամանակ Գարդանը զբաղվեց Հնդկաստանի արշավանքով և իր կատարած ուսումնասիրություններն ուղարկեց իր կառավարությանը։ Անգլիացիներն էլ դեսպանություն էին ուղարկում Թեհրան՝ Պարսկաստանն իրենց ազդեցության տակ գցելու համար։ Երբ լուր տարածվեց, թե անգլիական դեսպանությունն արդեն Պարսից ծոցումն է, շահը Գարդանի պահանջով, հրամայեց Շիրազի կառավարչին արգելել նրան ափ իջնել։ Այդպես էլ եղավ։ Գեներալ Գարդանի բախտը բերում էր ամեն ինչի մեջ, և նրա դեսպանության առաջին ութ ամիսները միանգամայն հաջողակ էին։ Բայց ֆրանսիական քաղաքականության կացինը քարին առավ այն ժամանակից, երբ Ռուսաստանը խառնվեց պարսկական գործերի մեջ։

1808-ի մայիսին Թավրիզում երևաց փոխգնդապետ բարոն Վրեդեն, ռուսական զորքերի մի սպա, որ ուղարկված էր կոմս Գուդովիչի կողմից վերանորոգելու պարսից կառավարության հետ բանակցությունները հաշտության կնքելու մասին։ Պայմաններն արդեն մեզ հայտնի են, և նրանցից ոչինչ չէր զեղչված։ Առաջվա պես պահանջվում էր, որ Պարսկաստանը զիջի Ռուսաստանին Երևանի և Նախիջևանի խանությունները, որպեսզի Ռուսաստանի և Պարսկաստանի մեջ գծվի բնական և անփոփոխ սահման Կուր և Արաքս գետերով։ Այս պահանջը մեծ ցասում է պատճառում Պարսից կառավարությանը։ Աբբաս Միրզան կատաղած պատռում է Գուդովիչի նամակը, Ֆաթալի շահը

[1] «Լումայ» հանդես, Թիֆլիս, 1898, գիրք Ա, եր. 295—296։

և Միրզա Շաֆին դիմում են Գարդանին։ Ահա հարմար րոպեն կատարելու Ֆինկենշտայնի դաշնագիրը, ասում են նրանք ֆրանսիական դեսպանին. Ռուսաստանը ոչ միայն չէ վերադարձնում Վրաստանը, այլև նոր երկրներ է պահանջում։ Այստեղ ահա մերկանում է գեներալ Գարդանի կեղծ դրությունը և Պարսից կառավարությունն առաջին անգամ հիասթափում է զգում, տեսնելով, թե որքան սխալված էր ինքը, հավատ ընծայելով Նապոլեոնի խոսքերին։ Ֆրանսիական դեսպանի դիվանագիտական ճարպկության էր մնում շտկել անհամ դրությունը, ոսկեզօծել անհարմար փաստերը։ Եվ Գարդանը ֆրանսիական քաղաքականության խաբեբայական արհեստի բարձրության վրա ցույց տվեց իրեն։ Նա բացատրեց, որ եթե Նապոլեոնը Տիլզիտի դաշնագրության մեջ Պարսկաստանի անունն անգամ չէ հիշատակել, պատճառն այն էր, որ այդ ժամանակ Ֆինկենշտայնի դաշնագրությունը դեռ չէր վավերացված շահի կողմից։ Սակայն, հավատացնում էր Գարդանը, դրությունն այնքան վատ չէ, ինչպես կարծվում է։ Պարսկաստանն, այնուամենայնիվ, Նապոլեոն Մեծի դաշնակիցն է, և այս հանգամանքը չէ կարող անտես անել նրա մյուս դաշնակիցը՝ Ռուսաստանը։ Գարդանն առաջարկում էր, որ Ռուսաստանի և Պարսկաստանի մեջ այժմ կնքվի ժամանակավոր զինադադար, իսկ մշտական հաշտության բանակցությունները փոխադրվեն Փարիզ, ուր Նապոլեոնը միջնորդի դեր կկատարեր։ Գարդանն ինքն սկսեց բանակցություններ կոմս Գուդովիչի հետ այս ուղղությամբ[1]։

Գուդովիչը կտրականապես մերժեց ֆրանսիական միջնորդության առաջարկը։ Եվ այս վարմունքն այնքան գոհունակություն պատճառեց Ալեքսանդր կայսրին, որ նա Գուդովիչին հանձնեց ամբողջ գործը, լիազորելով նրան կանգ չառնել նույնիսկ պատերազմական գործողությունների առաջ։ Գարդանը կատարյալ պարտություն էր կրում։ Նա փորձեց թուլացնել Գուդովիչի անհաշտության թափը, գրելով նրան, թե Պարսկաստանի հողային ամբողջության երաշխավոր է դարձել Նապոլեոնը։ Գուդովիչը չքաշվեց և այդ հանգամանքից։ Ու երկար ժամանակներից ի վեր ձգձգվող բանակցություններին վերջ դնելու համար վճռեց զենքի ուժով վերցնել Երևանն էլ, Նախիջևանն էլ, և այսպիսով, պատերազմական գործողությունները վերանորոգվում էին 1808 թ. աշնանը։ Նրանք տարվում էին երկու ուղղությամբ։ Ինքը Գուդովիչը գլխավոր բանակի հետ գնում էր ուղղակի Երևանի վրա, իսկ Ղարաբաղում, Բարդա ավերակ քաղաքի մոտ (Թարթառ գետի վրա) բանակ դրած գեներալ Նեբոլսինի զորամասը պիտի Ղարաբաղի վրայով գնար Նախիջևան և գրավեր այդ քաղաքը։ Սեպտեմբերի 30-ին Գուդովիչի բանակը մոտեցավ Էջմիածնին և առանց որևէ դժվարության գրավեց այն և թողնելով այնտեղ զորքերի ծանրոցքը, ինքն անցավ դեպի Երևան և սկսեց նրա պաշարումը։ Հյուսեին Ղուլի սարդարը, հենց որ ռուսները մոտեցան Երևանին, դուրս եկավ այդտեղից մոտ 5 հազար ձիավոր զորքի գլուխ անցած, և գնաց բանակ դրեց Գառնիի շրջանում, հանձնելով Երևանի բերդի պաշտպանությունն իր եղբայր Հասան խանին, որի հրամանի տակ գտնվում էին 2 հազար ընտիր պարսկական զինվորներ։

Բայց Գուդովիչը կարծում էր, թե Երևանը կարելի է առնել և առանց պատերազմի, բավական է, որ բերդեցիք իմանան, թե ով է ինքը, ռուսական գլխավոր հրամանատարը։ Այս պատճառով նա գրեց մի կոչ, որ ուղղված էր Երևանի թուրք և հայ ազգաբնակության, բերդապահ զորքին և նրա հրամանատար Հասան խանին և առաջարկում էր ամենքին, որ բերդն իրեն հանձնեն։ «Օրինակ մի վերցնենք,— ասում էր նա այդ կոչի մեջ,— Երևանի բերդի

[1] Ed. Driault, La Politique orientale de Napoléon, p. 326—330.

առաջին անհաջող պաշարումից։ Այն ժամանակ այլ էին հանգամանքները, այժմ այլ են։ Այն ժամանակ զորքերին առաջնորդում էր իշխան Ցիցիանովը, որ մեկն էր երիտասարդ գեներալներից, դեռ ոչ այնքան փորձված պատերազմական արվեստի մեջ, իսկ այժմ հրամանատար եմ ես, որ արդեն 30 տարուց ի վեր սովոր եմ առաջնորդել ռուսական զորքերը։ Բացի դրանից՝ Երևանի առաջին պաշարման ժամանակ անհամեմատ քիչ էին զորքերը, իսկ այժմ ես այստեղ նրանցից այնքան ունեմ, որ ոչ միայն կարող եմ ոչնչացնել բերդը, այլև անցնել ամբողջ Պարսկաստանը ծայրեծայր։ Բայց և այնպես, խնայելով մարդկային արյունը, ես կրկին հրավիրում եմ ձեզ մտածել առաջիկա թշվառության մասին, որ անխուսափելի կլինի, եթե դուք համառեք, և այն մասին, որ ձեզնից յուրաքանչյուրը հանգիստ կերպով տեր կլինի իր գույքին և սեփականության, միանգամայն վստահ իր կյանքի ապահովության, եթե կհնազանդվեք և կհանձնեք բերդը հոժար կամքով։ Ընտրեցեք մեկը կամ մյուսը։ Ես այս թողնում եմ ձեր կամքին։ Վճռեցեք շուտով, քանի դեռ ժամանակ կա։ Մի հուսաք, Երևանի բնակիչներ, թե որևէ օգնություն կստանաք, որովհետև բերդը չէ կարող որևէ կողմից ընդունել օգնական զորք։ Ես այնքան զորք ունեմ, որ կարող եմ, բերդը պաշարման մեջ պահելով հանդերձ, ցրել դրսից եկող ամեն մի օգնություն»[1]։

Այս դիմումը մնաց անպատասխան։ Ուստի հոկտեմբերի 8-ին Գուդովիչն իր զորքերը շարժեց Երևանի վրա։ Արյունահեղ կռիվ սկսվեց, բայց հաղթանակը մնաց ռուսներին, որոնք գրավեցին իրենց ցույց տված տեղերը բերդի շուրջը (Մախթափա, Մուխաննաթ բլուրները՝ հյուսիսային արվարձանը՝ Թափի բաշ անունով)։ Այսպիսով Երևանը պաշարված էր ամեն կողմից։ Բայց պաշարման գիծը միանգամայն ապահովված չէր, քանի որ Հյուսեին Ղուլի սարդարը կանգնած էր իր զորքով Գառնի գետի վրա։ Այս պատճառով Գուդովիչն էլ, Ցիցիանովի նման, ստիպված եղավ այդ կողմն ուղարկել մի զորաբաժին՝ սարդարի բանակը ոչնչացնելու համար։ Սակայն սարդարը խուսափում էր կռվից և ռուսներից թաքնվում էր Արաքսի մյուս կողմում, որպեսզի հարմար միջոցին նորից էլի Երևան գա Գառնի գետի ափին և սպառնա Երևանի պաշարողական գծին։

Գուդովիչի արշավանքը մի ամբողջ խրարանցում պատճառեց պարսից արքունիքում, որ ավելի ևս սաստկացավ, երբ գեներալ Նեբոլսինը Ղարաբաղի ձյունապատ լեռներն անցնելով երևան եկավ Նախիջևանի մոտ, ուր ջարդելով Աբաս Միրզայի զորքը, գրավեց քաղաքը։ Գուդովիչը, լուր ստանալով այդ մասին, իսկույն հայտարարեց Նախիջևանը մշտնջենապես կցված Ռուսաստանին։ Շահը կանչեց Գարդանին և իր դժգոհությունն էր հայտնում, որ Ֆրանսիան ոչինչ չէ անում՝ Պարսկաստանին այս ծանր պարագաների մեջ օգնելու համար։ Գարդանը կարող էր միմիայն զանազան արդարացուցիչ պատճառներ հերյուրել, ժամանակ խնդրել ֆրանսիական կառավարությանը գրելու և պատասխան ստանալու համար։ Ինքը միայն այն կարող էր անել, որ անմիջական բանակցություններ կսկսեր Գուդովիչի հետ։ Այս նպատակով նա ռուսական բանակն է ուղարկում իր պաշտոնյաներից մեկին։ Սակայն այս միջոցն էլ ոչինչ ազդեցություն չէ անում։ Փարիզից էլ Գարդանը չէր ստանում այնպիսի հրահանգներ, որոնք ցույց տային, թե ֆրանսիական կառավարությունը վճռել է վարել Պարսկաստանում գործոն քաղաքականություն՝ դաշնագրության հիմքերը պահպանելու համար։ Այս շատ լավ նկատում էր, պարսից կառավարությունը, և սառնությունը մտնում էր, կամա թե ակամա, ֆրանս-

1 «Акты...», III, № 443.

պարսկական հարաբերությունների մեջ։ Անգլիացիներն էլ հենց այս էին ուզում։ Նրանց դեսպանությունն սկսեց նորից առաջ գալ և ցույց տալ շատ եռանդուն գործունեություն։ Անգլիան էլ խոստանում էր վերադարձնել Վրաստանը Պարսկաստանին։ Այս պայմանն առաջիկա անգլո-պարսկական համաձայնության հենակետն էր համարվում։ Բայց ամեն տեսակ պայմաններից և խոստումներից հզոր էր հանդիսանում անգլիական ոսկին։ Դեսպանությունը բերում էր իր հետ մեծ գումարներ՝ կաշառքների համար և մեծագին ընծաներ, որոնց մեջ անվանի էին, մանավանդ, հայելիները։ Այս հայելիներն էլ, վերջ ի վերջո, Նապոլեոնի նվաճողական հմայքից բարձր հանդիսացան[1]։ Պարսից կառավարությունն սկսեց հետզհետե թեքվել անգլիացիների կողմը։ Նրանց դեսպանությունը, ափ իջնելով Պարսից ծովում, ճանապարհվեց դեպի Թեհրան։ Գարդանը բողոքում էր այս բանի դեմ, սպառնում էր, թե ինքը կհեռանա Թեհրանից անգլիացիների գալուց առաջ։ Բայց շահը չվախեցավ այս սպառնալիքից և հայտնեց, թե ինքը ոչինչ անհարմարություն չէ տեսնում, որ ֆրանսիական և անգլիական դեսպանությունները միաժամանակ գտնվեն Թեհրանում։

Իսկ Երևանի պաշարումը երկարում էր։ Գուդովիչը շարունակ աշխատում էր առանց նոր արյունահեղության ձեռք բերել բերդը։ Երբ Գառնիի կողմերում ռուսները հաղթեցին Հյուսեին Ղուլի խան սարդարին և փախցրեցին նրան Արաքսի մյուս կողմը, Գուդովիչն այս դեպքի թողած ազդեցությունը շահագործելու մտքով նորից նամակ գրեց Երևանի բերդապահին, առաջարկելով նրան առանց կռվի հանձնել իրեն բերդը։ Եվ նրան կաշառելու համար խոստանում էր նրան հաստատել Երևանի խանի պաշտոնի մեջ, տալով նրան լիակատար իրավունք կառավարելու ամբողջ խանությունը նախկին սովորությամբ։ Սակայն ռուսաց մեծախոս գեներալ-ֆելդմարշալն այնպիսի հակառակորդի չէր հանդիպել, որին կարելի լիներ գայթակղեցնել այսպիսի խոստումներով։ Հասան խանը[2] այս անգամ պատասխանեց Գուդովիչին։ Նա ասում էր, թե բերդը չի հանձնի ոչ մի դեպքում։ Իսկ գալով խանություն տալու խոստումին, պատասխանում էր, թե ինքն էլ իր կառավարության կողմից կարող է խոստանալ, որ եթե Գուդովիչը թողնե ռուսական ծառայությունը և մտնե Պարսից ծառայության մեջ, այն ժամանակ նրան կտրվեն Երևանի, Թավրիզի էլ խանությունները և ուրիշ շատ բան։ Նամակաբերին հանձնըված էր հայտնել Գուդովիչին, որ Երևանը պաշտպանող զինվորները բերված են Պարսկաստանի հեռավոր կողմերից, ուր մնացել են նրանց կանայք ու երեխաները հսկողության տակ, իբրև պատանդներ։ Եթե նրանք չպաշտպանեն բերդը, նրանց կանանց և երեխաներին կկոտորեն, ուստի նրանց համար լավ է մեռնել, քան մեռցնել իրենց ընտանիքները[3]։

Գուդովիչն, իհարկե, մեծ կշիռ չտվեց այս հայտարարության։ Եվ սակայն, բնությունն էլ միանում էր պաշարվածներին։ Սկսվեցին վաղաժամ ցրտեր, որոնք նեղում էին պաշարողներին։ Զգացվում էր պաշարի, հանդերձեղենի և այլ պարագաների պակասություն, իսկ Թիֆլիսի ճանապարհը հետզհետե դըժվարանում էր՝ սարերում եկող ձյան պատճառով։ Ամիս ու կես տևած պա-

1 Ed. Driault, La Politique orientale de Napoléon, p. 336.

2 Այս այն Հասան խանն է, որի դաժան խստությունները այնքան աղիողորմ գույներով նկարագրել է Խաչատուր Աբովյանն իր «Վերք Հայաստանի» վեպի մեջ։ Բացի դրանից, Հասան խանը շատ տխուր հիշատակ է թողել, իբրև ահեղ և անողոք բռնավոր, Երևանի և նրա շրջակաների հայ ժողովրդական ավանդությունների մեջ, որոնք պատմվում են դեռ այսօր էլ։

3 В. Потто, Утверждение русского владычества на Кавказе, т. I, Тифлис, 1901, с. 300—301.

շարումը, որ դրսից բոլորովին անօգուտ էր անցել, այնքան ձանձրացրել էր պաշարողներին, որ նրանք անհամբերությամբ սպասում էին, թե երբ, վերջապես, կսկսվի գրոհը բերդի վրա (շտուրմ), որ և կվճռե կռվի բախտը։ Իսկ ներսեցիների տրամադրությունն, ընդհակառակն, կայուն էր, լի վճռականությամբ։ Պաշարողները կտրել էին բերդի ջուրը, որ գալիս էր Դեմիր Բուլաղ աղբյուրից։ Բայց ջուր պաշարվածները վերցնում էին Զանգու գետից, իջնելով նրա խոր ձորը ռուս զինվորների հրացանային շեշտակի կրակի տակ։

Գրոհը տեղի ունեցավ նոյեմբերի 17-ին և միանգամայն անհաջող էր ռուսների համար։ Հասան խանը դիմավորեց նրանց թնդանոթային ուժեղ կրակով, որ մեծ կոտորած արավ ռուսական զորքերի մեջ։ Ռուս զինվորները չկարողացան բարձրանալ բերդի պարիսպների գլուխը, որովհետև հատկապես այդ բանի համար պատրաստված սանդուղքները դուրս եկավ, որ կարճ էին։ Գուդովիչը ստիպված եղավ ետ քաշել իր զորքերը։ Սակայն զուր հոխորտացող և հավակնոտ ֆելդմարշալն այս անհաջող գործը պարտություն չհամարեց։ Ընդհակառակը, մի նոր դիմում ուղարկեց նա բերդապահ զորքին և հասարակությանը, պահանջելով բերդի հանձնումը։ «Եթե,— գրում էր նա,— դուք հույս ունեք, թե տեղի ունեցած գրոհից հետո ես զորքերիս հետ կնահանջեմ Երևանի բերդից, ես իբրև հակադրություն այդպիսի մի սպասելիքի, կարող եմ ձեզ հավատացնել, թե հույսերը ձեզ խաբում են։ Ինձ հետ եղած զորքի հազիվ մի հինգերորդ մասն է եղել գրոհի մեջ։ Իսկ պարիսպների վրա եղած զինվորներն արդեն գիտեն բերդը տանող ճանապարհը։ Եվ այսպես, հավատացեք իմ խոսքին, որ իմ քաջ զորքերի հետ հարմարորեն կարող եմ նոր գրոհի ձեռնարկել, երկրորդ և երրորդ գրոհը։ Հավատացեք և այն բանին, որ ավելի շուտ ես ինքս կընկնեմ պարիսպների տակ, քան թե կթողնեմ բերդը»[1]։

Բայց այս բոլորը դատարկ խոսքեր էին, անմիտ սնապարծություն միայն։ Այս հոխորտանքից հազիվ մի շաբաթ անցած՝ Գուդովիչը բոլորովին հեռանում էր Երևանից և նահանջում էր դեպի Թիֆլիս։ Դեկտեմբերի 1-ին նրա օրինակին հետևեց և գեներալ Նեբոլսինը, թողնելով Նախիջևանը և նահանջելով դեպի Ղարաբաղ։

Երևանի ազատման լուրը հասավ Թեհրան և մեծ զարմանք պատճառեց ամենքին։ Չէին կարողանում հավատալ, որ Երևանի պես մի խղճուկ բերդ կարողանար ետ քշել ռուսական խոշոր բանակը[2]։ Սակայն այդ փաստ էր, և նա, իհարկե, արիություն էր ներշնչում պարսիկներին։ Մինչդեռ նրանք Նապոլեոնից էին փրկություն սպասում, դուրս եկավ մի Հասան խան, որ ապացուցեց, թե իրենք պարսիկներն էլ կարող են սեփական փրկության աղբյուր դառնալ։ Այսպիսով Գարդանի նշանակությունն ավելի ևս նսեմանում էր։ Նա միայն խոսքեր ուներ պարսիկներին համոզելու համար, մինչդեռ անգլիացիները ոչ միայն խոսքեր ունեին, այլև ոսկու կույտեր։ Նրանց դեսպանությունը Շիրազից ուղևորվեց Թեհրան։ Գարդանին միայն մնում էր կապկպել իր ճամպրուկը՝ հեռանալ Պարսից մայրաքաղաքից։ 1809-ի փետրվարի 13-ին նա այդպես էլ արավ։ Հետևյալ օրն անգլիական դեսպանությունը հանդիսավոր մուտք էր գործում Թեհրան։ Եվրոպական գիշատիչ իմպերիալիզմի երկու ախոյան ներկայացուցիչների փոփոխություն էր կատարվում։ Վերջանում էր ֆրանսիական կարճատև ազդեցությունը Պարսկաստանում, և անգլիացիներն էին, իրենց թշնամիներին խաղաղ մրցության մեջ ջախջախելով, իրենց ճիրանների մեջ առնում շահերի երկիրը։

[1] Ibid., c. 304.

[2] Ed. Driault, La Politique orientale de Napoléon, p. 336.

5. Էջմիածնական նոր իրադարձությունները։ Հյուսեին Ղուլի խան սարդարը ռուսական արշավանքի լուրն առնելուն պես Երևան փոխադրեց Դանիել կաթողիկոսին, նմանապես և նրա ախոյան Դավիթ գահազուրկ կաթողիկոսին։ Դանիելը հիվանդ էր, բայց մինչև վերջին րոպեն էլ հավատարիմ սրտով մնաց թե իր կուսակցությանը և թե ռուսաց կառավարության։ Փառատենչ և սրկամիտ ծերունին ամեն չափ ու սահման կորցնում էր մանավանդ ռուս իշխանության քծնելու մեջ։ Մենք տեսանք, որ նա կոնդակ գրեց Նապոլեոնին և խնդրեց նրա հովանավորությունը։ Գրեթե միաժամանակ Ալեքսանդր կայսրը պարգևատրում էր նրան ս. Աննայի շքանշանի առաջին կարգի ժապավենով և աստղով։ Այս բավական էր, որ մահվան դուռը հասած ծերունին մի շարք հիացական հանդեսներ կատարե Էջմիածնում, օգոստոսի վերջերին։ Ահա ինչպես էր նա նկարագրում իր երջանկությունը Գուդովիչին գրած նամակում. «Նշան առաջներորդ աստիճանի սրբոյ Աննայի և ճաճանչագեղ աստղ հանդերձ ամենաողորմած պարգևագրով նորին կայսերական մեծության ի 30 ապրիլի սույնոյ ամի, ընդ նամակաց արտաքին իրականութեանց նախարար տեառն գրաֆ Ռումեանցովի և ձերոյ պայծառափայլութեան, ժամանեցին առ մեզ ի 12 յուլիսի, որոց ընդ առաջ ելեալ եկեղեցական հանդիսիւ՝ բազմութեամբ հոգևորականաց և մարմնաւորականց, երգօք հոգևորօք և հնչեցումամբ զանգակաց մուծաք ի Քրիստոսահիմն Տաճար Տեառն՝ ի սուրբ Էջմիածին և առաջի ահեղահրաշ բեմի իջման սուրբ տեղւոյն մատուցեալ զամենաջերմեռանդ երկրպագութիւնս Թագաւորին Թագաւորաց՝ Աստուծոյ երկնաւորի, խնդրեցաք զերկարութիւն անդին կենաց Նորին կայսերական մեծութեան և զհաստատութիւն ամենաողորմած աթոռոյ բարեբար կայսերութեան ամենայն ռուսաց և մեծաձայն ամենեքին անապատում զուարճութեամբ և լիաբերան շնորհակալութեամբ օրհնելով զամենաբարեբար կայսրն և զԹագաւորն մեր զբոլոր պալատն հանդերձ զօրօք և զօրապետօք ընկալաք ի գլուխս մեր որպէս զպարգևս երկնաւորս»[1]։

Միայն անձնական փառասիրությունը չէր խոսում այն շողոքորթությունների մեջ, այլև կուսակցական շահը։ Դանիելն զգում էր, որ իր մահը մոտ է, և նրա աչքը դրվում էր շատ կարևոր մի պահանջ, որ կաթողիկոսությունն անցնե նրա կողմնակիցներից մեկին։ Ուստի նա աղերսագիր էր ուղարկում իր պաշտած կայսրին, խնդրելով, որ իր մահից հետո նա կաթողիկոս հաստատե Ռուսաստանի Հայոց առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսին։ Այսպիսի մի կտակով նա մեռնում էր Երևանում այն միջոցին, երբ այս բերդը պաշարված էր ռուսաց զորքերով։ Էջմիածնական պայքարը պատրաստ էր ամեն րոպե սուր կերպարանք ստանալու։ Կենդանի էր Դավիթը, որին իսկապես պիտի անցներ կաթողիկոսական իշխանությունը։ Այս բանից էին վախենում դանիելականները և մանավանդ նրանց մեջ ամենաեռանդունն ու ամենից շատ իշխանատենչը՝ Աշտարակեցի Ներսես եպիսկոպոսը, որ Դանիելի հաստատած բարձրագույն խորհրդի անդամներից մեկն էր։ Առանց կաթողիկոսական ընտրություն նշանակելու, առանց նույնիսկ ձևականորեն Կ. Պոլսի Հայերի համաձայնությունը հարցնելու՝ նա շտապում է մի եպիսկոպոս ուղարկել Ռուսաստան, որպեսզի Եփրեմին որքան կարելի է շուտ բերե Էջմիածին՝ կաթողիկոսական աթոռը գրավելու համար։ Եփրեմի իրավունքը դանիելականները հիմ-

[1] Ա. Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք 19-րդ դարում, հատ. Ա, Թիֆլիս, 1894, եր. 39։

նում էին այն հանգամանքի վրա, որ նա կաթողիկոսական թեկնածու ընտրըված է եղել Դանիելի հետ միասին։

Դավիթը փորձեց բողոք բարձրացնել իր իրավունքը վերստանալու համար, բայց աջակցություն չգտավ պարսից իշխանություններից։ Թագաժառանգ Աբաս Միրզայի առջև նա բացարձակորեն ամբաստանեց Ներսեսին, թե նա էր ռուս-պարսկական պատերազմների միակ դրդիչը։ Ներսեսն արդարացրեց իրեն ոչ միայն ճարտար լեզվով, այլև հարուստ կաշառքներով։ Աբաս Միրզան այլևս չէր ուզում, որ էջմիածինը դառնա կռվախնձոր երկու պետությունների միջև։ Հայերին դժգոհության առիթներ չտալու և այդպիսով ռուսական ինտրիգների առաջն առնելու համար նա իր հովանավորության տակ էր առնում էջմիածինը, մինչև իսկ ուխտ էր գնում այնտեղ և իր թուրն օրհնել էր տալիս այնտեղի հոգևորականությանը։ Այս քաղաքականության հետևանքով էր, որ նա համաձայնություն տվեց Եփրեմի կաթողիկոսանալուն և իր կողմից հաստատեց նրան այս պաշտոնի մեջ։ Դավիթն այնուհետև ստիպված էր հրաժարվել կաթողիկոս դառնալու մտքից։

Կատարյալ հաղթանակը վաստակում էր Ներսես Աշտարակեցին, որ թեև կրտսերագույնն էր էջմիածնի բարձրագույն խորհրդի (հետո Սինոդ կոչվածի) մեջ, բայց իրապես իր ձեռքն էր առել կաթողիկոսական իշխանությունը, հրամայում և կարգադրում էր միանձնաբար։

1809 թ. ապրիլին գեներալ Գարդանը, Թեհրանից վերադառնալիս, եկավ Երևան՝ Թիֆլիսի վրայով Եվրոպա ուղևորվելու համար և այցելեց էջմիածնի վանքը։ Այստեղ ֆրանսիական դեսպանը, հավատարիմ մնալով իր հայեցակետին, որ ուներ Հայոց կաթողիկոսի ռուսական քաղաքականության մեջ կատարած դերի վերաբերմամբ, նորից ներշնչեց էջմիածնի հոգևորականության՝ դիմում անելու Նապոլեոն կայսրին։ Բարձրագույն խորհրդարանը գրում է մի նամակ, որից իմանում ենք, որ Նապոլեոնը էջմիածին թուղթ ղրկած է եղել 1804, որ սակայն տեղ չէ հասել։ էջմիածնական այս երկրորդ դիմումի հեղինակ համարվում է Ներսես Աշտարակեցին[1]։ Ահա ինչ էր գրված նրա մեջ։

«Շնորհք և ողորմութիւն և բարեբար ակնարկութիւն կայսերաց գաղիացւոց ի ժամանակս յառաջինս եղեալս է առ թագաւորս, առ քահանայապետս և առ բոլոր ազգն հայոց յոյժ առատութեամբ, զորոյ լաւ ևս քան զմեզ կարող էք գիտել ի նախնեաց պատմութեանց։

Բայց յորէ վերջանալոյ թագաւորական ճոխութեան Հայոց մինչև ցայսօր ժամանակի, թէպէտ ջերմեռանդութիւն սիրոյ քահանայապետաց և ազգի Հայոց կայ մնայ նոյնպէս հաստատուն կերպիւ, այլ պսակ ջերմեռանդութեան նոցին նշան քաղցր ակնարկութեանց տիեզարակալաց գաղիացւոց, նաև գիր ողորմութեան անգամ բոլորապէս վերջացեալ. կարօտ եմք ազգովին և համարիմք մեզ այս անբախտութիւն ի վերայ անբախտութեանց։

Առիթ ցնծութեան եղև բազմավիշտ հոգևորականացս և Արարատեան Աթոռոյն էջմիածնի մինչ յամն 1804, յուր եհաս յականջս մեր թէ գիր ողորմութեան Ձերոյ կայսերական բարձրութեան ունիմք ստանալ. այլ և այնր մնացաք կարօտեալք. քանզի բդեշխն Բայազիտոյ սպան զՅովսէփ անուն դրաբերն յազգէ մերմէ և ի կորուստ գնացին ամենայն գրութիւնք որք ընդ նմա»։

Հիշատակելով այնուհետև Դանիելի գրած կոնդակը, որ ուղարկված էր 1808-ի ամառը, բայց որի պատասխանը չէր ստացված, գրությունը շարունակում էր.

1 Ա. Երիցյան, Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան Հայոց Հոգևոր Դպրոցին, Հատ. Ա, Թիֆլիս, 1898, եր. 7։

«Սիրախութիւն մեծ նոր կրկին ընծայեցաւ տառապեալ հոգևորականացս բազմութեան մինչ ի նմին ժամանակի և թերևս նշան առ մեզ յատուկ ողորմութեանն Աստուծոյ որպէս պատկեր աստուածանման ողորմած սուրբ կայսերութեան Ձեր եկն ի քահանայապետական Աթոռս Արարատեան վասն այցելութեան անայցելու հոգևորականաց բազմութեան սուրբ տաճարին Աստուծոյ բարձրագոյն փառօք և պատուօք վերահուշակեալ ճեներալ Գարդան էտըրգան[1] դեսպան տիեզերական տէրութեան Ձերոյ առ Շահն Պարսից։ Մեք թէպէտ եմք այնմիկ առաւելապէս եւ տարակուսեալք ըստ որում յիշեալ քահանայապետն մեր եւ թողեալ վասն Ձեր զիւր բազմապատիկ օրհնութիւն հանգեաւ ինքն առ բաղձալին իւր Քրիստոս, և փոխանորդն նորա յատկացուցեալն վասն քահանայապետութեան ամենայն հայոց Եփրեմ արքեպիսկոպոսն Ռուսաստանու հայոց դեռ ևս ոչ ժամանեաց յաթոռ իւր, այլ այսու ամենայնիւ մեք համագումարեալ հոգևորականք հայոց արքեպիսկոպոսք, եպիսկոպոսք, վարդապետք և կղերք բոլորեալ ջերմեռանդութեամբ աղօթարարք վասն ամենողորմած Աթոռոյ սուրբ կայսերութեան Ձերոյ ամենախոնարհաբար երկրպագութիւն մատուցանելով ձերում կայսերական բարձրութեան պէս փոխանորդի երկնաւոր թագաւորին մերում Աստուծոյ, յանձն առնեմք շնորհաց աշխարհատարած ողորմութեան Ձերում զմեզ և զաթոռս Արարատեան սուրբ էջմիածին և զամենայն հոգևորականս և զմարմնաւորականս ամենայն ազգի հայոց և ամենախոնարհաբար խնդրեմք զի վերստին նորոգ և զնոյն շնորհ նախնի թագաւորաց ձերոց աթոռակալաց շնորհ ումիցիք յատկապէս ի վերայ քահանայապետական աթոռոյս ամենայն Հայոց սուրբ էջմիածնի, որ յԱրարատ, այլև աղաչեմք և պաղատիմք զի ուր և տարածես ի ողորմութեան Աթոռոյ Ձերոյ կայսերական մեծութեան եղիցի հովանի ազգի և եկեղեցւոյ Հայաստանեայց։

Ցայլ որպիսութիւնս լաւ ևս կարէ պատմել բերանով յիշեալ դերապատիւ դեսպանն մեծ տէրութեան Ձերոյ, որ եղև ականատես և հասու բաւականապէս»[2]։

Բայց այս նամակն էլ, որ դարձյալ մի նմուշ է, թե որքան տկար էր քաղաքական գրագիտությունն էջմիածնում, մնաց, որքան հայտնի է, անպատասխան։ Գեներալ Գարդանը չէր էլ կարող մի բան անել, քանի որ Նապոլեոնը չափազանց դժգոհ էր նրանից, չուզեց անգամ տեսնել նրան, պատճառ բերելով, որ նա հեռացել է Թեհրանից ինքնագլուխ, առանց նախապես իր կառավարությունից հրահանգ ստանալու։ Այս ձևականությամբ էլ հղփացած աշխարհակալը քողարկում էր խաբեբայական քաղաքականության պարտությունն Արևելքում, որ և վերջ էր դնում հնդկական արշավանքի արկածախնդրական ծրագրին ու նրա հարակից դիվանագիտական սնամեջ ձեռնարկություններին։

Այլ էր, իհարկե, ռուսաց կառավարության վերաբերմունքը դեպի էջմիածինը։ Հաշվի առնելով միշտ միևնույնը, այսինքն՝ այն, թե ինչ օգտավետ դեր կարող է խաղալ ռուսական շահերին նվիրված ամենայն Հայոց կաթողիկոսը Պարսկաստանի հետ ունենալիք հարաբերությունների մեջ, Ալեքսանդրն շտապեց հաստատել Եփրեմի կաթողիկոսությունը և ցանկություն հայտնեց անձամբ տեսնել նրան։ Եփրեմը գնաց Պետերբուրգ, արժանանալով կայսրի առանձին ուշադրությանը, ստացավ նրանից առատ ընծաներ և միանգամայն թովված՝ թողեց Պետերբուրգը և ճանապարհվեց դեպի իր աթոռը։ էջմիածնի նվիրակ եպիսկոպոսը նկարագրել է կայսերական ընդունելության մանրամաս-

1 Անշուշտ ֆրանսերեն aide de camp բառերն են (համհարզ, ադյուտանտ)։
2 «Լումայ» հանդես, 1897, Գիրք Ա, եր. 303—305։

նությունները և մենք տեսնում ենք, որ Ալեքսանդրը շատ լավ իմացել է Արաքսի հովտում իր համար ստրուկների կայան ամրապնդելը:

«Ընկալումն նորին կայսերութեան,— գրում է այդ ականատեսը,— ոչ թէ եղև հարևանցաբար, այլ սքանչմամբ իմն, քանզի զամենեցունց միացուցեալ ի յատուկ սենեակ իւր՝ ընկալաւ, մինչ թարգմանն մեր ևս արգել արտաքոյ: Մեք և ինքն միայնացեալ՝ ի սկզբանն էցոյց իւր զանձառելի քրիստոնէութեան ջերմեռանդութիւն, և որպէս սկիզբն էառ քաղցրաբան խօսից թէպէտ մեք չգիտեաք լեզու, այլ Մանուէլ վարդապետ սակաւիկ գիտելով՝ զմեր պատասխանն առ նա՝ նորինն առ մեզ դարձուցանէր: ...Ասաց, թե «Սիրախ եմք ձեր մուտք յայս քաղաք: Ես ունիմ, ասաց, սէր և գութ ի վերա ազգին Հայոց և թէ ցանկամ նորին բարեկեցութիւն և թէ՝ որպէս գիտեմ զքո բարեաց հովուելն զազգն Հայոց, լուեալ ըստ այնմ եւ առաւել հովուել ունիս և զհայրապետական իշխանութիւնդ, որ և ամենաողորմածաբար խոստանամ կատարել զամենայն խնդիր քո և թէ յայտնի է ինձ՝ որ ի սկզբանէ մինչև ցարդ ժողովուրդք ձեր և հոգևորականք զքեզ ունին յատկացուցեալ իւրեանց կաթողիկոս, որ և մեք հաստատեցաք»: Ի վերջոյ խօսիցն կրկին հրամայեաց ելանել արտաքոյ թարգմանին, որ և, ըստ յառաջնոյն ցուցանելով իւր զներքին քրիստոնէութիւն ջերմեռանդութեամբ հանդերձ յուսադրական բանիւք խնդրելով զաղօթս և այլն: Եւ մեք ևս ծնկաչոք մատուցաք զաղօթս և զխոնարհ երկրպագութիւն ի յերկիր խոնարհելով: Ապա արձակեալ սուրբ յերեսաց նորին՝ ելաք ի պալատն մեծ»[1]: Այսքանը բավական չհամարելով, Ալեքսանդրը խնդրեց Եփրեմին պատարագ մատուցանել Պետերբուրգի Հայոց եկեղեցում, ինքը ներկա եղավ պատարագին, ապա գնաց Հովակիմ աղա Լազարյանի տունը, ուր ճաշ էր պատրաստված ի պատիվ նրա և կաթողիկոսի: Եփրեմին տրվեց արքունական գանձարանից ճանապարհածախս 5000 ռուբլի և նրա հետևորդներին զանազան չափով գումար: Հոգևորականը, այն էլ հայ հոգևորականը, չպիտի լիներ, որ չկախարդվեր հզորների այսքան ողորմածությունից:

Եփրեմը էջմիածին հասավ 1810 թ. հոկտեմբերին: Ռուսների և պարսիկների միջև շարունակվում էր պատերազմական դրությունը, և կարծողներ կային, թե պարսիկները կարող են արգելք հանդիսանալ, որ կաթողիկոսը, իբրև ռուսի մարդ, մուտք գործե էջմիածին: Բայց Աբաս Միրզան, որ այդ ժամանակ գտնվում էր իր բանակով Արտաշատ գյուղի մոտ, հրամայեց, որ կաթողիկոսին ընդունեն մեծ պատիվներով: էջմիածին հասնելուց հետո Եփրեմը գնաց ներկայանալու պարսից թագաժառանգին և ահա ինչպես է ինքն իսկ նկարագրում այդ իր գտած ընդունելությունը Գրիգորիպոլ ուղարկած իր անդրանիկ կոնդակի մեջ.

«Յետ երկուց ճանապարհորդեալ յԱրտաշատ մերձ ի խոր վիրապն սրբոյ Լուսավորչին մերոյ, ուր էր բանակեալ ահաւոր զօրաց բազմութեամբ զօրութեանց արժանաւոր մեծազօր Աբաս Միրզայ Շահզադայն, ըստ ճշմարիտ հուսադրութեան նոցա ի ձեռն բազմիցս գրեալ հրովարտակաց իւրոց, գտաք առաջի նորա և առաջի մեծ եպարքոսի նորին և ամենայն նախարարաց և բոլոր բանակին զմեծ շնորհս, մինչև զարմանալ ամենայն տեսողաց և լսողաց: Քանզի զառաջինն ինքն մեծազօր Շահզադայն՝ որ մինչև ի Թիֆլիզ էր յղեալ զերկուս ի ծառայից իւրոց հրաւիրակս մեզ, իսկոյն ընդ մտանելն ի սուրբ Աթոռն՝ մեծ եպարքոսն նորա հանդերձ զրութեամբ իւրով, յղեալ զոմն ի հաւատարմաց իւրոց՝ շնորհաւորէր զգալուստ մեր և այն ինչ ի 13 նորին ամսոյ ի ճանապարհորդել մեր ի բանակս ընդմիջէաք զճանապարհն, ահա եկին ընդ յա-

1 Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և այլն, էր. 49—50:

ռաջ առաքեալք ի մեծ եպարքոսէն գանձապետն և իշխանն կառավարութեան տան նորա՝ բազմութեամբ զինուորաց հեծելոց և իբրև սակաւ մի յառաջ ընթացաք, և անդէն ահա եկին ընդ յառաջ առաքեալք ի մարդասէր Շահզադայէն երկրորդ ի յանդիմանակաց պաշտօնէից տէրութեան նորա, նոյնպէս բազմութիւն հեծելոց: Եւ այնպէս մեծաւ փառօք մուծեալ զմեզ ի բանակ անդր՝ տարեալ իջուցին ի վրան եպարքոսին, զորս յատուկ վասն մեր տուեալ էր հարկանել դուռն առ դրան իւրում վրանին՝ ոչ հեռի աւելի քան զտասն քայլ, ուր իսկոյն ընդ բազմիլն՝ մատուցին ահա ի վրանաց եպարքոսին զզանազան անուշեղէն ըմպելիս և ուտելիս՝ մեզ և ընդ մեզ եղեալ արքեպիսկոպոսացն և յետ սակաւուց զհամադամ կերակուրս, թէպէտ և ծոմ էր ինքեանց այն օր: Սոյնպիսի գործեցին զմարդասիրութիւնս յորչափ աւուրս մնացաք ի բանակի անդ: Յերկրորդումն աւուր՝ որ 14 էր ամսոյն՝ ներկայացուցեալ զմեզ, բարեգովեալ Շահզադայն հրաւիրեալ նստոյց յանդիման իւր յոյժ մերձաւորագոյն, և թէ որպիսի մարդասիրութիւն և յուսադրութիւն արար, արդարև Աստուծոյ սքանչելեացն էր տնօրինութիւնն և արժանաւոր մեծի զարմացման: Յերրորդումն աւուր մատուցաք մեք զընծա զորս արժան համարեցաք զկառէթն մեր և զոմանս իրս՝ գործս ճարտարաց եւրոպացւոց՝ ոչ բաղում ինչ և թէ որպիսի հաճութեամբ ընկալաւ, անպատմելի է եղանակն առատասիրտ և առանց ագահութեան պատկերակերպող: Ի չորրորդումն աւուր՝ որ օր 16 էր ամսեանն ինքն մեծազօր Շահզադայն յղեաց վասն մեր նախ զչորս պատուականն խիլայս, զերկուս դիպակեղէն ագանելիս ըստ ծիսի պարսից, զգօտի ոսկեթել ծանրագին և զշալ՝ զոր սովորութիւն է կաթողիկոսաց իբրև նշան յարգութեան սպրգեալ ի նախնի թագաւորաց Պարսից՝ արկանել զպարանոցաւ երկնքին ծայրքն կախեալք զառաջեաւ մինչև ցթաթս ոտիցն: Յղեաց և վասն եօթն պատուաւոր արքեպիսկոպոսացն՝ որք ընդ մեզ զմի մի ոսկեթել ագանելիս և զշալս, ևս վասն տէր Մելիքսեդեկ խաչակիր աւագ քահանայի Ղամղեանց զերկուս ոսկեթել ագանելիս: Ապա յղեաց վասն մեր զմի երիվար և զնոր այնորիկ զհրովարտակն վասն կաթողիկոսութեան մերոյ, յորում յետ ազգի ազգի յուսադրութեանց և վերահաստատութեանն նախնի թագաւորացն Պարսից պարգևագրով շնորհաց՝ յաւելու նոր ինքն և զայս թէ՝ հրամայեմք զերկուս նաէկս[1] ընթացուցանել առաջի ի հեծանելն ի ձի, մինն ըստ նախնի սովորութեան և միւսն՝ մերս ողորմութեան նշան, այլև յատկապէս ողորմութիւն արարեալ՝ տարեկան ռոճիկ հաստատեցաք զչորս հարիւր թուման, զորս ամ ըստ ամէ հատուսցեն առ ինքն հրովարտակաւ հանդերձ կառավարիչք տէրութեան մերոյ: Եւ այսպէս ի 17 հոկտեմբերի դարձ արարեալ փառաւորութեամբ ի սուրբ կաթողիկեն էջմիածին»[2]:

Եվ այսպես, Աբաս Միրզան էջմիածնի հարցում հակադրում էր ռուսական քաղաքականությանն իր սեփական քաղաքականությունը, հիմնված մի բարյացակամության վրա, որ նույնիսկ գերակշռում էր ռուսականը, որովհետև բացի այդ բացառիկ պատիվներից, որոնք տրվում էին կաթողիկոսի անձնավորությանը, պարսից բարձր կառավարությունը, հանձին նույն Աբաս Միրզայի, մեծացրել էր էջմիածնի կալվածատիրական իրավունքները, վերադարձնելով նրան այն գյուղերը, որոնք հափշտակված էին զանազան խաների ձեռքով: Մնում էր, որ Եփրեմն ընտրություն անե երկու պայքարող կողմերի միջև: Այդ ընտրությունն արվում էր առաջին իսկ օրերից և նա, իհարկե, հօգուտ Ռուսաստանի էր: Վայելելով հանդերձ Աբաս Միրզայի շնորհները,

1 Թամբած նժույգ:

2 Ձեռագիր (հեղինակի ժողովածուի մեջ):

էջմիածնի հոգևորականությունն, այնուամենայնիվ, մնում էր հակված ռուս կառավարությանը, պատրաստ կատարելու նրա կամքը։

Եփրեմի անձնավորությունն այստեղ համարյա ոչ մի դեր չէր խաղում։ Իբրև վարչական մարդ՝ նա Դանիելի նման մի ոչնչություն էր, թույլ, կամազուրկ, հեշտ ենթարկվող։ Բարոյական տկարության վրա ավելանում էր և ֆիզիկական տկարությունը։ Հիվանդության պատճառով տարվա մեծ մասը նա անկողնի մեջ էր անցկացնում։ Այսպիսով նա միանգամայն անվանական էր իբրև կաթողիկոս, և իսկական կաթողիկոս մնում էր, ինչպես և Դանիելի վերջին տարիներում, Ներսես Աշտարակեցին, ռուսական ազդեցության ամենամոլեռանդ կողմնակիցը։ Այսպիսով չեզոքանում էր Աբաս Միրզայի ամբողջ քաղաքականությունը էջմիածնի վերաբերմամբ։ Դժար է, սակայն, այն էլ ասել, որ եթե Պարսկաստանի թագաժառանգը փայփայում էր Հայոց Մայր Աթոռը, այս դեռ չէր նշանակում, թե նա միանգամայն ազատվում էր Երևանի խաների կեղեքումներից։ Պարսկական անկարգ վարչության օրենքն էր այս. մեծը, գլխավորը շնորհներ էր անում, իսկ նրա ստորադրյալը ոտնակոխ էր անում այդ շնորհները, օգտվելով այն հանգամանքից, որ շնորհ տվողը թույլ է և չէ կարող ամեն անգամ բողոքել մեծին։ էջմիածինն իր հարստություններով չափազանց համեղ մի պատառ էր Երևանի սարդարի և նրա ստորադրյալ խաների համար, որպեսզի կարելի լիներ նրան հանգիստ թողնել։ Դարերի ընթացքում նրան շարունակ կեղեքում ու կողոպտում էին, շատ անգամ մինչև կատարյալ մերկությունը, իսկ նա շարունակ լրացնում և ավելացնում էր իր հարստությունները։ Եվ նրանից առնում էին շարունակ։ Այսպես էր և Աբաս Միրզայի ժամանակ։ Հյուսեին Ղուլի խան սարդարն էլ հաճախ իր թաթը դնում էր էջմիածնի գանձատան վրա։ Բայց միշտ բռնությունը չէր այդտեղից փող կորզողը։ Հաճախ էջմիածնի մարդիկ իրենք էին բերում վանքի գումարներն իբրև կաշառք իրենց անձնական վեճերն ու փառասիրական ձգտումները կարգավորելու համար։ Դավիթ-դանիելյան վեճը շարունակ խաների կոկորդն էր խրում հայ ճորտ գյուղացիության քրտինքից գոյացած ոսկիները։ Կաշառք տալիս էին ամենքը՝ և՛ Դավիթը, և՛ Դանիելը, և՛ Ներսեսը։ Եփրեմի թույլ ու ապիկար կառավարությունը կատարյալ ազատություն էր տալիս վանքը թալանող վեղարավոր և անվեղար խաներին։ Այս կացությունն ավելի ևս հարկադրում էր էջմիածնեցիներին իրենց հայացքն ուղղել դեպի հյուսիս և սպասել այնտեղից իր Մեսիայի գալստյան։ Այս ուղղությունն անդառնալիորեն տիրական և հրամայող էր դառնում 1814 թվականից, երբ Ներսես Աշտարակեցին տեղափոխվում էր Թիֆլիս՝ Վրաստանի հայոց առաջնորդի պաշտոնով, չզրկվելով, սակայն, այն դերից, որ նա խաղում էր էջմիածնում, այսինքն՝ իսկական կաթողիկոսի դերից, որ վարում էր նաև Թիֆլիսից, միևնույն ժամանակ լինելով գործիք Վրաստանը կառավարող ռուսական կուսակալների ձեռքում։

6. Գյուլիստանի դաշնադրությունը։ Ռուսների պարտությունն Երևանի տակ բաց էր անում մի քառամյա (1809—1813) շրջան, երբ ռուսական տիրապետությունն Անդրկովկասում թվում էր մազից կախված։ Գուդովիչն իր կրած ամոթալի անհաջողությունից ստիպված՝ թողնում էր պաշտոնը, և նրա տեղ նշանակվում է գեներալ Տորմասովը։ Ճիշտ է, այս վերջինը հասկացող, անխոնջ և եռանդոտ կառավարչի համբավ էր վայելում, բայց նա չկարողացավ և չէր կարող մենակ մաքառել այն բոլոր աննպաստ հանգամանքների դեմ, որոնք՝ կուտակվելով ու բարդվելով, դարձնում էին երկիրը մի հրաբխային հող, որ շարունակ երերվում էր, հաճախ ժայթքումներ էր արձակում սպառնալով քշել ռուսներին Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսակողմը։ Գլխավոր

պատճառը, որ ռուսական նվաճողականության համար ստեղծել էր այդքան սպառնալից դրություն, այն էր, որ Երևանի պարտությունը վարկաբեկել էր ռուսական զենքի հեղինակությունն Անդրկովկասում և հարևան երկրներում։ Հասկանում էին, որ ռուսներն անհաղթելի չեն, որ նրանց կարելի է հարկադրել հեռանալ այս երկրներից։ Վերականգնել այդ զինական հեղինակությունը շատ դժվար էր, գրեթե անկարելի, որովհետև ռուսական զորքերն Անդրկովկասում չափազանց փոքրաթիվ էին, իսկ Ալեքսանդրը կարելի չէր համարում ավելացնել նրանց քանակը, որ նրան զինվորական ուժեր շատ էին հարկավոր Ռուսաստանում, որպեսզի կարողանա դեր կատարել եվրոպական գործերի մեջ։

Անդրկովկասի դրությունը վատթարացնում էր մասնավորապես և այն ընթացքը, որ ստանում էր եվրոպական քաղաքականությունը 1808-ից հետո։ Տիլզիտի հաշտությունը, գեթ առժամանակ, մոտեցնում էր Ալեքսանդրին և Նապոլեոնին, բայց և թշնամացնում էր ռուսաց ցարին նրա նախկին դաշնակից Անգլիայի հետ։ Անգլիան, դուրս մղելով ֆրանսիական ազդեցությունը Թուրքիայից և Պարսկաստանից, հաստատուն դիրքեր էր գրավում այդ երկու երկրների արտաքին քաղաքականության մեջ պաշտպանողական և հարձակողական դաշնադրություններով կապվելով երկուսի հետ։ Մանավանդ թույլ ու անկարգ Պարսկաստանը դառնում էր մի կատարյալ խաղալիք անգլիական դեսպանի ձեռքում, որի գլխավոր հոգսը դառնում էր հրահրել թշնամություն Ռուսաստանի դեմ։ Անգլիան սովորություն էր դարձրել փուշ քաղել ուրիշի ձեռքով։ Գրգռելով Պարսկաստանը և Թուրքիան Ռուսաստանի դեմ, Անգլիան իր զորքերով չէր օգնում նրանց, այլ տալիս էր նրանց փող, զենք և պատերազմական այլ հանդերձանքներ ու այսպիսով գնում էր պարսիկ և թուրք դժբախտ ժողովրդական զանգվածները՝ նրանց «թնդանոթային միս» դարձնելու համար։

1809 թվականին վերանորոգվում էր ռուս-թուրքական պատերազմը։ Ռուս կառավարության համար նորից անհրաժեշտություն էր դառնում վերջ դնել պարսկական պատերազմին, հաշտություն կնքելով շահի կառավարության հետ։ Այժմ Պետերբուրգն ավելի զիջող էր դարձել։ Երևանից և Նախիջևանից նահանջելուց հետո, իհարկե, այլևս անկարելի էր պահանջել, առաջվա նման, այդ խանությունների կցումը Ռուսաստանին։ Այժմ ռուսները բավականանում էին և այն հողերով, որոնք գտնվում էին իրենց իրական տիրապետության տակ։ Սակայն Թեհրանի անգլիական դեսպանը, որ Պարսկաստանի իրական կառավարիչն էր դարձել, չէր թույլ տալիս, որ պարսիկները հաշտության բանակցություններ սկսեն առանց պայման դնելու, որ ռուսները բոլորովին հեռանան Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսակողմը։ Միաժամանակ անգլիական կառավարությունը զինակցություն կնքել էր տալիս Թուրքիայի և Պարսկաստանի մեջ՝ միացած ուժերով Ռուսաստանի դեմ կռվելու համար։ Այս կռիվն արդյունավետ դարձնելու համար կազմակերպվում էր, անգլիական կառավարության միջոցներով և ղեկավարությամբ, ընդարձակ պրոպագանդ Կովկասի կողմերում մի ընդհանուր ապստամբություն բարձրացնելու համար ռուսական տիրապետության դեմ։ Պրոպագանդը մղվում էր թե՛ թուրքերի և թե՛ պարսիկների կոչերի, ֆերմանների միջոցով, որոնց մեջ մեծամեծ խոստումներ էին արվում թե՛ Հյուսիսային Կովկասի, թե՛ Դաղստանի և թե՛ Անդրկովկասի բոլոր ժողովուրդներին։ Եվ ապստամբական պրոպագանդը պարարտ հող էր գտնում ոչ միայն մահմեդական ազգաբնակության մեջ, այլև Վրաստանի այն կողմերում, ուր դեռ վառ էր ազգային անկախության զգացմունքը։ Այդպես էր, օրինակ, Իմերեթը, որի Սողոմոն թագավորը օգտ-

վում էր ամեն մի հարմար առիթից ռուսական հպատակությունը թոթափելու և իր երկրի նախկին անկախությունը վերականգնելու համար։ Իր հույսը նա դրել էր Թուրքիայի աջակցության վրա և մոտիկ հարաբերություններ էր պահպանում Ախալցխայի Թուրք փաշայի հետ։ Ապստամբական խմորումների մեջ էին նաև Աբխազիան և Դաղստանը։ Անխոնջ, արի և ուխտյալ ռուսատյաց, բայց և միշտ անհաջողակ Ալեքսանդր արքայորդին դեռ չէր կորցրել իր հույսը, թե ետ կխլի Վրաստանը Ռուսաստանի ձեռքից, ուստի կամ պարսիկների հետ էր գործում կամ Թուրքերի հետ և շարունակական ջանքեր էր գործ դնում ամբողջ Վրաստանն ապստամբեցնելու համար։ Նրա հետ միևնույն ուղղությամբ աշխատում էին և վրաց մյուս արքայորդիները, որոնք կամ փախել էին պարսից կողմը կամ թե թաքնվել էին լեռնային ամուր վայրերում, օրինակ Օսեթիայում։ Ինչ վերաբերում է Արևելյան Անդրկովկասի Թուրք խաներին, նրանք բոլորը, բացի մեկից (Թալիշի խանից) վաղուց արդեն հոգով ու մտքով պարսից շահի կողմն էին և սպասում էին նրա զորքերի մեծ ու վճռական արշավանքին, որպեսզի դեն ձգեն ռուսական լուծը։

Այսպիսով ամեն ինչ պատրաստ էր Կովկասը հրդեհելու համար։ Ամեն տեղ շարժում, ամեն տեղ ըմբոստական տրամադրություն, չհաշված, իհարկե, սոսկ այն տեղերը, ուր ապրում էին հայերը, որոնք անփոփոխ մնացին այն համոզման մեջ, թե ռուսական տիրապետությունը փրկություն է նրանց համար, ասիական արնախում բարբարոսությունից։ Եվ եթե, չնայած, որ ամեն տեղ կուտակված էին այրեցիկ նյութեր, մի ընդհանուր հրդեհ, այնուամենայնիվ, չբռնկվեց, պատճառն, ամենից առաջ այն էր, որ պարսկա-թուրքական դաշնակցությունը չկարողացավ զարգացնել խոշոր և եռանդուն չափերով արշավողական գործողություններ։ Ռուս-թուրքական պատերազմն այս անգամ (1809—1811) գրեթե բացառապես ամփոփված մնաց Դանուբի ափերին։ Ասիական թատերաբեմի վրա ոչ ռուսները և ոչ թուրքերը կանոնավոր հարձակողական պատերազմ չէին վարում, այլ բավականանում էին իրենց սահմանները պաշտպանելով։ Թուրքերն այստեղ ամեն ազատություն տվել էին իրենց դաշնակից պարսիկներին, և Երևանի Հյուսեին Ղուլի խան սարդարը 20 հազարանոց մի բանակով անցել էր թուրքական հողը և բանակ դրել Ախալքալաք բերդի մոտ՝ այդ կողմերով Վրաստան մտնելու դիտավորությամբ։ Պարսկական բանակի երկու ուրիշ մասերը, Ֆաթալի շահի երկու որդիների՝ Մամեդ Ալի Միրզայի և Աբաս Միրզայի, ղեկավարությամբ ուղղված էին դեպի ուրիշ կողմեր՝ առաջինը դեպի Փամբակ—Շորագյալ և երկրորդը՝ դեպի Ղարաբաղի և Գանձակի կողմերը։

Կարևոր է բացատրել, թե իսկապես ինչ կերպարանք ունեին պարսկական արշավանքները։ Դրանք կանոնավոր պատերազմական գործողություններ չէին, այլ բացարձակապես ասպատակություններ։ Չնայած իրենց թվական ահագին առավելության, պարսկական զորքերն առհասարակ խուսափում էին ռուսների հետ կռվի բռնվելուց և շտապում էին հեռանալ, հենց որ նկատում էին, որ ռուսները գալիս են իրենց վրա։ Լինելով մեծագույն մասամբ ձիավոր, պարսիկները կարողանում էին արագությամբ տեղից տեղ տեղափոխվել, այնպես որ ռուսական զորքը, գլխավորապես հետևակ, չէր կարողանում հասնել նրանց և հալածել։ Եվ միակ «քաջագործությունը», որ մատչելի էր պարսիկներին, «չափավուլն» էր, ասպատակությունը, որի զոհն էր դառնում խաղաղ գյուղական ազգաբնակությունը։ Հրդեհել հասունացած արտերը, քարուքանդ անել գյուղերը, նրանց բոլոր բնակիչներին և անասունները քշել տանել սահմանի մյուս կողմը՝ այս էր ահա պարսիկների սիրած ռազմավարությունը, որ կա-

տարյալ մի դժբախտություն էր դառնում հատկապես սահմանագլխի վրա տարածված ծայրագավառների համար։

Այսպիսի ծայրագավառներից էին Փամբակն ու Շորագյալը, որոնք ներկայացնում էին ուղիղ և կարճ ճանապարհ դեպի Թիֆլիս և գտնվում էին Երևանի բերդի մշտական հարվածների տակ։ Առաջին հանդրվանն այս ճանապարհի վրա Երևանի կողմից հանդիսանում էր Արագածի փեշերի վրա ընկած Արթիկ գյուղը, որ և գրեթե ամեն մի պարսկական արշավանքի միջոցին քարուքանդ էր դառնում, զրկվելով իր հունձից և անասուններից։ Փամբակի և Շորագյալի պաշտպանության վրա ռուսները, նկատի առնելով նրանց ռազմական նշանակությունը Թիֆլիսի նկատմամբ, ավելի լուրջ ուշադրություն էին դարձնում, պահելով յուրաքանչյուր գավառում բավական ուժեղ զորամասեր։ Փամբակի պաշտպանությունը հանձնված էր այն զորաբաժնին, որի բնակության վայրն էր Համամլու գյուղը, իսկ Շորագյալի զորաբաժինը բնակվում էր Գյումրի բերդում։ Պարսկական «չափավուլների» ժամանակ երկու զորաբաժիններն աշխատում էին պաշտպանել գյուղերը, և նրանց հովանավորության տակ էր, որ գյուղացիները, մեծագույն մասամբ հայեր, կատարում էին իրենց դաշտային աշխատանքները։

Անհամեմատ ծանր պայմանների մեջ էր գտնվում մյուս խոշոր ծայրագավառը, Ղարաբաղը։ Նրան Պարսկաստանից բաժանում էր Արաքս գետը, բայց այս մի թույլ անջրպետ էր, որովհետև հենց այստեղ, Ղարաբաղի սահմաններում էր, որ հնուց գոյություն ուներ Խուդափերինի կամուրջը, հարմար ճանապարհ պարսից բանակների համար, որ ուղղակի տանում էր երկրի սիրտը։ Չէր անցնում գրեթե և ոչ մի պարսկական արշավանք, որ մոռացության տար այս ճանապարհը, և գրեթե չէր լինում մի այնպիսի տարի, երբ պարսկական «չափավուլները» չտարածվեին Ղարաբաղի դաշտային կողմերում։ Վնասվողը անխտիր ամբողջ ազգաբնակությունն էր, հայ թե թուրք։ Բայց որովհետև պարսկական արշավանքները միշտ ուղղվում էին Շուշի բերդի վրա, որ գտնվում էր լեռնային, գրեթե գլխովին հայաբնակ Ղարաբաղում, ուստի հայ գյուղացիության կրած տանջանքներն ու վնասներն անհամեմատ ծանր էին։ Առաջին հանդրվան Խուդափերինի կամուրջից Շուշի տանող ճանապարհի վրա հանդիսանում էր Տեղ գյուղը, որ և հաճախ ենթարկվում էր պարսկական ավերիչ «չափավուլներին»։ Ռուս հրամանատարությունը ոչ միայն ամբողջ Ղարաբաղի, այլև գրեթե ամբողջ Արևելյան Անդրկովկասի պաշտպանությունը հանձնել էր գեներալ Ներոլսինի զորաբաժնին, որ, ինչպես տեսանք, բանակ ուներ դրած Թարթառ գետի ափին, Բարդա գյուղի մոտ, սակայն է բավական հեռու Արաքսից և Լեռնային Ղարաբաղից։ Այսպիսով այդ զինվորական ուժը բավական չէր՝ ազգաբնակության արագ օգնություն հասցնելու համար, մանավանդ, որ Ներոլսինի բանակը բաղկացած էր գլխավորապես ծանրաքայլ հետևակազորից, մինչդեռ պարսիկները գործում էին հեծելազորով, որ բաժանվում էր մանր մասերի և մեկ օր «չափավուլի» ենթարկելով հեռավոր լեռնային գյուղերը, մյուս օրն արդեն գտնվում էին Արաքսի ափին։ Ճիշտ է, Լեռնային Ղարաբաղի մի երկու տեղերում (Շուշի, Գորիս) զետեղված էին ռուսական զորամասեր, բայց նախ դրանք փոքրաթիվ էին և, ուրեմն, կարող էին գործել սահմանափակ շրջանակների մեջ և երկրորդ՝ նրանց գլխավոր ուշադրությունը դարձած էր Ներոլսինի բանակի հետ կապ պահպանելու վրա։

Բայց պարսկական արշավանքները ժողովրդական միակ դժբախտությունը չէին կազմում։ Ղարաբաղն իր կազմվածքի մեջ ուներ մի հյուծախտ, որ քայքայում էր նրա ամբողջ բարոյական և նյութական կարողությունը։ Եվ

այդ՝ խանությունն էր։ Մենք տեսանք, որ ցարական խարդախ ու խաբեբա քաղաքականությունը հայերին տված իր բազմաթիվ խոստումները վերջացրեց նրանով, որ ոչնչացրեց նրանց դարավոր ինքնավարությունը և հանձնեց նրանց ամբողջովին նրանց կատաղի թշնամու, Շուշու խանի անվերապահ և անսահման կարգադրությանը։ Այդ օրվանից արդեն Ղարաբաղի հայությունը միանգամայն զինաթափ էր արված, զրկված այն ինքնապաշտպանությունից, որ դարերի ընթացքում մարմնացված էր նրա մելիքական կազմակերպության մեջ։ Մենք տեսանք նույնպես, որ ռուսական պարգևներով ծանրաբեռնված Իբրահիմ խանը վերջիվերջո սպանվեց նույն ռուսների ձեռքով իբրև դավաճան։ Խանությունը նրանից հետո, Քյուրակ չայի դաշնադրության զորությամբ, պիտի անցներ Ջաֆար Ղուլի աղային, որ Իբրահիմի թոռն էր, ծնված նրա ավագ որդուց։ Բայց Գուդովիչը խլեց նրանից այդ իրավունքը, և խանությունը հանձնվեց Իբրահիմի մյուս որդուն, Մեհտի Ղուլի խանին, որ այդ առիթով ստանում էր գեներալ-մայորի աստիճան։

Մեհտի Ղուլի խանը Թիֆլիսում երդում ընդունեց Ռուսաստանին հավատարիմ հպատակություն ցույց տալու համար և վերադարձավ Շուշի՝ գրեթե իսկույն այդ երդման դրժելու համար։ Նա իր հոր հարազատ ժառանգն էր՝ նույնպես անգութ, նույնպես խորամանկ և ուխտազանց։ Ռուսների վերաբերմամբ նրա անբարյացակամ, նույնիսկ թշնամական տրամադրությունն ակներև էր ամենքի համար։ Քյուրակ չայի դաշնադրությամբ սահմանված պարտավորություններից ոչ մեկն էլ նա չէր կատարում. ոչ հարկ էր տալիս ռուսաց կառավարության, ոչ նույնիսկ հացի պաշար էր հասցնում Շուշու բերդապահ ռուսական զորքին։ Գաղտնի հարաբերություններ էր պահպանում Աբաս Միրզայի հետ իր եղբայր Աբուլ Ֆեթհ խանի միջոցով, որ, ինչպես գիտենք, փախել էր Պարսկաստան և կալվածներ էր ստացել Ղարաբաղում, Արաքսի ափին։ Կեղեքել ազգաբնակությանը, զրկել իր եղբորորդի Ջաֆար Ղուլի աղային կալվածներից ու եկամուտներից և այսպիսով մշտական թշնամություն պահպանել երկրի ներսում, բազմացնել թուրք ազնվական բեկերի թիվը. այսպես էր Մեհտի Ղուլի խանի կառավարությունը։ Նրան փոքրինչ դիմադրություն ցույց տալ Շուշու բերդապահ զորքի հրամանատար փոխգնդապետ Կոտլյարևսկին, որ շուտով պիտի հռչակվեր իր հերոսություններով։ Նա բացարձակ մեղադրում էր Մեհտի Ղուլի խանին, թե սա, քաղցած պահելով ռուս զինվորներին, հացի պաշարներ է հավաքում պարսից բանակի համար, երբ այս վերջինը ներս կխուժե Ղարաբաղի սահմաններից։ Խանը, Կոտլյարևսկուց ազատվելու համար, գանգատվում էր Գուդովիչին, թե նա խառնվում է իր կառավարության մեջ, մի բան, որ արգելված էր Քյուրակ չայի դաշնադրությամբ։ Գուդովիչը խանի կողմն էր բռնում և գրում էր նրան. «Փոխգնդապետ Կոտլյարևսկուն ես առաջ էլ եմ հրամանագրել և այժմ էլի կրկնեցի, որ չմտնե ոչ մի գործի մեջ, որ վերաբերում է կառավարության և, լինելով Շուշում զետեղված բերդապահ զորքի հրամանատար, հետևե խիստ կարգապահության, որպեսզի զինվորները ձեր ստորադրյալներին ոչ մի նեղություն չպատճառեն և հարգանք տածեն դեպի աստիճանները»[1]։ Մեհտի Ղուլի խանն էլ հենց այս տեսակ թույլ վերաբերմունքի էր սպասում։ Նա շարունակ կրկնում էր, թե ռուսները պարտավորվել են պահպանել իր խանությունը և պիտի կատարեն իրենց այդ պարտավորությունը, առանց կապելու նրան խանի վրա դրած պարտավորությունների հետ։ Իր համարձակությունը Մեհտի Ղուլի խանը հասցնում էր այն աստիճանին, որ առաջարկում

[1] «Акты...», III, № 626.

էր Գուդովիչին փոքրացնել զորքերի թիվը Շուշում, որպեսզի ինքն ի վիճակի լինի առանց դժվարության ուտելիք մատակարարել նրան։

Այսքան քնքույշ-քաղաքավարական էր և Տորմասովի վերաբերմունքը դեպի ասիական կոպիտ տիրապետողը։ Նա շարունակ տեղեկություններ էր ստանում Շուշու խանի անհավատարմական արարքների մասին և շարունակ էլ բավականանում էր նրան խրատներ և քաղաքավարական ներշնչումներ գրելով։ Ահա, օրինակ, շատերից մի նմուշ. «Ես այսպես բարեկամաբար նախազգուշացնում եմ ձեզ լինել զգույշ և խորհուրդ եմ տալիս դեն ձգել ամեն մի թշնամական միտք կամ հույս, թե կարող է որևէ բան վրիպել անփույթ հսկողությունից, այժմյանից ընդմիշտ զբաղվել միմիայն ջանասիրությամբ դեպի թագավոր կայսրի ծառայությունը, զբաղվել միշտ այն բանով, որպեսզի փորձով ապացուցեք ձեր անձնվիրությունը համառուսական կայսրության, որովհետև հակառակ դեպքում չեմ կարծում, որ ձեզ համար նախանձելի լինի դավաճան Սելիմի վիճակը»[1]։

Սելիմը, որի վիճակով վախեցնում էր Տորմասովը Մեհտի Ղուլի խանին, ինչպես գիտենք, Շաքիի (Նուխու) խանն էր, որ բացարձակորեն ապստամբվել էր և փախստական դարձել։ Բայց Ղարաբաղի խանը նրա չափ միամիտ չէր, որ նրա ճանապարհով գնար։ Նա Իբրահիմ խանի որդին էր, նրա պես ճարպիկ աղվեսի քաղաքականության մեջ, պատրաստ՝ ամեն րոպե դիմակ փոխելու։ Ռուս կառավարչապետների «բարեկամական» թղթերը նրանց թուլության պարզ ապացույցներն էին, և Մեհտի Ղուլի խանը շատ լավ իմանում էր օգտագործել այդ հանգամանքը, արտաքուստ հնազանդություն կեղծելով, իսկ ներքուստ դավեր նյութելով խանական նախկին անկախությունը նորից ձեռք բերելու համար։

Անդրկովկասը կառավարող ռուսական բյուրոկրատիայի համար գոյություն ուներ միայն ասիական տիրապետողների հարցը, թե ինչպես պետք է սիրաշահել այդ բոլոր թավադներին, խաներին, բեկերին, ինչ եղանակով լավապես կարգադրել նրանց անձնական, ընտանեկան հարաբերությունները, որպեսզի նրանք հաշտ ու համաձայն լինեն ցարական տիրապետության հետ։ Իսկ թե ինչպես էր ապրում բուն ժողովուրդը, այդ ձրիակեր դասակարգերի բռունցքի տակ, այդ չափազանց քիչ էր հետաքրքրում ճորտատիրական Ռուսաստանի ներկայացուցիչներին, քանի որ «սրբազան Ռուսաստանում» աշխատավոր ժողովրդի դրությունը խանական բռնությունների տակ հեծող ժողովուրդների դրությունից ոչնչով լավ չէր։ Մեհտի Ղուլի խանը բոլորովին նեղված չէր իր կառավարչական իրավունքների մեջ, և ժողովուրդն անխտիր, հայ թե թուրք, կեղեքվում էր նրա և նրա անթիվ բեկերի ձեռքին։ Մի ատելություն էր տարածված նրա դեմ, այնքան ուժեղ, որ գյուղական ժողովրդից շատերը թողնում էին իրենց երկիրը և ընտանիքներով փախչում էին Պարսկաստան[2], թեև գիտեին, որ այնտեղ էլ խանական իշխանություն կա, որ այնտեղ աշխատավոր ժողովուրդը նույնպես կեղեքված և հարստահարված է։ Որքան, ուրեմն, անտանելի էր Ղարաբաղի խանի լուծը, երբ նրա համեմատությամբ նախընտրելի էր համարվում նույնիսկ պարսկական իրականությունը։ Իսկապես սոսկալի «չափավուլը» Ղարաբաղի մեջ միայն պարսկական արշավանքները չէին մտցնում։ «Չափավուլ» կար և առանց պարսիկների, գոյություն ուներ ամեն օր։ Նա գործադրվում էր խանի և բեկերի ձեռքով, միմյանցից գյուղեր և «ռահաթներ» խլելու համար։ «Ռահաթը» ճիշտ այն

[1] «Акты...», IV, № 821.

[2] Н. Дубровин, т. V, с. 341.

նշանակություն էր ստացել ռուսական Անդրկովկասում, ինչ «ճորտը» Ռուսաստանում։ Ռահաթները փախչում էին անտանելի ռեժիմի ձեռքից, իսկ նրանց տերերը, բեկերը, գնում էին զենքով ու զոռով նրանց ետ բերելու։ Ազգաբնակությունն ամբողջովին երերվում էր, տեղից տեղ էր գաղթում հոժարակամ կամ զոռով, քարուքանդ անելով իր տնտեսությունը։ Մեհտի Ղուլի խանի եղբայր Աբուլ Ֆեթհ խանը թեև ապրում էր Արաքսի պարսկական ափին, բայց այնտեղից տիրում էր Ղարաբաղի այն մասերին, որոնք գտնվում էին Արաքսի ձախ ափին, այն է՝ Բարգուշատ, Զանգեզուր և Ղափան գավառամասերին, որոնց բնակիչներից հարկ էր ստանում, իսկ դժվարության հանդիպած դեպքում քշում տանում էր իր «ռահաթներին» դեպի պարսկական ափը[1]. Մեղրի հայաբնակ խոշոր ավանի բնակչության մի մասն արդեն տեղափոխված էր Պարսկաստան։

Այսպիսի հուսահատական պայմանների մեջ էր Ղարաբաղի ազգաբնակչությունը, երբ 1810 թվականի գարնանը լուր տարածվեց, թե Պարսկաստանը համաձայնություն է տվել հաշտության դաշինք կնքելու Ռուսաստանի հետ։ Այս մի երջանիկ հանգամանք պիտի համարվեր քարուքանդ եղած երկրի համար։ Հաշտությունը վերջ կդներ պարսկական կործանարար արշավանքներին, այսինքն՝ մշտական թալանին ու ավազակություններին։ Այս էլ մեծ թեթևություն էր։ Այնուհետև կմնա միայն ներքին դժբախտությունը՝ Մեհտի Ղուլի խանի, նրա բեկերի հարստահարությունները, սանձարձակ կամայականությունները։ Հաշտության բանակցությունների համար ընտրված էր Ասկարան բերդը Ղարաբաղում, Շուշուց ոչ հեռու։ Այստեղ գնաց կառավարչապետ Տորմասովը, իսկ պարսիկների կողմից եկավ Աբաս Միրզայի վեզիր Միրզա Բյուզուրկը։ Երկու լիազորների մեջ սկսվեցին բանակցություններ, որոնք տևեցին մի քանի օր։ Սակայն նրանք համաձայնության չեկրին և Միրզա Բյուզուրկը, ստանալով իր կառավարությունից գաղտնի հրահանգներ, որոնք դարձյալ ներշնչված էին անգլիական դեսպանի կողմից, թողեց Ասկարանը և վերադարձավ Թավրիզ։ Նորից, ուրեմն, անխախտ էր մնում «չափավուլների», կողոպուտների իրականությունը։ Բայց դժբախտ ազգաբնակությունը գոնե այնքանով կարող էր մխիթարվել, որ Տորմասովի բնակությունն Ասկարանում միանգամայն ապարդյուն չանցավ։ Նա ուշադրություն դարձրեց Մեհտի Ղուլի խանի գործադրած կեղեքումների վրա։ Շատերը գանգատվեցին գլխավոր հրամանատարին, և սա մի առանձին հանձնաժողով կազմեց՝ հարկերի բաշխումն ավելի արդար կերպով կատարելու համար։ Բայց Մեհտի Ղուլի խանը դժգոհ մնաց այսպիսի մի «բարեկարգությունից», որ այսպես թե այնպես՝ սահմանափակում էր նրա կամայականությունները։ Եվ նրա դիրքը ռուսների վերաբերմամբ դառնում էր ավելի և ավելի թշնամական։ Իսկ Տորմասովը շարունակում էր քաղաքավարական գրություններով համոզել նրան, որ հավատարիմ մնա իր երդման, ուխտադրուժ չհանդիսանա և այլն։

Միայն մի մարդ կար Շուշում, որ շատ լավ հասկանում էր, թե այդ քաղաքավարական կատակախաղերից ոչինչ չի դուրս գա, թե ռուսների դրությունը վատացնում է այն հանգամանքը, որ նրանք չեն կարողանում ցուցադրել իրենց զենքի ուժը և այսպիսով այն տպավորությունն են թողնում ասիական տիրապետողների մեջ, թե իրենք թույլ են և անկարող։ Այդ մարդը գնդապետ Կոտլյարևսկին էր, որ և շուտով գործով ցույց տվեց, թե ինքը ճիշտ է ըմբռնում իրերի դրությունը։ Նույն 1810-ի ամառը նա հրաման է ստանում գեներալ Նեբոլսինից գրավել Մեղրի ավանը։ Այս մի գրեթե անառիկ բերդ

[1] «Акты...», IV, № 818—820.

էր ժայռերի մեջ տեղավորված և ուներ շատ կարևոր ռազմագիտական նշանակություն։ Բացի այն հանգամանքից, որ, գտնվելով Ղարաբաղի հարավային ծայրում, Արաքս գետի վրա, Մեղրին մի լավ հենարան է երկիրը պարսկական արշավանքներից պաշտպանվելու համար, կար և այն, որ Մեղրին գտնվում էր Օրդուբադ վաճառաշահ քաղաքից 20 վերստի վրա, իսկ Մեղրիից մինչև Աբաս Միրզայի մայրաքաղաք Թավրիզը 100 վերստից ավել չէր։ Կոտլյարևսկուն հանձնվում է մի բատալիոն զորք (400 հոգի), և այս մի բուռն մարդկանցով նա Շուշուց ճանապարհվում է դեպի Մեղրի։ Գեներալ Նեբոլսինը կարծել էր, թե Մեղրին պարսկական զորքերով չէ գրավված. Կոտլյարևսկին ճանապարհին իմացավ, թե Աբաս Միրզայի բանակից մի ուժեղ զորաբաժին արդեն նստած է բերդում։ Այս հանգամանքը, սակայն, չէ շփոթեցնում արի գնդապետին, որ և վճռում է գրոհով վերցնել Մեղրին։ Գիշերային պահին, բաժանելով իր փոքրիկ զորքը երեք մասի, նա զանազան կողմերից հարձակվում է բերդի վրա և արյունահեղ կռվից հետո խլում է նրան պարսիկների ձեռքից, որոնք ետ են քաշվում դեպի Օրդուբադ։ Աբաս Միրզան, որ այդ միջոցին գտնվում էր Նախիջևանում, ուղարկում է Մեղրիի վրա մի նոր զորաբաժին, հրամայելով նրան մեռնել և ետ խլել բերդը։ Բայց Կոտլյարևսկին էլ այդ միջոցին օգնական զորք էր ստացել Շուշուց, որ պաշարեղեն էր բերել։ Միանալով այդ զորքի հետ, նա նորից հարձակվում է պարսկական բանակի վրա, որ գտնվում էր Արաքսի ափին, ջարդում է նրան և ետ շպրտում գետի մեջ։ Կոտորածից ազատվածները փախուստի են դիմում։

Այս խիզախ արշավանքը, ինչպես և պետք էր սպասել, ահագին տպավորություն է գործում ամեն տեղ։ Այդ օրվանից Կովկասի ռուսական զորքերի մեջ հայտնագործվում է մի նոր հերոս, դեռ երիտասարդ Կոտլյարևսկին, որ նոր փայլ է տալիս ռուսաց զենքին իր հաղթություններով։ Եվ սակայն, Տորմասովը հուսահատության մեջ էր այն օրվանից, երբ լուր էր առել, թե պարսկական խոշոր բանակը գալիս է Նախիջևան։ Տեղեկություն չունենալով Կոտլյարևսկուց, նա իսկույն հրաման է ուղարկում նրան ետ դառնալ և փոխում է Մեղրին գրավելու կարգադրությունը։ Նա արդեն կորած էր համարում Կոտլյարևսկու զորաբաժինը։ Բայց մինչև նրա հրամանը տեղ կհասներ, Կոտլյարևսկին վերցրել էր Մեղրին։ Այս հաղթությունը, ճիշտ է, ուրախացրեց Տորմասովին, բայց միանգամայն չփարատեց նրա երկյուղը։ Համարելով Արաքսի ափին հաստատված ռուսական փոքրաթիվ զորաբաժնի կղզիացած դրությունը շատ վտանգված, գլխավոր հրամանատարը հրամանագրում է Կոտլյարևսկուն ռուսական հպատակության երդում վերցնել Մեղրիում մնացած 723 ընտանիքներից, հանել այնտեղից զորքը և վերադառնալ Շուշի[1]։ Բայց Կոտլյարևսկին, ազատ լինելով բարձրերում տիրած վախերից, չկատարեց այդ հրամանը և հասկացրեց բարձր իշխանավորներին, թե որքան մեծ շահ ունի ռուսական տիրապետությունը՝ Մեղրին իր ձեռքում պահելուց։ Եվ այդպիսով Մեղրին գրավված մնաց ռուսական զորքերով։ Հետագայում միայն ինքը Կոտլյարևսկին էլ անհրաժեշտ համարեց հանել ռուսական զորքերը Մեղրիից, բայց այս սոսկ այն պատճառով, որ այդ բերդի սպանիչ կլիման ավերումներ էր գործում նրա շարքերի մեջ։

Նույն 1810 թ. սեպտեմբերի սկզբին ռուսական զորքը մի նոր հաջողությամբ էր պսակվում Ախալքալաք բերդի մոտ, ուր բանակ էր դրել Երևանի Հյուսեին Ղուլի խան սարդարը։ Տորմասովը նրա վրա ուղարկեց իր բանակի մի մասը՝ մարկիզ Պաուլուչչիի (գեներալ) հրամանատարությամբ։ Օգտվելով

[1] Граф В. Соллогуб, Биография генерала Котляревского, Тифлис, 1854, с. 63.

պարսիկների անհոգությունից, Պաուլուչչին գիշերը խուժեց սարդարի բանակի մեջ, որ նույնիսկ պահապաններ էլ չուներ և քնած էր։ Սկսվեց կոտորած։ Ամենից առաջ Հյուսեին Ղուլի խան սարդարը և Ալեքսանդր արքայորդին էին, որոնք աճապարեցին ազատել իրենց գլուխը և ձի հեծնելով փախան գիշերային շորերով։ Փախուստի դարձավ և բանակի ողջ մնացած մասը։ Այս ամենը կատարվեց այնքան արագ և հանկարծակիորեն, որ Ախալքալաքի մեջ գտնվող օսմանյան զորքը ոչինչ չկարողացավ անել դաշնակից պարսիկներին օգնելու համար։ Միայն լույսը բացվելուց հետո էր, որ բերդից նկատեցին, թե պարսկական բանակն այլևս գոյություն չունի և շտապեցին գնալ այնտեղ և թալանել իրենց դաշնակիցներից մնացած գույքի վերջին մնացորդները։ Խրախուսված այդ հաջողությունից, Տորմասովը նույն տարվա վերջում, խիստ ձմեռվա մեջ, գնաց Ախալցխայի բերդը վերցնելու։ Սկզբում ամեն ինչ լավ էր գնում. պաշարումը կատարյալ էր, ռուսական թնդանոթները ռմբակոծում էին բերդը։ Բայց հանկարծ երևան եկավ մի սարսափելի թշնամի՝ ժանտախտը։ Նա բույն էր դրել բերդի մեջ, անցավ պաշարող ռուս զորքերի մեջ։ Տորմասովը ստիպված եղավ վերացնել պաշարումը և հեռանալ։ Բայց ժանտախտը չթողեց նրա զորքերը և նրանց հետ մտավ Վրաստան։ Անդրկովկասը մատնվում էր մի նոր սոսկալի դժբախտության։ Միայն Իմերեթում ժանտախտը ջարդեց 12 հազար ընտանիք։ 1811 թվականը օրհասական էր երևում Անդրկովկասի համար։ Ժանտախտը տարածվում էր ամեն տեղ, նրան միացավ և սովը։ Հորդ անձրևները, մկները փչացրել էին ցանքերը, երկիրը մշտապես ենթարկված «չափավուլների», դերեվարությունների, կողոպուտների, ոչինչ ուժ չուներ դիմադրելու իրեն բաժին ընկած դժբախտությանը։

Տորմասովը, պաշարված այսքան ծանր հանգամանքներով, հրաժարական տվեց իր պաշտոնից։ Նրա տեղ նշանակվեց Ախալքալաքի մոտ պարսիկներին հաղթած մարկիզ Պաուլուչչին, որ 1811-ի սեպտեմբերին գալիս է Պետերբուրգից Թիֆլիս և իր առաջին տիրապետություններից մեկն է դարձնում Ախալքալաք բերդի գրավումը։ Այս գործը նա հանձնում է Կոտլյարևսկուն, որ և փայլուն կերպով գլուխ է բերում այն մի քաջարի գրոհով տարվա վերջերին։ Լուսանում էր Ռուսաստանի համար շատ կողմերով նշանավոր 1812 թվականը։ Պատերազմը Նապոլեոնի և Ալեքսանդրի միջև անխուսափելի էր դարձել, որի հետևանքով Անգլիայի և Ռուսաստանի միջև նախկին թշնամական հարաբերությունների փոխարեն սկսվում էին բարեկամական, նույնիսկ դաշնակցական հարաբերություններ։ Այնպես որ Թեհրանի անգլիական դեսպանն այլևս առաջվա համառությամբ չէր աշխատում, որ հաշտություն, համաձայնություն չկայանա Ռուսաստանի և Պարսկաստանի մեջ։ Բայց այժմ նա կամենում էր միջնորդի դերում հանդես գալ երկու պետությունների միջև։ Եվ երբ Ալեքսանդր կայսրը մերժեց այդ միջնորդությունը, անգլիական կառավարությունը մի նոր դաշնագրությամբ կապվեց Պարսկաստանի հետ, որպեսզի թույլ չտա, որ ռուսական ազդեցությունը շատ ուժեղանա Պարսկաստանում։

Ֆրանսիական արշավանքի սպառնալիությունը հարկադրում էր ռուսներին վերջ դնել ռուս-թուրքական պատերազմին, մեղմացնելով իրենց նախապես առաջադրած պայմանները։ Հաշտությունը կնքվում էր Բուքրեշում 1812-ի մայիսի 16-ին։ Այդ դաշնագրությամբ Ռուսաստանը ստանում էր Թուրքիայից հողեր Եվրոպայում, ուր սահմանագլուխ ընդունվում էր Պրուտ գետը։ Իսկ ասիական հողի վրա ռուս-թուրքական սահմանը մնում էր հինը անփոփոխ։ Սերբիան, որ ռուսների կողմից խոշոր մասնակցություն էր ունեցել 1809—1811 թթ. պատերազմում Բուքրեշի դաշնագրով ստանում էր ներքին ինքնա-

վարություն, Թուրքիային հարկ վճարելու պայմանով[1]։ Այս դեռ ազատություն չէր, այս միջազգային դաշնագրով միայն սկիզբ էր դրվում Սերբիայի ապագա ազատության։

Այնուհետև ամբողջ աշխարհի ուշադրությունը կենտրոնանում էր Ռուսաստանի վրա, որի սահմանից ամառը ներս էր խուժում Նապոլեոնը, գլուխ կանգնած մի բանակի, որի խոշորությունը մինչև այդ չտեսնված մի թվի (600 հազար) էր հասնում։ Մեծ փորձանքի այդ տարում Կովկասյան լեռնաշղթայի հարավում էլ կատարվեցին մի շարք նշանավոր դեպքեր։

Մարկիզ Պաուլուչչին իր ձեռքն առնելով երկրի կառավարությունը շատ անկարգ դրության մեջ գտավ, մանավանդ, Ղարաբաղը։ Դժբախտ երկիրը մի կողմից անիշխանության էր մատնված Մեհտի Ղուլի խանի վատ կառավարության պատճառով, մյուս կողմից լկված էր սովի և ժանտախտի ձեռքին։ Թե ինչ էր ժանտախտն այն ժամանակներում, կարելի է իմանալ Թիֆլիսի օրինակով։ Լինելով երկրի մայրաքաղաք, նա ուներ միջոցներ սարսափելի համաճարակի դեմ կռվելու համար։ Եվ իրավ, այնտեղ կազմված էր մի հանձնաժողով՝ բնակիչների առողջությունը պահպանելու համար։ Բայց և այնպես, քաղաքը դատարկվել էր։ Շատ ընտանիքներ բնաջինջ էին դարձել, մնացածներն էլ ահից փախել էին զանազան կողմեր, ապրում էին այգիների մեջ։ Այսպես դատարկվել էին և Վրաստանի բոլոր մյուս քաղաքները։ Եթե այսպես էր կենտրոնը, հասկանալի է թե ինչ պիտի լիներ Ղարաբաղի պես ետ ընկած, դժվարամատչելի երկիրը։ Ժամանակակից պաշտոնական տեղեկությունները վկայում են, որ Ռուսաստանին կցվելու տարում (1805) Ղարաբաղն ուներ 10 հազար ընտանիք, իսկ այժմ 5—6 տարուց հետո, այդ քանակությունից հազիվ մնացել էին 4 հազար ընտանիք[2]։ Այս ցույց է տալիս, թե ժողովուրդն ինչքան մեծ ալիքներով էր դուրս փախչում այդ երկրից, փրկություն որոնելով առաջ ու առաջ կեղեքումներից, ավազակություններից, խանական կամայականություններից և վերջին հաշվով նաև սովից ու ժանտախտից։

Այժմ այլևս Մեհտի Ղուլի խանի դիմակավորված, բայց դեռ ոչ գործոն դավաճանությունը չէր, որ անհանգստացնում էր կովկասյան իշխանությունը։ Նրա փոխարեն բացարձակորեն հրապարակ էր եկել նրա եղբորորդու, ռուսական գնդապետ Ջաֆար Ղուլի աղայի դավաճանությունը։ Մենք տեսանք այս մարդուն ռուսաց շահերին անկեղծորեն նվիրվածի դերում։ Բայց Ջաֆարը մեկն էր Արևելյան Անդրկովկասի խաներից և խանզադեներից՝ կեղծավոր, խորամանկ, ուխտադրուժ։ Բռնվել էր մի նամակ, որ գրել էր նրան Աբաս Միրզան, հորդորելով նրան միանալ իր հետ և խոստանալով տալ նրան Ղարաբաղի խանությունը և 15 հազար թուման փող։ Նամակի մեջ գրված էին պարսից թագաժառանգի դիմումները Ջաֆար Ղուլի աղային հպատակ Ջաբրայիլու և Ջիվանշիր ցեղերին, որոնք պիտի կամավոր զորք կազմեին և սահմանի վրա միանային պարսից բանակին։ Այն ժամանակ, երբ բռնվում էր այդ նամակը, Ջաֆարը սար էր գնացել և գտնվում էր Շուշուց 90 վերստ հեռավորության վրա։ Մարկիզ Պաուլուչչին կարգադրեց ձերբակալել Ջաֆարին։ Նրա բնակությունից 15 վերստ հեռավորության վրա, Սուլթան Բուդ տեղում, գտնվում էր Տրոիցկի գնդի մի բատալիոնը, որի հրամանատար մայոր Ջինիին հանձնարարվեց ի կատար ածել այդ կարգադրությունը։ Ջինին ձերբակալեց Ջաֆարին և 1812-ի հունվարին ուղարկեց նրան Թիֆլիս։ Կալանավորին տանում էր 178

[1] Т. Юзефович, Договоры России с Востоком, Спб., 1869, с. 54—55.

[2] Н. Дубровин, VI, с. 46.

հոգուց բաղկացած մի զորախումբ կապիտան Օլովյաննիկովի հրամանատարությամբ։ Ջաֆարը նստած էր ձիու վրա, նրա ետևում, միևնույն ձիու վրա, նստած էր մի զինվոր, որ բռնած ուներ նրան։ Ճանապարհին, Թարթառ գետն անցնելիս, Ջաֆարը, հրելով իր ետևում նստած զինվորին, գցեց նրան ջրի մեջ, իսկ ինքը, ճարպկորեն քշելով ձին գետի ընթացքով, փախավ, անհայտացավ։ Բռնել նրան չկարողացան։ Բայց հինգ օր անցած նա նամակ գրեց Շուշու բերդապահ զորքի հրամանատարին, թե ինքը գտնվում է Ղարաբաղում, առաջվա նման հավատարիմ է ռուսաց կառավարության և եթե փախել է, պատճառն այն է, որ իր համար անպատվություն էր համարում կալանավորումը։ Գալով Աբաս Միրզայի նամակին, նա ասում էր, թե ինքը տեղեկություն չունի այդ մասին, երբեք նամակագրություն ունեցած չէ պարսից թագաժառանգի հետ, և այդ մի գրությունն էլ, որ ռուսների ձեռքն էր ընկել, առաջինն էր, որ գրել էր Աբաս Միրզան և նրա բովանդակությանը ծանոթ չէ ինքը, Ջաֆար Ղուլի աղան։

Մարկիզ Պաուլուչչին, սակայն, հավատ չընծայեց այդ չքմեղություններին և, կալանավորել տալով Ջաֆարի մորը, Խեյրանիսա Բեգումին, տարավ Թիֆլիս և առաջարկեց նրան երկու պայման. կամ գնալ Ռուսաստան այնտեղ ընդմիշտ բնակվելու համար, կամ վճարել գանձարանին 150 հազար ռուբլի, այսինքն՝ այն գումարը, որ ստացել էր նրա որդին Աբաս Միրզայից։ Խեյրանիսա Բեգումն ընդունեց երկրորդ պայմանը և առաջարկեց վերցնել իրենից բոլոր թանկարժեք իրերը և փող դարձնել։ Կազմվեց մի հանձնաժողով, որ գնահատեց այդ բոլոր արդուզարդը 20 հազար ռուբլի։ Եվ որովհետև Խեյրանիսա Բեգումը չկարողացավ վճարել մնացած գումարը, ուստի որոշվեց բնակեցնել նրան Վորոնեժի նահանգում[1]։

Իսկ Ջաֆար Ղուլի աղան թեև հավատացնում էր ռուսներին, թե ինքը նրանց չէ դավաճանել, գիտեր, սակայն, որ նույն այդ միջոցին Աբաս Միրզայի մեծ բանակը գտնվում էր Մուղանի դաշտում և գնաց այնտեղ այն հույսով, թե կստանա Ղարաբաղի խանությունը։ Առաջին գործը, որ արավ Աբաս Միրզան, այն էր, որ նա անմիջապես հարձակում գործեց այն իսկ Սուլթան Բաղի վրա, ուր բնակվող Տրոիցկի գնդի բատալիոնը կալանավորել էր Ջաֆարին։ Ռուսաց պաշտոնական տեղեկությունները հաղորդում են, թե Աբաս Միրզայի հրամանի տակ գտնվում էին 10 հազար ձիավոր և 8 հազար հետևակ զինվորներ, մինչդեռ ռուսական բատալիոնը բաղկացած էր ընդամենը 527 զինվորներից։ 1812 թ. փետրվարի 1-ին Աբաս Միրզան ինքն անձամբ տարավ իր բանակը ռուսների վրա։ Բատալիոնը ռազմական կարգով հանդիպեց նրան, և սկսվեց կռիվը։ Սկզբում ևեթ սպանվեց բատալիոնի հրամանատար Ջինին։ Հրամանատարությունն, ըստ ավագության կարգի, անցավ կապիտան Օլովյաննիկովին, այն իսկ սպային, որին հանձնված էր տանել Ջաֆար Ղուլի աղային Թիֆլիս։ Նա այլևս դիմադրություն ցույց չտվեց Աբաս Միրզային, որ շրջապատեց նրան չորս կողմից և պահանջեց անձնատուր լինել։ Այդ միջոցին Սուլթան Բաղում էր գտնվում Մեհտի Ղուլի խանը, որ առաջարկեց Օլովյաննիկովին իր օգնությունը։ Խանն այդ միջոցին պիտի ռուսասեր դառնար, քանի որ Աբաս Միրզան հովանավորում էր այժմ նրա հակառակորդ Ջաֆարին։ Ռուսական պաշարված զորաբաժինը նա ուզում էր

[1] Н. Дубровин, V, с. 437—441։ Այս որոշումը, սակայն, ի կատար չածվեց, որովհետև երեք տարուց հետո, 1815-ին, Ջաֆար Ղուլի աղան, արդեն խանի տիտղոս ստացած պարսիկներից, ստացավ ներում ռուսաց կառավարությունից և նրան ու նրա մորը վերստին թույլատրվեց բնակություն հաստատել Ղարաբաղում։

փրկել կորստից, գիշերով հանելով նրան Սուլթան Բաղից և տանելով կամ Շահբուլաղի ամրոց կամ անտառները, ուր նա կարող էր ապահով լինել։ Սակայն Օլովյաննիկովը չընդունեց այդ առաջարկությունը։ Նա վախենում էր, թե իրեն պիտի պատասխանատվության ենթարկեն, որ թույլ է տվել Ջաֆար Ղուլի աղային փախչել, ուստի վճռել էր անձնատուր լինել պարսիկներին։ Եվ հարկադրելով, որ Մեհտի խանը հեռանա Սուլթան Բաղից, նա մյուս օրը հրամայեց իր բատալիոնին զենքերը ցած դնել և անձնատուր եղավ Աբաս Միրզային։ Այս խայտառակ դեպքն, իհարկե, մեծ ոգևորություն պատճառեց պարսիկներին և մի մեծ հարված էր ռուսական անվան համար։ Աբաս Միրզան հաղթականորեն առաջ անցավ դեպի Շահբուլաղ, բայց այս միջոցին նրա մեջ ամրացել էր ռուսական մի զորաբաժին, որ բաղկացած էր 200 հոգուց և կապիտան Իլյաշենկոյի գլխավորությամբ ու մի թնդանոթով ուղարկված Շուշուց Սուլթան Բաղի զորքի օգնության։ Հազիվ մի 30 վերստ հեռացած Շուշուց, այս մի բուռն մարդիկ շրջապատվեցին 200-ից ավելի պարսիկ ձիավորներով և սվիններով ճանապարհ բաց անելով իրենց համար, հասան Շահբուլաղի ամրոցը, որի պատերի ետևում ապաստան գտան։ Բայց այստեղ նրանց շրջապատեցին Աբաս Միրզայի զորքերն ավելի մեծ քանակությամբ։ Եվ ահա կրկնվում է այն, ինչ մի անգամ տեղի էր ունեցել 1805 թվին։ Գալիս է նույն Օվանես (Վանի) յուզբաշին Կուսապատ գյուղից և գիշերով հանում է Իլյաշենկոյի փոքրիկ զորաբաժինը Շահբուլաղից և սարերով ետ տանում նրան Շուշի[1]։

Ղարաբաղի դրությունն այնքան ծանր էր, որ մարկիզ Պաուլուչչին ինքն անձամբ գնաց այնտեղ, կազմեց մի զորաբաժին 1500 հոգուց և հանձնեց այն Կոտլյարևսկուն, որ Ախալքալաքի նվաճման համար արդեն ստացել էր գեներալ-մայորի աստիճան։ Այս քաջարի և եռանդոտ զինվորականի ներկայությունը Ղարաբաղում արդեն զգալի թեթևություն էր անօգնական ժողովրդի համար, թեև մյուս կողմից Աբաս Միրզան, կամենալով ոչնչացնել նրա զորաբաժինը, հաճախեցնում էր իր ներխուժումները Ղարաբաղ։ Կոտլյարևսկին իր համար բնակության տեղ ընտրեց նախ Ջաղիր գյուղը Կուր գետի վրա, ապա տեղափոխվեց Ամարաս (Աղօղլան) վանքը, որպեսզի մոտիկ լինի Արաքսին և կարողանա հետևել պարսկական շարժումներին։

Մինչդեռ Ղարաբաղում տեղի էին ունենում Ջաֆար Ղուլի աղայի փախուստը, Սուլթան Բաղի աղետը, Արևելյան Վրաստանը և հատկապես նրա այն մասը, որ կոչվում է Կախեթ, թատերաբեմ էր հանդիսանում մի շատ ուժեղ հակառուսական շարժման։ Այդ մի ամբողջ գյուղացիական հեղափոխություն էր, ծնված ռուս բյուրոկրատիայի ապականությունից։ Ռուսական տիրապետությունն Անդրկովկաս էր բերել ռուս չինովնիկության արատավոր շատ տարրեր, որոնց համար տեղային ազգաբնակությունը վայրենի շահագործման և բռնությունների առարկա էր։ Տարիների ընթացքում այս չինովնիկական հարստահարությունները մի անտանելի մթնոլորտ ստեղծեցին։ Ժողովուրդը մռնչում էր ցավից և կսկիծներից, գանգատներ էր անում, բայց ո՞վ էր նրան լսողը։

Այսպես էին ստորակարգ պաշտոնյաները, որոնք անմիջապես գործ ունեին ժողովրդի հետ։ Կաշառակերությունների, բռնությունների մասին նույնիսկ դադարել էին գանգատվելուց, այսինքն՝ սովորական էին նրանք։ Բայց ավելի լավ չէին բարձր պաշտոնյաները, սկսած նույնիսկ կառավարչապետից։ 1811 թվականի աշնանը, մինչդեռ սովն ու ժանտախտը ավերում էին

[1] Н. Дубровин, V, с. 448.

Վրաստանի շատ կողմերը, մարկիզ Պաուլուչչին կարգադրում էր, որ Կախեթի գյուղերից ցորեն հավաքեն զորքի համար կես գնով։ Գյուղացիները մերժեցին տալ ցորեն այդ գնով։ Ուստի փոքրիկ զորաբաժիններ ուղարկվեցին գյուղերը՝ բռնությամբ ցորեն հավաքելու և գյուղացիների համառությունը պատժելու համար (էկզեկուցիա)։ Այս արդեն վերջին կաթիլն էր, որ լցնում էր գյուղական ժողովրդի համբերության բաժակը։

1812 թվի հունվարի 31-ի վաղ առավոտյան Ախմեդ գյուղի եկեղեցու ահազանգը հավաքեց գյուղացիներին եկեղեցու մեջ։ Այստեղ նրանք իմացան, թե եկել է զինվորական էկզեկուցիան և պահանջում է պաշարեղեն։ Հրաժարվելով կատարել այդ պահանջը, գյուղացիները հարձակվեցին զինվորների վրա և ամենքին գյուղից դուրս վռնդեցին։ Մյուս օրը մի ուրիշ զորաբաժին եկավ, բայց նա տեսավ մի կատարյալ ապստամբություն, որին միացել էին և ուրիշ տեղերի գյուղացիները։ Ապստամբները կրակ բաց արին զինվորների դեմ։ Թիոնեթ գյուղից նույնպես դուրս վռնդեցին զինվորներին և նրանց մի մասն էլ կոտորեցին։ Այստեղ ժողովրդական կատաղությունը գրգռողը մի կին էր, որ՝ վազեվազ մտնելով տղամարդկանց խմբի մեջ, գտավ այնտեղ իր ամուսնուն, վերցրեց նրա գլխից փափախը, իր գլխին դրեց, իսկ իր լաչակը գցեց նրա գլխին։ «Այժմ դու կին ես, իսկ ես՝ տղամարդ,— գոչեց նա,— ես անպատվված եմ և գնում եմ իմ վրեժը հանելու»։ Այս խոսքերի հետ նա խլեց ամուսնու խենջարը և վազեց դեպի տուն։ Ամբոխը գնաց նրա ետևից։ Տան մեջ գտնված սպան և նրա զինվորները մորթվեցին[1]։ Ապստամբությունն արագ զարգացավ և տարածվեց։ Զանազան տեղերում փռված ռուսական փոքրաթիվ զորաբաժինները կամ սրի քաշվեցին կամ վռնդվեցին։ Փետրվարի սկզբին ապստամբները գրավեցին Թելավ քաղաքի արվարձանը։ Ռուսաց փոքրիկ զորախումբը փակվեց միջնաբերդի մեջ և հրաժարվեց անձնատուր լինելուց, ուստի քաղաքը պաշարվեց ամեն կողմից, բոլորովին կտրվեց հաղորդակցությունից և այս դրության մեջ մնաց մի ամբողջ ամիս։ Միևնույն ժամանակ վրաց արքայական տան մի ներկայացուցիչը, որ մնացել էր Կախեթում և որի անունն էր Գրիգոր, հայտարարվեց Վրաստանի թագավոր։ Մարկիզ Պաուլուչչին, Ղարաբաղում լուր առնելով այս չափազանց վտանգավոր անցուդարձերի մասին, շտապեց վերադառնալ Թիֆլիս, որին նույնպես սկսել էր վտանգ սպառնալ ապստամբների կողմից, գնաց Կախեթ անձամբ վարելու պատերազմական գործողությունները՝ երկիրը նորից նվաճելու համար։ Նրան հաջողվեց ազատել Թելավը պաշարումից, բռնել թագավոր հայտարարված Գրիգորին և առհասարակ ճնշել ապստամբությունը, գոնե առժամանակ։

Բայց այս միջոցին նա կանչվեց Պետերբուրգ և նրա տեղ Կովկասի կառավարչապետ և զորքերի գլխավոր հրամանատար նշանակվեց գեներալ Ռտիշչևը, որ մինչև այդ ոչնչով հայտնի չէր, գտնվում էր ծերության հասակում, կրոնամոլ էր, ամեն ինչ ձգում էր Աստծուն և սիրում էր զգուշավոր, խոհեմ և դանդաղկոտ քաղաքականություն։ Ապրիլին հասնելով Թիֆլիս, Ռտիշչևը մտավ իր պաշտոնի մեջ։ Կախեթում ապստամբությունը ոչ միայն չէր դադարել, այլև բռնկվեց նորից կարճ ժամանակով և ճնշվեց զենքի ուժով։ Երրորդ անգամ Կախեթը ոտքի կանգնեց մի քանի ամսից հետո, սեպտեմբերին։ 1812-ի ամառը թվում էր, թե հերթն այժմ Ռուսաստանին է հասել լինել Նապոլեոնին ենթարկված մի երկրորդական պետություն։ Ֆրանսիական արշավանքը հաղթական էր և տանում էր Նապոլեոնին Մոսկվա։ Ռուսաստանն,

[1] Ibid., c. 6—7.

ուրեմն, ոչ միայն չէր կարող այլևս սպառնալիք լինել ուրիշներին, այլև պիտի մասնատվեր, կտոր-կտոր դառնար։ Այսպիսի մի վախճան ամենից առաջ ժպտում էր Պարսկաստանին, որ և ամեն միջոց գործ էր դնում ավելի ուժեղ և եռանդուն դեր բռնել թուլացող Ռուսաստանի հանդեպ։ Այս էր ցույց տալիս և նրա խրախուսանքով ու նյութական միջոցներով գործող արքայորդի Ալեքսանդրը, որ սեպտեմբերի սկզբին երևաց Թիֆլիսի մոտ 100 մարդով, անցավ Կուր գետը և գնաց Կախեթ, որ նորից ապստամբվեց։ Ալեքսանդրն արդեն շատ մոտեցել էր իր նպատակին և Թելավի ամբողջ գավառը, լեռնաբնակ վրացական ցեղերը և նույնիսկ լեզգիների մի մասն անցել էին նրա կողմը։ Սկսվեց ծանր մաքառումը։ Ռուսական զորքերը շարժվեցին ապստամբների դեմ զանազան ուղղություններով։ Կռիվը մի քանի տեղերում խիստ արյունահեղ և դաժան կերպարանք ընդունեց, մինչև որ դժբախտ արքայորդին նորից տեսավ իրեն անհաջողության մեջ, լքված ու մենակ։ Ռուսական ուժը հաղթող հանդիսացավ, ուրիշ կերպ չէր էլ կարող լինել։

Վրացական այս ապստամբությունների մեջ մեզ համար հետաքրքրական հարցն այն է, թե ինչ վերաբերմունք էին ցույց տալիս հայերը դեպի այդ շարժումները։ Այս հարցին պատասխանելու համար պետք է նկատի առնել ամենից առաջ այն հանգամանքը, որ այդ շարժումներն ունեին եթե ոչ բացառապես, գոնե շատ մեծ մասով դասակարգային բնավորություն։ Ապստամբությունը գյուղացիական էր, և հասկանալի է, որ Կախեթի հայ գյուղացիությունը, իսկ նա արհամարհելի քանակ չէր կազմում, նույնպես մասնակցում էր ապստամբությանը և կռվում էր ուս ուսի տված վրացի գյուղացիության հետ։ Այս մասին մենք ունենք մի շարք վկայություններ։ Այսպես, շեշտվում է, որ Թելավի արվարձանը վրացիները վերցրին քաղաքի մոտերքում ապրող, ասել է՝ գյուղացի հայերի օգնությամբ[1]։ Ավելին։ Ապստամբած գյուղացիության գլխավոր պարագլուխներից մեկը մի հայ գյուղացի էր՝ Կոցո Օհանյան։ Նա էր, որ մարկիզ Պաուլուչչիի ուղարկած մարդկանց, որոնք եկել էին ժողովուրդը համոզելու, որ հնազանդության գա, ասաց. «Մենք գիտենք, որ մենք քիչվոր ենք ռուսների հետ համեմատած, հույս չունենք նրանց հաղթելու, բայց ուզում ենք, որ նրանք մեզ բնաջինջ չանեն։ Մենք որոնում էինք ռուսաց ցարի հովանավորությունը և Աստված մեզ տվեց այն, բայց ցարի ծառաների անարդարություններն ու անգթությունները մեզ հուսահատության են հասցրել։ Մենք երկար համբերեցինք, իսկ այժմ, երբ Աստված ուղարկել է մեզ այս սարսափելի սովը, երբ մենք ինքներս խոտեր և արմատներ ենք ուտում, մեզանից զոռով պահանջում են հաց և ձիաների կեր։ Մեզ դուրս վռնդեցին մեր սեփական տներից, փորփորեցին մեր սնդուկներն ու հատիկների հորերը, բաց արին գինու մեր պաշարները, խմեցին մինչև արբելը, մնացածներն ապականեցին, անմաքրություններ նետելով նրանց մեջ։ Վերջապես, մեր աչքի առջև սկսեցին նեղացնել կանանց և աղջիկներին։ Մի՞թե այսպիսի ընտանեկան խայտառակությունից հետո էլ թանկ է կյանքը մեզ համար։ Մենք մեղավոր ենք Աստծու և ռուսաց ցարի առջև, որ թաթախել ենք մեր ձեռքերը քրիստոնեական արյան մեջ, բայց Աստված է վկա, որ դավաճանել ռուսներին, երբեք չենք ունեցել մեր մտքի մեջ, մեզ ստիպել են այդ բանին ուժով, և մենք վճռեցինք ոչնչանալ տեղն ու տեղը։ Ներողամտության վրա հուսալ չենք կարող. ո՞վ բաց կանե մեր դրությունը թագավորին։ Մի՞թե մենք չենք հիշում, որ մեզ, լինում էր ժամանակ, պատասխանում էին մեր մեծավոր պաշտոնյաները, երբ մենք տալիս էինք թագավորի անունը. Աստ-

[1] Ibid., VI, c. 8.

վաժ բարձր է, ցարը՝ հեռու. գնացեք նրանց մոտ, ոչ նրանք, ոչ դուք մեզ չեք խաբի»[1]։

Դասակարգային էր այս շարժումը նախ և առաջ հենց այն պատճառով, որ միայն գյուղացիներն էին ենթարկված հարստահարությունների, ոչ ազնվականություն, ոչ էլ քաղաքային բուրժուազիային չէին հասնում այդ զրկանքները։ Եվ կռվի մեջ գյուղական մանր ազնվականության մի մասն էր միայն, այն էլ ահից և ակամա, ապստամբված գյուղացիության կողմը, իսկ խոշոր ազնվականությունը և քաղքենությունը ռուս կառավարության կողմն էին։ Մենք տեսնում ենք, որ ապստամբների դեմ ուղարկվող զորքերի հրամանատարության մեջ կան շատ սպաներ վրացական ազնվականությունից։ Երբ մարկիզ Պաուլուչչին, որ գյուղացիության ամենագլխավոր լլկողն էր հանդիսացել իր կարգադրությամբ, կանչվեց Պետերբուրգ, վրաց ազնվականները հանրագրեր ուղարկեցին Ալեքսանդր կայսրին, խնդրելով, որ մարկիզը մնա իր պաշտոնի մեջ։ Այս մի վկայություն է, որ գյուղական ապստամբության անխնա ճնշումը շատ ցանկալի էր և ազնվականության համար։ Եվ գյուղացիությունը շատ լավ հասկանում էր այս, ուստի և իր շարժումների մեջ ավերում էր ազնվականության սեփականությունը կազմող կալվածները, ոչնչացնում էր գույքը։ Ալեքսանդր արքայորդին, գյուղացիներին իր կողմը գրավելու համար, խոստանում էր նրանց տալ այն բոլոր ազնվականների հողերն ու տները, որոնք անձնատուր եղած էին ռուսներին[2]։

Վրաց ազնվականության հետ էր, իհարկե, և հայ ազնվականությունը։ Բացի դրանից՝ հայ քաղքենիությունն էլ, և մասնավորապես թիֆլիսեցիները, ինչպես և 1801-ին, երբ ռուսական տիրապետությունը, հակառակ վրաց ժողովրդի մի խոշոր մասի ցանկության, ուժով հաստատվում էր Թիֆլիսում, կառավարության կողմն էր և մեծամեծ աջակցություն ցույց տվեց գյուղացիական ապստամբությունը ճնշող ռուս զորքերին։ Կառավարչապետ Ռտիշչևը հիացմունքով էր դրվատում հայ բուրժուազիայի կատարած դերը Ալեքսանդր Ա-ին գրած իր զեկուցման մեջ։ «Նամանավանդ,— գրում էր նա,— անցյալ ապստամբության ժամանակ, որ տարածվեց ամբողջ Կախեթիայում, իսկ Վրաստանում սասանեցրեց գրեթե ամենքի մտքերը, միմիայն հայերն էին, որ ոչ միայն ամենևին մասնակից չեղան այդ շարժմանը, այլ զոհելով իրենց կայքը և նույնիսկ կյանքը, միաբանեցան ռուսաց զորքի հետ, զինվորվեցան Կախեթում ապստամբաց դեմ և, միանալով ռուսական գնդերի հետ, ապստամբների դեմ եղած գործողության մեջ ցույց տվին հիանալի օրինակներ քաջության և իրենց սրտանց հավատարմության դեպի ձերդ կայսերական մեծություն։ Բացի այդ, այստեղի կառավարությունը եթե որ միայն յուր ժամանակին տեղեկացավ ապստամբների դիրքի և դիտավորությանց մասին և կամ տեղեկություն ունեցավ ռուսական այն գնդերից, որոնք Կախեթի զանազան մասերում գործելով բոլորովին միմյանցից անջատված էին,— այդ բոլորում շատ է պարտական հայոց ջերմեռանդությանը, որովհետև նոքա շատ անգամ զոհ էին բերում իրենց կյանքը, ուրախությամբ հանձն առնելով այդպիսի ծանր հանձնարարությունները։ Չեմ կարող նմանապես չզեկուցանել ձերդ կ. մեծության, որ Թիֆլիսի պատվավոր քաղաքացիք, որոնք հայք են, ապստամբության ամենախառնակ ժամանակը, երբ անցյալ տարվա Վրաստանում եղած հացի պակասության պատճառով՝ դադարած էին Թիֆլիս հաց բերել և այստեղ գտնվող մեր զորքերին հացի պակասություն էր սպա-

[1] Ibid., V, c. 475—476.

[2] Ibid., VI, c. 59.

նում,— դոքա (Թիֆլիսի հայք) այն ժամանակների հանգամանքների վերաբերմամբ շատ մեծ ծառայություն ցույց տվին, հանձն առնելով հանձնել Թիֆլիսի մթերանոցին մոտ 800 չեթվերթ (5600 փութ) հաց, որ և կատարեցին պետական գանձարանի համար շատ ձեռնատու պայմաններով, և այսպես ահա մի առ ժամանակ ազատ պահեցին Թիֆլիսում գտնվող զորքերը հացի պակասությունից»[1]։

Այս բոլոր «ծառայությունները» պարտք էին դնում Ռտիշչևի վրա խնդրելու Ալեքսանդր կայսրից, որ նա վարձատրե հայերի օրինակելի հավատարմությունը շնորհակալության մի հրովարտակով։ Կարելի կլիներ մոլորվել մի րոպե և հավատալ, թե լոկ հայերի սիրուն աչքերի համար էր Ռտիշչևը տողում այդ ներբողյանը, եթե ինքն, այդ բյուրոկրատը բաց չաներ մեր առջև իր իսկական նպատակը։ Նա գրում էր, որ այդպիսի մի հրովարտակ հարկավոր էր ոչ միայն հայերին խրախուսելու համար, այլև այն պատճառով, որ այդ քաջալերությունը «նույնիսկ վրացի ազգերի մեջ էլ մրցումն կառաջացնեն»։ Այս այն քաղաքականությունն է, որ արտահայտվում է «բաժանեա զի տիրեսցես» բառերով։ Կախեթի միացած գյուղացիության հեղափոխությունը ցույց էր տալիս, թե որքան օգտավետ կարող է լինել այդ քաղաքականությունը մանավանդ ցեղական տարբերություններով լեփ-լեցուն Կովկասում։

Եվ Ալեքսանդրը, հասկանալով, թե ինչ է ուզում իր հավատարիմ սատրապը Թիֆլիսից, 1813 թվի սեպտեմբերի 15-ին, Բոհեմիայի Տեպլից քաղաքում, Նապոլեոնի դեմ մղվող հաղթական պատերազմների միջոցին, ստորագրեց հետևյալ մանիֆեստը.

«Մեր սիրելյալ և հավատարիմ հպատակ համօրեն հայոց ազգին, որ բնակվում է Վրաստանում և նորան բաղկացնող ամենայն դասակարգի անձանց՝ Մերս կայսերական ողորմություն։

Ճշմարիտ բավականությամբ տեսանք մենք՝ Վրաստանի մեր գլխավոր հրամանատարի զեկուցումից մեր սրտի համար ախորժելի նոր վկայություն այն հավատարիմ հպատակության երախտագիտական զգացմանց, որոնցով վրաստանաբնակ հայոց բոլոր հասարակությունները միշտ ոգևորված են եղել առ բարձր հովանավորություն և առ մեր հայրական հոգատարությունը՝ նոցա և այնտեղի բոլոր ժողովրդի բարեկեցության համար։ Նոքա ապացուցեցին այս զգացմունքը բազմատեսակ փորձերով՝ հաստատուն հավատարմություն համենայն դեպս։ Նոքա հանդիսացան օրինակելի հաստատամտությամբ և անձնվիրությամբ այն միջոցին, երբ որ թեթևամտությունը և չարակամությունը իզուր ջանք էին գործ դնում սասանեցնել Վրաստանում մեր հաստատած խաղաղությունը և խռովահույզ հանգամանքների մեջ մնացին հաստատ և անսասան դեպի մեզ և դեպի մեր գահը ունեցած իրենց ջերմեռանդության մեջ, զոհելով իրենց ստացվածքը և ամենայն միջոցները, նաև իսկ իրենց կյանքը հօգուտ Մերս ծառայության և ի բարօրություն հասարակաց։

Վրաստանաբնակ ամբողջ հայոց ազգի և նրան բաղկացնող բոլոր դասակարգերի այսպիսի ջերմեռանդությունը, նոցա ծառայությունքը և մեծագործությունքը մեզ վրա ախորժելի պարտավորություն են դնում վկայել առաջի ընդհանուր տիեզերաց զմերս առ նոցա արդարացի երախտագիտությունը և բարեհաճությունը։ Թող պահվի այս վկայությունը ի պատիվ և ի փառս նոցա

[1] Թարգմանություն Ա. Երիցյանի, «Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում», հատ. Ա, էր. 64։

ապագա սերունդներին ի հիշատակ։ Մնամք դեպի Նոցա ամենեցունց մերս կայսերական ողորմությամբ բարեհաճ»[1]։

Այս հրովարտակը Թիֆլիսում հանձնվեց հայոց առաջնորդին շքեղ զինվորական-եկեղեցական հանդեսով. Թիֆլիսի հայ քաղքենիությունը հրճվանքի մեջ էր։ Երեկոյան գեղեցիկ հրավառություն կար։ Ի հիշատակ այդ օրվա՝ բուրժուազիան նվիրեց հօգուտ աղքատների 4000 ռուբլի թղթադրամ։ Կայսերական հրովարտակը Ռտիշչևի կարգադրությամբ կարդացվեց Վրաստանի մյուս քաղաքներում։ Ավելորդ է ասել, թե ինչ տպավորություն պիտի թողած լինի նա վրաց ժողովրդի և մանավանդ կեղեքված գյուղացիության մեջ։ Տարբեր ազգերի հակադրություններ, պրովոկացիա հավատարիմ և ոչ հավատարիմ հպատակության վրա. այս բոլորը պիտի ծնեցներ փոխադարձ նախանձ, ատելություն, ազգայնական կրքերի գրգռում։ Ահա ինչ թույն էր մտցվում հայ-վրացական հարաբերությունների մեջ տիրապետող դասակարգերի ձեռքով։ Սակայն Կախեթի հայ գյուղացիությունն իր Կոցո Օհանյանների լեզվով կարող էր ասել, թե իրեն չէր վերաբերում ցարական մանիֆեստը, և թե սուտ էր նրա այն վկայությունը, որ Վրաստանի հայությունը բաղկացնող բոլոր դասակարգերն են անձնվեր հանդիսացել ռուսական բյուրոկրատիային։ Աշխատավոր հայ գյուղացիությունը չկար այդ դասակարգերի մեջ։

Ալեքսանդրի հրովարտակը մեծ պարծանքով պահվում էր Թիֆլիսի հայոց առաջնորդարանում իբրև հայ ժողովրդի հավատարմական ստրկությունը վավերացնող մի արձանագրություն, որ գուցե անգլիական Մեծ Խարտիայի չափ նշանավոր էր հայ ժողովրդի ինքնապահպանման տեսակետից։ Անցան շատ տարիներ, ցարական «բաժանիր որ տիրեսցես» միանգամայն անհրաժեշտ պահանջ դարձրեց հայերին հավատարմության կողմից խիստ կասկածելի դնելը, որի հետևանքով և նրանց վրա, ինչպես առատության եղջյուրից, թափվեցին հալածանքներ։ Հալածական հայերը շատ անգամ հանեցին և հրապարակեցին իրենց պարծանքը կազմող այս հրովարտակը, բայց նա ոչինչ ազդեցություն չարավ։ Ցարական բյուրոկրատիան շատ լավ էր ճանաչում իր զավակին, գիտեր, որ նա հարկավոր է եղել իր ժամանակին՝ ազգային հակադրություններ բորբոքելու համար և ոչ թե իսկապես հայերին արտոնված դիրքի մեջ զետեղելու համար։

Մինչդեռ Կախեթում փետրվարյան ապստամբությունը զարգանում էր, գեներալ Կոտլյարևսկին Ղարաբաղում, ընդունելով զորքերի հրամանատարությունը, իրար ետևից եռանդուն գործողություններ էր կատարում այդ դժբախտ երկրի մեջ կարգ ու հանգստություն հաստատելու համար։ Ամենից առաջ նա արշավանք գործեց Արաքսի մյուս ափը, գարունը նոր բացվելուն պես, վերցրեց անառիկ համարվող մի բերդ և ետ բերեց ձախ ափը 400 ընտանիք, որոնց մեջ և Տեղ հայաբնակ գյուղի բնակիչներին, որոնք քշված տարված էին Պարսից հողը և դրանց հետ նաև 15 հազար գլուխ եղջերավոր անասուն։ Այսպես նա ազդում էր արտաքին թշնամիների վրա, ցույց տալով, թե ռուսներն ուժ ունեին։ Իսկ ներքին թշնամիներին զսպելու համար նա կալանավորեց կասկածելի վարքի տեր ազնվականներին, մի մասը բանտարկեց Շուշի բերդում, մի մասն էլ ուղարկեց Գանձակ։ Ինչ վերաբերում էր երկրի պատուհաս դարձած ավազակություններին, Կոտլյարևսկին ձեռնարկեց միանգամայն ազդու և կտրուկ միջոցների։ Ավազակությամբ ապրող քուրդ և այլ

[1] Անդ, եր. 65—66։

ցեղերից նա պատանդներ վերցրեց, ընտրելով դրանց ազդեցիկ հեղինակավոր ընտանիքներից և այսպիսով զսպեց այդ ելուզակների կատաղությունը։

Սակայն մի հատ փոքրիկ արշավանքով արտաքին թշնամին՝ Իրանը, դեռ լավապես խրատված չէր մնում, մանավանդ որ նրան չէին էլ թողնում խրատվել։ Անգլիան, թեև այժմ Ռուսաստանի դաշնակից, դադար չէր տալիս իր գիշատիչ քաղաքականությանը։ Պարսից կառավարության նա բաց էր թողնում տարեկան երեք միլիոն ռուբլի արժաթ և ի հաշիվ այս գումարի 1811-ի վերջերում ուղարկել էր 12 թնդանոթ, 12 հազար ռ. ռազմամթերք, 12 հազար հրացան և մահուդ՝ 12 հազար մարդ հագցնելու համար։ Անգլիական սպաները մարզում էին Աբաս Միրզայի գնդերը և արդեն շատ հաջողություն էին գտել այս ուղղությամբ։ Ինքն Աբաս Միրզան հանգստություն չէր տալիս Անդրկովկասին և շարունակ այս ու այն կողմից մեծ թե փոքր զորաբաժիններ էր մտցնում այնտեղ՝ «չափավուլի» համար։ Գեներալ Կոտլյարևսկին, դիտելով բոլոր երևույթները, ավելի և ավելի հաստատվում էր իր այն մտքի մեջ, թե պարսիկներին կարելի է կարգի բերել միայն հարձակողական պատերազմով։ Իսկ գեներալ Ռտիշչևը միանգամայն հակառակ քաղաքականություն էր հետևում, կարծելով, որ, ընդհակառակը, խաղաղ բանակցությունների միջոցով կարելի է հասնել վերջնական հաշտության։ Եվ նա գրագրություն սկսեց Աբաս Միրզայի և անգլիական դեսպան սըր Ուզլեի հետ։ Վերջինս Թիֆլիս ուղարկեց իր պաշտոնյաներից մեկին, որի անունն էր Ռոբերտ Գորդոն։ Կոտլյարևսկին հակառակ էր այս բանակցություններին, որոնք երկար ձգձգվելուց հետո հանգեցրին այն վախճանին, որ պարսից կառավարությունը պատրաստակամություն հայտնեց պայմանների մասին խոսելու։ Գեներալ Ռտիշչևը գնաց Ղարաբաղ բանակցությունների համար տեղ որոշելու։ Նա համաձայն էր, որ այդ տեղը լինի ռուս-պարսկական սահմանագլխի վրա և այս առաջարկությամբ էլ Աբաս Միրզայի մոտ ուղարկեց գեներալ Հախվերդովին։ Սա թեև քաղաքավարի ընդունելություն գտավ պարսից բանակում, բայց ոչինչ հաջողություն չունեցավ, որովհետև պարսիկները դարձել էին խստապահանջ և արհամարհոտ դեպի ռուսները։ Աբաս Միրզան մերժեց տեղ նշանակել սահմանագլխի վրա և պահանջեց, որ ինքը՝ գեներալ Ռտիշչևը գնա իր մոտ խոսելու, իսկ այս մի տեղ էր, որ սահմանից 80 վերստ հեռու էր գտնվում, պարսից երկրի խորքում։ Միաժամանակ գեներալ Հախվերդովը բերում էր պարսկական բանակից մի լուր, որ բացատրում էր պարսիկների այդ գոռոզ և արհամարհոտ տրամադրությունը։ Այդ այն էր, որ Նապոլեոնն արդեն մտել է Մոսկվա։ Այս լուրը գեներալ Ռտիշչևը, իբրև բնիկ մոսկվացի, ընդունեց դառն արտասուքներով, համարելով Մոսկվան կորած։ Բայց միևնույն ժամանակ, պահպանելով իր պաշտոնի արժանավորությունը, մերժեց գնալ Աբաս Միրզայի մոտ և առաջարկեց բանակցություններ սկսել երկու կողմից ընտրված լիազորների միջոցով։

Այս առաջարկությունն ընդունվեց, և լիազորների տեսակցության տեղ նշանակվեց Ասլանդուզ բերդը Արաքսի աջ ափին, պարսկական հողի վրա։ Ռուսաց կողմից լիազոր էր գնում նույն գեներալ Հախվերդովը։ Նա պիտի առաջարկեր, որ պահպանվի status quo-ն և իրերի նախկին դրությունը, այսինքն, որ յուրաքանչյուր կողմ տեր մնա իր նվաճած երկրների սահմաններում։ Բացի դրանից, ռուսները խոստանում էին օգնություն անել պարսից շահին նրա անձնական գործերի մեջ։ Ֆաթալի շահը դեռ չէր ճանաչված ռուսների կողմից և մնում էր նրանց համար նախկին Բաբա խանը։ Նա ուներ 40 որդի, որոնք բոլորն էլ ձգտում էին իշխանության։ Աբաս Միրզան նրա ավագ որդին չէր և իրավունք չուներ նրանից հետո գահը ժառանգելու։ Բայց

նա, շատ սիրելով Աբաս Միրզային, նրան էր Թագաժառանգ նշանակել, և այս մի ապացույց էր, որ նրա մահից հետո Թագի համար կռիվ պիտի սկսվեր եղբայրների մեջ։ Արդ՝ ռուսաց կառավարությունը հանձն էր առնում նախ ճանաչել Բաբա խանին Իրանի շահ, իսկ նրանից հետո պաշտպանել նրա նշանակած ժառանգին։ Սակայն այս խոստումները չգայթակղեցրին պարսիկներին։ Ասլանդուզի բանակցությունների հենց առաջին օրը նրանք պահանջ դրին, որ ռուսները վերադարձնեն Պարսկաստանին Անդրկովկասում իրենց ձեռք բերած բոլոր երկրները։ Բանակցությունները խզվեցին։

Գեներալ Կոտլյարևսկին հենց այսպիսի ելքի էլ սպասում էր։ Եվ նա սկսեց նորից ապացուցանել, թե միակ կտրուկ ելքն է ջարդել Աբաս Միրզայի բանակը, նույնիսկ չսպասելով, որ նա անցնի Արաքսի այս կողմը։ Այս պատճառով նա առաջարկում էր գեներալ Ռտիշչևին, որ նա միացնե իր հետ բերած զորաբաժինը, իր, Կոտլյարևսկու զորաբաժնին և թույլ տա այդ միացած ուժերով հարձակվել պարսիկների վրա։ Ռտիշչևը ոչ միայն թույլ չտվեց, այլև կոշտ վերաբերմունք ցույց տվեց դեպի իր ստորադրյալը, ասելով, թե նա շատ է ջահել։ Կոտլյարևսկին հրաժարականի խնդիր դրեց, և այս ժամանակ միայն զառամյալ գլխավոր հրամանատարը մեղմացավ։ Նա շտապում էր վերադառնալ Թիֆլիս, որովհետև լուր էր առել Կախեթի աշնանային ապստամբության մասին, երբ արքայորդի Ալեքսանդրը դարձել էր դրության տեր, կտրել էր Անդրկովկասը Ռուսաստանից, գրավելով Վլադիկավկազի ճանապարհը և տիրանալով Թիֆլիս ուղարկվող ռուսական փոստին։ Գեներալ Օրբելիանին, որին Ռտիշչևը տեղապահ էր թողել Թիֆլիսում, հայտնում էր, թե ինքը պատասխանատու չէ Թիֆլիսի վիճակի համար, և թե լեզգիներն արդեն երևացել են Հավլաբարում։ Այսպիսի պայմանների մեջ անցնել փոքրաթիվ բանակով պարսից հողը՝ չափազանց վտանգավոր բան էր, և անհաջողության դեպքում ամեն ինչ կորած կլիներ։ Ուստի Ռտիշչևը ամեն լիազորություն տալիս էր Կոտլյարևսկուն գործելու պարսիկների դեմ, բայց միմիայն Արաքսի ձախ ափին և արգելում էր անցնել պարսկական ափը։

Մեհտի Ղուլի խանը չգնաց ռուսաց սարդարին ողջերթ մաղթելու։ Նա առհասարակ այնքան չարակամ էր դարձել ռուսների վերաբերմամբ, որ հալածում էր իր այն բեկերին, որոնք դեռ մնում էին ռուսների կողմնակից։ Կոտլյարևսկին չկարողացավ տանել այս վիրավորանքը և մի օր, երբ Ռտիշչևը նոր էր ճանապարհվել, ձի հեծած և հետը մի հատ կազակ վերցրած՝ սրարշավ կտրեց ամբողջ Շուշին և ներս թռավ խանական տան բակը, ուր Մեհտի խանը, շրջապատված իր դրանիկներով, ասիական գոռոզությամբ ղալյան էր ծխում ջրի ավազանի առաջ։ Կոտլյարևսկին ձիու վրայից կանչում է նրան թուրքերեն լեզվով. «Սանի ասաջաղ ամ» (քեզ կախելու եմ)։ Ապա, իջնելով ձիուց և ձեռքում շարժելով մտրակը, շարունակեց հանդիմանել խանին բարձր ձայնով։ Եվ երբ խանը հարցրեց նրան, թե ինչու համար է այդ բարկությունը, Կոտլյարևսկին ասաց նրան. «Ինչպե՞ս համարձակվեցար դու ճանապարհ չդնել ռուսաց սարդարին»։ Թեև խանին շրջապատողները կարող էին մի ակնթարթում ոչնչացնել մարդուն, բայց ռուս երիտասարդ գեներալն անուն ուներ, և նրա խիզախ տեսքը, անվախությունը բոլորին ընկճեց։ Խանն սկսեց ներողություն խնդրել, հրամայեց մի քանի ջորի բեռնել քաղցրավենիքներով և ընծաներով, իսկույն ճանապարհ ընկավ գեներալ Ռտիշչևի ետևից, որին հասավ Թարթառ կայարանում և այնտեղ, իր հարգանքներն ու ընծաները մատուցանելով գլխավոր հրամանատարին, ողջերթ մաղթեց նրան[1]։

[1] Соллогуб, Биография генерала Котляревского, с. 106.

Այս մի ամբողջ հաղթություն էր, որի հետևանքով խաղաղվում էր ապստամբվելու պատրաստ թուրք կալվածատիրությունը։ Բայց դրսի վտանգը մեծանում էր։ Ասլանդուզի բանակցությունների ընդհատումից հետո Աբաս Միրզան պատրաստվում էր նոր արշավանք գործել, այս անգամ նոր ծրագրով և ավելի խոշոր ուժերով։ Ծրագրված էր հարձակումն սկսել մի քանի տեղերից։ Առաջապահ զորքը պիտի անցներ Քուռ գետը՝ Նուխու խանության միջով դեպի Վրաստան ճանապարհ բաց անելու համար։ Այս բոլոր շարժումներն ի նկատի առնելով, Կոտլյարևսկին վճռում էր ինքնագլուխ, առանց վաղօրոք թույլտվություն խնդրելու, գլուխ բերել իր ծրագրած ձեռնարկությունը Արաքսի մյուս ափին։ Երկար ու մանրամասն ուսումնասիրելով իր անելիքը, նա հոկտեմբեր ամսին Ամարասից իր ամբողջ զորաբաժնով գնաց Արաքսի ափը, անցավ գետը և հարձակվեց անակնկալ կերպով Ասլանդուզ բերդի վրա, ուր գտնվում էր Աբաս Միրզայի գլխավոր բանակը։ Բերդը վերցվեց մեծ քաջությամբ, բայց ավելի խոշոր էր այն հաղթությունը, որ տարավ Կոտլյարևսկին մյուս օրը, երբ պարսկական մեծ բանակը հարձակվեց մի բուռն ռուսների վրա։ Պարտությունը կատարյալ էր։ Աբաս Միրզան հազիվ կարողացավ ազատել իր կյանքը և փախչել պատերազմի դաշտից։ Նրա բանակը, մեծ կորուստներ կրելով, նույնպես փախավ և ցրվեց։ Կոտլյարևսկին վերադարձավ Ամարաս։ Հաղթողին չեն դատում։ Ռտիշչևին անհուն ուրախություն պատճառեց Ասլանդուզի փառավոր հաղթությունը, և նա մոռացավ, որ արշավանքը կատարված էր հակառակ իր արգելման։ Կոտլյարևսկու անհնազանդությունը նա թաքցրեց Ալեքսանդր կայսրից և խնդրեց նրան տալ այդ հերոսին գեներալ-լեյտենանտի աստիճան։ Ալեքսանդրը կատարեց այդ խնդիրքը և հենց իրեն՝ Ռտիշչևին էլ մի բարձր շքանշան տվեց այն գործի համար, որին նա հակառակ էր եղել ամբողջ սրտով։

Անդրկովկասը փրկված էր։ Բայց Կոտլյարևսկուն սպասում էր մի նոր մեծագործություն։ Դեկտեմբերի վերջերին, սաստիկ ցրտերի ժամանակ, նա Ամարասից Մուղանի դաշտով իր զորաբաժինը տարավ Լենքորան բերդը գրոհով վերցնելու համար։ Այս մի շատ դժվար գործ էր, քանի որ Լենքորանը մի ամուր բերդ էր և նրան պաշտպանում էր Սադըխանը, որ պարսից լավագույն և քաջ հրամանատարներից մեկն էր և ուներ իր ձեռքի տակ լավ մարզված և տոկուն մի բանակ։ Դեկտեմբերի 31-ին սկսվեց սաստիկ համառ և արյունահեղ կռիվը, որի մեջ Կոտլյարևսկին ստացավ մի քանի ծանր վերքեր. երբ պարսկական գնդակը փշրեց նրա ծնոտը, նա ուշաթափված վայր ընկավ։ Բայց նա վաղօրոք այնպես լավ կարգադրել էր ամեն ինչ, որ ոչինչ շփոթություն չառաջացավ, և ռուսները, ահագին կոտորած անելով, գրավեցին բերդը։ Կռվի համառությունը ցույց էր տալիս այն, որ միայն բերդի մեջ սպանված պարսիկների թիվը հասնում էր 3800-ի։ Այս խոշոր հաղթությունը վերջինն էր, որ տանում էր Կոտլյարևսկին։ Չնայած իր ծանր վերքերի պատճառած տանջանքներին, նա հունվար ամսին ետ տարավ իր զորաբաժինը Ամարաս և այնուհետև խնդրեց, որ իրեն արձակուրդ տրվի իր վերքերը բժշկելու համար։

Ասլանդուզի և Լենքորանի հաղթությունները, բայց մանավանդ Նապոլեոնի անփառունակ փախուստը Մոսկվայից, պարտուպատշաճ տպավորություն էին թողնում Պարսկաստանում, և շահական կառավարությունը նորից խոսք էր բաց անում հաշտության մասին։ Այս անգամ եռանդուն մասնակցություն ստանձնում էր անգլիական դեսպան սըր Ուզլեյը, մի հանգամանք, որը հասկանալու համար դարձյալ պետք է նկատի առնել նապոլեոնյան սաստիկ պարտությունը ռուսական ձյուներից։ Հայտնի էր դառնում, որ ռուս-պարս-

կական խաղաղության հակառակ էր Միրզա Բյուզուրկը, որ Աբաս Միրզայի դաստիարակիչն էր եղել և մեծ ազդեցություն ուներ նրա վրա։ Սըր Ուզլեյը հաջողեցրեց, որ այս անգամ բանակցությունները վարե շահի փեսիր Միրզա Շաֆին։ Բայց մինչդեռ այս բանակցությունները տեղի ունեին Ռտիշչևի և Թեհրանի մեջ, Աբաս Միրզայի զորքերը դարձյալ սկսեցին թալան, ներխուժելով Թալիշի խանությունը և Խուդափիրինի կամուրջով Ղարաբաղի սահմանները։ Այս երկրորդ արշավանքը ետ մղվեց Խնձորեսկ հայ գյուղի կողմից։ Ինքը Ֆաթալի շահն էլ դուրս եկավ Թեհրանից, ունենալով ձեռքի տակ 18 հազար հետևակ և 40 հազար ձիավոր զորք։ Շարժվելով դեպի Թավրիզ, նա միտք ուներ, որ եթե այս անգամ էլ հաշտություն չկնքվեր, անձամբ բացանել պատերազմական գործողություններ Ռուսաստանի դեմ։ Այս դիտավորությամբ նա հրամայեց ամրություններ կառուցել Թալին գյուղում, իսկ Երևանի և Նախիջևանի խանությունների ազգաբնակությունն իր անասուններով հետ քշել-տանել Արաքսի մյուս ափը և պահել այնտեղ ամբողջ ամառը։ Դարձյալ, ուրեմն, թշվառ ժողովուրդը պիտի քարեքար ընկած տանջվեր։

Բայց գեներալ Ռտիշչևն էլ այլևս առաջվանը չէր։ Վերջին ժամանակների հաջողությունները վճռականություն էին հաղորդել նրա դատողությանը։ Այժմ նա էլ համոզված էր Կոտլյարևսկու նման, որ պարսկական ավազակային արշավանքներից ազատվելու ամենալավ միջոցն է անցկացնել պատերազմական գործողությունները Պարսկաստանի հողի վրա։ Եվ նա կազմել էր արշավողական մի ծրագիր, որի մեջ երկու կողմից հարձակում էր կատարվում՝ ցամաքից և ծովից. ցամաքից զորքերը գնում էին ուղղակի Թավրիզի վրա, իսկ Կասպից ծովում պատրաստված ուժեղ նավատորմը տանում էր Աստրախանից զորքեր և ափ էր իջեցնում ծովի հարավային կողմերում։

Սակայն, ռուս-պարսկական ընդհարում այլևս տեղի չէր ունենում։ Կայացավ վերջնական համաձայնություն, և 1813-ի սեպտեմբերի 20-ին Ռտիշչևը նորից գնում է Ղարաբաղ, ուր Գյուլիստան գյուղը նշանակված էր բանակցությունների տեղ։ Պարսիկների կողմից լիազոր էր նշանակված Միրզա Աբուլ Հասան խանը, որ մի շաբաթից հետո հասավ Գյուլիստան։ Բանակցությունները կատարյալ համաձայնության հանգեցին 15 օրվա ընթացքում և հոկտեմբերի 12-ին ստորագրվեց դաշնագրությունը, որ ստացավ Գյուլիստանի դաշնագրություն անունը։ Այդ դաշնագրով Պարսկաստանը Ռուսաստանի մշտնջենական սեփականություն էր ճանաչում Դերբենդի, Ղուբայի, Բաքվի, Թալիշի, Շիրվանի, Շաքիի, Ղարաբաղի, Գանձակի խանությունները, Վրաստանը, Դաղստանը և Շորագյալի գավառը։ Մի ուրիշ կարևոր հաջողությունն էլ այն էր, որ Պարսկաստանն իրեն կամավորապես զրկում էր Կասպից ծովի վրա նավեր պահելու իրավունքից և ընդունում էր, որ միմիայն ռուսական դրոշակն է կարող երևալ այդ ջրերի վրա։

Իր կողմից Ռտիշչևը մի զիջում արած լինելու համար մեծահոգությամբ տալիս էր պարսիկներին Մեղրիի շրջանը, որ մի անպտուղ վայր էր սաստիկ կլիմայով և գտնվում էր, ինչպես գիտենք, Ղարաբաղի հարավային ծայրում, Արաքս գետի վրա։

Գյուլիստանի դաշնագրությունը մեծ գոհունակություն էր պատճառում ռուսներին։ Ալեքսանդրը պարգևատրեց Ռտիշչևին այդ մեծ հաջողության համար։ Այս առիթով զինվորական մինիստր իշխան Գորչակովը գրում էր Ռտիշչևին. «Ամենաբարձրյալը, օրհնելով Հռենոսի վրա մեր զենքի հաջողությունները, որ բարձրացված էր Եվրոպայի փրկության համար, օրհնեց վերականգնել հանդարտությունն ու հանգստությունը Արաքսի վրա։ Դուք այս վերջինի պատճառն եք, որ կնքեցիք այնքան վաղուց ցանկացած և օգտության արժանի

հաշտություն Պարսկաստանի հետ։ Ձեզ էր թողնված վերջ տալ տասնյոթ տարի անընդհատ շարունակվող պատերազմին—այս թող լինի ձեր հուշարձանը»[1]։

Բայց որ ամենից զարմանալին է, Ֆաթալի շահն էլ շատ գոհ էր Ռտիշչևից և պարգևեց նրան Առյուծի և Արևգակի (Շիր ի խուրշիդի) շքանշանի առաջին կարգը, ոսկե շղթայի վրա, վզից կախելու համար և կանաչ մետաքսե ժապավեն ուսով գցելու համար, նույնպես հրամայեց տալ նրան 500 Թավրիզի թաթման մետաքս[2]։

Գյուլիստանի դաշնագրությամբ վերջանում էր ռուս-պարսկական առաջին պատերազմը, որի սկիզբը պետք է համարել Ռուսաստանի տիրապետության հաստատումն Անդրկովկասում (1801 թ.)[3]։

1 Н. Дубровин, VI, с. 129.

2 Ibid., с. 130.

3 Իշխան Գորչակովը (տե՛ս մեր բերած հատվածը) հաշվում էր պատերազմի սկիզբ 1796 թվականը, երբ սկսվեց կոմս Զուբովի արշավանքը դեպի Անդրկովկաս։ Բայց այս չէ համապատասխանում պատմական ճշտությանը։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ

(Դասախոսություններ՝ կարդացված ՀՍՍՀ պետական համալսարանում 1924-25 ակադեմիական տարեշրջանում)

Գլուխ առաջին[1]

ԱՌԱՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ
(1806—1812)

1. Հանգամանքները: *Առաջինն էր այս պատերազմը նախ և առաջ XIX դարում և երկրորդ՝ հայոց պատմության նկատմամբ, որովհետև առաջին անգամն էր, որ նրա ազդեցության էր ենթարկվում նաև Ասիական Թուրքիան և մասնավորապես Թուրքաց Հայաստանը, մի հանգամանք, որ բացակայում էր նախկին ռուս-թուրքական պատերազմների մեջ և որ մի նոր հեղափոխիչ շրջանի մեջ էր մտցնում թուրքահայ ժողովրդի կյանքը:*

Եկատերինա Բ-ի ժամանակ տեղի ունեցած երկու երկարատև ռուս-թուրքական պատերազմները քաղաքական տկարության և տնտեսական քայքայման բարձր աստիճանների էին հասցրել Թուրքիան: Մի ժամանակվա ահեղ և մեծ պետությունն այլևս ուժ չուներ պահպանելու իր ներքին միությունը և XIX դարի սկզբում ծվատվում էր անիշխանությունից, և նրա գրեթե բոլոր ծայրամասերն ապստամբական դրության մեջ էին գտնվում, մի քանիսներն արդեն իրենց համար անկախություն էին ստեղծել: Ռուսաստանը Պավել կայսեր ժամանակ ոչ միայն չուզեց օգտվել իր դարավոր թշնամու այս օրհասական դրությունից, այլև երբ ֆրանսիական զորքերը գեներալ Նապոլեոն Բոնապարտի գլխավորությամբ արշավեցին Եգիպտոս, որ Թուրքիային էր պատկանում, դաշնակցեց սուլթան Սելիմի հետ՝ ֆրանսիացիներին դիմադրելու համար: Իր այս օգնությամբ Ռուսաստանը շատ ազդեցիկ դիրք էր ստանում Կ. Պոլսում, մի հանգամանք, որ, իհարկե, պիտի գրգռեր ֆրանսիացիների նախանձը և հարկադրեր նրանց մրցելու այս բացառիկ տիրապետության դեմ:

[1] *1924—1925 ուս. տարում Երևանի պետական համալսարանում Լեոյի կարդացած սույն դասախոսությունները երկու մասով լույս են տեսել 1926 և 1927 թվականներին (խմորատիպ, ձեռագրի իրավունքով): Հինգ գլուխներից բաղկացած առաջին մասի նյութը կրկնվում է քառահատոր «Հայոց պատմության» չորրորդ՝ անավարտ հատորում, ուստի, իբրև վերջինիս շարունակություն, զետեղում ենք դասախոսությունների միայն երկրորդ մասը, գլուխների VI—X համարակալումները համապատասխանաբար դարձնելով I—V:*

Նապոլեոնը գործի է դնում իր ամբողջ խարդախ դիվանագիտությունը: Պավել կայսրին նա կարողանում է հրապուրել՝ խոստանալով նրան, թե Թուրքիան կբաժանվի երկու պետությունների մեջ, եթե Ռուսաստանը զորքեր ուղարկի Հնդկաստան՝ այդ երկիրն անգլիացիների ձեռքից խլելու համար: Կազմվում է ֆրանս-ռուսական դաշնակցություն, բայց որովհետև Անգլիան այդ ժամանակ ահագին տնտեսական նշանակություն ուներ ռուս ազնվական դասակարգի համար, ուստի Պավելի այդ հակաանգլիական ձեռնարկությունը պատճառներից մեկը դարձավ, որ կայսրը սպանվի իր դրանիկների ձեռքով: Նոր կայսրը՝ Ալեքսանդր Ա-ն, խզեց ֆրանս-ռուսական դաշնակցությունը և գնաց Անգլիայի հետ՝ Ֆրանսիայի դեմ: Եվ Նապոլեոնը մի նոր դիվանագիտական ճակատ է այժմ հարդարում: Այժմ նա Թուրքիայի ամբողջության պաշտպան է իրեն հայտարարում և աշխատում է սուլթանին իր կողմնակիցը դարձնել, խոստանալով պաշտպանել նրա պետությունը Ռուսաստանի դեմ: Այս նոր խաղի մեջ վճռական դեր էր խաղում այն հանգամանքը, որ 1804 թվականին թուրքական տիրապետության դեմ ապստամբել էր Սերբիայի ժողովուրդը: Այս շարժումով սկսվում էր Թուրքիան զանազան ժամանակ սասանեցրած և անդամահատած ազատագրական ապստամբությունների շարքը, որոնցով իրավազուրկ և ստրկացած ռայան ձգտում էր թոթափել իրենից թուրքական լուծը: Հայ ժողովուրդն այդ մեծ շարժումների մեջ իր խոշոր բաժինն է ունեցել, ուստի և մենք պարտավոր ենք այս գլխից հետևել այդ դարավոր ահեղ պայքարի գլխավոր և հատկանշական ելևէջներին:

Նկատենք առհասարակ, որ ազատագրական գաղափարը ծնունդ է առնում և մոխրի տակ թաքնված կայծերի կերպարանքով ապրել է սկսում այն ժամանակներից, երբ օսմանյան ուժեղ պետությունը, հասնելով նվաճողական թափի գագաթնակետին, դեպի անկում գլորվելու ճանապարհն էր մտնում: Ազատական գաղափարն ապրում էր շատ ժողովուրդների, գլխավորապես, իհարկե, ամենից շատ իրավազուրկների, այն է՝ քրիստոնյաների մեջ, անկախ նրանց բնակության վայրից՝ Եվրոպայում թե Ասիայում: Ամենագլխավորն այն էր այս երևույթի մեջ, որ յուրաքանչյուր ժողովուրդ իր համար առանձին միջոցներ էր գտնում իր տենչացած նպատակին հասնելու համար: Այսպես, հույն ժողովուրդն իր հույսը դնում էր գլխավորապես Արևմտյան Եվրոպայի քաղաքակիրթ ազգերի վրա, որոնց մեջ Վերածնության դարից սկսել էր ծավալվել վառ սեր դեպի հին հունական քաղաքակրթությունը, մի սեր, որ և կոչվում էր հելլենասիրություն: Այս զգացմունքը պիտի վերջ ի վերջո առաջնորդեր Եվրոպայի մտավորականությունը դեպի Սոկրատեսի, Ֆիդիասի, Հոմերոսի, Ալկիբիադեսի և այլ անմահների հայրենիքի ազատությունը: Եվ հույն ժողովուրդը սխալված չէր. Արևմտյան Եվրոպայի հելլենասիրությունը մեծ և վճռական դեր խաղաց այդ ժողովրդի ազատագրական գործի մեջ: Հայերն էլ Արևմտյան Եվրոպայից էին սպասում իրենց ազատությունը, բայց նրանք չունեին մի այնպիսի ստացվածք, որ ժողովրդականացներ նրանց տենչերը քաղաքակիրթ մարդկության մեջ: Նրանց ունեցածը մի քրիստոնեություն էր, այն էլ այնպիսի մի քրիստոնեություն, որ դավանակցական կապեր չուներ Եվրոպայում, ընդհակառակն, մերժվում էր ամենից իբրև ոչ ուղղափառ, հերձվածող: Մնում էր միայն, որ հայերը ծախեին իրենց կրոնական անկախությունը, եթե, իհարկե, առնող գտնվեր, որ տար փոխարենը քաղաքական ազատություն: Այսպիսի մի առուծախ կարող էր կատարել կաթոլիկ եկեղեցին և նրա պետին էլ, Հռոմի պապին էլ, դիմումներ էր անում հայ եկեղեցականությունը, բայց, իհարկե, ապարդյուն: Բալկանյան թերակղզու միջին և հյուսիսային մասերում Թուր-

քիայի լծին ենթակա էին մի խումբ ժողովուրդներ, սլավոնական ծագման պատկանող սերբեր, բուլղարներ, չեռնոգորցիներ, բոսնիացիներ և այլն, որոնք նույնպես չունեին Եվրոպայում բարոյական, կուլտուրական կապեր, բայց իրենց հույսը դնում էին հյուսիսում հետզհետե զարգացող և ուժեղացող Ռուսաստանի վրա, որի հետ նրանց կապում էին թե դավանակցական-կրոնական և թե ցեղակցական կապերը: Նույն դավանակցական կապերը կապում էին Ռուսաստանի հետ նաև հույներին, մոլդավներին և վալախներին: Այս վերջին երկու ժողովուրդները նույնպես ենթարկված էին Թուրքիային և նույնպես որոնում էին փրկության միջոցներ:

Իրենց դարավոր ստրկական տառապանքների մեջ Բալկանյան լեռնոտ և ամուր երկրներում ապրող սլավոնական և հույն ռայան մշակել էր ինքնապաշտպանության մի միջոց: Այդ այն էր, որ առանձին քաջ անհատներ կազմում էին փոքրիկ խմբեր, հեռանում էին լեռնային դժվարամատչելի վայրերից, յուրացնում էին ավազակային գործողությունների եղանակ, այն է՝ հարձակվել անսպասելի կերպով, հափշտակել, կողոպտել, սպանել: Այս գործողությունները որոշ միտումով էին տարվում: Նրանք ուղղված էին հարստահարող, կեղեքող տարրերի դեմ, գլխավորապես թուրք պաշտոնյաների, կալվածատերերի, ոստիկանական զինվորների, քրիստոնյա և ոչ քրիստոնյա վաշխառուների դեմ՝ կեղեքվողներին, գլխավորապես գյուղացիներին պաշտպանելու, թալլերի վրեժը հանելու և առհասարակ ժողովուրդը հուսադրելու և մխիթարելու համար: Այս յուրահատուկ գաղափարական ավազակները սլավոնական ժողովուրդների մեջ կոչվում էին հայդուկ, իսկ հույների մեջ՝ կլեֆտ: Հայդուկներն ու կլեֆտները ժողովրդի սիրած հերոսներն էին և երգվում էին նրա երգերի մեջ իբրև ազատարարներ, որոնք պահպանում էին հայրենիքը, արդարությունը, պատիվը: Այսպիսով ժողովուրդն իր սեփական ռազմական կարողությունն էր երգում, իր ինքնապաշտպանման բնազդը: Նա հավատում էր, որ քանի կա հայդուկը հրացանը ձեռքին, ինքը տեր ունի, պաշտպանված է և մի օր էլ նրա ձեռքով պիտի ազատվի բարբարոսների լծից:

Ճի՞շտ էր այս վերջին ակնկալությունը: Կարո՞ղ էր հայդուկային սիստեմը խլել մի ամբողջ ժողովրդի ազատությունը մի կազմակերպված մեծ ռազմական միջոցների տեր պետության ձեռքից: Գնահատելով հայդուկային շարժման ռեալ արժեքը, անկախ հերոսության այլևայլ արտահայտություններից, կարելի է միմիայն այն ընդունել իբրև ճշմարտություն, որ նա մի մասնավոր երևույթ է, տեղային մի հանգամանք, որ առանձին մանր և անջատ դեպքերում կարող է գոհացնել այս կամ այն շրջանի, այս կամ այն տարածության նեղ հայրենասիրական և ժողովրդասիրական պահանջները, բայց չի կարող երբեք կատարել մի պետության դեմ պատերազմող կողմի դեր, չի կարող համաժողովրդային ազատություն նվաճել զենքի ուժով: Նույնիսկ խոշոր ժողովրդական ապստամբությունն էլ, ամենահարմար դեպքերում անգամ, չի կարող միմիայն իր միջոցներով բերել հասցնել վերջնական նպատակի: Հարկավոր են ավելի ուժեղ զինական միջամտություններ, հարկավոր է հաղթական պատերազմ, որ թելադրե ու վերջնականապես օրենսդրե մի ժողովրդի ազատությունը անխախտ ու ապահով կերպով:

Այդ դրությունը շատ փաստերով ապացուցել է հենց Թուրքիայի պատմությունը: Եկատերինյան դարի առաջին ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, 1770-ին, ռուսական նավատորմը, Ալեքսեյ Օրլովի հրամանատարությամբ, երևաց Հունաստանի ափերի մոտ և ապստամբեցրեց Մորեայի լեռնային, գրեթե անկախ ազգաբնակությունը, բաղկացած համարյա թե միայն կլեֆտներից: Շարժումը մեծ տպավորություն գործեց և Բալկանյան թե-

րակղզում և արձագանք տվեց մինչև իսկ Սիրիայում և ուրիշ տեղերում: Սակայն Օրլովը, որ ուներ մի փոքր զորաբաժին, չկարողացավ ցամաքային մի հաջող արշավանք կատարել և շտապեց վերադառնալ իր նավերը՝ թուրքական զորքից ազատվելու համար: Այս մի սոսկալի աղետ դարձավ ամբողջ հույն ժողովրդի համար: Թուրքերն ամեն տեղ պատասխանեցին այս ըմբոստ ապստամբության մեծամեծ կոտորածներով: Անճար մնացած ժողովուրդը ստիպված էր ինքն իր գոյությունը պահպանելու մասին մտածել և աղաչանքներով ու պաղատանքներով իր կատաղած տերերից թողություն հայցել:

Հույներից ավելի բախտավոր էին սերբերը 1804-ին: Նրանց ապստամբությունը արագ հաղթանակի հանգեց: Ժողովուրդը խմբված էր իր գյուղական ավանդականների շուրջը, որոնք հարստացել էին խոզաբուծության միջոցով: Ապստամբությունն ազգային ինքնավարություն հաստատեց: Բայց նա կատարելապես ապահով չէր, թե Թուրքիան, այդ միջոցին, ճիշտ է, շատ թուլացած, ուժեր չի հավաքի հարմար միջոցին և չի ճմլի նրան իր ամբողջ ծանրությամբ: Ուստի դիմում էր ցեղակից Ռուսաստանին, որ միշտ իր բալկանյան քաղաքականության մեջ նկատի էր ունեցել օգտագործել այնտեղի քրիստոնյա ժողովուրդների ազատագրական գաղափարը: Եվ Ռուսաստանը ցույց էր տալիս, թե լրիվ համակրում է սերբիական ազատության: Այս հանգամանքը առիթ էր դառնում Նապոլեոնի համար համոզելու թուրքաց սուլթանին, թե սլավոնական ապստամբությունը ներշնչում և ղեկավարություն է ստանում Ռուսաստանից: Նրա լիազոր դեսպան գեներալ Սեբաստիանին գնում է Կ. Պոլիս և կարողանում է այնպես անել, որ սուլթանը պատերազմ է հայտարարում Ռուսաստանի դեմ: Ֆրանսիական հմայքը սուլթանական արքունիքում չափազանց մեծացել էր մանավանդ այն փառավոր հաղթությունից հետո, որ տարել էր Նապոլեոնը ռուսական բանակի նկատմամբ Աուստերլիցի ճակատամարտում, որ տեղի էր ունեցել 1805 թ. դեկտեմբերի 2-ին:

2. Թուրքահայերի վերաբերմունքը: Թե ինչ տեսակ վերաբերմունք էր ցույց տալիս և կարող էր ցույց տալ Թուրքաց Հայաստանում ապրող հայ ժողովուրդը դեպի առաջին անգամ իր հողի վրա բռնկվող ռուս-թուրքական պատերազմը, այդ ամենից լավ կարող է ցույց տալ այն դրությունը, որի մեջ նա գտնվում էր: Իսկ այդ դրությունը պարզաբանելու համար կարիք չկա, որ մենք հեռավոր և մանրակրկիտ խուզարկություններ կատարենք այդ ժողովրդի անցյալում: Միանգամայն բավական են այն փաստերը, որ տալիս են այս պատմական շրջանին մոտիկ ժամանակները, այսինքն՝ XVIII դարի երկրորդ կեսը և XIX դարի սկիզբը:

Դասավորելով և քննելով այդ պատմական հատվածի անհերքելի տվյալները, մենք գալիս ենք այն եզրակացության, որ Թուրքաց Հայաստանում իրականության ստեղծողները կենտրոնախույս ուժերն էին, բեկերն ու փաշաները: Ասիայի այս կողմերին վաղուց ի վեր հատուկ կերպարանքը՝ բռնությունները, հարստահարությունները, գայլի իրավունքը, սա էր մշտական իրականությունը: Այս դարավոր տխուր հանգամանքը խարսխված է ավատական տնտեսության հիմքերի վրա: Կալվածատիրությունը, հայ նախարարական դասակարգի ոչնչացումից հետո, գրեթե բացառապես քուրդ բեկերի ձեռքին էր՝ Վասպուրականում, Բաղեշում, Տարոնում, Մանազկերտում, Ալաշկերտում, Բասենում, Դիարբեքիրում, Խիզանի կողմերում: Հայ ժողովրդի ահագին, ճնշող մեծամասնությունը գյուղացիներից էր բաղկա-

ցած, ուրեմն և ճորտական դրության մեջ էր քուրդ ազնվական դասի (թոսմանների) ձեռքին։

Այս հանգամանքն արդեն ինքնըստինքյան բացատրում և հասկանալի է դարձնում այն բոլոր նկարագրությունները, որ տալիս են ժամանակակից աղբյուրները, հայ թե օտար։ Իբրև մեծագույն ժողովրդական աղետ, որ ավերում ու անմարդացնում էր ամբողջ երկիրը, ներկայացվում է այդ նկարագրությունների մեջ ավատական կարգի հետ սերտորեն կապված ազգամիջյան պատերազմը, որ դավաճան ու անողորմ է ամեն տեղ և բոլոր ժամանակներում, բայց մանավորապես անզուսպ ու կատաղի էր նախնական տոհմային, ցեղական դրության մեջ ապրող քրդության վայրենի գիշատիչ հակումների և կործանարար բնազդների միջավայրում։ Պատերազմներ ցեղերի, անգամ ազգականների միջև, իրարից խլելու, իրար ոչնչացնելու համար, պատերազմներ, որոնք շատ հաճախ բորբոքվում են մի չնչին առիթից, օրինակ՝ մի աղայի խոհարարի (աշճիի) սպանությունից. այսպես է քուրդ կալվածատիրության հաստատած առօրեությունը։ Վերցնենք քրդական ամենախոշոր քաղաքական կազմակերպությունը՝ Բաղեշի խանությունը, որ 18-րդ դարում տակավին պահպանում էր իր հին, գրեթե լիակատար անկախությունը և որ այսպիսով ներկայացնում էր քրդական ինքնուրույն պետականությունը։

Այս խանությունը շատ ընդարձակ էր, մի ժամանակ տարածվում էր մինչև Վան քաղաքի դռները, իր մեջ էր առնում Մուշի ամբողջ երկիրը, իսկ արևմուտքում սահմանակից էր Դիարբեքիրի փաշայությանը։ 18-րդ դարում այս ամբողջ ընդարձակ անկախությունը ծվատվում էր ներքին անդադրում ու մոլեգնոտ կռիվներից, որոնց մեծագույն մասը Բաղեշի մեծ իշխանի կամ խանի ընտանիքի մեջ էր պատրաստվում, ժառանգական իրավունքից բխող վեճերին լուծում տալու համար։ Ոչ մի կարգ չէր հաստատված իշխանությունը ժառանգելու համար և միակ կարգը, որ հասկանում և հարգում էր քուրդը՝ ուժն էր։ Այդ ուժն էլ վճռում էր, թե թեկնածուներից որին պիտի պատկանի իշխանությունը։ Թուրքաց կառավարությունն էլ, որին պատկանում էր՝ խանին իր պաշտոնի մեջ հաստատելու իրավունքը, շատ անգամ դիտմամբ, քուրդ ցեղերն իրար հետ կռվացնելու և այսպիսով ամենքին էլ թուլացնելու համար, իշխելու իրավունք էր տալիս մի քանի թեկնածուների, ստանալով ամենքից էլ առատ կաշառքներ։ Այսպիսով, անպակաս էին լինում կռիվները, որոնք երկարատև, համառ ու ավերիչ էին դառնում մանավանդ այն ժամանակ, երբ Թուրքաց կառավարությունն էլ մի կողմից էր խառնվում այդ աղամիջյան կռիվների մեջ։ Կաշառքները, պատերազմական ծախսերը առնվում էին ազգաբնակությունից, առավելապես քաղաքացիներից անհնարին չափերով հարկեր ու տուրքեր կորզելով, իսկ գյուղացի ճորտերը խմբերով քշվում էին պատերազմի դաշտերը, ուր նրանք կանգնեցվում էին քուրդ զորքերի առջևում, որպեսզի թշնամու հարվածները ամենից առաջ և ամենից շատ նրանք ընդունեն։ Եվ ահա այդ քրդական իրականության հետևանքները։ Բաղեշն ուներ 25 հազար տուն ազգաբնակություն, որ սպառվելով և ուրիշ տեղեր փախչելով, դառավ 5000 տուն։ Բաղեշի հայերը հռչակված կտավագործներ էին և ունեին 5 հազար ջուլհականոցներ, որոնցից հազիվ մի քանի հատն էին գործում 18-րդ դարի վերջում։

Բաղեշի տեղ բարձրանում էր Մուշը, որ առաջ ստորադրված էր նրան, բայց երկարատև ու համառ պատերազմների միջոցով անջատվել էր նրանից և իր սեփական անկախ դիրքն ստեղծել։ Բայց պատերազմները սպառել էին հայ ազգաբնակությունը, որ առաջ մեծամասնություն էր կազմում քաղա-

քում, իսկ 19-րդ դարի սկզբում նրանից մնացել էր մի փոքրիկ քանակություն։ Ազգաբնակչական սպառման միևնույն իրականությունն էր տիրում Մանազկերտի ու Բուլանխի շրջաններում։ Այդտեղ կային 360-ից ավելի գյուղեր, մեծագույն մասամբ հայաբնակ, բայց դարի վերջերում ազգաբնակությունն այնքան չնչվել էր, որ հազիվ 20 հատ գյուղ էին մնացել։ Իսկ Բասեն գավառի ազգաբնակությունը բնաջնջումից ազատվելու միակ միջոց այն էր դարձրել, որ իր գյուղերը շարժական դրության մեջ էր պահում, փոխելով նրանց մի տեղից մյուս տեղ և այսպիսով խույս տալով քրդական և թուրքական կեղեքումների մշտական վայրեր դառնալու դժբախտությունից։

Թուրքաց Հայաստանի անմարդացման այս պատկերը միանգամայն համաձայնվում է այն նկարագրության հետ, որ տալիս է ֆրանսիացի արևելագետ Ժոբերը, որ 1805-ին Նապոլեոնի հատուկ հանձնարարությամբ ուղարկվել էր Պարսկաստան՝ մեզ արդեն ծանոթ ֆրանս-պարսկական համաձայնության մասին բանակցություններ սկզբնավորելու համար։ Ճանապարհվելով Կ. Պոլսից, Ժոբերն ուղևորվում է Էրզրում, այնտեղից Բայազետի վրայով Պարսկաստան մտնելու համար։ Արդեն Էրզրումից դեպի արևելք ֆրանսիացի ճանապարհորդի աչքերին ներկայանում էր ավազակների ահից մահվան լռության մատնված մի երկիր։ Հազիվ թիկնապահների պաշտպանության տակ նա կարողացավ հասնել Բայազետի մոտերքը և գտավ դրությունն այդ կողմերում ավելի ևս հուսահատական։ Արծափ հայաբնակ գյուղում մնացել էին միայն կանայք, նրանք էլ հենց որ տեսան օտար մարդկանց մի խումբ գյուղը մտնելիս, վազեցին բարձրացան կտուրները, արձակելով սուր ճիչեր, որպեսզի այդտեղից ավելի լավ պաշտպանվեն։ Տների դռներն ամրացված էին պատնեշներով (բարիկադ)։ Այսքան սարսափի պատճառն այն էր, որ տեղացի քուրդ բեյերից մեկը, արհամարհելով նույնիսկ Բայազետի քուրդ փաշային, կազմել էր ավազակային հրոսախումբ և կողոպտում էր անխտիր ամենքին։ Ցերեկը նրա ձեռքից պրծում չկար ոչ մի տեղ, ուստի և դադարում էր ամեն մի երթևեկություն։ Միայն գիշերները, երբ ավազակապետն իր խոնջանքից հանգիստ էր որոնում կերուխումի և պարուհի կանանց շրջանում, կարավաններն ու առանձին ճանապարհորդները համարձակություն էին ստանում շարունակելու իրենց ուղին։ Եթե այսպես էր մի ավազակապետ բեյի կերտած իրականությունը մի ամբողջ երկրի համար, դրանից բոլորովին լավ չէր այն իրականությունը, որ երկրի օրինավոր տերն ու կառավարիչը Բայազետի փաշան էր պահպանում։ Ժոբերն այս փորձեց իր անձի վրա, երբ Բայազետի փաշան արգելեց նրան ճանապարհը շարունակել և կոպիտ բռնությամբ նրան բանտ նետեց, ուր նա մնաց մի քանի ամիս։

Ժոբերից քիչ հետո, 1807-ին, ուրեմն այն իսկ տարին, երբ տեղի ուներ ռուս-թուրքական պատերազմը, Պարսկաստան էր գնում գեներալ Գարդանի դեսպանությունը։ Եվ ահա Ալաշկերտի հովտում եվրոպացի դիպլոմատները ականատես են լինում Հայաստանի համար շատ սովորական մի տեսարանի։ Ցոնջալու գյուղը և նրա հարևան մի քանի այլ շեներ, ամենքն էլ հայաբնակ, կողոպտված ու քանդված էին քրդերի ձեռքով։ Ճանապարհորդներին ամեն տեղ դիմավորում էին ծխացող ավերակները։ Հայ կանայք՝ իրենց երեխաների ձեռքից բռնած, փախչում էին ազատվելու համար։ Նրանք պատմեցին, թե քրդերը կոտորեցին իրենց ամուսիններին ու որդիներին։ Դրությունը ոչնչով լավ չէր Հայաստանի մյուս կողմերում։ Ժոբերը ազատվելով Բայազետի բանտից, վերադարձավ Էրզրում և այստեղից նոր մի ճանապարհորդություն սկսեց դեպի Պարսկաստան, այս անգամ Վանի վրայով։ Ճանապարհին հայաբնակ վայրերում նա հանդիպում էր ամայության։ Երկիրը դատարկվածի էր նման։

Գյուղացիները թողնում էին իրենց դաշտերը և գնում էին պանդխտելու օտար երկրներում, որպեսզի իրենց համար ապրուստ հայթայթեն։

Ահա սպառման այս հաստատուն ճանապարհով դեպի կատարյալ բնաջնջումը դիմող այս ժողովուրդն էր, որ հանկարծ իրեն տեսնում էր ռուսական արշավանքի ճանապարհին։ 1805 թվականին Ղարաբաղի և Շեքիի խանությունների հետ միասին, Ռուսաստանին էր կցվում նաև պարսկական Շորագյալը։ Այդ հին հայկական Շիրակի այն մասն էր (արևելյանը) որ տարածված էր Արփաչայ (Ախուրյան) գետի ձախ ափին, և որի բերդն էր Գյումրին (հետո Ալեքսանդրապոլ, իսկ այժմ՝ Լենինական)։ Գետի մյուս ափին արևմտյան Շորագյալն էր, որ գտնվում էր Խաթուն օղլու քուրդ տոհմի տիրապետությունների տակ։ Խաթուն օղլուների բնակության տեղն էր Մաղասբերդ փոքրիկ ամրոցը, որ գտնվում էր Անիի ավերակներից մոտավորապես հինգ վերստ դեպի հարավ, Արփաչայ գետի վրա, երեք կողմից շրջապատված Արփաչայի և նրա մեջ թափվող գետակի խոր ձորերով, իսկ մի կողմից՝ բարձր աշտարակավոր պարիսպներով։ Խաթուն օղլուների Շորագյալում կային շատ հայաբնակ գյուղեր, և հայերն առհասարակ կարևոր դիրք էին գրավում քրդական իշխանությունների մոտ։ Կարևոր կենտրոն էր նույն այդ Շիրակում նաև հռչակավոր Հոռոմոսի վանքը, կառուցված Արփաչայի ափին և ավելի հայտնի Ղոշավանք անունով։

Ռուսական տիրապետությունն, իհարկե, չէր դադարեցնում հաղորդակցությունը գետի երկու ափերի միջև։ Քրդական Շորագյալի հայության մեջ մի հլու և կամակատար ռուսասիրություն հաստատելը բոլորովին դժվար չէր Արփաչայի գիծը պաշտպանող ռուս զինվորական իշխանության համար, քանի որ Թուրքիայի հայերի զգացմունքն ու ըմբռնողությունը տարբեր չէին Պարսկաստանի հայերի զգացմունքներից ու ըմբռնողություններից։ Ամենուրեք հայ ժողովուրդն ինքնաբերաբար, իր սեփական բնազդի թելադրությամբ միակերպ էր լուծում իր ֆիզիկական գոյության պահպանման ահեղ առեղծվածը, այն է՝ մտնել ռուսաց տիրապետության տակ, որ գոնե կյանքի և գույքի ապահովության երաշխավորություն էր։ Ցանկալի էր համարվում, որ ռուսները գնան գրավեն հայաբնակ վայրերը, բայց եթե այս հնարավոր չէր, այն ժամանակ հայերն իրենք պատրաստ էին գաղթել և բնակվել այնպիսի տեղերում, որոնք հաստատապես ռուսներին էին պատկանում, և ռուս զինվորական իշխանությունը հանձինս հայերի ուներ իրեն միանգամայն հավատարիմ տարր։ Լրտեսական պաշտոնում մենք տեսնում ենք մասնավորապես հայ հոգևորականներին։ Այս կրոնավորական լրտեսության գլխավոր կենտրոնը Ղոշավանքն էր, որի վանահայր վարդապետն իր հավաքած տեղեկություններով իրազեկ էր պահում ռուսներին այն ամենի մասին, ինչ կատարվում էր Կարսի մեջ և այլուր։ Այս կողմերի նահանգապետ էր Խաթուն օղլու քրդերից մեկի եղբայրը՝ Մաղասբերդի տիրող Կարաբեկի Մամեդ փաշան։

Այս վերջինը, խրախուսվելով այն հանգամանքից, որ օսմանյան պետության բոլոր ծայր երկրները ձգտում են ապստամբության միջոցով անկախություն ձեռք բերելու, ինքն էլ մտածում էր կտրել Կարսի փաշայությունը Թուրքիայից և նրա ինքնագլուխ տերը դառնալ։ Այս բանին նա հասնել էր կարծում, տալով Կարսը ռուսներին, սակայն այն պայմանով, որ ինքն ու իր տոհմը մնան այդ երկրի տերեր։ Այս ծրագիրն, ինչպես երևում է, առանց հայերի մասնակցության չէր կազմվում, քանի որ թե Մաղասբերդում և թե Կարսում հայ տիրող տարրերը կարևոր դիրք ունեին Խաթուն օղլուների մոտ։ Գոնե այսքանը միանգամայն ճիշտ է, որ բովանդակությամբ բանակցությունները Կարսի փաշայի և ռուսական Շորագյալի զորքերի հրամանատար գե-

ներալ Նեսվետաևի մեջ վարվում էին մի հայ քահանայի, հետո մի հայ եպիսկոպոսի միջոցով։ Կարսի փաշայի այս տրամադրությունն, իհարկե, ամեն կերպ խրախուսվում էր ռուսների կողմից և նրան տրվում էին ամենադրական խոստումներ, ամրապնդված ծանրագին ընծաներով, Ալեքսանդր կայսեր անունից։

Եթե այսպիսով հայ ժողովրդի մասնակցությունն այս շարժման մեջ անժխտելի է դառնում, մենք, ուրեմն, ունենք մեր առջև մի վերին աստիճանի նշանավոր երևույթ՝ Թուրքիայի հայ ռայայի արթնացումը։ Դեռ այս նոր երևույթի վաղ արշալույսն էր, երբ նա ամբողջովին ժողովրդական գործ էր՝ բխած զանգվածային ինքնապաշտպանական բնազդից, առանց ինտելիգենտական հերյուրումների հայրենասիրական հողի վրա, և այս սկզբնական շրջանում խնդիրը ներկայանում է չափազանց պարզ կերպարանքով։ Այդ պարզապես հպատակության փոփոխության մի գործ է։ Հայ աշխատավոր ժողովուրդն ուզում է, որ իր հարատև ու անդադրում աշխատանքն ապահով ու հանգիստ պայմանների մեջ արդյունավորվի։ Այսպիսի մի հնարավորության երաշխիքը ռուսական հպատակությունն էր միայն, առ ի չգոյե մի ուրիշի։ Եվ այդ փրկարար հպատակությունը ձեռք բերելու համար նա երկու ճանապարհ ուներ. կամ բերել ռուսներին իր երկիրը՝ տիրելու համար, կամ գնալ ռուսների հողն՝ այնտեղ ապրելու և նրանց հպատակությունը վայելելու համար։ Առաջին ճանապարհը դյուրատար չէր, հայ ժողովրդի կամքից ու ցանկությունից չէր կախված և օգտագործել կարելի էր միայն պատերազմների ժամանակ, և բացի դրանից, կանգնելով այդ ճանապարհի վրա, թուրքահայը դառնում էր պետական դավաճան և ուրեմն կարող էր ենթարկվել թուրքերի կողմից ավելի դաժան հալածանքների։ Անհամեմատ հեշտ էր երկրորդ ճանապարհը, գաղթականության ճանապարհը, որ և բռնելու պատրաստ էր թուրքահայը ամեն հարմար առիթի։ Քանդել իր տունն ու տնտեսությունը, ամեն տառապանքներով գնալ հաստատվել ավելի հանգիստ վայրերում՝ այս հեշտ էր անել թուրքահայերի համար, այնքան նա ամենայն, իհարկե, իրավամբ բարձր էր դասում տնտեսական ապահովությունից էլ, հայրենի երկրի սիրուց էլ ֆիզիկական գոյություն պաշտպանելու անհրաժեշտությունը։ Իշխան Ցիցիանովի արշավանքը դեպի Երևան մի ամբողջ շարժում էր առաջացնում թուրքահայության մեջ։ Բայազետի հայերը հայտնում էին, որ եթե ճշտվի, թե ռուսները վերցրել են Երևանը, այն ժամանակ թե Բայազետից և թե նրա շրջակայքից 10 հազար հայեր իրենց ընտանիքներով պատրաստ են գաղթելու Երևան թուրքական և քրդական կեղեքումներից ազատվելու համար։ Իսկ Էրզրումի հայերը նույնիսկ չէին էլ սպասել, որ ճշտվի Երևանի առումը, այլ 232 ընտանիք ճանապարհ էին ընկել և միայն ճանապարհին իմանալով, որ Երևանը դեռևս առնված չէ, կանգ էին առել Կարսում և այդտեղ էլ բնակություն հաստատել։

3. Կարս և Արփաչայ: 1806 թ. վերջերում հայտարարված ռուս-թուրքական պատերազմի գլխավոր բեմը Եվրոպայում Թուրքիան էր։ Ասիական բեմն ուներ երկրորդական նշանակություն, և այստեղ ռուսները կարող էին ռազմադաշտ հանել շատ սահմանափակ թվով զորքեր։ Դրությունը դժվարացնում էր մանավանդ այն հանգամանքը, որ Նապոլեոնի ջանքերով Թուրքիան և Պարսկաստանը միացած ճակատ էին ուղղել Ռուսաստանի դեմ։ Կոմս Գուդովիչը վճռում էր պաշտպանողական դիրք բռնել Պարսկաստանի նկատմամբ և հարձակողական գործողություններ տանել Թուրքիայի դեմ։ Նրա համար առաջնակարգ կարևորություն ունեին թուրքական երկու բերդեր՝ Կարսը և Ախալցխան։ Կարսի գրավումը, ռուսների միամիտ համոզումով, ոչինչ ջանքեր

չէր պահանջի, քանի որ Մամեդ փաշան, կարծում էին, հաստատ կմնա իր խոստման և կհանձնե այդ ամուր բերդն առանց մի կաթիլ արյուն թափելու։ Այս պատճառով ինքը՝ Գուդովիչը, բանակի գլխավոր մասով գնում էր Ախալքալաքի վրա, որ Ախալցխայի նախադուռն էր համարվում, իսկ Շորագյալի զորամասը գեներալ Նեսվետաևը պիտի տաներ Կարս։ Բայց Մամեդ փաշայի կողմից Հովհաննես եպիսկոպոս Կարբեցին եկավ հայտնելու Նեսվետաևին, թե փաշան չի կարող կատարել իր խոստումը, որովհետև նրա դավաճանական մտադրությունը հայտնի է դարձել Կարսի մահմեդական ազգաբնակչության, որի պահանջով այժմ ռուսների դեմ արշավանք է սկսում Էրզրումի սերասքեր Դեռս Յուսուֆ փաշան։ Նեսվետաևն, այնուամենայնիվ, արշավանք սկսեց Կարսի դեմ։ 1807 թ. ապրիլի 16-ին ռուսական զորքն առաջին անգամ անցնում էր Արփաչայ գետը և յոթ օր հետո արդեն գտնվում էր Կարսի պարիսպների տակ։ Այս հռչակավոր բերդն այն ժամանակ էլ ուներ առաջնակարգ ամրության համբավ։ Նեսվետաևն առանց կանգ առնելու հարձակում գործեց և արագ ու քաջարի գրոհով վերցրեց Կարսի արվարձան Բայրամ փաշա թաղը։ Բայց հենց այդտեղ էլ հրաման ստացավ Գուդովիչից չմտնել այնպիսի ռազմական գործողությունների մեջ, որոնք կարող են պահանջել մարդկային մեծ զոհեր։ Ուստի և թողնում է բերդը ու ետ քաշվում դեպի ռուսաց սահմանները։ Այս նահանջի ժամանակ առաջին անգամ երևան է գալիս հետագա ժամանակների ռուս-թուրքական պատերազմներին այնքան հատուկ երևույթը՝ հայերն իբրև պատերազմի զոհեր։ Մի գյուղում Նեսվետաևը հանդիպում է 500 տուն հայերի, որոնք զանազան տեղերից և գլխավորապես Արփաչայի ռուսական ափից գերի էին քշվում դեպի Կարսի կողմերը։ Նեսվետաևն ազատում է այդ բազմությունը և կազակների պաշտպանության տակ ուղարկում է իրենց տեղերը։ Բայց այս, իհարկե, մշտական մի ապահովություն չէր։ Հայերն արդեն վտանգել էին իրենց դրությունը նրանով, որ իրենց համակրություններով ռուսների կողմն էին և աջակցություն էին ցույց տալիս նրանց։ Այս տեսակ վերաբերմունքը հենց այս առաջին պատերազմի ժամանակ թուրքերի մեջ առաջ էր բերում հակադրության մի սոսկալի միջոց՝ հայերին կոտորելու միտքը։ Եվ այս բանը մենք պարզ արտահայտված ենք տեսնում թուրքական մի պաշտոնական գրության մեջ, որ լույս ընկավ ռուսաց զորքի նահանջի հետևանքով։

Բանն այն էր, որ Նեսվետաևի նահանջը հայտարարվեց թուրքական խոշոր հաղթություն, որ մահմեդական ազգաբնակչության մեջ առաջ էր բերում մեծ ոգևորություն։ Այս հաղթություն համարվածը ամենից առաջ բարձրացնում էր Կարսի փաշայի, դավաճան խաթուն օղլուի հեղինակությունը։ Եթե Նեսվետաևը հաղթված էր, պետք էր, ուրեմն, մեկն էլ լիներ, որ հաղթած լիներ նրան։ Եվ այդ մեկ ուրիշը ոչ ոք չէր դառնում, բայց միայն Մամեդ փաշան, որ միայն պատահմունքի շնորհիվ չէր վերջնականապես վաճառվել ռուսներին։ Սուլթանից նա պարգևներ է ստանում իր այդ «մեծ հաղթության» համար։ Սակայն եթե Կարսի հաղթանակը թեական էր, աներկբա էր դառնում այն պարտությունը, որ միևնույն ապրիլ ամսին կրում էր գլխավոր հրամանատար Գուդովիչը Ախալքալաք բերդի վրա հարձակվելու ժամանակ։ Սերասքեր Քյոռ Յուսուֆ փաշան անասելի հոխորտանքներով դուրս է գալիս Էրզրումից անատոլիական ամբողջ թուրք բանակի գլուխ անցած և ուղարկում է ռուսներին մեծամեծ ինքնագովություններով լցված մի թուղթ, լի արհամարհանքով և ծաղրով թշնամու վերաբերմամբ։ Լոկ դրդված մարդասիրության զգացմունքից, փաշան պահանջում էր, որ ռուսական ամբողջ բանակն

անձնատուր լինի։ Հակառակ դեպքում նա սպառնում էր ոչնչացնել ոչ միայն ռուսներին, այլև նրանց շուրջը հավաքվածներին, դրանց մեջ և հայերին։ Սակայն տխուր եղավ մեծախոս փաշայի արշավանքի վերջը։ Գուդովիչն Ախալքալաքի պարտությունից հետո իր զորքերը տարավ Գյումրի՝ այնտեղ ամրացած Նեսվետաևի հետ միանալու համար։ Այստեղ Արփաչայի վրա, հունիսի 19-ին, նա ջարդում և ցրում է Յուսուֆ փաշայի բանակը, որից միայն մի փոքրիկ հատված կարողանում է փախչել Կարս, տանելով իր հետ և իր պարտախոս հրամանատարին։

Արփաչայի հաղթությունը վերականգնում է ռուսական զենքի ընկած հեղինակությունը։ Այնուհետև էր, որ Գուդովիչը վճռում էր հարձակողական գործողություններ սկսել և Պարսկաստանի դեմ, արշավելով Երևանի վրա։ Յուսուֆ փաշան այժմ այնքան էր վախենում ռուսներից, որ երբ Գուդովիչը մի փոքրիկ զորաբաժին ուղարկեց Մաղասբերդ՝ այնտեղ ամբարված պաշարեղենը ձեռք գցելու համար, նա լուր առնելով այդ մասին և կարծելով, թե նորից արշավանք է սկսվում Կարսի դեմ, դուրս հանեց այնտեղից իր զորքը և հեռացավ դեպի արևմուտք։ Միայն այն ժամանակ, երբ ռուսները վերադարձան Մաղասբերդից, որոնք գաղթում էին, այլևս անկարող լինելով մնալ թուրքական տիրապետության տակ, փաշան նորից գնաց Կարս, բայց այս անգամ նրան ամաչեցրին կանայք, որոնք հավաքվեցին և պահանջեցին նրանից զորք հավաքել և գնալ թշնամու դեմ։ Վախկոտ սերասքերը, ինչպես երևում է, բախտավոր աստղի տակ էր ծնվել։ Ռուս-թուրքական պատերազմն ընդհատվում էր, որովհետև այդ իսկ ամառը Նապոլեոն և Ալեքսանդր կայսրները հաշտվում էին Տիլզիտում, որի հետևանքով զինադադար էր կնքվում թուրքերի և ռուսների մեջ։ Այս զինադադարը երկար տևեց։ Պատերազմը Թուրքիայի և Ռուսաստանի միջև վերանորոգվում է մեկ էլ 1809-ին և տևում է մինչև 1812 թվականը, բայց այս անգամ Ասիական Թուրքիայի սահմաններում և հատկապես Հայաստանի հողի վրա նշանավոր շարժումներ տեղի չունեցան։

Առաջին ռուս-թուրքական պատերազմը թեև կարճատև էր և մեծ չափեր չընդունեց, բայց լիապես ցուցադրեց այն ազդեցությունը, որ այնուհետև պիտի ունենային այդ պատերազմները, ավելի խորապես և ընդարձակորեն հայ ժողովրդի ճակատագրի վրա։ Բազմատանջ, ստրկության և բնաջնջման մատնված աշխատավոր ժողովուրդը բնազդորեն, տարերային մղումով փրկություն էր որոնում ռուսական արշավանքի մեջ, դիմավորում էր ռուս զինվորին իբրև իր ազատարարի։ Բայց այս վերաբերմունքի համար նա պատժվում էր սաստկապես։ Նրա դրությունն ավելի ևս վատթարանում էր, երբ ռուսական զորքերը թողնում էին իրենց գրաված տեղերը և հայերը, ռուսներին աղ ու հացով, խաչով-խաչվառով ընդունելուց հետո, նորից մնում էին երես առ երես իրենց տերերի, օսմանցիների հետ։ Պատերազմները բերում էին թուրքահայերին կոտորած, գաղթականություն։ Բնաջնջման գործն արագանում էր, և ռուսական հպատակություն ընդունելը ժողովրդական գիտակցության մեջ դառնում էր ավելի և ավելի հրամայողական անհրաժեշտություն, իբրև միակ միջոց ֆիզիկական գոյություն պահպանելու։

ԵՐԿՐՈՐԴ ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(1826—1827)

1. Երմոլով և Մադաթով: *1816 թվականին Ալեքսանդր կայսրը Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար և քաղաքացիական մասի կառավարչապետ է նշանակում գեներալ Ալեքսեյ Երմոլովին։ Այս մարդու մասին, որ 10 տարուց ավելի մնաց իր այդ պաշտոնում, ռուսաց բյուրոկրատիկ շրջաններում կազմված է մի այնպիսի հռչակ, որին չէ արժանացել և ոչ մեկը՝ Կովկասը ցարական ռեժիմի ժամանակ կառավարած գլխավոր հրամանատարներից և փոխարքաներից։ Արտակարգ մի երևույթ, որ բարձրացված ու ներբողված է բազմաթիվ գրավոր հիշատակարանների մեջ, որոնցից կարելի է մի ամբողջ գրականություն կազմել։ Երմոլովն ունեցել է շատ երկրպագուներ և շատ էլ հակառակորդներ, բայց այս երկու կողմերն էլ միանում են այնտեղ, ուր պետք է գովել նրա ռազմական և վարչական առաքինությունները։ Եվ այսպես են ոչ միայն ժամանակակիցներն իրենց նամակագրությունների, հիշողությունների և տատանումների մեջ։ Երմոլովն իբրև մի տեսակ պաշտամունք մտել է նաև պաշտոնական այն պատմության մեջ, որ մանրամասնորեն նկարագրում է Կովկասի նվաճումը ռուսների ձեռքով, և որի հեղինակները գրեթե միշտ եղել են զինվորականներ, գեներալներ։ Այստեղ միայն Երմոլովի կենսագրությունը չենք գտնում, որ քայլ առ քայլ պատմում է, թե ուր և ինչպես էր նա ծառայում, որ բարձրաստիճան բյուրոկրատի հովանավորության տակ էր գտնվում և ինքն ինչպես էր վերաբերվում իրեն ստորադրված ծառայողներին, այլև նրա հասակի, մազերի, աչքերի նկարագրությունը և այլ այնպիսի մանրամասնություններ, որոնք գուցե անտեղի չլինեին աշխարհահռչակ գործիչների բնութագրի մեջ։*

Կարելի է այս բոլորը կարդալով կարծել, թե ոստիկանական-ճորտատիրական Ռուսաստանը, ճիշտ որ, արտադրել էր խոշոր ընդունակություններով օժտված մի պետական գործիչ, որ հզոր ու վերանորոգիչ ձեռքով նոր բախտ էր կերտում ասիական բռնություններից դարերով քայքայված Անդրկովկասում։ Ներբողները, իրավ, վեր են հանում Երմոլովի խելքը, անհողդողդ կամքը, հեռատեսությունը։ Նրան երգել են ռուս բանաստեղծները, սկսած ամենամեծից՝ Պուշկինից։

Եվ սակայն, երբ մենք այդ ընդարձակ ներբողական գրականությունից դիմում ենք իրական կյանքին, որոնում ենք նրա մեջ շինարար խելքի, պետական լայն ըմբռնողությունների և իմաստուն կառավարության փաստեր, մեր առաջ կանգնում է մի Երմոլով, որ ուրիշ ոչինչ չէ, բայց միայն մի տիպիկ ռուս չինովնիկ, գուցե սովորական տափակություններից քիչ բարձր, բայց և այնպես մի չինովնիկ, որ գրագրություններ է վարել, պատերազմներ է մղել, իսկ ժողովուրդը մնացել է նույնը, ինչ էր ասիական բռնակալության լծի տակ, դարձյալ աղքատ, դարձյալ հետամնաց ու տգետ։

Հասկանալու համար, թե ինչ իսկական հիմք ունեն այդ անվերապահ փառաբանությունները, մենք պիտի իմանանք, որ Երմոլովը վերցվում էր ոչ թե կովկասյան ժողովուրդների կենսական շահերի ու պահանջների տեսակետից, այլ ցարական նվաճողական տեսակետից։ Երմոլովը գալիս էր Կովկաս իբրև իսկական ռուս մարդ, ինչպես ասում են նրանով հիացած պատմագիր գեներալները, իբրև Ռուսաստանի ջերմ սիրով սիրող հայրենասեր։ Այս ըմբռնումներն արդեն հասկանալի են դարձնում ամեն ինչ և ամենից առաջ այն, որ Երմոլովը գալիս էր Կովկաս՝ նրան ռուսացնելու համար։ Ահա ինչ կողմով էր նա թանկ «իսկական ռուս մարդկանց» և ճորտային Ռուսաստանի վրա վառ սիրով սիրահարված ճորտատեր ազնվականների համար։

Երմոլովն ինքն էլ մեկն էր այն ազնվականներից, թեև բավական փոքրերից. նրա հայրն ուներ ընդամենը հարյուր հոգի ճորտեր։ Այս սակայն, չխանգարեց, որ նա մտնի բարձր, կառավարիչ ազնվականության շարքերը և փայլի այդտեղ իբրև մի ընդունակ զինվորական և վայելե Ալեքսանդրի թագավորության ամենախավար երևույթը կազմող կոմս Արակչեևի հովանավորությունը։ Ներբողականները չեն ուրանում Երմոլովի բացասական հատկությունները։ Ընդունում են, որ նա անչափ ու անսահման փառասիրություն ուներ իր մեջ, դոռոզ ու ինքնահավան մի իշխանավոր էր, լցված բարձրամիտ արհամարհանքով դեպի ուրիշները, մինչև իսկ դեպի իրենից բարձր գտնվող պաշտոնական անձնավորությունները։ Հավատացած էր, թե ինքն է միայն, որ ուղիղ և ճիշտ ըմբռնողության մենաշնորհն էր ստացել բնությունից և համառորեն աշխատում էր անցկացնել իր հասկացածը, անգամ, եթե ուներ իր ձեռքին բոլորովին հակառակ կարգադրություններ, տրված կենտրոնական կառավարությունից։ Այս բոլոր հատկությունները բավական էին, որ նա դառնա մի անվանի արևելյան սատրապ Կովկասի իշխանության մեջ։ Եվ իրավ, Թիֆլիսում նա ապրում էր արևելյան խանի նման, պահում էր մի ամբողջ հարեմ, որի մեջ գտնվում էին կանայք կովկասյան բոլոր ազգություններից, մինչև իսկ Դաղստանի լեռնաբնակներից, որոնց հետ նա ամուսնանում էր մահմեդական օրենքով «քեբինի» կարգով, որ հեշտացնում էր կին արձակելն ու նորը վերցնելը։

Երեք գլխավոր գծեր են արտահայտված Երմոլովի գործունեության մեջ։ Առաջ ու առաջ նա ռուսական զենքը մտցնում է Դաղստան և այսպիսով սկիզբ է դնում այն համառ ու արյունահեղ պատերազմին, որ ստացավ «կովկասյան» անունը և մոտ կես դար շարունակվեց՝ Կովկասյան լեռները նվաճելու համար։ Երկրորդ՝ նա ոչնչացրեց Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի խանությունները, մտցնելով նրանց մեջ ռուսական կառավարություն։ Եվ երրորդ՝ թե այդ խանությունների հարցի հետևանքով և թե այլ նկատառումներով գրգռեց և փութացրեց ռուս-պարսկական երկրորդ պատերազմը։ Այս երեք դեպքերում էլ նրա եռանդոտ աշխատակից հանդիսացավ մի մարդ, որ նրա հետ միաժամանակ, 1817-ին, հանդես էր գալիս կովկասյան իրականության մեջ և ներկայացնում էր մի շատ հետաքրքրական երևույթ։

Դա իշխան Վալերիան Մադաթովն էր, ղարաբաղցի մի հայ, Վարանդայի Ավետարանոց (Չանախչի) գյուղից։ Նրա մանկությունն իրապես անհայտ է, զարդարված ավանդական պատմություններով։ Ասում են, թե նա Վարանդայի մելիքի ջորեպանի որդին էր, վերին աստիճանի աղքատ, որ հովվություն էր անում կիսամերկ և ոտաբոբիկ, բայց շարունակ մտածում էր զինվորական ծառայության մեջ մտնելու մասին, թեև այն ժամանակ Անդրկովկասում դեռ չկային ռուսական զորքեր, հետևաբար և հազիվ թե խղճուկ հովիվն այդպիսի մի ցանկություն կարողանար սնուցանել իր մտքի մեջ։ Ասում են նույնպես, թե նա հովիվ չէր, այլ երեխայությունից գնացել էր Թիֆլիս, ուր սովորել էր

դդակ կարելու արհեստը։ Այդտեղից իբր թե նա ընկնում է Աստրախան, ուր թափառում էր անգործ, մինչև որ այնտեղ գնացին Վարանդայի Մելիք Ջումշուդը և Գյուլիստանի Մելիք Ֆրեյդունը։ Սակայն մեզ թվում է, որ Մադաթովի աղքատության, հովվության և թափառաշրջության զրույցները իրական հիմք չունեն։ Մելիք Ջումշուդի, Մելիք Ֆրեյդունի հետ Աստրախան և այդտեղից Պետերբուրգ գնաց և Պետրոս յուզբաշի Մադաթյանը, որ բոլորովին աննշան մեկը չէր, այլ գրեթե մելիքների հետ հավասար և նրանց հետ միասին էր ստորագրում այն թղթերը, որոնք տրվում էին Պավել կայսրին։ Այդ Պետրոս յուզբաշու մտերիմ ազգականն էր, երևի պատանի Մադաթովը, որ և նրա հետ գնաց Պետերբուրգ և այդտեղ, իբրև Ղարաբաղի ազնվականներից մեկը, մտավ գուցե հենց նույն իսկ երկու մելիքների միջնորդությամբ, կայսերական գվարդիայի հուսար անվանված հեծելազորքի մեջ։ Այդտեղ Ղարաբաղի ուշիմ պատանին ցույց է տալիս ընդունակություններ և սկսում է արագ առաջանալ ծառայության մեջ, վաստակելով քաջարի հեծյալ սպայի համբավ, այնպես որ 15—16 տարուց հետո, երբ նա վերադառնում է Կովկաս, դեռ երիտասարդ հասակում գեներալական աստիճան ու զինվորական բարձր շքանշաններն էին նրան զարդարում։ Եվ ոչ միայն այդ. գյուղական խավերից դուրս եկած այն մարդն այնքան ճարպիկն էր եղել, որ սարքել էր իր համար նաև իշխանի (կնյազի) կոչում, որպիսին չուներ նույնիսկ մելիքներից ոչ մեկը։ Այս բոլոր հանգամանքները նրա համար պիտի ստեղծեին մի հմայք տեղական ազգաբնակության մեջ, մի հմայք, որ ավելի ուժեղ պիտի լիներ մանավանդ հայերի մեջ, քանի որ Մադաթովն առաջին հայ գեներալն էր, որ երևան էր գալիս իր երկրում հռչակված իր քաջություններով։

Այս հմայքը նա գործով էլ էր արդարացնում։ Երմոլովը նրան նշանակեց երեք խանությունների (Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի) զինվորական շրջանային կառավարիչ, և այս պաշտոնում նա իսկապես մեծ ջանքեր արավ, այն էլ շատ հաջող կերպով, երկիրը խաղաղեցնելու համար։ Երեք խանությունների համար էլ ժողովրդական սոսկալի աղետ էր ավազակությունը, և այս դժբախտությունը Մադաթովն իր ձեռք առած խիստ միջոցներով կարողացավ միանգամայն արմատախիլ անել, հաստատելով կատարյալ անդորրություն, այնպես որ առակ էր դառնում՝ Մադաթովի ժամանակ Ղարաբաղի կինն անգամ կարող է մենակ ման գալ, կրելով իր վրա ոսկով լիքը թաբախ։ Հասարակ ժողովուրդը և մանավանդ գյուղացիությունը, չէր կարող չգնահատել այս խոշոր բարերարությունը, ուստի և հասկանալի է, որ Մադաթովը դառնում է ժողովրդական հերոս, մանավանդ երբ Երմոլովը արշավանք սկսելով Դաղստանում, արևելյան ճակատի հրամանատարությունը հանձնեց Մադաթովին և սա շատ քաջություններ ցույց տվեց լեռնային դժվար պատերազմների մեջ։

Այսպես անաղարտ հիացական էր ժողովրդի վերաբերմունքը դեպի այդ նոր մարդը, որին առատորեն հովանավորում էր բախտը, խոստանալով փայլուն ապագա։ Բայց այս ժողովրդական հերոսի մի դեմքն էր, իսկ նա ուներ և երկրորդ դեմք, շատ արդեն տգեղ։ Այս երկրորդ դեմքով Մադաթովը ներկայանում էր իբրև մի խորամանկ, իր հաշիվը լավ հասկացող չինովնիկ, վերին աստիճանի ընչաքաղց և շահամոլ։ Աստիճանները, շքանշանները, դիրքն ու համբավը նրան չէին բավարարում, քանի որ նրան դեռ պակասում էր մի բան՝ իսկական ռուս ազնվական դառնալու համար։ Նրա ստացած «իշխան» տիտղոսն իրական բովանդակություն չուներ, քանի որ նա զուրկ էր հարստու-

թյունից՝ հողերից, գյուղերից, գյուղացիներից։ Ահա կալվածատիրական երջանկության այդ բարձր տենչանքին էլ նա ձգտում էր հասնել, օգտագործելով իր վարչական դիրքը, որ նրան ուժեղ ճնշողական միջոցներ էր տալիս խանությունների մեջ։

Երմոլովին հարկավոր էր ոչնչացնել երեք խանությունները, դարձնելով նրանց ռուսական գավառներ։ Դրա համար պետք էր առաջ ու առաջ ազատվել խաներից, իսկ այսպիսի մի գործ հաջողեցնել կարելի էր, ստեղծելով նրանց համար այնպիսի դրություն, որ հարկադրեր նրանց թողնել իրենց երկրները և փախչել Պարսկաստան։ Շաքիի Իսմայիլ խանն ինքն ազատեց ռուս չինովնիկներին ավելորդ հոգսերից, մեռնելով 1819 թվին, ինչպես ասում էին չար լեզուները, Մադաթովի ձեռքով կամ ներշնչմամբ խմեցրած թույնից։ Նոր խան այլևս չնշանակվեց, Շաքին ռուսական կառավարչության տակ մտավ։ Գրեթե ուղիղ մի տարուց հետո Շամախու Մուսթաֆա խանը տեսնում էր իրեն այնպիսի դրության մեջ, որ միակ փրկության միջոց ներկայանում էր Պարսկաստան փախչելը։ Նրա դեմ մեղադրանք էր հարուցված, թե ուզում է ապստամբվել ռուսաց կառավարության դեմ, որի հետևանքով ռուսական մի զորաժողով է մտցվում Շիրվան՝ խանին զսպելու համար։ Սակայն զառամյալ ծերունի Մուսթաֆա խանը ոչինչ կարողություն չուներ իրեն նետած մարտահրավերն ընդունելու և, հավաքելով իր դույքն ու ընտանիքը, փախավ Պարսկաստան։ Ճանապարհին, Քուռ գետն անցնելիս, վրա հասան ռուս կոզակները և խանը, նրանց ձեռքին թողնելով իր հարստության մի խոշոր մասը, հազիվ կարողացավ ճողոպրել գետի մյուս ափն անցնելով։ Բայց կոզակների թալանած հարստությանը տիրացավ իշխան Մադաթովը։

Այնուհետև մնաց Ղարաբաղի Մեհտի Ղուլի խանը։ Սրան այնքան շուտ չփախցրեց Մադաթովը, որովհետև դեռ կարևոր գործ ուներ նրա հետ։ Պահելով թուլամորթ խանին մշտական երկյուղի մեջ, շահագործելով այն հանգամանքը, որ նա միշտ հարաբերությունների մեջ է Աբաս Միրզայի, ինչպես նաև վաղուց Պարսկաստան փախած և ռուսների դեմ անհաշտ թշնամությամբ լցված իր եղբոր հետ, Մադաթովն այսպիսով ճանապարհ հարթեց խանի միջոցով գյուղեր ստանալու համար, խլելով դրանք գլխավորապես Մելիք-Շահնազարյաններից։ Սակայն երկյուղի ճանապարհը բավական չէր, և Մադաթովը խանի հետ համաձայնության էր գալիս, որ ինքն էլ փոխադարձաբար նրան կաջակցե Ղարաբաղի հողային հարստությունները նրա պաշտոնյաների, ազգականների և ծառաների միջև բաժանելու համար։ Եվ իրավ, խանական պարգևագրերը օրինական ուժ կարող էին ունենալ միայն այն դեպքում, երբ նրանք կրում էին և ռուս կառավարության ներկայացուցչի, այսինքն՝ հենց իր, Մադաթովի ստորագրությունը։ Եվ ահա խանը Մադաթովին կալվածատեր էր շինում, իսկ վերջինս թույլ էր տալիս և խրախուսում էր, որ ավելի ևս բազմանա թուրքական կալվածատեր դասակարգը ի հաշիվ գլխավորապես հայ մելիքների տոհմերի, որոնք հողազուրկ էին դառնում, մատնվում մուրացկանի վիճակին, մինչդեռ նրանց տեղ երևան էին գալիս նոր կեղեքողներ, որոնք բարձրանում էին խանի ախոռապանը, դրապիրը կամ ծաղրածուն լինելու վիճակից և զգենում էին ընտրյալ դասի «ազնիվ արյան» և այլ այսպիսի հորջորջումներ կրող տիրապետական իրավունքներ։

Գյուղերի հափշտակությունը Մադաթովը կարծում էր օրինականացնել ընծայաբերության ձևով։ Եվ Մեհտի Ղուլի խանը գրում էր Երմոլովին, թե ինքը վերադարձնում է Մադաթովին այն գյուղերը, որոնք մի ժամանակ պատկանելիս են եղել նրա նախնիքներին և խլվել են նրանցից խաների ձեռքով։ Երմոլովն իսկույն ուղարկում է այդ ընծայականն Ալեքսանդր կայսրին և միջ-

նորդում հօգուտ իր մոտիկ աշխատակից և բարեկամ Մադաթովի։ Կայսրը, սակայն, մերժում է այդ միջնորդությունը ասելով, թե ռուսական գեներալին անվայել է ընծաներ ընդունել մի ասիական խանից։ Այս սակայն չի հուսահատեցնում Երմոլովին, և նա մի երկրորդ անգամ ևս հարուցանում է այդ հարցը, հավատացնելով Ալեքսանդրին, թե խանը չի ընծայում Մադաթովին, այլ միայն վերադարձնում է նրան նրա սեփականությունը կազմող հողերը։ Այս հանգամանքը շատ լավ բնորոշում է ամենից առաջ հենց իրեն, գովված ու փառաբանված Երմոլովին։ Նա ուներ իր ձեռքին Մելիք-Շահնազարյանների գանգատներն ու բողոքները, որոնց մեջ հայտարարվում էր, թե Մադաթովը խլում է իրենց կալվածները և սակայն ոչինչ ուշադրություն չէր դարձնում նրանց վրա։ Խլվում է նույնիսկ և Մելիք-Շահնազարյանների հինավուրց ոստանը, Ավետարանոց գյուղը, ուր Մադաթովը տեղափոխում էր Շուշից 42-րդ եգերյան գունդը, աշխատեցնելով նրա զինվորներին իր համար կալվածատիրական մեծ տուն կառուցանելու գործով։ Ալեքսանդրն այս անգամ թույլ է տալիս Մադաթովին սեփականացնել խանի տված գյուղերը։ Այսպիսով ահա Երմոլովի սիրելին դառնում է մի շարք գյուղերի տեր, որոնց մեջ կային մոտ 1700 տուն բնակիչներ։ Նոր կալվածատերն այժմ իսկապես ռուս կալվածատեր էր և մտցնում էր իր գյուղերի մեջ գրեթե ճորտատիրական կարգեր։ Իր այս ձեռք բերած բարօրությունները ավելի ևս իր վրա ամրացնելու համար Մադաթովն ի վերջո ընդունեց ռուսադավանություն, մի բան, որ այն ժամանակվա հասկացողություններով ազգային խայտառակություն էր հայերի համար։ Բայց ասում են, որ այս վաճառքը բացասական տպավորություն թողեց Պետերբուրգի բարձր շրջանների մեջ։ Մինչդեռ ճարպիկ հափշտակիչն այսպես հաղթանակներ էր քաղում, Մելիք-Շահնազարյանները գնացին Պետերբուրգ և այնտեղ էին աշխատում վերադարձնել իրենց ձեռքում եղած սեփականությունը։ Բայց ոչինչ հաջողություն չունեցան։ Բախտի արդյոք դառն հեգնանքը Պետերբուրգի փողոցներում մուրացկանություն անելով էին ապրում այն մարդիկ, որոնք մի ժամանակ ռուսաց կառավարությունից ճանաչված էին Ղարաբաղի տիրապետողներ։

Մադաթովը ստացել էր իր ուզածը։ Մեհտի Ղուլի խանն այլևս հարկավոր չէր, և նրան կարելի էր փախցնել։ 1822 թվի վերջերին Շուշում կատարվեց մի այսպիսի գործ։ Խանի եղբորորդի և հակառակորդ Ջաֆար Ղուլի աղան, գիշերը թղթախաղով էր զբաղված Մադաթովի հետ, և երբ ուշ ժամանակով ճանապարհվեց իր տունը մթության մեջ լսվեցին հրացանի ձայներ, և Ջաֆար Ղուլին թեթև վերք ստացավ։ Լուր տարածվեց, թե այդ սպանության մի փորձ էր, որ սարքել էր Մեհտի Ղուլի խանը։ Մադաթովը հենվելով այդ լուրի վրա, ձերբակալեց խանի մարդկանցից մի քանիսին։ Այսքանը բավական եղավ, որ սարսափահար խանը թողնի ամեն ինչ և հապճեպով փախչի Պարսկաստան։ Հետո պարզվեց, որ հրացանաձգությունը սարքել էր Ջաֆար Ղուլի աղան, որ և իրեն վիրավորել էր թեթև կերպով։

Այսպիսով վերջանում է և Ղարաբաղի խանությունը, և Երմոլովն այնտեղ էլ մտցնում է ռուսական կառավարչություն։ Մենք հետո կտեսնենք, թե ինչ նոր կարգեր էին կիրառվում ասիական կոչված կարգերի տեղ։ Բայց հենց այստեղ էլ կարելի է հիշատակել, որ ճորտատիրական և բռնակալական Ռուսաստանն ինքն իր համար չափազանց քիչ բան ուներ սեփական բարեկարգության համար, որպեսզի դեռ կարողանար երջանկություն տանել ուրիշ ազգերին։ Մադաթովի կալվածական պատմությունը շատ լավ պատկերացնում է, թե ինչ կարող էր ռուսական բյուրոկրատիան դնել խանական բռնակալության տեղ։

2. Ներսես Աշտարակեցի։ *1814 թվականին Վրաստանի հայոց առաջնորդ է նշանակվում Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին։ Մենք տեսանք այս հոգևորականին դեռ երիտասարդ հասակում, ամենաեռուն գործունեության ասպարեզում, երբ նա դանիելականության ազդու և հեղինակավոր պարագլուխներից մեկն էր, պայքարող, համարձակ, այս ու այն կողմ թռչող, պրոպագանդ մղող, մանավանդ ռուս իշխանավորների մոտ շնորհ ու հաճություն փնտրող։ Դանիելականության վերջնական հաղթանակից հետո Ներսեսի անսահման փառասիրությունն այլևս չէր կարող բավարարություն գտնել էջմիածնի անձուկ միջավայրում, ուր տիրում էր նրա ամբողջ սրտից ատած պարսկական իրականությունը։ Թեև ողորմելի Եփրեմ կաթողիկոսն առանց նրա խնամակալության, ինչպես ասում են, «յոթը կորածներից» մեկն էր, բայց և այնպես, նա չկամեցավ նստել այդ հիվանդոտ ու թուլամորթ ծերունու կողքին, այլ ինքն ընտրեց Թիֆլիսն իր պաշտոնավարության տեղ, ուր կարող էր մոտ լինել ռուսաց կառավարությանը, որին ծառայում էր մեծ անկեղծությամբ և ոգևորությամբ, շտապելով օր առաջ իրականացնել էջմիածնի աթոռի և առհասարակ Արարատյան ամբողջ աշխարհի կցումը Ռուսաստանին։ Հաստատվելով Թիֆլիսում, նա կշարունակեր իր ձեռքում պահել կաթողիկոսական իշխանությունը և այդպիսով կդառնար մի կենտրոնական խոշոր անձնավորություն, որի շուրջը կխմբվեին գրեթե ամբողջ հայության շահերը։*

Արդար լինելու համար դեպի այդ՝ ամեն կողմով արտասովոր մարդը, մենք պետք է ընդունենք, որ փառասեր ու իշխանատենչ հակումները չէին միայն բոցավառված նրա մեջ. նրան ջերմացնում էր և մի հրաշունչ, յուրատեսակ հայրենասիրություն, որին կարող ենք տալ «արարատյան» հատուկ անունը։ Մեր պատմության մեջ արարատյան հայրենասիրությունը, որի բովանդակությունն է Արարատյան երկրի բնությունն ու պատմական առաքելությունն իբրև պաշտամունք, ունի մի շարք ներկայացուցիչներ, սկսած դեռ հինգերորդ դարից, Ղազար Փարպեցուց։ Այդ շարքի մեջ են Սիմեոն Երևանցին, Ներսես Աշտարակեցին, Մեսրոպ Թաղիադյանը, Խաչատուր Աբովյանը, Պերճ Պռոշյանը։ Այդ հայրենասիրությունը Ներսեսի մեջ ձուլվում էր մի կատարյալ ռուսամոլության հետ, որից նա սպասում էր իր ամենագլխավոր իղձի՝ հայրենի Արարատյան աշխարհի ազատագրումը։ Միանգամայն ճիշտ է, որ Ներսեսն անչափ ու անսահման սիրում էր փառք ու պատիվ ստանալ, լինել ուժեղ և ամենակարող իշխանավոր, միանձնյա տիրող ու հրամայող, բայց միանգամայն ճիշտ է և այն, որ այդ հատկությունների հետ նրա մեջ տեղ էր գտնում և հայրենի երկրի անխարդախ սերը, որ վառ էր պահում գործելու անդուլ ու անդադար աշխատելու մի ահագին եռանդ։ Այդ եռանդի մեջ միակողմանիություն, չափազանցություն շատ կար։ Բայց և այնպես, զուր չէր որ նա 19-րդ դարի հայ հոգևորականության ամենանշանավոր, ամենից շատ հռչակված ներկայացուցիչն էր։

Մտնելով Թիֆլիս առաջնորդական պաշտոնով, Ներսեսն հենց առաջին քայլերից սկսում է այնպիսի գործունեություն, որ դառնում է ոչ միայն Վրաստանի, այլև ամբողջ ռուսական Անդրկովկասի հայության առաջնորդ և կառավարիչ։ Թիֆլիսի հայ գաղութն այդ ժամանակից է սկսում ձեռք բերել ղեկավարող, հրահանգող և ուղղություն տվող կենտրոնի նշանակություն։ Եվ որովհետև էջմիածինը գրեթե ոչինչ չէր կարող անել առանց Ներսեսի համաձայնության, ուստի Թիֆլիսի գաղութը և հատկապես նրա առաջնորդարանը դառնում էին նույնպիսի կենտրոն նաև Պարսկաստանի և Թուրքիայի հայության համար։ Ներսեսը չափազանց ընդարձակ գրագրություններով կապվում էր գրեթե բոլոր տեղերի հայ գործիչների հետ, աշխարհական թե հոգևորական։

Իր պաշտոնավարության գրեթե առաջին իսկ օրերից Ներսեսն ընդհարվում էր Թիֆլիսի հայության հին ավանդական-ազգային ինքնավարության հետ՝ հանձին Թիֆլիսի մելիքի, որ այդ ժամանակ իշխան Դարչի Բեհբությանն էր և որ թեև զրկվել էր վրաց կառավարության ժամանակ իր վայելած դիրքից և իրավունքներից, բայց և այնպես, դեռ բավականաչափ հեղինակության տեր էր հայ համայնքի ներքին գործերի մեջ, մանավանդ այնտեղ, ուր հարցը վերաբերում էր եկեղեցուն և եկեղեցականությանը։ Ինքնակամ և խստաբարո իշխանավոր Բեհբությանը գտնում էր Ներսեսի մեջ իրենից ոչ պակաս կամապաշտ և համառ իշխանավորի, ուստի և ընդհարումն ընդունում էր խիստ և անողոք կերպարանք։ Իշխան Դարչին, իր կողմն ունենալով Թիֆլիսի հայ հոգևորականության և ժողովրդի մեծ մասը, աշխատում էր հեռացնել Ներսեսին, հավաքական դիմումներ անելով Եփրեմ կաթողիկոսին, բայց հաջողություն չէր ունենում, որովհետև որքան և կաթողիկոսը ակնածում էր նրանից, իբրև ազդեցիկ իշխանավորից, բայց և այնպես, Ներսեսն ամեն ինչ էր այդ խեղճ մարդու համար, և՛ խելք, և՛ իմաստություն, և՛ պաշտպանություն, և՛ փրկություն, ուստի չէր համարձակվի նույնիսկ ամենաթեթև նկատողություն անել նրան։ Եվ ճարահատյալ դիմում էր Վրաստանի ռուս բարձր հոգևորականներին խնդրելով, որ նրանք միջամտեն և վերջ տան ամբողջ քաղաքը հուզող վեճերին։

Կաթողիկոսի այս միջնորդությունն, իհարկե, չէր մերժվում ռուս եպիսկոպոսի կողմից, բայց նրանց միջամտությունից ավելի իրական հանդիսացավ այն միջամտությունը, որ կատարեց ներքին գործերի մինիստրը։ Կռվող կողմերը հավասար չափով անձնվեր էին ռուսական շահերին, պետք էր միայն ընտրել, թե որին առավելություն տալ։ Խռովությունների ամբողջ գործը քննելու համար կազմվեց մի մասնաժողով, որ գործում էր մի ռուս գեներալի նախագահությամբ։ Երմոլովի առաջին գործերից մեկն եղավ իր պաշտպանությունը Ներսեսին տալ, նկատի առնելով իհարկե, որ նա ավելի կարևոր է ռուսաց կառավարությանը իբրև գործակալ նրա քաղաքականության։ Թե՛ փառաբանված Երմոլովի և թե՛ առհասարակ ցարական բյուրոկրատիայի համար շատ բնորոշ է այն վճիռը, որ քննիչ մասնաժողովը կայացրեց Թիֆլիսի հայ հասարակությունը հուզող կռիվների վերաբերմամբ։ Վճռվում էր, որ այնուհետև աշխարհականները չխառնվեն հոգևոր վարչության գործերի մեջ, և որ արգելվում է հավաքական խնդրագրեր ներկայացնելը, ինչպես այս թույլատրված չէ և Ռուսաստանում։

Կատարյալ հաղթություն տանելով, Ներսեսն այնուհետև շարունակում էր իր միահեծան իշխանությունը և հետզհետե կողմնակիցներ գրավելով բուրժուա (մոքալաք) դասակարգից, դրամական գումարներ էր հավաքում Թիֆլիսի հայ գաղութի հեղինակությունն ավելի ևս բարձրացնելու համար, հաղորդելով նաև նրան մտավոր կենտրոնի փայլը։ Այս նպատակն իրագործելու համար նա բաց է անում հայկական մի բարեկարգ դպրոց, որ հետո նրա անունով կոչվեց Ներսիսյան, և որի համար 1824 թվականին կառուցվում է հատուկ շինություն։ Այս ժամանակ էլ դպրոցը Թիֆլիսի հարուստ վաճառական Գեորգ Արծրունուց ընծա է ստանում մի հայերեն տպարան, որ նա գնել էր Ամստերդամում։ Ներսեսը մտածում էր դարձնել իր դպրոցը նաև գրական մի կենտրոն և այդ նպատակով սկսում է նաև հրատարակչական գործունեություն, որ, սակայն, առանձին աչքի ընկնող արդյունքներ չէր տալիս, քանի որ դպրոցի մեջ հավաքված ուժերը, որքան և նրանցից մի քանիսն իրենց ժամանակի աչքի ընկնող մտավորականներից էին, բավականաչափ պատրաստված չէին մի բարձր գրական համբավ ստեղծելու համար։ Բայց և այն-

պես այս փոքրիկ և համեստ տպարանը մի շատ խոշոր մշակութային արժեք էր դառնում, քանի որ նա առաջինն էր ամբողջ ռուսական Անդրկովկասում և շատ խոշոր դեր կատարեց Թիֆլիսի հայ գաղութը մտավոր կենտրոն դարձնելու գործի մեջ։

Իր գործունեության մեջ Ներսեսը հզոր աջակցություն էր գտնում Երմոլովից։ Երկուսին միացնում էր միևնույն ակնկալությունը՝ պատերազմ Պարսկաստանի հետ։ Խոսելով ռուս-պարսկական պատերազմի մասին Ներսեսին իր հերոսը դարձրած մի հայ պատմագետ (Ալեքսանդր Երիցյան) ասում է, թե այդ նաև հայոց ազգային պատերազմն էր պարսկական լծից ազատվելու համար։ Եվ իրավ, Ներսեսը այսպես էր վերաբերվում ռուս նվաճողական առաջխաղացությանը, և մի ուրիշը չկար, որ նրա չափ հավատ ունենար, որ այս այսպես է, այսինքն, որ ռուսական արշավանքը հայոց ազգային պատերազմ է։ Եվ իբրև այսպիսին, Ներսեսն, իհարկե, պիտի իր վրա վերցներ ռուս-պարսկական պատերազմը պատրաստելու և փութացնելու հոգսերի մի մասը։ Այս աշխատանքի մեջ նա Երմոլովի մարդն էր, նրա օգնականներից մեկը, իր ընդարձակ ծանոթությունները, իր հռչակը նա գործադրում էր ռուսաց հրամանատարության հարկավոր տեղեկությունները հավաքելու համար։ Երբեմն առաջ էին բերվում և այնպիսի հանգամանքներ, որոնք կարող էին և պատերազմի առիթներ դառնալ։

Այսպիսի մի առիթ հայթայթում էր Եփրեմ կաթողիկոսը՝ 1821 թվականի վերջերում հարմար պատրվակ գտնելով ռուսաց երկիրը, Ղարաբաղ փախչելու համար։ Պատրվակն այն էր, որ էջմիածնի վանքն այս խեղճ ու ապիկար մարդու ժամանակ խոշոր պարտքերի տակ ընկավ։ Թեև պարսից թագաժառանգ Աբաս Միրզան ամեն կերպ պաշտպանում էր հայոց այս հռչակավոր կրոնական օջախը, կամենալով այդպիսով մի այնպիսի դրություն ստեղծել նրա համար, որ նա գործիք չդառնա Ռուսաստանի ձեռքին, բայց այս պետական հոգսը շատ քիչ էր հասկանալի Երևանի սարդար Հյուսեին Ղուլի խանի համար, որի հասկացողությունն այն էր, թե էջմիածինը չափազանց հարուստ է և նրան կարելի է ծծել անվերջ ու անխնա։ Եփրեմը տալիս էր որքան ուզում էին, իսկ երբ այլևս բան չմնաց տալու, նա սարդարի աջակցությամբ պարտք վերցրեց Երևանի հարուստ թուրք ազնվականներից հրեշավոր տոկոսներով։ Այսպիսով վանքը կեղեքողների թիվը բազմացավ։ Սարդարը տանում էր, պարտատերերը տանում էին, իսկ պարտքի գումարն աճում էր տոկոսներ բարդվելուց։ Բանն այնտեղ էր հասնում, որ սարդարն էլ չէր կարողանում իր սովորական կեղեքումները կատարել։ Ուստի նա ինքը խորհուրդ է տալիս կաթողիկոսին գնալ Շուշի, ուր շատ հայտնի հարուստ հայեր կային, պարտք վերցնել նրանցից և վերադառնալ էջմիածին։ Հյուսեին Ղուլի խանը համոզված էր, որ կաթողիկոսն այդ ճանապարհորդությունից ահագին գումարով կվերադառնա։ Եփրեմը կատարեց այդ խորհուրդը, գնաց Շուշի, փող էլ ստացավ, բայց այլևս չվերադարձավ։ Պարսից կառավարությունն իրավունք ուներ հետևցնելու, թե այդ փախուստը պատրաստել է ինքը ռուսաց կառավարությունը։

Երմոլովը սկզբում կարծեց, թե այս դեպքը կարող է պատերազմի պատճառ դառնալ։ Եվ որովհետև Պետերբուրգի կառավարությունը խաղաղասեր տրամադրություն ուներ և միևնույնը հանձնարարում էր Կովկասի իր կառավարչապետին, ուստի Երմոլովը առերես շատ խիստ վերաբերմունք ցույց տվեց փախստական կաթողիկոսին այն պատճառով, որ նա առանց նախապես իր համաձայնությունն առնելու անցել էր ռուսաց հողը, որի պատճառով և պահանջեց, որ նա կամ վերադառնա էջմիածին, կամ հրաժարական տա,

որպեսզի կարողանա մնալ ռուսական հողում իբրև մասնավոր մարդ։ Եփրեմը ինչպես և միշտ, Ներսեսի իմաստությանն ապավինեց, և վերջինս, գնալով Շուշի՝ գտավ շատ հեշտ ճարը։ Եփրեմը հրաժարական ուղարկեց Ալեքսանդր կայսրին։ Կարևորն, իհարկե, այդ հրաժարականի էությունն էր և ոչ թե հրաժարվողի անձը։ Եփրեմը թե՛ իրեն, թե՛ իր աթոռը և թե՛ առհասարակ հայոց ամբողջ ազգը դնում էր ռուսաց ցարի հովանավորության տակ։ Պահանջվում էր հենց այդ՝ քաղաքական մի ցույց, որ հայտարարեր ի լուր աշխարհի, թե որքան անտանելի է հայ ժողովրդի դրությունը Պարսկաստանում և որքան չափազանցություններ էին հասնում պարսկական կեղեքումներն այդ ժողովրդի բարձրագույն կրոնական կենտրոնում, երբ նրա պետը, այլևս անկարող լինելով դիմանալ, փախչում էր, որոնելով ռուսաց ամենաողորմած կայսրի հովանավորությունը։ Եփրեմի հրաժարականը մի դատարկ արտաքին ձև էր, որովհետև ոչինչ հետևանք չունեցավ, և ինքը ծերունի կաթողիկոսը, բնակություն հաստատելով Հաղպատի վանքում, ռուս-պարսկական սահմանագլխի վրա, Էջմիածնից ոչ այնքան հեռու, շարունակում էր իրապես մնալ ամենայն հայոց կաթողիկոս։ Եվ երբ պարսից կառավարությունը պահանջեց նրանից վերադառնալ իր պաշտոնատեղին, Ներսեսը պատասխանեց, թե այդ վերադարձը տեղի կունենա այն ժամանակ միայն, երբ Էջմիածնում կվերանան Երևանի սարդարի կեղեքումները։

Այսպիսով, ուրեմն, հայոց կաթողիկոսը նորից, ինչպես Դանիելի ժամանակ, ցարական դիվանագիտության ձեռքին դառնում էր գործիք պարսկական գործերին միջամտելու, երկու պետությունների փոխհարաբերությունները սրելու և պատերազմի առիթներ ստեղծելու համար։ Այսքանը շատ լավ տեսնում էին և Կ. Պոլսի հայերը և նրանց պատրիարքը, որը անշուշտ թուրքաց կառավարության ճնշման տակ խզում էր իր կապերը Էջմիածնի հետ, կարգադրելով, որ եկեղեցիների մեջ չհիշատակվի Եփրեմի անունն այնքան ժամանակ, որքան նա կմնա Հաղպատի վանքում։ Պարսից կառավարության համար արդեն վաղուց էր ճշմարտություն դարձել, որ հայերն են ռուսներին բերել, և որ առանց նրանց աջակցության ռուսները հաջողություն չէին ունենա։ Եփրեմի փախուստը կրկնապատկում էր այս համոզմունքի ուժը։

Հայկական այս վտանգը նույն այս ժամանակներում բավական լուրջ նշանակություն էր ստանում և անգլիացիների համար։ Մենք արդեն գիտենք, թե ինչպես անգլիացիները հաջողեցրին դուրս քշել Նապոլեոնի ներկայացուցչին պարսից արքունիքից և ինչպես իրենք բռնեցին նրա տեղը։ Այն ժամանակից անգլիական դիվանագիտությունը պինդ բռնեց իր ձեռքում Պարսկաստանը, որպեսզի դարձնե նրան պատվար՝ Հնդկաստանը հյուսիսից պաշտպանելու համար։ 1810 թվականին Անգլիան կնքում է պարսից կառավարության հետ իր համար սովորական դարձած միջազգային առուծախի մի դաշնագիր, որով Պարսկաստանն ստանում էր նրանից ամեն տեսակ նյութական աջակցություն՝ իր բանակն եվրոպական եղանակով վերակազմելու և զինելու համար։ Անգլիան տալիս էր զենք, հանդերձանք, ռազմամթերք, դրամ, իր սպաներին ուղարկում էր Պարսկաստան իբրև հրահանգիչներ։ Ամեն ինչ անում էր նա, բացի, իհարկե, իր բանակը պարսից բանակի հետ միացնելուց, որովհետև նա սովոր էր իր ժողովուրդը հանգիստ թողնելու և ուրիշ ազգերը դնման միջոցով իր պաշտպանության և նվաճողության ծառայեցնելու։ Այսպես էլ պարսիկները, ամեն ինչ Անգլիայից ստանալով, պարտավորվում էին տալ թնդանոթի միս՝ ռուսական արշավանքը կանգնեցնելու և թույլ չտալու համար, որ նա պարսկական հողից հեռավոր անգամ սպառնալիք դառնա հնդկական սահմանների նկատմամբ։ Այս քաղաքականության տեսակետից

անգլիացիներն, իհարկե, իրենց աչքին շատ մոտ պիտի ընդունեին այն հարաբերությունները, որոնք հաստատված էին Ռուսաստանի և Պարսկաստանի մեջ Գյուլիստանի դաշնագրությունից հետո։ 20-ական թվականներին մոտ, Երմոլովի քաղաքականության հետևանքով, պատերազմը ռուսների և պարսիկների միջև գրեթե անխուսափելի էր դառնում, և Պարսկաստանը պատրաստվում էր, վարժեցնելով ու վերակազմելով իր բանակն անգլիական հրահանգիչների ղեկավարությամբ։ Եփրեմի փախուստը, որ, ինչպես գիտենք, սկզբում համարվում էր առիթ ռուս-պարսկական մի պատերազմի բռնկման, հարկադրեց անգլիացիներին փորձել հայերին իրենց քաղաքական ազդեցության տակ առնելու և պարսիկների հետ հաշտեցնելու համար։ Այս դրությունն արտաքին քաղաքականության տեսքն էր։ Բայց ներքին, էական հանգամանքը տնտեսական մի խոշոր վտանգ էր, որ սպասում էր անգլիացիների առևտրին և հարկադրում էր նրանց շտապով կազմակերպել Պարսկաստանը՝ նրան իբրև կռվող կողմ կրակի մեջ նետելու և այդ կրակից իր համար, ինչպես ասվում է, շագանակներ հանելու։ 1821 թվականից ռուսաց կառավարությունը Թիֆլիսի ֆրանսիական հյուպատոսի խորհրդով, հաստատում էր տրանզիտ առևտուր Սև ծովից, Անդրկովկասի վրայով Պարսկաստանի հետ։ Թիֆլիսը ստանում էր առևտրական շատ խոշոր նշանակություն, քանի որ դառնում էր մի պահեստատեղի, ուր հավաքվում էին ցամաքային Եվրոպայի այն բոլոր ապրանքները, որոնք այստեղով պիտի գնային Պարսկաստան, Միջին Ասիա, մինչև իսկ Հնդկաստան։ Այս նոր համաշխարհային առևտրական ուղին գրեթե ոչնչացնում էր Տրապիզոնից Էրզրումի վրայով Պարսկաստան տանող տրանզիտային ճանապարհը, որ շատ բնական անհարմարություններ ուներ և բացի դրանից ոչինչ ապահովություն չէր ներկայացնում առևտրական կարավանների համար, միշտ ենթարկված լինելով քուրդ ցեղերի հարձակումներին։ Անգլիացիների համար ձեռնտու, սակայն, այս ճանապարհն էր, որի վրա նա գրեթե միայնակ տիրապետողն էր, քանի որ նրա մշտական ազդեցության տակ էր գտնվում Թուրքիան։ Թիֆլիսի տրանզիտային ճանապարհը սպառնում էր անգլիական առևտրական մենավաճառին թե՛ այդ թուրքական ճանապարհի վրա, թե՛ Պարսկաստանում, բայց մանավանդ միջին եվրոպական ապրանքները Հնդկաստան մտցնելով նոր դռներով։ Եվ անգլիացիներն սկսեցին ամենայն եռանդով աշխատել, որ խափանվի Թիֆլիսի տրանզիտը։ Սրա համար նրանք մի կողմից Պարսկաստանն էին պատրաստում Ռուսաստանի հետ կռվեցնելու համար, մյուս կողմից պրոպագանդ էին մղում ռուս գործարանատերերի մեջ, թե Անդրկովկասյան տրանզիտը բոլորովին պիտի սպառե ռուսական արդյունագործությունը։ Անգլիացիները շատ լավ գիտեին, թե այս նոր տրանզիտի ճանապարհին ինչ ահագին դեր պիտի կատարե հայ վաճառականությունը, ուստի աշխատում էին սիրաշահել հայերին և այդպիսով հեռացնել նրանց մրցակցությունից։

Այս բոլոր նպատակներով Հնդկաստանի անգլիական ընկերությունը Պարսկաստան էր ուղարկում Մխիթար Վոլֆին, որ հոգացողություն էր հանձն առնում բարեկարգելու և ընդլայնելու դպրոցական գործը հայերի մեջ։ 1823 թվականին այս միսիոները տեսակցություն ունեցավ Եփրեմի և Ներսեսի հետ և առաջարկեց նրանց անգլիական հովանավորություն, որ, իհարկե, նշանակում էր հայերի հաշտություն պարսիկների հետ և ռուսական հովանավորության մերժում, փոխարենը միսիոներ Վոլֆն առաջարկում էր այսպիսի մի ֆանտաստիկ ծրագիր այն ժամանակները հռչակված մի անգլիացի լորդի կողմից. ուղարկել Լոնդոն մի եպիսկոպոս, մի վարդապետ և երկու քահանա՝ այնտեղ բաց անելու համար մի դպրոց հայ աշակերտների համար, որոնք

կերովեին զանազան կողմերից։ Դպրոցը, ուր պիտի ավանդվեին և հայերեն լեզուն ու հայ կրոնագիտությունը, ապահով դրության մեջ պահելու համար առաջարկվում էր, որ կաթողիկոսը մի կոնդակ ուղղե Ամերիկայի ժողովրդին՝ դրամական նպաստ խնդրելու համար։ Ամերիկացիներին այդ կոնդակը տանելը և դրամ հավաքելը հանձն էին առնում իրենք, անգլիացիները։

Սակայն Ներսեսը բավականաչափ սուր հայացք ուներ իսկույն նկատելու համար այն թակարդը, որ դնում էր նրա առջև անգլիական խորամանկ քաղաքականությունը։ Նա մերժում է Վոլֆի առաջարկությունն ամենակտրուկ կերպով։ Այդ ժամանակ դեռ, ուրեմն, պատերազմից երեք տարի առաջ, նա հաստատապես գիտեր, որ եկել հասել է ռուսական հովանավորությունը, բերելով իր հետ վաղուց տենչացած ազատագրումը պարսկական լծից, ուստի և հայերը ոչինչ կարիք չունեն որոնելու մի այլ պետության հովանավորություն։ Հայկական դպրոցի գաղափարն էլ մերժվում էր, քանի որ նրան տրվում էր քաղաքական կերպարանք։ Հայ ժողովրդի դարավոր ազատագրական ակնկալությունն ավելի մեծ կենսական արժեք ուներ, քան Լոնդոնում մի հատ հայկական դպրոց ունենալը։ Եվ Ներսեսն ասում էր, թե ռուսական տիրապետության տակ հայերը միջոց կունենան բաց անելու դպրոցներ, ինչպես իրենք կուզենան։

Եվ այսպես, Ներսեսի քաղաքական խաղը բաց ու պարզ էր։ Ազգային պատերազմը Պարսկաստանին գրեթե հայտարարված էր։ Արդյո՞ք այս անգամ ապահով կերպով։ Չէ՞ր կարող պատահել, որ այս անգամ էլ, ազատագրական տենչերի ամենավճռական րոպեին հայ ժողովուրդը լքվեր ռուսներից, ինչպես լքվել էր Ղարաբաղը 1722 և 1784 թվականներին, ինչպես լքվել էր հենց նույնիսկ Արարատյան երկրի ժողովուրդն երկու անգամ, Ցիցիանովի և Գուդովիչի օրով, երբ ռուսները չկարողացան վերցնել Երևանը։ Լքման այս բոլոր դեպքերն ինչպես տեսանք, վերջացան հայ ժողովրդի համար կործանարար հետևանքներով։ Այս անգամ ավելի քան բոլոր նախընթաց դեպքերում, մեծ վտանգ էր սպառնում հայ ժողովրդին, քանի որ պարսիկները չափազանց գրգռված էին հայերի դեմ՝ Ներսեսի ռազմատենչ և անվերապահ թշնամական քաղաքականության պատճառով։ Եվ բարեբախտություն էր Ներսեսի համար, որ ռուսներն այս անգամ չլքեցին հայերին։

3. 1826-ի դեպքերը: Գյուլիստանի դաշնագրությունն, ինչպես ասացինք, ռուս-պարսկական սահմանային վեճերի վերջնական կարգավորումը չէր։ Պարսից կառավարությունն այդ դաշնագրով իրեն իրավունք էր վերապահում դիվանագիտական բանակցություններ վարելու Պետերբուրգի կառավարության հետ խանությունների մի մասն իրեն վերադարձնելու մասին։ Եվ իրավ, այսպիսի բանակցություններ սկսվեցին գրեթե դաշնագրության կնքումից անմիջապես հետո և շարունակվեցին երկար, առանց իրական հաջողության։ Ալեքսանդր կայսրն անձամբ տրամադիր էր մասնակի զիջումներով գոհացնել պարսից շահին և որոշելու համար, թե ինչ հողամասեր կարելի է վերադարձնել Պարսկաստանին, հանձնարարում էր Երմոլովին, Կովկասի կառավարչապետ նշանակելու ժամանակ, ամենից առաջ քննել ռուս-պարսկական սահմանագիծը և իր կարծիքը հայտնել, թե ի՞նչ կարելի է անել։ Բացի դրանից, շահի կառավարության հետ վիճելի հարցերի մասին համաձայնություն կայացնելու համար Երմոլովը, նախքան Կովկասի կառավարությունն ստանձնելը, ուղարկվեց Պարսկաստան արտակարգ դեսպանի պաշտոնով։ Այս ճանապարհորդությունը նա կատարեց 1817 թվականին, եղավ Թավրիզում, տեսնվեցավ Աբաս Միրզայի հետ, ապա գնաց Թեհրան, ներկայացավ Ֆաթալի շահին։

Պարսկական շահերի տեսակետից այս առաքելությունը միանգամայն բացասական արդյունքներ էր տալիս։ Երմոլովը գտնում էր, որ պարսիկներին հողային ոչ մի զիջում չի կարելի անել։ Աբաս Միրզան նրա հետ տեսնվելուց հետո, համոզվում էր, որ նա իր անձնական թշնամին է։ Պարսկաստանի համար չափազանց կարևոր էր, որ Ռուսաստանը Իրանի թագաժառանգ ճանաչեր Աբաս Միրզային, որ թեև շահի երրորդ որդին էր, հետևաբար և իրավունք չուներ գահը գրավելու, բայց հայրը կամեցավ, որ նա լինի գահաժառանգը և այդպես էլ կարգադրություն արավ, հեռացնելով գահից իր ավագ և երկրորդ որդիներին։ Գյուլիստանի դաշնագրությամբ Ռուսաստանը պարտավորվել էր Իրանի գահաժառանգ ճանաչել նրան, ում կնշնակե շահը։ Հետևապես մնում էր, որ Աբաս Միրզան ճանաչվի Ռուսաստանի կողմից։ Բայց ինքնահավան Երմոլովը համաձայն չէր, որ կատարվի հանձն առած պարտավորությունը և նա դեմ էր Աբաս Միրզային և Թեհրանում գաղտնի բանակցությունների մեջ մտավ շահի ավագ որդի Մուհամմեդ Ալիի հետ, խոստումներ էր անում նրան իր գահաժառանգական իրավունքների մեջ վերականգնելու մասին։ Այս խնդիրը թաքուն չմնաց Աբաս Միրզայից, որի համար այնուհետև պարզ ճշմարտություն էր դառնում, որ քանի որ Կովկասի կառավարչապետ կմնա Երմոլովը, անկարելի է, որ Ռուսաստանի և Պարսկաստանի մեջ հաստատվեն բարեկամական հարաբերություններ։ Ապագա ընդհարման հողն այսպիսով պատրաստ էր։ Հետագա տարիներում փոխադարձ անվստահությունն ավելի ևս սաստկանում էր երկու պետությունների միջև։ Աբաս Միրզան, հենվելով անգլիական աջակցության վրա, ընդարձակ պատերազմական պատրաստություններ էր տեսնում։ Երմոլովն այս մասին հայտնում էր Պետերբուրգի կառավարության, խնդրում էր ավելացնել ռուս զորքի թիվն Անդրկովկասում, բայց ստանում էր հանգստացուցիչ պատասխաններ, թե ոչինչ պատերազմական ձեռնարկություն չէ կարող լինել Պարսկաստանի կողմից, և թե ինքը, Երմոլովն էլ պիտի հետևի խաղաղասեր և զիջող քաղաքականության։ Այս հրահանգները Երմոլովի համար նշանակություն չունեին։ Գոռոզ չինովնիկն այն կարծիքին էր, որ ոչ ոք իր պես չի հասկանում դրությունը, ուստի և հակաճառություններով լի թղթեր էր ուղարկում արտաքին գործերի մինիստրին։

Իսկ այրեցիկ նյութերն ավելի և ավելի էին կուտակվում ռուս-պարսկական հարաբերությունների մեջ, պատրաստելով մի ամբողջ մեծ հրդեհ։ Այսպիսի նյութերից էր, մանավանդ, երեք խանությունների ոչնչացումը։ Մուսթաֆա և Մեհտի Ղուլի խաներին փախցնելով Պարսկաստան, Երմոլովն ավելորդ էր համարել մտածել, թե ինչ հետևանքներ կարող են ունենալ այդ բռնի գործողությունները մահմեդական աշխարհում։ Փախած խաներն ու ազդեցիկ ազնվականները հավաքված էին Աբաս Միրզայի շուրջը, նրա մեջ վառ էին պահում Անդրկովկասի պարսկական հարուստ և արգավանդ երկրները նորից պատերազմով ետ խլելու գաղափարը։ Այդ պատերազմն այս անգամ առանձնապես հեշտացնում էր այն հանգամանքը, որ այժմ կարելի էր ապստամբեցնել խանությունների և Դաղստանի ամբողջ մահմեդական ազգաբնակությունը։ Եվ իրավ, այս ուղղությամբ եռանդուն պրոպագանդ էր մղվում երկրում մնացած թուրք ազնվականների միջոցով, առաջացնելով ժողովրդական մեծ շարժումը, որ առայժմ, իհարկե, գաղտնի էր մնում։ Փոթորկաբեր ամպեր էին կուտակվում Անդրկովկասի գլխին։

1825 թվի նոյեմբերին վախճանվում է Ալեքսանդր կայսրը։ Օրենքով, նրան իբրև անզավակի, պիտի հաջորդեր եղբայրը, Կոստանդին Պավլովիչը։

Բայց սա իր հոր նման մի խելառ բռնակալ էր, և Ալեքսանդրը կարգադրել էր, որ ցարական թագը նրան չանցնի, այլ մյուս եղբորը՝ Նիկոլային: Կոստանդինն արդեն հրաժարվել էր, բայց մինչև որ այս բանը հայտնի կդառնար, խլրտումներ առաջացան բանակի մեջ, որի մի մասը հավատարմության երդում էր տվել նույնիսկ Կոստանդինին: Սակայն Նիկոլայն արագ իր ձեռքն առավ կառավարության սանձը, գահ բարձրացավ: Այս կարճատև խառնաշփոթ ժամանակամիջոցն ուզեց օգտագործել այն հեղափոխական շարժումը, որ տարիներից ի վեր բույն էր դրել ռուսական բանակի մեջ և որի նպատակն էր տապալել ցարական ինքնակալությունը և հաստատել նրա տեղ սահմանադրական կարգ: 1825 թ. դեկտեմբերի 14-ին Պետերբուրգում գտնվող զորքերի մի մասը զինված դուրս եկավ փողոց և հրաժարվեց հավատարմության երդում ընդունելուց: Նիկոլայը հավաքեց իր շուրջը զորքերի հավատարիմ մնացած մասը, թնդանոթային կրակ բաց արեց ապստամբների դեմ, որոնք զոհեր տալով փախուստի դիմեցին: Այնուհետև հեղափոխական շարժումը երևան եկավ Ռուսաստանի հարավային կողմերում գտնվող բանակի մեջ, բայց այստեղ էլ ապստամբությունը մեծ չափեր չընդունեց և ճնշվեց արագորեն:

Ահա այս ազգամիջյան շարժումների հեռավոր արձագանքները հասնում էին նաև Պարսկաստան, բայց շատ չափազանցրած կերպարանքով: Դրությունը այնպես էր ներկայացվում, թե պատերազմ է սկսվել գահի համար երկու եղբայրների (Կոստանդինի և Նիկոլայի) միջև, թե Ռուսաստանը վտանգավոր դրության մեջ է գտնվում, և Անդրկովկասում եղած ռուսական զորքերը պիտի հեռանան գնան իրենց երկիրը: Այս բոլորը համոզում էր պարսիկներին, թե 1825 թվականն ամենահարմարն է պատերազմ սկսելու համար: Այս համոզումն ընդունում էր մի վիթխարի կրոնական շարժման կերպարանք, որ միացնում էր ամբողջ շիա մահմեդականությունը թե՛ Պարսկաստանում և թե՛ Անդրկովկասում սրբազան պատերազմի գաղափարներով ընդդեմ քրիստոնեության: Շարժման գլուխ էր կանգնել հոգևորականությունը: Քերբելայի մեծ մուշտահիդը գնաց Թեհրան և «ջհադ» (սրբազան պատերազմ) հայտարարեց, իսկ Աբաս Միրզային խոստանում էր 15 հազար մոլլաների գլուխ անցնել և կազմել նրա բանակի առաջապահ մասը: Ինչ ասել կուզի, որ թե՛ Ֆաթալի շահը և թե՛ նրա որդին միանգամայն ենթարկվում էին այս կրոնական շարժման: Կրոնական պատերազմի գաղափարով վառված էր, մանավանդ, Անդրկովկասի նախկին խանությունների մահմեդական ազգաբնակությունը, որ պատգամավորներ էր ուղարկում Թավրիզ և պահանջում էր պատերազմը շուտով սկսվի՝ իրեն ռուսաց լծից ազատելու համար: Պատգամավորությունները տանում էին իրենց հետ կանացի ծածկոցներ և շալիկներ, որպեսզի ամաչեցնեն պարսիկներին, ասելով, թե նրանք անարի ու վախկոտ են կանանց նման:

Պարսկական ամբողջ աշխարհը շարժման մեջ էր, հրդեհվում էր: Եվ ահա այդ իսկ միջոցին Իրանի սահմաններն է մտնում Նիկոլայ կայսեր կողմից հատուկ դեսպան գեներալ Մենշիկովը, որ տանում էր շահին կայսեր ինքնագիր նամակը և խաղաղասիրական հավաստիացումները: Բայց այսպիսի միջոցներով այլևս անկարելի էր հանդարտացնել հրաբխային երերումների ենթարկված երկիրը: Ամառվա սկզբին էր, որ դեսպանը ճանապարհորդում էր դեպի Սուլթանիե, ուր գտնվում էր շահը, և ամեն տեղ, սկսած սահմանագլխից, նա տեսնում էր հուզմունք և գրգռմունք ռուսների դեմ: Նա իմանում էր նույնիսկ, որ Աբաս Միրզան հատուկ մարդ է ուղարկել Կովկաս՝ Երմոլովին սպանելու համար, խոստանալով նրան վարձատրություն 20 հազար ռուբլի: Ֆաթալի շահը սառը կերպով, գրեթե արհամարհանքով ընդունեց դեսպանին,

որ ստիպված եղավ վերադառնալ Կովկաս: Սակայն մինչև ռուսական սահմանին հասնելը պատերազմն արդեն սկսված էր պարսիկների կողմից: Երևանի սարդարը նրան ենթարկեց մի տեսակ պատվավոր կալանավորության, որի մեջ նա մնաց մի քանի շաբաթ:

Մինչդեռ այսպիսի իրարանցման մեջ էր Արևելքը, Կովկասի կառավարչապետ Երմոլովն իրեն մատնել էր մի փառահեղ անգործության: Մոտալուտ փոթորիկ գուշակող բոլոր նշանները նա արհամարհում էր, չէր հավատում, որ պարսիկները պատերազմ կսկսեն, մանավանդ այժմ, երբ ռուսաց կայսրի դեսպանը գտնվում է Պարսկաստանում: Ուստի և ոչինչ պատրաստություն չէր տեսնում: Նրա տրամադրության տակ եղած զորքերը, ճիշտ որ, սակավաթիվ էին, բայց այդ զորքերն էլ կենտրոնացված չէին ամենակարևոր կետերում, այլ փոքրիկ մասերով ցրված էին սահմանագծի, ներկայացնելով իրենցից առանձին-առանձին զորամասեր: Զորքերը գրեթե ամեն տեղ չունեին ուտեստեղենի պաշարներ, ուստի նրանց դիմացկունությունը շատ թուլացած էր: Ինքը գլխավոր հրամանատարը բացակա էր Թիֆլիսից, գնացել էր ճնշելու Դաղստանում ծագած ապստամբությունը: Եվ ահա նրա համար անսպասելի կերպով, առանց նախապես պատերազմ հայտարարելու, հուլիս ամսի կեսից պարսկական բանակը անցնում է ռուսական սահմանը երկու կողմից՝ Շարագյալից Երևանի Հյուսեին Ղուլի խանի և Ղարաբաղից՝ Աբաս Միրզայի առաջնորդությամբ: Այս մի ազդանշան էր, որ Անդրկովկասի ամբողջ շիա մահմեդականությունը ոտքի ելնի: Ապստամբությունը տարածվում էր Ղարաբաղում, Շաքիում, Շիրվանում, Գանձակի, Բաքվի և Թալիշի խանությունների մեջ:

Շտապով Թիֆլիս վերադարձած Երմոլովը իրերի այս տեսակ դրության հանդեպ գլուխը կորցնում է և գրում իր օրագրության մեջ, թե կացությունը ճգնաժամային է, և միայն հայերի վրա է կարելի հույս դնել: Այս բանի մեջ նա չէր սխալվում: Մինչդեռ ինքը մի տեսակ ընդարմացման մեջ էր ընկել, չէր կարողանում որևէ եռանդոտ միջոցի ձեռնարկել՝ երկիրը ներս խուժած թշնամուն դիմադրություն ցույց տալու համար, Ներսես Աշտարակեցին շտապում է իր դպրոցի տպարանից արձակել մի եռանդուն շրջաբերական կոչ (1826 թ. հուլիսի 29-ին), ուղղված բովանդակ հայ ժողովրդին, որի մեջ հորդորում էր ամենքին զենք վերցնել և ռուս զինվորների հետ ուս ուսի տված՝ պաշտպանել երկիրը թշնամու հարձակումներից: Այս հայտարարվում էր սրբազան պարտականություն յուրաքանչյուր հպատակի համար, իսկ հայերի համար, մանավորապես՝ նաև հայրենասիրական նպատակ: Եվ Ներսեսը զարթեցնում էր հայերի մեջ անցյալով զարդարված ռազմատենչ զգացմունքներ: Ահա ինչպես էր նա սկսում կոչը:

«Աստծուց ինձ վրա դրած սրբազան պարտավորությամբ հայտարարում եմ ահա, որ ինչպես դուք էլ տեղյակ եք մեր ազգային պատմությունից, գիտենք թե ինչ պատճառներով վերացան մեր ազգի գերազանցությունը, թագավորությունը, իշխանությունը, մեծությունը, հարգանքները, հարստությունը և կամ թե վերջապես ինչից առաջացավ մեր սիրելի հայրենիքի վերջնական անկումը և ովքեր էին ընդհանուրիս այդ դժբախտությունների պատճառները: Հայտնի է ձեզ և այն, որ հայոց ազգը քանի մի հարյուր տարի է ահա, որ զրկվել է հայրենական բոլոր ժառանգություններից և ցրված է աշխարհիս երեսին, որից ոմանք հեծում են այսօր գերության մեջ, մյուսները պանդխտական կյանք են վարում և մինչև այսօր ազգն իր կյանքի պաշտպանությունը գտած է միմիայն ամենագթած և մարդասեր աստուծո շնորհիվ... Հայտնի է ձեզ նաև Ռուսաստանի օգոստոսափառ պետության նպատակը: Նա իր հզոր

բաղումը տարածեց մեր հայրենիքի վրա ոչ այնքան իր սեփական օգտի համար, որքան մեր անդորրության և բարօրության համար ու Քրիստոսի սուրբ կրոնը և եկեղեցին պաշտպանելու համար»։

Այստեղից ինքնըստինքյան բխում էր, թե ինչ պիտի անեն ռուսահպատակ հայերն այժմ, երբ երկիրն ենթարկվել է թշնամու հարձակման։ Պետք է, ասում էր, հանդես բերել այն հավատարմությունը, որով հայ ժողովուրդն աչքի է ընկել միշտ և ամեն տեղ և այդպիսով արժանացել է բոլորի հարգանքին։ «Կարևոր եմ համարում,— շարունակում էր շրջաբերականը,— հիշել և մեր այն համազգիների դրությունը, որոնք զանազան տիրապետությունների ներքո էին գտնվում, մանավանդ օսմանյան և պարսից աշխարհներում։ Երևակայեցեք, թե որպիսի համբերությամբ են տանում նրանք այն զրկանքները և թշվառությունները, որոնք մինչև հիմա էլ թափվում են նրանց գլխին։ Բայց և այնպես, հավատարմությունը դեպի իրենց տիրապետողները, որոնք ավելի գերազանց են դասում, քան իրենց հանգստությունը, գույքը և կյանքն իսկ»։ Այս, սակայն, քաղաքական մի ձեռնածություն էր, բարեպաշտ մտքով կատարված մի ստախոսություն, որովհետև եթե Թուրքիայի և Պարսկաստանի հայերը, դարերով ճմլված, այդպիսի մի ստրկական համակերպման էին դատապարտված, մյուս կողմից կար և այն ուժեղ ձգտումը ազատագրվելու այդ կացությունից, որ բոլորովին չէր կարող հաշտվել անվերապահ հավատարմության հետ, և որ Ներսեսի և նրա նման մյուս գործիչների ղեկավարությամբ դառնում էր դավաճանություն օսմանյան և պարսկական տիրապետությունների դեմ, քանի որ ամեն կերպ նպաստում էր ռուսաց նվաճողական արշավանքներին։

Իր հորդորները ռուսահպատակ հայերին Ներսեսը ձևակերպում էր այսպես. «Մի՛ վախեք պարսիկների ձայնից և աղաղակներից։ Նրանց բոլոր ուժը ճիչի և սպառնալիքների մեջ է և ոչ թե ճշմարիտ զորության և խելացիության։ Եվ որովհետև նրանց ճիչն ու աղաղակը, րոպեապես թնդացնելով օդը, շուտով կորչում են, այնպես էլ ունայն են նրանց բոլոր գոռում-գոչումը և սպառնալիքները։ ...Ահա ժամանակ, երբ ամենեքյանդ, վերածնելով ձեր մեջ ձեր նախնյաց սխրագործությունները, միաբանությամբ պիտի քաջալերեք միմյանց, ասելով՝ «մեռնենք քաջությամբ և առանց հայրենիքին դավաճանելու և այսպիսով ժառանգենք մեր նախնիքների պանծալի անունն ու փառքը»։ Թող չվախեցնեն ձեզ պարսից րոպեական արշավանքները, ավազակությունները և այն սուտ լուրերը, որ տարածում են նրանք կամ նրանցից խաբված թեթևամիտները։ Մի՛ տարակուսեք, մի՛ վհատվեք և մի՛ դողաք, որովհետև քաջ հայտնի են ձեզ պարսիկների հատկությունները և նրանց խորամանկությամբ հնարած լուրերի ստորությունը։ Գոցեցե՛ք ձեր ականջները և ձեր դեմքը այդպիսի կեղծ համբավների դեմ, բոցավառվեցե՛ք արիության ոգով, դիմադրեցե՛ք մեր թշնամիների բոլոր խորամանկություններին և ավազակություններին։ ...Դիմադրեցե՛ք թշնամու և սրա արբանյակներին կամ ռուսաց զորքերի հետ միասին և կամ թե մի ուրիշ կերպով, որ ավելի հարմար կլինի ներկա ավազակորեն հարձակումների միջոցին, իսկ եթե հարկ լինի՝ մի՛ խնայեք ձեր արյան վերջին կաթիլը»։

Այս ընդհանուր կոչն անլսելի չմնաց։ Առաջին արձագանքողը Շամշադինի Հախում գյուղի Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանն էր, որ առաջներում էլ ռուսական արշավանքի աշխատակիցն էր եղել իր քաջարի խմբով։ Այժմ էլ նա հավաքում էր իր շուրջը **300** կտրիճներ, դեն դնում վեղարն ու փարաջան և, սուր կապելով մեջքին, անցնում է այդ զումարտակի գլուխը և գնում այնտեղ, ուր ժողովրդի պաշտպանության գործն էր պահանջում։ Իսկ այս գործն

այժմ ավելի քան երբևիցե դժվարացել էր, ընդարձակ միջոցներ և մեծ եռանդ էր պահանջում։ Այժմ սովորական պարսկական պատերազմի ավազակային և ասպատակային բնավորության վրա ավելացել էր կրոնական ֆանատիկոսությամբ վառված ազգաբնակության համատարած ապստամբությունը, որ օր օրի վրա անզուսպ և հաղթական էր դառնում։ Ռուսական փոքրաթիվ զորամասերը ստիպված էին նահանջել թշնամու ահագին կուտակումների առջև, եթե բախտի բերմունքով կարողանում էին ազատել իսպառ բնաջինջ դառնալուց։ Այս թեթև հաջողությունները մեծամեծ հաղթությունների նշանակություն էին ստանում պարսիկների և ապստամբական Անդրկովկասի համար, և ահա այս ռազմական ոգևորության զոհ էր դառնում սահմանամերձ հայ ազգաբնակությունը։

Պարսկական արշավանքը սկսվում էր նախ արևմտյան ճակատի վրա, ուր Հյուսեին Ղուլի խան սարդարի զորքերը խուժում էին Շորագյալ, ոչնչացնում էին ռուսական պահակակետերը և քանդում, ավերում էր երկիրը, կոտորում և գերի վարում հայ ազգաբնակությունը։ Առանձնապես դժբախտ եղավ Մեծ Ղարաքիլիսա հայ գյուղի (Արփաչայի հովտում, Գյումրիի մոտ) ճակատագիրը։ Նրա ազգաբնակության մի մասը սրի քաշվեց և իր դիակներով լցրեց փողոցները, մի խոշոր մասն էլ, հազար հոգուց ավել, քշվեց տարվեց գերի։ Երբ ավերմունքի տեղը հասավ ռուսական մի զորաբաժին, սարսափահար և հուսահատված կանանց խմբերն սկսեցին հայհոյել նրա հրամանատարին, թե ինչո՞ւ ուշ է գալիս, այն ժամանակ, երբ ամեն ինչ արդեն վերջացած է, քարեր էին թափում նրա վրա, այնպես որ նա ստիպված եղավ պաշտպանվել, թաքնվելով իր կառքի տակ։ Մեծ Ղարաքիլիսայի այս աղետալի ավերն ու գերեվարությունը ցնցող գույներով նկարագրել է Խաչատուր Աբովյանն իր «Վերք Հայաստանի» մեջ։ Բայց Մեծ Ղարաքիլիսան միակը չէր։ Ռուսները մաքրեցին ոչ միայն Շորագյալը, այլև Փամբակը և կանգ առան միայն Լոռում։ Այս պարտված գավառների հայ ժողովրդի կրած տառապանքներն անհայտ են մնացել, որովհետև նրանց դժբախտությունը լացող աբովյաններ չեն եղել։ Միայն ռուս զինվորական տարեգիրներն են, որ անցողակի կերպով հիշատակում են, թե այլևայլ տեղերից գերի տարած հայերի թիվը մի քանի հազարի էր հասնում։

Երմոլովն այս ալեկոծված ծովի մեջ բութ անշարժության էր մատնված և միայն այն էր անում, որ բոլոր դեպքերի մասին զեկուցումներ էր ուղարկում Նիկոլայ կայսրին, որ վրդովվում էր ռուսների կրած անհաջողություններից և շարունակ հրամանագրում էր Երմոլովին, որ նա էլ հարձակողական գործողություններ սկսե պարսիկներ դեմ։ Սակայն այս հրամանագրություններն էլ չէին ազդում։ Թիֆլիսի զինվորական շրջաններն էլ մնացել էին զարմացած այդ անգործունեության վրա։ Բայց որովհետև վախենում էին անձամբ խոսել խոժոռ ու բարկացկոտ սատրապի հետ, ուստի նրա մոտ էին ուղարկում իշխանուհի Բեհբությանին, որ և հիշեցնում էր նրան, թե քաղաքն ապրում է սարսափի մեջ, և չի կարելի այլևս նստել ձեռքերը ծալած։ Եվ իրավ, Թիֆլիսի քթի տակ, հազիվ մի 50 վերստ նրանից հեռու, Եկատերինֆելդ անունով գերմանական գաղութում տեղի ունեցավ մի սոսկալի աղետ։ Պարսից բանակի մեջ գործող քրդական հրոսախումբը հարձակվեց այդ հարուստ և բարեկից գյուղի վրա, թալանեց ու հրդեհեց նրան, ազգաբնակության մեծ մասը, գլխավորապես կանայք ու աղջկերք, քշեց տարավ։ Գյուղի բոցերը դեռ չէին մարել, երբ հասավ Թիֆլիսից ուղարկված վրացական միլիցիան, որ հետամուտ եղավ գիշատիչներին, բայց ոչինչ չկարողացավ անել։ Գերիների

մի մասը ուղարկվեց Պարսկաստան, մյուսը՝ Կ. Պոլիս և Եգիպտոս, ուր նրանք ծախվեցին գերեվաճառության շուկաներում։

4. Շուշու պաշարումը։ Աբաս Միրզան իր գլխավոր բանակի հետ, որ, ինչպես ասում են, բաղկացած էր 60 հազար հոգուց, Արաքսն անցավ Խուդափերինի կամուրջով։ Այստեղ նրան սպասում էին Ղարաբաղի խոշոր կալվածատեր բեկերը, որոնցից ոմանք ունեին ռուսաց սպայական աստիճաններ։ Թագաժառանգը շքեղ ընդունելություն գտավ այդ բեկերից մեկի՝ Հաջի Աղալար բեկի, անհուն կալվածների տեր մի ազնվականի տանը։ Եկել էին և Ղարաբաղի Մեհտի Ղուլի խանը և Շիրվանի Մուսթաֆա խանը, որոնց հրամանի տակ գտնվում էին պարսկական զորաբաժիններ։ Ամեն մեկն իր նախկին տիրապետության սահմաններում միացրեց իրեն ապստամբված ազգաբնակությունը, այնպես որ պարսկական բանակը, մի վիթխարի հրեշի կերպարանք առած, ամեն տեղ տարածեց իր ձեռքերը՝ ամեն մի հակառակություն ոչնչացնելու համար։

Այդ հրեշին դիմադրելու համար Ղարաբաղում կար միայն մի թույլ ռուսական զորաբաժին, բաղկացած 42-րդ եգերյան գնդի մի քանի մասերից և կազակ զորքերից, ընդամենը 2700 հոգուց ոչ ավել։ Զորահրամանատարն էր գնդապետ Ռեուտը, որ զորքի մի մասի հետ բնակվում էր իշխան Մադաթովի կալվածը դարձած Ավետարանոց (Չանախչի) գյուղում, իսկ մյուս մասը, մոտ 1000 հոգուց բաղկացած, փոխգնդապետ Նազիմկայի հրամանատարությամբ, գտնվում էր Գորիս գյուղում։

Ստանալով տեղեկություն, որ պարսկական բանակն անցել է Արաքսը և արագությամբ առաջանում է, Ռեուտը հրամանագրում է Նազիմկային անմիջապես դուրս գալ Գորիսից և շտապել իր հետ միանալու, որովհետև Երմոլովը կարգադրել է, որ Ղարաբաղի զորաբաժինը, համախմբվելով Ավետարանոցում, թողնի երկիրը և նահանջի դեպի Թիֆլիս։ Սակայն պարսից հրամանատարությունն էլ շատ լավ տեղյակ էր այն հանգամանքին, որ պետք է օգտվել Ռեուտի գնդի բաժան-բաժան դրությունից և ջարդել այդ մասերն առանձին-առանձին։ Ուստի Արաքսն անցնելուց հետո պարսկական բանակի մի խոշոր մասը, տեղական ապստամբված ազգաբնակության ուղեկցությամբ, գնաց Գորիսի վրա։ Նազիմկան դուրս բերեց իր զորամասը Գորիսից, բայց ուշ էր արդեն, և պարսկական ահագին ուժերը շրջապատեցին նրան ամեն կողմից, այնպես որ ամբողջ ճանապարհը մինչև Շուշի պետք էր անցնել պատերազմով։ Տեղական հայերն առաջարկեցին տանել զորքը լեռնային ապահով կածաններով, բայց Նազիմկան չհամաձայնվեց, չկամենալով թողնել իր հետ եղած երկու թնդանոթները։ Զորքը կռիվ տալով հասավ Հաքարու գետին։ Այստեղ պետք էր վերջին ճիգը թափել, անցնել գետի մյուս ափը, որից հետո այլևս վտանգ չկար։ Բայց զինվորները տանջված լինելով երկար կռվից և, մանավանդ, ծարավից, դուրս եկան հնազանդությունից ու անկարգ վազեցին ջրի վրա և այստեղ էլ գտան իրենց կորուստը։ Շրջապատված ամեն կողմից, իսպառ բնաջինջ դառնալու սպառնալիքի տակ, զորամասը ցած դրեց զենքերը և իր հրամանատարի հետ միասին անփառունակ կերպով անձնատուր եղավ ապստամբված խուժանին։ Այս մի անջնջելի ամոթ էր։ Անձնատուր եղածներին կողոպտեցին, մերկացրին և այդպես տկլոր էլ քշեցին զանազան կողմեր՝ դանդաղ կերպով տանջելու և խայտառակելու ու ապա կոտորելու համար։

Միաժամանակ գնդապետ Ռեուտը, լուր ստանալով, թե պարսիկները մոտ են, անժամանակ խուճապի է մատնվում և շտապում տանել իր զորքը Շուշի բերդը, քանի որ Ավետարանոց գյուղը ոչ մի պատրաստություն չուներ դիմադրություն ցույց տալու։ Սակայն Շուշին էլ, որի մեջ փակվում էր Ռեուտը,

մի կիսաքանդ և երեսի վրա գցած բերդ էր, Երմոլովը տասը տարի շարունակ վատացնելով ռուս-պարսկական հարաբերությունները, ոչինչ չէր արել սահմանագլուխն ամրացնելու համար։ Ամենավատն այն էր, որ բերդի մեջ չկային ուտելեղենի և ռազմամթերքի պաշարներ, այնպես որ զինվորները ստիպված էին առաջին իսկ օրերից կերակրվել բերդի բնակիչներից փոխ առած հացով։ Բերդի մեջ հավաքվել էր շրջակա հայ գյուղերի ազգաբնակությունը, որ կարողացել էր ժամանակին թողնել գյուղերը և իր անասունների ու պաշարեղենի հետ գալ մտնել այդտեղ։ Այս հայ գյուղացիությունն ահագին օգնություն էր փոքրաթիվ բերդապահ զորքերի համար։ Ռեուտը զինեց մոտ 1500 հոգի գյուղացիներ և կանգնեցրեց նրանց բերդի պարիսպների վրա։ Ղարաբաղի հայ գյուղացիության մի շատ փոքրիկ մասն էր, որ ապաստան էր գտնում Շուշու պարիսպների ետևում։ Ահագին մեծամասնությունը մնաց իր բնակության տեղերում, պարսկական ահագին բանակը տարածվեց ամեն տեղ, երկիրը նորից մտավ Մեհտի Ղուլի խանի կարգադրության տակ։

Շուշու պաշարումը սկսվեց հուլիսի 25-ին։ Աբաս Միրզան սկսեց ռմբակոծել բերդը. պաշարված ռուսները չունենալով իրենց սեփական ռազմամթերքը, հավաքում էին թշնամու արձակած ռումբերից այնպիսիները, որոնք չէին պայթում, և այդ ռումբերը, դնելով իրենց հին թնդանոթների մեջ, նորից ետ էին ուղարկում թշնամուն, իսկ վառոդ պատրաստում էին հայերը։ Ռեուտը կարգադրել էր հեռացնել բերդից բոլոր թուրք երիտասարդներին, որոնք հակված էին պարսիկների կողմը։ Բերդի պաշտպանության ծանր գործն այսպիսով եղբայրաբար բաժանել էին իրենց միջև ռուսներն ու հայերը։ Սաստիկ նեղված էր պարենավորման գործը։ Բերդում հացահատիկ կար, բայց այն աղալն անկարելի էր դարձնում այն հանգամանքը, որ Շուշու երկու կողմերում ընկած խոր ձորերի մեջ գտնվող ջրաղացները բռնել էին պարսիկները։ Եվ ահա հայերն ահագին ջանքեր էին անում Շուշու երկնաբերձ ժայռերի գլխից պարկերով անդունդները ցորեն իջեցնելու և գիշերով ջրաղացներում ալյուր դարձնելու համար։ Այս՝ հերոսությունների մի ահավոր ասպարեզ էր, ուր անուն հանեցին նույնիսկ հայ կանայք, բայց ամենից շատ հռչակվել են Շուշու գյուղից երկու եղբայրներ՝ Սաֆար և Ռոստամ Թարխանյանները։ Բռնելով Հյունոտ գյուղի անձուկ կիրճը և ամրանալով նրա երկու կողմերի ժայռերում գտնված այրերի մեջ, այս քաջերը չէին թողնում պարսիկներին մոտենալ ձորի հատակում գտնված ջրաղացներին և այդպիսով հնարավորություն էին պահպանում, որ ալյուր պատրաստվի զորքի համար։ Երկու եղբայրների այս ծառայությունը գնահատվեց ռուս կառավարության կողմից և վարձատրվեց։ Բայց, իհարկե, այսքանը դեռ բավական չէր, որ բերդը բավարար չափով ալյուրի պաշար ստանա, և զինվորները պակասեցրած չափով էին հաց ստանում, հաճախ նաև ստիպված էին խաշած ցորենով հագեցնել իրենց քաղցը։

Աբաս Միրզան իր ահագին բանակով, այնուամենայնիվ, ապիկար հանդիսացավ այս՝ կիսով չափ խարխուլ, քաղցած ու գրեթե անզեն բերդը վերցնելու։ Նա կամենում էր, որ բերդն ինքնահոժար անձնատուր լինի, ուստի բանակցություններ սկսեց Ռեուտի հետ, համաձայնեց նույնիսկ երկու շաբաթվա զինադադար անել, որպեսզի Ռեուտը կարողանա մարդ ուղարկել Թիֆլիս և Երմոլովից համաձայնություն ստանալ բերդից հեռանալու։ Այս թույլտվությունն, իհարկե, չեկավ, ուստի վերանորոգվեց պաշարման դրությունը։ Նորից սկսվեց գրեթե միանգամայն անպտուղ ռմբակոծությունը, գիշերային գրոհի մի թույլ և անհաջող փորձ արվեց, ականներ փորելու աշխատանքի ձեռնարկվեց, որից դարձյալ ոչինչ դուրս չեկավ։ Բերդում փակ-

ված զորքն էլ, իհարկե, չափազանց թույլ էր մի որևէ լուրջ պատերազմական գործողություն կատարելու համար։ Մի անգամ միայն նա փորձեց պարիսպների միջից դուրս հարձակվելու՝ ուտելիքի պաշարներ հավաքելու (հատկապես ցորենի արտերը քաղելու) համար, բայց պարսիկները, հակահարձակում գործելով, անհաջողության մատնեցին այդ փորձը։

Այս թույլ ու անօգուտ գործողություններով Աբաս Միրզան կորցրեց շատ ժամանակ, այդպիսով հնարավորություն պատրաստելով, որ հանկարծակի եկած ռուսները հավաքեցին իրենց ուժերը՝ հաղթություն տանելու համար։ Շուշու տակ Աբաս Միրզան նստեց 40 օրից ավելի և այս ամբողջ ժամանակ զբաղված էր երկրորդական, մանր-մունր գործերով։ Նրա զորքերը ոչնչացրին ամբողջ երկրի արտերը, կողոպտեցին ազգաբնակչությունը։ Առանձնապես վատացավ հայ ժողովրդի դրությունը։ Այն հանգամանքը, որ Շուշու պաշտպանները գլխավորապես գյուղացի հայերն էին, մի հանգամանք, որ հաստատում էր գեներալ Պասկևիչը Նիկոլայ կայսրին գրած նամակում, վրիժխնդրության զգացմունք էր ներշնչում պարսիկներին, և սրանք ամեն մի դատարկ առիթով սպանում էին իրենց ձեռքն ընկած հայերին։ Մեհտի Ղուլի խանը, կալանավորելով Գանձասար վանքի Սարգիս միտրոպոլիտին և Կուսապատ գյուղի Մելիք Վանուն, ներկայացնում է նրանց Աբաս Միրզային, որ հրամայում է նրանց գործ դնել իրենց ամբողջ ազդեցությունը, որպեսզի հայերը ետ կենան իրենց ռուսասիրությունից և անձնատուր լինեն պարսիկներին. հակառակ դեպքում սպառնում էր ընդհանուր կոտորածի մատնել ամբողջ հայությունը Ղարաբաղում։ Երկուսն էլ ստիպված են լինում համաձայնություն տալ՝ ժողովուրդը կոտորածից ազատելու համար։ Շուշուց դուրս գտնվող բազմահազար հայությունն իրապես արդեն պարսիկների ձեռքին էր գտնվում և միտրոպոլիտն ու մելիքը երաշխավորում էին, որ ամենքն այս կողմերում հպատակված կլինեն պարսիկների իշխանությանը։ Ասում են, որ շահզադեն պահանջեց նրանցից և այն, որ նրանք Շուշու պարիսպների տակ կանգնեն և խրատեն պարիսպների վրա կանգնած հայերին, որ նրանք թողնեն բերդի պաշտպանությունը և անձնատուր լինեն պարսիկներին։ Երմոլովն իր պաշտոնական թղթերի մեջ ասում էր, թե Սարգիս միտրոպոլիտը կատարել է այդ պատվերը, բայց բերդի հայերը, անգամ կանայք և աղջիկները, հայհոյանքներով են պատասխանել նրա խրատներին, անվանելով նրան «մոլլա Սարգիս»։ Այս, սակայն, մի պարզ հերյուրանք է, եթե նկատի առնենք այն, որ մի պաշարված բերդի պարիսպներին չի կարելի մոտենալ այնքան, որ դեռ կարելի լինի խոսքի բռնվել ներսեցիների հետ, իսկ փոխանակ անօգուտ հայհոյանքների՝ հեշտ էր ընդմիշտ լռեցնել այդքան վտանգավոր պրոպագանդիստին՝ գնդակահարելով նրան։

Սակայն այս հերյուրանքն էլ բավական եղավ, որ Երմոլովը Շուշու պաշարումը վերջացնելուց հետո կալանավորել տա Սարգիս միտրոպոլիտին և տանել տա Թիֆլիս, ուր նրան հանձնում է Ներսես Աշտարակեցու դատաստանին։ Իսկ Մելիք Վանին, նույնպես իբրև պետական դավաճան, աքսորվում է Բաքու, ուր մնաց երկար ժամանակ։ Սա այն Մելիք Վանին էր, որ, ինչպես տեսանք, 1805-ին ազատել էր գնդապետ Կարյագինի զորաբաժինը վերջնական կորստից Ասկարանի մոտ և Շահբուլաղի ամրոցում։ Նա զրպարտությունների զոհ էր, բայց չկարողանալով այս բանը հասկացնել գոռոզ ու ինքնահավան Երմոլովին, գնաց աքսոր և մինչև իր մահը, ինչպես պատմում են նրա ժառանգները, ապշած էր, թե որքան ապերախտ են ռուսաց զինվորները։ Բայց այս ապերախտության ավելի խոշոր ցույցն այն եղավ, որ Երմոլովը հիմք առնելով այս՝ համենայն դեպս անհատական երկու դեպքերը, Նիկոլայ կայսերին ուղարկած իր զեկուցման մեջ անհավատարմության մեղադրանք էր տարածում ամբողջ հայ ժողովրդի վրա։ Այս գաղտնի մատնության մասին Ներսես Աշտարակեցուն հայտնում էր Մոսկվայի Լազարյաններից Խաչատուրը, որի եղբայր Հովհաննեսը պաշտոն ուներ տխրահռչակ 3-րդ բաժանմունքում, ուր կենտրոնացած էին Արևելքին վերաբերյալ գաղտնի գործերը։ Եվ այս մատնությունը Երմոլովը կատարում էր ճիշտ այն տարին, երբ հայ ժողովուրդը Շորագյալում և Փամբակում, Ղարաբաղում և այլ շատ տեղերում ահագին զոհեր էր տալիս ռուսաց տիրապետության համար, ավելին, երբ նա հրացանն ուսին, թիկունք էր դառնում լքված ու ամեն կողմից նեղված ռուս զինվորին։ Այս մի գիծ էր, որ դարձյալ շատ լավ բնորոշում է կովկասյան սատրապներից այս՝ ամենից շատ ներբողվածին։

5. Երմոլովի անկումը։— *Ռուսական զորքերի անհաջողությունները, Երմոլովի անշարժությունը և վերևից ուղարկվող կտրուկ հրամանների անկատար թողնելը Նիկոլայ կայսեր համար այնքան հուզիչ հանգամանքներ էին, որ նա Կովկաս ուղարկեց իր առանձին վստահությունը վայելող գեներալ Պասկևիչին՝ թե՛ երկրի դրությունը տեղնուտեղը քննելու և իրեն հայտնելու համար և թե՛ գործող բանակի հրամանատարությունն ստանձնելու համար, մնալով, սակայն, Երմոլովի գլխավոր հրամանատարության տակ։ Այս նոր մարդը նոր էր Թիֆլիս մտել, երբ ռուսական զենքն առաջին խոշոր հաղթությունը տարավ։*

Աբաս Միրզան պաշարելով Շուշին, իր բանակից մոտ 10 հազար հոգուց բաղկացած մի առաջապահ զորամաս զատեց և նրան Ամիրխան սարդարի առաջնորդությամբ ուղարկեց դեպի Գանձակ՝ այս քաղաքը գրավելու և այնուհետև արշավանքը դեպի Թիֆլիս շարունակելու համար։ Գանձակի թուրքերը, հենց որ լուր առան այդ շարժման մասին, միահամուռ ապստամբվեցին։ Ռուս զորքը շատ փոքրաթիվ էր և հազիվ կարողացավ պետական գանձարանի մի մասը փախցնել Թիֆլիս։ Այստեղ էին փախչում և Գանձակում ապրող ռուսները, սակայն նրանցից շատերը չազատվեցին, որովհետև թուրքերը վրա հասան և կոտորեցին ուշ մնացած փախչողներին։ Ապստամբության ամենաթունդ ժամանակը հուլիսի 25-ի գիշերն էր, երբ Գանձակի փողոցներում կանոնավոր կռիվ սկսվեց ապստամբների և ռուսաց փոքրիկ զորաբաժնի հետ, որ չկարողանալով դիմադրել հարձակումներին, թողեց բոլոր պետական ծանրոցները և դիվանատների գործերն ու ինքն էլ փախավ Թիֆլիսի ճանապարհով։ Ամիրխան սարդարը գրավեց Գանձակը և նրա մոտ գտնվող գերմանական հարուստ Ելենենդորֆ գաղութը կողոպուտի ենթարկեց։ Հայերն այդ ծանր օրերին շատ օգնություններ հասցրին ռուսներին և մանավանդ գերմանացիներին։ Նրանք էին, որ քաղաքի մեջ, իրենց տներում թաքցրին Ելենենդորֆի բոլոր բնակիչներին։ Գանձակի անկումն ահագին տպավորություն թողեց շրջաններում, և ահա այդ դեպքի հետևանքով ապստամբվում էր և Շամշադինի թուրք ազգաբնակչությունը։ Այսպիսով Աբաս Միրզայի առջև հետզհետե ճանապարհ էր բացվում դեպի Թիֆլիս։ Այս մի երկրորդ ուժեղ պատճառ էր դառնում, որ Թիֆլիսի մեջ սաստկանա երկյուղը, թե Աղա Մահմադ խանի ավերումը կարող է կրկնվել նրա եղբոր թոռան ձեռքով։

Գանձակի ճանապարհին, Զագամում, գեներալ Երմոլովը հավաքեց մի փոքրիկ զորաբաժին, որ սկսեց դանդաղորեն մեծանալ զանազան կողմերից այդտեղ ուղարկվող վաշտերով։ Այսպիսով կազմվեց մոտ 2000 հոգուց բաղկացած մի զորախումբ, որի հրամանատարությունը Երմոլովը հանձնում է իշխան Մադաթովին։ Պարսկական արշավանքն սկսվելիս Մադաթովը Ղարաբաղում չէր, նա գնացել էր Պյատիգորսկի հանքային ջրերն՝ իր վերքերը

բռնկելու համար։ Ստանալով Երմոլովից հրաման, նա թողնում է ամեն ինչ և շտապում Թիֆլիս, ուր ստանում է հրաման՝ սկսել արշավողական գործողություններ՝ Գանձակը նորից գրավելու համար։ Միաժամանակ Երմոլովը կազմում է առանձին բանակ՝ Շուշին ազատելու համար։ Ահա այդ ժամանակ էր, որ գեներալ Պասկևիչը գալիս է մասնակցելու պատերազմին կայսերական առանձին լիազորություններով։ Փառասեր և մեծամիտ Երմոլովի համար այս հանգամանքն, ինչպես, չէր կարող ախորժելի լինել։ Նա նկատում է և այս միանգամայն արդարացի կերպով, որ Նիկոլայն իրեն չի հավատում, իր գլխին մի վերահսկիչ է դրել և այս պատճառով կասկածով և ատելությամբ էր վերաբերվում Պասկևիչին։ Բայց վերջինս էլ Երմոլովից պակաս փառամոլ, ինքնահավան և կոպիտ զինվորական չէր։ Իր համար ստորություն կարծելով ծառայել Երմոլովի հրամանատարության տակ, Պասկևիչը առաջին իսկ օրերից որոշում է, որ Երմոլովի հետ ինքը չի կարող միասին ծառայել, ուստի սկսեց աշխատանք գործադրել նրան հեռացնելու և նրա տեղը բռնելու համար։ Այսպիսով կովկասյան ռուս բանակի մեջ կազմվում էին երկու կուսակցություններ, որոնց մեջ ծայր էր տալիս հակամարտությունը, անձնական հաշիվներ մաքրելու համար այնպիսի մի ժամանակ, երբ երկիրն ենթարկված էր թշնամու արշավանքին։ Պասկևիչը հաջողությամբ օգտագործում էր այն ատելությունը, որ ուներ Նիկոլայը Երմոլովի վերաբերմամբ։ Բռնակալ ցարը համարում էր կովկասյան սատրապին կեղծ և խաբեբա մարդ։ Եվ ահա, ավելի եռ բորբոքելով միապետի մեջ այդ թշնամական զգացմունքը, Պասկևիչը վստահ էր, թե կտապալե ոչ միայն Երմոլովին, այլև նրա կողմնակիցներին, որոնց մեջ ամենից շատ աչքի էր ընկնում իշխան Մադաթովը։ Պասկևիչը չէր մոռանում և այն, որ Երմոլովի գործակից է հանդիսանում նաև Ներսես Աշտարակեցին։

Սակայն հեշտ չեղավ Պասկևիչին իսկույն եեթ պայքար սկսելը, որովհետև հենց այդ միջոցին երմոլովյան կուսակցությունը շահում է մի հաղթություն, որ վերականգնում է նրա հեղինակությունը։ Ամիրխան սարդարը տեղեկանալով իշխան Մադաթովի հրամանի տակ հավաքված զորաբաժնի նպատակների մասին, ինքն է սկսում հարձակողական գործողություններ և դուրս գալով Գանձակից, առաջ է խաղում Թիֆլիսի ճանապարհով։ Մադաթովը նույնպես առաջ է գնում, և երկու թշնամի բանակները իրար հանդիպում են Շամքոր գետի վրա։ Այստեղ, սեպտեմբերի 3-ին, հարդարվեց ճակատ, պատրաստվում էր համառ կռիվ։ Մադաթովը խիզախորեն հարձակվեց հինգ անգամ գերազանցող թշնամու վրա, որ չկարողացավ տանել ուժգին բախումը և, կարճ միջոցում դասալիք լինելով, փախավ պատերազմի դաշտից։ Աբաս Միրզայի առաջապահ զորաբանակը ոչնչացված էր, ռուսները ձեռք էին բերել այդ հաղթանակը միանգամայն աննշան կորուստներով։ Շամքորն ահագին տպավորություն էր գործում ամեն տեղ, որովհետև նա բեկման կետն էր պատերազմական գործողությունների մեջ, առաջ էր բերում շատ խոշոր հետևանքներ։ Իշխան Մադաթովի անունը նոր մեծ հռչակ էր ստանում, մանավանդ, պատերազմից ծանր վնասներ կրող հայ ժողովրդի մեջ, որի հիացմունքն արտահայտություն է գտել նաև Աբովյանի «Վերք Հայաստանի» մեջ։

Պասկևիչի համար, ինչպես, բոլորովին ախորժելի չէր ռուսական զենքի այս հաջողությունը։ Մադաթովը, արագ հալածելով թշնամուն, նորից գրավեց Գանձակը։

Աբաս Միրզան լուր առնելով իր առաջավոր զորամասի պարտության մասին, շտապով, սեպտեմբերի 5-ին, վերացնում է Շուշու պաշարումը և, իջնելով դաշտը, շարժվում է դեպի Գանձակ՝ ռուսներին հանդիպելու համար։ Մադաթովը պատրաստվում էր մի նոր պատերազմի, բայց այդ միջոցին Թիֆլիսից նոր զորքերով և շտապ քայլերով Գանձակ եկավ գեներալ Պասկևիչը, որ իր ձեռքն առավ բանակի հրամանատարությունը, և Մադաթովը դարձավ նրա ստորադրյալը։ Սեպտեմբերի 13-ին Գանձակի մոտ տեղի ունեցավ ճակատամարտ, որի մեջ պարսկական առաջին բանակը չարաչար պարտության մատնվեց և շտապ փախուստի դիմեց, այնպես որ մի հինգ օրից հետո նա արդեն Արաքսի մյուս կողմումն էր։ Պասկևիչը հալածում էր այդ ջարդված բանակը, բայց ոչ մի տեղ չկարողացավ հասնել նրան։ Մադաթովը գնաց Շուշի, ուր և ընդունվեց խանդավառությամբ ազգաբնակության կողմից, իբրև մի հերոս, որ ազատել էր ժողովուրդը երկարատև պաշարման սարսափներից։ Այդտեղ Մադաթովին հայտնի դարձավ, որ իր բոլոր գյուղերը քարուքանդ են արել պարսիկները, իսկ նրա մեծ և հարուստ կալվածատիրական տունն Ավետարանոց գյուղում հրդեհված է և ներկայացնում է ավերակների կույտ։ Այսպիսով այդ զարմանալի քաջ և անվախ զինվորականը վերածվել էր իր նախկին դրության, երբ դեռ Ղարաբաղի խանից բռնությամբ և այլ տգեղ արարքներով չէր ստացել գյուղերը և դեռ չէր սկսել ռուս ճորտատեր կալվածատիրոջ տնտեսությունը։ Գրեթե ոչինչ չէր մնացել այդ տնտեսությունից, այնպես որ ավետարանոցեցի իշխանը կարող էր համարվել կամա-ակամա ազատված նախկին մեղքերից։ Սակայն այդ մեղքը Պասկևիչի ձեռքում դառնում էր մի հզոր միջոց նրան կործանելու համար։

Գանձակի հաղթությունից հետո փոխհարաբերությունները Պասկևիչի և Երմոլովի միջև ավելի եռ սաստիկ թշնամական կերպարանք են ընդունում։ Մի կողմից խայթված ինքնասիրություն, մյուս կողմից հաջողականությունից ուռած ինքնասիրություն, որ շարունակ գանգատներ էր ուղարկում Նիկոլային և ավելի ու ավելի գրավում էր նրա սերն ու համակրանքը։ Պասկևիչը շատ հարկավոր էր համարում, որ ինքն իր բանակով անցնի Արաքսը և պատերազմը մտցնի Պարսկաստանի խորքերը։ Սակայն Երմոլովն այս բանը նրան թույլ չէր տալիս։ Ընդհակառակը, նա արձակեց Պասկևիչի բանակը, դատապարտելով իր հակառակորդին անգործության՝ Թիֆլիսում։ Մինչդեռ միաժամանակ նույն Երմոլովն ընդարձակում էր ասպարեզը Մադաթովի գործունեության առաջ։

Աբաս Միրզայի արշավանքն անմարդացրել և անապատացրել էր Ղարաբաղի մեծ մասը։ Ազգաբնակությունը կամ փախել էր լեռները, կամ քշվել-տարվել էր Արաքսի պարսկական ափը։ Տարվա հունձը ոչնչացված էր, զորքերը դժվարությամբ էին պարենավորվում։ Գյուղերի ավերակներն էին փռված այս ու այն կողմերում, վերացել էր նաև ներքին հանգստությունը, բազմաթիվ ավազակային խմբերը ահուդողի մեջ էին պահում ազգաբնակության մնացորդները։ Այս բավական չէր, և Մեհտի Ղուլի խանը շարունակում էր գործակալների միջոցով կոչեր տարածել մահմեդական ազգաբնակության մեջ, հորդորելով նրան չընկճվել, շարունակել ըմբոստական դրությունը, քանի որ, ինչպես հավատացնում էր նա, պարսիկները վերսկսելու են պատերազմը, և նրանց տիրապետության տակ ժողովուրդը պիտի կատարյալ երջանկության մեջ ապրի։ Խանը հորդորում էր առանձնապես թափառական ցեղերին, որ նրանք տեղափոխվեն Պարսկաստան։

Այս չափազանց դժվարին հանգամանքների մեջ Երմոլովն իր հույսը դնում էր դարձյալ եռանդոտ ու անվախ Մադաթովի վրա, որին նորից նշանակում է նախկին խանությունների կառավարիչ։ Եվ Մադաթովը նորից սկսում է գործել, արմատախիլ անել ավազակությունները, ամենքին հպատակեցնել օրեն-

քին։ Սակայն այժմ այլևս դժվար էր այնքան ցնցումներից ու ապստամբական անկարգություններից հետո վերահաստատել նախկին խաղաղությունը, թեև Մաղաթովն այժմ էլ, առաջվա նման, գործ էր տեսնում ասիական անողոք խստությամբ, միահեծան բռնավորի բոլոր զենքերով, որոնց մեջ բացառություն չէր կազմում նաև մահվան պատիժը։ Բացի ներքին անկարգություններից, Ղարաբաղի համար կատարյալ աղետ էին կազմում Պարսկաստանի թափառական ցեղերը (մասնավորապես շահսևանները), որոնք անցնում էին Արաքսը և ասպատակում էին ռուսահպատակ գյուղերը։ Այս գիշատիչներին պատժելու համար Երմոլովը տալիս էր Մաղաթովին զորքեր և ուղարկում էր նրան Արաքսի մյուս կողմը, Ղարադաղի խանությունը՝ այնտեղ ռուսական տիրապետությունը տարածելու համար։

Սկսելով այդ արշավանքը 1826-ի վերջին, ձմեռվա դաժան ցրտերի մեջ, Մաղաթովը արագորեն և ամենայն հաջողությամբ կատարում էր Երմոլովի հանձնարարությունը, հալածում էր շահսևաններին, քայքայում նրանց թափառական տնտեսությունը, ահագին քանակությամբ տավար, ոչխար, ուղտեր և այլ տնային անասուններ խլելով։ Ղարադաղի խանը և պարսիկ իշխանությունները հանկարծակիի եկած փախչում էին, և ամբողջ երկիրը, առանց որևէ դիմադրություն ցույց տալու, անձնատուր էր լինում, հավատարիմ հպատակության երդում էր բերում ռուսաց կառավարությանը։ Իր քաջություններով հռչակված գեներալի արշավանքը հուզմունք էր տարածում և Թավրիզ քաղաքում այնքան, որ Աբաս Միրզան էլ պատրաստվում էր հեռանալ իր մայրաքաղաքից։ Սակայն Մաղաթովը այդքան հեռու չգնաց, այլ նույնպես արագ վերադարձավ ռուսաց սահմանները և գնաց Թիֆլիս՝ իր «փայլուն» հաջողության մասին Երմոլովին հաշիվ տալու։ Սակայն ոչ նա, ոչ էլ Երմոլովը չգիտեին, որ անդրարաքսյան քաջարի արշավանքը, ոչ միայն մի առանձին պարծանք չպիտի համարվի նրանց համար, այլ ուղղակի պիտի երկուսին էլ խորտակելու մի նոր միջոց դառնա Պասկևիչի համար։ Սա արդեն բազմաթիվ գանգատներ էր գրել Նիկոլայ կայսրին այն պատճառով, որ Երմոլովը թույլ չտվեց իրեն արշավել Պարսկաստան Ղարաբաղի վրայով։ Այժմ նա, ցույց տալով Մաղաթովի արշավանքը, հասկացնում էր ցարին, թե Երմոլովն իր դեմ անձնական հաշիվներ ուներ և թույլ չտվեց իրեն, իրեն փոխեց Մաղաթովի, ինչպես իր կողմնակցի հետ։

Նիկոլայն այլևս չկարողացավ տանել իր ատած մարդու արարքները և Թիֆլիս ուղարկեց ընդհանուր սպայակույտի պետ Դիբիչին՝ մանրամասն քննություններ կատարելու համար։ Թե ինչ պիտի դուրս գար այդ ցարական «արդարադատությունից», կարելի է եզրակացնել այն հանգամանքից, որ Դիբիչն այս գլխից տանում էր իր հետ լիազորություն՝ հեռացնելու Երմոլովին պաշտոնից։ 1827-ի փետրվարին էր, որ ցարական քննիչը Թիֆլիս հասնելով, անմիջապես, նույնիսկ առանց իր համար պատրաստած բնակարանը մտնելու, գնում է Երմոլովի մոտ, նրան հարցափորձի ենթարկում։ Նույն այդ միջոցին Երմոլովը, իբրև գլխավոր հրամանատար, զբաղված էր պարսկական պատերազմը շարունակելու ծրագիրը մշակելով։ Որոշվում էր արշավանք սկսել երեք ուղղությամբ։ Ձախ թևը հանձնվում էր իշխան Մաղաթովին, որ պիտի առաջ խաղար Ղարաբաղից։ Մի առանձին զորաբաժին պիտի մտներ Երևանի խանության մեջ, գրավեր Էջմիածինը, որ դառնում էր գլխավոր հենակետ, ապա և Երևանը։ Իսկ գլխավոր բանակը պիտի ուղղակի դիմեր Թավրիզ՝ այն գրավելու համար։ Դիբիչը հավանություն տալով այդ ծրագրին, աշխատում էր հաշտեցնել Պասկևիչին Երմոլովի հետ, որպեսզի վերջինս մնա գլխավոր հրամանատար, իսկ առաջինը Թավրիզ արշավող բանակի գլուխն

անցնի, բայց այս բանն անհնարին եղավ, և Պասկևիչը կտրականապես հայտարարեց Դիբիչին, թե ինքը կթողնի ամեն ինչ և կվերադառնա Ռուսաստան, բայց Երմոլովի հետ չի ծառայի։ Արշավանքը պիտի սկսվեր ապրիլ ամսին, ուշացնել այլևս չէր կարելի, իսկ Նիկոլայը գրում էր Դիբիչին, որ նա չխաբվի ստախոս և կեղծավոր Երմոլովից։ Եվ ահա կովկասյան հպարտ ու ամբարտավան տնօրենը անփառունակ կերպով հեռացվում էր պաշտոնից՝ իր տեղը մի ուրիշ մեծամիտ ու ամբարտավան կառավարիչին, այն է՝ Պասկևիչին տալու համար։

Հասնելով իր նպատակին, Պասկևիչը նախ և առաջ շտապում է հեռացնել Երմոլովի կողմնակից գեներալներին և ամենից առաջ, իհարկե, Մաղաթովին։ Սա արդեն սկսել էր արշավանքն իրեն հատուկ քաջությամբ, բայց փորձված ու ապացուցված քաջությունն էլ մի այդպիսի պատերազմական ժամանակում չէր կարողանում ազատել մեկին ցարական երես առած չինովնիկի քմահաճույքներից և ավելի ևս մանր քինախնդրություններից։ Մաղաթովը հեռացվեց Ղարաբաղից, ուր ժողովրդական հերոս էր դարձել և ապրում էր Թիֆլիսում մենակության և անգործության մատնված։ Պասկևիչի մանր կրքերը հալածեցին նրան երկար ժամանակ, անխնա, մինչև որ գերեզման իջեցրին նրան։

Մենք փոքր ինչ երկար կանգ առանք այս երմոլովա-պասկևիչյան պայքարի վրա, որովհետև նա վերին աստիճանի պայծառ կերպով բնորոշում է ցարական այն բյուրոկրատիան, որի ձեռքն էր հանձնվում կովկասյան բազմաթիվ ազգերի ճակատագիրը։ Բախտի բերմունքով պատմության սեփականություն են դարձել այս փաստերը, և պատմությունը չի վարանի ասելու, որ այսպես էր և ուրիշ կերպ չէր կարող լինել, որովհետև այսպես էր ցարական սիստեմը։ Տեսեք, ինքը ցարն է այս բյուրոկրատական պայքարի կենտրոնում, և ասացեք, արդյոք նա իր կրքերով ու քմահաճույքներով, իր ինտրիգներով շա՞տ է տարբերվում երմոլովներից, պասկևիչներից, մաղաթովներից։ Բոլորն էլ մի խմորից էին, բոլորն էլ արժանի էին իրար։

6. Ներսեսի եռանդը։ Պասկևիչն առժամանակ մոռացավ, որ Վրաստանի հայոց առաջնորդն էլ Երմոլովի մարդկանցից էր։ Զմոռանալ չէր կարելի, քանի որ պատերազմական գործողությունները կենտրոնանալու էին Երևանի խանության մեջ, ուր այս հոգևորականն ահագին ազդեցություն ուներ ոչ միայն հայերի, այլև թուրքերի, քրդերի և ուրիշ ցեղերի վրա։ Որ Ներսեսը դեռ հարկավոր էր ցարական քաղաքականությանը, այս զգում էին և Պետերբուրգի բարձր կառավարական շրջանները։ Թեև Երմոլովն արդեն կասկածելի և անհավատարիմ էր հայտարարել հայ ժողովուրդը Նիկոլայի առջև, բայց Պասկևիչն էլ իր կողմից գրում էր նրան, որ Շուշին պաշտպանողները հայերն են եղել։ Այս փաստը ինքը Երմոլովն էլ չէր կարողացել ուրանալ եթե ոչ ցարի, գոնե հենց այդ ժողովրդի առջև։ Շուշու պաշարման վերացումից հետո նա հրամանագրում էր Մաղաթովին՝ ցույց տալ օգնություն այն գյուղական համայնքներին, որոնք մասնակցել էին Շուշու պաշտպանությանը։ Իբրև վարձատրություն՝ նա կարգադրում էր, որ այդ համայնքները հանվեն թուրք կալվածատերերի իշխանության տակից և դառնան արքունական գյուղացիներ, մի հանգամանք, որ վկայում էր, թե ռուսական ճորտատեր բյուրոկրատիայի համար էլ շատ պարզ էր, որ մասնավոր կալվածատիրությունը իսկապես մի պատիժ է աշխատավոր գյուղացիության համար։

Պետերբուրգի կառավարությունն էլ պատշաճ համարեց մի որևէ բանով խրախուսել հայերին, որ նրանք շարունակեն իրենց աջակցությունը ռուսաց զորքերին։ Եվ ահա 1827 թ. փետրվարի 2-ին Նիկոլայ կայսրը մի հրովարտակ է ուղղում Ներսես Աշտարակեցուն, որի մեջ ասում էր, թե պարսկական

պատերազմի սկզբից հայերը ցույց տվին, թե գիտեն գնահատել այն հոգածությունները, որ ռուսաց կառավարությունը ունի նրանց վերաբերմամբ, ինչպես նաև համեմատել իրենց դրությունն իրենց այն ազգակիցների դրության հետ, որոնք ապրում են հարևան մահմեդական պետությունների մեջ. Այս պատճառով էլ ցարը հանձնարարում էր հայտնել հայ ժողովրդին իր կատարյալ բարեհաճությունը և հավաստիացնել նրանց իր կայսերական խոստումով, որ որքան ժամանակ շարունակվի նրանց հավատարմությունը դեպի ռուսական գահը, այնքան ժամանակ էլ նա անփոփոխ պիտի պահե իր ողորմությունը այդ ազգի վրա։ Միաժամանակ կայսրն իր «ողորմած բարեհաճությունն» էր հայտնում անձամբ Ներսեսին, ընդունելով, որ նրա հորդորներով է հայ ժողովուրդը ցույց տվել այդքան հավատարմություն։

Հրովարտակը Ներսեսին հանձնեց կոմս Դիբիչը, որ և գրում էր Նիկոլային, թե որքան խոր ազդեցություն արավ հայ հոգևորականի վրա ցարական ուշադրությունը։ Այս ճիշտ էր։ Շատ հաճելի կերպով շոյված էր Ներսեսի անսահման փառասիրությունը և նա, ոգևորության ծայրին հասած՝ մի շարք խոշոր ցույց էր առաջ քաշում իր հավատարմական ջերմեռանդությունն ավելի ևս շեշտելու համար։ Առաջ ու առաջ նա հրապարակում էր իր դպրոցի տպարանից առանձին բրոշյուրով Նիկոլայի հրովարտակը և նրա հայերեն թարգմանությունը, կցելով նաև իր ներբողական ճառը, այդ տետրակի ճակատին դնում էր այսպիսի վերնագիր. «Հուշակ ողորմության ինքնակալի և կայսեր ամենայն ռուսաց Նիկողայոսի առաջնորդ առ ազգս հայոց որ ի Վրաստան»։ Այս բրոշյուրից հարյուրավոր օրինակներ նա ցրեց ռուսական Անդրկովկասի հայության մեջ, որպեսզի ամեն տեղ «ավետարանվի», ինչպես այս շողոքորթված տողերն էր գրում, թե ինչպես ցարական բռնակալը իր բերանի մի անկյունով ժպտի նման մի բան է ուղղել հայ ժողովրդին։ Երկրորդ՝ նույն այդ հրովարտակը մեծ հանդիսավորությամբ կարդացվում էր Վանքի մայր եկեղեցում։ Երրորդ՝ Ներսեսը վճռում էր անձամբ առաջնորդել ռուսաց արշավող բանակի առաջապահ մասերը դեպի Էջմիածին։ Եվ չորրորդ՝ որ ամենից գլխավորն էր, Ներսեսը ձեռնարկում էր հայ կամավորական զորք կազմակերպելու։

Այս կամավորական շարժումը ձեռնարկվում էր մեծ աղմուկով, ինչպես նույնանման գործը 1914-ի համաշխարհային պատերազմի ժամանակ։ Ռուսաց կառավարությունը, իհարկե, հաճությամբ թույլատրում էր կազմել մի քանի կամավորական գումարտակներ հայերից, իր վրա վերցնելով բոլոր ծախսերը։ Յուրաքանչյուր գումարտակը բաղկացած պիտի լիներ 800 զինվորից։ Դրանցից առաջինի դեռ կեսն էլ չէր հավաքվել, երբ Ներսեսը ձի հեծած զորահանդես կազմեց Թիֆլիսի հրապարակներից մեկում։ Երբ կամավորների շարքերն երաժշտությամբ անցնում էին ծերունի եպիսկոպոսի առջևով, սա, ինչպես վայել է իսկական զորապետին, կանչում էր. «Ապրիք, քաջեր, շնորհակալ եմ»։ Այս խոսքերին ոչ միայն զինվորները, այլև հանդեսին նայելու եկած ժողովուրդը պատասխանում էին «կեցցե՜» և «ուռա՜» աղաղակներով։ Ներսեսը չկարողացավ սպասել մինչև որ բոլորովին պատրաստված կլինի իր այս զորքը։ Ապրիլի 2-ին գեներալ Բենկենդորֆի զորաբաժինը բաց է անում արշավանքը դեպի Երևան, և Ներսեսը գնում է նրա հետ։ Բայց նրա ձեռնարկությունը շարունակեցին նրա օգնականներն ու կողմնակիցները Թիֆլիսի զինվորական նահանգապետ Սիպյագինի ղեկավարությամբ։ Սրանք էին, որ մի նոր հանդես սարքեցին հայ կամավորների համար։ Վանքի բակում հայ հոգևորականությունն օրհնեց գնդի դրոշակը։ Ներսիսյան դպրոցի տեսուչ Ալամդարյան քահանան այս առիթով արտասանած ճառի մեջ ասում

էր, թե այսօր հայ ժողովուրդը ետ է ստանում այն, ինչ կորցրել էր հինգ հարյուր տարի առաջ, երբ զրկվեց իր թագավորությունից և, մի անկախ ու ազատ ազգի դիրքից ընկնելով՝ մատնվեց գերության և ստրկության։ Ահա կազմակերպվում է հայկական զորք, որ հայ ժողովրդի պահապանը պիտի հանդիսանա՝ աստուծո և նրա օրհնյալ կայսր Նիկոլայի հովանավորության տակ։

Հայ առաջնորդվող խավերի տրամադրությունը շատ էր հրահրված։ Եվ սակայն, ի՞նչ իրական բովանդակություն կար այդ բոլորի մեջ։ 1827-ի կամավորական շարժման մասին, ճիշտ այնպես, ինչպես 1914-ի շարժման մասին, կազմվեցին առասպելներ։ Վերջին համաշխարհային պատերազմի ժամանակ օսմանյան կառավարությունը մի ամբողջ ամբաստանագիր հրատարակեց հայ ժողովրդի դեմ և նրա մեջ ասում էր, թե Ներսեսի այս կամավոր բանակը բաղկացած էր մի քանի տասնյակ հազար հայ զինվորներից։ Եվ սակայն, երբ մենք դիմում ենք այդ կամավոր զորքի թվական կազմի ճշտման, մեր առջև կանգնում են մի երկու խղճուկ թվանշաններ։ Կամավոր հավաքված հայերը չկարողացան նույնիսկ և մի գումարտակի համար սահմանված թիվը լրացնել։ Սկզբներում միայն 240 հոգի կային հրացանի տակ, վերջում այդ թիվը հասավ, ինչպես ասում են, 600-ի։ Տեղեկություններ կան նաև, որ ինքը Թիֆլիսը այդ քանակության մի աննշան մասն էր տվել, և կամավոր գրվել էին գլխավորապես Թիֆլիսում ապրող օտարերկրացի հայերը։ Միայն հետո, երբ այդ փոքրիկ գունդը ուղևորվեց պատերազմի դաշտ, ճանապարհին նրան միացան և հայ գյուղացիներ, հասցնելով նրա թիվը մոտ հազարի։

Այսքան փքվում, ուռցվում էր մի բոլորովին համեստ ձեռնարկություն և այս այն պատճառով, որպեսզի երազական ակնկալություններ ստեղծվեն դեռ շատ սահմանափակ շրջաններ կազմող «ազգասեր» առաջնորդների փառասիրական զգացմունքները շոյելու համար։ Գործողն իսկապես նույն այն անվերապահ ռուսամոլությունն էր, որ այնքան ծավալուն դարձավ 19-րդ դարի սկզբից, և որին մենք տվինք «դանիելականություն» անունը։ Առաջին անգամն էր, որ այդ հոսանքին հայ գաղութում տրվում էր ազգային ռոմանտիզմի փայլուն կերպարանքը, ոչ այնպիսին, ինչ մենք տեսանք Հնդկաստանի և Պետերբուրգի հայ գաղութներում, այսինքն, ոչ թե թղթային, լոկ հերյուրված բառերից ու խնդրվածքներից։ Թիֆլիսի հայ գաղութի արածը բոլորովին այլ տեսակ գործ էր, այն է՝ մեծ աղմուկով կազմված զինվորական փոքրիկ ուժ, որ ուղարկվում էր բուն երկիր՝ այնտեղ մեծ գործեր իրականացնելու համար։ Այսպիսի գործեր Թիֆլիսի գաղութը հետո էլ պիտի կատարեր՝ հայ ժողովրդին նոր ճակատագրական ուղղություններ տալու համար։ Իր այս առաքելությունը Թիֆլիսի հայ գաղութը միշտ կարողացել է զարդարել ամբոխային միտքը հափշտակող առասպելներով։ 1827-ին էր ծնվում այն առասպելը, թե Նիկոլայը խոստացել է վերականգնել հայ ժողովրդի քաղաքական անկախությունը, թե Ներսեսը նրա հետ նույնիսկ պայմանագիր է կնքել այս ուղղությամբ։ Այս առասպելն ապրեց շատ երկար, ժողովրդականություն ուներ, մանավանդ, արևմտյան հայության մեջ, ուր ունի նույնիսկ և գրավոր հիշատակարաններ։ Մինչև վերջին ժամանակները պատմում էր միամիտ ավանդությունը, թե Ներսեսն այդ անկախության պայմանագիրն իր ծոցում պահում էր մինչև իր կյանքի վերջին օրերը և միայն նրա մահից հետո էր, որ մի «դավաճան» հոգևորական, Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյան, գողացավ այդ թուղթը և ծախեց ռուսներին։ Կարիք չկա անգամ հարց տալու, թե ինչպես կարող էր կազմվել այսպիսի մի անհեթեթ առասպել։ Չկա այդպիսի կա-

րից, մանավանդ մեզ, այսօրվա մարդկանցս համար, որ տեսել ենք հայ կամավորական շարժումը 1914 թվին։ Այն ժամանակ չկար Նիկոլայ կայսր, առաջինի թոռնորդին։ Թիֆլիսի գաղութը հեղինակելով հայ կամավորական շարժում 1914-ին, նույնպես զարդարում էր այդ ձեռնարկությունը շշմեցնող առասպելներով, որոնցից իր անհեթեթությամբ նշանավոր է մանավանդ այն, որ Նիկոլայ 2-րդն իբր թե դիմում է ուղղել թուրքահայերին, խոստանալով վերականգնել նրանց քաղաքական անկախությունը։ Բանն այնտեղ հասավ, որ արտասահմանի լրագրներում նույնիսկ տպվեց եղջերուաքաշ դիմումի բնագիրը։ Բացատրել այս երևույթները, որոնք իրարից բաժանված են 87 տարիների տարածությամբ, կարելի է աչքի առջև բերելով մեր կյանքի երկու խոշոր բացասական կողմերը. մեկը՝ հասարակական կազմակերպված գիտակցության բացակայությունը, մյուսն այն, որ հայ ժողովրդի դիվանագիտական առաջնորդները հայ հոգևորականներն էին, իսկ այս դասակարգի դիվանագիտական մենաշնորհը մի դժբախտություն է եղել հայ ժողովրդի համար՝ սկսած Հայաստանում քրիստոնեություն մտցնելու հենց առաջին օրից։

Ահա այսպիսի մի դիվանագիտական ինքնակամ և ինքնագլուխ առաջնորդ էր և Ներսեսը։ Եվ սակայն շատ դեպքեր գիտենք, երբ հայ ժողովրդի ճակատագրի այդ ինքնակալ տնօրինողը սառն հաշվով դատողի տեղ հանդես է գալիս իբրև սանտիմենտալ, երազկոտ մի բանաստեղծ, իբրև ջղայնոտ մի ռոմանտիկ։ Ինչպես տեսանք, նա առաջապահ զորքերի հետ գնաց դեպի Արարատյան դաշտը։ Նա ինքն է, որ նկարագրել է իշխան Վորոնցովին գրած իր նամակներից մեկի մեջ հետևյալ վարմունքը։ «Իմ հայրը,— ասում է նա,— մեռնելիս ավանդ է թողել, որ երբ ռուսները գան Հայաստանն ազատելու, այդ մասին ես ավետիս տամ նրա գերեզմանին։ Եվ ահա ռուսական զորքը մըտնում է Աշտարակ։ Ես խնդրեցի հայտնի գեներալ Կրասովսկուն մի քիչ տեղ հետևել ինձ և տարա նրան իմ հոր գերեզմանի մոտ և պատմելով, թե ինչ կտակ է նա թողել ինձ, դիմեցի նրա դագաղին բարբառելով. «Հայր, սիրելի իմ հայր, կատարվել է քո մարգարեությունը, քո ակնկալությունն արդարացավ, մեզ մոտ է եկել ռուսական հովանավորությունը. լսիր, ահա նրա հաղթական զորքը փայլուն զենքով, փողերի և ծնծղաների աղմուկի տակ, անցնում է մեր բնակարաններով, մտնում է թշնամուն և խորտակում է նրա անսանձ հպարտությունը նրա դռների մոտ։ Լսիր, հայր, լսիր քո որդիների բարօրությունը, լսիր և թող հանգստանա քո աճյունը։ Արտասուքները թույլ չտվին, որ շարունակեմ խոսքս, և քաջարի ու զգայուն գեներալ Կրասովսկին, հուզված մինչև հոգու խորքը, հազիվ կարողացավ հեռացնել ինձ էլ իր համար այդքան անսպասելի տեսարանից»։

Տեսարանը, ճիշտ որ, անսպասելի պիտի լիներ ռուս գեներալի համար և պիտի ապացուցաներ նախ և առաջ, թե ոգևորությունն ինչ երեխայական արարողություններ է կատարել տալիս մարդուն, որ առաջինն ու միակն էր ամբողջ հայ ժողովրդի մեջ իբրև քաղաքական միտք։ Նիկոլայի հպատակը դառնալու «բախտի» համար այդքան լաց, այդքան թատրոնական զեղումներ։ Չէր հասկանում սարկամիտ դանիելականության այդ սյունը, որ Նիկոլայը գնում էր դեպի Արաքս իր սեփական կամեցողությամբ, առանց նրա աղիողորմ լացի, առանց նրա չոքեչոք և գետնամած պաղատանքների։ Չէր հասկանում, որ ինքը նույնիսկ եթե ուզենար էլ, չէր կարող չընդունել Նիկոլայի հպատակությունը, որ նրան նույնպես կհարկադրեին ընդունել այդ հպատակությունը, ինչպես հարկադրում էին թուրքին, քրդին, դաղստանցուն։

Ապրիլի 13-ին կատարվում է Ներսեսի վաղեմի իղձը։ Գեներալ Բենկենդորֆի զորաբաժինը գրավում է Էջմիածինը։ Նրա և Էջմիածնի վարդապետնե-

րից մի մասի ուրախությունը մեծ էր։ Բայց ի՞նչ էր ժողովրդի տրամադրությունը։ Ժողովուրդ գրեթե բոլորովին չէր էլ մնացել, որ տրամադրություն արտահայտեր։ Պարսիկներն իրենց հին սովորությամբ Արարատյան դաշտի ազգաբնակությունը, հայ թե թուրք, քշել տարել էին Արաքսի մյուս ափը, երբ ռուսներն իրենց գրաված տեղերում կատարյալ անապատ գտնեին։ Եվ իրավ, քարուքանդ եղած երկրում ռուսական զորքերը ոչինչ չէին գտնում, այնպես որ պարեն նրանց համար ուղարկվում էր Թիֆլիսից։ Գեներալ Պասկևիչը հանձնարարելով Բենկենդորֆին պաշարել և վերցնել Սարդարաբադի բերդը, որ գտնվում էր Էջմիածնից ոչ հեռու, այլև Երևանը, ինքն ամառվա սկզբին արշավանք սկսեց դեպի Նախիջևան, այնտեղից էլ դեպի Թավրիզ գնալու համար։ Բենկենդորֆը չկարողացավ վերցնել Սարդարաբադը. ուստի պաշարեց Երևանը, բայց դարձյալ առանց հաջողության։ Պասկևիչը նրա զորաբաժինը կանչեց իր մոտ, իսկ փոխարենը Երևանի տակ ուղարկեց գեներալ Կրասովսկու զորաբաժինը։ Սակայն սա էլ չկարողացավ բան հաջողեցնել։ Կրկնվում էր այն, ինչ տեղի էր ունեցել Ցիցիանովի պաշարման ժամանակ։ Արարատյան դաշտի տոթագին ու վատառողջ ամառը քայքայիչ ազդեցություն էր անում ռուսների վրա, որոնց շարքերն անընդհատ նոսրանում էին, տալով ահագին քանակությամբ հիվանդներ։ Դժոխային կացություն էր ստեղծվել և բերդի ներսում։ Սարդարն այնտեղ էր հավաքել շրջակայքի թուրք և հայ ազգաբնակության մի խոշոր մասը, որ ավելանալով քաղաքի բուն ազգաբնակության վրա, բռնել էր բոլոր ազատ տեղերը և այսպիսով բերդի պարիսպների մեջ եղած անձուկ տարածությունն ամառվա անտանելի տոթերի մեջ դառնում էր մի խեղդոց, ուր հեղձամղձուկ էր դառնում այդ մեծ բազմությունը։ Եվ ռուսական զորքն այս անգամ էլ, երրորդ անգամը, հաղթահարված բնության դաժան պայմաններից, ստիպված է լինում հեռանալ Երևանի պարիսպների տակից, մեծ ուրախություն պատճառելով ներսում պաշարվածներին։ Գեներալ Կրասովսկին անցավ Էջմիածին, ուր գտնվում էր փոքրիկ տորդապահ զորք, բաղկացած ռուսներից և հայ կամավոր գնդի մի մասից։ Այդտեղ էր գտնվում և զինվորական հիվանդանոցը, ուր պառկած էին մոտ 200 հիվանդ զինվորներ։ Մի քանի օրից հետո Կրասովսկին իր բանակով բարձրացավ Ապարանի լեռնակողմը, այնտեղ որոնելով փրկություն դաշտի շոգերից, որոնք հասնում էին 40 աստիճանի։

Էջմիածնի վանքը, բացի զինվորական կայան լինելուց, դարձել էր և մի տեսակ վարչական կենտրոն, ուր քաղաքացիական իշխանության գործառնությունները, Պասկևիչի կարգադրությամբ, իր ձեռքն էր առել Ներսես Աշտարակեցին։ Այս հանձնարարությունը Պասկևիչն արել էր այն դիտավորությամբ, որ եռանդոտ ու մոլեգին ցարապաշտ հայ հոգևորականություն իր ամբողջ հեղինակությունը գործ դնի Արարատյան երկրում ռուսաց զորքերի համար պաշարներ գտնելու նպատակով։ Բայց Ներսեսը միայն այդ անհրաժեշտության համար չէր աշխատում։ Դեռ ձմեռը նա անթիվ նամակներ էր գրել բոլոր կողմերի հայերին, հրավիրելով, որ ամենքը զենք վերցնեն և միանան ռուսներին՝ պարսիկների դեմ կռվելու համար։ Այժմ նա իբրև ռուս նվաճողականության գործակալ գրավոր պրոպագանդ էր մղում շրջակա մահմեդական ցեղերի մեջ, հորդորելով նրանց անցնել ռուսների կողմը։ Կար մի ավազակաբարո ցեղ, ղարափափախ անունով, որի ցեղապետն էր Հացի խանը։ Սա անդադար արշավանքներ էր գործում, հարձակվում էր ճանապարհների վրա և մեծ վնասներ էր տալիս ռուսներին, խլելով և ոչնչացնելով պաշարեղեն փոխադրող սայլերի և բեռնակիր կենդանիների կարավանները։ Այս իսկ Հացի խանին Ներսեսի գրած մի նամակն է գտնվում մեր ձեռքին, և նրանից մենք իմանում ենք, թե

ինչպես գիտեր Ներսեսը բարձրացնել ռուսական գործը, անխուսափելի և ճակատագրական ներկայացնելով այն, որ ամենքի վրա պիտի տարածվի ռուսաց ցարի երկաթե իշխանությունը։ Իբրև բարեկամ՝ Ներսեսը հավատացնում էր խանին, թե ռուսներն այլևս չպիտի ետ դառնան Երևանից, թե Երևանն այսուհետև նույնպիսի ռուսական քաղաք է, ինչպես Պետերբուրգը կամ Աստրախանը, թե այդքանով չպիտի բավականանան ռուսները, այլ 25—30 հազար զորքով պիտի մտնեն Պարսկաստան, գրավեն ամբողջ Ադրբեջանը մինչև Թեհրան։ Այս պատճառով նա հորդորում էր խանին անցնել ռուսների կողմը և հավաստիացնում էր, որ եթե նա մի փոքրիկ զորաբաժնով գա Էջմիածին ռուս հրամանատարին ներկայանալու համար, ոչ միայն ոչինչ վնաս չի ստանա, այլ կվարձատրվի ռուսաց կառավարության կողմից։

Ինչպես ցույց են տալիս փաստերը, Ներսեսի այս հորդորները հաջողությամբ չպսակվեցին։ Բայց, այս, իհարկե, մի պատճառ չէր, որ նա պակասեցներ իր գործակալական եռանդը հօգուտ ռուսական հաջողությունների։

7. Երևանի գրավումը։ Դեռ 1827-ի ձմեռնամուտին, մինչդեռ պարսկական արշավանքը ծրագրային դրության մեջ էր, Ներսեսը բանակցություններ սկսեց Երևանի առաջավոր հայերի հետ, որոնցից խորհուրդներ էր հարցնում։ Այդ հայերից մեկը մանավանդ, քալանթար (քաղաքապետ) Բարսեղը գրում էր Ներսեսին, որ նա ետ կանգնեցնե ռուսներին ամառը Երևանի վրա արշավելուց, որովհետև այդ դեպքում, ասում էր, պարսիկները կքշեն, կհեռացնեն ժողովուրդը և այս շատ կլինի, մանավանդ հայերի համար, որոնք ամբողջովին կգերեվարվեն։ Ամենից լավն այն կլիներ, որ ռուսաց բանակն իր առաջխաղացությունն սկսեր Ղարաբաղից ուղիղ դեպի Նախիջևան։ Այստեղից գլխավոր ուժերը կարելի էր ուղարկել Թավրիզի վրա, իսկ մի զորաբաժինն էլ Երևանի վրա։ Եթե այս ծրագրով անհնարին լիներ գործել, այն ժամանակ քալանթար Բարսեղը խորհուրդ էր տալիս, որ ռուսներն արշավեն Երևանի վրա սեպտեմբերի 20-ից հետո, երբ արտերն ու այգիները քաղված կլինեն։ Պասկևիչն ինքն էլ գտնում էր, որ գերադասելի է Ղարաբաղից սկսել արշավանքը։ Բայց որովհետև այնտեղ ոչինչ պատրաստություն չէր տեսնված բանակի պարենավորման համար, ուստի հարկավոր եղավ ընտրել Երևանի ճանապարհը։ Եվ ահա զորքերն ստիպված էին մեծամեծ դժվարություններով անցնել Շարուրի տոթակեզ դաշտերով՝ հասնելու համար Նախիջևան, ուր կլիմայական պայմանները շարունակում էին նույնքան վատ լինել։ Թիֆլիսից Երևան տանող ճանապարհն այն առավելությունն ուներ, որ թույլ էր տալիս, թեև դարձյալ մեծ դժվարություններով, տանել խոշոր պաշարողական թնդանոթները, որոնց էր վերապահվում վճռական դերն այս պատերազմի մեջ։

Պասկևիչի զորքերը գրավում են, առանց որևէ դիմադրության հանդիպելու, Նախիջևանը, բայց դրա փոխարեն ստիպված են լինում պաշարել 10 վերստ հեռու գտնվող Աբասաբադ բերդը, որ իր անունով կառուցել էր Աբաս Միրզան, հետևելով անգլիացիների խորհրդին և գործածելով այդ շինության համար Աստապատ հայ գյուղի եկեղեցիների և հին բերդի քարերը։ Շահզադեն շտապում է իր բերդի օգնության, բայց ռուսներն անցնելով Արաքսը Ջիվանբուլաղի պատերազմում հաղթում են նրան, որից հետո Աբասաբադն էլ չի դիմանում և անձնատուր է լինում ռուսներին։ Սակայն հուլիսյան տոթերն այն աստիճան ավերիչ ներգործություն են ունենում ռուս զինվորների առողջական դրության վրա, որ Պասկևիչը ստիպված է լինում հետաձգել իր արշավանքը դեպի Թավրիզ և քաշում է իր բանակը Ղարաբաղի լեռների լանջերը՝ նրան հանգստություն տալու և կազդուրելու համար։

Ժամանակավոր հանդարտություն է զգացվում, և այս հանգամանքից

շտապում է օգտվել Աբաս Միրզան։ Հանկարծակի նա անցնում է Արաքսի ձախ ափը և բանակ է դնում Օշական գյուղի շրջակայքում։ Նրա ծրագիրն է վերցնել Էջմիածինը, արագ շարժվել Թիֆլիսի ճանապարհով և այդպիսով ստիպել Պասկևիչին հեռանել իրեն, թողնելով Թավրիզի վրա արշավելու միտքը։ Պարսից թագաժառանգը սնուցանում էր իր մեջ իղձ՝ գրավելու Թիֆլիսը և այնտեղից Պարսկաստան վերադառնալու Գանձակի և Ղարաբաղի վրայով։ Էջմիածինը պաշարվում է և ռմբակոծության ենթարկվում, բայց ռումբերը վանքին չեն խփվում, այլ միայն արտաքին պարիսպներին։ Պարսից հրամանատարը պահանջում է անձնատրություն, բայց այս միահամուռ մերժվում է զորքի հրամանատարի և Ներսեսի կողմից։ Ներսեսն արդեն իմաց էր տվել իր բարեկամ գեներալ Կրասովսկուն, որ, ինչպես գիտենք, բանակ դրած ուներ Ապարանի լեռնակողմում և խնդրել էր նրա օգնությունը, նկարագրելով, թե ինչ վտանգավոր դրության մեջ է գտնվում վանքը։ Այդ դրության լավ իրազեկ էր և ինքը ռուս գեներալը, որովհետև մի քանի օր էր, ինչ Էջմիածնի կողմից լսվում էր թնդանոթաձգություն։ Կրասովսկին վճռեց, թե վանքը չի կարելի թողնել այդ դրության մեջ, թե նրան պետք է ազատել և, վերցնելով իր բանակից մոտ 2500 հետևակ և թե ձիավոր զորքեր, օգոստոսի 13-ի վաղ առավոտյան ճանապարհ ընկավ դեպի Էջմիածին։ Օշականի մոտ նրա զորամասը շրջապատեց Աբաս Միրզայի մեծ բանակը և սկսվեց անհավասար և կատաղի պատերազմ։ Ռուսները քայլ առ քայլ ճանապարհ էին նվաճում իրենց համար, տալով մեծ զոհեր։ Այդ ժամանակ Ներսեսն Էջմիածնի տաճարում աղոթքներ էր կարդում արտասվելով, որպեսզի երկինքն օգնե ռուսաց «քրիստոսասեր» զորքին։ Ապա բարձրանում էր տաճարի կտուրը և այնտեղից դիտում էր, թե ինչ է կատարվում հյուսիսային կողմերում։ Եվ տեսնում էր, որ Կրասովսկու զորքը ջարդվելով և հալվելով, բայց քաջաբար իջնում էր քարոտ և դժվարին ճանապարհով դեպի դաշտ։ Այստեղ անասելի կերպով տանջված ու հոգնած, ծարավից պապակող զինվորների առջև էր վանքի պղտոր առուն, որ ջրում էր այգիները։ Չկարողանալով այլևս զսպել ծարավը, նրանք ընկնում էին առվի վրա, բայց հենց այդ միջոցին երևում էր պարսկական հեծելազորքը և սկսվում էր նոր կոտորած։ Ի վերջո Կրասովսկին հասնում է վանքը, կորցնելով իր զորաբաժնի կեսը։ Այս մի խոշոր հաջողություն էր, որից սակայն չկարողացավ օգտվել Աբաս Միրզան։ Այս առհասարակ մի անընդունակ զորահրամանատար էր, բավականացավ ստանալով մի քանի հարյուր հատ ռուս զինվորների գլուխներ, որոնց համար փող էր տալիս բերողներին վաղօրոք հայտարարված չափով և, վերացնելով Էջմիածնի պաշարումը, գնաց բանակ դրեց Երևանի հյուսիսային կողմերում, Ալափարս գյուղի մոտ։

Պասկևիչն Օշականի պատերազմի մասին տեղեկություն ստանալուն պես թողնում է Թավրիզ գնալու մտադրությունը և շտապում է Կրասովսկուն օգնության, իսկ Նախիջևանում պահում է մի առաջապահ զորամաս՝ իշխան Էրիստովի հրամանատարության տակ։ Սեպտեմբերի 5-ին հասնելով Էջմիածին, նա սառը վերաբերմունք է ցույց տալիս Ներսեսին՝ համարելով նրան պատճառ 1100—1200 զինվորների կորստյան։ Այս արդեն մի լավ պատրվակ էր այդ մարդուց ազատվելու համար, բայց որովհետև նա դեռ հարկավոր էր պատերազմական գործին, ուստի ամբարիշտ և կռվարար գլխավոր հրամանատարը առժամանակ հանգիստ էր թողնում նրան։ Նույն կերպ նա վարվում էր և Կրասովսկու հետ, որին բացարձակորեն իր դժգոհությունն էր հայտնում, չնայած նրա ցույց տված քաջության, չէր ընդունում Կրասովսկու ինքնարդարացումը, թե վանքը վտանգի մեջ էր և պետք էր ազատել նրան։ Պաս-

կևիչի կարծիքն այն էր, որ կարելի էր կորցնել վանքը՝ զորքեր չկորցնելու համար։

Իսկ Ներսեսն ուշադրություն չդարձնելով գլխավոր հրամանատարի մանր կրքերի և քմահաճույքների վրա, շարունակեց իր ջերմեռանդ ծառայությունը ցարական զորքերին։ Տեսնելով, որ նրանց պարենավորման գործը նորից էլի դժվարանում էր, նա մարդ ուղարկեց Կողբ գյուղը, ուր պարսիկները քշել տարել էին Աշտարակ, Օշական և Փարաքար հայ գյուղերը, զետեղելով նրանց գյուղի շրջականերում նկած կիրճերի մեջ։ Ներսեսն այդ գյուղերի գլխավորներին կանչում էր իր մոտ և հորդորում էր, որ բռնի քշվածները նորից վերադառնան իրենց տեղերը և ռուսաց զորքին տան ցորենի, գարու իրենց շտեմարանները։ Այս միջոցով Պասկևիչի բանակը բավական շոշափելի օգնություն էր ստանում պարենեղենով։ Ռուսական մի զորախումբ գնում է Կողբ, փոխադրում է հացի պաշարները, 500 գլուխ տավար և բերում է իր հետ բռնի տեղահանված գյուղացիներից մի քանի հարյուր տուն։

Այնուհետև Պասկևիչին սպասում էին մի քանի հեշտ, անաշխատ հաջողություններ, որոնք, սակայն, հռչակվեցին իբրև նշանավոր հաղթություններ և Պասկևիչի գլխին թափեցին, ինչպես առատության եղջյուրից, և՛ հարստություն, և՛ փառք, և՛ ցարական հիացմունքի արտահայտություն հանդիսացող պարգևներ։ Առաջին օրինակը տալիս է Սարդարաբադ անունով բերդը՝ էջմիածնից դեպի արևմուտք, շինված Հյուսեին Ղուլի խան սարդարի ձեռքով, մի փոքրիկ և պարզ ասիական կավակերտ ամրոց, որին, սակայն տված էր «անառիկ» հորջորջումը։ Մոտ երկու հազար պարսիկ զինվորներ կային նրա մեջ։ Սարդարի եղբայր Հասան խանը, անուն հանած իբրև քաջարի և դաժան մի ասիացի, գնաց այն պաշտպանելու։ Պասկևիչը պատրաստություններ տեսավ այդ բերդը պաշարելու, ապա և գրոհով վերցնելու համար, թեև շատ լավ տեսնում էր, որ արյունահեղության կարիք չկար, և ամեն ինչ կանեին ռուսական ծանր թնդանոթները։ Այսպես էլ եղավ։ Բերդի հարավային պարիսպը ռմբակոծության ենթարկվեց։ Կավե շինությունն, իհարկե, չդիմացավ պաշարողական թնդանոթների ռումբերին, փլվեց և ապա նույն օրը երեկոյան բերդապահ զորքը դուրս է գալիս և փախչում, Հասան խանն էլ, իհարկե, նրա հետ։ Տեղեկություն կա, որ բերդի այս արագ լքումը միայն դրսից չէր պատրաստվում, այլև ներսից։ Սարդարաբադի մեջ փախած հայերը վերջին ժամին պահանջեցին Հասան խանից, որ բերդն անձնատուր լինի։ Հայերն էին նույնպես, որ իմաց տվին ռուսներին, թե պարսից զորքը փախչում է։ Այս «անառիկ» անվանված բերդը վերցնելիս ռուսները գրեթե ոչ մի կորուստ չունեցան։ Գնահատելին այն էր, որ Սարդարաբադն ուներ իր շտեմարանների մեջ պարենի շատ խոշոր պաշարներ, այնպես որ երջանիկ «հաղթողը» համարում էր իր ամբողջ բանակը մի քանի ամսով ապահովված ուտելիքով։

Միևնույնը կրկնվեց, բայց ավելի մեծ չափերով նաև Երևանում, երբ այս՝ նույնպես շատ հռչակված բերդին մոտենալով, Պասկևիչը սեպտեմբերի 25-ին սկիզբ դրեց նրա պաշարման։ Այստեղ էլ խոսքը թողնված էր պաշարողական թնդանոթներին, որոնք շարվեցին հարավարևելյան կողմում և սկսեցին օր ու գիշեր ծեծել բերդի կավակերտ կողերը։ Յոթն օր տևեց ռմբակոծումը, որ և սարսափով լցրեց ամբողջ բերդը, ուր իրար վրա կուտակված էին թե քաղաքից և թե շրջակա գյուղերից այդտեղ փակված բյուրավոր մարդիկ։ Եթե Երևանի կավե պարիսպները թափվում էին մեծամեծ ռումբերի հարվածներից, ավելի ևս անպաշտպան ու խեղճ էին այդ կողմից քաղաքային շինությունները, որոնցից շատերը քանդվեցին, բազմապատկելով քաղաքացիների խուճապը։ Նեղ փողոցներում թափված էին սպանված զինվորների (սար-

բազների) դիակները։ Այս ահարեկիչ հանգամանքների հետ զուգընթացաբար գործում էր և ագիտացիան։ Ներսեսը գտնվում էր Պասկևիչի բանակում և անդադար թղթեր էր ուղարկում ներս՝ հորդորելով, որ ամենքն անձնատուր լինեն։ Այս միտքը միայն հայերի մեջ չէր ծավալվում։ Թուրքերը պակաս չէին ահաբեկված ծանր թնդանոթների կործանարար ուժից և նույնպես պահանջում էին, որ վերջ դրվի այս ավերմունքներին։ Բերդի հրամանատարությունն իր վրա էր վերցրել Հասան խանը, բայց այժմ այլևս 1808 թվականը չէր, երբ նա պարտության մատնեց կոմս Գուդովիչին և հարկադրեց նրան հեռանալ Երևանից։ Այժմ Երևանը ունենալով հանդերձ իր պարիսպների վրա 50 թնդանոթ, միանգամայն անպաշտպան էր ռուսաց պաշարողական թնդանոթների դիմաց։ Շրջապատված հուսահատված ազգաբնակությամբ, լացող կանանց և երեխաների մեջ ընկած, Հասան խանը նույնիսկ վախենում էր դուրս գալ առանց թիկնապահների և շրջում էր սարբազներով շրջապատված։ Պահանջներն օրավուր սաստկանում էին. մի օր կանանց բազմությունը փորձեց ուժով ներս թափվել սարդարի ապարանքի նկուղները՝ այդտեղ պաշտպանություն գտնելու համար, և սարբազները հազիվ կարողացան կասեցնել այդ գրոհը։ Միակ ապահով տեղը համարվում էր սարդարի ապարանքը, ուստի պաշարված բազմությունը խռնվում էր նրա անկյուններում։ Վերջապես հոկտեմբերի 1-ին պաշարվածների բազմությունը դուրս եկավ պարիսպների գլուխը և սկսեց սպիտակ թաշկինակներով նշաններ անել, իսկ մի մասն էլ պարսպի փլվածքով դուրս գնաց բերդից և մտավ ռուսաց բանակը, հրավիրելով նրան ներս մտնել։ Շատ աննշան դիմադրությունից հետո Երևանի բերդապահ զորքը, մոտ 3 հազար հոգի, անձնատուր եղավ, նրա հետ նաև Հասան խանը։ Ռուսաց կորուստները հազիվ էին կազմում 100 մարդ, մեռած թե վիրավորված։

Այսքան խեղճ ու անճարակ կերպով էր ընկնում այն բերդը, որ մեծ հռչակ ուներ Արևելքում իբրև պարսկական ուժի գլխավոր հենարան Անդրկովկասում։ Պասկևիչը, թեև գրեթե անգրագետ մի զինվոր, կարողանում էր փառավոր գույներով ներկայացնել իր այս երկրորդ «հաղթությունը» Նիկոլայ կայսրին։ «Ձերդ մեծության դրոշը,— գրում էր նա,— փողփողում է Երևանի պարիսպների վրա։ Այս շատ փառաբանված բերդի բանալիները, նրա ամբողջ բերդապահ զորքը գերի վերցված, իր գլխավոր պետերի հետ, հենց իրեն՝ Հասան խանին, որ չկարողացավ այս անգամ ո՛չ փախչել, ո՛չ մեր շարքերը պատռելով անցնել գնալ, նվաճված ավարներ՝ 4 դրոշ, 2 մեծ թնդանոթներ, 9 կարճ թնդանոթներ, մինչև 50 զամբարաներ (մանր թնդանոթներ), վերջապես հպատակություն և շնորհակալությունը բնակիչների, որոնք մեր ձեռքով ազատված են նրանց կարծեցյալ պաշտպաններից և կատաղի հարստահարիչներից—այս բոլորն շտապում եմ արկանել ձեր, թագավոր, ամենաողորմած ոտնարկին։ Ձեր կայսերական մեծության զորքը նորից պսակվեց հաղթության փայլով»։ Նիկոլայը հավատալով, որ անձնական բարեկամը, ճիշտ որ, մեծ գործ է կատարել, ընկավ չափազանցության մեջ, պարգևելով նրան կոմսի կոչում և նրա ազգանվանն էլ կցելով «Երևանյան» անունը։ Ապագայում այցելելով Երևան, Նիկոլայն ինքը հասկացավ, որ այդ գոված բերդը մի «կավե պուտուկ» է, որի գրավման համար սակայն, նա տվել է կոմսության տիտղոս։ Այս ցարական առատաձեռնությունը զարմացրել է և ուրիշ շատերին։ Հարցն, իհարկե, այն չէ, թե ինչ էր տված և ինչ պիտի տրվեր, այլ այն, որ առանց այն էլ մեծամիտ և ամբարիշտ Պասկևիչը լցվում էր ավելի ևս մեծ գոռոզությամբ և փառատենչությամբ։ Երևանից հետո մի նոր փառավոր հաղթանակ նրան խոստանում էր Թավրիզը։ Ուստի հոկտեմբերի Տ-ին

նա գլխավոր բանակի հետ ճանապարհվում է դեպի այդ քաղաքը, նախապես ժամանակավոր վարչական մի մարմին կազմելով նոր նվաճված խանությունը կառավարելու համար։ Այդ մարմնի գլուխ էր նշանակվում գեներալ Կրասովսկին, իսկ անդամներից մեկն էր Ներսես Աշտարակեցին։

Սակայն Թավրիզը չսպասեց Պասկևիչին։ Աբաս Միրզան բոլորովին լքել էր մայրաքաղաքը և գլուխը կորցրած՝ քաշվել էր Խոյի կողմերը, այնպես որ իշխան Էրիստովի առաջապահ բանակը դուրս գալով Նախիջևանից հոկտեմբերի 4-ին, առանց արգելքների հանդիպելու, 13-ին մոտեցավ Թավրիզին և գրավեց այն, չարձակելով և ոչ մի հատ հրացան։ Այս մի զինվորական զբոսանք էր և սակայն Պասկևիչը դժգոհ մնաց, որ ինքը չէ առաջինը մտել Թավրիզ և մի ինչ-որ պատրվակ գտնելով հեռացրեց Էրիստովին և նրա օգնական գնդապետ Մուրավևին։

8. Պարսկահայերի գաղթը։ *Հաստատվելով Թավրիզում, ռուսներն արագորեն տարածեցին իրենց արշավանքները դեպի արևելք և արևմուտք։ Պարսից կառավարությանը ուրիշ ոչինչ չէր մնում, բայց միայն շտապել հաշտություն կնքելու հաղթողների հետ։ Պատերազմը, որ այնքան զոհեր խլելով ոչինչ օգուտ չէր բերել երկրին, արդեն առաջ էր բերել ժողովրդական մեծ դժգոհություն, որ արտահայտվում էր ղաջարների թագավորող տոհմի դեմ բարձրացած ցասման մեջ։ Այնպես որ Ֆաթալի շահը լուրջ հիմք ուներ վախենալու իր գահի տոկունության վերաբերմամբ։ Եվ նա շտապում էր կատարել ռուսական բոլոր պահանջները։ Ուստի և բոլոր նախնական բանակցությունները կատարելուց հետո, 1828 թ. փետրվարի 10-ին, Թավրիզից Թեհրան տանող ճանապարհի վրա գտնվող Թուրքմենչայ անունով մեծ գյուղում ստորագրվեց վերջնական հաշտության դաշնագիր, որին վիճակված էր ճակատագրական դեր խաղալ Պարսկաստանի քաղաքական թուլացման և անկման մեջ։*

Այս դաշնագրով Ռուսաստանին կցվում էին Երևանի և Նախիջևանի խանությունները, Պարսկաստանը զրկվում էր Կասպից ծովի վրա զինվորական նավեր ունենալու իրավունքից, մի իրավունք, որ այնուհետև միմիայն Ռուսաստանին էր պատկանում, ինչպես նաև վճարում էր Ռուսաստանին պատերազմական տուգանք ռուսաց փողով մոտավորապես 70 միլիոն ռուբլի։ Դաշնագրության 15-րդ հոդվածն ասում էր, թե երկու պետությունների հպատակները կարող են իրենց ազատ կամքով գաղթել մի երկրից մյուս երկիրը։ Գաղթողներին իրավունք էր տրվում ծախել իրենց անշարժ և շարժական կայքերը և դրա համար ժամանակ էր տրվում. անշարժ կայքերի համար հինգ տարի, շարժականի համար մի տարի։

Այս հոդվածը թեև հայերի անվան հիշատակություն չէր անում, բայց գրված էր հայերի համար։ Նրա հիման վրա էր, որ Ատրպատականի զանազան կողմերից տասնյակ հազարներով հայեր գաղթեցվեցին Արաքսի ձախ ափը։ Ձեռնարկությունը նախապատրաստական շրջան էր ունեցել և գաղթականության միտքը հասունացել էր դեռ մինչև պատերազմական գործողությունների վերջանալը։ Ռուսաստանը վճռել էր բավականանալ Երևանի և Նախիջևանի խանությունների կցումով, իսկ այս ընդարձակ երկիրը ներկայացնում էր մի ավերված երկիր՝ շատ նոսրացած ազգաբնակությամբ։ 1828-ին կատարված մի ցուցակագրություն բերում է հականե-հանվանե 1111 գյուղեր, որոնցից, սակայն, 732 հատն էին բարեկարգ, մնացածները ավերակ դրության մեջ էին։ Ազգաբնակության այս խոշոր նվազումը տեղի էր ունեցել հայ ժողովրդի հաշվին։ Հայերի թիվն երկու խանությունների մեջ 25 հազար էր, մինչդեռ թուրքերի և առհասարակ մահմեդականների թիվը հասնում էր 81

հազարի։ Հայերի նվազեցումը արհեստական, բռնի կերպով էր տեղի ունեցել, շնորհիվ այն քաղաքականության, որ նրանց վերաբերմամբ գործադրում էին Երևանի սարդարները։ Այն ժամանակից, երբ ակնհայտ դարձավ, որ հայերը նվիրված են ռուսներին և աշխատում են, որ պարսկական տիրապետությունը տեղի տա ռուսականին, Երևանի իշխանությունները գործադրում էին բոլոր հնար եղած միջոցները՝ այդ վտանգավոր տարրից ազատվելու համար և ամենալավ միջոցը համարում էին նրան թուլացնելը։ Կեղեքումները, անհաշիվ և անտանելի հարկապահանջությունները փախցնում էին հայերին իրենց երկրից։ Իսկ երբ սկսվեց 1826—1827 թվականների պատերազմը, պարսից զորքն, ինչպես տեսանք, հայ ժողովրդի վրա էր գլխավորապես թափում իր վրեժն ու կատաղությունը, կոտորելով, կողոպտելով և գերի տանելով նրան։ Չբավականանալով և այսքանով, կառավարությունը Երևանը լավ պաշտպանելու համար անմարդացրեց երկիրը, քշելով ազգաբնակությունը, մանավանդ հայ ազգաբնակությունը Արաքսի մյուս ափը։

Այսպիսով ռուս կառավարության համար ծնվում էր անհրաժեշտություն գաղթավորման միջոցով երկրի ազգաբնակությունը մեծացնելու և խտացնելու։ Պասկևիչը մտահոգված էր այս հարցով։ Գաղթավորումն անհրաժեշտ էր, բայց ի՞նչ ազգագրական տարր պետք էր բնակեցնել սահմանագլուխ կազմող ու տնտեսական մեծ կարևորություն ունեցող այս երկրներում։ Պետական շահը թելադրում էր ընդունել, որ ամենից ցանկալի տարրը կարող են լինել ռուսները։ Եվ Պասկևիչն իրավ, մտածում էր Հյուսիսային Կովկասից կոզակներ գաղթեցնել այս կողմերը, սակայն այդպիսի մի ձեռնարկություն կպահանջեր խոշոր դրամական ծախսեր և երկար ժամանակի աշխատանք։ Թողնելով ռուսական գաղթավորման հարցն ապագային, առայժմ կանգ էր առնում Պարսկաստանի հայերի վրա, ինչպես այդ մասին հորդորում էր նրան Ներսեսը, որին այս դեպքում ոգևորողը հայրենի Արարատյան աշխարհի նորից հայացման գաղափարն էր։ Եվ Պասկևիչն էլ ընդունում էր, որ ամենից հեշտ ու արագ իրագործելին Ատրպատականի հայության գաղթեցումն էր։ Հայ ժողովրդի հավատարմությունը դեռ կասկածի առարկա չէր շինվել և բացի դրանից հանել հայությունն Ատրպատականից՝ նշանակում էր մահացու հարված տալ նրա տնտեսական կյանքին, մի բան, որ անհրաժեշտ էր նրան իսպառ թուլացնելու համար։ Ատրպատականում ապրող հայերի թիվը հասնում էր 60—65 հազարի։ Այս միակ ժողովուրդն էր, որի ձեռքում գտնվում էր համարյա ամբողջ վաճառականությունը. բացի դրանից, հայերն Ատրպատականում բարձր էին բոլոր մյուս ազգություններից իրենց մշակութային ընդունակություններով։ Ունենալ այսպիսի մի հոծ բազմություն ռուսական հողի վրա՝ տնտեսական և քաղաքական մի խոշոր հաղթանակ էր, որն իրականացնելու համար Պասկևիչին հարկավոր էին հայ օգնականներ։ Չբավականանալով այն հայ սպաներով, որոնք գտնվում էին բանակի մեջ, իր հրամանատարության տակ, Պասկևիչն իր մոտ կանչեց Պետերբուրգից գնդապետ Ղազար Լազարյանին, որ Լազարյան ճեմարանի հիմնադիր Հովակիմ Լազարյանի որդին էր և ծառայում էր կայսերական թիկնապահ զորքերի մեջ։ Լազարյան տոհմը, ինչպես գիտենք, մեծ հռչակ էր ստացել ամբողջ հայության մեջ, և ահա այդ տոհմի անդամներից մեկի ներկայությունը Պարսկաստանում, Պասկևիչի կարծիքով, պիտի գրավեր պարսկահայերին Ռուսաստանի կողմը և հեշտացներ նրանց գաղթեցման գործը։ Այս միտքը նրան տվել էր անշուշտ Ներսեսը, որ շատ մտերմացած էր դանիելականության հողի վրա Լազարյանների հետ։

Բայց ամենագլխավոր դերը պիտի կատարեր հայ հոգևորականությունը։ Եվ ահա Ներսեսը մտնելով կաթողիկոսական իրավունքների մեջ, Էջմիած-

նից Թավրիզ է ուղարկում մի եպիսկոպոսի և մի վարդապետի, լիազորելով նրանց Պասկևիչի կողմից նշանակված մարդկանց հետ պատրաստել ժողովրդի գաղթեցումը։ Միաժամանակ Ներսեսը հրամանագրում է Արտազի Թադեոս առաքյալի վանքի վանահայր Բարսեղ եպիսկոպոսին, որ նա էլ աջակից հանդիսանա այդ խոշոր ձեռնարկությանը։ Ատրպատականի տեղական հայ հոգևորականության և մասնավորապես գյուղական քահանաներին խստիվ պատվիրվում էր պատիժների սպառնալիքներով, որ նա համոզե ժողովուրդը թողնել իր տունը, գույքերն ու ամբողջ տնտեսությունը՝ Արաքսն անցնելու և ռուսական հողի վրա բնակություն հաստատելու համար։

Ամեն ինչ այսպես պատրաստվում էր դեռ մինչև հաշտության պայմանների վերջնական մշակումը։ Պասկևիչը գաղթականության ամբողջ գործը հանձնում է գնդապետ Ղազար Լազարյանին, դնելով նրա տրամադրության տակ 25 հազար ռուբլի՝ չքավոր գաղթականներին նպաստներ տալու համար։ Լազարյանն իրեն օգնության է կանչում իր ընտրությամբ կազմված մի ամբողջ հանձնաժողով, որի մեջ մտնում էին բանակում ծառայող հայ և ռուս սպաներից մի քանիսը, դրանց թվում և փոխգնդապետ Մովսես Արղության—Երկայնաբազուկը, այն, որ հետո հռչակվեց իբրև Դաղստանի հերոս։ Դեռ դեկտեմբերին Դեյկարխուն գյուղում, ուր կատարվում էին հաշտության բանակցությունները, Պասկևիչին ներկայացավ վերոհիշյալ Բարսեղ եպիսկոպոսը, որ բերել էր իր հետ Սալմաստի և Խոյի կողմերի մի քանի գյուղական տանուտերեր և ստանալով նրա հրահանգները, վերադարձավ՝ ժողովրդի մեջ գաղթականական պրոպագանդ մղելու համար։ Նույն գործը կատարում էին նաև էջմիածնից ուղարկված Ստեփան եպիսկոպոսը և Նիկողայոս վարդապետը։

Հարկավոր եղավ փութացնել գաղթեցման գործը մանավանդ, Թուրքմենչայի դաշնագրությունն ստորագրելուց հետո, որովհետև համաձայն այդ դաշնագրի, ռուսական զորքերը պիտի հեռանային Ատրպատականից որոշված ժամանակներում, երբ պարսից կառավարությունը կվճարեր ռուսներին պատերազմական տուգանքի պայմանավորված մասերը։ Պարսից կառավարությունն շտապում էր շուտ վճարել այդ գումարները, որպեսզի ռուսները պատրվակ չունենան մնալու Ատրպատականում։ Այսպես ցանկանում էր մանավանդ Աբաս Միրզան, որ և շարունակ դիմումներ էր անում Պասկևիչին՝ պահանջելով, որ նա շուտով հանե իր զորքերը պարսկական երկրներից։ Այս հանգամանքն անհրաժեշտություն էր դարձնում հայերի գաղթեցումն առանց հապաղումների, որովհետև ռուսական զորքերի հեռանալուց հետո հայերն այլևս հնարավորություն չէին ունենա հավաքվելու խոշոր խմբերով և շարժվելու դեպի Արաքսի ափը։

Պարսից կառավարությունը ստորագրելով Թուրքմենչայի դաշնագրության այն հոդվածը, որ թույլ էր տալիս գաղթել մի երկրից մյուսը, իհարկե, այդ արտոնությունը պատրաստվում էր գլխավորապես հայերի համար, բայց և այնպես չէր մտահոգվում այս առիթով, որովհետև չէր հավատում, թե գաղթականությունը մեծ զանգվածային չափեր կընդունե, քանի որ շատ դժվար էր ենթադրել, թե ամբողջ գավառներ, ամբողջ համայնքներ հեշտությամբ կթողնեն իրենց դարավոր հայրենիքը, իրենց նախնիքների և սիրելիների գերեզմանները, իրենց դիզած շարժական և անշարժ հարստությունները և կերթան բնակվելու անծանոթ մի երկրում։ Եվ այս ճիշտ էր, բայց մասամբ միայն. պարսկահայ ժողովուրդն ինքն էլ հասկանում էր, որ այս այսպես է, բայց նրան խելքահան էին անում քարոզներով ու ստիպողական միջոցներով, մեծամեծ խոստումներ էին անում, իսկ համառներին վախեցնում էին սպառնալիք-

ներով։ Թուրքմենչայի դաշնագրությունը նախատեսել էր միայն այն գաղթականությունը, որ կատարվում է հոժար ու ազատ կամքով։ Բայց այդ տրամադրությունն արդեն մեռած տառ էր դառել։ Ղազար Լազարյանը անձամբ այցելում էր Խոյի և Սալմաստի գյուղերը, ամեն տեղ ծախու էր հանում իր տոհմի հմայքը, իր գվարդիական շքեղ համազգեստի փայլը՝ հասարակ գյուղական ժողովուրդը շշմեցնելու և տեղահան անելու համար։ Այդ մարդը, որ աչքի չէր ընկնում ոչ խելքով և ոչ շնորհքով, տարված էր իր առաքելությամբ, համոզված լինելով, որ կատարում է մեծ ազգասիրական գործ։ Եվ որովհետև Լազարյան տոհմը միշտ հայ հոգևորականներից ու բարձր առևտրականության կողմից մեծարվել էր «վեհազն իշխան», «իշխանապետ» շողոքորթական մակդիրներով, ուստի այս գերազանցորեն վաճառականական ընտանիքից դուրս եկած այս գնդապետն էլ իրավունք պիտի համարեր փքվել և ուռչել իսկական իշխանապետական հովերով, սնուցանել իր մեջ անփական անձը շոյող մի փառասիրություն, որի համար արդելք չպիտի լիներ նույնիսկ թևակոխելու այս գաղթեցվող հայության կառավարիչ իշխանը դառնալու հնարավորության սահմաններն անգամ։ Նրա անչափ վազվզոցներն ու ջանասիրությունն իր պաշտոնի ամենահաջող իրականացման համար այնքան գրգռեցին Աբաս Միրզային, որ սա հանդիմանական նամակներ գրեց նրան, որոնց մեջ նրա և հայ հոգևորականության երեսին էր խփում, թե ինչ միջոցներով են նրանք հարկադրում գյուղական ժողովուրդը լքել իր հողը և տեղահան լինել։

Թագաժառանգի այս բողոքները սակայն, չէին կարող արդյունավետ հանգամանքներ դառնալ, քանի որ ռուսաց զորքերն էին բռնել Ատրպատականի արևմտյան մասը և նրանց պաշտպանության տակ էր, որ անպատիժ գործում էին Ներսեսի և Պասկևիչի գործակալները, հոգևորական թե աշխարհական։ Բայց, այնուամենայնիվ, պարսիկ պաշտոնեությունը, որքան կարողանում էր, աշխատանք էր գործ դնում արգելելու գաղթականական շարժումը։ Պատվիրված էր, որ տեղում մնացող ազգաբնակությունը չգնե գաղթողներից շարժական և անշարժ գույքեր։ Մղվում էր և բերանացի պրոպագանդ։ Աշխատում էին հավատացնել գաղթել ցանկացողներին, որ նրանք ոչինչ հարմարություն և ուրախություն չպիտի տեսնեն Արաքսի մյուս ափում, որ ռուսաց կառավարությունը ոչ միայն չպիտի նրանց որևէ օգնություն անի, այլ, ընդհակառակը, նրանցից պիտի «սալդաթ» (զինվոր) հավաքե և այլն և այլն։ Այս ամենը, իհարկե, որոշ ազդեցություն թողնում էր, բայց հետևանքները շատ մեծ չէին լինում։ Հայ ժողովրդի ահագին մեծամասնությունը, այնուամենայնիվ, ենթարկվում էր գաղթելու տրամադրության։ Ուր հարկավոր էր, այդ տրամադրությունը պաշտպանվում էր ռուս զորքերի զինական միջամտությամբ։ Այսպես, Ուրմիայի լճի հարավային կողմում, Քրդստանի հայ ազգաբնակությունը բացարձակ դիմադրության հանդիպեց քուրդ կալվածատիրության կողմից, որ բնականաբար հասկանում էր, թե ինչ կնշանակե իրան ենթարկված հայ գյուղական աշխատավորությունից զրկվելը։ Սակայն գաղթականությունն այս կողմերից էլ հաջողվեց կազմել, ռուս զորքերի գործոն օգնությամբ։ Հասկանալու համար հայ հոգևորականության գաղթականական հանձնաժողովի ունեցած նշանակությունը պարսկահայերի գաղթեցման գործի մեջ, բավական է հաշվի առնել, որ սկզբում վճռված էր հայերի հետ գաղթեցնել և Սալմաստի ու Խոյի նեստորական ասորիներին, որոնք ճիշտ է, գաղթելու համաձայնություն տվին, բայց հետո ետ կանգնեցին այդ դիտավորությունից և նրանց մի շատ փոքրիկ մասն էր միայն, որ իրապես գաղթեց։ Գաղթեցնող ուժերի մեջ, իհարկե, առանձին համոզիչ նշանակություն ունեին

այն 5—10 ռուբլիները, որ գաղթականական հանձնաժողովը Պասկևիչի նշանակած 25 հազար ռուբլի ֆոնդից բաժանում էր չքավոր գյուղացիներին, իբրև ճանապարհի նպաստ։

Պարսկահայերի գաղթը սկսվեց 1828-ի գարունը բացվելուն պես։ Պասկևիչը կարգադրել էր, որ շարժումը միահամուռ չլիներ, այլ կատարվեր մասամաս և որ յուրաքանչյուր գյուղ մի առանձին խումբ կազմեր, չբաժանվելով մանր մասերի կամ չխառնվելով մեծ զանգվածների հետ։ Այս, սակայն, բավական չեղավ, որ գաղթականությունն ազատվի ժողովրդական անկազմակերպ զանգվածային շարժումների հետ կապված դժբախտություններից։ Ոչինչ պատրաստություն չէր տեսնված ճանապարհի կարիքները վաղօրոք հոգալու և գաղթականներին իրենց տեղերում ընդունելու համար։ Գաղթողների թվի մասին հակասական տեղեկություններ են մնացել։ Մինչդեռ Թադևոսի վանքի առաջնորդ Բարսեղ եպիսկոպոսը հաշվում է Արաքսի ձախ կողմն անցածների թիվը տասնմեկ հազար տուն, ընդապես Լազարյանն այդ թիվն իջեցնում է 8000 տան։ Համենայնդեպս, կարելի է մոտավորապես ճիշտ համարել, որ պարսկահայ գաղթականները 45—50 հազար հոգի էին։ Եվ ահա այդ բազմությունն ենթարկվում էր անկազմակերպված տեղափոխության սարսափներին և մինչև իր վերջնական տեղավորումը կորցնում էր մոտ 10 հազար հոգի։ Գաղթականներին տեղավորեցին գլխավորապես Երևանի և Նախիջևանի խանությունների մեջ, մասամբ նաև Զանգեզուրի գավառում և Ղարաբաղում։ Տեղավորվելուց դեռ երկար ժամանակ անցած՝ գաղթականները տանջվում էին կլիմայական անսովոր պայմաններից, վարչական անկարգություններից, կալվածատերերի կեղեքումներից, ծանր հարկերից ու տուրքերից։

9. Երևանի գրավման նշանակությունը հայերի համար: 1827 թ. հոկտեմբերի 1-ը պատմական մի աննախընթաց օր էր հայության համար, որ իրենք, այդ դեպքի ժամանակակիցները որակում էին իբրև վերածնության օր։ Հայ ժողովրդի գոնե այն մասը, որ ապրում էր պարսկական Անդրկովկասի մեջ, համարվում էր ազատված։ Հայաստանի այս մասում այլևս չէր մնում հայոց հարց, եթե հասկանանք այդ անվան տակ հայ ռայայի դրությունը մահմեդական բռնակալ և սատրապական իշխանության տակ։ Ազատել այդ կեղեքված ու ծվատված ռայան պարսկական լծից. այս էր մերձավորագույն և անմիջական նպատակն այն ազատագրական շարժման, որ սաղմնավորվել էր Երևանի անկումից դրեթե դար ու կես առաջ և կապված էր Օրիի անվան հետ։ Այժմ էր միայն իրագործվում այդ նպատակը և իրագործվում էր, ճիշտ է, ոչ այնպես, ինչպես ուզում էր հայ հայրենասիրությունը, այն է՝ սեփական անկախություն ստանալու միջոցով, այլ ավելի պարզ ու հասարակ եղանակով, այն է՝ հպատակությունը փոխելով։ Սակայն մենք արդեն գիտենք, որ հայ ժողովրդի համար, շնորհիվ նրա անասելի ստորացած դիրքի, այս էլ մի շնորհ էր, որ առանց ծանր զոհերի չէր տրվում նրան։ Բայց հայ ժողովուրդը ցահավիժորեն դժբախտ հանգամանքների ահռելի ծանրության տակ սովորել էր չհաշվել իր զոհերը և այսօր ամեն հաշիվ ու համար թողած, գլխավորագույնն այն էր համարում, որ այլևս չկա պարսկական լուծը։

Երևանն այդ դարավոր լծի մարմնացումն էր։ Երևանն իբրև բերդ՝ մի հին, խարխուլ և վատ ամրություն, իբրև միաժամանակ անդեն և իրավազուրկ ռայայի վրա տիրող դող ու սարսափ ազդող, շատ լավ է նկարված Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» մեջ։ Գիտեր հայ ռայան, որ այդ մի «հազար տարեկան քաֆթառ, պառաված» ամրություն էր, ինքը «հողաշեն և ոչ քարաշեն», հարյուր անգամ ռումբերով ծեծված, կողերը ջարդված, բայց և միշտ իր անդամներն անվնաս պահած, իր հոտած աղիքներով ապրող։ Արևելքի ղառամ բռնությունն էր նա, բայց նրան արհամարհել կարող էին միայն ուժեղները, մինչդեռ հային նա երևում էր իբրև մի հրեշ, «հազար գլխանի դևի պես», «մեկ բերանը հյուսիս, մեկը հարավ բաց արած, չորացած գլուխը երկինքը ցցած, լեն փեշերը երկրումը փռած, անամոթ երեսը կոխած, սվաղած, հազար բնով, հազար փանջարա աչքերը դես ու դեն չռած, ջուխտ չանգերով Զանգվի քարոտ, ղարհուրհալի-սնադեմ ձորը խոտած, դոշին կպցրած, անմաղ, անլեզու մարդակեր բերդը»։ Այս միայն ստրուկն է ամեն քար, ամեն մի հույս իսկ սովորական մի սարսափ ու զարհուրանք դարձնում իր համար։ Եվ հասկանալի է այս ստրկային հոգեբանությունը։ Անպաշտպան մարդկանց դարերով ահաբեկելու համար հարկավոր էլ չէր, որ Երևանը մի «քաֆթառ» բերդից ավելի բան լիներ։ Եվ Խաչատուր Աբովյանը չէր, այլ ամբողջ հավաքական ստրկությունը, որ հարյուրավոր տարիներ ահուդողով նայելով Երևանի բերդին, մրմնջում էր «Երևանու բերդը՝ Երևանու բերդը, ա՜խ աչքս դուրս գա, քանի-քանի ողորմելի հայի միս ա կերել, քանի-քանի անմեղ հոգի՝ տարիներով չարչարվելուց, տանջվելուց, կենդանի նահատակ ըլելուց, կրակի, բոցի երկաթե շամփուրի, թոխմախի, կրակած քարփչի տանելուց, համբերելուց ետը, կամ թոփի գյուլլի հետ ա թռել, հազար կտոր ըլել կամ տաբաղաչի (կախաղանի վրա) վրա՝ գոռալով երկինք, երկիր աղաչելով, իսկ մյուսն ատամներովը կծելով աչքերը դուրս տրաքելով, փոթոթվելով հոգին ավանդել, երկինքը գնացել, որ պրծնի էս դառն աշխարհքիցը, էս կատաղի գազանների ձեռքիցը։ Քանի-քանի ջահել երիտասարդ՝ մեկ սաղ օջախի մեն-մենակ որդի, մեկ աղքատ, չքավոր տան սին, մխիթարություն, մեկ տասի գլուխ քյուլֆաթի տեր ու ապավեն, իր ծաղկած դալար հասակին, իր ըմբրի ու արևի նոր բաց էլած ժամանակին կամ սաղ-սաղ քերթվել ա, կամ իր երկնքումը իր ջահելության մուրազն առնի, վայելի, չունքի երկիրը նրա անարատ արնին էր ծարավ՝ որ շուտով խմի ու բալքի կշտանա»։

Ահա ստրուկի համար ինչ բան էր խորտակվում 1827-ի հոկտեմբերի 1-ին։ Եվ հասկանալի է, թե որքան խոշոր, չափազանցությունների չափազանցություններով զարդարված մի քաջություն պիտի ներկայանար դարերի ստրուկին Երևանի բերդի խորտակումը։ Պասկևիչը դառնում էր մի փայլուն ու շողշողուն հերոս, և ժողովուրդը շտապում էր նրան պսակել իր ըմբռնողության մատչելի ամենապատվավոր անունով՝ «տիրացու»։ Բայց ժողովրդի արած պատիվն ի՞նչ էր՝ համեմատած այն ստրկական պաշտամունքի հետ, որ դառնում էր նույն այդ «տիրացու» Պասկևիչը զարգացած, եվրոպական աշխարհ տեսած Աբովյանի համար։ Նա ասում է, որ Պասկևիչը «Ասիու միջումը Ալեքսանդրի ու Պոմպեոսի, Չինգիզ խանի ու Թեմուր Լանգի հիշատակը իսպառ ջնջեց»։ Անտանելի չափազանցություններով ու շողոքորթություններով էր, որ հայ սակավաթիվ մտավորականությունը փառաբանում էր այն թեթև և էժանագին հաղթությունը, որ վերջ դրեց պարսկական Երևանին և դարձրեց նրան ռուսական Երևան։ Այս երկրորդ, նոր Երևանը հայերն անվանեցին իրենց փրկություն։ «Պետք է,— ասում է Աբովյանը,— աշխարհքումն էլ հայի հոգի չըլի, որ իրանց փրկիչ Պասկևիչի անմահ հիշատակը արտասուքով ու լացով չհիշեն, իրանց աշխարհքի հոր ու պահպանողի սուրբ անունը, որ հյուսիսի բերդից սկսած նրանց հոգսը քաշել՝ նրանց թևի տակն էր ուզում բերի, սրբությունի պես պաշտի։ Կամիլոս զորք ա՝ Հռոմ ազատեց, Սքիպիոն հռոմեցվոց թուրը Աֆրիկումը ցցեց, Կեսար Գալլիա ու Բրիտանիա ոտի տակն արավ, Նապոլեոն Իտալիա, Սպանիա ու Եգիպտոսին ազատություն էր խոստանում, բայց ե՞րբ հռովմեցիք, գալլիացիք, եգիպտացիք էն սրտովը, էն սիրովը իրանց ազատողներին կընդունեին, կպաշտեին, ինչպես հայք, հայք որ առավոտ էին

վեր գենում՝ էն էին աղաչանք անում աստվածներից, բերանն էին քնում՝ էն էր նրանց աչքի արտասուքը։ Մեծ էր հիրավի ու անմոռանալի ռուսաց Փարիժ մտնելը, բայց ե՞րբ զաղդիացիք էն հոգվովը իրանց բախտավորությունը կվայելեին, ինչպես հայք այս արժանահիշատակ օրը»։

Բայց Աբովյանը դեռ բանաստեղծ էր և կարող էր իրեն թույլատրված համարել այսքան չափազանցություններ։ Ահա Ներսեսը, որ քաղաքական գործիչ է, դիվանագետ, որի ձեռքի մեջ էին գտնվում մի ամբողջ ժողովրդի ճակատագրի բոլոր թելերը։ Թվում էր, թե այս ահավոր-պատասխանատու դիրքը պետք է պարտավորեցներ նրան լինել իրերի դրությունը սառնասիրտ վերլուծող, հաշվող ու խոհուն։ Բայց նա Աբովյանից պակաս սանտիմենտալիզմ չէր ցուցադրում ամենահասարակ դեպքերի առթիվ անգամ։ Իբրև Թիֆլիսի առաջնորդ, նա իհարկե, շատ անգամ առիթ պիտի ունեցած լիներ տեսնել ռուսաց զորքի եկեղեցական հանդեսները։ Բայց ահա նույն այդ հանդեսները կրկնվում են Երևանի պատերի տակ, և միայն այս տեղագրական հանգամանքը, միայն այն, որ հանդեսը տեղի է ունեցել հայրենական հողի վրա, ընդունակ է դարձնում Ներսեսին ընկնելու կատարելապես երեխայական հրճվանքի մեջ։ Երևանը գրավելու մյուս օրը զորահանդես է տեղի ունենում հանդերձ գոհացողական մաղթանքով, որի մեջ ինքը Ներսեսն էր հանդիսապետը, իսկ 1828 թ. հունվարի 6-ին ջրօրհնեքի հանդեսը կատարվում էր ռուսաց զորքի մասնակցությամբ։ Եվ ահա այս երկու հանդեսներն այնքան ոգևորում և հիացնում են Ներսեսին, որ նա իրենից երկու քայլ հեռու գտնվող էջմիածնի միաբանության ուղարկում է մի ընդարձակ թուղթ, որի մեջ դնում է իրեն հիացրած հանդեսների ամենամանրամասն նկարագրությունը։

Եվ հասկանալի է, թե այս տեսակ մարդու համար ոգևորության, հրճվանքի ինչ օրեր պիտի դառնային պարսից պատերազմի ավարտման հետ կապված դեպքերը։ Այս դեպքերից առաջինը, որ գուցե ամենից շատ հուզեց Ներսեսին իբրև շոյանք նրա փառասիրության, Նիկոլայ կայսրից ստացած շքանշանն էր, որի հետ նրան ուղարկվում էր կայսերական հրովարտակը 1828 թ. հունվարի 28-ից՝ քարոզելու համար ի լուր աշխարհի, թե ինչու համար է տրվում այդ պարգևը։ «Դուք,— ասում էր կայսրը,— մեր զորքերի հետ մեծապես աշխատանքով մասնակցեցիք, շատ անգամ նույնիսկ վտանգի ենթարկելով ձեր անձը։ Կովկասյան առանձին բանակի հրամանատար գեներալ-ադյուտանտ Պասկևիչը շատ անգամ ծանուցած է ինձ այդպիսի սիրալի գործողությունները, հայտարարելով, որ ամբողջ ժամանակ, քանի որ տևում էր պատերազմը, դուք նշանավոր եք հանդիսացել ձեր հատուկ ջերմեռանդությամբ դեպի Ռուսաստանի օգուտները և հայ ժողովրդի դեպի մեզ ունեցած բարեկամական զգացմունքը միշտ հաստատուն եք պահել ոչ միայն ձեր բարեմիտ խորհուրդներով ու հորդորներով, այլև անձամբ իսկ օրինակ դառնալով»։

Ստանալով Թուրքմենչայի դաշնագրությունը, Նիկոլայը 1828-ի մարտի 14—15-ի հրամաններով տալիս էր Պասկևիչին մի միլիոն ռուբլի պարսիկների վրա դրված պատերազմական տուգանքից և Երևանյան կոմսի տիտղոս։ 20-ին նա վավերացնում էր Թուրքմենչայի դաշնագրությունը, իսկ 21-ին առանձին հրովարտակով հրամայում էր անվանել Երևանի և Նախիջևանի խանությունները հայկական մարզ (Արմյանսկայա օբլաստ, որ այն ժամանակները զանազան կերպով էին թարգմանում՝ «Հայկական գավառ», «Հայոց նահանգ» և այլն), իսկ ցարական տիտղոսներին ավելացնել «Տեր և թագավոր Հայկական մարզի» տիտղոսն էլ։ Այդ կարգադրությունը մեծ ոգևորություն էր պատճառում հայ ազգասերներին և ամենից առաջ, իհարկե, Ներսեսին։

Հայկական մի երկիր և նրա թագավորը—հենց ա՞յս չէր ազգասերների երազը։ Նիկոլայն, այսպիսով, դառնում էր, խոսելով այն ժամանակվա պաշտոնական թղթերի լեզվով «թագավոր հայոց», և Խաչատուր Աբովյանը գրում էր Ներսեսին գոհացողական մաղթանքներ կատարել եկեղեցիներում կայսերական այս «մեծ ողորմածության» առիթով։ Այս բոլորի վրա Ներսեսի գիտակցության մեջ ավելանում էր և այն հանգամանքը, որ ազգային թագավորություն ներկայացնող Հայկական մարզի հայ նորացած ազգաբնակությունը մեծանում էր, քանի որ ապրիլ ամսին արդեն եկել էր պարսկահայ գաղթականության առաջին խումբը, բաղկացած 1500 ընտանիքից։

Եվ ահա զանազան կողմերի հայերին իր անսահման ուրախության մասնակից անել տալու համար Ներսեսը ուղարկում է մի ավետավոր շրջաբերական, որի մեջ դնում է բոլոր պատերազմական և հարակից գործողությունների համառոտ պատմությունը։ Շրջաբերականն սկսվում էր Ավետարանից վերցված հետևյալ խոսքով. «Օրհնյալ Տեր Աստված Իսրայելի որ հայց էր մեզ և արար զորություն ժողովրդյան յուրս»։ Վերջացնելով իր ոգևորված նկարագրությունը—ներբողյանը, Ներսեսն ասում էր, թե Հայաստանի պարսկական մասի ազատությունը իրականացած վերջացած է և թե մնում է այնուհետև օսմանյան բռնակալության տակ եղած հայերի հարցը, եթե օսմանյան թագավորները չմեղմացնեն իրենց բռնավոր կառավարությունն արդար օրենքներով և թագավորավայել գթությամբ ու ողորմությամբ։

Ամեն տեղ, ուր հասան Ներսեսի այս շրջաբերականները, Երևանի անկումը և ռուսական տիրապետության հաստատումն Արարատյան երկրում տոնվեց իբրև ճշմարտապես ազգային փրկության գործ։ Ոգևորվում էին մանավորապես հնդկահայերը։ Կալկաթայի և Մադրասի հայ վաճառականները ժողովներ կազմեցին Ներսեսի շրջաբերականը լսելու և իրենց խնդակցությունը հայտնելու համար։ Կալկաթայում իր տանը հավաքույթ էր սարքում վաճառական Ղորղանյանը, որ բաց էր անում ժողովը՝ աչքալույս տալով հավաքվածներին հայրենիքի ազատության առիթով։ Մեսրոպ Թաղիադյանը, էջմիածնի տիրացու, որ այդ միջոցին Հնդկաստան էր գնացել և ուսանող էր անգլիական ճեմարանում և հետո հայտնի պիտի դառնար իբրև տաղանդավոր հայ գրող, մի ճոռոմաբան ճառ արտասանեց՝ գովաբանելով Նիկոլայ կայսեր, իբրև ազգերի ազատարարի և հատկապես իբրև հայության բարերարի, ապա դիմելով ունկնդիր վաճառականներին, հորդորեց ամենքին թողնել Հնդկաստանի օտար հողը և գնալ ապրելու և գործելու Արարատյան բարեբեր ու լիառատ դաշտում, որ այժմ ազատված է բազմադարյան ստրկությունից։ Այս հորդորին ականջ դնող, իհարկե, չեղավ և ամենից առաջ հենց ինքը Թաղիադյանն էր այդպես անում, մնալով Հնդկաստանում և այդ երկիրը իր գրականության մեջ երկրորդ հայրենիք դարձնելով։ Թե՛ Կալկաթայի և թե՛ Մադրասի վաճառականներն իրենց հայրենասիրական պատիվը լիուլի կատարած համարեցին, պատասխանելով Ներսեսի շրջաբերականին երկար գրություններով, որոնց մեջ թափում էին իրենց սրտի ջերմագին հայրենասիրական զեղումները «փառաց ի փառս» բարձրացնելով Նիկոլայ կայսրին և իրենց որդիական զգացմունքները տարածելով ազատված էջմիածնի առջև։ Այդ գրությունները ծածկված էին բազմաթիվ ստորագրություններով։ Մեսրոպ Թաղիադյանն էլ առանձին նամակ գրեց աշխարհաբար լեզվով իր հայրենակից երևանցիներին, աչքալույս էր տալիս և շնորհավորում, խրատում էր մի կողմ դնել դատարկապորտ ասիական կյանքը, լուսավորվել դաստիարակության միջոցով։

Ուրիշ տեղերից էլ Ներսեսն ստացավ շնորհավորական և խնդակցական գրություններ, նույնիսկ և Թուրքիայում ապրող հայերից։ Մի խոսքով, այն

ժամանակվա բոլոր գրավոր աղբյուրները ներկայացնում են 1827-ի հոկտեմբերի 1-ը իբրև Հայաստանի ազատության օր, իսկ Նիկոլայ կայսրին՝ իբրև հայության մեծագույն բարերարի, Հայաստանի փրկչի «հատկական հայոց թագավորի»:

10. Ներսեսի աքսորը: Սակայն այն բոլոր ուրախական զեղումները ոչ այլ ինչ էին, բայց միայն սոտուկների պար: Նոր էին Ներսեսի «ավետաբեր» անվանված շրջաբերականներն ուղարկվում իրենց տեղերը, և ահա ցարականությունն շտապում էր ցույց տալ իր ճիրանները: Նիկոլայն ու Պասկևիչը մի դժբախտ ժողովրդի դժբախտ հասկացողության մեջ հազիվ էին զարդարվել «ազգերի փրկիչ», «ազատարար» և այլ այսպիսի հորջորջումներով, և ահա նրանք գալիս էին իսկույն և գործնականորեն ապացուցելու, թե այս մակդիրները ստրկական շողոքորթություններից ավելի արժեք չունեն, թե Նիկոլայը չէ, համենայնդեպս, որ չափանիշ լինի առհասարակ որևէ ազատության:

Թուրքմենչայի դաշնագրությունից հետո Ներսեսն էլ, ուրիշ շատերի նման, անպետքանում էր Պասկևիչի համար, որ և շտապում էր դեն շպրտել նրան մզած լիմոնի նման: Դեռ Թավրիզում էր գտնվում նա, դեռ նոր միայն զարդարված իր անարյուն հաղթությունների դափնիներով, երբ գրեց իր առաջին «դոնոսը» Ներսեսի վրա: Աշտարակեցի մոլեգնոտ ցարապաշտը հանկարծ, դրչի մի շարժումով, դառնում էր կասկածելի և նույնիսկ վտանգավոր՝ նույն այդ բարեպաշտության տեսակետից: Մի բան, որից համենայն դեպս, չէր կարելի զրկել Ներսեսին, այն էր, որ նա ամենքից ճանաչված ու գնահատված մի լրտեսագետ էր, որ ամեն տեղից հավաքում էր տեղեկություններ և հայտնում էր կովկասյան գլխավոր հրամանատարին: Այժմ Պասկևիչը արատավորում էր նրա այս «ծառայությունն» էլ: Չժխտելով, որ Ներսեսը, ճիշտ որ, տեղեկություններ տալիս էր, այն էլ շատ, Պասկևիչն ասում էր, թե այդ տեղեկություններից ոչ մեկն էլ չէր ճշտվում, ուրեմն հայ հոգևորականի եռանդն անգամ այս ասպարեզում միանգամայն ապարդյուն էր:

Կարիք չկա, որ մենք երկար ու բարակ քննենք, թե ինչ հանգամանքներ դրդեցին Պասկևիչին այսպիսի մի դիրք բռնել այն մարդու վերաբերմամբ, որ դեռ երեկ նրա աջ թևն էր, և որի գովասանքներն էր նա անում իր «ամենաողորմած» տիրոջ առաջ: Մեզ համար էականն այն է, որ այս գործի հանգամանքները պարզորեն բնորոշում են ցարական բարձր բյուրոկրատիայի վարչական «առաքինությունները», որոնցով նա եկել էր բարեբարելու Անդրկովկասի ժողովուրդները: Թիֆլիսում նստած կովկասյան բոլոր կուսակալները, բայց մասնավորապես Ցիցիանովը և Երմոլովը տառապում էին մեծամտությունից: Սակայն դրանցից ոչ մեկի մեծամտությունն այն աստիճան չէր զարգացած, այնքան հիվանդագին չէր, ինչպես Պասկևիչի մեջ: Բախտից հովանավորված, ինչպես ասում են՝ երջանիկ աստղի տակ ծնված այդ զորավարը չէր կարող ապրել առանց մանր-մանր կանացի ինտրիգների, որոնք հագեցնում էին նրա մեջ առանձնապես զարգացած այն կիրքը, որ պահանջում էր նրանից դեսուդեն շպրտել, տապալել ու ոչնչացնել իր պաշտոնակիցներին և առհասարակ բոլոր այն մարդկանց, որոնք աչքի ընկնող դիրք էին գրավում հասարակության մեջ: Մենք արդեն գիտենք, որ նա թշնամացած էր գեներալ Կրասովսկու հետ: Ներսեսի գլխավոր «հանցանքն» այն էր, որ Կրասովսկու հետ հաշտ ու համերաշխ էր գործում Երևանի կառավարության մեջ: Այնքան նա վիրավորված էր այս հանգամանքից, որ չհամբերեց, գնդապետ Լազարյանի միջոցով առաջարկեց Ներսեսին, որ նա կառավարության հարցերի մեջ հակառակվի Կրասովսկուն: Ներսեսը չկատարեց այդ առաջարկությունը, որով ավելի ևս բոցավառեց պասկևիչյան կրքերը, որոնց թե-

լադրության տակ հորինվում էին նոր ու նոր մեղադրանքներ: Ներկայացնելով իր այս հեղինակությունները Պետերբուրգի կառավարությանը, Պասկևիչը ներշնչում էր նրան այն միտքը, թե Ներսեսին պետք է հեռացնել Կովկասի սահմաններից, հակառակ դեպքում պետական շահերը շատ կվտանգվեն:

Չափազանց հետաքրքրական են այդ մեղադրանքներից մանավանդ երկուսը՝ ամենագլխավորները: Առաջինն այն էր, որ Պասկևիչը գտնում էր, թե Ներսեսն, իբրև Երևանի կառավարության անդամ, առաջ է քաշում հայերի շահերը, նախապատվություն է տալիս նրանց ի վնաս մահմեդական ժողովրդի շահերի: Այս վարմունքը հակասում էր, իբր թե, Պասկևիչի քաղաքականության, որի հիմքն է, իբր թե, հավասար և արդարացի վերաբերմունք անխտիր դեպի բոլոր այն ժողովուրդները, որոնք մտել են ռուսական տիրապետության տակ: Այս բյուրոկրատական վատ տեսակի մի հերյուրանք էր: Հավասար վերաբերմունքը, իհարկե, միակ ցանկալի միջոցը կարող է լինել կառավարության մեջ, եթե միայն հավասար վերաբերմունքի առարկա դարձող ժողովուրդները հավասար տնտեսական պայմանների մեջ են ապրում: Բայց հայ ժողովրդի մի շատ խոշոր մասն այդ իսկ ժամանակ գտնվում էր տնտեսական սոսկալի պայմանների մեջ և այս՝ շնորհիվ հենց նույն Պասկևիչի գործադրած բռնի միջոցների: Ներսեսի առանձին հոգացողությունը վերաբերում էր պարսկահայ գաղթական ժողովրդին, որ թողել էր իր բարեկից դաշտերը և տեղափոխվելով նոր հայրենիք, շնորհիվ դարձյալ նույն Պասկևիչի անուշադրության և ոճրագործ ժլատության, կորցրել էր ամեն ինչ և կոտորվում էր հազարներով: Այս աղետը պահանջում էր արտակարգ օգնության միջոցներ, և միայն ցարական անհոգի սատրապն էր, որ այսպիսի անօրինակ աղետալի ժամանակ, իր մանր կրքերը հագեցնելու համար, առաջ էր բերում հավասար վերաբերմունքի պատրվակը երկու՝ բոլորովին ոչ հավասար դրության մեջ գտնվող ժողովուրդների նկատմամբ, որոնցից մեկը, հայերը, ամբողջովին զոհ էր բռնի գաղթեցման, իսկ մյուսը, մահմեդականները, ինչ էլ լիներ նրա տնտեսական դրությունը, բախտավոր էր գոնե այնքանով, որ ազատ էր այդ գաղթեցման սարսափներից: Բայց եթե չլիներ էլ գաղթականների հարց, դարձյալ Պասկևիչի «հավասար վերաբերմունքը» կմնար դատարկ խոսք: Հավասար վերաբերմունքը պիտի հիմնված լինի ոչ միայն հավասար իրավունքների, այլև հավասար պարտավորությունների վրա: Հայերից պահանջում էին անթիվ զոհողություններ ռուսաց տիրապետության հաջողության համար: Հայերը կոտորվում էին, քայքայվում էին տնտեսապես և ինչ էին ստանում այս սոսկալի պարտավորության փոխարեն: Պարսկահայ գաղթականությունը դեռ նույնիսկ չտեղավորված Արարատյան երկրում, Պասկևիչը նրանից զորք էր պահանջում և, հավաքելով մոտ 2000 հոգի, ուղարկում էր պատերազմելու օսմանյան բանակի դեմ: Այսքան արյունոտ պարտավորություններ կատարում էր, այսքան ծանր զոհեր տալիս էր հայ ժողովուրդը լոկ, որպեսզի արժանանա հավասար վերաբերմունքի այն մահմեդական ժողովրդի հետ, որ իսպառ ազատ էր այդ պարտավորություններից ու զոհերից: Այսպիսի մի «շնորհ» կարող էր «վայելել» միմիայն մի տանջված ժողովուրդ: Եվ ո՞վ էր, որ այսպիսի ստրկական անարգ դրության մեջ ներկայացրել էր հայ ժողովուրդը ռուսական նվաճողականության: Ցարապաշտ և ինքնապաշտ հայ հոգևորականությունը, և ամենից շատ, իհարկե, հենց ինքը Ներսեսը:

Երկրորդ մեղադրանքը, որ բարդում էր Պասկևիչը Ներսեսի վրա, այն էր, թե նա աշխատում է ավելացնել էջմիածնի վանքի հողային հարստությունները ի վնաս պետական գանձարանի: Այս ձգտումներից միայն մի հատ օրինակ էր հիշատակում նա, այն, որ երբ ռուսաց կառավարությունն իր ձեռքն

էր առնում Կողբի աղահանքը, Ներսեսը հայտարարություն արավ, որ այդ հանքի մի երրորդական մասը բյուզանդական Հերակլ կայսրը յոթերորդ դարի առաջին կիսում նվիրել է էջմիածնի վանքին։ Ուրեմն, լոկ մի հայտարարություն միայն, ուրիշ ոչինչ։ Բայց այս միանգամայն անմեղ փորձից Պասկևիչը հանում էր մի ահագին եզրակացություն։ Արդեն, ասում էր նա, Ղարաբաղի խանության գրեթե բոլոր հողերն անցել են մասնավոր սեփականատերերի, և պետական գանձարանն այնտեղ գրեթե ոչինչ չունի։ Միևնույն դրությունն ուզում են ստեղծել նաև Երևանի խանության մեջ, և ստեղծել ուզողը, իհարկե, ուրիշ ոչ ոք չէ, բայց միայն Ներսեսը։ Ինքը Պասկևիչը թույլ չի տալիս, որ պետական սեփականությունը հափշտակման ենթարկվի, և այստեղ է ահա, որ Ներսեսը հակառակ է գնում նրա քաղաքականությանը։ Այստեղ Երևանի նորապսակ կայսրը, վստահ, որ իր թուղթը պիտի գաղտնի մնա բարձր կառավարության դիվաններում, բացարձակ ստախոսության էր դիմում։ Այն մարդը, որ Կողբի աղահանքի մի մասի վերաբերմամբ արած բերանացի հայտարարությունը դարձնում էր գրեթե մի պետական հանցանք և որ կուրծք էր ծեծում, թե Ղարաբաղի հողերը խլվել են մասնավոր մարդկանց ձեռքով պետությունից, նույն այդ միջոցին հաջողեցնում էր երկար բանակցությունների միջոցով համոզել Ղարաբաղի Մեհտի Ղուլի խանին և նրա հետ Պարսկաստան փախած բեկերին, որ նրանք վերադառնան իրենց հայրենիքը, ուր նրանք 1826 թվին ապստամբեցրել էին Նազիմկայի զորաբաժինը Հաքարու գետի վրա։ Այս փախստականների խոշոր կալվածները պետականացվել էին Երմոլովի ձեռքով, և այժմ Պասկևիչը խլում էր պետությունից այդ մեծամեծ հարստությունները և դարձնում էր նրանց մասնավոր սեփականություն։ Այս մի հանցանք էր ոչ միայն պետության, այլև այն տասնյակ հազարավոր գյուղացի աշխատավորների դեմ, որոնց փխրուն մեջքի վրա դարձյալ բարձվում էր մասնավոր կալվածատիրական ամբողջ ծանրությունը։

Խոշոր ու մանր ստերի մեջ գլուխ կորցրած փառապանծ երևանյան կոմսն ինքն էլ զգում էր, որ այսպիսի հերյուրանքները նույնիսկ Նիկոլայի բռնակալության մեջ էլ դեռ բավական չէին մի մարդ կորցնելու համար։ Ուստի նա քաղաքական ստոր մատնությունն էլ իրեն թույլատրված միջոց էր համարում՝ նպատակին հասնելու համար։ Ներսեսը գաղափար էր ունեցել էջմիածնին պատկանող գյուղացիներից հավաքել մի 180 կամ 200 մարդ, դարձնել նրանց մշտական զորք բացառապես վանքի պաշտպանության համար։ Այդ մտադրությունը, որ նոր-նոր գործ դառնալու վրա էր, հիմք էր տալիս Պասկևիչին հայտնելու իր «ամենողորմ» կայսեր, թե Ներսեսը հայկական բանակ է կազմում՝ հայերին ապստամբեցնելու համար։ Զգալով սակայն, որ այսքան ծանրակշիռ մի ամբաստանություն փաստերով միայն կարելի է հավանական դարձնել, երևանյան կոմսն շտապում էր նոր գրություններով մեղմել իր այս մատնությունը, հավաստիացնելով, թե այսպիսի ապստամբություն չի կարող լինել, և Ներսեսը ապստամբելու միտք չի ունեցել։ Սակայն արդեն ստեղծված էր պատշաճավոր տպավորություն։ Պասկևիչի բազմահատոր կենսագրության հեղինակը, որ ունեցել է ձեռքի տակ իր հերոսի բոլոր գրագրությունները, մատը դնում է մի հանգամանքի վրա, որ կարելի է համարել բոլոր պատճառների պատճառ։ Նա ասում է, թե Երևանի և Նախիջևանի խանություններին Հայոց մարզ անուն տալը «առիթ էր դարձել թեթևամտորեն ենթադրելու, թե մեր կառավարությունը կամենում է մի տեսակ վերածնել հայ ազգությունը»։

Այս միանգամայն ճիշտ է և չէր թաքցվում ոչ ոքից։ Երկրին «հայկական» անուն տալը հենց այդ մտքով էլ կատարված էր, քանի որ այն ժա-

մանակները երկու խանությունները հայկական անվանել չէր կարելի աշխարհագրական տեսակետից։ Եվ այսպես էլ իրողությունը հենց առաջին իսկ քայլից ըմբռնվել էր նույն այդ Հայկական մարզի մեջ։ Դեռ բոլորովին նոր էր այս անունը մտցվել Ռուսաստանի վարչական աշխարհագրության մեջ, երբ Երևանի և նրա շրջակա գյուղերի հայ հասարակության կողմից մի բազմաստորագիր դիմում էր խմբագրվում, ուղղված էջմիածնի հոգևոր վարչության, որի մեջ, ի միջի այլոց, կոչ էր արվում ամբողջ աշխարհում ցրված հայությանը՝ գալ հավաքվել Արարատյան երկրում, ուր մի ժամանակ հայոց թագավորությունն էր եղել, և ուր այժմ ռուսների ձեռքով նորից հաստատվել է ազատությունը։ Այսպիսով ռուս բյուրոկրատիայի աչքի ակներև էր դառնում, որ հայ ժողովրդի մեջ ծնվել է ազգային գիտակցություն, և այս քաղաքական դաստիարակության ուժ է տվել հենց ինքը, ռուսաց կառավարությունը։ Եվ բյուրոկրատիան Կովկասում շտապում էր խլացնել մարտի 21-ի ցարական ուկազի առաջադրած այդ ազդեցությունը։ Պասկևիչը առաջինն էր, որ արծարծում էր հայերի ազգային գիտակցության հարցն իբրև վտանգ ռուս պետականության համար և նրանով էլ հարվածում իր ատելության առարկա դարձած Ներսեսին։ Դեռ երեկ էր, որ Արարատյան երկրում լուծվում էր հնուց ապրող և հնուց արյունոտ հայոց հարցը իբրև քրիստոնյա ռայայի դրության հարց մահմեդական տիրապետության տակ։ Այսօր նույն այդ տեղում ծնունդ էր առնում դարձյալ մի հայոց հարց, բայց արդեն նոր բովանդակությամբ՝ հայ ժողովրդի ազգային գիտակցության, ազգային վերականգնման հարցը ցարական Ռուսաստանում։ Այս նոր բովանդակության վիճակվում էր սկըզբում մի դանդաղ զարգացում, բայց և այնպես, նա, այդ նոր բովանդակությունը, պակաս տանջալից չպիտի լիներ, քան հինը։

Այժմ տեսնենք, թե ինչպես էր վերաբերվում Նիկոլայ կայսրը Պասկևիչի հերյուրանքներին։ Ասել, թե նա մոտիկից և հիմնավորապես չէր ճանաչում իր երևանյան կոմսի բնավորությունը, չի կարելի։ Կա նրա մի մասնավոր նամակը, որի մեջ նա մտերմորեն, մեղմ խոսքերով հանդիմանում էր իր սիրելի Պասկևիչին, թե նա շատ է ամբարիշտ ու կոպտաբար իր ստորադրյալների և օգնականների հետ, թե նա լոկ կասկածամտությունից, լոկ կրքոտությունից դրդված՝ հալածում է և այնպիսի մարդկանց, որոնք պետական պարկեշտ և օգտակար պաշտոնյաներ են, ազնվությամբ և խղճի մտոք կատարում են իրենց պարտականությունը և ցանկություն էր հայտնում, որ թշնամուն հաղթող Պասկևիչը հաղթահարե ինքն իրեն էլ, իր բնավորությունը, որպեսզի նրա հետ միասին ծառայելը հնարավոր դառնա բոլոր ընդունակ մարդկանց համար։ Այս մի հանձնարարություն էր, որ, ըստ երևույթին, լավագույն պաշտպանությունը պիտի դառնար Պասկևիչի հալածանքների առարկա դարձածների համար։ Բայց այսպես չէր։ Նիկոլայը, մի խոշոր բռնակալ, անկարելի էր համարում չշոյել Պասկևիչի, փոքրիկ բռնակալի, հիվանդոտ ինքնասիրությունը, ուստի և կատարում էր նրա բոլոր քմահաճույքները, որպեսզի այդպիսով ունենա մի խրախուսող հրամանատար՝ թշնամիներին հաղթելու համար։ Եվ հասկանալի է, որ խոշոր բռնակալը բացառություն չէր կարող անել Ներսեսի վերաբերմամբ, մանավանդ, որ Պասկևիչի խուլ ակնարկները նրա անհավատարմության և դավադրական տրամադրության մասին պետք է, որ հարուցած լինեին կասկածներ այդ անողոք մարդու մեջ, որ պատեհ ժամանակին պատրաստ էր դեն դնել թագավորական ծիրանին և կատարել ժանդարմի և բանտապետի պաշտոն։

Ներսեսի վտարումը կովկասյան սահմաններից վճռված էր։ Մնում էր, որ բռնակալությունն իր այս գործողությունը փոքր ի շատե վայելուչ խա-

բերայական ձևի մեջ դներ։ Լավ, որ աշխարհի վրա կար մի հայ ժողովուրդ, որ իր պատմական թշվառ վիճակի մեջ, անճար ու հարստահարված, իրեն կարոտ էր զգում աշխարհի բռնակալների ողորմության։ Շահագործվում էր հենց այս հանգամանքը։ Պետք է սկսվեր պատերազմ Ռուսաստանի և Թուրքիայի մեջ, և Նիկոլայը կարիք էր զգում Եվրոպական Թուրքիայի հայերին իր ողորմությունն ու շնորհները բաշխելու համար ունենալ մի եռանդոտ ու հեղինակավոր հայ եպիսկոպոս ռուս-թուրքական սահմանագլխի վրա, Բեսարաբիայում։ Եվ որովհետև Բեսարաբիայի հայոց առաջնորդը վախճանվել էր, ուստի Եփրեմ կաթողիկոսին Պետերբուրգի կառավարության կողմից թուղթ էր գրվում, թե կայսեր կամքն է, որ այդ պաշտոնը Բեսարաբիայում կատարե Ներսեսը։ Այս, սակայն, վերջնական մի հրաման չէր։ Եթե, ասված է հաղորդագրության մեջ, ծերությունը, տկարությունը կամ մի այլ հանգամանք արգելում են Ներսեսին գնալ Քիշինև, այդ դեպքում նրա տեղը պիտի ուղարկվի մի ուրիշ ընդունակ եպիսկոպոս։ Շատ բան էր արված, որպեսզի Ներսեսը հասկանա, թե ինքը ժամանակավորապես պիտի հեռանա Թիֆլիսի իր պաշտոնից։ Այսպես, նրան գրվում էր, որ եթե համաձայնվի գնալ Բեսարաբիա, իր տեղը թողնե մեկին՝ գործերը կառավարելու համար։

Անկասկած էր երևում, որ Ներսեսի ազատ կամքին էր թողնված գնալ կամ չգնալ։ Բայց այս խաբեբայություն էր միայն։ Պասկևիչը հաղորդելով նրան, թե նա ինքը պիտի որոշե՝ թույլ տալի՞ս են նրա անձնական պայմանները կատարել կայսերական կամքը, ինչպես նաև այն, որ եթե ինքը չկարողանա գնալ՝ մի ուրիշին պիտի ուղարկե, միաժամանակ կարգադրում էր, որ նրան ճանապարհածախս տրվի պետական գանձարանից։ Այս նշանակում էր, որ բոլոր մյուս բաները դատարկ ձևեր են, և Ներսեսն ուզե-չուզե, պիտի ճանապարհվի Բեսարաբիա։

Այս կարգադրությունները Ներսեսն ստանում էր Էջմիածնում, ուր շուտով վերադարձավ և Եփրեմ կաթողիկոսը, որ տարագիր էր եղել իր աթոռից, ինչպես տեսանք, 1821 թվականից ի վեր։ Ներսեսն, իհարկե, իսկույն հասկացավ, որ ամբողջ գործը Պասկևիչի սարքածն է։ Բայց իբրև եռանդուն բնավորություն, նա իսկույն չընկճվեց և վճռեց գնալ բացատրվելու նախ Պասկևիչի հետ, ուստի նամակով խնդրեց նրանից նշանակել տեսակցության ժամանակ և տեղ։ Պասկևիչը խուսափողական պատասխան տվեց։ Ներսեսը կարծում էր, թե արդարություն կգտնի իր պաշտած ցարի մոտ, ուստի ամառվա մեջ ճանապարհվեց Թիֆլիս և այնտեղից շտապով անցավ Կովկասյան լեռնաշղթան, ետ դարձնելով Պասկևիչին նրա նշանակած ճանապարհածախսը և պատճառաբանելով այդ մերժումը նրանով, թե ինքը կարող է ճանապարհորդել իր սեփական միջոցներով։ Նա վճռել էր ուղղակի գնալ Պետերբուրգ, ներկայանալ Նիկոլային և արդարանալ նրա առջև։ Սակայն իզուր։ Հյուսիսային Կովկասում նա ստացավ կարգադրություն գնալ ուղղակի Քիշինև։ Նիկոլայն էլ մերժում էր ընդունել այն մարդուն, որի հավատարմությունը և մեծամեծ ծառայությունները հօգուտ Ռուսաստանի նա ընդամենը մի քանի ամիս առաջ վեր էր հանել իր հրովարտակի մեջ։

Կատարյալ աքսոր էր, ձևակերպված պաշտոնական և բարձրագույն ստախոսությունների մեջ։ Եվ Ներսեսին ուրիշ ոչինչ չէր մնում, բայց միայն հնազանդվել իր վիճակին։ Ուրիշ ի՞նչ կարող էր անել մի Ներսես, որի համար եթե եղել է մի պարծանք նույնիսկ այժմյան դառն հանգամանքների մեջ, այդ այն է եղել, թե ինքը մի հավատարիմ և ջերմեռանդ ցարապաշտ էր։ Իզուր մի ուրիշ նույնպիսի ցարապաշտ՝ զառամյալ և ողորմելի Եփրեմ կաթողիկոսը, Էջմիածնից աղաչում էր «սուրբ կայսրին» բաց թողնել Ներսեսին, որ գնա

Էջմիածին, ուր ինքը պիտի նրան հանձներ կաթողիկոսությունը և հեռանար գործերից։ Ներսեսը աքսորված մնաց Բեսարաբիայի պես մի խուլ անկյունում, հայությունից հեռու, ամբողջ 15 տարի։ Այս էր նրա վարձատրությունը 27 տարվա մոլեգնոտ ցարապաշտության համար։

Քիշինևից Ներսեսը շնորհակալության մի թուղթ գրեց Պասկևիչին, գովելով նրա արդարադատությունը, ուշադրությունը դեպի իրեն և խնդրելով, որ նա իր խնամքը տարածի հայ ժողովրդի, մանավանդ պարսկահայ գաղթականների և էջմիածնի վրա։ Ի վերջո աքսորականը ջերմ շնորհակալություն էր հայտնում իր աքսորողին այն պատճառով, որ նա իրեն ճանապարհածախս էր տվել, որ, սակայն, չկարողացավ ընդունել ինքը, չկամենալով ծանրաբեռնել արքունի գանձարանը։ Պասկևիչը հասկացավ, որ այս մի ստրուկի տրամադրության տակ գտնված միակ միջոցն է հեգնանք արտահայտելու համար և ինքն էլ արդեն բացարձակ հեգնանքով պատասխանեց նրան։ Այսպիսով էլ վերջացավ անձնական բանավեճը այդ երկու մարդկանց միջև։ Բայց Պասկևիչը այնուհետև էլ դեռ շատ միջոցներ ուներ Ներսեսին կողմնակի կերպով հարվածելու համար։ Ներսեսը թողել էր Թիֆլիսում կողմնակիցներ և գործակիցներ, թողել էր և իր հիմնած դպրոցը, որ հետզհետե բարեկարգ մի հիմնարկության դիրք ու ժողովրդականություն էր ստանում։ Հալածել այն բոլորը, ինչ թողել էր Ներսեսը, չխնայելով նույնիսկ և դպրոցը, ահա ինչն էր դառնում երևանյան փառամոլ կոմսի սիրելի զբաղմունքը։

Անարդարություն կլիներ, սակայն, կարծել, թե Պասկևիչն ինքը միայնակ էր գործում Ներսեսի դեմ։ Այս բանի մեջ նա շրջապատված էր մի խումբ հայ հոգևորականներով, որոնք Ներսեսի հակառակորդներն էին և մեծ աշխույժով գործակցում էին Պասկևիչին՝ իրենց հակառակորդին անխնա տապալելու համար։ Դրանցից մեկը, կաթողիկոսությունը նոր թողած և գիտնական կղերականի համբավ ստացած Սերովբե վարդապետն արդեն գրավել էր Պասկևիչի մոտ այն տեղը, ինչ մի ժամանակ ուներ Ներսեսը։

Գլուխ երրորդ

ԵՐԿՐՈՐԴ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ
(1828—1829)

1. **Հունական ապստամբությունը:** Դեռ 1827 թվի ամառը, Երևանի գրավումից էլ առաջ, Պետերբուրգի կառավարությունը հաղորդում էր Պասկևիչին, որ հարաբերությունները Թուրքիայի հետ այնքան լարված են, որ պատերազմը Ռուսաստանի և այդ պետության մեջ գրեթե անխուսափելի է դառնում։ Պասկևիչը նկատի էր առնում իրեն արված ցուցմունքը և Թավրիզի վրա արշավելու ծրագիրը հարդարում էր այնպես, որ բավական զորք մնա Երևանի խանության մեջ, որպեսզի կարելի լինի, ռուս-թուրքական պատերազմի բռնկման դեպքում, պատերազմ մղել երկու ճակատների վրա, այսինքն՝ Պարսկաստանի և Թուրքիայի դեմ միաժամանակ։ Արդեն պարզված էր ռուս կառավարության համար, որ ռուս-պարսկական պատերազմը գրգռող հանգամանքների մեջ Թուրքիայի սուլթանը վերջին տեղը չէր բռնում։ Եվ եթե Պարսկաստանը այնքան պարտություններ կրելուց հետո դեռ էլի համառում էր պատերազմը շարունակելու, այստեղ էլ խառն էր նույն սուլթանի մատը։

Թուրքիան մի մեծ և արդեն անբուժելի դարձող ցավ ուներ իր մեջ և կարծում էր, ոչ իհարկե, առանց հիմքերի, որ այդ ցավը Ռուսաստանի գործն է։

Այդ ցավը Հունաստանի հերոսական ապստամբությունն էր, որ տևում էր արդեն յոթերորդ տարին։ Սուլթան Մահմուդ Բ, մեկը օսմանյան դաժան բռնակալներից, միանգամայն անզոր երեկվա անլեզու ռայայի անսասելի հանդուգն ոգորման պատճառած անսահման կատաղության մեջ, կարիք էր զգում, որ Ռուսաստանն, իբրև հույների դրդիչ, զբաղված մնա պարսկական պատերազմով, մինչև որ ինքը կարող կլինի լարել իր պետության բոլոր ուժերը և ջախջախել հունական ապստամբությունը։ Այս, սակայն, սխալ հաշիվ էր։ Հունական մեծ ապստամբությունն այնպես էր դասավորում եվրոպական մրցակից պետությունների դիրքերն Արևելքում, որ Ռուսաստանը ուզենար-չուզենար՝ պիտի ամենագործոն դեր ստանձներ Թուրքիայի վերաբերմամբ։

Հունական ապստամբությունը չափազանց խոշոր մի երևույթ էր Արևելյան Հարցի պատմության մեջ, իբրև մեռած համարվող մի ժողովրդի հաղթական հարության երևույթ, որ դաս է եղել ուրիշ նկուն ժողովուրդների և մասնավորապես նաև հայերի համար, որոնց ճակատագրի վրա նա ազդել է անմիջապես, գրգռելով պատերազմ թուրքերի և ռուսների մեջ, մի պատերազմ, որ առաջին անգամ որոշակի դնում էր Թուրքահայոց հարցը։ Այս բոլորը անհրաժեշտություն է դարձնում, որ մենք գեթ ընդհանուր գծերով ծանոթանանք այդ ժողովրդական երկարատև և աննախընթացորեն արյունալից շարժմանը։

Մենք արդեն գիտենք, որ հույների առաջին ապստամբությունը Թուրքիայի դեմ տեղի ունեցավ ռուսների դրդմամբ և անխնայորեն ճնշվեց 18-րդ դարի երկրորդ կեսում։ Այս ազգային ազատագրության վերջնական ջախջախումը չէր։ Դարի վերջին ֆրանսիական մեծ հեղափոխության ազդեցության տակ կազմակերպվում է հունական գաղտնի հեղափոխական կոմիտե Հեթերիա անունով, նորից ապստամբական շարժում առաջացնելու համար, բայց կազմակերպությունը մատնվում է թուրքերին և ոչնչացվում։ Այնուհետև սերբիական ապստամբությունը, ռուսների ցույց տված գործոն աջակցությունն այդ ապստամբության, Բուխարեստի դաշնագրությունը, որ կնքվեց Ռուսաստանի ու Թուրքիայի մեջ 1812-ին և Սերբիայի ինքնավարական կարգ ստեղծեց, թեև Թուրքիան չկատարեց այդ կետը, նոր նորից խրախույսներ տվին հույներին կազմակերպելու կռիվ իրենց ազգային անկախությունը վերականգնելու համար։ 1814-ին երկրորդ անգամ կենդանանում է Հեթերիա գաղտնի կազմակերպությունը, որ և սկսում է եռանդուն հեղափոխական պատրաստություններ, խոշոր աջակցություն գտնելով ռուսաց կառավարության կողմից։

Հույն ժողովուրդն այս անգամ ավելի խոշոր տնտեսական ու մշակութային կարողությամբ էր հանդես գալիս՝ մի համատարած ժողովրդական ապստամբություն իրականացնելու համար։ Թուրքիայի հետ կնքած դաշնագրություններով Ռուսաստանը ձեռք էր բերել արտոնություն ազատ նավարկելու Սև ծովի վրա և առևտուր անելու թուրքական նավահանգիստներում։ Այս արտոնությունից շատ մեծ չափերով սկսեցին օգտվել հույն վաճառականները, որոնք առևտրական մեծ նավատորմ կազմեցին, որ լողում էր գլխավորապես ռուսական դրոշակի տակ և մեծամեծ օգուտներ էր քաղում առևտրից։ Այսպիսով սաստիկ ուժեղանում էր հունական բուրժուազիան, որ և բնական հետևանքով առաջ էր քաշում ազգային ազատագրության գաղափարը։ Միաժամանակ մեծանում էր և մտավոր շարժումը, դարձյալ իդեալ դարձնելով միևնույն գաղափարը. դպրոցն ու գրականությունը առանձնա-

պես ծաղկում էին առևտրական նավատորմի մեջ, հելլենականությունը ձեռք էր բերում այն ծովային հուժկու ուժը, որ հետո պիտի այնքան հերոսական դեր կատարեր ապստամբության ժամանակ։

Ալեքսանդր կայսրը սկզբում շատ էր համակրում հունական շարժման և մտածում էր դառնալ նրա պաշտպանն ու առաջնորդը, որ պատրաստ էր, հարկավոր դեպքում, նույնիսկ զենքի ուժ գործադրել նրա հաջողության համար։ Հունական գործը լավ պաշտպանված էր համարվում Ռուսաստանում մանավանդ այն պատճառով, որ Ալեքսանդրին շատ մոտիկ երկու մարդ հույներ էին. առաջինն էր կոմս Կապոդիստրիան՝ արտաքին գործերի մինիստր ռուսական կառավարության մեջ, և երկրորդը՝ Ալեքսանդր Իփսիլանտին, որ կայսեր համհարզն էր (ադյուտանտ)։ Վերջինս ընտրվեց Հեթերիայի պետ և հեղափոխության առաջնորդ։ Հեթերիան բազմաթիվ ճյուղավորություններ ուներ Թուրքիայի, Հունաստանի, Ավստրիայի և Ռուսաստանի զանազան քաղաքներում։ Ապստամբությունը պիտի սկսվեր 1821 թվականին Մոլդավիայում և Վալախիայում, ուր թուրքաց կառավարությունը գլխավոր կառավարիչ (հոսպոդար) էր ուղարկում Կ. Պոլսի հույներից։

Իփսիլանտին 1821-ին Ռուսաստանից անցավ Մոլդավո-Վալախիա, ունենալով իր հետ 300 կամավորներ և հրատարակեց մի կոչ, որով հրավիրում էր հույներին զենք վերցնել։ Սակայն այդ կոչը ազդեցություն չունեցավ մոլդավացիների և վալախացիների վրա, թեև նրանց հույն հոսպոդարը միացել էր Իփսիլանտիին։ Նրանք, ընդհակառակը, նույնիսկ ապստամբվեցին կոչի հեղինակների դեմ, և այսպիսով գործը հենց սկզբից ենթարկվեց անհաջողության։ Այսպես չէր բուն Հունաստանում, ուր ամեն ինչ պատրաստ էր և սպասում էր ազդանշանի։ Իփսիլանտիի կոչն այնտեղ, Մորեա երկրամասում ապստամբություն բարձրացրեց։ Սուլթան Մահմուդը պատասխանեց այդ շարժման, բոնկեցնելով մահմեդական ֆանատիկոսությունը։ Ժամանակակից մի հայ տարեգիր, Ավետիք վարդապետ Պերպերյան, շատ հետաքրքրական մի բացատրություն է տալիս այն դեպքերին, որոնք տեղի ունեցան Ալեքսանդր Իփսիլանտիի անհաջող փորձից հետո։ Նա ասում էր, թե Իփսիլանտին և իր գործակիցները Մոլդավո-Վալախիայից մի շարք նամակներ են գրում Կ. Պոլսի հունաց պատրիարքին և ուրիշ բարձրաստիճան հույն հոգևորականներին, հայտնում են նրանց, թե իրենք պատրաստվում են հարձակվել Կ. Պոլսի վրա և հորդորում են, որ նրանք էլ ամեն ինչ պատրաստեն՝ ներսից ապստամբվելու և ամեն ինչ կրակելու համար։ Այս նամակները դիտմամբ ուղարկվում են առանց զգուշությունների, որպեսզի նրանք ընկնեն թուրքերի ձեռքը։ Այսպես էլ լինում է։ Սուլթան Մահմուդը լուր առնելով այս կարծեցյալ դավադրության մասին, կատաղում է և հրաման արձակում, որ բոլոր մահմեդականները զենք առնեն և ոտի ելնեն իսլամը պաշտպանելու համար։ Բոնկվում է կրոնական ֆանատիկոսությունը և սկսվում են թուրքական գազանությունները։ Պատրիարք Գրիգորը զգեստավորված կախվում է հունաց պատրիարքարանի դռներից, նրա հետ զանազան տեղերում կախվում և սպանվում են 20 հայտնի հույն հոգևորականներ (միտրոպոլիտ, եպիսկոպոս, քահանա)։ Իփսիլանտին հասավ իր նպատակին։ Այս խժդժությունների լուրը ռումբի պես պայթեց Հունաստանում, առաջացնելով ընդհանուր հուզմունք, կատաղություն և վրեժխնդրություն։ Ապստամբությունը ստանում էր լայն չափեր, կռիվը դառնում էր համառ և երկարատև։ Բայց այս չի փրկում Իփսիլանտիին։ Թուրքական բանակը մտնում է Մոլդավո-Վալախիա, ջարդում ապստամբների փոքրիկ զորքը, Իփսիլանտին փախչում է ավստրիական հողը, բայց այնտեղ ձերբակալվում է և նստեցվում բանտ, ուր և մեռավ։ Սակայն

գործը կատարված էր։ Ամբողջ Հունաստանը հրդեհված էր, հայրենիքի ազատության կռիվը հանդես է բերում նոր և տաղանդավոր առաջնորդներ, որոնք անմահանում էին իրենց հերոսությունների մեջ և դառնում էին ժողովրդի նվիրական պաշտամունք։

Սկզբում ապստամբությունը միանգամայն հաղթական էր, այնպես որ թուրքական իշխանությունը վտարված էր գրեթե ամբողջ Հունաստանից։ Այդ հաջողությունը հնարավորություն էր տալիս հույներին կազմակերպելու իրենց սեփական ազգային կառավարությունը, որ հիմնվում էր ռամկավարական-հանրապետական սկզբունքների վրա, պահպանելով Ֆրանսիական մեծ հեղափոխության գլխավոր ավանդները։ Սակայն այս կատարյալ հաջողությունը ժամանակավոր երևույթ էր։ Որքան և ուժեղ ու համառ լիներ ապստամբությունը, որքան և թուլացած լիներ օսմանյան պետությունն, այնուամենայնիվ, ուժերի փոխհարաբերությունն այնպես էր, որ վերջիվերջո հուսահատական պայքարի մեջ գերիշխող հանդիսացողը պիտի լիներ ավելի խոշորը, ավելի հզորը, այսինքն՝ Թուրքիան։ Այս շատ լավ զգում էին և իրենք, հունական ապստամբության ղեկավարները, ուստի և որոնում էին աջակցություն դրսից։

Այստեղ, թվում էր, ազատագրվող Հունաստանը ամենից առաջ և ամենից շատ օգնություն պիտի ստանար Ռուսաստանի ինքնակալից, որ, ինչպես գիտենք, համակրում էր հելլենական շարժման և պատրաստ էր ամեն կերպ պաշտպանել նրան։ Բայց այս մի ժամանակ էր։ Ալեքսանդրը մի հեղհեղուկ և փոփոխամիտ բնավորություն ուներ, որ հեշտությամբ ենթարկվում էր ուրիշների ազդեցության, ուստի և հաճախ հակասում էր իր նախկին հայացքներին, ժխտում էր այն, ինչին երկրպագել էր մի ժամանակ։ Գահ բարձրանալով իբրև մի լավ, եվրոպական կրթություն ստացած երիտասարդ, տոգորված ազատական, սահմանադրական, նույնիսկ հանրապետական գաղափարներով, նա մի առժամանակ մեծ հույսեր էր տալիս, թե Ռուսաստանը նրա տիրապետության տակ կվերականգնվի նոր, ազատարար հիմունքների վրա, կդառնա սահմանադրական մի պետություն։ Բայց այսպիսի բան տեղի չունեցավ և չէր կարող ունենալ։ Այլ է խոսքը, այլ է գործը ցարական գահի վրա։ Ալեքսանդրն այնքան ենթարկվեց այդ գահի հետ կապված անզուսպ բռնակալական ավանդներին, որ շուտ մոռացավ ոսկի երիտասարդության երազները և հալածեց ու աքսորեց նույնիսկ այն մարդկանց, որոնց ինքն էր հանձնարարել մշակել սահմանադրական կառավարության եղանակ Ռուսաստանի համար։ Երկար ու ծանր մաքառումներից հետո հաղթելով Նապոլեոն կայսրին, նա իրեն համարում էր Եվրոպայի ազատարար։ Եվ ինչի՞ց էր նա ազատում Եվրոպան. Նապոլեոնը Ֆրանսիական մեծ հեղափոխության գաղափարակիրն էր հանդիսանում շատ կողմերից։ Եվ ոչնչացնելով Նապոլեոնին, Ալեքսանդրը պարծենում էր, թե ինքը ոչնչացրել է դրանով հեղափոխությունը, վերանորոգել է հեղափոխությունից առաջ եղած հին կարգը, այսինքն՝ պետության ավատական կազմակերպությունը, ճորտատիրությունը, անսահման բռնակալությունը։ Այդ օրվանից է, որ ռուսաց կայսրները դառնում են Եվրոպայի հետադիմության սյուներ, կամ ինչպես ասում էին այն ժամանակ, «Եվրոպայի ժանդարմներ»։ Այս դերն ամենայն հաջողությամբ կատարելու համար Ալեքսանդրը 1815 թվին համաձայնեցնում է Պրուսիայի թագավորին և Ավստրիայի կայսրին ընդունել իր կազմած ու խմբագրած մի դաշնագիր, որ ստացավ Սրբազան անունը և որի ամենագլխավոր նպատակն էր թույլ չտալ այլևս, որ եվրոպական հողի վրա տեղի ունենա հեղափոխություն։ Այս «սրբազան դաշնագրությունը» արտասովոր ուժ և հեղինակություն է տալիս

ավստրիական մինիստր Մետերնիխին, որ և այդպիսով դառնում է Եվրոպան խեղդող խավար ռեակցիայի չար ոգին։ Հունական ապստամբությունն այդ ամենակարող խավարապաշտի կատաղի ատելությանն էր արժանանում նախ և առաջ իբրև մի հեղափոխություն, իբրև ըմբոստացում օրինական տիրոջ դեմ։ Սրբազան դաշնագրությունը մի ուխտ էր պաշտպանելու բոլոր թագակիր բռնակալների բնական, այսպես կոչված աստվածային իրավունքները, և այս կողմից թուրքաց սուլթանը մի զոհ էր, որին պետք էր ազատել ապստամբության ճանկերից, և Մետերնիխն ամեն կերպ աշխատում էր, որ հույները մեկուսացած մնան, առանց արտաքին օգնության, որպեսզի սուլթանը կարողանա ճնշել նրանց ապստամբությունն անխնայորեն։ Նրա այս քաղաքականության միանգամայն համամիտ և գործակից էր նաև անգլիական կառավարությունը։

Ալեքսանդրը հունական հարցում կաշկանդված էր իր սեփական ստեղծագործության կապանքներով։ Ճիշտ է, նա էլ ատում էր այն ազատ հանրապետական սկզբունքները, որ մտցրել էր հունական ապստամբությունն իր ստեղծած կառավարական ձևի մեջ, բայց և այնպես, գտնում էր, որ հույներին չի կարելի թողնել անպաշտպան։ Միջամտելու անհրաժեշտությունը դառնում էր հետզհետե հրամայողական, մանավանդ այն ժամանակից, երբ թուրքերը ուժեր հավաքելով սկսեցին ետ մղել ապստամբներին շատ տեղերից և նորից վերականգնել սկսեցին իշխանությունը, ընկերացնելով այդ բանին իրենց սովորական գազանությունները և մասսայական կոտորածները։ Սուլթան Մահմուդն օրինակ էր տալիս իր հաջորդներին, թե ինչպես պիտի արնախում սուլթանիզմն ազատվի իր ըմբոստ հպատակներից։ Բոլոր փոքրիշատե նշանավոր հունաբնակ վայրերը, որոնք հարել էին համահելլենական ազատագրական շարժման, խեղդվեցին արյան գետերի մեջ։ Յուսուֆ փաշան, որ ուղարկված էր Մորեա, վերցրեց Պատրա քաղաքը և կոտորեց 15 հազար մարդ։ Մեծամեծ կոտորածներ եղան Կ. Պոլսում ու նրա շրջականերում, Թրակիայում, Մակեդոնիայում, Կիպրոս և Կրետե կղզիներում և ուրիշ շատ տեղերում։ 1822 թ. ապրիլին ծովակալ Կարա Ալի փաշան 16 հազար զորքով գնաց նորից նվաճելու ապստամբության հարած Քիոս կղզին։ Արշիպելագոսի այս ծաղկած և շքեղ թագուհին ամայացավ, ծածկվելով արյան ճանապարհներով։ Կղզու քսաներեք հազար բնակիչ սրի քաշվեց, իսկ քառասունյոթ հազար մարդ, մեծագույն մասամբ աղջիկ և կին, գերի վաճառվեցին։

Այս սարսափները շարժեցին ռուսաց ցարի «գութը» և նա ուզում էր ազդու միջոցներ գործ դնել սուլթանական հրեշավոր ոճիրների դեմ և խնդրում էր իր հիմնած Սրբազան դաշնագրության մասնակիցների համակցությունը։ Բայց համաձայնություն չեղավ։ Մետերնիխը, որ հաճությամբ էր դիտում, թե որքան դաժանորեն է սուլթանը լուծում հունական հարցը, իր կատարյալ ազդեցության տակ գցեց անհաստատակամ կայսրին, ներշնչելով նրան իր սեփական հայացքը, այն, որ հույները հեղափոխություն են կատարում, իսկ դաշնակիցների պարտքն է ոչ միայն չխրախուսել հեղափոխությունը, այլ ուղղակի ճնշել նրան, ինչպես այն արված է արդեն Իսպանիայում և Իտալիայում, զենքի ուժով խեղդելով այդ երկրներում ծագած հեղափոխությունները։ Ավստրիական մինիստրն, իհարկե, լոկ սև գաղափարապաշտ էր այդ դեպքում։ Ավստրիան Ռուսաստանի հին մրցակիցն էր Բալկանյան թերակղզում, և Մետերնիխը բոլորովին չէր ցանկանում մի ազատ Հունաստան, որ պիտի ուժեղացներ Ռուսաստանի ազդեցությունը Թուրքիայի եվրոպական մասում։ Եվ Ալեքսանդրը հպատակվում էր իր ձեռքով բարձրացրած և Եվրոպայի տեր դարձած այս խավարի իշխանին։ Նա բողոքում էր ոչ թե այն բանի դեմ, որ

սուլթանը ճնշում է ապստամբված հույներին, ոչ, այդ նրա իրավունքն էր, այլ այն բանի դեմ, որ սուլթանը չգիտե ապստամբություն ճնշելու ավելի մեղմ, բայց դարձյալ ազդու միջոցներ։ Ալեքսանդրը մեծ կասկածով էր վերաբերվում Հունաստանում սահմանված հանրապետական կարգին և կարծում էր, որ լավագույն ելքը կլիներ, եթե Հունաստանը բաժանվեր երեք մասի և գտնվեր Ռուսաստանի հովանավորության տակ, շարունակելով մնալ օսմանյան պետության մի ինքնավար մասը։

Բայց հունական ապստամբությունը, որ գիտեր լարել ժողովրդական բոլոր ուժերը հերոսական կռվի մեջ, իմացավ նաև պաշտպանել այն ձևը, որի մեջ նա ուզում էր ձուլել ահավոր ջանքերով ձեռք բերվելիք ժողովրդական ազատությունը։ Նա երբեք հավանություն չտվեց ցարական հոգածություններին և հենվելով իր սեփական ուժերի վրա, բարեկամություն և աջակցություն էր որոնում Արևմտյան Եվրոպայի հասարակական կարծիքի մեջ։ Ուստի մի կողմից հսկայական ջանքեր էր գործադրում պատերազմի դաշտում թուրքերի ձեռքից գերակշռությունը խլելու համար, մյուս կողմից դիմումներ էր անում եվրոպական ազգերի մտքին ու զգացմունքին։ Եվ երկու ձգտումներն էլ հաջողվում էին լավագույն կերպով։ Դարձյալ հաջողությունն անցնում էր հունական զենքին, նահանջի դատապարտելով թուրքական զորքերը։ Հրաշքներ էր ցույց տալիս մանավանդ հունական նավատորմը, որ գործում էր Կանարիս և Միաուլիս անպարտելի քաջ ծովակալների առաջնորդությամբ։ Դժբախտ Քիոսի վրեժը նա լուծեց մեծ չափերով, ոչնչացնելով Արշիպելագոսում թուրքական ռազմանավերը և կոտորելով մի քանի հազար ծովային թուրք զինվորներ։

Այս հերոսությունները հիացմունք էին տարածում Եվրոպայում, ավելի և ավելի ուժ տալով այն շարժման, որ, ինչպես գիտենք, վաղուց արդեն գոյություն ուներ այնտեղ և կոչվում էր հելլենասիրություն (ֆիլելլինիզմ)։ Այս՝ սիրո և համակրանքի մի շարժում էր, որի առարկան հին փառավոր Էլլադայի հիացուցիչ հիշատակն էր։ Ժամանակակից հույները, սխալ թե ուղիղ, համարվում էին հարազատ սերունդ այն մեծ ժողովրդի, որ այնքան մեծագույն հուշարձաններով հիմք էր դրել եվրոպական քաղաքակրթության։ Ազատել այդ նվիրական օրրանը և նրա մեջ ապրող ժողովուրդը ստրկության և հավիտենական ավերակների անեծքից. այս էր ահա, որ ոգևորում էր Եվրոպայի շատ մտավոր և քաղաքական շրջանները։ Զարգանում և լայնածավալ տարածվում էր պրոպագանդը հօգուտ իր ազատության համար նահատակվող հույն ժողովրդի, պատրաստելով հասարակական ուժեղ կարծիք և կազմակերպելով օգնության այլևայլ տեսակի գործեր։ Գոյություն ստացավ մի ամբողջ հելլենասիրական գրականություն, լրագրությունն ամեն օր քարոզություններ էր անում, դրամական հանգանակություններ էին կատարվում, շատ մարդիկ, մանավորապես զինվորականներ, կամավոր էին գրվում և գնում Հունաստան՝ նրա ազգային ազատագրական կռվին մասնակցելու համար։ Գնացողների մեջ էր և անգլիական հանճարեղ բանաստեղծ լորդ Բայրոնը։ Հունական ապստամբության պարագլուխների մեջ ծագել էին տարաձայնություններ, որոնք անձնական թշնամությունների հանգեցրին և առաջ բերին նույնիսկ ազգամիջյան պատերազմ, որ սպառնում էր կործանել ամբողջ ապստամբական շարժումը և վերջնական հաղթանակ պարգևել թուրքական սուլթանին։ Մեծ բանաստեղծը ջանք էր թափում հաշտեցնելու և նորից միացնելու հակառակորդներին, բայց հենց այդ ջանքերի մեջ էլ նա մեռավ Մեսոլոնգի բերդի տակ։

Հելլենասիրությունը շատ խոշոր օգնություններ հասցրեց հունական

ապստամբության։ Այսպես, մինչդեռ Թուրքաց կառավարությունը դրամական մեծ կարիքի մեջ էր, ապստամբությանը հաջողվում էր երկու անգամ (երկրորդ անգամը՝ լորդ Բայրոնի ջանքերով) փոխառություն կնքել Լոնդոնում և այսպիսով վերակազմել իր ուժերը՝ հերոսամարտն ավելի մեծ տոկունությամբ շարունակելու համար։ Բայց հելլենասիրության մեծագույն նվաճումն այն էր, որ նրա ներկայացուցիչներից մեկը, Կաննինգը, Անգլիայում կառավարության գլուխ է անցնում։ Այս մի առիթ է դառնում, որ արմատապես փոխվի Անգլիայի թշնամական վերաբերմունքը դեպի հունական ապստամբությունը։ Կաննինգը սիրում էր երևակայել, թե որքան լավ կլինի տեսնել հին Ալկիբիադեսի և Պերիկլեսի այսօրվա ժառանգներին հավաքված իրենց պառլամենտում օրենսդրական աշխատանքներ կատարելիս։ Եվ նա գործ էր դնում իր ձեռքի տակ եղած միջոցները, որպեսզի իրականանա այս հելլենասիրական երազը։ Սակայն չպետք է կարծել, թե միանգամայն անվարձ էր անգլիական պետական գործչի այս սերը դեպի Հոմերոսի և Ֆիդիասի հայրենիքը։ Կաննինգը քաղաքական ծրագիր ուներ, որ պիտի վերածեր այդ սերը զուտ բրիտանական ոսկու։ Դրա համար հարկավոր էր, որ հունական ապստամբությունը մտնի ճգնաժամային դրության մեջ։

Սուլթան Մահմուդը զգալով իր թուլությունը երեկվա իր ստրուկների համառ խիզախության հանդեպ, Մետերնիխի խորհրդով, ապստամբության ճնշումը հանձնեց Եգիպտոսի Մեհմեդ Ալի փաշային, որ իր գրեթե անվանական վասալն էր և ուներ եվրոպական կարգերով մարզված մի ընտիր բանակ և նավատորմ։ Փաշան ընդունում է այս հանձնարարությունը և ուղարկում Հունաստան զորք և նավատորմ, դնելով նրանց իր որդի Իբրահիմ փաշայի հրամանատարության տակ։ Իբրահիմը պատերազմական գործողություններ սկսեց թե ծովի և թե ցամաքի կողմից և հետզհետե հաջողություններ էր ձեռք բերում, նեղը լծելով ապստամբներին։ Հաղթությունը թեքվում էր, ըստ երևույթին, Մահմուդ սուլթանի կողմը։

Իրերի այս դրության մեջ էր ահա, որ մեռնում էր Ալեքսանդր Ա կայսրը և նրան հաջորդում է Նիկոլայ Ա-ն, խեղդելով ցարիզմի դեմ գլուխ բարձրացրած հեղափոխությունը և գահ բարձրանալով հեղափոխականների դիակույտերի վրայով։ Եվրոպական ռեակցիան իր մետերնիխներով գտնում էր նրա մեջ իր մոլեգնոտ և անողոք սպասավորին։ Եվ այսպիսի մի ցարը չէր, իհարկե, որ համակրություն կարողանար տածել դեպի հեղափոխությունն առհասարակ և դեպի հունականը մասնավորապես։ Այս պատճառով նա աշխատում էր դուրս վանել հանրապետական-ազատական ոգին Հունաստանից և ենթարկել նրան ցարական ռեժիմին։ Հույները երես դարձրին այդ ցարական հոգացողություններից։ Անգլիան նկատեց, որ Ռուսաստանը ետ է քաշվում և շտապեց նրա տեղը բռնել Հունաստանում, որ այնքան կարևոր դիրք ուներ դեպի Հնդկաստան տանող ծովային հաղորդակցությունների վրա։ Հունաստանը խնդրում էր Անգլիայի հովանավորությունը, և Կաննինգը չէր, որ մերժեր այդ առաջարկությունը։ Այնուհետև նա կարող էր անսայթաք գործադրել իր լավ վճարված հելլենասիրությունը։ Անգլիական քաղաքականության այս շարժումը, իհարկե, անհայտ չէր մնում Ռուսաստանի համար, որ և իր տեղն ամուր պահելու համար զորքեր էր կուտակում թուրքական սահմանագլուխը կազմող Պրուտ գետի ափին և մի շարք պահանջներ էր ներկայացնում Թուրքաց կառավարության, պահանջներ, որոնց մեջ չկար Հունաստանի անունը։ Այս, սակայն, մի ապահովություն չէր սուլթանի համար, թե ռուսները միանգամայն անտարբեր են հունական ապստամբության վերաբերմամբ։ Ընդհակառակը, նա առաջվա նման մնում էր հավատացած, թե ապստամբությունը

ռուսական գործ է։ Եվ ռուսական վտանգը փոքրացնելու համար էր, որ սուլթան Մահմուդը հորդորում էր պարսից շահին պատերազմ սկսել ռուսների դեմ։ Բայց երբ պարսկական բանակն անզոր հանդիսացավ ռուսների հանդեպ, սուլթանը ստիպված եղավ կնքել Աքքերման քաղաքում մի դաշնագրություն Ռուսաստանի հետ, որով զիջում էր նրան մի քանի նավահանգիստներ Սև ծովի արևելյան ափին, ճանաչում էր Սերբիայի ինքնօրինությունը, Մոլդավո-Վալախիայի վրա ընդունում էր ցարի իշխանությունն այն կողմով, որ հոսպոդարների հրաժարեցումը չէր կարող ունենալ առանց նրա թույլտվության։ Սակայն Աքքերմանի դաշնագրությունը թվում էր, թե բոլորովին չէր բավարարում Նիկոլային, քանի որ այն ստորագրելուց հետո էլ ռուսական բանակը մնաց Պրուտի ափին։ Կասկածում էին, թե ցարը, վերջացնելով պարսկական պատերազմը, պիտի հարձակվի Թուրքիայի վրա, թե՛ Կովկասի և թե՛ եվրոպական սահմանի կողմից։ Այս սխալ չէր։ Պասկևիչի հեշտ և էժան հաղթությունները Նիկոլայի մեջ արթարծում էին նվաճողական տենչեր, և նա սպասում էր հարմար առիթների՝ իր թագավորության սկիզբը զարդարելու համար նաև Թուրքիայում տարած հաղթություններով։

Պետք է իմանալ, որ Անգլիան իր հովանավորության տակ վերցնելով Հունաստանը, ամենևին միտք չուներ թուլացնել և նվաստացնել Թուրքիան։ Նա միայն ուզում էր ազատել հույն ժողովուրդը վերջնական խորտակումից, միջնորդ հանդիսանալով նրա և թուրք կառավարության մեջ և այսպիսով վերջ դնելով տարիներից ի վեր շարունակվող արյունահեղության։ Բայց որպեսզի ստիպված չլինի ինքը միայնակ վերցնել միջամտության գործը, որ կարող էր ծանր բարդություններ էլ առաջ բերել, Անգլիան բանակցություններ է սկսում Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ, որպեսզի երեքով միասին կատարեն միջամտությունը։ Համաձայնություն կայանում է այն մասով, որ երեք դաշնակիցները կանգ չառնեն նույնիսկ և ստիպողական միջոցների առջև, որպեսզի կարողանան երկու կողմերն էլ հարկադրել, որ ցած դնեն իրենց զենքերը, այն պայմանով, սակայն, որ Հունաստանն ստանա ինքնօրինություն և տա սուլթանին տարեկան որոշ հարկ։

1826 թվականին Հունաստանի դրությունը հուսահատական էր երևում։ Իբրահիմ փաշան թուրք-եգիպտական զորքերով գրավել էր երկրի շատ կարևոր տեղերը, անդադար ետ մղելով հեղափոխական զորքերը։ Հույների ձեռքին մնում էին մի քանի կարևոր բերդեր, որոնք կամ պաշարված էին, կամ շուտով պիտի պաշարման ենթարկվեին։ Հեղափոխական այս ամուր կենտրոնների մեջ անվանի էր մանավանդ Միսոլոնգին, մի քաղաք, որի ազգաբնակությունը բաղկացած էր 15 հազար հոգուց, որոնցից 5—6 հազար հոգին զենք կրելու ընդունակություն ունեին։ Այստեղ փակվեցին նաև ուրիշ տեղերից փախած հեղափոխական խմբերը։ Սկսվեց մի հերոսական մաքառում Իբրահիմ փաշայի զորքերի դեմ, որոնք շրջապատել էին քաղաքը չորս կողմից։ Միայն հազար հոգի կարողացան դուրս գալ պաշարված քաղաքից և, ճեղքելով թշնամու շղթան, փախչել ու ազատվել։ Բերդը վերցվեց, չնայած պաշարվածների անօրինակ հերոսական դիմադրության։ Բնակիչներից շատերը, չկամենալով ընկնել թշնամու ձեռքը, իրենք իրենց օդը թռցրին իրենց տների հետ։ Ազգաբնակության ահագին մեծամասնությունը անգթորեն սրի քաշվեց, մնացին երեք-չորս հազար հոգի, որոնք և քշվեցին ստրկավաճառության շուկաները։ Միսոլոնգիից հետո վերցվեց Աթենքը, պաշարման ենթարկվեց Ակրոպոլիսը, որի մեջ ամրացել էին մի քանի հարյուր հեղափոխական մարտիկներ։ Իբրահիմ փաշան սրի և կրակի մատնեց ամբողջ Պելոպոնեսը։ Սուլթան Մահմուդը հրճվանքի մեջ էր։ Հունական գործը նա համարում էր վերջացած

և իրեն արդեն այնքան ազատ էր զգում արտաքին ծանր հոգսերից, որ ձեռնարկեց իրագործելու վաղուց իր մտքում դրած զինվորական բարենորոգումը, այն է՝ կոտորել և ոչնչացնել տվեց ենիչերի ասված զինվորությունը, որ վաղուց դարձել էր Թուրքիայի թշվառության գլխավոր պատճառներից մեկը, իբրև մի կազմակերպություն, որ երկար ժամանակներից ի վեր դադարել էր իսկական զինվորական ուժ լինելուց և փոխարկվել էր մի ըմբոստ ավազակային խմբի, որին զոհ էին գնում անգամ սուլթանները։

Սակայն, Հունաստանի թշվառներն Արևմտյան Եվրոպայում նորից և նորից ուժեղացնում էին հելլենասիրական շարժումը, որի հետևանքով երեք դաշնակից պետությունների համաձայնությունը ստանում էր ավելի գործոն բովանդակություն։ 1827-ին երեք պետությունների ռազմանավերից կազմվում է մի միացյալ նավատորմ, որ և երևան է գալիս Հունաստանի ջրերում։ Կ. Պոլսում եռապետյան համաձայնության կողմից առաջարկություն է լինում սուլթանին դադարեցնել պատերազմական գործողությունները և ընդունել երեքի միջնորդությունը՝ հունական հարցը վերջնականապես լուծելու համար։ Եվ որովհետև սուլթան Մահմուդը մերժում է այդ առաջարկությունը, պահանջելով հույներից անպայման անձնատրություն, ուստի դաշնակիցներն իրենց միացած նավատորմի միջոցով սկսեցին ուժ գործ դնել և այսպիսով հարկադրել, որ պատերազմական գործողությունները դադարեցվեն Հունաստանի ծովափնյա մասերում։ 1827 թ. հոկտեմբերի 18-ին այդ միացած նավատորմը մտնում է Նավարինի նավահանգիստը, ուր այդ միջոցին գտնվում էր թուրք-եգիպտական միացած նավատորմը, որ ուներ իր կազմի մեջ 90 նավ և 16 հազար ծովային զինվոր։ Նա կրակ բացեց դաշնակիցների նավի դեմ, որոնք պատասխանեցին փոխադարձաբար։ Սկսվեց մի խոշոր ծովային պատերազմ։ Մի քանի ժամվա ընթացքում թուրք-եգիպտական նավատորմը գրեթե ամբողջովին ոչնչացվեց, կորցնելով մոտ 6 հազար մարդ։ Իբրահիմ փաշան պարտված էր և ստիպված եղավ կատարել դաշնակիցների պահանջները, հեռանալով իր գրաված տեղերի մեծ մասից։ Ափ իջեցվեցին ֆրանսիական զորքեր, որոնք գրավեցին Մորեան։

Նավարինի պատերազմը նախօրոք ծրագրված մի գործողություն չէր։ Դաշնակիցներից ոչ ոք, և մանավորապես Անգլիան, չէր էլ մտածել այդքան ծանր մի հարված տալ Թուրքիային, որի պահպանությունը անգլիական շահերի ամենագլխավոր պահանջն էր, իսկ Սրբազան դաշնագրության համար պարտադիր, իբրև բխող թագավորող անձերի «բնական» «աստվածային» իրավունքներից և հեղափոխություններ խեղդելու ուխտից։ Անգլիական կառավարությունը հայտարարում էր, թե Նավարինի ծովային ճակատամարտը լոկ մի չնախատեսված դժբախտ պատահականություն էր։ Այդ պատահականությունն էր, սակայն, որ փրկում էր Հունաստանը վերջնական կործանումից։ Սուլթան Մահմուդը, կատաղության ծայրին հասած, Կ. Պոլսից ճամփում է անգլիական, ֆրանսիական և ռուսական դեսպաններին։ Չբավականանալով այդքանով, նա գործի է դնում իսլամի օրինականացրած զազրելի զենքը, հրապարակելով սրբազան պատերազմ (ջհաթ) անհավատների դեմ, մի տմարդի հայտարարություն, որ թույլ էր տալիս ամեն մի մահմեդականի մորթել ամեն մի ոչ մահմեդականի, առանց նույնիսկ տեղեկանալու՝ մեղք ունի նա թե ոչ։ Այս հրովարտակի մեջ սուլթանը առանձին խստությամբ հարձակվում էր Ռուսաստանի վրա, նրան հայտարարելով իսլամ ժողովրդի կատաղի թշնամի, որ շարունակ խառնվում է Թուրքիայի ներքին գործերի մեջ և որ խաբել է իրեն, սուլթանին, Աքքերմանի մեջ, խոստանալով այլևս ոչինչ չանել հունական գործի համար։ Եվ ավելացնում էր, որ եթե ինքը ստորագրել է Աքքեր-

մանի դաշնադրությունը, այդ միայն այն պատճառով, որ ժամանակ վաստակե և պատրաստվի վրեժխնդրության։ Այս հայտարարությունները հասնում էին Նիկոլային 1828-ի ձմեռը և նրան էլ, իհարկե, գցում էին կատաղության մեջ։ Արագ և կտրուկ միջոցներ ձեռք առնելը կախված էր այժմ Պասկևիչից, որ դեռ չէր վերջացրել պարսկական պատերազմը։ Թուրքմենչայի դաշնադրությունը նրա ձեռքը հասավ մարտ ամսին, մեծ ուրախություն պատճառելով ոչ միայն իր շահավետ բովանդակությամբ, այլև այն պատճառով, որ արձակում էր նրա ձեռքերը՝ Թուրքիայի դեմ գործողություններ սկսելու համար։ Ռուս-թուրքական պատերազմը հայտարարված իրականություն էր դառնում, և ռուսական զորքերը դիմում էին արշավանքի՝ մայիսի սկզբներում Պրուտ գետի կողմից, դեպի Մոլդավո-Վալախիա (Ռումինիա) և հունիսի կեսին Գյումրիից դեպի Կարս։ Կովկասյան ճակատի գլխավոր հրամանատարը մնում էր Պասկևիչը։

2. Շարժումներ Կ. Պոլսի մեջ։ Հելլենական ազատագրական հուժկու շարժման սկզբից, գրեթե «Հեթերիա» գաղթնի կազմակերպության հիմնարկության հետ միասին, մենք տեսնում ենք բավական եռանդուն շարժումներ նաև Կ. Պոլսի հայության մեջ։ Սակայն այս շարժումները բոլորովին այլ կերպարանք և բովանդակություն ունեին։ Սրանց մեջ բոլորովին բացակայում էր քաղաքական տարրը, և հայերը եթե շարժվում ու գործում էին, այդ ամենևին Թուրքական ուժերի դեմ որևէ անբավականություն ցուցահանելու համար չէր։ Այդպիսի տրամադրություն չէր էլ կարող ծնվել Կ. Պոլսի գաղութային միջավայրում, որ ամբողջովին ենթարկված էր ամիրայական դասակարգի բացարձակ իշխանության։ Ամիրայությունն ամբողջովին սուլթանական կարգի արդյունք էր։ Եթե չլիներ սուլթանական պալատ, ուր անհաշիվ վատնվում էին ժողովրդական հարստությունները, եթե չլիներ այդ պալատի մեջ օրինականացված պետական կարգ, հարստահարչական եղանակն իր կաշառավոր ու միշտ փողի կարոտ, կոպիտ բռնավոր փաշաներով, չէր լինի նաև հայ ամիրայությունը։ Այս պարզ էր ցերեկվա լույսի նման, և հայ դրամապետությունը չէր, որ մտքով անգամ անցկացներ, թե կարելի է կտրել այն ճյուղը, որի վրա նա այնքան ամրապինդ հաստատված էր։ Ամիրայությունն իրեն ստորադրյալ աշխարհի մեջ կարող էր մշակել միայն հլու, անպայման ու անվերապահ հավատարմություն դեպի հին, բռնակալական, անխառն սուլթանությունը։ Սուլթան Սելիմի ժամանակ, 1807 թվին, Անգլիայի պատերազմական նավատորմը, անգլիական կառավարության կողմից սուլթանին ներկայացված պահանջները պաշտպանելու համար, անցավ Դարդանելի նեղուցը և խարիսխ ձգեց մայրաքաղաքից երկու մղոն հեռու, Սան Ստեֆանոյի հրվանդանի մոտ։ Այս վտանգավոր այցելությունը սարսափի ու խուճապի մատնեց սուլթանական պալատը։ Լսվում էր կանանց ու ներքինիների հուսահատական լացը։ Սուլթանը վճռում էր կատարել անգլիական պահանջներն անմիջապես։ Բայց ֆրանսիական դեսպան գեներալ Սեբաստիանին, որի դեմ էր ուղղված անգլիական այս նավային ցույցը, պալատական խուճապին կարողացավ հակադրել քաղաքի ազգաբնակության դիմադրական ամուր վճռականությունը։ Ամենքը ոտքի կանգնեցին մայրաքաղաքը պաշտպանելու համար, և այս ընդհանուր աշխատանքի մեջ աչքի ընկնող մասնակցություն ունեցան հայերը, որոնք գործում էին իրենց հոգևորականների ղեկավարությամբ, ասել է՝ ամիրայական դասակարգի հրամանով։ Ծովափին, անգլիական մարտանավերի դեմառդեմ, շարվեցին թնդանոթներ, որոնց համար մարտկոցներ կառուցանելու վրա աշխատում էին երեխաներն ու կանայք անգամ։

Ամիրայական միջավայրը, որքան և օրինապահ ու պահպանողական,

այն միակ հասարակական շերտավորումն էր, ուր բարեկեցությունը, տնտեսական շահերը մտցնում էին մրցման ու պայքարի շարժումներ, որոնցից մի քանիսն ընդունում էին մտավոր գաղափարական բովանդակություն։ 19-րդ դարի սկզբից Կ. Պոլսում բազմանում և ազդեցիկ դեր էին ստանձնում գավառներից եկած հայ կաթոլիկ սեղանավորները (սարաֆները), որոնք և բնականորեն մրցակցության և նախանձի զգացմունք էին բորբոքում հայ լուսավորչական սեղանավորների մեջ։ Այս ուժեղ մրցակցության մեջ ամիրաների վաշխառուական կապիտալը տոգորվում է դավանաբանական բաժանումներով, ինչպես այս պահանջում էին նրա շահերը։ Լուսավորչական ամիրաներն իրենց վտանգավոր հակառակորդ կաթոլիկ ամիրաների վրա գերակշիռ էին հանդիսանում նրանով, որ Թուրքաց կառավարությունն առանձին հայ կաթոլիկ համայնք չէր ճանաչում և բոլոր հայերին, ինչ դավանության էլ նրանք պատկանեին, հպատակեցրել էր Կ. Պոլսի լուսավորչական պատրիարքի իշխանությանը, այսինքն՝ այն իշխանության, որ գտնվում էր լուսավորչական ամիրաների ձեռքում։ Այս գերիշխանությունն էլ լուսավորչական ամիրաները իրական ուժ էին դարձնում կաթոլիկ ամիրաների հաջողությունները կասեցնելու և մրցակցական եռանդը մեղմացնելու համար։ Ահա այս հողի վրա էին արմատանում և զարգանում այն շարժումները, որոնք բնորոշում են Կ. Պոլսի հայ գաղութը 19-րդ դարի առաջին երեք տասնամյակներում։

Մրցակցությունները դավանաբանական բաժանումների տրոհված ֆինանսական կապիտալի շրջանում միշտ չէին կրում մասնական, անձնական շփումների հանգամանք, այլ երբեմն դառնում էին և հանրային երևույթներ, շնորհիվ այն օտար տարրերի, որոնք բնակություն էին հաստատում այդ մրցարանի մեջ։ Ամիրայությունն այն ժամանակներում մի միակ միջավայրն էր, ուր ունևորությունն ընդունակ էր դարձնում մարդկանց յուրացնելու կյանքի նոր զարգացող պահանջները։ Կաթոլիկ ամիրայությունը իր ժամանակի տեսակետից մեծ մշակութային դեր էր կատարում հենց նրանով, որ հանում էր Վենետիկի լուսավոր վանականությունը Ս. Ղազարի վանքի խուցերից և անմիջական շփման մեջ էր դնում նրան կյանքի հետ, ուսուցիչների տեղեր ապահովելով նրա ներկայացուցիչների համար իր տներում։ Այս նշանակում էր, որ վաշխառուական փարթամ հարկերի տակ մտնում էր Եվրոպան, որ թեև, ճիշտ է, լոկ և միմիայն վանական Եվրոպա էր, բայց և այնպես՝ Եվրոպա էր, այն էլ մի այնպիսի Եվրոպա, որից բարձր ոչինչ և ոչ մի բան չկար հայության մեջ։ Մխիթարյան վարդապետները չէին բավականանում ամիրաների որդիներին մեքենայորեն ուսում մատակարարելով։ Շռայլության այս աշխարհում նրանք գտնում էին և հարմար անկյուններ և այնքան միջոցներ, որ կարելի էր լինում կազմակերպել նաև հանրաշահ գրական-դաստիարակչական հիմնարկություններ։ Այսպես, բազմահարուստ կաթոլիկ Տյուզյան ամիրաների տանն էր, որ վենետիկցի վարդապետ Ղուկաս Ինճիճյանը, իր ժամանակի համար մի շատ խոշոր գիտական միտք վանական առումով, հիմնեց առաջին գրական-հրատարակչական ընկերությունը հայերի մեջ, որ կոչվեց «Արշարունյաց ընկերություն», որի ծախսով Վենետիկի Մխիթարյանները գրում և հրատարակում էին զանազան օգտակար գրքեր՝ աշխարհական բովանդակությամբ և աշխարհաբար լեզվով։ Այս ընկերության ենք մենք պարտական, որ 19-րդ դարի երկրորդ տասնամյակում սկսեց հրատարակվել «Դիտակ Բյուզանդյան» անունով երկշաբաթաթերթը, երկրորդ պարբերականը Մադրասի «Ազդարարից» հետո, բայց նրանից տարբերվող նրանով, որ աշխարհաբար լեզվով էր հրատարակվում և պարունակում էր իր մեջ համարյա թե միմիայն քաղաքական լուրեր։ Այս քաղաքական լրատուն մի խոշոր հասա-

րակական երևույթ էր դառնում Կ. Պոլսի հայության մեջ։ Լրագրի բաժանորդներ, հետաքրքրվող ընթերցողներ. այսպիսի բաներ դեռ չէին տեսնված։ Տյուզյանների տանը հավաքվում էր մեծ բազմություն՝ նոր ստացված թերթը կարդալու համար։

Հասկանալի է, որ այս ամենը բարձրացնելով կաթոլիկ ամիրայության պատիվը, հաղորդելով նրան լուսավորության հովանավորի հմայք, պիտի համապատասխան մրցակցական դիրքերի վրա դներ վաշխառուական կապիտալի մյուս, լուսավորչական հատվածը։ Այս հատվածն էլ մի-մի անգամ հասարակական մղում է ցույց տալիս, լուսավորության նպաստող է իրեն հանդիսացնում, բաց անելով դպրոցներ։ Բայց կաթոլիկական կողմի գերակշռությունն ակներև է։ Տյուզյանների տունը, որ իր ձեռքում էր պահում պետական դրամահատությունը և սուլթանական պալատի ոսկերչապետությունը, ոչ միայն այս դիրքերով է հեղինակավոր և պատկառելի իր ժամանակակիցների համար, այլև նրանով, որ հովանավորում և խրախուսում է ազգային լուսավորությունը։ Այս նախանձելի բարձրությունից նրան ցած գլորելու և փշուր-փշուր անելու համար կազմվում է մի ամբողջ հոսանք, որի մեջ են և՛ լուսավորչական, և՛ կաթոլիկ, և՛ նույնիսկ հրեա սեղանավորներ։ Կաթոլիկ սեղանավորության ներկայությունն այս միության մեջ հասկանալու համար պետք է իմանալ, որ բացի Վենետիկի Մխիթարյաններից՝ Կ. Պոլսում գտնվում էին և այլ կաթոլիկ կրոնավորական կարգեր, որոնք Մխիթարյանների հակառակորդներն էին, քանի որ նրանցից ավելի ևս մոլեռանդ էին, ավելի մեծ ֆանատիկոսությամբ էին հարած պապական պաշտամունքին։ Այս մոլեռանդներն էլ ունեին իրենց կողմնակիցները կաթոլիկ ամիրայության մեջ, որոնք հակառակորդ էին Մխիթարյանների կողմնակից ամիրաներին։ Տյուզյանների տունը չնայած որ շատ ազդեցիկ դիրք ուներ արքունիքում, և սուլթանն էլ շատ մոտիկից ճանաչում էր նրա անդամներին, չկարողացավ դիմադրել իր դեմ ծառացած թշնամության, ամբաստանվեց իբրև պետական դրամանոցից գումարներ վատնող և դրա հետևանքով երեք հոգի այդ տնից առանց դատարանի կախվեցին իրենց ապարանքների դռներից, իսկ ընտանիքի մնացած բոլոր մյուս անդամները հայոց պատրիարքարանի միջոցով աքսորվեցին զանազան տեղեր։

Տյուզյանների և նրանց կողմնակիցների տները խուզարկելիս թուրք իշխանությունները հայտնագործեցին այնտեղ տնային մատուռներ, ուր գաղտնի ժամասացություն էր կատարվում կաթոլիկական ծեսով։ Այսպիսի գաղտնի կազմակերպություն չէր կարող հանդուրժելի համարվել Թյուրքիայում, և սուլթանական կառավարությունը խիստ հրաման է ուղարկում հայ լուսավորչականների Պողոս պատրիարքին, որ նա անմիջապես գործադրի բոլոր միջոցները հայերի միջից այդ եկեղեցական բաժանումը վերացնելու համար, որպեսզի բոլոր հայերը մի ճանաչված համայնք կազմեն և պատրիարքը լինի այդ ամբողջի գլուխը և պատասխանատու՝ նրա հավատարիմ հպատակության համար։ Պատրիարքարանում տեղի են ունենում ժողովներ։ Հարցը կարևոր էր, կենսական նշանակություն ուներ հայ ժողովրդի համար։ Եվ նրա վճիռը, ինչպես և պետք էր սպասել այն ժամանակներում, հանձնվում էր ամիրաներին և հոգևորականներին։

Բանակցությունները սկզբում, ըստ երևույթին, հաջող ելքի են հանգում։ Երկու կողմերը երկար վիճելուց և խորհրդակցելուց հետո, ծիսական մի քանի փոխադարձ զիջողություններով կայացնում են համաձայնություն, այնպես որ այնուհետև այլևս լուսավորչականի, կաթոլիկի խոսք չպիտի լիներ։ Թվում էր, թե եկել, հասել է ժամը, երբ հայ ժողովուրդը վերջապես պիտի ազատվեր իր դարավոր դժբախտություններից մեկից, գուցե ամենավատթարից, որ կեղե-

քում էր նրան եղբայրասպան, ընտանի կռիվներով։ Բայց այսպես չեղավ, դառնության բաժակը դեռ լցված չէր։ Կաթոլիկ հայերի կողմից խորհրդակցություններին, իբրև հոգևորականության ներկայացուցիչներ, մասնակցում էին միայն Վենետիկի Մխիթարյան վարդապետները, և այս բավական էր, որ կայացած միաբանական համաձայնության հակառակորդ հանդիսանային դրսում մնացած ոչ Մխիթարյան կաթոլիկ կրոնավորները։ Բացի դրանից, ամիրայական դասակարգը, եթե անկեղծորեն ընդուներ միաբանությունը, դրանով իսկ ձեռքից տված կլիներ մրցության մի հզոր զենք, որով մինչև այդ կռվում էր սեղանավորների կաթոլիկ խմբի դեմ։ Դավանաբանական գունավորումների բաժանված վաշխառուական կապիտալն արդեն ծանրակշիռ շահեր էր ստեղծել կրոնական պառակտումներից և չէր կարող հրաժարվել նրանցից։

Կայացրած համաձայնությունն այսպիսով արհեստական, ակամա մի գործողություն էր, ավելի կառավարական հրամանի վախից բխած, քան պայծառ գիտակցությունից թելադրված և պարզ է, որ այսպիսի խախուտ հիմքերի վրա չէր կարող ցույց տալ որևէ կայունություն։ Նա կործանվեց մի հարվածով։ Եվ այս հարվածը պատրաստելու համար բավական էր մի շատ հեշտ միջոց՝ գրգռել տգետ և անգիտակից ամբոխի կրոնական կրքերը։ 1820 թվականի օգոստոսի 18-ին սաստիկ գրգռված և ֆանատիկոսորեն զայրացած ժողովրդական մի մեծ բազմություն, բաղկացած գլխավորապես արհեստավորներից, թափվեց պատրիարքարան, խորտակելով նրա դռները, և որոնում էր Պողոս պատրիարքին, կտոր-կտոր անելու համար, որովհետև ինչպես հավատացրել էին գաղտնի գրգռողները, նա դավաճանել էր հայ եկեղեցուն և ուզում էր ֆռանգացնել ամենքին։ Պատրիարքը պատուհանից թռչելով, փախչում թաքնվում է մի թուրքի տուն և այսպիսով հազիվ ազատվում կատաղած ամբոխի ճանկերից։ Պատրիարքական տեղապահն իմաց է տալիս կառավարության և իսկույն խռովության տեղն են ուղարկվում 5—6 հարյուր ենիչերի զինվորներ, որոնք իրենց հատուկ վայրենական միջոցներով վերականգնում են կարգը և բազմաթիվ ձերբակալություններ կատարում։ Սկսվում է քննություն, որ ձգձգվում է 3—4 ամիս. կառավարությունն այդ ցույցին տվել էր ապստամբության բնավորություն և ծեծով ու տանջանքներով, խոշտանգելով կալանավորվածներին, ուզում էր իմանալ, թե ովքեր են եղել պարագլուխները։ Եվ ամենքը, որոնք հարցափորձի էին ենթարկվում այդ բռնի եղանակով, մատնում էին այս ու այն մարդկանց՝ աշխարհականների թե հոգևորականների։ Մինչև իսկ Պողոս պատրիարքն էլ բացառություն չէր կազմում և առանց տանջանքների ենթարկվելու էլ մատնեց մի շարք առաջնակարգ ամիրաների։ Ամբողջ այս աղմուկն, ինչպես սովորական էր Կ. Պոլսում դարերից ի վեր, վերջանում է կառավարական խստություններով՝ ծեծով, աքսորներով, բանտարկություններով։ Իսկ երեք հոգի կախաղան հանվեցին։

Այս էլ ռայայի մի «ապստամբություն» էր, բայց ի՞նչ տարբերություն նրա և հունական ռայայի ապստամբության մեջ։ Այստեղ, հայ գաղութային միջավայրի մեջ, քաղաքական հասունությունից բոլորովին զուրկ մի համայնք էր, բորբոքված կրոնական ֆանատիկոսությամբ, կուրորեն թույլ էր տալիս, որ իրեն մինչև թշվառության վերջին ծայրը կեղեքեն խոշոր ու մանր վաշխառուները, կղերական և աշխարհական մակաբույծները։ Բայց կրոնական միջավայրում, կրոնական իշխանության վրա հենված և այս պատճառով էլ դավանաբանական հակադիր ճեղքվածների հանդիսարան դարձած վաշխառուական կապիտալը այսքանով դեռ իր վերջին խոսքը չէր ասել, այլ, ավելի առաջ գնալով, երևան էր հանում ավելի ևս պժգալի տեսարան։ Մենք արդեն տես-

սանք, որ 18-րդ դարի վերջերում, Զաքարիա պատրիարքի օրով, լուսավորչական ամիրայությունն իր հլու ստրուկ հոգևորականության ձեռքով, հայ կաթոլիկ ամիրայության և նրա ստրուկ կղերականության դեմ վարած իր կռվին վերջնական հաջողություն տալու համար դիմում էր ամենաանարգ միջոցին, այն է՝ քաղաքական մատնության։ Հիմնվելով այն հանգամանքի վրա, որ կաթոլիկ հայերը եվրոպացիների (ֆռանգների) դավանակիցներն են, իսկ եվրոպացիները Թուրքիայի անհաշտ թշնամիներն են, լուսավորչական կղերը հասկացնում էր կառավարության, թե հայ կաթոլիկներն այսպիսով հանդիսանում են եվրոպացիների բնական գործակալներ և լրտեսներ, ուստի և ինքը չի կարող երաշխավորել նրանց հավատարմությունը թուրք պետության վերաբերմամբ։ Այս մատնությունը պատճառ դարձավ, ինչպես տեսանք, հարյուրավոր անմեղների բանտարկության, խոշտանգման, աքսորի, նույնիսկ մահվան։

Այժմ նույն այդ միջոցը գործ էր դնում հայ կաթոլիկ ամիրայությունը լուսավորչական ամիրայության դեմ, վերջինիս մրցակցությունը տապալելու համար։ Հարկավոր էր, որ հայ կաթոլիկ համայնքը դուրս գար լուսավորչական կղերի վարչական իրավասության տակից և այսպիսով ոչնչացներ այն ճնշումը, որ գործադրում էր լուսավորչական համայնքը, իբրև իշխանության տեր, իբրև հրամայող։ Պետք էր ստեղծել առանձին հայ կաթոլիկական պատրիարքություն։ Բայց ինչպե՞ս համոզել թուրքաց կառավարության, թե այդ հիմնարկությունը հարկավոր է հենց նույնիսկ նրա շահերի տեսակետից։ Եվ ահա վաշխառուական կապիտալի կաթոլիկական հատվածը փորձում է համոզիչ ապացույց դարձնել այն դերը, որ կատարեցին լուսավորչականները ռուս-պարսկական պատերազմի մեջ։ 1827 թվականին կաթոլիկ կղերն ու «եղեվելինները» (ամիրաները), դիմում են սուլթանական կառավարության և բացատրելով նրան, որ լուսավորչական հայերն իրենց հոգևորականներով բացարձակապես ապստամբվեցին Պարսկաստանի, իբրև մահմեդական պետության դեմ և ամեն կերպ նպաստեցին, որ ռուսները նվաճեն Երևանի ամբողջ խանությունը, հասկացնում էին, թե լուսավորչականներն այսպիսով թշնամի են հանդիսանում առհասարակ մահմեդական իշխանության, ուրեմն նաև Թուրքիայի վերաբերմամբ։ Եվ որովհետև կաթոլիկ հայերն օսմանյան ամենահավատարիմ հպատակներն են, ուստի և չեն կամենում մնալ դավաճան լուսավորչականների իշխանության տակ և այսպիսով մասնակից համարվել նրանց պետական հանցավորության և խնդրում են բաժանել իրենց լուսավորչականներից և առանձին պատրիարքություն հաստատելու իրենց համար։

Հայ լուսավորչական աղբյուրները հաղորդում են, որ սուլթան Մահմուդը կարդալով այս դիմումը, իր մոտ կանչեց լուսավորչական ամիրաներից Գազեզ Հարություն Պեզճյանին, որ նրա հավատարիմ խորհրդականն էր և վայելում էր նրա բարեկամությունն ու անսահման վստահությունը և հարց տվեց նրան՝ թե ի՞նչ է այս նշանակում։ Պեզճյանն առանց այլևայլության պատասխանում է, թե անհավատարիմներն ու դավաճաններն, ընդհակառակը, կաթոլիկ հայերն են, և թե լուսավորչական հայերն այլևս չեն կարող երաշխավոր լինել նրանց համար։ Միևնույնը թուրքաց կառավարության պաշտոնապես հայտարարում էր և հայոց պատրիարքը։

Մատնությունը երկսայրի սուր է։ Թուրքիայում 1827-ին տեղի ունեցած դեպքերը ցույց էին տալիս, որ նրա թշնամին միայն Ռուսաստանը չէ, այլ և եվրոպացիները և հատկապես ֆռանգները, որոնց դավանակից էին կաթոլիկ հայերը։ Նավարինի ծովային պատերազմից անչափ կատաղած Մահմուդը չէր կարող, իհարկե, չհավատալ իր մտերիմ Պեզճյանին և խնայողաբար վերաբերվել ֆռանգների դավանակիցներին։ Եվ որովհետև լուսավորչական ամի-

րայության տնտեսական կռիվն ուղղված էր հատկապես Ղալաթիայից և Անկյուրիայից եկած և խոշոր հաջողություններ տիրացած սեղանավորների դեմ, ուստի սրանց գլխին էլ պայթեց սուլթանական բարկությունը։ Մահմուդը դեկտեմբերին հրամանագրում է տեղահան անել Կ. Պոլսում ապրող բոլոր ղալաթիացիներին և ուղարկել նրանց իրենց հայրենիքը։ Միաժամանակ կարգադրություններ էին լինում և մյուս կաթոլիկ հայերի մասին։ Հոգևորականները պիտի աքսորվեին Եվրոպա, կուսանոցի կույսերը՝ Փոքր Ասիա։ Կաթոլիկ հայերին արգելվում էր բնակվել ֆռանգ կաթոլիկների հետ մի թաղում. նրանք պարտավոր էին ապրել անպատճառ լուսավորչականների հետ։

Հետաքրքրականն այն հանգամանքն է, որ բոլոր այս կարգադրությունների կատարումը թուրք կառավարությունը հանձնում էր հայոց պատրիարքարանին, որ և այսպիսով հանդես էր գալիս իբրև սուլթանական մի բաժանմունք։ Եվ իր այդ կոչումը հայոց պատրիարքարանը արդարացնում էր ամենայն եռանդով։ Տեղահանության դատապարտվածները դուրս քշվեցին 1828-ի հունվարին, այդ տարին, մանավորապես, խստաշունչ ձմեռվա մեջ։ Բռնի տեղափոխման սովորական սարսափներն այսպիսով կրկնապատկվում և եռապատկվում էին։ Տառապում էին մանավանդ կանայք, որոնք սովոր չէին ձիով ճանապարհորդելու։ Մի օտար աղբյուր վկայում է, որ միայն ցրտահար եղած երեխաների թիվը հասնում էր 400-ի։ Լուսավորչական դրամագլխի հաղթանակը կատարյալ էր։

Այսպես էր ահա այն խոշոր գաղութը, որ վարչական հեղինակավոր կենտրոնն էր ամբողջ արևմտյան հայության համար։ Թուրքաց կառավարությունն այդ գաղութի ղեկավարող դրամատիրական-կղերական շրջանների մեջ ուներ իր ամենահավատարիմ և հլու սպասավորը։ Վնաս ամենաթեթև չափով անգամ չէր կարելի սպասել այդ ժողովրդից։ Եվ զուր չէ, որ օսմանյան պաշտոնական աշխարհը «հայ ժողովուրդ» անունը փոխարինել էր «հավատարիմ ժողովուրդ» անունով։ Հայոց պատրիարքարանին էր հանձնված պետական հարկերի մի տեսակի գանձումը գավառաբնակ հայությունից։ Եվ յուրաքանչյուր տարի պատրիարքը շրջաբերական կոնդակներ էր ուղարկում գավառական առաջնորդներին՝ հիշեցնելու համար թե «Ալի-օսմանյան» պետությունն է, որ հարյուրավոր տարիներ պահել-պահպանել է հայ ժողովուրդը, թե հայերը վաղուց անհետացած կլինեին, եթե չլիներ օսմանյան տերությունը, ուստի և նրանք պարտավոր են ժամանակին ճշտությամբ վճարել այդ պաշտպան և խնամակալ տերության պահանջած հարկերը, որոնց գանձումը հանձնարարված էր գավառական առաջնորդներին։

3. **Հայ ռայայի զարթնեցումը։** Գաղութն այս կերպարանքով տեսնելուց հետո անհրաժեշտություն է դառնում իմանալ, թե ի՞նչպես էր հայ ժողովրդի ահագին մեծամասնության, այն է՝ բուն երկրում ապրող բազմության տրամադրությունը—համերա՞շխ էր նա իր ղեկավարող գաղութի հետ, հաշտվո՞ւմ էին նրա շահերը Կ. Պոլսի ամիրայության շահերի հետ։

Առաջին իսկ հայացքից պարզ է, որ այսպիսի համերաշխություն չկար և չէր կարող լինել։ Ամիրայությանը օդի չափ անհրաժեշտ էր, որ Թուրքիան մնար հինը, մի անկարգ բռնակալական երկիր, ուր թալանն ու կեղեքումը վերածված էին պետական սիստեմի։ Ամիրայությունն այս անկարգ դրությունից էր ծնվել ու սնվել, աշխարհ վայելողի դիրքը գրավել։ Եթե փոխվեր հին սուլթանականության բնույթը, ամիրայությունն ապրելու ոչ մի հնարավորություն այլևս ունենալ չէր կարող։ Հենց եթե միմիայն հարկահանության եղանակը փոխվեր այնպես, որ վերացվեր կապալի կարգը, եթե դրա հետ միասին չլիներ պաշտոնների աճուրդով բաժանելու սուլթանական իրավուն-

քը, ամիրաներն ի՞նչպես կարող էին սարկացնել փաշաներին և գայլերի պես հարձակվել հարկատու ժողովրդի վրա և քերթել նրա կաշին։ Շահերի ներդաշնակության մասին, ուրեմն չէր կարող խոսք լինել երկու այնպիսի կողմերի մեջ, որոնցից մեկը կեղեքող էր, մյուսը՝ կեղեքվող։ Մեկի համար կատարյալ բարեբախտություն էր անկարգ վայրենական բարքերով ապրող Թուրքիան։ Այս Կ. Պոլսի հայ սեղանավորությունն էր։ Իսկ Հայաստանի աշխատավոր ժողովուրդն, ընդհակառակը, իր անսահման դժբախտությունը, իր դժոխային տանջանքներն էր տեսնում պետական այդ անկարգ և արյունարբու վայրենականության մեջ։ Եվ այս ահավոր հակադրության հետևանքները բնական էին. ամիրաներն ու նրանց հպատակ կղերականները պահանջում էին, որ ամենքն ընդունեն, թե օսմանյան պետությունը հայության պաշտպանն ու ապրեցողն է, հետևաբար և պետք է անպայման հնազանդ ու հավատարիմ լինել այդ պետության, իսկ Հայաստանի մշակ և արհեստավոր ժողովուրդը, ինքնապահպանման բնազդից մղված՝ տարերային մի ձգտում էր սնուցանում իր կրծքի տակ՝ ազատվել ֆիզիկական գոյության սպառնացող բնաջնջումից, ազատվելով օսմանյան իրականությունից։

Այս անջնջելի անհաշտությունը, որ կար գավառական և գաղութահայ իրականությունների մեջ, պայծառորեն ցուցահանում էր Զեյթունը, ապստամբվելով Թուրքերի դեմ 1819 թվականին։ Տավրոսի լեռնային խառնարանում ամրացած այս հայկական մանրիկ ինքնագլխությունը աչքի փուշ էր դարձել շրջակա թուրք ազգաբնակության համար, և այս պատճառով տեղական թուրք զինվորական իշխանությունները փոքրիշատե հարմար առիթ չէին փախցնում իրենց ձեռքից՝ զենքի ուժով այդ արծվի բույնը ոչնչացնելու համար։ Այս փորձերից մեկն էր, որ կրկնվում էր այժմ, բայց դարձյալ անօգուտ։ Զեյթունցիները գիտեին պաշտպանել իրենց և փորձ անող Ջափան օղլու դերեբեյը հաղթվելով՝ ձեռնունայն հետ դարձավ։ Այն ժամանակ տեղական թուրք իշխանություններն իրենց բարկությունը թափեցին Կիլիկիայի հայոց կաթողիկոս Կիրակոսի վրա, ամբաստանելով նրան սուլթանի առաջ, թե նա էլ միակամ գործակից էր զեյթունցիների հետ։ Սուլթան Մահմուդը դատապարտեց նրան մահվան և միայն այն ժամանակ, երբ նա բացեիբաց և բազմաթիվ անգամ հրաժարվեց ապստամբված զեյթունցիներից, Կ. Պոլսի հայ ամիրաները հնարավորություն գտան ազատելու նրան մահից։

Զեյթունն ավելի հասկանալի էր Հայաստանի հարստահարվող ազգաբնակության, նմանվելու բարձր օրինակ էր դառնում այն ժամանակից, երբ Թուրքահայ ռայան սկսում էր զարթման նշաններ ցույց տալ։ Վերին աստիճանի հետաքրքրական է այդ վերակենդանացման սկզբնական բնազդային տեսարանը։ Թուրքահայ ռայան դարերի ընթացքում դաստիարակվել էր իբրև անասունների մի հոտ՝ գերության և ստրկության համար։ Քուրդը, որի ճորտն էր նա, իր աշխարհայացքն արտահայտում էր այսպես. «Տղամարդը մեռնում է, նրա անունն է մնում, արյունը մեռնում է, նրա կաշին է մնում, աշխարհիս վրա միայն տղամարդությունն է անմահ»։ Իսկ հային նրա հոգևորականը, ինչպես հավատացնում է մի եվրոպացի ճանապարհորդ, դաստիարակում էր այն մտքով, թե նույնիսկ մի թռչուն սպանելն էլ մեղք է, և եթե խոստովանության մեջ մեկը հայտնում էր, թե այդպիսի մի մեղք կատարել է, սպանել է թեկուզ մի ծիտ, այդպիսի «հանցավորը» հայ քահանայի կամ վարդապետի կողմից ենթարկվում էր ապաշխարության։

Ահա այս տեսակ ժողովուրդն էր, որ լսում էր իրենից ոչ հեռու շարժվող ռուսական զենքի շաչյունը և այն, ինչ անում են հայերը Երևանում և այլ տեղերում։ Մենք արդեն տեսանք, որ Թուրքահայերի մեջ դեռ 1804—1806

թվականներին, Ցիցիանովի երևանյան արշավանքի հետևանքով ծագում էր խոշոր զանգվածային գաղթման միտք դեպի ռուսական հողը։ Այս տրամադրությունն առանձնապես շեշտված տեսանք մենք նաև առաջին ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, 1807-ին։ Այնուհետև թուրքահայ ռայայի զարթնումը ոչ միայն կանգ չի առնում, այլև ցույց է տալիս նոր և նոր ձևեր։ Ընդհանուր ամբոխային տրամադրություն է ազատություն որոնել երկու՝ մեզ արդեն հայտնի ճանապարհներով՝ կամ ռուսներն են տիրապետում հայաբնակ վայրերին, կամ հայերն են գաղթում ռուսական հողը։ Սակայն 19-րդ դարի երկրորդ տասնամյակից երևան են գալիս և առանձին-առանձին, դեռ հազվագյուտ անհատներ, որոնք իրենց անձուկ շրջաններում պաշտպանության միջոց են դարձնում զենքը։ Այս երևույթը տեղի է ունենում բացառապես այն տեղերում, ուր հայերը ենթարկված էին քրդերի իշխանության և առաջ ու առաջ Բայազետի փաշայության մեջ։ Այսպես էին վարդապետ Խաչաքաղցին Ուչքիլիսեի (Բագրևանդի ս. Հովհաննեսի) վանքի միաբանությունից և Բոնոյի աղա Մանուկն Արծափ գյուղից, որոնք կռվում էին քրդերի դեմ, հաղթում և հալածում էին ավազակային խմբերը և իրենց անընկճելի քաջությամբ ցույց էին տալիս, որ քուրդն անպարտելի չէ, որ նրան էլ կարելի է սանձել զենքով։ Այս անհատական գործողությունները նախանշաններ էին, որոնք ասում էին, թե կգա մի օր, երբ իրավազուրկ և ստրկացած ռայայի մեջ զենք վերցնելը կդառնա նաև հավաքական, ամբոխային երևույթ։ Եվ այս այսպես լինում էր հենց նույն ժամանակներում, 1820-ական թվականների առաջին կեսում։ Այս երևույթը տեղի է ունենում Հայաստանի հարավում, Սղերդի գավառում, ուր հարստահարվող և կեղեքիչ քրդերի դեմ զինակցություն են կազմում երկու վիճակակից ազգեր՝ հայերն ու եզիդիները։ Նրանք զորք են հավաքում. հայ զորքի հրամանատարն էր մի քահանա՝ Քիշե Պալեն (Պողոս տերտերը)։ Միացած ուժերով հայերն ու եզիդիները մի ամբողջ ճակատամարտ են տալիս քրդերի միացած ցեղերին և չարաչար հաղթում են նրանց։ Այսպիսի հակաքրդական շարժումներ մենք տեսնում ենք նաև Սասունի կողմերի հայության մեջ։ Ռուս-թուրքական պատերազմը պիտի ավելի ևս ուժեղացներ և ընդարձակ ծավալ տար այդ նորերևույթ շարժումներին։

4. Կարս, Ախալցխա, Արդահան։ Առաջին ռուս-թուրքական պատերազմն ասիական հողի վրա, ինչպես տեսանք, շատ փոքր չափեր և կարճ տևողություն ունեցավ, պարփակված մնալով միմիայն երկու պետությունների սահմանագիծը կազմող վայրերում։ Երկրորդ պատերազմը բոլորովին նման չէր առաջինին։ Այս անգամ պատերազմում էին թե ավելի խոշոր բանակներով, և թե անհամեմատ ընդարձակ տարածությունների վրա։ Կովկասյան ռուս զորաբանակի համար ռազմադաշտ էին դառնում Սև ծովի արևելյան ափերը և այդտեղից դեպի հարավ ընկած երկրները մինչև Վանի լճի հյուսիսային ափերը, իսկ արևելքից արևմուտք, Արփաչայ գետից մինչև Տրապիզոնի սահմանները։ Այսպիսով, ուրեմն, Թուրքաց Հայաստանից մնում էին շատ փոքր կտորներ, որոնք անմիջապես չէին ենթարկվում ռազմադաշտի իրականության։ Թուրքիան ընդգրկում էր պատերազմի պաշտպանողական նշանակը։ Թեև կարևորը եվրոպական ռազմադաշտն էր և թուրքական ուժերի մեծագույն մասը կենտրոնացվում էր Դանուբ գետի գծի վրա՝ ռուսական արշավողական գործողություններին դիմադրելու համար, բայց և այնպես, ասիական ռազմաճակատի վրա էլ թողնվում էին բավականաչափ զորքեր, ռուսներին համառ դիմադրություն ցույց տալու համար։

Այս պատերազմի մեջ էր, որ Պասկևիչը պիտի ցույց տար, թե իսկապես ինչ զորավարական ընդունակություններով էր ինքն օժտված։ Թուրքիան Պարս-

կաստան չէր, և ռուսների առաջ կանգնածն այլևս Աբաս Միրզան չէր, մի բոլորովին անկարող և անընդունակ զորապետ, որ միայն կարողանում էր Պասկևիչին հարմարություններ մատակարարել հեշտ ու էժան հաղթություններ հնձելու։ Թուրք ժողովուրդը դարերից ի վեր ցույց էր տվել, թե գիտե պատերազմել։ Այսպիսով ուրեմն, Պասկևիչի առջև խոշոր անհրաժեշտություն կար ավելի լայն ու լուրջ պատրաստություններով մտնելու այս նոր պատերազմի մեջ։ Եվ մենք տեսնում ենք, որ թեև շատ կարճ ժամանակ ուներ նա այսպիսի պատրաստությունների համար, բայց և այնպես, կարողացավ շատ բան անել, իր ձեռքի մեջ պահելով գործողությունների նախաձեռնությունը և հարկադրելով թշնամուն հարմարվել իր ծրագրին ու շարժողություններին։

Զուտ պատերազմական պատրաստությունները չեն կարող տեղ բռնել մեր տեսության մեջ, քանի որ վերաբերվում են զուտ զինվորական պատմությանը։ Մեզ համար չափազանց կարևորն այն ազգաբնակության հարցն էր, որ ապրում էր պատերազմական դաշտ ներկայացնող վայրերում, մի հարց, որ բնականաբար պիտի գրավեր Պասկևիչի առանձին ուշադրությունը։ Այն երկրներում, որոնք մտնում էին Թուրքաց Հայաստանի սահմանների մեջ, իսկական թուրք ազգաբնակությունը փոքրամասնություն էր կազմում համեմատությամբ երկու ուժեղ ազգագրական տարրերի, որոնք էին հայերը և քրդերը։ Ռազմական տեսակետից ռուսների համար ավելի կարևորություններ կայացնում էին քրդերը, գերազանցորեն մի ռազմական տարր, որ կարող էր շատ վտանգավոր մի զենք դառնալ կռվող կողմերից մեկն ու մեկի ձեռքում։ Ռուսաց կառավարությունն, իհարկե, շատ կկամենար իր ձեռքում ունենալ այդ զենքը, բայց ի՞նչպես գրավել քրդերին իր կողմը։ Ճիշտ է, քուրդ ժողովրդի մեծագույն մասը, բաղկացած լեռնաբնակ ցեղերից, միայն անվանական էին օսմանյան հպատակ, բայց այս մի օգուտ չէր ռուս կառավարության համար, քանի որ կար մի ուրիշ, ավելի զորավոր կապ, որ կապում էր քրդերին Թուրքիայի հետ. կրոնը, որ չափազանց մեծ դեր պիտի խաղար այս պատերազմի մեջ, քանի որ այս մի սրբազան պատերազմ էր, որ պարտավորեցնում էր բոլոր մահմեդականներին կռվել ոչ իսլամների, գյավուրների դեմ։ Բացի այս հանգամանքից, մեջտեղ խոսում էր և տնտեսական խոշոր շահը։ Անցնելով ռուսների կողմը, քրդերը պիտի զրկվեին իրենց արհեստը դարձած ավազակություններից, որ մանավանդ շահաբեր էր պատերազմի ժամանակ, երբ կարելի էր անպատիժ կողոպտել, քանդել, կոտորել։ Քրդական այս «քաջագործությունների» զոհերը սովորաբար հայերն էին լինում, որոնք, սակայն, այս պատերազմի մեջ պաշտպանված պիտի լինեին ռուսներից, ինչպես իրենց հավատակիցներից, իսկ այդ պաշտպանությունը պիտի գլխավորապես արտահայտվեր այն բանի մեջ, որ քրդերին խստությամբ կարգելվեր հարձակվել հայերի վրա։ Քրդերին, ուրեմն, բոլորովին ձեռնտու չէր միանալ ռուսներին։

Պասկևիչն, իհարկե, հասկանում էր այս բոլորը։ Սակայն կար դեռ մի հանգամանք, որից կարելի էր օգտվել որոշ չափով։ Այդ այն էր, որ քուրդ ժողովուրդը մի միություն չէր կազմում, այլ բաժանված էր իրարից անջատ, շատ հաճախ իրար թշնամի ցեղերից, մի հանգամանք, որ հնարավորություն էր տալիս ձեռք գցել եթե ոչ ամբողջ, գոնե այս կամ այն ցեղը ժամանակավորապես։ Այսպիսի գործ կարելի էր կատարել միմիայն առանձին ցեղերի գլխավորներին գնելով։ Պասկևիչը հենց այս ուղղությամբ էլ աշխատում էր։ Ռուսաց գանձարանից այս նպատակին հատկացվում է հարյուր հազար ռուբլի, և Պասկևիչի գործակալները մտնում էին քրդական գավառները, գլխավորապես ռուսական սահմանագլխի մոտերքում, պարգևներ էին

տանում քուրդ գլխավորներին։ Սակայն այս միջոցով ռուսները շատ չնչին հաջողություն ունեցան, որովհետև գնման նույն միջոցին դիմեց և օսմանյան կառավարությունն, ուղարկելով քուրդ ցեղերին երկու միլիոն ղուրուշ։ Ամենքը ծախվեցին թուրքերին և միայն մի թե երկու ցեղեր գնացին ռուսների մոտ։ Քրդության այս դրությունը մի խոշոր աղետ պիտի դառնար հայ ժողովրդի համար։

Եթե քրդությունը կարևոր էր իբրև ռազմատենչ մի տարր, հայ ժողովուրդը Թուրքիայի սահմաններում պակաս կարևոր չէր իբրև տնտեսական ուժ։ Մի արշավող զորքի համար թշնամու երկրում չէր կարող լինել ավելի ցանկալի մի բան, քան խաղաղ մի ազգաբնակություն, որ առատությամբ արտադրում է կենսական ամեն տեսակ բարիքները։ Հայերը, բացի այս ընդհանուր հանգամանքից, ունեին և այն խոշոր առավելությունը, որ հոծ բազմություն էին կազմում և լցված էին հավատարմությամբ դեպի ռուսները։ Պասկևիչը վստահ էր, որ թուրքական հողի վրա ապրող հայերի համար էլ ռուսները փրկողների ճիշտ նույն հմայքն ունեն, ինչ ունեին պարսկական հողի վրա, Երևանի խանության մեջ և Ատրպատականում։ Մնում էր, որ ռուսները ցույց տան թուրքահայ ժողովրդի վերաբերմամբ էլ այն, գեթ առերես բարյացակամությունը, ինչ ցույց էին տվել պարսկահայ ժողովրդի վերաբերմամբ։ Այս մի քաղաքականություն էր, որ բխում էր պատերազմական անհրաժեշտություններից։ Եվ Պասկևիչը գնում էր թուրքահայերի մեջ այնպես, ինչպես գնացել էր պարսկահայերի մեջ, այն է ուղեկցությամբ հայ հոգևորականության, որ հիմա էլ թուրքահայերի մեջ պիտի վառ և գործունյա պահեր ռուսասիրությունը։ Այժմ չկար Ներսեսը, բայց Պասկևիչն առանց անհաջողության հանդիպելու, փոխարինել էր նրան նրա թշնամի Սերովբե եպիսկոպոսով։

Բացի այս հոգևորականից, ռուսաց զինվորական պետերի տրամադրության տակ դրված էր ամբողջովին էջմիածնի կաթողիկոսության բարձր հեղինակությունը։ Եփրեմ կաթողիկոսը կոնդակներով դիմում էր Թուրքաց Հայաստանի զանազան կողմերը և հորդորում էր բոլոր հայերին ամենալայն և սրտագին աջակցություն ցույց տալ ռուսաց ամենահզոր, ամենաողորմած կայսեր զորքերին, որպեսզի նրանք կարողանան հաղթել թշնամուն։ Այդ կոնդակներից մեկը, ուղղված Բայազետի փաշայության հայերին, հասել է մեր ձեռքը և մենք նրա մեջ տեսնում ենք, թե որքան ապիկար և թշվառ մտածողության տեր մարդիկ էին նստած հայ ժողովրդի գլխին։ Կոնդակն, իհարկե, ծայրեծայր լիքն է անդուսպ շողոքորթություններով ռուսաց ցարի և նրա արբանյակների վերաբերմամբ։ Բայց գլխավորն այս չէ։ Եփրեմը զգում էր, թե իր, իբրև հոգևորականի, պարտքն էր հորդորել, որ թուրքահայերը չդավաճանեն իրենց ազգային հնագույն հատկության՝ հավատարմությանը դեպի այն սուլտանությունը, որի մեջ նրանք ապրում են։ Ի՞նչպես հաշտեցնել այս պարտականությունը այն բանի հետ, որ հայերը պիտի օգնեն ռուսներին նվաճել օսմանյան երկրները։ Նա ասում էր, թե այժմ, քանի որ ռուսներն են տիրացել այն երկրին, ուր բնակվում են հայերը, այլևս կարիք չկա, որ նրանք հավատարմություն տածեն դեպի երկրի նախկին տերերը, օսմանցիները։ Այսօր հավատարիմ կլինեն ռուսներին, իսկ վաղը եթե երկիրը նորից կանցնի օսմանցիներին, այն ժամանակ պետք կլինի նրանց ծառայել նախկին հավատարմությամբ։ Այսպես պարզ և հասարակ կերպով էր լուծում հայ ժողովրդի կղերական պետը պատերազմական դաշտին դավաճանելու ահեղ հարցերը։ Իսկ ինչ պիտի աներ դժբախտ ժողովուրդը, եթե վաղվա տերը հաշիվ պահանջեր այսօրվա արածների համար։

Հոգևորականությունը խոսքով պրոպագանդ պիտի աներ, բայց կար և

գործով պրոպագանդ կամավորական գնդերի միջոցով. այս պրոպագանդն այժմ նույնիսկ ավելի լայն չափերով էր կազմակերպվում, քան պարսկական պատերազմի ժամանակ։ Կամավորական ձիավոր գունդ (դարձյալ մոտ 1000 հոգուց) կազմված էր անդրկովկասյան հայերից, հաշված դրանց մեջ և ռուսաց նոր հպատակներին, Հայոց մարզի բնակիչներին։ Առանձին հիմունքներով զինվորական ծառայության էին կոչված նաև պարսկահայ գաղթականները, թեև սրանք դեռ չէին էլ կարողացել վերջնականապես հաստատվել իրենց բնակության տեղերում և գեթ մասամբ բուժել այն խոր և տանջալից վերքերը, որ պատճառել էր տեղահանությունը։ Այս գաղթականներից կազմվեցին երկու հետևակ բատալիոն, որոնք ուղարկվեցին պատերազմի դաշտը։ Գաղթական կամավորներին հատկացվում էր պարսկական զինվորների անունը՝ «սարբազ»։

Ռուս-թուրքական պատերազմը հայտարարվեց 1828 թ. ապրիլի 12-ին, բայց Պասկևիչը միայն հունիսի 14-ին կարողացավ բաց անել արշավողական գործողությունները Գյումրիից, որ առաջ մի փոքրիկ հայաբնակ քաղաք էր, բայց պարսկական պատերազմի ժամանակ, 1826-ին, Երևանի Հյուսեին Ղուլի խանի արշավանքի և ջարդումների հետևանքով վերածվել էր 50 տնից բաղկացած մի գյուղի։ Պասկևիչն էր, որ Գյումրիին տվեց բերդի կերպարանք և դարձրեց նրան կովկասյան գործող բանակի կենտրոնատեղի և գլխավոր հենարան։ Այս շատ կարևոր դիրքը Գյումրին, որ հետո ստացավ Ալեքսանդրապոլ անունը, պահպանեց և հետագա երկու ռուս-թուրքական պատերազմների ժամանակ։ Գյումրիից ուղիղ ճանապարհը Արևմտյան Շիրակի դաշտերով տանում էր դեպի իր ամրությամբ հռչակված Կարս բերդը, որի առումը Պասկևիչը դարձնում էր իր առաջին նպատակը։

Անցնելով Արփաչայ գետը և մտնելով թշնամու երկիրը, ռուսաց հրամանատարությունը իրազեկ էր լինում իր համար մի անախորժ իրականության՝ Արևմտյան Շիրակի բազմաթիվ հայ գյուղերը դատարկված էին և ազգաբնակությունը քշված տարված։ Այս նշանակում էր, որ ճիշտ այն միջոցին, երբ Կ. Պոլսի հայ գաղութի ղեկավար դրամական ազնվապետությունը անարատ և անբասիր հավատարմության վկայական էր ստանում սուլթանական կառավարությունից, դժբախտ հայ կաթոլիկների կանանց և երեխաների արյան գնով, ճիշտ այդ միջոցին Ասիական Թուրքիայի արևելյան նահանգների հայ ազգաբնակությունը այնքան կասկածելի էր երևում տեղի զինվորական իշխանությունների աչքում, որ նրան անկարելի է համարում պահել այն տեղերում, ուր պիտի գործեին ռուսական զորքերը։ Այս նորից ցույց է տալիս, թե որքան խոր էր շահերի տարբերությունը Հայաստանի հայության և Կ. Պոլսի գաղութահայության մեջ։

Պատերազմական գործողություններ սկսելով Կարսի դեմ, Երևանի կոմսը ցույց էր տալիս ճշմարիտ զինվորական ընդունակություններ։ Գյումրիից դուրս գալուց հազիվ 5 օր անցած, նա Կարսի պատերի տակ էր, ուր և կռիվ էր տեղի ունենում բերդից դուրս եկած թուրքական հեծելազորքի և ռուս հեծելազորքի մեջ։ Ճակատամարտը վերջանում է ռուսների կատարյալ հաղթությամբ, որ շատ ուժեղ տպավորություն է թողնում նաև տեղահանված և Կարսի կողմերը քշված հայ գյուղացիության վրա։ Ռուսական բանակին են գնում փախստականների գյուղավագները և խնդրում են թույլտվություն՝ վերադառնալու իրենց գյուղերը։ Պասկևիչը նրանց ընդունում է քաղցրությամբ և ոչ միայն տալիս է խնդրված թույլտվությունը, այլև մի առանձին զորաբաժին է նշանակում՝ փախստականներին անվնաս իրենց տեղերը հասցնելու

համար։ Այս կերպով վերադառնում են 750 հայ ընտանիքներ, որոնք և շենացնում են ամայացած երկիրը։

Պասկևիչը գործում էր համարձակ ու արագորեն։ Նա Կարսը ենթարկում է պաշարման, որ, սակայն, երեք օրից ավել չի տևում։ Հունիսի 23-ին ռուսաց զորքն իր հրամանատարի հմուտ ղեկավարությամբ հարձակում է գործում բերդի վրա և հանդիպում համառ ու արի դիմադրության նրա պաշտպանների կողմից։ Շատ տեղերում պետք էր լինում կռվով խլել ամեն մի թիզ հող։ Այսպես էր, օրինակ, Կարսի արվարձանը կազմող մասում, որ կոչվում էր Բայրամ փաշա և բնակեցված էր հայերով։ Այստեղ ներս խուժած ռուս զինվորները ամեն տան մեջ՝ գտնում էին թուրք զինվորներ և կատաղի դիմադրություն նրանց կողմից։ Սակայն զուր էր այդ հուսահատական պայքարը։ Անառիկ համարված բերդը վերցվեց նույն օրը, և Պասկևիչը տիրացավ բազմաթիվ թնդանոթների, ռազմական գույքերի և գերիների, որոնց մեջ էր նաև Կարսի հրամանատար փաշան։ Կարսի հայերը դրված էին երկդիմի դրության մեջ։ Հրամանատարությունը նրանց զենք էր բաժանել և պահանջում էր, որ նրանք կռվեն թուրքերի հետ միասին և նրանց հսկողության տակ։ Բայց այս կարգադրությունը չէր արգելում, որ հայերը բացարձակորեն ցուցահանեն իրենց ռուսասիրությունը։ Նրանք կամ փախչում գնում էին ռուսների բանակը, կամ օգնում էին ռուս զինվորներին բարձրանալ բերդի պարիսպների գլուխը և ներս թափվել։ Կարսի թուրք ազգաբնակության մեջ կազմվեց համոզմունք, որ եթե բերդն ընկավ մի օրվա մեջ, պատճառը հայերի դավաճանությունն էր, մեկ էլ այն, որ հրամանատար փաշան կաշառվել էր ռուսներից։ Եվ պարզ է, որ հայերը թուրքերի կատաղության առարկա պիտի դառնային ոչ միայն Կարսում, այլև ուրիշ տեղերում, ուր հասնում էր ռուսաց խոշոր հաղթության լուրը։ Իսկ հայերը հիմքեր շատ էին գտնում իրենց ռուսասիրության մեջ ավելի ամուր հաստատվելու համար։ Պասկևիչի քաղաքականությունը արտաքուստ այնքան բարյացակամ էր դեպի հայերը, որ նրանք կարող էին հավատալ, թե ռուսները եկել են մասնավորապես և այն նպատակով, որ ազատեն իրենց թուրքական լծից։ Հայ ռայայի ինքնասիրությունը շոյող մի հանգամանք էր դառնում այն, որ կազմակերպելով վարչական կառավարություն նորանվաճ երկրի համար, Պասկևիչն այդ կառավարության անդամ էր նշանակում երկու հայի և երկու թուրքի։ Հետզհետե զարգացնելով իր ռուսասիրական ոգևորությունը, Կարսի հայությունը հասնում է այն աստիճանին, որ նույնիսկ կամավորական գունդ է կազմում և մտցնում այն ռուսաց գործող բանակի մեջ։

Կարսից հետո Պասկևիչը արշավում է Ախալցխայի վրա, որ նույնպես շատ ամուր և շատ կարևոր բերդ էր։ Բայց նրանից առաջ դեռ պետք էր վերցնել Ախալքալաք և Խերթվիս բերդերը, մի բան, որ ռուսներին հաջողվում է արյունահեղ կռիվներից հետո։ Այստեղ էլ հայերը մեծ ձեռնտվություն ցույց տվին ռուսներին։ Համառ էր թուրքական դիմադրությունը, մանավանդ, Ախալցխայի մեջ։ Հայ և վրացի ազգաբնակությանը զենք էր բաժանված քաղաքի պաշտպանության համար։ Բայց երբ նկատեցին այդ երկու քրիստոնյա ժողովուրդների անհավատարմությունը, զինաթափ արին նրանց։ Մահմեդականները կռվում էին ահագին քաջությամբ, կռվում էին նույնպես և կանայք։ Ռուսները կրում էին խոշոր կորուստներ, բայց և այնպես, կռվում էին մեծ համառությամբ։ Ռմբակոծումը մեծամեծ ավերումներ գործեց քաղաքի մեջ. թնդանոթային կրակը հրդեհում էր ամբողջ քաղաքը, և այդ ժամանակ էլ ռուսները ներս էին խուժում։ Նեղ փողոցներում անխնա կոտորած սկսվեց, մոտ 3 հազար դիակներ կային այնտեղ թափված։ Վնասվեց, մանավանդ, հա-

յոց թաղը։ Դեպքը տեղի ունեցավ օգոստոսի 16-ին, և երեկոյան Ախալցխան արդեն ռուսների ձեռքում էր։ Պասկևիչը իր այդ երկրորդ խոշոր քաջությամբ նվաճված երկրի հրամանատար կարգում է երիտասարդ հայազգի գեներալ Վասիլ Բեհբությանին, որ այնուհետև երկար ժամանակ պիտի փառավորեր իր անունը Անդրկովկասում մղված պատերազմների մեջ իր խոշոր ռազմագիտական ընդունակություններով։

Մինչդեռ կատարվում էին այս արյունահեղ դեպքերը Վրաստանի և Թուրքիայի սահմանագլխի վրա, Կարսում լուր է տարածվում, թե թուրքերը Կարսի և Արդահանի շրջանների բոլոր հայ գյուղացիներին քշում տանում են դեպի Էրզրումի կողմը։ Իսկույն մի զորաբաժին է կազմվում, որի մեջ մտնում էին և հայ կամավոր հեծելազորքից 50—60 հոգի, և ուղարկվում է գերեվարողների դեմ՝ խլելու համար նրանց ձեռքից հայերին, որոնք հավաքված էին 22 գյուղերից։

Ռուսական աղբյուրների մեջ մնացել էին հետևյալ մանրամասնությունները։ Մուշի փաշան, ունենալով իր հրամանի տակ հազար ընտիր քուրդ ձիավորներ և թուրքական հեծելազորքից մոտ երեք հազար հոգի, գնում են Ախալցխային օգնության, բայց իմանալով, որ ինքն ուշ է մնացել և ամեն ինչ վերջացել է, վերադարձին հավաքել է տալիս հայ գյուղերի բնակիչներին և հրամայում է, որ նրանք ամենայն շտապով հավաքեն իրենց ունեցած-չունեցածը, բարձեն սայլերի վրա և ճանապարհ ընկնեն իր հետ։ Թեև հայերի սարսափը մեծ էր, բայց և այնպես, նրանք կարողացան ուշացնել իրենց ուղևորումը, և նրանց մեջ գտնվեցին խիզախ մարդիկ, որոնք գնացին իմաց տալու ռուսներին իրենց վիճակը։ Օգոստոսի 17-ին Կարսից դուրս եկած զորաբաժնի հրամանատարը, կամենալով իմանալ, թե ինչ է կատարվում շրջականերում, բարձրացավ մի բլուրի գլուխ և այնտեղից դիտում էր շուրջը փռված աշխարհը։ Այդ ժամանակ մի ձիավոր երևաց, որ քշում էր իր ձին ամենայն սաստկությամբ, ուշադրություն չառնելով ճանապարհի ոչ մի արգելքը։ Հագուստից երևում էր, որ նա հայ է։ Հասնելով հրամանատարին, նա մի շարժումով կանգնեցրեց տաքացած ձին և ցած ցատկելով, հևիհև պատմեց, որ եթե ռուսական օգնությունն ուշանա մի ժամ, երկու ժամ էլ, հայերին այլևս փրկել չի լինի, որովհետև մոտիկ տեղերում սկսվում են լեռնային կիրճեր և նրանց մեջ էլ ամբողջ գերեվարությունը մտցնելուց հետո Մուշի փաշան հեշտ կարող է դիմադրել ամեն մի փորձի, որի նպատակը կլիներ ազատել այդ տեղահանվող գյուղացիությունը։ Ռուս հրամանատարը շտապում է առաջ տանել իր զորքը ցույց տրված ուղղությամբ։ Արդահանի մոտ երևան է գալիս գաղթածների ամբողջ կարավանը։ Բայց Մուշի փաշան չի պաշտպանում իր ավարը և իր հեծելազորքով մտնում է Արդահանի բերդը։

Ռուս զորաբաժնի համար գործի կեսն արդեն կատարված էր, հայերն ազատված էին։ Մնում էր երկրորդ կեսը, դժվարագույնը, այն է՝ գաղթեցվածների հետ նահանջելը։ Ծանր բեռների տակ ճռնչացող սայլերը հուսահատ դանդաղկոտությամբ էին շարժվում, որովհետև նրանց քաշող գոմեշները, չնայած բոլոր հարկադրական միջոցներին, չէին արագացնում իրենց ծույլ քայլը և այս պատճառով, կարավանը, մանավանդ լեռնոտ տեղերում և անձուկ ճանապարհների վրա, մի քանի վերստ երկարություն ունեցող շղթա էր կազմում։ Զգալով, որ թշնամին չպետք է թողնի հարմար առիթը հարձակվելու այդ դանդաղորեն սողացող բազմության վրա, ռուս հրամանատարը կարգադրեց, որ հետևակազորն ու թնդանոթները դարան մտնեն, գյուղացիներն իրենց սայլերով առաջ անցնեն, իսկ ամենքից հետո շարժվի հեծելազորը, որպեսզի նա ընդունի առաջին հարվածը։ Անցնելով հետևակազորի

մոտով, գյուղացիներից ամեն մեկն իր շնորհակալությունն ու ուրախությունն էր հայտնում ինչ նշաններով որ կարողանում էր. տղամարդիկ վերցնում էին իրենց գլխարկները, կանայք խաչ էին հանում իրենց երեսներին և այլն։ Տիրում էր այսպիսի ժողովրդային անկարգ շարժումներին հատուկ ժխորը։ Չափահաս մարդկանց մեծ մասը ոտով էր գնում, ամեն մեկն իր սայլերի հետ, ձիերի, եզների և էշերի մեջքերից կախված կողովների մեջ դրված էին երեխաները, որոնք կարող էին ամեն րոպե ցած գլորվել։ Ավելացել էր այս բոլորի վրա և այն, որ կարավանը տանում էր իր հետ իր անասունները, որոնք շարունակ խառնվում էին սայլերի մեջ։ Եվ ահա այս ժխորի մեջ հանկարծ լսվում է սայլերի ետին շարքերից մի հրացանի ձայն, որին հետևում են երկուսը, երեքը։ Կասկած չկա, որ թշնամին հարձակում է գործել։ Հայ հեծելազորն էր առաջինը, որ կրում էր թշնամու հարվածը։ Նա դիմադրեց, բայց քրդական հեծելազորը բազմաթիվ էր, ուստի և, կորցնելով իր կազմի քառորդ մասը, նա ետ է քաշվում։ Նրան օգնության է շտապում կոզակ հեծելազորը, որին հաջողվում է կարճ ժամանակով կանգնեցնել թշնամուն, բայց նա էլ, վերջիվերջո, ստիպված էր հարձակվողների բազմության առջև ետ ընկրկել։ Այսպիսով մերկացվում է սայլերի շղթայի պոչը և թշնամին սկսում է թալանել ու կոտորել։

Մի ակնթարթում փոփոխվում է տեղահանվող ժողովրդի տրամադրությունը։ Այժմ սարսափն ու հուսահատությունն են թագավորում, բաց անելով մի աղետալի տեսարան։ Տղամարդիկ շտապում էին հեռու քշել անասուններին, որ թշնամու ձեռքը չընկնեն, ոմանք աշխատում էին սայլերը շուտ առաջ քշել, իսկ մեծամասնությունը չէր իմանում ինչ անել և միայն շատ քչերն էին, որ զենք վերցրին։ Կանայք, բռնելով երեխաների ձեռքերից, փախչում էին իրենք էլ չիմանալով ուր, ոմանք, սարսափից քարացած, ծունկ էին չոքում և աղոթում։ «Ես տեսա,— պատմում է ականատեսներից մեկը,— մի երիտասարդ կնոջ, որ համր մի հուսահատության մեջ թևերին առնելով, նայում էր իրեն սեղմված երեխաներին, չկարողանալով վճռել՝ մանուկներից որին վերցնել ազատել, և արտասուքները առվի պես էին վազում նրա դեմքով»։ Եվ ահա այս տագնապի մեջ երևան է գալիս, թողնելով դարանի մթաքը, հետևակազորը։ Զինվորները տեսնելով հայ գյուղացիների աղետալի դրությունը, սաստիկ զգացվում են և արիությամբ ու կատաղությամբ լցված, վազեվազ նետվում են թշնամու վրա, «մի վախեք, մի վախեք» կանչելով հայերին։ Ամեն մեկի մեջ բորբոքված էր կարեկցության զգացմունք դեպի անօգնական դժբախտները և ամեն մեկը պատրաստ էր նույնիսկ իր կյանքը տալ նրանց պաշտպանության համար։

Բախումն ահավոր էր։ Երկու կողմերն էլ կռվում էին մեծ համառությամբ։ Մուշի փաշայի քրդական ձիավոր գունդն էր, բաղկացած ընտիր մարտիկներից, որ իր վրա էր վերցրել կռվի ամբողջ ծանրությունը։ Բայց ռուսական սվիններն անխնա հնձում էին նրա շարքերը և ի վերջո փախուստի դարձնում ամենքին։ Գերիներ չէին վերցվում, այնքան սաստիկ էր ռուս զինվորների կատաղությունը։ Միայն մի հատ քուրդ, այն էլ վերքերով ծածկված, գտնվեց դիակների մեջ և պատմեց, որ կռվողները Քրդստանի ազնվականության ընտիր ներկայացուցիչներն էին։ Նրանցից կոտորվել էին 16 ցեղապետներ։ Պատերազմի դաշտում բռնված ձիերը թանկարժեք տեսակից էին, իսկ նրանց հարուստ արդուզարդը ցույց էր տալիս, որ նրանց տերերը նշանավոր էին իրենց ծագումով և հարստությամբ։ Սպանվել էր և Մուշի փաշայի որդին։ Նրա հետ սպանվել էր և նրա ձին, որոնց հուշակված ու կսկծեցուցիչ կորուստները քրդությունը լուծում էր հայ գյուղացիներից։ Նրանց այդ իսկ

քրդերը տեղահան էին անում վաճառում հազարներով, մորթում էին տասնյակներով և հարյուրներով, առանց որևէ պատասխանատվության ենթարկվելու։ Ռուսական սվինների պաշտպանության տակ այս ազատված 23 գյուղերը նորից նստեցին հողի վրա և հնձեցին արդեն հասունացած ցորենը։

Մենք դիտմամբ բերինք այս բոլոր մանրամասնությունները, իբրև չափազանց խրատական փաստեր, որոնք որոշ տրամադրություն, որոշ հոգեբանություն էին մշակում թուրք-քրդական անսահման իշխանության մատնված հայ աշխարհում։ Թե այս նոր նկարագրած անցուդարձերը և թե այսպիսի ուրիշ շատերը, որոնց նկարագրությունը դեռ մեր առջևում է, գալիս էին ցույց տալու, որ աշխարհը փոխվում է և հին ավեր կարգերը վերանում են։ Հայը յուրացնում էր գիտակցությունը, թե ինքն այլևս մի անբան անասուն, մի գրաստ չէ, թե ինքն էլ, վերջապես գտել է պաշտպանություն։ Այս իրողությունն աշկարա էր դառնում և թուրքի ու քրդի համար։ Պարզ էր, որ ռուսն այնուհետև պիտի գա օսմանյան երկիր նվաճելու հենց այդ հայերին ստրկությունից և սրածությունից ազատելու պատճառ բռնած։ Այսպիսով հայ ռայան, որ մինչև այդ լոկ մի տնտեսական արժեք էր թուրք-քրդական տիրապետության համար, այժմ ստանում էր քաղաքական արժեքի նշանակություն, մի հանգամանք, որ կարող էր միմիայն լարել հարաբերությունները քրդերի և թուրքերի և, մյուս կողմից՝ հայերի միջև։ Բացի այս բոլորից, մենք պետք է հենց այս գլխից նկատի առնենք ռուսական զորքերի խնամոտ և բարյացակամ վերաբերմունքը դեպի հայերը մասնավորապես այս պատերազմի ընթացքում։ Մի հանգամանք էր այս, որ հմայք էր ստեղծում ռուսների անվան շուրջը և մեծապես նպաստում էր այն տրամադրության ամրապնդմանը, որ ծնեցրեց խոշոր ժողովրդական շարժումներ և այսպիսով ղեկավարեց ժողովրդի ամբոխային հոգեբանությունը երկար ու երկար ժամանակ։ Այնպիսի մի դեպք, ինչպիսին է վերևում մեր նկարագրածը, չէր կարող մոռացվել մի հարստահարված և կեղեքվող ժողովրդի մեջ սերնդից սերունդ։ Իսկ այսպիսի դեպքեր շատ եղան այս պատերազմի մեջ։ Եվ դրանցից մեկը կրկնվեց վերոհիշյալից հինգ օր հետո։

Նվաճելով Ախալցխան, Պասկևիչը հրամանագրում է Կարսի հրամանատար գեներալին վերցնել Արդահան բերդը։ Այս հրամանը կատարելու համար Կարսից Արդահան ուղարկված զորաբաժինը օգոստոսի 22-ին արդեն մոտենում էր Արդահանը շրջապատող լեռներին, երբ առաջապահ մասերից մի կոզակ սրարշավ գալիս է հայտնելու զորաբաժնի հրամանատարին, թե առջևի լեռան ետևում երևում է թուրքական մի մեծ բանակ։ Իսկույն կարգադրություն է արվում, որ զորամասերը հավաքվեն միասին և պատրաստվեն։ Բայց բերված լուրը սխալ դուրս եկավ։ Լեռան ետևում երևացողը թուրքական բանակ չէր, այլ հայ տարագրվող գյուղացիության մի նոր և մեծ հոսանք։ Բանից դուրս եկավ հետևյալը։ Ախալցխայի մոտ ջարդված թուրքական զորքը իր փախուստի ժամանակ կողոպտել էր 33 հայ գյուղեր, իսկ ազգաբնակությունը քշում, տանում էր դեպի Էրզրում։ Սակայն տեղեկանալով ճանապարհին, թե ինչ վիճակի է ենթարկվել Մուշի փաշան, զորքը թողնում է հայ գերիների բազմությունը և ինքը շտապով փախչում դեպի Սողանլուղի լեռները։ Այսպիսով ազատվել էին հազարավոր հայեր։ Նրանք պատմեցին ռուսներին, որ Արդահանում թուրքական զորքեր բոլորովին չկան և որ տեղական բեկն անգամ հեռացել է լեռները, տանելով իր հետ մահմեդական ազգաբնակությունը։ Ռուսները շտապեցին ժամ առաջ գրավել դատարկված բերդը։ Բացվեցին դռները և հայ հոգևորականությունը եկեղեցական թափորով դուրս եկավ դիմավորելու ռուսական զորքը և մատուցեց նրան բերդի բանալիները։

5. Բայազետ, Ալաշկերտ, Բաղնոց։ 1828 թվականի ամառվա վերջին, Ախալցխայի փաշայությունը նվաճելուց հետո, Պասկևիչը իր զորքերի ձախ թևը ապահովելու համար, անհրաժեշտ գտավ գրավել նաև Բայազետի փաշայությունը։ Այս գործը նա հանձնում է Երևանի զինվորական նահանգապետ իշխան Ճավճավաձեին, որ հավաքում է մի փոքրիկ զորաբաժին Մասիսի ստորոտում և բաց է անում հարձակողական գործողությունները օգոստոսի 25-ին։

Բայազետի փաշայությունը մի առանձին, գրեթե միանգամայն անկախ քրդական ավատական իշխանություն էր օսմանյան պետության սահմանների մեջ։ Նրա տերը քրդական մի հռչակավոր տոհմ էր, որ իշխում էր այստեղ երեք հարյուր տարիներից ի վեր, ոչինչ հարկ չէր տալիս թուրք կառավարությանը և միայն պարտավորված էր բերդեր շինել, պահել նրանց մեջ զորքեր՝ այդ սահմանագլուխ երկիրը դրսի թշնամիներից պաշտպանելու համար։ Բայազետի փաշայությունը բաժանված էր չորս գավառների կամ սանջակների։ Բայազետ, Դիադին, Խամուր և Ալաշկերտ։ Իր ազգագրական հանգամանքներով փաշայությունը գերազանցապես հայաբնակ էր։ Հայերի թիվն էր երեք հազար տուն, մինչդեռ քրդերը (նրանց հետ և սակավաթիվ թուրքերը) 6—7 հարյուր տանից ավել չէին։ Այսպիսով ուրեմն, փոքրամասնությունը տիրում էր մեծամասնության վրա լոկ նվաճողի իրավունքով։ Բայց ազգաբնակչական տարրերի այս թվական հարաբերությունները Բայազետի փաշայության մեջ էլ կենդանի էին պահում, այն էլ ավելի մեծ չափերով, այն իրականությունը, որ դարերով հիմնավորված էր Հայաստանի մեջ հաստատված քրդական ավատական իշխանությունների մեջ։ Այն է՝ որ թեև հայ մեծամասնությունը բաղկացած էր գրեթե բացառապես ճորտ գյուղացիությունից և իր իրավազրկության մեջ հասցված էր համարյա թե անասնական դրության, բայց և այնպես, նա իբրև մեծամասնություն և իբրև մշակութային ավելի բարձր աստիճանի վրա գտնվող մի բազմություն, կարողանում է որոշ չափով բարոյական ազդեցություն ունենալ իր ավատական տերերի վրա։ Բայազետի փաշայության մեջ այդպիսի ազդեցություն ձեռք էին բերել առավելապես Բայազետ քաղաքի հայերը։ Քրդությունը գյուղական աշխարհում, ուր բնական տնտեսությունն էր տիրում, այնքան անճար չէր, ինչպես քաղաքներում, որոնց դրամական տնտեսությունը ի վիճակի էր նույնիսկ ընկճելու դեռ թափառական հովվական կենցաղի մեջ ապրող այդ նախնադարյան ժողովուրդը։ Վաճառական և դրամատեր բայազետցիները բնականաբար պիտի հեղինակավոր ուժ դառնային Բայազետի քուրդ փաշայի համար, ներկայացնելով փոքր, իհարկե, չափերով այն, ինչ էր ամիրայությունը Կ. Պոլսում։ Տարբերությունն այն էր, որ այստեղ, Բայազետի փաշայության մեջ, քրդական վայրագությունն էր թագավորում օրենքի տեղ և այս իրականությունը խոշտանգում էր ամենքին, քաղաքացուն և թե գյուղացուն։

Բացի տնտեսական հանգամանքներից, հայ ռայայի բարոյական ազդեցությունը պահպանում էին տգետ ժամանակների և տգետ ժողովուրդների անասելի թանձր կրոնական նախապաշարմունքները։ Տգետ և նախապաշարված էր հայ ժողովուրդը, բայց նրանից բազմապատիկ չափերով տգետ ու նախապաշարված էր քրդությունը։ Կրոնն էր, որ երկու ժողովուրդների մեջ էլ իր բարձր հովանավորության տակ էր առել այս մտավոր անծայր տնանկությունը։ Եվ որովհետև հայ կրոնավորությունն ավելի մարզված էր բարակ ու նուրբ խաբեբայությունների մեջ, քան միամիտ նահապետականության ամբողջ կուրությամբ պաշտամունք դարձած քուրդ իսլամական կրոնավորները, ուստի և նրանք ավելի հեշտ կերպով էին հարստահարում քրդական

տկիտությունը, ընդունել տալով նրան, որ քրիստոնեությունը ունի իր մեջ շատ մեծ գերբնական ուժեր։ Այս բանի մեջ համոզում էին շատ փաստեր, և ամենից առաջ այն ժողովրդական աղետը, որ բերում էր իր հետ ժանտախտ հիվանդությունը։ Կլիմայական ամենագեղեցիկ պայմանների մեջ էր դրված Բայազետի փաշայությունը։ Բայց նրա դժբախտությունն այն էր, որ այս բարեբեր երկրին պարբերաբար, ինչպես ասում էին՝ յոթը տարին մի անգամ, այցելություն էր տալիս ժանտախտը։ Միակ իրական ճարը այս սոսկալի համաճարակի դեմ համարվում էր այն գեղարդը, որ պահվում էր Էջմիածնի վանքում և որի մասին ասում էին, որ իբր թե այդ հենց այն գեղարդն է, որով հռոմայեցի զինվորները ծակել էին խաչ հանված Հիսուսի կողը։ Թե ով էր այդ բանի վկան և ինչպես էր «կողամուխ» գեղարդը պահվել դարերով և ընկել Հայաստանի արևելյան ծայրերը, հարցնող չկար էլ, պահանջվում էր կույր հավատ, որ ասում էր, թե հրաշագործ գեղարդը հալածում է ժանտախտը, ազատում է մարդկությունն այդ պատուհասից, բավական է միայն, որ նրան տանեն այնտեղ, ուր երևան է գալիս վարակը։ Այս հավատն արդեն մի տեսակ միջազգային հանգամանք էր ստացել։ Վրացիները հայերից պակաս չէին մոլեռանդ այդ հավատի մեջ և գեղարդը մի քանի անգամ ճանապարհորդել էր անասելի շուքով ու հարգանքներով Վրաստանի կողմերում։ Երբ այսպես էր համեմատաբար քաղաքակրթված Վրաստանում, ի՞նչ կարելի էր սպասել այդ կողմից միանգամայն անճար քրդական աշխարհից։ Գեղարդը հայ հոգևորականների ձեռքով տարվում էր Բայազետ, դրվում էր այնտեղի հայոց եկեղեցու մեջ և ամեն մեկը, հայ թե թուրք, իր աղաչավոր հայացքը նրան էր ուղղում՝ մեծամեծ ջարդեր տարածող հիվանդությունից փրկվելու համար։ Եվ գեղարդը հեշտությամբ չէր բերվում։ Պետք էր պատգամավորություն ուղարկել Էջմիածին, խնդրել, աղաչել, ընծաներ տալ։

Քրիստոնեական սրբություն էր համարվում նաև Մասիսը, ամպերի մեջ կորած, հավիտենական ձյունով ծածկված մի գագաթ, որ հափշտակում էր մարդուն իր վեհությամբ և բարձրությամբ և որ դարերի ընթացքում ստացել էր կախարդված մի աշխարհի հռչակ, կախարդված հոգևորականների զրույցների մեջ իբր թե լոկ այն պատճառով, որ այնտեղ պահվում է քրիստոնեական մեծագույն սրբություններից մեկը՝ Նոյի տապանը։ Ոչ ոք, ասում էր բարեպաշտ առասպելը, չի կարող բարձրանալ այնտեղ, և միայն Աստուծո հրեշտակն է, որ տապանի մի տախտակը իջեցրել է տվել մարդկանց և այդ տախտակը պահվում է նույնպես Էջմիածնի վանքում։ Պատմում են, որ մի քուրդ իշխող, կամենալով ծաղրել քրիստոնեական կրոնը, հարյուր հատ քուրդ ուղարկեց Մասիսի գլուխը բարձրանալու համար։ Բայց մեծ սարի վրա սովորական են ձյունախառն փոթորիկները և դրանցից մեկով բռնված քրդերը սարսափահար ցած են փախչում, կորցնելով իրենց ընկերներից մի քանիսին և վերագրելով այդ պատահարը Մասսի գլխին գտնվող քրիստոնեական սրբության պահապան Աստծուն, որ փոթորիկներով է խորտակում սարը բարձրանալ կամեցողներին։ Հասկանալի է, թե այսպիսի զրույցների մեջ փաթաթված վիթխարի սարն ինչ վիթխարի տպավորություն պիտի թողներ դեռևս բնության միամիտ որդի մնացող քրդի մտքի վրա։

Կար վերջապես և մի երրորդ հռչակավոր սրբություն։ Ալաշկերտի (Թոփրաք Կալեի) բերդում հայերը ուխտատեղ էին դարձրել մի քար, որ կոչվում էր ս. Սարգսի գերեզման։ Քրդերն էլ հայերից ոչ պակաս ջերմեռանդությամբ երկրպագում էին այդ քարին։ Հայը մոմ էր վառում, ոչխար էր մատաղ անում, որ ս. Սարգիսը պահապանե նրան ամեն չարից և մանավանդ քրդից, որ չարիքի ամենամեծն էր։ Իսկ քուրդը նույնպես մոմ էր վառում, նույնպես մա-

տաղ էր մորթում, որ ս. Սարգիսը հաջողեցնե նրա այս կամ այն ավազակային հարձակումներն ու արշավանքները, որոնց ամենասովորական առարկան հայ գյուղերն էին կազմում։ Ո՛ր մեկին լսեր այդ խեղճ քարը...

Այսպես էին հարաբերությունները այս ավատական իշխանության մեջ։ Բայց նրանց նշանակությունը չպետք է չափազանցնել։ Հայերն այնուամենայնիվ ռայա էին և իրավական տեսակետից ոչնչով չէին զանազանվում օսմանյան հպատակ մյուս ռայա ժողովուրդներից։ Նրանք էլ չէին կարող զանգեր գործածել իրենց եկեղեցիներում, պարտավոր էին իրենց գլխանոցներով զանազանվել իսլամներից և այլն։ Այսպիսով բավական պատճառներ ուներ Բայազետի փաշայության հայությունը համարելու ռուս-թուրքական պատերազմն իր ազատագրման ամենահաստատ գրավական և այս համոզմունքի հետևանքով նա, իհարկե, պիտի ամեն ինչ աներ՝ ռուսական նվաճումը հաջողեցնելու համար։

Կարևոր դիրք էին բռնում այս աշխատանքի մեջ մանավանդ Բայազետի հայերը։ Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Բայազետի տերը Բահլուլ փաշան էր, մի երիտասարդ քուրդ, որ գտնվում էր այդ քաղաքի հարուստ հայերի ազդեցության տակ և սկզբից ևեթ, կատարելով նրանց խորհուրդը, հոժարություն հայտնեց իր բերդն ու ամբողջ երկիրը առանց կռվի ռուսներին հանձնելու։ Սակայն Պասկևիչը ստանալով նրանից այդպիսի մի նամակ, ուշադրություն չդարձրեց նրա վրա։ Այսպես անցավ 1828-ի ամառը և այդ ժամանակ տեղի ունեցան մի շարք դեպքեր, որոնք փոխեցին Բահլուլ փաշայի տրամադրությունը։ Բանն այն էր, որ եթե Բայազետի փաշայության հայերը պատերազմը համարում էին իրենց համար ազատագրական, այդտեղի քուրդ ազգաբնակության համար նույն այդ պատերազմը ուրիշ ոչինչ չէր, բայց միայն միջոց թալանելու և գողելու։ Հունիս ամսին քրդերի մի մեծ խումբ, բաղկացած 400 հոգուց, հարձակվում է Մասիսի հյուսիսային լանջի վրա գտնվող Ակոռի հայ գյուղի վրա, բայց այս հարձակման մասին վաղօրոք լուր էին տվել Բայազետի հայերը, ուստի ակոռեցիները զենքով ետ փախցրին գիշատիչներին։ Մի ուրիշ հարձակման առարկա հուլիս ամսին դառնում է Կողբ հայաբնակ գյուղը։ Թեև այդտեղ գտնվող ռուսական փոքրաթիվ զորաբաժինը կարողանում է ետ քշել քրդերին, բայց և այնպես՝ այդ վերջիններին հաջողվում է քշել տանել գյուղի ամբողջ տավարը, մինչև 3000 գլուխ։ Ավելի հանդուգն էր երրորդ արշավանքը, որ քրդերը կատարեցին Մաստարա գյուղի վրա, այս անգամ թուրքական հեծյալ բազմաթիվ զինվորների հետ միասին։ Թեև այստեղ էլ պատահաբար գտնված ռուսական զորաբաժինը դուրս քշեց արդեն գյուղը խուժած ձիավորներին, բայց և այնպես քրդերը կարողացան տանել իրենց հետ 23 գերիներ։ Բայազետի քրդերի այս հանդուգն արշավանքները գրգռում էին նաև ուրիշ տեղերի քրդության գիշատիչ ախորժակը, և ահա Վանն էլ, որ նույնպես մի քրդական փաշայություն էր, նման հափշտակողական արշավանքներ էր սկսում, ներս խուժելով Խոյի և Սալմաստի գավառները, որոնք թեև Պարսկաստանին էին պատկանում, բայց այդ միջոցին դեռևս գրավված էին ռուսական զորքերով, իբրև ապահովություն, մինչև պարսից կառավարությունը կվճարեր պատերազմական տուգանքի վերջին մասը։ Քրդական հարձակումների կետ նպատակ են դառնում, իհարկե, այն հայ գյուղերը, որոնք մնացել էին երկրում նախորդ տարվա մեծ գաղթականությունից հետո։ Ռուսական զորքերը, ճիշտ է, ետ էին մղում քրդական արշավանքները, բայց չի կարելի ասել, թե գիշատիչ ցեղերը միշտ վերադառնում էին ձեռնունայն։ Նույնիսկ Բայազետի քրդերն էլ սովորում էին իրենց արշավանքներն ուղղել Խոյի կողմերը։

Այս շարժումները Բայազետի Բահլյուլ փաշայի համար օրինակ էին դառնում, որ ռուսներն այնքան էլ անհաղթելի չեն, ինչպես ներկայացնում էին նրանց։ Ուստի և թողնելով իր նախկին միտքը, նամակով հայտնում է իշխան Ճավճավաձեին, թե ինքը պիտի պաշտպանե իր բոլոր բերդը մինչև արյան վերջին կաթիլը։ Ռուսական զորքն օգոստոսի 25-ին անցնում է Մասիսի (Աղրիդաղի) շղթան և մյուս օրը մոտենում է Բայազետին։ Նրա մեջ եղած թուրքական զորամասը քրդերի օգնությամբ, ցույց տվեց ռուսներին մի թույլ դիմադրություն։ Բահլյուլ փաշան բոլորովին գլուխ էր կորցրել և չէր կարողանում օգնություն հասցնել ռուսների դեմ կռվողներին, որովհետև րոպե առ րոպե սպասում էր հայերի ապստամբությանը։ Եվ իրավ, ռուսների մուտքը Բայազետի փաշայության սահմանների մեջ ազդանշան է դառնում, որ սահմանագլխից մոտ գտնվող Արծափ հայաբնակ գյուղի բնակիչները զենք վերցնեն և կազմեն իրենցից մի ռազմական հարյուրակ։ Բայազետի բերդապահները, չկարողանալով դիմանալ ռուսական թնդանոթների կրակին, վերջիվերջո, լքում են իրենց դիրքերը և, անցնելով պարսկական սահմանը, մտնում են Մաքուի խանության։ Այն ժամանակ հայ հոգևորականությունը, եկեղեցական թափոր կազմած, բաց է անում քաղաքի դռները և բանալիները հանձնում է իշխան Ճավճավաձեին. Բահլյուլ փաշան գերի վերցվեց։

Հայ տարրի մեծամասնություն կազմելու շնորհիվ էր, որ ամենայն հեշտությամբ, առանց արյուն թափելու, ռուսների ձեռքն ընկան Բայազետի փաշայության երկու սանջակներ՝ էլ Դիադինը և Խամուրը։ Դիադինը գրավեցին զինված արծափցիները, իսկ Խամուրը նույնիսկ գրավելու հարկ չմնաց, այլ նա ինքն ուղարկեց իր բանալիները։

Բայց Բայազետի գրավումը խուճապ է առաջացնում Էրզրումի մեջ։ Շատերը փախան քաղաքից, հավատացած թե ռուսները Բայազետից ուղիղ պիտի գնան Էրզրումի վրա։ Գլխավոր հրամանատարը (սերասքերը) մի փոքրիկ զորաբաժին է ուղարկում Ալաշկերտ (Թոփրաք Կալե, հին Վաղարշակերտ) պատվիրելով նրա հրամանատար Աբդուլ Ռիզախ բեյին հավաքել և դուրս հանել այդ բերդում գտնված պաշարները, իսկ ազգաբնակությունը տեղահան անել և քշել Ասիական Թուրքիայի խորքերը։ Հարյուրավոր հայ ընտանիքներ մարդիկ էին ուղարկում իշխան Ճավճավաձեի մոտ և աղաչում էին ազատել իրենց վերահաս վտանգից։ Եվ սա խուլ չմնաց այդ աղաղակների հանդեպ։ Հայերին հարկավոր էր փրկել։ Ավելի հարկավոր էր տիրանալ Ալաշկերտի մթերանոցներին։ Եվ որոշվեց արշավանք դեպի Ալաշկերտ, որ և սկսվեց սեպտեմբերի 9-ին։ Զորքերը գնում էին մեծ արագությամբ, այնպես որ 150 վերստ տարածությունն անցան 48 ժամում։ Ալաշկերտի դղյակում գտնվող թուրք զորքերը, հետևակ թե հեծյալ, տեսնելով ռուսների մոտենալը՝ փախան։ Իշխան Ճավճավաձեն ուղարկեց իր ձիավոր զորքը նրանց հալածելու համար, բայց, քիչ անցած՝ մի հայ գուժկան հասավ և հայտնեց ողբալով, թե Հաջի խանի ղարափափախները ավերեցին հայաբնակ Ձիլկան գյուղը։ Հարկավոր էր անմիջապես օգնության գնալ, բայց մինչև որ կվերադառնար հալածանքի գնացած հեծելազորքը, ժամանակն անցավ, և միայն երեկոյան դեմ էր, որ Ալաշկերտից դուրս եկավ մի հեծյալ զորաբաժին՝ ղարափափախների ետևից հասնելու համար։ Բայց արդեն ուշ էր։ Դժբախտ գյուղը դարձել էր ծխացող ավերակների կույտ, կենդանության նշույլ անգամ չէր մնացել այնտեղ, ուր մի օր առաջ մեծ գյուղն էր ապրում։ Ոչնչացվել էին նույնիսկ գյուղը շրջապատող ցանքսերը։ Ձիավարելով ամբողջ գիշերը, ռուս հեծելագունդը, որի մեջ գտնվում էին նաև հայ, թուրք, մինչև իսկ քուրդ ձիավորներ, վաղ առավոտյան հասավ գերեվարներին, որոնք, թողնելով իրենց քշած տավարը դաշ-

տում, շտապով մտցրին գերիներին և կողոպուտով բեռնավորված ձիաները մի քարքարոտ, գրեթե անմատչելի կիրճի մեջ և բարձրաձայն գոչյուններով հայտնեցին, որ եթե ռուսները հարձակվեն կիրճի վրա, այն ժամանակ իրենք կմորթեն բոլոր գերիներին։ Հեծելագունդն ստիպված եղավ ձեռնունայն ետ դառնալ, բավականանալով միայն ղարափափախների քշած տավարն իր հետ տանելով։

Բայազետի ամբողջ փաշայությունն այսպիսով ռուսների ձեռքում էր։ Այժմ իշխան Ճավճավաձեի առջև կանգնում էր մի ուրիշ մեծ անհրաժեշտություն։ Ալաշկերտի հովիտը և նրան հարևան Բուլանըխը հռչակված էին իրենց բերրիությամբ և համարվում էին շտեմարաններ ամբողջ Ասիական Թուրքիայի համար։ Օգտվելով իր ձեռք բերած հաջողություններից, իշխան Ճավճավաձեն վճռում է օգտագործել նաև երկրի անսպառ հարստությունները, հավաքելով հացի պաշարներ։ Այս նպատակով նա մի արշավանք է ուղարկում դեպի Մուշի փաշայության սահմանները։ Այս արշավախումբը բազմաթիվ արյունահեղ կռիվների է բռնվում քրդերի հետ, բայց վերջիվերջո կարողանում է կատարյալ հաջողությամբ գլուխ բերել նպատակը, բերելով իր հետ մոտ հազար բեռ ցորեն։ Մուշի կողմերի հայերը ցույց են տալիս նույն տեսակ ձգտում դեպի ռուսները, ինչպես այս երևում էր ամեն տեղ և ռուս պաշարակիր զորաբաժնի հետ Բայազետի շրջանն են գաղթում երկու հարյուր տուն հայեր։ Շուտով, սակայն, ինքն՝ իշխան Ճավճավաձեն էր ստիպված արշավանք տանել դեպի Մուշի կողմերը, որովհետև այդ քաղաքից թուրքերն էլ արշավանք էին սկսել նրա դեմ, նպատակ ունենալով ետ շպրտել ռուս զինվորական ուժերը դեպի Բայազետի սանջակը։ Ռուսներն առաջացան մինչև Մանազկերտ և իրենց գործողությունների կենտրոնավայր դարձրին Բաղնոց գյուղը։ Այս վայրերում էլ տեղի ունեցան համառ պատերազմներ, որոնց մեջ թուրքերի կողմից արիաբար գործում էին քրդերը։ Վերջիվերջո իշխան Ճավճավաձեն, տեսնելով որ չպիտի կարողանա հաղթահարել, նահանջ է սկսում Բաղնոցից. Թուրքական բանակը հալածում էր նրան քայլ առ քայլ։ Բայց այդքանով էլ սպառվում էր նրա հաջողությունը և Բայազետի փաշայությունը դարձյալ մնում էր ռուսների ձեռքին։ Ճավճավաձեի այս արշավանքն ահագին տպավորություն էր թողնում Մուշի փաշայության մեջ։ 150 տուն հայեր միանում էին ռուսական նահանջին և թողնում էին իրենց հայրենի գյուղերը։

6. 1828—1829-ի ձմեռը։ Այս ձմեռն առանձնապես խստաշունչ էր և երկարատև։ Արդեն 1828-ի հոկտեմբերին սարերը ծածկված էին ձյունով, և Պասկևիչը դադարեցնում է պատերազմական գործողությունները, ետ քաշելով իր բանակի շարժուն, դաշտային մասը Վրաստան՝ այնտեղ ձմեռելու համար։ Այսպիսի մի ակամա զինադադար հարկավոր էր երկու կողմերին էլ՝ հետևյալ տարում պատերազմական գործողություններն ավելի լայն չափերով և մեծ ուժերով առաջ տանելու համար։ Սուլթան Մահմուդը սաստիկ դժգոհ էր իր փոքրասիական հրամանատարությունից և, պաշտոնանկ անելով ու հեռու տեղ աքսորելով Էրզրումի սերասքերին, հրամանատարությունը հանձնում է ավելի կարող և եռանդոտ մի փաշայի, հրամայելով նրան պատրաստվել այնպես, որ կարելի լինի ոչ միայն ետ քշել ռուսներին, այլև խլել նրանց ձեռքից գրավված երկրները։ Նոր հրամանատարը ծրագրում էր կազմակերպել մոտ 300 հազար հոգուց բաղկացած մի բանակ, որի մեջ շատ խոշոր ուժեր պիտի մտցնեին Թուրքիայի հպատակ երկու ռազմիկ ժողովուրդները. քրդերը՝ հարավում և աջարացիները՝ հյուսիսում։ Քրդերի ձեռքով նոր սերասքերը կարծում էր ետ նվաճել գլխավորապես Բայազետի փաշայու-

թյունը, իսկ աջարացիների ձեռքով՝ Ախալցխան, որի կարևորությունը առաջնակարգ էր։

Իր կողմից ռուս հրամանատարն էլ շատ անհրաժեշտ էր համարում բաց անել պատերազմի գարնանային շրջանն ավելի մեծ բանակով, քան ինքն ուներ իր տրամադրության տակ։ Սակայն Պետերբուրգի կառավարությունը, շատ ցանկալի համարելով հանդերձ, որ պատերազմական դաշտն ավելի ևս ընդարձակվի, որպեսզի ասիական ճակատն իր վրա քաշե թուրքական շատ ուժեր եվրոպական ճակատից, ոչ միայն անկարելի էր համարում օգնական զորքեր ուղարկել Կովկաս, այլև պահանջում էր, որ Ռուսաստան վերադարձվեն Կովկասում գտնված զորքերից մինչև 4 հազար հոգի։ Պասկևիչն այսպիսով ստիպված է լինում իր ուժերի ավելացման համար աղբյուրներ որոնել ոչ թե Ռուսաստանում, այլ Անդրկովկասում և նրա հարևան երկրներում։ Մենք արդեն տեսանք, որ նա ուզում էր քրդերին իր կողմը քաշել գնման միջոցով։ Այս մտքով նորից բանակցություններ էին սկսվում Քուրդստանի կողմերում և Պասկևիչի հատուկ լիազորություններով Մուշ, Վան և ուրիշ տեղեր էր գնում մի վրացի սպա, քուրդ փաշաների և ցեղապետների հետ բանակցություններ վարելու համար։ Այդ ժամանակ ոչ միայն Քուրդստանում, այլև Արևմըտյան Պարսկաստանում և Ասիական Թուրքիայում իր հանդուգն արշավանքներով, մեծամեծ քաջագործություններով մեծ հռչակ էր ստացել քուրդ Սուլեյման աղան, որի հետ նույնպես գաղտնի հարաբերությունների մեջ էր մըտնում ռուսաց հրամանատարությունը, և կար մի ժամանակ, երբ նա վստահ էր, թե կարողացել է գնել մեծանուն քուրդ ավազակապետ առաջնորդի համաձայնությունը։ Բացի քրդերից, Պասկևիչն աչք ուներ և աջարացիների վրա, այն տարրի, որ ուզում էր լայնորեն օգտագործել նաև Էրզրումի սերասքիրը։ Այս կողմում էլ, ինչպես և հարավում, Պասկևիչին սպասում էր կատարյալ անհաջողություն։ Ծրագրելով ձմեռային մի արշավանք՝ Ախալցխան ռուսների ձեռքից ետ խլելու համար, Էրզրումի սերասքիրը հրամանագրում էր աջարական ցեղի առաջնորդ Ահմեդ Բեյին հավաքել բավականաչափ զորք և միանալով այն օգնական զորաբաժնի հետ, որ կուղարկվի Էրզրումից, հարձակվել Ախալցխայի վրա։ Հակառակ դեպքում սերասքիրը սպառնում էր նրան կախաղան բարձրացնել։ Ահմեդ Բեյը համաձայնում է և հավաքելով 15 հազար աջարացի, 1829-ի փետրվարին, սաստիկ ձյուների մեջ, բոլորովին անակընկալ կերպով արշավում է Ախալցխայի վրա և, գիշերով ներս խուժելով քաղաք, գրոհ է տալիս բերդի վրա, որպեսզի հանկարծակիի բերե ռուսաց բերդապահ զորքը, սակայն հաջողություն չի գտնում իր այդ ձեռնարկության մեջ։ Մինչև Ախալցխա հասնելը աջարացիները կողոպտել և ավերել էին շրջակա հայ գյուղերը։

Ախալցխայի հրամանատարն էր, ինչպես գիտենք, գեներալ Վասիլ Բեհբությանը, որ կարճ միջոցում իր կարգադրությամբ և վարվեցողությամբ լայն ժողովրդականություն էր ստացել, քանի որ իբրև Թիֆլիսեցի հայ, քաջ ծանոթ էր տեղական բարքերին և լեզուներին և անմիջական հաղորդակցություն ուներ ժողովրդի հետ, առանց թարգմանների միջնորդության, որոնք արդեն ատելի էին դարձել ժողովրդին իրենց քմահաճ, անհարազատ թարգմանություններով։ Իշխան Բեհբությանի ձեռքի տակ գտնվում էր մի փոքրիկ զորաբաժին, որ կարող էր միմիայն պաշտպանել բերդը, այնպես որ դրսի քաղաքը կամա-ակամա պետք էր թողնել թշնամուն։ Քաղաքի ազգաբնակության մի մասը կազմում էին քրիստոնյաները (հայեր՝ լուսավորչական և կաթոլիկ, վրացիները) և հրեաները։ Մեծամասնություն կազմողները թուրքերն էին, որոնք լցված էին թշնամությամբ ռուսների դեմ և հետևաբար կարող չէին

իրենց պաշտպանություն։ Ոչ մահմեդական ազգաբնակության ընտանիքները, թվով 700-ից ավել, Բեհբությանը վաղօրոք տարել էր բերդը, ուր և նրանք պաշտպանված էին։ Եվ որովհետև չէր կարելի այնտեղ տեղավորել և տղամարդկանց, ուստի նրանք ստացան զենքեր և թողնվեցին դրսի քաղաքում։ Երբ աջարացիները գիշերով ներս թափվեցին և հարձակվեցին բերդի վրա, այս զինված քաղաքացիները կազմակերպեցին ինքնապաշտպանություն, կռվի բռնվելով թշնամու հետ։ Կռիվն այսպիսով ստանում էր քաղաքում փողոցային կերպարանք, պաշտպանողների մի մասը կոտորվում էր, մյուսը՝ ամրանում մի քարվանսարայի մեջ, որի շուրջը բոլորվում էր կատաղի պատերազմ։ Բերդի պարիսպների վրա կռվող ռուս զինվորները քաջարի դիմադրություն էին ցույց տալիս և ետ շպրտում սաստիկ համառությամբ պարիսպները մագլցող աջարացիներին։

Լուսանում էր աջարական հարձակման սարսափելի գիշերը և բացվում էր փետրվարի 20-ի վաղ առավոտը։ Միջնաբերդի բարձր պատերի վրա կանգնած ռուս զինվորների առաջ տարածվում էր սարսափելի տեսարան։ Թշնամու խմբերն ալիքների նման ծփում էին դժբախտ քաղաքի փողոցներում։ Ամեն տեղ արյուն, հառաչանքներ, զոհերի հուսահատական ճիչեր, դահիճների վայրենի աղաղակներ։ Տների տափակ կտուրները դարձել էին մի-մի սպանդանոց։ Այդտեղ էին բերվում մարդիկ և դանդաղ հոշոտվում էին խանչալներով։ Քարվանսարան, որի մեջ փակված էին զինված պաշտպանները, վերցվեց, և բոլոր պատսպարվածները սրի քաշվեցին։ Առավոտից բերդի պարսպի տակ հավաքվել էին մոտ երկու հարյուր կանայք և քիչ էլ տղամարդիկ, որոնք կարողացել էին փախչել արվարձաններից և աղաչում, պաղատում էին զինվորներին, որ իրենց ներս առնեն։ Դժբախտներից շատերը դեպի վեր էին բարձրացնում իրենց հետ բերած խաչելությունները, սրբերի պատկերները որպեսզի ավելի ևս համոզիչ դարձնեին իրենց թախանձանքները։ Բայց իզուր։ Բերդի դռները պինդ ամրացված էին քարերով, զինվորները խնդրում էին, որ իրենց թույլ տան դուրս հարձակվել և վռնդել թշնամուն քաղաքից, բայց զինվորական խորհուրդը, որ գումարեց իր մոտ Բեհբությանը, մերժեց այդ միտքը՝ չպակասեցնելու համար պաշտպանների թիվը, որ առանց այն էլ շատ փոքր էր։ Այնպես որ պահպանված մնաց միայն բերդը, իսկ նրանից դուրս ամեն ինչ մատնվեց կատաղի թշնամու կամքին։ Ահմեդ Բեյը չկարողանալով վերցնել Ախալցխան գրոհով, պաշարման ենթարկեց նրան, որ տևեց 12 օր, մինչև որ Վրաստանից օգնության եկավ մի զորաբաժին։ Ահմեդ Բեյը շտապով հեռացավ, բայց թուրքական զորաբաժինը, նախքան նահանջելը, համառ դիմադրություն ցույց տվեց ռուսական զորքին, որ դուրս եկավ բերդից և հարձակվեց նրա վրա։ Նորից քաղաքը հրդեհվեց։ Մահմեդական ազգաբնակությունը, վախենալով ռուսների վրեժխնդրությունից՝ փախավ, այնպես որ քաղաքի տերն էին մնում բերդում փակված 700 ընտանիքները, բայց նրանք էլ կորցրել էին իրենց ունեցածը և մատնվել ետին աղքատության։

Մինչդեռ Ախալցխայի տակ կատարվում էին այս դեպքերը, հարաբերությունները Պարսկաստանի հետ այնքան վատանում էին, որ առաջ էր գալիս մի նոր ռուս-պարսկական պատերազմի վտանգ։ Պատճառն այն արյունահեղ դրաման էր, որ տեղի ունեցավ Թեհրանում 1829 թ. հունվարի 30-ին և որին զոհ գնաց ռուսաց դեսպան Գրիբոյեդովը, «Խելքից պատուհաս» կատակերգության անմահ հեղինակը։ Պարսկաստանի հետ վերջնական հաշտություն կնքելուց հետո անհրաժեշտ էր վերականգնել դիվանագիտական հարաբերությունները և Նիկոլայ կայսրը Թեհրանի ռուսաց դեսպան է նշանակում Գրիբոյեդովին։ Սա դեռ երիտասարդ մարդ էր, հազիվ 34 տարեկան, հայտնի էր

ռուս հասարակության մեջ ավելի իբրև տաղանդավոր գրող, քան իբրև դիվանագետ։ Իբրև դիվանագիտական պաշտոնյա, նա ծառայել էր Կովկասում և մասնակցել էր Թուրքմենչայի դաշնագրությանը։ 1828-ի աշնանը, ստանալով դեսպանի պաշտոն, նա ամուսնացել էր Թիֆլիսում Բայազետի փաշայության մեջ իր գործողություններով մեզ ծանոթ, Երևանի զինվորական նահանգապետ իշխան Ճավճավաձեի դստեր հետ և անմիջապես ճանապարհվել էր իր պաշտոնատեղին։ Պարսկաստանում մեծաքանքար ռուս բանաստեղծին մեծ գլխացավանք պիտի պատճառեր Թուրքմենչայի դաշնագրության այն հոդվածը, որ պարտավորեցնում էր երկու կողմերին էլ վերադարձնել իրենց մոտ գտնված գերիներին։ Այս հոդվածի հետևանքով բազմաթիվ մարդիկ գնացին Պարսկաստան՝ գերի տարած կանանց և տղամարդկանց որոնելու և ետ բերելու համար։ Գերեվարների մեծ մասը հայեր էին, բայց կային նաև վրացիներ և գերմանացիներ։ Գրիբոյեդովն աշխատում էր բավարարություն տալ այդ ռուսահպատակներին, վերադարձնելով նրանց իրենց կորցրած հարազատներին, որի համար եռանդով պահանջում էր պարսից կառավարությունից, որ նա կատարե իր ստորագրած պայմանները։ Մեծ մասամբ նրան հաջողվում էր այս բանը, բայց կային և այնպիսի պայմաններ, որոնք չափազանց դժվարացնում էին խնդիրը և գրգռվածություն էին մտցնում պարսից կառավարող շրջանների մեջ։

Լինում էին և դեպքեր, երբ իրենք գերիները չէին ուզում վերադառնալ։ Գրիբոյեդովին՝ Թեհրան գնալիս, Ղազվին քաղաքում ներկայանում է մի գերմանացի, որի աղջիկը գերի էր բերվել այդ քաղաքը և գտնվում էր մի ազդեցիկ և հարուստ պարսիկի հարեմում։ Դեսպանը կանչում է այդ գերմանուհուն և նրա մայրենի լեզվով հորդորում է նրան վերադառնալ իր հոր հետ, բայց նա բացեիբաց մերժում է այդ առաջարկը և մնում է հարեմում։ Նույն այդ Ղազվին քաղաքից մի խան ընծա էր ուղարկել Թեհրան՝ Խոսրով խանին (ներքինացած և մահմեդականացած հայ) Շամխորից գերի վերցրած մի փոքրիկ, շատ գեղեցիկ և ժիր ու կայտառ հայ աղջիկ, որի անունն էր Նազլու, բայց որին տվել էին գերության մեջ Դիլ-ֆյուզ պարսկական անունը, որ նշանակում է «սրտի ուրախություն»։ Աղջիկը ջերմ սիրով կապված էր Խոսրով խանի հետ և չի ուզում հեռանալ նրանից։ Բայց մի օր Շամխորից գալիս է նրա հորեղբայրը և երկար ժամանակ աշխատելով միայն կարողանում է համոզել նրան, որ վերադառնա հայրենիք։ Փոքրահասակ գեղեցկուհին մեծ դժվարությամբ, լացակումած է բաժանվում խանից և ճանապարհ ընկնում։

Այսպիսի դեպքեր, իհարկե, մեծ դժվարություններ չէին կարող պատճառել Գրիբոյեդովին։ Դրությունը բարդվեց Թեհրանում, ուր դեսպանը ժամանեց 1829-ի հունվարի 1-ին, թողնելով իր երիտասարդ կնոջը Թավրիզում։ Ռուսահպատակ գերիների ազատության հարցը պարսկական մայրաքաղաքում գալիս էր շոշափելու բարձրաստիճան պաշտոնյաների, անգամ Շահի կանանոցային պատիվը և այս հողի վրա մի ամսվա մեջ պատրաստվեց և հասունացավ մի ամբողջ հուզմունք։ Հարցը բաց անողը մի երևանցի հայ էր, Միրզա Յաղուբ Մարգարյան անունով, որ երիտասարդության ժամանակ Էջմիածնի մոտ գերի էր բռնվել և տարվել էր Թեհրան, ուր նրան ներքինացրել էին և մահմեդականացրել, որից հետո նա շահի հարեմում բարձրացել էր մինչև գանձապահի պաշտոնը։ Այս վիճակն էր պատրաստվել և ուրիշ հայերի համար, որոնք հասել էին հարեմի մեջ ամենաբարձր պաշտոնների և այնուհետև ստացել էին նահանգապետների (վալիների) և զորահրամանատարների շատ կարևոր տեղեր։ Հենց նույնիսկ այն ժամանակ, երբ Գրիբոյեդովը դեսպան էր գնացել Թեհրան, այնտեղ, բացի Խոսրով խանից, հռչակ-

ված էր և Մանուչար խան Ենիկոլոփյանը, ներքինացած թիֆլիսեցի մի հայ, որ շատ մեծ պատիվ ուներ Ֆաթալի շահի պալատում։ Բոլոր այս ներքինի հայերը մինչև մահ հավատարիմ մնացին իսլամ կրոնին։ Բայց Միրզա Յաղուբ Մարգարյանը մնացել էր սրտի մեջ քրիստոնյա և, գնալով Գրիբոյեդովի մոտ, հայտարարեց, թե իբրև երևանցի և ռուսահպատակ, ուզում է վերադառնալ իր հայրենիքը։ Դեսպանն ընդունեց նրան իր հովանավորության տակ, բնակության տեղ հատկացրեց նրան դեսպանատան մեջ և կարգադրեց, որ այնտեղ տեղափոխեն Միրզա Յաղուբի գույքը։ Սակայն այս դեպքը մեծ գրգիռ է հարուցանում շահի պալատում։ Ինքը՝ Ֆաթալի շահը անձամբ շատ վրդովված էր։ Նրա հարեմի գանձապահը, քանի տարուց ի վեր ներքինի և մահմեդական, ուզում էր փախչել իր տեղից և կրոնից։ Այս մի ամբողջ անպատվություն էր Իրանի տիրոջ համար։ Բայց որովհետև ռուսական ազդեցությունը պատերազմից հետո չափազանց մեծ էր Պարսկաստանում, ուստի այդ անպատվության առաջն առնելու համար ձեռք առնվեցին կողմնակի միջոցներ։ Մանուչար խանը արգելեց, որ Միրզա Յաղուբի բեռները տանեն ռուսաց դեսպանատուն, պատրվակ բռնելով, թե ներքին գանձապահը պաշտոնական զեղծումներ է կատարել և պարտ է հարեմին մի ահագին գումար։ Սակայն այսպիսի միջոցներով անկարելի պիտի լիներ որևէ բան անել, քանի որ ամեն ինչին հսկում էր երիտասարդ դեսպանը և խիստ ու կտրուկ պահանջներ էր անում, շատ անգամ անզգույշ ու անխոհեմ։ Դրությունը լարվել սկսեց, մանավանդ այն րոպեից, երբ շահի փեսա Ալլահյար խանն էլ, մի շատ ազդեցիկ պալատական, սաստիկ թշնամացավ Գրիբոյեդովի հետ նույնպես հարեմական հաշիվներով։ Նրա հարեմում գտնվում էին երկու հայ կանայք, գերի բերված Կովկասից, որոնք նույն Միրզա Յաղուբի միջոցով խնդրել էին Գրիբոյեդովին իրենց ևս ազատություն տալ հայրենիք վերադառնալու համար։ Դեսպանն այս երկու կանանց հանեց հարեմից և բնակեցրեց իր դեսպանատան մեջ։ Պարսիկներին խորապես վիրավորում էր մանավանդ այն հանգամանքը, որ երկու հարեմական կանայք բնակվեցվում էին մի տան մեջ, ուր չկային ուրիշ կանայք։ Ասիական կրքերի հուզումը խառնվում էր կրոնական կույր ֆանատիկոսության բռնկումի հետ, կազմելով մի վայրենի շարժում, որի գլուխ էին կանգնում պարսիկ հոգևորականները։ Ամբոխի վրա պայթող ռումբի տպավորություն էր թողնում, մանավանդ այն լուրը, թե Միրզա Յաղուբը հայհոյել էր իսլամ կրոնը։ Ահագին խմբեր հավաքվում են մզկիթներում, ուր ախունդներն ավելի ևս բորբոքում են կրոնական կատաղությունը և հետո ուղարկում են նրանց ռուսական դեսպանատուն՝ դատաստանն անելու համար։ «Մենք ռուսների հետ պայմանագիր չենք կնքել,— աղաղակում էր գրգռված ամբոխը,— և մենք չենք թույլ տա, որ մեր հավատն անարգեն»։ Կան տեղեկություններ, որոնք շատ հավանական են դարձնում, որ այս շարժումը ղեկավարվում էր անգլիական դեսպանի գաղտնի ցուցումներով։ Անգլիական դիվանագիտությունը շատ էր մտահոգված, որ ռուսական ազդեցությունը Թեհրանում սաստիկ ուժեղացել էր ի հաշիվ անգլիականի, ուստի և իրեն հատուկ խորամանկ միջոցներով աշխատում էր ոչնչացնել այդ գերակշռությունը։ Հունվարի 30-ին կատաղած ամբոխը հարձակվում է ռուսաց դեսպանատան վրա և ոչնչացնում նրա մեջ եղած ամեն բան։ Պարսից կառավարությունը ոչինչ չէր արել դեսպանատունը պաշտպանելու համար։ Թեև սարվազներից պահակներ էին տրված, բայց նրանք մնացին լոկ հանդիսատես, որովհետև նրանց հրացանները դարսված էին վերի հարկում։ Փոքրաթիվ ռուս կոզակները քաջաբար պաշտպանում էին դեսպանատունը, բայց կռիվը չափազանց անհավասար էր և նրանք բոլորը կոտորվեցին։ Միրզա Յաղուբն

առաջին սպանվողներից մեկն էր։ Գրիբոյեդովը սուրը ձեռքին դուրս եկավ նույնպես կռվելու, բայց նույնպես սպանվեց։ Դեսպանության ամբողջ կազմից միայն մի հոգի ազատվեց՝ առաջին քարտուղար Մալցևը։ Շահը, լուր առնելով դեպքի մասին, հարյուր սարվազ ուղարկեց իբր թե վերջ դնելու համար անկարգությանը։ Բայց այս մի կատակ էր։ Երբ պարսից զինվորները տեղ հասան, հայտնի դարձավ, որ նրանք հրացաններ, ճիշտ է, բերել են, սակայն փամփուշտներ չեն բերել։ Դժբախտ Գրիբոյեդովի դիակը վայրագ խուժանը երեք օր քարշ էր տալիս Թեհրանի փողոցներում և այլանդակում էր անհնարին չափերով։

Միջազգային հարաբերությունների մեջ աննախընթաց այդ դեպքը համարվում էր մի շատ զորեղ գրգիռ, որպեսզի վերականգնվի նոր միայն վերջացած ռուս-պարսկական պատերազմը։ Այսպես կամենում էր, մանավանդ, Թուրքաց սուլթանը, որ և ջանքեր էր գործ դնում, որ շահական կառավարությունը զիջումներ չանի և վերստանա իր կորուստները զենքի միջոցով։ Սակայն պատերազմ հունվարի 30-ի աղետի պատճառով չծագեց։ Պասկևիչը հնարավոր էր գտնում այդպիսի մի պատերազմի այն դեպքում միայն, եթե իրեն կուղարկվի Ռուսաստանից մի օժանդակ բանակ։ Ռուս-թուրքական պատերազմն անհնարին էր դարձնում այդ օժանդակությունը, ուստի Նիկոլայ կայսրը բռնեց չափավոր և խաղաղասեր ընթացք։ Այս վերաբերմունքը զգաստություն էր առաջ բերում և Ֆաթալի շահի արքունիքում։ Շահի որդիներից մեկը, Խոսրով Միրզան, իբրև հատուկ դեսպան ուղարկվում է Պետերբուրգ՝ ռուսաց կայսրից ներողություն խնդրելու համար։ Եվ արյունահեղ պատահարը տրվում էր մոռացության։

Այդ նույն ժամանակ Պասկևիչն էլ, գուցե հենց նույն դեպքերի ազդեցության տակ, ստիպված է լինում խոնարհեցնել իր գոռոզ ու դյուրաբորբոք գլուխը ներքին քաղաքականության մեջ ևս զիջողության գիծ բռնելու անհրաժեշտության առջև։ Քրդերին և աջարացիներին՝ իբրև զինվորական ուժ գնելու մտքի հետ միասին բնականաբար պիտի առաջ գար և միտք օգտագործելու ռազմական կարիքների համար և մարդկային մի այս պաշարը, որ կարող էր հայթայթել ռուսական Անդրկովկասը։ Թուրք ազգաբնակությունն արդեն տվել էր ձիավոր գնդեր, մնում էր կազմակերպել զինվորություն նաև Վրաստանի և Արևելյան Անդրկովկասի քրիստոնյաներից (վրացիներից և հայերից)։ Ինչպես երևում է, Պասկևիչի միտքն էր իսկական զինվորագրություն մտցնել այդ երկու ազգերի մեջ։ Այս կարծիքն են ապացուցում նրա հանձնարարությամբ և հավանությամբ կազմված այն հրահանգները, որոնք որոշում էին զինվորագրության կարգն ու պայմանները։ Սակայն, երբ հրատարակվեցին այդ հրահանգները և նրանց իրագործման համար պատշաճավոր հրամաններ տրվեցին, ժողովուրդն իսկույն ցույց տվեց, թե գիտե տարբերություն դնել մշտական զինվորության (սալդաթության) և կամավոր զինվորության մեջ։ Եվ ամեն տեղ լուր էր տարածվում, թե «ռուսները սալդաթ են հավաքում»։ Զինվորության այս ձևը, որ միշտ էլ անհարազատ է եղել Արևելքում, պիտի սաստիկ վախեցներ մարդկանց, մանավանդ Նիկոլայի ժամանակ, երբ զինվորը ծառայում էր 25 տարի ամենածանր պայմանների մեջ։ Եվ իսկույն ստեղծվում էր ժողովրդի մեջ հակակշիռ. զինվոր չենք տա, բայց կամավոր կտանք։ Պայմանն այն էր, որ կամավորը երկրի սահմաններից դուրս չտարվեր կռվի համար, այլ թողնվեր տեղում՝ երկրի ներքին խաղաղությունը պահպանելու համար։ Եվ իզուր ռուս բյուրոկրատները փորձում էին հավատացնել, թե Պասկևիչի ուզեցածը հենց նույն այդ կամավորությունն էր։ Ժողովուրդն իրավունք էր համարում չհավատալ, քանի որ մեջտեղ կային կառա-

վարության հրատարակած հրահանգները, որոնք որոշում էին նույնիսկ և այնպիսի մանրամասնություններ, թե որքան բարձրություն պիտի ունենա զինվորացուի հասակը և այլն։ Վրացիներին ծիծաղեցնում էր մանավանդ այն, որ մարմնական արատ ունեցող անձինք չպիտի ընդունվեին զինվորական ծառայության մեջ։ Այդ իսկ ժամանակ Կախեթում ապրում էր Դոյա անունով մի ազնվական, որ թեև կաղ էր, բայց պատիժ էր դարձել լեզգիների և այլ լեռնեցիների համար իր հարձակումներով։ «Ի՞նչպես,— հարցնում էին,— ուրեմն, Դոյան չպիտի պաշտպանե Վրաստանը լոկ այն պատճառով, որ կաղ է»։

Բացի այս հանգամանքից, վրացի ազնվականությունը դեմ էր առհասարակ զինվորագրության և դասակարգային պատվասիրության տեսակետից ևս։ Բանն այն էր, որ հայերն էլ էին զենքի կանչվում, մինչդեռ հին վրացական իրականությունը վրացուն դարձրել էր սրի և պատերազմի մարդ, իսկ հային՝ վաճառական, որ փող էր աշխատում և այդ փողից խոշոր և առատ նվիրատվություններ էր անում ամեն անգամ, երբ հայրենիքը վտանգի մեջ էր և վրացին պիտի գնար նրան պաշտպանելու։ Այս պարզապես նշանակում էր, թե հայը, մոքալաքը, պարտավոր էր տանը նստել և փող աշխատել վրացի թավադի համար։ Եվ հիմա հանկարծ այդ մոքալաքը հավասարեցվում էր թավադին...

Այսպիսի տարրերից հյուսված մտայնության հողի վրա հասունանում է դիմադրական տրամադրություն, որ առաջին անգամ արտահայտվում է Թիֆլիսում 1829 թ. մարտի 9-ին, երբ ոստիկանապետը հավաքում է մոքալաքներին և արհեստավորներին ու հայտարարում է նրանց Պասկևիչի հրամանը զորաժողովի մասին։ Այս անգամ, ուրեմն, կանչվում էր հայ հասարակությունը, բայց նա համաձայնություն չտվեց, որի պատճառով եկավ նահանգապետը և մի քանիսին ձերբակալեց։ Այս խստությունից ավելի ևս բորբոքվեց ժողովուրդը։ Մի Թիֆլիսեցի ծերունի հայ, Քեթխուդյան անունով, փորձում է խրատել և խաղաղեցնել ժողովուրդը, դուրս գալով առաջ և հայտարարելով, թե ահա ինքն իր հոժար կամքով զինվոր է տալիս իր որդուն։ Սակայն հուզված բազմությունը հարձակվում է նրա վրա և նա հազիվ է կարողանում փախչել մինչև իր տունը, հալածվելով իր ետևից ընկած բազմությունից, որ մեծ աղմուկով գնաց պաշարեց ոստիկանությունը և սպառնում էր քանդել նրան և ազատել կալանավորներին։ Զորքեր կանչվեցին, եկավ զինվորական նահանգապետը ձի հեծած, կալանավորություններ կատարեց և մինչև երեկո հազիվ կարելի եղավ վերականգնել կարգը։ Քաղաքացիները քաշվեցին իրենց տները, իսկ գյուղացիները վերադառնալով իրենց գյուղերը, պատմեցին քաղաքում պատահածն ու տարածված լուրերը։ Այսպիսով ժողովրդական խռովությունները ծավալվեցին և Թիֆլիսից դուրս, գլխավորապես գյուղացիության մեջ և խիստ չափեր էին ընդունում, մանավանդ Գորիում և նրա գավառում, ապա անցնում էին նաև Կախեթ ու նորից գալիս հասնում էին Թիֆլիս։ Երևույթը զուտ վրաստանյան կերպարանք չուներ, քանի որ նմանօրինակ ժողովրդական խռովություն նույն զինվորագրական հարցի առիթով ծագում էր նաև Գանձակի հայերի մեջ։ Բայց ընդհանուր առմամբ, այս ժողովրդական շարժումներն առանձին վտանգավոր կերպարանք չէին ստանում ռուսական բյուրոկրատիայի համար, և այս՝ շնորհիվ Պասկևիչի զիջողական վարմունքի։ Նա անկարգությունները ճնշելու միջոց զինվորական ուժը չհամարեց, այլ ընդունելով իր և իր հրամանները կատարողների սխալները, պարզ հայտարարեց, թե հավաքվում են միմիայն կամավոր զինվորներ, այն էլ լոկ տեղական պետքերի համար և միայն վեց ամիս ժամանակով։ Այս չափը

բավական եղավ, որ ժողովուրդը հանդարտվի և կամավորական գնդերն անարգել հավաքվեն։

7. Էրզրում, դարձյալ Բայազետ, Ադրիանուպոլիսի հաշտություն։ 1829-ի մայիսին պատերազմական գործողությունները վերսկսվում էին ասիական ռազմաճակատի վրա։ Թուրքերը զուտ խոշոր պատրաստություններ էին տեսնում։ Ամեն կողմից զորքեր էին գնում Հասան Կալե բերդը, ուր կազմակերպվում էին բանակներ՝ Կարսը և Ախալցխան ետ խլելու համար։ Արդեն Կարսի և Արդահանի շրջականներում երևացել էին թուրք հեծյալ զորամասեր, որոնք դժվարացրել էին հաղորդակցությունն այդ բերդերի մեջ։ Սպառնող ռազմական փոթորիկները վարանման և երկյուղի մեջ էին գցել խաղաղ ազգաբնակությունը, որ չգիտեր, թե դեպի կռվող կողմերից ո՞րը թեքվել։ Այս դրության մեջ էր առավելապես մահմեդական ազգաբնակությունը, որ դադարեցրել էր իր երկրագործական աշխատանքները։ Շատերն արդեն թողնում էին իրենց բնակության վայրերը և փոխադրվում թուրքաց զորքերով գրավված տեղերը, բայց նախապես կողոպտելով իրենց հարևան հայ գյուղերը։ Մինչդեռ Էրզրումի սերասքերը պատերազմի դաշտ էր իջնում ընդարձակ զինվորական պատրաստություններով, Պասկևիչն, ինչպես տեսանք, հարկադրված էր բավականանալ իր ունեցած համեմատաբար փոքրաթիվ բանակով, և որովհետև պարսկական պատերազմի հնարավորությունն այդ միջոցին դեռ չէր վերացված, ուստի մի ժամանակ նա իր դրությունը համարում էր բավական տագնապալից։ Այս դրությունից նրան կարող էին հանել միայն խոշոր և վճռական հաղթությունները ռազմական գլխավոր բեմի վրա, և այս տեսակ ելքի ակնկալությամբ էլ նա կենտրոնացրեց իր բանակը Կարսում, դեպի ուր շարժվում էին թուրքական գլխավոր ուժերը Էրզրումի նոր սերասքեր Հաջի Սալահ փաշայի գլխավոր հրամանատարությամբ։ Ռուսական բանակը, դուրս գալով Կարսից, արագ շարժումով առաջ էր գնում Էրզրումի ճանապարհով՝ թշնամուն նույն այդ ճանապարհին հանդիպելու համար։ Եվ այդ հանդիպումը տեղի է ունենում Սողանլուղի լեռներում, ուր հունիս ամսին Պասկևիչը երկու անգամ սաստիկ ջարդ է տալիս օսմանյան բանակին, որը շտապով փախուստի է դիմում, անպաշտպան թողնելով Էրզրումի ամբողջ ճանապարհը։ Իր հաղթանակից Պասկևիչն օգտվում է մեծամեծ չափերով։ Ջարդված բանակի մնացորդների ետևից ընկնելով, նա սաստիկ արագացրած քայլով մի քանի օրում հասավ Հասան Դուզե, որը առանց որևէ դիմադրության անձնատուր եղավ, քանի որ խուճապի բռնված սերասքերը լքեց նրան և փախավ Էրզրում։ Պասկևիչը հետևեց նրան կրնկակոխ և երկու օրից հետո արդեն կանգնած էր Էրզրումի դռների առաջ։

Հիմա հարցը Հայաստանի այդ հին, իր ամրությամբ հռչակված քաղաքի նվաճումն էր։ Պասկևիչը վճռել էր գրավել նրան առանց արյունահեղության, համոզելով բնակիչներին, որ նրանք անձնատուր լինեն։ Այս բանակցությունների համար նրա ձեռքում մի շատ ազդու գործիք դարձավ Մամիշ օղլու անունով մի էրզրումցի թուրք, որ առաջ ենիչերի զորքի մեջ հրամանատարական պաշտոն ուներ և հեղինակություն էր վայելում իր հայրենի քաղաքի մեջ։ Ռուսաց բանակից նա ուղարկվեց Էրզրում, ուր և սկսեց համոզել թուրք ժողովրդի առաջնորդներին, թե ամեն մի դիմադրություն ավելորդ կլինի, իսկ կամավոր հնազանդությունը կփրկե քաղաքացիներին։ Մամիշ օղլուի այս քարոզությունն անօգուտ չանցավ, ազգաբնակության ունևոր տարրերը համակվեցին խաղաղասեր և հարմարվող տրամադրությամբ, բայց խոսքը միայն նրանց չէր պատկանում. հասարակ կամ խուժան կոչված ժողովուրդը ցույց էր տալիս շատ դյուրագրգիռ զգայնություն և պատրաստ էր կրոնական ֆանա-

տիկոսության բռնկումներ դուրս բերել «անհավատ» հաղթական թշնամու դեմ։

Էրզրումի ազգաբնակության մի զգալի մասն էլ հայերն էին կազմում։ Սրանց, իհարկե, կարիք չկար համոզելու, որ հոժարակամ անձնատուր լինեն ռուսներին, քանի որ նրանք հենց այդ միջոցին գտնվում էին այնպիսի սարսափելի դրության մեջ, որ միայն ռուսների շուտափույթ գալուստը կարող էր նրանց ազատել բնաջնջումից։ Արդեն պատերազմի սկզբից Ախալցխայում, Կարսում, Բայազետում և այլ տեղերում հայերի՝ դեպի ռուսներն ընդունած դիրքը գրգռում էր Էրզրումի թուրքերին հայերի դեմ, և թուրքական հին սովորությունը, մասսայական ջարդերով թշնամի տարրերից ազատվելը, կիրառության մեջ մտցվելիք մի անհրաժեշտության ձև էր ընդունում։ Պատերազմի դաշտում անկայուն, հեշտությամբ խուճապի մատնվող թուրքը տանը դառնում էր կատաղի առյուծ և իր պարտության վրեժը հանում էր իր անզեն ու անպաշտպան ռայայից, խողխողելով և հոշոտելով նրան մոլեգնած գազանի նման։ Եվ ահա 1828-ի ամառը, դեռ պատերազմական գործողությունների սկզբում, Էրզրումի հայերի համար ստեղծվում է վերին աստիճանի վտանգավոր դրություն։ Սերասքերի խորհրդում որոշվում է կոտորած կատարել Էրզրումի և նրա շրջակայքի քրիստոնյա ազգաբնակության մեջ։ Առաջին հերթին կանգնած էին Էրզրումի լուսավորչական հայերը և նրանց առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսը, որ մի շատ ազդեցիկ և գործունյա մարդ էր, ամբողջ քաղաքի և նրա շրջակայքի ազգաբնակության համար մի հեղինակավոր իշխան կամ, ինչպես անվանում էին նրան՝ մեծավոր։

Այս մեծավորն արդեն տեղեկություն էր ստացել Էրզրումի զինվորական իշխանությունների կայացրած սոսկալի որոշման մասին, բայց առ ժամ գաղտնի էր պահում իր իմացածը՝ ժողովրդի մեջ տարաժամ հուզմունք չտարածելու համար։ Մի օր, երբ նա պատարագ էր մատուցանում եկեղեցում, նրան իմաց տվին, թե երկու թուրք զինվորականներ սպասում են նրան դռների մոտ փաշայի հրամանով։ Իսկույն նա ընդհատում է պատարագը և գնում է այդ զինվորների հետ, իսկ ժողովուրդը՝ խռնված և սարսափահար այդ անակընկալությունից, ցրվում է տները, սպասելով սարսափեցուցիչ դեպքերի։ Ինքը՝ Կարապետ արքեպիսկոպոսն էլ զգալով, որ իրեն տանում են սպանելու համար, ճանապարհին սաստիկ երկյուղից մարում, ընկնում է։ Ժողովրդական հասկացողություն է, որ երբ մարդ հանկարծակի ընկնում է սաստիկ ահի տակ, այդ ժամանակ նրա շրթունքը ճաքում է և արյունն սկսում է հոսել այդ պատռվածքից։ Այս միևնույն արկածը ժողովրդական ավանդությունը վերագրում է և մարած-ընկած Կարապետ արքեպիսկոպոսին։ Թեև նա ուշքի է գալիս և լվանում է բերանից և քթից հոսող սարսափի արյունը, սակայն երբ հասնում է փաշայի ապարանքը և այնտեղ լսում է զինվորական խորհրդի անդամներից կոտորածի որոշումը, նորից անսահման ահն է նրան բռնում և նորից ճաքում է նրա շրթունքը։ Խորհրդի անդամներից մեկը, մի ծերունի փաշա, խղճահարվում է ռայայի արյունից և համոզում է իր ընկերակիցներին փոխել կոտորածի որոշումը։ Այս բանը հաջողվում է և Էրզրումի հայ ժողովուրդն ազատվում է թուրքական յաթաղանից։ Սակայն ինչպես պարզ երևում է, կոտորածի որոշումը լոկ հայերին ահաբեկելու և այսպիսով նրանցից որքան կարելի է շատ ծառայություններ դուրս քաշելու համար էր։

Եվ իրավ, Կարապետ արքեպիսկոպոսը խոստանում է կատարել զինվորական իշխանությունների բոլոր պահանջները։ Իսկ այդ պահանջներից ամենածանրը, Էրզրումը պաշտպանող Թոփ-դաղ (հայերի համար՝ ս. Նշան) լեռնային բարձրության վրա խրամներ փորելն էր։ Հայոց առաջնորդն, այնուամենայնիվ, հանձն է առնում ի կատար ածել այդ ծանր գործը և դուրս է

հանում քաղաքի հայ աշխատունակ արու ազգաբնակությունը, ինքն էլ հագնում է ժամհարի շորեր և, բրիչը ձեռին՝ բոլորի հետ միասին հող է փորում, բոլոր մյուսներին խրախուսելու համար, երեք օր շարունակ, իսկ այնուհետև հաճախ այցելում էր աշխատող ժողովուրդը և իր հեղինակավոր խոսքով ոգի էր տալիս ամենքին։ Խրամներ փորելն ինքնըստինքյան շատ ծանր աշխատանք էր և պիտի անպատճառ ժողովրդական աղետ դառնար, քանի որ հարյուրավոր ընտանիքներ՝ աշխատանքի տեղն ուղարկելով իրենց կերակրող աշխատավոր անդամներին, պիտի սովի մատնվեին։ Սակայն Կարապետ արքեպիսկոպոսը՝ ծախսելով եկեղեցական հարստությունները, հոգում էր, թե աշխատողների և թե նրանց ընտանիքների առօրյա կարիքները, տալով նրանց հաց, յուղ, պանիր և այլն։ Այնուամենայնիվ, տնտեսական զրկանքը մեծ էր ժողովրդի համար և այս հանգամանքն արտահայտություն է գտել մի երգի մեջ, որ հյուսվել էր այդ առիթով և սկսվում էր այսպես.

Մոսկովը հասավ Էրզրումին,
Վայը եկավ հայոց գլխին.
Սաստիկ հրամանը վեզիրի
Քունը կտրեց մեր աչքերի,
Գնանք խրամը, խրամը...
Ձմեռ կու գա բուք ու բորան
Մեր ընտանյաց հալն է յաման,
Թողինք գործները ցիրուցան
Եկանք հասանք ի Սուրբ Նշան,
Փորել խրամը, խրամը։

Թուրք իշխանությունները շատ բավական էին հայերի այս և նման այլ ծառայություններով։ Բայց այս դեռ երաշխիք չէր, թե նրանք միանգամայն ազատված էին վտանգից։ Հենց որ Պասկևիչը մոտեցավ Էրզրումի դռներին ու պահանջեց, որ անձնատուր լինի ոչ միայն քաղաքը, այլև նրա մեջ գտնվող սերասքերն իրեն շրջապատող փաշաների հետ միասին և այս պահանջը Մամիշ օղլուի ջանքերով ընդունելի էր համարվում թուրք բուրժուազիայի կողմից՝ դարձյալ սկսվեցին ամբոխի և զինվորական ծառայության մեջ գտնվող կիսավայրենի լազերի խլրտումները և դարձյալ քրիստոնյաների կյանքը մազից էր կախված։ Փողոցներում սպանություններ էին կատարվում, սարսափ էր տարածվել ամեն տեղ և յուրաքանչյուր հայ շտապում էր իր ընտանիքի կյանքն ազատել, թաքցնելով նրան նկուղների մեջ։ Ինքը Կարապետ արքեպիսկոպոսն էլ ստիպված եղավ դիմել այդ միջոցին և օրերով պահված էր մնում մի տան ներքնահարկում։ Հասկանալի է, թե այսպիսի տագնապ ապրող ազգաբնակությունը որպիսի անձկությամբ պիտի սպասեր ռուսների գալստյան։

Իսկ այդ գալուստը շատ չհապաղեց։ Բանակցությունները մղվում էին մեծ եռանդով և Պասկևիչը ոչինչ զիջում չէր անում իր պահանջներից։ Նրա կողմից պատգամավոր ուղարկված գեներալ Բեկովիչը, ամենևին չխռովվելով քաղաքի մեջ հուզված ամբոխի թշնամական ցույցերից, որոնք ուղղված էին իր դեմ, սերասքերին պայմանաժամ նշանակեց քաղաքը հանձնելու և անձամբ գերի գնալու համար, և երբ լրացավ պայմանաժամը, որոտացին ռուսական թնդանոթները Թոփ-դաղի ամրությունների դեմ և զորքերն առաջ անցան՝ թուրքերին սվիններով քշելու համար։ Սակայն բանն այս կետին չհասավ։ Սերասքեր Հաջի Սահմի փաշան՝ իրեն լքված զգալով ազգաբնակության կողմից, անձնատուր է լինում Պասկևիչին (հունիսի 27-ին) և սրան է ուղարկում բերդի բանալիները։

Մինչև որ տեղի էին ունենում բոլոր նախընթաց բանակցությունները և

քաղաքը ծփում էր անիշխանության ու խռովությունների մեջ, Կարապետ արքեպիսկոպոսն իր գետնափոր թաքստոցի մեջ դառնում էր արդեն միանգամայն ռուսներին նվիրված մի լրտես-գործակալ։ Նույն այդ թաքստոցից նա նամակ է գրում Պասկևիչին և նրա մեջ նկարագրելով քրիստոնյաների դրությունը, ցուցմունքներ է տալիս, թե որ կողմից պիտի ռուսները մտնեն պատերին և որ կողմից պիտի հարձակվեն քաղաքի վրա։ Իսկ երբ ամեն ինչ վերջացած էր և քաղաքի բանալիներն արդեն ուղարկված էին հաղթողին, հռչակավոր արքեպիսկոպոսն այլևս ավելորդ համարեց ծածկվելը և ձի հեծնելով, խաչը ձեռքին բռնած, մի հատ սպասավորի ուղեկցությամբ դուրս եկավ քաղաքից ու հասավ ռուսական բանակն այն րոպեին, երբ բանալիները բերող քաղաքացի մահմեդական պատգամավորները ողջույնի խոսքեր էին ասում Պասկևիչին։ Մեծ շքախմբով շրջապատված գլխավոր հրամանատարը շատ սիրալիր ընդունելություն արավ հայ բարձրաստիճան հոգևորականին, գրկախառնվեց նրա հետ և այսպիսով ավելի ևս բորբոքեց նրա մեջ բնատուր փառասիրությունը, որ այնուհետև հեռու պիտի տաներ նրան ռուսասիրության մեջ և անհնարին դարձներ նրա և նրա հոտի բնակությունը Թուրքիայի հողի վրա։ Անզուսպ ոգևորության մեջ էր ընկնում հայ ժողովուրդը, տեսնելով Էրզրումը ռուսների ձեռքին։ Իսկ ոգևորությունը կույր զգացմունք է, և նրան անվերապահորեն անձնատուր եղած ժողովուրդը, բնականաբար, պիտի ինքն իրեն խաբեր առաջին իսկ քայլից։ Կարծեցին, թե Էրզրումն այլևս երբեք թուրքական քաղաք չպիտի դառնա և ռուսական տիրապետությունն եկել է մի օրվա մեջ վերջ դնելու այն հարյուրավոր և հազարավոր տարիներին, որոնց ընթացքում հայ ժողովուրդը, ուրիշ ոչ իսլամ ժողովուրդների նման, լուռ ու անմռունչ պիտի տաներ ստրկության ծանր շղթաները։ Այժմ այդ ստրուկը զգում էր իր լեզվի և բազուկների կապանքներն արձակված, և նրա առաջին շարժումը պետք է լիներ, իհարկե, վրեժ ամբողջ անցյալի համար, վրեժ մի ժամի, մի օրվա մեջ։ Հենց միայն այն հանգամանքը, որ ռուսների գալուստը արձակում էր դարավոր լռության կապանքները նաև քրիստոնեական եկեղեցիների զանգերի լեզվակներից՝ որքան պիտի ոգևորեր մարդկանց այն կրոնամոլ ժամանակներում։ Այժմ թուրքերն էին, որ պիտի լռեին և տանեին, հայերը հարձակվում էին նրանց վրա, վիրավորում էին նրանց կրոնական զգացմունքներն անգամ։ Բանը հասնում էր այնպիսի չափազանցությունների, որ Կարապետ արքեպիսկոպոսն ստիպված էր կարգի հրավիրել տաքգլուխ երիտասարդներին։ Սակայն հորդորներն անհետևանք էին մնում։ Եվ այս միանգամայն հասկանալի է միամիտ և անզգաստ ոգևորության հոգեբանության տեսակետից։ Զգաստության հոգս չէր կարող լինել Էրզրումի հայերի մեջ, քանի որ նրանք էլ, Կարսի և Բայազետի հայերի օրինակով, կազմում էին կամավոր զորախումբ՝ ռուսաց բանակում ծառայելու համար։

Մինչդեռ Էրզրումի գրավումը տեղի էր ունենում մեր նկարագրած հանգամանքների մեջ, ռուսական ձախ թևի վրա, Բայազետում, ստեղծվում էր մի չափազանց վտանգավոր դրություն։ Վանի փաշան, որ մայիս ամսին զբաղված էր քրդերից, մասամբ նաև թուրքերից մի խոշոր բանակ կազմելով, հունիսին առաջ էր արշավում դեպի Բայազետ, որի պաշտպանությունը հանձնված էր Պոպով և Պանյուտին գեներալների հրամանատարության տակ գտնվող փոքրաթիվ զորաբաժնին։ Պաշտպանությունը հերոսական էր, բայց երկու կողմերի ուժերի անհավասարությունը չափազանց մեծ էր և Վանի փաշան իր հավաքած բազմության ահագին գերակշռությամբ էր չափազանց դժվարացնում ռուսների դրությունը։ Այս դրությունը միանգամայն անելանելի կլիներ, եթե ռուս զինվորների շարքերում կանգնած չլինեին Բայազետի հայերը, որոնց

թիվը Պասկևիչը համարում էր 2000 հոգի։ Քուրդ-թուրքական բանակը գրոհ էր տալիս Բայազետի վրա և առաջին օրը ձեռք էր բերում նշանավոր հաջողություն, դուրս քշելով ռուսներին նրանց գլխավոր դիրքերից և խլելով նրանց թնդանոթները։ Գիշերը Բայազետի թուրքական թաղում կատարվում էին հաղթական ուրախություններ։ Թշնամին տոնում էր իր հաղթությունը, լսվում էին նվագի, երգի, աղմկալից խրախճանքի ձայներ, բայց միևնույն ժամանակ լսվում էին և հառաչանքներ ու ճիչեր։ Այս թուրքական թաղում ապրող հայերն էին, որոնք մորթվում էին արյունառուշտ տանի փառքը մեծացնելու համար։ Հայ կամավորները լսում էին իրենց եղբայրակիցների այդ օրհասական աղաղակները և լցվում էին սոսկալի կատաղությամբ։ Հետևյալ օրը ռուսները, ուժեղացած դրսից ստացած մի փոքրիկ օգնությամբ, վերսկսեցին հարձակումներն իրենց կորցրած դիրքերին նորից տիրանալու համար։ Կռիվն արյունահեղ էր, շատ համառ և շուտով հաջողություններ բերեց ռուսներին։ Հայ կամավորներն ուղարկված էին թուրքական թաղի դեմ, ուր և սաստիկ կռիվ բռնկվեցին, որի մեջ, ինչպես գրում էր գեներալ Պոպովը Պասկևիչին, նրանք պատերազմում էին հերոսաբար։ Խորտակելով թշնամու ուժը այդտեղ, հայերն անձնատուր էին լինում անզուսպ վրիժխնդրության անցած գիշերվա կոտորածների համար։ Տեղի ունեցավ անգութ կոտորած, որի մեջ հայերը չէին խնայում ոչ հասակ, ոչ սեռ։ Այս առաջին անգամն էր, որ ցույց էր տալիս, թե որքան թշվառ դաստիարակություն էր ստացել հայ ռայան իր կոպիտ ու վայրենի տերերից գերության դարերում։ Արևելքն անհիշելի հին ժամանակներից էր պաշտում «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» սկզբունքը և հայ ժողովուրդը հարմար դեպքերում ցուցադրում էր, թե ինքն այս սոսկալի սկզբունքից բացառություն կազմելու ոչ մի հնարավորություն չունի։ Վանի փաշայի արշավանքը ետ էր մղվում։

Պասկևիչը ուրախ լինելով հանդերձ, որ Բայազետն ազատված է, առանձին գոհունակություն չէր զգում այն հանգամանքից, որ պատերազմի մեջ հայերը գերակշիռ են հանդիսացել քրդերից, որոնց նա փայփայում էր, քանի որ դեռ չէր թողել նրանց իր կողմը գրավելու և ռուսական օժանդակ զորք դարձնելու միտքը։ Ուստի հրամանագրում էր գեներալ Պոպովին կալանավորել թուրք դիմադրողներին, իսկ քուրդ ցեղապետներին ձեռք չտալ, որպեսզի նրանք տեղիք չունենան գրգռվելու ռուսների դեմ։ Ինչ վերաբերում է հայերին, ասում էր Պասկևիչը, նրանց մի հավատաք, որովհետև նրանց անձնվիրությունը կարող է առաջացած լինել վախից։ Բայազետի հերոս պաշտպանը հեշտ պիտի նկատեր այս խոսքերից, որ իր փառապանծ գլխավոր հրամանատարը դատողությունների մեջ կարող է նույնիսկ հիմարության հասնել, ուստի պարտք համարեց ուղարկել նրան մի երկրորդ թուղթ, որի մեջ պաշտպանում էր հայերի պատիվը և ապացուցում էր, թե նրանք արժանի են ավելի լավ ուշադրության։

Էրզրումը գրավելուց հետո, Պասկևիչը պատերազմական գործողությունները տարածեց դեպի արևմուտք, Տրապիզոնի և Սվազի ուղղությամբ։ Սակայն այս կողմերում հաղթությունները այնքան հեշտ չէին ռուսներին բաժին դառնում։ Լեռնաբնակ քաջ և կիսավայրենի լազերն էին ապրում այդ կողմերում և նրանք ցույց էին տալիս ռուսներին ուժեղ, հերոսական դիմադրություն։ Ռուսական առաջապահ զորաբաժինը ճիշտ է, գրավեց Բաբերդը, բայց վերջը հանդիպեց խոշոր անհաջողության և ստիպված եղավ իր հրամանատար գեներալ Բուրցևին կորցնելուց հետո՝ նահանջել։ Պասկևիչը ինքը գնաց Տրապիզոնի և Սվազի ճանապարհները գրավելու, բայց շատ չնչին հաջողություն գտավ։ Վերջին խոշոր պատերազմը, որ տալիս էր նա թուրքերին, տեղի ունեցավ սեպտեմբերի 27-ին Բաբերդի տակ։ Քաղաքը վերցվեց մեծ դժվարու-

թյամբ. ազգաբնակությունն էլ համառ դիմադրություն էր ցույց տալիս, նրա հետ և տեղացի հայերը, ուստի և մեծ կոտորած տեղի ունեցավ։ Հայերից, ինչպես հաղորդում են հայկական աղբյուրները, կոտորվեցին հազար հոգուց ավելի։ Այսպես էր Պասկևիչը հանում Բուրցևի սպանության և նրա հետևանքով ռուսների կրած պարտության վրեժը։

Բայց այս մի բոլորովին անիմաստ արյունահեղություն էր։ Հարձակում տանելով Բաբերդի վրա, Պասկևիչը չգիտեր, որ դեռ սեպտեմբերի 2-ին Ադրիանուպոլիս քաղաքում ստորագրվել էր հաշտություն, որ վերջ էր դնում պատերազմին։ Սուլթանական կառավարությունը բոլորովին ուժասպառ էր դարձել և չէր կարող այլևս դիմադրություն ցույց տալ ռուսներին, մանավանդ Եվրոպական Թուրքիայում, ուր գլխավոր հրամանատար Դիբիչը, անցնելով Բալկանյան լեռնաշղթան, գրավել էր Ադրիանուպոլիսը և նրա առաջապահ գնդերն արդեն մոտենում էին Կ. Պոլսի դռներին։ Մայրաքաղաքում ահ ու սարսափ տարածվեց։ Առանց այն էլ այնտեղ սով էր և սուլթանի մինիստրները խորհուրդ տվին նրան անհապաղ հաշտություն կնքել ռուսների հետ։ Մահմուդի անձնվիրության համար այս մի ամբողջ փորձանք էր, բայց ահաբեկված լինելով շրջապատող հանգամանքներից, կամա-ակամա համաձայնություն տվեց։ Թուրքիայի վերջին ժամն էր հասել։ Ըստ երևույթին, Ռուսաստանը պիտի լայն չափերով օգտագործեր իր հաղթությունների արդյունքները։ Բայց այսպես չեղավ։ Թուրքիան ոչնչացնել չէր կարելի, որովհետև առանց նրան չէր կարելի պահպանել քաղաքական հավասարակշռությունը Եվրոպայում։ Այս բանը արևմտյան պետությունները նորից զգալ էին տալիս ռուսաց կառավարության, որ և վախենալով դրսի միջամտություններից, ստիպված էր լինում չափավորություն պահպանել իր պահանջների մեջ։

Թե որքան հրամայական էր այս պահանջը, երևում է այն փաստից, որ ռուսաց արտաքին գործերի մինիստրը հարկադրված էր անտես անել նույնիսկ Պասկևիչի առաջադրած պայմանները։ Դեռ 1828-ի նոյեմբերին, երբ ռուսները տակավին չէին անցել Սողանլուղի լեռնաշղթայի մյուս կողմը, Պասկևիչը ժամանակ էր համարում հաղորդել կոմս Նեսսելռոդեին (արտաքին գործերի մինիստրին), թե ինքն ինչպես է ներկայացնում իրեն ռուս-թուրքական ապագա սահմանագիծը։ Նա գտնում էր, որ Ռուսաստանին պիտի միացվի Բաթումը և ամբողջ երկիրը մինչև բնական սահման կազմող Սողանլուղի լեռները։ Այս հաշվով Ռուսաստանին պիտի անցնեին Փոթին, Ախալցխան և Կարսը, իսկ Բայազետի փաշայությունը պիտի դառնար ինքնագլուխ՝ Ռուսաստանի հովանավորության տակ։ Սակայն արտաքին գործերի մինիստրը հասկացնում էր Պասկևիչին, որ ապագա սահմանները որոշելու համար դեռ բավական չէ ռուսաց կառավարության կամքը, քանի որ թուրքական հարցն ընդհանուր եվրոպական քաղաքականության մի օղակն է կազմում և կարող է լուծվել այդ միջավայրի մեջ միայն։ Ուստի մինիստրը խորհուրդ էր տալիս Պասկևիչին չհափշտակվել ապագայի կարելիություններով և հրավիրում էր նրա ուշադրությունը մի իրական անհրաժեշտության վրա։ Նա հարկավոր էր համարում, որ այժմից իսկ թուրքական այն երկրներում, որոնք անցել էին ռուսների ձեռքը, քրիստոնյա ազգաբնակության մեջ ստեղծվի տրամադրություն գաղթելու ռուսական հողը։ Մինիստրին ցանկալի էր, որ այդ գաղթական քրիստոնյաները բնակեցվեն արևմտյան Վրաստանում (Իմերեթ և Մինգրելիա) և այսպիսով կենդանացվի հին Կովկասը։ Բայց այս առաջարկության մեջ աչքի էր զարնըվում այն հանգամանքը, որ կենտրոնական կառավարությունը չէր ճանաչում Անդրկովկասում իր ձեռք բերած երկրները։ Պասկևիչը հայտնեց մինիստրին, թե Իմերեթում և Մինգրելիայում ազատ հողեր չկան, թե այնտեղ կլիմայական

վատ պայմանների ու ճահիճների պատճառով անկարելի է անսովոր ժողովրդական տարրեր բնակեցնել։ Բայց այս, իհարկե, չէր նշանակում, թե ուրեմն պետք է թողնել քրիստոնյա ժողովուրդների գաղթեցման ամեն մի միտք։

Մյուս կողմից՝ հաշտության բանակցությունների վրա անմիջական կերպով ազդում էր և այն հանգամանքը, որ Դիբիչը Ադրիանուպոլիս էր հասել համեմատաբար մի թույլ և վատուժ բանակով, այնպես որ նրա դրությունը թշնամի երկրի խորքերում այնքան էլ ապահովված չէր կարող համարվել։ Այս բոլոր պատճառներով Ռուսաստանն իրեն հարկադրված էր համարում բավականանալ փոքրով։ Թուրքաց կառավարությունը պարտավորվում էր վճարել պատերազմական տուգանք, Ռուսաստանի սեփականություն էր ճանաչում Կովկասյան սահմանագլխի վրա Անապան, Փոթին, Ախալցխան և Ախալքալաքը։ Եվ որովհետև Ռուսաստանի համար կարևոր շահ էր ներկայացնում քրիստոնյա ժողովուրդների գաղթեցումը, ուստի և Ադրիանուպոլսի դաշնագրության մեջ էլ, ինչպես այս եղել էր Թուրքմենչայի մեջ, հատուկ հոդված էր մտցվում, որ իրավունք էր տալիս երկու կողմերի հպատակներին մեկուկես տարվա ընթացքում իրենց հոժար կամքով գաղթել մի պետությունից մյուսը։ Ադրիանուպոլսի հաշտության մի խոշոր գործն էլ այն էր, որ նրանով Թուրքիան ճանաչում էր Հունաստանի անկախությունը և այսպիսով վերջնականապես լուծվում էր հունական հարցը։

8. Թուրքահայերի գաղթը։ Ադրիանուպոլսի հաշտության լուրը Պասկևիչը ստանում է Բաբերդում հոկտեմբերի սկզբին։ Վերադառնալով Էրզրում, նա գտնում է հայերին շատ հուզված դրության մեջ։ Ամեն մեկի բերանում մի խոսք կար միայն «գաղթ»։ Թեև Ադրիանուպոլսի հաշտությունը ներում էր շնորհել բոլոր այն օսմանյան և ռուս հպատակներին, որոնք անհավատարմություն էին ցույց տվել պատերազմի ընթացքում, բայց այս հանգամանքը չէր հանգստացնում ռուսական զորքերով գրավված տեղերի հայերին։ Նրանց անհավատարմությունը չափազանց խոշոր և մասսայական բնավորություն էր ունեցել և նրանք հիմնավոր պատճառներ շատ ունեին վախենալու թուրքական սոսկալի վրեժխնդրությունից։ Բայց այս, իհարկե, միակ դրդիչը չէր։ Չմոռանանք, որ այս գաղթումը կամենում էր և ռուսաց կառավարությունը և կովկասյան զինվորական հրամանատարությունը դեռ 1828-ի վերջերից ուներ հանձնարարություն պատրաստելու թուրքահպատակ քրիստոնյաների այս շարժումը, իսկ «քրիստոնյա ժողովուրդ» ասելով հասկացնում էին գրեթե բացառապես հայերը, որովհետև հույները գաղթողների մեջ շատ չնչին թիվ էին կազմում։

Այսպես թե այնպես՝ հայերի հողը թողնելու և Ռուսաստան գաղթելու ձգտումը այնքան հզոր էր, այնքան համաճարակ-տարերային, որ արդեն կազմվել էին մեծ գաղթականական խմբեր, որոնք ճանապարհ էին ընկնում դեպի անհայտ և անծանոթ հայրենիքը տարվա այն եղանակին, երբ ձմեռվա սառնամանիքներն էին սկսվել։ Կարապետ արքեպիսկոպոսը, որ ահագին ազդեցություն ուներ ժողովրդի վրա և այս ամբողջ մեծ շարժման հոգին էր, հազիվ կարողացավ պահել գաղթողներին մինչև գարնան բացվելը։ Իսկ մինչ այդ՝ Պասկևիչը ժամանակ ունեցավ այս առիթով գրագրություն սկսել Նիկոլայ կայսեր հետ։ Նկարագրելով հայերի կատարած գործը պատերազմի ընթացքում, ինչպես օրինակ 2000 հայերի պատերազմը ռուսների հետ միասին Բայազեդում, նա շեշտում էր այն հանգամանքը, որ այսպիսի ռուսասիրական գործողություններից հետո, հայերն այլևս չեն կարող մնալ վրեժխնդիր թուրքերի տիրապետության տակ։ Պասկևիչը հաշվում էր, որ ռուսական զորքերով

գրավված և Ադրիանուպոլսի դաշնագրությամբ Թուրքիային վերադարձվելիք երկրներից առնվազն մի 10 հազար հայ ընտանիքներ պետք է թույլ տալ տեղափոխվել Կովկաս։ Ծախս այս տեղափոխման համար հաշվում էր 25 ռուբլի յուրաքանչյուր ընտանիքի համար։ Պասկևիչը հավատացնում էր, որ ոչ միայն այս գումարը, այլև այն բոլոր ծախսերը, որոնք կպահանջվեն գաղթականների կարիքները հոգալու համար, կորած չեն լինի պետության համար, քանի որ նա այդպիսով ձեռք է բերում հայերի պես մի աշխատասեր, արդյունաբերող և հավատարիմ ժողովուրդ։ Նիկոլայը հավանություն էր տալիս այդ առաջարկությանը։ Նրա համար գաղթական հայերը հարկավոր էին, մանավանդ, իբրև մի հավատարիմ և ուժեղ տարր, որ կարելի էր բնակեցնել ռուս-թուրքական սահմանագլխի վրա՝ այդ գիծն ապահովելու համար։

1830 թվականի գարնանը ծայր էր տալիս մի մեծ ժողովրդական շարժում Էրզրումի կողմերից։ Գաղթում էին մոտ 7300 հայ ընտանիքներ։ Առաջնորդում էր Կարապետ արքեպիսկոպոսը, որ ահագին եռանդ էր գործադրել մարդկային այդ մեծ հոսանքը հնար եղածին չափ նպաստավոր պայմանների մեջ դնելու համար։ Ամենագլխավորն այն էր, որ գաղթողներն ընչազուրկ չդառնան ճանապարհ ընկնելուց առաջ։ Եվ առաջնորդի ջանքերով կարելի եղավ այնպես անել, որ գաղթողները ծախեն իրենց ստացվածքի գեթ գլխավոր մասը։ Պետք է ասել, որ թուրքաց կառավարությունն ամենևին անտարբեր չմնաց իր հպատակ հայերի այդ շարժման նկատմամբ։ Նա լավ էր հասկանում, թե երկրի համար որքան մեծ կորուստ է զրկվել մի երկրագործ, արհեստավոր և վաճառական ժողովրդից, որ շարունակ տնտեսական կյանքի հիմքն էր կազմել։ Ուստի և մի շարք փորձեր արավ համոզելու գաղթողներին, որ նրանք ետ կանգնեն իրենց մտքից և մնան իրենց տեղերում։ Այսպես, Բայբուրդցյան Գևորգ ազգանունով հարուստ վաճառականը գնաց Կ. Պոլիս և բերեց իրենց սուլթան Մահմուդի հրովարտակը, հատկապես հայերին ուղղված, որոնց խոստացվում էր կյանքի և գույքի ապահովություն, եթե նրանք չհեռանան իրենց բնակավայրերից։ Բացի սրանից, թուրքաց կառավարությունը ներգործում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքի միջոցով, որի կողմից Բարդուղիմեոս եպիսկոպոսն ուղարկվում էր Էրզրում՝ գաղթողներին անձամբ համոզելու համար։ Ռուս զինվորական իշխանությունները ոչինչ արգելք չհարուցին այդ քարոզության դեմ։ Ընդհակառակը, Էրզրումի զինվորական նահանգապետ գեներալ Պանկրատևը տարավ իր հետ Բարդուղիմեոս եպիսկոպոսին մինչև Բասեն, որպեսզի նա համոզե արդեն ճանապարհ ընկած գաղթականներին վերադառնալ իրենց տեղերը։ Բայց գաղթողները պատասխանում էին խրատող և համոզող եպիսկոպոսին, որ եթե անգամ ինքը Քրիստոս իջնե երկնքից և այդ խրատները կրկնե իր բերանով, նրանք դարձյալ չէին լսի նրան։ Մի բան, սակայն, ճիշտ էր.— եթե Քրիստոսի տեղ Կարապետ արքեպիսկոպոսը դուրս գար բազմության առաջ և ասեր՝ ժողովուրդ, ետ դարձիր, ամենքն էլ հլու հնազանդությամբ կկատարեին այդ հրամանը։ Բայց ժողովուրդը չէր վերադառնում, գնում էր, որովհետև չէր վերադառնում և գնում էր Կարապետ արքեպիսկոպոսը, որ մանավանդ այժմ դարձել էր այդ ժողովրդական հոծ զանգվածների հոգու և մտքի տերը։ Նա գիտեր թովել մարդկանց իր խոսքով և դրանով, միայն դրանով էր հարթում ժողովրդական տեղափոխությունների դժնդակ ու տանջալից ճանապարհը։ Թե որքան կորուստներ էր աջ ու ձախ փռում գաղթականությունն այդ ճանապարհին, մենք դժբախտաբար չգիտենք, բայց դրանք, համենայնդեպս, աննշան չէին կարող լինել, քանի որ այս գաղթականությունն էլ, պարսկահայերի նման, կազմակերպված ընթացք չուներ։ Պետք է, սակայն, ավելացնել, որ ռուս զինվորական իշխանությունները ճանապարհին ամեն

հնարավոր օգնություն հասցնում էին գաղթականներին թե՛ հաց մատակարարելով, թե՛ փոխադրության միջոցներ տալով և թե՛ պաշտպանելով նրանց անդորրությունը։

Էրզրումից եկող այս ժողովրդական շարժումը ոտի էր կանգնեցնում և Կարսի և նրա շրջակաների հայ ազգաբնակությունը։ Այստեղից գաղթականական հոսանքին միանում են մոտ 2500 տուն հայեր, որոնց ղեկավարում էր Կարսի հայոց առաջնորդը, դարձյալ մի արքեպիսկոպոս։ Մի երրորդ մեծ խումբ էլ, բաղկացած շուրջ 4200 ընտանիքներից, դուրս եկավ Բայազետի փաշայությունից։ Այս գաղթի առաջնորդները Բայազետի մի խումբ ազդեցիկ հայերն էին, Մկրտիչ Արծրունու գլխավորությամբ, որոնք նախապես, 1830-ի ձմեռը գնացել էին Թիֆլիս և Պասկևիչից թույլտվություն էին ստացել բնակեցնելու գաղթականությունը Սևանա լճի ափին, Էրզրումից ու Կարսից գաղթածներն էլ առանձին միախմբումներով դասավորվեցին իրենց համար նոր հայրենիք դարձած Անդրկովկասում։ Մինչդեռ բայազետցիները հիմնեցին Նոր Բայազետ քաղաքը, կարսեցիները նստեցին Գյումրիում և նրա շրջակա գյուղերում, իսկ էրզրումցիները՝ Ախալցխայի և Ախալքալաքի շրջաններում։ Առանձնացման ձգտումը զորավոր էր մանավանդ, էրզրումցիների մեջ։ Նրանք շինեցին նոր քաղաքամաս, որ բաժանվում էր հնից Փոցխով գետով և չէին թույլ տալիս, որ հին քաղաքամասից մարդիկ գան բնակվեն նրանց հետ։

Ընդամենը Թուրքիայի սահմաններից Անդրկովկաս էին գաղթում գրեթե 100 հազար հայեր։ Չափազանց դժվար կլիներ մի այսպիսի բազմությունը փոքր ի շատե տանելի տնտեսական պայմանների մեջ դնելը, եթե ռուսաց կառավարությունը ընդարձակ միջոցներ չձեռնարկեր նորեկներին նպաստելու համար։ Մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ գաղթականներն, ինչպես սովորական է, մի քանի տարիներով ազատվում էին մաքսերից, հարկերից ու տուրքերից, մենք պիտի առանձնապես շեշտենք այն հանգամանքը, որ Պասկևիչի կարգադրությամբ կազմվեց մի գաղթականական հանձնաժողով, հատկապես Ախալցխայի և Ախալքալաքի համար, որ Կարապետ արքեպիսկոպոսի նախագահությամբ հոգում էր գաղթականների կարիքները, օգնելով այդպիսով, որ նորեկ ժողովուրդն ապահով նստե հողի վրա, տնտեսություն ու բարեկեցություն ստեղծե իր համար։ Այս նպատակով պետական գանձարանը բաց էր թողնում ժողովրդին խոշոր գումարներ, մի մասը անվերադարձելի նպաստի ձևով, մյուս մասն իբրև փոխառություն։ Բացի դրանից՝ կարոտներին տրվում էին նաև մթերքներ, տնտեսական գործիքներ, հում նյութեր և այլն։ Այսպես օժանդակվում էին, հարկավ, և ուրիշ տեղերի գաղթականները։

Չպետք է, իհարկե, միամտություն ունենալ կարծելու, թե ցարական կառավարությունն այս բոլոր զոհողություններն անում էր, ինչպես ընդունված է ասել, թուրքահայ ժողովրդի սիրուն աչքերի համար։ Այն ժամանակ այսպես էր պահանջում Ռուսաստանի քաղաքական շահը։ Նրան հարկավոր էր գաղթավորել իր նոր նվաճած երկիրն այնպիսի մի ազգաբնակությամբ, որի պետական օրինապահությունն ու անձնվեր հավատարմությունը հեռու լինեին որևէ կասկածից։ Այսպիսի մի տարր կարող էր լինել ամենից առաջ, իհարկե, ռուս ժողովուրդը։ Բայց այժմ էլ, ինչպես և ռուս-պարսկական պատերազմի ավարտման միջոցին դժվար և բազմածախս մի ձեռնարկություն էր համարվում, մանավանդ այն ժամանակվա հեռու և անհարմար ճանապարհներով, Անդրկովկաս մտցնել ռուս գաղթականական խոշոր հոսանքներ։ Ռուսներից հետո տեղական ժողովուրդներից հայերն էին միայն, որոնց վրա վստահություն ուներ ռուս կառավարությունը։ Եվ ահա այս պատճառով 1830-ին նորից

կրկնվում էր այն, ինչ մենք տեսանք 1828-ին, այն է՝ հայերի նոր և ավելի ստվարաթիվ գաղթականություն։

Եվ հասկանալի է, որ այսպիսի հոգատարությունների մեջ դրված տեղափոխությունը ավելի ևս հմայիչ պիտի դարձներ գաղթելու և այս միջոցով թուրքական դժոխքից ազատվելու ձգտումը Թուրքիայում մնացած հայ ազգաբնակության մեջ։ Թեև ճիշտ է, որ 1830-ին գաղթողները չէին գտնում Անդրկովկասում մեղր ու կաթ բխեցնող մի երկիր և գաղթածներից քչերը չէին, որ նորից էլի վերադարձան իրենց հին հայրենիքը, այնպես որ ռուսաց կառավարությունը ստիպված էր արգելական խիստ միջոցներ ձեռք առնել, որպեսզի հետադարձ շարժումը ծավալուն հոսանք չդառնա, բայց և այնպես, ընդհանուր առմամբ, ճիշտ էր այն, որ գաղթածները տեղավորված են ապահով պայմանների մեջ, իսկ այս բանից միանգամայն զուրկ էին թուրքահայերը։ Միանգամայն ճիշտ է և այն, որ թուրքահայերը 1828—1830 թվականներին առանձնապես բախտավոր պիտի զգային իրենց՝ ռուսաց կառավարության բարյացակամ, խրախուսիչ և հովանավորող վարմունքի պատճառով։ Անցան տարիներ, վրա հասան նոր ռուս-թուրքական պատերազմներ, բայց ռուսական քաղաքականությունը փոխված էր և թուրքահայերը, ինչպես կտեսնենք, հակառակ իրենց ջերմ ցանկության, այլևս այնպիսի շնորհի (այսպես էր որակում Պասկևիչը գաղթելու թույլտվությունը) չարժանացան։

Գլուխ չորրորդ

ՌԵՖՈՐՄՆԵՐԻ ՇՐՋԱՆ
(1830—1853)

1. Նոր դրություն: Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներից հետո Անդրկովկասի արտաքին սահմանների վրա հաստատվում էր մի երկարատև, գրեթե քառորդ դար տևողություն ունեցող խաղաղություն։ Ճիշտ է, Կովկասն ազատվելով արտաքին պատերազմներից, բաց էր անում իր ներսում Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի ամբողջ տարածության վրա համառ ու արյունահեղ պատերազմների մի տեսարան, ուր ռուսները տասնյակ տարիներով կռվում էին լեռնային ժողովուրդների հետ՝ նրանց նվաճելու համար, ճիշտ է, այդ մշտական պատերազմն իր խոր ազդեցությունն էր թողնում ամբողջ համակովկասյան կյանքի վրա, բայց և այնպես, այս ազդեցությունն այնքան ուժեղ խափանարար չէր, որ արգելեր երկրի խաղաղ մնացած մասերում քաղաքացիական կյանքի նոր կարգեր, նոր ռեժիմ ստեղծելը։ Ռուս կառավարությունը, որքան և կլանված լեռնային դաժան պատերազմի հոգսերով, շարունակ միջոցներ էր որոնում Անդրկովկասում իր ձեռք բերած ժողովուրդներն իր հասկացածով բարեկարգ վարչական-տնտեսական պայմանների մեջ դնելու համար։ Մի զարմանալի զուգադիպությամբ այդ նույն ժամանակներում թուրքաց կառավարությունը մտնում էր իր երկիրը ազատամիտ օրենքներով բարեկարգելու շավղի մեջ։ Այնպես որ, երկրորդ ռուս-թուրքական պատերազմին հաջորդած խաղաղության ժամանակամիջոցը, 1830 թվականից մինչև 1853-ը, երբ սկսվեց երրորդ ռուս թուրքական պատերազմը, մենք կարող ենք անվանել հատկապես հայ կյանքի տեսակետից՝ ռեֆորմների շրջան։ Այս ռեֆորմները երկու տեսակ էին—ընդհանուր պետական կամ երկրային և հատուկ հայերին վերաբերող։ Երկու տեսակներն էլ կատարում են միևնույն խոշոր գործը հայ կյանքի դասավորումը նոր դրության մեջ։

Նոր դրություն ստեղծվում էր մանավանդ, մի բնագավառում, որ չափազանց խոշոր պատմական-մշակութային նշանակություն ուներ։ Այդ՝ հայ ժողովրդի տեղավորումն էր։ Երկու պատերազմներին հաջորդած երկու գաղթականությունները արմատականորեն փոփոխում էին հայերի ազգաբնակության հանգամանքները։ Նրանք ամուր շեշտված ազգագրական միապաղաղության և գանգվածային հոծության կերպարանք էին տալիս Հայաստանի այն մասին, որ զետեղված էր Անդրկովկասում և անվանվում էր Պարսկահայաստան։ Այժմ այդ անունն իրապես պատմական ավանդություն էր դառնում և տեղի էր տալիս Ռուսական Հայաստանի անվան, որ դառնում էր Ռուսաստանում ապրող ամբողջ հայության, ամբողջ ռուսահայ հատվածի բարոյական և քաղաքական հենարանը։ Պարսկահայ և Թուրքահայ գաղթականություններն ունեցան իրենց խոշոր հետևանքները դրական և բացասական կողմից։ Մի կողմից նրանք ուժեղացնում էին Ռուսական Հայաստանի հայ ազգաբնակության կազմը, որ չափազանց թուլացել էր վերջին մի շարք դարերի դժբախտ իրադարձություններից։ Հայաստանի այդ հատվածի ամենակարևոր պատմական և կուլտուրական նշանակություն ունեցող մասում, որ ամփոփվում էր Երևանի և Նախիջևանի խանությունների սահմանների մեջ, 1826—1828 թվականների պատերազմից առաջ կային 25.151 հայեր (երկու սեռից) և 81. 749 մահմեդական։ Գաղթականությունները բերին այդ երկու երկրները 57. 226 հոգի և այսպիսով հայերը դարձան մեծամասնություն (82337 հոգի)։ Բացի դրանից՝ նույն գաղթականության շնորհիվ կազմվում են երկու դրկից, գրեթե գլխովին հայաբնակ գավառներ Գյումրի (Ալեքսանդրապոլ) և Ախալքալաք։

Իսկ գաղթականության բացասական կողմն այն էր, որ նա ավելի ևս խորացնում և անջրպետում էր հայ ժողովրդի առանց այն էլ խիստ շեշտված հատվածականությունը։ Եթե իրապես կազմվել էր մի ուժեղ և հոծ ռուսահայություն, այդ հայությունն այլևս գրեթե չուներ անմիջական լայն հաղորդակցություն Թուրքահայության հետ, որ այնուամենայնիվ շարունակում էր մնալ խոշորագույնը հայ ժողովրդի հատվածների մեջ։ Բայազետի փաշայությունը գրեթե միանգամայն դատարկվել էր հայերից և դառնում էր այսպիսով նույնիսկ ազգաբնակչական մեծամասնության տեսակետից էլ քրդական երկիր, եթե ոչ միանգամայն կտրելով, գոնե սաստիկ դժվարացնելով հաղորդակցությունը Արաքսի և Արածանիի ավազանների հայ ազգաբնակության մեջ։ Այսպիսի անջրպետող դեր կատարում էին արևելյան և արևմտյան հայերի մեջ նաև Կարսն ու Էրզրումն իրենց չափազանց նոսրացած և թուլացած հայ ազգաբնակությամբ։ Ինչ վերաբերում է պարսկահայ գաղթականության, նա ոչ միայն վերջնականապես ոչնչության էր հասցնում Ատրպատականի հայության նշանակությունը, ոչ միայն գրեթե բոլորովին ջնջում էր հին պարսկահայի նահանգը Ուրմիո լճի արևմտյան ավազանում, այլև կղզիացնում էր Վանի լճի արևելյան և հարավային երկրների հոծ հայությունը։ Ահա այսպես էին անջրպետվում հայ ժողովրդի խոշոր հատվածները։ Եվ այս միայն քաղաքական անջրպետ չէր, այլև հոգեկան-մշակութային։ Բուն երկրի ժողովուրդը աշխատանքի, հողի, հայրենի շինարարության մարդիկ հեռացած ու կտրված էին իրարից, չեն կարողանում միացած ժողովրդական հավաքականությամբ մի ընդհանուր, համաժողովրդական հոգեբանություն ստեղծել, այլ ընդհակառակը, հեռանում են իրարից, գրեթե օտարանում։ Ստեղծվում են երկու ինքնուրույն աշխարհներ—**ռուսահայություն**, որ իր մեջ էր պահում նաև Պարսկաստանի հայերին և **թուրքահայություն**, որի հետ են և արևմտյան հայ գաղութները։ Եվ որովհետև այդ երկու երկրամասերն էլ ամբողջովին արդյունք են իրենց քաղաքական և մշակութային միջավայրի, ուստի նրանց առաջնորդած

հատվածներն էլ—ռուսահայությունը և Թուրքահայությունը առանձին, ինքնուրույն կազմվածքներ են, բնավորությամբ, խառնվածքով և աշխարհայացության եղանակներով իրար հակադրված, իրար ներհակ։

2. Ռուսական վարչություն։ Մենք արդեն ծանոթ ենք այն վարչական ռեժիմին, որի տակ դարերի ընթացքում ապրում էին հայերը Պարսկաստանի և Թուրքիայի մեջ։ Այժմ, երբ ռուսական տիրապետությունը վերջնականապես հաստատվել էր Անդրկովկասյան Հայաստանում, կարևոր է իմանալ, թե ինչ տեսակ վարչական կարգ էին ստանում հայերը, մտնելով ռուսաց ցարերի իշխանության տակ։

Համեմատել ռուս վարչական ռեժիմը պարսկա-թուրքականի հետ չի կարելի, մանավանդ մի հիմնական կետում։ Այդ այն է, որ ռուսական տիրապետության տակ չկար և չէր կարող լինել ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանման հարց։ Ռուսաստանը այդ կողմից մի եվրոպական պետություն էր, որի մեջ ապահովված էր յուրաքանչյուր ժողովրդի գոյությունը և նրան տրվում էր տնտեսապես զարգանալու հնարավորություն։ Այս էր կազմում այն հմայքը, որ ուներ ռուսական տիրապետությունը արևելյան բռնապետությունների մաշեցնող լուծի տակ ապրող ժողովուրդների և մասնավորապես հայերի մեջ։ Այս ժողովուրդը գերազանցորեն, գրեթե գլխովին, աշխատավոր ժողովուրդ էր և որոնում էր խաղաղ ու ապահով պայմանների մեջ աշխատելու երաշխիքներ, և նրա համար արդեն երկրորդական հանգամանք էր դառնում, թե ինչպես և որ չափով նա իր աշխատանքի արդյունքների տերը կլինի։

Սակայն ուրիշ շատ կետերում ռուս վարչական կարգը համեմատություններ շատ էր վերցնում արևելյան և հատկապես պարսկա-թուրքական վարչակարգի հետ, ցույց տալով ոչ միայն նմանություն, այլև հարազատության շատ գծեր։ Եվ այս միանգամայն բնական էր Ռուսաստանի այն ժամանակվա պետական կարգերի մեջ։ Այդ մի երկիր էր, որ հազիվ մի հարյուր տարի էր, ինչ մտել էր եվրոպական պետությունների ընտանիքի մեջ և յուրացրել էր այնտեղից միայն այն կարգերը, որոնց հետ կարող էր հաշտվել սկզբից եթե տնտեսապես և մտավորապես ետ մնացած մի անսահման բռնապետություն։ Դառնալով արտաքուստ իր արքունիքի, բյուրոկրատիայի և ազնվականության յուրացրած ձևերով և կենցաղով եվրոպական պետություն, Ռուսաստանը դառնում էր միևնույն ժամանակ և մի խավար ուժ, որ պահպանելով իր ներսում ճորտատիրական իշխանների-կեղեքումների, վայրենի կամայականությունների, ժողովրդական զանգվածների խորին տգիտության պահապան, միևնույն դերը ստանձնում էր և միջազգային կյանքի մեջ, անհաշտ թշնամի հանդիսանալով այն ազատական շարժումներին, որոնցով լցված էր 18-րդ դարը և որոնք բերին Եվրոպան Ֆրանսիական մեծ հեղափոխության։ Բոլոր այն հետադեմ, կեղեքիչ տարրերը, որոնք տիրողներ և արտոնվածներ էին եվրոպական **Հին** կարգի մեջ, իրենց իսկական ապաստարան էին համարում միապետական Ռուսաստանը, որ շարունակում էր ամենայն սրբությամբ պահպանել մի ավատական-դասային պետության ամբողջ բովանդակությունը, թեև մյուս կողմից վախենում էին նրանից իբրև ներքուստ իր ժողովրդական զանգվածների դրությամբ հետամնաց մի երկրից։

Ահա այս հանգամանքն էր, որ հաստատում էր ռուս վարչական սիստեմի մեջ շատ կարգեր ու բարքեր, որոնց հանդեպ կանգնած ամեն մի ժողովուրդ, որ նոր էր դուրս եկել պարսից կամ օսմանյան տիրապետության տակից, պիտի անվիճելի համարեր, թե տարբերություն չկա հին և նոր իշխողների մեջ։

Ձեռք բերելով Կովկասյան լեռների հարավային կողմերում ընդարձակ հո-

ղային տարածություններ և բազմատարր ազգաբնակության մի մեծ թիվ, ցարական բյուրոկրատիան սկզբի տարիներում կարողացավ անել այն, որ վերացրեց ամենուրեք տիրող իշխանությունը, որի գլխավոր աղբյուրները կազմում էին խաները։ Այս, իհարկե, մի խոշոր առավելություն էր, որ բերում էր իր հետ ռուսական տիրապետությունը։ Ինչպես տեսանք, այդ բանը կատարվեց խանությունների ոչնչացմամբ։ Սակայն այս մի քայլ էր։ Ոչնչացնելով խաներին, իբրև անհատների, ռուս բյուրոկրատիան չգիտեր այնուհետև ինչ անել և այս անիմացության մեջ թողնում էր, որ վարչական սիստեմի մեջ գոյություն պահպանե խանականությունը իբրև սկզբունք։ Խոշոր խաներն անհետանում էին, նրանց տեղ ազգաբնակության գլխին նստում էին մանր խաները ռուս չինովնիկների կերպարանքով։ Այս պաշտոնյաներից կազմվում էր Անդրկովկասում մի ամբողջ կառավարող դասակարգ, որի մեջ մտնում էին հետզհետե և բազմաթիվ տեղական տարրեր՝ գլխավորապես արտոնված դասակարգերից—վրացի, հայ և թուրք ազգաբնակությունից և հոգևորականների որդիներից։ Հետզհետե բազմացող և բարդացող այդ բյուրոկրատական մեքենան, որ կլանում էր իր մեջ ամբողջ պետական և հասարակական կյանքը, շարունակաբար մտածում էր տեղական կյանքին հարմարվող ռեֆորմներ մշակելու մասին, բայց չնայած իր գործադրած աշխատանքին, դիվանական ահագին գրագրություններին, չէր կարողանում իրապես օգտակար ստեղծագործական ընդունակություն հանդես բերել։

Ամենից առաջ անընդունակ էին հանդիսանում հենց այդ բյուրոկրատական մեքենայի գլուխ կանգնածները։ Մինչև քառասնական թվականների կեսը Կովկասի գլխավոր կառավարությունը պահպանեց այն ձևը, որ տրված էր նրան 1803 թվականից, Ցիցիանովի ժամանակից։ Այդ՝ կառավարչապետների կամ կուսակալների ձեռքով երկիրը կառավարելն էր։ Մենք արդեն ճանաչում ենք այդ կուսակալներից մի քանիսին, որոնք աչքի էին ընկնում իրենց գործունեությամբ։ Պասկևիչից հետո կովկասյան կուսակալներ եղան բարոն Ռոզեն, Գոլովին և Նեյդհարդ գեներալները, մինչև որ 1844-ին վերացվեց կուսակալությունը և նրա տեղ հիմնվեց Կովկասի փոխարքայությունը և այս բարձր պաշտոնը, առանձին վարչական լիազորություններով ուռճացած, առաջին անգամ գրավեց իշխան Վորոնցովը, որ ռուսական բյուրոկրատիայի մեջ շատ խոշոր մի դեմք էր և հռչակված է պաշտոնական աղբյուրների մեջ Երմոլովից ոչ պակաս։ Սակայն մենք հենց Երմոլովի օրինակից գիտենք, թե ինչ գին ունեն պաշտոնական շողոքորթությունները բուն ժողովրդական գործի տեսակետից։ Այս կողմից չափազանց փառաբանված իշխան Երմոլովն էլ բացասական մի երևույթ էր կովկասյան իրականության մեջ։ Այսպիսով ստացվում է ամբողջ երկրի և նրա միլիոնավոր ազգաբնակության ճակատագիրն իր ձեռքերում պահող բարձր պաշտոնյաների մի երկար շարք, որ անընդունակ էր հանդիսանում համայնատարած ժողովրդական բարօրության համար փոքրիշատե ստեղծագործական ուժ ցույց տալու մեջ։

Մեզ բոլորովին չպիտի զարմացնի, որ այս այսպես էր և ոչ ուրիշ կերպ։ Բավական է մի թեթև ակնարկ գցել ոստիկանական-ճորտատիրական իդեալներով ապրող ցարական միապետության վրա՝ հասկանալու համար, որ այս տեսակ պետական կազմակերպությունից չի կարող բարիք ելնել ժողովրդական զանգվածների համար։ Իշխան Մադաթովի կալվածատիրական տենչերն արդեն միանգամայն պարզ ցույց են տալիս, թե ինչ հակումներով էին Կովկաս գալիս զանազան աստիճանի չինովնիկները Ռուսաստանից։ Երմոլովը գալով Վրաստան, ուր ճորտատիրությունն էր թագավորում, մտածում է միայն

այն մասին, որ վրացական ճորտատիրությունը ռուսականից ավելի մեղմ է, և որովհետև այս վնաս է կալվածատեր դասակարգի համար, ուստի պետական «իմաստությունը», որի ամբողջությունն այն է, թե ինքնակալությունը պիտի հենվի կալվածատիրական դասակարգի վրա, թելադրում էր այդ հռչակված կուսակալին Վրաստանում էլ հաստատել ճիշտ և ճիշտ այնպիսի ճորտատիրական կարգեր, որոնք գոյություն ունեին բուն Ռուսաստանում։ Նրա հաջորդներն իրականացնում էին այդ ճորտատիրական իդեալը, բերել տալով վրաց թավադների համար իրավունք առանց դատաստանի պատժելու և Սիբիր ուղարկելու իրենց ճորտերին։ Իսկ փոխարքա Վորոնցովը, ինչպես կտեսնենք իր տեղում՝ ճորտային դրություն ստեղծեց այն կողմերի գյուղացիության համար էլ, ուր գոյություն չէր ունեցել ճորտատիրությունը։

Այս մի քանի գծերն արդեն բավականաչափ պարզ բնորոշում են կովկասյան գլխավոր վարչության էությունը։ Այդ բոլոր կուսակալների և փոխարքաների օրով լավ կարող էին ապրել արտոնված դասակարգերը—ազնվականությունը և հոգևորականությունը, այլև խոշոր առևտրական բուրժուազիան, բայց ոչ բոլորովին գյուղացիությունը և սեփական աշխատանքով ապրող տարրերը։ Հիշենք կուսակալ Ռտիշչևին, որ բազմաթիվ հայ գյուղացիներ էր աքսորում Սիբիր այն պատճառով, որ նրանք համարձակվել են միանալ և հավաքական բողոք ներկայացնել իրենց գազանաբարո խանի դեմ։

Եթե այսպես էր գլուխը, պետք է երևակայել, թե ինչ կլինեին նրանից հետո եկող ցածրերը, որոնք անմիջական շփում ունեին ժողովրդի հետ և նրա մեջ էին մտցնում բարձրից եկած աշխարհայացքներն ու կարգադրությունները։ Այստեղ արդեն մի ահագին բազմություն է, մի ամբողջ չինովնիկական աշխարհ, որի արատների հետ կռվել չէին կարողանում նույնիսկ կառավարչապետները։ Մանր-մունր անձնական շահերից, ինտրիգներից, նախանձից, ինքնասիրությունից հյուսված մի թունավոր աշխարհ էր այդ, սկսած ամենամեծից մինչև ամենափոքրերը։ Երմոլովը և Պասկևիչը ամենախոշոր օրինակներն են չինովնիկական նեխվածության մեջ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես կարելի է լինել ամենաբարձր պաշտոններում անգամ ամենամանր մարդիկ։ Ռուս-թուրքական պատերազմում Պասկևիչը հասավ մի զինվորականի համար ամենաբարձր պատիվների. նա ստացավ ֆելդմարշալի կոչում և Գեորգիի շքանշանի առաջին աստիճանը։ Սակայն այս դրության մեջ էլ, պատերազմի դաշտում անգամ, նա չէր մոռանում իր մանր անձնական քինախնդրությունը, հալածում էր թուրքերին և նույնիսկ նրանց, որոնք նրա ինտրիգներով հեռացված էին Կովկասի սահմաններից։ Իշխան Մադաթովը, որ իր սովորական քաջությամբ կռվում էր թուրքերի դեմ Դանուբի ափերում, ստիպված էր իր պատերազմական վրանում բացատրություններ գրել այն հարցապնդումների և մեղադրանքների առիթով, որոնք բխում էին Պասկևիչից։ Այս մանր-մունր վիրավորանքները վերջ ի վերջո գերեզման իջեցրին այդ ռազմիկ մարդուն։ Այդքան հեշտ չէր Ներսես Աշտարակեցու պես մի ախոյանին ոչնչացնելը։ Ներսեսը Քիշինևից մի կանոնավոր պատերազմ սկսեց Պասկևիչի դեմ, մի պատերազմ, որ մղվում էր Պետերբուրգ ուղարկվող ընդարձակ գանգատագրերի միջոցով, որոնց Պասկևիչը պատասխանում էր ամենայն փութաջանությամբ և միևնույն ժամանակ հալածում էր Ներսեսի այն կողմնակիցներին, որոնք մնացել էին Թիֆլիսում։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ այսպիսի շահերով ապրող շրջանները չէին կարող լայն հանրաշահ ստեղծագործական աշխատանք արտադրել։

Ստորին աստիճանների պաշտոնեության մեջ տիրում էր կատարյալ սանձարձակություն։ Կաշառակերությունն այնքան համարձակ էր, այնքան տի-

րական, որ նկարագրվում էր իբրև ժողովրդական դժբախտություն Երևան այցելած գերմանացի Վագների ճանապարհորդության մեջ։ Անկարգությունները չէին խուսափում նաև Պասկևիչի աչքերից և նա նկարագրում էր դրությունը Նիկոլայ կայսրին ուղարկած զեկուցման մեջ ամենամռայլ գույներով։ Ամեն տեղ կաշառք, ամեն տեղ բռնություն, ճնշում, կամայականություն, չկա արդարադատություն, ժողովուրդը նահատակվում է, ժողովուրդը կորցրել է ամեն ինչ։ Ժողովրդի կրած թշվառությունները վեր են իր ուժերից և բարեբախտություն է, որ այնուամենայնիվ, չսպառվեց նրա համբերությունը։ Պասկևիչը քննություն նշանակեց և քննությունը երևան հանեց ավելի՛ ևս քստմնելի փաստեր չինովնիկական գործունեությունից։

Տեղական ոչ մի միջոց այլևս չէր մնացել այդ համատարած չարիքի դեմ կռվելու համար։ Եվ Պասկևիչը դիմում էր բարձրագույն իշխանության օգնությանը, խնդրելով, որ կայսրը նշանակե սենատորական քննություն, որ և կարող կլիներ արմատական փոփոխություններով առողջացնել ռուսական վարչությունը Կովկասում։ Նիկոլայը երկու սենատոր ուղարկեց, որոնք եկան քննեցին, բաց արին բոլոր խոցերը։ Սակայն Պետերբուրգի բյուրոկրատիան էլ կովկասյանի հետ մի ծառի պտուղ էր և նույնպես ամուլ ու անկարող հանդիսացավ կովկասյան կյանքը պատշաճավոր կազմակերպության մեջ մտցնելու հարցում։ Ինքը—Պասկևիչը, կարծում էր, թե նորանվաճ երկրները բարեկարգելու ամենալավ միջոցն է վերցնել և միանգամից մտցնել Կովկասի մեջ Ռուսաստանում գործող օրենքները։ Այսպիսի կարծիք ունեին և շատերը Պետերբուրգի բյուրոկրատական շրջաններում։ Բայց վերջ ի վերջո գերակշռեց այն կարծիքը, որ ռուսական վարչությունը Կովկասում պիտի հարմարեցվի տեղական առանձնահատկություններին։ Այսպիսի մի գործ իրականացնելու համար Թիֆլիս ուղարկվեց մի ամբողջ կառավարչական հանձնաժողով սենատոր Հանի նախագահությամբ։ Այս մարմնի մշակած օրենսդրական նախագիծը քննվեց Պետերբուրգում, հաստատվեց և գործադրության մեջ մտցվեց։ Սակայն բյուրոկրատական մտքի այս արտադրությունն այնքան խամ ու խակ էր, այնքան անհամապատասխան էր տեղական առանձնահատուկ պայմաններին, որ հարուցեց ընդհանուր անբավականություն և տրտունջ։ Նոր կանոնները եթե մի նորություն մտցնում էին, այդ անսահման ձևապաշտություններն էին, որոնք սպանում էին ամեն մի կենդանի գործ, հուսահատություն պատճառելով ամեն մի մարդու, որ գործ էր ունենում դատաստանական և վարչական հիմնարկությունների հետ։ Ձևապաշտությունը սպանում էր մանավանդ, արդարադատության գործը, անչափ դանդաղեցնելով նրան և դնելով այնպիսի պայմանների մեջ, որ ակնհայտնի քրեական հանցավորներն ու ավազակները արդարացվում էին։ Ազգաբնակությունը կորցնելով ամեն մի վստահություն դեպի արդարադատությունը, իր սեփական միջոցներն էր գործ դնում իր իրավունքները պաշտպանելու համար։ Վերջիվերջո, հարկավոր եղավ գործածությունից հանել սենատոր Հանի հանձնաժողովի մշակած օրենսդրությունը։

Ռուսական վարչության պակասությունները շատ անգամ են քննության նյութ դառել նույնիսկ բյուրոկրատական գրականության մեջ, օրինակ՝ ռուսական նվաճումների այն պատմությունների մեջ, որ գրել են գլխավորապես զինվորական պաշտոնյաները։

Այս աղբյուրները մեզ ուզում են հավատացնել, որ ամբողջ չարիքի պատճառն այն էր, որ լավ պաշտոնյաներ չէին գալիս Կովկաս ծառայելու, ուստի ասպարեզն այստեղ մնում էր չինովնիկական այն թափթփուկներին, որոնք գործ չգտնելով Ռուսաստանում դժվարությամբ գալիս էին Կովկաս

ծառայելու և այստեղ լցնում էին պետական հիմնարկություններն իրենց արատներով։ Բայց այս մի շատ միամիտ բացատրություն է, որն ընդունելու համար պետք է կարողանալ մի րոպե հավատալ, թե ռուսական չինովնիկությունն ուրեմն, միանգամայն անբասիր էր, միանգամայն կոչման բարձրության վրա կանգնած Ռուսաստանում։ Մինչդեռ եթե այդպիսի բան լիներ, միանգամայն օտարոտի պիտի լիներ ռուսաց գրականության մեջ Գոգոլի նման մի հոյակապ երգիծաբանական հանճարը, որի գրիչը տվել է ռուս չինովնիկական աշխարհի սքանչելի ծաղրանկարները՝ աննման իրապաշտության (ռեալիզմի) գոհարներ։ Երևույթը բացատրվում է շատ պարզ կերպով. անպետք վարչությունն իր չինովնիկական սարք ու կազմով ոստիկանական-ճորտատիրական պետականության սիստեմի արդյունք էր և ոչ այլ բանի։

3. «Պոլոժենիե»—Պասկևիչի միակ, գրեթե խոշոր բարենորոգչական դիտավորությունն էր մշակել մի կանոնադրություն հայոց եկեղեցու կառավարման համար։ Այսպիսի մի անհրաժեշտություն նրան ներկայացնում էր այն քաոսական դրությունը, որի մեջ գտնվում էին ամենից առաջ հայոց կրոնական կենտրոնի, Էջմիածնի գործերը, օրինակ՝ հենց կուսակցությունների (Ներսիսական, հականերսիսական և այլն) կատաղի պայքարները ու որոնց մեջ մասնակցություն ուներ և ինքը—Պասկևիչը և որոնց բովանդակությունը, ինչպես այս հատուկ է ընդհանրապես կղերական շարժումներին, հասարակական նշանակություն ունեցող որևէ գաղափար չէր, այլ լոկ անձնական փառախնդրություն։ Վերացնել այս քաոսային դրությունը, կարգ ու կանոն հաստատել որոշ դրական օրենքի միջոցով—այս էր այն ձևակերպումը, որ իբրև հրամայողական անհրաժեշտություն՝ դնում էր Պասկևիչի հրապարակումը։ Սակայն կղերական բարեկարգությունն այնքան ցավեցնող անհետաձգելիություն չէր, որ ռուսաց կայսեր փառավորված ֆելդմարշալը, դեռ նոր վերջացրած թուրքական արյունահեղ և երկարատև պատերազմը վեր կենար նրա համար խաչվելու։ Հրապարակային ձևակերպումի հետևում կանգնած էր իսկական նպատակը։ Տասնյակ տարիներ տևած խաղաղ և զինական պայքարից հետո ռուսական նվաճողությունը ձեռք էր բերել Էջմիածնի ընդհանրական կաթողիկոսության աթոռը, որի խոշոր նշանակությունը Արևելքում տարածված հայության համար նա լավ ըմբռնել էր դեռ 18-րդ դարի սկզբից, երբ Պետրոս Մեծը հարաբերություններ էր սկսել հայերի հետ։ Այժմ պետք էր օգտագործել այդ աթոռի բարոյական հեղինակությունն ամբողջովին, դարձնելով նրան մի պարզ գործիք ռուսաց արտաքին քաղաքականության համար։ Այս նպատակով պետք էր ներքուստ որոշ աստիճանով բարձրացնել կաթողիկոսական աթոռի նշանակությունը, տալով նրան իշխանական դիրք և արտոնություններ, որքան այս ինհարկե, կարող էր թույլատրել պետական տիրող և գերակշռող կրոնը հանձին պրավոսլավ կղերի։

Բոլոր այս ծրագրային դիտավորությունները մի մշակված կանոնադրության մեջ զետեղելու համար Պասկևիչը կազմակերպեց Թիֆլիսում մի գաղտնի հանձնաժողով, որին տալիս էր պատշաճավոր հրահանգներ, մասնավորապես, այն դերի մասին, որ պիտի կատարեր Էջմիածնի կաթողիկոսությունը արտաքին քաղաքականության մեջ։ Այս մի բյուրոկրատական հիմնարկություն էր, որ ինհարկե, ուրիշ կերպ չէր էլ կարող լինել և որի կազմը ցույց էր տալիս, թե ինչ միտումներով է նա կյանքի հրավիրված։ Հանձնաժողովը բաղկացած էր չորս հոգուց, որոնցից երեքը հայ և մեկը՝ ծագումով լեհ մի չինովնիկ, որ նույնիսկ չգիտեր հայերեն լեզուն։ Ամբողջ կազմը վայելում էր Պասկևիչի լիակատար վստահությունը, միանգամայն անձնվեր էր ռուսական շահերին, հականերսիսյան էր։ Թե մինչև ուր էր տարածվում Պասկևիչի կասկածամիտ

կողմնակալությունը, երևում է այն հանգամանքից, որ էջմիածինը ներկայացուցիչ չուներ այդ հանձնաժողովի մեջ։ Հայ ժողովուրդը նույնպես, իհարկե, հեռացված էր այդ բյուրոկրատական հիմնարկությունից։ Պատմական նյութեր հայոց եկեղեցու հին կազմակերպության մասին ուղարկել էր արտաքին գործերի մինիստրությունը, որ քաղել էր այդ տեղեկությունները 17-րդ դարի կաթոլիկ քարոզիչների հրատարակություններից։

Այսչափ անձեռնահաս մի ժողովի գործը, բնականաբար կարող էր լինել միայն բարձր իշխանությունների ներշնչման արձագանք։ Թեև նրա կատարած գործը վերաքննվեց և փոփոխությունների ենթարկվեց Պետերբուրգում, բայց այս հանգամանքը չփրկեց նրան նեղ միտումնավոր չինովնիկական էությունը։ Խմբագրվեց վերջիվերջո մի կանոնադրություն (ռուսերեն՝ պոլոժենիե), որ Նիկոլայ կայսրը հաստատեց 1836 թվի մարտի 11-ին։ Այսպիսով կյանք էր ստանում հռչակավոր «Պոլոժենիեն», որ թեև զուտ եկեղեցական մի կանոնադրություն էր, բայց ունեցավ անհունապես խոշոր ու խոր ազդեցություն ոչ միայն ռուսահայերի ներքին կյանքի մեջ, այլև համայն հայության ճակատագրի վրա։ Այս հանգամանքը պարտավորական է դարձնում, որ պատմությունը մոտիկից ծանոթանա նրա հետ։

Պոլոժենիեն միայն եկեղեցական կանոնադրության կանոնագիրք չէր, այլ դրանից էլ ավելին—Ռուսաստանի սահմաններում ապրող հայության ազգային-կուլտուրական ինքնորոշման առանձնաշնորհում։ Ռուսաստանի աստվածապետական-բռնակալական հասարակարգի մեջ չէին կարող լինել առանձնապես ճանաչված ազգություններ, որոնք իրավունքներ ունենային իբրև այդպիսիներ։ Ռուսաստանում կար միայն մի ազգություն—ռուս՝ մարմնավորված ինքնակալ ցարականության և պրավոսլավ եկեղեցու մեջ։ Մյուս ազգությունների համար մարմնավորումը դարձյալ ցարականությունն էր, որ Ֆինլանդիայում մեծ իշխան էր, Լեհաստանում՝ արքա, Հայաստանում և Վրաստանում՝ թագավոր։ Ցարականությունը միացնում էր ամենքին մի ընդհանուր պետական մարմնի, մի ռուսասիրության մեջ։ Իսկ երբ գալիս էր ազգայնությունը մարմնավորող երկրորդ սկզբունքը—եկեղեցի, այստեղ արդեն առանձնացում էր սկսվում այն բոլոր ազգությունների համար, որոնց եկեղեցին պրավոսլավ չէր։ Այստեղ սկսվում էր եկեղեցական ինքնագլխությունը (ավտոկեֆալիան) այն չափով, ինչ ազգության մարմնավորում դարձող եկեղեցական սկզբունքը, իբրև երկրորդական նշան, չէր խախտում առաջին սկզբունքի—ցարականության անվերապահ և լիակատար տիրապետությունը։ Յուրաքանչյուր եկեղեցու ինքնագլխություն արտահայտվում էր նրա դավանական և ծիսական առանձնահատկությունների մեջ, որոնց կենդանի պահողը նույն այդ եկեղեցու ընդգրկած և նվիրագործած լեզուն է։ Այստեղից այն պահանջը, որ պաշտամունքի լեզուն կենդանի և հարատև դառնա դաստիարակության միջոցով ոչ միայն պաշտամունքին ծառայող եկեղեցական նվիրապետության, այլև պաշտամունքին երկրպագող ժողովրդի համար։

Այսպիսով ազգությունը կորցնելով իր բնատուր վեհապետական, սուվերեն իրավունքները, շատ փոքր, ուղղակի աղքատիկ չափերով փոխարինություն ստանում էր իր եկեղեցու շուրջը, դառնալով մի կրոնական համայնք, որ իր ազգային ինքնուրույնության նշաններից գեթ առաջնակարգն ու նշանավորագույնը-լեզուն պիտի կատարյալ իրավատեր գտներ միմիայն իր տաճարի ներսում։ Հասարակական կյանքի մեջ այդ ազգային լեզուն այն իրավունքն ուներ, որ միանգամայն արգելված մի բան չէր, ուստի և նրա ազատ շրջակայման համար համայնքի ներսում թույլատրված էր նրան ունենալ տպագրություն, որ միայն եկեղեցու պետքերին չէր ծառայում, այլև աշխարհական պահանջ-

ներին։ Այսպիսով, ուրեմն, եկեղեցին պահպանում էր ազգային լեզուն դաստիարակության գործիք դարձնելու իրավունքը, կամ ուրիշ խոսքով, դպրոցի տեր էր դառնում, ինչպես էր և անցյալում։ Ամենակարևորը, ամենակենսականն այս էր։

Այսպես էր այն իրավական դրությունը, որի մեջ դնում էր Պոլոժենիեն ռուսահայ ժողովուրդն իբրև առանձին ազգագրական մի միավոր։ Իրական հատկություններ այս դրության մեջ մենք չպիտի գտնենք, եթե միշտ հարազատ մնանք մի միակ ճշմարիտ հայեցակետին—ժողովրդական օգտին։ Պոլոժենիեն վերահաստատում էր և ամրապնդում էր կղերականության բացարձակ տիրապետությունը մեզանում։ Այդ տիրապետությունն ուներ իր բոլոր պատշաճելիությունները. ամուր կաստայական կազմակերպություն, խարսխած հաստատ օրենքի վրա, պաշտոններ, ռոճիկներ, հրամայելու, պատժելու և վարձատրելու կարողություն, կալվածներ և արդյունքներ, մի խոսքով՝ այն ամենը, ինչ հպատակեցնում է մարդկանց, նրանցից պարտք է պահանջում՝ առանց իրավունքներ տալու։ Կաթողիկոսական աստիճանը բարձրացվում էր, որոշ շուքի և վեհափառության էր հասցվում։ Այլևս Երևանի խաների ձեռքին խաղալիք դարձած, հաճախ նրանց երեսից դեսուդեն փախչող կաթողիկոսները չեն էջմիածնում։ Նրանց ենթարկվող վարչական կարգը բյուրոկրատական կերպարանք ունի. էջմիածնում Սինոդ կառավարական չինովնիկի հսկողության տակ, գավառներում՝ առաջնորդներ և հաջորդներ, կոնսիստորիաներ և հոգևոր կառավարություններ, գործակալություններ։ Մի ամբողջ բարդ մեքենա, որ միապետորեն վարում է կաթողիկոսը։ Ժողովրդին տված է միայն մի պակասավոր ընտրողական իրավունք. նա մի թույլ մասնակցություն ունի կաթողիկոսական ընտրությունների մեջ, ընտրում է քահանաներին։ Բայց այդ իրավունքը նույնն է, ինչ ընտրել մի ինքնակալ միապետ, որ ոչինչ պատասխանատվություն չէր զգում իրեն ընտրողի առջև, հաշիվ չէր տալիս նրան և անփոխարինելի է իր պաշտոնի մեջ մինչև մահ։

Եվ այսպես, Պոլոժենիեի հնարավոր դարձրած ազգային-կուլտուրական ինքնօրենությունը (ավտոնոմիան) ժողովրդական օգտի տեսակետից վերածվում էր լոկ մի դպրոցական ինքնավարության, այն էլ ամբողջովին կրոնական մի մենաշնորհ, դրված կրոնավորական դիկտատուրայի կարգադրության տակ, տոգորված ամբողջովին կրոնով և եկեղեցականությամբ։ Հայ ազգային դաստիարակության համար ինքնապաշտպանության զրահ էր դառնում այսպիսի մի բանաձև—«Հայ դպրոցը հայ եկեղեցու նախագավիթն է»։ Այսպիսի մի դրություն չէր կարող, իհարկե, բավարարել ժամանակի լուսավորության ճանապարհը մտած մի ժողովուրդ։ Եվ ինչպես կտեսնենք իր տեղում, 1860-ական թվականներից ռուսահայերի մեջ ծայր է տալիս մի պայքար՝ դպրոցական կրթությունը աշխարհականացնելու, ժողովրդականացնելու համար։

Այսքանը տալով հայ ժողովրդին, Պոլոժենիեն մի շատ չաղ բաժին էլ հատկացնում էր ռուս պետականության։ Հայոց կաթողիկոսության մեջ ազգային հանգամանքը նա դնում էր ավելի լայն հիմքերի վրա, տրամադրելով, որ կաթողիկոս ընտրվի ոչ միայն ռուսահայերի, այլև թուրքահայերի, պարսկահայերի և հնդկահայերի քվեներով և այս նպատակով աշխարհական և հոգևորական պատգամավորներ պիտի ամեն տեղերից գային էջմիածին՝ ընտրությանն անձամբ մասնակցելու համար։ Ստացվում էր այսպիսով մի միջազգային ընտրողական ժողով, որ սակայն գտնվելով ռուսական հողի վրա, պիտի ամբողջովին ենթարկվեր ցարի կառավարության կարգադրություններին։ Նույնիսկ ընտրության մեջ էլ այդ ժողովը չէր կարող լինել կատարելապես ազատ ու անկախ։ Քվեարկել, նա քվեարկում էր, բայց չէր կարող ասել,

թե ում է դնում կաթողիկոսական աթոռի վրա։ Այս սաղը պիտի լիներ միմիայն ռուսաց ցարը։ Ժողովը պարտավոր էր ընտրել երկու թեկնածու և դրանցից ցարը կհաստատեր մեկին, ում կկամենար, բոլորովին անկախ այն հանգամանքից, թե որը որքան ձայն է ստացել։ Այսպիսով ռուսաց կառավարությունը կատարյալ հնարավորություն էր ստանում կաթողիկոս նստեցնելու իր ուզած մարդուն։ Բանը հեշտացնում էր մանավանդ այն, որ կաթողիկոսի հաստատությունն այլևս միջազգային հանգամանք չուներ, ինչպես առաջ, երբ պարսից շահը, թուրքաց սուլթանը, հետին ժամանակներում նաև ռուսաց ցարն էին հաստատում կաթողիկոսին։ Էջմիածինը գրավելուց հետո այն իրավունքն անցնում էր միայն ռուսաց ցարին, որովհետև ամենայն հայոց կաթողիկոսությունը, ունենալով հանդերձ միջազգային իրավասություն, համարվում էր ռուսական ներքին հիմնարկություն և ինքը կաթողիկոսն էլ, եթե ընտրվեր անգամ դրսից, ռուսաց հպատակ էր։ Այսպիսով նա դառնում էր ռուսական մի պաշտոնյա, ենթարկված Կովկասի փոխարքայի կամ կառավարչապետի հսկողության։ Պոլոժենիեի կազմողները պետք է նկատի առնեին այն դիրքը, որ գրավում էր ցարական իշխանությունը տիրապետող կամ պետական եկեղեցու վերաբերմամբ։ Այստեղ ցարը եկեղեցու գլուխ էր և կառավարում էր նրան իր հրամաններով և պաշտոնաբաշխություններով, որոնք կատարվում էին Սրբազնագույն Սինոդ կոչված հիմնարկության միջնորդությամբ։ Այդ Սինոդի անդամներին, ինչպես նաև թեմական առաջնորդներին նշանակում էր կայսրը։ Միևնույն կարգը մտցվում էր և հայոց եկեղեցու վարչության մեջ։ Կաթողիկոսը կարող էր միայն միջնորդողի և խնդրողի դեր կատարել, ներկայացնելով իր նկատի ունեցած թեկնածուներին, այն էլ յուրաքանչյուր տեղի համար ոչ թե մեկին, այլ երկուսին։ Առանց հետին մտքի չէր, իհարկե, որ բավական անկախ դիրք հատկացվում էր թեմական առաջնորդներին, որոնց կայսրը կարող էր նշանակել նույնիսկ առանց կաթողիկոսի միջնորդության։ Այս մի միջոց էր կաթողիկոսի իշխանության դեմ առաջնորդական իշխանություն կանգնեցնելու համար, որով և կարելի կլիներ կաթողիկոսին ընկճված և հնազանդ դրության մեջ պահել։ Ընդհանրապես ներքին կյանքի մեջ Էջմիածնի կաթողիկոսությունը առանձին մեծ արժեք չուներ ռուս կառավարության համար։ Առավելապես արտաքին քաղաքականության մեջ էր, որ կաթողիկոսությունը որոշ դեպքերում կարևոր նշանակություն էր ստանում, որ և օգտագործվում էր գրեթե միշտ հեշտությամբ, առանց դիմադրության։

Այս, իհարկե, հաջողություն էր ռուսաց քաղաքականության համար, բայց զուտ բյուրոկրատական առումով։ Էջմիածնի կաթողիկոսությունը բոլոր կողմերով հպատակեցված էր ցարական հայեցողություններին մինչ այն աստիճան, որ կաթողիկոսն արտասահմանի հայության հետ հարաբերությունները պիտի պահպաներ ռուսաց արտաքին գործերի մինիստրության միջոցով, բայց այս ստրկացումը արտասահմանի հայության ղեկավարող շրջանների, բայց ոչ իհարկե, բուն ժողովրդի մեջ, որ միանգամայն անտարբեր էր դեպի այդպիսի հարցեր, հարուցանում էր սաստիկ հակակրություն ռուսաց քաղաքականության դեմ և Պոլոժենիեն դառնում էր նրանց աչքում մի ազգաջինջ օրենք, միանգամայն վայել Ռուսաստանի պես մի բարբարոս պետության, որ միջոցներ չի խնայում իր հպատակ հայերին ապազգայնացնելու համար։ Այս վատ կարծիքը 1836 թ. մարտի 17-ի օրենքի մասին երկար ժամանակ և համառորեն պահպանվում էր արտասահմանի հայության կղերական-բուրժուական հոսանքների մեջ, առաջացնելով այնտեղ մի ամբողջ շարժում, որ նպատակ ուներ փոփոխել տալ Պոլոժենիեի այն տրամադրությունները, որոնք «ազգակործան» էին հայ եկեղեցական ազգասիրության տեսակետից։ Այս

ազգասիրության համար կաթողիկոսը հայոց հին թագավորների ժառանգն էր հանդիսանում, քանի որ միակն էր իբրև համազգային իշխանություն։ Եվ որովհետև այդ ազգասիրության համար գերագույն իդեալ էին կազմում հայ հին թագավորները այնպես, ինչպես նրանք ցույց էին տվել իրենց պատմական որոշ մոմենտներում, այն է՝ անկախ և ինքնակալ, անսահմանափակ իշխանությամբ, ուստի եկեղեցական-հայրենասիրական մտայնությունը չէր կարող ներկայացնել ամենայն հայոց կաթողիկոսին այլապես, եթե ոչ իշխանության միևնույն պայմանների մեջ։ Այս պատճառով Էջմիածնի կաթողիկոսի գերության մի ապացույց էր համարվում այն, որ Պոլոժենիեն սահմանափակել է նրա իշխանությունը, հիմնելով նրա կողքին գրեթե կիսանկախ Սինոդ, ուր գործերի ընթացքը դրված էր ռուս կառավարության կողմից նշանակված պրոկուրորի հսկողության տակ։ Մանավանդ այս պաշտոնյան գրեթե ֆանատիկոսական ատելության առարկա էր դառնում բոլոր օրինավոր հայ ազգասերների աչքում ոչ միայն արտասահմանի, այլ նույնիսկ և Ռուսաստանի հայության մեջ։ Այստեղ կաթողիկոսի իշխանությունը ամեն մի սահմանափակումից վերադարձնել նրան նախկին ինքնակալական հանգամանքը, մի սկզբունք, որի հետադիմականությունը չէր հասկանում ազատության և եվրոպական լուսավորության անունից ճառող հայ ազգասիրությունը,— այս պիտի նշանակեր նախ և առաջ ռուսահայերի ազատագրումը ապազգայնացումից և այսպիսի նշանաբանով արտասահմանի հայությունը ջանքեր է թափել ամբողջ տասնյակ տարիներ, որպեսզի կարողանա իր կամեցածի պես սրբագրել տալ Պոլոժենիեն։ Առաջին անգամ իրենց բողոքը նոր օրենքի դեմ հայտնեցին հնդկահայերը։ Բայց միանգամ ընդմիշտ հայտնենք, որ բոլոր այս փորձերը հանգեցին կատարյալ անհաջողության։ Չի կարելի ասել, թե պատճառը ռուսաց կառավարության չկամությունն էր։ 1860-ական թվականներին նա համաձայնություն հայտնեց, որ վերաքննվի Պոլոժենիեն, և Մատթեոս կաթողիկոսին առաջարկվեց ձևակերպել այն փոփոխությունները, որոնք ցանկալի են համարվում հայ ժողովրդի կողմից։ Մատթեոս կաթողիկոսը ներկայացրեց մի նախագիծ, որի մեջ հայոց կաթողիկոսին տրվում էր մի անսովոր չափազանցրած քաղաքական դիրք—նա ոչ մի կախում չուներ ռուսաց կայսրից, ներկայացնում էր մի թագավորություն թագավորության մեջ և կարող էր նույնիսկ փոխել իր բնակության վայրը (Էջմիածինը), եթե այդպես պահանջեին հանգամանքները, այսինքն ռուսաց կառավարության հետ ունեցած հարաբերությունների դրությունը։ Այսպիսի դեպքերում կաթողիկոսությունը պիտի տեղափոխվեր Շիրակի Հոռոմոսի վանքը, որ արդեն թուրքական հող էր։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ կառավարությունը մերժեց նույնիսկ քննության առնել այդ նախագիծը։ Սակայն ցարական ռեակցիայի մեջ հասավ այնպիսի մի դաժան, մռայլ շրջան (Ալեքսանդր Գ-ի և Նիկոլայ Բ-ի թագավորությունները), երբ նույնիսկ Նիկոլայ Ա-ի տված այդ Պոլոժենիեն համարվեց չափազանց ազատամիտ և լավակամ՝ հայերի համար, ուստի և ռուսական բյուրոկրատիան աշխատում էր եթե ոչ բոլորովին ջնջել, գոնե սաստիկ կրճատել այն ողորմելի արտոնությունները, որ հայերը իբրև կրոնական համայնք, ստացել էին Պոլոժենիեից։ Ահա այս շրջանում հայերն արդեն ոչ միայն չէին մտածում Պոլոժենիեի վերաքննության մասին, այլև համարում էին այդ վերաքննությունը կատարյալ խորտակում իրենց ազգային իրավունքների։

4. **«Թանզիմաթ»**։ Պոլոժենիեի հրատարակումից երեք տարի անց՝ Թուրքիայում հայտարարվում էր մի ռեֆորմ, որ թեև հատկապես հայերին չէր վերաբերում, բայց շատ կարևոր նշանակություն ունեցավ Թուրքիայի հպատակ բոլոր ազգերի, հետևաբար և հայերի համար։

Հունական ապստամբությունը, բայց մանավանդ ռուս-թուրքական պատերազմը, սպառել էին օսմանյան պետության բոլոր նյութական և բարոյական ուժերը։ Նորից մի ժամանակի ահարկու զինվորական բռնապետությունը կանգնած էր երևում կործանման խորխորատի ծայրին։ Հուսահատություն էր թագավորում թուրքական ղեկավարող շրջաններում։ Տրամադրության ամենամռայլ կերպարանք էր տալիս մանավանդ այն հանգամանքը, որ պատերազմական դրությունը վերջացած չէր, այլ ընդհակառակը, 1830-ական թվականներին պայթում էր մի նոր պատերազմ, սոսկալի մանավանդ այն պատճառով, որ այդ մի ներքին պատերազմ էր։ Եգիպտոսի Մեհմեդ Ալի փաշան, նա, որ ինչպես տեսանք, իր զորքերն ուղարկել էր Հունաստան սուլթանի իշխանությունը պահպանելու համար, այժմ ապստամբվել էր նույն այդ սուլթանի դեմ և նրա զորքերը դարձյալ նրա որդի Իբրահիմ փաշայի առաջնորդությամբ, գրավելով ամբողջ Պաղեստինը և Սիրիան, հաղթականորեն մտնում էին Փոքր Ասիա, իրենց արշավանքը տանելով ուղիղ դեպի Կ. Պոլիս։ Սուլթան Մահմուդն իրեն զգում էր միանգամայն անուժ, ջարդված և որ գլխավորն էր, լքված Արևմտյան Եվրոպայից։ Բայց Թուրքիայի աշխարհագրական դիրքն այս անգամ էլ գալիս էր նրան փրկելու կողմից։ Եվ փրկիչ հանդիսանում էր այս անգամ արդեն Թուրքիայի հին և ոխերիմ թշնամին, Ռուսաստանը։ Նիկոլայ կայսրն առաջարկում էր իր ծառայությունները Մահմուդին՝ եգիպտական զորքերի առաջխաղացումը կանգնեցնելու համար։ Մահմուդը, երկար տատանումներից հետո, ինչպես հաղորդում են հայկական աղբյուրները, Պեզճյան Հարություն ամիրայի խորհրդով, ընդունում էր այդ առաջարկությունը և ռուսական 10 հազարանոց մի բանակ հանդես էր գալիս Բոսֆորի ափին, պատրաստ պաշտպանելու սուլթանական գահը, որին նա այնքան մահացու հարվածներ էր տվել մինչև այդ։ Եվրոպայի քաղաքական կյանքի մեջ երևան էր գալիս մի նոր, շշմեցուցիչ երևույթ՝ ռուս-թուրքական բարեկամությունը։ Կ. Պոլիսը փրկված էր, ռուսական զորքերը մի քանի ամսից հետո հեռացան Բոսֆորի ափերից, բայց նրանք իրենց բանն արել-վերջացրել էին հենց նրանով, որ ստացել էին լավ փոխարինություն, ռուս-թուրքական բարեկամությունը ձևակերպելով մի դաշնադրության մեջ, որ կնքվեց Կ. Պոլսի Հյունքյար Իսքելեսի արվարձանում 1833 թ. հուլիսի 8-ին։ Այս մի պաշտպանողական դաշնակցություն էր ութ տարի ժամանակով։ Նրա նպատակն էր ապահովել Թուրքիայի ամբողջությունը, բայց իրապես դուրս էր գալիս, որ Թուրքիան դառնում էր Ռուսաստանի վասալը, որովհետև լինելով թույլ, նա իբրև դաշնակից, պիտի ենթարկված մնար Ռուսաստանի հզոր ազդեցությանը, անելով այն, ինչ նա կամենում էր։ Այս վասալական հանգամանքն անվերապահորեն ամրացնում էր այն, որ դաշնադրությունը պարտավորեցնում էր Թուրքաց կառավարությանը փակել Դարդանելի նեղուցը բոլոր օտարերկրյա նավերի առաջ, և այսպիսով Ռուսաստանն էր, որ դառնում էր Կ. Պոլսի և Սև ծովի միակ տերն ու տնօրենը։

Ռուս-թուրքական այս բարեկամությունը ահազանգի պես էր հնչում եվրոպական դիվանագիտության, առավելապես Անգլիայի և Ֆրանսիայի ականջին և նա շտապում էր ազատել Թուրքիան ոչ միայն Մեհմեդ Ալիից, այլև Նիկոլայից։ Այս մի երկարատև ու բարդ գործ էր, որ նրան հաջողվեց Հյունքյար Իսքելեսի դաշնադրության ժամանակը լրանալուց հետո, 1840 թվականներին։ Եվ ահա, մինչդեռ կատարվում էր այդ ազատագրումն արտաքին ուժերով, մի ազատագրում, որի իսկական արժեքը չափազանց պայմանական էր, քանի որ Անգլիան ու Ֆրանսիան եթե ուզում էին հեռացնել ռուսներին Բոսֆորի ափերից, այդ միայն այն նպատակով էր, որպեսզի իրենք պինդ հաստատ-

վեն այնտեղ,— մինչդեռ ասում ենք, տեղի ուներ այս մրցակցությունը, Թուրք պետական բարձր շրջաններում գտնվում էին մարդիկ, անհատներ միայն, որոնք ըմբռնում էին, թե այսպես շարունակել չի կարելի այլևս, թե պետությունը կատարելապես կխորտակվի, եթե չառողջացվի նրա ներքին կազմը։ Իսկ առողջացնել կարելի էր միմիայն մտցնելով եվրոպական սկզբունքներ կառավարելու ձևերի մեջ։ Այսպիսի ըմբռնողություն ընդգրկել էր և ինքը Մահմուդը, թեև նա այդ կողմից առաջինը չէր թուրքաց սուլթանների մեջ, որովհետև նրանից առաջ Սելիմ Գ-ն էր, որ զգացել էր այդ անհրաժեշտությունը և արդեն կարողացել էր մի քանի բան անել զինվորական կազմակերպության մեջ։ Մահմուդն էլ գլխավորապես զինվորական բարենորոգումներն ուներ ի նկատի և հենց այդ պատճառով էր, որ նա կարողացավ գլուխ բերել այնպիսի մի խոշոր հեղաշրջում, որպիսին էր ենիչերի զորքերի ոչնչացումը։ Պետք է սակայն ասել, որ Մահմուդն ուներ և ընդհանուր պետական լայնահայեցողություն։ Այսպես օրինակ՝ նա պետության համար վնասակար էր համարում այն կրոնական դասակարգայնացումը, որ մտցրել էր իսլամ կրոնը ազգաբնակության մեջ։ Նա կկամենար, որ կրոնական խտրականությունը գոյություն ունենար միմիայն աղոթատեղիներում՝ մզկիթի, եկեղեցու, սինագոգի ներսում, իսկ նրանցից դուրս ամենքը լինեին իրավունքներով և պարտավորություններով հավասար հպատակներ։ Բայց այս դեռ միայն ըմբռնված գաղափար էր, հեռու՝ գործ դառնալու վիճակից։ Ինքը՝ Մահմուդը, հիմնում էր եվրոպական ձևով բարձր դպրոցներ (զինվորական, բժշկական), բայց դեռ չէր համարձակվում նրանց դռները բաց անել նաև ոչ-իսլամների առջև։ Այսուհանդերձ, թուրքական կյանքի մեջ շատ խոշոր մի երևույթ էր, որ այնտեղ մտնում էր եվրոպական կարգերի կիրառման անհրաժեշտության անհատական գիտակցությունը, թեկուզ այդ անհրաժեշտությունը մեն-միայն թուրքական միջավայրի մեջ փակվեր։ Մեծ պատկառանքով շրջապատված բռնավոր սուլթանի այս տրամադրությունը հաղորդվում էր և նրա մերձավոր բարձր պաշտոնակալներից եթե ոչ բոլորին, գոնե մի քանիսին։ Ստեղծվում էր նպաստավոր միջավայր և այդ շրջաններում։ Բարձրաստիճան փաշաներից մեկն ասում էր. «Մեր փրկությունը Եվրոպայից կարգեր վերցնելն է, թե չէ՝ պատրաստվենք վերադառնալ Ասիա»։

Այս բարենորոգչական մթնոլորտում էր առաջանում և հեղինակություն ստանում մի եռանդուն և վճռական մարդ, Ռեշիդ փաշան, որին վիճակվում էր առաջին առաջնորդը և նախահայրը հանդիսանալ այն պատմական շարժման, որի նպատակն էր ստեղծել մի նոր և վերանորոգված Թուրքիա. մի շարժում, որ 19-րդ դարի երկրորդ կեսից հետո ստանում էր **Երիտասարդ Թուրքիա** անունը, և որ այսօր էլ պահպանում էր իր գոյությունը, բայց ուրիշ անվան տակ։ Ռեշիդը լավ կրթված մարդ էր, երկար տարիներ թուրքական դեսպանի պաշտոն էր վարել Փարիզում և Լոնդոնում և գտնվում էր մանավանդ անգլիական պառլամենտարիզմի խիստ ազդեցության տակ։ Վերադառնալով Թուրքիա, նա բերում էր իր հետ Անգլիայում կազմված ռեֆորմների մի ծրագիր, որ և աշխատում էր ընդունել տալ սուլթանին, օգտվելով մանավանդ, այն հանգամանքից, որ ինքն էլ մտել էր կառավարության մեջ արտաքին գործերի մինիստրի պաշտոնով։ Բայց այդ ժամանակ (1839 թ.) մեռնում է սուլթան Մահմուդ Բ, հարվածված մի նոր պետական աղետից, որ բերում էր նորից վերանորոգված եգիպտական արշավանքը։— Թուրքական ամբողջ բանակը ջարդվում էր Նեզիբի դաշտում, այնպես որ այլևս գործող բանակ չէր մնում։ Գահը ժառանգում էր նրա 12-ամյա որդին՝ Աբդուլ Մեջիդ, որի առաջին իսկ օրերում Թուրքիան զրկվում էր իր նավատորմից, որ հոժարակամ

անձնատուր էր եղել Մեհմեդ Ալիին։ Թուրքիայի պաշտպանությունն իրենց ձեռքն առան եվրոպական պետությունները։ Եվ ահա այդ տագնապալից տարում, նոյեմբերի 9-ին, Կ. Պոլսում տեղի է ունենում մի արտակարգ շքեղ հանդես։ Սուլթանական պալատի մի քյոշկում, որ կոչվում էր Գյուլհանե, հավաքված էին ամբողջ արքունիքը, բարձրաստիճան պաշտոնյաները, օտար պետությունների ներկայացուցիչները, իսլամ և ոչ իսլամ հոգևորականությունը և այլ բազմաթիվ հանդիսականներ։ Ներկա է և ինքը՝ Աբդուլ Մեջիդը, որ թեև շիտակ բնավորության տեր էր, բայց տգետ էր, թուլամիտ, շրջապատողների ազդեցությանը հեշտ ենթարկվող։ Այժմ նրա վրա ազդեցություն ունեցողը Ռեշիդ փաշան է, որ հորինել է նրա անունից մի Խաթթի Շերիֆ, որ և կարդացվում է հավաքված բազմության։ Նրա մեջ նոր դարագլուխ է հայտարարվում ամբողջ Թուրքիային։

Այս սուլթանական հրովարտակով հայտարարվում էր, որ պետական կյանքն այսուհետև պիտի խարսխված լինի նոր հիմնարկությունների վրա, որոնք նպատակ պիտի ունենան իրագործելու երեք գլխավոր և իրական պահանջներ. 1. ապահովել պետության բոլոր հպատակների կյանքը, գույքը, պատիվը, 2. կանոնավորել հարկերը և նրանց մասնատրումը կատարել համաձայն ամեն մի հարկատվի կարողության և 3. կանոնավորել զինվորագրությունը և զինվորական ծառայության ժամանակը։ Այս երեք կետերի բացատրության մեջ Խաթթի Շերիֆը տալիս էր և մի շարք ուրիշ խոստումներ, որոնց խոշոր կարևորությունը հասկանալի կլինի ինքնըստինքյան, եթե նկատի առնենք, որ այս բոլորն ասվում էր մի երկրում, որ վաղուց արդեն ստացել էր Եվրոպայում բարբարոսական անունը։ Խոստացվում էր, որ մենաշնորհները կվերացվեն, որ դատարանը կլինի հրապարակային և նրա առջև հավասար կլինեն պետության բոլոր հպատակները, որ ոչ ոք իրավունք չունի վիրավորել որևէ մեկի պատիվը, մահ պատճառել նրան։ Խոստացվում էր նմանապես, որ բռնագրավումներ այլևս չեն լինի և ամեն մեկն իրավունք կունենա վարվելու իր գույքի և կյանքի հետ, ինչպես ինքն է կամենում։

Այս բոլորն, իհարկե, որ, մեծամեծ խոստումներ էին։ Բայց այստեղ, հենց այս առաջին քայլում, անհրաժեշտ է կշռադատել, թե ինչ իրական արժեք ունեին Թուրքիայում նույնիսկ այսպիսի հանդիսավոր հանգամանքներում, գրավոր կերպով արված սուլթանական խոստումները։ Այս չափազանց կարևոր գործի համար ամենից առաջ պետք է հաշվի առնել մի խոշոր հանգամանք։ Ռեֆորմները գալիս էին վերևից, բյուրոկրատական բարձր շրջաններից և չէին ներկայացնում հասարակական խավերի մեջ ծնված, զարգացած և խորապես գիտակցված անհրաժեշտության արդյունք։ Զուտ պաշտոնական, ավերիչ շրջանների արտադրություն, նրանք հրամանի ուժով փաթաթվում էին ազգաբնակության շլինքին, որ ոչ միայն անտարբեր վերաբերմունք չուներ դեպի նրանց, այլև տրամադրված էր նրանց դեմ բացարձակորեն թշնամական ոգով, համարում էր նրանց օտար, խորթ ու խորտակիչ սկզբունքներ։ Այսպես էր, իհարկե, իսլամ բազմությունն, սկսած ամենաբարձր խավերից մինչև ամենածայրերը, իսկ այս բազմությունն էր պետության հիմքն ու ուժը կազմում և արհամարհել նրան չէր կարող և ոչ մի սուլթան։ Տգետ ու խավար, կրոնամոլ և լցված կատաղի ատելությամբ դեպի ամեն ինչ, որ գալիս էր քրիստոնյա աշխարհներից, նա մի բութ և անհրապույր միջավայր էր ամեն մի այնպիսի բարեկարգության համար, որ չէր նմանվում ավանդական հասկացողություններին։ Ռեշիդ փաշան սկզբից ևեթ հանդիպում է ուժեղ դիմադրության նույնիսկ կառավարության շրջանների մեջ։ Ռեֆորմների, եվրոպական նորմածությունների կուսակցության դեմ, որ դեռ նոր էր, չափազանց սա-

կավամարդ և դեռ նույնիսկ հասարակական հոսանք էլ չէր դառել, ասենք երկու բառով՝ երիտասարդ Թուրքության դեմ ծառացած ու ծավալված էր հին Թուրքությունը, որի հիմքը շարիաթն էր, մահմեդական հին օրենսդրությունը, կրոնական ծայրահեղ պահպանողականություն, խարությունների և կեղեքումների սրբազան կանոնադրությունը։ Հասկանալի է, որ Խաթթի Շերիֆի տրամադրությունները կարող էին հրամանով գործադրվող կարգադրություններ դառնալ այնքան ժամանակ, որքան Ռեշիդ փաշան կանգնած էր կառավարության գլխին։ Բայց նրան երկար ժամանակով չէին թողնի մնալ այդտեղ։ Հին Թուրքերի կողմից նա նկատվում էր իբրև մի գյավուր և նրան աշխատում են պաշտոնանկ անել։ Այս հաջողվում է շնորհիվ Աբդուլ Մեջիդի փոփոխամտության։ Ռեշիդի հակառակորդն էր Ռիզա փաշան, և երբ սա է մեծ վեզիր դառնում, ռեֆորմներն, իհարկե, իսկույն խլանում են և վերականգնվում է հին կարգը։ Սակայն պայքարը շարունակվում էր, Ռեշիդը նորից պաշտոնի էր կանչվում, նորից օրենսդրական գործունեություն էր սկսվում նոր հիմքերի վրա, մինչև որ նորից տապալվում էր ռեֆորմատոր փաշան։ Այսպես շարունակվեց մի քանի անգամ։

Այս տեսարանն արդեն ըստինքյան բավական պերճախոս է՝ ցույց տալու համար, թե ռեֆորմները Թուրքիայում հասարակական խոր գիտակցության մեջ հասունացած պահանջ չէին, այլ այս կամ այն անհատի, գուցե կարելի լինի ասել՝ այս կամ այն խմբակցության հղացումն էին ներկայացնում և ունեին իրենց մեջ բավական շատ արհեստականություն։ Այս մեզ պարզ կերևա այն ժամանակ, երբ մենք ավելի մոտիկից կնայենք հենց իրեն Ռեշիդ փաշային և կքննենք այն դրդումները, որոնք մղում էին նրան դեպի ռեֆորմիստական գործունեություն։ Եվ ահա այդ դրդումների մեջ մենք տեսնում ենք մեծ չափերով արտաքին ցուցադրական հանգամանք, քան իսկապես իրական ներքին բովանդակություն, ավելի քաղաքական նպատակ, քան ճշմարիտ ըմբռնում ժողովրդական շահերի։ Հասկանալու համար այս շատ կարևոր հանգամանքը, մենք պիտի իմանանք, թե ինչպես էր վերաբերվում եվրոպական դիվանագիտությունը Թուրքիայի գոյության հարցին։ Այստեղ այդ դիվանագիտությունը բաժանվում էր երկու խոշոր հատվածի՝ արևելյան և արևմտյան։ Արևելյանը միայն մի հատ ներկայացուցիչ ուներ՝ Ռուսաստանը։ Արդեն Պետրոս Մեծի ժամանակից, ասել է՝ XVIII դարի սկզբից, ռուսական քաղաքականությունն ուժգնորեն արտահայտում էր մի մշտական ձգտում՝ ոչնչացնել Թուրքիան անդամահատումների միջոցով, իր տիրապետության կամ առնվազն իր խիստ ազդեցության ենթարկել այդ անդամահատված մասերը և այսպիսով կանգնել այն ճանապարհների վրա, որոնք տանում են դեպի Միջերկրական ծովը։ Այս բացարձակ զինական նվաճողականության ոտով-գլխով հակառակ էր արևմտյան քաղաքականությունը, որ ներկայացնում էին Անգլիան և Ֆրանսիան։ Այս պետությունները վաղուց էին նվաճել Թուրքիան, բայց ոչ թե զենքով, այլ խաղաղ, ինչպես ասում են՝ «կուլտուրական» միջոցներով, ենթարկելով նրան իրենց ազդեցության, դարձնելով նրան իրենց առևտրական շուկան, ուր անգլիացի և ֆրանսիացի վաճառականը գտնում էր հովանավորված դրություն, արտոնություններ։ Ռուսաստանի սպառնացած զինական նվաճումն, իհարկե, պիտի ոչնչացներ անգլո-ֆրանսիական խաղաղ նվաճումը, մի բան, որ աղետ կլիներ տիրող բուրժուազիայի և կապիտալիստական կարգի համար։ Ուստի և արևմտյան քաղաքականությունն իր համար «սրբության սրբոց» էր դարձնում հակառակել արևելյան քաղաքականությանը, պաշտպան հանդիսանալով Թուրքիայի քաղաքական անկախության և ամբողջության։ Այս հակառակության համար էլ Թուրքիան իրեն ավելի մոտ, ավելի բարեկամ

էր համարում արևմտյան պետությունները։ Վերջիններիս բերած տնտեսական ստրկությունը, ճիշտ է, գրեթե համազոր էր անկախության ջնջման, բայց Թուրքը, իբրև տնտեսապես հետամնաց մի ժողովուրդ, պատրաստ էր աղքատ ու ստրուկ լինել, բայց համարվել քաղաքականապես միանգամայն անկախ։ Այդ անկախությունը պահպանելու համար, սակայն, բավական չէր միայն բարյացակամ Արևմուտքի կամեցողությունը։ Ինչ էլ լիներ Թուրքիան Եվրոպայի համար, միանգամայն պարզ ու հասկանալի էր, որ այդ մի փտած և քայքայվող պետություն էր՝ շնորհիվ այն բարբարոսական կարգերի, որոնք տիրում էին նրա մեջ։ Եվ արևմտյան բարյացակամությունը գտնում էր իրեն այնքան հարկավոր բռնապետությունը ապրեցնելու և ուժեղացնելու միջոցը—այդ ռեֆորմների միջոցն էր, որ պիտի վերակազմեր օսմանյան պետությունը, ուժեղացներ և բարեկարգեր այնպես, որ այնտեղ այլևս չէին մնա տանջվող քրիստոնյա ազգեր, և Ռուսաստանն այլևս առիթ չէր ունենա նրանց պատրվակ բռնել և միջամտել Թուրք պետության գործերին։ Ռուսաստանը չէր ընդունում, թե ռեֆորմները կարող են մի նոր Թուրքիա ստեղծել։ Թուրքերին նա համարում էր եվրոպական քաղաքակրթության ոգին ըմբռնելու և յուրացնելու անընդունակ մի ցեղ և այս՝ գլխավորապես շնորհիվ նրա դավանած մահմեդական կրոնի։ Ուստի Ռուսաստանն առաջարկում էր անդամահատության միջոցը, առանձին ինքնավարություններ ստեղծելով այն քրիստոնյա ազգություններից, որոնք ապրում էին Թուրքիայում։

Այս երկու հակոտնյա ուղղություններն էին, որ համառությամբ մրցում էին իրար հետ Արևմտյան հարցի մեջ։ Արևմտյան քաղաքականությունը միալար հանձնարարում էր ռեֆորմները, այն էլ այնպիսի ռեֆորմներ, որոնք ներշնչված լինելով եվրոպական սկզբունքներից, մշակվում են թուրքերի ձեռքով, գործադրվում են նրանց սեփական միջոցներով, առանց որևէ կողմնակի ուժի աշխատակցության։ Եվ ահա Ռեշիդ փաշան, իր քաղաքական դաստիարակությունն ստացած լինելով Ֆրանսիայում և Անգլիայում, հանդիսանում էր արևմտյան քաղաքականության սկզբունքների իրագործող, բայց մի շատ բնորոշ գծով, որ միշտ այնուհետև առանձնապես շեշտված կերպով հայտնաբերվում էր թուրքական ռեֆորմների մեջ։ Այդ նրանց թղթեղեն էությունն էր։ Դրանք խոստումներ էին, որոնք տրվում էին հարկադրանքի տակ, երբեք կատարված չլինելու համար, որոշ քաղաքական նպատակով— ազդել Եվրոպայի դիվանագիտական և հասարակական մտքի վրա, ցույց տալ, որ սուլթանական պետությունը միանգամայն ի վիճակի է եվրոպական կազմակերպություն ընդգրկել։ Այսպես, Ռեշիդ փաշան ներկայացնում էր Եվրոպային նույնիսկ թուրքական պառլամենտարիզմ, թեև կատարյալ կատակային մի ձևով։ Եվրոպական և ասիական Թուրքիայից Կ. Պոլիս էին կանչվում ներկայացուցիչներ, որոնք սակայն, չէին ընտրվում ժողովրդի կողմից, այլ պարզապես նշանակվում էին հականե հանվանե կենտրոնական կառավարության կողմից և կանչվում էին մայրաքաղաք, ուր այդ պատգամավորները ժողով էին կազմում խոշոր պաշտոնյաների հետ միասին։ Սուլթանը կարդում էր գահական ճառ, որի մեջ ասում էր, թե հարաբերությունները բոլոր պետությունների հետ բարեկամական են, ժողովը պատասխանում էր թագավորին արևելյան մի ճոռոմաբան ուղերձով, թագավորը շնորհակալություն էր հայտնում և պառլամենտարիզմի այս ծաղրանկարը ցրվում էր, այլևս երբեք չհավաքվելու համար։ Եվ պառլամենտարիզմի դասական հայրենիք Անգլիան պիտի իմանար, որ Թուրքիան Ռեշիդ փաշայի ձեռքով դարձել է պառլամենտական երկիր։

Այս օրինակից հետո այլևս տարօրինակ չպիտի թվա, որ 1840-ական թվա

կաններին Թուրքիայում տեղի ունեցավ Խաթթի Շերիֆի խոստացած օրենքների հրատարակությունը, որոնցից շատերը և էականները սակայն, ինչպես մի 10 տարուց հետո խոստովանում էր ինքը թուրք կառավարությունն իր պաշտոնական հայտարարության մեջ, մնացին մեռած տառ։ Այս բոլոր օրենսդրությունները, սկսած Գյուլհանեի հրովարտակից, կոչվում են մի ընդհանուր անունով **Թանզիմաթ**: Այս Թանզիմաթը կոչված էր վերանորոգելու Թուրքիայի կյանքը, բայց իր թղթեղեն որակով չէր, որ պիտի գլուխ բերեր մի այդպիսի հսկայական աշխատանք։ Բավական չէ օրենքներ գրելը, նույնիսկ առատ չափով և ազատամիտ ոգով գրելը։ Գլխավորը նրանց գործադրելն էր, իսկ գործադրելու համար ոչ միջոցներ կային, ոչ միջավայր։ Թուրք պետական մեքենան, բաղկացած թուրք պաշտոնակալներից, անընդունակ էր յուրացնել և կյանքի մեջ մտցնել Թանզիմաթի սկզբունքները, որոնց գոյության իրավունքը միմիայն վերևից եկած հրաման էր, իսկ թուրքական միջավայրը միանգամայն թշնամական վերաբերմունք ուներ Թանզիմաթի խորթ և օտար նորույթներին, այդ պատճառով չէր կարող հարկադրական և վերահսկողական որևէ ազդեցություն գործադրել, որ թուրք պաշտոնյաները կյանքի մեջ մտցնեն նոր օրենքները։

Փոքր ի շատե նպաստավոր միջավայր ներկայացնում էր պետության կենտրոնը, Կ. Պոլիսը, ուր, ճիշտ է, բացվեցին բարձրագույն դպրոց, խառն դատարան և այլն։ Բայց այս հաստատությունները դեռ կյանքի հիմնական նորոգման երաշխիքներ չէին։ Հինն էր, որ դեռ տիրում էր իր ամբողջ ուժով և պառլամենտական կարգեր երազող կառավարությունը ինքն էր ցույց տալիս, թե որքան իրական արժեք կարող են ունենալ նրա հրապարակած հավասարությունն ու ազատությունը։ 1843-ին, երբ Թանզիմաթն էր տիրում, բայց երբ կառավարության մեջ չկար Ռեշիդ փաշան, Կ. Պոլսում կատարվեց կրոնական մոլեռանդության մի քստմնելի տեսարան, որի հեղինակն ինքը կառավարությունն էր և որ ոտքի կանգնեցրեց եվրոպական ամբողջ դիվանագիտությունը։ Հովակիմ անունով մի հայ երիտասարդ հրապարակով գլխատվեց այն պատճառով, որ չորս տարի առաջ ընդունել էր մահմեդականություն, բայց հետո զղջացել էր և էլի վերադարձել էր քրիստոնեության։ Անգլիական դեսպանի ազդու միջնորդությունն անգամ չկարողացավ փրկել դժբախտ երիտասարդի կյանքը։ Թուրք մինիստրների ժողովը մերժեց ազատել հավատուրաց մահմեդականին և դեսպանի առջև պատճառաբանեց այդ մերժումը նրանով, որ մահմեդական ամբոխն ապստամբություն կբարձրացներ, եթե տեսներ իր հավատն անարգողին ազատ բաց թողնված։ Անգլիական դեսպանը իր կառավարության առջև հարց է դարձնում վերանորոգվող Թուրքիայի այս նոր բարբարոսությունը։ Անգլիական կառավարությունը համաձայնություն է կայացնում եվրոպական մյուս պետությունների հետ և միահամուռ ճնշում է գործադրվում թուրքաց կառավարության վրա, հարկադրելով նրան գործադրել լայն կրոնական թույլտվություն, այսինքն որ ամեն մեկը միանգամայն ազատ լինի իր համար հավատ ընտրելու մեջ։ Այդ ժամանակից է, որ քրիստոնյաներն ստանում էին զանգակատներ շինելու՝ զանգահարության իրավունք։ Սակայն պետք է իմանալ, որ այս թույլտվությունը գլխավորապես միայն Կ. Պոլսի մեջ էր կիրառվում, իսկ կենտրոնից հեռու տեղերում առաջվա պես թագավորում էր մահմեդական կույր և սանձարձակ մոլեռանդությունը։ Այսպես էր և Թանզիմաթի գործադրությունը։ Թեև նա պաշտոնապես մտցվել էր ամեն տեղ, բայց Կ. Պոլիսն էր այն տեղը, ուր ամենից հեշտ էր սպասել, թե նա կիրագործե իր սկզբունքներից շատերը։ Կ. Պոլսից հետո համեմատական չափով նպաստավոր հող ներկայացնում էր Եվրոպական Թուրքիան, մինչդեռ

Ասիական Թուրքիայում Թանզիմաթի գործադրությունը բախվեց մեծամեծ արգելքների։

Չնայած այս բոլորին, չի կարելի ասել, թե Թանզիմաթը արդյունքներ չունեցավ կամ նույնիսկ քիչ ունեցավ։ Եթե նա չիրագործեց հավասարության, գույքի և պատվի ապահովության սկզբունքները, գոնե դրեց նրանց հարցը։ Եվ այս կողմից իսկապես ահագին էր նրա նշանակությունը մանավանդ քրիստոնյա ազգությունների համար, ոգևորելով նրանց իրենց իրավունքի գիտակցությամբ և տանելով նրանց դեպի քաղաքական շարժումներ՝ Թանզիմաթի խոստումներն իրական իրավունքներ դարձնելու համար։

5. Թուրքահայերը միջազգային մրցակցությունների առարկա։ Մենք տեսանք, որ թուրքահայ գավառական ժողովուրդն իր ծանր ստրկական դրությունից դուրս գալու համար մի-միակ միջոց էր գտնում բնազդային ըմբռնումով—հպատակության փոփոխությունը կամ ուրիշ խոսքով, ռուսական տիրապետության տակ մտնելը և այս կողմից նա, գավառաբնակ հայությունը տարերային մղումով հակառակ էր գնում Կ. Պոլսի իր գաղութին, չնայած որ այս վերջինն էր իր ազգային իշխանությունը, իր ճակատագրի տնօրենը։ Թուրքահայ ազատագրական հոսանքն այս կերպարանքն ուներ մինչև 1840-ական թվականները—մի պարզ ժողովրդական շարժում, զանգվածային ինքնապահպանման մի բնազդային մղում, առանց քաղաքական գաղափարախոսության, առանց արհեստորեն հերյուրած կառուցվածքների։ Այս հայոց մի հարց էր, դրված այնպես, ինչպես կարող էր դնել ինքը, այդ հարցի ամբողջ ծանրության տակ ճմլված ժողովուրդը, սակայն քառասնական թվականներից թուրքահայության հարցն ընդունում է միջազգային հանգամանք, և հայ ժողովուրդը սկսում է դառնալ Թուրքիայում իրար դեմ մրցող պետությունների ուշադրության, խաղերի առարկա, և այս ժամանակից էլ գավառաբնակ հայության ճակատագրի տնօրինության գործը, նոր հանգամանքների թելադրման եղանակով, կենտրոնանում էր Կ. Պոլսի գաղութի մեջ, առանց գավառական հայության մասնակցության, թողնելով այդ ժողովրդական հոծ բազմություններն իրենց հին աշխարհայացքի, այն է՝ ամեն փրկություն հպատակության փոփոխության մեջ որոնելու հետ։

Եթե մենք որոնելու լինենք այն ուժը, որ այդպիսի դիրք էր տալիս թուրքահայ ժողովրդին միջազգային մրցարանում, մեր առջև կանգ կառնի մի հանգամանք—ստվարաթիվ և ազդեցիկ մի ժողովուրդ, որ մի ինքնուրույն կրոնական համայնք էր կազմում։ Արդեն օտար մրցող պետությունների ուժն ու միջամտության կռվանը Թուրքիայի պես մի աստվածապետական երկրում կազմում էր կրոնի պաշտպանությունը։ Ֆրանսիան գործունյա և պահանջող էր թուրքական ներքին գործերում այն պատճառով, որ նա ճանաչված էր կաթոլիկ կրոնի պաշտպան և հովանավոր Թուրքիայի սահմանների մեջ։ Ռուսաստանն իր հաղթական պատերազմների հետևանքով միայն երկրներ չէր խլում Թուրքիայից, այլև աշխատում էր իրականացնել դրանից ոչ պակաս կարևոր մի պետական ձգտում և այս նպատակով հարկադրում էր հաղթված թուրքին ճանաչել իրեն հունադավան կամ օրթոդոքս եկեղեցու պաշտպան և հովանավոր։ Եվ որովհետև օրթոդոքս եկեղեցուն պատկանում էին Թուրքիայում քրիստոնեության մեծամասնություն կազմող ժողովուրդները, ուստի Ռուսաստանի ազդեցությունն իսկապես ահագին էր սուլթանների պետության մեջ։

Հայերն իրենց անկախ և ինքնագլուխ եկեղեցով բոլորովին առանձնացած մի խմբակցություն էին կազմում Թուրքիայի քրիստոնյաների մեջ, որ ըստ երևույթին, չպիտի ենթարկված լիներ օտար որևէ պետության ազդեցության, քանի որ չկար մի պետություն, որ նրա դավանակիցը լիներ, մի հանգամանք,

որ շատ կարևոր էր հովանավորվածի մեջ սերտ կապեր հաստատելու համար։ Բայց և այնպես—հայերը պիտի այս կամ այն կերպով համակրություն ցույց տային դեպի Թուրքիայում դիրք. բռնած քրիստոնյա պետություններից։ Ո՞ւմ կողմը բռնել։ Այս հարցը պիտի որոշեին միմիայն հայ եկեղեցականության շահերը։ Ֆրանսիայի հովանավորած կաթոլիկությունը չէր կարող գրավել հայ հոգևորականությունը, որովհետև այդ կրոնը պահանջում էր կատարյալ և անվերապահ հպատակություն, որ պիտի ոչնչացներ հայ եկեղեցու անկախությունը, կամ որ նույնն է, հայ հոգևորականության խոշոր տիրապետական շահերը։ Այսպես էր և օրթոդոքսությունը։ Նա էլ ֆանատիկոսորեն ատում էր հայոց եկեղեցին, բայց ռուսաց արտաքին քաղաքականության մեջ շատ, իհարկե, պարզ նպատակներով ցույց էր տալիս, ինչպես արդեն շատ անգամ տեսանք Պարսկական Անդրկովկասում, լայն համբերողություն, որ թույլ էր տալիս հայ հոգևորականությանը պահպանել իր անկախ և տիրապետող դիրքը։ Այսպիսով ռուսական քաղաքականության և հայ հոգևորական դասի մեջ հարաբերությունները մշակվում էին լոկ կրոնակցական հողի վրա, առանց սուր դավանակցական շփումներ առաջացնելու։ Եվ հասկանալի է, որ հայ հոգևորականությունը Թուրքիայում մրցող կրոնական-քաղաքական ազդեցություններից պիտի հակվեր դեպի ռուսականը, որ ավելի էր համապատասխանում նրա շահերին։ Իր շահերը շատ լավ հասկանում էր, անկասկած, և ռուսաց քաղաքականությունը։ Էջմիածնին տիրապետելուց հետո նա նկատում էր բոլոր թուրքահայերին իբրև իր բարեկամներ և երբ տեսնում էր, որ կաթոլիկ պրոպագանդը թուրքահայերի մեջ կարողանում էր այս կամ այն չափով հաջողություն վաստակել, այս բացատրում էր իբրև մի բան, որ նշանակում էր, թե նա, ուրեմն, զրկվել է այսքան ու այսքան բարեկամներից։ Այստեղից ռուս քաղաքականության ձգտումը Ռուսաստանի սահմաններից դուրս—հայ-լուսավորչականության ամբողջության պահպանումը օտար պրոպագանդներին դիմադրելու միջոցով։

Սակայն այսպիսի մի գործունեություն արդյունավորելու համար ռուսաց քաղաքականության առջև ծառանում էր մի խոշոր խոչընդոտ։ Այդ այն էր, որ նրա ձեռքին գտնվող ամենաուժեղ գործիքը—Էջմիածնի կաթողիկոսությունը կորցրել էր իր հեղինակությունը թուրքահայերի մեջ։ Մենք արդեն տեսանք իր տեղում, որ երբ Եփրեմ կաթողիկոսը փախավ Հաղպատ և չկամեցավ վերադառնալ իր աթոռը, Կ. Պոլսի հայ հոգևորականությունը, միշտ գործիք ամիրայական դասակարգի ձեռքին, կարգադրեց, որ Թուրքիայի հայոց եկեղեցիներում այլևս չհիշատակվի նրա անունը։ Այս մի պարագա էր, որ ավելի ևս խորացնում ու լայնացնում էին ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները։ Կ. Պոլսի Հակոբոս պատրիարքի մի նամակից, որ 1840-ական թվականներին ուղղված էր Ներսես կաթողիկոսին, մենք իմանում ենք, որ երբ վերջացավ ռուս-պարսկական պատերազմը, Ֆաթալի շահը գրեց սուլթան Մահմուդին, որ եթե չլինեին հայերը և գլխավորապես Էջմիածնի հայ հոգևորականները, ռուսները չէին հաղթի պարսիկներին և խորհուրդ էր տալիս, որ սուլթանը խրատ առնե այս օրինակից։ Այս, իհարկե, մեծ չափազանցություն էր, որ այնուամենայնիվ, որոշ ազդեցություն թողեց սուլթանի վրա, մանավանդ որ նա էլ էր տեսել հայերի խիստ բացասական դերը ռուս-թուրքական պատերազմի մեջ և իրավունք ուներ այդ դերը մեծ մասամբ վերագրելու Էջմիածնի ազդեցության։ Հիշեցինք արդեն, որ Եփրեմ կաթողիկոսն էր, որ կոնդակներ էր գրում թուրքահայերին ամեն կերպ ձեռնատու լինել ռուսական արշավանքին և այս կոնդակներն ընկնում էին թուրքաց հրամանատարության ձեռքը։ Այս բոլորի հետևանքն այն է լինում, որ թուրքաց կա-

ռավարությունը հրամայում է, որ հայերը որևէ հարաբերություն չունենան էջմիածնի հետ։

1830 թվականին խղճուկ Եփրեմը հրաժարական է տալիս Նիկոլայ կայսրին և քաշվում է գործերից։ Նրա տեղ Պասկևիչը ընտրել է տալիս Ներսես Աշտարակեցու անհաշտ թշնամի, հետևապես իր բարեկամ Հովհաննես Կարբեցուն, որի կաթողիկոսության ժամանակ էջմիածինը դառնում էր կուսակցական կատաղի և խայտառակ կռիվների ասպարեզ։ Ռուս բյուրոկրատիայի սարքած ու ղեկավարած այս «ընտրությանը» չէին մասնակցել թուրքահայերը։ Եվ այնուամենայնիվ, Հովհաննես Կարբեցին հավակնություն ուներ պահանջելու, որ Կ. Պոլսի հայությունը ճանաչե իրեն կաթողիկոս ամենայն հայոց և վերանորոգե իր բոլոր հարաբերություններն էջմիածնի հետ։ Հետաքրքրականն այն է, որ Հովհաննես կաթողիկոսը ենթարկվելով ռուսաց կառավարության ներշնչումներին, Կ. Պոլսի հայոց պատրիարքի և առհասարակ հոգևորականության հետ այս առիթով խոսք էր ունենում ոչ թե սովորական եղանակով, այսինքն նամակագրության կամ պատվիրակության միջոցով, այլ ռուսաց արտաքին գործերի միջոցով, այնպես որ Կ. Պոլսի ռուսաց դեսպանն էր, որ առաջին անգամը լինելով, ստանձնում էր հայոց կաթողիկոսի ներկայացուցչի դեր, խոսում էր նրա անունից Կ. Պոլսի հայոց պատրիարքի հետ և վերջինիս պատասխաններն ուղարկում էր էջմիածին Պետերբուրգի արտաքին գործերի մինիստրության միջոցով։ Կ. Պոլսի հայոց Ստեփանոս պատրիարքը «Աղավնի» կոչված, բավական տոկունությամբ էր դիմադրում էջմիածնի պահանջներին։ Հանձն առնելով որոշ բարոյական պարտականություններ կատարել ամենայն հայոց աթոռի վերաբերմամբ (մեռոն բերել տալ այնտեղից, եկեղեցիներում գանձանակ հաստատել հօգուտ էջմիածնի), պատրիարքը բացեիբաց մերժում էր անմիջապես հարաբերություններ սկսել Հովհաննես կաթողիկոսի հետ, հիշատակել նրա անունը պատարագի մեջ։ էջմիածնական պահանջների մեջ կար մի շատ կարևոր կետ.— այն, որ էջմիածնից մի եպիսկոպոս ուղարկվի Կ. Պոլիս կաթողիկոսի փոխանորդի կամ հավատարմատարի (վեքիլ) պաշտոնով, էջմիածնին պատկանող կալվածների և հասույթների վրա հսկելու համար։ Կ. Պոլսի հոգևորականությունը, անշուշտ, կռահելով, որ այս առաքելության մեջ քաղաքական հանգամանք էլ կա, հրաժարվեց ընդունել մի այսպիսի ներկայացուցիչ, առարկելով, թե նրա պաշտոնը կարելի է հանձնել և մի թուրքահայ եպիսկոպոսի՝ պատրիարքի հսկողության տակ։

Դիվանագիտական վեճը, որի մեջ մասնակցություն ունեին նաև թուրքաց և ռուսաց արտաքին գործերի մինիստրությունները, տևեց գրեթե ինը տարի և տվեց շատ փոքրիկ արդյունքներ ռուսական դիվանագիտության հաղթանակի տեսակետից, այնպես որ Կ. Պոլսի ռուսաց դեսպան Բուտենևը գրում էր, թե պետք է բավականանալ ձեռք բերածով, քանի որ ավելին անհնարին է տվյալ քաղաքական պայմանների մեջ։ Թեև հայ հոգևորականությունն իր վարմունքն արդարացնում էր սուլթանական կառավարության արգելքով և ներշնչած երկյուղով, բայց ռուս դիվանագիտությունը պարզ տեսնում էր, որ մեջտեղ գործողը միայն այդ հանգամանքը չէր, այլ նրա վրա ավելացել էին և հայ հոգևորականության փառասիրական տենչերը։ Ուզում էին օգուտ քաղել ստեղծված նպաստավոր պայմաններից և միանգամայն ընդմիշտ կտրելով կապը էջմիածնի հետ, այդպիսով բարձրացնել Կ. Պոլսի հայոց պատրիարքության նշանակությունը։ Այս մի անթույլատրելի ոտնձգություն էր նաև ռուսաց քաղաքականության տեսակետից, որի համար էջմիածնի աթոռի ընդհանրական հանգամանքը խոշոր նշանակություն ուներ արևելյան գործերի որոշ ընագավառի մեջ։ Եվ սակայն, Արևելքում հասունանում էին դրություններ,

որոնք գալիս էին սահմանափակելու և թուլացնելու էջմիածնի միջազգային հեղինակությունը։ Այսպես, կաթոլիկ աքսորված հայերը վերադարձել էին Կ. Պոլիս և իրենց սեփական եկեղեցական կառավարությունն էին ստացել։ Այս, իհարկե, մի վերին աստիճանի ուրախալի ձեռքբերում էր հայ ժողովրդի խակական շահերի տեսակետից, բայց կղերական տիրապետության շահերի և այդ տիրապետությունից նաև քաղաքական շահեր հուսող դիվանագիտության տեսակետից այդ ոչ միայն հեղինակության պակասեցում էր ըստինքյան, այլև մի վտանգավոր դրություն, քանի որ թույլ էր տալիս ազատ ու համարձակ պրոպագանդայով փոքրացնել էջմիածնական ծուխը։ Մի երրորդ, ավելի վտանգավոր փաստն էլ այն էր, որ հենց այդ միջոցին թուրքահայության ներսում երևան էր եկել մի նոր կրոնական հերձված-բողոքականությունը։

Քսանական թվականների վերջերից է, որ Թուրքիայի սահմաններն են մտնում ամերիկական միսիոներները, բերելով իրենց հետ և փող, և գիտություն, և քարոզչական անհատնում եռանդ՝ քրիստոնյա ժողովուրդներն «ուղիղ ճանապարհի», այսինքն դավանափոխության բերելու համար։ Կ. Պոլսում և ուրիշ տեղերում նրանք բաց են անում դպրոցներ, տպարաններ, գրքեր են հրատարակում և հավաքում են հավատացյալների մի փոքրիկ հոտ, որի մեջ կարևոր տեղ են բռնում հայերը։ Երևույթը զուտ կրոնական չէ. Արևելքում կրոնը գերազանցորեն քաղաքական հիմնարկություն է։ Բողոքականությունը հենց այն ակնկալված դրությունն էր, որ անգլիական քաղաքականությանը պակասում էր վաղուց հետե Թուրքիայում։ Անգլիան էլ, Ֆրանսիայի և Ռուսաստանի նման կարող կլիներ իր քաղաքական ազդեցությունը խարսխել կրոնի պաշտպանության և հովանավորության վրա։ Հասկանալի է, որ նա կարող էր միայն խրախուսել և պաշտպանել Թուրքիայում նոր սկսված կրոնական շարժումը։ Այս ուղղությամբ ավելի մեծ հաջողություն ձեռք բերելու համար անգլիական քաղաքականությունը հրապարակ է նետում իր խորամանկ խաղերից մեկը։ Եվրոպական գրականության մեջ ակնարկներ կան, որ նա կամենալով բողոքականության կողմը քաշել ամբողջ հայ ժողովուրդը, կազմում է ծրագիր, որ բողոքական կրոնով Հայաստանը ստանա առանձին քաղաքական ինքնավար կազմակերպություն՝ առանձին քրիստոնյա իշխանի կառավարության տակ։ Այսպես, ուրեմն, դեռ 1840-ական թվականներին էր, որ թուրքահայ ժողովուրդը դառնում էր Թուրքիայում մրցող պետությունների համար մի առարկա, որ կարելի էր խաղացնել, շահագործել, վերջում, իհարկե, խաբելու համար։ Ով լավ ծանոթ է Թուրքիայում գործած արևմտյան քաղաքականության, նա երբեք չի ընդունի, թե Անգլիան թույլ կտար որևէ ազգության համար խախտել Թուրքիայի ամբողջության և անձեռնմխելիության սկզբունքը, որ ինչպես գիտենք, սրբության սրբոց էր կազմում արևմտյան քաղաքականության համար։ Եվ եթե այնուամենայնիվ, հրապարակ էր նետվում Հայաստանի նորօրինակ ինքնօրինության միտքը, այդ պարզապես դիվանագիտական նպատակով էր կամ խոսենք մեր սովորական լեզվով, խաբեական նպատակով։ Կարելի է այս գլխից ասել, որ հայ ժողովուրդը մեծ դժբախտություն էր ունենում մտնելու միջազգային գիշատիչ հաշիվների, առուծախի, շահագործումների ջրապտույտի մեջ։

Ռուսաստանն, իհարկե, շատ լավ էր հասկանում նոր կրոնական շարժման քաղաքական նշանակությունը։ Այդ այն ժամանակն էր, երբ Անգլիան ու Ֆրանսիան խլել էին նրա ձեռքից Հյունքյար Իսկիլեսիի դաշնագրության բոլոր օգուտները և ռուսական բացառիկ ուժեղ ազդեցությունը Թուրքիայի մայրաքաղաքում տեղի էր տվել անգլիականին։ Ռուսական դիվանագիտության առ-

ջև մեծ հոգս էր դրված մրցելու այդ նոր քաղաքական դրության դեմ և նրա ձեռքին եղած միջոցներից մեկն էր դառնում այն պայքարը, որ կարելի էր մղել անգլիական ազդեցության դեմ հայ հոգևորականության միջոցով։ Յուրաքանչյուր բողոքական հայի ետևում նրան երևում էր Անգլիան, ուստի առաջնակարգ կարևորություն էր ստանում հայերի մեջ սկսված բողոքականության շարժման դադարեցումը։ Դրա համար հարկավոր էր, որ էջմիածինը չկորցնե իր համահայկական հեղինակությունը։ Եվ ռուսաց կառավարությունը միաժամանակ եռանդոտ գործունեություն է սկսում, թե Կովկասում և թե Կ. Պոլսում։

1842 թվականին վախճանվում է Հովհաննես Կարբեցի կաթողիկոսը։ Նորի ընտրությունը պիտի կատարվեր արդեն Պոլոժենիեի կանոններով։ Եվ այս բախտին Նիկոլայ կայսրը վճռում էր արժանացնել Քիշինևի իր աքսորականին, Ներսես Աշտարակեցուն։ Թեև դեռ կենդանի էր Պասկևիչը և լեհական ապստամբությունը արյան մեջ խեղդած լինելու «փառքով» ավելի ևս ճոխացած, ավելի ևս հզոր և բարձր դիրք ստացած, բայց Ներսեսն այլևս պետական վտանգ չէր համարվում։ Ընդհակառակը, այժմ նա չափազանց հարկավոր էր պետության, որպեսզի իր մեծ ժողովրդականությամբ և արտակարգ եռանդով հաղթանակներ պատրաստե ռուսական քաղաքականության համար։ Այս հաշիվն, իհարկե, սխալ չէր։ Նիկոլայն իսկույն հաստատում է էջմիածնում կատարված ընտրությունը և Ներսեսին հրավիրում է, նախքան էջմիածին ուղևորվելը գալ Պետերբուրգ իր տեսության։ Աշտարակեցին վերջապես բախտ է ունենում տեսնելու իր պաշտած կայսրին, խոսելու նրա հետ։ Իր կոնդակներում նա մեծ ոգևորությամբ նկարագրում է իր առաջին ընդունելությունը, ասում է թե խոսակցություն եղավ շատ բաների մասին։ Ազգասիրական առասպելախոսությունը դեռ այն ժամանակները դրել էր իր ստեղծած բովանդակությունն այդ անորոշ խոսքերի մեջ։ Եթե ուզում եք իմանալ, թե ինչ էր ուզում հայ ազգասիրությունը, որ խոսված լիներ գոռոզ ու խստաբարո Ռոմանովի և նրա վեղարավոր հպատակի մեջ, վերցրեք Ավետիս վարժապետ Պերպերյանի «Պատմություն Հայոցը», որ տպված է Կ. Պոլսում 1871 թվին։ Այստեղ Նիկոլայը ներկայացված է Ներսեսի առջև աղաչավոր, մեղք խոստովանող և թողության կարոտ հանցագործի դիրքում։ Խոսքն, իհարկե, մեզ ծանոթ կախարդական թղթի մասին է, որ իբր թե ստորագրվել էր Պասկևիչի և Նիկոլայի կողմից, պարտավորվելով Ներսեսի առաջ ստեղծել մի ազատ և ինքնավար Հայաստան։ Այժմ իբր թե Ներսեսը հանդիմանում էր Նիկոլային, թե ինչու նա չի կատարել իր գրավոր խոստումը, իսկ Նիկոլայն արդարանում էր, իբր թե, բերելով ինչպես ասվում է, «հանցանքի մեղմացուցիչ հանգամանքներ»։

Այսպիսի բան ռուսական բռնապետության մեջ չէր էլ կարող պատահել։ Եվ Նիկոլայի խոսակցությունն, անշուշտ, Կ. Պոլսում էջմիածնի նախկին հեղինակությունը վերականգնելու մասին էր։ Այս բանն իսկ որ, հաջողվում էր, թեև ոչ նախկին չափերով։ Ռուսական դիվանագիտությունն այժմ ավելի եռանդով էր աշխատում Թուրքաց մայրաքաղաքի մեջ և արդեն կարողացել էր կազմել հայ հոգևորականների մեջ ռուսասեր մի հոսանք, որի ներկայացուցիչն էր Մատթեոս արքեպիսկոպոս Չուխաճյանը, Կ. Պոլսի հայոց պատրիարքը։ Սա իր համար խոշոր գործ էր համարում, որ կարողացավ ժողովել Կ. Պոլսի հայերից շատերին և համոզել նրանց, որ ճանաչեն Ներսեսին ամենայն հայոց կաթողիկոս և հիշատակեն նրա անունը պատարագի մեջ։ Ռուսաց դեսպանի հաջողակ գործողությունների արդյունք էր, որ Թուրքաց կառավարությունն այլևս արգելող չհանդիսացավ այս բանի մեջ։ Այսպիսով շտկվում էր խանգարված հարաբերությունների հարցը և էջմիածինը տանում էր կատարյալ հաղթանակ, ոչնչացնելով իր դեմ եղած ոտնձգությունները։

Այժմ ռուսական դիվանագիտությունը կարող էր ուղղել իր ձեռքով սարքված այդ մեքենան անգլիական ազդեցության դեմ։ Բողոքականությունն օրավուր աճում էր Թուրքիայում, հայ եկեղեցու պաշտոնյաներն անգամ — եպիսկոպոս, քահանա ընդունում էին նոր կրոնը։ էջմիածնի դիվանում այսօր էլ կարելի է տեսնել ռուսաց բարձր կառավարությունից Ներսեսին ուղարկված մի «գաղտնի».գրություն, որի մեջ անհանգստություն է արտահայտված բողոքականության տարածման առիթով և ցանկություն է հայտնված, որ Ներսեսն ամեն տեսակ միջոցներ ձեռք առնե՝ այդ վտանգավոր շարժումը կանգնեցնելու համար։ Թղթի մեջ շարժումը վտանգավոր էր համարվում լոկ հայոց եկեղեցու շահերի տեսակետից, նրա ամբողջությունը և ուժը պահպանելու տեսակետից միայն։ Սակայն մենք արդեն գիտենք, որ այս մի այնպիսի տեսակետ չէր, որի համար ռուսաց դիվանագիտությունը հանձն առներ կամավորապես խաչվելու հոժարությունը։ Իսկական փորձացավը հայտնի էր, և ամենից լավ՝ իհարկե, հենց իրեն Ներսեսին։ Բայց այս մարդն իր ամբողջ կյանքում դարձած լինելով ցարական քաղաքականության կույր գործիք, այժմ իհարկե, չէր կարող ազատագրվել այդ դերից։ Եվրոպական գրականության մեջ մենք ունենք լավատեղյակ ցուցմունք, թե Ներսեսն էր, որ առաջարկեց Մատթեոս պատրիարքին խիստ միջոցներ ձեռք առնել նորադարձ աղանդավորների դեմ։ Արդեն Մատթեոս պատրիարքն էլ մանրամասն հրահանգների կարիք չուներ, քանի որ լավ մշակված էր այս ուղղությամբ ռուսաց դեսպանության կողմից, որի պարզ գործակատարն էր դարձել։ Պետք է ասել, որ այս հոգևորականը բավական բեղմնավոր գրչի տեր էր, համարում էր իրեն հմուտ և հեղինակավոր աստվածաբան հայ լուսավորչական եկեղեցու, որ գրում էր, վիճում էր այդ եկեղեցու պաշտպանության համար։ Սակայն նրա այդ «գիտությունը» միանգամայն անգիտություն հանդիսացավ համալսարանական ուսում ստացած ամերիկական միսիոներների հանդեպ, և այս պատճառով նա թողնելով գրքի և գրչի ճանապարհը, կոպիտ ու կատաղի հալածանքների ճանապարհն էր ընտրում, այն էլ իհարկե, ոչ թե միսիոներների դեմ, այլ այն հայերի դեմ, որոնք աղքատությունից և տգիտությունից ստիպված՝ դառնում էին բողոքական։ Այս պատրիարքական հալածանքները Թուրքիայի եվրոպացի պատմագիրներից մեկն անվանում էր «միջին դարերի ամենաբարբարոսական ժամանակները հիշեցնող», այսինքն այնպիսի մի երևույթ, որ ամենից առաջ վկայում էր թե հայ ժողովրդի դժբախտությունը որքան դեռ մեծ է իր հոգևորականների բռնակալության տակ։ Մատթեոսին աջակցում էր ամիրայական դասակարգը, նպաստավոր վերաբերմունք ստեղծելով դեպի կրոնական հալածանքները Թուրքաց բարձր կառավարչական շրջաններում։ Այսպես ամիրաներին գործել պարտավորեցնում էին նրանց դասակարգային շահերը։ Չէ՞ որ լուսավորչական եկեղեցին իր պատրիարքական իշխանությամբ նրանց համար եղել էր միշտ կթան կով, և թուլացնել, շատ ուժերից զրկել այդ կաթնատուն, համազոր կլիներ ինքնասպանության։ Մատթեոս պատրիարքը թե իր կոնդակներում և թե իր եկեղեցական քարոզների մեջ անեծքներ ու բանադրանքներ էր որոտում թե առանձին անհատների և թե առհասարակ այն բոլորի դեմ, որոնք մտնում են բողոքական եկեղեցու մեջ։ Նա ասում էր. «Ով բողոքականների մեջ ունի որդի, եղբայր կամ բարեկամ և տալիս է նրան մի կտոր հաց, հնարավորություն է տալիս, որ նա աշխատի, ով նրա հետ վարվում է բարեկամաբար, այնպիսին մեծացնում է իր մոտ մի թունավոր օձ, որ երբևիցե նրան զգալ կտա իր խայթը և կոչնչացնե նրան։ Ով հու-

դային հաց կտա, այնպիսին իր սուրբ հավատի թշնամին է, հայոց սուրբ եկեղեցու կործանիչ և իր ազգի ամոթը»։ Բանտարկել, աքսորել, որքան այդ մտնում էր պատրիարքական իրավունքների մեջ, Մատթեոսն, իհարկե, չէր խնայում։ Իսկ եթե հարկավոր էր համարվում անհնազանդներին աքսորել հեռավոր վայրեր, այս դեպքում դիմում էին թուրք կառավարությանը, որ և կատարում էր այդ պահանջները։ Բայց այս բոլորը խեղճ բաներ էին, համեմատությամբ այն մեծ դժբախտության, որի մեջ ընկան այն խեղճ ու աղքատ արհեստավորները, մանր խանութպանները, որոնք մտել էին բողոքականների շարքերը։ Նրանք ենթարկվեցին լուսավորչական հայերի բոյկոտին. այդպիսիներին գործ չէին տալիս, նրանց խանութներից ոչինչ չէին գնում, իսկ որ ամենից սոսկալին էր՝ կենսական մթերքներ չէին ծախում բողոքական հայերին։

Չի կարելի ասել, թե այս վայրենությունները կատարվում էին առանց էջմիածնի կաթողիկոսի գիտության։ Ներսեսը համակրում էր Մատթեոսին և վարձատրում էր նրա հավատարիմ և եռանդուն ծառայությունը մեծարժեք պարգևներով։ Հիմնավորապես մոռացվում էր սակայն, այն հին ճշմարտությունը, թե հալածելը տարածել է։ Հայ բողոքականությունն այդպիսի բանբով, իհարկե, չսպանվեց, այլ առաջ բերեց մի երևույթ, որ հարկավ, չէր մտնում ռուս դիվանագիտության հաշիվների մեջ—անգլիական ազդեցության ուժեղացումը։ Կ. Պոլսի անգլիական հռչակավոր դեսպան Ստրասֆորդ Քեննինգը կենտրոնացրեց իր և բողոքական մյուս պետությունների (Ամերիկայի, Պրուսիայի) դեսպանների ուժը հայ բողոքականների պաշտպանության շուրջը և մեծ եռանդով առաջ տանելով այդ գործը, տարիների ընթացքում հաջողացրեց ստանալ թուրք կառավարության համաձայնությունը, որ բողոքական հայերը կազմեն առանձին և անկախ կրոնական համայնք՝ իրենց սեփական ազգային վարչությամբ։

Տանուլ տալով մի ամբողջ դիվանագիտական արշավանք հայ բողոքականության վտանգի և էջմիածնի պայծառության նշանի տակ, ռուսական քաղաքականությունը չէր հուսահատվում, այլ փոխելով իր ընթացքը, ուրիշ ճանապարհով էր տանում հայոց եկեղեցու շահագործման ծրագիրը։ Այս անգամ ձեռնարկության հիմքը դրվում էր Կ. Պոլսում։ Ռուսաց դեսպանատան ներշնչումների տակ է ընկնում Մատթեոսին հաջորդած Հակոբոս պատրիարքը մի քանի ազդեցիկ ամիրաների և մանավանդ, պատրիարքարանում կարևոր պաշտոնական դիրք ունեցող և առաջավոր ու զարգացած անձի համբավ ունեցող Հակոբ Կրճիկյանի հետ։ Այս շրջաններում ռուսական դեսպան Տիտովի գաղափարները պարզում և բացատրում էր դեսպանատան հայազգի պաշտոնյաներից մեկը, Մատթեոս Ղամաղյան, որ Ներսեսի անձնական բարեկամն էր և շարունակ նամակագրություն ուներ նրա հետ։ Պրոպագանդան այս մտքով էր ձևակերպվում.— Թուրքիայի լուսավորչական հայերն իրենց միանգամայն անպաշտպան են զգում, ուստի և խնդրում են, որ Ռուսաստանը նրանց ընդունե իր հովանավորության տակ։ Այսպիսի տրամադրություն պատրաստվում էր, իհարկե, տարիների ընթացքում։ Հակոբոս պատրիարքը մի նախափորձ կատարելով, 1852 թվականին դիմում է Ներսեսին մի նամակով, որի մեջ դառնապես գանգատվում էր թուրքահայերի իրավազուրկ դրության վրա։ Թուրքաց կառավարությունը,— ասում էր նա,— միանգամայն լքել է իր լուսավորչական հայ հպատակներին, ոչինչ ուշադրություն չի դարձնում նրանց գանգատների և հայցվածքների վրա, մինչդեռ հայերից նոր բաժանված փոքրիկ համայքները—կաթոլիկ և բողոքական—լավագույն կերպով պաշտպանված են ֆրանսիական և անգլիական դեսպանների կողմից, այնպես որ կարողանում

են մինչև իսկ ճնշել լուսավորչական հայերին։ Այսպիսով կատարյալ անհրաժեշտություն է ստեղծվել, որ հայ լուսավորչական համայնքն էլ ունենա իր պաշտպանը դրսի ուժեղ պետություններից մեկի մեջ։ Եվ որովհետև Ռուսաստանն էր, որ կարող էր այդպիսի մի դեր ստանձնել, ուստի պատրիարքն աղաչում էր Ներսեսին, որ նա պաշտպանե այդ պաշտպանությունը։

Շատ չանցած՝ Մատթեոս Ղամաղյանն էլ գրում էր Ներսեսին, թե իրեն դիմեցին Հակոբոս պատրիարքը, Կրճիկյանը և ուրիշ «երևելի» հայեր, որոնք պատմելով Հայաստանի գավառներում տեղի ունեցող անտանելի հարստահարություններն ու կեղեքումները, ցանկություն հայտնեցին մտնելու Ռուսաստանի հովանավորության տակ, իսկ ինքը, կատարելով դեսպանի հրահանգը, պատասխանեց նրանց, թե ռուսական պաշտպանություն կտրվի թուրքահայերին, դրա համար պետք է դիմում անել, իսկ դիմումի ուղիղ ճանապարհը էջմիածինն է։ Եվ իրավ, Կ. Պոլսի ռուսաց դեսպանությունը Կովկասի փոխարքայի միջոցով ուղարկում է Ներսեսին Հակոբոս պատրիարքի և նրա համախոհների ստորագրությունները կրող պաշտոնական հայտարարությունը՝ ռուսական հովանավորությունը խնդրելու մասին։

Ինչ արավ Ներսեսն այս թուղթը ստանալուց հետո։ Հավանական է, որ ոչինչ անել կարողացած չլինի, քանի որ շուտով վրա հասավ երրորդ ռուս-թուրքական կամ Ղրիմի պատերազմը, որ տևեց երկու տարի։ Բայց որ Ներսեսը չէր կարող հակառակ լինել ռուսների ձեռքով պատրաստված քաղաքական ծրագրին—այս հասկանալի է ըստինքյան։ Պետերբուրգի կառավարությունը, էջմիածնի քաղաքական նշանակությունը Կ. Պոլսում հաստատ հիմքերի վրա դնելու համար, կարևոր էր համարում դիմել այն միջոցին, որ մի անգամ արդեն մերժվել էր Կ. Պոլսի հայերի կողմից, այն է՝ հաստատել էջմիածնական կաթողիկոսի փոխանորդություն սուլթանների մայրաքաղաքում, ուստի և առաջարկում էր Ներսեսին այնտեղ ուղարկել իր ժիր ու ընդունակ հոգևորականներից մեկին։ Ներսեսն ընդունեց այս առաջարկը և հայտնեց ներքին գործերի մինիստրին, թե նկատի ունի Սարգիս եպիսկոպոս Հասան-Ջալալյանին։ Սակայն այս առաքումը տեղի չունեցավ նույն Ղրիմի պատերազմի պատճառով։ Ապագայում էլ, ինչպես կտեսնենք իր տեղում, ռուսական դիվանագիտությունը չլքեց փոխանորդության ծրագիրը։

6. Դասակարգային նոր շերտավորումներ և հարաբերություններ:

Ռուսական տիրապետությունը մասնավորապես և ռեֆորմների շրջանն ընդհանրապես, ստեղծելով խոշոր տնտեսական փոփոխություններ արևելյան և արևմտյան հայության մեջ, բերին իրենց հետ և խոր արմատ հեղաշրջումներ դասակարգային այն դրության մեջ, որ գոյություն ուներ հայոց պատմության սկզբում և որ մեզ արդեն ծանոթ է իր մանրամասնություններով։ Ուստի այստեղ խոսք տալով այդ հեղաշրջումներին, մենք նկատի կառնենք նրանց առանձին-առանձին, ըստ դասակարգերի, մեզ համար սահմաններ ընդունելով 19-րդ դարի առաջին կեսը։

Ա. Ազնվականություն: Ինչպես դասային և գերազանցորեն կալվածատիրական մի պետություն, Ռուսաստանը, հաստատվելով Անդրկովկասում, բնականաբար պիտի հենվեր այստեղի ազնվական դասակարգի վրա, որ Վրաստանում **թավադ—ազնաուրի** անուններն ուներ, թուրքական միջավայրում՝ **բեկ** և **աղալար** անունները, իսկ հայկական միջավայրում՝ **մելիք** անունը։ Այս իշխող դասի իրավական դրությունը պարզորեն որոշված էր միայն Վրաստանում։ Այստեղի ազնվականությունը հավասարեցված էր բուն ռուս ազնվականությանը և կրում էր նրա հիմնական անունը—«իշխան» (կնյազ)։ Այսպես չէր դրությունը թուրքական և հայկական միջավայրերում—բեկերի, աղալար-

ների և մելիքների իրավական դրությունը միանգամայն պարզ չէր ռուսական բյուրոկրատիայի համար, քանի որ նա արդյունք էր Պարսկաստանում տիրած հողային ինքնուրույն հարաբերությունների, որոնք նման չէին ճորտատիրական կարգերին, ուստի և չէին ստեղծում տիրող դասակարգի համար այնպիսի հողատիրական կարգ, որ տիրում էր Ռուսաստանում։ Այս պատճառով բեկերի, աղալարների և մելիքների դասակարգային իրավունքները վիճելի խնդիր մնացին երկար ժամանակ, մինչև որ հարցը կուսումնասիրվի հատուկ հանձնաժողովի ձեռքով, իսկ այս բյուրոկրատական աշխատանքը մեծ մասամբ անդոհացուցիչ էր դուրս գալիս։

Այս վիճելի դրությունը սակայն, չէր խանգարում, որ թուրք և հայ ազնվականները շարունակեն վայելել այն կալվածատիրական իրավունքները, որոնք գոյություն ունեին պարսից տիրապետության ժամանակ։ Որքան և տարբերություն գտնվեր ռուս, թուրք և հայ կալվածատերերի մեջ, դրանք ամենքն, այնուամենայնիվ, ընդհանրապես և սկզբունքների տեսակետից, եղբայրակիցներ էին, ինչպես ասվում է՝ «ոսկր յոսկերաց և մարմին ի մարմնե»։ Ուստի անդրկովկասյան բեկն ու մելիքը օգտվում էին այն բոլոր արտոնություններից և առավելություններից, որ բերում էր երկրին ռուս ճորտատիրական պետականությունը, որ Անդրկովկասում հաստատվելու առաջին իսկ օրից առանձին խնամք էր տանում, որ հողատիրությունն ուժեղանա թե զարգացումով և թե ճորտատիրական տնտեսության ավելացրած հարստությամբ։ Այսպես, Թիֆլիսում բացվում է դպրոց հատկապես ազնվականների համար, և որովհետև ազնվականները փախչում էին ուսումից, ուստի նրանց գրավելու համար առաջին ժամանակներում դպրոցը որոշ դրամական թոշակ էր տալիս իր ազնվական աշակերտներին։ Այդ դպրոցը հետո վերածվեց գիմնազիայի, որ կոչվում էր «ազնվականական»։ Ապագայում, երբ կառավարությունը ժամանակը հասած համարեց հոգ տանելու և իգական կրթության համար, նրա բացած իգական դպրոցը դարձյալ դասակարգային էր և կոչվում էր «ազնվական աղջիկների դպրոց»։ Գալով տնտեսական հանգամանքներին, մենք արդեն տեսանք, որ վրաց անթիվ և սակավահող իշխաններին ռուսական բյուրոկրատիան աշխատում էր հավասարեցնել ռուս կալվածատերերին, տալով նրանց գյուղացիներին կեղեքելու ավելի դաժան պատժական կամայականություններ--ճորտերին զինվորության տալը, առանց դատաստանի Սիբիր աքսորելը և այլն։

Վերցնելով ազնվական դասակարգի թվական կազմը Անդրկովկասի երեք գլխավոր ազգությունների մեջ, մենք կտեսնենք, որ ամենից փոքրաթիվը հայ ազնվականությունն էր։ Բայց այս չէր նշանակում, թե հայ աշխատավոր գյուղացիությունն ուրեմն, ամենից քիչ կեղեքվող տարրն էր անդրկովկասյան իրականության մեջ։ Ընդհակառակը, այս կողմից նա դրված էր, մյուս ազգությունների համեմատությամբ, ամենից շատ աննպաստ պայմանների մեջ, ինչպես կտեսնենք հետո։ Եթե չկար հայ հողատիրություն կամ շատ քիչ կար, նրա տեղ հայ գյուղացիության վրա տիրում էր օտարազգի, գլխավորապես թուրք կալվածատիրությունը և այս օտարազգիության հանգամանքը, ինչպես պարզ արտահայտված է ռուսաց պաշտոնական վավերագրերի մեջ, ավելի ևս անտանելի էր դարձնում հայ գյուղացիության կրած կալվածատիրական լուծը։ Ռուսաց տիրապետությունը սակայն, բերում էր իր հետ և մի այլ հանգամանք, որ թույլ էր տալիս կազմել կովկասյան ազգություններից մի նոր դասակարգ, որ թեև իր մի քանի հատկություններով զուտ ազնվական չէր, բայց մյուս դասակարգերից ավելի՝ ազնվականությանն էր հարում և շատ դեպքերում նույնիսկ ձուլվում էր ազնվականության հետ։

Այդ դասակարգը չինովնիկությունն էր։ Պետական ծառայության (զին-

վորական թե քաղաքացիական) լայն ասպարեզը բաց էր անում գլխավորապես դարձյալ ազնվականության առջև, սակայն մի շարք վերապահումների շնորհիվ այնտեղ մուտք էին գործում և շատերը ոչ արտոնված դասակարգերից։ Քաղաքացիական ծառայության մեջ աստիճան (չին) ստանալու համար հարկավոր էր ունենալ ծագում։ Արհեստավորը, գյուղացին ծագում չէր տալիս, իսկ օրինակ, գյուղի քահանան տալիս էր։ Եվ ահա նրա որդին, ծառայության մեջ մտնելով և ստանալով չին, դադարում էր հասարակ մարդ լինելուց, դառնում էր արտոնված, բեկ, անձնական ազնվական, որ կարող էր նույնիսկ գյուղեր էլ գնել և դառնալ այդպիսով իսկական ազնվական։ Այս արտոնությունները, այս «ազատ» պատվավոր և իրավատեր մարդու դրությունը չափազանց գրավիչ էր մանավանդ առևտրական դասակարգի համար, որ և միջոցներ և փող չէր խնայում այս կամ այն եղանակով չիներ ստանալու համար։

Ժամանակի ընթացքում Անդրկովկասի ազգաբնակության մեջ կազմվեց մի խոշոր չինովնիկական դասակարգ, որ յուրահատուկ դրոշմ էր դնում տեղային կյանքի վրա։ Վրաց ազնվականությունը, թե՛ այս պատճառով, որ շատ սակավաթիվ էր և թե՛ շնորհիվ այն հանգամանքի, որ ավելի բարձր որակի ազնվականության տեր էր համարվում, բայց ամենից շատ ի հարգանս այն իրողության, որ ռուսները և վրացիները մի էին դավանական տեսակետից, հետևաբար և ավելի հարազատ, գրավում էին ավելի բարձր և պատասխանատու պաշտոններ քաղաքացիական վարչության մեջ, մինչդեռ հայերը գլխավորապես միջին և ստորին պաշտոնների վրա էին գտնվում։ Բայց հայերի առավելությունն էլ այն էր, որ նրանք ավելի բազմաթիվ էին, որովհետև մտնում էին դպրոցներ, սովորում էին ռուսերեն, հետո ուղիղ մտնում էին պաշտոնատուն, ուր հասարակ գրագրից երկար տարիների համառ, չարքաշ, պահեցող աշխատանքով թե գումար էին հավաքում իրենց համար, թե բարձրանում էին չինովնիկական վերելքի աստիճաններով և այսպիսով նրանցից շատերը դառնում էին հասարակությունը ղեկավարող խոշոր ու ազդեցիկ ուժեր։ Լինելով տասնյակ տարիներով ռուս բյուրոկրատիայի շրջաններում դաստիարակություն ստացած, նրանք համարվում էին և խելքով ու կրթությամբ բարձր, և հմուտ օրենսգիտության ու տնտեսավարության մեջ և այս եղանակով յուրացնում էին առաջավոր, քաղաքագետ, լուսավոր դասակարգի հեղինակություն։ Այս ճանապարհով ռուսական դիվանատունը հրամայում էր հայ հասարակության վերին խավերին։ Բայց իր էությամբ չինովնիկությունը, լինի նա հայ, թուրք, թե վրացի, մի կեղեքող, հարստահարող, մակաբույծ տարր էր և հենց այս կողմով էլ հարազատանում էր կալվածատիրական դասակարգին։ Բացասական էր մանավանդ այն դերը, որ նա կատարում էր ազգամիջյան հարաբերությունների մեջ։ Այս կողմից վատ էին մանավանդ, հայ-թուրքական հարաբերությունները։ Իշխանության տեր դարձած հայերն, իհարկե, չէին մոռանում իրենց հայրերի ու պապերի կրած տանջանքները և վրեժ էին հանում թուրքերից, թե բռնություններ գործ դնելով նրանց անձի վրա և թե նյութական վնասներ հասցնելով նրանց։ Իսկ թուրքերն էլ իրենց հերթին, իհարկե, չէին մոռանում, որ այսօրվա իրենց չարչարողներն երեկ իրենց ստրուկներն էին։ Եվ երկու կողմերն իրար դեմ սնուցանում էին փոխադարձ վրեժ և ատելություն։

Գալով Թուրքիային, մենք արդեն գիտենք, որ այնտեղ ազնվականություն հասարակական դասակարգի իմաստով գոյություն չուներ, հետևաբար չի կարող խոսք լինել և հայ ազնվականության մասին։ Ինչ որ ունենք նշանակելու իբրև նորություն, այն է, որ Թանզիմաթը Թուրքիայում էլ բաց էր անում

ողնտակյան պաշտոնատները հայերի առջև, և մենք տեսնում ենք մի քանի հայ պաշտոնյաներ, որոնք ծառայում են դիվանագիտական և դատախազական ատյաններում։ Այս երկրորդ տեսակի ծառայողներ են մասնավորապես եվրոպական կրթություն ստացած հայ բժիշկները, որոնք հրավիրվում են դասախոսելու Կ. Պոլսի բարձրագույն բժշկական վարժարանում։ Բայց մեր տեսությունը սահմանափակող ժամանակաշրջանում հայ պաշտոնեությունը Թուրքիայում դեռ սաղմնային երևույթ է և հետո միայն պիտի ընդունի դասակարգային կերպարանք։

Բ. Առևտրական կապիտալ: Բայց ռուսական ճորտատիրությունն իր քնքուշ հոգացողություններով չէր կարող շատ բան ավելացնել անդրկովկասյան ավատական իրականության վրա։ Ուրիշների ստրկական աշխատանքով մակաբուծային կյանք վարելը հետզհետե դառնում էր դժվար, հետզհետե քայքայվող մի իրավունքի էր վերածվում։ Ռուսական տիրապետությունը եթե մեկի համար հանդիսանում էր բարերար և գորովաշատ, այդ առևտրական կապիտալն էր։ Հյուսիսային նվաճումն ամենից առաջ տնտեսական մեծ հեղաշրջման էր ենթարկում Անդրկովկասը։ Այդ այլևս պարսկական կամ թուրքական նվաճողություն չէր, որին հայտնի էր միայն մի հատ տնտեսական սկզբունք—թալանը, առանց շինարարական մեծ հոգսերի։ Ցարական իշխանությունը բերում էր Արևելքի բազմատանջ ժողովուրդներին կյանքի և գույքի ապահովություն և խրախուսում էր, որ նրա հովանու տակ երկիրն իր համար մթերե հարստություններ։ Նոր տնտեսական խոշոր հանգամանքն այն էր, որ Անդրկովկասը դառնում էր բավական ընդարձակ շուկա Ռուսաստանի արդյունաբերության համար։ Երկրորդ կարևոր հանգամանքն այն էր, որ տնտեսական նոր կյանքի կենտրոն ու սիրտ ամբողջ Անդրկովկասի համար դառնում էր Թիֆլիսը, որ արդեն իսկ վարչական կենտրոն էր և արագ մեծանում էր ու գեղեցկանում։ Մշտական պատերազմներից և մանավանդ վատ կառավարչական սիստեմից խոպանացած երկրի մեջ հարստություններ մտցնելու համար ռուսաց կառավարությունը բացառիկ արտոնություններ էր տալիս Անդրկովկասի խոշոր առևտրական դասակարգին, բաց անելով նրա առջև լայն հնարավորություններ զարգացնելու իր գործունեությունը։ Այդ արտոնությունները, որոնք մտցվում էին 1821 թվականից 10 տարվա ժամանակով, հետևյալներն էին.

1. Առհասարակ բոլոր առևտուր անողներն ստանում էին առաջին գիլդիայի վաճառականների իրավունքներ, առանց վճարումներ անելու. 2. ազատում էին անձնական ծառայությունից և անձնական հարկերից, իսկ նրանց տները՝ տուրքերից և զինվորական բռնագրավումներից. 3. ունեին իրավունք ձեռք բերելու և վաճառելու անշարժ կալքեր. 4. կառավարությունն ուզում էր զիջել նրանց հողամասեր օգտակար կառուցվածքների համար. 5. բոլոր այն ապրանքներից, որոնք բերվում էին օտար երկրներից, ստացվում էր մաքս միայն 5 % հայտարարված գնից։ Մանավանդ այս վերջին արտոնությունը, որ համարյա թե հավասարվում էր ազատ առևտրին, շատ մեծ զարկ էր տալիս արտասահմանյան ներմուծվող առևտրին։ Սկսվում էր ոսկեդար գլխավորապես Թիֆլիսի մոքալաքության համար։ Առևտրական հարաբերություններ էին սկսվում Լայպցիգի, Մարսելի, Տրիեստի հետ, եվրոպական ապրանքները թափվում էին Թիֆլիս, ոչ միայն հարստացնում էին վաճառականներին, այլև ազդում էին տեղական կենցաղի վրա, տարածելով մարդկանց մեջ եվրոպական ճաշակի, փափկակեցության, պերճանքի պահանջները։ Այս ամբողջ շարժման մեջ, իհարկե, միայն քչերին, գուցե մի երկու տասնյակ անհատների միայն, հաջողվում էր խոշորացնել իրենց կապիտալները, բայց ընդհանուր առմամբ, հարստության կուտակումը շատ զգալի էր և արտահայտ-

վում էր առևտրական դասակարգի բարօրության բարձրացման մեջ։ Շփվելով եվրոպացի վաճառականների հետ, Թիֆլիսեցի մոքալաքները շատ պարզ տեսնում էին, թե որքան վնասներ են կրում իրենց հետամնացության և տգիտության պատճառով, ուստի և իրենց որդիներին մտցնում էին դպրոցներ՝ եվրոպական դաստիարակություն ստանալու համար։ Այսպիսով Թիֆլիսի ավանդական կյանքն ենթարկվում էր բազմազան փոփոխությունների և կազմվում էր ասիական ու եվրոպական մի գեղանկար խառնուրդ։ Տնտեսական շահը, բարքերի փոփոխությունը մեծ գրավչություն են տալիս առևտրական կապիտալի Թիֆլիսին և զանազան տեղերի բնակիչներ տեղափոխվում են այնտեղ, գրվում են քաղաքացի, ավելացնելով ազգաբնակության թիվը։ Այս հրապույրը մեծ էր մանավանդ հայերի համար և Թիֆլիսն իբրև հայկական գաղութ՝ մեծանում և ուժեղանում էր, հմայք ստանում։

Արտոնված առևտրի հետ Թիֆլիսի առևտրական կապիտալին մեծ զարկ էր տալիս և միաժամանակ, նույն 1821 թվականից, Անդրկովկասի վրայով բացված տրանզիտային շարժումը, որ ինչպես գիտենք, փոխադրում էր ցամաքային Եվրոպայի ապրանքները Պարսկաստան, Միջին Ասիա և Հնդկաստան։ Սակայն այս տրանզիտը, որ ավելի ևս բարձրացնում էր Թիֆլիսի առևտրական նշանակությունը, երկար գոյություն չունեցավ և փակվում է 1826-ին, գլխավորապես ռուս գործարանատերերի պահանջով, որոնք ենթարկված էին անգլիացիների պրոպագանդին, որի ազդեցության տակ կարծում էին, թե կովկասյան տրանզիտը մեծամեծ վնասներ է բերում ռուսական արդյունաբերությանը։ Սակայն տրանզիտը նորից բացվում է 1847 թվականից և այսպիսով առևտրական կապիտալը նորից օգտավետ դիրքեր էր գրավում միջազգային առևտրի մեջ։

Մենք ամբողջ ժամանակ խոսում էինք հատկապես հայ առևտրական կապիտալի մասին, որովհետև ամբողջ այդ ժամանակ, երբ տիրում էր արտոնված վաճառականությունը, Անդրկովկասում չկար մի այլ առևտրական կապիտալ, բացի հայկականից։ Այս է հաստատում 1830-ական թվականներին լույս տեսած ռուսաց պաշտոնական հրատարակությունը, ասելով, թե առևտուրը ոչ միայն Թիֆլիսում, այլև ամբողջ Անդրկովկասում հայերի ձեռքին է գտնվում։

Նոր հանգամանքներն այսպիսով, չէին խախտել հայ քաղքենիության տնտեսական տիրապետությունը։ Մոքալաքների առանձնացրած դասակարգը ռուսական տիրապետությունը ոչնչացրեց, միայն պատնեշ կանգնեցրեց այն ձգտման դեմ, որ տանում էր մոքալաքությունը—ինչպես այս, ասենք ի դեպ, հատուկ է առհասարակ և համաշխարհային բուրժուազիային, դեպի ազնվական դասակարգը, նրա հետ ձուլվելու համար և այս պատնեշը կայանում էր նրանում, որ մոքալաքը զրկվում էր ճորտեր ունենալու իր հին իրավունքից։

Սակայն մոքալաքությունն էլ, իբրև հին արտոնված դրություն, չպիտի կարողանար դիմանալ նոր տնտեսական պայմանների հաղթական ընթացքին։ Ասացինք արդեն, որ Թիֆլիսն իբրև արագորեն զարգացող և ճոխացող առևտրական կենտրոն, գրավում էր դեպի իրեն առևտրական տարրեր և դրսի քաղաքներից։ Այս եկվորները հետզհետե շատանալով և կազմելով մի ուժեղ ու հոծ զանգված, մանավանդ մրցության միջոցով գերակշիռ հանդիսանալով հին քաղքենիությունից, հետզհետե տասնյակ տարիների ընթացքում, ստեղծում էին մի դրություն, որի շնորհիվ արդեն շատ նոսրացած ու թուլացած մոքալաքությունը լուծվում էր «կռո» (եկվոր) վաճառականության մեջ և անհետանում էր բնական մահով։

Մի ուրիշ շատ ուժեղ գործոն, որ առանձին զարկ էր տալիս առևտրական

կապիտալի ուռճացման, կապալների սիստեմն էր, որ բերում էր իր հետ ռուսական տիրապետությունը։ Մասնավոր մարդկանց կապալով տրվում էին նախ և առաջ այն պետական հասույթները, որոնք պիտի ստացվեին արդյունաբերական հիմնարկություններից և պետական գանձարանին պատկանող բնական հարստությունների մասնավոր շահագործումից։ Ապա կապալառության ընդարձակ ասպարեզ էր դառնում կառավարական այլևայլ պետքերին (զինվորական թե քաղաքացիական) անհրաժեշտ շինությունների կառուցումը։ Կար, վերջապես, և մի անհատնում աղբյուր, որ ռուս պետական գանձարանի միջոցները մեծամեծ չափերով թափում էր Կովկաս, ավելացնելով այստեղ հարստությունների կուտակումները։ Այդ աղբյուր կազմվում էր պատերազմներից և մասնավորապես այն համառ և երկարատև պատերազմից — որ կոչվում էր կովկասյան և որ մղվում էր կովկասյան գլխավոր լեռնաշղթայի ամբողջ տարածության վրա՝ լեռնային ռազմիկ և քաջարի ցեղերը նվաճելու համար։ Այս շրջանի մեջ կապալառությունն ուներ ոչ միայն կառուցողական, այլև շատ մեծ չափերով նաև մատակարարական բովանդակություն, այն է՝ զորքերին անհրաժեշտ պաշարեղենների, հանդերձանքների հայթայթում։

Անդրկովկասյան իրականության մեջ գրեթե միմիայն հայերն էին, որ գործում էին կապալառության ասպարեզում։ Եվ այստեղ էլ սկզբնական շրջանում երևացողները մեծագույն մասամբ դարձյալ Թիֆլիսի մոքալաքներն էին, որոնք սակայն, զուրկ չէին մրցակիցներից։ Դեռ նոր էր Բաքուն անցել ռուսների ձեռքը, 1808-ին, և ահա այնտեղ է մի շուշեցի վաճառական, Բաբա Թառումյան, որ կապալով վերցնում է ռուսական կառավարությունից Բաքվի նավթի, Սալյանի և այլ տեղերի ձկնորսարանների և ուրիշ մի քանի հասութաբեր հիմնարկությունների կապալը, որ տարիների ընթացքում նրան բերում է ահագին հարստություն։ Ժամանակ անցնելուց հետո նա մեռնում է Դերբենտում, բայց նրա դիզած հարստությունը փոխադրվեց Շուշի, ուր նրա երկու եղբայրները, Մարկոս և Ջոհրաբ, շարունակեցին նրա կապալառուական գործը, ոսկով լի պարկերի վրա ավելացնելով նոր և նոր պարկեր։ 1820 թվականին այս մեծահարուստ տանն էր գտնվում մեր նշանավոր մատենագիր Մեսրոպ Թաղիադյանը, որ և հաղորդել է շատ հետաքրքրական տեղեկություններ Շուշում կուտակված առևտրական կապիտալի մասին։ Իր տեսակի մի բացառիկ երևույթ էր կազմում առևտրական հարմար ճանապարհներից հեռու ընկած այդ փոքրիկ քաղաքը, որ թեև չուներ իր մեջ առևտրական խոշոր շուկա դառնալու և ոչ մի նպաստավոր հանգամանք, բայց և այնպես, Թիֆլիսից հետո գուցե երկրորդ տեղն էր բռնում իր առևտրական կապիտալի մեծ հասակով։ Քաղաքի հայ ազգաբնակությունը մի գյուղից ավելի շատ չէր, մոտ 500 տուն, բայց նա ուներ գերազանցորեն վաճառականական կերպարանք։ Բացի Թառումյանների առևտրական տանից, որ ինչպես տեսանք, գլխավորապես կապալառուական գործառնությամբ էր զբաղված, Շուշում գոյություն ուներ և նրան իր կապիտալի խոշորությամբ գերազանցող Հախումյան առևտրական տունը, որ միլիոնատեր էր և որի շրջանառությունը ամփոփված էր միջազգային առևտրի մեջ։ Սակայն առևտուրն, ինչպես ասում է Թաղիադյանը, ձգվում էր Պարսկաստանից մինչև Սիբիր և այնտեղից մինչև Եվրոպա։ Բոլորովին զարմանալի է թվում, որ Շուշու մեկուսացած ժայռի գլխից, այն ժամանակվա անհարմար ճանապարհներով կարելի էր լինում ղեկավարել մի խոշոր առևտուր այդքան հեռավոր տարածությունների վրա։ Եվ գաղտնիքը մասամբ բաց է անում այն հանգամանքը, որ երկու առևտրական տները, բայց առավելապես Հախումյանները, ունեին մեծ քանակությամբ գործակատարներ, կամ ինչպես անվանում էին այն ժամանակ, չրաղներ (ճրագներ), որոնք հավա-

տարմությամբ ծառայում էին իրենց տերերին, մեծացնում էին նրանց հարստությունները, բայց իրենք էլ հարստանում էին և ծառայությունը լրացնելուց հետո, իրենք էլ իրենց առևտուրն էին սկսում, ինարկե, տեղական մանր չափերով։

Կապիտալիստական զարգացման այս տեսարանը բոլորովին նոր էր և իր ծագումն ու ուռճացումը պարտական էր ռուսական տիրապետության։ Մենք արդեն տեսանք մեր այս գործի սկզբում, որ պարսկա-թուրքական տիրապետության ժամանակ, XVII դարի առաջին քառորդից սկսած, Հայաստանի հողի վրա միայն մանր խանութպանական կապիտալն էր ապրելու հնարավորություն գտնում, իսկ փոքր ի շատե խոշոր կապիտալը զուտ գաղութային երևույթ էր։ Այժմ տեսնում ենք, որ խոշոր կապիտալը կարող էր անցնել և Հայաստանի հողը, եթե նպաստավոր պայմաններ ստեղծվեին։ Շուշու այս երկու միլիոնատեր առևտրական տները ծաղկում էին այն ժամանակ, երբ Ղարաբաղում դեռ վերջնականապես չէր հաստատվել ռուսական տիրապետությունը, երբ դեռ տակավին վարչական ձևը խանական էր։ Սակայն որովհետև խանական իշխանությունը ենթակա էր ռուսական վերահսկողության և խաները լոկ ռուս հրամանատարության կամակատարներն էին, ուստի և Հախումյանների ու Թառումյանների ոսկով լի պարկերը պահպանում էին իրենց ամբողջությունը, առանց հափշտակողների հարձակման ենթարկվելու։

Շատ հետաքրքրական են և այս կապիտալիստական շրջանում տիրած բարքերը։ Համեմատելով երկու մեծ առևտրական տները հասարակական տեսակետից, Թաղիադյանը միամտաբար կարծում էր թե մեկը, Թառումյանը, ի բնե աղքատասեր էր և առհասարակ բարեգործ, մինչդեռ մյուսը — Հախումյանը, աչքի էր ընկնում իր ժլատությամբ։ Թառումյանները, ասում է նա, ամեն օր բաժանում էին աղքատներին 500 ռուբլի։ Բայց այս անօրինակ առատաձեռնությունը պետք է բացատրել այն հանգամանքով, որ Թառումյան եղբայրներից մեկը, Մարկոսը, հիվանդ էր, հետևաբար այն ազետ ժամանակների հասկացողությամբ, բժշկություն պիտի ակնկալեր հրաշքով, ինչպես ասվում էր այն ժամանակ, աստվածային խնամքով, իսկ այդ աստուծո աչքը քաղցրացնելու համար, պետք էր աղքատասիրություն ցույց տալ, որքան կարելի է լայն չափերով։ Մինչդեռ Հախումյան տունը, երբեք այդպիսի հանգամանքի մեջ չէր գտնվում, ուստի և հարազատ էր մնում սովորական բուրժուական տիպին։ Մարկոս Թառումյանը, տեսնելով, որ հիվանդությունն օրեցօր սաստկանում է և մահն անխուսափելի է, կատարում է վերջին հուսահատության հասած դրամատիրոջ մի ցույց — իբր թե արհամարհանք դեպի աշխարհի բարիքները և խոստովանություն՝ թե ամեն ինչ ունայնություն է։ Նա բերել է տալիս իր ոսկու պարկերից մեկը, ուռած ոտը դնում է նրա վրա և ասում. «Դեհ, բժշկիր, չէ՞ որ ամբողջ կյանքս քեզ ծառայեցի»։ Դեղին մետաղը, որ «անիրավ մամոնա» անվան տակ աշխարհի տերն է, ազգեր ու ժողովուրդներ կործանող և բարձրացնող, միանգամայն սին և անբովանդակ է մնում, ուստի մահվան ցրտությունից մտրակվող մեծատունը դիմում է մի ավելի սին և անբովանդակ մտացածինին — աստծուն, շողոքորթելով նրան, թե նա է միակ ողորմածը և կենդանին իր հոգին, որ գոյություն չունի մանավանդ, կապիտալիստական աշխարհում։ Մահվան սարսափը, որից իսկապես դողում է մարդը, ընդունակ է էլ ավելի հուզիչ վայրկյաններով վերջացնել հզորների ու տերերի կյանքը։ Բայց որ այդ տագնապից դուրս նույնիսկ Թառումյանների մեծափարթամ տանը բոլորովին տրամադրություն չկար անարգելու անիրավ մամոնան, ինչպես այդ անում էր նրա մեռնող քույրը, երևում է հենց այն բանից, որ երբ Մարկոսը վերջին րոպեներին, իր հոգու փրկության համար կար-

դադրում էր վերադարձնել իր պարտականների մուրհակները, այս բանը դժգոհություն էր պատճառում նրա եղբայր Զոհրապին, որ առողջ էր, մահվան տագնապի մեջ չէր գտնվում, հետևաբար և մնում էր կապիտալի քուրմի բոլոր պարտականությունների մեջ։

Բարեդեպ հանգամանք է, որ Մարկոս Թառումյանը մեռավ այն ժամանակ, երբ Մեսրոպ Թաղիադյանը դեռ չէր հեռացել Շուշուց։ Թաղման այն նկարագրությունը, որ նա տալիս է իր «Ճանապարհորդության» մեջ, ամենից պերճախոս փաստն է՝ ցույց տալու համար, թե որքան մեծ էր առևտրական խոշոր կապիտալի իշխանությունը։ Արտակարգ պատիվներ արվեցին այդ կապալառուի դիակին։ Թաղման հանդեսին մասնակցում էին նույնիսկ և ռուսական սևազգեստ զորքեր։ Կարծես թե թաղում էին Արտաշեսին, որի մասին ժողովրդական ավանդությունն ասում էր, թե նրա գերեզմանի վրա շատ-շատերը հոժարակամ ինքնասպանություն գործեցին, այնպես որ նրա որդի Արտավազդն ասում էր նրա գերեզմանին—Դու գնացիր և ամբողջ աշխարհը հետդ տարար, էլ ինչի վրա ես թագավորեմ։ Ահա ինչ նմանություններ էր բերում ոսկու շատ պարկեր ունեցող շուշեցի վաճառական Թառումյանը։

Փողն այսպիսով տանում էր նաև դեպի փառքի և իշխանության բարձրությունը։ Այս է պատճառը, որ ամեն մի վաճառական, մանավանդ կապալառու, հենց որ զգում էր իր գրպանում փողի բավականաչափ առատություն, սկսում էր ձգտել դեպի ազնվական դասակարգը և շատ անգամ հասնում էր իր իղձալին, ինչպես տեսանք, աստիճաններ (չիներ) ստանալու միջոցով։ Սակայն ռուսական բյուրոկրատիան, կամենալով պահպանել պետության համար օգտակար մոքալաք-կապալառուի և վաճառականի տիպն անխառն, արգելք էր դնում նրանց չիներով վարձատրելու կարելիությունը։ Այսպես, Կովկասի փոխարքա Վորոնցովը, հարգելով հանդերձ հայ կապիտալիստներին, դասակարգային անջրպետ էր բարձրացնում նրանց և ազնվականության միջև, որ նրա առանձին խնամքների և փայփայանքների առարկա դարձած «բարձր» դասակարգն էր։ Հայ վաճառականի համար միանգամայն բավարար էր համարվում և «պատվավոր քաղաքացու» կոչումը, որ տրվում էր կառավարության կողմից և տալիս էր որոշ չափով պատվավոր և արտոնված հասարակական դիրք։ Այսպիսով Թիֆլիսում հասարակական հեղինակություն և իշխանություն էին ձեռք բերում մի շարք ընտանիքներ, որոնք հարստություն էին վաստակել կապալառուական-առևտրական ասպարեզում, օրինակ՝ Միրզոյան, Թամամշյան, Միրիմանյան, Խերոդինյան և այլն։

Սակայն պետք է արձանագրել հայ առևտրական կապիտալի մի շատ խոշոր հատկությունն էլ։ Լինելով բացառապես հայկական, նա դառնում էր— անարդար կերպով, իհարկե,— և ամբողջ հայ ժողովրդի հատկանշությունը։ Հայ ժողովրդի պատիվը կազմվում էր ոչ թե այն դաշտերում, որ իր քրտինքով ոռոգում էր այդ ժողովրդի ահագին մեծամասնությունը, գրեթե 99 % կազմող աշխատավորությունը, այլ Թիֆլիսի փողոցներում կամ պետական դիվանատներում, ուր այդ ժողովրդի մի աննշան մասը կազմող խմբերը խաբում էին, գռփում էին, կաշառում էին պաշտոնյաներին, տղրուկների պես ծծում էին իրենց զոհերին, կեղեքում, աղքատացնում էին իրենց վաշխառուական տոկոսներով։ Այս գիշատիչ հակումները հատուկ են կապիտալին ամենուրեք և նույնիսկ ավելի խոշոր չափերով՝ «քաղաքակրթված» անվանող ազգերին, բայց ինչ-որ օտարոտի տրամաբանությամբ հայտարարում էին,— և այս, իհարկե, ոչ առանց եռանդուն մասնակցության ռուսական բյուրոկրատիայի,— հատուկ միմիայն հայ ժողովրդին։ Ինչ համբավ ստեղծում էր արևելյան հայության համար Թիֆլիսի և այլ առևտրական կենտրոնների հայ

քաղքենիությունը, նույնն անում էին արևմտյան հայության համար Կ. Պոլսի ու այլ առևտրական գաղութները։ Եվ այսպիսով հայհոյվում էր մի ժողովուրդ, որ աշխատանքի հերոս էր դարերից ի վեր, որ Թուրքիայում քուրդ վայրենի աղաների և բեյերի ճորտն էր, իսկ Անդրկովկասում կեղեքվում էր մելիքական կալվածատիրության ձեռքին։

Առևտրական կապիտալի հարաճուն կուտակումից և ուռճացումից անխուսափելի կերպով առաջ էր գալիս ընդհարում քաղաքային երկրորդ խոշոր դասակարգի—արհեստավորության հետ, որ ինչպես գիտենք, կազմակերպված էր արհեստակրական (համքարական) սկզբունքների վրա։ Այսպիսի ընդհարումներ, ինչպես հայտնի է, տեղի ունեին և եվրոպական շատ երկրների տնտեսական կյանքի մեջ, երբ առևտրական կապիտալը տնտեսական հարաբերությունների որոշ դասավորման հետևանքով, խուժում էր արհեստավորության մեջ, մանր արհեստանոցային արդյունաբերությունը կապիտալիզացիայի ենթարկելու, գործարանային ձևերի մեջ մտցնելու համար։ Այո, անկասկած առաջադիմական երևույթ էր, որովհետև համքարային կազմակերպությունները իրենց էությամբ խիստ պահպանողական էին և խոչընդոտներ էին ներկայացնում արդյունագործական տեխնիկայի զարգացման դեմ։ Առևտրական կապիտալի պայքարը համքարական սկզբունքների դեմ խիստ կերպարանք էր ընդունում քառասնական և հիսնական թվականներին, բնականաբար, Անդրկովկասի ամենախոշոր տնտեսական կենտրոնը կազմող Թիֆլիսում։ Վաճառականությունը պահանջում էր, որպեսզի ջնջվի համքարությունը, որ մտցնում է արդյունագործության մեջ սահմանափակման, մենաշնորհի սկզբունքները, իսկ համքարությունն էլ, իհարկե, ամեն կերպ աշխատում էր պաշտպանել իր գոյության իրավունքը։ Հետաքրքրական է, որ համքարական գաղափարախոս հանդիսացան ժամանակի հայ ինտելիգենցիայի երկու ականավոր ներկայացուցիչները՝ Պետրոս Շանշյան և բժիշկ Գևորգ Հախվերդյան։ Երկուսի պաշտպանողական հայեցակետի հիմքը միևնույնն էր—բուրժուական դեմոկրատիզմ։ Արհեստավորական կազմակերպությունները պետք է պահպանվեն, որովհետև նրանք ժողովրդական գործ են, պահպանում են իրենց մեջ բարքերի մաքրություն, ինքնօգնության գաղափարն են մարմնացնում։ Պետրոս Շանշյանը հիմնավորում էր իր պաշտպանությունը քաղաքատնտեսական գիտության տվյալներով։ Բայց այստեղ նա ավելի աստվածաբան էր, քան հասարակագետ։ Ինչպես որ առևտրական կապիտալը համքարությունները ոչնչացնելու իր պահանջներն անում էր հանուն արդյունագործական-առևտրական գործունեության ազատության, երբ վերացված են լինում մենաշնորհներն ու սահմանափակումները, այնպես էլ Պետրոս Շանշյանը համքարությունների պահպանությունը պահանջում էր հանուն նույն այդ բնապետական (ֆիզիոկրատական) սկզբունքների, որոնք գալիս էին 18-րդ դարից և ձևակերպվում էին հռչակավոր* խոսքերի մեջ։ Շանշյանը, իր ժամանակի առաջավոր, գրեթե հեղափոխական գործիչ, 1848-ի փետրվարյան հեղափոխության մասնակցած Փարիզում, ունկնդիր Սորբոնի համալսարանում, ժխտում էր սոցիալիզմը և տնտեսական երևույթների բացատրությունը հիմնավորում էր նույնիսկ ավետարանի և աստվածաշնչի խոսքերով։ Այս հանգամանքը ցուցադրում է, թե որքան ետ մնացած էր այն ժամանակ հայ քաղաքական միտքը։ Գալով համքարություններին, պետք է ասել, որ մրցող կողմերից ոչ մեկն էլ կատարյալ հաղթանակ չտարավ։ Կառավարությունը փակեց համքարությունների մեծ մասը, իսկ մի փոքրիկ մասին (թվով մոտ 17)

* Այստեղ, բնագրում մի արտահայտություն բաց է թողնված։ Ծանոթ. կազմողների։

թույլ տվեց շարունակել գոյությունը։ Սակայն այդ հին հիմնարկությունը անկարող լինելով դիմադրել կապիտալիստական արդյունագործության հետզհետե աճող հախուռն բախումներին, մաշվում, վատուժանում էր անդադար, դիմելով դեպի կատարյալ անկում։

1840-ական թվականներից առևտրական կապիտալի միալար և համատարած թագավորությունն Անդրկովկասում սկսում է ճեղքվածքներ գոյացնել։ Մուտք է գործում ռուսաց արդյունագործական կապիտալը, որի ազդեցության տակ սկսում է կազմակերպվել և անդրկովկասյան, առաջ ու առաջ հայկական արդյունագործական կապիտալը և տնտեսական խոշոր կենտրոնը հետզհետե Թիֆլիսից տեղափոխվում է Կասպիական ծովի արևմտյան ափը։ Բայց այս խոշոր տնտեսական շարժումը վերաբերում է 19-րդ դարի երկրորդ կեսին և մեր տեսության առարկան կգտնի իր տեղում։

Անցնելով այժմ Թուրքիա, մենք այստեղ մտնում ենք տնտեսական բոլորովին այլ պայմաններից ստեղծված միջավայրի մեջ։ Թուրքիան երբեք տնտեսապես անկախ չի եղել։ Նրան ստրկացրել են Եվրոպայի առևտրական և արդյունաբերական կապիտալները, թողնելով նրան լոկ սպառողի և հարկատվի բովանդակությունը։ Այս կողմից Թուրքիան կատարյալ մի գաղութ էր եվրոպական կապիտալիզմի համար, երբեք չկարողացավ հասնել սեփական տնտեսական զարգացման այն աստիճանին, որի արտահայտությունն է արդյունագործական կապիտալը, հետևաբար և զուրկ մնաց այն սոցիալական ու քաղաքական շարժումներից, որոնք այդ արտադրական եղանակի պտուղներն են։ Թուրքիան մինչև վերջը կառչած մնաց առևտրական կապիտալին, բայց սա էլ, չունենալով իր սեփական ինքնուրույնությունը, ստրկացած էր արևմտյան առևտրական կապիտալին, կատարելով միայն գործակատարի կամ միջնորդի դեր նրա համար։

Մնում էր միայն մի իսկապես թուրքական հարազատ տնտեսական հաստատություն, ծնված ու սնված թուրքական վատ վարչական սիստեմից և ընդհանուր կուլտուրական-տնտեսական հետամնացությունից։ Այդ սեղանավորությունն էր (սարաֆությունը), որի մեջ այնքան ուժեղ դիրք էին բռնած հայերը։ Հայ ամիրայությունն, իբրև ֆինանսական օլիգարխիա, իր տիրապետության ոսկեդարն էր ապրում 19-րդ դարի քսանական և երեսնական թվականներին, երբ նրա ազդեցության տակ ապրում էր նույնիսկ և սուլթանական պալատը։ Այս դրության ամենացայտուն արտահայտիչն էր հայ հարուստ ամիրա Հարություն Պեզճյանը, որ հասարակ գործակատարի դրությունից բարձրանում էր մինչև սուլթան Մահմուդի անձնական բարեկամի և խորհրդականի աստիճանը։ 1828—1829 թվականների ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Թուրքիան ընկնում է տնտեսական մեծ տագնապի մեջ և Պեզճյանը այդ սաստիկ նեղ օրերին հանդես է գալիս իբրև մի տեսակ ֆինանսական հանճար և ազատում է պետությունը ճգնաժամից։ Առաջին դեպքն այն եղավ, որ պատերազմի պատճառով Կ. Պոլսում սով սկսվեց հացի և այլ մթերքների բացակայության պատճառով։ Ազգաբնակության հուսահատական աղաղակների դիմաց թուրքաց կառավարությունը միայն մի բան իմացավ անել—թեթևացնել մայրաքաղաքը, դուրս հանելով այնտեղից բնակչության եկվոր մասը։ Այս մի խոշոր քայլ էր, որ մեծ աղետներ էր սպառնում ազգաբնակությանը ենթարկելով նրան բռնի տեղահանման սարսափներին։ Պեզճյանը շատ հեշտությամբ վերջ դրեց այս ճգնաժամին, վերացնել տալով ներքին մաքսը և արտոնելով ամեն մեկին գնալ գավառները, բերել այնտեղից ցորեն, ալյուր և այլ մթերքներ և ծախել ազատ գներով։ Այս միջոցը շատ էական հանդիսացավ մայրաքաղաքն առատությամբ պարենավորելու համար, այնպես որ

այլևս կարիք չմնաց ժողովրդական զանգվածների բռնի վտարման համար։ Երկրորդ դեպքն այն էր, որ պատերազմի պատճառով փողի պակասություն գոյացած լինելով, կառավարությունը կարգադրեց, որ պղնձի փող կտրվի, բայց Պեզճյանը համոզեց սուլթանին, որ ավելի ձեռնտու է պետության համար պղնձի փողի փոխարեն կտրել պղնձախառն արծաթե դրամներ։ Այսպես էլ եղավ։ Բայց այս կարգադրությունը սաստիկ գրգռեց մեծ վեզիրին Պեզճյանի դեմ և սա կարող էր նույնիսկ գլխատվել, մի բան, որ անհնարին չէր Թուրքիայում նույնիսկ սուլթանի անձնական բարեկամի համար։ Ավելի մեծ էր Պեզճյանի ծառայությունը երրորդ՝ իսկապես, տագնապալից դրության մեջ, երբ ռուսաց դեսպանը պահանջեց Ադրիանուպոլսի դաշնագրությամբ սահմանված պատերազմական տուգանքը, իսկ թուրքական գանձարանը միանգամայն դատարկ էր։ Սուլթան Մահմուդը գտնվում էր վերին աստիճանի դըրգըռված ու զայրացկոտ տրամադրության մեջ, երբ Պեզճյանը ներս մտավ և հայտնեց նրան, թե ինքը կգտնի տուգանքի ամբողջ գումարը (մոտ 40 միլիոն ռուբլի) նշանակված երեք օրվա ընթացքում։ Եվ իրավ, նրան հաջողվում է կնքել կարճ ժամանակվա փոխառություն Կ. Պոլսի եվրոպական վաճառականների հետ և կատարել դեսպանի պահանջը նշանակված ժամանակից էլ առաջ։ Այս բանն այնքան ուրախացնում է սուլթանին, որ առաջին կարգի շքանշան է տալիս Պեզճյանին։ Հայ ամիրան իրավունք ուներ ամեն ժամանակ մտնել սուլթանի մոտ, գնում էր նրա հետ մզկիթ և այլն։

Քառասնական թվականների սկզբին հայ ֆինանսական օլիգարխիան ստանում է ավելի ուժեղ կազմակերպություն, բաժանվելով երկու խոշոր ընկերությունների—Ռումելիի և Անատոլուի ընկերություններ, որոնք վերցնում են կապալով պետության այդ երկու մասերի հարկերը և առաջարկում են տալ պետական փոխառություն։ Սակայն ուժի և ազդեցության այս գագաթնակետից էլ ամիրայական դասակարգը սկսում է ցած գլորվել։ Նրա հիմքերը փորփրող թշնամի հանդիսանում էր Թանզիմաթը, որ որքան էլ մեծագույն մասամբ մեռած տառ մնացած մի նորություն լիներ, բայց և այնպես, որոշ փոփոխություններ մտցնում էր օսմանյան վարչական և հարկահանական սկզբունքների մեջ։ Եվ որքան աստիճանաբար, հետզհետե զարգանում էին այդ սկզբունքային փոփոխությունները, այնքան ամիրայությունը կորցնում էր իր հոգատարության կալվածները և իր իշխանական ուժի այն հեղինակությունը, որ ուներ նա համայնքի մեջ։

Թանզիմաթն ամենից առաջ թուլացնում էր հայոց պատրիարքի, ասել է՝ ամիրայական դասակարգի պատժողական իշխանությունը, որ մի տեսակ ահաբեկման դրության մեջ էր պահում հասարակ ժողովուրդը։ Այլևս պատրիարքն իրավունք չուներ իր կամեցած մարդուն բռնությամբ քաշել տալ պատրիարքարան և առանց դատի, փաշայաբար, խոշտանգել նրան ծեծով ու տանջանքներով, աքսորել։ Այս բռնակալական կարգի վերացումն արդեն և ըստինքյան մի խթան էր հանդիսանում, որ այդ մշտապես խոշտանգվող ժողովուրդը զգա ինքն իրեն մարդկային տարրական իրավունքի տեր, մի տրամադրություն, որ նեցուկ էր գտնում Թանզիմաթի բացորոշ ազատական խոստումների մեջ և սկսե դասակարգային ուժեղ պայքար իր վրա բռնացած ամիրայության դեմ։ Այստեղ էլ ուրեմն, միևնույն ընդհարումն է, ինչ մենք տեսանք Թիֆլիսում, բայց այստեղ տարբեր հողի վրա և տարբեր նշանաբաններով։ Թիֆլիսի համքարությունները կռվում էին առևտրական կապիտալի դեմ՝ իրենց կազմակերպությունը պահպանելու համար, մինչդեռ Կ. Պոլսում համքարությունների ամենագլխավոր ձգտումն էր խլել ամիրաների ձեռքից իշ-

խանությունը և իրենց ձեռքն առնել պատրիարքարանը և ազգային ամբողջ կառավարությունը։

Կռվի դրոշակ դառնում էր մի դպրոցական հիմնարկություն—Իսկյուտարի ճեմարանը։ Հայ լուսավորչական հոգևորականությունը, իրեն հրամայող ամիրայության հետ միասին, ինչպես տեսանք շատ անգամ, մտահոգվելով օտար կրոնական պրոպագանդի դեմ մրցելու անհրաժեշտությունից, ստիպված էր լինում բարելավել իր դպրոցների դրությունը՝ ընդունակ քարոզիչներ և գրողներ պատրաստելու համար։ Ամերիկայի միսիոներների դպրոցական գործին հակադրվում էր Իսկյուտարի ճեմարանը, որի պահպանության համար ամիրաներն իբրև ունևոր դասակարգ, պիտի որոշ վճարումներ անեին։ 1841 թվականին ճեմարանում հավաքվում են մոտ երեք հարյուր արհեստավորներ (էսնաֆներ), որոնք լսելով ճեմարանի տնօրեն Հակոբիկ Մանվելյանի հորդորական ճառը, կազմում են մի միություն՝ ճեմարանը ամիրայական խնամակալությունից ազատելու և ժողովրդական կառավարության տակ դնելու համար։ Այստեղից առաջ ծայր է առնում մի ռամկավարական շարժում, որ աճելով անընդհատորեն, մտցնում է թուրքահայերի կյանքը մի բոլորովին նոր շրջանի մեջ, որին վերջ էր դնում միայն 1914—1918 թթ. աղետավոր համաշխարհային պատերազմը։

Պատրիարքարանը, միշտ հլու ծառա ամիրայական դասակարգին, լսելով այդ ժողովի մասին, կանչում է նրան մասնակցած անձանց և հանդիմանում է նրանց և արգելում նրանց կազմած միությունը։ Այն ժամանակ միության անդամները ճեմարանի 16 աշակերտներից կազմում են խնդրատուների մի խումբ, որ աղերսագիր է տալիս սուլթան Աբդուլ Մեջիդին, խնդրելով, որ ճեմարանի կառավարությունը հանձնվի արհեստավոր դասակարգի ներկայացուցիչներին։ Այս խնդիրքը հարգվում է, և արհեստավորներից ընտրված 24 հոգի մտնում են պատրիարքարան, գրավում են այն տեղերը, որոնք դարերից ի վեր պատկանում էին ժողովրդի գլխին նստած ֆինանսական օլիգարխիային և իրենց ձեռքն էին առնում ազգային ներքին կառավարությունը։ Բայց այս դեռ վերջնական հաղթանակ չէր, այլ միայն կռվի սկիզբը։ Ամիրայությունն, իհարկե, այդքան հեշտությամբ անձնատուր եղող չէր։ Մի կողմից նա կարճում էր ճեմարանին տված իր նպաստները, մյուս կողմից գործի էր դնում իր ուժեղ ազդեցությունը, որ ուներ կառավարչական շրջաններում։ Եվ ահա ետ է վերցվում 24-ի ընտրության կարգադրությունը, հետևաբար և վերահաստատվում էր նախկին դրությունը։

Այս հանգամանքը մեծ հուզում է առաջ բերում ժողովրդական զանգվածների մեջ և մոտ երկու հազար հոգի թափվում են մեծ վեզիրի ապարանքը, աղաղակելով թե իրենք չեն ուզում ամիրայապաշտ Ստեփանոս պատրիարքին։ Մեծ վեզիրը վախենում է խոշոր անկարգությունից, խաղաղեցնում ու ճամփու է դնում բազմությունը, բայց մի քանի օրից հետո ձերբակալել է տալիս 24 ներկայացուցիչների ժողովը և պահանջում է նրանից տալ խռովության պարագլուխների անունները։ Տեղի են ունենում նորանոր ձերբակալություններ և աքսորներ։ Սակայն այս բռնությունները դասալքում չեն առաջացնում արհեստավորների մեջ և նրանք որոշում են մնալ, բայց այլևս չհպատակվել ամիրաների բռնակալությանը։ Նորից արհեստավորները դիմում են աղերսագրով սուլթանին, նորից կազմվում է արհեստավորական վարչություն պատրիարքարանում, այս անգամ բաղկացած արդեն 27 հոգուց։ Բայց սրանով վեճը չի վերջանում, այլ ձգձգվում է մինչև 1847 թվականը։ Այս վեց տարիների ընթացքում Իսկյուտարի ճեմարանը միջոցների սղության պատճառով փակվեց և նրա շինությունը վերածվեց թուրքական զորանոցի, բայց

մեկ էլ նորից բացվեց Մատթեոս պատրիարքի միջնորդությամբ։ Ամիրայական դասակարգի համար շատ հզոր գործիք էր դրամական հարցը։ Արհեստավորների դեմ բացած ճակատում նա հաղթանակ տանում էր այն հանգամանքի շնորհիվ, որ առանց իր դրամական նպաստների դպրոցը չէր կարող ապրել։ Այս հարցի մեջ ժողովրդական շարժումը միանգամայն ջախջախված էր երևում, այնպես որ 27-ի վարչությունը հարկադրված էր լինում ինքնահոժար կերպով հրաժարվել, չկարողանալով հայթայթել դպրոցի պահպանության համար անհրաժեշտ գումար։ Այսպիսի տարտամ դրության մեջ դասակարգային կռիվը մնաց մինչև 1847-ի մայիսը, երբ սուլթանական հրովարտակով կազմվեցին երկու ժողովներ՝ պատրիարքարանի բոլոր գործերը կառավարելու համար. մի ժողովը բաղկացած է 20 հոգուց, ընտրվում էր աշխարհականներից (կեսն ամիրա, կեսն արհեստավոր), կոչվում էր Գերագույն, մյուսը՝ բաղկացած 14 հոգուց, բոլորն էլ հոգևորական, կոչվում էր Հոգևոր ժողով։ Այս ժողովները գործում էին պատրիարքի նախագահությամբ։ Այսպիսով ժողովրդական սկզբունքը, առաջին անգամ լինելով, շահում էր մի խոշոր հաղթանակ. նախ և առաջ սահմանափակվում էր պատրիարքի իշխանությունը, երկրորդ՝ արհեստավորները ամիրաների հետ հավասար չափով և հավասար իշխանությամբ կոչվում էին վարելու պատրիարքարանի իրավասության տակ գտնվող բոլոր ազգային գործերը։ Այս սկզբունքները հետզհետե զարգանալով, հասցնում էին, ինչպես կտեսնենք հետո, Ազգային Սահմանադրության, որ և դառնում է ռամկավարական կարգի վերջնական հաղթանակն արդեն ոչնչացող ամիրայության վրա։

Գ. Ռուսահայ գյուղացիություն։ Եթե առևտրական կապիտալի համար ռուսական տիրապետությունը մի իսկական բարերարություն էր, գյուղական հոծ ազգաբնակության համար նա չէր բերում և չէր կարող բերել որևէ բարելավություն, քանի որ այդ մի ճորտատիրական երկրի տիրապետություն էր, մի երկրի, ուր հողագործ աշխատավորության ստրկացումը հասցված էր ծայրահեղ չափերի, կատարյալ անասնացման։ Անդրկովկասի մահմեդական տիրապետության տակ աշխատող գյուղացիությունը դեռ կարող էր նախանձի առարկա դառնալ ռուս մուժիկի համար, որին կալվածատեր աղան կարող էր ծախել շուկայում, ինչպես ծախվում է մի զույգ կոշիկ։ Նույնիսկ Վրաստանի ճորտությունը, եթե կարելի է ասել, «մեղմ» էր, քան ռուսականը։ Եվ հասկանալի է, որ ճորտատեր ազնվականներից կազմված կովկասյան ռուսական վարչությունը չէր, որ թողներ անդրկովկասյան ազնվականության շահերն ու օգուտները և ոչ թե բարելավեր, այլ գեթ պաշտպանվածի դրության մեջ պահեր գյուղացու դրությունը։ Այս է պատճառը, որ ընդհանրապես կովկասյան գյուղացիության ապրած կյանքը, մանավանդ XIX դարի առաջին կեսում, մեզ ներկայացնում է իբրև կատարյալ մարտիրոսագրություն։

Արդեն տեսանք ռուսահայ գյուղացիության դրությունը այն պատերազմների ժամանակ, որոնք մղվում էին Պարսկաստանի և Թուրքիայի դեմ ռուսական տիրապետությունը հաստատելու և տարրալուծելու համար, մանավանդ Ղարաբաղում, Շիրակում և այլ տեղերում։ Մենք տեսանք, որ հայ գյուղացիությունը Կախեթում միացած էր վրացի գյուղացիության, որ ապստամբված էր ռուսական բյուրոկրատիայի դեմ, մինչդեռ Թիֆլիսի հայ բուրժուազիան գործում էր ռուսաբյուրոկրատիայի հետ ընդդեմ ապստամբված գյուղացիության։ Ամբողջ Պարսկական Անդրկովկասում ապրող հայ գյուղացիությունը շատ սակավ հանգստություն և անդորրություն տեսավ երեսուն տարիների ընթացքում, մինչև որ Թուրքմենչայի և Ադրիանուպոլսի դաշնագրությունները եկան քառորդ դարի խաղաղություն հաստատելու այս վայրիվեր

դարձած երկրում, ուր գյուղական ազգաբնակությունը շարունակ քշվում էր մի տեղից մյուս տեղ, հարկադրական գաղթականությունների էր ենթարկվում, մի խոսքով, ինչպես ասում են, ջրի պես քարեքար էր ընկած։ Բայց ահա վերջանում են պատերազմները, փոքր ի շատե զսպվում են ավերիչ ավազակությունները և գյուղական ազգաբնակությունը հնարավորություն է ստանում խաղաղ աշխատանքի նվիրվելու։ Պակասո՞ւմ են արդյոք, գյուղական աշխարհի տանջանքները։ Ոչ, նրանք այնքան են շատ, այնքան աղաղակող, որ վրդովմունք են պատճառում նույնիսկ ճորտատեր բյուրոկրատիային։ Դեռ պարսկական և թուրքական պատերազմները նոր վերջացած՝ Պասկևիչը պաշտոնյաներ էր ուղարկում գավառները՝ աշխատավոր ժողովրդի դրության վերահասու լինելու համար։ Եվ ահա ինչ պատկերներ էին ներկայացնում իրենք, այդ չինովնիկներն իրենց սեփական խոսքերով։

Ղազախի գավառն ուղարկված Զավիլևսկին գրում էր. «Ղազախում և մնացած բոլոր գավառներում գյուղացիները միայն արտաքին ձևով են ազատ, այն ինչ մոտիկից քննելով, անկարելի է չտեսնել, որ նրանք ամենաչարաչար ստրկության մեջ են գտնվում աղալարների և մելիքների ձեռքին։ Մանավանդ, զարմացքի արժանի է, որ հայերը ճշմարտապես հավատարիմ մնալով տերության և ամենից շատ հակված լինելով դեպի արհեստները, երկրագործությունը և առևտուրը ու կազմելով վերջապես ամենաօգտավետ և գործունյա տարրն այստեղի ժողովրդի մեջ, ստրուկ են ապստամբ աղալարների ձեռքում, որոնք թալանում են նրանց և բոլորովին ավերում՝ միմիայն նրանց դեպի ռուսական պետությունն ունեցած ջերմեռանդության համար։ Ոչ մի տեղ, բացի Պարսկաստանից, Թուրքիայից, Եգիպտոսից, աֆրիկյան աշխարհներից, քրիստոնյաները չեն գտնվում մահմեդականների ձեռքին այսպիսի ստրկության մեջ»։

Այսպես էր Ղազախում, որովհետև փառաբանված Երմոլովը այստեղի թուրք ազնվականության (աղալարներին) էր հանձնել նաև դատաստանական և վարչական իշխանությունը։ Բայց ահա մենք Արևելյան Անդրկովկասումն ենք, ուր արդեն կառավարում ու դատում են ռուս չինովնիկներն ու սպաները։ Ինչպես գիտենք, Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի խանություններից կազմված էր մի ընդհանուր զինվորաշրջանային վարչություն, որի գլուխն էր Երմոլովի <մոտ> երկար ժամանակ գեներալ Մադաթովը։ Պասկևիչը հեռացնելով Մադաթովին իբրև շահամոլ մարդու, նրա տեղ նշանակեց իր առանձին համարումը վայելող իշխան Աբխազովին, որի շահամոլությունը սակայն, հասավ առասպելական չափերի։ Բացի այդ ընդհանուր վարիչից, յուրաքանչյուր խանության կենտրոնը կազմող քաղաքում նստած էր զինվորական հրամանատարը (կոմենդանտ), որին ենթարկված էր ոչ միայն տեղական զորքերի վարչությունը, այլև ամբողջ քաղաքացիական վարչությունը։ Այդ սպաները, բռնելով խաների տեղը, յուրացրել էին խանական կառավարության բոլոր իրավունքները և այնպիսով կատարում էին ոչ միայն վարչական, այլև դատաստանական ամենաբարձր գործառնություններ, անգամ նաև օրենսդրական։ Այսպես, Նուխիի կոմենդանտը արգելում էր մահմեդական գյուղացիներին մեկից ավելի կին պահել, որովհետև ասում էր նա, թուրք գյուղացին առանց այն էլ աղքատ է և մեկից ավելի կին պահելն այնքան քայքայիչ ազդեցություն է ունենում նրա տնտեսության վրա, որ նա այլևս չի կարողանում կանոնավոր կերպով հարկեր ու տուրքեր վճարել։ Տեղական ազգաբնակությունը, սովորական լինելով խանական բռնություններին և հասկացողություն չունենալով մի բարեկարգ վարչական սիստեմի մասին, ոչինչ տարօրինակություն չէր տեսնում ռուս բյուրոկրա-

տիայի գործադրած խանական ռեժիմի մեջ և ինքն էլ համարում էր կոմենդանտներին գրեթե իսկական խաներ։

1830 թվականին Պասկևիչը Ղարաբաղ ուղարկեց իր պաշտոնյաներից մեկին, որի անունն էր Զուբարյով, հանձնարարելով նրան քննել այդ երկրում հաստատված կարգերը։ Եվ Զուբարյովը իր զեկուցման մեջ, ուր մանրամասն և խիստ համարձակ կերպով լուսաբանում էր այդ ընդարձակ երկրի դրությունը, հիասթափում էր պատճառում Պասկևիչին նախ և առաջ նրա սիրելի իշխան Աբխազովի նկատմամբ։ Բանից դուրս էր գալիս, որ բոլոր արքունական հողերը բաժանված են իշխան Աբխազովի և Ղարաբաղի կոմենդանտի սիրելիներին, հարկերը մասնատրվում է մահալների մեջ ոչ թե ըստ նրանց հարստության աստիճանի, այլ նայած, թե ինչ խնամիական կապեր կան բարձր իշխանության և մահալների կառավարիչ բեկերի մեջ։ Պետական գումարները ծախսում են առանց թույլտվության և բաժանվում են նույնիսկ առանց ստացագրերի։ Քաղաքային դատարանը գոյություն ունի Շուշիում անունով միայն, որովհետև բոլոր վճիռները նրա անունից ինքնակամ գրում է իշխան Աբխազովի սիրելին, կապիտան Միրզա-Ադիգյոզալովը, իսկ դատարանի անդամները (տեղացիներից), լինելով ռուսերեն լեզվին անտեղյակ, միայն ստորագրում են այդ պատրաստի վճիռները։ Ավազակություններն ու թալանը Ղարաբաղում գոյություն ունեն ամենամեծագույն չափերով։ Եվ այս՝ շնորհիվ այն հանգամանքի, որ բեկերը և մահալների կառավարիչները (նայիբները) իրենց մոտ պահում են տանուտերներով ոճրագործներ, որոնք փախած էին Ղազախից, իսկ Աբխազովի աջ բազուկը ներկայացնող Միրզա-Ադիգյոզալովը պահում էր իր մոտ այդպիսի ոճրագործ փախստականներից արդեն ամբողջ 350 ընտանիք։ Եվ այսպիսով իրենք, մահալների կառավարիչ բեկերն ու կապիտան Միրզա-Ադիգյոզալովն էին կազմակերպում և իրենց ղեկավարության տակ պաշտպանում ավազակությունները, որոնք ժողովրդական կյանքի պատուհաս-աղետներն էին կազմում, ոչ պակաս սարսափելի քան պատերազմը, ժանտախտը, սովը։ Ըստինքյան պարզ ու հասկանալի է, թե ինչ կլիներ աշխատավոր գյուղացիության դրությունն այս դաժան իրականության մեջ։ Բայց Զուբարյովն ունի և գյուղական կենցաղի ցնցիչ մանրամասնությունները։

«Մեհտի Ղուլի խանի Պարսկաստան անցնելուց հետո,— գրում է նա,— Վրաստանի գլխավոր կառավարիչ—այսինքն՝ Երմոլովի կողմից Ղարաբաղ էին ուղարկվել իսկական պետական խորհրդական Մոգիլևսկին և գնդապետ Երմոլովը, որպեսզի ցուցակագրեն Ղարաբաղի գյուղերը և պարզեն խանի եկամուտները։ Բեկերն, օգտվելով ռուս կառավարության անգիտությունից և իշխան Մադաթովի օրինակից, ցուցակագրության ժամանակ սեփականություն են ցույց տալիս իրենց երբեք չպատկանած գյուղերը, իսկ Ղարաբաղը ցուցակագրող այդ պաշտոնյաները, չքննելով նրանց ապացույցները, վստահանալով միայն նրանց խոսքերին, այդ գյուղերը գրել են նրանց վրա։ Եվ այդ անհիմն ցուցակագրումը մինչև այժմ բեկերի համար իրավունք է ծառայում անշարժ կալվածներ ունենալու։ Այս ցուցակագրումից հետո Ղարաբաղի զինվորաշրջանային իշխանությունը և կոմենդանտները, համարելով իրենց լիազոր տիրապետողներ, բաժանում էին գանձարանի բաժին մնացած գյուղերը ոչ միայն իրենց բեկ սիրելիներին, այլև նույնիսկ թարգմաններին, եսաուլներին, վաճառականներին ու մնացած ռամիկներին, որոնք միջոցներ էին գտնում շահելու նրանց բարյացակամությունը։ Արքունի գյուղերի առանց բարձր իշխանության գիտության բաժանումը կատարվում է և այժմ։ Այդ չարիքն այնպես է զորացել, որ այժմ Ղարաբաղում շատ քիչ թվով արքունի գյուղեր են մնացել»։ Գյուղացիական այս ընդհանուր իրավազրկության և խոշտանգված

դրության մեջ Ջուբարյովը շեշտում է առանձնապես հայ գյուղացիության դժբախտ վիճակը։ Թուրք բեկերը, ասում է նա, դաժանաբար են վարվում հայերի հետ, անգթաբար ծեծում են նրանց, խլում են ամեն գույք, ծանր տուգանքներ են առնում։ Ծանր դրության մեջ էին, մանավանդ, Պարսկաստանից գաղթած հայ գյուղացիները։ Նրանց թույլ չէին տալիս բարձրանալու հովասուն սարալանջերը, ստիպելով մնալ ամառը Ղարաբաղի ջերմոտ և վատառողջ տափաստաններում, ուր նրանք մահանում են անխնա, այնպես որ երեք ամսվա ընթացքում ջերմախտը ջարդել էր գաղթականների երրորդ մասը, 1012 հոգի։ Թուրքերը թալանում են նրանց ապրանքը, ոտնակոխ են անում նրանց ցանքսերը։ Գանգատներն ու բողոքները մնում են անհետևանք, տեղական վարչությունը խեթ աչքով է նայում հայերին, հալածում է նրանց և նեղություններ պատճառում։

Այսպես էր, վերջիվերջո, այն վարձատրությունը, որ ցարական կառավարությունից ստանում էր Ղարաբաղի հայությունն իր այնքան հերոսական ջանքերի, այնքան ծանր զոհողությունների փոխարեն, որոնք մոտ 1 և կես դարի ընթացքում անխնա գործադրվել էին ռուսական տիրապետությունն այս երկրում հաստատելու համար։ Վերջիվերջո, դուրս էր գալիս, որ ցարիզմի սիրելիները հազարավոր կեղծ ու պատիր միջոցներով, խաբեբայություններով ազնվական դարձած բեկերն են, որոնք դեռ նոր, մի երկու-երեք տարի միայն առաջ, դավաճանել էին նույն այդ ցարիզմին և կոտորում էին նրա զորքերը։ Այսօր հայ գյուղացիությունն էր, որին անգթորեն հարստահարում էին ամենքը, և ամենից առաջ ինքը, ցարական կառավարությունը։ Ամեն ծանրություն դրվում էր հայ ժողովրդի վրա, առանց նույնիսկ շնորհ անելու, որ նա այդ ծանրությունը տանե թուրք ժողովրդի հետ համահավասար չափով։ Շուշում ռուսական զորքերը տեղավորված էին հայ ընտանիքների մեջ և այս շատ ծանր պարտավորությունից ինչ-որ պատճառով ազատված էին նույն քաղաքում ապրող թուրքերը։

Բայց պատմական ճշմարտությունը պարտավորեցնում է ասել, որ Ղարաբաղի հայ գյուղացիության վրա ծանրացած կալվածատիրական լուծի դժբախտությունն այնքան կրոնական-ազգային հանգամանք չուներ, որքան դասակարգային։ Ահա նույն Ջուբարյովը Կղարճի գյուղումն է և իր աչքով տեսնում է այն վայրենությունները, որ կատարում է այդտեղ եկած մահալապետ (նայիբ), Մելիք Խուդադադը, իսկ սա արդեն հայ է, Վարանդայի տիրահռչակ Մելիք Շահնազարի որդին։ Նա հարբեցողություն է անում, կաշառքներ է պոկում, ծեծում է, բռնաբարում մի հայուհու, արգելում է եկեղեցում կատարվող մի պսակադրություն, պահանջելով որ հարսի առաջին գիշերն իրեն տրվի և այլն և այլն։ Իրենց տիրոջ պես սանձարձակ վայրենիներ են և այս Մելիքի գրագիրն ու ծառաները։

Թողնելով, որ ավելի մանրամասն հայոց պատմությունն իր էջերի մեջ առնե և հայ գյուղացու այն տանջանքները, որոնց բեմ են հանդիսացել Անդրկովկասի ուրիշ շրջանները, մենք այսքանն էլ բավական ենք համարում բնորոշելու համար ճորտատիրական Ռուսաստանի հովանավորած կարգերն իր այս նորանվաճ երկրներում։ Կմնա ասել, որ ռուսական բյուրոկրատիան ամենևին չէր ուզում բավականանալ հանդիսատեսի դերով այս բոլոր աղաղակող անկարգությունների հանդեպ։ Նա ուզում էր գտնել և միջոցներ՝ դրությունը բարելավելու համար։ Այս նպատակով Պետերբուրգի կենտրոնական կառավարությունը, ինչպես հիշեցինք, ամբողջ հանձնաժողով ուղարկեց Անդրկովկաս՝ սենատոր Հանի նախագահությամբ։ Կատարվեցին մանրամասն քննություններ բեկային հողատիրության բնությունն ուսումնասիրելու համար։ Սենատոր

Հանը հասավ այն եզրակացության, որ Անդրկովկասի մահմեդական ազնվականության (բեկերի և աղալարների) և ռուսական կալվածատիրության մեջ գրեթե ոչ մի նմանություն չկա։ Պարսկաստանում ճորտություն չի եղել, որպեսզի ընդմիշտ օրինականացներ ազնվականի գյուղատիրությունը, բեկերն ու աղալարները եղել են պետական պաշտոնյաներ, որոնք իրենց ծառայության համար ստացել են իրավունք օգտվելու այս կամ այն գյուղի արդյունքներից։ Բնական կլիներ այժմ և արդար, որ բեկերն ու աղալարները հեռացվեին իրենց պաշտոններից և նրանցից խլվեին գյուղերը։ Բայց որովհետև այդ դասակարգը սովորել է ձրիակերության, ուստի Հանն առաջարկում էր, որ բեկերին ու աղալարներին տրվի կենսաթոշակ մինչև մահ, իսկ դրանից հետո նրանց ժառանգներն արդեն իրենք պիտի սեփական աշխատանքով ապրուստ հայթայթեին իրենց համար։

Սենատոր Հանի այս նախագիծն ընդունվում է Պետերբուրգում և օրենք է դառնում 1841 թվականին։ Այս կերպով ջնջվում էր հողատիրական ձրիակեր մեծ դասակարգն Անդրկովկասում և կարելի պիտի լիներ շնորհավորել բազմատանջ գյուղացիությունը, եթե 1841 թվի օրենքը երկար տևողություն կարողանար պահպանել։ Սակայն այսպես չեղավ և չէր կարող լինել, քանի որ կալվածատիրական Ռուսաստանի ցարերը եթե մի բանից վախենում էին, այդ հենց կալվածատիրական դասակարգն էր։ Անդրկովկասի բեկերն ու աղալարները մեծ դժգոհություն հարուցեցին իրենց իրավազրկության դեմ և այս շարժումը սկզբից ևեթ սկսեց երկյուղ ազդել ռուսական կառավարությանը։ Ստեղծվում էր մի խառնակ դրություն։ Մի կողմից գյուղացիներն էին բողոքում կալվածատերերի ծանր ճնշումների դեմ, մյուս կողմից կալվածատերերն էին դժգոհություն հայտնում, որ իրենց չեն թողնում շահագործել գյուղացիներին։ Գյուղացիական բողոքները երբեմն հանգում էին բացարձակ դիմադրությունների, որոնք կալվածատերերի և նրանց պաշտպան ռուսական բյուրոկրատիայի կողմից խեղդվում էին «ապստամբություն» անունով։

Այսպիսի մի «ապստամբության» դեպք մենք տեսնում ենք դեռ 1841 թ. օրենսդրության միջոցին, երբ նա տակավին չէր գործադրված Ղարաբաղի Հայրենակ Ջարգանաշեն կամ Վերին Թաղավարդ գյուղում, որի կալվածատերը մի հայ էր, Հովսեփ բեկ Մաղաթյան։ Գյուղացիության մեծ մասը բացարձակապես հրաժարվեց կատարել այդ կալվածտիրոջ պահանջները։ Ոստիկանությունը միջամտեց ի պաշտպանություն Մաղաթյանի և մի քանի ձերբակալություններ կատարեց։ Ձերբակալվածներից մեկը մեռավ վախից և երբ այս մասին գյուղամիջում պատմեց Օհան քահանա Տեր-Բարսեղյանը, նորից խռովություն սկսվեց գյուղում և նորից կալվածատերը դիմեց ցարական ոստիկանության օգնությանը։ Այս անգամ պատժողական միջոցներն ավելի խիստ եղան, քահանան հայտարարվեց «ապստամբության» պարագլուխ և առաջավոր գյուղացիները ձերբակալվեցին և աքսորվեցին Թիֆլիս մի տարի ժամանակով։ Գյուղը նորից հպատակվեց Հովսեփ բեկ Մաղաթյանին։

1842 թվականը տագնապալից էր նախկին խանությունների և մանավորապես Ղարաբաղի գյուղացիության համար։ Բեկերն ու աղալարները ամեն տեղ խռովություն էին տարածում, ասելով թե սկսվում է նոր ռուս-պարսկական պատերազմ։ Այս կալվածատիրական պրովոկացիան մեծ խուճապ պատճառեց Ղարաբաղի հայ գյուղացիներին, որոնց հիշողությունից դեռ չէին անհետացել 1826-ի պարսկական արշավանքի սարսափները։ Խուճապ սկսվեց, ժողովրդի մի մասը փախավ մտավ Շուշի բերդը, մյուսն ըստ հին սովորության, ամրացավ լեռներում։ Շուտով սակայն, հայտնի դարձավ, որ լուրը սուտ է և ամեն ինչ հանդարտվեց։ Բայց իրավազուրկ դարձած բեկությունն էլ

հասել էր իր նպատակին, որովհետև փախած ժողովրդի արտերը ոչնչացան։ Սրանով որպես թե գյուղացիությունը պիտի համոզվեր — թե որքան հարկավոր է, որ գոյություն պահպանե կալվածատեր դասակարգը։ Միաժամանակ, չնայած 1841-ի օրենսդրության, բեկությունը շարունակում էր գործադրել իր ծրիակերական իրավունքները, ցույց տալով այս բանի մեջ և նույնիսկ վայրենի անողոքություն։ Նույն այս 1842 թվականին էր, որ Ղարաբաղի Բանաձոր (Բանազուր) հայ գյուղը «ապստամբական» դրություն էր ընդունում իր կալվածատեր գնդապետ Ջաֆար Ղուլի աղայի դեմ, պահանջելով որ նա թեթևացնե հողատիրության պայմանները։ Շարժումը միանգամայն խաղաղ բնավորություն էր կրում — գյուղացիները միայն խնդրողներ էին և իրենց այդ խնդիրքին տվել էին հարգոյական, պատկառանքով լի մերձեցման կերպարանք։ Նրանց կողմից ներկայացավ Շուշու խանական տոհմից ծագած և մեզ մասամբ հայտնի մեծ աղային Բանաձոր գյուղի քահանա Մինաս Միրզաբեկյանը, վրան փիլոն ծածկած։ Ջաֆար Ղուլի աղան կատաղում է «ռահաթի» այդ հանդգնության վրա, հրամայում է վերցնել քահանայից փիլոնը և գցել իր շան վրա, ապա հարկադրում է նրա հետ եկած գյուղացիներին, որ նրանք երկըրպագեն փիլոն ծածկած շանը։ Ռուսական բյուրոկրատիան արդեն սարսափահար էր դարձել բեկական դժգոհությունից, որ ծավալված էր նախկին խանությունների մեջ։ Զինվորական մինիստրը շտապում էր գալ Թիֆլիս և կանգնեցնում էր 1841-ի օրենքի գործադրությունը։ Նորից ոստիկանությունը վերանորոգում էր իր աշխատանքը՝ ազնվական դասակարգի օգուտները և ծրիակերական ախորժակը պաշտպանելու համար։ Բավական չէր, որ բանաձորցիները այնքան ծանր վիրավորանք էին կրել իրենց աղայից, նրանք դեռ պատասխան պիտի տային ռուս բյուրոկրատիային իրենց «ապստամբության» համար։ Բայց հենց որ ոստիկանությունը երևում էր գյուղում, գյուղացիները թողնում էին իրենց տները և փախչում էին լեռները։ Վերջիվերջո, այս «ապստամբության» գործը հանվեց դատարանի առաջ և հողային խռովության առաջնորդները, որոնց մեջ և Մինաս քահանան, ենթարկվեցին զանազան պատիժների։

Կառավարչական բարձր շրջաններում 1841 թ. ռեֆորմի անհաջողությունն ուղղակի հուզում առաջացրեց։ Ճորտատիրական կայսր Նիկոլայը, որ մի ժամանակ սենատոր Հանի գործունեությունը Անդրկովկասում համարում էր ամենայն խրախուսանքի և վարձատրությունների արժանի, այժմ իրեն համարում էր խաբված և աչքից գցում էր խեղճ ռեֆորմատորին։ Կովկասն այսպիսով մնում էր նախկին քաոսական դրության մեջ, ակնկալելով, թե երբ և ինչ միջոցով կլուծվի բոլոր չարիքների սկզբնապատճառ դարձած հողային առեղծվածը։ Եվ Նիկոլայը գտնում էր այդպիսի մի, գրեթե հրաշագործ, միջոց։ Այդ՝ իր առասպելական և հարստություններով հռչակված, Ռուսաստանի խոշոր ճորտատիրական ազնվականության պարծանքներից մեկը կազմող կոմս Վորոնցովն էր, որ համարվում էր առաջնակարգ պետական խելք, անգլիական դաստիարակություն ստացած մի մեծ բյուրոկրատ, որ 1844 թ. վերջերին, լինելով հարավային Ռուսաստանի ընդհանուր նահանգապետ, նշանակվում էր նաև Կովկասի կուսակալ, այս անգամ արդեն փոխարքա անունով և առանձին լիազորություններով օժտված։ Կովկասյան տարեգրությունների մեջ այս խոշոր բյուրոկրատը գրավում է շատ պատվավոր տեղ բյուրոկրատական իդեալների տեսակետից։ Հրճվանքով պատմում են, որ նա գեղեցկացրեց և ճոխացրեց Թիֆլիսը, հիմնեց նրա մեջ թատրոն, գիտական հիմնարկություններ, առանձին ուշադրություն դարձրեց մշակութային կարիքների վրա և այլն։

Հայերի համար Վորոնցովն ուներ այն առանձին հմայքը, որ նա Ներսես կաթողիկոսի անձնական բարեկամն էր։

Սակայն, ոչ անգլիական դաստիարակությունը, ոչ մշակութային բարեմասնությունները չէին խանգարում, որ կոմս (հետո և իշխան) Վորոնցովը լինի մի մոլեռանդ ճորտատեր։ Անդրկովկասյան երեք գլխավոր ազգությունների իր ձեռքում պահելու համար նա գրավում էր այդ ազգությունների տիրող դասակարգերը։ Վրաց ազնվականությունը նա շատ մոտեցնում էր իրեն այդ ծրիակեր դասակարգի սիրած վայելքների, խրախճանքների, փայլուն հանդեսների միջոցով, որոնց համար միշտ բաց էին իր պալատի դահլիճները։ Հայ առևտրական կապիտալը նա շոյում էր ու փայփայում, նրա բերանը գցելով շաղշաղ պատառներ-կապալներ, Թիֆլիսում նաև հողեր՝ տներ, քարվանսարաններ շինելու և այդպիսով ավելի ևս շատ հարստություններ դիզելու համար։ Մնում էին թուրք ազնվականությունը — բեկերն ու աղալարները, ինչպես և սրանց դասակից, բայց համեմատաբար շատ փոքրաթիվ հայ մելիքները։

Սրանք բոլորը «զրկված» ազնվություններ էին և ջոջ ազնվությունը Կովկասում իր «լուսավոր» փոխարքայությունն սկսելուն պես, վարձատրում էր այդ «զրկվածներին» լիուլի չափերով, վերականգնելով նրանց կալվածատիրական իրավունքները նոր, ուժեղացրած հավելումներով, որոնք տանում հասցնում էին բեկերին, աղալարներին ու մելիքներին գրեթե ճորտատիրական երջանկության։ Այսպես էին փառաբանված Վորոնցովի խմբագրած և Նիկոլայի հաստատած օրենքները, որոնք հրատարակվեցին 1847—1851 թվականներին։ Մեր նորագույն հետազոտողներից մեկն այսպես է բնորոշում այդ օրենսդրական գործունեությունը։

«Սա պարզ ճորտական դրություն էր, որ մտցնում էր ռուս իշխանությունը։ Նա ոտնահարում էր ժողովրդական բազմության շահերը և թիկունք կանգնում բարձր դասին։ Սրանով իսկապես հաղթանակում էր «ազնվապետական սկզբունքը» և մեր երկիրն ընդունում էր Ռուսաստանի պատկերն ու նմանությունը»։

Թե ինչ տեսակ դրություն էր ստեղծվում գյուղական աշխատանքի համար այդ ռուսական «պատկերի ու նմանության» մեջ, այդ մասին մի փոքրիկ, բայց շատ պերճախոս նմուշ տալիս էր այն գյուղացիական պայքարը, որ սկսվեց 1849 թվականին Զանգեզուրի խոշոր հայաբնակ Տեղ գյուղում կալվածատեր Ասադբեկ Ռուստամբեկովի դեմ։ Իր գանգատներով Տեղի գյուղացիությունն ստիպեց, վերջիվերջո, «լուսավորված և ազատամիտ» Վորոնցովի կառավարությանը մի հանձնաժողով ուղարկել տեղն ու տեղը քննելու համար Ռուստամբեկովի ռեժիմը։ Այսօր մենք ունենք մեր ձեռքի տակ Տեղի բնակիչների կողմից քննիչ հանձնաժողովին ներկայացրած ընդարձակ մեղադրական թուղթը, որի մեջ բերված են մոտ քսան մշտական, սիստեմ դարձած հարստահարությունների կեղեքումների օրինակներ։ Այսօր էլ այս մի քստմնելի վավերագիր է, թե մինչև որ աստիճան անգթորեն մարդը կարող է շահագործել մարդուն։ Մոտ 7—8 հարյուր տուն ունեցող մի գյուղ կատարյալ ստրուկ էր մի մարդու ձեռքին, որ դեռ երեկ, անցյալ օրը մեկն էր Շուշու խանի ծառաներից և գյուղին տիրանալու իրավունք ստացել էր, ինչպես ապացուցում էին գյուղացիները, մի կեղծ թղթի միջոցով։ Կատարյալ ստրուկներ էին գյուղացիները, իսկ Ռուստամբեկովը՝ հին պարսկական մի սատրապ։ Գյուղացիները պարտավոր էին իրենց հաշվով պահել և կերակրել իրենց սատրապի շներն ու ձիաները, այլև ռոճիկ, ուտելիք և խմելիք (օղի), անգամ անկողին տալ այն մարդկանց, որոնք ուղարկվում էին սատրապի կողմից շները, ձիաները պահելու համար։ Բազմաթիվ տուրքերի և հասույթների մեջ մենք տես-

նում ենք և զուտ ճորտային մի հարկ — ամեն հարսանիքից 1 ռուբ. 20 կոպեկ։ Կոռ ու բեգարին չափ ու սահման չկա։ Տեղ գյուղի աղքատ ու անհյուրասեր բնության մեջ գյուղացիները մեծ տանջանքներով այգի են տնկել, Ռուստամբեկովն այնքան հարկ է դնում նրա վրա, որ գյուղացիները ստիպված են լինում անխնամ թողնել այգին, որ նա փչանա և իրենք ազատվեն կեղեքումների մի ավելորդ առիթից։ Հարկ ու տուրք տրվում էր թե առձեռն դրամով և թե բնական բերքերով և սրանց նշանակողն ու չափը որոշողը լոկ միմիայն Ռուստամբեկովի քմահաճույքն էր։ Նմուշի համար դնենք գյուղական գանգատի մի կետը, 12-րդը. «Ամեն տարի ութ անգամից ավելի ձու կհավաքե և ճուտ, որ ամենևին սովորություն չկա այս կողմերում»։

Ահա ինչ տեսակ ճորտատիրական ռեֆորմներ էր բերում Անդրկովկասի միլիոնավոր տանջվող ու կեղեքվող գյուղացիության զուտ անգլիական և ոչ թե այլ կրթություն ստացած Վորոնցովը։ Որևէ օգուտ այդ կողոպտվող աշխատավորը չէր ստանում իր գանգատներից, որովհետև նա գյուղացի ժողովուրդ էր, իսկ երբ գյուղացին սկսում էր բղավել իր քերթվող կաշու ցավից, իսկույն ասում էին, թե այս «ապստամբություն է», որը ճնշելու համար գործի էին դրվում ծեծը, բանտը, Սիբիրը։ Անդրկովկասյան գյուղացիական ըմբոստացումներից մեզ, տարաբախտաբար, շատ օրինակներ չեն հայտնի։ Բայց որ նրանք եղել են շատ, հարյուրներով գուցե, այս վկայում են հենց մեր բերած օրինակները։ Եվ այս հարյուրավոր դեպքերն, իբրև մռնչյունը մարտիրոսացող ժողովրդի, գնում էին խառնվելու այն մեծ մռնչյունին, որ անեծքի նման կախված էր ճորտատիրական Ռուսաստանի վրա։

Վերջացնելով մեր խոսքը ռուսահայ գյուղացու դրության մասին, մենք չպիտի մոռանանք մի, թեև մասնավոր, բայց բնորոշ հանգամանք ևս։ Հայ գյուղացու վրա տիրողը, նրան անխնայորեն հարստահարողը միայն վրացի կնյազը, թուրք բեկն ու աղալարը, հայ մելիքը չէին, այլև նրա եկեղեցին։ Քրիստոնեությունը պետական կրոն դառնալուց հետո, նույնքան ստրկասեր և կալվածասեր էր, որքան աշխարհական բռնավորը։ Հայոց եկեղեցին էլ երբեք չի քաշվել կալվածատիրոջ և ճորտատիրոջ դիրքից։ Ճորտեր ունեին ոչ միայն վանքերն ու եկեղեցիները, այլև հոգևորական իշխանավորները։ 1849-ական թվականներին Ղարաբաղի առաջնորդ Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալյանը ուներ Գանձասար գյուղում 27 ճորտ ընտանիքներ, որոնք եթե տեղական ծագում չունեին, գուցե գնված էին Վրաստանում և փոխադրված այստեղ։ Այս ճորտերին Նիկոլայ կայսրի թույլտվությամբ, ընծայում էր Գանձասարի վանքին, որ բացի դրանից ուներ իր սեփական ճորտությունը, բաղկացած 14 ընտանիքից։ Գանձասարի մոտ գտնվող ս. Հակոբի վանքն էլ ուներ 2 ճորտ ընտանիք։ Այսպիսով մենք ունենք մեր առջև ամբողջ ճորտական անկյուն, ուր մարդկային թշվառության այդ ծայրահեղ դրությունը շահագործող են կղերն ու նրա սուրբ տաճարը։

Դ. Թուրքահայ գյուղացիությունը: *Իր առանձնահատուկ պայմաններով հայ գյուղացիությունը Թուրքիայում ներկայացնում էր շահագործման և տանջանքների մի տարբեր աշխարհ։ Այստեղ էլ հողատիրությունն այն առանցքն էր, որի շուրջը պտտում էին հայ գյուղացու անձնական, ընտանեկան և համայնական շահերը, ուստի այստեղ էլ շատ երևույթներ միևնույն հիմնական կնիքն էին կրում, ինչ էր ռուսահայ գյուղացիության մեջ։ Սակայն Թուրքաց Հայաստանի հողատիրությունը, եթե ոչ ամբողջովին և ամենուրեք, գոնե ամենամեծ մասով, այն էլ Հայաստանի զուտ հայաբնակ և կարևոր գավառներում, ուներ այն խոշոր առանձնահատկությունը, որ նա գտնվում էր քուրդ ազնվականության ձեռքին, այնպես որ Թուրքահայ գյուղացիության հարցը*

գերազանցորեն քրդական հարց էր, այսինքն կապված քուրդ ժողովրդի համայնական կազմակերպության, նրա մեջ տիրող ցեղերի առանձնահատուկ կենցաղային պայմանների ու ավանդների, ցեղային հոգեբանության հետ։ Քրդական հողատիրության ամենագլխավոր հատկությունը նրա հնագարյան ավատական բովանդակությունն էր, ուր գյուղացին արդեն բացարձակապես առանց վարագուրման, ճորտ էր, այս բառի ընդարձակ իմաստով, որ դնում էր ճորտի կյանքն ու գույքը ճորտատիրոջ անսահման տրամադրության տակ, առանց որոշելու և կանոնավորելու այդ երկուսի, ճորտի և նրա տիրոջ փոխադարձ հարաբերությունները մի որևէ մնայուն օրենսդրությամբ։ Կային, ինարկե, հին ավանդություններ, սովորություններ, որոնք նվիրագործել էին այս կամ այն կարգը, դրությունը, բայց վերջիվերջո, ամեն ինչ կախված էր մնում կալվածատեր աղայի կամքից, իսկ այս կամքը թելադրողը կամ ուղղողը մի անգետ, կիսավայրենի, գիշատիչ ցեղի բնազդներն էին։ Այս ազդակն էլ, որ այնքան ուժեղ է լինում նախնական մի ժողովրդի մեջ, ճակատագիր էր ստեղծում հայ ամբողջ աշխատավոր գյուղացիության համար, կապելով նրա բախտը, նրա ֆիզիկական գոյությունն այն ցեղային շարժումների հետ, որոնք շարունակ ալեկոծում էին քուրդ ժողովրդի ներքին կյանքը, և որոնք որոշ քաղաքական դիրք էին տալիս նրան թուրքական պետության մեջ։

1830-ական թվականների երկրորդ կեսին, երբ Եգիպտոսի Մեհմեդ Ալի փաշայի պատերազմները Թուրքիայի դեմ գրեթե բոլորովին վերացրել էին սուլթանի իշխանությունը Փոքր Ասիայում, քրդությունը, շատ պատեհ ժամանակ համարելով այս, ընդհանուր ապստամբական մի շարժում էր սկսում՝ սեփական ազգային անկախություն ստեղծելու համար, այնպես որ թուրքաց կառավարությունն ստիպված էր լինում եգիպտական արշավանքի դեմ մղվող գործողությունների հետ զուգընթացաբար, զենք գործածել նաև ապստամբ քրդության դեմ՝ նրան զսպելու համար։ Այս թուրք-քրդական պատերազմի մեջ հայ գյուղացիությունն իր ամենամեծ մասով պարտավորված պիտի լիներ կանգնելու քրդության կողմը իբրև նրա ճորտը, որի վրա ընկած էր ամենամեծ ծանրությունը նաև այն միջցեղային պատերազմների մեջ, որոնք այնքան սովորական էին քուրդ իրականության մեջ։ Երբ երկու ցեղապետ կռվի էին բռնվում իրար հետ, նրանց հատուկ ճորտ հայ գյուղացիները գնում էին իրենց աղաների համար պատերազմելու։ Նրանց սովորաբար կանգնեցնում էին առաջին շարքում, որպեսզի նրանք իրենց վրա առնեն թշնամի կողմի մահաբեր հարվածները։ Եվ այսպիսով իրար հանդեպ, իրար թշնամի էին կանգնում կռվող աղաների հայ ճորտերը, որոնք պարտավորված էին եղբայրական արյունահեղություններ կատարել քուրդ կալվածատիրության փառքի համար։ Այժմ, քուրդ-թուրքական պատերազմի մեջ, ներքին հակամարտ ճակատներ չկային և ճորտ հայությունը պիտի ըստ սովորականին, կանգնած լիներ քուրդ կռվողների առաջին շարքերում, ճակատած արդեն օսմանյան զորքերի դեմ։ Բայց այսպիսի բան տեղի չունեցավ։ Արթնացող հայ ռայան զգալով, որ իր շահը չէ սեփական ստրկությունն ավելի ևս ամրացնելու համար արյուն թափելը, հավատարիմ էր մնում թուրք կառավարությանը, և այս այնքան խիստ արտահայտված ձևով, որ օսմանյան բանակի գլխավոր հրամանատար Հաֆիզ փաշան ծրագրում էր կանոնավոր զորքեր կազմել այս ժողովրդից։ Տեղեկություն այս մասին մեզ տալիս է գերմանական երևելի ռազմագետ Մոլտկեն, որ այն ժամանակ ծառայում էր թուրքական բանակում և անձամբ մասնակցել էր Հաֆիզ փաշայի արշավանքներին քրդերի դեմ։ Հավանություն տալով թուրք հրամանատարի այդ դիտավորությանը, Մոլտկեն այսպես էր բնորոշում հայ ռայան — «Անատոլուի հայերը շատվոր են, ուժեղ և կորովի, հնազանդության

և կարգապահության վարժ։ Գերմանացի ռազմագետը, սակայն, չգիտեր, որ հենց այդպիսի հատկություններ ունեցող մի ժողովուրդը կրոնը դասակարգային անջրպետումների միջոց դարձրած մի պետության մեջ ավելի պիտանի պիտի համարվեր ստրկական մշակումների, քան զինվորական ուժ դառնալու համար։ Եվ հայ ռայայի զինվորագրությունը տեղի չունեցավ, մանավանդ որ թուրքական քաղաքականությունը քրդերի վերաբերմամբ չէր կարող մշտապես թշնամական լինել և իսկույն փոխվեց, երբ քրդական ապստամբությունը հանդարտվեց։ Ամբողջովին կրոնական նախապաշարմունքներով տոգորված կառավարությունն այնքան էլ միամիտ չէր, որ պակասեցներ քուրդ ժողովրդի ազդեցությունը ասիական նահանգներում, ուր բազմաթիվ քրիստոնյա ժողովուրդներ էին ապրում պատրաստ՝ գործիք դառնալու եվրոպական մրցող պետությունների ձեռքին։

Թե որքան կասկածամիտ էր թուրք կառավարությունն այս խնդրի մեջ, ցույց են տալիս այն դեպքերը, որոնց թատերաբեմ հանդիսացավ Ջուլամերիկը, մի գավառ Քրդստանի լեռներում, ուր հին ժամանակներից կղզիացած ապրում էր ասորի կամ նեստորական անունով հայտնի մի ժողովուրդ, որի թիվը հաշվվում է մոտ 100 հազար։ Այս ժողովրդի մի մասն էլ ապրում էր Պարսկաստանի Սալմաստ գավառում, ուր 1840-ական թվականների սկզբից մուտք են գործում ամերիկացի միսիոներները և կրոնական քարոզչություն են սկսում, թե հայերի և թե ասորիների մեջ։ Առանձին ուշադրություն նրանք դարձնում են մանավանդ վերջիններիս վրա և Սալմաստի վրայով էլ մտնում են Ջուլամերիկ, ուր ապրում էր ասորիների կրոնական պետը, որ կրում էր Մար Շմոն ավանդական անունը, հատկացված այդ պաշտոնին։ Միսիոներների մեջ իր առանձին եռանդով և բարոյական խոշոր հատկություններով աչքի էր ընկնում Գրանտը։ Այս մարդու անխոնջ ջանքերի հետևանքով էր, որ Ասիայի այդ խուլ անկյունում խավար մոռացված փոքրիկ քրիստոնյա ժողովրդի մեջ սկսվում է բարոյական վերածնության մի շարժում։ Միսիոներները բաց են անում դպրոցներ, տպարան, տպագրում են գրքեր, հիմնում են պարբերական հրատարակություն ասորական լեզվով։ Այս մտավոր շարժումը գրգռում է Թուրքաց կառավարության կասկածամտությունը և նա որոշում է տեղն ու տեղը խեղդել այդ նոր երևույթը, որ վտանգավոր էր համարվում մանավանդ, այն պատճառով, որ ասորիներն իրենց լեռնագավառում կազմում էին դրեթե մի անկախ համայնք։ Թուրք պետականության համար միշտ գոյություն է ունեցել մի արյունոտ իմաստություն—սրի քաշել այն ժողովուրդները, որոնք որևէ պատճառով վտանգավոր էին դիտվում պետության համար։ 19-րդ դարի սկզբից այս ահռելի «սկզբունքը» անկյունաքար էր դառնում թուրքական քաղաքականության մեջ և մենք նրա քստմնելի տեսարաններին ականատես ենք դառնում, մանավանդ հունական ապստամբության միջոցին (1821—1827), երբ թուրքական յաթաղանը ամբողջ ժողովուրդներ էր ջնջում, տասնյակ և հարյուր հազարներով դիակներ կուտակելով (օրինակ, Քիոս կղզու ջարդը)։ Այնուհետև Թուրքիան իբրև թուլացած և եվրոպական իմպերիալիզմից անխնա շահագործվող մի ասիական բռնապետություն, արյան գետերով արտահայտվող ջղաձգություններ էր ցուցադրում իր անկախությունը և մոլեռանդական պահպանողականությունը պաշտպանելու համար։

Այսպիսի մի միջոց էր որոշվում նաև նեստորական ասորիների վտանգը վերացնելու համար։ Եվ կառավարությունն իր ձեռքին բնաջնջող սուր դարձրեց ցեղերից մի երկուսը, գրգռելով նրանց կատաղությունը ամերիկացի միսիոներներին աշակերտող քրիստոնյաների դեմ։ Այդ ցեղերից մեկը բնակված էր Քուրդիստանի կենտրոնը կազմող Բոհտան գավառում և ենթարկված էր քա-

ջարի, խելոք, բայց՝ չափազանց արյունռուշտ Բեդերխան բեկին, իսկ մյուսը Հեքքիարիի շրջանում էր գտնվում և նրա ցեղապետն էր Հուր Ալլահ բեկը։ Թուրք կառավարությունը նրանց ներշնչում էր, թե նեստորականները ձգտում են անկախություն ձեռք բերել և հպատակեցնել քրդերին իրենց իշխանությանը։ Միսիոներ Գրանտը դպրոցական շինություն էր կառուցանում Մար Շմոնի բնակության վայրում և կառավարության գործակալներն ասում էին քրդերին, թե այդ դպրոցական շինություն չէ, այլ բերդ է, ուր պիտի ամրանա քրդերին ստրկացնող ասորական թագավորությունը։ Պետք է ասել, որ այսպիսի ներշնչումներ թուրքաց կառավարությունն ստանում էր կաթոլիկ միսիոներներից, որոնց ղեկավարողը ճշմարտությունը չէր, ինչպես չի եղել երբեք, այլ մրցակցությունը զզվելի կրոնական վաճառականության մեջ։

1843 թվականին նեստորականների լեռնագավառի այն մասի վրա, որ կոչվում էր Թիար, հարձակում գործեցին մի կողմից Բեդերխան բեկը, մյուս կողմից՝ Հուր Ալլահ բեկը և կոտորեցին 10 հազար բնակիչներ, իսկ կանանց ու երեխաներին քշեցին տարան գերի վաճառելու։ Դժբախտ ժողովրդի մեջ նոր ծիլեր արձակած մտավոր վերածնությունն, իհարկե, միանգամից սպանվեց, երկրի կիսանկախ դրությունը շատ բան կորցրեց, թուրքական զորամասեր դրվեցին մի քանի ամուր տեղերում։ Թեև թուրքաց կառավարությունն արդեն կարողացել էր, ինչպես ասում են, մի հարվածով երկու թռչուն սպանել, բայց և այնպես Բեդերխան բեկը 1846 թվին կրկնեց իր սոսկալի արշավանքը, այս անգամ ընտրելով նեստորական երկրորդ գավառը՝ Թխոմա, որ ազատ էր մնացել առաջին արշավանքից, և այստեղ էլ ջարդեց 2 հազար մարդ։ Նույն Բեդերխանբեկի ձեռքով թուրքաց կառավարությունը կոտորածներ կատարել տվեց և Մոսուլի վիլայեթում ապրող եզդիների մեջ։ Ինչպես հայտնի է, եզդիները կազմում են նույն քուրդ ժողովրդի մի հատվածը, որ խոսում է միևնույն քրդերեն լեզվով, բայց տարբերվում են մյուս քրդերից միայն նրանով, որ հավատարիմ է մնացել իր հին, շատ ինքնատիպ կրոնին։ Այս տարբերությունն անհատակ խորխորատ է բացել միևնույն ցեղի երկու հատվածների մեջ, թշնամացնելով նրանց իրար հետ մինչ այն աստիճան, որ քուրդն իր համար սրբազան պարտք էր համարում հալածել, կեղեքել եզդիին նույն ֆանատիկոսությամբ, ինչպես այդ անում է հայերի և այլ ոչ իսլամ ժողովուրդների վերաբերմամբ։ Եվ բնական էր, որ հավիտյան հալածվող եզդիները դարերի ընթացքում մոտեցել էին իրենց բախտակից հայերին, որոնց հետ խառն ապրում էին Թուրքաց Հայաստանի շատ կողմերում։ Բնական էր նույնպես և այն, որ երկու հարստահարվող ու կեղեքվող ժողովուրդները միաժամանակ և միասին հասնեին այն դրության, որ մենք անվանեցինք «ռայայի զարթնում»։ Այդ այն դրությունն էր, ինչպես տեսանք, երբ անասնական դրության հասցված ժողովուրդը, շրջապատող հանգամանքների ազդեցության տակ, հասկանալ է սկսում իր դրությունը և հենց առաջին անգամից լցվում է իրեն ստրկացնողների դեմ ծառանալու զգացմունքով։ Հայի և եզդիի հարստահարիչը քուրդն էր։ Եվ ահա մենք տեսնում ենք երկուսին էլ միացած գիշատիչների դեմ։ Ինչպես հիշատակեցինք վերևում, 1820—1821 թվականներին Սղերդում ստեղծվում է մի խոշոր հայ-եզդիական միություն՝ պատերազմելու համար մի քանի քրդական ուժեղ ցեղերի միության դեմ։ Այս հայ-եզդիական բանակի մեջ հայերի առաջնորդն էր Տեր-Պողոս անունով քահանան, որ քրդերի և եզդիների մեջ հայտնի էր Քեշե Պոլե անունով (որ նշանակում է «Քահանա Պողոս»), իսկ եզդիներին առաջնորդում էր Շայխ Միրզըբը։ Ավանդաբար մնացած պատմությունը նկարագրում է, թե ինչպես Քեշե Պոլեն և Միրզըբը ջարդեցին և փախուստի դարձրին քրդական մի խոշոր բանակ։ Ռայան այսպիսով ցույց էր տալիս, թե ին-

քը սովորում է պաշտպանել իրեն։ Նույն ինքնապաշտպանական նպատակով էր, որ ամենքից իր կրոնի համար հալածվող եզդին ամրանում էր Միջագետքի Սինջար լեռներում, ստեղծում էր իր համար մի ամուր ապաստան, ուսկից խմբերով հարձակումներ էր գործում, թալանում ու սպանում էր իր թշնամիներին։ Բեդրխան բեկը իր կոտորածներով այս եզդիներին վերածում էր նույն դրության, որի մեջ ընկան նեստորականները 1843-ի ջարդից հետո։

Այսպես ուրեմն, քրդությունն իրեն ցույց էր տալիս միանգամայն պատրաստ, Թուրք կառավարության մի հատ ներշնչումով, դառնալ նրա արյունոտ ծրագրերի բարեխիղճ կատարող։ Այս մի ամբողջ դաստիարակություն էր, որ ավելի և ավելի անհաշտ կերպարանք էր տալիս քրդերի և նրանց դրկից ժողովուրդների հարաբերություններին, մի դաստիարակություն, սակայն, որ ձեռնատու էր միայն սուլթանական կառավարության։ Իբրև նախնական մի ժողովուրդ, քրդերը չէին կարողանում հասկանալ, որ նրանք թուլացնելով իրենց հարևան ժողովուրդները, նրանք թուլացնում են և իրենց, մենակ մնալով Թուրքաց կառավարության առաջ, որի համար քրդական անկախությունն էլ նույնքան անհանդուրժելի էր, որքան և նեստորականների անկախությունը։ Այս բանը շատ շուտ զգաց և ինքը, Բեդրխան բեկը։

1845 թվականին, մինչև նա հղփացած էր նեստորականների լեռներում կանանց և մանուկների հազարավոր դիակների կույտերով ձեռք բերած հաջողությամբ և հեղինակությամբ, Կ. Պոլսի սուլթանական պալատում նորից հաղթանակում էր ռեֆորմների կուսակցությունը և դրա հետևանքով Թանզիմաթը մտցվում էր այն վերջին երկու վիլայեթներում—Էրզրումի և Դիարբեքիրի, ուր նա դեռ չէր հայտարարված։ Միաժամանակ նույն տեղերում մտցվում էր և այն կարգադրությունը, որ դեռ սուլթան Մահմուդն էր ստորագրել և որ վաղուց մտցված էր Թուրքիայի բոլոր կողմերում։ Այդ այն օրենքն էր, որով ջնջվում էր զինվորագրության հին կարգը և նրա տեղ հաստատվում էր նոր կարգ, ջնջելով հողատիրական այն հին ձևը, որ կոչվում էր զինվորական ավատների սիստեմ։ Իր տեղում մենք արդեն ծանոթացել ենք այդ սիստեմի հետ։ Գիտենք, որ պետությունը հողաբաժիններ էր տալիս զինվորական գործիչներին և փոխարենը պահանջում էր, որ նրանք պատերազմի դեպքում որոշ քանակությամբ զինվոր տան։ Այժմ զինվորագրությունը հանված էր այդ կարգից և ուրեմն, պետությունն այլևս կարիք չուներ իր հողերը, իր այդ զինվորական ավատները թողնելու մասնավոր մարդկանց պայմանական տիրապետության տակ և հրամանագրում էր, որ այդ հողերը վերադարձվեն պետական գանձարանին։

Երկու նորամուծություններն էլ, թե Թանզիմաթը և թե այս հողային օրենքը, ահագին հարված էին տալիս քրդական հողատիրության և երջանկություն էին բերում հայ գյուղացիությանը մի անգամից, մի գրչի շարժումով, վերացնելով ճորտատիրությունը, դարերի այդ մղձավանջը, որ խեղդում էր նրան։ Բայց այս դեռ թղթի վրա էր։ Պիտի իրագործվեր և կյանքի մեջ։ Ահա սոսկալի, արյունոտ հարցը, որի պատասխանին զուր սպասում էր թուրքահայ ժողովուրդն ամբողջ երեք քառորդ դար և որին նա զոհվեց վերջնականապես։ Քուրդ ժողովրդի համար Թանզիմաթը մի մեծ չարիք էր, ամբողջ մի դժբախտություն։ Նրա ներմուծումից քառորդ դար անցնելուց հետո էլ 1880-ական թվականների սկզբին, Քրդստանի լեռներում դեռ երգվում էին երգեր, որոնց մեջ Թանզիմաթը ներկայացվում էր իբրև մի մեծ չարիք քրդության համար։ Անմիջապես, նույն 1845 թվին իսկ, մեծ զրկանքի ենթարկվող քուրդ կալվածատիրությունը զենք է բարձրացնում այդ չարիքի դեմ, իր ճորտատիրական իրավունքները պաշտպանելու համար։ Ապստամբության գլուխ է կանգ-

նում դարձյալ Բեդրխան բեկը, որ արդեն իր հաջողություններով միանգամայն ամրապնդված էր համարում քրդական անկախությունը, բայց այսօր տեսնում էր իր դաշնակիցներին ոչ միայն անկախությունից, այլև պարզ կալվածատիրական իրավունքներից զրկված։ Այս անգամ նրա աջակիցն է Հեքքիարիի ցեղապետներից մեկը, խան Մահմուդը։ Եվ որովհետև քրդական ճորտերի ահագին մեծամասնությունը հայ գյուղացիությունից էր, ուստի նրա դեմ էլ գլխավորապես ուղղվում էր քրդական ապստամբությունը։ Սկսվում են սովորական հարձակումներ, կեղեքումներ, ավարառություններ, հրդեհումներ հայ ճորտության դասական հայրենիքը կազմող Վասպուրականի, Տարոնի գավառներում և այլ տեղերում։ Տանջվողների աղաղակները հասնում էին Կ. Պոլիս. Մատթեոս պատրիարքը երեք անգամ աղերսագրերով դիմում էր սուլթանի կառավարության, խնդրելով նրա ուշադրությունը աղետված գավառների վրա։ Թուրք կառավարությունն արդեն որոշել էր վերջ տալ և քրդական անկախության և նրան մնում էր խորհուրդ տալ պատրիարքին, որ գավառական հայությունն ամեն կերպ աջակցություն ցույց տա այն զինվորական արշավանքին, որ ինքն ուղարկում էր Բեդրխան բեկի և խան Մահմուդի դեմ։ Պատրիարքը շտապում է հորդորական կոնդակներ ուղարկել Թուրքաց Հայաստանի բոլոր կողմերը, կոչ անելով, որ բոլոր հայերը դուրս գան օգնելու օսմանյան այն բանակին, որ գնում էր քրդերի դեմ։ Շատ նշանակալից է, որ տեղական թուրք ազգաբնակությունը, որի համար նույնպես ատելի էր Թանզիմաթը, քրդերի կողմն էր այն կռիվների մեջ, որոնք տեղի էին ունենում Վանում, թուրքերը քրդերի հետ էին հայերի դեմ։

Պատրիարքական կոչը լայն արձագանքներ գտավ Հայաստանի գյուղացիության մեջ և ամեն կողմերից խմբերով գնացին միանալու հակաքրդական արշավանքին, որի հրամանատարությունը հանձնված էր Օսման փաշային։ Այս՝ կառավարության կողմից խրախուսված մի ապստամբություն էր, որ ճորտերը մղում էին իրենց սարկացնող կալվածատիրության դեմ։ Դեռ երբեք հայ ռայան այսպիսի դրության մեջ չէր եղել։ Եվ այս առաջին անգամն էր, որ կանչվում էր ռազմական դաստիարակության իր իսկ կառավարության կողմից։ Եվ հասկանալի է, թե որքան խոր պիտի նստեր այդ դաստիարակությունը նրա ստրկական սրտի խորքում՝ ապագայում էլ այնտեղ խոսելու և թելադրող հանդիսանալու համար։ Շղթայված ստրուկը, ինչպես էր և Հին Հռոմում, կռվեց մեծ թափով ու եռանդով, թեև նրա ձեռքին գտնվող զենքերը զուտ ստրկական էին։ Այսպես, երբ խան Մահմուդը պաշարեց Վանի Այգեստան կոչված քաղաքամասը, այդտեղի հայերը իրենց ընտանիքները ապահովության համար, տեղավորում են կտուրների վրա, իսկ իրենք գնում էին հալածելու թշնամիներին։ Ծերերը վերջում պատմում էին Վանում, որ այդ մարդիկ զինված էին դանակներով, կացիններով, մահակներով, շամփուրներով, նույնիսկ և քարերով։ Եվ նրանք, այնուամենայնիվ, բռնեցին խան Մահմուդին և հանձնեցին Օսման փաշային։ Սա երկու կողմից հարձակում տանելով Բեդրխան բեկի դեմ, ստիպեց նրան փակվել իր բերդում, որ և պաշարվեց։ Այս դրության մեջ քուրդ հռչակավոր ցեղապետը կարողացավ դիմանալ միայն 17 օր և անձնատուր եղավ Օսման փաշային մի պայմանով, որ իր կյանքը խնայվի։

Կառավարական հաղթանակը կատարյալ էր, միաժամանակ հեշտ և էժանագին։ Երկու ցեղապետներն ուղարկվեցին Կ. Պոլիս, ուր քրդական անկախությունը հայտարարվեց ոչնչացած և Քրդստանը՝ օսմանյան պետության սովորական նահանգների թիվը մտավ։ Այս բոլոր դեպքերը շատ մեծ ուրախություն էին պատճառում Կ. Պոլսի հայերին, որոնք քրդական ուժի անկման

պաշտոնական հայտարարության մեջ տեսնում էին Հայաստանի ազատումը բարբարոս և գազանաբարո քրդերի իշխանությունից և տոնեցին այդ ազատումը հավատարիմ հպատակական ցույցերով, որոնք կատարվում էին եկեղեցական հանդիսավոր աղոթքներով: Այդ ջերմեռանդությունն անծանոթ չմնաց և սուլթան Աբդուլ Մեջիդին, որ և իր ներքինապետի միջոցով շնորհակալություն հայտնեց Մատթեոս պատրիարքին և հանձին նրա նաև գավառական հայության: Պատրիարքը շտապում էր այս կայսերական մեծ «շնորհն» ավետել իր ժողովրդին վերամբարձ փառաբանություններով և Հայաստանի ազատության փաստից ներշնչված ազգասիրական ջերմաջերմ զեղումներով: «Հայտնի է բարեպաշտության ձերում,— գրում էր նա,— որ մեր սիրելի հայրենիքը՝ Հայաստան աշխարհի, որ ամենայն աշխարհից ու ազգաց առջև հայոց ազգին պարծանքն մըն էր իրեն անհամեմատ և աննման ձիրքերովը, այսքան հարյուրավոր տարիներե ի վեր ապստամբ և աշխարհավեր քրդաց անողորմ և անգութ բռնակալներուն ձեռքը ինկած մատնված, ավերակ և անապատ էր դարձեր և անմռունչ բարբառով կուլար կողբար յուր սիրելի զավակունքը՝ ողորմելի ազգս հայոց, որ այն մարդակերպ գազաններուն պատառող ժանյացը որս ինկած էին տարաբախտությամբ...: Օրհնյալ է Աստված և օրհնյալ է աջ նորա ամենազոր և ամենահաղթ, որ լսելով դպրատանց անմեղ տղայոց թոթովախոս բարեբանությունը և քահանայից հատուկ և ջերմեռանդ և արտասվալից և բազկատարած բարեմաղթությունը, ձգեց վախ և երկյուղ մը թշնամյաց խումբերուն մեջ, կորագլուխ ըրավ, այն բռնավորներուն գլխավորները խան Մահմուդը և Պետերխան պեյը, որոնք ընդհանուր զորապետին ձեռքը ինկած հուսահատ և ամոթահար, իրենց կենացը խնայել կխնդրեին և շնորհեց այս մեծապանծ և սքանչելի հաղթությունը նորին կայսերական վեհափառության բարձր անունին և հզոր հրամանին, որով և ազատեցավ Հայաստան աշխարհը սա դառն վիճակեն, սա անտանելի գերութենեն. և հուսամք, որ այսուհետև կնորոգի, կպայծառանա և յուր առաջին սքանչելի տեսիլը և գեղեցկությունը կստանա»:

Առաջին անգամն էր, որ թուրքահայ ռայայի քաղաքական դրությունը որակվում էր Կ. Պոլսի գաղութային բարձր, վարիչ խավերի կողմից: Եվ մենք հենց այս առաջին քայլից տեսնում ենք նրանց ենթարկված մի շատ էական տկարություն: Անկարող լինելով տեսնել և գնահատել իրերն իսկական դիրքի և գունավորման մեջ, նրանք ընկնում էին այնպիսի հրճվանքի մեջ, որ իսկապես ներկայացնում էր տեսողական պատրանք մի սուրուկ համայնքի համար: Հայաստանի ազատություն, քրդական տիրապետության վերացում: Եվ սակայն, ի՞նչ էր ասում սառն իրականությունը: Թուրքաց կառավարությունը, ճիշտ է, զսպել էր քրդերի մի մասը, բայց բոլորովին միտք չուներ ընդմիշտ և վերջնականապես փչացնելու իր հարաբերությունները քուրդ ժողովրդի հետ, որ շարունակում էր մնալ նրա համար մի շատ կարևոր ռազմական տարր պետության արևելյան սահմանների վրա: Ուրիշ հանգամանքներ եթե չուզենանք քննության առնել, բավական կլինի հիշել հենց միայն այն մրցությունը, որ տեղի ունեցավ 1828—1829 թվերի ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռուսաց և թուրքաց կառավարությունների մեջ քրդերին իրենց կողմը քաշելու համար: Եվ հենց 1847-ի անցքերն էլ ցույց էին տալիս, որ թուրքաց կառավարությունը հասկանում էր, թե իր շահը միայն քրդերին պատժելը չէր, նրանց անկախությունը վերացնելը չէր, այլև մյուս կողմից նրանց սիրաշահելն էր, ուրիշ ճանապարհով իրեն մոտեցնելն էր: Իսկ այդ ուրիշ ճանապարհն ընկած էր այն իրավունքների վրայով, որոնք հատկացվում էին հայ ռայային Թանզիմաթի կողմից: Մոռացության տալ, որքան այս հնարավոր էր, Թանզիմաթը,

համբերող լինել, որքան այս դարձյալ հնարավոր էր, քրդական ավատականության շարժումների վերաբերմամբ,— այս կնշանակեր սիրաշահել քուրդ ազնվականությունը և մի ձեռքով շոյել այն, ինչ մյուս ձեռքով քանդվել էր Օսման փաշայի հաղթության հետևանքով: Այս ճանապարհն էլ բռնեց թուրքաց կառավարությունը:

Եվ իրավ, Քրդիստանը դրեթե ոչինչ չէր կորցնում Օսման փաշայի նվաճումից հետո: Գերի տարված Բեդերխան բեկը գտնում էր Կ. Պոլսում չափազանց սիրալիր ընդունելություն: Սուլթանը նրան թողեց նրա բոլոր կալվածները Քրդիստանում, տվեց նրան փաշայի աստիճան և նրա որդուն ընդունեց զինվորական ծառայության մեջ: Այն ժամանակվա թուրքաց պաշտոնական լրագրում, որ հրատարակվում էր հայերեն լեզվով, տպվեց Բեդերխան բեկի մի ցուցմունքը, որի մեջ նա ասում էր, թե ինքը Կ. Պոլսում բնակվում է մի այնպիսի պալատում, որի նմանը նրա նախնիքները չեն տեսել նույնիսկ երազում: Երևի նա հենց այդտեղ էլ բնակվեր ընդմիշտ, եթե չլիներ եվրոպական դիվանագիտության ճնշումը, որ գոնե ձևական մի բան անելու համար իբրև պատիժ 12 հազար անմեղ նեստորականներին 1200 եզիդիներին կոտորելու համար՝ պահանջում էր սուլթանից աքսորի միջոցը ձեռք առնել երկու արնախում ցեղապետների նկատմամբ: Այս պատճառով էր, որ Բեդերխան բեկն ուղարկվեց Կրետե կղզին, իսկ խան Մահմուդը՝ Սիլիստրե: Քրդիստանում Բեդերխան բեկի տեղը բռնում էր նրա եղբորորդի Եզդանշիրը, որ նույնպես մի քաջարի և հռչակված տիրող էր: Շատ ուրիշ ցեղապետներ վերականգնվեցին իրենց նախկին իրավունքների մեջ և դրանց թվումն էր նաև գազանաբարո Նուր Ալլահ բեյը, դժբախտ Ասորիների դահիճը: Նուր բեյը բացի այդ բոլորից, վարչական պաշտոնների էր կոչվում երկրի զանազան կողմերում:

Ահա թե ինչ դասավորում էր ստեղծվում Թանզիմաթի շուրջը հայաբնակ նահանգներում: Կ. Պոլսի հայերի հրճվանքներից ոչինչ չէր մնում, և հայ գյուղացիության առջև այնուհետև լեռնանում էր մի զարհուրելի խնդիր—իրագործել իրեն տված թղթեղեն իրավունքներն իր արյունով ու տանջանքներով:

Գլուխ հինգերորդ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍՈՒՄ

1. Դաստիարակչական շարժում: Հայկական նորագույն մշակույթի զարգացման ամբողջ 19-րդ դարի ընթացքում կարելի է հետևել միայն այն շարժումներով, որոնց հանդիսավայր էին հանդիսանում հայ գաղութները: Այս ընդհանուր պատկերը չի խանգարում այն հանգամանքը, որ դարի երկրորդ կեսից մշակութային շարժումները սկսում են մուտք գործել նաև բուն Հայաստան, որովհետև այս վերջինը միշտ ենթարկված էր գաղութներին, ապրում էր նրանց աշխարհայացքներով, նրանցից էր ստանում դաստիարակչական հրահանգներ, գրական ճաշակ և այլն: Հետևաբար մենք 19-րդ դարի ամբողջ մշակույթը կարող ենք համարել միայն գաղութային: Գաղութներում և հաճախ շատ հեռավոր գաղութներում, օրինակ՝ Հնդկաստանում էին մշակվում հայ մտքի առաջադիմության համար անհրաժեշտ պահանջները և այդտեղից էլ այդ պահանջները ստանում էին որոշ կուլտուրական մարմիններ և հաստատություններ ստեղծելու մղումները:

Հայ նորագույն դաստիարակչական շարժման դարագլուխն էլ պետք է որոնել հնդկահայ առևտրական կապիտալի հովանու տակ: Արդեն մենք նկատել ենք իր տեղում, որ քաղաքական ազատագրման գործի մեջ մտնելով իբրև

ծրագրող և հրահրող առևտրական կապիտալը արդեն բավականաչափ անգլիացած, բախում էր այն անխորտակելի ժայռին, որ ներկայացնում էր ժողովրդական տգիտությունը։ Այս պատճառով ժամանակի նշանաբանն էր դառնում, որ առհասարակ որևէ մարդկային երջանկություն չկա և չի կարող լինել առանց կանոնավոր դաստիարակության։ Այս մեծ անհրաժեշտությունը լրացնելու հոգսի մի մասը առևտրական կապիտալն իր վրա է վերցնում բուրժուական բարեգործության ձևերով։ Այս գործը զրկված կլիներ իր զարգացման համար անհրաժեշտ մրցակցությունից, եթե հայ առևտրական կապիտալի մեջ էլ բաժանում չմտցնեին դավանաբանական խտրությունները, ինչպես արդեն մտցրել էին կյանքի մեջ։ Հասարակական գործառնության մեջ հայ լուսավորչական և հայ կաթոլիկ կապիտալներ—այս մի շատ նշանավոր շարժիչ էր հատկապես հայ իրականության մեջ։ Մենք արդեն գիտենք, որ հայ կաթոլիկ հոգևորականությունն այն «լուսավորյան վանականությունն» էր, որ շատ մոտ էր կանգնած եվրոպական լուսավորության և իր գիտական պատրաստությամբ անհամեմատ բարձր էր լուսավորչական վանականությունից։ Այս հակադրությունը իրապես արտահայտվում էր և առևտրական կապիտալի լուսավորչական կամ կաթոլիկ գործադրման մեջ։ Այսպես, մի հնդկահայ վաճառական Մասեհ Բաբաջանյանի կտակած գումարով հայ լուսավորչական վանականությունը կարողանում էր իրականացնել միայն Նոր Նախիջևանի փոքրիկ ու խեղճ դպրոցը, մինչդեռ դարձյալ հնդկաստանցի վաճառականներ (կաթոլիկ) Ռաֆայել Ղարամյանի և Սամվել Մուրադյանի թողած կտակներով Վենետիկի Մխիթարյան վանքը իրականացնում էր երկու բարեկարգ և կարևոր դպրոցներ։ Հարցն, իհարկե, կտակած գումարի քանակությունը չէր, այլ այն միջավայրը, ուր գործադրվում էր այդ դաստիարակչական գումարը, ինչպես նաև գործադրողների պատրաստությունը։ Իրարից ետ չմնալ, իրարից առաջ անցնել ուժ և իշխանական հեղինակություն պահպանելու համար—այս դասակարգային պայքարի բնական պահանջն էր, մտրակող, մրցող և այսպիսով՝ առաջադիմական։

Այս պայքարը, մանավանդ Կ. Պոլսի հայ գաղութում, ամիրայական իշխանության տակ, ինչպես տեսանք, առաջացրեց հասարակական ամբողջ շարժումներ։ Կաթոլիկ ամիրաների հեղինակությունը մեծանում էր շնորհիվ այն մշակութային նվաճումների, որոնք Մխիթարյան վարդապետների շնորհիվ մտցված էին հայ կաթոլիկ համայնքի մեջ, բարձրացնելով նրա դիրքն ու նշանակությունը արևմտյան հայության մեջ։ Հենց միմիայն Մխիթարյան վանական դպրոցները Վենետիկում, Տրիեստում, Կ. Պոլսում, Վիեննայում և այլ տեղերում այնպիսի հիմնարկություններ էին իրենց կանոնադրությամբ և գիտական պաշարով, որ կարող էին միայն նախանձի և մրցակցության զգացմունք բռնկեցնել հակառակորդ կողմի մեջ։ Բացի դպրոցներից, հայ կաթոլիկ համայնքն ուներ գրական առաջադիմության խոշոր հմայքը։ Նա էր, որ տալիս էր գրական մեծ, տաղանդավոր գործիչներ Մխիթարյան վարդապետների վերարկուների տակ։ Այստեղ, այդ համայնքի մեջ էր, որ 1810 թվին կազմակերպվում էր առաջին կրթական-հրատարակչական ընկերությունը «Արշարունյաց» անունով։ Լուսավորչական ամիրայությունը, պայքարելով կաթոլիկ ամիրայության օր ավուր աճող ազդեցության դեմ, սովորաբար գործադրում էր, ինչպես տեսանք, հալածանքների միջոցով, բայց ստիպված էր ենթարկվել նաև մշակութային մրցության պահանջին, ուստի և իր կապիտալի մի մասն տալիս էր հասարակական գործադրության, բանալով իբրև բարեգործություն, որ դարձյալ, իհարկե, պիտի մեծացներ նրա հեղինակությունը հասարակության մեջ բարեկարգ և ապահովված դպրոցներ։ Մենք տեսանք, որ բացի այս մրցությունից, հայ դաստիարակչական շարժման մեջ էր մտնում նաև օտար

կապիտալը, որ իր քաղաքական նպատակով քողարկում էր կրոնական քարոզչական ցուցանակի տակ և միսիոներական դպրոցներ էր բաց անում, առաջացնելով հայերի մեջ անհրաժեշտություն՝ մրցելու նրանց հետ իրենց սեփական բարեկարգ դպրոցների միջոցով։

Այսպես էին ահա, ընդհանրապես, այն ազդեցություններն ու գործոնները, որոնք 19-րդ դարի սկզբից արդյունավորվեցին հայության մեջ մի դպրոցական շարժում, որ գնալով զարգանում է և դառնում ազգային ինքնուրույնության ամենագլխավոր և կարևորագույն արժեքը։ Առաջին կանոնավոր, հաստատուն հասույթներով ապահովված դպրոցները գաղութային են. Հնդկաստանի Կալկաթա քաղաքում մարդասիրական ճեմարանն է գոյություն ստանում, արևմտյան հայության մեջ Կ. Պոլսի դպրոցները, որոնցից մեկի, այն է Իսկյուտարի ճեմարանի շուրջը, ինչպես տեսանք, տեղի ունեցան ամբողջ ժողովրդական շարժումներ։ Գրեթե միաժամանակ Վենետիկի Մխիթարյանները հնդկահայերի կտակած գումարներով բաց էին անում Մուրադյան և Ռաֆայելյան վարժարանները, որոնք մի ժամանակ խոշոր կրթական դեր կատարեցին։

Ռուսահայերի մեջ էլ դպրոցական գործը 19-րդ դարի սկզբից խոշոր նվաճումներ է սկսում առևտրական կապիտալի միջոցով։ Ամենից առաջ Աստրախանում էր, որ տեղացի մի հայ վաճառականի փողով բացվում է նրա անունը կրող Աղաբաբյան դպրոցը։ Ապա 1814-ին, Մոսկվայում բացվում է Լազարյան ճեմարանը, ապահովված Լազարյան տոհմի առատ նվերներով։ Ճեմարանի հիմնադիրներից մեկի, Հովակիմ Լազարյանի նամակներից երևում է, որ այդ դպրոցական հիմնարկության համար ընտրված էր նպատակ—կատարել մոտավորապես այն կրթական-գրական դերը, որ կատարում էին Մխիթարյան դպրոցները։ Այդ նպատակով էր, որ ճեմարանը իր բացվելուց մի քանի տարի հետո ձեռք բերեց և մի տպարան, որ 1830—1860-ական թվականներին հրատարակչական աչքի ընկնող գործունեություն է ունեցել։ Նույն այդ մրցողական նպատակով Թիֆլիսում 1824 թվին մի մեծ դպրոց է բաց անում Ներսես Աշտարակեցին, որի անունով էլ հետո դպրոցը կոչվեց Ներսիսյան։ Այստեղ էլ ծրագրվում էր, Մխիթարյան վանքի նման, գրական գործունեություն և այս պատճառով այստեղ էլ բացվեց տպարան, որ չնայած իր փոքրության և աղքատության, շատ աչքի ընկնող դեր կատարեց Թիֆլիսի հայ գաղութի մտավոր զարգացման մեջ մինչև 1860-ական թվականները։ Այնուհետև ռուսահայերի դպրոցական գործին զարկ տվող հանդիսանում էր 1836 թ. Պոլոժենիեն, որ ինչպես տեսանք, արտոնում էր հայ հոգևորականությանը իր եկեղեցական պետքերի համար բաց անել հոգևոր դպրոցներ յուրաքանչյուր թեմի կենտրոնը կազմող քաղաքում և ծխական դպրոցներ՝ թեմի մյուս տեղերում, եկեղեցիների մոտ։ Միջնակարգ և տարրական դպրոցներ պահելու այս արտոնությունը, սակայն, չէր օգտագործվում բավականաչափ բավարար կերպով առաջին քսան տարիների ընթացքում, երբ նույնիսկ թեմական դպրոցները փոքրիկ և ուսումնական մասի կողմից շատ աղքատ դրված հիմնարկություններ էին։ Պատճառն այս տեսակ դպրոցների աղքատությունն էր, մեկ էլ այն միջավայրերի հետամնացությունն, ուր բացված էին նրանք։

Այժմ տեսնենք, թե ազգային կրթության այդ հիմնարկություններն ինչ տեսակ մտավոր հարստություն էին կարող պատրաստել հայ ժողովրդի համար։ Նկատենք ամենից առաջ այն, որ բոլոր այդ դպրոցները հոգևոր էին, այսինքն գտնվում էին հոգևորականների ձեռքին, որոնք դպրոցի ու նրա դերի մասին եթե մի որոշ հասկացողություն ունեին, այդ այն էր, թե դպրոցը պետք է լինի եկեղեցու գավիթը, ուրեմն կրթությունը պիտի ունենա մի ամենևին

նեղ ու սահմանափակ, ծառայողական նպատակ։ Դպրոցի ներքին կյանքը, ուսումնական մասը գտնվում էր հոգևորականների անմիջական հսկողության տակ, հետևաբար և տոգորված էր կրոնական նախապաշարմունքներով և կրոնավորական կենցաղի խավար ըմբռնումներով։ Լավագույն պայմանների մեջ դրված կարելի էր համարել Մուրադյան վարժարանը, որ մի ժամանակ տեղափոխվեց Փարիզ, ուր և մնաց երկար։ Բայց այս համաշխարհային կենտրոնում էլ դպրոցը խնամքով պարուրված մնաց կղերական հսկողության և վանական արգելքների խիստ կապանքների մեջ։ Այդ մի գիշերօթիկ փակ դպրոց էր, ուր դրսից օդ և ջերմություն չէր թափանցում։ 1848 թվականի հեղափոխական փոթորիկների մեջ անգամ վարժարանը մնաց անսասան սառն ու անհաղորդ, կիզիչ ու հրդեհվող գաղափարներին և այնտեղից դուրս չեկավ մի հատ ըմբոստ, արմատական միտք։ Դրեթե բոլոր ավարտողներին կարելի էր որակել լուսավորված տիրացու անունով։ Այսպես էին օրինակ Մուրադյան շրջանավարտ երկու կարկառուն դեմքեր, որոնք իրենց ժամանակի հայտնի գործիչներից էին—Մարկոս Աղաբեկյան և Մատթեոս Մամուրյան։

Լազարյան ճեմարանը թեև չէր ենթարկված անմիջապես հոգևոր իշխանության, բայց դրա փոխարեն դրված էր ցարական բռնակալության ճնշման տակ, ուստի և շատ հեռու էր մի ազատ և լուսավոր կրթարանի դերից։ Այս ճեմարանն ուներ իր կյանքի մեջ երկու շրջան։ Առաջին շրջանում նա մի հայ դպրոցի հանգամանքներն ուներ, բայց երկրորդում վերածվեց մի պարզ ռուսական գիմնազիայի, այն տարբերությամբ, սակայն, որ հայերեն լեզվի ուսուցումը համեմատաբար լայն չափով էր դրված։ Այսպիսով հայ մտավոր գործիչներ ճեմարանն ավելի շատ պիտի տար իր առաջին շրջանում։ Բայց այս ժամանակ ճեմարանը դրված էր ժանդարմների շեֆի և իր խավարամտությամբ հռչակված կոմս Արակչեևի խնամակալության տակ։ Խնամակալ էին բացի դրանցից և Լազարյան տոհմի ներկայացուցիչները։ Այս մեծափարթամ հարուստներն արդեն այնքան կերպարանափոխության էին ենթարկվել, որ իրենց համար շուք ու աշխարհիկ վայելք որոնում էին պետական ծառայության մեջ, ուր հասել էին բարձր աստիճանների՝ պալատական պաշտոնների մեջ։ Հասկանալի է, որ սրանց հսկողությունն էլ ճեմարանի վրա պիտի լիներ զուտ բյուրոկրատական, ինքնակալության համար հավատարիմ և հլու ծառաներ պատրաստելու ջանքերով տոգորված։ Լազարյան ճեմարանը, ճնշված լինելով այսքան հսկողությունների տակ, հեռու մնաց այն քաղաքական խմորումներից և հուզումներից, որոնք հաճախ այցելում էին ռուսական դպրոցները ցարական ռեժիմի տակ։ Լազարյան ճեմարանից հետո հիշատակության արժանի դպրոցական հիմնարկություն կարելի է նկատել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը։ Հիմնադիր Ներսես Աշտարակեցին դրել էր իր այդ գործը բավական լայն հիմքերի վրա, բայց նրա աքսորից հետո նրա դպրոցն էլ հալածանքների առարկա դարձավ, ենթարկվեց կրճատումների, իսկ Պոլոժենիեից հետո նա դարձավ Թիֆլիսի թեմի համար կարևոր թեմական դպրոց։ Սակայն նա մյուս երկու թեմական դպրոցների (Երևանի և Ղարաբաղի) մակերևույթի վրա չէր գտնվում, այլ բարձր էր նրանցից, որովհետև ավելի լավ նյութական պայմանների մեջ էր գտնվում։ Այդ՝ Թիֆլիսի առևտրական կապիտալից առանձնապես սիրված մի հիմնարկություն էր, ստանում էր նրանից առատ նվերներ, մինչդեռ մյուս թեմական դպրոցները պահվում էին ողորմելի գրոշներով, ուստի և հասարակ գրագիտությունից ավելի մի բան չէին տալիս։

Ահա այս դպրոցներն էին, որ պատրաստում էին հայ ժողովրդի համար մի նոր հասարակական դասակարգ՝ միջին կամ մանր բուրժուական ինտելի-

գենցիա, որ ազդեցիկ էր թե իր թվով և թե այն հանգամանքի շնորհիվ, որ հայկական դաստիարակություն էր ստացել և իր պարապմունքների բերմունքով ավելի հաճախ և ավելի մոտիկից էր շփվում ժողովրդական խավերի, այն է՝ արհեստավորների, մանր խանութպանների և այլ այսպիսի զանգվածների հետ։ Բայց հայ դաստիարակչական շարժումը չէր կարող սահմանափակվել միմիայն իր ազգային դպրոցների շատ անձուկ շրջանակի մեջ։ Մենք տեսանք արդեն, որ դեռ 18-րդ դարի վերջերից Կ. Պոլսից երիտասարդ հայեր սկսում են Եվրոպա անցնել, գլխավորապես Իտալիա, այնտեղի համալսարաններում բժշկություն սովորելու համար։ Այս հոսանքը 19-րդ դարում և մանավանդ Թանզիմաթից հետո, մեծանում է, ուղղվելով դրեթե բացառությամբ Ֆրանսիա, որի բարձրագույն դպրոցներում աշակերտում էին և գիտության ուրիշ ճյուղերին։ Միևնույն շարժումը տեղի է ունենում և Անդրկովկասում ռուսաց տիրապետության հաստատումից հետո։ Այստեղի հայ երիտասարդներն էլ ռուսական համալսարանների ճանապարհն են բռնում։ Եվ այսպիսով հայության երկու հատվածների մեջ էլ սկսում է կազմակերպվել բարձր կամ համալսարանական ինտելիգենցիան։ Բայց այս ինտելիգենցիայի մեջ էլ պետք է տարբերել երկու տեսակներ. մեկն այն է, որ հայոց դպրոցներից է մտնում համալսարան, հետևաբար տանում էր իր հետ ազգային դաստիարակության հիմքերը։ Այսպիսի համալսարանավարտները մեծ մասամբ նվիրում են իրենց հայ հասարակական գործունեության։ Երկրորդ տեսակն այն էր, որ օտար դպրոցներից էր մտնում համալսարան և դաստիարակված լինելով օտար կամ օտարացած շրջաններում, մեծ մասամբ կորչում էր հայ ժողովրդի համար, դառնալով միայն ծագումով հայ ինտելիգենտ։ Այս տեսակի մտավորականները անհամեմատ ավելի շատ էին ռուսահայերի մեջ։

2. Հասարակական միտք: Որքան դպրոցական հաստատությունները զարգացնում են իրենց գործունեությունը, որքան ծավալվում է բարձրագույն ուսում ստանալու ձգտումը և որքան այս շարժումների հետևանքով ստվարանում են միջին և բարձր ինտելիգենցիայի շարքերը, այնքան հետզհետե երևան է գալիս հայ կյանքի մեջ բոլորովին նոր, բայց շատ ուժեղ երևույթը—կազմակերպվող և շերտավորվող հասարակական միտքը, որ և կամաց-կամաց, կրած ազդեցությունների հետևանքով, սկսում է սկզբում, ինչպես, դեռ համեստ, եթե կարելի է ասել՝ ամոթխած չափերով, եվրոպական մտքի գունավորումները։ Այս հասարակական զարգացումը առաջ Կ. Պոլսի հայության մեջ է արմատավորվում, մասնավորապես Թանզիմաթի հրատարակությունից, բերելով իր հետ օրվա նոր պահանջներին համապատասխանող հիմնարկություններ և հասարակական մտավոր ուժերի պայքարում այդ հիմնարկությունների շուրջը։ Գաղութային հասարակությունն այլևս բացառապես կրոնական վեճերով աղմկվող մի հոտած, նեխած ճահիճ չէ, այլ աշխարհական գաղափարների հողի վրա աշխատում է կերտել մի համայնական գիտակցություն, չմոռանանք միշտ աչքի առջև ունենալու, որքան այս գաղափարականությունը պարփակվում էր բուրժուական իրավակարգի մեջ։ Մենք տեսնում ենք մտքերի տարբերություն առաջ բերած շփումներ, ընդհարումներ, նույնիսկ կռիվներ։ Այստեղ մեզ ներկայանում է և եվրոպական լիբերալիզմ (ազատամտություն), որքան նա կարող էր գործողության դաշտ հարդարել դեռ կրոնական համայնքի իրավունքներով ապրող մի հասարակության մեջ։ Կար, ինչպես, և լիբերալիզմի անհաշտ հակառակորդ պահպանողականությունը, կամ ավելի ճիշտ, կղերական ռեակցիան, որ քաշում էր հասարակությունը դեպի հնություն և անշարժություն։

Այսպես ուրեմն, քաղաքական հասունության կողմից անկասկած առաջ-

նություն, այն էլ խոշոր չափերով, գոյություն ուներ արևմտյան և առավելապես պոլսական գաղութահայության մեջ, 19-րդ դարի ամբողջ կեսում։ Ռուսահայությունն այդ ժամանակ դեռ ընկղմված էր քնի մեջ և հազիվհազ մի-մի անգամ ցույց էր տալիս կենդանության թույլ նշաններ հրապարակական մտքի ասպարեզում։

Կ. Պոլսի հայ ինտելիգենցիան էլ միանգամից չէր մտնում այդ նոր մշակութային հանդեսը։ Առաջավոր տեղ բռնում է նրա ավելի լավ պատրաստված, ավելի շատ զարգացած գործիչներով հարուստ մասը, որ դարձյալ կաթոլիկ հայերի համայնքն է։ Այստեղ է, որ հասարակական միտքն առաջին անգամ քարոզչական և իրագործման առարկա է դարձնում հայ ազգային ընդհանրության խնդիրը, որ կարելի է ուրիշ խոսքերով ձևակերպել իբրև հայ ժողովրդի հավաքման, հայ ժողովրդի ազգային միության գաղափար։ Այս մի նոր երևույթ էր, որ ամենից առաջ ցույց էր տալիս, թե հայ ժողովուրդն ազատագրվում է կրոնական դարերի սոսկալի բռնակալությունից և դեն գցելով կրոնական համայնքի պատյանը, ընկնում էր այն ազգայնական հզոր շարժումների ազդեցության տակ, որոնք ծայր էին տալիս Արևմտյան Եվրոպայում 19-րդ դարի առաջին կեսին։ Համազգային միության, կրոնական-դավանական թշնամությունների վերացման ջատագով հանդիսանում են առավելապես դավանաբանական անխտրականության սկզբունքի վրա բացված Մուրադյան և Ռաֆայելյան վարժարանների ընթացավարտ աշակերտները, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան վարդապետները։ Այս շրջանների ջանքերով է, որ 1840-ական թվականներին կազմակերպվում են երկու մշակութային ընկերություններ։ Առաջինն էր «Արամյան ընկերությունը», որ «Արշարունյաց» ընկերության նմանությունն ուներ, նպատակ ընտրելով զուտ հրատարակչական գործունեությունը, սակայն կենտրոնացնելով այն այլևս ոչ թե Վենետիկում, այլ Վիեննայի Մխիթարյան վանքում։ Իր ժամանակին այդ ընկերությունն իր հրատարակություններով բավական գնահատելի ծառայություններ է մատուցել հայ հասարակական մտքի զարգացման գործին, տալով գիտության այլևայլ ճյուղերին, բայց գլխավորապես հայոց և ընդհանուր պատմության վերաբերյալ գրքեր, որոնք կարող էին կարդացվել առանց լուսավորչականի և կաթոլիկի հարցեր ու կռիվներ գրգռելու, ընդլայնելով տգետ ու հետամնաց հայ ժողովրդի աշխարհաճանաչողությունը և առհասարակ մտավոր հորիզոնները։

Բայց ավելի նշանավոր հանդիսացավ երկրորդ ընկերությունը, որ հիմնեց կաթոլիկ ինտելիգենցիան 1846 թվականին և որ ազգային միության գաղափարը մարմնավորելու համար, կոչվում էր Համազգյաց։ Ամենախոշոր գաղափարական սկզբունքը, որ բերում էր այդ ընկերությունն այն էր, որ նրան կարող էին անդամակցել անխտիր հայ կաթոլիկները և հայ լուսավորչականները։ Այսպիսով դարերով պառակտված, իրար միս ծամած եղբայրակիցները մոտեցվում էին իրար մի ընդհանուր մշակութային հարկի տակ, միացնում էին իրենց ստեղծագործական ջանքերը ծառայելու համար մի ընդհանուր նպատակի, որ հայ ժողովուրդն էր և մասնավորապես նրա այդ տգետ և անօգնական մասը, որ ապրում էր ասիական գավառներում. լուսավորել նրան դպրոցի և գրքի միջոցով, բարելավել նրա տնտեսական կացությունը գիտության հայթայթած հնարավորություններով,— այս էր Համազգյացի ձգտումն ու ցանկությունը։ Առևտրական կապիտալն էր այդ հիմնարկության ծնողն ու սնուցանողը և նա էլ իր շահերն էր մտցնում նրա կազմակերպչական հոգսերի և գաղափարական ձգտումների մեջ։ Համազգյացը իր նպատակներից մեկն էր դարձնում նաև վաճառականության զարգացումը։ Առևտրական կապիտալը—պետք է նկատել առհասարակ—հասարակական մտքի հիմնավորման և զար-

գացման այս շրջանում իրեն ցույց էր տալիս ոչ միայն դպրոցական, այլև գրական մեկենասության ասպարեզում բավական խոշոր ձեռնարկություններով, որոնք բարձրացնում էին հայ նորագույն կուլտուրական ստացվածքների արժեքը։

Համազգյաց ընկերությունն արագ ժողովրդականանում էր ու մեծանում իբրև նոր երևույթի կատարյալ հաղթանակը։ Բայց այստեղ հայ ժողովրդի բախտի առջև մեկ էլ իր ամբողջ հասակով ծառանում էր նրա հին և անողոք թշնամին—կղերականությունը։ Հաշտություն ու համաձայնություն տիրեր հայերի մեջ, կրոնը ետ մղվեր, երկրորդական տեղ գրավեր,— այնուհետև էլ ինչով և ինչպես պիտի ապրեր կղերը։ Հայ կաթոլիկ համայնքի պատրիարք Հասունը, որ ծագումով նույնիսկ հայ էլ չէր, լավ հասկանալով կղերական խավար տիրապետության սպառնացող վտանգը դուրս էր գալիս Համազգյաց ընկերության դեմ, օժանդակելով որ նրա միջից հեռացվեն լուսավորչական հայերը։ Կաթոլիկ եկեղեցին ամենախիստ կերպով արգելել էր իր հետևողներին որևէ հաղորդակցություն ունենալ լուսավորչական հայերի հետ։ Եվ ահա այս միևնույն արգելքը, կաթոլիկ հոգիների այս սև պահապանը ուզում էր մտցնել նաև Համազգյաց ընկերության մեջ, թեև սա մի եկեղեցի չէր, այլ բացառապես աշխարհական մի հիմնարկություն։ Հասունի ոտնձգությունները, բնականաբար, դիմադրություն առաջացրին Համազգյաց ընկերության գործիչների և նրանց կողմնակիցների մեջ։ Սկսվեց մի ամբողջ պայքար, կազմըվեցին հայ կաթոլիկ համայնքի մեջ երկու հոսանքներ—հասունյաններ և հակահասունյաններ։ Հասունը դիմեց թուրք կառավարությանը։ Նրա հակառակորդները իրենց իրավունքները հիմնում էին Թանզիմաթի վրա։ Ուստի կաթոլիկ կղերականը ապաստանում էր Հռոմի պապի պաշտպանությանը։ Հռոմն էլ, իհարկե, այնպիսի հիմնարկություն չէր, որ զիջում աներ ժամանակի լիբերալ պահանջներին և իր արբանյակ Հասունի կողմը բռնեց։ Պայքարն ավելի ևս աղմկալի դարձավ, թուրք կառավարությունը ենթարկվելով պապի՝ Կ. Պոլսում ունեցած ներկայացուցչի ներշնչումներին, միջամտություն գործեց և ճանաչեց Հասունի իրավունքները։ Համազգյաց ընկերությունն այն փոթորիկների մեջ վերջիվերջո խորտակվեց, բայց սրանով շարժումը կանգ չառավ։ Կաթոլիկ կղերական ռեակցիան այնուհետև էլ պայքար էր մղում նույն Հասունի առաջնորդությամբ, ազգային սկզբունքի դեմ, լցնելով այդ պայքարը միջնադարյան խավար տեսարաններով։ Կ. Պոլսում տեղի էին ունենում հավատաքննական հարցաքննություններ, ուր պատասխանելու էին գնում նաև հայ լուսավորչականներն՝ իրենց «ուղղափառությունն» ապացուցելու համար։ Մի ամբողջ ամբաստանական շարժում սկսվեց նաև Վենետիկի Մխիթարյան վարդապետների դեմ, որոնք պարզապես մեղադրվում էին իբրև կաթոլիկության դավաճաններ։ Այս զզվելի կղերական շարժումը, որ երկարաձգվեց մինչև 19-րդ դարի վերջին քառորդը, մեծ վնասներ հասցրեց Կ. Պոլսի հայ կաթոլիկ համայնքին։ Նրա աչքի ընկնող անդամներից շատերը, զզված հասունյան խավար հոսանքից, դավանափոխ եղան, անցնելով լուսավորչական եկեղեցին. կղերի տիրապետությունը ավելի ևս սաստկացավ և հետադիմությունը, հալածանքների հետևանքով, այն աստիճանին հասավ, որ Վենետիկի Մխիթարյաններն անգամ, լքեցին իրենց ընդգրկած ազգային քաղաքականությունը և բոլորովին անձնատուր լինելով Հռոմի բռնակալ կամքին, փակեցին հայ լուսավորչական երիտասարդության առաջ Մուրադյան և Ռաֆայելյան վարժարանների դռները, հակառակ նույնիսկ նրա հիմնադիրների կամքին, որ պարզ արտահայտված էր նրանց կտակների մեջ։

Այսպես հայ կաթոլիկ համայնքը Կ. Պոլսում, շնորհիվ իր կղերի բութ ու

համառ ֆանատիկոսության, զրկվում էր իր առաջավոր դիրքերից, ստանձնում էր երկրորդական դեր։ Սակայն նրա մղած պայքարը մի խոշոր ապացույց էր, թե ինչպես զարգանում էր և հզորանում գաղութահայության մեջ հասարակական միտքը, գլխավոր շարժիչ ունենալով ազգային միության գաղափարը, որ իհարկե, չէր կարող ապրել առանց նույնպես ուժեղ ազգային գիտակցության։ Հայ հասարակական կյանքն իր շարժումների համար հարթել էր որոշ հուն և այդ հունի մեջ կաթոլիկ հայերի հետ, մտնում էր նաև Կ. Պոլսի լուսավորչական գաղութահայությունը։

3. Գրականություն. Մենք արդեն գիտենք, որ հայոց գրականության վրա, դեռ 18-րդ դարի երկրորդ կեսից, իշխում էր Մխիթարյան դարը, այսինքն Վենետիկի ս. Ղազար վանքի ազդեցությունը։ Այս գերիշխող դերը նա ամենայն անաղարտությամբ պահպանեց և 19-րդ դարի առաջին կեսում, այնպես որ եթե մենք կամենանք հետևել այն բնաշրջման, որն ենթարկվեց այս ժամանակամիջոցում հայոց գրականությունը հասարակական կյանքի զարգացման հետ զուգընթացաբար, պիտի մեզ շատ մոտ պահենք Վենետիկի վանքից դուրս եկած գրականության։ Այստեղ է, որ մենք տեսնում ենք գրական սեռերի աստիճանական ծագումն ու զարգացումը, այն գաղափարախոսությունը, ուր որոշ աշխարհայացքներ է դարբնում ս. Ղազարի ընթերցողների մեջ, որոնք ցրված էին աշխարհի բոլոր կողմերում և որոնք հայ գրագետ հասարակության մեծագույն մասն էին կազմում, եթե ոչ ամբողջությունը։

Արժե նկատել այստեղ իսկ, որ Մխիթարյան գրքերին այսքան ընդարձակ տարածում տալը միայն նրանց բովանդակությունը չէր, այլև այն, որ ս. Ղազարի վանքում գիտեին գրքերին տալ արտաքին շատ գրավիչ տեսք։ Ոչ միայն տպարանական տեսակետից դրանք ժամանակի հայերեն հրատարակություններին մեջ ամենաընտիրներն էին իբրև խնամքով, աղնիվ թղթի վրա կատարված տպագրություններ, այլև իտալական կազմարարությունը ճաշակով դասավորում էր այդ գրքերը կաշեպատ և ոսկեկող կազմերի մեջ, որոնք հրաշակում էին Մխիթարյան այդ ապրանքը իբրև գեղեցիկ զարդարանք ունևոր մարդկանց սենյակների համար։ Չնայած որ այդ ոսկեզօծ կազմերը բավական թանկացնում էին գրքերի արժեքը, նրանք, այնուամենայնիվ, չափազանց նպաստում էին Մխիթարյան գրքերի տարածմանը բուրժուական շրջաններում։ Ունենալ այդպիսի կազմերով լիքը պահարաններ, նշանակում էր ունենալ նույնպիսի վայելուչ գեղեցկություններ, ինչպես էին օրինակ արժեքավոր կահկարասիները։ Այս է պատճառը, որ ս. Ղազարի շատ խոշոր և իրենց բովանդակությամբ միանգամայն անմատչելի հատորները ամենայն հեշտությամբ սողոսկում էին հարուստ աղայի տունը, առնելով տիրոջ համար եթե ոչ գրական, գեթ գրասիրական համբավ։ Եվ այսպես, Ս. Ղազարն իշխում էր ոչ միայն իբրև գրական ընկերության մի կեդրոն, այլև իբրև կարմրագույն ոսկեզօծ կազմերի կեդրոն։

Հայոց գրականությունը 19-րդ դարում էլ, իհարկե, պահպանում է իր գլխավոր հանգամանքը—հատվածականությունը, արևելյան և արևմտյան։ Այս բաժանման վճռական էր ավելի ևս անջրպետել քաղաքական նոր հանգամանքների ազդեցության տակ։ Առաջներում, քանի դեռ գրականությունը նախնական միամիտ պահանջների շրջանում էր ապրում, ծառայելով լոկ եկեղեցական գաղափարախոսության, տարբերությունը արևելյան և արևմտյան հայ գրականությունների մեջ հազիվ նկատելի էր, հարց կարող էր լինել այս կամ այն կողմի աշխատունակության, լեզվական և քննական պատրաստության մասին, ուղղությունները էլ գրեթե միևնույնն էին, քանի որ գրական դպրոցները գաղութներն էին անցել Հայաստանից և մինչև իրենց նոր միջավայրից ազատվելը՝ կրում էին միանման կնիք շնորհիվ այն հանգամանքի, որ գրականությունը դեռ հին սպանիչ միակողմանիության ձեռքին էր գտնվում, այն է՝ կղերական գաղափարախոսության ձեռքին։ Դրությունը միանգամայն փոխվում է, երբ հայ գրական դպրոցներից ամենաբեղմնավորն ու ամենագործունյան, Մխիթարյանը, մխվում է Եվրոպայի խորքերը և ենթարկվում է գերազանցորեն ռոմանական ազգերի ազդեցության։ Այս երևույթի կենտրոնը դառնում է ս. Ղազարի մանրիկ կղզին։ Բայց նա ամբողջ ու անցրիվ չի մնում։ Ներքին շփումներից ճեղքվում է նա և մի հատված գնում է նախ Տրիեստ, ապա Վիեննա և այսպիսով հայ գրականության մեջ մտցնում է եվրոպական մի այլ մեծ կուլտուրական աշխարհի՝ գերմանական ազգերի ազդեցությունը։ Եվ որովհետև այս հատվածականությունից հետո էլ նյութական և բարոյական ուժը դարձյալ Վենետիկի գրական կենտրոնին էր մնում, ուստի ռոմանական ազդեցությունն անցնում է և Թուրքիա, դառնալով այդտեղի երկու հայ գաղութների (Կ. Պոլսի և Զմյուռնիայի) գրական շարժման ոգի և առաջնորդ։

Ռուսական տիրապետության հաստատումն Անդրկովկասում դնում էր արևելյան հայության խոշորագույն մասը ռուսական ազդեցության տակ, որ թեև բավականաչափ եղբայրացած էր գերմանականի հետ, բայց և այնպես, ներկայացնում էր և շատ ուժեղ ստեղծագործական ինքնուրույնություն և անկախություն, հատկություններ, որոնք նրան տալիս էին նշանավոր և առաջնակարգ դիրքերից մեկը համաշխարհային գրականության մեջ։ Այս ռուսագերմանական ազդեցությունից էին սնվում այն փոքրիկ հայ գաղութները, որոնք առաջ եկան Ռուսաստանի հողի վրա—Դորպատ, Պետերբուրգ, Մոսկվա, Նոր Նախիջևան և որոնք հետզհետե տեղի պիտի տային Հայաստանի սահմանակից գաղութին, Թիֆլիսին։ Իսկ, Հայաստանն էլ (Էջմիածին, Երևան, Շուշի) մտնում է այդ գրական շարժման մեջ և կարողանում է նույնիսկ մի շատ զորեղ ինքնատիպություն ցույց տալ (Խաչատուր Աբովյան)։ Արևելյան հայության մի մասնիկն էլ, որ վաճառականական գաղութ էր կազմել Հնդկաստանում, ենթարկվում էր անգլիական ազդեցության, որի առաջնորդությամբ էլ ցուցադրում էր մի բավական բեղմնավոր գրական գործունեություն 19-րդ դարի առաջին կեսում։

Այսպես էին ահա այն հոսանքները, որոնք գալիս էին զարգացնելու և խոշորացնելու արդեն վաղուց, և գլխավորապես 18-րդ դարի երկրորդ կեսից սաղմնավորված հասարակական հրաշակերտ երևույթը—նայոց նոր գրականությունը։ Վենետիկի Մխիթարյան գրականությունը կանգնած էր այս երևույթի գլուխ։ Հետզհետե ազատագրվելով իր պաշտած եվրոպական միջնադարից, հետզհետե ազդվելով նոր եվրոպական գրականության ոգուց, վենետիկյան գրականությունը, մնալով հանդերձ միշտ վանական, միշտ կրոնական՝ առավելագույն չափերով, այնուամենայնիվ նպաստում էր, որ հայ գրականությունը հետզհետե նոր ուղիներ հարթե իր բազմակողմանի զարգացման համար։ Այս բնագավառում վենետիկյան դպրոցի ծառայությունն, անշուշտ, ավելի խոշոր կլիներ, եթե մյուս ձեռքով նա չկանգնեցներ գրական զարգացումն իր համառ պահպանողականության շնորհիվ, որ երևան էր հանում լեզվի հարցի մեջ։

Այս մի շատ կարևոր հարց էր, ուղղակի՝ կյանքի և մահվան հարց։ Գրականությունը նոր կոչվելու արժանի կլիներ միայն այն դեպքում, երբ նրա բովանդակությունը կլիներ ոչ միայն աշխարհական, այլև ժողովրդական։ Իսկ Մխիթարյանները, ընդունելով որոշ, իհարկե, չափով աշխարհականացման սկզբունքը, հեռու էին պահում գիրքը ժողովրդից, որովհետև չէին կարողանում ազատագրվել հին բռնակալ ժառանգությունից—գրաբար լեզվից, որ վաղուց

էր դադարել խոսակցական լինելուց և արհեստականորեն պահվում էր եկեղեցու և նրանից ծառայական կախում ունեցող պաշտոնական գրականության մեջ, արհամարհանքի ենթարկելով ժողովրդական կենդանի, խոսակցական լեզուն, որ արհամարհանքով կոչվում էր ռամկական կամ աշխարհաբար: Պայքարը հայերեն լեզվի այս երկու ճյուղերի մեջ վաղուց էր սկսված, դեռ կիլիկյան շրջանից (12—14-րդ դարից) և որքան գրաբարը թե իր բնական քարացման և թե Հայաստանի հին մշակույթը քարուքանդ արած քաղաքական աղետների հետևանքով ընկնում, աղքատանում էր և քայքայվում, այնքան բարձրանում և իրավատեր էր դառնում աշխարհաբարը, չնայած իր կատարելապես անտաշ ու անմշակ դրությանը։ Մի ստեղծագործական խոշոր կարողություն այդ ժողովրդական լեզուն ցույց էր տվել ինչ-որ թյուրիմացությամբ միջնադարյան հորջորջված, բայց իրապես հայոց գրականության շողշողուն արշալույսը կազմող հարուստ աշխարհական բանաստեղծության մեջ, ուր տիրապետող էր մարդկային սիրտն իր տեսակ-տեսակ հույզերով։ Այսպիսով միանգամայն պարզ էր, որ նոր ժամանակների լեզուն պիտի դառնար աշխարհաբարը, մանավանդ, որ այդ ժամանակների իսկական տեր առևտրական բուրժուազիան, մեծագույն մասամբ ընդգրկել էր այդ լեզուն։ Բայց երբ 18-րդ դարում սկսվեց վերածնություն արևմտահայ գրականության մեջ, հնին և միջնադարյանին նմանվելու ձգտումն այնքան ուժեղ հանդիսացավ, որ մոռացվեց պատմության դասը և գրական վերածնության հիմք ընդունվեց գրաբար լեզվի վերականգնումն ու հարստացումը։ Սակայն Վենետիկի Մխիթարյանները, հանդիսանալով մոլեռանդ գործիչներ այդ գրաբարապաշտպանության մեջ, սկզբից ևեթ ստիպված էին հաշվի առնել և աշխարհաբարի հետ։ Չկարողանալով աչք գոցել նրա ուժի և կարողության վրա, ս. Ղազարի վարդապետները ստիպված եղան ընդունել նրա մասնավոր կիրառությունը պայմանական ժամանակավոր ձևով, գրաբարին ծառայական պաշտոն մատուցանելու համար։ Աշխարհաբարը պետք էր՝ գրաբարի ուսուցումը հեշտացնելու համար և միայն գրաբարն էր, որ իրավունք ուներ ապրելու, գրականության, դպրոցի ու դպրության լեզու դառնալու համար։ Եվ աշխարհաբարը բաժին ստանալով այսքան աննշան ժամանակավոր դեր, պիտի մնար անխնամ ու անմշակ։ Մխիթարյան անվանի վարդապետներից շատերը, խոշոր հեղինակություններ գրաբարագիտության մեջ, իրենց բազմաթիվ աշխատությունները գրում էին նրբորեն մշակված ու հղկված, նորանոր ձևերով ու ոճերով ճոխացրած գրաբարով, իսկ երբ մի-մի ստիպված էին լինում աշխարհաբար գրել, գործ էին ածում աղքատ, անմշակ գավառաբարբառ, առանց հոգս անելու նրան փոքրիշատե կանոնավորություն տալու մասին։

Այսպիսով երկար ժամանակ հայոց գրականությունը չէր կարողանում ընդգրկել ժողովրդական ուղղություն և մնում էր ամփոփված խոշոր ու հոյակապ, բայց շատ քչերին միայն մատչելի հատորների մեջ։ Ժամանակի ընթացքում, ժողովրդական գաղափարների տարածման չափով, այս անբնական դրության դեմ կազմվում է խոշոր ընդդիմադիր հոսանք և մեղանում ծայր են տալիս գրաբարի ու աշխարհաբարի վեճերը, որոնք դեռ 19-րդ դարի առաջին կեսի վերջերում էլ չէին կորցրել իրենց սուր առօրեական բնավորությունը։ Այս վեճերը տարածվում էին ամեն տեղ, ուր հայերեն գրականություն կար։ Սակայն վիճելով, տեսական խոսումներով վերջնական լուծում ստանալ չէր կարող հայ մշակույթի համար այնքան ահագին նշանակություն ունեցող այս հարցը։ Վճռահատող հանդիսանում էր ավելի ժամանակը, քան լեզվագիտությունը։ Աշխարհաբարն սկսեց ծավալվել և ընդհանրանալ տարերային շարժումով և դառնալ գրական լեզու գրաբարից էլ ավելի մեծ իրավունքով։ Այս

տարերային շարժման մեջ դերակատարները մի քանի խոշոր հանգամանքներ էին։ Աշխարհաբարն էր իր քարոզչության լեզու ընդունում բողոքական միսիոներությունը, որ և բազմաթիվ խոշոր ու մանր հրատարակություններ էր անում այդ լեզվով Զմյուռնիայում և Կ. Պոլսում, Մոսկվայում և Շուշում։ Միսիոներների նախաձեռնությամբ էր, որ աշխարհաբարը դառնում էր մասնավորապես պարբերական մամուլի լեզու։ Այս անհրաժեշտությունն այնքան ակնհայտ էր դառնում, որ նույնիսկ գրաբարամոլության գլխավոր միջնաբերդ կազմող Վենետիկի Մխիթարյան վանքում 1843-ից սկսվում է հրատարակվել «Բազմավեպ» պարբերական հանդեսը՝ արդեն մշակված և կանոնավորված արևմտյան (Կ. Պոլսի) աշխարհաբարով, որ և այնուհետև դառնում է գրական լեզու արևմտյան ամբողջ հայության համար։ Բայց այս դեռ ընդհանուր օրենք չէ մամուլի համար, ոչ էլ ապացույց, թե գրաբարը դադարում է ս. Ղազարի վանքում իշխող լինելուց։ «Բազմավեպից» հետո Կ. Պոլսում էլ («Լրագիր օսմանյան պետության»), Թիֆլիսում էլ («Կովկաս») հրատարակվում են պարբերականներ գրաբար լեզվով, իսկ Վենետիկում «Բազմավեպի» հետ զուգընթացաբար աճում էր գրաբար լեզվով մի շարք զարգացած և ճոխ գրականություն։ Աշխարհաբարի աստիճանական տիրապետության մեծ զարկ է տվել և Մխիթարյանների այն հատվածը, որ գործում էր Վիեննայում։ Այստեղ վանքը ոչ միայն չէր մտածում գրաբարի դահընկեցության մասին, այլ ընդհակառակը, պարծենում էր, թե գրաբարը վենետիկյանից ավելի լավ է մշակված, ավելի շատ է մոտենում 5-րդ դարի գրաբարին, որ ամենաբարձրն էր և կոչվում էր ոսկեդարյան։ Բայց այս չէր խանգարում, որ այն Մխիթարյաններն իրենց բազմաթիվ հրատարակությունների և մասնավորապես գիտության այլ ճյուղերը հայացնող գրքերի մեջ գործածեն բացառապես աշխարհաբար լեզուն, ինչպես նաև հրատարակեն նույն այդ լեզվով և մի քանի տարիների ընթացքում «Եվրոպա» անունով պարբերաթերթը։ Աշխարհաբարը գերազանցորեն հաղթանակեց Կ. Պոլսի և Զմյուռնիայի գրական հրապարակում թե պարբերական մամուլի և թե գրքերի մեջ։ Այսպիսով գրաբարը հետզհետե կորցնում էր ընդարձակ աշխարհամասեր իր նախկին համատարած թագավորությունից։ Հետզհետե սասանվել էր սկսում — այդ թագավորության հզոր միջնաբերդն անգամ։ Եվ միայն մի հատ փոքրիկ շրջան էր գտնվում հայ իրականության մեջ, ուր վերջիվերջո ապահով ապաստան էր գտնում նախկին մեծ տիրապետողը։ Այդ հնդկահայ գաղութն էր, որ սրբությամբ պահեց իր մեջ գրաբարը, դարձնելով նրան միակ գործածական գրական լեզու։ Եվ այսօր էլ եթե մնացել է այդ չափազանց նոսրացած և մաշված գաղութի մեջ որևէ հետք հայերեն լեզվի, այդ միմիայն գրաբարն է։

Երկար ու համառ պայքարից հետո զիջելով իր գերիշխանությունը աշխարհաբարին, գրաբարը վերջնական հաշվով, մի հարուստ ժառանգություն էր թողնում իր բախտավոր հաջորդին, որին և մնում էր ժողովրդական հանրամատչելի կերպարանք տալ իր ստացած հարստության և առաջ տանել նրա ապագա շարժումը դեպի զարգացման հաջորդ աստիճանները։ Մոտենանք այժմ այդ ժառանգական հարստությանը, վերցնելով նրա առանձին-առանձին ճյուղերը։

Ա. Բանաստեղծություն: Այս ճյուղն ամենից հարուստն ու ազդեցիկն էր գրաբարյան ժառանգության մեջ։ Հայոց տաղաչափական արվեստը թողնում էր արևելյան այն ձևը, որոնց նա ենթարկված էր դարերի ընթացքում և զգենում էր եվրոպական ձև և բովանդակություն ս. Ղազարի վանքում, սկսած 19-րդ դարի երկրորդ տասնամյակից։ Մխիթարյան բանաստեղծությունը քանակով շատ մեծ է, իսկ որակով՝ շատ ինքնատիպ։ Բանաստեղծելու ի՞նչ հնա-

բավորություններ կարող էր տալ մի փոքրիկ և աղքատիկ կղզու վրա կառուցված մի վանք իր նեղ ու տափակ հորիզոններով, իր չափված ու ձևած միանմանությամբ, իր տաղտուկ առօրեությամբ, որ հյուսված է անցյալ ավանդություններից, պայմանական հասկացողություններից և պահեցողության, ինքնազսպման բարձրագույն ճիգերից։ Սառն է այս միջավայրը, միայն քաշելուկ ու փորսող հույզերը, գրեթե արհեստական, կարող են մատչելի լինել նրան։ Երիտասարդություն, ավյուն, աշխարհային սեր իր հեթանոս զգացմունքներով, գոռ ընդվզում, բողոք կաշկանդանքների դեմ՝ այսպիսի ջղեր չէին տված Մխիթարյան բանաստեղծությանը։ Բավական չափահաս ու խելահաս էին այդ վարդապետները, բավական ամուր դաստիարակված վանականորեն, որպեսզի կարող լինեին իրենց երգերով փոթորկել սիրտն ու կյանքը։ Նրանք այո, շատ էին սիրում ոտանավորներ գրել, բայց այդ ոտանավորներն արվեստ լինելուց առաջ արհեստ էին, և այս արհեստը շատ բան վերցնում էր իր պսպղուն արտաքինով, հյուսվածքի ճարտարությամբ։ Մխիթարյան հռչակված բանաստեղծները—Բագրատունի, Հյուրմյուզյան, Ջախջախյան լավ հայկաբաններ էին, շարահյուսական տաղանդ ունեին, բայց ստեղծագործող տաղանդ չէին գուցե հենց այն պատճառով, որ խեղդված էին վանական մթնոլորտի մեջ։ Ի՜նչ առիթներով էր գրվում այդ ոտանավորների մեծագույն մասը։ Վանական դժգույն և մեռած առօրեությունը հազիվհազ տալիս է մի քանի մանր փոփոխություններ։ Ահա օրինակ՝ նոր քահանաներ ձեռնադրվեցին, ահա վարդապետներից մեկը ճանապարհ ընկավ մի հեռու տեղ գնալու համար։ Ահա նոր տարի, վանքի մեծավորների ծննդյան, ձեռնադրման օրեր և այլն և այլն։ Այսպես են այն «հույզերը», որ հայթայթում է բանաստեղծ վարդապետներին ոչ բանաստեղծ, սառն ու հաշվող, մինչև սրտի խորքը հսկող վանքը։ Եվ ահա նրա այս «ներշնչումների» մեջ ճնշում է գրաբարը, իր վերանորոգված փայլուն փորձերով ներս բերելով մի հանդիսավոր, անառարկա վեհություն, ձևերի և ոճերի մի ամբողջ փայլատակմունք, որ տպավորություն, նույնիսկ աղմուկ էլ թողնում է, առանց սակայն, բանաստեղծություն լինելու։ Բայց ուրիշ ներշնչումներ էլ հեծում էր Մխիթարյան քնարը՝ նրա լարերի վրա խաղալու համար։ Ամենից առաջ և ամենից շատ—հայրենասիրությունը կամ այն ժամանակների խոսքով, ազգասիրությունը։ Այստեղ Մխիթարյաններին ղեկավարում էին վերածնվող Իտալիայի բանաստեղծները, որոնք իրենց հայրենիքի փառքն էին երգում։ Եվ ահա ս. Ղազարի վանքում էլ ուռչում, մեծանում, Մասիսի պես վեհանում ու պարծենկոտ էր դառնում հայ հայրենիքն իր պատմական անցյալով, որ ներկայացնում էր օժտված հուժկու ինքնակալական և նվաճողական թափով, քաջությամբ, գեղեցկագույն քաղաքական կազմակերպությամբ։ Հայրենասիրությունը Մխիթարյան վարդապետը կարող էր ներկայացնել միայն իբրև հաղթություն, միայն իբրև տիեզերական ուժ և այս նպատակով նա պրպտում էր հայոց պատմության բոլոր առասպելական և կիսաառասպելական անկյուններն՝ այնտեղ օրինակներ գտնելու համար։ Այսօրինակ հայրենասիրությունը դառնում էր դպրոցական և հասարակական դաստիարակության գլխավոր առարկան և այսպիսով Մխիթարյան բանաստեղծները դառնում էին հայ ժողովրդի ուսուցիչներ և ղեկավարներ։ Ամեն տեղ միևնույն ոգին, դրության միևնույն ճաշակն ու ձևն էր տիրում։ Ամբողջովին տարված հայ թագավորների և ավատական իշխողների հմայքով, ս. Ղազարի երգիչները ներկայի վերաբերմամբ մխիթարվում էին գոնե այն հանգամանքով, որ եթե ճակատագիրը չէ պահել հայ թագավորներից և ոչ մեկին, նրանց փոխարեն գտնել կարելի է նախարարների համազոր ազնվականներ և երգել ու փառաբանել նրանց։ Մխիթարյանների համար մի կատարյալ ազգասիրական բախտ էր,

որ Կ. Պոլսում գոյություն ուներ ամիրայական դասակարգ, որին կարելի էր նվիրել տիրասիրական բոլոր հրճվանքները։ Ս. Ղազարի բազմահռչակ բանաստեղծ Հ. Արսեն Բագրատունին բազմաթիվ անգամ փառաբանել է Տյուզյան ամիրայական ընտանիքի բոլոր անդամներին, սկսած բարձրերից, «իշխանավորներից», «սեպուհներից» մինչև հարսներն ու փեսաները, մանուկներն ու մեռելներն անգամ։ Այս քնարական փառքին արժանանում էին և ուրիշ «իշխաններ» ու «իշխանապետներ», «սեպուհներ» ու «բեյեր»։ Մի խոնարհ, գետնամած երկրպագություն էր այս, բայց ոչ իհարկե, հին հողատիրական ազնվականության, այլ ժամանակի տիրող—առևտրական կապիտալին։ Այս մամոնայական պաշտամունքն էլ, իբրև մի հարկ ժամանակի իրավակարգին, թանձր դիրտի պես նստում էր մեր գրականության մեջ։

Սակայն չմոռանանք խոստովանելու, որ Մխիթարյան բանաստեղծության դերը մեծ է թարգմանական ճյուղի մեջ։ Երեսնական թվականներից սկսած՝ ս. Ղազարի գրականության մեջ բացվում է մի իսկական մեծագույն և բեղմնավոր շրջան, որ կարելի է անվանել դասական (կլասիկ) շրջան։ Այն ժամանակն է, որ թարգմանվում են Հին Հունաստանի և Հռոմի մեծ բանաստեղծներից ու մատենագիրներից շատերն ամբողջովին՝ իրենց բնագրերից։ Այսպես հայացան Հոմերոսը («Իլիական» և «Ոդիսական»), Վիրգիլիոսը («Էնեական» և «Մշակականք»), ինչպես նաև մի քանի արձակագիրներ (պատմագիրներից Տակիտոս և Թուկիդիդես և այլն)։ Այս գործերն, իբրև գրական աշխատանքներ՝ հոյակապ են, հայոց գրականության պարծանքն էին կազմում մի ժամանակ, երբ կարծվում էր, թե գրական լեզվի մենաշնորհն ընդմիշտ պատկանում է գրաբարին։ Սակայն այս այսպես չեղավ, և հենց նույն Մխիթարյան վանքում էր, որ մեր ժամանակներում արդեն անհրաժեշտ համարվեց թարգմանել Հոմերոսն էլ, Վիրգիլիոսն էլ, ինչպես նաև ուրիշ դասական հեղինակներ աշխարհաբար լեզվով։ Նկատենք վերջապես, մի փաստ ևս։ Մխիթարյան բանաստեղծներն իրենց ինքնուրույն գործերի մեջ խորապես ազդվում էին դասական արվեստից և նմանվում էին նրան ձևի, կառուցվածքի և առհասարակ տեխնիկայի կողմից։ Այսպես, Հ. Էդվարդ Հյուրմյուզյանը Վիրգիլիոսի հետևությամբ էր գրում իր «Բուրաստանքը», որի մեջ երգում էր ծաղկաբուծությունը, իսկ Բագրատունին «Իլիականի», «Ոդիսականի» և «Էնեականի» ազդեցությունն էր կրում իր «Հայկ Դյուցազն» մեծ քերթվածի, կամ ինչպես ինքն է ասում, «վեպի» մեջ։

Մեր գրական էվոլյուցիայի հանգրվանները նշելու տեսակետից շատ հետաքրքրական մի երևույթ է տալիս մեզ Մխիթարյան բանաստեղծությունը։ Այդ այն է, թե ինչպես էր նա կյանք մտնում։ Այս երևույթը հասկանալու համար վերցնենք Մխիթարյանների խոշորագույն գրական դեմքերից մեկը՝ Հ. Ղևոնդ Ալիշանին։ Իր գրչի բեղմնավորությամբ այս մարդը զարմացնում է մեզ նույնիսկ Մխիթարյան միջավայրում, որ այնքան հարուստ էր հսկա աշխատողներով։ Այսպես է Ալիշանը և մասնավորապես բանաստեղծության շրջանակի մեջ։ Նրա ոտանավորները զետեղված են հինգ հատորների մեջ, ունեն այլևայլ բովանդակություն, բայց բոլորն էլ հարազատ Մխիթարյան գրաբար ոտանավորներ։ Տարբերություն լեզվի, ոճի, անգամ խառնվածքի, այո, կա այդ բանաստեղծության մեջ, բայց և այնպես՝ ս. Ղազարյան «ոսկր յոսկրե, մարմին ի մարմնե»-ից աչքի ընկնելու չափ դուրս չէ։ Եվ ահա այս մարդը 1840-ական թվականներին սկսում է «Նահապետ» կեղծ անունով տպագրել «Բազմավեպ» ամսագրում աշխարհաբար ոտանավորներ, բացառապես հայրենասիրական բովանդակությամբ։ Լեզվի փոփոխությունը միանգամայն կերպարանափոխում է գրողին էլ, նրա գրվածքն էլ։ Աշխարհաբարի մեջ դուրս է

գալիս մի բոլորովին ուրիշ մարդ, ուրիշ գրական շնորհք։ Համեմատելու համար աշխարհաբար Ալիշանին գրաբար Ալիշանի հետ բավական է և մի փոքրիկ փորձ։ Վերցրեք նրա հռչակված «Բամփորոտանն»-ը և դրեք նրա աշխարհաբար ոտանավորների կողքին։ Առաջինն՝ ամբողջովին արհեստականություն, խրթնություն. բառեր են գտնված ու դասավորված այնպես, որ նրանց հնչյունն արտաբերն պատերազմական ժխոր, թմբուկի, փողի ձայները, մի խոսքով՝ տալիս է մի թատերական պատերազմ քայլող մարդկանց շարքերով, շեշտակի հարվածներով և այլն։ Մինչդեռ աշխարհաբար ոտանավորների յուրաքանչյուր տողից բուրում է իսկական բանաստեղծական տրամադրություն, այնտեղ խոսում է մի համեստ և ամոթխած, մեղմ ու անուշ թախծություն, որ լուսնի լույս է որոնում Հայաստանի ավերակները ողբալու համար, որ հոխորտացող ու մեծամիտ, բայց արհեստական ռազմատենչություն չէ, այլ զգացող սիրտ, լալկան մի հայրենասեր։ Ալիշանն այս փոքրաթիվ աշխարհաբար ոտանավորներով էր, որ իսկապես դառնում էր հայ նորագույն բանաստեղծության, այն էլ մանավորապես հայրենասիրականի հայր։ Ժողովրդական անսեթևեթ, պարզ ու վճիտ, թոթովախոսության չափ անարվեստ լեզուն տաղանդավոր բանաստեղծի գրչով ցուցադրում էր մի հրաշալի նվաճողական գաղտնիք, այն՝ որ նրա արվեստը չի կարող գրաբար արվեստի նման, հեռու մնալ ժողովրդական սրտից, չի կարող սառնության և անտարբերության մատնվել հասարակական մեծ հավաքականության մեջ։

Մխիթարյան բանաստեղծությունը վանքի պատերից դուրս հանող և կյանքի մեջ մտցնող հանդիսացան ամենից առաջ հենց Մխիթարյան դպրոցների աշակերտները։ Վերջիններս իրենց ուսուցիչների հետ բախտավոր էին նրանով, որ իբրև աշխարհական մարդիկ, կարող էին անհուն գունագեղություն հաղորդել իրենց երգերին, դնելով նրանց մեջ կանացի սեր, աշխարհական վայելքներ։ Բայց այս ամեն ինչ չէր։ Սիրային պասը լուծելուց հետո էլ, գլխավոր և վճռական հարցը մնում էր դարձյալ լեզվի հարցը։ Գրաբա՞ր թե աշխարհաբար։ Երկու գեղեցիկ օրինակ կա մեր առջևում։ Մխիթարյան աշակերտներից երկու հոգի գրականության էին նվիրվում՝ Մկրտիչ Պեշիկթաշլյան և Սրապիոն Հեքիմյան։ Վերջինս սեր, կույս, հույզ երգել գիտե, բայց որովհետև համառ գրաբարախոս էր, ուստի այդ երգերը մնացին անհայտության մեջ, մինչդեռ առաջինը բացի գրաբար ոտանավորներից, որոնք նույնպես արհեստական Մխիթարյան բանաստեղծության պահեստներն են ստվարացրել, գրել է և նաև աշխարհաբար երգեր, որոնց մեջ ծավալել է մի խոշոր տաղանդ, զմայլելի իր քնքշությամբ, սիրային զգացմունքի առատությամբ և խիստ ալիշանյան շեշտ կրող լալկան հայրենասիրությամբ։

Բ. ՎԵՊ։ Հայ ժողովրդական բանահյուսության մեջ շատ հնուց է, որ ծագումն էր առնում վեպ կամ վիպասանություն անունը կրող գեղարվեստական ստեղծագործությունը, որ սովորաբար հյուսվում էր ոտանավորով և համապատասխանում էր հունական էպոս անունը կրող դյուցազներգական քերթվածներին։ Հայկական վեպի մեջ էլ, ինչպես և ուրիշ ազգերի վեպերի մեջ, ժողովրդական բանահյուսությունը երգում էր ժողովրդական հերոսների գործերը և տալիս էր ամբողջ պատմվածքներ, որոնց մեջ խուլ կերպով արձագանքում էր պատմական անցյալը։ Հայկական վեպն, ինչպես և ուրիշ ազգերի մեջ, գերազանցորեն ազնվապետական էր և ավատատիրական։ Քանի որ Հայաստանում ծաղկած էր այս տեսակ հողատիրությունը, ծաղկում է և բանաստեղծության վիպական ճյուղը, որ ուներ, ինչպես այս վայելում էր և թագավորող տնտեսական իրավակարգին—հատվածային, տոհմական բովանդակություն։ Վիպական արվեստը մինչև վերջն էլ մնաց ժողովրդական բովան-

դակության սեփականություն։ Ուժեղացած քրիստոնյա հոգևորականությունն, ունենալով իր սեփական վեպերը սրբերի և մարտիրոսների վարքագրության ձևի մեջ, հրաժարվեց ժողովրդական վեպից, որ ուներ իր մեջ շատ հեթանոսաշխարհիկ տարրեր և տեղ չտվեց նրան իր ստեղծած և պահպանած պաշտոնական գրականության մեջ, թեև շատ տեղերում, մանավանդ հին ժամանակների պատմագրության մեջ, ենթարկվում էր ժողովրդական վեպին, իբրև աղբյուրի։

Հայկական վեպի վերջին օրինակը մենք ունենք «Սասունցի Դավիթ» դյուցազներգության մեջ, որի ծագումը վերաբերում է 10—12-րդ դարերին և որ հենց այն պատճառով, որ ժամանակով ավելի մոտ է մեզ, քան ուրիշները, պահպանել է, գրեթե, լիապես իր գեղարվեստական ամբողջությունը։ Հայ հողատիրական ազնվապետության աստիճանական ջնջման հետ անհետանում է և հայ ինքնուրույն ժողովրդական վեպը։ Սակայն ժողովուրդն ընդմիշտ չի հրաժարվում իր սիրած դյուցազներգություններից և իր չունեցածը փոխարինում է ուրիշից փոխ առնվածով, ինչպես էին պարսկական «Շահնամեն» և քրդական մեծ դյուցազներգությունները, որոնք հայերեն էին թարգմանվում ոտանավորով և այդպես էլ մնում ժողովրդի հիշողության մեջ։ Հայ գրական վերածնության առաջին իսկ շրջանից, այն է՝ 18-րդ դարի վերջերից. անհրաժեշտություն է զգացվում փոխ առնել եվրոպական գրականությունից, ընդարձակ շրջանների ընթերցանության համար, վիպական շարադրություններ, թեև վեպն Արևմուտքում արդեն դուրս էր եկել իր հնագույն դյուցազներգական ձևից և ստացել էր հասարակական ահագին նշանակություն ունեցող նորարվեստի ձև, որ ընդհանրապես բնորոշվում էր ռոման անունով։ Այս տեսակ արձակ բանաստեղծության ճյուղին էր վերաբերում Ֆենելոնի «Տելեմակը», որի թարգմանությունը տպվեց Նոր Նախիջևանում 18-րդ դարի վերջերին, ապա նորից երկու առանձին թարգմանություններով լույս տեսավ Վենետիկում։ Այստեղ էր նույնպես, որ 1820-ական թվականներին հրատարակվեց Միլտոնի «Դրախտ կորուսյալը» արձակ թարգմանությամբ։ Թարգմանվեցին մի քանի այլ գործեր։

Բայց զուգընթացաբար այս թարգմանությունների, հայոց գրականությունը երևան է բերում մի ինքնուրույն երևույթ։ Նա կարծես ուզում է վերակենդանացնել հին դյուցազներգությունները ոտանավոր ձևով և գրաբար լեզվով։ Այսպես՝ Զմյուռնիայի քահանա Հովհան Վանանդեցին տալիս է երկու հաստափոր քերթվածներ Հայաստանի հին պատմությունից, որոնց գրական արժեքը, սակայն, շատ սահմանափակ է։ Նրանից անհամեմատ ավելի տաղանդավոր էր Մեսրոպ Թաղիադյանը, որ հեղինակում ու տպագրում էր Հնդկաստանում իր ժամանակին լավ ընդունելություն գտած «Սոս և Սոնդիպի» քերթվածը, որի մեջ կամեցել է գաղութային հոգեբանական անհամբերությամբ, իրար մոտեցնել ու հարազատեցնել Հայաստանն ու Հնդկաստանը։ Չափածո վեպի բովանդակությունը արհեստական էր, խճողված կեղծ դասական ձևերով,— հետևանք Հոմերոսի, Վիրգիլիոսի և ուրիշների ազդեցության։ Այս պակասություններով լեփլեցուն է նաև Հ. Արսեն Բագրատունու «Հայկ դյուցազն» անունով ոտանավոր վեպը, մի ստվար հատոր, որ Մխիթարյան բանաստեղծության թագն ու պարծանքն էր համարվում, բայց որ իսկապես պարծենալու առիթներ շատ քիչ ուներ։ Բանաստեղծական ստեղծագործության մասին մեծ պահանջներ չունեցողներին հիացրել էր Բագրատունու լեզվի ճոխությունը։ Շատերը կարծում էին, թե «Հայկ դյուցազնը» հայոց լեզվի մեծագույն գանձարանն է։ Այս հատկության դեմ կարելի է և չվիճել։ Բայց այս չի խանգարում, որ «Հայկ դյուցազնը» լինի մի արհեստական գործ, անվերջ

ձղձգված և աղքատ բովանդակությամբ, որ տաղտկալի է դարձնում մանավանդ ստեղծագործական ավյունի բացակայությունը և երևակայության աղքատությունը։ Մխիթարյան բանաստեղծը ճնշված ու կաշկանդված է եղել իր իսկ թարգմանած Հոմերոսի և Վիրգիլիոսի հզոր ազդեցության տակ և այն բոլորն, ինչ արել են նրա ճիգերը, արտաքինով պատկառելի, բայց ներքուստ հերյուրումների և կարկատանների տպավորություն թողնող կեղծ—դասական մի գործ է։ Այս չափազանց խոշոր գործերի կողքին գուցե կարելի լինի դնել նաև Մկրտիչ Խրիմյանի «Հրավիրակ Երկրին Արարատյան» աշխատությունը, որ թեև իսկական դյուցազներգություն չէր, բայց եղբայրանում էր բոլոր նախորդների հետ իր հայրենասիրական զեղումներով, մի հայրենասիրություն, սակայն, որ փոքրիշատե իրական արժեք ուներ նախորդների վերաբերմամբ գոնե այն կողմից, որ տալիս էր ոչ թե երևակայած ու շպարած Հայաստանի, այլ այժմեական, ավերակային Հայաստանի պատկերը։

Արձակ ինքնուրույն վեպի, այն էլ աշխարհաբար լեզվով, առաջին փորձերը, թվով երկու հատ, տեղի ունեցան Կ. Պոլսում, բայց ոչինչ կապ չունեին գեղարվեստի հետ, քանի որ երկուսն էլ ունեին վիճաբանական նպատակ, հայ լուսավորչականի և հայ կաթոլիկի հարաբերություններն էին պատկերացնում թշնամական անհամբերողությամբ, կրքերն ավելի ևս գրգռելու համար։ Չնայած այս բացասական հատկություններին, այդ գրական երկու փորձերը նոր երևույթներ էին, որովհետև ներկայացնում էին ժամանակակից կյանքից վերցրած պատկերներ, մի բան, որ ցույց էր տալիս պահանջը, բայց որ չիրագործվեց երկար ժամանակ։ Այս՝ գրական-գեղարվեստական առումով ողորմելի նախափորձերին հետևում էին Մեսրոպ Թաղիադյանի երկու գրաբար, իբր թե պատմական անցյալից վերցրած վեպերը, որոնք հրատարակվեցին Հնդկաստանում։ Մեկի անունն է «Վեպ Վարդգեսի Տյառն Տուհաց», մյուսինը՝ «Վեպ Վարսենկան»։ Թեև Թաղիադյանն ուներ վարժ, ազդու գրիչ, որ տեղ-տեղ նույնիսկ տաղանդավոր պատկերներ էր տալիս, բայց և այնպես, երկու գործերն էլ խղճուկ գրական ստեղծագործություններ էին։ Ոչ պատմական ճշմարտություն, ոչ իրական կյանքի ճշմարտություն անկարելի է գտնել երկու վեպերի մեջ։ Թաղիադյանն, անշուշտ, գտնվելիս է եղել եվրոպական ֆանտաստիկ վեպերի խիստ ազդեցության տակ և լցրել է երկու գործերն էլ ցնորական պատկերներով և անհավատալի արկածներով ու տեսարաններով, որոնցից մեկը—հիշենք՝ օրինակով խոսելու համար—մի ամբողջ քաղաք է Արաքս գետի տակ։ Վիպական ոճն ու պատմելու եղանակը մտցնում էին Վիեննայի Մխիթարյան վարդապետներն իրենց փոքրիկ ժողովրդական հրատարակությունների մեջ, որոնք կրում էին «Խրատական Տետրեր» ընդհանուր վերնագիրը, մի բան, որ ամենից լավ բնորոշում է այդ գրքույկների գրական-գեղարվեստական արժեքը։ Վիպական ձևն այստեղ լոկ ծառայական դերի մեջ էր կրոնական-բարոյագիտական խրատները դյուրամարս դարձնելու համար։ Եվ ուրեմն այդ մանր-մունր գործերը, որոնցից շատերի բովանդակությունն անգամ փոխառված էր և միայն գործող անձերի անունների փոփոխությամբ հայացված, շատ ներողամիտ վերաբերմունքի միջոցով կարելի է մտցնել հայ վիպական գրականության մեջ իբրև երախայրիքներ։

Եվ սակայն, իսկական և հարազատ-ժողովրդական վեպը երկար չսպասեցնել տվեց իրեն։ Նա ծնվեց ոչ թե Գանգեսի կամ Բոսֆորի ափերին, ոչ թե ս. Ղազարում կամ Վիեննայի մեջ, այլ հայ հողի վրա, հայության պատմական հայրենիքում ապրող ժողովրդի ծոցում—Երևանում։ 1842 թվականին քանաքեռցի Խաչատուր Աբովյանը, Դորպատում գերմանական դաստիարակություն ստացած, գերմանական «գյուղական» կոչված վեպերի ազդեցությունից ներշնչված, գրեց իր «Վերք Հայաստանին»։ Գրում էր այդ հռչակավոր գործն իսկապես Թիֆլիսում, բայց նրա լեզուն, նրա մեջ նկարագրված կյանքն ամբողջովին Երևանին էին պատկանում, ավելի շատ՝ Քանաքեռ գյուղին և ներկայացնում էին մի աննման տեղայնություն։ Այս՝ իսկ որ մեր առաջին վեպն էր։ Եվ առաջինը մանավանդ այն պատճառով, որ կապված էր հայ գյուղի հողին ու մարդուն, որ պատմում ու պատկերացնում էր նրանց փոխադարձ հարաբերությունները։ Ծավալվում էր, նույնիսկ ավելորդ, ձանձրացուցիչ մանրամասնություններով ու ձգվածությամբ, ժողովրդական նիստուկացի, սովորությունների, սև ու պայծառ երևույթների ծովածավալ տեսարանը, որ կենդանի, հուզիչ և մշտապես թարմ էր շնորհիվ այն կրակոտ զգացմունքի, այն հրավառ սրտի, որ դրել էր նրա մեջ հեղինակը։ Իսկ գործողությո՞ւնը։ Նա պատմական անցյալի ձևով էր ներկայացվում, բայց իսկապես մշտական այժմեություն էր կազմում հայ ժողովրդի համար։ Ի՞նչ փույթ, եթե նա պատմական անցյալ էր դարձել Երևանում կամ նրա շրջանակներում, երբ միևնույն գործողությունը—ժողովրդական հարստահարություն, դժբախտություն—լցնում էր հայի բոլոր ժամերն ու օրերը Թուրքիայում և Պարսկաստանում։ Այս հազարամյա հարազատության կնիք կրող իրականություն էր, որի վրա հայը կարողացել է միայն մի բան անել—ողբալ։ Արտասուք,— այս միակ բանն է եղել, որ երբեք չի խլվել հայի ձեռքից։ Աբովյանն անվանում էր վեպը «Ողբ հայրենասիրի»։ Գերազանցապես խելքություն է այս, որ այս գիրքը դարձել է վշտի ավետարան ամբողջ հայության համար և խոսեցնել է տվել իր մասին ամեն տեղ—ուր հայերն են ապրում։ Մի շարք հատկություններ միանգամայն անթարգմանելի են դարձնում Աբովյանի այս երկասիրությունը, հաղորդելով նրան բուն արևելյան, բուն հայ ժողովրդական ստեղծագործության անզուգականություն։ Աբովյանին տված չէր իր մյուս գրական փաստակների մեջ էլ պահպանել այս բացառիկ անգերազանցելի ոգին։

Սակայն կարևորն այնքան այս հանգամանքը չէ, որքան այն հզոր ազդեցությունը, որ թողեց Աբովյանը հայ գրականության վրա։ Բախտի բերմունքով նրա վեպը տպագրվեց նրա մահից 10 տարի անցնելուց հետո։ Այդ ժամանակ արևելահայ վեպն ուներ և իր ուրիշ տեսակը—քաղքենիական կյանքից վերցրածը, բայց դժգույն և անարյուն մի շարադրանք, ամենևին խորթ և անհասկանալի հայ սովոր բազմությունների։ Այդ՝ Միքայել Նալբանդյանի «Մեկին խոսք, մյուսին՝ հարս» վեպն էր, նմանապես և կիսատ մնացած «Մեռելահարցուկը»։ Իրար կողքի դրված էին գյուղական և քաղքենի վեպերը—մեկը կիզիչ ժողովրդականությամբ հրահրող, մյուսը՝ սառն ու արհեստական։ Եվ հաղթողն, իհարկե, Աբովյանի ստեղծագործությունն էր։ Գյուղական վեպը միակ ընդունելին դարձավ երկար ժամանակով, նոր-նոր գրողներ դուրս հանեց գյուղական զանգվածների միջից և որոնք գոտեպնդված Աբովյանի հմայքով, մի ամբողջ մարտական արշավանք տարան ժողովուրդը խոշտանգող խավարի, բռնությունների և տնտեսական կեղեքումների դեմ։ Այսպիսով արևելահայ գեղարվեստական գրականությունը խարսխում էր անսայթաք կերպով դեմոկրատական-ազատագրական սկզբունքների վրա։ Այս է Աբովյանի ամենամեծ գործը...

Գ. Թատրոն։ Հայ թատրոնական գործն սկիզբ էր առնում կաթոլիկ հատվածի մեջ իբրև մի երկրորդական օժանդակիչ միջոց դպրոցական դաստիարակության համար։ Առաջին անգամ 17-րդ դարում է, որ կաթոլիկ միսիոներները Լեհաստանի հայ գաղութի իրենց մի դպրոցի համար հերյուրում են հայոց կրոնական պատմությունից երկու ողբերգություններ, որոնք և ներկայացվում են դպրոցական բեմի վրա։ Մոլիերի դարի համար այդ գրվածքները,

խնարկե, կատարյալ գրական ոչնչություններ էին, բայց և այնպես հնարավոր մի ապագա էին գուշակում, թե հայ մշակույթի մեջ առաջնակարգ տեղերից մեկը պիտի բռնե և թատրոնը։ 19-րդ դարում Զմյուռնիայի հայ գաղութի մեջ էլ դպրոցական պահանջ է դառնում աշակերտների ուժերով վարվող թատրոնական բեմը։ Զգացվում է թատերագրությունների անհրաժեշտություն, կատարվում են և տպագրվում են թարգմանություններ։ Պահանջը բավարարելու համար Վենետիկի Մխիթարյան միաբանությունը, իբրև այն ժամանակ գրական օրենսդրության մի բարձր հեղինակություն, սկիզբ է դնում հայ ինքնուրույն թատերգության։ 1843 թվականին տպագրվում է ս. Ղազարի տպարանում «Խոսրով Մեծ» ողբերգությունը, հեղինակություն այն միաբանության անդամ Հ. Մինասյանի։ Կաթոլիկ վանքը օրենսդրում էր և հայ թատրոնի ճակատագիրը։ Այդ թատրոնը պիտի լինի լոկ և միմիայն խրատական, այսինքն չհանե իր բեմի վրա այնպիսի բաներ, որոնք կարող էին գայթակղեցնել վանականների և նրանց պես մտածողների իբր թե կույս սրտերը։ Այս նպատակով առաջ ու առաջ արգելվում էր կնոջը ելնել բեմ, որտեղից վռնդվում էր, հարկավ, և աշխարհիկ կամ մարմնական սերը, որ լիուլի կարող էր փոխարինվել կրոնական կամ հայրենական սիրով։ Շանթեր ու անեծքներ արձակելով ներկայի մեղապարտ, շվայտ ու անբարոյականացնող կյանքի դեմ, Մխիթարյան օրենսդիրները տանում էին հայոց բեմը, թաղում հայոց պատմության խորքերի մեջ՝ ազգասիրություն և կրոնասիրություն արծարծելու համար։ Նույնիսկ աշխարհաբար լեզուն էլ վտարվում էր հայ բեմից։

Այս օրենսդրությունը շատ էր խիստ և կյանքի մեջ գործադրվելիս զեղչվեցին նրա մի քանի հրամանները, բայց ընդհանրապես առնելով՝ Մխիթարյան ցուցմունքները դառնում էին հայ թատրոնի առաջին շրջանի կերպարանքը սահմանադրող պարտավորություններ։ Հրատարակվում էին Կ. Պոլսում և այլ թատերգություններ, որոնք այնպես թե այնպես համապատասխանում էին վենետիկյան հրահանգներին։ Ամենից ցայտուն օրինակը տալիս է մեզ Մխիթարյանների աշակերտ Սրապիոն Հեքիմյանը, որ գրել է մի շարք գրաբար չափածո ողբերգություններ։ Թեև նա մի երկու դեպքում ըմբոստացել է իր ուսուցիչների դեմ, գրելով դերեր և կանանց համար, բայց նրա ողբերգությունները, բոլորն էլ պատմական, տիպիկ մխիթարյան խրատական թատերգություններ են։

Նշանակալից է, որ մինչդեռ արևմտյան հայության մեջ հայկական թատրոնը հիմնվում էր այսպիսի արհեստական պայմանականությունների վրա, արևելյան հայության մեջ, Թիֆլիսում, կատարվում էր թատերախաղության նախափորձ, հիմնված իրական կյանքի վրա։ Ներկայացված պիեսը պամֆլետի նման մի բան էր, որի մեջ դուրս էին բերված կենդանի գործիչների (օրինակ՝ Ներսես կաթողիկոսի) ծաղրանկարները։ Այսպիսով, ուրեմն, Թիֆլիսն սկիզբ էր դնում հայ թատրոնին կոմեդիայով, որ հետո այնքան նշանավոր հեղափոխիչ դեր կատարեց հայ բեմական արվեստի և գրականության զարգացման մեջ։ Բայց այս խոշոր շարժումը պատկանում է 19-րդ դարի երկրորդ կեսին։ Իսկ առայժմ հայ թատրոնի սկզբնավորման շրջանն է միայն, որի բնագավառը Կ. Պոլիսն է և որի գեղարվեստական ըմբռնումները չեն հեռանում Մխիթարյանների հրահանգած խրատող սկզբունքներից։

Դ. Գիտություն: *Միայն հայերեն իմացող ընթերցողների գիտական հորիզոնները եվրոպական գիտության այլ ճյուղերի բնագավառում բավական ընդլայնվում են մի տեսության առարկա դարձած ժամանակամիջոցում։ Եվրոպական գիտության հաղորդիչներ հանդիսանում են նախ և առաջ Մխիթարյան երկու միաբանությունները և մասնավորապես վիեննականը, ապա բո-*

ղոքական միսիոներները, իսկ աշխարհական հայերից՝ առավելապես հայ բժիշկները։ Վերջիններիս մեջ ամենից նշանավոր բժիշկը Ռեստենն էր, որի գրած երկհատոր «Բժշկարանը» (գրաբար և աշխարհաբար) մեծ ժողովրդականություն գտավ թե արևմտահայերի և թե արևելահայերի մեջ։ Այնուհետև հիշատակելի են, իբրև հեղինակ, բժիշկներ Ղուլլուխյան, Սերվիչեն, Փոփովիչ։ Վիեննայի Մխիթարյանները տվին բնական գիտությունների վերաբերյալ մի շարք հատորներ, Վենետիկինը՝ երկրաչափական գիտության գրքեր և նույնիսկ մի ստվար հատոր, որի մեջ բացատրվում էր այն ժամանակվա (19-րդ դարի սկզբի) նավագնացության գիտությունը («Նավուղղություն»)։ Բայց Մխիթարյանները, ինչպես նաև Կ. Պոլսի և այլ տեղերի հայկական շրջանները ինքնուրույն գիտական մշակումներ էլ էին տալիս, հատկապես հայագիտության, այսինքն հայ լեզվի, պատմության, գրականության, Հայաստանի հնագիտության շրջանում։ Լեզվաբանության բաժնում մեծ հարստություն են կազմում այն բազմաթիվ, զանազան տեսակի բառարանները, որոնք տվեցին Վենետիկում, Վիեննայում, Կ. Պոլսում և որոնց թագն ու պարծանքը կազմում է վենետիկցիների «Նոր Բառգիրք Հայկազյան լեզվի» երկհատոր հոյակապ աշխատությունը։ Հայաստանի հնախոսության վերաբերմամբ խիստ գնահատելի են Հ. Ինճիճյանի աշխատությունները։ Պատմության բաժնում աչքի է ընկնում Վիեննայի Մխիթարյան վարդապետ Գաթրճյանի «Տիեզերական Պատմություն» անունով աշխատությունը։ Արևելահայերի մեջ հնագիտական-տեղագրական ուսումնասիրությունների թվին կարելի է կցորդել Շահխաթունյան և Ջալալյան վարդապետների և Մեսրոպ Թաղիադյանի ճանապարհորդությունները։

Ե. Հրապարակախոսություն: *Հայ պարբերական մամուլը, սկիզբ առնելով Հնդկաստանում 18-րդ դարի վերջերին, 19-րդ դարի առաջին չորս տասնամյակներում գրեթե միանգամայն անհետացած էր, եթե չհաշվենք Վենետիկում տպագրվող «Եղանակ Բյուզանդյան» փոքրիկ պարբերաթերթը, որ հրատարակվում էր «Արշարունյաց» ընկերության միջոցներով և պարունակում էր իր մեջ գրեթե բացառապես քաղաքական լուրեր, առանց որևէ հավակնություն ունենալու ղեկավարելու հասարակական միտքը։ Հայ պարբերական մամուլի երկրորդ սկզբնավորություն կարելի է համարել երեսնական թվականների վերջը, երբ Զմյուռնիայում սկսվում են հրատարակվել «Շտեմարան Պիտանի Գիտելյաց» ամսատետրը և «Արշալույս Արարատյան» փոքրիկ թերթը՝ 15 օրը մի անգամ։ Առաջինը հրատարակվում էր ամերիկացի միսիոներների ձեռքով կրոնական պրոպագանդայի համար և ներկայացնում էր իրենից անկախ և անկապ հոդվածների մի ժողովածու, որոնք տալիս էին հետաքրքրաշարժ տեղեկություններ գիտության ճյուղերից, հատվածներ պատմությունից և այլն։ Երկրորդն արդեն մասնավոր մարդու ձեռնարկություն էր և զբաղվում էր գլխավորապես քաղաքական լուրեր հաղորդելով։ 1840 թվականներին ծնվում են մի շարք պարբերական հրատարակություններ, որոնց մեծագույն մասը պաշտոնական բնավորություն ուներ։ Այսպես, Կ. Պոլսում թուրքաց կառավարությունը հրատարակում էր «Հայտարար գիր լրո» թերթը, որ թուրքերեն լեզվով հրատարակվող պաշտոնաթերթի հայերեն բաժինն էր, հայոց պատրիարքարանն ուներ իր պաշտոնական օրգանը՝ «Հայաստան» անունով,— Վենետիկի Մխիթարյաններն ունեին իրենց «Բազմավեպը», իսկ Վիեննայի Մխիթարյանները՝ իրենց «Եվրոպան»։ Թիֆլիսում հրատարակվում էր «Կովկաս» թերթը, որ ռուսերեն «Կավկազ» պաշտոնաթերթի հայերեն բաժանմունքն էր։ Մասնավոր պարբերական մամուլ, Զմյուռնիայից դուրս, կարելի է գտնել միայն Հնդկաստանում, ուր Կալկաթա քաղաքի մեջ Մեսրոպ*

Թաղիադյանը խմբագրում էր «Ազգասեր» անունով երկշաբաթաթերթը։ Սակայն, պաշտոնական և մասնավոր մամուլի մեջ մենք գրեթե ոչինչ տարբերություն չենք գտնում։ Կան այդ տեսակ հրատարակությունների երկու տիպեր, կամ ժողովածու պիտանի (հաճախ և անպիտան, ինչպես ասում էին այն ժամանակները) գիտելիքների, կամ ժողովածու քաղաքական և այլ այժմեական լուրերի։ Այս պարբերական մամուլի այն տիպն էր, որի նախահայր ներկայանում էր Շմավոնյան քահանայի «Ազդարարը» (Մադրաս, 1794—1796)։ Այս նախնական ձևի մեջ էլ հայ պարբերական մամուլը մնաց մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը։ Հրապարակախոսությունը, գրեթե առանց շեղումներ գործելու մնում էր պարփակված «Ազդարարի» գծած նեղ սահմանների մեջ—խորհրդածություններ դաստիարակության և ազգասիրության մասին։

Միայն 1848 թվականին էր, եվրոպական հեղափոխությունների այդ եռուն և բեղուն ժամանակներին, որ հեղափոխության նշույլներ էին սկսում ցոլալ և մեր պարբերական մամուլի մեջ, բերելով իրենց հետ իսկական հրապարակախոսություն, այն է՝ ազատ, քննադատող, մերկացնող և տարրալուծող խոսքի ուժը։ Այս պայծառ երևույթը արագավազ մի աստղ մեր երկնակամարի վրա, տեղի էր ունենում դարձյալ Հնդկաստանի հողի վրա, դարձյալ Մադրաս քաղաքում, ուր 1848—1849-ին հրատարակվում է «Բանասեր» տասնօրյա թերթը, որի խմբագիր Ս. Պ. Հովհաննեսն, անշուշտ մի վաճառական, կարող է համարվել հայ իսկական հրապարակախոսության նախահայր։

Այս սակայն, դեռ մասնավոր մի դեպք էր, գաղութային կյանքի հեռավոր մի խորշում թաղված։ Հայ միտքը դեռ նոր պիտի պատրաստվեր՝ եվրոպական գաղափարախոսությունը յուրացնելու և հայ մամուլի միջոցով կյանքի մեջ մտցնելու համար։ Այս կողմից ահագին դաստիարակչական նշանակություն մեզ համար ունեցավ Ֆրանսիան և մանավանդ, նրա հեղափոխական ցնցումները 1848 թվականին։ Այստեղ էին դաստիարակվում թուրքահայ ուսանող երիտասարդները, որոնք և աղբյուրի ու յուրացնողի դերի մեջն էին։ Բայց գաղափարների յուրացման գործի մեջ էլ նկատվում է տնտեսական և մշակութային միջավայրի իշխանությունը։ Քաղաքական մտքի ինչ հուժկու հոսանքներ էին իրար բախվում 1848-ի օրերին Փարիզում։ Փետրվարյան հեղափոխության եռանդուն մասնակցողներից մեկն էր Զմյուռնիայի ուսանող Ստեփան Ոսկանը, որ ուսանողական կազմակերպությունների դրոշակը բռնած՝ առաջիններից մեկն էր, որ փետրվարի 25-ին, ապստամբված ժողովրդի հետ մտավ Տյուիլրիի թագավորական պալատը։ Բայց ի՞նչ քաղաքական հոսանքի էր ծառայում այս մարդը, որ հետո դարձավ հայ նշանավոր հրապարակախոսներից առաջինը։ Նա ինքը խոստովանում է, թե սոցիալիստ Քաբեի հետևից չէր գնում ինքը, այլ հարում էր Օգյուստ Կոնտին, այսինքն բուրժուական լիբերալիզմին։

Փետրվարյան հեղափոխության մասնակիցներից մեկն էր և Թիֆլիսեցի ուսանող Պետրոս Շանշյանը։ Եվ սակայն, վերադառնալով հայրենիք, նա մտավ ուսուցչության ասպարեզ և ավանդում էր... կրոն, գրեց կրոնական դասագրքեր։ Մենք արդեն տեսանք վերևում, որ տնտեսագիտության մեջ նա մերժում էր սոցիալիզմը և շահագործող բուրժուազիայի գաղափարախոսության (ֆիզիոկրատների) էր հետևում։ Նույն այդ գաղափարական վայրիվերումների ժամանակները գերմանական ազդեցության շրջաններից դուրս էր եկել և մի ուրիշ անվանի գործիչ հայ հրապարակախոսության ասպարեզում—Ստեփանոս Նազարյան, ազատախոս մի լիբերալ, այո, բայց այնքան, որքան կարող էր լինել մի գերմանական պաստոր։ Օրինակ՝ Ֆրանսիական մեծ հեղափոխությանը նա վերաբերվում էր բացասաբար, գլխավորապես

այն պատճառով, որ նրա հիմքը անաստվածությունն էր։ Ինքը ջերմեռանդ հավատացող էր, իր գրական գործունեությունն սկսում էր նույնպես կրոնի դասագրքով և եկեղեցու բարեկարգումն էր (օրինակ, յոթը խորհուրդներից մի քանիսի կրճատումը) համարում առաջադիմության գլխավոր հենարաններից մեկը։

Այս երեք օրինակները շատ նշանավոր են իբրև այն ժամանակվա մեր հասարակական կյանքի զարգացման չափանիշներ։ Նրանք ապացույց են, թե որքան հետամնաց միջավայր էր հայությունը 19-րդ դարի առաջին կեսի վերջերում։ Արդյունագործությունը թույլ էր դեռ, արհեստանոցային, համքարական կազմակերպությունների հին ձևի մեջ խեղդված։ Հրապարակն ամբողջովին պատկանում էր առևտրական կապիտալին, որ մեծարվում և փայփայվում էր իրեն հատուկ գաղափարական գրականության մեջ։ Թիֆլիսում հրատարակվող «Կովկաս» լրագիրը ազնվական տիտղոսներով և մեծ գովասանքներով էր խոսում ամեն մի աչքի ընկնող հայ մոքալաքի մասին։ Այդ այն ժամանակն էր, երբ իշխան Վորոնցովն ուզում էր հայ վաճառականներին դարձնել դրամական ազնվականների դասակարգ և «Կովկասը» մեծ ոգևորությամբ նկարագրում էր այդ «հոյակապ իշխանների» գործերը, օրինակ՝ թե ինչպես մեծահարուստ «իշխան» Գաբրիել Թաղիադյանը սկսեց կառուցանել իր հոյակավոր քարվանսարան։ Խնկարկման պաշտոնը միայն պարբերական մամուլին չէր պատկանում, մեծարում և փառաբանում էին ամենքը, նույնիսկ երկրի բարձր պաշտոնեությունը, որ առաջին տեղն էր բռնում քարվանսարայի հիմնարկման հանդեսի մեջ։

Վաճառականությունը հրապարակվում էր ժողովրդական երջանկության հիմք, հետևաբար նրանով պարապելը, նրանով հարստանալը ազգասիրական բարձր իդեալ էր։ Հարստացման եղանակները դյուրացնելու համար հայ մտավորականությունը ջանք չէր խնայում մշակելու նրան նպաստող և զարգացնող գիտությունները հայացնելու համար։ Այսպիսով մեր մեջ, դեռ 1840-ական թվականներից սկսում են մուտք գործել հատվածներ այն գիտությունից, որի սկիզբը դրված էր 18-րդ դարի երկրորդ կիսում Անգլիայի մեջ և որ կոչվում է քաղաքական տնտեսություն։ Հետաքրքրական է, որ այս ասպարեզում առաջին աշխատողները եղել են դարձյալ Վենետիկի Միխիթարյան վարդապետները։ Նրանք էին, որ իրենց «Բազմավեպի» մեջ սկսեցին գրել, թե ինչ է վարկը, մուրհակը, շրջափել և այլ հարցեր տնտեսագիտությունից։ Այսպիսի մի բան չէր կարող անհնարին համարվել մի վանական ամսագրի մեջ, քանի որ այդ քաղաքական տնտեսության ատաղձը պարզապես տնտեսագիտության տարրական ըմբռնումներն էր պարունակում, բոլորը, իհարկե, բուրժուական հայեցակետից վերցված։

Նույն այդ միջոցին և երևի հենց Միխիթարյանների ազդեցության տակ, քաղաքական տնտեսության հարցերով հետաքրքրվող էր հանդիսանում Կ. Պոլսի հայ մտավորականներից մեկը, Նիկողայոս Զորայան, որ 1847-ին տպում էր նույն «Բազմավեպի» մեջ մի ընդարձակ տեսություն վաճառականության մասին, կցելով նրան առևտրական-բաժնետիրական ընկերությունների մի ընդհանուր կանոնադրություն, որ նա անվանում էր «սահմանադրություն»։ Իսկ երկու տարուց հետո նա հրատարակում է Կ. Պոլսում մի փոքրադիր հատոր այսպիսի վերնագրով. «Քաղաքական տնտեսության վրա քանի մը տեղեկությունք.— Հարստության աղբյուրները և անոնց գործածության վրա տեսությունք»։ Մի կողմ թողնելով այս աշխատության ներքին արժեքը, որ իհարկե, մեծ չէ, մենք պիտի նկատենք Զորայանի հեղինակությունն իբրև հայ առևտրական կապիտալի մի ուշագրավ առաջադիմական փորձ, որ գալիս էր՝ գրեթե

միակը մնալու մեր գրականության մեջ՝ որպես տնտեսության գլխավոր հարցերը որոշ գիտական դասավորման և բացատրությունների ենթարկող մի համառոտ ձեռնարկ։ Այս, եթե կարելի է այսպես ասել, մի նախնական քաղաքատնտեսություն էր, և հայ միտքն այնուհետև չկարողացավ մի ուրիշ Ջորայան առաջացնել, որ ինքնուրույն աշխատանքով ժողովրդականացներ տընտեսական մեծ գիտության հետագա առաջխաղացումն ու նվաճումները։

Հայ առևտրական կապիտալի սնուցած հրապարակախոսության մի շատ հետաքրքրական նմուշ ունենք մենք և Հնդկական օվկիանոսի նշանավոր նավահանգիստներից մեկում, Սինգապուրում։ Այստեղի հայ գաղութը բաղկացած էր ընդամենը 50 հոգուց։ Եվ սակայն, այստեղ 1849 թվից Գալստանյան անունով մի վաճառական սկսում է հրատարակել «Ուսումնասեր» անունով մի երկշաբաթաթերթ, որ ունենալով հանդերձ մեն միայն 30 բաժանորդ, շարունակվում է մինչև 1853 թվականը։ Թերթն, իհարկե, ամբողջովին նվիրված էր առևտրական շահերին և իր հրապարակախոսության մեջ զարգացնում էր այն միտքը, թե վաճառականը պիտի անպատճառ հարստանա ի սեր և երջանկություն հայ ազգի։ Երբ Ավստրալիայի Մելբուռն քաղաքի մոտ գտնվեցին ոսկու հանքեր, որոնք մեծամեծ հարստություններ էին տալիս այնտեղ աշխատող վաճառականներին, Գալստանյանն իր թերթի մեջ անդադար հորդորում էր հայ վաճառականներին ազգասիրաբար գնալ Մելբուռն, այնտեղ ազգասիրաբար հարստանալու համար։ Եվ երբ այդ հորդորներին լսող չեղավ, Գալստանյանը փակեց իր թերթը և հայտնեց, թե գնում է ավստրալիական ոսկի գտնելու «սակս մեծամեծ օգտից վասն մերույս սիրեցյալ ազգին»։

Սակայն «Ուսումնասերն» այն ցածրական հատկությունն ունի, որ Մադրասի «Բանասերի» նման ներկայացնում էր բուրժուական մտքի ձախ թևը, ուստի և հալածվում էր նրա նման։ Այս ձախ թևը հետզհետե ուժեղանում էր, հասարակական խոշոր երևույթ դառնում։ Այստեղ, այս ձախ թևի առաջին ռահվիրաներն են Ստեփան Ոսկանը, Պետրոս Շանշյանը, Ստեփանոս Նազարյանը։ Սակայն սրանց գործունեությունն արդեն 19-րդ դարի երկրորդ կեսին է պատկանում...

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1. Գ. Աղանյան, «Դիվան Հայոց պատմության», գիրք Ժ, Թիֆլիս, 1912։
2. С. Жигарев, «Русская политика в восточном вопросе», т. I, М, 1896.
3. И. Попов, «Россия и Сербия», ч. I, М., 1869.
4. Л. Рамке, «История Сербии», М., 1876.
5. P. A. Joubert, „Voyage en Arménie et en Perse", Paris' 1821.
6. J. M. Fancaghe, „Lettres sur la Perse et la Turquie d'Asie", t. I, p. 1819.
7. Ed. Driault, "La Question d'Orient", 1898.

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

1. Ներսես արք. (Աշտարակեցի), «Հայտարարութիւն քրիստոնէական պարտաւորութեան հպատակաց ամենաբարեպաշտ կայսրութեան Ռուսաց», Թիֆլիս, 1826։
2. Ներսես արք. (Աշտարակեցի), «Հռչակ ողորմութեան աստուածազօր մեծափառութեան ինքնակալի և կայսեր ամենայն Ռուսաց Նիկողայոսի Առաջնոյ առ ազգս Հայոց, որ ի Վրաստան», Թիֆլիս, 1827։
3. «Արձանագրութիւնք որք վերաբերին առ հաստատութիւն հաշտութեանն ընդ Պարսկաստանի»։ 1) «Բարձրագոյն Հրովարտակ յաղագս հաստատեալ հաշտութեան ընդ Պարսկաստանի ի 21 մարտի 1828 ամին»։ 2) «Քաղուածք ի պայմանագրէ այսր հաշտութեան»։ 3) «Բարձրագոյն պարգևագիր յանուն սրբազան Ներսիսի, Վիճակաւոր արհիեպիսկոպոսի Հայոց Վրաստանեայց»։ 4) «Բարձրագոյն Հրաման յաղագս անուանելոյ զնորոգ նուաճեալ խանութիւնս Գավառ Հայկազանց և մուծանելոյ զայն ի կայսերական մախանուն», ՍՊԲ., 1828։
4. ՁԵՌԱԳՐԵՐ— Զանազան անձանց և հիմնարկությունների նամակագրությունները, պաշտոնական գրություններ, տեղեկագրեր և այլն։
5. «Акты собранные Кавказской Археографической комиссиею», т. IV, ч. I и II и т. VII, Тифлис, 1874—1878.
6. Н. Дубровин, «История войны и владычества русских на Кавказе», т. VI, Спб., 1888.
7. В. Потто, «Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях», т. II и IV, 1887—1888, Тифлис.
8. «Материалы к истории Персидской войны 1826—1828 г.» («Кавк. сборн.», вып. XXI—XXX), Тифлис, 1900—1910.
9. «Жизнь генерал-лейтенанта князя Мадатова», Спб., 1863.
10. Ермолов, Дибич и Паскевич, «Переписка их и донесения» («Русск. старина»), Спб. 1872, т. V.
11. «Записки Алексея Петровича Ермолова», ч. II, М., 1868.
12. Н. К. Шильдер, «Император Николай первый», т. II и III, Спб. 1903.
13. М. М. Щербатов, «Генерал-фельдмаршал князь Паскевич, его жизнь и деятельность», т. II, Спб., 1891.
14. Ф. К. Клюки Фон-Клугенау, «Очерк военных событий на Кавказе...» («Русск. старина»), 1874—1875.
15. С. Глинка, «Описание переселения армян аддербиджанских в пределы России», М., 1831.

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1. Հ. Գեղամյան, «Կարապետ արքեպիսկոպոս» («Փորձ», № 1—3 1876—1877)։
2. ՁԵՌԱԳՐԵՐ— Ալլահյարի վավերագրեր, Կարապետ արքեպիսկոպոսի նամակագրությունները, ռուսաց պաշտոնական թղթերը Էջմիածնի նկատմամբ և այլն։

3. Лависс и Рамбо, «История XIX века», т. III, М., 1905.
4. Г. Гервинус, «История девятнадцатого века», т. V, Спб., 1868.
5. В. Потто, «Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях», т. IV, 1887.
6. М. М. Щербатов, «Генерал-фельдмаршал князь Паскевич», т. III, Спб., 1891.
7. «Материалы к истории Турецкой войны, 1828—1829 гг». («Кавк. сборн.,» вып. XXXI), Тифлис, 1911.
8. «История военных действий в Азиатской Турции в 1828 и 1829 годах», ч. I, II, Спб., 1836.
9. В... "La dernière heure des Turcs ou rétablissement de l'equilibre en Europe", Paris, 1828
10. Maxime Legrand, "Les Russes en Asie Mineure 1723—1877", P., 1878.
11. Fh. Lavallée, "Histoire de l'Empire Ottoman", Paris, 1855.

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

1. *Ա. Երիցյան, «Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում» մաս. բ, Թիֆլիս, 1894։*
2. *Ա. Երիցյան, «Տաճկաստանի հայոց իրավունքները և նոցա սահմանադրությունը» («Փորձ»), 1876—1877, № 1—4։*
3. *Մ. Աղաբեկյան, «Ամենայն հայոց կաթողիկոսության Ներսես 5-րդի մահից մինչև Մատթեոսի մահը»։*
4. *«Արշալույս Արարատյան», Զմյուռնիա, 1845, № 239։*
5. *Գ. վ. Սրվանձտյան, «Մանանա», Կ. Պոլիս, 1876։*
6. *ՁԵՌԱԳՐԵՐ— Գրագրություններ էջմիածնի կաթողիկոսների, Կ. Պոլսի պատրիարքների, ռուսական կառավարության և պաշտոնյա անձանց։*
7. «Акты собранные Кавказской Археографической комиссиею», тт. VIII, IX, X, Тифлис, 1878—1885.
8. Д. Г. Розен, «История Турции», ч. I и II, Спб., 1872.
9. М. Мак-коль, «Ответственность Англии перед Арменией», М., 1896.
10. Ed. Engelhardt, "La Turquie et le Tanzimat", t. I, Paris, 1882.
11. Destrilhes, "Confidence sur la Turquie", Paris, 1855.
12. A. d'Avril, "Les Chaldée chrétiehne", Paris, 1832.
13. J. Aerant, "Le Jeridy", Paris, 1892.
14. F.-A. Belin, "Du Régime des fiefs militaires dans l'Islamisme", Paris, 1870.

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

1. *Սարուխան, «Հայկական խնդիրն և ազգային սահմանադրությունը Թուրքիայում», հ. Ա., Թիֆլիս, 1912։*
2. *Ա. Երիցյան, «Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի», հատ. Ա, Թիֆլիս, 1898։*
3. *Լեո, «Պատմություն Երևանի հայոց հոգևոր թեմական դպրոցի», Թիֆլիս, 1914։*
4. *Լեո, «Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի», Թիֆլիս, 1915։*
5. *Գ. Զալեմքյարյան, «Պատմություն հայ լրագրության», հ. Ա, Վիեննա, 1893։*

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Հայոց պատմությամբ հետաքրքրվող ամեն ոք ծանոթ է Լեոյի՝ Առաքել Գրիգորի Բաբախանյանի, հարուստ վաստակին։ Նա մեծ ժողովրդականություն վայելող պատմաբան է, որովհետև ծանրակշիռ է սերունդներին թողած նրա հայագիտական ժառանգությունը։ Զարմանալի բազմաբնույթ է Լեոյի գրիչը, լայն են նրա հետաքրքրությունների, ընդգրկումների շրջանակները։ Նրա պատմագիտական ուսումնասիրությունները, փաստաթղթերի ժողովածուները, գեղարվեստական երկերը, գրականագիտական ու հրապարակախոսական հրապարակումներն իրենց ուրույն տեղն ունեն հայ մշակույթի պատմության մեջ։ Առանց Լեոյի չի կարելի պատկերացնել XIX և XX դարերի հայոց պատմագիտությունը։

Լեոյի հասարակական-քաղաքական կյանքի ուղին եղել է բարդ ու հակասական։ Նա XIX դարի ավարտի ու XX դարի առաջին տասնամյակների իրադարձությունների, հայ ժողովրդի քաղաքական ու հասարակական կյանքի բուռն պոռթկումների, հույսերի վերելքի ու դահավիժումների ականատեսն ու մասնակիցն էր։ Լեոն իր ժամանակի ծնունդն էր։ Նա գերազանց գիտեր հայոց հարցի քաղաքական պատմության մանրամասները, եվրոպական քաղաքականության էությունը, նրա մեծերի գործելակերպի բնույթը։ Սա է պատճառը, որ նա մասնակից էր դառնում հայոց ազգային գաղափարախոսության մշակմանը, ոչ միայն որպես պատմաբան, այլ և քաղաքագետ՝ առաջարկ բերելով այս կամ այն գործնական խնդիրը մշակելիս կամ լուծելիս։ Նա խորությամբ գիտեր արևմտահայ ժողովրդի ազատագրման հարցի շուրջը քաղաքական պայքարի բոլոր նրբերանգները, սուլթանիզմի հակաժողովրդական էությունը, միջազգային դիվանագիտության խաղերը։ Նա քաջածանոթ էր ցարիզմի ներքին ու արտաքին քաղաքականությանը։ Երբ Հայաստանի փոքր տարածքի վրա ջարդից ու կոտորածից փրկված մեր ժողովրդի բեկորներին հաջողվեց հանգիստ առնել նորոգ Ռուսաստանի պաշտպանության ներքո, երբ սովետական իշխանությունը ջերմացրեց հայոց սառած մարմինը, և Վ. Ի. Լենինի գաղափարները նրան տարան ապրելու ու վերելքի ուղիով, Լեոն ավելի ծանրակշիռ դիրքերից կշռադատեց հայոց պատմության հանգուցային խնդիրները։

Լեոյի «Հայոց պատմության» ներկա չորրորդ հատորը Երևանում 1966—1973 թթ. արդեն հրատարակված նրա երկերի ժողովածուի 1—3 հատորների շարունակությունն է։ Այն ընդգրկում է XIX դարի առաջին տասնամյակների իրադարձությունները։

Ցավոք, հատորը տպագրվում է մեծ ուշացումով։ Հեղինակն այն ավարտել է 1927-ին, գրել՝ առաջաբանը։ Բավականին ժամանակ է անցել։ Այս միջոցին սովետահայ պատմագիտությունը (Արգ. Հովհաննիսյան, Աշ. Հովհաննիսյան, Մկր. Ներսիսյան, Զ. Գրիգորյան, Վ. Պարսամյան, Վ. Դիլոյան, Հ. Ղազարյան, Վ. Ոսկանյան և ուրիշներ) ստեղծել է XIX դարի առաջին տասնամյակների հայոց պատմության կարևորագույն խնդիրներին նվիրված բազմաթիվ աշխատություններ։ Մասնավորապես, բազմակողմանիորեն լուսաբանված է Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման խնդիրը։ Տարիների ընթացքում առաջ են հանվել XIX դարի առաջին տասնամյակներին վերաբերող բազմաթիվ նոր փաստաթղթեր, պատմական դեպքերն ու դեմքերը նոր լույս սփռող փաստեր ու դրանցով պայմանավորված նոր եզրահանգումներ։ Ինչ խոսք, որ սովետահայ պատմաբանների քննախույզ պրպտումների շնորհիվ այսօր մենք շատ ավելի բան գիտենք XIX դարի առաջին տասնամյակներին Անդրկովկասի շուրջը տերությունների մրցապայքարի, միջազգային հարաբերությունների, հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության, հայ-ռուս հարաբերությունների, Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման հանգամանքների, Հայաստանում գեներալների գործունեության, Աբովյանի խոսքի ու գործի, հայ մշակույթի և բազմաթիվ այլ խնդիրների ու բնագավառների վերաբերյալ։ Հատորն ընդգրկում է ինչպես արդեն ավարտուն ուսումնասիրություններ, այնպես և Երևանի պետական համալսարանում նրա կարդացած որոշ դասախոսություններ։ Այն ամբողջական մի գործ չէ։

Չնայած որոշակի բացերին, պատմական պրոցեսի այս կամ այն խնդրի շուրջը Լեոյի ու-

միջտ համոզիչ մեկնաբանությունների, այնուամենայնիվ, ներկա հատորը հարուստ է փաստական նյութով, իսկ շարադրանքը մատչելի է ընթերցողին, քանզի գրված է ավանդական լեոական ոճով։

Լեոն ռուսական կողմնորոշման ջերմեռանդ պաշտպան է։ Նա մատնացույց է անում թուրք-պարսկական պատերազմների ավերիչ հետևանքները Հայաստանի համար։ Ռուսաստանին միանալու նախօրյակին Երևանի խանությունում կար 521 շեն ու մարդաբնակ և 310 ավերակ գյուղ, այսինքն՝ 3 շեն գյուղի դիմաց 2 ավերակ գյուղ։ «Այսպես էր մորթվել երկրի բարօրությունը բռնությունների ու վատ վարչության երեսից»,— եզրակացնում է նա։ «Համարելով ռուսներին ազատիչներ, հայ ժողովուրդը ձգտում էր դեպի նրանց իր բոլոր ուժերով, մոռանալով ամեն ինչ»։ Լեոն վկայակոչում է ականատեսին, որն արձանագրում էր. «Հայք միաբան ու համաձայն են ռուսաց»։ Հայոց հավատարմությունը Ռուսաստանին նկարագրված է հարուստ փաստերով, վառ գույներով։ Միաժամանակ, նա շեշտում է, թե ինչպիսի «զարմանալի քաջություններ ցույց տվին ռուսաց սալդատները»։ Նա շեշտում է Ռուսաստանի դրական-առաջադիմական դերը Անդրկովկասի, մասնավորապես վրաց և հայոց ժողովուրդների քաղաքական ճակատագրում։ «Ռուսաստանը,— գրում է Լեոն,— իր նվաճած ասիական երկրները մտցնում էր քաղաքական և քաղաքակրթության մեծ շարժումների մեջ, այնպես որ Ասիայի շղթաների մեջ ծվարած և դիակնացած ազգերը հնարավորություն էին ստանում տաքացնել իրենց ընդարմացած մարմինները իբրև ռուսական ընդհանուր իրականության մասնակիցներ»։ «Ռուսները բերում էին իրենց հետ ֆիզիկական գոյության ապահովություն, խաղաղ աշխատանքի, զարգացման, կարգ ու կանոնի և սեփականատիրական իրավունքի հաստատուն երաշխիքներ»,— գրում է Լեոն։ Հայոց համար առանձնապես ծանր վիճակ գոյություն ուներ, և «ռուսական հպատակությունը մի շնորհ էր, որին հայերը և միայն նրանք պիտի արժանանային իրենց մեծագույն ջանքերով, իրենց արյունը թափելով...»։

Պատմության մեջ ոչինչ հեշտ ու հանգիստ չի լինում։ Պատմաբանը ընթերցողին չի տանում նեկտու պողոտայով, այլ առաջնորդում է կածաններով, պատմության խարդուբորդություններով։ Լեոն սուր անկյունները կլորացնելու, համահարթելու կողմնակից չէ։ Նա պատմական եղելությունները կոչում է իրենց անուններով, հանդես է գալիս ճշմարիտ արձանագրողի, նկարագրողի և բնութագրողի դերում։ Դրական ու առաջադիմական տենդենցներն իրենց ճանապարհին հանդիպում են խոչընդոտների, որոնք երբեմն հնարավոր չի լինում հաղթահարել։ Լեոն հանգամանորեն նկարագրում է դրամատիզմով առլեցուն իրադարձությունները, ցույց տալով հակասություններն ու դժվարությունները Ռուսաստանին փարվելու պատմական պրոցեսում։ Խորապես ըմբռնելով հայոց քաղաքական ճակատագրի էությունը, ականատես լինելով հետագա տասնամյակների բուռն իրադարձություններին, նա մատնացույց է անում խնդրի այն կողմը, որ հայ ժողովուրդը ձգտելով ազատվել արևելյան բռնակալությունների տիրապետությունից, «այրելով իր ետևից բոլոր նավերը, անհաշտ թշնամության վիհեր բաց արեց իր և իր հարևանների միջև»։ Լեոն թեև գրում է XIX դարի առաջին տասնամյակների անցուդարձի մասին, մտովին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերի կազմակերպած գենոցիդի, արևմտահայության դառնաղետ ողբերգության ծանր հետևանքների ազդեցության տակ է։ Նա փորձում է պատասխան գտնել բազմաթիվ ինչուների և այդ նպատակով սուզվում տասնամյակների քաղաքական պատմության հատակը։

Լեոյի հարուստ գիտելիքները, լայն իմացությունները նրան հնարավորություն են ընձեռել հարցերը շարադրել համաշխարհային պատմության լայն ֆոնի վրա, հայ ժողովրդի պատմության խնդիրները տեսնել և լուսաբանել Եվրոպայի և Արևելքի պատմության հետ սերտ կապակցության մեջ։ Նա հանգամանալի պատկերացում է տալիս ֆրանսիական մեծ հեղափոխության, Նապոլեոն Բոնապարտի արևելյան քաղաքականության մասին։

Լեոն քննարկում է Իրանի և Թուրքիայի քաղաքական պատմության խնդիրները, բացատրում Արևելյան հարցի էությունը, թուրքական ժառանգության բաժանման համար տերությունների մրցապայքարը, Եվրոպայից թուրքերին դուրս մղելու եվրոպական քաղաքականության ելևէջները։ Հատորում բավականին նյութ կա XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի Վրաստանի մասին։ Պետք է ասել նաև, որ ոչ բոլոր խնդիրներն են քննարկված միևնույն խորությամբ։ Մինչդեռ կաթողիկոսության համար Դանիել-Դավիթ եկեղեցականների մրցապայքարը քննարկված է չափից ավելի մանրակրկիտ, այնինչ հայոց մշակույթին նվիրված շարադրանքն աղքատիկ է, չի ընդգրկում ժողովրդի հոգևոր կյանքի հարուստ փաստերը։

Համոզված ենք, որ մեր ծանոթագրությունները կօգնեն ընթերցողին ավելի հստակ ընկալելու և ճիշտ ըմբռնելու պատմական եղելությունների էությունը, ճանաչելու բազմաթիվ դեմքերի, իմանալու նրանց գործերը։

Պրոֆ. Ջ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր

1983-ի մարտ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1225. Ջալալեդդին սուլթանի արշավը Թիֆլիսի վրա։
1453. Կ. Պոլսում հաստատվում է օսմանյան թուրքերի տիրապետությունը։
1461. Սուլթան Մեհմեդ Բ-ն հայերի համար էլ հաստատում է պատրիարքություն։
1572. Խսրով փաշայի նշանավոր շինությունները։
1606. Շահ Աբասի գերեվարությունը։
1660. Մեփիսքալաքի քաղաքի կառուցումը վրաց Ռոստոմ թագավորի կողմից, որ բնակեցվում է հայերով։
1718. Ժողովրդական խռովություն Թիֆլիսում։
1742. Ժողովրդական խռովություն Թիֆլիսում։
1759. Քիրիմ խանի արշավանքը։
1762. Քրդական էմիրների պատերազմները։
1768. Սկսվում է ռուս-թուրքական պատերազմը։
1771. Հույն ժողովրդի ապստամբությունը թուրքերի դեմ։
1783. Գեորգիևսկի դաշնագիրը։
1787. Պատերազմ Թուրքիայի և Ավստրիայի և սրա դաշնակից Ռուսաստանի միջև։ Ավստրիան նվաճում է ամբողջ Սերբիան։
1788. Ռուս-թուրքական պատերազմը։
1790. Կ. Պոլսում հայոց անդրանիկ ցաղային դպրոցի և մի փոքրիկ տպարանի հիմնումը Շնորհք Մկրտիչ ամիրա Միրիջանյանի կողմից։
1791. Սիստովայի դաշնագրով Սերբիան նորից վերադարձվում է Թուրքիային։
1795. Թիֆլիսի ավերումը Աղա Մահմադ խանի կողմից։
1796. Պ. Ցիցիանովի մասնակցությունը Զուբովի անդրկովկասյան արշավանքին։
1798. Վրաստանի թագավոր Հերակլ Բ-ի վախճանը Թելավ քաղաքի իր ապարանքում։
1799. Դանիել Սուրմառեցու կաթողիկոս ընտրվելը էջմիածնում։
1800. Վրաց Գեորգի ԺԲ թագավորի վախճանը։
1801. Վրաստանի անվերապահ կցումը Ռուսաստանին։ Սով Ղարաբաղում։ Պարսից շահի հարձակումը Երևանի վրա։ Կիլիկիայի հայոց Թորոս կաթողիկոսի սպանությունը Խոզան օղլուների կողմից։ Հովսեփ կաթողիկոս Արղությանի մահը Թիֆլիսում։ Պավել Ա կայսրի մահը Միքայելյան ամրոցում։ Դավիթ Ղորղանյանի կաթողիկոս օծվելը էջմիածնում։ Ալեքսանդր Ա կայսրի թագադրության տոները Մոսկվայում։ Գրիգոր եպիսկոպոս Խամսեցու պատրիարք նշանակվելը Կ. Պոլսում։ Ռուսաստանի և Ֆրանսիայի դաշնագրությունը, որով համաձայնություն էր կայացվում արևելյան քաղաքականության վերաբերմամբ։
1802. Դանիելի կաթողիկոս օծվելը Ուչքիլիսեի վանքում։ Գրիգոր Խամսեցու փոխարեն պատրիարք է ընտրվում Հովհաննես Ջամաշրճյանը։ Դավիթը Դանիելին հարկադրում է հրաժարական ստորագրել։ Կախեթում կազմակերպվում է շարժում՝ հօգուտ Հուլոնի թագավորեցման։
1803. Տամարովին Կ. Պոլսի դեսպանությունից ազատելը։ Ցիցիանովը Թիֆլիսում։ Դավիթ և Վախթանգ արքայորդիների աքսորումը։ Գեորգի ԺԲ-ի ընտանիքի՝ Մարիամ թագուհու և իր զավակների, աքսորը Ռուսաստան։ Դանիելի բանտարկությունը։ Գրիգոր եպիսկոպոս Խամսեցին և Ներսես Աշտարակեցին Թիֆլիսում։ Պատերազմական գործողություններ Գանձակի համար։
1804. Գանձակի նվաճումը։ Աղա Մահմադի հրամանով հայերի գաղթեցումը Կարսի երկիր։ Ռուսաց զորքը գրավում է Գյումրին, հաղթանակներ է տանում էջմիածնում և Քանաքեռում։ Գնդապետ Ցեխանսկու զոհվելը։ Աբաս Միրզայի հրամանով Թավրիզի բերդում սպանվում է Ռոստոմ բեկը՝ Մելիք Աբովի որդին։ Երևանի պաշարման վերացումը։ Բուդաղ սուլթանի որդին հարձակվում է Փամբակի վրա և քշում տանում է հայ գյուղացիներին ու անասուն-

ները։ Լիսանևիչի արշավանքը Ղարաբաղ, որի հետևանքով 250 հայ ընտանիքներ քշվում են Գանձակ։ Նապոլեոնն իրեն հայտարարում է Ֆրանսիայի կայսր։ Սերբերի ապստամբությունը ենիչերիների խժդժությունների դեմ։

1805. Ամեդե Ժոբերը Նապոլեոն կայսրի հատուկ հանձնարարությամբ գնում է պարսից շահի մոտ։ Քյուրակ չայի դաշնագիրը։ Ղարաբաղի կցումը Ռուսաստանին։ Գեներալ Կարյագինի հաղթանակը Ջարամի դաշտում։ Մահմադ Հասան աղայի՝ Իբրահիմ խանի մեծ որդու, մահը։ Հակաֆրանսիական կոալիցիան (Անգլիա, Ռուսաստան, Ավստրիա) հարձակողական պատերազմի մեջ մտավ։ Անգլիական նավատորմի հաղթանակը Տրաֆալգար հրվանդանի մոտ։ Նապոլեոնի հաղթանակները Ուլմի և Աուստերլիցի մոտ։ Արևմուտքից և հարավից Սերբիա խուժեցին թուրքական երկու խոշոր բանակ։

1806. Հյուսեին Ղուլի խանը դավադրաբար սպանվում է Իբրահիմ բեկ անունով մեկի կողմից։ Իբրահիմ խանի սպանությունը Լիսանևիչի կողմից։ Ռուսները կոմս Գուդովիչի գլխավորությամբ գրավում են Բաքուն, Ղուբան և Դերբենդը։ Ժոբերի հանդիպումը Թագաժառանգ Աբաս Միրզայի հետ։ Նապոլեոնի արտակարգ դեսպան Սեբաստիանին Կ. Պոլսում։ Սերբիայում քրիստոնյա ռայան ապստամբում է օսմանյան տիրապետության դեմ և հաղթական պատերազմներ է մղում։ Ռուսաստանը իր զորքերը մտցնում է Մոլդավիա և Վալախիա։ Նապոլեոնը ջարդում է պրուսական բանակը Յենայի և Աուերշտադտի մոտ, որից հետո նրա առջև բացվում են Բեռլինի դռները։ Սերբերը վերցնում են իրենց մայրաքաղաք Բելգրադը, և թուրքերը հեռանում են այդտեղից։ Թուրքիայի սուլթան Սելիմը պատերազմ է հայտարարում Ռուսաստանին։

1807. Նապոլեոնի դեսպան գեներալ Գարդանի ուղևորությունը Պարսկաստան։ Աբաս Միրզայի շնորհիվ էջմիածնի կաթողիկոսական աթոռը գրավում է Դանիելը։ Իսրայել կաթողիկոսի ինքնագլուխ հարկահավաքությունը Գանձակում։ Ժողովրդի խռովությունը։ Իսրայել կաթողիկոսին վերադարձնում են Ղարաբաղ։ Փավլե օղլու մահը։ Ֆինկենշտայնի պայմանագիրը։ Թուրքերը հարձակվում են ռուսաց սահմանապահ փոքրիկ ամրոցի՝ Ռեդութ կալեի վրա և այրում ու ոչնչացնում են։ Տիլզիտի դաշնագիրը։ Գեներալ Գարդանի մուտքը Թեհրան։

1808. Դանիելը էջմիածնում հաստատում է «Սյունհոդոս» ժողովը։ Ներսես Աշտարակեցին ձեռնադրվում է եպիսկոպոս։ Դանիել կաթողիկոսը էջմիածնում ընդունում է ֆրանսիական հյուպատոս Ժան Բատիստ Բուասոնին։ Փոխգնդապետ բարոն Վրեդեն Թավրիզում։ Գուդովիչը գրավում է էջմիածինը և շարժվում դեպի Երևան։

1809 Գեներալ Գարդանը թողնում է պարսից մայրաքաղաքը։ Անգլիական դեսպանության մուտքը Թեհրան։

1810. էջմիածնի կաթողիկոսական գահը գրավում է Եփրեմ Ձորագեղցին։ Կոտլյարևսկին գրավում է Մեղրի ավանը։ Ռուսական զորքը մարկիզ Պաուլուչչիի հրամանատարությամբ հաղթանակ է տանում Ախալքալաք բերդի մոտ։ Միջազգային առևտրի դաշնագիր Անգլիայի և Պարսկաստանի միջև։ Վենետիկում կազմակերպվում է առաջին կրթ.-հրատարակչական՝ «Արշարունյաց» ընկերությունը։

1811. Ժանտախտ ու սով Անդրկովկասում։ Հորդ անձրևները, մկները փչացնում են ցանքերը։ Տորմասովին փոխարինում է մարկիզ Պաուլուչչին։

1812. Ռուս-թուրքական հաշտությունը Բուխարեստում։

1813. Բոհեմիայի Տեպլից քաղաքում Ալեքսանդր կայսրը ստորագրում է հայերին ուղղված մանիֆեստ։ Կոտլյարևսկու հաղթանակները Աբաս Միրզայի դեմ Ասլանդուզ բերդի համար և Սադըխանի դեմ՝ Լենքորանի համար։ Գյուլիստանի դաշնագրությունը։

1814. Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ է նշանակվում Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին։ Հեթերիա հունական հեղափոխական գաղտնի կազմակերպությունը։ Մոսկվայում բացվում է Լազարյան ճեմարանը։

1815. Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի միջև հիմնվում է Սրբազան դաշինք։

1816. Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար է նշանակվում գեներալ Ալեքսեյ Երմոլովը։

1817. Իշխան Մադաթով։ Երմոլովի ճանապարհորդությունը Պարսկաստան, տեսակցությունը Աբաս Միրզայի և Ֆաթալի շահի հետ։

1819. Շաքիի Իսմայիլ խանի մահը։ Զեյթունցիների ապստամբությունը թուրքերի դեմ։

1820. Պողոս պատրիարքը հալածվում է ժողովրդի կողմից՝ մեղադրվելով հայ եկեղեցուն դավաճանելու մեջ։ Պողոսը ապաստան է գտնում մի թուրքի տանը։ Կառավարությունը ենիչերի զինվորներ է ուղարկում ապստամբների դեմ և ծեծով ու խոշտանգումներով ճնշում նրանց։ Ստեղծվում է հայ-եզդիական խոշոր միություն, որի առաջնորդն էր Տեր-Պողոս անունով քահանան։

1821. Ռուսաց կառավարությունը հաստատում է տրանզիտ առևտուր Պարսկաստանի հետ։ Ռուսաց կառավարությունը 10 տարով բացառիկ արտոնություններ է տալիս Անդրկովկասի

խոշոր առևտրական դասակարգին։ Եփրեմ կաթողիկոսի փախուստը Ղարաբաղ՝ էջմիածնում պարսկական կեղեքումների չափն անցնելու պատճառով։

1822. Ծովակալ Ալի փաշան նվաճում է Քիոս կղզին։ Կղզու քսաներեք հազար բնակիչ սրի քաշվեց, քառասունյոթ հազար մարդ գերի վաճառվեց։

1823. Մխիթար Վոլֆի տեսակցությունը Եփրեմ կաթողիկոսի և Ներսես Աշտարակեցու հետ։

1824. Ներսես Աշտարակեցին Թիֆլիսում բաց է անում Ներսիսյան դպրոցը։ Գևորգ Արծրունու դպրոցը նվեր է ստանում հայկական տպարան։

1825. Ալեքսանդր Ա կայսրի վախճանը։ Պետերբուրգում գտնվող զորքերի մի մասը հրաժարվում է հավատարմության երդում տալ Նիկոլային։ Ապստամբությունը ճնշվում է (խոսքը դեկաբրիստների ապստամբության մասին է։ Խմբ.)։

1826. Ներսես Աշտարակեցին հայերին կոչ է անում ռուսների հետ զենք վերցնելու և պարսիկների դեմ պայքարելու համար։ Ռուսների հաղթանակը Գանձակում։ Մադաթովը հաջողությամբ տարածում է ռուսական տիրապետությունը Ղարաբաղի խանությունում։

1827. Երմոլովը անփառունակ կերպով հեռացվում է պաշտոնից, նրան փոխարինում է Պասկևիչը։ Նիկոլայ կայսրի հրովարտակը Ներսես Աշտարակեցուն։ Աշտարակեցու կոչը հայ կամավորական զորք կազմակերպելու։ Երևանի գրավումը Պասկևիչի կողմից։ Երեք դաշնակից պետությունների կողմից՝ Անգլիա, Ռուսաստան, Ֆրանսիա, միացյալ նավատորմ կազմելը։ Նավարինի ծովային ճակատամարտը։ Թուրք-եգիպտական նավատորմի պարտությունը։ Իբրահիմ փաշան ընդունում է դաշնակիցների պահանջները։

1828. Թուրքմենչայի դաշնագիրը։ Պարսկահայերի գաղթը։ Ջրօրհնեքի հանդեսը ռուսաց զորքերի մասնակցությամբ։ Ներսես Աշտարակեցին Նիկոլայ կայսրից ստանում է շքանշան։ Ներսեսի աքսորը Բեսարաբիա (15 տարով)։ Կաթոլիկ հայերի բռնի տեղահանությունը։ Ռուս-թուրքական պատերազմը։ Պասկևիչի գրոհը Կարսի բերդի վրա և նրա գրավումը։ Պասկևիչի հաղթանակը Ախալցխայի համար մղված կռիվներում և նրա մուտքը Արդահան։ Քրդական արշավանքներ հայկական գյուղերի վրա։ Բայազետի և Ալաշկերտի գրավումը ռուսների կողմից։ Նահանջ Բաղեշից։

1829. Ահմեդ բեյի արշավանքը Ախալցխա և նրա անհաջողությունը։ Դեսպան Գրիբոյեդովի ժամանումը Թեհրան։ Հարձակում դեսպանության վրա։ Գրիբոյեդովի մահը։ Էրզրումի գրավումը Պասկևիչի կողմից։ Բայազետի ազատագրումը։ Հաղթանակ Բաբերդի տակ։ Ադրիանուպոլսի հաշտությունը։

1830. Հայերի գաղթը Թուրքաց Հայաստանից Անդրկովկաս։ Եփրեմ Ձորագեղցու հրաժարումը կաթողիկոսությունից։ Պասկևիչը Ղարաբաղ է ուղարկում Զուրայովին՝ քննելու այդ երկրում հաստատված կարգերը։

1832. Մարդահամար Թիֆլիսում։

1833. Ռուս-թուրքական դաշնագիրը՝ կնքված Կ. Պոլսի Հյունքյար-Իսկելեսի արվարձանում։

1836. Նիկոլայ կայսրը հաստատեց մի կանոնադրություն՝ հռչակավոր «Պոլոժենիեն»։ «Պոլոժենիեն» զարկ տվեց ռուսահայերի դպրոցական գործին։

1839. Սուլթան Մահմուդ Բ-ի մահը։

1841. Սենատոր Հանի նախագիծը։ Ապստամբություններ բեկերի ու աղալարների հրահրմամբ։

1842. Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի վախճանը։ Խ. Աբովյանը գրեց «Վերք Հայաստանի» վեպը։

1843. Մահմեդականություն ընդունած և նորից քրիստոնեություն անցած հայ երիտասարդ Հովակիմի գլխատումը Կ. Պոլսում մահմեդականների կողմից։ Բեդրխան բեկի և Նուր Ալլահ բեկի հարձակումը Թիար լեռնագավառի վրա, կոտորվեց 10 հազար բնակիչ։ Վենետիկի Մխիթարյան վանքում սկսում է հրատարակվել «Բազմավեպ» հանդեսը արևմտյան (Կ. Պոլսի) աշխարհաբարով։ Վենետիկում տպագրվում է Հ. Մինասյանի «Խոսրով Մեծ» ողբերգությունը։

1844. Վորոնցովը նշանակվում է Կովկասի փոխարքա։

1846. Բեդրխան բեկի արշավանքը Թխոմա գավառի վրա, ջարդվում է 2 հազար մարդ։ Կաթոլիկ ինտելիգենցիան հիմնեց Համազգյաց ընկերությունը։

1847. Տրանզիտի առևտուր։ Սուլթանական հրովարտակով կազմվեց երկու ժողով՝ Գերագույն և Հոգևոր։

1848. Հնդկաստանի Մադրաս քաղաքում սկսում է հրատարակվել «Բանասեր» տասնօրյա թերթը՝ Մ. Պ. Հովհաննեսի խմբագրությամբ։ Ֆրանսիական հեղափոխությունը։

1849. Տեղի գյուղացիների պայքարը կալվածատեր Աստղաբեկ Ռուստամբեկովի դեմ։ Սինգապուրում Գալստանյան վաճառականը հրատարակում է «Ուսումնասեր» երկշաբաթաթերթը։

1870. Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովի նիստը։

1872. Գրիգորիս վարդապետ Աղվանյանը պատրիարքական պաշտոն է վարում Մուշում։

1878. Քննիչի պաշտոնով Հայաստան է ուղարկվում Գարեգին վարդապետ Սրվանձտյանցը։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ալեքսանդր Ա (1777—1825)—Ռուսաստանի կայսր 1801-ի մարտի 12-ից, Պավել Ա-ի ավագ որդին։ Դաստիարակվել է իր տատի՝ Եկատերինա II-ի ձեռքի տակ։ Գահ է բարձրացել պալատական հեղաշրջման միջոցով, Պավել Ա-ի սպանությունից հետո։

Ալեքսանդր Ա-ին հատուկ էին անվճռականությունը, կասկածամտությունը, երկերեսանությունը և հիվանդոտ ինքնասիրությունը։ Սրա հետ մեկտեղ նա կիրթ էր, օժտված անտարակուսելի խելքով։ Նա հմուտ դիվանագետ էր։ Իր թագավորության առաջին տարիներին իրականացնում էր լիբերալ քաղաքականություն, ձգտելով պահպանել միապետությունը և կանխել հեղափոխական պայթյունը։ Կատարեց մի շարք չափավոր բարենորոգումներ, հիմնեց մինիստրություններ, բացեց համալսարաններ (Խարկովում, Կազանում), մանկավարժական ինստիտուտ՝ Պետերբուրգում (1804)։

Արտաքին քաղաքականության մարզում նա սկզբում խուսանավում էր Անգլիայի և Ֆրանսիայի միջև։ 1805—1807 թթ. նա մասնակցեց նապոլեոնյան Ֆրանսիայի դեմ ուղղված 3-րդ և 4-րդ կոալիցիաներին։ Պարտությունները Աուստերլիցի տակ (1805), որտեղ Ալեքսանդր Ա-ն փաստորեն գլխավոր հրամանատարն էր, այնուհետև՝ Ֆրիդլանդի տակ (1807), Անգլիայի հրաժարումը կոալիցիայի ռազմական ծախսերի ֆինանսավորումից հանգեցրին 1807-ին Տիլզիտի խաղաղությանը Ֆրանսիայի հետ, որը սակայն չկանխեց ռուս-ֆրանսիական նոր բախումը։ Թուրքիայի (1806—1812) և Շվեդիայի (1808—1809) հետ պատերազմների հաջող ավարտը ամրապնդեց Ռուսաստանի միջազգային դրությունը։ Ալեքսանդր Ա-ի թագավորության ժամանակ Ռուսաստանին միացվեցին Վրաստանը (1801), Ֆինլանդիան (1809), Բեսարաբիան (1812), Ադրբեջանը (1813)։

Թագավորի մերձավոր պաշտոնատար անձ Մ. Սպերանսկին հանձնարարություն ստացավ մշակել պետական բարենորոգումների նախագիծը։ 1810-ին հիմնվեց Պետական խորհուրդ և վերակառուցվեցին մինիստրությունները։ Անկարող լինելով գլխավորել գործող բանակը, նա 1812-ին ստիպված էր գլխավոր հրամանատարի պաշտոնը զիջել Մ. Կուտուզովին։ 1813—1814 թթ. նա գլխավորեց եվրոպական տերությունների հակաֆրանսիական կոալիցիան։ Դաշնակիցների զորքերի գլուխ անցած՝ նա 1814-ի մարտի 31-ին մտավ Փարիզ։ Ալեքսանդր Ա-ն Վիեննայի կոնգրեսի (1814—1815) ղեկավարներից և հետադիմական Սրբազան դաշինքի (1815) կազմակերպիչներից մեկն էր։ Նապոլեոնյան Ֆրանսիայի պարտությունից հետո եվրոպական մասշտաբով ռեակցիայի հաղթանակն Ալեքսանդր Ա-ին հնարավորություն տվեց ներքին քաղաքականության մեջ վերջ տալու լիբերալիզմ խաղալուն և կանգնելու բացահայտ հետադիմության ուղու վրա։ Նրա մերձավորագույն օգնականները դարձան Ա. Արակչեևը, Ա. Գոլիցինը և ուրիշներ։ Վերականգնվեց ճորտ գյուղացիներին առանց դատի Սիբիր աքսորելու կալվածատերերի իրավունքը, որ վերացվել էր իր իսկ՝ Ալեքսանդր Ա-ի կողմից, 1809-ին։ Սկսվեցին հետապնդումներն առաջավոր գիտության, կուլտուրայի դեմ։ Լայն տարածում ստացավ ամեն տեսակ կրոնական կազմակերպությունների գործունեությունը։ Ալեքսանդր Ա-ն ինքը կյանքի վերջին տասը տարում գտնվում էր միստիցիզմի ճիրաններում։ Նա հանկարծամահ եղավ Տագանրոգում։— 25։

Ալեքսանդր Բ (1818—1881)—ռուսաց կայսր 1855-ից։ Նիկոլայ Ա-ի ավագ որդին էր։ Երկրի տնտեսական զարգացման ընթացքը, պարտությունը 1853—56 թթ. Ղրիմի պատերազմում, հեղափոխական իրադրությունն Ալեքսանդր Բ-ին ստիպեցին 60—70-ական թթ. իրականացնել մի շարք բուրժուական բարենորոգումներ (ճորտատիրական իրավունքի վերացումը 1861-ին, տեղական-ինքնավարական, դատական, քաղաքային, զինվորական և այլ ռեֆորմներ)։ Ալեքսանդր Բ-ն լիբերալի դերում էր, խորամանկ ու ճկուն քայլերով դիմում էր զիջումների. Նա ներում

շնորհեց դեկաբրիստներին, թեև ամբողջ կյանքում անխնա կերպով հետապնդում էր հեղափոխականներին։

1866-ին Դ. Կարակոզովը կատարեց առաջին անհաջող մահափորձը Ալեքսանդր Բ-ի վրա։ Այնուհետև մահափորձերը հաջորդեցին մեկը մյուսին։ Հեղափոխության դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով Ալեքսանդր Բ-ն 1880-ին հիմնեց Գլխավոր կարգադրիչ հանձնաժողով (ղեկավար Լորիս Մելիքով), որը, բացի ճնշիչ միջոցներից, պետք է իրականացներ մի շարք բարենորոգումներ։

Արտաքին քաղաքականության մարզում Ալեքսանդր Բ-ն վարում էր գերմանասիրական քաղաքականություն։ Նրա արտաքին-քաղաքական գործերի մեջ զգալի տեղ է գրավել Արևելյան հարցը, մասնավորապես Փարիզի պայմանագրի (1856) վերացման համար պայքարը։

Ալեքսանդր Բ-ի թագավորության վերջին տարիներին է աղերսվում հայկական հարցի դիվանագիտական սկզբնավորումը (1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմ, Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիր, Բեռլինի կոնգրես և այլն)։ Ալեքսանդր Բ-ն զոհվեց նարոդովոլականների ձեռքով 1881-ի մարտի 1-ին։

Ադրիանուպոլսի հաշտության պայմանագիրն (1829. 14. 9) ամփոփեց 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքները։ Ռուսաց կողմից այն ստորագրել էին Ա. Ֆ. Օրլովը և Ֆ. Պ. Պալենը, Թուրքաց կողմից՝ Մեհմեդ Սադիկ էֆենդին և Աբդուլ Կադիր բեյը։ Պայմանագիրը բաղկացած է 16 հոդվածներից և առանձին ակտից։ Դանուբի գետաբերանը (կղզիներով), Սև ծովի ամբողջ ծովափը Կուբան գետի գետաբերանից մինչև Աջարիայի հյուսիսային սահմանը, ինչպես նաև Ախալքալաք և Ախալցխա ամրոցներն իրենց շրջակա տարածքով անցնում էին Ռուսաստանին։ Նորից շեշտվում էր ռուսահպատակների իրավունքը Թուրքիայի ամբողջ տերիտորիայում ազատ առևտուր անելու խնդրում։ Բ. Դուռը ռուսական և օտարերկրյա նավերին թույլ էր տալիս ազատորեն նավարկելու Բոսֆորի և Դարդանելի նեղուցներով։ Թուրքիան պարտավորվում էր մեկ ու կես տարվա ընթացքում Ռուսաստանին վճարել 1,5 միլիոն հոլանդական դուկատ։ Պայմանագիրն ինքնավարություն էր ապահովում Դանուբի իշխանապետություններին (Մոլդավիա և Վալախիա), հաստատում էր 1826-ի Աքքերմանի կոնվենցիայով իր ստանձնած պարտավորությունը Սերբիայի ինքնավարությունը հարգելու մասին։ Հունաստանը լայն ինքնավարություն էր ստանում։ Ադրիանապոլսի պայմանագիրը ռուսական դիվանագիտության խոշոր հաղթանակն էր։— 474։

Աքքերմանի կոնվենցիա, կնքված Ռուսաստանի և Թուրքիայի միջև 1826-ի հոկտեմբերի 7-ին։ Նախօրյակին խիստ սրվել էին ռուս-թուրքական հարաբերությունները (հունական հարցի բարդացումների հետևանքով)։ 1826-ի մարտի 17-ին Ռուսաստանի հավատարմատարը Կ. Պոլսում վերջնագիր ներկայացրեց Բ. Դռանը, որով պահանջում էր. 1) Թուրքական զորքերը հանել Մոլդավիայից ու Վալախիայից։ 2) Այնտեղ վերականգնել այն կարգն ու կանոնը, որ սահմանվել էր Ռուսաստանի և Թուրքիայի միջև նախկինում կնքված պայմանագրերով և թուրքերի կողմից խախտված էր 1821-ից հետո։ 3) Անհապաղ ազատ արձակել Կ. Պոլսում ձերբակալված սերբ դեպուտատներին։ 4) Սերբիային վերադարձնել այն բոլոր իրավունքները, որոնք նա ստացել էր 1812-ի Բուխարեստի հաշտության պայմանագրով։ 5) Վերսկսել ռուս-թուրքական բանակցությունները, որ անհետևանք էին մնացել սկսած 1821-ից։ Այս բոլոր պայմանները Բ. Դուռը պետք է կատարեր վեց շաբաթվա ժամկետում։ Եվրոպական տերություններին հանգստացնելու նպատակով Նիկոլայ Ա-ն մի կողմից հայտարարեց հունական գործերում իր շահագրգռվածության մասին, մյուս կողմից, 1826-ի ապրիլի 4-ին ստորագրեց Պետերբուրգի արձանագրությունը հունական հարցում ռուս-անգլիական համատեղ ելույթի մասին։

Բ. Դուռն ընդունեց Ռուսաստանի վերջնագիրը, և 1826-ի հուլիսի 13-ին սկսվեցին ռուս-թուրքական բանակցություններն Աքքերմանում։ Ռուս դիվանագետները թելադրեցին իրենց պայմանները, որոնք թուրքերն ընդունեցին անփոփոխ։

Աքքերմանի կոնվենցիան ուներ 8 հոդված և երկու հավելված։ Այն հաստատում էր Բուխարեստի խաղաղության պայմանագիրը (1812), նրա որոշ դրույթները հօգուտ Ռուսաստանի։ Ռուսաստանն ընդլայնում էր իր տիրույթները Սև ծովի արևելյան ափին (Անակլիա, Սուխում և Ռեդութ կալե)։ Ռուսաստանն ազատ առևտրի իրավունք էր ստանում թուրքական կայսրության բոլոր մասերում։ Ռուսաց նավատորմն ազատ նավարկության իրավունք էր ստանում թուրքական ջրերում։ Թուրքիան պարտավորվում էր Մոլդավիային և Վալախիային վերադարձնել բոլոր այն իրավունքներն ու արտոնությունները, որ այդ իշխանությունները ունեին ըստ Բուխարեստի պայմանագրի (1812) և սուլթանական հրամանագրի (1802)։

Աքքերմանի կոնվենցիան ռուսական դիվանագիտության խոշոր հաջողությունն էր։ Թուլացնելով Թուրքիայի տիրապետությունը Բալկաններում, այն վերականգնում էր Ռուսաստանի ազդեցությունը Դանուբյան իշխանություններում։— 447։

Աղա Մահմադ խան Ղաջար — պարսից շահ, թագավորել է 1796—1797 թթ.։

Իրանի հյուսիսում՝ Մազանդերանում և Աստրաբադում զենդերի միջև ծագած կռիվներից, նրանց պարագլուխ Քերիմ խանի մահից հետո Աղա Մահմադը փախավ Շիրազից, որտեղ որպես պատանդ պահվում էր 15 տարի և իշխանության համար պայքար ծավալեց սկզբում Թեհրանում, հետո Մազանդերանում։ Այդ պայքարին միջամտեցին նաև նրա եղբայրները, որոնց պարտության մատնելով նա իր իշխանությունը տարածեց հարևան նահանգների վրա։ 1783-ին նա գրավեց Աստրաբադը, ամբողջ Մազանդերանը և Գիլանը։ Իրեն ենթարկելով այդ նահանգները, Աղա Մահմադն իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրեց զենդերի դեմ մղած պայքարի վրա։ 1785-ին ղաջարները գրավեցին Թեհրանը, Ղումը, Քաշանը և Սպահանը։ 1790-ին Աղա Մահմադի զորքը պաշարեց Շիրազը, բայց անհաջողության մատնվեց։ 1791-ին նա գրավեց համարյա ամբողջ Ադրբեջանը, 1794-ին պաշարեց Քերմանը, վերցրեց այն, կուրացրեց նրա 20 հազար բնակիչներին։ Զենդերի պարագլուխ Լութֆ Ալի խանը բռնվեց և գլխատվեց։

1794-ին Աղա Մահմադն արդեն հաղթել էր զենդերին և նրա իշխանությունն իրեն էր ենթարկել Իրանի գլխավոր նահանգները, բացի Խորասանից և Քուրդիստանի մի մասից։ Աղա Մահմադն իրեն թշնամի խաներին ոչ միայն զրկում էր քաղաքական իշխանությունից, այլև հողային սեփականությունից, եկամուտի մյուս աղբյուրներից։ Բռնագրավված հողերը բաժանելով իր կողմնակիցներին, նա իրեն նոր հենարան էր ստեղծում կախյալ խաներից։ 1795-ին նա Թեհրանը հռչակեց Իրանի մայրաքաղաք։ Հայտարարելով, թե Սեֆևիների օրոք Վրաստանը ենթարկված էր պարսից շահին և նորից պետք է պատկանի Իրանին, Աղա Մահմադն արշավանքի ելավ գրավելու համար Վրաստանը, որի թագավոր Հերակլ Բ-ն 1783-ին պայմանագիր էր կնքել Եկատերինա Բ-ի հետ, ընդունելով ռուսական հովանավորություն։

1795-ի գարնանը Աղա Մահմադը մեծ զորքով շարժվեց հյուսիս, ճանապարհին ամայացնելով իրեն ենթարկվել չցանկացող խաների տիրույթները։ Բնակչության նկատմամբ զանգվածային կողոպուտը, բռնությունները, տեռորը Աղա Մահմադի սիրած մեթոդն էր, որ կիրառում էր բնակչությանն իրեն ենթարկելու համար։ 1795-ի սեպտեմբերին նրա ջոկատները մոտեցան Թբիլիսիին, պարտության մատնեցին վրաց զորքին և տիրեցին քաղաքին։ Ութ օր շարունակ բռնությունները ու կոտորածը Թբիլիսիում չէին դադարում։ Բնակչությունը կողոպտվեց։ Հազարավոր բնակիչներ կոտորվեցին և գերեվարվեցին։

1796-ին Աղա Մահմադը թագադրվեց Իրանի շահ, հիմնելով ղաջարական նոր դինաստիան։ Գահակալությունից հետո նա գրավեց Մեշհեդը, իրեն ենթարկեց Խորասանը, նրա կույր կառավարիչ Շահռոխից խլելով Նադիր շահի հարստությունները։ 1797-ի հունիսին Աղա Մահմադ շահն սպանվեց իր համհարզների ձեռքով, այն բանից հետո, երբ ներխուժել էր Ղարաբաղ, գրավել Շուշվա ամրոցը և պատրաստվում էր նոր արշավանքի Վրաստանի դեմ։— 14։

Արղութինսկի (Արղության) Հովսեփ (1743—1801) — հայ եկեղեցական և քաղաքական գործիչ, արքեպիսկոպոս։ 1780-ին մասնակցել է Գ. Ա. Պոտյոմկինի հրավիրած խորհրդակցությանը, որը նվիրված էր Կովկասում ռուսական քաղաքականության և թուրքական ու իրանական լծից Հայաստանն ազատագրելու հարցերին։ 1783-ին Արղութինսկին մշակեց հայ-ռուսական պայմանագրի նախագիծը, ըստ որի Ռուսաստանը պետք է վերականգներ հայոց անկախ թագավորությունը։ Ռուսաստանին իրավունք էր ընձեռվում նշանակելու Հայաստանի թագավորներին և այնտեղ պահելու իր զորքերը։ 1796-ին Անդրկովկաս կատարած ռուսական բանակի արշավանքի ժամանակ Արղութինսկին դիմեց հայ ժողովրդին կոչ անելով օգնել ռուսաց բանակին։ Արղութինսկին ակտիվ դեր է խաղացել Ռուսաստանի հետ Վրաստանի միացման գործում։— 19։

Աուստերլիցի ճակատամարտ, 1805 — ռուսական-ավստրիական և ֆրանսիական բանակների միջև Աուստերլիցի (այժմ Սլավկով քաղաք Չեխոսլովակիայում) մոտ։ Ալեքսանդր Ա-ն, շրջանցելով միացյալ բանակի գլխավոր հրամանատար Մ. Ի. Կուտուզովի կարծիքը, որոշում ընդունեց անմիջապես հարձակվել ֆրանսիական բանակի վրա, որը կենտրոնացել էր Բրյուննի (Բռնո) մոտ։ Ճակատամարտի պլանը կազմել էր ավստրիական բանակի շտաբի գեներալ Ֆ. Վեյրոտերը, կորդոնային ստրատեգիայի հնացած հաշվարկների հիման վրա, առանց հաշվի առնելու հակառակորդի մանևրի հնարավորությունը, իրադրության ճշգրիտ տվյալները։ Նապոլեոնը ձգտելով գլխավոր ճակատամարտի, նպատակ ուներ ջախջախել ռուս-ավստրիական բանակը, մինչև թարմ ուժերի տեղ հասնելը։ Նապոլեոնի հաղթանակը կկանխեր Պրուսիայի մասնակցությունը պատերազմին դաշնակիցների կողմում։ Դաշնակիցները կորցրին 27 հազար (սպանված ու գերի ընկած), որից 6 հազար ավստրիացիներ։ Ֆրանսիական բանակը կորցրեց ընդամենը 12 հազար զինվոր։ Նապոլեոնի գլխավորած ֆրանսիական բանակը հաղթեց, որովհետև լավ էր մարզված ու կազմակերպված։ Այն ցույց տվեց Ֆրանսիայի նոր զինվորական սիստեմի առավելությունները։ Աուստերլիցի ճակատամարտով ավարտվեց երրորդ հակաֆրանսիական կոալիցիայի պարտությունը։— 387։

Բուխարեստի հաշտությամբ (1812, մայիսի 16) ավարտվեց 1806—1812 թթ. ռուս-թուրքական պատերազմը։ Այս պատերազմը, ըստ Տիլզիտում Ալեքսանդր Ա-ի կնքած համաձայնության, պետք է Ռուսաստանին պարգևեր Մոլդավիան և Վալախիան, լեհական և պրուսական գործերում Նապոլեոնին արված զիջումների դիմաց։ Սակայն հետագայում Ֆրանսիայի դիրքն այս հարցում խուսափողական էր, իսկ Նապոլեոնը, շարունակելով Ալեքսանդր Ա-ին հրապուրել Արևելքում Թուրքիայի բաժանման փայլուն հեռանկարներով, միաժամանակ ձեռնպահ էր մնում նրան իրական օժանդակություն ցույց տալուց։ Երբ 1811-ին պարզ դարձավ Ֆրանսիայի հետ պատերազմի մոտալուտ լինելը, Ռուսաստանն ստիպված էր արագացնել հաշտության կնքումը։ Հաշտությունը կնքեց ռուսաց զորքերի հրամանատար Կուտուզովը։ Ռուսաստանն ստացավ Բեսարաբիան (Պրուտ գետի երկայնքով) և որոշ ձեռքբերումներ ունեցավ Անդրկովկասում, Թուրքիային վերադարձնելով գրաված մարզերի մեծ մասը։ Վեցամյա պատերազմն ավարտվեց չնչին արդյունքներով։— 370։

Գազենկամպֆ Միխայիլ Ալեքսանդրի (1843—1913) — ռուս զինվորական գործիչ և գրող, հետևակի գեներալ։ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Դանուբյան բանակի գլխավոր հրամանատարի շտաբում վարում էր մարտական գործողությունների օրագիրը և մամուլի գործերը։ Հետագայում լույս ընծայեց «Мой дневник», 1877—1878 гг. (СПБ, 1908), որը հարուստ է ռուս-թուրքական պատերազմին վերաբերող փաստերով։—

Գարդան — ֆրանսիական գեներալ, որը 1807-ի ֆրանս-իրանական պայմանագրի կնքումից հետո, մի հատուկ մեծաթիվ զինվորական միսիայի գլուխ անցած ժամանեց Իրան։ Նապոլեոնը Իրանին խոստանում էր օգնել վերստանալու Վրաստանը։ Նա ձեռնամուխ եղավ եվրոպական տիպի իրանական կանոնավոր բանակի (հետևակ և հրետանի) կազմակերպմանը, որը պետք է գործեր ֆեոդալական աշխարհազորի հետ միասին։ Գարդանը փորձված հետախույզ էր։ Նա ուսումնասիրում էր Հնդկաստան տանող ճանապարհները։ Նա Թեհրանում առևտրական համաձայնագիր ստորագրեց Իրանի և Ֆրանսիայի միջև, ըստ որի նորից հաստատվում էր կապիտուլյացիոն կարգը, որ առաջին անգամ արձանագրվել էր 1708-ի և 1715-ի ֆրանս-իրանական պայմանագրերում։ Այս պայմանագիրը XIX դարում Իրանի կողմից եվրոպական պետության հետ կնքած առաջին անհավասար պայմանագիրն էր, որը ճանաչում էր Իրանում օտարերկրացիների կապիտուլյացիոն իրավունքը։ Ֆրանսիան չկատարեց Իրանին զենք մատակարարելու պարտավորությունը։ 1807-ին Տիլզիտում Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև կնքված հաշտությունից հետո, Գարդանը շահին ստիպում էր խաղաղություն կնքել Ռուսաստանի հետ։ Ֆրանսիական զինվորական հրահանգիչները ետ կանչվեցին իրանական բանակից։ 1909-ի մարտին Գարդանը հեռացավ Թեհրանից։ Նրանից հետո Իրան ժամանեց անգլիական ներկայացուցիչ Հարֆորդ Ջոնսը։— 52։

Գեորգի ԺԲ Բագրատիոնի (1746—1800) — Քարթլի-Կախեթիայի թագավորության (Արևելյան Վրաստանի) վերջին թագավորը (1798-ից), Հերակլ Բ-ի որդին։ Վերաբացեց Ռուսաստանի հետ 1783-ի Գեորգիևյան դաշինքը։ Ուժ չունենալով պայքարելու արտաքին և ներքին ագրեսիայի դեմ (Իրան, եղբայրների պահանջատիրությունները գահի նկատմամբ), Գեորգի ԺԲ-ն խնդրեց Պավել Ա-ից Վրաստանն ընդունել Ռուսաստանի հպատակության տակ։ Մահացավ, չտեսնելով իր դեսպանների վերադարձը։ 1800-ի դեկտեմբերի 22-ին Պավել Ա-ն ստորագրեց Ռուսաստանի հետ Վրաստանի միավորման մանիֆեստը։— 14։

Գյուլիստանի տրակտատ — 12 հոկտեմբերի 1813։ Կնքվել է Ղարաբաղի Գյուլիստան բնակավայրում։ Դրանով ավարտվել է մոտ տասը տարի տևած պատերազմը Ռուսաստանի և Պարսկաստանի միջև։ Պարսկաստանը դժգոհ էր, որ Ռուսաստանը մուտք էր գործել Գանձակի խանություն և հետագայում գրավել Գանձակ ամրոցը (հունվար 1804)։ Պարսից շահը պահանջեց, որպեսզի ռուսական զորքերը դուրս գան Վրաստանից և 1804-ին պատերազմական գործողություններ սկսեց Ռուսաստանի դեմ։ 1812-ի աշնանը և 1813-ի սկզբին պարսից զորքը ծանր պարտություններ կրեց, և շահը ստիպված էր հաշտություն խնդրել։ Պարսկաստանը ճանաչեց Ղարաբաղի, Գանձակի, Շիրվանի, Շեքիի, Դերբենդի, Ղուբայի, Բաքվի խանությունների, ինչպես նաև Թալիշի մի մասի, Դաղստանի, Վրաստանի, Իմերեթիայի, Գուրիայի, Մինգրելիայի և Աբխազիայի վրա Ռուսաստանի իշխանությունը։ Պարսկաստանը հրաժարվեց իր ռազմական նավատորմը Կասպից ծովում պահելու իրավունքից։ Ճանաչվեց Ռուսաստանի և Պարսկաստանի միջև առևտրի ազատությունը։— 382։

Գրիբոյեդով, Ալեքսանդր Սերգեևիչ (1795—1829) — ռուս գրող, դիվանագետ, «Խելքից պատուհաս» հռչակավոր կատակերգության հեղինակը։ Ծնվել է Մոսկվայում, ազնվական ընտանիքում, ավարտել է Մոսկվայի համալսարանը (1810), 1817-ին ծառայության է մտել արտաքին գործերի կոլեգիայում։ 1818—1821 թթ. հանդիսացել է Իրանում ռուսական դիվանագիտական միսիայի քարտուղարը, 1826-ից՝ Վրաստանում ռուսական գլխավոր կառավարչության դիվանագիտական գրասենյակի պետը։ Գրիբոյեդովը ռուս-վրացական և ռուս-հայկական կուլտուրական կապերի ջերմ պաշտպանն էր։ Նա կողմնակից էր Իրանի հետ Ռուսաստանի մերձեցման, պայ-

քարում էր Իրանում անգլիական գործակալների թշնամական գործունեության դեմ։ Գրիբոյեդովը գործնական մասնակցություն է ունեցել Թուրքմենչայի պայմանագրի (1828) պատրաստմանը։ 1828-ի ապրիլից նա Ռուսաստանի լիազոր մինիստրն էր Իրանում։ Շահի պալատական վերնախավը 1829-ի հունվարի 30-ին կազմակերպեց մոլեռանդ ամբոխի հակառուսական ցույցը։ Հերոսական պաշտպանությունից հետո Գրիբոյեդովը և ռուսական դեսպանատան ամբողջ կազմը զոհվեցին։ Վախենալով Անգլիայի հետ հարաբերությունների բարդացումից, 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի պայմաններում, ցարական կառավարությունը բավարարվեց շահի նվերներով, որ Պետերբուրգ բերեց խոսրով միրզայի հատուկ դեսպանությունը։ Գրիբոյեդովը թաղված է Թբիլիսիում։— 469։

Գուդովիչ Ի. Վ. *(1741—1820)—ռուս գեներալ, ֆելդմարշալ (1807-ից), կոմս (1797-ից)։ 1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ աչքի ընկավ Խոտինի, Լարգայի, Կագուլի և Ժուրժևայի տակ։ 1787—91 թթ. ղեկավարել է Հաջիբեյի (Ներկայիս Օդեսա, 1789) գրավումը։ 1791-ի հունիսի 22-ին գրոհով վերցրել է Անապան։ 1806-ին նշանակվել է Անդրկովկասի զորքերի հրամանատար, գրավել է Բաքվի, Շեքիի և Դերբենտի խանությունների հպատակեցումը։ Թուրքական զորքերին ջարդեց Ախուրյանի վրա (1807), բայց անհաջողության մատնվեց Երևանի գրոհի ժամանակ (1808)։ 1809—1812 թթ. գլխավոր հրամանատար էր Մոսկվայում։— 290։*

Դանիել Ա. Սուրմառեցի *(ծն. թ. անհայտ— 1808, Երևան)— ամենայն հայոց կաթողիկոս (1801—1808)։ 1799—1800-ին Կ. Պոլսի հայոց պատրիարք։ Ընտրվել է կաթողիկոս, սակայն մինչև նրա էջմիածին հասնելը կաթողիկոսական գահը զավթեց Դավիթ Ե. Էնեգեթցին։ Դանիելի կողմնակիցներն ստիպված նրան կաթողիկոս օծեցին Բագրևանդի Ծրեք խորան (Ուչ-քիլիսա) եկեղեցում։ Դավիթ—Դանիել վեճը՝ երկու կաթողիկոսների պայքարը էջմիածնի գահի համար սուր բնույթ ընդունեց։ 1802-ին Դանիելը բռնությամբ Բայազետից տարվեց էջմիածին և կալանավորվեց, իսկ 1805-ին, շահի հրամանով, աքսորվեց Մարաղա։ 1807-ին, նոր իրադրության պայմաններում, շահը գահընկեց արեց Դավիթ Էնեգեթցուն և կաթողիկոս կարգվեց Դանիելը։ Վերջինիս ամենաէական գործերից մեկը կաթողիկոսի իրավասությունը սահմանափակող էջմիածնի Բարձրագույն խորհրդարանի՝ սինոդի հիմնադրումն էր (1808)։— 112։*

Դավիթ Ե Էնեգեթցի *(Ղորղանյան) (ծն. թ. անհայտ— 1817 էջմիածին)— ամենայն հայոց կաթողիկոս (1801—1807)։ 1800-ին ուղարկվել է Կ. Պոլիս, որպես նորընտիր կաթողիկոս Դանիել Ա. Սուրմառեցու հրավիրակ։ Ընտրվել է Կ. Պոլսի հայոց պատրիարք, բայց հրաժարվել է։ Հովսեփ Արղությանի մահից (1801) հետո օծվել է կաթողիկոս (1802)։ 1807-ին պարսից շահի պահանջով հրաժարվել է կաթողիկոսական գահից։ Դանիել Ա-ի մահից հետո փորձել է վերագրավել այն, բայց անհաջողության է մատնվել։— 112։*

Երմոլով Ա. Պ. *(1777—1861)— ռուս զինվորական և պետական գործիչ, հրետանային գեներալ։ Մասնակցել է Լեհաստանի հետ պատերազմին (1794), պարսից արշավանքին (1796)։ 1798-ին ձերբակալվել է Ա. Մ. Կախովսկու «ազատամիտների» խմբակի հետ կապի համար, աքսորվել Կոստրոմա։ 1805—1807 թթ. հրետանային վաշտի հրամանատար էր, իսկ 1808-ից արդեն գեներալ-մայոր։ 1812-ի հայրենական պատերազմի ժամանակ նշանակվեց Արևմտյան առաջին բանակի շտաբի պետ։ Բորոդինոյի ճակատամարտի ժամանակ կատարել է Մ. Ի. Կուտուզովի պատասխանատու հանձնարարությունները։ 1816-ին նշանակվել է առանձին վրացական (ավելի ուշ՝ կովկասյան) կորպուսի հրամանատար, միաժամանակ արտակարգ և լիազոր դեսպան Իրանում։ 1819-ից գլխավոր հրամանատար էր Վրաստանում։ Կառավարել է Կովկասում ցարական զինվորական և քաղաքացիական իշխանությունը։ Երմոլովը դաժան գաղութային քաղաքականություն էր իրականացնում, ղեկավարում էր Հյուսիսային Կովկասի նվաճումը։ Միևնույն ժամանակ Երմոլովը աչքի էր ընկնում ինքնուրույն մտածելակերպով, ընդդիմանում էր արակչեևյան ռեժիմին։— 166։*

Թուրքմենչայի հաշտության պայմանագիր, *կնքված Ռուսաստանի և Իրանի միջև 1828-ի փետրվարի 22-ին Թուրքմենչայ գյուղում (Թավրիզից ոչ հեռու)։ Պայմանագիրը Ռուսաստանի անունից ստորագրեցին Ն. Ֆ. Պասկևիչը և Օբրեսկովը և Իրանի կողմից՝ Աբաս Միրզան։ Թուրքմենչայի պայմանագիրը նախապատրաստել էր Ա. Ս. Գրիբոյեդովը, որն այն ժամանակ Կովկասի փոխարքայի դիվանագիտական գրասենյակի պետն էր։ Թուրքմենչայի խաղաղության պայմանագիրն ամփոփեց ռուս-իրանական պատերազմի արդյունքները։ Պատերազմը 1826-ին սկսեց Իրանի շահն Անդրկովկասում ռուսաց տիրույթները զավթելու նպատակով։ Այդ գործում փոքր դեր չխաղացին Անգլիայի ագրանները։ Լոնդոնի տերերը նպատակ ունեին Իրանն օգտագործել որպես ռազմաքաղաքական պլացդարմ Անդրկովկաս և Միջին Ասիա թափանցելու համար։ Նրանք մեծ դեր խաղացին Իրանում հակառուսական տրամադրությունների հրահրման մեջ։*

Ռուսական զորքերն այդ պատերազմում լրիվ հաղթանակ տարան ու, թեև ցարական կառավարությունը Թուրքիայի հետ պատերազմի պատրաստվելով, ինքն էր շտապում հաշտություն կնքել, Իրանն ստիպված էր ընդունել իր պարտությունը և ընդունել Ռուսաստանի առաջարկած պայմանագրի պայմանները։ Ռուսաստանին անցան Երևանի և Նախիջևանի խանությունների տերիտորիաները։ Արևելյան Հայաստանը թոթափում էր արևելյան բռնակալների մահաբեր լուծը, ապրելու ու զարգանալու անհամեմատ լավ պայմաններ ստանում Ռուսաստանի հովանու ներքո։ Իրանական կառավարությունը պարտավորվում էր չխոչընդոտել հայերի վերաբնակեցմանը ռուսական սահմաններում։ Իրանի վրա դրվեց 20 միլիոն ռուբլու ռազմատուգանք։

Թուրքմենչայի պայմանագիրը հաստատում էր Կասպից ծովում ռուսական առևտրանավերի նավարկության ազատությունը և այստեղ ռազմական նավատորմ ունենալու Ռուսաստանի բացառիկ իրավունքը։ Պայմանագիրն ամրապնդում էր Ռուսաստանի դիրքերն Անդրկովկասում և պայմաններ էր ստեղծում Միջին Ասիայում Ռուսաստանի քաղաքական ու տնտեսական ազդեցության զորացման համար։

Թուրքմենչայի պայմանագրի ստորագրումից շատ չանցած Իրանի կառավարությունը (նրան հրահրում էր Անգլիան) փորձեց օգտագործել Թուրքիայի և Ռուսաստանի միջև սկսված պատերազմը, հաշտության պայմաններից խուսափելու համար։ Իրանի կառավարության կողմից պայմանագրի խախտումն առաջացրեց Գրիբոյեդովի բողոքները։ Նա այն ժամանակ Թեհրանում ռուսական մինիստր-ռեզիդենտ էր։ 1829-ի փետրվարի 11-ին անգլիական գործակալների հետ կապված պալատական խումբը Թեհրանում կազմակերպեց ռուսական դեսպանատան պողրոմը, որին զոհ գնաց նաև Գրիբոյեդովը։

Թուրքմենչայի պայմանագիրը ռուս-իրանական հարաբերությունների հիմքն էր մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը։— 426։

Իբրահիմ փաշա *(1789—1848)— եգիպտական զորավար և պետական գործիչ, եգիպտական փաշա Մուհամմեդ Ալիի որդին։ Մասնակցել է եգիպտական բանակի և նավատորմի ստեղծմանը, Մուհամմեդ Ալիի բարենորոգումների իրականացմանը։ 1807—1812 թթ. Իբրահիմ փաշան Եգիպտոսի դեֆտերդարն էր՝ ֆինանսական գերատեսչության ղեկավարը, 1812—1816 թթ.՝ Վերին Եգիպտոսի նահանգապետը։ 1816—1841 թթ. նա եգիպտական բանակի գլխավոր հրամանատարն էր և իրեն դրսևորեց որպես տաղանդավոր զորահրամանատար։ Հայտնի դարձավ Արաբիայում վահաբիդների նկատմամբ տարած հաղթանակով (1816—1818) և Սուդանի նվաճումով (1820—1822), երբ նա եգիպտական զորքերի հրամանատարն էր։ Իբրահիմ փաշան 1824—1827 թթ. հունական ազգային-ազատագրական ապստամբության դեմ ուղարկված եգիպտական զորքերի հրամանատարն էր, իսկ 1831—1833 թթ. մի շարք խոշոր հաղթանակներ տարավ թուրքական բանակների նկատմամբ։ 1833—1840 թթ. նվաճված տերիտորիաների (Պաղեստին, Սիրիա, Լիբանան) զինվորական նահանգապետն էր։ 1847-ից Եգիպտոսի փաստացի կառավարիչն էր։— 26։*

Իփսիլանտի, Ալեքսանդր *(1792—1828)— ռուսական բանակի գեներալ մայոր (1817), 1812-ի հայրենական պատերազմի մասնակից։ Կոստանդին Իփսիլանտիի՝ Մոլդովայի և Վալախիայի գոսպոդարի, Բ. Դռան մեծ դրագոմանի որդին։ 1816-ից Ալեքսանդր Իփսիլանտին ռուսաց Ալեքսանդր Ա թագավորի համհարզն էր։ 1820-ի ապրիլից նա անդամագրվեց հունական հեղափոխական «Ֆիլիկի հեթերիա» ընկերությանը և շուտով գլխավորեց այն։ 1821-ի մարտի 6-ին իր ջոկատով մտավ Մոլդովա՝ բալկանյան ժողովուրդներին ապստամբության կոչելով ընդդեմ թուրքական տիրապետության։ 1821-ի հունիսին նա պարտվեց թուրքական բանակի հետ տեղի ունեցած մարտի ժամանակ և փախավ Ավստրիա։ Ավստրիական բանտից նա ազատվեց 1827-ին Ռուսաստանի միջամտության շնորհիվ։ Չնայած անհաջողությանը, Իփսիլանտիի ելույթը խթանեց հունական ազգային-ազատագրական շարժումը (1821—1829), որը հանգեցրեց թուրքական լծից Հունաստանի ազատագրմանը։— 441։*

Լազարյան Մ. Ա. *(1737, Նոր Ջուղա— 1809, Մոսկվա)— հայ հասարակական գործիչ, ռուսական արքունի խորհրդական, Հայոց կաթողիկոս Դանիել Ա-ի հավատարմատար Պետերբուրգի արքունիքում։ Ակտիվորեն զբաղվել է Հայաստանի ազատագրության խնդրով։ Մասնակցել է հայ եկեղեցու կառավարման բարեփոխման նպատակով նոր կանոնադրության մշակմանը։— 136։*

Կաննինգ, Ջորջ *(1770—1827)— անգլիական պետական գործիչ, դիվանագետ։ 1796—99-ին արտաքին գործերի մինիստրի օգնականն էր, անցել էր Պիտի դիվանագիտական դպրոցով, մասնակցություն էր բերել ֆրանսիական ռոյալիստների հետ բանակցություններին։ 1807—1809 թթ. արտաքին գործերի մինիստր էր, հատկապես զբաղված էր Իսպանիայում Նապոլեոնի դեմ պայքար կազմակերպելով։ Ռազմական մինիստրի հետ կոնֆլիկտի և մենամարտի պատճառով հրաժարական տվեց։ 1809—1812 թթ. Կաննինգը անգլիական պառլամենտում գլխավորում էր օպոզիցիան, կոչ անում բոլոր միջոցներով կռվել Նապոլեոնի դեմ։ 1814—1816 թթ. Անգլիայի դեսպանն էր Լիսաբոնում։ 1821-ին Լեյբախի կոնգրեսում առաջին անգամ հանդիպեց*

Մետերնիխի հետ, հանդես եկավ նրա դեմ։ Վերջինս նրան անվանեց «հեղափոխության գաղափարների անգլիական կրող»։ 1822-ից, Կեսլրիի մահից հետո, Կաննինգը գլխավորեց բրիտանական արտաքին քաղաքականությունը՝ սկզբում որպես արտաքին գործերի մինիստր, հետո որպես վարչապետ։ Կաննինգը բրիտանական շահերի եռանդուն պաշտպաններից էր։ Վճռական պահերին, կարևորագույն խնդիրներ լուծելիս նա ոչ միայն դիմում էր պառլամենտին, այլև բնակչության լայն շրջաններին։ Կաննինգը միապետական էր և պահպանողական, քանի դեռ խոսքը գնում էր Անգլիայի մասին։ Բայց նա հնարավոր էր համարում (երբ դա շահավետ էր Բրիտանական կայսրության համար) պաշտպանել Ամերիկայում իսպանական գաղութների պատերազմն անկախության համար։ 1825-ին նա այս կապակցությամբ արտասանեց իր հայտնի խոսքը. «Ես կյանքի կոչեցի Նոր աշխարհը, որպեսզի հօգուտ Անգլիայի փոխեմ ուժերի հարաբերակցությունը Հին աշխարհում»։ Կաննինգը պաշտպանեց հույն ապստամբներին և նպաստեց Թուրքերի դեմ նրանց պայքարին (1821—1826)։ Կաննինգը հանդիսանում է Ֆորեյն Օֆիսի դիվանագիտական ապարատի հիմնադիրը։— 445։

Կանարիս, Կոնստանտինոս *(1790—1877)*, հույն պետական գործիչ, ծովակալ։ Ակտիվ մասնակցություն է ունեցել 1821—1829 թթ. հունական ազգային-ազատագրական հեղափոխությանը, հանդես է բերել հերոսություն՝ անձամբ ոչնչացնելով թուրքական դրոշակակիր նավը (1824)։ 1826-ին ընտրվել է Ազգային ժողովի դեպուտատ։ 1843—1844-ին և 1854-ին հանդիսացել է Հունաստանի ծովային նավատորմի մինիստրը։ Հանդես է եկել միահեծան միապետության դեմ, հանուն սահմանադրության։ 1864-ի օգոստոսից մինչև 1865-ի մարտը Կանարիսը գլխավորել է Հունաստանի կառավարությունը։ 1877-ին նա նորից վարչապետ էր։— 444։

Կարա Գեորգի *(1768—1817)*— Գեորգի Չեռնի Պետրովիչ, սերբիական դինաստիայի հիմնադիրը։ 1787-ից մասնակցում էր հակաթուրքական ապստամբություններին, իսկ 1804-ին գլխավորեց ապստամբական շարժումը։ 1806-ին վճռական հաղթանակ տարավ թուրքերի դեմ Միշարի մոտ, գրավեց Բելգրադը և դարձավ Սերբիան կառավարած մեծահզոր ֆեոդալական առաջնորդներից մեկը։ 1811-ին դարձավ Սերբիայի միահեծան կառավարիչը։ 1813-ին թուրքերը նորից ներխուժեցին Սերբիա։ Կարա Գեորգին փախավ արտասահման։ 1817-ին գաղտնի վերադարձավ Սերբիա, բայց սպանվեց Միլոշ Օբրենովիչի միջոցով։— 336։

Հեթերիաներ *(հունարեն ընկերություն, քաղաքական միություն)*— հունական գաղտնի հեղափոխական կազմակերպություններ, որ 18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբին ստեղծվել էին թուրքական ճնշումից Հունաստանն ազատագրելու նպատակով։ Սկզբում հեթերիաները կազմված էին մտավորականների նեղ շրջանակից, որտեղ ակտիվ դեր էին խաղում արտասահմանյան հունական համայնքների բուրժուազիայի ներկայացուցիչները։ Իսկական համազգային կազմակերպություն դարձավ «Ֆիլիկի հեթերիան» (բարեկամների ընկերություն), որ հիմնել էին հույն հայրենասերներ Ն. Սկուֆասը, է. Քսանթոսը և Ա. Ցակալովը 1814-ի սեպտեմբերին Օդեսայում։

Շուտով հեթերիաներն իրենց շարքերն ընդգրկեցին արհեստավորների, առևտրականների, մտավորականների, հոգևորականների և այլոց։ «Ֆիլիկի հեթերիան» կազմակերպչական ստրուկտուրայով նման էր մասոնական կազմակերպություններին, կառուցված էր խիստ գաղտնապահության սկզբունքով։

Ռուսական հասարակության լայն շրջանները համակրում էին հույն ժողովրդի ազատագրական պայքարին։ Պատահական չէ, որ 1820-ին «Ֆիլիկի հեթերիայի» ղեկավար դարձավ վալախական նախկին հոսպոդարի որդին, ռուսական բանակի գեներալ Ա. Իփսիլանտին։ Երբ վերջինս իր ջոկատով մտավ Մոլդավիա (1821, մարտի 6), Պելեպոնեսում ապստամբություն սկսվեց։ Նրա նախապատրաստման մեջ որոշիչ դեր էր խաղացել Գրիգորիոս Դիկեոսը։— 440։

Հերակլ Բ *(1720—1798)*— վրաց թագավոր, պետական գործիչ և դիվանագետ։ 1744-ից Կախեթիայի, 1762-ից՝ Քարթլի-Կախեթիայի, այսինքն՝ Արևելյան Վրաստանի թագավոր։ Կախեթի Բագրատիոնների դինաստիայից էր։ Ձգտում էր միավորել վրացական հողերը կենտրոնաձիգ պետության իշխանության ներքո, ազատ պարսկա-թուրքական տիրապետությունից, փորձում էր ընդլայնել Վրաստանի իշխանությունը Անդրկովկասում։ Կնքեց 1783-ի Գեորգիևյան դաշինքը Արևելյան Վրաստանի նկատմամբ Ռուսաստանի հովանավորության մասին։ Ձգտում էր զարկ տալ արտադրողական ուժերի, լուսավորության զարգացմանը։— 14։

Մահմուդ Բ *(1784—1839)*— թուրքական սուլթան (1808—1839)։ Գահ է բարձրացել հուլիսի 28-ին Մուստաֆա փաշա Բայրաքտարի իրականացրած պետական հեղաշրջման հետևանքով, որի նպատակն էր վերականգնել Սելիմ Գ-ի «նոր սիստեմը» (Նիզամի ջեդիդ)։ Սակայն միայն 20-ական թթ. կեսերին, ուժեղացնելով իր իշխանությունը և ապահովելով ազդեցիկ պաշտոնյաների և բարձր հոգևորականության օժանդակությունը, Մահմուդ Բ-ն դիմեց ֆեոդալական մասնատվածությունը հաղթահարելու, կենտրոնացած պետություն և վարչական ապարատ ստեղծելու, երկիրն արտաքնապես եվրոպականացնելու առաջին քայլերին։ Մահմուդ Բ-ի կարևորագույն

բարենորոգումներն էին. յանիչարների կորպուսի ոչնչացումը (1826), զինվորական ավատների վերացումը (1834), եվրոպական տիպի մինիստրությունների հիմնադրումը և վարչական նոր բաժանումները՝ գեներալ-նահանգապետներին սեփական զորք ունենալու իրավունքի վերացումով (1836—1839), մի շարք աշխարհիկ միջնակարգ դպրոցների և զինվորական ուսումնարանների ստեղծումը (1826—1839), եվրոպական օրինակով պաշտոնյաների հագուստի սահմանումը և այլն։ Մահմուդ Բ-ն պայքարում էր (իհարկե ոչ միշտ հաջող) ծայրամասային ավատատերերի կենտրոնախույս ձգտումների դեմ։ Նրա ձեռնարկած վերափոխումները դարձան Թանզիմաթի հիմքը։ Սակայն դրանք անկարող էին կանխել Օսմանյան կայսրության անկման պրոցեսը։ Մահմուդ Բ-ի օրոք մեծ չափով ուժեղացավ բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը, որը հանգեցրեց ազգային հեղափոխության հաղթանակին Հունաստանում (1821—1829), Սերբիայի ինքնավարությանը (1830)։ 1828—1829 թթ. Թուրքիան պարտություն կրեց Ռուսաստանի հետ պատերազմում և Մուհամմեդ Ալիի հետ երկու զինված ընդհարումների ժամանակ (1831—1833 և 1839)։ 1838-ին Անգլիային և Ֆրանսիային շնորհված առևտրական առանձնաշնորհումներն Օսմանյան կայսրությանը կապիտալիստական զարգացման, այդ պետությունների ապրանքների վաճառահանման շուկայի վերածման սկիզբը հանդիսացան։— 95։

Միսոլունգի *(Մեսոլոնգիոն)*— քաղաք Արևմտյան Հունաստանում, Պատրաս ծովածոցի ափին։ Էտոլիա և Ակառնանիա նոմի վարչական կենտրոն։ 1821—1829 թթ. ազգային-ազատագրական ապստամբության ժամանակ ապստամբների կարևոր հենակետն էր։ 1822-ի նոյեմբերին—1823-ի հունվարին, 1825-ի մայիսին—1826-ի ապրիլին պաշարվել է թուրքական զորքերի կողմից։ Առանձնապես համառ բնույթ ուներ երկրորդ պաշարումը, որին մասնակցեցին թուրքական 2 լավագույն բանակ (52 հազար մարդ) և նավատորմը։ Նրանց դիմակայում էին 3 հազարանոց հունական կայազորը և ամբողջ բնակչությունը (13 հազար մարդ)։ Սպառելով դիմադրության բոլոր միջոցները, Միսոլունգիի պաշտպանները 1826-ի ապրիլի 22-ի լույս 23-ի գիշերը փորձեցին ճեղքել թուրք պաշարողների շարքերը։ Փրկվեց միայն 1300 մարդ։

Միսոլունգիի պաշտպանությունը և պաշարվածների հերոսական ճեղքումը միջազգային լայն արձագանք գտան և ներազդեցին հունական հարցում եվրոպական տերությունների դիրքի վրա։ Միսոլունգիի պաշտպանության կազմակերպմանը մասնակցել էր Բայրոնը, որը մահացավ այնտեղ 1824-ի ապրիլի 19-ին։— 446։

Մուհամմեդ Ալի *(1769—1849)*— 1805-ից Եգիպտոսի կառավարիչը։ Եգիպտոս էր գնացել 1798—1801 թթ. ֆրանս-թուրքական պատերազմի ժամանակ որպես ալբանական զինվորական ջոկատի հրամանատար։ 1804-ին գլխավորեց հակամամլյուքյան ապստամբությունը Կահիրեում, դուրս արեց փոխարքային և 1806-ին սուլթանի կողմից ճանաչվեց որպես եգիպտական փաշա։ Օսմանյան սուլթանների տիրապետությունից Եգիպտոսի անկախությունն ապահովելու նպատակով վարել է բարդ և նրբին դիվանագիտական քաղաքականություն։ Հունական ապստամբության ճնշմանն իր մասնակցության դիմաց Մուհամմեդ Ալին որպես փոխհատուցում պահանջեց Սիրիան և Կրետեն։ Բավարարություն չստանալով, 1831-ին նա իր զորքերը շարժեց Սիրիայի վրա։ Այդ հողի վրա ծագեց Եգիպտական ճգնաժամը (1831—1833, 1839—1841)։ Մուհամմեդ Ալին գրավել էր Սիրիան, Փոքր Ասիայի մեծ մասը, սպառնում էր գրավել Կ. Պոլիսը, դառնալ Օսմանյան կայսրության փաստական տերը։ Ռուսաստանը հանդես եկավ Բ. Դռան հետ եգիպտական կառավարչի հաշտեցման դիրքերից։ Տերությունների, գլխավորապես Անգլիայի, միջամտությունը կոնֆլիկտին, հանգեցրեց Մուհամմեդ Ալու պարտությանը։— 347։

Յանիչարներ *(թուրք. նոր զորք)*— ստեղծել է Մուրադ Ա-ն 14-րդ դարում։ Թուրքական կանոնավոր հետևակ, որը պահվում էր պետական գանձարանի հաշվին։ Սիփահների և աքընջիի (հեծելազոր) հետ միասին հանդիսանում էին թուրքական ֆեոդալական զորքի հիմքը։ Սկզբնական շրջանում յանիչարների ջոկատները կազմվում էին գերի վերցված պատանիներից, ավելի ուշ՝ քրիստոնեական բնակչությունից բռնի կերպով խլված տղաներից (այսպես կոչված Դևշիրմե սիստեմ)։ Մահմեդականացված անչափահաս տղաները զինվորական պատրաստություն էին անցնում և դաստիարակվում էին մուսուլմանական մոլեռանդության և խիստ կարգապահության ոգով։ Յանիչարները համարվում էին ստրուկներ, ապրում էին զորանոցներում, սնվում էին ընդհանուր ճաշարանում։ Նրանց արգելված էր ամուսնանալ և զբաղվել տնտեսությամբ։ Նրանց գլխավորը աղան էր, կապված էին դերվիշական բեքթաշիների օրդենի հետ։ Բացի նվաճողական արշավանքներին մասնակցելուց, յանիչարները ծառայում էին բալկանյան տիրույթների և արաբական երկրների կայազորներում և ամրոցներում։ 16-րդ դարի վերջից և 17-րդ դարի սկզբից Օսմանյան կայսրության անկման պրոցեսին զուգընթաց, քայքայում էր ապրում նաև յանիչարների կորպուսը. յանիչարներն ընտանիքներ էին կազմում, զբաղվում էին առևտրով, արհեստներով, կողոպտում էին բնակչությանը։ Նրանք այլևս կորցրել էին մարտունակությունը։ Ավելի ուշ նրանք դարձել էին չարիք. արհեստական հրդեհներ էին սարքում զանգվածային կողոպուտներ կատարելու համար, մասնակցում էին պետական հեղաշրջումների, մահաբեր խոց էին

դարձել պետության համար» (Կ. Մարքս)։ 1826-ի հունիսի 15-ին յանիչարները բունտ բարձրացրին Մահմուդ Բ-ի զինվորական ռեֆորմի դեմ։ Բունտը ճնշվեց, յանիչարների կորպուսը վերացվեց։— 113։

Նելսոն, Հորացիո *(1758—1805)*— անգլիական երևելի ծովակալ, ավելի քան 100 ծովային մարտերի մասնակից։ 1798-ին Նելսոնը Աբուկիրի ծովախորշում ոչնչացրեց ֆրանսիական նավատորմը, որը Եգիպտոս էր տեղափոխել Նապոլեոնի բանակը։ Նելսոնը օժանդակում էր Նեապոլիտանական թագավորությանն ընդդեմ ֆրանսիացիների, դաժանորեն հաշվեհարդար էր տեսնում ֆրանսիացի գերիների, իտալական հեղափոխականների հետ։ Տրաֆալգարի հրվանդանի մոտ (21. 10. 1805) վճռական մարտում Նելսոնը ոչնչացրեց ֆրանս-իսպանական միացյալ նավատորմը։ Անգլիայի տիրապետությունը ծովում դարձավ ակնբախ։ Տրաֆալգարի ճակատամարտում ստացած վերքերից Նելսոնը մահացավ։ Նելսոնի անունը չափազանց ժողովրդական է Անգլիայում։— 325։

Պավել Ա *(1754—1801)*— Պետրոս Գ-ի և Եկատերինա Բ-ի որդին, ռուսաց ցար 1796-ից։ Մյուս հետադիմական կառավարությունների հետ միասին ձգտում էր վերջ դնել ֆրանսիական բուրժուական հեղափոխությանը, իսկ ռազմաոստիկանական դիկտատուրայի միջոցով, ամրապնդում էր ինքնակալությունը, կանխելու համար հեղափոխության հնարավորությունը Ռուսաստանում։ Պավելն ընդունեց մի շարք նոր օրենքներ, կառավարման կենտրոնական հիմնարկները ենթարկելով իր միանձնյա իշխանությանը։ Ինքնակալության գլխավոր հենարանը նա տեսնում էր զինվորական ուժի մեջ, բանակը մարզում պրուսական ձևով։ Փակեց մասնավոր դպրոցները (1797), խիստ հսկողություն, գրաքննություն սահմանեց հրատարակչական գործի նկատմամբ, արգելեց արտասահմանյան գրականության մուտքը Ռուսաստան (1800)։ 1799-ին նա հատուկ որոշումով արգելեց երիտասարդության ուսումը արտասահմանում։ Գյուղացիության նկատմամբ վարում էր հետևողական ֆեոդալական դաժան քաղաքականություն։ Ճնշեց 1796—97-ի զանգվածային հուզումները։ «Հեղափոխական վարակի դեմ» «անխնա» պայքարը շուտով դադարեց բավարարել Պավելին։ 1798-ին, մտնելով կոալիցիայի մեջ Անգլիայի, Ավստրիայի և Թուրքիայի հետ, ռազմական գործողություններ սկսեց Ֆրանսիայի դեմ ցամաքում և ծովում։ Ռուսաց գլխավոր բանակը Սուվորովի հրամանատարությամբ 1799-ին շարժվեց Հյուսիսային Իտալիա, որ գրավել էին ֆրանսիական հանրապետության զորքերը։ 1799-ի Բրյումերի 18-ի հեղաշրջումից հետո, երբ իշխանությունը Ֆրանսիայում անցավ Նապոլեոն Բոնապարտին, Պավելը փոխեց արտաքին-քաղաքական կուրսը, բանակցությունների մեջ մտավ նրա հետ, խզեց կապերն Անգլիայի հետ։ Նապոլեոնը նրան ներկայանում էր որպես «կարգ ու կանոնը վերականգնող»։ Քաղաքականության փոփոխումը հանգեցրեց ներքին հակասությունների սրման Պետերբուրգի վերնախավում։ Ազնվականությունը դժգոհ էր։ Ոչ առանց անգլիական մասնակցության Պավելն սպանվեց 1801-ի մարտի 12-ին։— 16։

Պաուլուչչի, Ֆ. Օ. *(1779—1849)*— զինվորական և պետական գործիչ, մարկիզ։ Ազգությամբ իտալացի, ծառայել է Պյեմոնտի, ավստրիական և ֆրանսիական բանակներում։ 1807-ին գնդապետի կոչումով անցել է ծառայության ռուսական բանակում, կատարել է դիվանագիտական հանձնարարություններ, մասնակցել է Թուրքիայի և Շվեդիայի հետ պատերազմներին։ 1810-ին վրացական կորպուսի շտաբի պետն էր, 1811-ի հուլիսից Կովկասում ռուսաց բանակի գլխավոր հրամանատարն էր։ 1812-ին արևմտյան առաջին բանակի հրամանատարն էր, 1812-ի հոկտեմբերից Ռիգայի զինվորական նահանգապետն էր։ 1821—1825 թթ. նա Լիֆլյանդիայի, Էստլյանդիայի և Կուրլյանդիայի գեներալ-նահանգապետն էր։ 1829-ին վերադարձավ Իտալիա։— 369։

Սելիմ Գ *(1761—1808)*— Օսմանյան կայսրության սուլթան 1789-ից։ Փորձել է բարեփոխել պետությունը, առաջին հերթին զինված ուժերը։ Ֆրանսիական գեներալ Սեբաստիանիի օգնությամբ դրեց եվրոպական օրինակով թուրքական նոր բանակի հիմքը։ Սուլթանն ինքն առաջինը կրեց եվրոպական տիպի զինվորական համազգեստ։ Բանակի վերակառուցմանը յանիչարներն արձագանքեցին խռովությամբ, գրավեցին Ստամբուլը, ձերբակալեցին սուլթան Սելիմ Գ-ին (1807), իսկ մի տարի անց (1808) նրան խեղդեցին, երբ նրա կողմնակիցները Մուսթաֆա Բայրաքթարի գլխավորությամբ փորձեցին ազատագրել և նորից գահ բարձրացնել նրան։— 52։

Սրբազան Դաշինք *(Sainte Alliance)*— եվրոպական տերությունների ռեակցիոն դաշինք, որ կնքվել էր (1815) Ալեքսանդր Ա-ի նախաձեռնությամբ հեղափոխական, դեմոկրատական շարժումները Եվրոպայում ճնշելու և ֆեոդալական-միապետական սկզբունքները պաշտպանելու նպատակով։ Էնգելսի խոսքերով ասած դա եվրոպական բոլոր միապետների դավադրությունն էր իրենց ժողովուրդների դեմ ցարի նախագահությամբ։ Աախենի (1818), Տրոպաուի (1820), Լայբախի (1821), Վերոնայի (1822) կոնգրեսներում քննարկվել են հեղափոխական շարժումները ճնշելու, միջպետական հակասությունները հարթելու խնդիրները։ Հատկապես քննարկվել է Արևելյան հարցը։ Սրբազան դաշինքի գործերում ակտիվ դեր են խաղացել անգլիացի Կաննինգը, ավստրիացի Մետերնիխը և ուրիշներ։ Սրբազան դաշինքի սկզբունքներին խորտակիչ հարված

հասցրեց 1830-ի հեղափոխությունը, իսկ 1848-ի հեղափոխությունը ավերեց նրա վերջին հետքերը, նրա ոգեշնչող Մետերնիխի հետ միասին։— 442։

Սուվորով Ա. Վ. *(1730—1800)*— ռուս հանճարեղ զորահրամանատար։ Զինվորական մկրտությունն ստացել է Պրուսիայի դեմ 1756-ի պատերազմում։ 1760-ին մասնակցել է Բեռլինի գրավմանը։ 1762-ին Սուվորովն արդեն գնդապետ էր, Աստրախանի գնդի հրամանատարը։ 1773—1774 թթ. աչքի ընկավ Թուրքիայի դեմ պատերազմում։ 1787-ին սկսված ռուս-թուրքական պատերազմի ժամանակ նա Պոտյոմկինի գլխավորած ռուսական բանակի կորպուսներից մեկի հրամանատարն էր։ Նա փայլուն հաղթանակ տարավ Կինբուռնի տակ, գրոհով գրավեց Իզմայիլը։ 1794-ի հոկտեմբերին Սուվորովը գրոհով գրավեց Վարշավան, հանդես բերելով և՛ զինվորական և՛ քաղաքական մեծ գործչի բացառիկ տաղանդ։ 1796-ին գահ բարձրացած Պավել Ա-ն շնորհազուրկ արեց զորահրամանատարին։ 1799-ին արդեն ծերունազարդ Սուվորովը գլխավորեց դաշնակից Ռուսաստանի, Անգլիայի և Ավստրիայի միացյալ բանակի գործողություններն ընդդեմ ֆրանսիական բանակի՝ Իտալիայի և Շվեյցարիայի տարածքի վրա։ Սուվորովի փայլուն հաղթանակներն այս պատերազմում մնում են որպես ռազմական արվեստի մեջ չգերազանցված գագաթներ։ Սուվորովն ուներ զինվորական բազմակողմանի գիտելիքներ ու փորձառություն, զինվորներին դաստիարակելու և իր ետևից տանելու չգերազանցված հմտություն։— 147։

Տամարա, Վասիլի Ստեփանի *(1740—1813)*— ռուս դիվանագետ։ Պաշտոնավարել է Վենետիկում, Կ. Պոլսում, Թեհրանում. 1783-ին Գ. Ա. Պոտյոմկինի հանձնարարությամբ Տ-ն վրաց թագավոր Իրակլիին տարավ Վրաստանի կողմից ռուսաց գերիշխանությունը և հովանավորությունն ընդունելու մասին պայմանագրի նախագիծը։ Նա մասնակցել է Գեորգիևյան տրակտատի (1783) կնքման բանակցություններին։ 1784-ին Տ-ն պատասխանատու առաքելությամբ ուղարկվեց Իրան, Իսֆահանում իշխանությունն առևանգած Ալի Մուրադ խանի հետ բանակցություններ վարելու։ Խնդրո առարկա էր նաև Հայաստանը։ Իրանում իր իշխանությունն ամրապնդելու համար Մուրադ խանը Ռուսաստանի հովանավորության և օժանդակության կարիքն ուներ և հակված էր Արևելյան Հայաստանը Ռուսաստանին զիջելու։ Բանակցություններն ընդհատվեցին, երբ Ալի Մուրադ խանը հանկարծամահ եղավ (էջ 124)։

Տիլզիտի պայմանագրեր, 1807— կնքված Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև, Ալեքսանդր Ա-ի և Նապոլեոն Ա-ի անձնական բանակցությունների հետևանքով, ստորագրված Ռուսաստանի կողմից Ա. Բ. Կուրակինի և Դ. Ի. Լոբանով Ռոստովսկու և Ֆրանսիայի կողմից՝ Թալեյրանի միջև։

1806-ին գոյացավ չորրորդ հակաֆրանսիական կոալիցիան (Անգլիա, Ռուսաստան, Պրուսիա և Շվեդիա)։ 1806-ի հոկտեմբերին Նապոլեոնը ջախջախեց Պրուսիային և գրավեց Բեռլինը։ Հիմնական խնդիր Նապոլեոնը համարում էր Անգլիայի նկատմամբ հաղթանակի հասնելը։ Չկարողանալով այդ անել ռազմական միջոցներով, Նապոլեոնը 1806-ի նոյեմբերի 21-ին Բեռլինում դեկրետ հրապարակեց կոնտինենտալ բլոկադայի մասին։ 1807-ի հունիսի 2-ին զինադադար կնքվեց Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչների միջև։ 1807-ի հունիսի 25-ին Նեմանի վրա հանդիպեցին Ալեքսանդր Ա-ն և Նապոլեոն Ա-ն։ Ալեքսանդր Ա-ն համաձայնվեց մասնակցել Անգլիայի դեմ ուղղված ամեն մի գործողության։ Նախ կնքվեց խաղաղության պայմանագիր, ըստ որի Պրուսիան կորցնում էր Էլբայի ձախափնյա բոլոր հողերը, հօգուտ նոր ստեղծվող Վեստֆալյան թագավորության։ Վերաձևվում էին Ռեչ Պոսպոլիտայի տերիտորիաները։ Ստեղծվում էր Վարշավայի հերցոգությունը։ Ռուսաստանը ճանաչում էր Նապոլեոնի եղբայրներ Իոսիֆին որպես Նեապոլի թագավոր, Լյուդովիկին՝ Հոլանդիայի թագավոր, Ժերոմին՝ Վեստֆալիայի թագավոր, Ռուսաստանը դադարեցնում էր ռազմական գործողությունները Թուրքիայի դեմ և իր զորքերը հանում էր Մոլդավիայից և Վալախիայից։ Քննարկվեցին նաև մի շարք այլ խնդիրներ։ Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև կնքվեց հարձակողական և պաշտպանական դաշինքի մասին համաձայնագիր։

1807-ի նոյեմբերի 7-ին Ալեքսանդր Ա-ն պատերազմ հայտարարեց Անգլիային։ Սակայն ֆրանսիական դիվանագիտությունը ոչ միայն չէր նպաստում ռուսական քաղաքականությանը Բալկաններում, այլև գաղտնի կերպով խրախուսում էր թուրքական դիմադրությանը։ Տիլզիտի պայմանագրի բացասական հետևանքները Ռուսաստանի համար զգալի դարձան անմիջապես։ Կոնտինենտալ բլոկադան խիստ բացասական անդրադարձավ Ռուսաստանի էկոնոմիկայի վրա։ Նապոլեոնի հետ կնքված դաշինքը ժողովրդականություն չվայելեց։ Երկու կայսրերի Էրֆուրտյան տեսակցությունը 1808-ին բացահայտեց երկու պետությունների շահերի միջև առկա տարակարծությունները։ Ձևականորեն Տիլզիտի պայմանագրերն ուժի մեջ մնացին մինչև 1812-ի Նապոլեոնի ներխուժումը Ռուսաստան, բայց քաղաքական սիստեմը խախտվել էր արդեն Էրֆուրտում։— 348։

Ռտիշչև, Ն. Ֆ. *(1754—1835)*, ռուս զինվորական և պետական գործիչ, գեներալ։ 1788—1790 թթ. ռուս-շվեդական պատերազմի ժամանակ գնդի հրամանատար էր, 1798-ին՝ Աստրա-

խանի պարետ, ճնշել է ժողովրդական հուզումները։ 1806-ին դիվիզիայի հրամանատար էր և 1808-ից մասնակցեց ռուս-թուրքական պատերազմին (1806—1812)։ 1811-ի հունվարին դիվիզիայի հրամանատար էր Հյուսիսային Կովկասում, 1812-ի փետրվարից գլխավոր հրամանատար և գլխավոր կառավարիչ էր Վրաստանում։ Ռուսաստանի անունից ստորագրել էր Գյուլիստանի հաշտության պայմանագիրը (1813)։ Մինչև Ա. Պ. Երմոլովի ժամանումը (1817) Ռտիշչևը կառավարում էր երկրամասը։ 1817-ից նա սենատոր էր։— 374։

Ֆաթալի շահ, պարսից թագավոր (1797—1834 թթ.), Աղա Մահմադ շահի զարմիկն էր, նախապես նրա կողմից թագաժառանգ ընտրված։ Շահ բարձրացավ Աղա Մահմադ շահի սպանությունից հետո։ Սկզբնական շրջանում նրա իշխանությունն Իրանի վրա նշանակալիորեն ձևական բնույթ էր կրում։ Երկրի նահանգներում և մարզերում կառավարում էին շահից փոքր կախման մեջ գտնվող ֆեոդալական խաները, որոնք հաճախ ոչ միայն չէին ցանկանում հարկ մուծել շահի գանձարանը, այլև երբեմն հրաժարվում էին նույնիսկ ձևականորեն ճանաչել նրա իշխանությունը։ Անսահմանափակ ֆեոդալական միապետությունն Իրանի քաղաքական կարգի արտացոլումն էր։ Երբեմն, առանձին կարևոր դեպքերում շահը հավաքում էր ֆեոդալական ազնվականության և բարձր հոգևորականության խորհուրդը։ Գործադիր իշխանությունն իրականացնում էր սադր-ազամը՝ առաջին մինիստրը։ 19-րդ դարի սկզբին, բացի սադր-ազամից, շահն ուներ ևս երեք մինիստր։ Նրանցից մեկը՝ մուստոուֆի-օլ մամալեքը վարում էր ֆինանսները։ Մունշի-էլ մամալեքը շահի դրասենյակի վեզիրն էր, որի պարտականությունների մեջ մտնում էին նաև օտար պետությունների հետ հարաբերությունները։ Երրորդը զինվորական գործերի վեզիրն էր։ Կային նաև բազմաթիվ այլ պաշտոններ, որոնք հիմնականում վարում էին շահի պալատի գործերը։ Ամբողջ Իրանը բաժանված էր 30 մարզերի (վիլայեթների) և նահանգների (էյալեթներ)։ Նահանգներ էին Ադրբեջանը, Խորասանը, Ֆարսը և Քերմանը։ Նահանգների և կարևորագույն մարզերի կառավարիչները որպես կանոն նշանակվում էին շահի որդիներից կամ մերձավորագույն հարազատներից։ Իրանական ամենահարուստ և կարևոր նահանգի՝ Ադրբեջանի կառավարիչը Ֆաթալի շահի ավագ որդի, թագաժառանգ Աբաս Միրզան էր։ Ֆաթալի շահի օրոք մահմեդական շիա հոգևորականությունը չափազանց կարևոր դեր էր խաղում երկրի հասարակական-քաղաքական կյանքում։ Պարսից բանակի վերակառուցման, Անդրկովկասում իր նվաճողական քաղաքականության ապահովման նպատակով Ֆաթալի շահը փորձում էր հենվել մեկ Անգլիայի, մեկ Ֆրանսիայի օգնության վրա։ Անգլիայի հրահրումով էր, որ 1826-ի հունիսին Ֆաթալի շահը և բարձրագույն հոգևորականությունը սրբազան պատերազմ հայտարարեցին Ռուսաստանին։— 17։

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբաշիձե, ազնվական— 168
Աբասաբադ— 422
Աբաս Կուլի խան— 186
Աբաս Միրզա— 197, 198, 200, 202—204, 207, 210—215, 217, 223, 228, 230, 254, 255, 262, 263, 268, 270, 273—281, 285, 291, 294, 296—298, 300, 309—311, 339, 340, 345, 346, 348, 352, 354, 358, 360—362, 364, 366, 368, 369, 371—373, 379—382, 397, 401, 404—407, 410—416, 422, 423, 426, 428, 429, 456
Աբդուլ Ասին, զորապետ— 213
Աբդուլ Համիդ սուլթան—107
Աբդուլ Մեջիդ— 495—497, 518, 532
Աբդուլ Ռիզախ բեյ— 466
Աբդուլֆետ աղա, Իբրահիմ խանի որդին— 248, 275, 293, 366, 368
Աբիսողոմ, ասեսոր— 287
Աբխազիա— 364
Աբխազով, իշխան— 520, 521
Աբրահամ եպիսկոպոս Քոլյան Տաթեցի (Գրիգոր սարկավագ, իշխան Օրբելյան)— 150, 159, 308, 309
Աբրահամ, Մելիք, Դավիթ կաթողիկոսի խնամին— 122, 125, 126, 194, 201, 241, 243, 280, 281, 283
Աբով, Աբովյանների նախահայրը, պապը— 40, 43
Աբով, Բոլնիսի մելիք— 28, 30—32, 169, 205, 229, 230, 233, 241, 257, 287, 289, 301, 304, 307
Աբովյան Խաչատուր— 35, 37, 38, 43, 45, 46, 49, 399, 409, 414, 430—433, 541, 548—550
Աբովյան տոհմ—40
Աբուլ Հասան խան— 382
Ադրբեջան— 182, 190, 243, 252, 422
Ադրիական ծով— 331
Ադրիանուպոլիս— 333, 479—481
Ադրիանուպոլսի հաշտություն— 474, 480, 519
Ազատ գետ—նույնն է՝ Գառնի չայ, Գառնի գետ
Ազգային ժողով (Սկուպշչինա)— 338
«Ազգասեր», երկշաբաթյա թերթ— 552
«Ազդարար»—449, 552
Աթա խան— 292
Աթենք— 446
Աթոնագինե վանք— 60
Ալազան գետ— 182—184
Ալաղայես— 204
Ալամդարյան քահանա— 418
Ալանաց դռներ— 24
Ալաշկերտ (հին Վաղարշակերտ)— տե՛ս Թոփրակ Կալե
Ալաշկերտի հովիտ— 52, 389
Ալատի պեյ— 67
Ալափարս— 423
Ալբանիա— 74, 333
Ալեպկեր— 346
Ալեքսանդր Ա, ռուսաց կայսր— 25, 117, 118, 124, 127, 131, 133—141, 145—148, 151—153, 155, 157, 158, 162—165, 167, 168, 170, 171—173, 176, 177, 180, 181, 189—191, 195, 200, 247, 249, 252—254, 257, 262, 264, 275, 276, 283, 284, 298, 309, 312, 314, 315, 326—329, 337, 343, 344, 348, 349, 353, 357, 359, 360, 363, 370, 376—378, 381, 382, 385, 391, 393—395, 397, 398, 402, 404—406, 431, 441—445
Ալեքսանդր, վրաց արքայորդի— 17, 30, 168, 182, 197, 199, 202, 206, 230—234, 236, 237, 278—281, 290, 296, 297, 364, 370, 375, 376, 380
Ալեքսանդր Գ— 493
Ալեքսանդրապոլ— տե՛ս Գյումրի
Ալեքսանդրիա— 349
Ալի (իմամ)— 36
Ալի բեկ— 51
Ալլահվերդյան տոհմ— 101
Ալկիփիադես— 385, 445
Ալյահար խան— 471
Ախալցխա— 31, 178, 183, 192, 344, 346, 364, 370, 391, 392, 455, 459, 460, 462, 463, 468, 469, 474, 475, 479, 480, 482
Ախալքալաք— 73, 303, 346, 347, 364, 369, 370, 373, 392, 393, 459, 480, 482, 484
Ակոռ— 465
Ակրոպոլիս— 440
Ահմադ, Մարաղուլու խան— 291, 292

Ահմեդ բեյ— 468, 469
Ահմեդ գյուղ— 374
Աղաբաբա— 27
Աղաբաբյան— 535
Աղաբեկյան Մարկոս— 536
Աղա Մահմադ խան Ղաջար, պարսից շահ— 14, 17, 28, 32, 45, 51, 86, 88, 91, 122, 124—127, 149, 153, 155, 157, 159, 160, 162, 176, 178, 180, 181, 188, 192, 194, 195, 200—202, 207, 209, 212, 214, 215, 217—219, 222—224, 234, 235, 238, 243, 246, 247, 252—254, 264, 265, 271, 280, 281, 297, 301, 305, 413
Աղայեկով Գեորգ, թարգման— 131, 134, 141, 155—158, 177, 196
Աղբեշ, եպիսկոպոս—51, 52
Աղթամար— 145
Աղձնիք— 61
Աղվանք— 74, 80, 177, 258, 313
Աղուն խան— 86
Աղ Օղլան, Ամարասի ս. Գրիգորիս վանքը— 263, 313, 373, 381
Ամարաս—նույնն է՝ Աղ Օղլան վանք
Ամերիկա— 506, 518
Ամիթ— 67
Ամիրգովլաթ— 316
Ամիրխան սարդար— 413, 414
Ամստերդամ— 400
Այա Սոֆի մզկիթ— 69
Այգեստան (Վանի քաղաքամաս)— 531
Այնիպրիգի եկեղեցի— 67
Անանիա առաքյալ— 178
Անանուր— 73
Անապա— 340, 480
Անատոլու— 346, 517
Անգլիա— 242, 319, 320, 322—327, 329, 342, 348, 349, 355, 363, 370, 379, 385, 402, 445—448, 494, 495, 497, 498, 503, 504, 553
Անդրեաս արքեպիսկոպոս— 156, 158
Անդրկովկաս— 17, 20, 25, 26, 118, 124, 156, 181, 182, 185, 191, 239, 286, 291, 239, 286, 291, 297, 298, 317, 339—341, 343—345, 362, 363, 367, 368, 370, 373, 379, 380, 381, 383, 394, 395, 399, 401, 403, 405—407, 409, 418, 425, 430, 434, 460, 468, 472, 479, 482—484, 486, 507—512, 515, 516, 519, 522—524, 526, 537, 541
Անդրկովկասյան Հայաստան— 485
Անդրոնիկով, Ճամշադինի մոլրով— 245
Անի— 51, 101, 343, 390
Անկյուրիա— 453
Աննա, Մարիամ թագուհու դուստրը— 170, 174
Անտոնիոս, վրաց կաթողիկոս— 21—23
«Աշխարհագրություն»— 66, 67
Աշտարակ գյուղ— 119, 420, 424
Ապարան— 34, 201, 203, 204, 209, 226, 421, 423
Ապրոյան ընտանիք— 101
Առաջավոր Ասիա— 24, 87
Առաքել պատմագիր— 109
Առյուծի և Արեգակի շքանշան— 383
Ասլանդուզ բերդ— 379—381
Ասիա— 16, 24, 25, 50, 58, 63, 167, 319, 320, 331, 351, 385, 387, 431, 495, 528
Ասիական Թուրքիա— 317, 318, 343, 344, 384, 393, 458, 466—468, 500
Ասկարան բերդ— 263, 265, 267—269, 271, 273, 275, 276, 279, 296, 368, 412
Աստվածատուր, Մելիք Ջումշուդի թոռը— 32, 244
Աստվածատուր վարդապետ— 113
Աստապատ գյուղ— 422
Աստրախան— 19, 20, 49, 123, 134, 135, 138, 151, 195, 252, 382, 396, 422, 535
Ավետարան— 433
Ավետարանոց (Չանախչի) գյուղ— 395, 398, 410, 415
Ավետիս եպիսկոպոս— 236
Ավետիք վարդապետ Պերպերյան— 441, 504
Ավստրալիա— 554
Ավստրիա— 107, 242, 264, 319, 320, 323, 325, 327, 329, 335, 337, 441, 442, 444
Ավտոն խաֆիր— 60
Ատրպատական— 426—429, 457, 484
Արագած— 365
Արագվա կամ Արագոս գետ— 24, 74
Արազ—տե՛ս Արաքս գետ
Արածանի գետ— 484
Արակչեև, կոմս—395, 536
«Արամյան ընկերություն»— 538
Արարատ— նույնն է՝ Մասիս սար
Արարատյան դաշտ— 32, 33, 223, 420, 421, 433
Արարատյան երկիր— 30, 49, 205, 236, 237, 239, 259, 359, 399, 404, 421, 427, 433, 435, 437
Արաքս գետ, նույնն է՝ Արազ, Երասխ— 35, 40, 182, 198, 207, 214, 217, 218, 223, 233, 243, 248, 252, 255, 262, 265, 275, 276, 286, 291, 296—298, 300, 305, 310, 339, 352, 354, 355, 360, 365, 366, 368, 369, 373, 378, 379, 380—382, 410, 415, 416, 420—423, 426—430, 484, 548
Արաքսի հովիտ— 32, 33, 145, 181, 192
Արդաբիլ— 291
Արդահան— 455, 460, 462, 474
Արևելյան Անդրկովկաս— 191, 233, 345, 364, 365, 371, 472, 520
Արևելյան Եփրատ— 56
Արևելյան հարց— 317, 318, 320, 321, 440
Արևելյան Շիրակ— տե՛ս Շորագյալ
Արևելյան Սերբիա— 333
Արևելյան Վրաստան— 73, 74, 373
Արևելյան Տիգրիս— 55
Արևելք— 39, 74, 77, 79, 92, 94, 113, 150, 166, 254, 284, 270, 351, 359, 407, 413, 425, 430, 440, 472, 478, 489, 502, 503, 510
Արևմտյան Ասիա— 24, 25, 57, 82, 84, 85
Արևմտյան Եվրոպա— 106, 113, 317, 351, 385, 444, 447, 494, 538
Արևմտյան հարց— 498
Արևմտյան Շիրակ— 458, 343
Արևմտյան Պարսկաստան— 463
Արևմտյան Վրաստան— 73
Արևմուտք— 113, 498, 547
Արթիկ գյուղ— 206, 253, 254
Արիստոտել— 332
Արծափ գյուղ— 51, 52, 389, 455, 466
Արծրունի Գեորգ, վաճառական— 400
Արծրունի Մկրտիչ— 482
Արկիրք— 60
Արղության Հովսեփ— 19, 21—27, 115—117, 119—127, 132, 134, 135, 138, 142, 146, 147, 151, 160, 297
Արղության Սողոմոն կամ Սոլոմոն— 21, 22, 115, 142, 143
«Արշալույս Արարատյան», թերթ— 551
Արշակունյաց պետություն— 92
«Արշարունյաց ընկերություն»— 449, 534, 538, 551
Արշիպելագոսի կղզիներ— 325, 443, 444
Արփաչայ (Ախուրյան) գետ— 204, 206, 253, 339, 343, 344, 345, 347—349, 390—393, 409, 455, 458
Արտաշատ գյուղ— 360
Արտաշես (առասպ.)—514
Արտավազդ (առասպ.)—514
«Արտասուք Հայաստանի», աշխատություն— 64
Արցախ— 287, 306
Ամերիկա— 404
Առյուծի շքանշան— 383
Աուերշտադտ— 339
Աուստերլից— 329, 330, 337
Աուստերլիցի ճակատամարտ— 387
Աքքերման— 446, 447
Աֆղանստան— 49
Աֆրիկա— 431

Բ

Բաբախան— տե՛ս Ֆաթալի շահ
Բաբաջանյան Մասեհ, հնդկահայ վաճառական— 534
Բաբերդ— 478—480
Բագրատ, Դավիթ արքայորդու եղբայրը— 22
Բագրատունի Արսեն, բանաստեղծ— 544, 545, 547
Բագրատունի թագավորներ— 101
Բագրատունիների տոհմ— 165
Բագրևանդ— 130, 139, 145, 155, 160, 161, 455
Բադենց— 463, 467
«Բազմավեպ», պարբերական հանդես— 543, 545, 552—554
Բաթում— 479
Բալկանյան թերակղզի— 331—333, 336, 338, 385—387, 443
Բալկանյան լեռնաշղթա— 479
Բալկաններ— 93, 318, 386
Բահլուլ փաշա— 465, 466
Բաղդադ— 55, 341, 344
Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալյան— 526
Բաղեշ—50, 53—56, 387, 388
Բաղր, Գյուլիստանի մելիք— 307
Բամբակաձոր— 261, 288
Բայազետ— 50—53, 130, 134, 135, 141, 143, 150, 158—160, 203, 243, 255, 340, 346, 358, 387, 389, 391, 455, 457, 463—467, 470, 474, 475, 477, 478, 480, 482, 484
Բայանդուր— 81, 82
Բայբուրդցյան Գևորգ, վաճառական— 481
Բայրամ փաշա— 345, 392, 459
Բայրամլու— 346
Բայրոն Ջորջ, անգլիացի բանաստեղծ— 444, 445
Բանաձոր (Բանազուր) գյուղ— 524
«Բանասեր», տասնօրյա թերթ— 552, 554
Բաշ-Շորագյալ— տե՛ս Շիրակավան
Բասեն— 50, 54, 387, 389, 481
Բաստամենց Բեժան— 79
Բասրա— 55
Բարգուշատ— 27, 368
Բարդա— 353, 365
Բարդուղիմեոս եպիսկոպոս— 481
Բարսեղ արքեպիսկոպոս— 133, 209, 210, 212, 279, 428, 430
Բարսեղ, քաղաքապետ— 422
Բաքու— 167, 182, 252, 284—286, 292, 297, 298, 382, 407, 412, 512
Բ. Դուռ— 98, 112, 127, 131—135, 157, 325, 328—330, 337
Բեգլեր բեգ— 186
Բեղերխան բեկ— 529—531, 533
Բելաքան— 182, 183
Բելգրադ— 337, 339, 340
Բեկովիչ, գեներալ— 476
Բեհբութ (նախահայր)— 78
Բեհբության Դարչի, իշխան— 19, 21, 22, 78, 79, 286, 400, 409
Բեհբության իշխանուհի— 409
Բեհբության Վասիլ— 460, 468, 469
Բեհբությանների տոհմ— 21, 78, 79, 82
Բեհրամ, մելիք Ջումշուդի որդին— 244
Բենկենդորֆ, գեներալ— 418, 420, 421
Բեռլին— 339
Բեսարաբիա— 438, 439
Բեքիր փաշա— 337

«Բժշկարան»— 551
Բիթլիս— 65
Բյուզանդիա, Բյուզանդական կայսրություն— 92, 93, 331, 333
Բյուզուրգի, Բյուրզուկ, Բոզորկի, Արաս Միրզայի վեզիրը— 309, 315, 339, 368, 382
Բոլնիս— 30, 31, 169, 205, 229, 233, 257, 287, 289, 302—304
Բոհեմիա— 277
Բոհտան գավառ— 520
Բոհտանուի լեռնահովիտ— 55
Բոնոյի աղա Մանուկ— 455
Բոսնիա— 325, 334
Բոսֆոր— 92, 93, 96, 102—104, 114, 140, 330, 494, 548
Բորչալու (Բուրչալու)— 30, 90, 231, 232, 236, 237
Բռնաշեն— 59
Բրիտանիա— 431
Բրյուքսել— 58
Բրուսա— 107
Բուդաղ սուլթան— 253
Բուդբերգ, արտաքին գործերի մինիստր— 308, 309
Բուլանըխ— 50, 389, 467
Բուլղարիա— 325, 333, 334
Բուխարեստի կամ Բուքրեշի դաշնագրություն— 370, 440
Բուղա, ոստիկան— 61
Բուտենև, դեսպան— 502
«Բուրաստանք»— 545
Բուրցև, գեներալ—478, 479
Բուքրեշ— 314, 370

Գ

Գաբրիել Գեղամյան, հարյուրապետ— 207, 208, 221, 225—227, 243, 280, 283
Գաբրիել Թաղիադյան— 553
Գաթրճյան, վարդապետ—551
Գալիանոս— 89
Գալլիա— 431
Գալուստ եպիսկոպոս— 112, 113
Գալստանյան, վաճառական— 554
Գայանե, Մարիամ թագուհու դուստրը— 175
Գայանեի վանք— 211
Գանգես— 548
Գանձակ— 28—30, 73, 85, 182—191, 197, 198, 205, 243—246, 248, 250—252, 255, 256, 263, 264, 267, 268, 271—280, 290, 296, 300, 313, 364, 378, 382, 407, 413, 414, 415, 423, 473
Գանձասար— 31, 32, 412, 526
Գառնի— 214, 218, 353, 355
Գառնի, Գառնի չայ կամ Ազատ գետ— 223, 228, 296, 354
Գասպար, ծառա— 97
Գարդան գեներալ, դեսպան— 52, 350—356, 358, 359, 389
Գարուն գետ— 252
Գեորգ Գալոյան— 279
Գեորգի ԺԲ, Հերակլ Բ-ի որդին— 14—18, 20, 21, 24, 25, 31, 32, 115, 135, 162, 165, 167, 170, 171, 175, 302, 303
Գեորգիևսկի դաշնագիր— 14
Գեորգիի շքանշան— 487
Գերմանիա— 327, 329, 345
Գերվինուս, պատմագիր— 98
Գիորգիևսկ— 297
Գլազենապ, գեներալ— 291, 297, 298
Գյանջա— 311
Գյոկչա— 198
Գյուլիստան— 257, 307, 382
Գյուլիստանի դաշնագրություն— 290, 362, 382, 383, 403—405
Գյուլհանե— 496, 499
Գյուղաշեն— 60
Գյումրի, Գյումրի բերդ, Ալեքսանդրապոլ (այժմ՝ Լենինական)— 204, 206—209, 345, 347, 365, 390, 393, 409, 448, 458, 482, 484
Գոգոլ, ռուս գրող— 489
Գոլովին, գեներալ— 486
Գոկչա լիճ— տե՛ս Սևանա լիճ
Գողթան— 48
Գորդոն Թոռներ— 379
Գորի— 19, 73—75, 183
Գորիս— 365, 410, 473
Գորչակով, իշխան— 382
Գրանտ, միսիոներ— 528, 529
Գրդաու սար— 55
Գրիբոյեդով, ռուս գրող, դեսպան— 469—472
Գրիգոր, Վրաստանի թագավոր— 374
Գրիգոր եպիսկոպոս Խամսեցի— 141, 144, 154—159, 178, 180, 183, 192, 209, 210, 212, 222, 279, 313
Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյան— 408
Գրիգոր վարդապետ Աղբիրմանցի— 22, 119—122, 125—127, 134—138, 140—142, 144, 145, 151, 157, 164, 308, 309, 314, 315, 441
Գրիգորիոպոլ— 308, 360
Գրիգորիս վ. Աղվանյան— 59
Գուգարք— 90
Գուդովիչ Իվան, կոմս— 290, 297—301, 303, 306—309, 312, 313, 329, 339, 340—347, 349, 353—357, 362, 366, 367, 391—393, 404, 425
Գուլյակով, գեներալ— 17, 20, 22, 23, 182—184, 191
Գուղկունճուկ-Իճատիյե—97
Գուրգեն խան— 199
Գուրիա— 191
Գուսանի— 34

Դ

Դալմատիա— 334
Դաղստան— .17, 19, 28, 29, 44, 181, 183, 198, 290, 291, 298, 340, 341, 345, 363, 364, 382, 395, 396, 405, 407, 428,
Դամասկոս— 328
Դամարքալաղ— 35
Դայուտ— 57
Դանուբ— 318, 331, 333, 335, 353, 364, 455, 487
Դանիել Սուրմառեցի, կաթողիկոս— 112, 115, 118—120, 122, 126—130, 132—135, 138—141, 143—146, 148—153, 155—162, 176—181, 183, 189, 192—197, 200, 203, 207, 209, 218—220, 222, 223, 235, 239, 241—243, 257—259, 262, 286, 305, 307, 309—317, 351, 357, 358, 362, 402
Դավիթ Բեկ— 27
Դավիթ Թագաժառանգ— 15, 18—23, 117, 165, 168, 169, 254
Դավիթ Թագավոր— 86, 135
Դավիթ Ղորղանյան, կաթողիկոս— 112, 113, 118—122, 124—135, 137—145, 148—162, 164, 176—180, 192—197, 200—202, 203, 209, 210, 213, 219, 220, 222, 224, 225, 235, 239, 240, 241, 243, 259—261, 281, 299, 308—312, 314—317, 357, 358, 362
Դավթյան Ստեփան— 152
Դավրեժ— 289
Դատվան— 55, 56
Դարդանել, Դարդանելի նեղուց— 349, 448, 494
Դարեջան թագուհի, Հերակլ Բ-ի երկրորդ կինը— 14, 15, 17, 19, 21, 23, 117, 165, 168
Դարիալ— 24, 172
Դեմիր Բուլաղ— 356
Դեյկարխուն գյուղ— 428
Դերբենդ, Դարբանդ— 182, 259, 285, 297, 298, 382, 512
Դը Րիշելիե, դուքս— 308
Դիադին— 346, 463, 466
Դիարբեքիր— 50—53, 58, 65, 67, 387, 388, 530
Դիբիչ— 416—418, 479, 480
Դիզակ, Դիզակի մելիքություն— 31, 258, 307
Դիլի (Դիլիջան)— 279
Դիոդորոս— 74
Դիվան— 324, 328
«Դիտակ Բյուզանդյան»— 449
Դոլվաթլու— 153
Դոնմաղ— 236
Դորպատ— 514, 548
Դսեղ գյուղ— 30
«Դրախտ կորուսյալ»— 547
Դուբրովին— 166
Դուշեթ— 20, 179

Ե

Եասիյ, արվեստապետ դրամահատության Հերակլի— 188, 189
Եգիպտոս— 98, 242, 320—325, 349, 384, 410, 431, 445, 494, 520, 527
Եզդանշիր—533
Ելենենդորֆ— 413
Ելիզավետա կայսրուհի— 190
Ելիզավետպոլ— 190, 251, 252, 256, 258, 278, 279, 287
Եկատերինա Բ թագուհի— 14, 16, 20, 123, 136, 152, 297, 317, 321, 329, 332, 333, 384
Եկատերինֆելդ, գերմ. գաղութ— 409
«Եղանակ Բյուզանդյան», պարբերաթերթ— 551
Եղիաթ գյուղ— 60
Ենա— 339
Եսայի բեկ— 304
Եսայի կաթողիկոս— 80
Եվդոկիա քաղաք— տե՛ս Թոքատ
Եվրոպա—24, 25, 58, 84, 113, 114, 117, 241, 264, 309, 318, 320—324, 326, 327, 331, 336, 341, 342, 358, 370, 382, 385, 386, 391, 403, 442—444, 449, 453, 479, 494—496, 498, 511, 512, 537, 541, 552
«Եվրոպա», պարբերաթերթ— 543
Եվրոպական Թուրքիա— 320, 322, 438, 479, 499
Երասխ— տե՛ս Արաքս գետ
Երզնկա գավառ— 55
Երեմիա եպիսկոպոս— 71
Երևան, Երևանի խանություն, Երևանի բերդ— 28, 30, 32—40, 44, 45, 47—51, 89, 90, 116, 118, 120—122, 124, 125, 127, 132, 135, 148—150, 153, 157, 158, 162, 176, 178—183, 189, 191—196, 198, 199, 201—219, 222, 223, 225—228, 231—241, 243, 247, 252—255, 259, 261, 264, 280, 281, 283, 284, 286—288, 290, 292, 297, 298—300, 303, 306, 310, 315—317, 339—341, 346, 348, 350, 352—358, 362, 364, 365, 369, 382, 391, 393, 401, 402, 404, 407, 416—418, 421—427, 430—437, 439, 452, 454, 457, 458, 463, 470, 484, 488, 491, 536, 541, 548, 549
Երիստով, իշխան— 423, 426
Երիտասարդ Թուրքիա— 495
Երիցյան Ալեքսանդր, պատմագետ— 401
Երմոլով, գեներալ— 166, 394—398, 400, 401, 403—407, 409—417, 434, 436, 486, 487, 520, 521
Երուսաղեմ— 49

Եփրեմ եպիսկոպոս Զորագեղցի— 120, 122, 123, 126, 134—143, 146, 147, 150, 152, 188, 193, 233, 283, 287, 299, 311, 313, 314, 315, 357—362, 399—403, 438, 457, 501, 502

Զ

Զաբիթ փաշա— 51
Զագամ գետ— 278, 279, 296, 297
Զագամի դաշտ— 279
Զագամ— 413
Զագոր գյուղ— 373
Զանգեզուր— 430, 525
Զանգիբասար— 35
Զանգու գետ, Զանգվի ձոր— 35, 37, 214, 215, 223, 227, 356, 431
Զանտ— 206
Զավալիշին, գեներալ— 285, 286
Զավիլեսկի— 520
Զարդանաշեն— 523
Զաքաթալայի շրջան— 182
Զաքարիա սարկավագ Քանաքեռցի— 81
Զաքարիա սպասալար— 82
Զաքարիա պատրիարք— 106, 107, 236, 452
Զեյթուն— 69, 454
Զմյուռնիա— 119, 157, 541, 543, 547, 550—552
Զուբարյով— 521, 522
Զուբով, զորավար— 167, 288, 301
Զուրաբ Եվանգուլով— 170, 171

Է

Էլլադա— 444
Էմլաք— 60
«Էնեական»— 545
Էնեգաթ— 118
Էջմիածին— 20—22, 24, 25, 31, 49, 50, 78, 79, 112, 115, 116, 118—131, 133, 135—137, 139—142, 144—145, 148—150, 152, 153, 155, 157—161, 176—178, 180, 192—195, 197, 200—203, 208—212, 220, 225, 234, 235, 239—241, 243, 254, 255, 259, 261, 262, 282, 308—312, 314—316, 351, 353, 357—362, 399, 401, 402, 416, 420—424, 427, 428, 432, 433, 435—439, 455, 457, 464, 470, 489—493, 501—507, 541
Էրզրում— 31, 52, 53, 126, 310, 340, 346, 347, 350, 389, 391, 392, 403, 460, 462, 466—468, 474—482, 484, 530
Էրիստով իշխան— 86

Ը

Ըմբր— 51
«Ընձեննավոր»— 91

Թ

Թադեոս առաքյալի վանք— 428, 430
Թադեոս վարդապետ— 130
Թաթուլ, արքունի վիրաբույժ— 175, 196
Թալեյրան— 323, 325
Թալին գյուղ— 254, 259, 282
Թալիշ— 364, 382, 407
Թաղիադյան Մեսրոպ— 88, 398, 433, 512—514, 547, 548, 551, 552
Թամամշյան— 514
Թամար թագուհի— 82, 185, 186
Թամար, Մարիամ թագուհու դուստրը— 170, 171, 174
«Թանզիմաթ»— 63, 70, 493, 499, 500, 509, 517, 530—533, 537, 539
Թառումյան Բարա, վաճառական— 512
Թառումյան Զոհրապ— 512, 514
Թառումյան Մարկոս— 513, 514
Թառումյաններ— 513
Թարթառ գետ— 275, 277, 345, 363, 365, 372
Թարթառ կայարան— 380
Թարխանյան Ռոստոմ— 411
Թարխանյան Սաֆար— 411
Թավրիզ— 230, 241, 285, 303, 309, 311, 339, 350, 352, 355, 368, 369, 382, 383, 404, 406, 416, 422, 423, 425, 426, 428, 434, 439, 470
Թելավ քաղաք— 15, 73, 374, 375
Թեհրան— 88, 197, 198, 230, 242, 281, 293, 309, 339—342, 352, 355, 356, 358, 359, 363, 382, 404—406, 422, 426, 469, 470, 472
Թեյմուրազ արքայորդի— 168, 182, 197, 199, 206
Թերեք գետ— 24
Թիար— 529
Թիանեթ գյուղ— 170, 374
Թիֆլիս— 14—22, 24, 25, 72—91, 96, 98, 106, 113, 115—118, 120—128, 135, 142, 148, 151, 152, 156, 160, 162, 164, 166—180, 183, 184, 186, 191—193, 196, 198—200, 205, 225, 232—235, 237, 238, 241, 243, 248, 250, 251, 259, 260, 262, 269, 272, 274, 277—279, 282, 283, 285—292, 296—298, 300, 302, 304, 308, 311—313, 343, 345, 346, 350, 355, 356, 358, 360, 362, 365, 366, 370—372, 374—380, 395, 396, 399—401, 403, 407, 409—423, 432, 434, 438, 439, 470, 473, 482, 487—489, 508, 510—512, 514, 516, 517, 519, 523—525, 535, 536, 541, 543, 549, 550, 553
Թիոմա— 529
Թորոս կաթողիկոս— տե՛ս Ներսես Աշտարակեցի
Թոփ-դաղ— տե՛ս ս. Նշան
Թոփի բաղ. արվարձան— 354

Թոփրակ Կալե. Ալաշկերտ— 50, 350, 387, 463, 464, 466, 467
Թոքատ քաղաք, Եվդոկիա— 122, 126, 127, 141, 156, 160
Թրակիա— 93, 104, 443
Թրիալեթի լեռներ— 346
Թուկիդիդես— 545
Թուրքաց Հայաստան— 50, 55, 58, 65, 145, 384, 387, 389, 455—457, 529, 531
Թուրքիա— 14, 16, 24, 32, 47, 49, 59, 71, 72, 97, 100, 101, 106, 107, 109, 122, 127, 128, 138, 139, 146, 239, 290, 317, 318, 320—325, 327, 329—345, 348, 351, 363, 364, 370, 371, 384—387, 390, 391, 393, 399, 403, 408, 433, 438—443, 446—448, 450, 452—457, 460, 467, 477, 479—483, 485, 493—501, 503, 505, 506, 509—511, 515—517, 519, 520, 526—528, 530, 541, 549
Թուրքմենչայ գյուղ— 426, 480
Թուրքմենչայի դաշնագրություն— 428, 429, 432, 434, 448, 470, 519

Ժ

Ժան Բատիստ Բուասո, ֆրանս. հյուպատոս— 351, 352
Ժերոմ, Նապոլեոն Բոնապարտի եղբայրը— 341
Ժոբեր Ամեդե, արևելագետ— 52, 53, 242, 310, 389

Ի

Իբերիա— տե՛ս Վրաստան
Իբրահիմ բեկ— 285, 286
Իբրահիմ խալիլ խան— 26—28, 30, 182, 184, 185, 243—252, 257—259, 262—266, 268, 269, 273, 275, 276, 283, 284, 291, 293—296, 298, 300, 306, 313, 366, 367
Իբրահիմ փաշա, եգիպտ. փաշա Մուհամմեդ Ալիի որդին— 337, 445—447, 494
Իզմայիլ, քաղաք— 186, 340
«Իլիական»— 545
Իլիաշենկո, կապիտան— 373
Իլիկո, Մարիամ թագուհու որդին— 170
Իմերեթ— 19, 165, 167, 168, 170, 191, 197, 290, 263, 370, 479
Ինճիճյան— 54, 56, 66, 103, 551
Իսեան կամ Իսքեան— 67, 68
Իսկենդեր— 347
Իսկյուտար— 518, 535
Իսմայիլ էֆենդի— 107, 397
Իսպանիա— 431, 443
Իսրաֆիլ բեկ— 246
Իսրայել կաթողիկոս— 258, 313, 314
Իսրայել Օրի— 147, 256, 430
Իփսիլանտի Ալեքսանդր, համհարզ— 441

Իտալիա— 114, 313, 325, 334, 431, 443, 537, 544
Իտալինսկի, դեսպան— 158, 330
Իրան— 14, 16, 17, 82, 124, 184, 186, 197, 198, 200, 212, 239, 241, 242, 248, 302, 309, 310, 341, 379, 380, 405, 406, 471

Լ

Լաբինցև, պորուչիկ— 224
Լադինսկի, սպա— 268, 272, 275
Լազարև, գեներալ-մայոր— 16—23, 31, 120, 121, 165, 168, 169, 171—176, 178
Լազարյան եղբայրներ, Լազարյան տոհմ— 134, 136, 137, 141, 149, 152, 299, 427, 429, 536
Լազարյան Խաչատուր— 413
Լազարյան Հովակիմ— 136—138, 157, 360, 427, 535
Լազարյան Հովհաննես— 136, 137, 141, 413
Լազարյան Ղազար, գնդապետ— 427—429, 434
Լազարյան Ճեմարան— 427, 535, 536
Լազարյան Մինաս— 136—138, 152, 188, 251, 258, 259, 278, 282, 286, 289, 299, 301, 303—307, 309, 311, 313, 314
Լազարյան Տեր-Ղազար— 79
Լա Մանշ— 320
Լայպցիգ— 510
Լեհաստան— 335, 342, 490, 550
Լենկ Թեմուր կամ Թեմուր Լանգ— 57, 431
Լենքորան— 381
Լեոնտև, գեներալ— 209, 303
Լեռնային Ղարաբաղ— 28, 365
Լինչ— 64
Լիսանևիչ, մայոր— 245, 247, 248, 254, 262, 263, 265, 267—271, 273, 275, 276, 291, 293—296
Լիսենկո, սպա— 268
Լոման փաշա— 51
Լոնդոն— 403, 404, 445, 495
Լոռի, Լոռի բերդ— 30, 32, 90, 118, 184, 205, 206, 231, 236, 257, 347, 409
Լվարսաբ, վրաց Ռոստոմ թագավորի որդին— 81
«Լրագիր օսմանյան պետության»— 543
Լուի 14-րդ թագավոր— 321
Լուի ԺԶ թագավոր— 321
Լուսավորիչ (Գրիգոր Լուսավորիչ)— 139, 196, 240, 260, 360

Խ

Խադո— 65
Խաթթի Շերիֆ— 496, 497, 499
Խաթուն օղլի կամ օղլու— 51, 343, 344, 390, 392
Խամսայի մելիքներ կամ մելիքություններ— 27, 30, 31, 305
Խամուր— 346, 463, 466

Խայթա— 62
«Խանարխ» ջրանցք— 32
Խանլար աղա, Իբրահիմ խանի կրտսեր որդին— 252
Խանում խաֆիր— 60
Խաշանըղ սար— 51
Խաչեն— 32, 258, 307
Խաս գյուղ— 51
Խարամորթ, Հայաբնակ գյուղ— 270
Խարաքաղցի, վարդապետ— 455
Խարբերդ— 64
Խափոն— 60
«Խելքից պատուհաս»— 469
Խեյրանիսա Բեգում, Ջաֆարի մայրը— 372
Խեսուր— 170
Խերթվիս— 459
Խերոդինյան— 514
Խիզան— 50, 62, 64, 387
Խիմշիև, ազնվական— 176
Խլի-Ղարաքիլիսա (խլի՝ փոքր)— 206, 208, 409
Խլմա խաֆիր— 60
Խնձորեսկ— 382
Խնուս— 53
Խոզիմ— 339
Խոզիլ, Պլար աղայի տղան— 60
Խոզան օղլի— 61, 68
Խոկան խաֆիր— 60
Խոյ— 228, 234, 294, 304, 426, 428, 429, 465
Խոնաշեն գետ— 263, 296
Խոջայան Վարդազար, մայոր— 232
Խոսրով փաշա կամ խան— 55, 470
«Խոսրով Մեծ»— 550
Խոսրով միրզա, Ֆաթալի շահի որդիներից— 472
Խորասան— 182, 184, 187
Խորենացի Մովսես— 48
«Խրատական Տետրեր»—548
Խրիմյան Մկրտիչ— 548
Խուրյան Գեորգ— 207—209, 212, 217, 220, 221, 223—226, 228, 233, 238, 239, 243, 283
Խուդադադ մելիք, Վարանդայի մելիք Շահնազարի որդին— 522
Խուդափերին, կամուրջ Արաքսի վրա— 243, 262, 264, 292, 365, 382, 410
Խութ— 59

Ծ

Ծալկա— 347
Ծռազատիկ— 81—83

Կ

Կաբարդի գյուղ— 274
Կազբեկ գյուղ— 172
Կալկաթա— 433, 535, 552
Կախեթ— 72, 89, 165, 169, 175, 183, 197, 198, 290, 373—376, 378, 380, 473, 519
Կահիրե— 328
Կաղանկատվացի Մովսես— 80
Կամիլոս— 431
Կամսարական իշխաններ— 101, 314
Կանադա— 319
Կանարիս, զորավար— 444
Կանդահար— 342
Կաննինգ— 445
Կապոդիստրիա, կոմս, արտաքին գործերի մինիստր— 441
Կառկառ— 265, 268, 293
Կասպից ծով— 191, 199, 207, 242, 284—286, 339, 382, 426, 516
Կասումբեկ կամ Կասում բեյ— 209, 212
Կավակերտ գյուղ— 219
Կարա Ալի փաշա, ծովակալ— 443
Կարա բեկ կամ Ղեարաբեկ— 51, 343—345
Կարա Դիրոդի— 336—338, 340
Կարա Հաջի Բաբա, թուրքական ռեբեդմանատան— 267, 271
Կարահիսար— 346
Կարապետ ամիրա— 96
Կարապետ արքեպիսկոպոս— 121, 127, 129, 145, 150, 475—477, 480—482
Կարին— 51, 129, 130, 150, 153
Կարյագին— 245, 246, 265—275, 277, 279, 296, 298, 300, 412
Կարս, Կարսի փաշայություն— 31, 201, 203—206, 343—348, 390—393, 448, 455, 459, 460, 462, 474, 475, 477, 479, 482, 484
Կեշիշու գյուղ— 259
Կըզըլ Ջաֆչակ— 347
Կիլիա— 340
Կիլիկիա— 40, 68—70, 454
«Կիլիկիա» թերթ— 110
Կիպրոս— 443
Կիրակոս Գանձակեցի— 85—86
Կիրակոս, Կիլիկիայի հայոց կաթողիկոս— 454
Կղարծի գյուղ— 522
Կյուրճյան Մելքոն (Հրանտ)— 110
Կնորինգ, գեներալ— 17, 19—21, 31, 32, 87, 118, 120, 124, 127, 128, 137, 141, 142, 148—150, 153, 162—168
Կոզեռ Թաղ— 217
Կոզլովսկի, գնդապետ— 216, 217
Կողբ գյուղ— 424, 436, 465
Կոնդ— 35
Կոստանդին Մեծ, Կ. Պոլսի հիմնադիրը— 92
Կոստանդին Պավլովիչ, Ալեքսանդր Ա-ի եղբայրը— 405, 406
Կովալենսկի— 16, 164—166, 168, 303
Կովալևսկի, գեներալ— 142
Կովկաս— 15, 16, 18, 142, 162, 164, 166, 176, 195, 197, 247, 264, 286, 290, 291, 296—299, 312, 313, 329, 339, 363, 364, 369, 374, 377, 394—396, 401, 404—407, 413, 435, 437, 446, 468, 470, 471, 479, 481, 483, 486—488, 492, 504, 507, 512, 514, 524, 525
«Կովկաս», «Կավկազ», պարբերաթերթ— 543, 552, 553
Կովկասյան լեռներ, Կովկասյան լեռնաշղթա— 14, 20, 24, 74, 166, 168, 191, 233, 234, 242, 317, 362, 363, 371, 395, 438, 483, 485
Կոտլյարևսկի, մայոր— 270, 272, 274, 275, 366, 368—370, 373, 378—382
Կորսիկա կղզի— 319
Կորֆու կղզի— 328
Կոցո Օհանյան— 375, 378
Կ. Պոլիս— 49, 52, 59, 63, 69, 71, 72, 88, 92—96, 98, 101, 103—106, 108—114, 116, 118—121, 124, 127—133, 137—143, 145, 146, 153—162, 242, 260, 308, 313, 327, 329, 330, 333, 336—338, 349, 350, 352, 357, 384, 387, 389, 402, 410, 441, 443, 447—451, 453, 454, 458, 463, 479, 481, 494, 496, 498—507, 510, 515—517, 530—535, 537—541, 543, 545, 548, 550—552, 554
Կրասովսկի, գեներալ— 420, 421, 423, 426, 434
Կրետե կղզի— 443, 533
Կրճիկյան Հակոբ— 506, 507
Կուկիա գյուղ— 20
Կուսապատ գյուղ— 267, 272, 274, 373, 412

Հ

Հաբեթյան տոհմ— 121
Հադր— 67, 68
Հաթամ բեկ Մելիք-Մեժլումյան— 304
Հաթամ մելիք, մելիք Մեժլումի որդին— 270, 274, 307
Հախվերդով— 189
Հախվերդով, գեներալ— 379
Հախվերդյան Գեորգ— 515
Հախում գյուղ— 408
Հախումյան— 513
Հախումյան, առևտր. տուն—512
Հախումյաններ— 513
Հակոբ, Հովհաննես յուզբաշու եղբայրը— 267, 272, 274, 277
Հակոբ Նենադովիչ— 336
Հակոբոս պատրիարք— 501, 506, 507
Հակոբ վարդապետ Պոլսեցի, վարժապետ— 211
Հաղպատ— 31, 32, 236, 237, 402, 501
Հաճի Սուլեյման— 51
Համազգային ընկերություն— 538, 539
Համամլու գյուղ— 365
Հայաստան— 20, 26, 30—33, 40—42, 48, 50, 52, 55, 56, 58, 72, 74, 82, 84, 89, 92—94, 108, 121, 137, 143, 144, 177, 194, 247, 261, 318, 350—352, 359, 387, 389, 393, 420, 430, 433, 434, 454, 455, 458, 463, 464, 474, 484, 490, 503, 504, 507, 513, 529, 531—533, 540—542, 546—548, 551, 552
Հայկական բարձրավանդակ— 55, 94, 318
Հայկական նահանգ, Հայկական մարզ— 48, 432, 433, 436, 437, 458
Հայկական Տավրոս— 55
«Հայկ Դյուցազն»— 545, 547
Հայոց հարց— 25, 37, 318, 430, 500
«Հայտարար գիր լրո»— 552
Հայտար խաֆիր— 60
Հան, սենատոր— 488, 522—524
Հաշիմ, Պլար աղայի տղան— 60
Հաջի Ազալար բեկ— 410
Հաջիբեյ, բերդ (Օդեսա)— 340
Հաջի խան— 421, 466
Հաջի Յուսուֆ Զիա փաշա— 346
Հաջի Սահմի փաշա— 475, 476
Հաջի Սալահ— 474
Հասան Դուզե— 474
Հասան խան— 291, 353, 355, 356, 424, 425
Հասան Կալե— 473
Հասան-Ջալալյան (Սարգիս արքեպիսկոպոս)— 32, 419, 507
Հասան-Ջալալյանների մելիքություն— 32
Հասոն պատրիարք— 539
Հավլաբար— 86, 171, 238, 380
Հարավային Կովկաս— 16, 24, 25, 30, 166
Հարավային Հունգարիա— 335
Հարթ գյուղ— 60
Հարություն յուզբաշի, Հովհաննես յուզբաշու հայրը— 267
Հաքարու գետ— 410, 436
Հաքստհաուզեն Ֆոն Ավգուստ— 37, 40—43, 45, 46
Հաֆիզ փաշա— 337, 527
Հեթերիա, հունական հեղ. կոմիտե— 440, 441
Հեյդար— 347
Հեսելյարե, կոմս— 479
Հերակլ Բ թագավոր— 14, 15, 20, 25, 30, 86, 117, 162, 165, 167, 168, 186, 188, 199, 236, 280, 281, 297, 301, 302, 304
Հերակլ, բյուզանդական կայսր— 436
Հերակլ, Մարիամ թագուհու որդին— 170, 173, 175
Հերցոգովինա— 334
Հեքիմյան Սրապիոն— 546, 550
Հեքքիարի— 529, 531
Հին Հռոմ— 531
Հին Հունաստան— 545
Հյունոտ գյուղ— 411
Հյունքյար Իսկելեսի արվարձան— 494, 503
Հյուսիսային Ամերիկա— 319
Հյուսիսային Կովկաս— 16, 17, 118, 164,

166, 178, 291, 297, 308, 341, 363, 427, 438
Հյուրմուզյան Էդվարդ, բանաստեղծ— 544, 545
Հնդկական օվկիանոս— 16, 55, 318, 554
Հնդկաստան— 49, 182, 183, 242, 319, 320, 325, 342, 350, 352, 385, 402, 403, 419, 433, 445, 511, 533, 535, 541, 547, 548, 551, 552
Հոլդե, մայոր— 223, 224
Հոլդեի մարտկոց— 223
Հոհան, մելիք— 27
Հոմերոս— 385, 445, 545, 547, 548
Հոնիական կղզիներ— 323, 325
Հոռոմոսի վանք (Շիրակում)— 390, 493
Հովակիմ— 499
Հովհան, Դավիթ արքայորդու եղբայրը— 22
Հովհան Վանանդեցի, քահանա— 547
Հովհաննես արքեպիսկոպոս Դեղարդակիր— 148, 149, 151, 178—180, 184, 188, 189, 191, 193, 205—208, 221, 222, 235, 237—238, 241, 248, 251, 255, 258, 278, 279, 282, 283, 299, 313
Հովհաննես եպիսկոպոս Պառնասյան— 122
Հովհաննես, հայրապետ Աղվանքի— 177
Հովհաննես յուզբաշի— տե՛ս Վանի յուզբաշի
Հովհաննես Ջամաշրճյան, Կ. Պոլսի պատրիարք— 113, 120, 121, 127, 131, 133, 141, 156, 158, 308
Հովհաննես Ս. Պ., խմբագիր— 522
Հովհաննես վարդապետ Կարբեցի— 259, 314, 344, 392, 502, 504
Հովսափաթ— 237
Հովսեփ բեկ Մադաթյան— 523
Հովսեփ, մելիք— 31
Հովսեփ Միրիշկարբաշի— 287
Հովսեփ, ապա— 358
Հորաններից բլուր— 211
Հռենոս— 382
Հռիփսիմեի վանք— 211
Հռիփսիմե, Մարիամ թագուհու դուստրը— 175
Հռոմ— 83, 84, 431, 539, 545
Հռոմի պապ— 324, 385, 539
«Հրավիրակ երկրին Արարատյան»— 548
Հուդա— 194
Հուլիոս Կեսար— 431
Հուլոն, Դարեջան թագուհու որդին—15, 117, 165, 167—169
Հունաստան— 325, 331—333, 386, 440—447, 480, 494, 526
Հուսեին Ալի խան— 51
Հուսեին Ղուլի աղա— 244, 285, 292, 297, 310, 316, 317, 353—355, 357, 362, 364, 369, 370, 401, 407, 409, 424, 458
Հուր Ալլահ բեկ կամ բեյ— 529, 533

Ձ

Ձորագետ (Դեբեդ)— 32, 236

Ղ

Ղազախ գավառ— 29, 205, 225, 231, 232, 236, 279, 280, 296, 520, 521
Ղազարապատ— 159
ս. Ղազար կղզի— 114, 449, 540—545, 548, 550
Ղազար Փարպեցի— 399
Ղազիղումուխ— 290, 291
Ղազվին— 199, 470
Ղալաթիա— 453
Ղամազյան Մատթեոս— 506, 507
Ղաջար— 198
Ղարաբաղ— 20, 26—31, 40, 66, 153, 177, 182, 185, 198, 205, 243—250, 252—256, 258, 259, 262—267, 269—271, 275, 279, 283, 284, 289—298, 300—306, 313, 314, 345, 353, 354, 356, 364—369, 371—374, 378, 379, 382, 390, 395—398, 401, 404, 407, 410—413, 415—417, 422, 423, 430, 436, 513, 519—524, 526, 536
Ղարադաղ— 246, 252, 262—264
Ղարամյան Ռաֆայել, վաճառական— 534
Ղարայազ— 81
Ղարաքիլիսա— 205, 206, 229, 230, 232, 236, 253, 255, 280, 281, 288, 291, 303
Ղարս— 51, 148, 153
Ղափան— 368
Ղեոնդ Ալիշան— 545, 546
Ղզլար— 134, 135, 138, 197, 341
Ղոշավանք— 390
Ղորղանյան Թոմա— 79
Ղորղանյան, վաճառական— 433
Ղորղանյան տոհմ— 118
Ղրիմ— 315
Ղրիմի պատերազմ— 507
Ղրխբուլաղ— 201, 204, 213, 238
Ղուբա— 298, 382
Ղուլուխյան, բժիշկ— 551
Ղուկաս Ինճիճյան— 449
Ղուկաս կաթողիկոս— 112, 119, 120, 142, 160, 161, 203

Ճ

Ճահվար խաֆիր— 60
Ճապաղ ջուր— 64—66
Ճավատ (այ) ամրոց— 188
Ճավճավաձե, իշխան— 463, 466, 467, 470
Ճեղիրա— 66
Ճինճ խաֆիր— 60
Ճուլամերկ— 66
Ճուղուրեթ գյուղ— 20

Մ

Մադաթով, գեներալ— 394—398, 410, 413—417, 486, 487, 520, 521
Մադրաս— 433, 449, 552, 554
Մազինք— 60
Մաղլումյան էֆ.— 71
Մալթա— 472
Մախթափա բլուր— 354
Մակեդոնիա— 443
Մահմադ խան, Հերքիարի ցեղապետներից մեկը— 531—533
Մահմադ խաֆիր— 60
Մահմադ խաֆիր— 60
Մահմադ, Գյար աղայի տղան— 60
Մահմադ Հասան աղա, Իբրահիմ խանի որդին— 251, 252, 265, 284, 296
Մահմեդ Ալի, Ֆաթալի շահի որդին— 245—364
Մահմեդ Շաֆի կամ Շարաֆի, շահի մեծ վեզիր— 198—200, 309, 339, 340, 352, 353, 382
Մահմուդ խան— 61
Մահմուդ Հասան բեկ— 126
Մահպուտյանք գյուղ— 60
Մահտեսի Հովհաննես— 309
Մաղարբերդ, Մաղասբերդ, Մուղասբերդ— 51, 343—345, 347, 348, 390, 393
Մամադ Յուսուֆ աղա, Իբրահիմ խանի որդին— 293
Մամեդ փաշա, Խաթուն օղլու տոհմից, Կարա բեկի եղբայրը— 51, 343—347, 390, 392
Մամիկոնյան տոհմ— 81
Մամիշ օղլու— 474, 476
Մամուրյան Մատթեոս— 536
Մանազկերտ— 50, 53, 387, 389, 467
Մանվելյան Հակոբիկ, Իսկյուտարի ճեմարանի տնօրեն— 518
Մանուել վարդապետ Կյումուշխանեցի— 130, 360
Մանուչար խան Ենիկոլոփյան— 471
Մասիս լեռ, նույնն է՝ Արարատ— 177, 215, 463—466, 544
«Մասիս», լրագիր— 59
Մատարա— 259, 465
Մատթեոս կաթողիկոս— 493
Մատթեոս Ջուխաջյան, Կ. Պոլսի պատրիարք— 504—506, 519, 531, 532
Մատթեոս քահանա Նենադովիչ, Հակոբ Նենադովիչի որդին—336
Մարաղա, քաղաք— 241, 243, 311, 312
Մարաղուլի— 291, 292
Մարգարյան Յաղուբ—470, 471
Մարդակերտ գյուղ— 275
Մարիամ Աստվածածին— 199
Մարիամ թագուհի— 167, 170—175
Մարկոս, Թառումյան վաճառականի եղբայրը— 512
Մարկով, դեսպան— 327
Մարմաշեն— 204, 206
Մար Շմոն— 528, 529
Մարսել— 321, 510
Մարտիրոս եպիսկոպոս— 157, 210, 236
Մաքու— 466
Մեդինա— 324, 328
Մեժում, մելիք— 28, 188, 270
Մեյրուտ— 554
Մելիք-Աղամալյանների տոհմ— 40, 44
Մելիք-Ավանյան Ղահրաման, Դիզակի մելիք— 31, 307
Մելիք-Շահնազարյաններ— 397, 398
Մելիքսեդեկ— 144
Մելքիսեդ Ղամազյան, Թիֆլիսի քահանա— 311, 361
Մեծ Խարտիա— 378
«Մեկին խոսք, մյուսին՝ հարս»— 549
Մեհմեդ Բ կամ սուլթան Մահմուդ— 95, 440, 441, 443, 445—447, 452—454, 467, 479, 481, 494, 495, 501, 516, 517, 530
Մեհտի Ղուլի աղա, Իբրահիմ խանի որդին— 248, 252, 254, 280, 281, 284, 294—296, 298, 306, 366—368, 371—373, 380, 397, 398, 405, 410—412, 415, 436, 521
Մեղրի, ավան— 27, 368, 369, 382
Մեղրի գետակ— 296
Մենշիկով— 406
«Մեռելահարցուկ»— 549
Մեսոչանցի բերդ— 444
Մետերնիխ, ավստրիական մինիստր— 443, 445
Մերձավոր արևելք— 25
Մերտի— 67
Միփիաքալաքի— տե՛ս Ախալքալաք
Մեքքա— 200, 324, 328
Մթերպան գյուղ— 60
Միլոշ— 336
Միլտոն— 547
Մինաս եպիսկոպոս— 313
Մինաս Միրզաբեկյան, Բանածոր գյուղի քահանա— 524
Մինասյան Հ.— 550
Մինգրելիա— 191, 290, 343, 479
Միջագետք— 55, 341, 530
Միջերկրական ծով— 16, 320, 321, 328, 338, 349, 497
Միջին Ասիա— 56, 85, 325, 403, 511
Միջին Եվրոպա— 335
Միսոլունգի, քաղաք— 446
Միտր Տիխինիչ, մայոր— 295
Միտուլին, զորավար— 444
Միրզա-Ադիգյոզալբեկ— 521
Միրզո, Գյար աղայի տղան— 60
Միրզոյան— 514
Միրիմանյան— 514
Միրիջանյան ամիրա Շնորհք Մկրտիչ— 105
Միքայել, Մարիամ թագուհու որդին— 170

Միքայելյան ամրոց— 117
Մխիթարյան դար— 540
Մխիթարյան դպրոցներ— 534, 535, 541, 546
Մխիթարյան վանք— 534, 535, 538, 543, 545
Մխիթարյան վարդապետներ կամ Մխիթարյան միաբանություն— 103, 104, 113, 114, 449—451, 534, 535, 538, 539, 541—545, 548, 550—553
Մկրտիչ աղա— 129
Մկրտիչ վաճառական— 86
Մշակավանք— 545
Մոգիլև— 521
Մոզդոկ— 123, 134, 135, 138, 162
Մոլդավիա— 330, 331, 338, 339, 348, 441
Մոլդավո-Վալախիա (Ռումինիա)— 119, 314, 325, 330, 441, 446, 448
Մոլիեր— 550
Մոլտկե, գերմանացի սպա— 165, 547
Մոխրաթաղ գյուղ— 274, 275
Մոկաց գավառ— 62, 64, 66
Մողնի եկեղեցի— 78
Մոնտրեզոր, սպա— 232
Մոսկվա— 16, 49, 116, 134, 136—135, 143, 167, 188, 286, 310, 374, 379, 381, 413, 535, 541, 543
Մոսուլ— 55, 529
Մովսես Արղության-Երկայնաբազուկ, փոխգնդապետ— 428
Մորեա— 386, 441, 443, 447
Մցխեթ— 24
Մուղթուզալի (իմամ)— 36
Մուխաննաթ բլուր— 354
Մուհամմեդ Ալի փաշա— 347, 349, 405, 445, 494, 496, 527
Մուհամմեդ մարգարե— 213, 229, 334
Մուղանի դաշտ— 297, 372, 381
Մունթոյենց Մկրտում— 79
Մուշ— 51—55, 59, 60, 62, 67, 128, 129, 133, 388, 460—462, 467, 468
Մուշեղ— 307
Մուշկո գյուղ— 346
Մուսթաֆա Դ— 349
Մուսթաֆա. Շիրվանի խան— 251, 252, 284, 292, 328, 397, 405, 410
Մուսթաֆա փաշա— 60
Մուրադյան Սամվել, վաճառական— 534
Մուրադյան վարժարան— 535, 536, 538, 539
Մուրադ փաշա— 51
Մուրավև, գնդապետ— 426

Յ

Յակուբ բեկ Գերայլեցի— 199
Յաշ քաղաք— 314
Յոնջալու գյուղ— 52, 350, 389
Յություճյան, խմբագիր— 110
Յուչքիլիսեի վանք (Բայազետում)— 130
Յուչքիլիսեի վանք (Էջմիածնում)— 129, 130, 351
Յուսուֆ փաշա— 64, 107, 108, 310, 392, 393, 443

Ն

Նազարյան Ստեփանոս— 553, 554
Նազի— 231
Նազիմկա, փոխգնդապետ— 410, 436
Նալչու (Դիլ-Յոլուչ)—470
Նալբանդյան Միքայել— 549
Նախիջևան, Նախիջևանի խանություն, Նախիջևանի գավառ— 28, 30, 32, 33, 38, 41, 45, 47, 48, 124, 125, 178, 182, 252, 280, 281, 307, 315, 339—341, 352—354, 356, 363, 369, 382, 422, 423, 426, 430, 432, 436, 484
«Նահապետ», կեղծանուն— 545
Նապոլեոն Բոնապարտ, Ֆրանսիայի կայսր— 52, 116, 241, 242, 264, 309, 310, 316, 319, 320, 323—331, 334, 336—342, 345, 348, 350—353, 355—359, 363, 370, 371, 374, 377, 379, 381, 384, 385, 387, 389, 391, 393, 402, 431, 442
Նասիր բեկ— 187
Նավարին— 447, 452
«Նավուղղություն»— 551
Ներոլսին, գեներալ-մայոր— 291, 292, 296, 298, 345, 353, 354, 356, 365, 368, 369
Նեգիրի դաշտ— 495
Նելսոն, անգլիական ծովակալ— 325, 329
Նեղոս գետ— 49, 324
Նեման գետ— 348
Նեմրութ— 55
Նեյդհարդ, գեներալ— 486
Նեսվետաև, գեներալ— 253—255, 259—262, 291, 292, 295, 297, 299—301, 343—347, 391—393
Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցի, Բարոս կաթողիկոս— 68, 89, 119, 120, 122, 140, 141, 145, 159, 178, 180, 183, 184, 188, 192, 205, 222, 279, 282—283, 299, 309, 314—317, 357, 358, 362, 399—404, 407, 408, 412—414, 417—429, 432—439, 457, 487, 501, 502, 504, 505—507, 525, 535, 536
Ներսես պատրիարք— 63, 70
Ներսիսյան դպրոց— 400, 418, 535, 536
Նիկոլայ Ա կայսր, Ալեքսանդր Ա կայսրի եղբայրը— 406, 409, 412—414, 416—420, 425, 432—434, 436—438, 445, 446, 448, 469, 472, 480, 481, 488, 490, 493, 494, 502, 504, 524—526
Նիկոլայ Բ— 420, 493
Նիկողայոս Զորայան— 554
Նիկողայոս վարդապետ— 428

Նիկողոս— 79
Նինիա Զորան, վրաց ազնվական—247
Նիշ— 337
Նոյի տապան— 464
Նովրուզ— 169, 198, 200, 245, 345
Նորաշենի վանք— 78
Նոր Բայազետ— 482
«Նոր բառգիրք Հայկազյան լեզվի»— 551
Նոր Նախիջևան— 315, 534, 541, 547
Նոր Ջուղա— 136
Նուխի— տե՛ս Շաքի

Շ

Շարաց բերդ— 337
Շահ Աբաս— 33, 40, 239, 280
Շահազիզյան ընտանիք— 119
Շահբուլաղ ամրոց— 271—274, 279, 296, 373, 412
Շահբուլաղ գետակ— 267, 270, 271
Շահխաթունյան, վարդապետ— 551
Շահնազար, մելիք— 522
«Շահնամե»— 547
Շահսևան— 292
Շահվերդի խան— 185
Շահրաթյան Հովսեփ— 79
Շամախի— 182, 247, 252, 259, 284, 397
Շամիր աղա— 301
Շամխոր— 184, 185, 187, 414, 470
Շամշադին, գավառ— 29, 187, 205, 245, 278—280, 296, 408, 413
Շամշադինի լեռներ— 29
Շամչի Մելքո— 91
Շամքոր գետ—414
Շայխ Միրզըք—529
Շանազարա— 278
Շանշյան Պետրոս— 515, 553, 554
Շաշունց Գոզի— 88
Շատո խաֆիր— 60
Շավեղ խաֆիր— 60
Շավեշ— 51
Շատախ— 59, 62, 66
Շարուրի գավառ— 253
Շարաֆի, մելիք— 57
Շարդեն— 83
Շարուր— 422
Շաքար Ուլլահ, Մահմուդ Հասան աղայի որդին— 251, 263
Շաքի (Շեքի) կամ Նուխի— 28, 188, 243, 247, 251—253, 284, 290, 291, 298, 345, 367, 381, 390, 395—397, 407, 520
Շեխ Ալի խան— 285, 292
Շեհրիզորի գավառ— 58
Շերիֆ փաշա— 178, 180, 181, 192, 193
Շըղվանցվոց տուն— 51
Շիրաղ— 352, 356
Շիրակ— 50, 51, 79, 89, 201, 253, 254, 262, 314, 387, 390, 493, 519

Շիրակավան կամ Բաշ-Շորագյալ— 89, 206, 261, 345
Շիրվան— 28, 251, 252, 284, 290, 292, 297, 305, 345, 382, 395—397, 407, 410, 520
Շիուշ— 81
Շմավոնյան, քահանա— 552
Շնող գյուղ— 30, 237
Շնորհավոր, վաճառական— 86
Շողակաթի վանք— 211
Շոպեն— 37, 47
Շորագյալ (Արևելյան Շիրակ)— 206, 243, 253, 254, 259, 364, 365, 382, 390, 392, 407, 409, 413
Շվեդիա— 348
Շվեյցարիա— 325
«Շտեմարան պիտանի գիտելյաց», ամսատետր— 551
Շուլավեր գյուղ— 30
Շուշամերկ— 60
Շուշի— 26, 182, 184, 244, 246—252, 254, 259, 262—265, 267—271, 275—278, 284, 288, 291, 293—296, 300, 301, 365—369, 371—373, 378, 380, 382, 398, 401, 402, 410—415, 417, 512—514, 521—525, 541, 543
Շփեխտոր— 241

Ո

«Ոդիսական»— 545
«Ողբ հայրենասերի»— տե՛ս «Վերք Հայաստանի»
Ոսկան, Նորջուղայեցի հայ— 293
Ոսկերչյան քահանա— 125, 201, 204, 206, 211, 231, 237

Չ

Չաթամ, լորդ, անգլ. պետական գործիչ— 327
Չախալ— 51
Չավնդուր— 368
Չարսանչախ— 62
Չափան օղլու դերեբեյ— 454
Չեռնոգորիա (Կարադաղ)— 333, 334
Չիլկան գյուղ— 466
Չինգիզ խան— 431
Չուլկով, կապիտան— 179

Պ

Պալյան տոհմ— 97
Պահլավունի Վահրամ—204
Պաղեստին— 494
Պանկրատև, գեներալ— 481
Պանյուտին, գեներալ— 477
Պասկևիչ, գեներալ— 412—417, 421, 423—

432, 434—439, 446, 448, 455—460, 462, 463, 465, 467, 468, 472—474, 476—483, 486—489, 502, 504, 520, 521
Պավել կայսր, Եկատերինայի որդին— 16, 18—25, 117, 118, 256, 325, 326, 384, 385, 396
Պավլոնի— 51
«Պատմություն հայոց»— 504
Պատրա քաղաք— 443
Պարիեր, անգլիական հյուպատոս— 322
«Պարնի որդին»— 118
Պարսից ծոց— 242, 342, 352, 355
Պարսկական Անդրկովկաս— 501, 519
Պարսկական Հայաստան կամ Պարսկահայաստան— 26, 32, 66, 484
Պարսկաստան— 17, 24, 25, 32, 33, 40, 47, 52, 53, 83, 92, 106, 116—118, 124, 127, 138, 139, 146, 152, 162, 163, 168, 177, 180—182, 185, 193, 230, 238, 239, 242, 243, 248, 249, 252, 264, 275, 280, 283, 284, 290, 293, 297, 298, 303, 306, 309—311, 317, 320, 328—330, 339—342, 344, 345, 350—356, 359, 362, 365—368, 370, 375, 380—383, 389—391, 393, 397—399, 401—408, 410, 415, 416, 422, 423, 426, 427, 436, 439, 452, 455, 456, 465, 469—471, 484, 485, 508, 511, 512, 519—523, 528, 549,
Պաուլուչչի— 369—376
Պեզճյան Հարություն ամիրա— 452, 494, 516, 517
Պելոպոննես— 333, 446
Պեշիկթաշլյան Մկրտիչ—546
Պետական խորհուրդ— 18, 25, 117, 118
Պետերբուրգ— 16—19, 49, 115, 116, 118, 131, 136—138, 141, 143, 151, 152, 158, 165, 168, 169, 176, 187, 233, 252, 286, 306, 308, 311, 321, 328, 337, 339, 359, 360, 363, 370, 374, 376, 396, 398, 401, 404—406, 417, 419, 422, 427, 435, 438, 439, 468, 472, 487, 488, 490, 502, 504, 507, 522, 523, 541
Պեաերխան պեյ— 61, 532
Պետրոս Մեծ— 24, 167, 306, 332, 489, 497
«Պետրոս Մեծի կտակը»— 25
Պետրոս յուզբաշի Մաղաքյան— 396
Պերիկլես— 332, 445
Պերպերյան— 141, 145
Պլար աղա— 60
Պլինիոս— 74
Պլուտարքոս— 74
Պյատիգորսկ— 413
«Պոլոժենիե»— 489—493, 504, 535, 536
Պողոս պատրիարք— 450, 451
Պողոս վ. Նաթանյան—64
Պոմպեոս—431
Պոպով, գեներալ— 477, 478
Պոտյոմկին, իշխան— 147
Պոտտո— 166
Պորտնյագին—188, 210, 228, 229, 235, 262, 279
Պռոշյան Պերճ— 399
Պտղոմեոս— 74
Պրուսիա— 320, 325, 329, 339, 442, 506
Պրուտ գետ— 370, 445, 446, 448
Պուշկին Ա. Ս.— 394

Ջ

Ջաբրաիլլու ցեղ— 371
Ջաբրաիլ, Մարիամ Թագուհու որդին— 170, 171, 174, 262, 263
Ջալալեդդին— 83, 84
Ջալալյան— 551
Ջախջախյան Մանուել Հ., բանաստեղծ— 104, 544
Ջահկեցի Ղազար, կաթողիկոս— 148
Ջամալ— 347
Ջառի երկիր— 30, 182, 183, 191, 232, 290
Ջավադ— 250, 252, 298
Ջավադ, Գանձակի խան— 29, 30, 182—188, 190, 208, 244, 245, 277
Ջաֆար Ղուլի աղա, Իբրահիմ խանի թոռը, Մահմադ Հասանի որդին— 284, 294—296, 298, 366, 371—373, 398, 524
Ջաֆար Ղուլի, Խոյի խան— 228, 234, 298
Ջերմուկ բերդ— 272
Ջիհանշի— 57
Ջինի, մայոր— 371, 372
Ջիվանբուլաղ— 422
Ջիվանշիր ցեղ— 371
Ջրաբերդ— 258, 267, 270, 274
Ջուլամերիկ— 528
Ջուղա— 40, 239, 292
Ջումշուդ, մելիք— 28, 30, 32, 183, 184, 244, 248, 256, 257, 287, 289, 291, 292, 295, 300—303, 305, 307, 396

Ռ

Ռաբեթական տոմ— 154
Ռահիշյան, վանեցի— 98
Ռահվա— 55, 56
Ռաստոպչին, կոմս— 325
Ռասուլ Ալլահ— 44
Ռաֆայելյան վարժարան— 535, 538, 539
Ռեդութ-կալե, ամրոց— 343
Ռեմլե— 349
Ռեշիդ փաշա— 495—499
Ռեատեն, բժիշկ— 551
Ռեուտ, գնդապետ— 410, 411
Ռըշկանցվոց տուն— 51
Ռըստամկետուկ գյուղ— 51
Ռիզա խան, դեսպան— 342, 497
Ռոզեն, գեներալ— 486
Ռոմանով— 504
Ռոմանովներ— 341
Ռուստամ բեկ, մելիք Աբովի որդին— 205, 229—232, 241, 287—289, 302—304
Ռոստոմ թագավոր— 73, 81
Ռտիշչև, գեներալ— 374, 376—383, 487
Ռուբինյան թագավորություն— 69
Ռումելի— 517
Ռումինիա— տե՛ս Մոլդավո-Վալախիա
Ռումյանցև, կոմս— 357
Ռուսական Հայաստան— 484
Ռուսաստան— 14—18, 20, 21, 23—26, 78, 85, 89, 107, 115, 117, 120, 122, 123, 127, 128, 131—134, 136—141, 150, 153, 158, 162—164, 166—170, 175, 181—185, 191, 194, 195, 200, 220, 221, 232, 235, 241—243, 246, 247, 252, 253, 256, 263, 264, 276, 283—285, 287, 288, 294, 297—299, 301, 306, 309, 310, 313, 315, 317, 318, 320—333, 335, 337—341, 343—345, 348—354, 357, 359, 361, 363, 364, 366—372, 374, 375, 379, 380, 382—387, 390, 391, 393—395, 398—401, 403, 405—407, 417, 426, 427, 432, 437, 438, 440—447, 452, 468, 472, 479, 480, 482, 484, 485, 487—490, 492—494, 497, 498, 500, 501, 503, 506—508, 510, 522—526, 541
Ռուստամբեկով Աստղարբեկ, կալվածատեր— 525, 526
Ռուստեմ վեզիր, Կարսի վալի— 347

Ս

Սադդխան— 381
Սալմաստ— 428, 429, 465, 528
Սալյան քաղաք— 89, 252, 512
Սահակ, մելիք Աբրահամի որդին— 44, 45, 201, 204, 206
Սայաթ-Նովա— 91
Սանկտ Պետերբուրգ— 49
Սան Ստեֆանոյի հրվանդան— 448
Սասուն— 59—62, 66, 67, 455
«Սասունցի Դավիթ», դյուցազներգություն— 547
Սավուր—67
Սատոն, Պլար աղայի տղան— 60
Սատրաղամ— 99
Սարատով— 259
Սարգիս արքեպիսկոպոս— տե՛ս Հասան-Ջալալյան
Սարգիս եպիսկոպոս, Թիֆլիսի առաջնորդ— 22
Սարգիս, Գանձասարի վանքի միտրոպոլիտ— 412
Սարգիս, թարգմանել է «Ընձենավորը»— 91
Սարդոնով, ոստիկանապետ— 171
Սարգսյան Հովհաննես— 79
Սարդարաբադ— 421, 424
Սաֆրազ, մելիք— 27
Սեբաստիանի, ֆրանս. գեներալ— 329—331, 338, 349, 352, 387, 448
Սեգյուր, Պետերբուրգում ֆրանս. դեսպան— 321
Սելիմ, Շաքիի խանը— 251, 253, 298
Սելիմ Գ սուլթան— 321, 324, 327—331, 333, 334, 336, 337, 339, 340, 349, 367, 384, 448, 495
Սելիմ Ա սուլթան— 52, 328
Սևանա լիճ, Գոկչա— 252, 296, 297, 482
Սև Գեորգ— տե՛ս Կարա Գեորգի
Սև ծով— 191, 290, 331, 403, 446, 494
Սերբիա— 325, 331, 334—338, 370, 371, 385, 440, 446
Սերովբե վարդապետ— 439, 457
Սերվիչե, բժիշկ— 551
Սիբիր— 487, 508, 512, 526
Սիլիստրե— 533
Սիմեոն եպիսկոպոս— 120, 125—127, 142, 148, 161, 219
Սիմեոն Երևանցի, կաթողիկոս— 177, 399
Սիմոնովիչ, փոխգնդապետ— 224
Սինգապուր— 554
Սինջար լեռներ— 530
Սիոնի մայր եկեղեցի— 19—21, 24, 49, 172
Սիպյագին, նահանգապետ— 418
Սիսիան— 27
Սիստովոյի դաշնագիր— 335
Սիս քաղաք— 68
Սիրիա— 320, 325, 387, 494
Սկուպշչինա— տե՛ս Ազգային ժողով
Սղերդ— 55, 455, 529
Սղնախ— 73
Սյունիք, Սյունյաց երկիր— 26—28
«Սյունհոդոս»— 145, 146, 153, 312, 314
Սոկրատ, հույն փիլիսոփա— 332, 385
Սողանլուղ— 184, 462, 474, 479
Սողոմոն, թագավոր Իմերեթի— 19, 167, 191, 363
Սոմխեթ— տե՛ս Հայաստան
Սոմխեթական Ղարաբաղ— 31
«Սոս և Սոնդիպի»— 547
Սորբոն— 515
Սչով քաղաք— 316
Սպահան— 242
Սպղանք, գյուղ— 60
Սվազ— 478
Ստամբուլ— 53, 241
Ստեփանոս եպիսկոպոս— 130, 156, 157, 219, 225, 241, 259, 428, 502, 518
Ստեփան Ոսկան— 552, 554
Ստեփանով, մայոր, ադյուտանտ— 309, 339—342
Ստրաբոն— 74
Սրբազան դաշնադրություն— 442, 443, 447
Սրփանձոյանց Գարեգին— 61, 70
Սուլեյման— 51, 57, 64, 468
Սուլթան բադ— 371—373
Սուլթանքե— 406

Սուջուկալե— 340
Սուվորով, զորավար— 147, 325
ս. Աղբերիկ վանք—59, 62, 67
ս. Աննայի շքանշան— 287, 312, 357
ս. Առաքելոց վանք— 67
ս. Աստվածածնի եկեղեցի— 131, 133, 286
ս. Գեղարդ. իր— 148, 149, 260, 261, 464
ս. Գեորգ եկեղեցի— 151, 152
ս. Խաչ վանք— 315
ս. Կարապետ վանք— 51, 52, 142
ս. Հակոբի վանք— 526
ս. Հայրիկ պատրիարք— 59, 60
ս. Հովհաննես վանք— 455
ս. Նշան վանք— 79, 475, 476
ս. Սարգիս— 464, 465
Սուրխա խան— 290, 291
Սուրմառուի գավառ—119
Սուրֆունյան Մկրտում— 79
Սքիպիոն— 431

Վ

Վագներ Մորից— 37, 49, 488
Վալախիա— 325, 330, 331, 338, 339, 341, 348
Վախթանգ արքայորդի, Դարեջան թագուհու որդին— 19, 169
Վախթանգ Գուրգասլան թագավոր— 74, 75
Վահագն— 104
Վաղարշապատ— 201, 202, 204, 205, 211
Վան— 53—56, 58, 62, 64, 65, 387, 389, 465, 468, 531
Վանի լիճ— 455, 484
Վանի (Հովհաննես) յուզբաշի Աթաբեկյան, Հարություն յուզբաշու որդին— 201, 204, 206, 207, 267, 270—272, 274, 275, 277, 373, 412, 477, 478
Վասպուրական—50, 387, 531
Վատիկան— 83
Վարանդա— 184, 244, 248, 256, 257, 276, 289, 292, 307, 395, 396, 522
Վարդան— 307
Վարդանանք—278
Վարդգես— 104
Վարշավա— 186
Վենետիկ— 103, 113, 449—451, 534, 535, 538—543, 547, 550—553
«Վեպ Վարդգեսի Տյառն Տուհաց»— 548
«Վեպ Վարսենկան»— 548
Վերածնության դար— 385
Վերին Թաղավարդ— 523
Վերին Շորագյալ— 347
«Վերք Հայաստանի» կամ «Ողբ հայրենասերի»— 35, 37, 409, 414, 430, 549
Վիդդին բերդ— 333
Վիեննա—329, 534, 538, 541, 543, 548, 551, 552
Վիզա— 346
Վիրգիլիոս— 545, 547, 548
Վլադիկավկազ— 169, 171—173, 232, 380
Վոլկոնսկի, իշխան, գեներալ-լեյտենանտ— 233, 234, 237, 287, 289, 303
Վոլտեր— 321
Վորոնեժ— 172, 173, 175, 372
Վորոնցով Միխայիլ Սեմյոնովիչ— 166, 290, 420, 486, 487, 514, 524—526
Վրաստան— 14, 16—22, 24—26, 28, 30—32, 73—80, 82—87, 90, 115—118, 127, 151, 162—170, 172, 176, 180, 182, 184—187, 197—199, 205, 206, 218, 225, 226, 230, 233, 242, 244, 247, 249, 250, 252, 255, 257, 279, 280, 283, 284, 297, 305, 306, 311, 313, 315, 317, 342, 345, 349, 350, 353, 355, 362—364, 370, 371, 374, 376—378, 381, 382, 399, 400, 417, 418, 460, 464, 467, 469, 472, 473, 379, 486, 487, 490, 507, 519, 521, 526
Վրեդեն, փոխգնդապետ— 352
Վուլֆ Մխիթար— 403, 404

Տ

Տաթև— 27
Տաթևի վանք— 27
Տակիտոս— 74, 545
Տամարա, ռուսաց դեսպան— 124, 127, 128, 131—133, 135, 138—140, 155—158
Տայի Մահմադ աղա— 51
Տաշիր— 288
Տավերնիե— 33
Տավրոս— 66, 454
Տատյան ամիրա— 97
Տարոն— 50, 60, 387, 531
Տափըր գյուղ— 60
«Տելեմակ»— 547
Տեղ գյուղ— 27, 365, 378, 535
Տեմիրճիբաշյան— 97
Տեպլից քաղաք— 377
Տերիլ աղա — 64
Տեր-Պողոս (Քեչե Պոլե) քահանա— 455, 529
«Տիեզերական պատմություն»— 551
Տիլզիտի դաշնագրություն— 350, 353, 363
Տիլզիտ քաղաք— 348, 393
Տիտով, դեսպան— 506
Տյուիլրի— 552
Տյուզյան տոհմ կամ ընտանիք— 97, 449, 450, 545
Տորմասով, գեներալ— 362, 367—370
Տրապիզոն— 346, 350, 403, 455, 473
Տրաֆալգար հրվանդան— 329
Տրդատ թագավոր— 139
Տրդատ սարկավագ Հաշտարխանցի— 211
Տրիեստ— 510, 534, 541
Տրիպոլի— 346
Տրոիցկի գունդ— 291, 300, 371, 372
Տուչկով, գեներալ— 172, 205, 206, 209, 303
Տուրուբերան— 61

Տուփի թաղ— 238
Տփխիս, նույն է՝ Թիֆլիս— 80, 82, 89, 237

Ց

Ցեխոնսկի, գնդապետ— 214, 223, 224, 229
Ցիցիանով Պավել, իշխան— 156, 162, 166—185, 187—191, 193, 195, 196, 198—200, 202, 205—215, 217—229, 232—236, 238, 239, 241—249, 251—259, 261—266, 268—277, 279, 280, 282—292, 296—300, 302—304, 313, 354, 391, 404, 421, 434, 455, 486
Ցիցիշվիլիների տոհմ—167
Ցիցիշվիլի Պավլե, Պավել Ցիցիանովի պապը— 167

ՈՒ

Ուզլե (Ուզելեյ), անգլ. դեսպան— 379, 381, 382
Ուզունլար գյուղ— տե՛ս Օձուն
Ուլմ— 329
Ուխտանես եպիսկոպոս, X դարի մատենագիր— 80
Ուղուրլու աղա, Ջավադ խանի որդին— 277
Ումեկ, հայ վաճառական— 86
Ուշքիլիսեի վանք (Ալաշկերտում)—153
Ուչքիլիսեի կամ Ցուչքիլիսայի վանք (Բագրեանդում)— 139, 140, 142, 145, 146, 153, 157, 455,
«Ուսումնասեր», երկշաբաթաթերթ— 554
Ուսուֆ փաշա— 52
Ուրմիա լիճ— 429, 484

Փ

Փազվան օղլու—333
Փամբակ— 201, 204—207, 209, 229, 231, 323, 236, 238, 253, 255, 262, 280, 281, 311, 343, 364, 365, 409, 413
Փամբակաձոր— 230
Փանահ խան— 27
Փարաքար գյուղ— 424
Փարիզ— 323, 327, 329, 336, 342, 353, 354, 432, 495, 515, 536, 552
Փառնավազ— 167, 169, 233
Փառնաոզ, Հերակլ Բ-ի որդին— 86
Փարսադան, Ղարաբաղի մելիք— 27
Փարսադան, Խաչենի մելիք— 27
Փիլիպոս կաթողիկոս— 109, 236
Փիր Ղուլի խան— 213, 230—232, 234, 235, 254, 263, 268, 292
Փիրումյան բեկ— 270
Փոթի քաղաք— 343, 479, 480
Փոցխով գետ—482
Փոփովիչ, բժիշկ— 551
Փոքր Ասիա— 16, 453, 494, 527

Ք

Քաբե, սոցիալիստ— 552
Քաբուլ— 45
Քանաքեռ գյուղ— 40, 46, 212, 214, 215, 218, 228, 549
Քասախ գետ— 211
Քարամ, մելիք— 27
Քարթալինիա, Քարթլիա— 72, 74, 175, 193, 290
Քեղխուդյան, Թիֆլիսեցի հայ ծերունի - 473
Քելբալի խան— 124, 125, 178, 200, 226, 280, 281
Քեղի— 62
Քեյֆի— 346
Քեննինգ Ստրատֆորդ, դեսպան— 506
Քերբելա— 406
Քերիմ խան— 88
Քիլիսքյանդ գյուղ— 277
Քիշե Պոլե կամ Քեչե Պոլե— տե՛ս Տեր-Պողոս
Քիշինև— 438, 439, 487, 504
Քիոս կղզի— 443, 444, 528
Քյոռ Յուսուֆ փաշա— 345—350, 392
Քյուրակ չայ գետ— 248, 251, 253, 255, 258, 292, 296, 313
Քյուրակ չայի դաշնագրություն— 254, 256, 262, 263, 265, 284, 296, 298, 366
Քոլի, մելիք— 27
Քոչար, հայ լրտես— 255
Քսենոֆոն— 55
Քրդստան— 58, 67, 429, 461, 468, 528, 530, 531, 533
Քրիստոս— 60, 67, 144, 146, 147, 154, 155, 157, 161, 165, 177, 180, 188, 194—196, 199, 225, 251, 260, 261, 278, 282, 334, 351, 352, 359, 408, 464, 481
Քուռ գետ— 24, 74, 86, 89—91, 182, 199, 252, 286, 292, 339, 352, 373, 375, 381, 397

Օ

Օգյուստ Կոնտի— 552
Օդեսա— 308, 309, 314
Օլովյաննիկով, կապիտան— 372, 373
Օհան քահանա Տեր-Բարսեղյան— 523
Օձուն (Ուզունլար) գյուղ— 30, 236
Օմար, Դաղստանի խան— 27, 19, 29
Օշական— 423, 424
Օշակով—186
Օսեթիա— 364
Օսմանյան կայսրություն— 229
Օսման Հիեյֆի բեյ— 58
Օսման փաշա— 531, 533
Օրբելիանի Ասլան— 173
Օրբելիանի Դմիտրի, գեներալ— 172, 175, 380
Օրբելիանի Թամազ—178, 179, 192
Օրբելիանի Սաբա, վրացի քահանա—84

Օրբելիանի տոհմ—84
Օրդու— 346
Օրդուբադ— 48, 369
Օրենբուրգ— 326
Օրլով Ալեքսեյ— 386, 387
Օքրոփիր, Մարիամ թագուհու որդին—170, 174

Ֆ

Ֆաթալի շահ կամ Բաբախան— 17, 124, 125, 182, 184, 197, 199, 215, 218, 223, 224, 228, 234, 238, 239, 241, 242, 248, 254, 265, 268, 269, 271, 273, 276, 278, 281, 293, 300, 309, 339, 341, 352, 364, 375, 380, 382, 383, 404, 406, 426, 471, 472, 501
Ֆարրոգ— 51
Ֆենելոն— 547
Ֆիդիաս— 385, 445
Ֆինլանդիա— 348, 490
Ֆինկենշտայն դղյակ— 342
Ֆինկենշտայնի դաշնագրություն— 342, 350, 352, 353
Ֆրանսիա— 114, 242, 318—331, 334, 338, 341, 342, 350—352, 354, 385, 446, 494, 497, 498, 500, 501, 509, 537, 552
Ֆրանց Բ կայսր— 316
Ֆրեդերիկ Միլինգեն— 58
Ֆրեյգոն, մելիք— 28, 30, 32, 296
Ֆրիզլանդ— 348

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակն ընթերցողին . . . 7
1 Ռուսական մուտքն Անդրկովկաս . . . 14
2 Հայ ժողովրդի ընդհանուր դրությունը XIX դարի սկզբում . . . 26
3 Հայկական գաղութներ . . . 72

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Առաջին ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները 1801—1813 . . . 115
Գլուխ առաջին
Սկզբնական հնգամյակ (1801—1806) . . . 115
Գլուխ երկրորդ
Երկրորդ հնգամյակ.—Արևելյան հարց.— Թուրքիան Պարսկաստանի հետ.— Գյուլիստանի դաշնագրությունը 1807—1813 . . . 290

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ
Հայոց պատմություն նորագույն շրջան

(Դասախոսություններ՝ կարդացված ՀՍՍՀ պետական համալսարանում 1924—25 թթ. ակադեմիական տարեշրջանում)
Գլուխ առաջին
Առաջին ռուս-թուրքական պատերազմ (1806—1812) . . . 384
Գլուխ երկրորդ
Երկրորդ ռուս-պարսկական պատերազմ (1826—1927) . . . 394
Գլուխ երրորդ
Երկրորդ ռուս-թուրքական պատերազմ (1828—1829) . . . 439
Գլուխ չորրորդ
Ռեֆորմների շրջան (1830—1853) . . . 483
Գլուխ հինգերորդ
Հայկական մշակույթը 19-րդ դարի առաջին կեսում . . . 533
Աղբյուրներ . . . 555
Խմբագրի կողմից . . . 557
Ժամանակագրություն . . . 559
Ծանոթագրություններ . . . 562
Հատուկ անունների ցանկ . . . 573

ԼԵՈ
Երկերի ժողովածու տասը հատորով
հատոր IV

Հայոց պատմություն
(XIX դարի առաջին կես)

Лео
СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ
В десяти томах
Том IV
История Армении
(Первая половина XIX века)
(На армянском языке)
Издательство «Айастан»,
Ереван, 1984

Հրատ. խմբագիր՝ Ռ. Հ. Մուրադյան
Նկարիչ՝ Ռ. Բեդրով
Գեղ. խմբագիր՝ Հ. Մնացականյան
Տեխն. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Է. Զ. Ներսեսյան

ИБ 3826.
Հանձնված է շարվածքի 22. 03. 1984 թ.:
Ստորագրված է տպագրության 3. 10. 1984 թ.:
Ձևաչափ՝ $70 \times 108^1/_{16}$: Թուղթ՝ տպ. № 1:
Տառատեսակ՝ «Գրքի սովորական», տպագրու-
թյուն՝ բարձր: 51,8 պայմ. տպագր. մամ., հրատ.
47,25 մամ.: Պատվեր՝ 1984: ՎՖ՝ 09413: Տպա-
քանակ՝ 30 000: Գինը՝ 4 ռ. 40 կոպ.:
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9,
Տերյան 91:
Издательство «Айастан», Ереван-9,
ул. Теряна, 91.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի
և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի
№ 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65:
Типография № 1 Госкомитета Арм. ССР
по делам издательств, полиграфии и
книжной торговли. Ереван, ул. Алавердяна
65.